4(075)
Ա 16

Ա. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Ռ. Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# ԳՐԱԲԱՐԻ ՁԵՌՆԱՐԿ

Թույլատրված է Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի կողմից որպես ուսումնական ձեռնարկ բուհերի համար

Երրորդ հրատարակություն

ՀԱՅՊԵՏՈՒՍՄԱՆԿՀՐԱՏ
ԵՐԵՎԱՆ 1964

А. А. АБРААМЯН
ПОСОБИЕ ПО ГРАБАРУ
(древнеармянскому языку)
(На армянском языке)
Армучпедгиз
Ереван — 1964

4Հ(075)
Ա-16

# ԳՐԱԲԱՐԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Գրաբարի հնչյունական կազմն արտացոլված է նրա այբուբենի մեջ. ըստ Մեսրոպյան այբուբենի յուրաքանչյուր հնչյունի[1] հատկացված է եղել մի տառ, այնպես որ այբուբենի հորինման ու սկզբնական գործածման շրջանում գրությունը լիովին համապատասխանել է արտասանությանը։

Գրաբարն ունեցել է 36 հնչյուն, որոնց գրավոր արտահայտությունը՝ այբուբենը հետևյալն է.

| | | | |
|---|---|---|---|
| Ա այբ 1 | Ժ ժէ 10 | Ճ ճէ 100 | Ռ ռա 1000 |
| Բ բեն 2 | Ի ինի 20 | Մ մեն 200 | Ս սէ 2000 |
| Գ գիմ 3 | Լ լյուն 30 | Յ հի 300 | Վ վեվ 3000 |
| Դ դա 4 | Խ խե 40 | Ն նու 400 | Տ տյուն 4000 |
| Ե եչ 5 | Ծ ծա 50 | Շ շա 500 | Ր րե 5000 |
| Զ զա 6 | Կ կեն 60 | Ո ո 600 | Ց ցո 6000 |
| Է է 7 | Հ հո 70 | Չ չա 700 | Ւ վյուն (հյուն) 7000 |
| Ը ըթ 8 | Ձ ձա 80 | Պ պե 800 | Փ փյուր 8000 |
| Թ թո 9 | Ղ ղատ 90 | Ջ ջե 900 | Ք քե 9000 |

Ինչպես հայտնի է, մեզանում արաբական թվանշանների գործածությունն սկսվել է ուշ ժամանակներում. մինչ այդ թվեր արտահայտելու համար հայ մատենագրության ու վիմագրության մեջ օգտագործվել է գրաբարի այբուբենը՝ տառերի համապատասխան թվական արժեքով, ըստ որում վերոհիշյալ չորս շարքերը հերթականությամբ արտահայտում են միավորները, տասնավորները, հարյուրավորները և հազարավորները։ 1-ին շարքը միավորների շարքն է, որն սկսվում է Ա-ով և վերջանում է Թ-ով (1—9 ներառ-

[1] Տառ կարող էր սահմանվել միայն հասարակայնորեն ճանաչված և արժեքավորված հնչյունի՝ հնչույթի համար, ուստի այստեղ և այլուր հ ն չ յ ո ւ ն անվան տակ մենք նկատի ունենք հ ն չ ո ւ յ թ ը։

յալ), 2-րդ շարքը տասնավորների շարքն է, որն սկսվում է Ժ-ով և վերջանում է Ղ-ով (10—90 ներառյալ), 3-րդ շարքը հարյուրավորներինն է, որն սկսվում է Ճ-ով և վերջանում է Ջ-ով (100—900 ներառյալ), վերջին շարքը հազարավորներինն է, որն սկսվում է Ռ-ով և վերջանում է Ք-ով (1000—9000)։ Ավելի բարձր թվեր արտահայտելու համար գործածվել է հատուկ նշան (Λ), որը կոչվում է բյուրի նշան. սա դրվելով տառի վրա՝ չորս զրոյով մեծացնում է նրա թվական արժեքը, օրինակ՝ Ա=1, $\overset{\Lambda}{\text{Ա}}$=10000, Ե=5, $\overset{\Lambda}{\text{Ե}}$=50000։

Այս նշանը մեծ մասամբ հանդիպում է թվաբանական աշխատություններում։

Թիվ արտահայտող տառերը մյուսներից զատելու համար սովորաբար առնվում էին վերչակետերի կամ միջակետերի մեջ, ինչպես՝ ·ՃԻԵ· կամ ․ՃԻԵ․ (=125)։

Մեծ թվերը երբեմն էլ արտահայտվում էին տառերի համադրությամբ, օրինակ՝ ․ԲՌ․=2000։

§ 2. Գրաբարի ձայնավորներն են՝ ա, ե, է, ը, ի, ո։ Է և ը ձայնավորները բառավերջում հանդես չեն գալիս, իսկ ա-ն և ո-ն բառավերջում հանդիպում են շատ քիչ դեպքերում. այսպես՝ ա) բայերի հրամայական եղանակի ներկա ժամանակի եզակի թվի 2-րդ դեմքում՝ գրեա՛ (=գրի՛ր), պատմեա՛ (=պատմի՛ր), աղա՛ (=ա-ղա՛), մատո՛ (=մոտեցրո՛ւ), զգեցո՛ (=հագցրո՛ւ) և այլն. բ) առանձին դերանունների մեջ, ինչպես՝ սա, դա, նա, Իա (դա՝ դերանվան սեռականը, իսկ որպես ստացական դերանուն, միայն ուղղականում, որն ունի նաև զուգաձևու Իոյ ձևը). գ) օտար հատուկ անուններում, միայն ուղիղ ձևերում՝ Եաղիսա, Կարինա, Ասիա, Արաբիա¹ և այլն. դ) մի երկու այլ բառերում՝ անա, ապա (վերջինս երբեմն հանդիպում է նաև յ-ով)։ Սովորաբար այդ ձայնավորներից հետո, որպես կանոն, բառավերջում հանդես է գալիս յ ձայնորդը, օրինակ՝ ընծայ, ծառայ, պղնձոյ, Երեկոյ, ձուլածոյ և այլն։

§ 3. Է տառի համապատասխան հնչյունը երկբարբառային է եղել՝ եյ, սակայն այն զգալապես տարբերվել է Ե ձայնավորից. այդպես դրանց համար առանձին տառեր չէին կարող ստեղծվել։

Գրաբարում սկզբնապես ու պարզ ձայնավոր չի եղել, նրա փոխարեն եղել է ու երկբարբառը՝ ու (oւ) արտասանությամբ, որը գրության մեջ արտահայտվել է ո և ւ տառերի համադրությամբ¹։

Սակայն պետք է նկատել, որ դրանց բաղադրիչ տարրերը՝ պարզ հնչյունները իրենց սեփական արտասանություն են ունեցել, և այդ պատճառով էլ ժամանակի ընթացքում դրանց արտասանությամբ ձուլվել և վերածվել են պարզ ձայնավորների։ Դրանք մյուսներից զանազանելու համար պայմանականորեն անվանում ենք երկբարբառային ձայնավորներ։

§ 4. Գրաբարն ունեցել է հետևյալ բաղաձայն հնչյունները՝ բ. գ. դ. զ. թ. ժ. լ. խ. ծ. կ. հ. ձ. ղ. ճ. մ. յ. ն. շ. չ. պ. ջ. ռ. ս. վ. տ. ր. ց. ւ. փ. ք։

Գրաբարի բաղաձայնական համակարգը հիմնականում համապատասխանում է ժամանակակից հայ գրական լեզվի բաղաձայնական համակարգին։ Նկատելի են հետևյալ տարբերությունները՝ ա) գրաբարն ունեցել է ւ հնչյունը, որը երկշրթնային ձայնորդ բաղաձայն է (W), բ) լ ձայնորդը երկու տեսակ է եղել՝ առաջնալեզվային (փափուկ արտասանությամբ) և կոկորդային (կոշտ արտասանությամբ), գ) հին շրջանում գրաբարը չի ունեցել ֆ բաղաձայնը (§ 15)։

§ 5. Գրաբարն ունեցել է նաև երկբարբառներ ու եռաբարբառներ։

Երկբարբառներն են՝

Այ—փայտ, կայծ, ձայն.
Աւ—կարաւտ, ծանաւթ, տաւն.
Եա—պատեան, սենեակ, վայրկեան.
Եւ—աղբեւր, առեւծ, հարեւր.
Իւ—ձիւն, հիւթ, սիւն.
Ոյ—բոյս, թոյն, բոյր.
Իո—ասկւով, որդւոց, հռոմայեցւոց։

Դրանց մեջ որոշ վերապահությամբ պետք է հաշվի առնել նաև է-ն (=ե+յ) և ու-ն (=ո+ւ), որոնք ժամանակի ընթացքում վեր են ածվել պարզ ձայնավորների (§ 3)։

---

¹ Վերջին օրինակները միայն ա ձայնավորի համար են։

¹ Այս հարցը հայագիտության մեջ վիճելի է, շատերը գտնում են, որ հիշյալ տառերի համադրությամբ արտահայտվել է պարզ ձայնավոր։

Եռաբարբառներն են՝

Եայ—հրեայ, պաշտոնեայք, քաղդեայք (=աստղագուշակներ).

Եաւ—արդեաւք, պատանեաւք (պատանի բառի հոգնակի գործիական է՝ պատանիներով), այգեաւք (=այգիներով).

Իոյ— այգւոյն (այգի բառի սեռական կամ տրական հոլովն է՝ և հոդով), կենդանւոյն (=ողջ-ողջ).

Իայ—միայն[1]:

Ինչպես տեսնում ենք, գրաբարում երկբարբառների և եռաբարբառների կազմության մեջ ձայնավորների հետ միասին հանդես են գալիս յ և ւ ձայնորդները։ Իր կազմության մեջ ձայնորդ չունի միայն եա երկբարբառը, որը կազմված է ե և ա պարզ ձայնավորներից։

## ԳՐԱԲԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ-ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

§ 6. Արդեն նշվել է (§ 1), որ այբուբենի հորինման ու սկզբնական կիրառման շրջանում գրաբարի գրությունը համապատասխանել է արտասանությանը. դա գրաբարի հին արտասանությունն էր, որ այժմ մենք կոչում ենք գրային արտասանություն։ Սակայն գրաբարի արտասանությունը միշտ նույն կետի վրա չի մնում։ Դարերի ընթացքում լեզվի արտասանական-հնչյունական կողմը զանազան փոփոխություններ է կրում՝ հեռանալով գրությունից։ Առաջ են գալիս ընդհանուր-պատմական (կամ ավանդական) հնչյունափոխության զանազան երևույթներ, որոնց հիման վրա ձևավորվում են գրաբարի «նոր» արտասանության կանոնները, որոնք ավանդաբար հասել են մեզ։ Մենք այժմ գրաբարյան բնագրերը կարդում ենք ոչ թե հին կամ գրային, այլ «նոր», փոփոխված և վաղուց արդեն քաղաքացիության իրավունք ստացած արտասանությամբ։

Գրաբարյան բնագրերը ընդունված արտասանությամբ կարդալու համար պետք է նկատի ունենալ ընդհանուր-պատմական հնչյունափոխության հետևյալ դեպքերը.

[1] Միայն այս բառն է, այլ օրինակ չկա։



### բ) Փոփոխություններ ձայնավորների արտասանության մեջ

§ 7. Ե ձայնավորը բառասկզբում արտասանվում է յե՝ Ելանել—յելանել, Երգ—յերգ, իսկ բառամիջում մնում է նույն արտասանությամբ՝ բերել—բերել, մեծ—մեծ, սեղան—սեղան։

§ 8. Ո ձայնավորը բառասկզբում արտասանվում է վո՝ ոչխար—վոչխար, ոսկի—վոսկի, որս—վորս։ Կան բացառություններ՝ ով, ովասիս, ովկիանոս, ովսաննայ (=օրհնության ձայն), որոնց ո-ն պահպանում է իր հին արտասանությունը։ Այս ձայնավորը բառամիջում արտասանության փոփոխություն չի կրել։

### գ) Փոփոխություններ երկբարբառների արտասանության մեջ

§ 9. Է և ու երբեմնի երկբարբառները վերածվել են պարզ ձայնավորների. Է-ն բոլոր դիրքերում արտասանվում է որպես պարզ ձայնավոր՝ Էակ, Էգ, Էջ, կէս—կես, մէջ—մեջ, սէր—սեր, բազէ—բազե, ռամկէ—ռամկե։

Ու-ն ձայնավորից առաջ արտասանվում է վ՝ նուէր—նվեր, պատուէր—պատվեր, չինուած—չինված, թուական—թվական, կուել—կովել, իսկ մնացած դեպքերում՝ որպես պարզ ու ձայնավոր՝ ուսանել—ուսանել, տուն—տուն, կատու—կատու։

§ 10. Աւ երկբարբառը բաղաձայնից (փակ վանկում) վերածվել է օ-ի՝ աւձ—օձ, աւր—օր, առաւր—առօր, զաւրք—զօրք, աւթ—օթ։ Կան բացառություններ՝ աղաւնի և նաւր:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ենթադրվում է, որ աղաւնի և նաւր բառերում ւ-ից հետո արտասանվել է ը ձայնավորը, որը խանգարել է հիշյալ երկբարբառի պարզեցմանը։

Բացի այս անփոփոխ բառերից, աւ երկբարբառը պահպանում են նաև այլ բառաձևեր, որոնք ունեն աւ հնչյունախումբը, երբ վերջինս բառ բառի փոփոխության ընթացքում բաղաձայնի առաջ չի փոխվում. այսպես լինում է աւ-ով վերջավորվող բառերի մեջ՝ հոգնակի ուղղականում, ք-ից առաջ՝ նաւ—նաւք, բաւ—բաւք, կամաւ—կամաւք և այլն, հոգնակի հայցականում, ս-ից առաջ՝ նաւս, բաւս, կամաւս, հոդերից առաջ՝ կաւան (=կավը կամ այն կավը), կամաւդ (=այդ կամավը), նաւս (=այս նավը), որոշ չեշտափոխված ձևերում՝ շաւիղ—շաւղի, Դաւիթ—Դաւթի և այլն։ Այստեղ դեր ունի զարտուղանքը (ը-ով)։ Հոգնակի ուղղականում սրան զուգակցվում է նաև բառապատկերի պահպանման հանգամանքը։

Եւ երկբարբառի ավանդական հնչյունափոխության համաձայն գրաբարի այբուբենի մեջ 12-րդ դարից հետո մտցվել է օ տառը, որ Մեսրոպյան այբուբենում չկար[1]։

§ 11. Եա երկբարբառն արտասանվում է որպես յա երկձայն՝ գրեաց—գրյաց (=գրեց), սիրեաց—սիրյաց (=սիրեց), վայրկեան—վայրկյան, Եասակ—քասյակ։

§ 12. Իւ երկբարբառն արտասանվում է որպես յու երկձայն՝ բեղիւն—բեղյուն, ճիւղ—ճյուղ, արդիւք—արդյուք (=արդեոք)։

§ 13. Եւ երկբարբառի արտասանությունը նույնական է իւ երկբարբառի արտասանության հետ։ Այդ երևույթն արտահայտվում է նաև գրության մեջ. շատ բառերում հանդիպում է այդ երկբարբառների զուգահեռ գրությունը՝ պեւր ‖ պիւր, աղբեւր ‖ աղբիւր, բեւր ‖ բիւր, ճաւեւր ‖ ճաւիւր, մեւս ‖ միւս։

§ 14. Ոյ երկբարբառն արտասանվում է որպես ույ երկձայն՝ յոյս—յույս, համբոյր—համբույր, ջեռնոյր—ջեռնույր (=տաքանում էր)։

գ) Փոփոխություններ եռաբարբառների արտասանության մեջ

§ 15. Եայ եռաբարբառն արտասանվում է յայ՝ անգեայք—անգյայք (=նախնի, խոշոր եղջերավոր անասուններ), պաշտօնեայք—պաշտոնյայք։

§ 16. Եաւ եռաբարբառն արտասանության փոփոխության պատճառով գրության մեջ արտահայտվում է եօ ձևով և արտասանվում է յո՝ այգեաւք ‖ այգեօք—այգյոք (=այգիներով), կողեաւք ‖ կողեօք—կողյոք (=կողքերով), բնաանեաւք ‖ բնաանեօք—բնաանյոք։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Որոշ բառերի մեջ եաւ եռաբարբառին զուգահեռ հանդես է գալիս եւ երկբարբառը՝ գեաւղ (գեօղ) ‖ գեւղ (նաև՝ գիւղ), եաւթն (եօթն) ‖ եւթն։

§ 17. Իւյ եռաբարբառն արտասանվում է վույ՝ այգւոյն—այգվույն, կենդանւոյն—կենդանվույն։

1 Եւ երկբարբառի նշված ավանդական հնչյունափոխությունը լեզվի մեջ արմատացածություն էր ստացել ավելի վաղ. փաստեր ունենք 10-րդ դարի սկզբից. ձեռագրական հիշատակարաններում տառը գործածվել է ավելի ուշ շրջանից. իսկ ու>վ ավանդական հնչյունափոխությունը որոշակիություն էր ստացել 9-րդ դարից։ Այս մասին տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), Երևան, 1957 թ., № 4։



դ) Փոփոխություններ բաղաձայնների արտասանության մեջ

§ 18. Գրաբարը չի ունեցել ֆ հնչյունը[1]։ Փոխառյալ բառերի մեջ այդ հնչյունի դիմաց գործածվել են փ և ֆ հնչյունները, ինչպես օրինակ՝ փիղակէ կամ փիլակէ (հուն. φυλακή — պահնորդ, բանտ), փիլիսոփայ (φιλόσοφος),[2] հրասախ կամ փարասախ (չափի միավոր, փոխառություն է պարսկերենից)[3]։

Ժամանակի ընթացքում գիտակցվել ու արժեքավորվել է ֆ-ն որպես հնչույթ, և դրա հետևանքով էլ այբուբենում ավելացվել է ֆ տառը։ Եվ այդուհետ փոխառյալ բառերում այդ հնչյունն այլևս չի փոխարինվում այլ հնչյուններով, գրության մեջ էլ արտահայտվում է հատուկ տառով, ինչպես՝ ֆայաՐ, ֆարաջ, ֆրիար (=որբ. հառաչ) և այլն։

§ 19. Դասական լ հնչյունը թանձրանալով վերածվել է ղ հնչյունի[4]։ Հայերենի են մի շարք զուգահեռ ձևեր, ինչպես օրինակ՝ գլալ ‖ գղալ (=գդալ), լակիշ ‖ ղակիշ (=գոռջ), ճիլ ‖ ճիղ, սալար ‖ սաղար (=զորագլուխ) և այլն։

§ 20. Յ ձայնորդը բառասկզբում արտասանվում է հ՝ յաճախ—հաճախ, յիշել—հիշել, յոյս—հույս, յորդ—հորդ, իսկ բառավերջում չի արտասանվում՝ ընծայ—ընծա, ծառայ—ծառա, պատգամայ—պատգամա, երեկոյ—երեկո, ծառոյ—ծառո (=ծառի), ջրոյ—ջրո (=ջրի)[5]. կան բացառություններ՝ խոյ, հոյ, նայ, նոյ (=թաց), վայ։

§ 21. Ւ ձայնորդը բառամիջում ձայնավորից առաջ և բառավերջում արտասանվում է վ՝ հաւասար—հավասար, նաւ—նավ, հիւանդ—հիվանդ, թիւ—թիվ, աւետաւոր—ավետավոր, պատանւոյ—պատանվո։

§ 22. Ձայնեղ պայթական բ, գ, դ և ձայնեղ պայթա-շփական ձ, ջ բաղաձայնները որոշ դեպքերում արտասանվում են խուլ շնչեղ՝ փ, ք, թ, ց, չ, ինչպես ժամանակակից գրական հայերենում։

1 Այդ հնչյունը գոյություն չունի նաև հայերենի որոշ բարբառներում (Ղարաբաղ, Թբիլիսի և այլն)։

2 Այս բառը փոխառված է ասորերենի միջնորդությամբ։

3 Այս բառը հանդիպում է նաև խորասախ ձևով։

4 Ըստ Հ. Աճառյանի՝ հնչյունական այդ երևույթը հայերենում վերջնականապես ձևավորվել է 9-րդ դարում։ Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), Երևան, 1948, № 5։

5 Ըստ արտասանության յ ձայնորդի անկումը բառավերջում արմատացածություն էր վերածվել արդեն 9-րդ դարում։ Տե՛ս ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ), Երևան, 1957 թ., № 4։

§ 23. Գրաբարում բառական շեշտը հաստատուն է, ունի իր կայուն տեղը՝ դրվում է բառի վերջին վանկի ձայնավորի վրա, օրինակ՝ աշխա՛րհ—աշխարհի՛, Նաղա՛ր—Նաղարի՛—Նաղարացի՛։[1] Նկատի ունենալով շեշտվող վանկի որոշակիությունը՝ սովորաբար բառական շեշտը գրության մեջ չենք արտահայտում։ Գրության մեջ արտահայտվում է սուր շեշտը՝ բուն հրամայականում (գրեա՛, գրեցէ՛ք, տե՛ս, տեսէ՛ք), արգելական հրամայականում, դրվելով մի արգելականի վրա (մի՛ գրեր, մի՛ տեսանէր), ինչպես նաև անուղղակի հարցում արտահայտող բառերում, օրինակ՝ «Ո՞չ ո՛րպէս բազմամարդացոյց Աբրահամու զաւակացն, եւ սահմանս հաստատեաց» (Խոր., 2-րդ, ԾԶ, էջ 186)։

§ 24. Երբ վերջին վանկը գաղտնավանկ է (այսինքն կազմված է ը ձայնավորով), շեշտն անցնում է վերջընթեր վանկի վրա, օրինակ՝ ամա՛ռ(ը)ն, աստ՛մ(ը)ն, ճի՛մ(ը)ն, մա՛ռ(ը)ն, փո՛ր(ը)ր։

§ 25. Կցական բարդությամբ կազմված մի շարք բառերում շեշտը կրում է բարդության առաջին բաղադրիչը, այդ պատճառով էլ այդ բառերում շեշտը վերջին վանկի վրա չի լինում, օրինակ՝ ա՛յսպէս, ա՛յդպէս, ա՛յնպէս, ո՛յնպէս, նո՛յնպէս, ո՛րպէս, ա՛յսչափ, ո՛րչափ, առա՛ւօտին (<առա+աւօտին), առա՛ւօտին (<առա+աւօտին), առա՛ւանին (<առա+աւանին), գրե՛թէ (<գրեա՛ թէ), նո՛յնժամայն և այլն։

§ 26. Գրաբարում կան նաև անշեշտության դեպքեր։ Սովորաբար բառական շեշտ չեն կրում՝ ա) որոշ սպասարկու բառեր, որոնք հարաբերվելով այլ բառերի՝ չեն արտահայտում նրանց հիմնական իմաստը, այլ դրսևորում են զանազան հարաբերություններ, ուստի բառական շեշտը կրում են այն բառերը, որոնք արտահայտում են հիմնական իմաստը. այդպիսի սպասարկու բառերից կարելի է հիշել առ, ընդ, ըստ, ի նախդիրները, եմ օժանդակ բայը², նույնպես և եթէ, եւ, զի, թէ շաղկապները վերջահար գործածությամբ, բ) մի քանի դերանուններ՝ ու, իմն, ինչ և այլն, դարձյալ վերջահար կիրառությամբ (եկ՛ն ինչ, ա՛յսպէս իմն և այլն)։

§ 27. Գրաբարում հնչյունափոխական գործոններից առանձնակի տեղ է գրավում բառական շեշտը։ Երբ բառը հոլովվելիս, խոնարհվելիս, բարդվելիս կամ ածանցվելիս վերջից նոր վանկեր

¹ Պրոֆ. Է. Բ. Աղայանն այսպիսի բառական շեշտը համարում է կայունշարժական («Լեզվաբանության ներածություն», Երևան, 1952, էջ 144)։

² Եմ բայը երբ բաղադրյալ ժամանակներ չի կազմում և հանգույց է դառնում շեշտ կրող բայ, բառական շեշտ կրում է։



է ստանում, բառական շեշտը համապատասխան տեղն է գրավում (դրվում է վերջին վանկի վանկարար հնչյունի վրա), և նախորդ շեշտակիր վանկը շեշտակորույս է լինում։ Այս դեպքում այն կարող է փոփոխություններ կրել։ Շեշտի տեղափոխության հետևանքով փոփոխություններ են կրում վանկի կազմի մեջ մտնող ձայնավորները, երկբարբառներն ու եռաբարբառները։ Այդ փոփոխությունները հանգես են գալիս սղման կամ այլ հնչյունի վերածվելու ձևով։

§ 28. Հնչյունափոխության տեսակետից կայուն ձայնավորներ են ա և ո ձայնավորները. ո ձայնավորը բոլորովին չի հնչյունափոխվում, օրինակ՝ արտ—արտոյ—արտակ, գործ—գործոյ—գործել—գործիչ, ճող—ճողոյ—ճողակոյտ։ Ա-ի հնչյունափոխության դեպքերի հանդիպում ենք ամառն և աստուած բառերում՝ ամառն—ամառն, աստուած—աստուծոյ, սակայն այս դեպքերը հատուկ չեն գրաբարին, դրանք թերևս գալիս են բարբառներից։ Ամառն ձևի հետ գրաբարում կա նաև ամառն ձևը (Եփր., Համաբ.), և, բացի դրանից, այլ դեպքերում ամառ բառի մեջ ա-ն չի հնչյունափոխվում՝ ամառ—ամառոյ—ամառային—ամառն (=ամառից, ամառով, մանրամ է)։ Իսկ աստուած բառում հնչյունափոխվում է (սղվում է) միայն թեք հոլովներում, բարդության և ածանցման դեպքում չի փոխվում՝ աստուածային—աստուածապաշտ։ Այդ հաստատվում է նաև նրանով, որ աստուած (հեթանոսական աստվածներ, բազմաստվածություն) բառում ա-ն չի սղվում, օրինակ՝ «Հրամայեցի աստուածոցն ինչ լինել զմեռս նորա...» (Խոր., 1-ին, ԺԵ)՝ Հրամայեցի իմ աստվածներին լինել նրա վրեժները։

§ 29. Ե ձայնավորը եա համեմատաբար կայուն ձայնավոր է. հնչյունափոխվում է սակավ դեպքերում՝ ա) փոխվում է ի ձայնավորի միայն դեւ բառում՝ դեւ—դիւի—դիւաց—դիւական—դիւանար, բ) սղվում է ղ և ն բաղաձայններից առաջ որոշ բառերում՝ ասեղն—ասղան, բիբեղն—բիբղան, մեղն—մեղան կամ մեղան, պնեղն—պնղան, Բարսեղ—Բարսղի, Կիւրեղ—Կիւրղի (բայց՝ աղեղն—աղեղան, բաղեղն—բաղեղան, գեղմն—գեղման), բիբեռն—բիբռան, լսեռն—լսռան (նաև՝ լսեռան), ծիծեռն—ծիծռան (կա նաև ծիծառն—ծիծառան), սխտեռն—սխտռան (բայց նաև՝ սխտեռան)։

§ 30. Ի ձայնավորը խիստ փոփոխվող է։ Փակ վանկում այն շեշտը կորցնելով՝ ա) հնչյունափոխվում է ը-ի, որը սովորաբար գրության մեջ չի արտահայտվում, օրինակ՝ գիր—գրել, խինդ—խնդալ, միրգ—մրգաւէտ, հիմն—հմայ, հրաշ—հրաշն—

Իշխանք կամ Իշխանս, բ) ընկնում է, օրինակ՝ մարդկային—մարդկայնոյ, մարմին—մարմնոյ, վերին—վերնոյ—վերնատուն:

*Երբ բառը կազմված է լինում միայն ի ձայնավորից և նրան հաջորդող մի բաղաձայնից, այդ դեպքում ի ձայնավորը չի փոփոխվում, օրինակ՝* իժ—իժի, իլ—իլոյ *(=իլիկ),* իր—իրի, իմ—իմոյ, ի՞մ (զի՞, զի՞նչ *հարցական դերանունների սեռական հոլովի I-ին ձևն է, որից կազմվում է բացառականը)*—յի՞մէ, *սակայն, երբ ընդունում է* զ *նախդիրը (սրամական բացառական), փոխվում է՝* զմէ՞:

*Գրաբարում հանդիպում են նաև այլ բառեր, որոնց մեջ ի-ն չի հնչյունափոխվում կամ հանգես է բերում անհամաչափություն, օրինակ՝* հիմն—հիման, հիւսիս—հիւսիսոյ, հիւրն—հիւրնեյ, հինգ—հինգերորդ—հինգամեայ—հնգկէնլ *(=հինգ անգամ կրկնել), բայց՝* հնգի, հնգետասան *(կամ* հինգետասան*=տասնհինգ),* հնգեքին *(կամ* հինգեքին*—հինգն էլ, հինգը միասին հաշված),* ինն—իններան, *բայց նաև՝* ըններան, ինն—իննուն—իններորդ, *բայց նաև՝* ըննի, ըննիւ:

*Ի ձայնավորը բաց վանկում հանդիպելով ա ձայնավորին փոխվում է ե-ի, օրինակ՝* այգի—այգեաւ *(<այգի+ա+ւ),* պատանի—պատանեաւ *(< պատանի+ա+ւ),* կարծիք—կարծեաց *(<կարծի+ա+ց): Նույն դիրքում ո ձայնավորին հանդիպելիս փոխվում է ւ-ի, օրինակ՝* գործի—գործւոյ *(<գործի+ո+յ),* որդի—որդւոյ *(<որդի+ո+յ),* նախնեացի—նախնեացւոյ *(<նախնեացի+ո+յ):*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գրաբարյան բնագրերում նման դեպքերում հանդիպում է նաև ի ձայնավորի սղում՝ ո-ից առաջ՝* թշնամոյ, ծերունոյ, որդոյ *և այլն (ճիշտ ձևերն են՝* թշնամւոյ, ծերունւոյ, որդւոյ*):*

*Վերոհիշյալ կանոնները չեն գործում ի ձայնավորով վերջացող միավանկ բառերում՝* բի—բիակ—բիառ, լի—լիոյ—լիալուսին, ձի—ձիոյ—ձիաւոր, մի—միոյ—միակ, տիք—տիոց *(=հասակ, տարիք, ժամանակ): Հանդիպում են նաև փոփոխված հազվադեպ ձևեր՝,* մեկին *(<մի+ա+կին),* մեկուսի *(<մի+ա+կուս+ի):*

§ 31. *Է երկբարբառային ձայնավորը փակ վանկում չեշտակրելու լինելով փոխվում է՝ ա) ի ձայնավորի, օրինակ՝* դէզ—դիզի, կէս—կիսոյ, հանդէս—հանդիսի—հանդիսաւոր, սէր—սիրոյ—սիրել, *բ) ե ձայնավորի, օրինակ՝* աղուէս—աղուեսու, եղէգն—եղեգան, պատճէն—պատճենի, *մանավանդ օտար ծագում ունեցող հատուկ անուններում՝* Իսրայէլ—Իսրայելի *(նաև՝* Իսրայիլի*),*



Դանիէլ—Դանիելի, Միքայէլ—Միքայելի, Մովսէս—Մովսեսի *(նաև՝* Մովսիսի*),* Ներսէս—Ներսեսի *(նաև՝* Ներսիսի*):*

*Է-ն փակ վանկում չի հնչյունափոխվում՝ ա) կրկնավոր բարդության դեպքում, օրինակ՝* դէգդէգ, պէսպէս, *բ) մի քանի այլ բառերում՝* աղէտաբեր, աղէտաձայն *(նաև՝* աղիտաձայն*),* աղէտաւոր, անօրէնութիւն, տէրութիւն:[1]

*Երբ բառավերջում եղած է-ին հաջորդում է ձայնավոր, է-ն չի փոփոխվում, օրինակ՝* ափսէ—ափսէի, բազէ—բազէի—բազէակալ, ճայուէ—ճայուէի *(բույսի անուն է):*

§ 32. *Ու երկբարբառային ձայնավորը փակ վանկում չեշտակրելու լինելով՝ ա) փոխվում է լսվող, բայց գրության մեջ չարտահայտվող ը ձայնավորի, օրինակ՝* գունդ—գնդի, նուռ—նռոյ, մուտ—մտանել, շուրթն—շրթան, ջուր—ջրոյ, *բ) սղվում է, օրինակ՝* խմառուն—խմառնոյ, ճգոյլ—ճգլոյ *(=թակել),* շարժումն—շարժման, ուսումն—ուսման—ուսմունք *(բայց՝* ուսումնակից*):*

*Ու-ն չի հնչյունափոխվում՝ ա) բառավերջում, երբ դրան հաջորդում է ձայնավոր, օրինակ՝* եղջերու—եղջերուի—եղջերուաց, լեզու—լեզուի—լեզուաւ, մանկաւագու—մանկաւագուի[2], *բ) միայն ու-ով և նրան հաջորդող մի բաղաձայնով կազմված միավանկ բառերում, օրինակ՝* ուր—ուրանալ—ուրերորդ—ուրի, ուլ—ուլու—ուլնի *(=ուլի մորթի),* ուշ—ուշոյ—ուշադրութիւն—ուշիմ, ուս—ուսոյ, *գ) մի շարք այլ բառերում՝* ուղն—ուղան *(=պարանոց),* ունկն—ունկան *(=ականջ),* ուղտ—ուղտու *(նաև՝* ուղտոյ*),* ուխտ—ուխտի, ուղխ—ուղխից *(=առատ հոսող ջուր, հեղեղ, հեղեղատ),* շուրջ—շուրջանակի, *բայց և՝* շրջել, սուտ—սուտակ *(=սուտախոս),* սուտակապատ *(=կեղծավոր),* սուտերդմնութիւն, *բայց և՝* ստել, բազմահնարութիւն, բազմաձայն, բազմասիրութիւն *(իսկ* բազում *բառի մեջ ընդհանրապես սղվում է):*

§ 33. Այ, աւ, եւ, ու *երկբարբառները չեշտի ազդեցությամբ չեն հնչյունափոխվում:* Աւ, եւ *երկբարբառները ենթարկվել են ավանդական հնչյունափոխության, բառ որում* աւ-ը *գրվել է* օ, *իսկ* եւ-ը՝ իւ *(տե՛ս §§ 10, 13):*

Այ *երկբարբառը անկախ չեշտից դառնում էր* ա *պարզ ձայնավորի վերածված որոշ բառաձևերում՝* այր *(=տղամարդ)*—առն—

---

[1] Աղէտ *բառի հոլովման ժամանակ է-ն կարող է անփոփոխ մնալ կամ փոխվել* ե-ի *կամ* ի-ի՝ աղէտ—աղէտի || աղետի || աղիտի:

[2] *Նման դեպքերում ու-ի վ արտասանությունը հանգեցնում է դրսևոր պատմական հնչյունափոխության հիման վրա:*

արամբ—արՐ—արանց, նըրայր—նըրարբ—նըրարՐ—նըրարց, հայր—հարբ—հարՐ—հարց կամ հարանց, մայր—մարբ—մարՐ—մարց և այլն։

§ 34. Եա երկբարբառը շեշտակորույս լինելով փոխվում է ե ձայնավորի, օրինակ՝ **այծեամն—այծեման, կեանՐ—կենաց, մատեան—մատենի, սենեակ—սենեկի, վայրկեան—վայրկենի**։

*Հանդիպում է չհնչյունափոխված* **ձիւն, սիւն** *և* **տէր** *բառերի եզակի բացառականում՝* **ի ձեանէ** *(նաև՝ ի ձենէ),* **ի սեանէ** *(նաև՝ ի սենէ),* **ի տեառնէ**։ *Այս վերջին բառաձևում* **եա** *երկբարբառը հանդիպում է նաև հնչյունափոխված ձևով՝* **ի տեռնէ** *(Ծննդ., ԻԴ, 27, Գ. Թագ., ԺՋ, 24, Բ. Մն., ԺԳ, 6)։*

§ 35. **Իւ** *երկբարբառը ներդրական բնույթի հոլովման դեպքում ու հոլովիչից առաջ փոխվում է* **ե**-*ի, օրինակ՝* **արիւն—արեան, Րաջութիւն—Րաջութեան** *(տե՛ս § 41, 55, գ. է)։ Իսկ* **գիւղ** *բառի մի քանի հոլովաձևերում փոխարինվում է* **ե**-*ով անկախ շեշտից՝* **գեղջ, ի գեղջէ**։

**Իւ**-*ն բառավերջում հանդես չի գալիս որպես երկբարբառ։ Այս դեպքում* **ի** *ձայնավորը շեշտակորույս լինելով փոխվում է* **ը**-*ի՝* **անիւ—անըւոյ, բիւ—բըւոյ, պատիւ—պատըւոյ**, *որոնք լեզվի ուղղագրական կանոնների համաձայն գրվում են այսպես՝* **անուոյ, բուոյ, պատուոյ**։

§ 36. **Ոյ** *երկբարբառը շեշտակորույս լինելով փոխվում է* **ու**-*ի, օրինակ՝* **բոյս—բուսոյ—բուսանել, լոյս—լուսոյ—լուսաւոր, ողջոյն—ողջունի—ողջունել, ցոյց—ցուցանել**։

*Չի հնչյունափոխվում* **գոյնզգոյն** *կրկնավոր բարդության մեջ,* **Րոյրագիր, Րոյրաքիւ** *(=քուրացու, խորթ քույր) բառերում, ինչպես նաև* **առոյգ** *բառից կազմված մի քանի ձևերում՝* **առոյգանալ, առոյգարար, առոյգացուցանել, առոյգութիւն** *(Հ. ԱՃ. «Արմ. բառ.» I, էջ 525)։ Կամ նաև տատանումներ է տալիս՝* **մոյր** *(=մուրացուն)*—**մուրոյ, ի մոյրոյ** *(Ոսկ. Երբ. ա.)։*

*Հանդիպում է անկախ շեշտից փոխարինված* **ե** *ձայնավորով, ինչպես նաև փոխված* **ո** *ձայնավորի* **Րոյր** *բառի հոլովաձևերում՝* **Րոյր—Րեռ—Րերբ—Րերց, ՐորՐ—զՐորս**։

§ 37. *Եռաբարբառներից շեշտի ազդեցությամբ հնչյունափոխվում են* **եայ**-*ը և* **իայ**-*ը։* **Եայ** *եռաբարբառը շեշտը կորցնելով վերածվում է* **է**-*ի, օրինակ՝* **պաշտօնեայ—պաշտօնէի, պաշտօնեայՐ—պաշտօնէից, Րաղեայ—Րաղէի**։

**Եայ** *եռաբարբառը իր կազմում ունի* **եա** *երկբարբառը (եա+յ), իսկ վերջինս շեշտակորույս լինելով վերածվում է* **ե**-*ի (§ 34), և ձայնավորն էլ միանալով յ ձայնորդին առաջ է բերում է՝* **պաշտօնեայ**+*ի*—**պաշտօնէյի—պաշտօնէի**։

**Եայ** *եռաբարբառը հնչյունափոխված ձևով հանդիպում է նաև անկախ շեշտից, օրինակ՝* **աշտեայ || աշտէ** *(=տեգ, նիզակ),* **միջօրեայ || միջօրէ**։

**Իայ** *եռաբարբառը հնչյունափոխված է* **ե** *ձայնավորի մի շարք բառերում, ինչպես օրինակ՝* **մենակեաց** *(նաև՝* **միայնակեաց**), **մենակեցութիւն, մենակոծ, մենամարտել, մենանալ, մենաստան** *և այլն։*

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

# ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀՈԼՈՎՈՒՄ

§ 38. Առարկաների, երևույթների ու նրանց հատկանիշների անունների քերականական զանազան փոփոխությունները դրսևորելու համար լեզուն ունի տարբեր միջոցներ։ Դրանցից մեկը հոլովումն է, որի շնորհիվ անունները նախադասության մեջ ձևային փոփոխություններ են կրում։

Գրաբարում հոլովվում են գոյականները, ածականները, դերանունները և թվականները, ինչպես նաև դերբայներից մի քանիսը՝ գոյականի և ածականի առումով (կամ առանց դրան)։

Այս գլխում ամենից առաջ պետք է տարբերել հոլովում և հոլով քերականական հասկացությունները։ Հոլովումը անունների բառափոխության (թերման) օրինաչափությունների կիրառումն է ամբողջական առումով, իսկ հոլովը դրա հետևանքով բառի կրած փոփոխության մի առանձին արտահայտությունն է։ Առանց հոլովման չկա հոլով, առանց հոլովի չկա հոլովում։ Այստեղ մենք գործ ունենք ընդհանուրի և մասնավորի փոխադարձ կապի ու պայմանավորվածության հետ։

## ՀՈԼՈՎ

§ 39. Գրաբարն ունի վեց հոլով՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, գործիական։

Գրաբարի քերականության պատմության մեջ այս հոլովները հանդես են գալիս նաև այլ անվանումներով, այսպես՝ ուղղական հոլովը կոչվել է նաև անվանական, սեռականը՝ ստացական, հայրենի, տրականը՝ թյթական, պատվիրական, հայցականը՝ հարցական, խնդրական, այլաբանական, կրողական, բացառականը՝ սկզբնական, ծագական, գործիականը՝ արարական (բացառականի հետ միասին), ցուցական և այլն։



Գրաբարի շատ քերականներ, բացի հիշյալ վեց հոլովներից, ընդունում էին և չորս հոլով՝ պատմական, պարառական, ներգոյական և կոչական ու այսպիսով գրաբարի հոլովների թիվը հասցնում էին 10-ի՝ ուղղական, սեռական, տրական, հայցական, բացառական, պատմական, գործիական, պարառական, ներգոյական և կոչական։ Սակայն Գաբրիել Ավետիքյանը 1815 թ. հրատարակած իր «Քերականութիւն հայկական» գրքում մերժեց պատմական, պարառական, ներգոյական և կոչական «հոլովները»։ Ավետիքյանի առաջարկությունը հիմնականում ճիշտ էր։ Հիշյալ գրքի հրատարակումից հետո առանձին քերականներ դարձյալ շարունակեցին ընդունել 10 հոլով, բայց քերականների ճնշող մեծամասնությունը հոլովների շարքից հանեց 4-ը, ընդունելով միայն թվարկած 6 հոլովները[1]։

Այդ մերժված հոլովներից 3-ը նախդրավոր կապակցություններ են։ Պատմականը բացառական հոլովի հետ զ նախդիրի կիրառության մի դեպքն է՝ զընկերէ=ընկերոջ մասին, զնմանէ=նրա մասին։ Պարառականը, որ որոշ քերականներ կոչում են նաև արտագոյական (Հովհաննես Հոլով, Բաղդասար Դպիր և այլն), շրջակայական (Սկրոդեր) կամ շրջաշական (Վիլոթ), նույն զ նախդիրի՝ գործիական հոլովի հետ կիրառվելու մի դեպքն է՝ զտամբ=տան շուրջ, զքաղաքաւ=քաղաքի շուրջ։ Ներգոյականը քերականների մոտ հանդես է գալիս նաև կացողական (Կղեմես Գալանոս, Վիլոթ, Խաչատուր Կարնեցի) կամ կայական (Ռսկյան) անուններով, որը այլ բան չէ, քան ի նախդիրի կիրառություն (տե՛ս § 352—353)։ Կոչական (նաև՝ հնչական, առաստական) հոլով էր համարվում կոչական բառը, որը գրաբարում արտահայտվում էր ուղղական հոլովի և ո՛վ ձայնարկության հարադրումով՝ ո՛վ մարդ, ո՛վ Տէր։

Հոլովը որպես քերականական կատեգորիա հանդես է գալիս քերականական ձևի ու քերականական բովանդակության միասնությամբ, ուստի այն որոշելիս պետք է նկատի ունենալ ձևաիմաստային հատկանիշները։ Այս պատկերացմամբ մոտենալով խնդրին՝ չի կարելի հիշյալ չորս «հոլովները» ընդունել որպես առանձին հոլովաձևեր։ Ինչպես նշվեց, պատմականը, պարառա-

1 Տե՛ս Ա. Բագրատունի, «Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց», Վենետիկ, 1852 թ., Ա. Մ. Գարագաշյան, «Դպրութիւն կամ նոր քերականութիւն հայերէնի», Կոստանդնուպոլիս, 1862 թ., Մ. Պալասանյան, «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի», Թիֆլիս, 1865 թ., Ս. Մալխասյանց, «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», Թիֆլիս, 1891 թ., Հ. Աճառյան, «Գրաբարի [illegible]», Երևան, 1936 թ.

կանք և ներգոյականք նախդիրների (զ. ի) կիրառության առանձին դեպքերն են, իսկ այդպիսի դեպքերը գրաբարում շատ են (տե՛ս «Ներգոյականք և նախադրություն» գլուխը), այնպես որ համառոտ վարժեցնելու առնչված կլինեինք գրաբարի համար ընդունել այդ կարգի բազմաթիվ «հոլովներ»։ Իսկ կոչական բառերը, ինչպես հայտնի է, նախադասության անդամ չեն համարվում, բնականաբար որևէ հոլով ունենալ չեն կարող, մանավանդ որ գրաբարում էլ ընդհանրապես բառափոխական հատուկ ձևավորում չունեն։

## ՄԱՍՆԻԿԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱԲԱՐԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՄԵՋ

§ 40. Անունները հոլովվելիս ստանում են զանազան մասնիկներ[1]։ Այդ մասնիկները բաժանվում են 2 խմբի՝ հոլովիչների և հոլովակերտների։

Հոլովիչները բառի թեքման նշաններն են։ Գրաբարում դրանք հինգն են՝ Ա, Ե, Ի, Ո, ՈՒ։ Հոլովակերտներն առանձին հոլովների հատուկ մասնիկներն են, որոնք մասնակցում են հոլովների ձևավորմանը։ Հոլովիչները որոշում են հոլովումը, իսկ հոլովակերտները՝ հոլովը։

Հոլովակերտները ըստ հոլովների հետևյալներն են՝

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | չունի | Ք |
| Սեռ. | հազվադեպ | Ց |
| Տր. | | Ց |
| Հայց. | չունի | Ս |
| Բաց | Է կամ ոչինչ | Ց |
| Գործ. | Ւ, Վ, Բ | Ւք, Վք, Բք |

Եզակի սեռական և տրական հոլովներում հոլովակերտ մասնիկները շատ հազվադեպ են՝ Ն, Ջ, ՆՋ, իսկ տրականում՝ նաև ում։ Դրանք հանդես են գալիս շատ սահմանափակ բառերում, օրինակ՝ այր (=տղամարդ), սեռ., տր. առն, տէր—տեառն, գիւղ—գեղջ, կին—կնոջ, տիւ (=ցերեկ)—տուընջեան, հին, տրակ. հնում, նոր—նորում, այս—այսում և այլն։ Հոգնակի ուղղականում հանդես է գալիս նաև իկ հոլովակերտը միայն մարդ բառում։

[1] Այստեղ խոսքը չի վերաբերում այն դերանուններին, որոնք յուրահատուկ հոլովում ունեն (դերանվանական հոլովում)։



§ 41. Ըստ հոլովիչների տեղադրման բառերը երկու բնույթի փոփոխություն են ունենում՝ ներքնական և վերջադրական։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հոլովման բնույթն ըստ հոլովիչների տեղադրման կոչելու համար հայագիտության մեջ գործածվել են զանազան անվանումներ։ Ոմանք գործածել են բաղաձայն և ձայնավոր հոլովում. պրոֆ. Հ. Աճառյանն ընդունում է միջմասնկավոր և հետամասնկավոր հոլովումներ, պրոֆ. Ա. Ղարիբյանը՝ ներքին և արտաքին թեքում, պրոֆ. Գ. Ջահուկյանը՝ ձայնավորահանգ և ձայնորդահանգ հոլովումներ անվանումները։

Վերջադրական բնույթի հոլովման դեպքում հոլովիչը բառի վրա ավելանում է վերջից, առանց խախտելու նրա ամբողջականությունը, օրինակ՝ տիրան, սեռ. տիրանայ, փայտ—փայտի, ծառ—ծառոյ, ծով—ծովու, ճանապարհ—ճանապարհի, հոգն. սեռ. ճանապարհաց, պատանի—պատանւոյ, հոգն. սեռ. պատանեաց և այլն։

Ներքնական բնույթի հոլովման դեպքում հոլովիչը հանդես է գալիս բառի կազմում, դրվելով արմատի, իսկ եթե բառն ածանցավոր է՝ ածանցի վերջին բաղաձայնից առաջ, օրինակ՝ շուրթն—շրթան, հոգն. սեռ. շրթանց, սկիզբն—սկզբան, սկզբանց, թագութիւն—թագութեան—թագութեանց, շարժումն—շարժման—շարժմանց, դուստր—դստեր—դստերց (նաև՝ դստերաց), անգղ—անգեղ—անգեղց (նաև՝ անգեղաց), աղբիւր—աղբեր—աղբերց (նաև՝ աղբերաց), անձն—անձին—անձանց, հարսն—հարսին—հարսանց, աւր (օր)—աւուր—աւուրց և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պատմա-համեմատական մեթոդով վաղուց արդեն պարզված է, որ հոլովիչները սկզբնապես բառերի հիմքերի կազմում են եղել՝ կամ վերջում, կամ էլ վերջին ձայնորդից առաջ։ Ժամանակի ընթացքում նրանք վերածվել են հոլովիչների։ Հայերենում եզակի ուղղականում դրանք չեն պահպանվել։ Պատմական զարգացումը հանգեցրել է այն բանին, որ շատ ու շատ բառեր, որոնք նախապես չեն ունեցել (կամ չէին կարող ունենալ) այդ հնչյունները, մեզ հասած գրավոր հուշարձաններում հանդիպում են այս կամ այն հոլովիչով, որն ընդունում են հոլովման ժամանակ։ Քանի որ գրաբարում հոլովիչները գիտակցվում են որպես բառի ուղիղ ձևից անկախ քերականական մասնիկներ, ուստի և կարելի է խոսել նրանց տեղադրվելու մասին և այդ հիմունքով էլ որոշել հոլովման բնույթը։

§ 42. Ինչպես նշեցինք, բառի հոլովումը որոշվում է հոլովիչներով, այդ պատճառով էլ հոլովումները անվանվում են հոլովիչներով։ Գրաբարում բառի հոլովմանը կարող են մասնակցել մեկ կամ երկու հոլովիչներ։ Ըստ այդմ էլ հոլովումը երկու տեսակի է լինում՝ պարզ և խառն:

§ 43. Պարզ հոլովումն արտահայտվում է մեկ հոլովիչով. բառի թեքմանը մասնակցում է միայն մեկ հոլովիչ, որը հանդես է գալիս եզակի և հոգնակի թվերի բոլոր թեք հոլովներում, օրինակ՝ փայտ, եզ. սեռ. փայտի, հոգն. սեռ. փայտից, եզ. գործ. փայտիւ, հոգն. գործ. փայտիւք. շարժումն, եզ. սեռ. շարժման, հոգն. սեռ. շարժմանց, եզ. գործ. շարժմամբ, հոգն. գործ. շարժմամբք և այլն։

Գրաբարն ունի հինգ պարզ հոլովում։ Դրանք են՝ Ա, Ե, Ի, Ո, ՈՒ։

§ 44. Խառն հոլովումն արտահայտվում է երկու հոլովիչներով, որոնցից մեկը գործում է եզակի թվի սեռական, տրական և բացառական հոլովներում, իսկ մյուսը՝ եզակի գործիականում և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում, օրինակ՝ ճանապարհ, եզ. սեռ. ճանապարհի, եզ. գործ. ճանապարհաւ, հոգն. սեռ. ճանապարհաց, հոգն. գործ. ճանապարհաւք կամ ճանապարհօք (տե՛ս § 10), անձն, եզ. սեռ. անձին, եզ. գործ. անձամբ, հոգն. սեռ. անձանց, հոգն. գործ. անձամբք և այլն։

Գրաբարն ունի երկու խառն հոլովում՝ Ի—Ա, Ո—Ա։ Այսպիսով ստացվում է 7 հոլովում՝ Ա, Ե, Ի, Ո, ՈՒ, Ի—Ա, Ո—Ա։

## ՀՈԼՈՎՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 45. Եզակի ուղղականը բառի ուղիղ ձևն է, չունի հոլովիչ և հոլովակերտ, օրինակ՝ տիտան, աղեղն, դուստր, ճառագայթ, գետ, ծով, այր (որ), սահման, անձն, պատանի:

Հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականից՝ ք հոլովակերտի (մարդ բառի համար նաև իկ) ավելացումով, օրինակ՝ տիտանք, ճառագայթք, գետք, ծովք, սահմանք, պատանիք: Ներդրական բնույթի հոլովման ընթացքում հոգնակի ուղղականում բառի կազմում հանդես են գալիս ա, ե, ի ձայնավորները և ու երկբարբառային ձայնավորը, օրինակ՝ կողմն—կողմանք, դուստր—դստերք, անձն—անձինք, աղեղն—աղեղունք, մասն—մասունք և այլն։[1]

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Վերջադրական բնույթի հոլովում ունեցող որոշ բառեր ներդրական բնույթի հոլովում ունեցող բառերի նմանակությամբ հոգնակի ուղղականում վերջավորվում են ունք-ով, օրինակ՝ եպիսկոպոս—եպիսկոպոսունք (նաև՝ եպիսկոպոսք), խոնչան—խոնչանունք, երագ—երագունք (նաև՝ երագք), նուագ—նուագունք (նաև՝ նուագք), պառաւ—պառաւունք, պատերազմ—պատերազմունք և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Հոգնակիությունն արտահայտվում է նաև այլ մասնիկների միջոցով՝ ա) ական—դաստանական, գրաստական, գառական, բ) ան—իշան (նաև՝ իշանք, իշեան), ձիան, գ) անի—աղքատանի, ամրոցանի, աւագանի, գլխանի (գլխանոյն—Բուզ., V, Դ, էջ 197), երիցանի, կանանի, ճամկանի, չաղացանի, դ) եան—բերդեան, գիւղեան, զարմեան, գրեան (նաև՝ գրեանք), թղթեան, խոզեան, խորգեան (=կոշիկներ), ճանճեան (նաև՝ ճանճենի), մոգեան (=մոգեր, պարսից կրոնավորներ, կախարդներ), մարդեան, նախարարեան, չարաքեան, ե) եար—բանեար (=խոսքեր, բանավեճ, բանակռիվ), փանեար (նաև՝ փաներ=փանդեր), վարժեար (=վարպետներ, ուսուցիչներ), զ) եար—բարձկեար (=բարձիկներ), նաւկեար (=նավակներ), է) օրեայ կամ օրայ (նաև՝ օրեայք)—արտորեայ (=արտեր), վանորայ կամ վանորեայք, ը) տի կամ ոտի—մանկտի, ծակտի, ոսկրոտի, փորոտի:

Այս մասնիկները մեծ մասամբ արտահայտում են հավաքականության իմաստ։ Այս պատճառով նման մասնիկներ ունեցող բառերից շատերը հոլովվում են նաև եզակի թվով, օրինակ՝ աւագանի—աւագանւոյ, գրեան—գրենոյ և այլն։

§ 46. Գրաբարում կան բառեր, որոնք գործածվում են միայն հոգնակի ձևով. դրանք կոչվում են անեզական բառեր, օրինակ՝ ստացք, արեւելք, արեւմուտք, խոսք, կամք, կեանք, խելք, միտք, փառք և այլն։ Այդ կարգի բառերը հոլովվում են հոգնակի թվով.

1 Ըստ ավանդույթի բառեր հոլովման մեջ հանդես են գալիս նաև խառն հոլովման անհամանմանական պատկերով, ինչպես նաև այլ հոլովիչների համադրությամբ՝ ոչ հիշատակված ձևերով։ Դրանց մասին նշվում է առանձին։

1 Այս երևույթը սերտորեն կապված է այս կարգի որոշ բառերի անփոփոխ ձևերի՝ նախագրաբարյան շրջանում ունեցած յուրահատուկ կազմության հետ (վերջին ձայնավորից առաջ հիմնային ձայնավորի գոյությունը)։ Հոգնակի ուղղականում ակներև են պատմական փոփոխությունները, որոնց առանձնահատկության հարցը ակնհայտ է այս ձևաբանական երևույթներից։ Ներդրական հոլովման որոշ բառերում արտացոլված է ձայնդարձի երևույթը։

սակայն բառ գործածության կարող են արտահայտել և՛ եզակի, և՛ հոգնակի իմաստ։ Տեղ-տեղ հանդիպում են նաև եզակի ձևով, օրինակ՝ «...Կամ եղև գիտել սորա...»՝ Սա կամեցայ իմանալ (Խոր., I, Ը, էջ 29)։ «Մեք ի մտի եդաք...»՝ Մենք միտք (մտադրում) դրեցինք, մտադրվեցինք (Եղիշե, I, էջ 15)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հոգնակի ուղղականի ք հոլովակերտի հետ չպետք է շփոթել բառավերջում գտնվող արմատական կամ որպես ածանցական մասնիկ գտնվող ք բաղաձայնը, օրինակ՝ բողոք (սեռ. բողոքոյ), բուք (սեռ. բքոյ), թուք (թքոյ), թոք[1] (թոքոյ), կնիք (կնքոյ), կոնք (կոնքի), ջուք (ջքոյ), ողոք=աղաչանք, շողոքորթություն (ողոքոյ), սիք կամ սիւք[2]=հով, բամբ (սրոյ, նաև՝ սքի), սլաք (սլաքի, հոգն. սեռ. սլաքաց), ցամաք (ցամաքի—ցամաքաց), փուք (փքոյ), բուք=փչող զավաշան, այն էուՙ նույնանուն բառը՝ որը, հասալ նշանակությամբ (բքոյ), քաղաք (քաղաքի—քաղաքաց) և այլն։

§ 47. Եզակի սեռականը կազմվում է եզակի ուղղականից՝ համապատասխան հոլովիչների (առկայ բառերում՝ նաև հոլովակերտների) ավելացումով, օրինակ՝ տիտան-տիտանոյ[3], աղեղն-աղեղան, դուստր—դստեր, ճառագայթ—ճառագայթի, գետ—գետոյ, ծով—ծովու, աւր—աւուր, սահման—սահմանի, անձն—անձին, պատանի—պատանւոյ։

Հոգնակի սեռականը կազմվում է եզակի սեռականից՝ ց հոլովակերտի մասնիկի ավելացումով, օրինակ՝ տիտանոյ—տիտանոց, աղեղան—աղեղանց, դստեր—դստերց, ճառագայթի—ճառագայթից, գետոյ—գետոց, ծովու—ծովուց, աւուր—աւուրց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բառավերջի յ-ն (գրված ա-ից և ո-ից հետո) ց հոլովակերտից առաջ հանդես չի գալիս. նաև հոլովման դեպքում հոգնակի սեռականում հոլովիչն արդեն փոխված է լինում (տե՛ս § 44), օրինակ՝ սահմանի—սահմանաց, անձին—անձանց, պատանւոյ—պատանեաց։

§ 48. Եզակի տրականը կազմվում է եզակի սեռականի նման, միայն որոշ տարբերությամբ[4]։ Այդ տարբերությունը արտահայտվում է գլխավորապես ում հոլովակերտով, որը հանդես է գալիս առանձին բառերի եզակի տրականում (տե՛ս § 40)։ Եվ, բացի դրանից, որոշ բառեր եզակի տրականում երկրորդաբար ու-

[1] Հանդիպում է նաև բարդ ձևով։

[2] Կա նաև [illegible] ձևով։

[3] Որպես կանոն ա և ո ձայնավորներից հետո բառավերջում գրվում է յ։

[4] Այստեղ խոսքը լոկ ձևի մասին է և ոչ թե իմաստի։



ստանում են ջ հոլովակերտը, իսկ սեռականում չեն ունենում, օրինակ՝ տեղի, սեռ. տեղւոյ, տր. տեղւոյ կամ տեղւոջ (մասնավորապես ի նախդիրի հետ գործածվելիս), տարի, սեռ. տարւոյ, տր. տարւոյ կամ տարւոջ։

Հոգնակի տրականը կազմվում է հոգնակի սեռականի նման։

§ 49. Եզակի հայցականը կազմվում է եզակի ուղղականից, իսկ հոգնակի հայցականը՝ հոգնակի ուղղականից, որի ք հոլովակերտը փոխարինվում է ս հոլովակերտով։ Եթե բառը գործածվում է որոշյալ առումով, սկզբից ընդունում է զ նախդիրը։ Օրինակ՝ եզ. զտիտան, զաղեղն, զդուստր, զճառագայթ, զգետ, զծով, զաւր (զօր), զսահման, զանձն, զպատանի, հոգն. զտիտանս, զաղեղունս, զդստերս, զճառագայթս, զգետս, զծովս, զաւուրս, զսահմանս, զանձինս, զպատանիս։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Զ նախդիրը բաղաձայնից առաջ արտասանվում է ըզ՝ զճառագայթ—ըզճառագայթ, զպատանի—ըզպատանի, իսկ ձայնավորից առաջ՝ զ, օրինակ՝ զաւրս, զանձն և այլն։

§ 50. Բացառական հոլովը կազմվում է տրականից (եզակին՝ եզակիից, հոգնակին՝ հոգնակիից)։ Սկզբից ունենում է ի նախդիրը, որը ձայնավորից առաջ վերածվում է յ-ի և արտասանվում է ը։ Եզակի բացառականը վերջից ստանում է է հոլովակերտը, օրինակ՝ յաղեղանէ (կարդալ ըաղեղանէ), ի դստերէ, ի ճառագայթէ, ի ծովէ, ի սահմանէ, յանձնէ (կարդալ ըանձնէ)։

Եթե բառը եզակի բացառականում ունի Ա կամ Ո հոլովիչը և վերջադրական բնույթի հոլովման է ենթարկվում, հոլովակերտ մասնիկ չի ընդունում, օրինակ՝ ի տիտանոյ, ի գետոյ, ի պատանւոյ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Ո հոլովիչ ունեցող այն բառերը, որոնք եզակի տրականում հանդես են գալիս ջ կամ ում հոլովակերտներով, եզակի բացառականում ստանում են է հոլովակերտը, օրինակ՝ տարի—տարւոջ—ի տարւոջէ, տեղի—տեղւոջ—ի տեղւոջէ, առաջին—առաջնում—յառաջնմէ և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Եզակի բացառականում տեղ-տեղ հանդիպում է ուստ մասնիկը, որը գործուն չէ և վեր է ածվել մակբայակերտ վերջածանցի, օրինակ՝ յարքունուստ կամ արքունուստ (=արքունիքից), յերկնուստ կամ երկնուստ (=երկնքից), յօտարուստ կամ օտարուստ (=օտար տեղից) և այլն (տե՛ս «Մակբայ» գլուխը)։

Հոգնակի բացառականը, ինչպես նշվեց, կազմվում է հոգնակի տրականից՝ սկզբից ստանալով ի նախդիրը, օրինակ՝ տի-

տանց—ի տիտանց, աղեղանց—յաղեղանց, դստերց—ի դստերց, ճառագայթից—ի ճառագայթից, գետոց—ի գետոց, ծովուց—ի ծովուց, սահմանաց—ի սահմանաց, անձանց—յանձանց, պատանեաց—ի պատանեաց և այլն:

§ 51. Եզակի գործիականը կազմվում է եզակի սեռականից համապատասխան հոլովակերտ մասնիկներ ստանալով: Նաև հոլովման դեպքում հոլովիչը փոխվում է (§ 44): Եզակի սեռականում Ա և Ո հոլովիչներից հետո եղած յ-ն այստեղ դուրս է ընկնում:

Վ հոլովակերտը դրվում է Ո հոլովիչից հետո, օրինակ՝ գետով, ծառով:

Ւ հոլովակերտը դրվում է Ա և Ի հոլովիչներից հետո, օրինակ՝ տիտանաւ (Ա), սահմանաւ (Ի—Ա), ճառագայթիւ, փայտիւ, սրտիւ (Ի), պատանեաւ (Ո—Ա):

Բ հոլովակերտը դրվում է բաղաձայնով վերջացող հիմքի վրա, օրինակ՝ դստեր—դստերբ, աւուր—աւուրբ: Եթե հիմքը վերջանում է Ն բաղաձայնով, վերջինս առնմանության օրենքով (ասիմիլյացիա) վերածվում է մ-ի, օրինակ՝ աղեղան+բ=աղեղամբ, հիման+բ=հիմամբ, անձան+բ=անձամբ:

Ու հոլովիչից հետո որևէ հոլովակերտ չի դրվում, օրինակ՝ ծով, սեռ. ծովու, գործ. ծովու, կով, սեռ. կովու, գործ. կովու:

Հոգնակի գործիականը կազմվում է եզակի գործիականից ընդունելով ք, օրինակ՝ տիտանաւ—տիտանաւք (օք), դստերբ—դստերբք (երկրորդական ձևերի մասին տե՛ս համապատասխան տեղում), ճառագայթիւ—ճառագայթիւք, գետով—գետովք, ծովու—ծովուք, սահմանաւ—սահմանաւք (օք), անձամբ—անձամբք, պատանեաւ—պատանեաւք (եօք):

§ 52. Ներգոյական հոլովի իմաստը[1] դրսևորվում է տրական և հայցական հոլովների ու ի նախդիրի միջոցով: Ներգոյական հոլովի իմաստն արտահայտելու համար ի նախդիրը դրվում է եզակի տրականի և հոգնակի հայցականի վրա, իսկ եթե բառը եզակի տրականում ունի Ա կամ Ո հոլովիչը և ենթարկվում է վերջադրական բնույթի հոլովման, այս դեպքում եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է եզակի հայցականի միջոցով:

[1] Հայտնի է, որ արդի հայերենը ներգոյական հոլովի համար հատուկ հոլովաձև ունի: Այդ հոլովաձևի իմաստային դրսևորումները գրաբարում ցույց տալու նպատակով առանձին հեղինակներ մյուս հոլովների հետ հիշատակում են նաև ներգոյականը: Տե՛ս Ա. Առաքելյան, «Գրաբարի դասագիրք», Երևան, 1944 թ. (մասն Ա), Վ. Առաքելյան, «Գրաբարի հոլովումը և խոնարհումը (համառոտ դասընթաց)», Երևան, 1945 թ.:



Օրինակներ՝ ի տիտան, յաղեղան, ի դստեր, ի ճառագայթի, ի գետ, ի ծովու, ի սահմանի, յանձին, ի պատանի: Հոգն. ի տիտանս, յաղեղունս, ի դստերս, ի գետս, ի ծովս, ի ճառագայթս, ի սահմանս, յանձինս, ի պատանիս:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Եզակի տրականում Ո հոլովիչ ունեցող այն բառերը, որոնք բացի հոլովիչից ստանում են նաև ջ և ում հոլովակերտները, ներգոյական հոլովի իմաստի դրսևորման դեպքում հանդես են գալիս այդ հոլովակերտներով և նախդիրն ընդունում են ոչ թե հայցականի, այլ տրականի վրա, օրինակ՝ յայգւոջ, ի տաւոջ, ի տեղւոջ, ի կղզւոջ, յառաջնում, ի միում, ի նորում (սովորաբար հոգնակի՝ ի նմանն, ի նորանս), ի վերջնում և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ո հոլովիչ ունեցող բառերից մի քանիսը եզակի թվում ստանում են Ի հոլովիչ՝ ի մարմնի, ի փորի և այլն, փոխ. ի մարմին, ի փոր (ավելի մանրամասն տե՛ս § 58):

## ՊԱՐԶ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

### 1. Ա պարզ հոլովում

§ 53. Ա պարզ հոլովումը լինում է և՛ վերջադրական, և՛ ներդրական բնույթի:

### Ա. վերջադրական հոլովում

§ 54. Բոլոր թեք հոլովներում բառի վերջում հանդես է գալիս Ա հոլովիչը, որից հետո թեև սովորաբար դրվում է յ ձայնորդը, սակայն չի արտասանվում, իսկ հոլովակերտից առաջ դուրս է ընկնում: Եզակի բացառականը հոլովակերտ մասնիկ չի ստանում: Եզակի գործիականն ընդունում է ւ հոլովակերտը:

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է եզակի և հոգնակի հայցականի միջոցով: Օրինակ՝

| Եզակի թ. | | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | տիտան[1] | տիտանք |
| Ս. | տիտանայ | տիտանաց |
| Տ. | տիտանայ | տիտանաց |
| Հ. | (զ)տիտան | (զ)տիտանս |
| Բ. | ի տիտանայ | ի տիտանաց |
| Գ. | տիտանաւ | տիտանաւք (օք) |

Ա պարզ վերջադրական հոլովման ենթարկվում են՝

ա) Հատուկ անունների մեծ մասը (միայն եզակի թվով), օրինակ՝ Անակ, Անահիտ (Անահտայ), Ապիրատ, Արամ, Արշակ, Բէլ (Բելայ կամ Բէլայ), Երասխ, Երուանդ, Հայկ, Հռոմ, Մաժակ, Մեսրոպ, Մծբին (Մծբնայ), Սահակ, Վաղարշակ, Վարդան, Տիգրան, Տիրան, Տրդատ և այլն։

Հոլովման օրինակներ

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | Արշակ | Վարդան | Տիգրան |
| Ս. | Արշակայ | Վարդանայ | Տիգրանայ |
| Տ. | Արշակայ | Վարդանայ | Տիգրանայ |
| Հ. | զԱրշակ | զՎարդան | զՏիգրան |
| Բ. | յԱրշակայ | ի Վարդանայ | ի Տիգրանայ |
| Գ. | Արշակաւ | Վարդանաւ | Տիգրանաւ |

բ) Մի շարք անեզական հատուկ անուններ՝ Ալանք, Գամիրք (Գամրաց), Գուգարք, Սոփք, Մարք, Միջագետք, Մոկք, Վիրք (Վրաց), Տաշիրք (Տաշրաց), Քուշանք և այլն։

Հոլովման օրինակներ

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | Տաշիրք | Քուշանք |
| Ս. | Տաշրաց | Քուշանաց |
| Տ. | Տաշրաց | Քուշանաց |
| Հ. | զՏաշիրս | զՔուշանս |
| Բ. | ի Տաշրաց | ի Քուշանաց |
| Գ. | Տաշրաւք (օք) | Քուշանաւք (օք) |

[1] Միակ հասարակ անունն է, որ հոլովվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով, որը, սակայն, ծագումով հատուկ անուն է, բառիմաստի ընդլայնման օրինքով վերածվել է հասարակ անվան։ Եզակի թվի թեք հոլովաձևեր կան հիշատակված նաև ի հոլովիչով։



գ) Հունական աս, էաս, էոս, էս, իոս, ոս հնչյունական կապակցություններով վերջավորվող հատուկ անուններ[1], ինչպես՝ Ագրիպպաս, Ղուկաս, Անդրէաս, Տիմոթէոս, Աքիլլէս, Հերակլէս, Տիբերիոս, Հոմերոս և այլն[2]։ Թեք հոլովներում այդ կապակցությունների աս, ոս, ս մասերը դուրս են ընկնում, իսկ բառավերջում մնացած է-ն և ի-ն Ա հոլովիչից առաջ վերածվում են ե-ի, այսպես՝ Անդրէաս—Անդրէ (—աս)+այ=Անդրեայ, Տիմոթէոս—Տիմոթէ (—ոս)+այ=Տիմոթեայ, Աքիլլէս—Աքիլլէ (—ս)+այ=Աքիլլեայ, Հերակլէս—Հերակլէ (—ս)+այ=Հերակլեայ, Տիբերիոս—Տիբերի (—ոս)+այ=Տիբերեայ, բայց՝ Ղուկաս—Ղուկայ (նաև՝ Ղուկասու, տե՛ս § 59, գ), Հոմերոս—Հոմերայ, Ագրիպպաս—Ագրիպպայ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— էս-ով վերջավորվող որոշ հատուկ անուններ թեք հոլովներում ամբողջովին զրկվում են էս-ից, օրինակ՝ Վրթանէս—Վրթանայ, Արիստակէս—Արիստակայ (բայց նաև՝ Արիստակեսայ), Հիպոկրատէս—Հիպոկրատայ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Մի շարք հատուկ անուններ թեք հոլովներում ոս-ի անկումից հետո թեև չեն վերջավորվում է-ով կամ ի-ով, սակայն Ա հոլովիչից առաջ ստանում են ե, օրինակ՝ Դամասկոս—Դամասկեայ, Եփեսոս—Եփեսեայ, Կադմոս—Կադմեայ, Կիպրոս—Կիպրեայ, Փիլիպպոս—Փիլիպպեայ և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Այս կարգի հատուկ անուններից մի քանիսը իբրև կոչական գործածվելիս երբեմն վերջում ունենում են է, օրինակ՝ Իգնատիէ՛, Տիմոթէէ՛, Փիլիպպէ՛ և այլն։

Հոլովման օրինակներ

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | Հերակլէս | Հոմերոս |
| Ս. | Հերակլեայ | Հոմերայ |
| Տ. | Հերակլեայ | Հոմերայ |
| Հ. | զՀերակլէս | զՀոմերոս |
| Բ. | ի Հերակլեայ | ի Հոմերայ |
| Գ. | Հերակլեաւ | Հոմերաւ |

[1] Այս կարգի հատուկ անուններից մի քանիսը հոլովվում են **Ի** հոլովիչով, տե՛ս § 57, դ։

[2] Սրանցից ավելիները, որոնք այլ ծագում ունեն, սակայն գործածվում են հունարենի միջնորդությամբ, ընդունած լինելով համապատասխան հնչյունափոխություններ՝ հոլովվում են նշված ձևով։

գ) Է-ով վերջավորվող մի քանի հատուկ անուններ, որոնց Ա հոլովիչից առաջ Է-ն վերածվում է Ե-ի, օրինակ՝ Գայիանէ—Գայիանեայ, Հեղինէ—Հեղինեայ, Հռիփսիմէ—Հռիփսիմեայ, Մանէ—Մանեայ, Վահէ—Վահեայ և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Թեք հոլովներում նույնպիսի փոփոխության են կրում նաև—ուհի վերջածանց ունեցող մի քանի հատուկ անուններ, օրինակ՝ Զարուհի—Զարուհեայ, Տիգրանուհի—Տիգրանուհեայ, որոնք հոլովվում են նաև Ո—Ա խառն հոլովմամբ։ Այսպես նաև՝ Եսայի—Եսայեայ, որը վերջավորվում է Ի-ով, իսկ սա էլ հոլովիչից առաջ դառնում է Ե։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Է-ով վերջավորվող հատուկ անունները շատ սակավ դեպքերում սեռական հոլովում հանդես են գալիս առանց հոլովական վերջավորության, օրինակ՝ Մանովէ (Դատ., ԺԳ. 8, 21), փոխ. Մանովեայ։

ե) Ա-ով և իա-ով վերջավորվող հատուկ անունները՝ Աննա, Ասիա, Գալիլիա, Եղիա, Զուիթա, Կեսարիա, Մակեդոնիա, Տաբիտա, Սամարիա և այլն։ Սրանք եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում վերջից ունենում են յ (որը չի արտասանվում)։ Առանձին դեպքերում ի ձայնավորը վերածվում է Ե-ի։ Օրինակ՝ Աննա, սեռ. Աննայ, Ասիա—Ասիայ, Գալիլիա—Գալիլեայ, Եղիա—Եղիայ, Զուիթա—Զուիթայ, Կեսարիա—Կեսարիայ կամ Կեսարեայ, Մակեդոնիա—Մակեդոնիայ, Տաբիտա—Տաբիտայ, Սամարիա—Սամարիայ կամ Սամարեայ։ Երբեմն էլ Ե է հանդես գալիս այնտեղ, ուր ի չկա, օրինակ՝ Արեսսա—Արեսսայ կամ Արեսսեայ, Սիբիլլա—Սիբիլլեայ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Այս կարգի հատուկ անունները կարող են հոլովվել նաև Ի հոլովիչով, օրինակ՝ Աննայի, Յուդայի, Տաբիտայի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Իա-ով վերջավորվող հատուկ անունները հանդիպում են նաև Ո հոլովիչով՝ Եղեսիա—Եղեսիոյ, Զմիւռնիա—Զմիւռնիոյ, Նիկիա—Նիկիոյ։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ սա մեր լեզվում համեմատաբար ուշ շրջանի երևույթ է։

### Ա ներդրական հոլովում

§ 55. Այս դեպքում ևս բոլոր թեք հոլովներում գործում է Ա հոլովիչը, որը, սակայն, հանդես է գալիս բառի կազմում։ Եզակի բացառականն ունենում է Է հոլովակերտը, իսկ գործիականը



ը, որից առաջ Ն բաղաձայնը առնմանության օրենքով վերածվում է Մ-ի։

Հոգնակի ուղղականում բառի կազմում հանդես է գալիս ու երկբարբառային ձայնավորը[1], և այդպիսով բառը վերջավորվում է ունք-ով՝ ատամն—ատամունք, սկիզբն—սկզբունք և այլն։ Մի քանի բառերում գործածվում է ա ձայնավորը, օրինակ՝ ակն (ակնեղենի իմաստով)— ականք, անուն—անուանք, կողմն—կողմանք (կողմունք), ջերմն—ջերմանք, սերմն—սերմանք (նաև՝ սերմունք, սերմանիք)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անուն բառը բարդությունների մեջ հոգնակի ուղղականում սովորաբար ա ձայնավոր չի ստանում, օրինակ՝ Քաջանունք (Բուզ., IV, Բ, էջ 104)։

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ եզակի տրականով և հոգնակի հայցականով։

### Հոլովման օրինակներ

| | Եզակի թ. | | Հոգնակի թ. | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | ձուկն | գագաթն | ձկունք | գագաթունք |
| Ս. | ձկան | գագաթան | ձկանց | գագաթանց |
| Տ. | ձկան | գագաթան | ձկանց | գագաթանց |
| Հ. | (զ)ձուկն | (զ)գագաթն | (զ)ձկունս | (զ)գագաթունս |
| Բ. | ի ձկանէ | ի գագաթանէ | ի ձկանց | ի գագաթանց |
| Գ. | ձկամբ | գագաթամբ | ձկամբք | գագաթամբք |

Ա պարզ ներդրական հոլովման ենթարկվում են՝

ա) Ն-ով և նրան նախորդող մի այլ բաղաձայնով վերջավորվող բառերի մի մասը, այսպես՝ ակն, աղեղն, ամառն, ասեղն, բուրգն, գագաթն, գեղարդն=կռթավոր տեգ, մեծ նիզակ (սեռ. գեղարդան կամ գեղարդեան), դրակն, դուռն, եղեռն, եղէգն, երկն, թէկն (կամ թեկն), թիթեղն, լիսեռն, խուռն, ծիծառն (ծիծառան) կամ ծիծեռն (ծիծռան), կայծակն, կնճիռն, հիւսն, ձմեռն, ձուկն, ձղուռն, մատուռն, մուկն, նուռն, չուրթն, ոլոռն (կամ ոլեռն), սողն, ոտն, ուսն, ունկն, ուռն (=մուրճ, կռան, զամ), պճեղն, պայուն=պուտուկ (պուտան), ռունգն, սիսեռն (սիսռան կամ սիսեռան), սկիզբն, փայլակն, փայծաղն, քիրտն և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Այս բառերի պես է հոլովվում նաև խուրձ բառը (սեռ. խրձան, հոգն. ուղղ. խրձունք, սեռ. խրձ-

[1] Սա կազմվում է վաղ ժամանակներում գործող ձայնդարձի օրենքի հետ

ձանց), թեև վերջում ն չունի։ Ինչպես երևում է, դա եղել է խուրձն ձևով և ժամանակի ընթացքում ուղղականում կորցրել է ն հնչյունը։ Դրանում կարելի է համոզվել հետևյալ փաստերով. ա) հայտնի է, որ արդի գրական լեզվում վերը ցույց տրված բառերից գրեթե բոլորը ուղիղ ձևերում հանդես են գալիս առանց վերջին ն հնչյունի, իսկ բառի անման դեպքում (հոլովվելիս, բարդվելիս կամ ածանցվելիս) այդ հնչյունը կարող է պահպանվել, օրինակ՝ գառ—գառան, գառներ, գառնուկ, գառնայան, աղեղ—աղեղնավոր, ասեղ—ասեղնագործել, եղեգ—եղեգնուտ, ձուկ—ձկան, ձկնավաճառ և այլն. բ) գրաբարում որոշ բառեր զուգահեռաբար հանդես են գալիս և ն-ով, և առանց դրան, օրինակ՝ խուփ կամ խուփն. եզ. սեռ. խփան, հոգն. ուղղ. խփունք, սեռ. խփանց, կրուկ կամ կրուկն (նաև՝ կրունկ)—կրկան, կրկունք—կրկանց։

Հ. Աճառյանը «Հայերէն արմատական բառարան»-ում անվերապահորէն դնում է խուրձն ձևով (հատ. III, էջ 623), թեև մատենագրության մեջ խուրձ է, և բոլոր բառարաններն էլ բերում են վերջին ձևով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ն հնչյունին նախորդող ռ հնչյունը նրանից հեռանալով վերածվում է ր-ի (վերադառնում է իր նախկին վիճակին), օրինակ՝ ամառն—ամարան, բայց նաև՝ ամառան, դուռն—դրան—դրունք, եղեռն—եղերան կամ եղեռան, ձմեռն—ձմերան—ձմերունք, մատուռն—մատրան—մատրունք, ոլոռն—ոլորան կամ ոլոռան, իսկ որոշ բառերում նույնությամբ պահպանվում է, օրինակ՝ լիսեռն—լսռան կամ լիսռան, խուռն—խռան, ծիծառն—ծիծառան || ծիծեռն—ծիծռան, կճիռն—կճռան, ճյուռն—ճյուռան, նուռն—նռան, ուռն—ուռան, սիսեռն—սիսռան կամ սիսեռան։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Ակն բառը աղբյուրի աչքի իմաստով հոգնակի ուղղականում ունենում է ակունք ձևը, գոհարեղենի իմաստով՝ ականք, իսկ աչքի իմաստով հոգնակի թվում գործածվում է աչք ձևը, որը, սակայն, ենթարկվում է վերջադրական հոլովման՝ աչաց։ Դուռն բառը հոգնակիի դրունք ձևի հետ ունի նաև դուրք ձևը[1]։ Այս դեպքում վերջադրական հոլովմամբ է հոլովվում՝ դրաց։ Ունկն բառը ականջի իմաստով հոգնակիում ունենում է ականջք ձևը, որը վերջադրական

[1] Սրանք իմաստային նուրբ տարբերություն ունեն. դուրք ձևը գործածվում է դրսի դռան իմաստով։



բնույթի հոլովում ունի՝ ականջաց, կա նաև ունկունք օրինակային ձևը, որը գործածվում է կարթի, ամանի ունկի իմաստով։ Եղեռն բառը եղերունք ձևին զուգահեռ ունի նաև եղերք ձևը (ըստ ՀՀԲ-ի), իսկ նուռն բառը՝ նռունք ձևի հետ նաև նռնունք ձևը (վերջինը նորին է, ընտիր է առաջինը)։ Ունգն բառի ունգունք ձևից բացի, ուշ շրջանի մատենագրության մեջ հիշատակված է նաև ունգք—ունգաց։ Քիրտն բառի հոգնակին զուգահեռաբար լինում է Քրտունք և Քրտինք։

բ) Այն բառերը, որոնք ունեն ումն վերջածանցը, օրինակ՝ ազգումն, անկումն, գնդերումն, երգումն, երևումն, խոստումն, խոտորումն, կոչումն, հարցումն, շարժումն և այլն։

Հոլովման օրինակ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | հարցումն | հարցմունք |
| Ս. | հարցման | հարցմանց |
| Տ. | հարցման | հարցմանց |
| Հ. | (զ)հարցումն | (զ)հարցմունս |
| Բ. | ի հարցմանէ | ի հարցմանց |
| Գ. | հարցմամբ | հարցմամբք |

գ) Այն բառերը, որոնք վերջում ունեն մն. այծեամն—այծեման, ատամն, եղեամն—եղեման, կողմն, կատիմն—կատման, հիմն, որոմն, ջերմն[1], սերմն և այլն։ Սրանց պես հոլովվում է նաև պաշտոն բառը, որը նախ ունեցել է պաշտաումն ձևը, որտեղ ն-ից առաջ մ-ն վերածվել է ւ-ի, և այդպիսով ստացվել է պաշտաւն (պաշտոն)։ Այդ սկզբնական ձևը պարզ կերպով երևում է եզակի թվի թեք հոլովներում և հոգնակի թվի բոլոր հոլովներում՝ եզակի Ս. պաշտոն—պաշտաման, պաշտաման, զպաշտոն, ի պաշտամանէ, պաշտամամբ, հոգն. Թ. պաշտամունք—պաշտամանց, պաշտամանց, զպաշտամունս, ի պաշտամանց, պաշտամամբք։

դ) Ուն-ով վերջավորվող մի քանի բառեր՝ անուն (սեռ. անուա-

[1] Ջերմն բառը կա նաև ջերմ ձևով. այս դեպքում հոլովվում է Ո կամ Ի հոլովիչներով՝ ջերմոյ կամ ջերմի։ Արմատն է ջեր՝ մն մասնիկով, ինչպես որ կա կողմն, սերմն բառերում (արմ. կող, սեր)։ Նույնը չի կարելի ասել եղեամն, կոտիմն, հիմն, որոմն բառերի մասին. ստուգաբանորեն որոնց ծագումն անհայտ է. Իսկ այծեամն բառի արմատն է այծ։ Ստուգաբանորեն մասնավորապես՝ կարելի է ասել, որ ատամն բառի մեջ էլ մն մասնիկ է եղել, թեև հայերենի մեջ անկախ ատ կամ ատա արմատական բառ չկա։ Կոտիմն կա նաև կոտիմ, կատեմ ձևերով։

ան), ձեղուն—առաստաղ, տանիք, գաւիթ (սեռ. ձեղուան), ջուն (ջան), տուն (տան)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Ձեղուն, ջուն, տուն բառերը հոգնակի ուղղականում միայն ընդունում են Ք հոլովակերտը՝ **ձեղունՔ, ջունՔ, տունՔ**։

**Ուն**-ով վերջավորվող բառերի նմանակությամբ հոլովվում են նաև **գարուն** և **աշուն** բառերը, սեռ. գարնան, աշնան։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Հաճախ **աշուն, գարուն**, ինչպես նաև **ամառն, ձմեռն** բառերը գործածվում են ածանցված ձևով՝ աշնայնի, աշնանի, գարնային, գարնայնի, ամարայնի, ամարանի, ձմերային, ձմերայնի, ձմերանի, որոնք հոլովվում են այլ սխեմայով, օրինակ՝ աշնայնի—աշնայնոյ, աշնանի—աշնանւոյ, գարնային—գարնայնոյ, գարնայնի—գարնայնւոյ, ամարայնի—ամարայնւոյ կամ ամարայնոյ, ձմերային—ձմերայնոյ, ձմերայնի—ձմերայնւոյ, ձմերանի—ձմերանւոյ կամ ձմերանոյ։ **Ամարանի, ամարայնի, ձմերայնի, ձմերանի, գարնայնի, գարնայնոյ, աշնայնի, աշնանի** ձևերը գլխավորապես մակբայական կիրառություն ունեն՝ **ամռանը** կամ **ամառը, ձմռանը** կամ **ձմեռը, գարնանը** կամ **գարունը, աշնանը** կամ **աշունը** նշանակությամբ։

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ **ձմեռն** բառի համար ավելի վաղ են վկայված **ձմերայնոյ** (սեռ.), **ձմերայնով** (գործ.), քան **ձմերան, ձմերանց** (սեռ.) ձևերը, թեև հին են նաև սրանց ուղղականի ձևերը՝ **ձմեռն, ձմերունՔ**։

**Անուն** և **ձեղուն** բառերի նմանությամբ հոլովվում է **մահ**[1] բառը՝ սեռ. մահուան, հոգն. ուղղ. մահունք (հազվադեպ նաև՝ մահուանք)։ **Մահ** բառը հոլովվում է նաև **Ու** հոլովիչով՝ եզ. սեռ. մահու, հոգն. ուղղ. մահք, սեռ. մահուց։ Ավելի տարածված է վերջին ձևը։

ե) **Իկ** և **ուկ** փոքրացուցիչ-փաղաքշական ածանց ունեցող մի շարք բառեր (որոշ բառերում ածանցը չի գիտակցվում)՝ աղջիկ—աղջկան, գործ. աղջկամբ կամ աղջկաւ, հոգն. ուղղ. աղջկունք, սեռ. աղջկանց, անդրանիկ (մասամբ)—անդրանկան (նաև՝ անդրանկի), հոգն. ուղղ. անդրանիկք, սեռ. անդրանկաց, խորիկ—խորկան (նաև՝ խորկի)—խորկունք, ծաղիկ[2]—ծաղկան, ծաղկունք—ծաղկանց

[1] Ստ. Մալխասյանցն այն կարծիքն է հայտնում, որ այս բառը **մահ** ձևի հետ նախապես ունեցել է նաև **մահուն** ձևը՝ «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», Թիֆլիս, 1891 թ., էջ 25—26։

[2] Դժվար է ասել, թե **ծաղիկ** բառում **-իկ**-ը որևէ ածանց է, քանի որ տվյալ բառի ծագումն անհայտ է։ Նույնը վերաբերում է նաև **անդրանիկ** բառին։



(նաև՝ ծաղկի, ծաղկաց, ծաղկոյ, ծաղկոց), մանուկ—մանկան, մանկունք—մանկանց, մատնիկ—մատնկան, մատնկունք—մատնկանց (առավելապես՝ մատնկի, մատնիկք—մատնկաց), փոքրիկ—փոքրկան, փոքրկունք—փոքրկանց, ինչպես նաև մի շարք հատուկ անուններ՝ Աստղիկ—Աստղկան, Զուիկ—Զւիկան (=Զուիկան), Յուսիկ—Յուսկան, Սաթէնիկ—Սաթինկան և այլն։

Այս բառերը հոլովվում են Ա պարզ ներքին բնույթի հոլովման ենթարկվող բառերի նմանությամբ։

Այս բառերի ձևով է հոլովվում **մարդ** բառը, երբ ունենում է **իկ** մասնիկը, բայց որը թեև հոլովներում հանդես է գալիս եզակի ձևով, սակայն արտահայտում է հավաքական իմաստ[1], օրինակ՝

Ուղղ. մարդիկ
Ս. մարդկան
Տ. մարդկան
Հ. (զ)մարդիկ
Բ. ի մարդկանէ
Գ. մարդկամբ կամ մարդկաւ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մարդ բառը հոլովվում է նաև Ո հոլովիչով, այս դեպքում **իկ** չի ստանում՝ մարդ, սեռ. մարդոյ, հոգն. ուղղ. մարդք, սեռ. մարդոց (տե՛ս «Ո պարզ հոլովում»)։

զ) **Ութիւն** վերջածանց ունեցող բառերը՝ բազմութիւն, իմաստութիւն, կազմութիւն, մեծութիւն, քաղութիւն և այլն։

է) Այն բառերը, որոնք վերջավորվում են **իւն**-ով (որտեղ իւն-ը վերջածանց է եղել կամ արմատի մաս է), օրինակ՝ անկիւն, արիւն, կորիւն, ձիւն, մրջիւն, սեռ. մրջեան կամ մրջման (վերջինս մրջիմն ձևից), որդիւն (կամ որդի՝ ազգակից), սիւն։ Կա բացառություն, օրինակ՝ **կնիւն** բառը (եթե կազմված բառի ածանց է), որը հոլովվում է Ո հոլովիչով՝ կնիւնոյ, կնիւնոց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս բառերի մեջ չպետք է հաշվել **իւն** վերջածանց ունեցող այն բառերը, որոնք ձայն են նշանակում՝ գոչիւն, թնդիւն, շառաչիւն և այլն (տե՛ս § 74)։

Վերջին երկու կետերում (զ և է) նշված բառերի թեք հոլովներում **իւ** երկբարբառը Ա հոլովիչից առաջ հնչյունափոխվում է **ե**-ի

[1] Թեք հոլովաձևերում թեև չկան հավաքականության հոլովակերտ մասնիկները՝ **ց, ս, ք**, սակայն հավաքականության գաղափարն արտահայտվում է այն պատճառով, որ հանդես է գալիս **իկ** մասնիկը, որը ձևափոխվում է չեզոք անդամակցության հնչյունով։

և հոլովիչի հետ կազմում է նա երկբարբառ, իսկ վերջինս եզակի բացառականում չշեշտակիր լինելով վերածվում է ե-ի (բացառությունների մասին տե՛ս § 34)։ Օրինակ՝

| | Եզակի թ. | | Հոգնակի թ. | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | կորիւն | բազմութիւն | կորիւնք | բազմութիւնք |
| Ս. | կորեան | բազմութեան | կորեանց | բազմութեանց |
| Տ. | կորեան | բազմութեան | կորեանց | բազմութեանց |
| Հ. | (զ)կորիւն | (զ)բազմութիւն | (զ)կորիւնս | (զ)բազմութիւնս |
| Բ. | ի կորենէ | ի բազմութենէ | ի կորեանց | ի բազմութեանց |
| Գ. | կորեամբ | բազմութեամբ | կորեամբք | բազմութեամբք |

Այս բառերի նմանությամբ հոլովվում են՝

1. Ունդ, ուստ, ուրդ վերջածանց ունեցող մի շարք բառեր, այսպես օրինակ՝ ծնունդ—ծննդեան, ծննդեան, ի ծննդենէ, ծննդեամբ, հոգնակին սովորաբար լինում է Ո հոլովիչով՝ ծնունդք—ծննդոց, սերունդ—սերնդեան (կամ սերնդոյ), հոգնակին միայն Ո հոլովիչով է՝ սերնդոց, սնունդ—սննդեան, սննդեանց, նաև սննդի, սննդոց, գալուստ—գալստեան, թաքուստ—թաքստեան, կա նաև Ի-ով՝ թաքստի, կորուստ—կորստեան, փախուստ—փախստեան, այլև Ի հոլովիչով՝ փախստի, ժողովուրդ—ժողովրդեան, հանդիպում է նաև Ի և Ո հոլովիչներով՝ ժողովրդի, ժողովրդոյ, հոգնակիում սովորաբար լինում է Ո հոլովիչով՝ ժողովրդոց, խորհուրդ—խորհրդեան, այլև Ո և Ի հոլովիչներով՝ խորհրդոյ, խորհրդի, հոգնակիում սովորական է Ո հոլովիչով՝ խորհրդոց։ Այսպես նաև՝ հանգիստ—հանգստեան, բայց նաև՝ հանգստի[1]։

2. Մի քանի այլ բառեր, որոնք ձևական ընդհանրություն չունեն, օրինակ՝ տեսիլ—տեսլեան, տեսլեան, ի տեսլենէ, տեսլեամբ, տեսիլք—տեսլեանց և այլն, ամիս—ամսեան, սովորականը Ո հոլովիչով է (տե՛ս «Ո պարզ հոլովումը»)։

Այսպես է հոլովվում նաև տիւ(=ցերեկ) բառը, որը նաև վերջավորությունից առաջ ունենում է նչ մասնիկը, օրինակ՝

1 Ըստ Հ. Աճառյանի ստուգաբանության՝ հայերենի այս կարգի մի շարք բառերի հնդեվրոպական ստանիչների ստ-ն հանգում է հնխ. -sti մասնիկին և հետագայում անցնում է պատմական ОСТЬ-ի հետ բառ ծագման («Հայկականք Բ» —ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1952 թ., № 11, էջ 73—75)։ Նշանակում է՝ հոլովման մեջ հանդես եկող ի-ն ցույց է տալիս հնխ. ձևը։ Ռուսերենն այսօր էլ պահում է այդ ձայնավորը թեքման ձևերում՝ мудрость—мудрости և այլն։

Նման բառերի թեք հոլովաձևերի նաև հնչյունախմբի մեջ ե-ի առկայությունը (փախուստ—փախստեան, թաքուստ—թաքստեան) Հ. Աճառյանը ենթադրում է հնխ. osti-ից-ի-ն ե-ի և փոխվել ա-ից առաջ։



| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | տիւ | տիւք |
| Ս. | տուընջեան | — |
| Տ. | տուընջեան | — |
| Հ. | (զ)տիւ | (զ)տիւս |
| Բ. | ի տուընջենէ (երբեմն՝ ի տուէ) | — |
| Գ. | տուընջեամբ | — |

Ինչպես տեսնում ենք, որոշ բառերի հոլովումը կատարվում է նմանակությամբ. հոլովիչը այստեղ չի դրվում բառի ընդհանուր վերջին բաղաձայնից առաջ. բառին կցվում են զանազան հնչյունախմբեր, որոնց մեջ են, իհարկե, հոլովիչը և հոլովական մասնիկները։

## 2. Ե պարզ հոլովում

§ 56. Ե պարզ հոլովումը միայն ներթեքական բնույթ ունի. Բոլոր թեք հոլովներում հանդես է գալիս Ե հոլովիչը՝ վերջին բաղաձայնից առաջ, իսկ հոգնակի թվում այս հոլովման ենթարկվող մի շարք բառերում զուգահեռաբար գործածվում է նաև Ա հոլովիչը,- որը, սակայն, դրվում է Ե հոլովիչով հոլովված ձևերի վրա։ Եզակի բացառականն ստանում է է հոլովակերտը, գործիականը՝ բ։ Հոգնակի ուղղականում բառն ընդունում է Ե ձայնավորը[1], որը դրվում է վերջին բաղաձայնից առաջ։ Ներգոյականի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ եզակի տրականով և հոգնակի հայցականով։ Ահա հոլովման օրինակներ՝

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | դուստր | դստերք |
| Ս. | դստեր | դստերց կամ դստերաց |
| Տ. | դստեր | դստերց կամ դստերաց |
| Հ. | (զ)դուստր | (զ)դստերս |
| Բ. | ի դստերէ | ի դստերց կամ ի դստերաց |
| Գ. | դստերբ | դստերբք կամ դստերաւք(օք) |

1 Սա ծագումով նույն Ե հոլովիչն է, որը հնխ. շրջանում եղել է այս հոլովման պատկանող մի քանի բառերի ուղիղ ձևերի վերջին ձայնորդից առաջ, ինչպես՝ **աստղ** <stér, **ուստր** <sukter, **տայգր** <daiver և այլն (տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, համապատասխան արմատների տակ)։ Հին հայերենում նշած ձայնավորը, վերածվելով հոլովիչի, տարածվել է նաև ուրիշ բառերի թեք ձևերի վրա, բայց և չի պահպանվել նույնիսկ այն բառերի ուղիղ ձևերում, որոնք ծագումնաբանորեն ունեցել են այդ ձայնավորը։

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| Ուղղ. աստղ | աստեղք |
| Ս. աստեղ | աստեղց կամ աստեղաց |
| Տ. աստեղ | աստեղց կամ աստեղաց |
| Հ. (զ)աստղ | (զ) աստեղս |
| Բ. յաստեղէ | յաստեղց կամ յաստեղաց |
| Գ. աստեղբ | աստեղբք կամ աստեղաւք (օք) |

Ե պարզ հոլովման ենթարկվում են՝

ա) Ր-ով կամ ղ-ով և նրանց նախորդող բաղաձայնով վերջացող բառերը. ագր, անգղ (=մի տեսակ թռչուն, կա նաև նույնանուն մի այլ բառ՝ առանձին ունկի, կանթի նշանակությամբ), աստղ, արկղ, դուստր, եղր[1], ետղ (=տեղ), լիար (սեռ. լսեր), կայսր, կողր (=ճյուղ), կոճղ, համր, շիղղ (սեռ. շղեղ=կոճակ, դարդ), ոսկր, ուստր (=որդու զավակ), սիկղ (սեռ. սկեղ, մի տեսակ չափ և դրամ), սկուտղ (սեռ. սկտեղ), վագր, վաղր (=կարճ ոտք), տայգր կամ տագր, տարր և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Սրանց մեջ չպետք է հաշվել ր-ով և նրան նախորդող բաղաձայնով վերջացող այն բառերը, որոնք հոլովվում են Ու հոլովիչով (տե՛ս «Ու պարզ հոլովում»):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ա հոլովիչի գործածությունը վերը բերված բոլոր բառերի համար պարտադիր չէ (ինչպես՝ լիար, համր, շիղղ, վագր), իսկ մի քանի բառերում Ա-ով ձևերն են տարածված (ինչպես՝ արկեղաց, կայսերաց, ոսկերաց, ուստերաց, վագերաց և այլն):

բ) Իւ (եւ)-ով վերջացող հետևյալ բառերը՝ ալիւր (ալեւր), աղբիւր (աղբեւր), եղջիւր (եղջեւր), ադամիւր (ադամեւր) կամ եղափիւր (=ջրոտ տեղ, ճահիճ):

Հոլովման օրինակ

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| Ուղղ. աղբիւր (աղբեւր) | աղբերք |
| Ս. աղբեր | աղբերց կամ աղբերաց |
| Տ. աղբեր | աղբերց կամ աղբերաց |
| Հ. (զ) աղբիւր | (զ) աղբերս |
| Բ. յաղբերէ | յաղբերց կամ յաղբերաց |
| Գ. աղբերբ (նաև՝ աղբերաւ) | աղբերբք կամ աղբերաւք (օք) |

[1] Այստեղից է սինեղերք (=մեծ եղերք) անձնական բառը, որը սեռականում ավելորդաբար ունենում է սինեղերաց ձևը:



### 3. Ի պարզ հոլովում

§ 57. Ի պարզ հոլովումը միայն վերջավորական բնույթ ունի: Հոլովումը կատարվում է Ի հոլովիչով: Եզակի բացառականն ունենում է է հոլովակերտը, որից առաջ Ի հոլովիչը չեշտակորույս լինելով սղվում է: Եզակի գործիականն ունենում է ւ հոլովակերտ: Ներգոյականի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ եզակի տրականով և հոգնակի հայցականով: Որպես օրինակ վերցնենք սիրտ բառի հոլովումը:

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| Ուղղ. սիրտ | սիրտք |
| Ս. սրտի | սրտից |
| Տ. սրտի | սրտից |
| Հ. (զ)սիրտ | (զ)սիրտս |
| Բ. ի սրտէ | ի սրտից |
| Գ. սրտիւ | սրտիւք |

Ի պարզ հոլովման ենթարկվում են՝

ա) Մի շարք բառեր[1] (գոյական և ածական), ինչպես՝ ագոխ (=խակ խաղող), ախտ, ահ, ահեղ, ամբողջ, այծ, այտ, ապուռ (=կողոպուտ, կարթ, սեռ. ապռի), ատաղձ, արտոյտ (սեռ. արտուտի), արտ, բաժ (=բաժին, արքունի տուրք), բախտ, բան, բանտ, բառ, բարդ, բարձ, բոյլ (=խումբ), գաղ (փչի իմաստով), գայռ (=ցեխ), գան (=ծեծ), գոյժ (սեռ. գուժի), դատ, դար (բարձր անցքի իմաստով), երթ, երկայն, երկիւղ, զարմ (=սերունդ, ցեղ), զգոն (=ուշիմ, խոհեմ), իժ, խիղճ (սեռ. խղճի), խորշ, խորշ, խորամանկ, խոյթ (=հիվանդ, ծույլ), ծայր, ծանաթ, ծնոտ, կայթ (=կաղալ, այլև՝ սրա նույնանունը՝ ցնծության պար), կայծ, կարթ, կարօտ, կերպ, հանդէս (սեռ. հանդիսի), հարց, հաց, հայրապետ, հետ, ձայն, ճաշ, ճառագայթ, մարտ, մայթ (=նեղուղի, սեռ. մութի), յարգ, յօդ, նետ, նժոյգ (սեռ. նժուգի), ողորկ, ունայն, որովայն, ուխտ, պան (=բլիթ), պատշաճ, պատուհաս, պատարագ, պերճ, ջահ (հոգնակի ուղղականը հազվադեպ լինում է ջահունք), սաղավարտ, սաստ, սեռ, սիրտ, սրահ, վախ, վէհ, վտանգ, տախտ, տապակոյս (սեռ. տապակուսի), տող, տոն, փայլ, փայտ, փառս, քայլ, քօշ (=արու այծ, նոխազ), օթ (=օթևան), ոճ և այլն:

[1] Այստեղ և այլուր նկատի է առնված բառերի բացարձակ կամ հիմնական հոլովումը. մասնակի կամ երկրորդական որոշ շեղումներ ու զուգահեռ հոլովումներ հաշվի չեն առնված:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եթե առանձնացնենք այս հոլովման ենթարկվող ձևական բնույթի չունեցող բառերը, ապա մյուսների մասին կարող ենք ասել, որ դրանք հիմնականում այնպիսի բառեր են, որոնց վերջին վանկում կան այ, աւ և ոյ երկբարբառները՝ մի բաղաձայնից առաջ, ինչպես՝ ձայն, փայտ, բոյլ, արոյր, նշոյլ, ծանաւթ (ծանոթ), կարաւտ (կարոտ), հաւտ (հոտ) և այլն։ Այդ երևում է նաև հաջորդ կետերում։ Այս կանոնը, իհարկե, բացարձակ չէ. կան բացառություններ, որոնք կարելի է տեսնել այլ հոլովներում։

բ) Այն բառերը, որոնք վերջում ունեն հետևյալ հնչյունական կապակցությունները[1]

Այ—արքայ, ափափայ (=ապառաժ, քարքարոտ տեղ), երախայ կամ երեխայ, ընծայ, յաւժայ, ծառայ, կասկարայ (=հարմարանք՝ կրակի վրա աման դնելու համար), ճայ, շղթայ, պղպատայ, ակայ կամ հակայ, վկայ, փեսայ, փիլիսոփայ, քուրայ և այլն։

Եայ—աշտեայ (=անոթ, նեղակ, սեռ. աշտէի), մետաքսեայ (էի), պաշտօնեայ (էի), փախստեայ (=փախստական, սեռ. փախստէի) և այլն։

Ոյ, ածոյ—գոյ, երեկոյ, կոփածոյ, կռածոյ, ձուլածոյ և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս կարգի բառերից մի քանիսը հոգնակի թվի սեռական, տրական և բացառական հոլովներում երբեմն հանդիպում են նաև առանց Ի հոլովիչի, միայն ց հոլովակերտով։ Այսպես օրինակ՝ պղպատայ—պղպատայց (փոխ. պղպատայից), ապագայ—ապագայց (փոխ. ապագայից), պարագայ—պարագայց (փոխ. պարագայից), գունդաքեայ (=չնչին, թեթև, հասարակ, քիչ)—գունդաքեայց (փոխ. գունդաքէից), արատատոյ[2] (կամ երատատոյ=ամուր քար)—յարատատոյց (փոխ. յարատատոյից) և այլն։

Եան—առեան (սեռ. առենի), մատեան (ենի), յարկեան (ենի), պատեան (ենի), վայրկեան (ենի) և այլն. կա բացառություն՝ ցորեան—ցորենոյ, գործ. լինում է նաև ցորենաւ։

Ոյթ—երեւոյթ (սեռ. երեւութի), ծածկոյթ (ութի), սովորոյթ (ութի) և այլն։

Է—ափսէ, բազէ, հայուէ, հիւղէ կամ հիւլէ (=նյութ), բաղէ և այլն։

Եստ—գովեստ, համեստ, ուտեստ, պահեստ, այլև՝ արուեստ (սա շատ հազվադեպ, օրինակ՝ Բուզանդի մոտ, հանդիպում է նաև

---

1 Դրանք կարող են լինել ածանց կամ արմատի մաս։ Միավորում ենք ուսուցողական նպատակներով։

2 Այս կերպ հոլովված է միայն բացառականում։



Ի—Ա խառն հոլովմամբ)։ Եստ-ով վերջավորվող գիտուն բառի հոլովումը տարածված է հիմնականում Ու, ինչպես նաև Ո հոլովիչներով, թեև ըստ ծագման ավելի հին է այդ բառի հոլովումը Ի հոլովիչով։

Աստ—զգաստ, իմաստ, նպաստ, այլև՝ առագաստ, յաստ, [illegible], ոսկայն, ուշ շրջանում հոլովվում են նաև Ի—Ա խառն հոլովմամբ։ Դրանց մեջ չպետք է հաշվել գրաստ բառը, որը ենթարկվում է Ու հոլովման։

գ) Այսպես նաև որոշ բացառություններով՝ ոյտ, ոյց, ուտ հնչյունական կապակցություններով վերջավորվող բառերը, օրինակ՝ կոյտ (սեռ. կուտի), պտոյտ (սեռ. պտուտի), հանգոյց (սեռ. հանգուցի), բրուտ (սեռ. բրտի), օգուտ (սեռ. օգտի) և այլն։

դ) Մի շարք հատուկ անուններ, օրինակ՝ Մովսէս—Մովսեսի կամ Մովսիսի, Ներսէս—Ներսեսի կամ Ներսիսի, Մատթէոս—Մատթէի, Զեբեդէոս—Զեբեդէոսի կամ Զեբեդէի, Զեբեդի, Պետրոս—Պետրոսի, Սարգիս—Սարգսի, Մակարէ—Մակարէի, Վաչէ—Վաչէի և այլն։

ե) Մի շարք անեզական բառեր՝ ագոյց (=լծակ, օղակ, սեռ. ագուցից), անէծք (անիծից), ատանցք, ասր, արեւք, արեւմուտք (արեւմտից), գնացք, խօսք, կուրծք (կրծից), հողք (=թակարդ, որոգայթի լար, սեռ. հողքից), հմայք, ցնորք, Աղուանք (Աղուանից), Կասպք (Կասպից), Պարսք (Պարսից) և այլն։

## Գ. Ո պարզ հոլովում

§ 58. Ո պարզ հոլովումը միայն վերջադրական բնույթ ունի։ Եզակի թվի հոլովներում հանդես է գալիս Ո հոլովիչը։ Եզակի բացառականը հոլովակերտ չի ստանում։ Եզակի գործիականն ունենում է վ հոլովակերտը։ Ներգոյական հոլովի իմաստը երկու թվում էլ արտահայտվում է հայցական հոլովի միջոցով։ Այս դեպքում որոշ բառեր եզակի թվում հանդես են գալիս Ի հոլովիչով՝ բերան—ի բերանի, գետին—ի գետնի, գիշեր—ի գիշերի, գուր (=հոր, փոս)—ի գրի, երազ—յերազի, թիւ—ի թուի, թուղթ—ի թղթի, ծոց—ի ծոցի, մարմին—ի մարմնի, մէջ—ի միջի, շուք—ի շքի, ջրհոր—ի ջրհորի, սեղան—ի սեղանի, սուգ—ի սգի, փոր—ի փորի և այլն։ Սակայն տեղ-տեղ հանդիպում են նաև հայցականով, առանց Ի հոլովիչի հավելման, ինչպես՝ «Եւ ետ հրաման՝ եթէ տանել գնասա ի մի գուբ փողոտակ...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 251)—ի մի գուբ=մի հորում։ «...Որք ի նմանէ կերակրին ի ծոց նորա հանգչին» (Եզնիկ, I, ԺԵ, էջ 46)—ի ծոց=ծոցում։

Ի հոլովիչի հավելումը (այս բառերի եզակի ներգոյականի իմաստը դրսևորելու համար) կարելի է բացատրել նրանով, որ այդ բառերը եզակի թվում զուգահեռաբար հոլովվելիս են եղել նաև Ի հոլովիչով։ Այս ենթադրությունը հիմնավորվում է մեզ ավանդված մի շարք օրինակներով. վերահիշյալ բառերից բերան, գիշեր, երաց եզակի թվի որոշ թեք հոլովներում հանդիպում են նաև Ի հոլովիչով հոլովված ձևերով։ Այստեղ միաժամանակ պետք է նկատի ունենալ նաև քերականական նմանակության հանգամանքը։

Այս հոլովման ենթարկվող մնացած բառերը սովորաբար եզակի ներգոյականի իմաստի դրսևորման դեպքում Ի հոլովիչի հավելում չեն ունենում, ինչպես՝ գործ—ի գործ, հող—ի հող, ջուր—ի ջուր և այլն։

Հոլովման օրինակներ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | գործ | գործք | թռչուն | թռչունք |
| Ս. | գործոյ | գործոց | թռչնոյ | թռչնոց |
| Տ. | գործոյ | գործոց | թռչնոյ | թռչնոց |
| Հ. | (զ)գործ | (զ)գործս | (զ)թռչուն | (զ)թռչունս |
| Բ. | ի գործոյ | ի գործոց | ի թռչնոյ | ի թռչնոց |
| Գ. | գործով | գործովք | թռչնով | թռչնովք |

Ո հոլովմամբ հոլովվում են՝

ա) Մի շարք բառեր՝ աթոռ, ախտ, ածուխ (ածխոյ), աղանդ (նաև՝ ի, ա), այր (ուշ շրջանում նաև՝ ի, իյ), աղիւս, ամբոխ, ամիճ (ամճոյ, ամճոց—որսի կենդանու ձագ, որսի փափուկ միս), ամիս (ամսոյ, նաև՝ ամսեան, ներգ. յամսեան), ամոյլ (ամլոյ—անպտուղ), ամպ, անուր, արդար, արծաթ, արմատ, արջառ (նաև՝ ա), արտ, աւազ, բերան (նաև՝ ի, ա), բոյն (բունոյ), բոյս (բուսոյ), բոց, գետ (ուշ շրջանում նաև՝ ի, ա), գետին (գետնոյ, նաև գործիականում գետնաւ), գէշ (գիշոյ, գիշոց, նաև՝ ի, ու), գին (գնոյ), գինձ (գնձոյ—բույս է), գիր (գրոյ), գլուխ (գլխոյ), գոգ, գոմ, գործ, գուբ (գբոյ), գութ (գթոյ—գործիք է), երազ (նաև՝ ի), երգ, երդ, երկաթ (ուշ շրջանում նաև՝ ի, ա), էշ (իշոյ), թել, թեւ, թեփ, թիւ—թուոյ (նաև՝ ի թուէ), թուխ (թխոյ), թուղթ (թղթոյ), թուր (թրոյ), թոռ, ժողով, իլ, իւղ, լոյս (լուսոյ), լուր (լրոյ), խմոր, խոտ, խոր, ծառ, ծեր, ծուխ (ծխոյ), կաւ (հետագայում նաև՝ կաւոյ), կերպ, կիր (կրոյ), կշիռ (կշռոյ), կողով, կոճ, կոտոր, հին (հնոյ), հող, հոգմ, հով (սակայն՝ ու), հաս (=բոյլը),



հուր (հրոյ, գործ. հրով, նաև՝ հուրբ), ձետ (=պոչ), ձէթ (ձիթոյ), ձող (հոգն. թ. հանդիպում է նաև ձողաւք, զձողաւս ձևերով), ձոր, ձորձ (=վերնազգեստ, շոր, լաթ, քուրջ), ձու (ձուոյ), ճաշ, ճարպ, մարմին, մէջ, մախիր (մախրոյ), մոմ, մորթ, մրուր (մրրոյ=գիրտ, ամանի տակի նստվածք, տականք), յոյս (յուսոյ), ներկ, նոր, շուր, ողբ, ոճ, ոստ, որթ, որս, ունդ (ընդոյ), ուս (ուսոյ), պղինձ (պղնձոյ), պտուղ (պտղոյ), ջուր (ջրոյ, գործ. ջրով կամ ջուրբ, հոգն. ս. ջրոց կամ ջուրց), ջրհոր, սափոր, սեղան, սէգ (սիգոյ), սէր (սիրոյ), սոսինձ (սոսնձոյ), սուգ (սգոյ), սուր (սրոյ), տապ, տարափ, տերև, տունկ (տնկոյ), տաշ, ցեց, ցող, փետուր (փետրոյ), փոր, փուշ (փշոյ), քոս, քուղ (քղոյ=գերձան՝ թել, բարակ պարան) և այլն։

բ) Այն բառերը, որոնք ունեն հետևյալ վերջածանցները.

Ային—ամառնային (սեռ. ամառնայնոյ), աշխարհային, դաշտային, լեռնային, ձմերային կամ ձմեռնային, մարդկային և այլն։

Ուած—առեղծուած, գիպուած, ցանգուած, կալուած, հաշուած, մանուած, յօդուած, շինուած և այլն։

Ուն—անասուն (սեռ. անասնոյ), ասուն, գիտուն, գետուն, թռչուն, հասուն, սոսուն, ցօղուն (սովորաբար Ո հոլովիչով է՝ ցօղնոյ, իսկ երբեմն հանդիպում է Ա հոլովիչով՝ ցօղունաւ)։

Ցի—Հելլենացի (սեռ. Հելլենացւոյ), քաղաքացի (—ցւոյ), բաբելոնացի (—ցւոյ), Կորնթացի (—ցւոյ), Խորենացի (—ցւոյ), Փարսկեցի (—ցւոյ) և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դրացի բառը սրանց պես Ո հոլովմամբ չի հոլովվում, նա ենթարկվում է Ո—Ա խառն հոլովման։ Այստեղ մասնիկն էլ տարբեր է՝ *դուռն-դրաց+ի=դրացի («Արմ. բառ.», II, էջ 603)։

Ին—արտաքին (սեռ. արտաքնոյ), ստորին, վերին, վերջին և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ին-ով վերջավորվող որոշ բառեր, որոնց մեջ չի գիտակցվում նրա ածանց լինելը կամ նա արմատի մասն է կազմում, հոլովվում են նաև այլ հոլովիչներով, օրինակ՝ աղախին—սեռ. աղախնոյ, հոգն. ուղղ. աղախնայք, սեռ. աղախնայց, աղախնաց կամ աղախնանց, անկողին—անկողնոյ, անկողնոց, բայց նաև՝ անկողնի, անկողնաց, անկողնից. կացին—կացնոյ, կացնով, բայց նաև՝ կացնի, կացնաւ (համեմատաբար ուշ շրջանում), իսկ դարբին բառը հոլովվում է միայն Ի, Ա հոլովիչներով՝ դարբնի, դարբնաց։

գ) Ի ձայնավորով վերջացող միավանկ բառերը՝ թի (սեռ. թիոյ), լի (սեռ. լիոյ), ձի (սեռ. ձիոյ), իսկ բազմավանկ բառերից միայն մի քանիսը՝ երի (սեռ. երւոյ=անասունների աղբի տարբերի մի մասը, քաղուկ), ոգի (սեռ. ոգւոյ), ոսկի (սեռ. ոսկւոյ), որդի (սեռ. որդւոյ)։

դ) Անորոշ դերբայը, որը հոլովվում է միայն եզակի թվով՝ ասել—ասելոյ, երթալ—երթալոյ, զարմանալ—զարմանալոյ, հաւատալ հաւատալոյ, տեսանել—տեսանելոյ։ Այս դեպքում Ու խոնարհման բայերի խոնարհիչը թեք հոլովներում սղվում է, օրինակ՝ առնուլ—առնլոյ, թողուլ—թողլոյ, ջեռնուլ—ջեռնլոյ (=տաքանալ), զրահնուլ—զրահնլոյ։

ե) Չեզոք և կրավորական սեռի բայերի անցյալ դերբայը՝ գնացեալ—գնացելոյ, զարմացեալ—զարմացելոյ, մնացեալ—մնացելոյ, մեռեալ—մեռելոյ, փախուցեալ—փախուցելոյ, ասացեալ—ասացելոյ, սիրեցեալ—սիրեցելոյ և այլն։ Սրանք հոլովվում են թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով։

զ) Մի շարք հատուկ անուններ՝ Կարին—Կարնոյ, Շապուհ—Շապհոյ, Սանատրուկ—Սանատրկոյ, Տարօն—Տարօնոյ, Վաղարշապատ—Վաղարշապատոյ և այլն։

է) Մի շարք անեզական բառեր՝ դժոխք—դժոխոց, կոչունք—կոչնոց (=հրավերք), կուռք—կռոց, հունձք—հնձոց, պահք—պահոց, տիք—տիոց, ինչպես նաև անեզական հատուկ անուններ՝ Հայք—Հայոց, Հռոմք—Հռոմոց, Վայք—Վայոց, Տայք—Տայոց։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ո պարզ հոլովման ենթարկվող որոշ բառեր եզակի տրականում, մանավանդ ի նախդիրի հետ գործածվելիս (ներգոյականի իմաստով), ստանում են ում հոլովակերտ մասնիկը։ Այդ բառերից են՝ անցյալ դերբայները՝ ասացեալ—ասացելում—յասացելում, հանդերձեալ—հանդերձելում—ի հանդերձելում, ին վերջածանց ունեցող և առանց դրան որոշ ածականներ՝ վերին—վերնում, վերջին—վերջնում, հին—հնում, նոր—նորում, աջ—աջում, ձախ—ձախում և այլն։ Այս բառերից մի քանիսը եզակի բացառականում պահպանելով ում մասնիկը (ու-ի սղումով), ստանում են է հոլովակերտ՝ ի հնմէ, ի ձախմէ, յաջմէ։

### Ե. Ու պարզ հոլովում

§ 59. Այս հոլովումը հիմնականում վերջադրական բնույթ ունի։ Ամբողջությամբ ներքնական ձևով է հոլովվում միայն ասր (ոչ) բառը, որի հոլովումը տրվում է ներքևում։



Ու պարզ հոլովման դեպքում բառի թեքումը կատարվում է Ու հոլովիչով։ Եզակի բացառականն ստանում է Է հոլովակերտը, որից առաջ Ու հոլովիչը սովորաբար սղվում է, օրինակ՝ ծով, բաց. ի ծովէ, կով, բաց. ի կովէ և այլն։ Միայն որոշ բառերում պահպանվում է, օրինակ՝ այգ—յայգուէ, դաս—ի դասուէ, զարդ—ի զարդուէ, խրատ—ի խրատուէ, նախանձ—ի նախանձուէ, սպաս (=հաճ-կարասի, զավթ, զարդ, կերակուր, սեղան, պաշտոն, ծառայություն)—ի սպասուէ։ Սակայն սրանցից մի քանիսը զուգահեռաբար երբեմն հանդիպում են ու-ի սղումով՝ ի դասուէ || ի դասէ, ի խրատուէ || ի խրատէ։

Ու հոլովիչը եզակի բացառականի է հոլովակերտից առաջ չի սղվում նաև բ կետում ցույց տրված բառերում։

Այս հոլովման դեպքում եզակի գործիականը որևէ հոլովակերտ մասնիկ չի ընդունում. այդպիսով գործիականը ձևով նման է լինում սեռականին, օրինակ՝ եզակի սեռական՝ ծովու, շաբաթու, սպասու. եզակի գործիական՝ ծովու, շաբաթու, սպասու։ Տարբերությունը կարելի է որոշել նախադասության մեջ։

Ներքոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով։

Հոլովման օրինակներ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | ծով | ծովք | զարդ | զարդք |
| Ս. | ծովու | ծովուց | զարդու | զարդուց |
| Տ. | ծովու | ծովուց | զարդու | զարդուց |
| Հ. | (զ)ծով | (զ)ծովս | (զ)զարդ | (զ)զարդս |
| Բ. | ի ծովէ | ի ծովուց | ի զարդուէ | ի զարդուց |
| Գ. | ծովու | ծովուք | զարդու | զարդուք |

Այս հոլովմամբ հոլովվում են ոչ մեծ թվով բառեր, ինչպես՝

ա) այգ, առաւօտ, արդ (=ձև), արև, գանձ, դաս, դար (ժամանակի իմաստով), զարդ, զէն (սեռ. զինու), ժամ, ծակ, ծով, հանդէս, նախանձ, շաբաթ, ուրբաթ, պար, [illegible], սպաս, վրէժ (սեռ. վրիժու), քէն (սեռ. քինու) և այլն։

բ) Կենդանի և թռչուն նշանակող որոշ բառեր՝ ագռաւ, ագուէս (սեռ. ագուեսու), առիւծ, արջ, գրաստ, ինծ կամ ընձ (կենդանի է, սեռ. ընծու կամ ընձու), կաքաւ, հաւ, ձագ, որթ (=հորթ), ուղտ (սեռ. ուղտու կամ ըղտու), ցուլ (սեռ. ցլու) և այլն։

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.*— *Սրանցից ագռավ, արջ, աղվես, կա-քավ, ձագ, ձու բառերը հոլովվում են նաև Ո հոլովիչով (առավել և այլ հոլովիչներով): Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ո հոլովիչի գործածության զուգահեռությունը վաղ շրջանից վկայված է արջ և ձու բառերում, իսկ մյուսներում Ո-ի գոր-ծածությունը վկայված է համեմատաբար ուշ շրջանի փաս-տերով: Այս մասին տե՛ս նաև § 76:*

*գ) Մի քանի հատուկ անուններ՝ Աբրահամ, Խոսրով, Ղուկաս (սեռ. Ղուկասու, բայց նաև՝ Ղուկասի), Յոհան (սեռ. Յոհաննու), Յովհաննէս (սեռ. Յովհաննու), Յովսէփ (սեռ. Յովսեփու), Յորդա-նան, Մարիամ (սեռ. Մարիամու կամ Մարեմու, այլև՝ Մարեմայ), Սոկրատէս (սեռ. Սոկրատու) և այլն:*

*դ) Սակավաթիվ անեզական բառեր՝ ազունք (սեռ. ազանց =չարիք, ծանր հանցանք, թշվառություն), բարք (սեռ. բարուց), պարտք (սեռ. պարտուց), վարք (սեռ. վարուց).* **պարտք** *բառը շատ սակավ դեպքերում հանդիպում է եզակի ձևով՝* **պարտ,** *որը, սա-կայն, հոլովվում է Ո հոլովիչով՝* **պարտու:** *Գոյություն ունի նաև* **պարտիք** *ձևը այլ հոլովմամբ՝ սեռ.* **պարտեաց:**

*ե) Ր ձայնորդով և նրան նախորդող մի այլ բաղաձայնով վերջավորվող հետևյալ բառերը (երեք գոյական և վեց ածական)՝ ասր (=բուրդ), թանձր, ծաղր, ծանր, կարծր, մանր, մեղր, փո-քր, քաղցր:*

*Այս բառերի հոլովման ժամանակ եզակի թվի թեք հոլով-ներում և հոգնակի թվի բոլոր հոլովներում տեղի է ունենում ր-ի անկում: Հոգնակի թվի բոլոր հոլովներում հոլովակերտ մասնիկ-ներից առաջ հանդես է գալիս ու ձայնավորը:*

*Սրանք մասամբ պահպանում են ներքնական բնույթի հոլով-ման առանձնահատկությունները: Ոմանք այս բառերի հոլովումը ամբողջովին ներքնական բնույթի են համարում:*

Հոլովման օրինակ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | փոքր | փոքունք |
| Ս. | փոքու | փոքունց |
| Տ. | փոքու | փոքունց |
| Հ. | (զ)փոքր | (զ)փոքունս |
| Բ. | ի փոքուէ | ի փոքունց |
| Գ. | փոքու | փոքումբք |



*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.*— *Ե կետում ցույց տրված բառերից մի քանիսը հոլովման օրինաչափ կանոններից շեղվում են, հանդես գալով նաև այլ ձևերով: Տարբերությունները ցույց տալու նպատակով ստորև բերում ենք հիշյալ բառերը մի քանի բնորոշ հոլովաձևերով՝* **ասր,** *եզակի սեռ. ասրոյ, աս-րու, ասու, եզ. գործ. ասրով կամ ասերբ, հոգնակին սովո-րական չէ, սակայն տեղ-տեղ հանդիպում է Ո հոլովիչով՝ ասուոց կամ ասրոց,* **թանձր,** *եզ. սեռ. թանձու, թանձրու, թանձրոյ, հոգն. ուղղական՝ թանձրունք, թանձունք, թանձ-րոյք,* **ծաղր,** *եզ. սեռ. ծաղու, ծաղեր, ծաղրու,* **ծանր,** *եզ. սեռ. ծանու, եզ. գործ. ծանու, հոգն. ուղղ. ծանունք, հոգն. սեռ. ծանունց (տարբերություն չկա),* **կարծր,** *հոգն. ուղղ. կարծերք, կարծունք,* **մանր,** *եզ. սեռ. մանու, հոգն. ուղղ. մանունք, հոգն. սեռ. մանունց (տարբերություն չկա),* **մեղր,** *եզ. սեռ. մեղու, մեղեր, մեղուի, եզ. գործ. մեղու, մեղերբ, մեղուաւ,* **քաղցր,** *եզ. սեռ. քաղցու, եզ. գործ. քաղցու, հոգն. ուղղ. քաղցունք, հոգն. սեռ. քաղցունց, հոգն. գործ. քաղ-ցուք: Նշված տարբերություններից որոշ ձևեր համեմատա-բար ուշ շրջանից են (ինչպես՝ թանձրու, թանձրոյ, թանձ-րունք, ծաղեր, ծաղրու, կարծերք, մեղեր, մեղերբ և այլն):*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.*— *Ե կետում ցույց տրված բառերի նման է հոլովվում նաև* **բարձր** *ածականը, սակայն այն տար-բերությամբ, որ եզակի գործիականում և հոգնակիում ունե-նում է Ա հոլովիչ, օրինակ՝*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | բարձր | բարձունք |
| Ս. | բարձու | բարձանց |
| Տ. | բարձու | բարձանց |
| Հ. | (զ)բարձր | (զ)բարձունս |
| Բ. | ի բարձուէ | ի բարձանց |
| Գ. | բարձամբ կամ՝ բարձու | բարձամբք |

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.*— *Կան սակավաթիվ բառեր, որոնք եզակի թվում ունենում են Ու հոլովիչ, իսկ հոգնակի թվում՝ Ա հոլովիչ, օրինակ՝* **զօր,** *եզ. սեռ. զօրու, բաց. ի զօրուէ, գործ. զօրու, հոգն. ուղղ.* **զօրք,** *սեռ. զօրաց,* **պատիւ,** *եզ. սեռ. պատուու (երբեմն՝ պատուոյ), գործ. պատուաւ, հոգն. ուղղ. պատուանք, սեռ. պատուանց,* **երէց,** *եզ. սեռ. երիցու,*

գործ. երիցու կամ երիցամբ, հոգն. ուղղ. երիցունք, սեռ. երիցանց։

Նկատի ունենալով, որ **զօր** և պառաւ բառերը եզակի գործիականում պահպանում են Ու հոլովիչը, իսկ **բարձր** և **երէց** բառերը եզակի գործիականում Ա հոլովիչից բացի զուգահեռաբար ունենում են նաև Ու հոլովիչը, կարող ենք ասել, որ դրանք Ու հոլովման բառեր են, բայց հոգնակի թվում անցել են Ա հոլովիչ (ինչպես Ն հոլովման բառերը, միայն թե դրանք հոգնակիում Ն հոլովիչը պահպանում են)։

**§ 60.** Ինչպես արդեն նշել ենք, Ու պարզ հոլովման բառերից ներգոյական հոլովում ունի աւր (օր) բառը։ Ահա այդ բառի հոլովումը՝

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | աւր (օր) | աւուրք |
| Ս. | աւուր | աւուրց |
| Տ. | աւուր | աւուրց |
| Հ. | (զ)աւր(զօր) | (զ)աւուրս |
| Բ. | յաւրէ (յօրէ) | յաւուրց |
| Գ. | աւուրբ | աւուրբք |

## ԽԱՌՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

### 1. Ի—Ա. խառն հոլովում

**§ 61.** Ի—Ա խառն հոլովումն ունի և՛ վերջադրական, և՛ ներդրական բնույթ։ Երկու դեպքում էլ բառի հոլովման մեջ գործում են Ի և Ա հոլովիչները, առաջինը՝ մինչև եզակի գործիական, երկրորդը՝ եզակի գործիականում և հոգնակի բոլոր թեք հոլովներում։

### Ի—Ա վերջադրական հոլովում

**§ 62.** Ի և Ա հոլովիչների հավելումը այստեղ կատարվում է բառի վերջից։ Եզակի բացառականում հանդես է գալիս է հոլովակերտը, որից առաջ Ի հոլովիչը շեշտակորույս լինելով սղվում էր։ Եզակի գործիականում հանդես է գալիս ւ հոլովակերտ մասնիկը։ Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով։



### Հոլովման օրինակ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | աշակերտ | աշակերտք |
| Ս. | աշակերտի | աշակերտաց |
| Տ. | աշակերտի | աշակերտաց |
| Հ. | (զ)աշակերտ | (զ)աշակերտս |
| Բ. | յաշակերտէ | յաշակերտաց |
| Գ. | աշակերտաւ | աշակերտաւք (օք) |

Այս հոլովմամբ հոլովվում են՝

ա) Մի շարք գոյական և ածական անուններ, դրանցից են՝ ագահ, ազատ, աղքատ, ամ (=տարի), ամպրոպ, աշխարհ, բազում (սեռ. բազմի, բազմաց), բեռն, գազան, դարբնապար, գաւազան, գաւառ, գերեզման, գուսան, դաժան, դաշտ, դև (սեռ. դիւի) դիւք, երախան (=սկզբան, սկզբնավորություն, խումբ), երիտասարդ, երկիր (սեռ. երկրի, անհոգնական է), իր, լաւ, խաւար (անհոգնական է), կարգ, հագագ (=շունչ), հզօր, հրաման, ճանապարհ, ճարտար, մեծ, նախարար, նահանջ, նաւակ, շվետ (=հովիվ), ոսկի, չար, պայծառ, պատկեր, պարկ, պարտէզ (սեռ. պարտիզի), սուգ, սահման, սէգ (սեռ. սիգի), վախճան, վահան, վայրագ, վէմ (սեռ. վիմի), վիշապ, տէգ (սեռ. տիգի), տխմար, տկար, փառաւոր (=ծանր, ճոխ), փարթամ, փիղ (սեռ. փղի), քաջ, քիլ (սեռ. քլի=բթամատի և ցուցամատի բացվածքի չափը), օտար, օրան (=հացարույսերի դեզ՝ պատրաստված կալսելու համար), որբորդ և այլն։

բ) Այն գոյական (և ածական) անունները, որոնք վերջավորվում են հետևյալ հնչյունակապակցություններով[1].

**Ակ**—ագարակ, աթոռակ, ախորժակ, աղաղակ, աղիւսակ, ամբարակ, աշտարակ, ապաստակ, արգանակ (=մսաջուր, խաշու), ավազակ, բաժակ, բանակ, դրակ, դանակ, դաստակ, դաստիարակ, երակ, զամակ, ըմակ, կառակ, կրակ, ճաշակ, պսակ, որձնակ և այլն (կան բացառություններ՝ ծակ—ծակու, վաստակ—վաստակոյ, վերջինս հանդիպում է նաև Ի, Ա հոլովիչներով)։

**Ական**—անապատական, հանդիսական, շինական, փախստական և այլն։

**Ածու**—ակնածու, ձեռնածու, նուազածու և այլն։

[1] Այդ հնչյունակապակցությունները կարող են լինել թե՛ ածանց և թե՛ արմատի մաս, ինչպես այդ կարելի է տեսնել բերված օրինակներում։ Միավորումը կատարված է ուսուցողական նպատակներով։

Անակ—աշտանակ, ժամանակ, յաղթանակ և այլն։

Արան—զանձարան, գելարան (=ճզմիչ, մամլիչ), դատարան, պահարան և այլն։

Ացու—ապականացու, մահկանացու, պիտանացու և այլն։

Եակ—գայլեակ (սեռ. գայլեկի), դղեակ (սեռ. դղեկի), մանեակ (սեռ. մանեկի), որդեակ (սեռ. որդեկի), սենեակ (սեռ. սենեկի) և այլն։

Եղ—զօրեղ, հիւթեղ, ուժեղ և այլն։

Եղէն—արծաթեղէն (սեռ. արծաթեղենի), բրդեղէն (սեռ. բրդեղինի), հողեղէն (սեռ. հողեղինի), հրեղէն (սեռ. հրեղինի), ոսկեղէն (սեռ. ոսկեղինի) և այլն։

Իկ—կապիկ (սեռ. կապկի), կօշիկ (սեռ. կօշկի), մրրիկ (սեռ. մրրկի), շապիկ (սեռ. շապկի) և այլն։

Իչ (սա գրաբարի ներգործական դերբայի հնագույն ձևի մասնիկն է)—բրիչ (սեռ. բրչի), գործիչ (սեռ. գործչի), գրիչ (սեռ. գրչի), կարիչ (սեռ. կարչի) և այլն։

Որդ—անցորդ[1] (=նախորդ), կշռորդ (=կշեռք), ճանապարհորդ, որսորդ և այլն։

Ոց—գելոց (=ճզմիչ, մամլիչ), խայթոց, փորոց և այլն։

Ու—արու, եղջերու, յեղու, մեղու և այլն։

Ուկ—աղմուկ (եզ. սեռ. աղմկի, հոգն. սեռ. աղմկաց, հազվադեպ նաև՝ աղմկից), բազուկ (եզ. սեռ. բազկի, հոգն. սեռ. բազկաց), զեղջուկ, ճամուկ (=զգեստի զարդ, պաճուճանք, բանվածք, գունազարդներ), մորուկ, սորուկ, վհուկ, տղրուկ։ Այս բառերում թեք հոլովներում ու-ն ընկնում է, ինչպես այդ ցույց է տրված փակագծերում առաջին երկու բառերի համար։

Պան—դռնապան, դանդապան կամ ծնկապան (=ծունկը պաշտպանող հարմարանք), պահապան, պարտիզպան և այլն։

Ստան—այգեստան, բուրաստան, շահաստան կամ շահեստան (=մեծ քաղաք, կենտրոնական և մեծ ամրոց ունեցող քաղաք) և այլն։

Ւոր կամ աւոր—ավանդաւոր, աղեղնաւոր, գեղմնաւոր, դասաւոր, գինաւոր, շնչաւոր, ուղևոր, չքաւոր, պատուաւոր և այլն։

դ) Մի շարք անեզական բառեր՝ արտասուք (սեռ. արտասուաց), խելք (սեռ. խելաց), կամք (սեռ. կամաց), կառք (սեռ. կառաց), կեանք (սեռ. կենաց), միտք (սեռ. մտաց), փառք (սեռ. փառաց), նույնպես և անք բաղադրյալ մասնիկի (ան+ք) ունեցող-

[1] **Անցորդ** բառը գրվում է նաև **անցևորդ**, **անցիորդ**, **անցւորդ** ձևերով։



ները՝ աղաչանք (սեռ. աղաչանաց), բաղձանք (սեռ. բաղձանաց), զարդարանք (սեռ. զարդարանաց), զարմանք (սեռ. զարմանաց), գրուանք (սեռ. գրուանաց), լլկանք (սեռ. լլկանաց), կայանք (սեռ. կայանաց), հալածանք (սեռ. հալածանաց), հանգամանք (սեռ. հանգամանաց), հոսանք (սեռ. հոսանաց), մեծարանք (սեռ. մեծարանաց), յանցանք (սեռ. յանցանաց), յարգանք (սեռ. յարգանաց), պատրանք (սեռ. պատրանաց), պարսաւանք (սեռ. պարսաւանաց), պերճանք (սեռ. պերճանաց) և այլն։

## Ի—Ա ներգոյական հոլովում

§ 63. Այս դեպքում եւ գործող Ի և Ա հոլովիչները դրվում են բառի կազմում՝ վերջին (Ն) բաղաձայնից առաջ։ Ի հոլովիչը հանդես է գալիս մինչև եզակի գործիականը, իսկ այստեղից սկսած՝ գործում է Ա հոլովիչը։ Եզակի բացառականում Ի-ն յիշատակություն լինելով ավելում է, իսկ այդ կատարվում է այն պատճառով, որ այդ հոլովում բառի վերջից հանդես է գալիս է հոլովակերտ մասնիկը, որը բառական շեշտը կրում է իր վրա։ Այս հոլովում որոշ բառեր Ի հոլովիչի փոխարեն առնում են ա ձայնավորը, օրինակ՝ յեզանէ, յեղանէ, իսկ որոշ բառեր զուգահեռ ձևեր են ունենում, օրինակ՝ ի բնանէ կամ ի բնոնէ, ի գառանէ կամ ի գառնէ։ Հոգնակի ուղղականում վերջին Ն բաղաձայնից առաջ հանդես են գալիս ի կամ ու հնչյունները։ Եվ այդպիսով բառը հոգնակի ուղղականում վերջավորվում է ինք-ով կամ ունք-ով[1]։ Այդ փոփոխությունները ու տարբերությունները ավելի ցույց են տրված փակագծերում։

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով։

### Հոլովման օրինակներ

| | Եզակի թ. | | Հոգնակի թ. | |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | անձն | մատն | անձինք | մատունք |
| Ս. | անձին | մատին | անձանց | մատանց |
| Տ. | անձին | մատին | անձանց | մատանց |
| Հ. | (զ)անձն | (զ)մատն | (զ)անձինս | (զ)մատունս |
| Բ. | յանձնէ | ի մատնէ կամ ի մատանէ | յանձանց | ի մատանց |
| Գ. | անձամբ | մատամբ | անձամբք | մատամբք |

[1] Հնդեվրոպական ծագում ունեցող՝ այս հոլովմամբ հոլովվող բառերի մեջ հոլովման ժամանակ կատարվող ի—ա—ու (ին—ամբ—ունք) փոփոխությունը բացատրվում է ձայնդարձի երևույթի օրենքով։

Այս ձևով հոլովվում է մի մասն այն բառերի[1], որոնք վերջավորվում են Ն-ով և նախորդում բաղաձայնով (իսկ մյուս մասը հոլովվում է Ա պարզ հոլովմամբ)՝ ազն (եզ. բաց. յազնէ, հոգն. ուղղ. ազինք=սերունդ, ցեղ), ազն (եզ. բաց. յազնէ, հոգն. ուղղ. ազունք=ազնվական), առն (սեռ. առին, բաց. յառնէ, հոգն. ուղղ. առինք=վայրի արու ոչխար), ափն (եզ. սեռ. ափին, բաց. յափնէ, հոգն. ուղղ. ափունք=ջրի ափ), բեռն (եզ. սեռ. բեռին, բաց. ի բեռանէ կամ ի բեռնէ, հոգն. ուղղ. բեռինք), բուռն (եզ. սեռ. բռին, բաց. ի բռունէ, հոգն. ուղղ. բռունք), գառն (եզ. սեռ. գառին, բաց. ի գառանէ կամ ի գառնէ, հոգն. ուղղ. գառինք), գաշն (եզ. բաց. ի գաշնէ, հոգն. ուղղ. գաշինք), դառն (եզ. սեռ. դառին, բաց. ի դառնէ, սակայն ձեռագրերում հանդիպում է նաև դառնի, դառնից ձևերով), գոխն (եզ. սեռ. գոխին, գործ. գոխամբ—ջրաղացի հարմարանք է), եզն (եզ. բաց. յեզանէ, հոգն. ուղղ. եզինք), եղն (եզ. բաց. յեղանէ, հոգն. ուղղ. եղինք=եղնիկ), թոռն (եզ. սեռ. թոռին, բաց. ի թոռանէ կամ ի թոռնէ, հոգն. ուղղ. թոռունք, երբեմն էլ՝ թոռանք), լեառն (եզ. սեռ. լերին, բաց. ի լեռնէ, երբեմն էլ՝ ի լեառնէ, հոգն. ուղղ. լերինք), խաշն (եզ. բաց. ի խաշանէ կամ ի խաշնէ, հոգն. ուղղ. խաշինք=մանր եղջերավոր անասունների հոտ, խոտաճարակ կենդանիներ), կաթն (եզ. բաց. ի կաթանէ կամ ի կաթնէ), կամն (եզ. բաց. ի կամնէ, հոգն. ուղղ. կամունք), կառափն (եզ. սեռ. կառափին, հոգն. ուղղ. կառափունք=գլուխ, գանգ), հարսն (եզ. բաց. ի հարսանէ կամ ի հարսնէ, հոգն. ուղղ. հարսունք), մատն (եզ. բաց. ի մատնէ, հոգն. ուղղ. մատունք), ներն (եզ. սեռ. ներին, բաց. ի ներանէ, հոգն. ուղղ. ներինք), ողն (եզ. բաց. յողանէ, հոգն. ուղղ. ողունք), սառն (եզ. սեռ. սառին, բաց. ի սառնէ, հոգն. սեռ. սառանց), տառն (եզ. սեռ. տառին, հոգն. ուղղ. տառունք, սեռ. տառանց=պարան, լար, շղթա, կապանք)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Հոգնակի ուղղականում իՆՔ-ով վերջավորվող բառերից մի քանիսը բարդությունների մեջ ի ձայնավորի փոխարեն ստանում են ու և այդպիսով վերջավորվում են ունՔ-ով, օրինակ՝ անձն—անձինք, բայց՝ միանձն—միանձունք, մեծանձն—մեծանձունք, վեհանձն—վեհանձունք, ազն—ազինք (=ցեղ, սերունդ), բայց՝ դիւցազն—դիւցազունք, հայկազն—հայկազունք, բեռն—բեռինք, բայց մեծաբեռն—մեծաբեռունք, իսկ ծանրաբեռն—ծանրաբեռինք։ Այդ փոփոխությունը բոլոր դեպքերում պարտադիր չէ։

[1] Մեծ մասամբ եզակի։



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Այս հոլովման պատկանող մի քանի բառեր որոշ հոլովաձևերում զուգահեռաբար հանդես են գալիս Ա պարզ հոլովմամբ (ներդրական), օրինակ՝ ափն—ափին կամ ափան (վերջինս համեմատաբար ուշ շրջանից է վկայված), բուռն—բռին կամ բռան, դիւցազն—դիւցազին կամ դիւցազան։ Այս և էլի ուրիշ փաստեր ցույց են տալիս այս հոլովման կապը Ա պարզ հոլովման հետ (տե՛ս § 77)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3.— Ձեռն բառը եզակի թվում ներդրական բնույթի հոլովում ունի, հոգնակիում՝ վերջադրական, այսպես՝ եզ. սեռ. ձեռին, բաց. ի ձեռանէ, գործ. ձեռամբ, հոգն. ուղղ. ձեռք, սեռ. ձեռաց, գործ. ձեռաւք (օք)։ Հոգնակի գործիականում իբրև բացառություն կա գործածված ձեռամբք (Դատ., է, 20)։ Նմանօրինակ հոլովում ունի նաև ոտն բառը՝ եզ. սեռ. ոտին (երբեմն՝ ոտան), բաց. յոտանէ, գործ. ոտամբ, հոգն. ուղղ. ոտք, սեռ. ոտից (երբեմն՝ ոտաց), գործ. ոտիւք։

Քար բառը հոգնակի թվում հոլովվում է այս հոլովման պատկանող բառերի նմանությամբ, իսկ եզակի թվում հոլովվում է Ի հոլովիչի վերջադրական համակարգով, օրինակ՝ եզ. ուղղ. քար, սեռ. քարի, բաց. ի քարէ, գործ. քարիւ, հոգն. ուղղ. քարինք, սեռ. քարանց, գործ. քարամբք։

### Ո—Ա խառն հոլովում

§ 64. Այս հոլովումը լինում է միայն վերջադրական բնույթի. հոլովիչները դրվում են բառի վերջում, ընդ որում եզակի թվում մինչև գործիական հոլովը գործում է Ո հոլովիչը, իսկ եզակի գործիականում և հոգնակի թվի բոլոր թեք հոլովներում՝ Ա հոլովիչը։ Եզակի բացառականը սովորաբար է հոլովակերտ մասնիկը չի ունենում, իսկ եզակի գործիականում հանդես է գալիս ւ հոլովակերտ մասնիկը։

Ինչպես ցույց է տրվում ստորև, այս հոլովմանը ենթարկվող բառերը վերջավորվում են ի ձայնավորով, որը հոլովիչներից առաջ փոփոխություն է կրում. ո-ից առաջ վերածվում է ւ-ի, իսկ ա-ից առաջ՝ Ե-ի, օրինակ՝ այգի—այգւոյ, այգեաւ, պատանի—պատանւոյ, պատանեաւ, պատանից—պատանեաց։ Մեր հին ձեռագրերում տեղ-տեղ հանդիպում են նմանօրինակ բառեր՝ ո-ից առաջ ի ձայնավորի պահմամբ, ինչպես՝ աղանոյ, թշնամոյ և այլն։ Որպես կանոն ո-ից առաջ ի-ն սղվում է այն բառերում, որոնք ի

ձայնավորից առաջ ունեն ւ, օրինակ՝ արծուի—արծուոյ, ծարաւի—
—ծարաւոյ, կտաւի—կտաւոյ, առուի—առուոյ և այլն։

Որոշ բառեր եզակի տրականում հանդես են գալիս նաև ջ հոլովակերտ մասնիկով, մանավանդ ի նախդիրի հետ գործածվելիս (ներգոյականի իմաստով)՝ այգի, եզ. տրակ. այգւոյ կամ այգւոջ (յայգւոջ), գինի—գինւոջ (ի գինւոջ), գալարի—գալարւոյ կամ գալարւոջ (ի գալարւոջ), կղզի—կղզւոյ կամ կղզւոջ (ի կղզւոջ), ծղխնի (=ծխնի, դռան կրունկ)—ծղխնւոյ կամ ծղխնւոջ, ջորի—ջորւոյ կամ ջորւոջ (ի ջորւոջ), տամալի (=տանիք)—տամալւոյ, տամալւոջ, տեղի—տեղւոյ կամ տեղւոջ (ի տեղւոջ)։ **Տուն** և **տեղի** բառերը եզակի բացառական հոլովում ևս ունենում են ջ մասնիկը, որին հետևում է եզակի բացառականի հոլովակերտ մասնիկը՝ **ի տանուջէ, ի տեղւոջէ**։ Այս ձևերն ավելի տարածված են, քան **ի տանւոյ, ի տեղւոյ** ձևերը։

Ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցական հոլովի միջոցով։

Հոլովման օրինակ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | պատանի | պատանիք |
| Ս. | պատանւոյ | պատանեաց |
| Տ. | պատանւոյ | պատանեաց |
| Հ. | (զ)պատանի | (զ)պատանիս |
| Բ. | ի պատանւոյ | ի պատանեաց |
| Գ. | պատանեաւ | պատանեաւք (եօք) |

Այս հոլովմամբ հոլովվում են՝

ա) Այն բազմավանկ բառերը[1], որոնք վերջավորվում են ի ձայնավորով, ինչպես՝ այգի, աղաւնի, աղօրի, ամեհի, ամուրի, այրի, անդրի (=արձան), ապակի, առաքինի, բարի, գարի, գերի, գոտի, եղեւնի, թշնամի, կատաղի, կենդանի, հաղնի (=բարդի), մարի (=էգ թռչուն), մորթի, մորի, յաւիթի (=ունեցած, առատ), ողնի, պատառխանի, փոշի և այլն։

Բացառություն են կազմում ի-ով վերջացող այն բազմավանկ բառերը, որոնք ցույց են տրված Ո պարզ հոլովման բաժնում, դրանք են՝ ցի վերջածանց ունեցող բառերը, որոնք որևէ տեղից լինելը կամ որևէ ցեղի, ժողովրդի պատկանելը են ցույց տալիս, և մի քանի երկվանկ բառեր (տե՛ս § 58)։

[1] Գոյական և ածական։



բ) Այսպես նաև այն բառերը, որոնք ունեն հետևյալ վերջածանցները՝

Անի—գեղանի, յեղուանի, հովանի, պիտանի և այլն։

Ենի—աղուեսենի, արմաւենի, գմռենի, թզենի, հայրենի, փայտենի, վարդենի և այլն։

Ոտի—գազրոտի, ընդոտի և այլն։

Ուհի—(հին՝ ունի)—տիրուհի, քրմուհի, Սմբատուհի, Տաճատուհի և այլն։

Ունի—արքունի, ծերունի։

գ) Ունի մասնիկով վերջավորվող հատուկ անունները՝ Արշակունի, Արծրունի, Բագրատունի, Խորխոռունի, Մանդակունի, Վարաժնունի և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս կարգի որոշ հատուկ անուններ հոգնակի թվում տեղ-տեղ հանդիպում են նաև Ո հոլովիչով, օրինակ՝ Արշակունւոց (Բուզ., IV, ԻԴ, էջ 221, V, Ի, էջ 319)։

դ) Մի շարք անեզական բառեր՝ անդրավարտիք, սեռ. անդրավարտեաց, արգասիք—արգասեաց, բաղանիք—բաղանեաց, երախտիք—երախտեաց, ընթրիք—ընթրեաց, ժամիք—ժամեաց, կարիք—կարեաց, կարծիք—կարծեաց, կեղծիք—կեղծեաց, հարսանիք—հարսանեաց, չարիք—չարեաց, օծիք—օծեաց և այլն։

## ԱՆԿԱՆՈՆ ԿԱՄ ԶԱՐՏՈՒՂԻ[1] ՀՈԼՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 65. Գրաբարի քերականության պատմության մեջ ավանդաբար ընդունված է անկանոն կամ զարտուղի հոլովում։ Քերականները անկանոն են համարել **այր, տէր, հայր, մայր, եղբայր, քոյր, կին, տիկին, աւր** (օր), **տիւ, գիւղ** բառերի հոլովումը՝ նկատի ունենալով նրանց հնչյունական անսովոր փոփոխությունները (հատկապես հավելումները) և հոլովման ընդհանուր կանոններից ունեցած որոշ շեղումները։ Սակայն որոշ քերականներ աշխատել են օրինաչափություն տեսնել այդ բառերի հոլովման մեջ և դրանք տեղաբաշխել ըստ առանձին հոլովումների։ Այսպես՝ Գաբրիել Ավետիքյանը **քոյր** բառը տեղադրում է Ն պարզ հոլովման (իր մոտ՝ վեցերորդ պարզ հոլովում) բառերի մեջ[2], իսկ մնացած բառերի հոլովումը խառն է համարում։ Արսեն Բագրատունին «Զարտուղի հոլովմունք» վերնագրի տակ այդ բառերը բաշխում է ըստ տարբեր հոլովումների, այսպես՝ **այր, տէր, հայր,**

[1] Զարտուղի=զ—արտ—ուղի՝ արտից դուրս։

[2] Գ. Ավետիքյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1815 թ., էջ 24։

մայր, եղբայր, կին բառերը՝ առաջին հոլովման (Ա հոլովում), քոյր բառը՝ երկրորդ հոլովման (Ե հոլովում), գիւղ բառը՝ երրորդ հոլովման (Ի հոլովում), աւր (օր) բառը՝ հինգերորդ հոլովման (Ու հոլովում)[1]: Ստ. Մալխասյանցը այս հարցում թեև չի հետևում Ավետիքյանին ու Բագրատունուն, սակայն ընդունում է, որ աւր բառը Ու հոլովիչով է հոլովվում (իր մոտ՝ Ու բաղաձայն հոլովում)[2]: Սրանց հոլովումը կանոնավոր է համարում և Ա. Ղարիբյանը:

Նկատի ունենալով, որ գրաբարում անվանական հոլովումը կատարվում է հոլովիչներով, պետք է նշել, որ հիշյալ բառերն ունեն հոլովման օրինաչափություն, միաժամանակ ընդունելով, որ այդ բառերից մի քանիսի մեջ որոշ հոլովներում կամ բոլոր հոլովներում որպես հոլովիչ հանդես է գալիս արմատական ձայնավորը:

Այդ բառերից **այր**, **տէր**, **հայր**, **մայր**, **եղբայր** բառերը հոլովվում են Ա հոլովիչով, քոյր բառը՝ Ե հոլովիչով, **կին** և **տիկին** բառերը՝ Ո, Ա հոլովիչներով (խառն հոլովում), **գիւղ** բառը՝ Ե, Ի հոլովիչներով (խառն հոլովում), **աւր** բառը՝ Ու հոլովիչով, **ախ** բառը՝ Ա հոլովիչով: Դրանցից մի քանիսի հոլովումը արված է վերևում, այստեղ տալիս ենք մնացածներինը:

Այր (=տղամարդ)

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | այր | արք |
| Ս. | առն | արանց |
| Տ. | առն | արանց |
| Հ. | (զ)այր | (զ)արս |
| Բ. | յառնէ | յարանց |
| Գ. | արամբ | արամբք |

Այստեղ եզակի սեռական, տրական և բացառական հոլովներում հոլովիչի դեր է կատարում արմատական ձայնավորը: Եզակի գործիականում և հոգնակի թվի թեք հոլովներում տեղի է ունենում Ա հոլովիչի հավելում: Եզակի թվի թեք և հոգնակի թվի բոլոր հոլովներում յ հնչյունը սղվում է: Ն հոլովակերտ մասնիկի մոտ ր-ն վերածվում է ռ-ի՝ այր—առն (ար+ն), իսկ այդ երևույթը խորթ չէ հայերենի համար:

Այր բառի պես հոլովվում են նաև նրանով բարդված բառերը՝ ռամայր, սինեայր (այլև Ի հոլովիչով՝ սինեայրի, սինեայրք):

Տ է ր

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | տէր | տեարք |
| Ս. | տեառն | տեարց, տերանց |
| Տ. | տեառն | տեարց, տերանց |
| Հ. | (զ)տէր | (զ)տեարս |
| Բ. | ի տեառնէ | ի տեարց, ի տերանց |
| Գ. | տերամբ | տերամբք |

Տէր բառը կազմությամբ բարդ բառ է, կազմված է տի (=մեծ, բարձրաստիճան) և այր արմատներից, որոնց ի ձայնավորը սղվել է, իսկ այ երկբարբառը միայն եզակի ուղղականում պարզվելով վերածվել է է-ի, մի երևույթ, որը շատ տարածված է հայերենի բարբառներում՝ հայր>հէր, մայր>մէր, փայտ>փէտ, այլ>էլ և այլն: Տի արմատի ի ձայնավորը առանձին ձևերում հանդես է գալիս որպես ե (ա-ից առաջ)—տէր=տի+այր, սեռ. տի+առն=տեառն:

Տէր բառի օրինակով հոլովվում են նաև նրանով բարդված բառերը՝ **տանուտէր**—տանուտեառն (այլև՝ տանուտերաց, տանուտերք), **պարտատէր**—պարտատեառն (սովորականի հետ նաև՝ պարտատիրի, պարտատիրաց):

Հ ա յ ր

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | հայր | հարք |
| Ս. | հաւր (հօր) | հարց, հարանց |
| Տ. | հաւր (հօր) | հարց, հարանց |
| Հ. | (զ)հայր | (զ)հարս |
| Բ. | ի հաւրէ (ի հօրէ) | ի հարց, ի հարանց |
| Գ. | հարբ, հարամբ | հարբք, հարամբք |

[1] Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, Վենետիկ, 1852 թ., էջ 34—37:

[2] Ստ. Մալխասյանց, Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Թիֆլիս, 1891 թ., էջ 23:

Այս ձևով հոլովվում են նաև մայր և եղբայր բառերը, սակայն՝ առանց եզակի գործիականի և հոգնակի թեք հոլովների երկբարբառ ձևերի:

**Մ ա յ ր**

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | *մայր* | *մարք* |
| Ս. | *մաւր (մօր)* | *մարց* |
| Տ. | *մաւր (մօր)* | *մարց* |
| Հ. | *(զ)մայր* | *(զ)մարս* |
| Բ. | *ի մաւրէ (ի մօրէ)* | *ի մարց* |
| Գ. | *մարբ* | *մարբք* |

**Ե ղ բ ա յ ր**

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | *եղբայր* | *եղբարք* |
| Ս. | *եղբաւր (եղբօր)* | *եղբարց* |
| Տ. | *եղբաւր (եղբօր)* | *եղբարց* |
| Հ. | *(զ)եղբայր* | *(զ)եղբարս* |
| Բ. | *յեղբաւրէ (յեղբօրէ)* | *յեղբարց* |
| Գ. | *եղբարբ* | *եղբարբք* |

Սրանց օրինակով հոլովվում են նաև բարդվածները՝ **նախահայր, նախամայր, հօրեղբայր** և այլն:

**Ք ո յ ր**

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | *քոյր* | *քորք* |
| Ս. | *քեռ* | *քերց* |
| Տ. | *քեռ* | *քերց* |
| Հ. | *(զ)քոյր* | *(զ)քորս* |
| Բ. | *ի քեռէ* | *ի քերց* |
| Գ. | *քերբ* | *քերբք* |



Թեք հոլովներում ոյ երկբարբառին փոխարինում է ե ձայնը[1]:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Երբեմն հանդիպում են նաև երկբարբառային ձևեր՝ **քուեր, քուերք, քուերց** և այլն, որոնք թեև բնորոշ ձևեր չեն համարվում, սակայն պարզ կերպով ցույց են տալիս, որ **քոյր** բառը ենթարկվում է ն պարզ հոլովման՝ **քոյր—քու—ե—ր, քու—ե—ր—ց:**

Քոյր բառի օրինակով հոլովվում են նաև նրանով բարդված բառերը՝ **հօրաքոյր, մօրաքոյր** և այլն:

**Կ ի ն**

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | *կին* | *կանայք* |
| Ս. | *կնոջ* | *կանանց, կանաց* |
| Տ. | *կնոջ* | *կանանց, կանաց* |
| Հ. | *(զ)կին* | *(զ)կանայս* |
| Բ. | *ի կնոջէ* | *ի կանանց, ի կանաց* |
| Գ. | *կանամբ կամ կնաւ* | *կանամբք* |

**Տ ի կ ի ն** (=տի+կին)

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | *տիկին* | *տիկնայք* |
| Ս. | *տիկնոջ* | *տիկնայց, տիկնաց* |
| Տ. | *տիկնոջ* | *տիկնայց, տիկնաց* |
| Հ. | *(զ)տիկին* | *(զ)տիկնայս* |
| Բ. | *ի տիկնոջէ* | *ի տիկնայց, ի տիկնաց* |
| Գ. | *տիկնամբ, տիկնաւ* | *տիկնամբք.* |

Այսպես է հոլովվում նաև **առնակին** բառը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գրաբարում կան որոշ բառեր էլ, որոնք հոգնակի ուղղականում **կին** և **տիկին** բառերի նման ունենում են **այք**, այլև **եայք** մասնիկները, օրինակ՝ **միջերկրայք** կամ **միջերկրեայք** (=միջերկրացիներ), **ծովեզերայք** (=ծովեզրի բնակիչներ), **հայաստանեայք** (=հայաստանցիներ), **ասորեստանեայք** (=ասորեստանցիներ), որոնք թեք հոլովներում ստանում են համապատասխան հոլովակերտ

[1] Այսօրինակ փոփոխությունը ծագումնաբանական հիմք ունի. Քոյր բառը ծագած է համարվում հնխ. swesor-ից:

մասնիկներ, ինչպես՝ **միջերկրայց** կամ **միջերկրեայց**, **Հայաստանեայց**, **ասորեստանեայց** և այլն։

### Գ ի ւ ղ

Այս բառը գրաբարում հանդիպում է տարբեր ձևերով՝ **գեաւղ**, **գեօղ**, **գեղ**, **գիւղ**: Եզակի սեռական, տրական և սրանից կազմված բացառական հոլովներում հանդես է գալիս ջ մասնիկը, բացառականում նրա վրա ավելանում է է հոլովակերտ մասնիկը։ Եզակի թվի սեռական, տրական և բացառական հոլովները ներթեքական բնույթ ունեն, որտեղ ե-ն փոխարինում է իւ երկբարբառին (բացառականում պահպանվում է հին եւ երկբարբառը, և Ե-ն հոլովիչի դեր է կատարում)։ Եզակի գործիականից սկսած՝ բառի վերջից ավելանում է Ի հոլովիչը, որից հետո հանդես են գալիս հոլովակերտ մասնիկները։ Ահա գիւղ բառի հոլովումը՝

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | գիւղ | գիւղք |
| Ս. | գեղջ | գիւղից |
| Տ. | գեղջ | գիւղից |
| Հ. | (զ)գիւղ | (զ)գիւղս |
| Բ. | ի գեղջէ | ի գիւղից |
| Գ. | գիւղիւ | գիւղիւք |

Ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է ընդհանուր ձևով՝ եզակի տրականով և հոգնակի հայցականով։

Հոգնակի թվի թեք հոլովներում հանդիպում են նաև Ա հոլովիչով ձևեր, օրինակ՝ «Իսկ խաղաղութեան զմուրհակս **գիւղաց** կամ զագարակաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ սրբոյն Յոհաննու...» (Բուզ., VI, ժ, էջ 402—403)։

Եթե նման ձևերը նկատի չունենանք, ապա կարող ենք ասել, որ գիւղ բառը հոլովվում է Ե—Ի խառն հոլովմամբ։

### ՆՈՒՅՆԱՆՈՒՆ ԲԱՌԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 66. Նույնանուն բառերը արտաքին հնչյունական կազմով լինելով բոլորովին նույնը, բայց իմաստով տարբեր՝ տարբերվում են նաև իրենց հոլովական ձևերով։ Ստորև տալիս ենք օրինակներ, յուրաքանչյուրի մոտ նշելով բնորոշ և տարբերիչ հոլովաձևեր։



| | |
|---|---|
| Այր (=տղամարդ)—առն, արամբ։ | Այր (=քարայր)—այրի, այրիւ։ |
| Գայլ (=գազան)—գայլոյ (երբեմն՝ գայլու), գայլով։ | Գայլ (=բերանակապ)—գայլի, գայլիւ։ |
| Դար (=դար, ժամանակ)—դարու, դարուց։ | Դար (=բարձր տեղ, բարձունք)—դարի, դարիւ։ |
| Եկ (=եկվոր)— եկի, եկաց։ | Եկ (=գալը, գալուստ)—եկի, եկիւ։ |
| Խաղ (=խաղ)—խաղոյ, խաղով (այլև՝ խաղու, խաղուց)։ | Խաղ (=ճահիճ, ծանծաղուտ, խորշ ջրափին)—խաղի, խաղիւ։ |
| Կոյս (=աղջիկ, կույս)—կուսի, կուսիւ։ | Կոյս (=կողմ)—կուսի, կուսաւ։ |
| Հայր (=ծնող, հայր)—հաւր (հօր), հարբ, հարամբ։ | Հայր (=վերակացու, մարդպետ)—հայրի, հայրիւ։ |
| Հոր (=հոր, փոս)—հորոյ, հորով։ | Հոր (=փեսա)—հորի, հորիւ։ |
| Մայր (=ծնող, մայր)—մաւր (մօր), մարբ։ | Մայր (=եղևնի)—մայրի, մայրիւ։ |
| Որթ (=հորթ)—որթու, որթուց։ | Որթ (=խաղողի որթ)—որթոյ, որթով։ |
| Սան (=սան)—սանու, սանուց։ | Սան (=կաթսա)—սանի, սանիւ։ |
| Օղ (=օղ)—օղոյ, օղով։ | Օղ (=ռանեաման)—օղի, օղիւ։ |
| Փող (=խողովակ)—փողոյ, փողով։ | Փող (=կոկորդ, պարանոց)—փողի, փողիւ։ |

Հանդիպում են նաև միաձև հոլովման ձևեր, օրինակ՝ **սարդ** (մի տեսակ ծառի անուն), **սարդ** (միջատի անուն), **սարդ** (մի տեսակ թռչունի անուն), բոլորն էլ հոլովվում են Ի հոլովիչով։

# ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 67. *Գրաբարում և ածական անունները ըստ իրենց արտահայտած հիմնական իմաստի լինում են* **որակական** *և* **հարաբերական**։

*Որակական ածականներն ըստ իրենց դրսևորած համեմատելի հատկանիշների ունենում են համեմատության աստիճաններ՝ դրական, համեմատական, գերադրական։*

§ 68. **Դրական աստիճանը** *որակական ածականի սկզբնական վիճակն է՝ առանց համեմատության ու բառակազմական նոր փոփոխությունների, օրինակ՝* **մեծ, փոքր, ծանր, բարի, չար, հզօր** *և այլն։*

§ 69. **Համեմատական աստիճանը** *կազմվում է ածանցմամբ և նկարագրական եղանակով։*

*Այս աստիճանում որակական ածականները սովորաբար ստանում են* **գոյն** *վերջածանցը, ինչպես՝* **լաւագոյն, հզօրագոյն, մեծագոյն** *և այլն, որոնք աշխարհաբարում գերադրական աստիճանի իմաստ են արտահայտում, իսկ գրաբարում՝ համեմատական, այսինքն՝* **լաւագոյն** *գրաբարում նշանակում է ոչ թե ամենալավ, այլ՝ ավելի լավ,* **հզօրագոյն**՝ *ավելի հզոր,* **մեծագոյն**՝ *ավելի մեծ։*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Առանձին դեպքերում գրաբարում և* **գոյն** *վերջածանցով որակական ածականները հանդիպում են գերադրական իմաստով։*

*Նկարագրական եղանակով համեմատական աստիճանը կազմվում է հետևյալ կերպ. ածականից հետո դրվում է* **քան** *նախադրությունը, իսկ որանից հետո էլ՝ համեմատելի բառը, որը արտահայտվում է հայցական հոլովով (որպես* **քան** *նախադրության խնդիր), օրինակ՝* **լաւ քան զնա**=*ավելի լավ քան նա, նրանից ավելի լավ,* **բարձր քան զպարիսպ**=*ավելի բարձր քան պարիսպը, պարսպից բարձր,* **կատաղի քան զգազան**=*ավելի կատաղի քան գազանը, գազանից կատաղի և այլն։*



*Համեմատական աստիճանը երբեմն կազմվում է այս երկու եղանակների համադրությամբ, օրինակ՝ «...Որ ինչ* **հնագոյն քան զնոսա**» *Ինչ որ նրանցից ավելի հին է (Խոր., I, Գ, էջ 11), «...Բազումք ի ձէնջ* **լաւագոյնք** *էք* **քան զիս** *արութեամբ...» Ձեզանից շատերը քաջությամբ ինձանից ավելի լավ են (Եղիշե, V)։*

§ 70. **Գերադրական աստիճանը** *կազմվում է* **կարի, յոյժ, սաստիկ, անհնարին** *և նման մակբայների միջոցով, օրինակ՝* **կարի** *ամուր=ամենաամուր, ամրագույն,* **յոյժ մեծ**=*ամենամեծ, մեծագույն,* **սաստիկ իմաստուն** *(Բուզ., IV, Գ, էջ 106)։*

§ 71. *Գրաբարում ածական անունները հոլովվում են, սակայն հոլովման յուրահատուկ համակարգ չունեն. նրանք հոլովվում են գոյական անունների նման։ Այդ պատճառով էլ վերը գոյական անունները ըստ հոլովումների բաշխելիս զուգահեռաբար նկատի ենք ունեցել նաև ածական անունները։*

§ 72. *Ածական անունները գոյական անունների հետ գործածվում են թե՛ նախադաս և թե՛ հետադաս։ Նախադաս գործածության դեպքում բազմավանկ ածականները չեն հոլովվում, օրինակ՝*

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| *Ուղղ.* | *մտերիմ բարեկամ* | *մտերիմ բարեկամք* |
| *Ս.* | *մտերիմ բարեկամի* | *մտերիմ բարեկամաց* |
| *Տ.* | *մտերիմ բարեկամի* | *մտերիմ բարեկամաց* |
| *Հ.* | *(զ)մտերիմ բարեկամ* | *(զ)մտերիմ բարեկամս* |
| *Բ.* | *ի մտերիմ բարեկամէ* | *ի մտերիմ բարեկամաց* |
| *Գ.* | *մտերիմ բարեկամաւ* | *մտերիմ բարեկամաւք (օք)* |

*Այս կանոնից բացառություն են կազմում մի քանի երկվանկ ածականներ (բարի, բարձր, փոքր), որոնք նախադաս գործածությամբ կարող են հոլովվել, ինչպես՝* **ի բարւոյ աւարէ** *(Եղիշե, I, Բ, էջ 8),* **զբարձունս կուռ** *(Բուզ., IV, ՄԹ, էջ 271)։* **Տեղ**-*տեղ հանդիպում են նախադաս հոլովված նաև այլ բազմավանկ ածականներ, այսպես՝* **երկնաղիզօք հասակօք** *(Խոր., I, ԺԱ, էջ 34),* **երկայնանստի... լերամբ** *(Խոր., I, Ժ, էջ 33)։*

*Իսկ միավանկ ածականները նախադաս գործածվելիս կարող են հոլովվել. օրինակներ. «Եւ ոչ է արարիչ* **չարաց իրաց**, *այլ բարեաց» (Եղիշե, I, Բ, էջ 8)՝ Նա չէ չար բաների արարիչ, այլ՝*

բարբիներից։ «...Իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի լուցեալ» (Եղնիկ, I, Գ, էջ 11)՝ Իբրև մի ճրագ մեծ տան մեջ՝ առաստաղի և հատակի միջև վառված։ «...Մեծաց ճառուածոց արժանի առնէր զՎարազն» (Բուզ., III, ԻԱ, էջ 87)՝ Վարազին մեծ հարվածների արժանացրեց։ Հոգնակի թվի առանձին հոլովներում, օրինակ, գործիականում, ածականը թվով երբեմն չի համաձայնում գոյականին. օրինակ՝ մեծաւ բշնամանօք (Բուզ., III, Գ, էջ 15), մեծաւ տենչանօք (Բուզ., III, Ժ, էջ 34), մեծաւ կոծովք (Բուզ., III, ԺԱ, էջ 41), մեծաւ անարգանօք (Եղիշե, I)[1]։

§ 73. Ետադաս գործածության դեպքում ածական անունները առհասարակ հոլովվում են, թվով ու հոլովով համաձայնելով գոյական անվանը, սակայն հոլովվում են ոչ թե տվյալ գոյական անվան հոլովմամբ, այլ այն հոլովմամբ, որին ենթարկվում են իրենք։

Հոլովման օրինակ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | եղբայր հարազատ | եղբարք հարազատք |
| Ս. | եղբաւր (եղբօր) հարազատի | եղբարց հարազատաց |
| Տ. | եղբաւր (եղբօր) հարազատի | եղբարց հարազատաց |
| Հ. | (զ)եղբայր հարազատ | (զ)եղբարս հարազատս |
| Բ. | յեղբաւրէ (յեղբօրէ) հարազատէ | յեղբարց հարազատաց |
| Գ. | եղբարբ հարազատաւ | եղբարբք հարազատաւք (օք) |

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | տուն մեծ | տունք մեծք |
| Ս. | տան մեծի | տանց մեծաց |
| Տ. | տան մեծի | տանց մեծաց |
| Հ. | (զ)տուն մեծ | (զ)տունս մեծս |
| Բ. | ի տանէ մեծէ | ի տանց մեծաց |
| Գ. | տամբ մեծաւ | տամբք մեծաւք (օք) |

Ետադաս գործածության դեպքում էլ հանդիպում են անհամաձայնության դեպքեր։

Բոլոր դեպքերում նախդիրները դրվում են նախադաս բառի վրա, լինի ածական, թե գոյական։

---

1 Հոգնակի գործիականում ածականը եզակի է մնում հատկապես անեզական բառերի հետ գործածվելիս։ Թվով անհամաձայնություն է լինում նաև հոգնակի թվի սեռական և հայցական հոլովներում։



## ՉՀՈԼՈՎՎՈՂ ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

§ 74. Գրաբարում, ինչպես արդեն տեսանք, գոյական և ածական անունները հոլովվում են։ Սակայն, դրանցից կան այնպիսի բառեր, որոնք թեև ենթակա են հոլովման, բայց չեն հոլովվում։ Այդ բառերից են՝

1. Ին վերջածանց ունեցող այն բառերը, որոնք ձայն են նշանակում, օրինակ՝ գոչիւն, թնդիւն, ճչիւն, ճառաչիւն և այլն։ Խոսքի մեջ կիրառվելիս, երբ հոլովման հարկ է լինում, ենթարկվում են ձևափոխության և ապա հոլովվում. իսկ ձևափոխումը կատարվում է երկու ճանապարհով՝ ա) այդ բառերը վերջվում են ումն ածանցով՝ գոչիւն—գոչումն, թնդիւն—թնդումն, ճչիւն—ճչումն, ճառաչիւն—ճառաչումն. այս դեպքում արդեն հոլովվում են Ա հոլովիչով՝ գոչման, թնդման, ճչման, ճառաչման. բ) վերածվում են անորոշ դերբայի ձևով՝ գոչիւն—գոչել, թնդիւն—թնդալ, ճչիւն—ճչել, ճառաչիւն—ճառաչել, իսկ սրանք հոլովվում են Ո հոլովիչով (միայն եզակի թվով, տե՛ս § 58, դ)՝ գոչել—գոչելոյ, թնդալ—թնդալոյ, ճչել—ճչելոյ, ճառաչել—ճառաչելոյ։

2. Կրկնակի փոքրացուցիչ-փաղաքշական ածանց ունեցող բառերը, օրինակ՝ ճաւակիկ, պատանեկիկ, փոքրիկիկ և այլն։ Սրանք կարող են հոլովվել առանց մի ածանցի, վերջին մի ածանցի հեռացումով՝ ճաւակ, պատանեակ, փոքրիկ, իսկ այս վիճակում առաջին երկուսը հոլովվում են Ի—Ա խառն հոլովմամբ, վերջինը՝ Ա պարզ հոլովմամբ՝ ճաւակի, ճաւակաւ, պատանեկի, պատանեկաւ, փոքրկան, փոքրկամբ, փոքրկունք, փոքրկանց։

3. Մի քանի այլ բառեր՝ արտօսր (=արտասուք), ծունր, մասնավորապես ածական անուններ՝ հաճոյ, պիտոյ, կազմ (պատրաստ իմաստով), նախ (առաջ, առաջին իմաստով), դոյզն (=չնչին), գոն, հաշտ, ձիգ, նման։ Թեք հոլովներում, ինչպես նաև հոգնակի թվում, դրանց փոխարինում են նույնանիշ բառեր կամ նույն արմատներից կազմված այլ ձևեր, օրինակ՝ ծունր || ծունկ, արտօսր || արտասուք (սեռ. արտասուաց), հաճոյ || հաճոյական կամ հաճելի, պիտոյ || պիտոյական կամ պիտանի, կազմ[1] || պատրաստ, դոյզն || դուզնաքեայ, նման || նմանի, նախ || առաջին և այլն։

Մեծ մասամբ չեն հոլովվում բարդ կազմություն ունեցող որոշ ածականներ, ինչպես՝ ամենածածուկ, տատասաձեւն, հարաստաբուն, միախուռն, ոսկեզօծ և այլն։

---

1 Գրաբարում կազմ բառը հանդես է գալիս նաև գոյականի արժեքով, այս դեպքում հոլովվում է։ Այստեղ խոսքը վերաբերում է միայն կազմ ածականին։ Տե՛ս նաև «Բառարան»-ում։

Առանձին բառեր, հարադրական բարդություն ունեցող բայերի կազմության մեջ հանդես գալով որպես հարադրության բաղադրիչներ, չեն հոլովվում, օրինակ՝ ազդ առնել (=իմաց տալ, տեղեկացնել), ազդ տալ (նույն նշանակությամբ՝ իմաց տալ, տեղեկացնել), ազդ լինել (=իմացվել, իմաց արվել), սակայն հանդիպում է նաև զ նախդիրով՝ առնուլ զազդ. այց առնել. բայց նաև ի նախդիրով՝ յայց ելանել (=ուշադիր նայել, այցելել, խղճալ, վրեժ առնել), խոստովան լինել. ժոյժ ունել. ժոյժ առնել (=հանդուրժել, դիմանալ, իրեն զսպել, տոկալ, համբերել և այլն). ուրաստ լինել նաև ի նախդիրով՝ յուրաստ լինել, յուրաստ կալ (=ուրանալ, մոռանալ). անփոյթ առնել (=չհոգալ), անփոյթ լինել. նախանձուս արկանել (=գրգռել, հորդորել), նույն ձևով էլ ի նախդիր ունեցող դարձվածքներում՝ ի չմնջս առնուլ. ի չմնջս լինել (=անմեղ ձևանալ) և այլն։

Այս երևույթը պարտադիր չէ հարադրական բարդություն ունեցող բայերի բոլոր անվանական բաղադրիչների համար։ Հաճախ այդպիսի բարդություններում որպես բաղադրիչներ հանդես են գալիս այնպիսի բառեր, որոնք առանձին վերցված հոլովվում են, օրինակ՝ գործ առնել. գործ դնել, այլև նախդիրներով՝ ի գործ դնել. ի գործ ածել. ի գործ անկանել (=գործածվել, գործի դրվել, մշակվել), սակայն գործ բառը անկախ այդ բարդություններից հոլովվում է՝ գործոյ, գործով և նույնիսկ այդպիսի առանձին բարդությունների մեջ հանդիպում է հոլովված՝ գործոց լինել (=գործի լինել, գործով զբաղվել). ճեմ առնուլ (=ճեմել, քայլել). ճեմ բառը քայլվածք նշանակությամբ հոլովվում է Ի հոլովիչով՝ ճեմի, ճեմիւ. արտունջ առնել. արտունջ լինել. արտունջ բառը ինքնուրույն գործածությամբ հոլովվում է Ո հոլովիչով՝ արտնջոյ, արտնջով. և այսպես շատերը։

## ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՅԱԿԱՆ ԵՎ ԱԾԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 75. Գրաբարի գոյական և ածական անունների հոլովման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ բառեր հոլովման մեջ հանդես են գալիս զուգահեռ հոլովական ձևերով՝ հոլովվելով տարբեր հոլովիչներով։ Այս տեսակետից առանձնապես հետաքրքրական պատկեր են ներկայացնում Ո, Ու պարզ հոլովումների և Ա պարզ հոլովման ու Ի—Ա խառն հոլովման (ներդրական) ենթարկվող որոշ բառերի զուգահեռ ձևերի հարաբերությունները։



§ 76. Կան բառեր, որոնք զուգահեռաբար հոլովվում են Ո և Ու հոլովիչներով, օրինակ՝ արջ—արջոյ, արջոց || արջու, արջուց (ուշ ժամանակներում՝ նաև Ի հոլովիչով), երինջ—երնջոյ, երնջոյ || երնջու, երնջուց (ուշ ժամանակներում հանդիպում է նաև այլ հոլովիչով, օրինակ՝ երնջաւ), ուլ—ուլու, ուլուց || ուլոյ, ուլոց։ Այսպես նաև Ու և Ո հոլովիչների ենք հանդիպում ագռաւ, առիւծ, կաքաւ, հաւ բառերում, սակայն սրանց մեջ Ո-ն ուշ շրջանից է, և բացի դրանից, սրանցից մի քանիսը ուրիշ հոլովիչներով էլ են հոլովվում (Ի, Ա)։

Այս փաստերը թեև սակավաթիվ, բայց բնորոշ են Ո հոլովման էվոլյուցիան ցույց տալու համար։ Սա ընդհանուր պատմական հնչյունափոխության արդյունք է, որը ավելի պարզ է երևում, երբ նկատի ենք ունենում ամբողջ հայերենը։ Ժամանակակից գրական հայերենում և բարբառներում կարելի է ցույց տալ բազմաթիվ բառեր, որոնք հոլովվում են Ու-ով, բայց մի ժամանակ հոլովվելիս են եղել Ո-ով։ Հիշենք, թեկուզ, անորոշ դերբայի հոլովումը՝ գնալոյ>գնալու, գրելոյ>գրելու, նստելոյ>նստելու և այլն։ Կամ գոյականներից՝ մարդոյ>մարդու, որդւոյ>որդու, ոսկւոյ>ոսկու և այլն[1]։

Այս որոշակի օրինաչափությունից բացի, առանձին բառաձևերում եղել է նաև հակառակ երևույթը, որը, սակայն, բնորոշ չէ իբրև կանոն։

§ 77. Կան բառեր, որոնք զուգահեռաբար հոլովվում են ներդրական Ա պարզ և Ի—Ա խառն հոլովումներով, օրինակ՝ ափն—ափին || ափան, բուռն—բռին || բռան, գիւղաքին || գիւղաքան, ստեղն (=ծառի բուն, բույսի ցողուն, ծիլ, ճյուղ և այլն)—ստեղան || ստեղին։ Այս փաստերը երևան են հանում Ա պարզ և Ի—Ա խառն հոլովումների (ներդրական) կապը, որն ապացուցվում է ոչ միայն սրա, այլև ուրիշ փաստերով։ Ի—Ա ներդրական-հոլովման ենթակա շատ բառերի եզակի բացառականում հանդես է գալիս Ա հոլովիչը, ինչպես՝ յեզանէ, յեզնէ, ի գառանէ (կամ ի գառնէ), ի թոռանէ (կամ ի թոռնէ), ի խաչանէ (կամ ի խաչնէ), ի մատանէ (կամ ի մատնէ) և այլն, որը հատուկ է Ա հոլովմանը։ Նշանակալի է նաև այն փաստը, որ աշխարհաբարում ու որոշ բարբառներում այս կարգի բառերից մի քանիսը որոշ հոլովներում ունենում են Ա հո-

[1] Ո—Ու էվոլյուցիան § 76-ում նշված մի քանի բառերի մեջ ապացուցված է նաև նրանց (ոչ բոլորի) ստուգաբանությամբ. այսպես՝ արջ<հնխ. rktho-, ուլ < հնխ. pōlo (տե՛ս Հ. Աճառյան, «Հայերէն արմատական բառարան», հատ. I, V, համապատասխան բառերի տակ)։

լովման են (աշխարհաբարի ան հոլովումը), ինչպես՝ եզ—եզան, թոռ—թոռան, բեռ—բեռան և այլն։

Նշելով այս կարգը՝ միաժամանակ չի կարելի անտեսել քերականական նմանակությունը, որի հիման վրա առանձին բառեր կարող էին շեղվել իրենց հոլովման սկզբնական տիպից։ Ըստ պատմա-համեմատական քերականության՝ այս հոլովումները նույն ծագումն ունեն։ Սակայն այստեղ խոսքը վերաբերում է հայկական հողի վրա նրանց ձևավորումից հետո առաջացած հարակցություններին։

§ 78. Որոշ բառեր հանդիպում են մեկից ավելի հոլովմամբ, հոլովման փոխանցումներով, օրինակ՝ աման—ոյ, ոց || ի, աց || իւ, առած—ի. ից || ոյ, ոց. գահ—ու, ուց || ոյ || ի. ից. գանձ—ու, ուց || ի. ից. գոյն—ոյ. ոց. || ի. ից. գրօշ—ու. ուց || ի. ից. գունդ—ու. ուց, ուք || իւք. թոյն—ոյ. ոց || ի, ից || աց. թագ—ոյ ոց || ի. ից. մազ—ու. ուց || ի, աց. նաւ—ու, ուց || ի. աց և այլն։ Հոլովման այս տարբերություններից մի քանիսը տարբեր ժամանակների վկայությունների արդյունք են։

§ 79. Բարդ և ածանցավոր բառերի հոլովման ժամանակ բառի վերջին բաղադրիչը հաճախ հոլովվում է ոչ այն հոլովմամբ, որով հոլովվում է սովորաբար առանձին վերցված, օրինակ՝ գիր—գրոյ, գրոց, բայց՝ ժառանգագիր—ժառանգագրի, ժառանգագրաց, սէր—սիրոյ, բայց՝ աշխատասէր—աշխատասիրի, աշխատասիրաց, բարեսէր—բարեսիրի, բարեսիրաց, զէն—զինու, բայց՝ սպառազէն—սպառազինի, սպառազինաց, խօսք—խօսից, բայց՝ չարախօս—չարախօսի, չարախօսաց, սիրտ—սրտի, սրտից, բայց՝ վատասիրտ—վատասրտի, վատասրտաց, մահ—մահու կամ մահուան, բայց՝ անմահ—անմահի, անմահից, յոյս—յուսոյ, բայց՝ անյոյս—անյուսի, անյուսից և այլն։

§ 80. Տարբերություններ են նկատվում նաև հատուկ անունների հոլովման մեջ, օրինակ՝ Հայկ—Հայկայ || Հայկի, Դաւիթ—Դաւթայ || Դաւթի, Ղուկաս—Ղուկասու || Ղուկայ, Ծաղիտա—Ծաղիտայ || Ծաղիտայի և այլն։

Հոլովման տարբերությունների մասին համապատասխան տեղերում խոսվել է։

## ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 81. Գրաբարի թվական անունները 3 տեսակ են՝ քանակական, դասական և բաշխական[1]։ Սրանք հոլովման յուրահատուկ սիստեմ չունեն, հոլովվում են գոյական անունների նման՝ ժամանակի առանձնահատկություններով։

### ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 82. Գրաբարի քանակական թվականներն են՝ մի, երկու, երեք, չորք, հինգ, վեց, եւթն կամ եօթն, ութ, ինն, տասն, իսկ այնուհետև միավորները բարդվում են վերջինիս հետ, ավելացնելով սկզբից՝ մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան, ապա միավորվում են և շաղկապով՝ եւթնեւտասան, ութեւտասան կամ ութուտասան, իննեւտասան, քսան. այս և հաջորդ տասնյակներից հետո միավորները հարադրվում են վերջից, կապվելով և շաղկապով՝ քսան և մի, քսան և երկու, քսան և երեք..., երեսուն, երեսուն և մի, երեսուն և երկու..., քառասուն, քառասուն և մի, քառասուն և երկու..., յիսուն, յիսուն և մի, յիսուն և երկու..., վաթսուն, վաթսուն և մի, վաթսուն և երկու..., եւթանասուն, եւթանասուն և մի, եւթանասուն և երկու..., ութսուն, ութսուն և մի, ութսուն և երկու..., իննսուն, իննսուն և մի, իննսուն և երկու..., հարիւր, հարիւր և մի, երկերիւր, երեքհարիւր, չորեքհարիւր, հինգհարիւր, վեցհարիւր, եւթնհարիւր, ութհարիւր, իննհարիւր, հազար, բիւր (բիւր). երկու բիւր, երեք բիւր և այլն։

§ 83. Այս թվականներից բոլորը միևնույն հոլովիչով չեն

[1] Այստեղ տրվում են գրաբարի թվականների հիմնական տեսակները։ Թվականներից կազմված միջոցներով (կրկնությամբ, ածանցմամբ և այլն) կազմված այլ բառաձևերի ու նրանց իմաստների քննարկումն այս գրքի նպատակից դուրս է։ Նրանց մասին տե՛ս Հ. Աճառյան, «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների», հատ. I, Երևան, 1952 թ., էջ 272—331։

հոլովվում։ Առանձին թվականներ կամ թվականների առանձին խմբեր հոլովվում են տարբեր հոլովումներով։

§ 84. Մի թվականը անհոդական է, հոլովվում է Ո հոլովիչով, սեռականում ստանում է ջ հոլովակերտը, բացառականում ևս կա այդ մասնիկը, սակայն տրականը որպես կանոն կազմվում է ում հոլովակերտով։[1]

| | |
|---|---|
| Ուղղ. | մի |
| Ս. | միոյ, միոջ |
| Տ. | միում |
| Հ. | զմի |
| Բ. | ի միոջէ, ի միոյ |
| Գ. | միով |

§ 85. Երկու թվականն անհոդական է, հոլովվում է Ու հոլովիչով։ Սա հոգնակի ուղղականում Ք մասնիկ սովորաբար չի ունենում։ Հոգնակի ուղղականում Ք մասնիկով հանդիպում են շատ սակավաթիվ օրինակներ, ինչպես՝ «...Չէին երկուք միայն անաբարք, այլ հինգ» (Եզնիկ, I, Ը, էջ 24), «Էերինքն երկուք, մի զօր էին, և մի Թագաւորն Յունաց» (Բուզ., IV, ԾԴ, էջ 256)։ Գործիականը ըստ կանոնի կա երկուք ձևով, բայց նրա փոխարեն սովորաբար գործածվում է երկոքումբք, որը, սակայն, անձներականի ձև է։

| | |
|---|---|
| Ուղղ. | երկու |
| Ս. | երկուց |
| Տ. | երկուց |
| Հ. | զերկուս |
| Բ. | յերկուց |
| Գ. | երկոքումբք, երկուք |

§ 86. Երեք և չորք թվականները ևս անհոդական են, նրանք հոլովվում են Ի պարզ հոլովմամբ։ Այսպես՝

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | երեք | չորք |
| Ս. | երից | չորից |
| Տ. | երից | չորից |
| Հ. | զերիս | զչորս |
| Բ. | յերից | ի չորից |
| Գ. | երիւք | չորիւք |

[1] Դա թույլ է տալիս, որ տրականում ենթադրել եղել է ջ հոլովակերտ մասնիկը, որը, սակայն, լայն գործածություն չի ունեցել (մեր մատենագրության մեջ պահպանվել են շատ հազվադեպ օրինակներ)։



§ 87. Հինգից սկսած մինչև ինն (ներառյալ) թվականները, բացի եւթն թվականից, հոլովվում են Ի պարզ հոլովմամբ։ Թե՛ սրանք և թե՛ սրանց հաջորդող բոլոր թվականները հոլովվում են և՛ եզակի, և՛ հոգնակի թվով։

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | հինգ | հինգք | վեց | վեցք |
| Ս. | հնգի | հնգից | վեցի | վեցից |
| Տ. | հնգի | հնգից | վեցի | վեցից |
| Հ. | զհինգ | զհինգս | զվեց | զվեցս |
| Բ. | ի հնգէ | ի հնգից | ի վեցէ | ի վեցից |
| Գ. | հնգիւ | հնգիւք | վեցիւ | վեցիւք |

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | ութ | ութք | ինն | իննունք |
| Ս. | ութի | ութից | ըննի | ըննից |
| Տ. | ութի | ութից | ըննի | ըննից |
| Հ. | զութ | զութս | զինն | զիննունս |
| Բ. | յութէ | յութից | յըննէ | (յըննից) |
| Գ. | ութիւ | ութիւք | ըննիւ | ըննիւք |

Հինգ թվականը հոգնակի գործիականում ունենում է նաև հնգոք ձևը (որն ավելի գործածական է), իսկ դա խառն հոլովման հետք է։ Ինն թվականը հոգնակի թվում հոլովվում է նաև Ու հոլովիչով՝ իննունք, իննուց, իննուց, զիննունս, յիննուց, իննումբք։

§ 88. Եւթն (եօթն) թվականը հոլովվում է Ա պարզ ներքին հոլովմամբ։

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | եւթն | եւթանք |
| Ս. | եւթան | եւթանց |
| Տ. | եւթան | եւթանց |
| Հ. | զեւթն | զեւթանս |
| Բ. | յեւթանէ | յեւթանց |
| Գ. | եւթամբ | եւթամբք |

Այս բառի հոլովման մեջ հանդիպում են նաև այլ ձևեր, ինչպես՝ եւթին, եւթնի, եւթնիւ, եւթեան, եւթեանց։

§ 89. Տասն, երկոտասան, ութևտասն (ութուտասն), իննևտասն թվականները հոլովվում են Ի—Ա խառն ներքին հոլովմամբ։ Օրինակներ.

| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| Ուղղ. տասն | տասունք | եւթնետասան | եւթնետասանք |
| Ս. տասին | տասանց | եւթնետասանին | եւթնետասանց |
| Տ. տասին | տասանց | եւթնետասանին | եւթնետասանց |
| Հ. զտասն | զտասունս | զեւթնետասան | զեւթնետասանս |
| Բ. ի տասնէ | ի տասանց | յեւթնետասանէ | յեւթնետասանց |
| Գ. տասամբ | տասամբք | եւթնետասամբ | եւթնետասամբք |

**Ութեւտասան** *թվականը հոգնակի ուղղականում և բաղաձայնից առաջ ստանում է ոչ թե ու, այլ՝ ա—***ութեւտասանք**, *այսպես էլ հայցականը՝* **զութեւտասանս**, *այս ձևով են լինում նաև մյուսները՝* **ութեւտասն** *(ութուտասն)*, **իննեւտասան**:

§ 90. **Մետասան, երկոտասան, երեքտասան, չորեքտասան, հնգետասան, վեշտասան** *թվականները հոլովվում են* **Ի** *պարզ հոլովմամբ: Օրինակներ.*

| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| Ուղղ. մետասան | մետասանք | վեշտասան | վեշտասանք |
| Ս. մետասանի | մետասանից | վեշտասանի | վեշտասանից |
| Տ. մետասանի | մետասանից | վեշտասանի | վեշտասանից |
| Հ. զմետասան | զմետասանս | զվեշտասան | զվեշտասանս |
| Բ. ի մետասանէ | ի մետասանից | ի վեշտասանէ | ի վեշտասանից |
| Գ. մետասանիւ | մետասանիւք | վեշտասանիւ | վեշտասանիւք |

§ 91. **Ի** *պարզ հոլովմամբ հոլովվում են նաև* **քսան, երեսուն, քառասուն, յիսուն, վաթսուն, եւթանասուն, ութսուն, իննսուն** *թվականները, բայց սրանց թեք հոլովներում ն-ից առաջ ու-ն սղվում է՝ երեսնի, քառասնի, յիսնի, վաթսնի, եւթանասնի, ութսնի, իննսնի: Հոլովման օրինակներ.*

| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| Ուղղ. քսան | քսանք | երեսուն | երեսունք |
| Ս. քսանի | քսանից | երեսնի | երեսնից |
| Տ. քսանի | քսանից | երեսնի | երեսնից |
| Հ. զքսան | զքսանս | զերեսուն | զերեսունս |
| Բ. ի քսանէ | ի քսանից | յերեսնէ | յերեսնից |
| Գ. քսանիւ | քսանիւք | երեսնիւ | երեսնիւք |



§ 92. **Հարիւր** *(հարիւր)*, **երկերիւր, երեքհարիւր, չորեքհարիւր, հնգհարիւր, վեցհարիւր, եւթնհարիւր, ութհարիւր, իննհարիւր** *թվականները հոլովվում են* **Ո** *պարզ հոլովմամբ, օրինակ՝*

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| Ուղղ. հարիւր | հարիւրք |
| Ս. հարիւրոյ | հարիւրոց |
| Տ. հարիւրոյ | հարիւրոց |
| Հ. զհարիւր | զհարիւրս |
| Բ. ի հարիւրոյ | ի հարիւրոց |
| Գ. հարիւրով | հարիւրովք |

*Այսպես էլ մյուսները:*

§ 93. **Հազար** *թվական անունը հոլովվում է* **Ի—Ա** *խառն վերջադրական հոլովմամբ:*

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| Ուղղ. հազար | հազարք |
| Ս. հազարի | հազարաց |
| Տ. հազարի | հազարաց |
| Հ. զհազար | զհազարս |
| Բ. ի հազարէ | ի հազարաց |
| Գ. հազարաւ | հազարաւք (օք) |

§ 94. **Բիւր** *(բիւր) թվականը հոլովվում է* **Ու** *պարզ հոլովմամբ:*

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| Ուղղ. բիւր | բիւրք |
| Ս. բիւրու | բիւրուց |
| Տ. բիւրու | բիւրուց |
| Հ. զբիւր | զբիւրս |
| Բ. ի բիւրէ | ի բիւրուց |
| Գ. բիւրու | բիւրուք |

*Այս բառը հանդիպում է նաև այլ հոլովիչներով՝* **բիւրաւ** *(Թագ., IV, ԼԸ, էջ 232)*, **բիւրօք** *(Թագ., IV, ԻԸ, էջ 225)*, **բիւրով** *(Թագ., IV, ԽԴ, էջ 235)*, **բիւրոց** *(Խոր., I, ԺԶ, էջ 52):*

§ 95. *Հարադրական կազմություն ունեցող բաղադրյալ քանակական թվականները հոլովվում են երկու կերպ՝ ա) հոլովվում է միայն վերջին բաղադրիչը, բ) հոլովվում են բոլոր բաղադրիչները, օրինակ՝*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | քսան և երկու | քսան և երկուք |
| Ս. | քսան և երկուց | քսանից և երկուց |
| Տ. | քսան և երկուց | քսանից և երկուց |
| Հ. | զքսան և երկուս | զքսան և զերկուս |
| Բ. | ի քսան և երկուց | ի քսանից և յերկուց |
| Գ. | քսան և երկուք | քսանիւք և երկուք |

## ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 96. Գրաբարում դասական թվականները կազմվում են քանակական թվականներից՝ երորդ կամ րորդ ածանցներով, բացի առաջին թվականից, որը հանդես է գալիս յուրահատուկ ձևով և սովորական առաջին ձևին զուգահեռ ունի նաև առաջնորդ և առաջներորդ ձևերը։ Մնացած բոլորը հիշյալ ածանցներով են՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, վեցերորդ, եւթներորդ, ութերորդ, իններորդ, տասներորդ, մետասաներորդ, երկոտասաներորդ..., քսաներորդ, քսաներորդ առաջնորդ կամ քսաներորդ առաջներորդ, քսաներորդ եւ առաջին, քսաներորդ երկրորդ..., երեսներորդ, քառասներորդ, յիսներորդ, վաթսներորդ, եւթանասներորդ, ութսներորդ, իննսներորդ, հարիւրերորդ կամ հարիւրորդ, հազարերորդ և այլն[1]։

§ 97. Առաջին թվականը հոլովվում է Ո հոլովիչով, եզակի տրականում զուգահեռաբար ունենում է ում հոլովակերտ մասնիկը. իսկ այս դեպքում եզակի բացառականում ստանում է և է հոլովակերտ մասնիկը։

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | առաջին | առաջինք |
| Ս. | առաջնոյ | առաջնոց |
| Տ. | առաջնոյ, առաջնում | առաջնոց |
| Հ. | զառաջին | զառաջինս |
| Բ. | յառաջնոյ, յառաջնումէ | յառաջնոց |
| Գ. | առաջնով | առաջնովք |

§ 98. Սկսած երկրորդ թվականից մինչև բոլոր թվականները հոլովվում են Ի—Ա խառն վերջադրական հոլովմամբ, եզակի տրականում զուգահեռաբար ստանում են ում հոլովակերտ մասնիկը, օրինակ՝

[1] Չորրորդ, տասներորդ ձևերին զուգահեռ կան նաև քառորդ, տասանորդ ձևերը իմաստային որոշ տարբերությամբ։



| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | երկրորդ | երկրորդք |
| Ս. | երկրորդի | երկրորդաց |
| Տ. | երկրորդի, երկրորդում | երկրորդաց |
| Հ. | զերկրորդ | զերկրորդս |
| Բ. | յերկրորդէ | յերկրորդաց |
| Գ. | երկրորդաւ | երկրորդաւք (օք) |

§ 99. Հարադրական բարդությամբ կազմված դասական թվականները հոլովվելիս՝ սովորաբար հոլովվում են բարդության մեջ մտնող բոլոր թվականները, օրինակ՝ հազարերորդ քառասներորդ հինգերորդ, սեռ. հազարերորդի քառասներորդի հինգերորդի...։

## ԱՆՁՆԵՐԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 100. Անձնրական թվականները ցույց են տալիս առարկաների քանակը, միաժամանակ նշելով նրանց միասնականությունը, ամբողջականությունը, նրանց միասնական առումը խմբի մեջ, օրինակ՝ երկոքին կամ երկոքեան նշանակում է երկուսն էլ, երկուսը միասին։

§ 101. Անձնրական թվականները կազմվում են քանակական թվականներից —եքին, —եքեան (մասնակի փոփոխությունով) ածանցների օգնությամբ, օրինակ՝ երկոքին կամ երկոքեան, երեքին կամ երեքեան, չորեքին կամ չորեքեան, հնգեքին կամ հնգեքեան, վեցեքին կամ վեցեքեան, եւթանեքին կամ եւթանեքեան..., տասնեքին կամ տասնեքեան, երկոտասանեքին կամ երկոտասանեքեան և այլն։

§ 102. Այս թվականները հոլովվում են Ու հոլովիչով, միայն հոգնակի թվով։

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | երկոքին, | երկոքեան |
| Ս. | երկոցուն, | երկոցունց |
| Տ. | երկոցուն, | երկոցունց |
| Հ. | զերկոսին, | զերկոսեան |
| Բ. | | յերկոցունց |
| Գ. | | երկոքումբք |

## ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

**§ 103.** *Գրաբարում թվականները գոյական անունների հետ գործածվելիս համաձայնում են տարբեր ձևերով։*

**§ 104. Մի** *քանակական թվականը գոյական անվան հետ գործածվում է թե՛ նախադաս, թե՛ ետադաս և երկու դեպքում էլ հոլովվում է։ Գոյական անունը այս դեպքում հանդես է գալիս միայն եզակի թվով, օրինակ՝*

| | Ետադաս | Նախադաս |
|---|---|---|
| Ուղղ. | այր մի | մի բան (=մի խոսք) |
| Ս. | առն միոյ կամ միոջ | միոյ բանի |
| Տ. | առն միում | միում բանի |
| Հ. | զայր մի | զմի բան |
| Բ. | յառնէ միոջէ | ի միոջէ բանէ |
| Գ. | արամբ միով | միով բանիւ |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— **Մի** *թվականը ետադաս գործածությամբ ավելի շատ անորոշության իմաստ է արտահայտում, կատարելով անորոշ դերանվան դեր, օրինակ՝* **այր մի=այր ոմն, այր ոք** *(որևէ մարդ, ինչ-որ մարդ, մի մարդ), իսկ նախադաս գործածությամբ ցույց է տալիս որոշակի քանակ (մեկ), օրինակ՝* **միով բանիւ**=*մի խոսքով,* **միով ակամբ**=*մի աչքով։*

**§ 105. Երկու, երեք, չորս** *քանակական թվականները գոյական անունների հետ գործածվում են և՛ նախադաս, և՛ ետադաս, երկու դեպքում էլ հոլովվում են։ Սրանց հետ գոյական անունները դրվում են միայն հոգնակի թվով և համաձայնում են բոլոր հոլովներում։*

Նախադաս

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | երկու եղբարք | երեք արք | չորք անկիւնք |
| Ս. | երկուց եղբարց | երից արանց | չորից անկեանց |
| Տ. | երկուց եղբարց | երից արանց | չորից անկեանց |
| Հ. | զերկուս եղբարս | զերիս արս | զչորս անկիւնս |
| Բ. | յերկուց եղբարց | յերից արանց | ի չորից անկեանց |
| Գ. | երկու(ք) եղբարբք | երիւք արամբք | չորիւք անկեամբք |



Ետադաս

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | եղբարք երկու | արք երեք | անկիւնք չորք |
| Ս. | եղբարց երկուց | արանց երից | անկեանց չորից |
| Տ. | եղբարց երկուց | արանց երից | անկեանց չորից |
| Հ. | զեղբարս երկուս | զարս երիս | զանկիւնս չորս |
| Բ. | յեղբարց երկուց | յարանց երից | յանկեանց չորից |
| Գ. | եղբարբք երկուք | արամբք երիւք | անկեամբք չորիւք |

**§ 106.** *Մյուս քանակական թվականները, սկսած հինգ թվականից գոյական անունների հետ նույնպես նախադաս և ետադաս գործածություն ունեն։ Թվականը նախադաս գործածության դեպքում եզակի գոյական անվան հետ չի հոլովվում. գոյականը հոլովվում է, իսկ թվականը մնում է անփոփոխ, միայն իր վրա կրելով նախդիրները, օրինակ՝*

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | հինգ հաց | վեց ժամ | տասն այր |
| Ս. | հինգ հացի | վեց ժամու | տասն առն |
| Տ. | հինգ հացի | վեց ժամու | տասն առն |
| Հ. | զհինգ հաց | զվեց ժամ | զտասն այր |
| Բ. | ի հինգ հացէ | ի վեց ժամէ | ի տասն առնէ |
| Գ. | հինգ հացիւ | վեց ժամու | տասն արամբ |

**§ 107.** *Հոգնակի թվով գոյական անվան հետ դրվելով՝ թվական անունը նախադաս գործածությամբ կարող է հոլովվել և չհոլովվել, օրինակ՝*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | հինգ ամք | հինգ[1] ամք |
| Ս. | հինգ ամաց | հնգից ամաց |
| Տ. | հինգ ամաց | հնգից ամաց |
| Հ. | զհինգ ամս | զհինգ ամս |
| Բ. | ի հինգ ամաց | ի հնգից ամաց |
| Գ. | հինգ ամաւք(օք) | հնգիւք (նաև՝ օք) ամաւք (օք) |

**§ 108.** *Դասական թվականները գոյական անունների հետ և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն ունեն, բայց որում գոյական անունը գործածվում է միայն եզակի թվով։ Դասական թվականները սովորաբար հոլովվում են ետադաս գործածությամբ։*

1 Ուղղական և հայցական հոլովներում թվականը մնում է եզակի։

| Նախադաս | Ետադաս |
|---|---|
| Ուղղ. չորրորդ ժամ | ժամ չորրորդ |
| Ս. չորրորդ ժամու | ժամու չորրորդի |
| Տ. չորրորդ ժամու | ժամու չորրորդի կամ չորրորդում |
| Հ. զչորրորդ ժամ | զժամ չորրորդ |
| Բ. ի չորրորդ ժամէ | ի ժամէ չորրորդէ |
| Գ. չորրորդ ժամու | ժամու չորրորդաւ |

Դասական թվականները երբեմն հանդիպում են հոլովված նաև նախադաս գործածությամբ՝ ի չորրորդում պահու, յերկրորդում աւուր և այլն։

§ 109. Առաջին թվականը երկու ձևով էլ հոլովվում է, օրինակ՝

| Նախադաս | Ետադաս |
|---|---|
| Ուղղ. առաջին օր | օր առաջին |
| Ս. առաջնոյ աւուր | աւուր առաջնոյ |
| Տ. առաջնում աւուր | աւուր առաջնում |
| Հ. զառաջին օր | զօր առաջին |
| Բ. յառաջնմէ օրէ | յօրէ առաջնմէ |
| Գ. առաջնով աւուրբ | աւուրբ առաջնով |

§ 110. Ամբողջական թվականները գոյականների հետ գործածվում են նախադաս, հոլովվում են և համաձայնում թվով ու հոլովով, օրինակ՝

| | |
|---|---|
| Ուղղ. չորեքին կամ | չորեքեան կողմանք |
| Ս. չորեցուն կամ | չորեցունց կողմանց |
| Տ. չորեցուն կամ | չորեցունց կողմանց |
| Հ. զչորեսին կամ | զչորեսեան կողմանս |
| Բ. ի չորեցունց | կողմանց |
| Գ. չորեքումբք | կողմամբք |

## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 111. Դերանունները գրաբարում ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝ անձնական, փոխադարձ, ցուցական, ստացական, հարցական, հարաբերական, անորոշ, որոշյալ (ամբողջական)։

§ 112. Դերանունների մի մասն անվանական հոլովում ունի, այսինքն հոլովվում է գոյական (ինչպես նաև ածական ու թվական) անունների նման, հոլովիչներով, իսկ մի մասն էլ հոլովվում է յուրահատուկ ձևով՝ առանց հոլովիչների, արմատների փոխանցումներով և սրանց յուրահատուկ փոփոխություններով. այդ պատճառով էլ դրանց հոլովումը մեր քերականագիտության մեջ ընդունված է կոչել դերանվանական հոլովում[1]։ Որոշ դերանունների հոլովման մեջ էլ նկատվում է անվանական և դերանվանական հոլովումների համադրումը։

### ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 113. Գրաբարի անձնական դերանուններն են՝ ես, դու, նա, ինքն, իւր[2]: Ահա դրանց հոլովումը.

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | ես | մեք | դու | դուք |
| Ս. | իմ | մեր | քո | ձեր |
| Տ. | ինձ | մեզ | քեզ | ձեզ |
| Հ. | զիս | զմեզ | զքեզ | զձեզ |
| Բ. | յինէն | ի մէնջ | ի քէն | ի ձէնջ |
| Գ. | ինեւ | մեւք (մեօք) | քեւ | ձեւք (ձեօք) |

1 Տե՛ս Ստ. Մալխասյանց, «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», 1891 թ., Թիֆլիս, էջ 26, այլև՝ Մ. Աբեղյան, «Գրաբարի համառոտ քերականություն», 1908 թ., էջ 121։

2 Ինքն և իւր դերանունները ոմանք առանձնացնում են որպես անդրադարձ դերանուններ։

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | նա | նոքա |
| Ս. | նորա | նոցա |
| Տ. | նմա | նոցա |
| Հ. | զնա | զնոսա |
| Բ. | ի նմանէ | ի նոցանէ |
| Գ. | նովաւ | նոքաւք (նոքօք) |

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| Ուղղ. | ինքն | ինքեանք | — | իւրեանք |
| Ս. | ինքեան | ինքեանց | իւր | իւրեանց |
| Տ. | ինքեան | ինքեանց | իւր | իւրեանց |
| Հ. | զինքն | զինքեանս | — | զիւրեանս |
| Բ. | յինքենէ | յինքեանց | յիւրմէ | յիւրեանց |
| Գ. | ինքեամբ | ինքեամբք | իւրև, իւրեաւ, իւրեամբ | իւրեամբք |

§ 114. Անձնական դերանունների ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է եզակի տրական և հոգնակի հայցական հոլովների միջոցով։ Բացառություն է կազմում ես դերանունը, որի եզակի ներգոյականի իմաստն արտահայտվում է հայցական հոլովի միջոցով՝ յիս։

§ 115. Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունները բացառական հոլովում ունեն նաև այլ ձևեր՝ ինձէն, մեզէն (նաև՝ մեզոյն), քեզէն (նաև՝ քեզոյն), ձեզէն (նաև՝ ձեզոյն)։ Սակայն սրանց մեջ բացառական հոլովի իմաստը գրեթե չի զգացվում։ Սրանք գրաբարում սաստկական բառերի կիրառություն ունեն։ Սովորաբար գործածվում են առաջին և երկրորդ դեմքի դերանունների հետ՝ սաստկական նշանակությամբ, օրինակ՝ «... Ես ինձէն ոչինչ ասեմ...» (Եղիշե, II), «... Մեք մեզէն ոչ եմք...» (Եղիշե, I)։ Այս օրինակներում կիրառված են սաստկական նշանակությամբ՝ ես ինքս, հենց ես, մենք ինքներս, հենց մենք։

Այլև գործածվում են առանձին, ինչպես՝ «...Ունիս քեզէն զերծանել արքային Հայոց Արշակայ...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)։ Այստեղ գործածված է դերանվան իմաստով, այն էլ ուղղական հոլովի նշանակությամբ, սակայն սաստկական որոշ երանգով. «Դու ինքդ կփրկվես Հայոց Արշակ արքայի ձեռքից»։

Հաճախ այս ձևերի հետ հանդես է գալիս իսկ եղանակավորող բառը, որը ավելի ևս սաստկացնում է իմաստը, օրինակ՝ «...Մեք մեզէն իսկ ոչ եմք» (Ագաթ., էջ 76)։ Կամ՝ «...Որոց



մեզէն իսկ ականատեսք եղեալ...» (Ագաթ., էջ 470)։ «...Մեզէն իսկ ականատես եղաք այնմ գիւտին» (Խոր., II, Ժ, էջ 120)։

§ 116. Գրաբարում երրորդ դեմքի համար գործածվում են նա, ինքն և իւր դերանունները, որոնք, սակայն, իմաստով և մանավանդ գործածությամբ տարբերվում են։

§ 117. Ինքն դերանունը հաճախ գործածվում է առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների հետ, սաստկական նշանակությամբ՝ ես ինքն, դու ինքն, նույն ձևով էլ կարող է դրվել երրորդ դեմքի նա դերանվան հետ, ինչպես՝ նա ինքն է (Ագաթ., էջ 121)։

Ինքն դերանունը թեև երրորդ դեմքի է, կարող է այլ դեմքի իմաստով առանձին գործածություն ունենալ, օրինակ՝ ինքնամբ ի նմին կայոյ նմա (առաջին դեմքի նշանակությամբ)։

§ 118. Անձնական դերանունների հետ սաստկական նշանակությամբ գործածվում է նաև ինքնին բառը, հաճախ իսկ բառի հետ։ Այդ կարելի է տեսնել սարքն բերված օրինակներում. «...Ես ինքնին իսկ, ասէ, փութայցի քանալ կատարել» (Բուզ., IV, Դ, էջ 121)՝ Ես ինքս, ես էլ, ասում է, ձգտում էի կատարել։ «Եւ դու ինքնին գիտես...» (Ագաթ., էջ 121)՝ Եվ դու ինքդ, հենց դու գիտես։ «...Դուք իսկ ինքնին գիտէք...» (Ագաթ., էջ 121)՝ Հենց դուք ինքներդ գիտեք։ «Դուք ինքնին գիտէք զայն ամենայն չարիս...» (Ագաթ., էջ 126)՝ Դուք էլ, դուք ինքներդ գիտեք այն բոլոր չարիքները։

Ինքն դերանունն անկախ կիրառությամբ ինքը ևս կարող է ընդունել սաստկական նշանակություն արտահայտող բառեր՝ իսկ, իսկույն։ «...Ինքն իսկ կարող էր առնել...» (Եղնիկ, II, Դ, էջ 82)՝ Հենց ինքը կարող էր անել։ «Ինքն իսկ իսկոյն» (Եղնիկ, II Ե, էջ 90)՝ Հենց ինքը։

§ 119. Իւր անձնական դերանունը չունի եզակի թվի ուղղական և հայցական հոլովները, գործածվում է ինքն դերանվան նշանակությամբ, օրինակ՝ «...Իւր անգէն քաղաք բնակութեան շինեաց» (Եղիշե, I)՝ Իրեն, իր համար այնտեղ բնակության քաղաք շինեց։ «...Սկսաւ առնել ասկաւ մի, խնամել զանձն իւրմէ զանօրէնութիւնս եւ զբամբասանս մեղաց՝ որ իւր չէր գործեալ» (Բուզ., IV, Դ, էջ 107)՝ Սկսեց մի քիչ առնել, իր մասին տանել մեղադրական բամբասանքներ ու անօրինություններ, որ ինքը չէր կատարել։

Այս դերանվան պակասող հոլովների փոխարեն գործածվում է ինքն դերանունը։ Սակայն Եղիշեի մոտ հանդիպում ենք եզակի հայցականում իւր դերանվան գործածությանը՝ «...Զայլսն ի նոցա

տեղիս փոխանակ առ իւր կոչեաց նոյին պատրաստութեամբ» (Եղիշե, I)՝ Եվ ուրիշներին նրանց տեղերը, նրանց փոխարեն իր մոտ կանչեց նույն պատրաստությամբ: Կոչել բայի մոտ առ նախդիրը կարող է դրվել հայցական և ոչ տրական հոլովի վրա: Այստեղ սպասելի էր առ ինքն, ինչպես հանդիպում ենք ուրիշ հեղինակների երկերում, օրինակ՝ «Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց զԱրշակ» (Բուզ., IV, ԺԶ, էջ 192)՝ Այն ժամանակ պարսից Շապուհ արքան իր մոտ կանչեց (տառացի՝ կանչում էր) Հայոց Արշակ թագավորին:

§ 120. Անձնական դերանունների իմաստով հաճախ գործածվում է անձն գոյական անունը (թեք հոլովներում): Ստորև բերում ենք օրինակներ: «... Զկեանս անձինն շահել...» (Եզնիկ, I, Դ, էջ 15)՝ Իր կյանքը փրկելու համար: «...Ի տագնապի զկառավարն և զանձինս կացուցանեն...» (Եզնիկ, I, Դ, էջ 13—14)՝ Կառավարողին և իրենց տագնապի մեջ են գցում: «...Անձամբ զանձն դարձոյց...» (Եզնիկ, I, ԺԴ, էջ 38)՝ Ինքն իրեն դարձրեց: «...Պարտ է նմա զամենայն կարողութիւն յանձին ունել» (Եզնիկ, IV, Թ, էջ 174)՝ Ամբողջ կարողությունը պետք է իր մեջ պարունակի: «...Եկա՛յք, զանձինս անձամբ մխիթարեսցուք» (Բուզ., III, ԻԱ, էջ 84)՝ Եկե՛ք մենք մեզ մխիթարենք: «... Յանձն իւր տարաբերէր» (Եղիշե, I)՝ Ինքն իր մեջ տարուբերվում էր, տատանվում էր:

## ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 121. Գրաբարի փոխադարձ դերանուններն են՝ միմեանց և իրերաց, որոնք եզակի թիվ չունեն, ինչպես նաև չունեն հոգնակի թվի ուղղական հոլով: Հոլովվում են անվանական հոլովմամբ, Ա հոլովիչով:

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | — | — |
| Ս. | միմեանց | իրերաց |
| Տ. | միմեանց | իրերաց |
| Հ. | զմիմեանս | զիրեարս |
| Բ. | ի միմեանց | յիրերաց |
| Գ. | միմեամբք | իրերաւք (օք) |



## ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 122. Գրաբարի ցուցական դերանուններն են՝ սա, դա, նա, այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն, որոնց մեջ առկա են ս, դ, ն արմատական բաղաձայնները: Այդ արմատական բաղաձայնները[1] առանձին հանդես են գալիս որպես հոդեր:

Դրանցից յուրաքանչյուրը կազմում է 3 դերանուն՝ ս—սա, այս, սոյն, դ—դա, այդ, դոյն, ն—նա, այն, նոյն:

§ 123. Սա, դա, նա

### Եզակի թիվ

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | սա | դա | նա |
| Ս. | սորա | դորա | նորա |
| Տ. | սմա | դմա | նմա |
| Հ. | զսա | զդա | զնա |
| Բ. | ի սմանէ | ի դմանէ | ի նմանէ |
| Գ. | սովաւ | դովաւ | նովաւ |

### Հոգնակի թիվ

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | սոքա | դոքա | նոքա |
| Ս. | սոցա | դոցա | նոցա |
| Տ. | սոցա | դոցա | նոցա |
| Հ. | զսոսա | զդոսա | զնոսա |
| Բ. | ի սոցանէ | ի դոցանէ | ի նոցանէ |
| Գ. | սոքաւք (օք) | դոքաւք (օք) | նոքաւք (օք) |

Այս դերանունների հոգնակի բացառականը հաճախ գործածվում է ն հոդով՝ ի սոցանէն, ի դոցանէն, ի նոցանէն:

### Այս, այդ, այն

§ 124. Այս, այդ, այն դերանունները հոլովվում են կրկնակի ձևերով, եզակի թվում կրկնակի ձևերը հանդես են գալիս թեք հոլովներում, իսկ հոգնակի թվում՝ բոլոր հոլովներում:

[1] Դրանք սկզբնապես հիմքի ձայնավորի հետ ունեցել են սո, դո, նո ձևերը:

### Եզակի թիվ

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | այս | այդ | այն |
| Ս. | այսր, այսորիկ | այդր, այդորիկ | այնր, այնորիկ |
| Տ. | այսմ, այսմիկ | այդմ, այդմիկ | այնմ, այնմիկ |
| Հ. | զայս | զայդ | զայն |
| Բ. | յայսմ, յայսմանէ | յայդմ, յայդմանէ | յայնմ, յայնմանէ |
| Գ. | այսու, այսուիկ | այդու, այդուիկ | այնու, այնուիկ |

### Հոգնակի թիվ

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | այսք, այսոքիկ | այդք, այդոքիկ | այնք, այնոքիկ |
| Ս. | այսց, այսոցիկ | այդց, այդոցիկ | այնց, այնոցիկ |
| Տ. | այսց, այսոցիկ | այդց, այդոցիկ | այնց, այնոցիկ |
| Հ. | զայս, զայսոսիկ | զայդ, զայդոսիկ | զայնս, զայնոսիկ |
| Բ. | յայսց, յայսցանէ կամ յայսոցիկ | յայդց, յայդցանէ կամ յայդոցիկ | յայնց, յայնցանէ կամ յայնոցիկ |
| Գ. | այսոքիւք (այսոքիմբք) | այդոքիւք (այդոքիմբք) | այնոքիւք (այնոքիմբք) |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս և այդ դերանունները հոգնակի հայցականում առաջին ձևերում սովորաբար ս մասնիկը չեն ունենում և հանդես են գալիս եզակի ձևով՝ զայս, զայդ, իսկ զայնս սովորական է։

Հոգնակի գործիականում այսոՔիւՔ, այդոՔիւՔ, այնոՔիւՔ ձևերը ընդհանուր են թե՛ կարճ և թե՛ երկար ձևերի համար։

## § 125. Սոյն, դոյն, նոյն

### Եզակի թիվ

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | սոյն | դոյն | նոյն |
| Ս. | սորին (սորուն) | դորին | նորին, նորուն |
| Տ. | սմին | դմին | նմին |
| Հ. | զսոյն | զդոյն | զնոյն |
| Բ. | ի սմին | ի դմին | ի նմին |
| Գ. | սովին, սովիմբ | դովին, դովիմբ | նովին, նովիմբ |



### Հոգնակի թիվ

| | | | |
|---|---|---|---|
| Ուղղ. | սոքին, սոյնք | դոքին, դոյնք | նոքին, նոյնք |
| Ս. | սոցին, սոցուն, սոցունց | դոցին, դոցուն, դոցունց | նոցին, նոցուն, նոցունց |
| Տ. | սոցին, սոցուն, սոցունց | դոցին, դոցուն, դոցունց | նոցին, նոցուն, նոցունց |
| Հ. | զսոսին, զսոյնս | զդոսին, զդոյնս | զնոսին, զնոյնս |
| Բ. | ի սոցունց | ի դոցունց | ի նոցունց |
| Գ. | սոքիմբք, սովիմբք (սոքումբք) | դոքիմբք, դովիմբք (դոքումբք) | նոքիմբք, նովիմբք, նոքումբք |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Փակագծերում նշված ձևերը, որոնք վերաբերում են սոյն և դոյն դերանուններին, տարածված չեն (եզակի սեռականում՝ սորուն, հոգնակի գործիականում՝ սոքումբք, դոքումբք), մինչդեռ նոյն դերանվան համապատասխան ձևերը՝ նորուն, նոՔումբՔ սովորական են։

Որոշ ձևեր էլ համեմատաբար ուշ շրջանի են կամ քիչ գործածական՝ սոցուն, սոցունց, դոցուն, դոցունց, սովիմբ, դովիմբ, սովիմբք, դովիմբք։

## ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 126. *Ցուցական դերանուններից գոյական անունների հետ գործածվում են* այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն *դերանունները, իսկ* սա, դա, նա *դերանունները անկախ են և գոյական անունների հետ չեն գործածվում։*

§ 127. Այս, այդ, այն *դերանունները գոյական անունների հետ գործածվում են թե՛ նախադաս, թե՛ հետադաս և յուրաքանչյուր դեպքում հանդես են գալիս տարբեր ձևերով։*

§ 128. *Նախադաս գործածվելիս* այս, այդ, այն *ցուցական դերանունները հոլովվում են առաջին ձևով։ Այս դեպքում նախադիրները դրվում են դերանունների վրա։ Հոգնակի ուղղական, հայցական և մասամբ էլ գործիական հոլովներում դերանունները մնում են եզակի։*

### Հոլովման օրինակ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | այս տուն | այս տունք |
| Ս. | այսր տան | այսց տանց |
| Տ. | այսմ տան | այսց տանց |
| Հ. | զայս տուն | զայս տունս |
| Բ. | յայսմ տանէ | յայսց տանց |
| Գ. | այսու տամբ | այսու տամբք կամ այսուքիւք տամբք |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հոգնակի թվում նախադաս գործածությամբ հանդիպում են նաև այս դերանունների երկրորդ ձևերը՝ **այսոքիկ տունք, այսոցիկ տանց, այսոցիկ տանց, զայսոսիկ տունս, յայսոցիկ տանց**, որոնք, սակայն, այսպիսի գործածությամբ շատ տարածված չեն։

Դերանունների ետադաս գործածության դեպքում երևան են գալիս հետևյալ առանձնահատկությունները՝ ա) գոյական անունն ընդունում է համապատասխան ցուցական հոդ ըստ դերանունների՝ **այս—ս, այդ—դ, այն—ն**. բ) դերանունները հոլովվում են երկրորդ ձևով. գ) նախդիրները կրկնվում են։

### Հոլովման օրինակ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | տունս այս | տունքս այսոքիկ |
| Ս. | տանս այսորիկ | տանցս այսոցիկ |
| Տ. | տանս այսմիկ | տանցս այսոցիկ |
| Հ. | զտունս զայս | զտունս զայսոսիկ |
| Բ. | ի տանէս յայսմանէ | ի տանցս յայսցանէ |
| Գ. | տամբս այսուիկ | տամբքս այսոքիւք |

Այս ձևով էլ հոլովվում են այդ և այն դերանունները, իսկ գոյական անունը ընդունում է նրանց համապատասխանող հոդերը, օրինակ՝ **տունդ այդ, տանդ այդորիկ, տանդ այդմիկ, զտունդ զայդ, ի տանէդ յայդմանէ, տամբդ այդուիկ. տունքդ այդոքիկ, տանցդ այդոցիկ, տանցդ այդոցիկ, զտունսդ զայդոսիկ, ի տանցդ յայդցանէ, տամբքդ այդոքիւք** կամ՝ **տունն այն, տանն այնորիկ, տանն այնմիկ, զտունն զայն, ի տանէն յայնմանէ, տամբն այնուիկ. տունքն այնոքիկ, տանցն այնոցիկ, տանցն այնոցիկ, զտունսն զայնոսիկ, ի տանցն յայնցանէ, տամբքն այնոքիւք**։



Ինչպես տեսնում ենք, ետադաս գործածությամբ դերանունները բոլոր հոլովներում թվով համաձայնում են գոյականին, սակայն տեղ-տեղ, հատկապես ուղղականում, կան անհամաձայնության դեպքեր. այդ կարելի է տեսնել հետևյալ օրինակներում՝ **իրք այդ** (*Ագաթ., էջ 28, Բուզ., IV, Ի, էջ 208*), *փոխ.* **իրքդ այդոքիկ**; **բանքս այս** (*Ագաթ., էջ 71*), *փոխ.* **բանքս այսոքիկ**։

Այս, այդ, այն ցուցական դերանունների ետադաս գործածության դեպքում, բացի զ և ի նախդիրներից, ըստ գործածության կարող են կրկնվել նաև մյուս նախդիրները, ինչպես՝ **ընդ ժամանակն ընդ այնոսիկ** (*Ագաթ., էջ 78*), **ընդ բանսն ընդ այնոսիկ** (*Բուզ., IV, Ի, էջ 207*). այս օրինակներում կրկնված է ընդ նախդիրը։ Այս տեսակետից բացառություն է կազմում առ նախդիրը, որը նման դեպքերում չի կրկնվում։

Ինչպես նշվեց, որպես կանոն, գոյական անունները համապատասխան ցուցական հոդ են ստանում, երբ այս, այդ, այն դերանունները նրանց հետ ետադաս են գործածվում, սակայն առանձին կապակցությունների մեջ գոյականի վրա ցուցական հոդեր են հանդիպում նաև հիշյալ դերանունների նախադաս գործածության դեպքում, օրինակ՝ **այդր եղանիդ** (*Ագաթ., էջ 400*), **այս Երանելոյս** (*Բուզ., III, Ժ, էջ 36*), **այս անդիքս** (*Բուզ., III, ԺԴ, էջ 57*), **այսր բանիս** (*Բուզ., IV, Ժ, էջ 160*), **յայսմ ժամուս** (*Բուզ., V, Գ, էջ 294*), **յայսմ ժամանակիս** (*ն. տ.*)։ Սրանք, իհարկե, մասնակի դեպքեր են և որոշակի կանոնի չեն վերածվում։

§ 129. Գոյական անունների հետ այս, այդ, այն ցուցական դերանունների փոխարեն հաճախ գործածվում են **աստ, անդ, այսր, այդր, անդր, աստի, այտի** կամ **այդի, անտի** բառերը, որոնք անկախ գործածությամբ մակբայ են համարվում, սակայն նման դեպքերում նշանակությամբ փոխարինում են ցուցական դերանուններին ու ցուցական հոդերին։

Սրանցից **աստ, անդ** բառերը գործածվում են այն դեպքում, երբ արտահայտվում է դադարման գաղափար, օրինակ՝ **գտանէր ի քաղաքի անդ, կայր ի տան անդ**, *փոխ.* **գտանէր ի քաղաքին յայնմիկ**=գտնվում էր այն քաղաքում, **կայր ի տանն յայնմիկ**=գտնվում էր այն տանը, այն տանն էր։ Գտնում ենք նաև համատեղ գործածության օրինակ՝ **ի ժամանակի անդ յայնմիկ** (*Բուզ., IV, ԻԵ, էջ 223*)։

**Այսր, այդր, անդր** բառերը գործածվում են տեղափոխության ցույց տալու դեպքում (ուղղության հայցականի հետ), օրինակ՝ **գնաց ի գիւղ անդր**, *փոխ.* **գնաց ի գիւղն յայն**=գնաց այն գյուղը. **եկն ի քաղաք այսր**, *փոխ.* **եկն ի քաղաքս յայս**=եկավ այս

քաղաքը. Ե՛րբ ի հրապարակ այդր. փոխ. Ե՛րբ ի հրապարակդ յայդ=գնա՛ այդ հրապարակը։

Աստի, այտի (այդի), անտի բառերը դրվում են շարժման ելակետը հանդիսացող տարածության անվան վրա (բացառական հոլովի հետ)։ Այս կիրառությունը շատ սովորական ու տարածված երևույթ է մեր մատենագիրների երկերում։ Օրինակներ. «ի մերոց զօրաց աստի» (Եղիշ., էջ 26), փոխ. ի մերոց զօրացս յայսցանէ=մեր այս զորքերից. «ի յունականաց այտի» (Ն. տ.), փոխ. ի յունականացդ յայդցանէ=այդ հունականներից (հունական այդ գրքերից). «ի գաղտնութենէ անտի» (Եզնիկ, I, ԺՆ, էջ 45), փոխ. ի գաղտնութենէն յայնմանէ=այն գաղտնությունից. «ի ծառոյ անտի» (Եզնիկ, II, Գ, էջ 84), փոխ. ի ծառոյն յայնմանէ=այն ծառից. «յայգւոյ աստի» (Բուզ., IV, Ը, էջ 151), փոխ. յայգւոյս յայսմանէ=այս այգուց. «ի ձեռաց այտի» (Բուզ., VI, Բ, էջ 399), փոխ. ի ձեռացդ յայդմանէ=այդ ձեռքից։

§ 130. Սոյն, դոյն, նոյն դերանունները գոյական անունների հետ գործածվելիս դրվում են գոյական անուններից առաջ և սովորաբար թվով ու հոլովով համաձայնում են։ Հոգնակի ուղղական և հայցական հոլովներում սոյնք, դոյնք, զսոյնս, զդոյնս, նոյնք և զնոյնս ձևերը գոյականի հետ չեն գործածվում, դրանք մնում են եզակի, իսկ մյուս ձևերը՝ սոքին, դոքին, նոքին, զսոսին, զդոսին, զնոսին գործածվում են։

Հոգնակի գործիականում դերանունը մնում է եզակի, թվով չի համաձայնում։

Հոլովման օրինակ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | նոյն գործ | նոյն կամ նոքին գործք |
| Ս. | նորին գործոյ | նոցին գործոց |
| Տ. | նմին գործոյ | նոցին գործոց |
| Հ. | զնոյն գործ | զնոյն կամ զնոսին գործս |
| Բ. | ի նմին գործոյ | ի նոցունց գործոց |
| Գ. | նովին գործով | նովին գործովք |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Որոշ բնագրերում հոգնակի գործիականում գոյական անվան հետ գտնում են նաև դերանվան հոգնակի ձևը (օրինակ, Զաքարյանի մաս., էջ 48), սակայն փաստերը ցույց են տալիս, որ դասական մատենագիրները այդ դեպքում դերանունը սովորաբար եզակի թվով են գոր-



ծածում, օրինակ՝ նովին կերակրովք (Եզնիկ, II, ԺԱ, էջ 101), նովին հնարովք (Եզնիկ, II, ԺԷ, էջ 117), սովին մտօք (Եզնիկ, I, ԺԲ, էջ 106), սովին բանիւք (Բուզ., IV, ԺԸ, էջ 128)։

## ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 131. Գրաբարի ստացական դերանուններն են՝ իմ, քո (կամ քոյ), իւր, մեր, ձեր։ Ինչպես առաջին իսկ հայացքից կարելի է նկատել, դրանք ծագում են անձնական դերանուններից։ Ծագած լինելով այդ դերանունների սեռական հոլովաձևերից՝ ստացական դերանունները հանդես են գալիս որպես սկզբնաձևեր և հոլովվում են անձնական դերանուններից տարբեր հոլովմամբ։ Դրանք հոլովվում են անվանական հոլովմամբ՝ Ո հոլովիչով։ Եզակի տրականում ունենում են ում հոլովակերտ մասնիկը, իսկ եզակի բացառականում ստանում են է հոլովակերտ մասնիկը։ Քո դերանունը հոլովվում է երկու հիմքով՝ քո և քոյ։ Վերջինս եզակի բացառականում հանդես է գալիս նաև առանց է հոլովակերտ մասնիկի։

Եզակի թ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ուղղ. | իմ | քո, քոյ | իւր | մեր | ձեր |
| Ս. | իմոյ | քոյ, քոյոյ | իւրոյ | մերոյ | ձերոյ |
| Տ. | իմում | քում, քոյում (քոյոյ) | իւրում | մերում | ձերում |
| Հ. | զիմ | զքո, զքոյ | զիւր | զմեր | զձեր |
| Բ. | յիմմէ | ի քումմէ[1], ի քոյոյ | յիւրմէ | ի մերմէ | ի ձերմէ |
| Գ. | իմով | քով, քոյով | իւրով | մերով | ձերով |

Հոգնակի թ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ուղղ. | իմք | քոյք | իւրք | մերք | ձերք |
| Ս. | իմոց | քոց, քոյոց | իւրոց | մերոց | ձերոց |
| Տ. | իմոց | քոց, քոյոց | իւրոց | մերոց | ձերոց |
| Հ. | զիմս | զքոյս | զիւրս | զմերս | զձերս |
| Բ. | յիմոց | ի քոց, ի քոյոց | յիւրոց | ի մերոց | ի ձերոց |
| Գ. | իմովք | քովք, քոյովք | իւրովք | մերովք | ձերովք |

§ 132. Մեր, ձեր, իւր ստացական դերանուններից կազմվում են նաև ածականական ձևեր՝ մերային, ձերային, իւրային, որոնք

[1] Յիմմէ ձևի նմանողությամբ գործածվում է նաև ի քումմէ ձևը, որտեղ մ հնչյունի կրկնությունը բառաձևի կազմությունից չի բխում (տր. քում, բաց. ի քումէ)։

հոլովվում են Ո պարզ հոլովմամբ՝ մերայնոյ, ձերայնոյ, իւրայնոյ...:

Թեք հոլովաձևերում սրանք հանդես են գալիս նաև առանց Ն-ի՝ մերայոյ, ձերայոյ, իւրայոյ և այլն։

Կան նաև իմոյին, մերոյին, ձերոյին, իւրոյին, քոյին ձևերը, որոնք հազվադեպ են և չեն հոլովվում (մեսրոպյան շրջանից ավանդված է միայն քոյին)։

§ 133. Ստացական դերանունների իմաստով երբեմն գործածվում են նաև սա, դա, նա դերանունների սեռական հոլովաձևերից բխող սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա ձևերը, որոնք նույնպես Ո հոլովիչով են հոլովվում, եզակի տրականում ստանալով ում մասնիկը։ Հոլովվելիս սրանք ա ձայնավորից հետո ստանում են նաև յ հնչյունը՝ նորայոյ, նորայում և այլն։

Նկատելի է, որ կիրառության մեջ այս բառաձևերում ավելի երևում է փոխանունության գաղափարը, սակայն, ինչպես նշվեց, երբեմն սրանք գործածվում են նաև ստացական նշանակությամբ։

## ՍՏԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 134. Իմ, քո (քոյ), իւր, մեր, ձեր ստացական դերանունները գոյական անունների հետ գործածվելիս հոլովվում են և թվով ու հոլովով համաձայնում, բացի հոգնակի ուղղական և հայցական (մասամբ էլ գործիական) հոլովներից, որոնց դերանունը մնում է եզակի։ Այս դերանունները գոյական անունների հետ և՛ նախադաս, և՛ ետադաս գործածություն ունեն։

Հոլովման օրինակ

Նախադաս

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | իմ քոյր | իմ քորք |
| Ս. | իմոյ քեռ | իմոց քերց |
| Տ. | իմում քեռ | իմոց քերց |
| Հ. | զիմ քոյր | զիմ քորս |
| Բ. | յիմմէ քեռէ | յիմոց քերց |
| Գ. | իմով քերբ | իմովք քերբք |



Ետադաս

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | քոյր իմ | քորք իմ |
| Ս. | քեռ իմոյ | քերց իմոց |
| Տ. | քեռ իմում | քերց իմոց |
| Հ. | զքոյր իմ | զքորս իմ |
| Բ. | ի քեռէ իմմէ | ի քերց իմոց |
| Գ. | քերբ իմով | քերբք իմովք |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Մատենագիրների երկերում կան օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ գոյական անվան հետ հոգնակի գործիականում ստացական դերանունները դրվում են նաև եզակի թվով, օրինակ՝ քոյով կամօք (Ագաթ., էջ 53), իւրով անձնիշխան կամօք (Ագաթ., էջ 138), իւրով կամօք (Եղնիկ, I, Թ, էջ 26)։ Սովորականը և տարածվածը հոգնակին է՝ քոյովք սիրելեօք (Ագաթ., էջ 97), քոյովք ականջօք (Ագաթ., էջ 101), իւրովք ընկերօքն (Ագաթ., էջ 112), իւրովք կամօք (Ագաթ., էջ 138), իւրովք պատուիրանօք (Եղնիկ, I, ԺԴ, էջ 41) և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Քո ստացական դերանունը նախադաս գործածվելիս սովորաբար հոլովվում է քոյ հիմքով՝ քոյ տան, քոյոյ տան, քոյում տան և այլն, իսկ ետադաս գործածվելիս՝ քո հիմքով՝ տան քո, տան քոյ, տան քում և այլն։ Լինում են և շեղումներ, օրինակ՝ քովք կամօք (Բուզ., IV, ԾԴ, էջ 253), փոխ. քոյովք կամօք։

## ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆ

§ 135. Գրաբարում որպես հարաբերական դերանուն հանդես է գալիս որ դերանունը։ Հարաբերական դերանվան գործածություն ունի նաև ո դերանունը, որը, սակայն, հիմնականում հարցական դերանուն է (հարցականով՝ ո՞)։

§ 136. Որ հարաբերական դերանունը հոլովվում է Ո հոլովիչով՝ եզակի տրականում ստանալով ում, իսկ բացառականում՝ մէ հոլովակերտ մասնիկները։

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | որ | որք |
| Ս. | որոյ | որոց |
| Տ. | որում | որոց |
| Հ. | զոր | զորս |
| Բ. | յորմէ | յորոց |
| Գ. | որով | որովք |

## ՀԱՐՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 137. *Գրաբարի հարցական դերանուններն են՝* ո՞, ո՞վ, զի՞, զի՞նչ:

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. |
|---|---|---|---|
| Ուղղ. | ո՞, ո՞վ | ո՞յք | զի՞, զի՞նչ |
| Ս. | ո՞յր | ո՞յց | է՞ր |
| Տ. | ո՞ւմ | ո՞յց | ի՞մ, հի՞մ, էրո՞ւմ |
| Հ. | զո՞, զո՞վ | զո՞յս | զի՞, զի՞նչ |
| Բ. | յումէ՞ | յո՞յց | յիմէ՞, առ իմէ՞, զմէ՞ |
| Գ. | (որո՞վ) | (որո՞վք) | ի՞ւ |

§ 138. Ո՞ և ո՞վ *դերանունները չունեն գործիական հոլով, այդ հոլովի համար գործածվում են* ո՞ր *դերանվան համապատասխան ձևերը:*

§ 139. Զի՞, զի՞նչ *հարցական դերանունները հոգնակի թիվ չունեն: Դրանք բացառական հոլովում հանդես են գալիս նաև այլ նախդիրների հետ (առ, զ):*

*Այս դերանունների առանձին հոլովաձևերը՝* զի՞, զի՞նչ, է՞ր, հի՞մ, էրո՞ւմ, առ իմէ՞, զմէ՞ *իմաստով համազոր են* ընդէ՞ր *(=ընդ+է՞ր),* վասն է՞ր, է՞ր աղագաւ, զիա՞րդ *(=զի՞+արդ) հարցական բառերին ու արտահայտություններին, որոնք նշանակում են* ի՞նչ, ինչո՞ւ, ինչի՞ց, ինչպե՞ս, ի՞նչ պատճառով:

§ 140. *Որպես հարցական դերանուն հանդես է գալիս նաև ո՞ր հարաբերական դերանունը՝ հարցականանալով: Այս դեպքում սովորաբար գործածվում է գոյական անվան հետ (նախադաս), հոլովվում է և թվով ու հոլովով համաձայնում, միայն հոգնակի ուղղական և հայցական հոլովներում մնում է եզակի, օրինակ՝*

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | ո՞ր քաղաք | ո՞ր քաղաքք |
| Ս. | որո՞յ քաղաքի | որո՞ց քաղաքաց |
| Տ. | որո՞ւմ քաղաքի | որո՞ց քաղաքաց |
| Հ. | զո՞ր քաղաք | զո՞ր քաղաքս |
| Բ. | յորմէ՞ քաղաքէ | յորո՞ց քաղաքաց |
| Գ. | որո՞վ քաղաքաւ | որո՞վք քաղաքաւք (օք) |

§ 141. *Հարցական դերանուն է համարվում նաև* Քանի՞ *բառը, որը հոլովվում է* Ո—Ա *խառն հոլովմամբ:*



| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| Ուղղ. | քանի՞ | քանի՞ք |
| Ս. | քանւո՞յ կամ քանո՞յ | քանեա՞ց |
| Տ. | քանւո՞յ կամ քանո՞յ | քանեա՞ց |
| Հ. | զքանի՞ | զքանի՞ս |
| Բ. | ի քանւո՞յ կամ ի քանո՞յ | ի քանեա՞ց |
| Գ. | քանեա՞ւ կամ քանո՞վ | քանեա՞ւք (քանեօ՞ք) |

## ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 142. *Գրաբարի անորոշ դերանուններն են՝* ոմն, ոք, իմն, ինչ, այլ, միւս *(մեւս): Սրանցից* ոմն, ոք *դերանունները սովորաբար գործածվում են անձի, իսկ* իմն, ինչ՝ *իրի համար:*

§ 143. *Ինչպես կարելի է տեսնել ստորև, այս դերանունները հոլովվում են անվանական (այլ, միւս), դերանվանական (իմն, ինչ) և դերանվանական-անվանական հոլովմամբ (մի մասով յուրահատուկ, մի մասով էլ գոյականների հոլովմամբ՝ ոմն, ոք):*

§ 144. Ոմն, ոք

| | Եզակի թ. | | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| Ուղղ. | ոմն | ոք | ոմանք |
| Ս. | ուրումն | ուրուք | ոմանց |
| Տ. | ումեմն | ումեք | ոմանց |
| Հ. | զոմն | զոք | զոմանս |
| Բ. | յումեմնէ | յումեքէ | յոմանց |
| Գ. | ոմամբ | (ոմամբ) | ոմամբք |

Ոմն, ոք *դերանունները հոգնակի թվում հոլովվում են նույն ձևով: Եզակի գործիականում* ոք *դերանունը հատուկ ձև չունի, այդ հոլովում նրան փոխարինում է* ոմն *դերանունը՝* ոմամբ:

§ 145. Իմն, ինչ

| | Եզակի թ. |
|---|---|
| Ուղղ. | իմն, ինչ |
| Ս. | իրիք |
| Տ. | իմիք |
| Հ. | զիմն, զինչ |
| Բ. | յիմեմնէ, յիմեքէ |
| Գ. | — իւիք[1] |

[1] Ենթադրվում է, որ Ք-ով ձևերը գործածությունից դուրս ընկած իք դերանվան ձևերն են, որոնցով լրացվում են իմն, ինչ դերանունների պակասող ձևերը: Տե՛ս Հ. Աճառյան, «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների», հատ. II, Երևան, 1954 թ., էջ 409—410:

Իմն, ինչ դերանունները հոգնակի թիվ չունեն։ Ինչ՛ բառը պետք է համարել ոչ թե դերանուն, այլ գոյական անուն՝ գոյություն ունեցող բան, ունեցվածք նշանակությամբ. հոլովվում է ի հոլովիչով՝ ինչ՛, ընչից, ընչից, զինչս, յընչից, ընչիւք։

Իմն, ինչ դերանունները գրաբարում հանդես են գալիս նաև որպես թարմատար՝ դրվելով անունների գործիական հոլովի, մակբայների և անհատական գործողության ձևը ցույց տվող բառերի (նախադ. մեջ ձևի պարագա), ինչպես նաև բայերի վրա, արտահայտում են ձև, կերպ, անորոշ իմաստները, այլև ցույց են տալիս տարատեսակության գաղափար։ Օրինակներ. «. . . Նորա ննջեցելութեամբ ինչ կոյս եւս մնացին» (Բուզ., IV, ԾԴ, էջ 250)՝ նրանք ննջեցությամբ նրան նրանում ավելացին. «Ապա թէ ի վերայ հայ հօգոյն խիստ ինչ բարբառեսցի...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)՝ իսկ եթե հայկական հողի վրա խիստ ձևով խոսի. «Եւ ոչ ի տասնեակաց իմոց երկեան ինչ նորա» (Ագաթ., էջ 87)՝ նա ոչ էլ իմ տասնյակների սատարումներից վախեցավ նրանից. «Ցետ մահուանն Սանատրկոյ արքայի չփոթի իմն թագաւորութիւնն» (Խոր., II, ԼԷ, էջ 161)՝ Սանատրուկ արքայի մահից հետո թագավորությունը (ինչ որ ձևով) շփոթվում էր. «Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան ժերութեանն» (Եղիշե, I)՝ Այս ձևով (այսպիսով) եկել-հասել է նրա ծերության վախճանը։

§ 146. Այլ և միւս դերանունները հոլովվում են ո հոլովիչով, առանձնացվող եզակի տրականում ում, իսկ բացառականում է հոլովակերտ մասնիկները։

| Եզակի թ. | | Հոգնակի թ. | Եզակի թ. |
|---|---|---|---|
| Ուղղ. | այլ | այլք | միւս |
| Ս. | այլոյ | այլոց | միւսոյ |
| Տ. | այլում | այլոց | միւսում |
| Հ. | զայլ | զայլս | զմիւս |
| Բ. | յայլմէ | յայլոց | ի միւսմէ |
| Գ. | այլով | այլովք | միւսով |

Միւս դերանվան հոգնակին տարածված չէ։

§ 147. Այլ դերանունը հաճախ հանդես է գալիս ումն, ոք, իմն, ինչ դերանունների հետ, ստանալով անորոշ նշանակությամբ՝ այլ ոք, այլ ումն, այլ ինչ, այլ իմն։ Սրանք միասին վերցված հոլովվում են զուգահեռաբար, այսպես՝ այլ ումն, այլոյ ուրումն, այլում ումեմն.... այլ ոք, այլոյ ուրուք, այլում ումեք... այլք ոմանք, այլս ոմանս...., այլ ինչ, այլոյ իրիք, այլում իմիք...։



§ 148. Իմն և ինչ դերանունները հանդիպում են նաև կրկնված ձևով՝ իմն իմն, ինչ՛ ինչ, իրիք իրիք, իմիք իմիք...։

§ 149. Ո՞վ, ինչ անորոշ դերանունները շատ հաճախ հարցական դերանունների հարադրությամբ են գործածվում՝ ո՞ ոք, զի՞նչ ինչ և հոլովվում են այսպես՝

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. |
|---|---|---|---|
| Ուղղ. | ո՞ ոք | ո՞յք ոմանք | զի՞նչ ինչ |
| Ս. | ո՞յր ուրուք | ո՞յց ոմանց | է՞ր իրիք |
| Տ. | ո՞ւմ ումեք | ո՞յց ոմանց | ի՞մ իմիք |
| Հ. | զո՞ ոք | զո՞յս ոմանս | զի՞նչ ինչ |
| Բ. | յումէ՞ ումեքէ | յո՞յց ոմանց | առ իմէ՞ իմիքէ |
| Գ. | որո՞վ ումամբ | որո՞վք ոմամբք | ի՞ւ իւիք |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Զի՞նչ ինչ հարադրությունը հոգնակի թիվ չունի, նման դեպքերում զի՞նչ հարցական դերանունը գործածվում է իր գոյական անվան հոգնակի թվի հետ՝ զի՞նչ իրք։

## ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

§ 150. Ումն, ոք անորոշ դերանունները դրվում են անձի անվան հետ (սովորաբար հետադաս) և թվով ու հոլովով համաձայնում են։

| | Եզակի թ. | | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| Ուղղ. | այր ումն | այր ոք | արք ոմանք |
| Ս. | առն ուրումն | առն ուրուք | արանց ոմանց |
| Տ. | առն ումեմն | առն ումեք | արանց ոմանց |
| Հ. | զայր ումն | զայր ոք | զարս ոմանս |
| Բ. | յառնէ ումեմնէ | յառնէ ումեքէ | յարանց ոմանց |
| Գ. | արամբ ումամբ | արամբ ումամբ | արամբք ոմամբք |

§ 151. Իմն, ինչ դերանունները դրվում են իրի անվան հետ, նույնպես հետադաս, օրինակ՝

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| Ուղղ. ծառ ինչ (=ինչ որ ծառ) | ծառք ինչ |
| Ս. ծառոյ իրիք | ծառոց ինչ |
| Տ. ծառոյ իմիք | ծառոց ինչ |
| Հ. զծառ ինչ | զծառս ինչ |
| Բ. ի ծառոյ իմեքէ | ի ծառոց ինչ |
| Գ. ծառով իւիք | ծառովք ինչ |

*Ինչպես տեսնում ենք, հոգնակի թվում* ինչ *դերանունը անփոփոխ է մնում։*

Ինչ *դերանունը սակավ դեպքերում ենք գտնում գոյականների հետ նախադաս գործածված՝* ինչ զօրութիւն ծածուկ *(Եզնիկ, Ա, Բ, էջ 9)՝ ինչ որ գաղտնի զորություն (ուժ),* ինչ չար զօրութիւն *(Եզնիկ, Ա, Դ, էջ 15)՝ ինչ որ (մի) չար ուժ։ Սովորականը հետադաս գործածությունն է։*

§ 152. Այլ, միւս *դերանունները գոյական անունների հետ հանդես են գալիս նախադաս գործածությամբ և թվով ու հոլովով համաձայնում են։* Այլ *դերանունը հոգնակի ուղղական և հայցական հոլովներում մնում է եզակի, իսկ միւս դերանունը հոգնակի թվում սովորաբար գոյական անվան հետ չի հոլովվում։*

Եզակի թ.

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | այլ բան (=ուրիշ խոսք) | միւս օր |
| Ս. | այլոյ բանի | միւսոյ աւուր |
| Տ. | այլում բանի | միւսում աւուր |
| Հ. | զայլ բան | զմիւս օր |
| Բ. | յայլմէ բանէ | ի միւսմէ օրէ |
| Գ. | այլով բանիւ | միւսով աւուրբ |

Հոգնակի թ.

| | |
|---|---|
| Ուղղ. | այլ բանք |
| Ս. | այլոց բանից |
| Տ. | այլոց բանից |
| Հ. | զայլ բանս |
| Բ. | յայլոց բանից |
| Գ. | այլովք բանիւք |

*Սրանց նախադաս գործածությունը շատ տարածված երևույթ է գրաբարում, սակայն բացարձակ կանոն չէ, տեղ-տեղ հանդի-*



*պում են ետադաս գործածության դեպքեր, օրինակ՝* զաւակ այլ *(Ծննդ., Դ, 25),* հոգի այլ *(Թիւք, ԺԴ, 24),* տան այլոյ *(Յոբ., ԼԱ, 9),* ազգի այլում *(Դան., Բ, 44),* ամին միւսոյ *(Ա. Մակ., Դ, 28)։ Նախադաս գործածությամբ էլ կան չհոլովված սակավ օրինակներ՝* այլ երեցովքն *(Ծննդ., ԽԱ, 3), փոխ.* այլովք երեցովք, ի միւս կողմանէ *(Խորենացի), փոխ.* ի միւսմէ կողմանէ։

## ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 153. *Գրաբարի որոշյալ դերանուններն են՝* ամենեքին, ամենեքեան *(=ամենքը, բոլորը, ամենքն էլ, բոլորն էլ),* բոլորեքին, բոլորեքեան *(=բոլորը, բոլորն էլ),* ամենայն։

§ 154. Ամենեքին, ամենեքեան և բոլորեքին, բոլորեքեան *դերանունները հոլովվում են* ու *հոլովիչով, միայն հոգնակի թվով՝*

| | | |
|---|---|---|
| Ուղղ. | ամենեքին, ամենեքեան | բոլորեքին, բոլորեքեան |
| Ս. | ամենեցուն, ամենեցունց | բոլորեցուն, բոլորեցունց |
| Տ. | ամենեցուն, ամենեցունց | բոլորեցուն, բոլորեցունց |
| Հ. | զամենեսին, զամենեսեան | զբոլորեսին, զբոլորեսեան |
| Բ. | յամենեցունց | ի բոլորեցունց |
| Գ. | ամենեքումբք | բոլորեքումբք |

§ 155. Ամենայն *դերանունը հոլովվում է* Ի *հոլովիչով, սովորաբար միայն եզակի թվով։*

| | |
|---|---|
| Ուղղ. | ամենայն |
| Ս. | ամենայնի |
| Տ. | ամենայնի |
| Հ. | զամենայն |
| Բ. | յամենայնէ |
| Գ. | ամենայնիւ |

*Այս դերանունը գոյական անունների հետ գործածվելիս չի հոլովվում, իսկ անկախ գործածվելիս հոլովվում է։*

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.**— *Այս դերանունը* որևէ բան *իմաստով գործածվում է նաև որպես անորոշ դերանուն։*

## ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 156. Բառերի քերականական փոփոխման տեսակներից մեկն էլ խոնարհումն է։ Եթե հոլովումը հատուկ է անուններին, ապա խոնարհումը հատուկ է բայերին։ Հոլովման և խոնարհման համակարգերով ամբողջականանում է բառերի թեքման (հոլովում և խոնարհում) պատկերը։ Առանց այդ երկու համակարգերի չի կարելի պատկերացնել գրաբարի (և ոչ միայն գրաբարի) ձևաբանությունը։

Ինչպես նշեցինք, խոնարհումը հատուկ է բայերին. դրա հետ միասին բայերին հատուկ են նաև քերականական այլ կարգեր (կատեգորիաներ)։ Բայերի խոնարհումը ամբողջական ձևով և խորությամբ ըմբռնելու համար խիստ անհրաժեշտ է բայական մյուս կարգերի ուսումնասիրությունը։

§ 157. Բացի բայիմաստից, որն արտահայտում է գործողություն, եղելություն, գոյություն, բայն ունի նաև սեռ, եղանակ, խոնարհման ձև (մասամբ էլ կերպ), ժամանակ, թիվ, դեմք։

§ 158. Գրաբարում եւս նախադասության մեջ բայը հանդես է գալիս դիմավոր և դերբայական ձևերով։

§ 159. Դերբայները գրաբարում չորսն են՝ անորոշ, ենթակայական կամ ներկա, անցյալ և ապառնի։ Սրանց կազմության մասին խոսվում է ստորև։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գրաբարի քերականներից շատերը անորոշ դերբայը համարում են եղանակ (աներևույթ կամ անորոշական եղանակ), իսկ ներկա (ենթակայական), անցյալ և ապառնի դերբայները միավորում են մի անվան տակ՝ ընդունելություն: Ոմանք էլ դերբայ են համարում միայն անորոշ դերբայի հոլովված ձևերը, սակայն պահպանելով վերոհիշյալ բաժանումը։

§ 160. Բայական սեռեր ինչպես աշխարհաբարում, այնպես էլ գրաբարում որոշվում են բայի այն իմաստով, որը արտահայտում



է գործողության ելակետի և վախճանակետի փոխհարաբերությունը, ենթակայի և խնդրի (գործողության սուբյեկտի և օբյեկտի) փոխհարաբերությունը։

Ներգործական սեռի բայերն արտահայտում են ներգործում, երբ բայի ցույց տված գործողությամբ մի առարկա ներգործում, ազդում է մի այլ առարկայի վրա, օրինակ՝ «Հայր սիրէ զորդի» նախադասության մեջ ցույց է տրվում, որ հայրը ներգործում է որդու վրա, հայրը սիրում է որդուն. «Ես կոչեմ զքեզ» նախադասության մեջ էլ ցույց է տրվում, որ ես ներգործում եմ խոսակցի վրա, ես կանչում եմ իմ խոսակցին (ես կանչում եմ քեզ). ուրեմն, սիրել և կոչել (=կանչել) ներգործական սեռի բայեր են։ Ներգործական սեռի բայերի թիվը գրաբարում մեծ է. որպես նմուշ հիշատակում ենք մի քանիսը՝ գրել, գործել, կարդալ, պատմել, կազմել, տեսանել (=տեսնել), արկանել (=գցել, նետել)[1], զգալ, ածել (=լցնել, թափել, պատարկել), լուանալ, թողուլ (=թողնել), հեղուլ (=թափել), յեղուլ (=փոխել, թարգմանել), լեսուլ (=փշրել, մանրել, հղկել), կիզուլ (=այրել) և այլն։

Եթե ներգործական սեռի բայերը արտահայտում են գործողության անցում ենթակայից խնդրի վրա, գործողության կրում խնդրի կողմից, ապա կրավորական սեռի բայերը արտահայտում են գործողության կրում ենթակայի կողմից. այստեղ գործողությունն անցնում է խնդրից ենթակայի վրա, գործողությունը կրում է ենթական։ Այսպիսով, այս դեպքում իրականում գործողությունը կատարում է ոչ թե ենթական, այլ մի այլ առարկա, որը նախադասության մեջ ընդունված է կոչել ներգործող խնդիր։ Վերը բերված նախադասությունները մենք կարող ենք արտահայտել նաև մի այլ ձևով՝ «Որդի սիրի ի հօրէ», «Դու կոչիս յինէն», որոնց բուն էության հետ սիրելու և իմ կանչելու պատկերը չի փոխվում, սակայն նախադասությունները փոփոխության են կրում քերականական տեսակետից՝ «Որդին սիրվում է հորից», «Դու կանչվում ես իմ կողմից»։ Ներգործական կառուցվածքի նախադասությունները դառնում են կրավորական կառուցվածքի նախադասություններ. նախորդ օրինակների ուղիղ խնդիրները (զորդի, զքեզ) այստեղ դառնում են ենթակա (որդի, դու), իսկ ենթակաները (հայր, ես)՝ ներգործող խնդիր (ի հօրէ, յինէն), և բայերը, որոնք ստորոգյալի

[1] Քերականական համապատասխան հասկացությունների ծանոթացնելու նպատակով բերվող օրինակների բառական իմաստներից փակագծերում նշում ենք աշխարհաբարյան ու հիմնականը։ Մյուսի ընդարձակ բացատրությունները տրվում են բառարանում։

պաշտոն են կատարում, ներգործական սեռից վերածվել են կրավորական սեռի՝ սիրի=սիրվում է, կոչիս=կանչվում ես։ Այստեղից էլ պարզ կերպով երևում է, որ կրավորական սեռի առանձին, յուրահատուկ բայեր չկան, դրանք առաջանում են ներգործական սեռի բայերից՝ ըստ կիրառության կրելով ձևական զանազան փոփոխություններ և որոշ դեպքերում էլ առանց ձևական փոփոխությունների, ինչպես կտեսնենք ստորև։

Չեզոք սեռի բայերը ներգործում կամ կրում չեն արտահայտում. նրանց ցույց տված գործողությունը կամ եղելությունը չի անցնում մի առարկայից մի այլ առարկայի վրա, օրինակ՝ գոչել, վազել, ճայթել, նստել, իջանել, մտանել, անցանել, ճառանել, խաղալ (=շարժվել, գնալ), խնդալ, գնալ, ընթանալ, զարմանալ, մերձենալ (=մոտենալ), բարկանալ, բազմել (բազմիմ), ճեմել (ճեմիմ՝ հանդարտ քայլել), երել (երևիմ՝ երևալ), անկանել (անկանիմ՝ ընկնել), շիջանել (շիջանիմ՝ հանգչել, մարել), զբօսնուլ (=զբոսնել, ուրախանալ), ջեռնուլ (=տաքանալ), ցասնուլ (=խիստ բարկանալ) և այլն։

Այս սեռերը կարելի է խմբավորել անցողական և անանցողական դասերի մեջ։ Անցողականի մեջ մտնում են ներգործական և պատճառական (տե՛ս § 284—292) բայերը, անանցողականի մեջ՝ կրավորական ու չեզոք բայերը։

Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք ընդհանուր ձևով արտահայտում են և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ։ Դրանք կոչվում են հասարակ (ընդհանուր) բայեր։ Իհարկե, այդ երկու սեռերը միաժամանակ չեն արտահայտվում, այլ միևնույն բայերը կարող են գործածվել մի դեպքում ներգործական, մի այլ դեպքում՝ կրավորական սեռի իմաստ՝ առանց ձևական փոփոխության, օրինակ՝ «Մայր ծնաւ զորդին» (=մայրը ծնեց որդուն) և «Որդի ծնաւ ի մօրէ» (=որդին ծնվեց մորից) նախադասությունների մեջ գործածված ծնանել (ծնանիմ) բայը արտաքին ձևով ընդհանուր է այդ նախադասությունների համար, սակայն առաջին նախադասության մեջ ներգործական սեռի է՝ ծնաւ=ծնեց, իսկ երկրորդ նախադասության մեջ՝ կրավորական՝ ծնաւ=ծնվեց, հենց այդ պատճառով էլ կոչվում է հասարակ բայ։ Այստեղ հասարակ տերմինը գործածվում է ընդհանուր իմաստով։

Հասարակ բայեր են՝ խօսել (խօսիմ), համարել (համարիմ), զատել (զատիմ), խորհել (խորհիմ), խոստովանել (խոստովանիմ)[1],

[1] Կա նաև խոստովանեմ միայն ներգործական նշանակությամբ, այսպես էլ զատեմ՝ ներգործ. եղ.։



սկսանել (սկսանիմ), ուսանել (ուսանիմ), վարկանել (վարկանիմ՝ կարծել, կարծվել, համարել, համարվել), խառնել, զգենուլ (=հագնել, հագնվել), կորուսանել[1] (=կորցնել, կորցվել) և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հասարակ բայերն ըստ կիրառության ավելի շատ հանդես են գալիս ներգործական և ավելի քիչ՝ կրավորական նշանակությամբ։

## ԽՈՆԱՐՀԻՉ ԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ (ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆ)

§ 161. Գրաբարում բայերն ունեն չորս խոնարհիչ և համապատասխանաբար՝ չորս խոնարհում. դրանք են՝ Ա, Ե, Ի, ՈՒ։ Խոնարհումները այլ կերպ կոչվում են նաև լծորդություններ։ Խոնարհիչները բայի հիմքի հետ կազմում են անորոշ դերբայի դերբայական մասնիկները՝ -ալ, -ել, -ել(իլ), -ուլ, և այսպիսով բոլոր բայերը խմբավորվում են ըստ առանձին խոնարհումների (լծորդությունների)։

§ 162. Պետք է նկատի ունենալ, որ դասական մատենագիրների երկերում Ի խոնարհիչը անորոշ դերբայում սովորաբար փոխարինվում է Ե խոնարհիչով, և առաջանում է այնպես, որ անորոշ դերբայում Ե և Ի խոնարհման բայերը ունենում են նույն ձևը, միայն խոնարհված ձևերում տարբերվում են։

Այդ պատճառով էլ բայն անվանելիս սովորաբար վերցնում են դրա սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքը։ Մենք շարադրման մեջ այսպես կվարվենք Ի խոնարհման բայերի հետ՝ տարբերիչ ձևը նշելով փակագծում, իսկ մյուս խոնարհումները, քանի որ այդ կարգի տարբերություններ չունեն, կվերցնենք միայն անորոշ դերբայի ձևով, որի մեջ էլ հենց որոշվում է նրանց խոնարհումը[2]։

Այժմ վերցնենք բայերի օրինակներ ըստ առանձին խոնարհումների։

§ 163. Ե խոնարհում՝ ածել (=բերել), անցանել (=անցնել), առնել, արկանել, բեկանել (=մաս-մաս կտրել, կոտրել), բերել, բուծանել (=բուծել, պահել, սնել), բրել (=փորել), գիտել

[1] «Արմատական բառարան»-ում վարկանել (վարկանիմ) և կորուսանել բայերի սեռի համար սխալ նշված է տրված՝ չ. (=չեզոք), էջ 753, 316։

[2] Իսկ բառարանում բոլոր լծորդությունների բայերն անխտիր նշվում են ներկա ժամանակի եզակի թվի առաջին դեմքով. դա միայն լծորդության համար չի արվում, այդ կատարվում է նաև բայի հիմնական ձևերի բացահայտման նպատակով։

(=գիտենալ), գործել, գտանել (=գտնել), գրաւել, գրել, ելանել (=ելնել), երգել, զարդարել, զարկանել (=խփել), իջանել (իջնել), լուցանել (=վառել), խնդրել (=խնդրել, որոնել), կատարել (=կատարել, ավարտել, ամփոփել), կարգել, կարել (կարացի՝ կարողանալ), կարել (կարէցի՝ կարել), կարծել, կարօտել (=պակսել), հանել, հատանել (=հատել), հատանել (=կտրել), հարկանել (=խփել, ծեծել, զարկել), հարցանել (=հարցնել), հերկել, մարթել (մարթացի՝ կարողանալ), մերկել (=հանել, մերկացնել), մատնել (=մատնել), շարել, շարժել, պահել, սիրել, սպանանել (=սպանել), տեսանել, փորել, ցուցանել (=ցույց տալ) և այլն։

§ 164. Ի խոնարհում՝ ագանել (ագանիմ՝ հագնել), ագանել (ագանիմ՝ իջևանել, գիշերել), անկանել (անկանիմ՝ ընկնել), բազմել (բազմիմ՝ նստել), բուսանել (բուսանիմ՝ բուսնել), խորհել (խորհիմ՝ մտածել), ծածանել (ծածանիմ), ծիծաղել (ծիծաղիմ), ծնանել (ծնանիմ), կամել (կամիմ՝ կամենալ, ցանկանալ), կորնչել (կորնչիմ՝ կորչել), հայել (հայիմ՝ նայել), կարծել (կարծիմ), մեռանել (մեռանիմ՝ մեռնել), մարտնչել (մարտնչիմ՝ պատերազմել, հարձակվել), նայել (նայիմ), նստել (նստիմ), շիջանել (շիջանիմ՝ հանգչել, մարել), ուսանել (ուսանիմ), սասանել (սասանիմ), սնանել (սնանիմ՝ սնվել) և այլն։

§ 165. Ա խոնարհում՝ ագալ, ածալ (=յղել, հնազանդվել), բառնալ, բառնալ (=վերցնել, վեր բարձրացնել, վերացնել, այլ վերանալ), գթալ (=խղճալ), գնալ, գոհանալ, գտալ, գտանալ, գլալ (=դադարել), գոչալ, եռալ, զարմանալ, ընթանալ, իմալ, լալ, լուանալ, խաղալ, խայտալ (=ուրախությունից թռչկոտել), իմացնալ), խնդալ, խոկալ (=խորհել, մտածել, մտամոլորվել), հեղալ, հայցել, թանալ (=թրջել), մեծանալ, մերձենալ, մկթալ (=ծիծաղել մեկի վրա, արհամարհել), մնալ, մոռանալ, յուսալ (=հուսալ), ողջալ, որսալ, ջանալ (=աշխատել, ձգտել), սգալ, սպասալ, սպառնալ, ստանալ, տակալ (=դիմանալ, դիմադրել), ցնծալ, փութալ (=փույթ ունենալ, շտապել) և այլն։

§ 166. Ու խոնարհում՝ արձանալ (=ուշել), առնուլ (=առնել, բռնել, վերցնել, ստանալ), գնալ (=ստրկել, ծախել, որսել), երդնուլ (=երդվել), զարթնուլ (=արթնանալ), զրահնուլ, զենուլ (=մորթել), զընկենուլ (=սատակությամբ գցել), ընթեռնուլ, ընկենուլ (=գցել, նետել), ընկլնուլ (=կուլ տալ), թողուլ, լնուլ, լնուլ (=լցնել), խնուլ (=խցկել), կալուլ (=կալնել), կլնուլ (=կուլ տալ, ընկղմել), հարթնուլ (=խոտանել, դուրս ցատկել, թռչկել, փախչել), հարուլ (=խփել, մի բան ծեծել), հեղձնուլ (=խեղդվել), հեղուլ, հերձնուլ (=պայթել, պատռվել),



մածնուլ (=կպչել), յանկուլ (=ավելացնել), յեղուլ, յեռուլ (=շարել, կցցնել), շրտնուլ (=խորտակել, շփոթվել, իրեն կորցնել), ստանուլ (=ստանել), ունդուլ (=ուշել), պակնուլ (=սոսկալ, վախենալ, վախից ու զարմանքից սառչել), պշնուլ (=աչքը մի կետի հառած նայել, ապուշ կտրած նայել), ջենուլ, սարտնուլ (=խրտնել, փախչել), ցածնուլ (=ցածանալ, իջնել), ցասնուլ, քաղցնուլ (=քաղցած մնալ) և այլն[1]։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս խոնարհման բայերի ճնշող մեծամասնությունը մեր գրավոր հուշարձաններում հանդես է գալիս լծորդության ու կազմության տարբերակներով (տե՛ս նաև § 176—179)։ Այստեղ բերված ցանկում նշված են այնպիսի բայեր, որոնք անկախ այլ տարբերակներից՝ ու խոնարհիչով ունեն գործածություն դասական գրավոր բնագրերում և պատահական կամ աղավաղված ձևեր չեն։ Զուգահեռ ձևերն ու այլ տարբերակները այստեղ չեն բերվել։ Դրանց կարելի է ծանոթանալ «Փոխանցումներ խոնարհումների մեջ» հատվածում և «Բառարան»-ում։

§ 167. Ո խոնարհման համար պահպանվել է միայն մի օրինակ՝ գոլ (=լինել, գոյություն ունենալ), որը, սակայն, պակասավոր բայ է։ Այդ պատճառով էլ նա հիշյալ լծորդությունների շարքում չի հիշատակվում։ Սովորաբար նկատի են առնվում չորս խոնարհումները (լծորդությունները)։

## ՊԱՐԶ ԵՎ ԱԾԱՆՑԱՎՈՐ ԲԱՅԵՐ

§ 168. *Ուսումնասիրելով բայերի անորոշ դերբայի կազմությունը*, տեսնում ենք, որ բայերի մի մասին հատուկ է այն, որ դերբայական մասնիկն անմիջականորեն դրվում է բայարմատի վրա, օրինակ՝ սիրել (սէր+ել), շարժել (շարժ+ել), խորհել (խորհ+ել) (իլ), կամել (կամ+ել) (իլ), աղալ (աղ+ալ), գաղալ (գաղ+ալ), թողուլ (թող+ուլ), հեղուլ (հեղ+ուլ)։ Այսպիսի բայերը կոչվում են պարզ բայեր։ Իսկ բայերի մյուս մասը հատկանշվում է բայարմատի և դերբայական մասնիկի միջև երևան եկած զանազան բայածանցներով։ Այդ ածանցները լինում են՝ բազմապատկական բայածանցներ (սոսկածանցներ), բազմապատկական և պատճառական ածանցներ։

§ 169. Գրաբարում հանդես են գալիս հետևյալ բազմապատկական բայածանցները՝

[1] Բազմարժան ներթափ բառերի մասին այլ առիթով փոխադարձում արված նմուշները կրկին չեն բերվել։

ԱՆ—արկ—ան—ել, գտ—ան—ել, ել—ան—ել, հարց—ան—ել, սպան—ան—ել, անկ—ան—ել (անկանիմ), ուս—ան—ել (ուսանիմ), գող—ան—ալ, մեծ—ան—ալ և այլն։

ԵՆ—մերձ—են—ալ (այլև՝ մերձիմ), յագ—են—ալ (այլև՝ յագիմ), յամ—են—ալ (այլև՝ յամել—ուշանալ)։

Ն—բանալ=*բաց—ն—ալ, բառնալ=*բարձ—ն—ալ, դառնալ=*դարձ—ն—ալ, առ—ն—ուլ, զգե—ն—ուլ, հեղձ—ն—ուլ, մած—ն—ուլ և այլն։

Չ—թռ (թիռ)—չ—ել (թռչիմ), կառ—չ—ել (կառչիմ՝ կպչել, առնչվել), հանգ—չ—ել (հանգչիմ՝ հանգստանալ), մառ—չ—ել (մառչիմ՝ մառենալ), փախ—չ—ել (փախչիմ) և այլն։

ՆՉ—երկ—նչ—ել (երկնչիմ՝ վախենալ), կոր—նչ—ել (կորնչիմ), մարտ—նչ—ել (մարտնչիմ), յար—նչ—ել (յարնչիմ) և այլն։

ԱՉ—ձան (<ձայն)—աչ—ել (Հ. Աճառյանը չի տարանջատում ա-ից—սկիզբ. բառ.ս, հատ. IV, էջ 588—589)։

ԱՆՉ—մեղ—անչ—ել (=մեղք գործել, սխալվել)։

Այս կարգի բայերը կոչվում են ածանցավոր բայեր։

§ 170. Յուրաքանչյուր խոնարհում իր մեջ ընդգրկում է և պարզ, և ածանցավոր բայեր։ Ստորև տալիս ենք օրինակներ բոլոր խոնարհումներից։

§ 171. **Ե խոնարհման պարզ բայեր՝** ածել, առաքել (=ուղարկել), ասել, բերել, բուծել, բրել, գիտել, գործել, գրել, գրկել, գերել, գործածել, խնդրել, կատարել, կարգել, կարել (=կարողանալ), կարել (=կարկատել), կործել, կոչել, կեղեքել, համբերել, համել, հեղուլ (=թափել, մեկնել, միացնել), հերկել, մարմնել, մերկել, շարել, շարժել, պահել, սիրել, վարել, քայլել և այլն։

**Ե խոնարհման ածանցավոր բայեր՝** անցանել, արկանել, բեկանել, բուծանել, գտանել, ելանել, զարկանել, իջանել, լուցանել, հասանել, հատանել, հարկանել, հարցանել, մտանել, սպանանել, տեսանել, ցուցանել և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Ե խոնարհման բայերից ածանցավոր չպետք է համարել այսպանել (=ծաղրել, նախատել, արհամարհել), **անուանել, բաժանել, զսկանել** (=չար գիտել, նկատել), **բարգավանել, ժամանել, կարծանել, սերմանել** բայերը, որոնց մեջ ան հնչյունախումբը այդպիսի ածանցի արժեքով հանդես չի գալիս։ Այդ բայերը խոնարհվում են որպես պարզ բայեր, օրինակ՝ **անուանեմ—անուանեցի, կարծանեմ—կարծանեցի** և այլն։ Թեև կա **կարծել** բայը, սակայն նրա համեմատությամբ **կարծանել** բայը չի դիտակցվում որպես ածանցավոր տարբերակ, չնայած նույն արմատով է կազմված։ Ավելի հին է **կարծանել** բայը։ Սրանք ունեն նաև բառիմաստի տարբերություն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ե խոնարհման պատկանող աղաչել և ամաչել բայերի մեջ աչ ածանցը ձուլվել է բայարմատներին, և այդ բայերը խոնարհվում են նույն խոնարհման պարզ բայերի նման՝ աղաչեմ—աղաչեցի, ամաչեմ—ամաչեցի։ Հ. Աճառյանը այստեղ ևս աչ հնչյունախմբից տարանջատում է չ-ն և այն էլ հոդակապ է համարում (տե՛ս «Հայերեն արմատական բառարան», հատ. I, էջ 122, 186)։

Այս խոնարհման պատկանող որոշ բայեր զուգահեռաբար գործածվում են պարզ և ածանցավոր ձևերով, օրինակ՝ անիծանել ‖ ‖ անիծել, անցուցանել ‖ անցուցել, արածանել ‖ արածել, զատանել ‖ զատել, զեղծանել ‖ զեղծել, լցանել ‖ լցել (այլև՝ լցանալ), խիթանել ‖ խիթել, ներկանել ‖ ներկել (այլև՝ ներկուլ), ուսուցանել ‖ ‖ ուսուցել, տարածանել ‖ տարածել, ածանել ‖ ածել և այլն։

Ինչպես այս, այնպես էլ մյուս խոնարհումների մեջ նկատվող համանման փաստերը ցույց են տալիս, որ հիշյալ ածանցները, անշուշտ, միշտ անորոշ չեն եղել, այլ հանդես գալով բայերի մեջ՝ նրանց արտահայտած գործողությանը որոշ երանգ են հաղորդել (հավանաբար՝ տևականության երանգ), սակայն ժամանակի ընթացքում կորցրել են իրենց նշանակության որոշակիությունը։

§ 172. **Ի խոնարհման պարզ բայեր՝** բազմել (բազմիմ), խորհել (խորհիմ), ծածանել (ծածանիմ), ծիծաղել (ծիծաղիմ), կամել (կամիմ), հայել (հայիմ), նայել (նայիմ), նստել (նստիմ), շրջել (շրջիմ՝ քայլել, ման գալ)[1], ողորմել (ողորմիմ), սասանել (սասանիմ) և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— **Ծածանել և սասանել** բայերը խոնարհվում են որպես պարզ բայեր, այստեղ ան-ը ածանց չէ։ Կա նաև **սասանեմ** բայ, որը ներգործական սեռի է և պատկանում է Ե խոնարհման, իսկ **սասանիմ** չեզոք սեռի է և պատկանում է Ի խոնարհման։

**Ի խոնարհման ածանցավոր բայեր՝** ագանել (ագանիմ), անկանել (անկանիմ), բուսանել (բուսանիմ), երկնչել (երկնչիմ), թռչել (թռչիմ), ծնանել (ծնանիմ), կառչել (կառչիմ), կորնչել (կորնչիմ), հանգչել (հանգչիմ), մառչել (մառչիմ), մարտնչել (մարտնչիմ), մտանել (մտանիմ), յարնչել (յարնչիմ), չքչանել

[1] Կա նաև Ե խոնարհման ներգործական սեռի շրջել բայ, բառական տարբեր իմաստով։

(...), ... նել (ատանիմ), սկսանել (սկսանիմ), անանել (անա-
նիմ), փախչել (փախչիմ) և այլն։

§ 173. Ա խոնարհման պարզ բայեր՝ աղալ, ածալ, անուալ, գթալ, գոչալ, գդ... ալ, դողալ, եռալ, զգալ, լալ, խաղալ, խայ-տալ, խնդալ, խո...ժրալ, հոգալ, մկթալ կամ մրթալ, մնալ, յուսալ, ողբալ, որսալ, ցա...նալ, սգալ, տոկալ, ցնծալ, փութալ և այլն։

Ա խոնարհման ածանցավոր բայեր՝ բանալ (*բաց—ն—ալ), բառնալ (*բարձ—ն—ալ), գոհանալ, դողանալ, դառնալ (*դարձ—ն—ալ), զարմանալ, թուլանալ, իմանալ, յուսանալ, հնանալ, մեծա-նալ, մերկանալ (—մերկացնել, կրավ. մերկացվել), մերձենալ, մո-ռանալ, ստանալ, ու...ռանալ, բարձրանալ և այլն։

Ա խոնարհման բայերի մեջ հանդիպում են այնպիսիները, որոնք զուգահեռաբար հանդես են գալիս պարզ և ածանցավոր ձևերով, այսպես՝ ամչալ || ամչանալ[1], բաղձալ || բաղձանալ[2], դող-չալ || դղչանալ (ա...լի՝ գեղջանալ), ըղձալ || ըղձանալ, խրոխտալ || խրոխտանալ[3], ծուլալ || ծուլանալ, մուրալ || մուրանալ, յախուր-տալ || յախուրտանալ[4], ոխալ || ոխանալ, պանծալ || պանծանալ, տաղտկալ || տաղտկանալ, տենչալ || տենչանալ[5], ցանկալ || ցան-կանալ և այլն։

§ 174. Ու խոնարհման պարզ բայեր՝ արգելուլ (=արգելել, բանտարկել), գելուլ, զենուլ, թողուլ, լնուլ, կասուլ, կիզուլ, հա-րուլ, հեղուլ և այլն։

Ու խոնարհման ածանցավոր բայեր՝ այտնուլ (=ուռչել), առնուլ, երդնուլ, զարթնուլ, զրօնուլ, զգենուլ, զընկենուլ, ընթեր-նուլ (*ընթերց—ն—ուլ), ընկենուլ, ընկլնուլ, թռնուլ, լնուլ, խնուլ (*խից—ն—ուլ), կ...նուլ, հարթնուլ, հեղձնուլ, հերձնուլ, մածնուլ, չքանուլ, ստանուլ, ուռնուլ, պակնուլ, պշնուլ, ջեռնուլ, սարսռնուլ, ցամքնուլ, ցասնուլ, ...ցեղունուլ և այլն։

§ 175. Բազմա...պատմական ածանցները գրաբարում շատ հազ-վադեպ են, որանք են՝ —ատ— խածատել (Գաղ., Ե, 15), խամձատել (Դան., Գ, 94), —ոտ— խոցոտել (Յայտ., Ջ, 9), —ռ— բեկռել (Եզ., Գ, 5)։ Այս ...կարգի բայերը խոնարհվում են Ե խոնարհման պարզ բայերի նման։

Պատճառական բայերի մասին խոսվում է առանձին (տե՛ս § 284)։

---

[1] Կա նաև ամաչել (-եցի)։
[2] Ուշ շրջանից կա նաև բաղձել։
[3] Կան նաև խրոխտ...ալ (-եցայ), խրոխտել (-եցի), այլև՝ խրոխտիլ։
[4] Կան նաև յախուր...ալ (Մանդակունի), յախուռտիլ (Ոսկեբերան)։
[5] Փարպեցին ունի նաև տենչիլ։



## ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ

§ 176. Գրաբարում նկատելի են փոխանցումներ բայերի խո-նարհումների մեջ։ Հաճախ որոշ բայեր հանդիպում են մեկից ավե-լի խոնարհումներով։ Ստորև տրվում են օրինակներ, որոնք ցույց են տալիս այդ փոխանցումները։

§ 177. Ի || Ե—ճեմիմ || ճեմեմ, մոլորիմ || մոլորեմ, յամա-ռիմ || յամառեմ, յոլովիմ || յոլովեմ, յորդիմ || յորդեմ, շիկ-նիմ || շիկնեմ (=կարմրել, ամաչելուց կարմրել), պայթիմ || պայ-թեմ, սխալիմ || սխալեմ, սպրդիմ || սպրդեմ[1], փախիմ || փախեմ և այլն։

§ 178. Ու || Ե կամ ընդհակառակը—արգելուլ || արգելել, ար-ձակել || արձակուլ, զենուլ || զենել, լիզել || լիզուլ (կամ լեզել, լե-զուլ), կիզուլ || կիզել, կործել || կործուլ, հանուլ, հենուլ, հեղուլ || հե-ղել), ... հյուսել (=հյուսել, հյուսուլ), յաւելուլ || յաւելել (նաև՝ յաւելիմ), ... լնուլ || լնել, ցելուլ || ցելել (=ճեղքել, պատռել) և այլն։

§ 179. Հաճախ խոնարհման փոխանցումը զուգակցվում է ածանցների հավելմամբ կամ եղածի փոխանցմամբ, այսպես՝

Ուլ || Անել || Ել—գերծուլ || գերծանել || գերծել (=ածիլել), դի-զուլ || դիզանել || դիզել (նաև՝ դիզանալ)։

Անել || Ուլ—առեղծանել || առեղծուլ։

Անել || Ել || Նուլ—թքանել || թքել || թքնուլ, եղծանել || եղծել || եղծնուլ։

Նուլ || Անել (իլ)—հեծանել (հեծանիմ) || հեծնուլ, ջեռնուլ || ջեռանել (ջեռանիմ, նաև՝ ջերանիմ), սկսանել || սկսնուլ։

Ել (իլ) || Նուլ—զգաղել (զգաղիմ) || զգաղնուլ, զգածել (զգածիմ) || զգածնուլ (=հագնել, փոխաբերությամբ՝ համակվել)։

Նուլ || Չել (չիլ)—այտնուլ || այտչել (այտչիմ), զարթնուլ || զարթ-չել (զարթչիմ), ընդոստնուլ || ընդոստչել (ընդոստչիմ), խրտ-չել (զարթչիմ), խրտնուլ || խրտչել (խրտչիմ), հարթնուլ || հարթչել (հարթչիմ), պակ-նուլ || սառչել (սառչիմ), ուռնուլ || ուռչել (ուռչիմ), պակ-նուլ || պակչել (պակչիմ), սարսռնուլ || սարսռչել (սարսռչիմ), ցամքնուլ || ցամքչել (ցամքչիմ)։ Այս զուգահեռ ձևերից շատերը զուգահեռաբար վկայված են 5-րդ դարի մատենագրության մեջ (ուռնուլ || ուռչել, պակնուլ || պակչել, սարսռնուլ || սարսռչել, խրտչել || խրտնուլ), չ-ով ձևերից մի քանիսը վկայված են համեմատաբար ուշ շրջանից (զարթչել, ցամքչել)։ Կիրառա-

---

[1] Կա նաև սպրդել ներգործական սեռի բայ, որը միայն Ե խոնարհմամբ է խոնարհվում. այստեղ նկատի է առնված չեզոքը։

թյան մեջ ավելի հաճախակի են հանդիպում նուլ-ով ձևերը. Այս պայմանով դնում ենք Ու խոնարհման մեջ։

-չել (-չիմ) || -նուլ — թառչել (թառչիմ) || թառնուլ, թաչել (թաչիմ) || թանուլ (նաև՝ թամնիլ), մաշչել (մաշչիմ) || մաշնուլ, սառչել (սառչիմ) || սառնուլ, փախչել (փախչիմ) || փախնուլ։ Սրանցից էլ առաջացած են Ի խոնարհիչով ձևերը, թեև որոշ զուգահեռ ձևեր հենց վկայված են 5-րդ դարից (մաշնուլ || մաշչել, փախչել || փախնուլ և այլն), այս դեպքում էլ նախընտրելի են չ-ով ձևերը, քանի որ հաճախ են հանդիպում։ Սրանք էլ պայմանականորեն անցկացրել ենք Ի խոնարհման բայերի բաժնում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս նշելով՝ երբեք նկատի չունենք առանձին բնագրերի աղավաղված արհեստականորեն փոխված ձևերը, որոնք, հնարավոր չգտնելով, չմտան լեզվի մեջ[1]։

§ 180. Լծորդության փոփոխությունը երբեմն առաջ է բերում բայական սեռի փոփոխություն, օրինակ՝ երկայնանալ (չեզոք), երկայնել (ներգործական), մեղկանալ (=թուլանալ, չեզոք), մեղկել (թուլացնել, ներգործական), վատանալ կամ վատիմ (=տկարանալ, չեզոք), վատել (վատեմ՝ տկարացնել, ներգործական)։

## ՆԵՐԳՈՐԾԱՁԵՎ ԵՎ ԿՐԱՎՈՐԱՁԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 181. Խոնարհման ժամանակ կրած ձևական փոփոխությունների ընդհանուր բնույթի հիման վրա բայերի խոնարհումը բաժանվում է երկու տիպի՝ ներգործաձև և կրավորաձև։ Դրանք գրաբարի քերականությունների մեջ անվանվել են նաև ներգործականի և կրավորականի խոնարհումներ։ Այստեղ հիմնականում նկատի է առնվում բայերի խոնարհման արտաքին ձևը։

Խոնարհման այս տիպերը չպետք է շփոթել սեռերի հետ, որովհետև միշտ չէ, որ սեռերը համընկնում են փոփոխման արտաքին ձևերին՝ ներգործաձև և կրավորաձև խոնարհումներին։

§ 182. Կան բայեր, որոնք խոնարհվում են միայն ներգործաձև, կան բայեր, որոնք խոնարհվում են միայն կրավորաձև, կան բայեր էլ, որոնք խոնարհվում են և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև։

§ 183. Ե խոնարհման չեզոք սեռի բայերը՝ վազել, ճայլել,

[1] Էլ չենք խոսում հետագա դարերի ներկայացուցիչների ստեղծած բայական արհեստական այն ձևերի մասին, որոնք վերաբերում են խոնարհմանը, օրինակ՝ անցյալ դերբայի համար նրանք ստեղծել են էկափել, էկափեցել, կափոցել, կափոցոցել կամ կափառուցել, էկոփիլ, էկոփեցել, կոփոցել, կոփառուցել կամ կոփացոցել ձևերը, որոնք չմտան մեր լեզվի մեջ։



անցանել, երանել, ճառանել, մառանել և այլն, խոնարհվում են միայն ներգործաձև (վազեմ, ճայլեմ, անցանեմ, երանեմ, հառանեմ, մառանեմ), իսկ Ի խոնարհման չեզոք սեռի բայերը, օրինակ՝ բազմել, ծիծաղել, հայել, անկանել, թռանել, շիջանել և այլն, խոնարհվում են միայն կրավորաձև (բազմիմ, ծիծաղիմ, հայիմ, անկանիմ, թռանիմ, շիջանիմ)։ Այս պատճառով էլ գրաբարի չեզոք սեռի բայերը բաժանվում են երկու խմբի՝ ներգործաձև չեզոք և կրավորաձև չեզոք բայեր։ Մյուս խոնարհումների մեջ էլ այն դեպքերում, երբ չեզոք սեռի բայը խոնարհվում է ներգործաձև, այն երբեք կրավորաձև չի կարող խոնարհվել և ընդհակառակը, այն դեպքերում, երբ չեզոք սեռի բայը խոնարհվում է կրավորաձև, երբեք ներգործաձև չի կարող խոնարհվել։

Այստեղ, իհարկե, նկատի չունենք խոնարհման (լծորդության) փոխանցումները։

§ 184. Ներգործական սեռի բայերը կարող են խոնարհվել նաև կրավորաձև։ Այս դեպքում արդեն փոխվում է նրանց սեռը, նրանք ստանում են կրավորական սեռի նշանակություն, օրինակ՝ գրեմ (ներգործաձև, ներգործական սեռ՝ գրում եմ), գրիմ (կրավորաձև, կրավորական սեռ՝ գրվում եմ), աղաց (ներգործաձև, ներգործական սեռ՝ աղաց), աղացաւ (կրավորաձև, կրավորական սեռ՝ աղացվեց), եհեղ (ներգործաձև, ներգործական սեռ՝ թափեց), եհեղաւ (կրավորաձև, կրավորական սեռ՝ թափվեց) և այլն։

§ 185. Ե խոնարհման ներգործական սեռի բայերը բոլոր դիմավոր ձևերում (բացի անց. անկատարից և հրամայականի ապառնի ձևերից) ունեն զուգահեռ՝ ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ, իսկ Ա և Ու խոնարհումներին պատկանող ներգործական սեռի բայերը բոլոր դիմավոր ձևերում չունեն անխտիր զուգահեռ խոնարհումներ (ներգործաձև և կրավորաձև). դրանք հատուկ են դիմավոր ձևերի մի մասին միայն, իսկ որոշ դիմավոր ձևերում գործածվում են ընդհանուր ձևով տարբեր սեռերի համար, օրինակ՝ աղայ բառը կարող է նշանակել և՛ աղում է (ներգործական սեռ), և՛ աղացվում է (կրավորական սեռ), կամ հեղու կարող է նշանակել և՛ թափում է (ներգործական սեռ), և՛ թափվում է (կրավորական սեռ), բայց՝ աղաց=աղաց (ներգործական սեռ), աղացաւ=աղացվեց (կրավորական սեռ), եհեղ=թափեց (ներգործական սեռ), եհեղաւ=թափվեց (կրավորական սեռ)։ Իսկ թե ո՛ր դեպքում դրանք ընդհանուր ձևեր են ունենում և ո՛ր դեպքում՝ տարբեր, այդ կտեսնենք առանձին, դիմավոր ձևերի բաժնում և խոնարհման աղյուսակներում։

§ 186. Հասարակ բայերը խոնարհվում են միայն կրավորաձև և խոնարհման այդ մեկ տեսակով ըստ գործածության արտահայտում են և՛ ներգործական, և կրավորական (մեծ մասամբ ներգործական) սեռի նշանակություն։ Այդ կարելի է տեսնել հետևյալ օրինակներում. «...Զքարուտ տեղիսն ապաւէն իւրեանց **համարեցաւ**» (Բուզ., III, է, էջ 26—27)՝ Այն քարքարոտ տեղերը իրենց ապավեն համարեցին։ «...**խօսեցաւ** պաշտօնեայն զբանս իւր» (Բուզ., IV, Ե, էջ 135)՝ խոսեց իր բոլոր խոսքերը, ասաց իր բոլոր խոսքերը։ «...Ի սոցանէ **ծնաւ** այր սքանչելի...» (Բուզ., III, ժԵ, էջ 63)՝ Սրանցից ծնվեց սքանչելի մարդ։

Ընդգծված բայերը խոնարհված են կրավորաձև, որանցից առաջին երկուսը՝ **համարեցաւ** (*համարիմ*), **խօսեցաւ** (*խօսիմ*) ներգործական իմաստով են գործածված, իսկ **ծնաւ** (*ծնանիմ*)՝ կրավորական։

## ԵՂԱՆԱԿ

§ 187. Գրաբարում բայը երեք եղանակ ունի՝ սահմանական, ստորադասական, հրամայական։ Ստորադասական եղանակը համապատասխանում է աշխարհաբարի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներին։ Իսկ թե ո՛ր դեպքում ո՛ր եղանակին է համապատասխանում, այդ որոշվում է բայի գործածությամբ տվյալ բնագրում։

## ԺԱՄԱՆԱԿ

§ 188. Ըստ կազմության՝ գրաբարի բայի ժամանակները բաժանվում են երկու խմբի՝ ա) պարզ ժամանակներ, բ) բաղադրյալ ժամանակներ։

§ 189. **Պարզ ժամանակներն են**՝ ներկա, անց. անկատար, անցյալ կատարյալ, առաջին ապառնի, երկրորդ ապառնի, բուն հրամայական (կամ հրամայական եղանակի ներկա), հորդորական հրամայական (կամ հրամայական եղանակի ապառնի), արգելական հրամայական (կամ հրամայական եղանակի արգելական ձև)։

§ 190. **Բաղադրյալ ժամանակներն են**՝ վաղակատար-հարակատար ներկա (հարակատար), վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար), սահմանական եղանակի բաղադրյալ ապառնի, անցյալ ապառնի, ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնիներ (2 ապառնի, տե՛ս § 318—320)։



§ 191. Այս ժամանակները բաշխվում են ըստ եղանակների հետևյալ կերպ՝

1. **սահմանական եղանակ**—ներկա, անցյալ անկատար, անցյալ կատարյալ, վաղակատար-հարակատար ներկա, վաղակատար-հարակատար անցյալ, բաղադրյալ ապառնի, անցյալ ապառնի (բաղադրյալ).

2. **ստորադասական եղանակ**—առաջին ապառնի, երկրորդ ապառնի, բաղադրյալ երկու ապառնիներ.

3. **հրամայական եղանակ**—ներկա (բուն հրամայական), ապառնի (հորդորական հրամայական), արգելական ձև (արգելական հրամայական)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ինչպես կտեսնենք, երկրորդ ապառնին համապատասխանում է աշխարհաբարի սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական ապառնիներին, այսինքն՝ գերազանցապես ստորադասական է, այդ պատճառով էլ այն համարում ենք ստորադասական եղանակի ժամանակ։ Առանձին քերականներ այս ժամանակը տեղադրում են սահմանական եղանակի մեջ։ Պետք է նշել նաև, որ հաճախ դժվար է լինում որոշակիորեն սահմանազատել այս ժամանակի սահմանական և ստորադասական իմաստները, քանի որ դրանք այս ձևում նույնիսկ բնիկ մատենագիրների երկերում հաճախ հանդես են գալիս կիրառության ոչ հստակ տարբերակումներով։ Նույնը նկատելի է նաև առաջին ապառնու համեմատությամբ։ Ենթադրվում է, որ այս երկու ապառնիները մի ժամանակ ունեցել են կերպային տարբերություններ։

Ժամանակներն ըստ եղանակների բաշխելիս նկատի են առնվում եղանակային ձևերի հիմնական իմաստները, իսկ երկրորդական կիրառությունները տվյալ դեպքում հաշվի չեն առնվում։

Պարզ և բաղադրյալ ժամանակները սովորաբար ուսումնասիրվում են առանձին-առանձին։

Նախ վերցնենք պարզ ժամանակները։

Այժմ տեսնենք, թե ինչ հիմքերից են կազմվում այդ պարզ ժամանակները։

## ԲԱՅԱՀԻՄՔԵՐ

§ 192. Գրաբարի բայի պարզ ժամանակները, ինչպես նաև դերբայները, կազմվում են երկու բայահիմքից, որոնցից մեկը կոչվում է ներկայի հիմք, իսկ մյուսը՝ անցյալ կատարյալի։

Ներկայի հիմքից կազմվում են՝ ներկան, անցյալ անկատարը, առաջին ապառնին, հրամայական եղանակի արգելական ձևը, դերբայներից անորոշը և ապառնին (մասամբ էլ մյուս դերբայները, տե՛ս § 273—275)։

Անցյալ կատարյալի հիմքից կազմվում են՝ անցյալ կատարյալը, երկրորդ ապառնին, բուն հրամայականը (հրամայական եղանակի ներկան), հորդորական հրամայականը (հրամայական եղանակի ապառնին) և դերբայներից մյուս երկուսը՝ անցյալ և ենթակայական կամ ներկա դերբայները։

Նյութի յուրացումը հեշտացնելու նպատակով ավելի հարմար է հիշյալ ձևերի կազմությունն ուսումնասիրել ըստ հիմքերի և այնուհետև համադրել երկու հիմքերից կազմվող բոլոր ձևերը՝ խոնարհման մասին ամբողջական պատկերացում կազմելու նպատակով։

## ՆԵՐԿԱՅԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ՁԵՎԵՐԸ

§ 193. *Որևէ բայ ներկայի հիմքից կազմվող ժամանակներով խոնարհելու համար նախ պետք է իմանալ այդ բայի ներկայի հիմքը և ապա դիմավոր ձևերի համապատասխան վերջավորությունները՝ խոնարհիչների հետ միասին։*

§ 194. *Բայի ներկայի հիմքը գտնելու համար վերցնում ենք նրա անորոշ դերբայը ու հեռացնում դերբայական մասնիկը, և այնպիսով մնում է ներկայի հիմքը։* Ուրեմն, ներկայի հիմքը անորոշ դերբայն է՝ առանց դերբայական մասնիկի։ Եվ դա նշանակում է, որ ածանցները մնում են ներկայի հիմքի մեջ։ Օրինակներ՝ գործել, ներկայի հիմք՝ գործ, զարդարել—զարդար, կարգել—կարգ, կարծել—կարծ, անցանել—անցան, արկանել—արկան, բեկանել—բեկան, հատանել—հատան, տեսանել—տեսան, ցուցանել—ցուցան, բազմել (բազմիմ)—բազմ, խորհել (խորհիմ)—խորհ, ծիծաղել (ծիծաղիմ)—ծիծաղ, հայել (հայիմ)—հայ, անկանել (անկանիմ)—անկան, բուսանել (բուսանիմ)—բուսան, երկնչել (երկնչիմ)—երկնչ, թռչել (թռչիմ)—թռչ, նմանել (նմանիմ)—նման, փախչել (փախչիմ)—փախչ, աղալ—աղ, անսալ—անս, խայտալ—խայտ, որսալ—որս, բանալ—բան, բարձրանալ—բարձրան, գոհանալ—գոհան, զարմանալ—զարման, ընթանալ—ընթան, մերձենալ—մերձեն, մոռանալ—մոռան, գելուլ—գել, զենուլ—զեն, թողուլ—թող, հեղուլ—հեղ, ցելուլ—ցել, առնուլ—առն, զարթնուլ—զարթն, ջեռնուլ—ջեռն, զգենուլ—զգեն, ընթեռնուլ—ընթեռն, ընկենուլ—ընկեն, ընկլնուլ—ընկլն, լնուլ—լն, մածնուլ—մածն, ջեռնուլ—ջեռն, ցանուլ—ցան և այլն, և այլն։



Յուրաքանչյուր ժամանակի դիմավոր ձևերը կազմելու համար ցույց տրված հիմքերին պետք է ավելացնել վերջավորությունները՝ համապատասխան խոնարհիչներով, նայած թե այդ բայը ո՛ր խոնարհման է պատկանում։

### ՆԵՐԿԱ

§ 195. *Դեմքերի վերջավորությունները ներկա ժամանակում հետևյալներն են.*

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դեմք | —մ | —մք |
| 2-րդ » | —ս | —յք |
| 3-րդ » | —յ | —ն |

§ 196. *Այս վերջավորություններն ընդհանուր են բոլոր խոնարհումների համար։*

Եզակի թվի 3-րդ և հոգնակի թվի 2-րդ դեմքում եղած յ-ն է, երկբարբառային ձայնավորի, ի ձայնավորի և ւ ձայնորդի առկայության դեպքում դուրս է ընկնում, իսկ այդ լինում է Ե, Ի և Ու խոնարհումների բայերի մեջ։ Այդ երևույթը բացատրվում է նրանով, որ, ինչպես ցույց է տրված § 3-ում, է-ն երկբարբառային արտասանություն է ունեցել (եյ) և իր մեջ պարունակել է յ հնչյունը, այդպիսով՝ է-ի առկայությունը նշանակում է նաև յ-ի առկայություն։ Այդ հնչյունի անկումը ի և ւ հնչյունների մոտ բացատրվում է նրանց հնչակցությամբ (հմմտ. հայր—հաւր, գնա+իցեմ=գնայցեմ և այլն)։

§ 197. *Հիշյալ վերջավորությունների հետ խոնարհման ժամանակ հանդես են գալիս նաև խոնարհիչները, որոնցով արտահայտվում են խոնարհման տարբերությունները տարբեր լծորդությունների պատկանող բայերում։* Այժմ տեսնենք, թե ի՛նչ պատկեր ունեն դրանք ըստ առանձին խոնարհումների։

### Ե խոնարհում

§ 198. Ե *խոնարհման պատկանող բայերը ներկա ժամանակում ունենում են երկու տիպի վերջավորություններ՝ ներգործական և կրավորական։ Դրանք են՝*

| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| 1-ին դեմք—եմ | —եմք | —իմ | —իմք |
| 2-րդ » —ես | —էք | —իս | —իք |
| 3-րդ » —է | —են | —ի | —ին |

Խոնարհման ժամանակ սրանք կցվում են բայահիմքին։

§ 199. Ներգործաձև վերջավորություններ են ստանում Ե խոնարհման բոլոր բայերն անխտիր՝ անկախ սեռից (թե՛ ներգործական, թե՛ չեզոք)։ Կրավորաձև վերջավորություններ կարող են ստանալ միայն ներգործական սեռի բայերը, որոնք այդ դեպքում փոխում են իրենց սեռը և ստանում են կրավորական սեռի նշանակություն։

Ենթադրենք, թե տրված են առաքել, շարժել, սիրել, վազել, քայլել, բեկանել, գտանել, նկանել, իջանել, մտանել, տեսանել բայերը. բոլորը կխոնարհենք ներգործաձև, որովհետև բոլորն էլ Ե խոնարհման բայեր են։ Սակայն կրավորաձև կարող ենք խոնարհել ոչ բոլորը, այլ միայն առաքել, շարժել, սիրել, բեկանել, գտանել, տեսանել բայերը, որովհետև դրանք ներգործական սեռի բայեր են և կրավորաձև խոնարհվելիս ստանում են կրավորական սեռի նշանակություն, օրինակ՝ առաքեմ=ուղարկում եմ, առաքիմ=ուղարկվում եմ, շարժեմ=շարժում եմ, շարժիմ=շարժվում եմ, սիրեմ=սիրում եմ, սիրիմ=սիրվում եմ, բեկանիմ=կոտրվում եմ, բեկանեմ=կոտրում եմ, գտանեմ=գտնում եմ, գտանիմ=գտնվում եմ, տեսանեմ=տեսնում եմ, տեսանիմ=տեսնվում եմ։ Իսկ վազել, քայլել, նկանել, իջանել, մտանել բայերը որպես Ե խոնարհման չեզոք սեռի բայեր խոնարհվում են միայն ներգործաձև, պահպանելով չեզոք սեռի նշանակությունը՝ վազեմ=վազում եմ, քայլեմ=քայլում եմ, նկանեմ=ընկնում եմ, իջանեմ=իջնում եմ, մտանեմ=մտնում եմ։ Սրանք ներգործաձև չեզոք բայեր են (տե՛ս § 183)։

§ 200. Խոնարհման համար վերցնենք երկու բայ՝ պարզ և ածանցավոր։

| | |
|---|---|
| Պարզ՝ շարժել | Ներկայի հիմք՝ շարժ |
| Ածանցավոր՝ գտանել | գտան |



Ներգործաձև

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| 1-ին դ. շարժեմ (շարժում եմ) | շարժեմք (շարժում ենք) |
| 2-րդ » շարժես (շարժում ես) | շարժէք (շարժում եք) |
| 3-րդ » շարժէ (շարժում է) | շարժեն (շարժում են) |
| 1-ին դ. գտանեմ (գտնում եմ) | գտանեմք (գտնում ենք) |
| 2-րդ » գտանես (գտնում ես) | գտանէք (գտնում եք) |
| 3-րդ » գտանէ (գտնում է) | գտանեն (գտնում են) |

Կրավորաձև

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| 1-ին դ. շարժիմ (շարժվում եմ) | շարժիմք (շարժվում ենք) |
| 2-րդ » շարժիս (շարժվում ես) | շարժիք (շարժվում եք) |
| 3-րդ » շարժի (շարժվում է) | շարժին (շարժվում են) |
| 1-ին դ. գտանիմ (գտնվում եմ) | գտանիմք (գտնվում ենք) |
| 2-րդ » գտանիս (գտնվում ես) | գտանիք (գտնվում եք) |
| 3-րդ » գտանի (գտնվում է) | գտանին (գտնվում են) |

### Ի խոնարհում

§ 201. Ներկա ժամանակում Ի խոնարհման բայերը ունենում են միայն կրավորաձև վերջավորություններ։ Դեմքի վերջավորությունների հետ հանդես է գալիս Ի խոնարհիչը։ Այսպես՝

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| 1-ին դեմք—իմ | —իմք |
| 2-րդ » —իս | —իք |
| 3-րդ » —ի | —ին |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եզակի թվի 3-րդ և հոգնակի թվի 2-րդ դեմքերում ց հնչյունը հանդես չի գալիս § 196-ում նշված կանոնի համաձայն։

§ 202. Ի խոնարհման պատկանող բոլոր բայերը՝ անկախ սեռից՝ խոնարհվում են կրավորաձև, ստանալով վերը նշված վերջավորությունները։ Այստեղ կրավորաձև խոնարհումը բայի սեռի վրա չի ազդում, որովհետև դա Ի լծորդության պատկանող բայերի խոնարհման սկզբունքն է, այդ լծորդության բայերը այլ ձևով չեն խոնարհվում։

Ի խոնարհման մեջ մտնում են չեզոք (կրավորաձև չեզոք) սեռի և հասարակ բայեր, որոնք կրավորաձև խոնարհվելով՝ պահպանում են իրենց սեռը, օրինակ՝ **նայիմ**=նայում եմ, **անկանիմ**=ընկնում եմ, **շիջանիմ**=հանգչում եմ, **թռչիմ**=թռչում եմ, **կորնչիմ**=կորչում եմ (չեզոք սեռ), **ընդունիմ**=ընդունում եմ || ընդունվում եմ, **դատիմ**=դատում եմ || դատվում եմ (հասարակ) և այլն։

### Խոնարհման օրինակներ

| | | | |
|---|---|---|---|
| Պարզ՝ | նայել | Ներկայի հիմք՝ | նայ |
| | անկանել | | անկան |
| Ածանցավոր՝ | թռչել | | թռչ |
| | մարտնչել | | մարտնչ |

### Կրավորաձև

#### Եզակի թ.

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | նայիմ (նայում եմ) | անկանիմ (ընկնում եմ) |
| 2-րդ » | նայիս (նայում ես) | անկանիս (ընկնում ես) |
| 3-րդ » | նայի (նայում է) | անկանի (ընկնում է) |

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | թռչիմ (թռչում եմ) | մարտնչիմ (մարտնչում եմ) |
| 2-րդ » | թռչիս (թռչում ես) | մարտնչիս (մարտնչում ես) |
| 3-րդ » | թռչի (թռչում է) | մարտնչի (մարտնչում է) |

#### Հոգնակի թ.

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | նայիմք (նայում ենք) | անկանիմք (ընկնում ենք) |
| 2-րդ » | նայիք (նայում եք) | անկանիք (ընկնում եք) |
| 3-րդ » | նային (նայում են) | անկանին (ընկնում են) |

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | թռչիմք (թռչում ենք) | մարտնչիմք (մարտնչում ենք) |
| 2-րդ » | թռչիք (թռչում եք) | մարտնչիք (մարտնչում եք) |
| 3-րդ » | թռչին (թռչում են) | մարտնչին (մարտնչում են) |

### Ա. խոնարհում

§ 203. Ա խոնարհման բայերը ներկա ժամանակում ունեն ընդհանուր վերջավորություններ։ Նույն վերջավորությունները ծառայում են և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև խոնարհումների համար։ Այդ վերջավորությունները հետևյալներն են (ներառյալ խոնարհիչը)՝



| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դեմք | —ամ | —ամք |
| 2-րդ » | —աս | —այք |
| 3-րդ » | —այ | —ան |

Սրանք ընդհանուր են Ա խոնարհման պատկանող բոլոր սեռերի բայերի համար, բայց որում ներգործական սեռի բայերը նույն վերջավորություններով բաց կիրառության կարող են արտահայտել կրավորական սեռի նշանակություն, իսկ չեզոք սեռի բայերը նույն վերջավորություններով չեզոք սեռի իմաստ են արտահայտում, օրինակ՝ **գնամ**=գնում եմ, **մնամ**=մնում եմ, **զարմանամ**=զարմանում եմ, **ընթանամ**=ընթանում եմ, **հեծանամ**=հեծնում եմ (չեզոք սեռ), **աղամ**=աղում եմ, **ածամ**=լցնում եմ, պատարկում եմ, **գողանամ**=գողանում եմ (ներգործական սեռ), բայց և՝ **աղամ**=աղացվում եմ, **ածամ**=լցվում եմ, պատարկվում եմ, **գողանամ**=գողացվում եմ (կրավորական սեռ)։

Այս հանգամանքը նկատի ունենալով՝ խոնարհման աղյուսակում կրավորաձև խոնարհման բաժնում ներգործական սեռի բայերը կարելի է նույնությամբ կրկնել՝ կրավորական սեռի համար, սակայն այդպես չի կարելի վարվել չեզոք սեռի բայերի հետ, որովհետև չեզոք սեռի բայերից կրավորական սեռի բայեր չի կարելի ստանալ։

### Խոնարհման օրինակներ

| | | | |
|---|---|---|---|
| Պարզ՝ | աղալ | Ներկայի հիմք՝ | աղ |
| | մնալ | | մն |
| Ածանցավոր՝ | գողանալ | | գողան |
| | զարմանալ | | զարման |

### Ներգործաձև

#### Եզակի թ.

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | աղամ (աղում եմ) | մնամ (մնում եմ) |
| 2-րդ » | աղաս (աղում ես) | մնաս (մնում ես) |
| 3-րդ » | աղայ (աղում է) | մնայ (մնում է) |

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | գողանամ (գողանում եմ) | զարմանամ (զարմանում եմ) |
| 2-րդ » | գողանաս (գողանում ես) | զարմանաս (զարմանում ես) |
| 3-րդ » | գողանայ (գողանում է) | զարմանայ (զարմանում է) |

Հոգնակի թ.

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | աղամք (աղում ենք) | մնամք (մնում ենք) |
| 2-րդ » | աղայք (աղում եք) | մնայք (մնում եք) |
| 3-րդ » | աղան (աղում են) | մնան (մնում են) |

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | գողանամք (գողանում ենք) | զարմանամք (զարմանում ենք) |
| 2-րդ » | գողանայք (գողանում եք) | զարմանայք (զարմանում եք) |
| 3-րդ » | գողանան (գողանում են) | զարմանան (զարմանում են) |

Կրավորաձև (նույն ձևով, բայց կրավորական սեռով)

Եզակի թ.

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | աղամ (աղացվում եմ) | գողանամ (գողացվում եմ) |
| 2-րդ » | աղաս (աղացվում ես) | գողանաս (գողացվում ես) |
| 3-րդ » | աղայ (աղացվում է) | գողանայ (գողացվում է) |

Հոգնակի թ.

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | աղամք (աղացվում ենք) | գողանամք (գողացվում ենք) |
| 2-րդ » | աղայք (աղացվում եք) | գողանայք (գողացվում եք) |
| 3-րդ » | աղան (աղացվում են) | գողանան (գողացվում են) |

Մնալ և զարմանալ բայերը կրավորաձև խոնարհում չունեն (չեզոք են)։

### Ու խոնարհում

§ 204. Ու խոնարհման բայերը ևս (Ա խոնարհման բայերի նման) ներկա ժամանակում ունեն ընդհանուր վերջավորություններ։ Դրանք են՝

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դեմք | —ում | —ումք |
| 2-րդ » | —ուս | —ուք |
| 3-րդ » | —ու | —ուն |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եզակի թվի 3-րդ և հոգնակի թվի 2-րդ դեմքերում յ հնչյունը հանդես չի գալիս § 196-ում նշված կանոնի համաձայն։

Ներգործական սեռի բայերը նույն վերջավորություններով ըստ կիրառության կարող են արտահայտել նաև կրավորական սեռի



նշանակություն, իսկ չեզոք սեռի բայերը նույն վերջավորություններով միշտ չեզոք են մնում, օրինակ՝ թաղում=թաղում եմ, կիզում=այրում եմ, լնում=լցնում եմ (ներգործական սեռ), բայց նաև՝ թաղում=թաղվում եմ, կիզում=այրվում եմ, լնում=լցվում եմ (կրավորական սեռ), իսկ՝ զբօսնում=զբոսնում եմ, ջեռնում=տաքանում եմ (չեզոք սեռ)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ու խոնարհման ներգործական սեռի բայերի կրավորականության դրսևորման համար մատենագրության մեջ այդ բայերը տեղ-տեղ գործածված են փոփոխված կազմությամբ (-ուլ— -անիլ)։ 5-րդ դարից ունենք, օրինակ, արգելանիլ (Սգր.)։ Սակայն դրանք չեն վերածվում օրինաչափության։ Գործածված հատ ու կենտ ձևերն ընտիր չեն։ Կրավորական սեռի իմաստի արտահայտման նպատակով գործածվում են նաև բաղադրյալ ձևեր (տե՛ս § 320)։

Խոնարհման օրինակներ

| | | |
|---|---|---|
| Պարզ՝ | կիզուլ | Ներկայի հիմք՝ կիզ (<կէզ) |
| Ածանցավոր՝ | ջեռնուլ | ջեռն |

Ներգործաձև

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | կիզում (այրում եմ) | կիզումք (այրում ենք) |
| 2-րդ » | կիզուս (այրում ես) | կիզուք (այրում եք) |
| 3-րդ » | կիզու (այրում է) | կիզուն (այրում են) |

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | ջեռնում (տաքանում եմ) | ջեռնումք (տաքանում ենք) |
| 2-րդ » | ջեռնուս (տաքանում ես) | ջեռնուք (տաքանում եք) |
| 3-րդ » | ջեռնու (տաքանում է) | ջեռնուն (տաքանում են) |

Կրավորաձև

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | կիզում (այրվում եմ) | կիզումք (այրվում ենք) |
| 2-րդ » | կիզուս (այրվում ես) | կիզուք (այրվում եք) |
| 3-րդ » | կիզու (այրվում է) | կիզուն (այրվում են) |

Ջեռնուլ՝ չունի (չեզոք է)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սովորաբար Ա և Ու լծորդությունների բայերը նման դեպքերում չեն տրվում առանձին խոնարհման ձևերով։ Մենք ընդհանուր ձևերը ներգործաձև և կրավորաձև խոնարհումների ենք բաժանել՝ սեռերը ցույց տալու նպա-

տանկալ։ Չեզոք սեռի բայերը հիշատակել ենք միայն ներգործական խոնարհման բաժնում։

## ԱՆՑՅԱԼ ԱՆԿԱՏԱՐ

§ 205. Անցյալ անկատար ժամանակում դեմքերի վերջավորություններն են՝

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դեմք | —ի | —աք |
| 2-րդ » | —իր | —իք |
| 3-րդ » | —էր | —ին |

Սրանց հիման վրա խոնարհիչների միջոցով ձևավորված խոնարհման վերջավորությունները յուրաքանչյուր լծորդության պատկանող բայերի համար ընդհանուր են, ներգործական և կրավորական վերջավորությունները առանձին-առանձին չկան. դա նշանակում է, որ այդ վերջավորություններն ընդհանուր են բոլոր սեռերի համար։

Ներգործական սեռի բայերը նույն վերջավորություններով բուն կիրառության կողքին կարող են արտահայտել նաև կրավորական սեռի նշանակություն։

### Ա խոնարհում

§ 206. Խոնարհման վերջավորություններն են՝

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դեմք | —էի | —էաք | նույնը | |
| 2-րդ » | —էիր | —էիք | | |
| 3-րդ » | —էր | —էին | | |

#### Խոնարհման օրինակներ

Ներգործական

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | շարժէի (շարժում էի) | շարժէաք (շարժում էինք) |
| 2-րդ » | շարժէիր (շարժում էիր) | շարժէիք (շարժում էիք) |
| 3-րդ » | շարժէր (շարժում էր) | շարժէին (շարժում էին) |



| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | գտանէի (գտնում էի) | գտանէաք (գտնում էինք) |
| 2-րդ » | գտանէիր (գտնում էիր) | գտանէիք (գտնում էիք) |
| 3-րդ » | գտանէր (գտնում էր) | գտանէին (գտնում էին) |

Կրավորական (նույնը՝ կրավ. նշ.)

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | շարժէի (շարժվում էի), | շարժէաք (շարժվում էինք) |
| 2-րդ » | շարժէիր (շարժվում էիր) | շարժէիք (շարժվում էիք) |
| 3-րդ » | շարժէր (շարժվում էր) | շարժէին (շարժվում էին) |
| 1-ին դ. | գտանէի (գտնվում էի) | գտանէաք (գտնվում էինք) |
| 2-րդ » | գտանէիր (գտնվում էիր) | գտանէիք (գտնվում էիք) |
| 3-րդ » | գտանէր (գտնվում էր) | գտանէին (գտնվում էին) |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ա խոնարհման բայերի եզակի թվի 3-րդ դեմքում երբեմն կրավորական նշանակությամբ հանդես է գալիս -իւ վերջավորությունը, օրինակ՝ «...Որոյ անուն Փիտակ կոչիւ» (Թուղ., III, Ի, էջ 76)՝ Որի անունը Փիտակ էր կոչվում։

### Ի խոնարհում

§ 207. Անցյալ անկատար ժամանակում Ի լծորդության բայերի խոնարհման վերջավորությունները համընկնում են Ե լծորդության բայերի վերջավորություններին։ Դրանք են՝

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դեմք | —էի | —էաք |
| 2-րդ » | —էիր | —էիք |
| 3-րդ » | —էր | —էին |

Նկատի ունենալով, որ Ի լծորդության բայերը առհասարակ կրավորական են խոնարհվում, այս ժամանակում ևս դրանք պետք է հիշատակել կրավորական խոնարհման բաժնում՝ առանց սեռի փոփոխության անհրաժեշտության։

Խոնարհման օրինակներ

Եզակի թ.

1-ին դ. նայէի (նայում էի) — անկանէի (ընկնում էի)
2-րդ » նայէիր (նայում էիր) — անկանէիր (ընկնում էիր)
3-րդ » նայէր (նայում էր) — անկանէր (ընկնում էր)

1-ին դ. թռչէի (թռչում էի) — մառանչէի (մառանչում էի)
2-րդ » թռչէիր (թռչում էիր) — մառանչէիր (մառանչում էիր)
3-րդ » թռչէր (թռչում էր) — մառանչէր (մառանչում էր)

Հոգնակի թ.

1-ին դ. նայէաք (նայում էինք) — անկանէաք (ընկնում էինք)
2-րդ » նայէիք (նայում էիք) — անկանէիք (ընկնում էիք)
3-րդ » նայէին (նայում էին) — անկանէին (ընկնում էին)

1-ին դ. թռչէաք (թռչում էինք) — մառանչէաք (մառանչում էինք)
2-րդ » թռչէիք (թռչում էիք) — մառանչէիք (մառանչում էիք)
3-րդ » թռչէին (թռչում էին) — մառանչէին (մառանչում էին)

### Ե. խոնարհում

§ 208. *Խոնարհման վերջավորություններն են՝*

| Ներգործական | | Կրավորական |
|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | |
| *1-ին դեմք —այի* | *—այաք* | |
| *2-րդ » —այիր* | *—այիք* | *նույնը* |
| *3-րդ » —այր* | *—ային* | |

Խոնարհման օրինակներ

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ. աղայի (աղում էի) — մնայի (մնում էի)
2-րդ » աղայիր (աղում էիր) — մնայիր (մնում էիր)
3-րդ » աղայր (աղում էր) — մնայր (մնում էր)

1-ին դ. գողանայի (գողանում էի) — զարմանայի (զարմանում էի)
2-րդ » գողանայիր (գողանում էիր) — զարմանայիր (զարմանում էիր)
3-րդ » գողանայր (գողանում էր) — զարմանայր (զարմանում էր)





1-ին դ. աղայաք (աղում էինք) — մնայաք (մնում էինք)
2-րդ » աղայիք (աղում էիք) — մնայիք (մնում էիք)
3-րդ » աղային (աղում էին) — մնային (մնում էին)

1-ին դ. գողանայաք (գողանում էինք)
2-րդ » գողանայիք (գողանում էիք)
3-րդ » գողանային (գողանում էին)

1-ին դ. զարմանայաք (զարմանում էինք)
2-րդ » զարմանայիք (զարմանում էիք)
3-րդ » զարմանային (զարմանում էին)

Կրավորական *(նույն ձևով, կրավորական սեռով)*

Եզակի թ.

1-ին դ. աղայի (աղացվում էի) — գողանայի (գողացվում էի)
2-րդ » աղայիր (աղացվում էիր) — գողանայիր (գողացվում էիր)
3-րդ » աղայր (աղացվում էր) — գողանայր (գողացվում էր)

Հոգնակի թ.

1-ին դ. աղայաք (աղացվում էինք) — գողանայաք (գողացվում էինք)
2-րդ » աղայիք (աղացվում էիք) — գողանայիք (գողացվում էիք)
3-րդ » աղային (աղացվում էին) — գողանային (գողացվում էին)

Մնալ, զարմանալ՝ *չունեն (չեկաք են)*։

### Զ. խոնարհում

§ 209. *Խոնարհման վերջավորություններն են՝*

| Ներգործական | | Կրավորական |
|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | |
| *1-ին դեմք —ուի* | *—ուաք* | |
| *2-րդ » —ուիր* | *—ուիք* | *նույնը* |
| *3-րդ » —ույր* | *—ուին* | |

Խոնարհման օրինակներ

Ներգործական

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| 1-ին դ. կիզուի (այրում էի) | կիզուաք (այրում էինք) |
| 2-րդ » կիզուիր (այրում էիր) | կիզուիք (այրում էիք) |
| 3-րդ » կիզույր (այրում էր) | կիզուին (այրում էին) |

1-ին դ. ջեռնուի (տաքանում էի) — ջեռնուաք (տաքանում էինք)
2-րդ » ջեռնուիր (տաքանում էիր) — ջեռնուիք (տաքանում էիք)
3-րդ » ջեռնոյր (տաքանում էր) — ջեռնուին (տաքանում էին)

Կրավորական

Եզակի թ. — Հոգնակի թ.

1-ին դ. կիզուի (այրվում էի) — կիզուաք (այրվում էինք)
2-րդ » կիզուիր (այրվում էիր) — կիզուիք (այրվում էիք)
3-րդ » կիզոյր (այրվում էր) — կիզուին (այրվում էին)

Ջեռնուլ՝ չունի (չեզոք է)։

## ԱՌԱՋԻՆ ԱՊԱՌՆԻ

§ 210. Այս ժամանակը համապատասխանում է աշխարհաբարի ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակներին։ Յուրաքանչյուր ժամանակի կոնկրետությունն ըստ նշանակության կարելի է տարբերել նախադասության մեջ։

§ 211. Առաջին ապառնի ժամանակում և՛ ներգործական, և՛ կրավորական վերջավորություններ ունեն Ե և Ա խոնարհման բայերը, Ի խոնարհման բայերը ունեն կրավորական վերջավորություններ, իսկ Ու խոնարհման բայերը՝ ընդհանուր վերջավորություններ։

### Ե խոնարհում

§ 212. Խոնարհման վերջավորություններն են՝

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դեմք | —իցեմ | —իցեմք | —իցիմ | —իցիմք |
| 2-րդ » | —իցես | —իցէք | —իցիս | —իցիք |
| 3-րդ » | —իցէ | —իցեն | —իցի | —իցին |

§ 213. Ներգործական վերջավորությունները ստանում են Ե խոնարհման պատկանող բոլոր բայերը, իսկ կրավորական վերջավորությունները կարող են ստանալ նույն խոնարհման ներգործական սեռի բայերը, որոնք այս դեպքում արդեն կունենան կրավորական սեռի նշանակություն։



### Խոնարհման օրինակներ

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ. շարժիցեմ (շարժեմ, կշարժեմ, պիտի շարժեմ)
2-րդ » շարժիցես (շարժես, կշարժես, պիտի շարժես)
3-րդ » շարժիցէ (շարժի, կշարժի, պիտի շարժի)

1-ին դ. գտանիցեմ (գտնեմ, կգտնեմ, պիտի գտնեմ)
2-րդ » գտանիցես (գտնես, կգտնես, պիտի գտնես)
3-րդ » գտանիցէ (գտնի, կգտնի, պիտի գտնի)

Հոգնակի թ.

1-ին դ. շարժիցեմք (շարժենք, կշարժենք, պիտի շարժենք)
2-րդ » շարժիցէք (շարժեք, կշարժեք, պիտի շարժեք)
3-րդ » շարժիցեն (շարժեն, կշարժեն, պիտի շարժեն)

1-ին դ. գտանիցեմք (գտնենք, կգտնենք, պիտի գտնենք)
2-րդ » գտանիցէք (գտնեք, կգտնեք, պիտի գտնեք)
3-րդ » գտանիցեն (գտնեն, կգտնեն, պիտի գտնեն)

Կրավորական

Եզակի թ.

1-ին դ. շարժիցիմ (շարժվեմ, կշարժվեմ, պիտի շարժվեմ)
2-րդ » շարժիցիս (շարժվես, կշարժվես, պիտի շարժվես)
3-րդ » շարժիցի (շարժվի, կշարժվի, պիտի շարժվի)

1-ին դ. գտանիցիմ (գտնվեմ, կգտնվեմ, պիտի գտնվեմ)
2-րդ » գտանիցիս (գտնվես, կգտնվես, պիտի գտնվես)
3-րդ » գտանիցի (գտնվի, կգտնվի, պիտի գտնվի)

Հոգնակի թ.

1-ին դ. շարժիցիմք (շարժվենք, կշարժվենք, պիտի շարժվենք)
2-րդ » շարժիցիք (շարժվեք, կշարժվեք, պիտի շարժվեք)
3-րդ » շարժիցին (շարժվեն, կշարժվեն, պիտի շարժվեն)

1-ին դ. գտանիցիմք (գտնվենք, կգտնվենք, պիտի գտնվենք)
2-րդ » գտանիցիք (գտնվեք, կգտնվեք, պիտի գտնվեք)
3-րդ » գտանիցին (գտնվեն, կգտնվեն, պիտի գտնվեն)

## Ի խոնարհում

§ 214. Այս լծորդության պատկանող բայերի խոնարհման վերջավորությունները համապատասխանում են Ե լծորդության նույն ժամանակի կրավորական վերջավորություններին. Կրավորական վերջավորությունները Ի լծորդության բայերի սեռի վրա չեն ազդում։ Այդ վերջավորություններն են՝

| Եզակի թ. | | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դեմք | —իցիմ | —իցիմք |
| 2-րդ » | —իցիս | —իցիք |
| 3-րդ » | —իցի | —իցին |

### Խոնարհման օրինակներ

Եզակի թ.

1-ին դ. նայիցիմ (նայեմ, կնայեմ, պիտի նայեմ)
2-րդ » նայիցիս (նայես, կնայես, պիտի նայես)
3-րդ » նայիցի (նայի, կնայի, պիտի նայի)

1-ին դ. անկանիցիմ (ընկնեմ, կընկնեմ, պիտի ընկնեմ)
2-րդ » անկանիցիս (ընկնես, կընկնես, պիտի ընկնես)
3-րդ » անկանիցի (ընկնի, կընկնի, պիտի ընկնի)

1-ին դ. թռչիցիմ (թռչեմ, կթռչեմ, պիտի թռչեմ)
2-րդ » թռչիցիս (թռչես, կթռչես, պիտի թռչես)
3-րդ » թռչիցի (թռչի, կթռչի, պիտի թռչի)

1-ին դ. մարտնչիցիմ (մարտնչեմ, կմարտնչեմ, պիտի մարտնչեմ)
2-րդ » մարտնչիցիս (մարտնչես, կմարտնչես, պիտի մարտնչես)
3-րդ » մարտնչիցի (մարտնչի, կմարտնչի, պիտի մարտնչի)

Հոգնակի թ.

1-ին դ. նայիցիմք (նայենք, կնայենք, պիտի նայենք)
2-րդ » նայիցիք (նայեք, կնայեք, պիտի նայեք)
3-րդ » նայիցին (նայեն, կնայեն, պիտի նայեն)

1-ին դ. անկանիցիմք (ընկնենք, կընկնենք, պիտի ընկնենք)
2-րդ » անկանիցիք (ընկնեք, կընկնեք, պիտի ընկնեք)
3-րդ » անկանիցին (ընկնեն, կընկնեն, պիտի ընկնեն)



1-ին դ. թռչիցիմք (թռչենք, կթռչենք, պիտի թռչենք)
2-րդ » թռչիցիք (թռչեք, կթռչեք, պիտի թռչեք)
3-րդ » թռչիցին (թռչեն, կթռչեն, պիտի թռչեն)

1-ին դ. մարտնչիցիմք (մարտնչենք, կմարտնչենք, պիտի մարտնչենք)
2-րդ » մարտնչիցիք (մարտնչեք, կմարտնչեք, պիտի մարտնչեք)
3-րդ » մարտնչիցին (մարտնչեն, կմարտնչեն, պիտի մարտնչեն)

## Ա խոնարհում

§ 215. Խոնարհման վերջավորություններն են՝

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դեմք | —այցեմ | —այցեմք | —այցիմ | —այցիմք |
| 2-րդ » | —այցես | —այցէք | —այցիս | —այցիք |
| 3-րդ » | —այցէ | —այցեն | —այցի | —այցին |

§ 216. Այն բոլոր բայերը, որոնք պատկանում են Ա խոնարհման, ստանում են ներգործական վերջավորություններ, յուրաքանչյուրը պահպանելով իր սեռի նշանակությունը, իսկ դրանցից նաև կրավորական վերջավորություններ կարող են ստանալ միայն ներգործական սեռի բայերը, որոնք այդպիսով կդառնան կրավորական սեռի բայեր։ Այսինքն՝ այստեղ էլ նույն պատկերն է, ինչ որ տեսանք Ե խոնարհման բայերի նույն ժամանակում։

### Խոնարհման օրինակներ

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ. աղայցեմ (աղամ, կաղամ, պիտի աղամ)
2-րդ » աղայցես (աղաս, կաղաս, պիտի աղաս)
3-րդ » աղայցէ (աղա, կաղա, պիտի աղա)

1-ին դ. մնայցեմ (մնամ, կմնամ, պիտի մնամ)
2-րդ » մնայցես (մնաս, կմնաս, պիտի մնաս)
3-րդ » մնայցէ (մնա, կմնա, պիտի մնա)

1-ին դ. գողանայցեմ (*գողանամ, կգողանամ, պիտի գողանամ*)
2-րդ » գողանայցես (*գողանաս, կգողանաս, պիտի գողանաս*)
3-րդ » գողանայցէ (*գողանա, կգողանա, պիտի գողանա*)

1-ին դ. զարմանայցեմ (*զարմանամ, կզարմանամ, պիտի զարմանամ*)
2-րդ » զարմանայցես (*զարմանաս, կզարմանաս, պիտի զարմանաս*)
3-րդ » զարմանայցէ (*զարմանա, կզարմանա, պիտի զարմանա*)

Հոգնակի թ.

1-ին դ. աղայցեմք (*աղանք, կաղանք, պիտի աղանք*)
2-րդ » աղայցէք (*աղաք, կաղաք, պիտի աղաք*)
3-րդ » աղայցեն (*աղան, կաղան, պիտի աղան*)

1-ին դ. մնայցեմք (*մնանք, կմնանք, պիտի մնանք*)
2-րդ » մնայցէք (*մնաք, կմնաք, պիտի մնաք*)
3-րդ » մնայցեն (*մնան, կմնան, պիտի մնան*)

1-ին դ. **գողանայցեմք** (*գողանանք, կգողանանք, պիտի գողանանք*)
2-րդ » գողանայցէք (*գողանաք, կգողանաք, պիտի գողանաք*)
3-րդ » գողանայցեն (*գողանան, կգողանան, պիտի գողանան*)

1-ին դ. զարմանայցեմք (*զարմանանք, կզարմանանք, պիտի զարմանանք*)
2-րդ » զարմանայցէք (*զարմանաք, կզարմանաք, պիտի զարմանաք*)
3-րդ » զարմանայցեն (*զարմանան, կզարմանան, պիտի զարմանան*)

Կրավորական

Եզակի թ.

1-ին դ. աղայցիմ (*աղացվեմ, կաղացվեմ, պիտի աղացվեմ*)
2-րդ » աղայցիս (*աղացվես, կաղացվես, պիտի աղացվես*)
3-րդ » աղայցի (*աղացվի, կաղացվի, պիտի աղացվի*)

1-ին դ. գողանայցիմ (*գողացվեմ, կգողացվեմ, պիտի գողացվեմ*)
2-րդ » գողանայցիս (*գողացվես, կգողացվես, պիտի գողացվես*)
3-րդ » գողանայցի (*գողացվի, կգողացվի, պիտի գողացվի*)



Հոգնակի թ.

1-ին դ. աղայցիմք (*աղացվենք, կաղացվենք, պիտի աղացվենք*)
2-րդ » աղայցիք (*աղացվեք, կաղացվեք, պիտի աղացվեք*)
3-րդ » աղայցին (*աղացվեն, կաղացվեն, պիտի աղացվեն*)

1-ին դ. գողանայցիմք (*գողացվենք, կգողացվենք, պիտի գողացվենք*)
2-րդ » գողանայցիք (*գողացվեք, կգողացվեք, պիտի գողացվեք*)
3-րդ » գողանայցին (*գողացվեն, կգողացվեն, պիտի գողացվեն*)

Մնալ և զարմանալ *բայերը լինելով չեզոք սեռի՝ այստեղ կրավորական չեն խոնարհվում։*

### Ու. խոնարհում

§ 217. *Խոնարհման վերջավորություններն են՝*

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| *1-ին դեմք* | *—ուցում* | *—ուցումք* | | |
| *2-րդ »* | *—ուցուս* | *—ուցուք* | *նույնը* | |
| *3-րդ »* | *—ուցու* | *—ուցուն* | | |

Խոնարհման օրինակներ

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ. կիզուցում (*այրեմ, կայրեմ, պիտի այրեմ*)
2-րդ » կիզուցուս (*այրես, կայրես, պիտի այրես*)
3-րդ » կիզուցու (*այրի, կայրի, պիտի այրի*)

1-ին դ. ջեռուցում (*տաքանամ, կտաքանամ, պիտի տաքանամ*)
2-րդ » ջեռուցուս (*տաքանաս, կտաքանաս, պիտի տաքանաս*)
3-րդ » ջեռուցու (*տաքանա, կտաքանա, պիտի տաքանա*)

Հոգնակի թ.

1-ին դ. կիզուցումք (*այրենք, կայրենք, պիտի այրենք*)
2-րդ » կիզուցուք (*այրեք, կայրեք, պիտի այրեք*)
3-րդ » կիզուցուն (*այրեն, կայրեն, պիտի այրեն*)

1-ին դ. ջեռուցումք (տաքանանք, կտաքանանք, պիտի տաքանանք)
2-րդ » ջեռուցուք (տաքանաք, կտաքանաք, պիտի տաքանաք)
3-րդ » ջեռուցուն (տաքանան, կտաքանան, պիտի տաքանան)

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. կիզուցում (այրվեմ, կայրվեմ, պիտի այրվեմ)
2-րդ » կիզուցուս (այրվես, կայրվես, պիտի այրվես)
3-րդ » կիզուցու (այրվի, կայրվի, պիտի այրվի)

Հոգնակի թ.

1-ին դ. կիզուցումք (այրվենք, կայրվենք, պիտի այրվենք)
2-րդ » կիզուցուք (այրվեք, կայրվեք, պիտի այրվեք)
3-րդ » կիզուցուն (այրվեն, կայրվեն, պիտի այրվեն)

Ջեռնուլ բայը որպես չեզոք սեռի բայ միայն մի կերպ է խոնարհվում։

## ԱՐԳԵԼԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ

§ 218. Արգելական հրամայականը իմաստով համապատասխանում է աշխարհաբարի համանուն ձևին, սակայն միայն երկրորդ դեմքի եզակի թվում ունենում է ր վերջավորություն, հոգնակի թվում համընկնում է ներկայի նույն դեմքին։ Այս նկատի ունենալով՝ ավելի հարմար է այն կազմել բայի ներկա ժամանակի երկրորդ դեմքից. եզակի թվում ներկայի ս վերջավորությունը փոխարինվում է ր-ով, իսկ հոգնակին մնում է նույնությամբ, բայց երկու ձևերին էլ ավելանում է մի՛ արգելականը։

§ 219. Արգելական հրամայականում խոնարհման ձևերը նույն վիճակն ունեն, ինչ ներկա ժամանակում, այսինքն՝ Ե խոնարհման բայերն ունեն և՛ ներգործաձև (—եր, —էք), և՛ կրավորաձև (—իր, —իք) վերջավորություններ. ներգործաձև խոնարհվում են այդ խոնարհման բոլոր բայերը, կրավորաձև կարող են խոնարհվել միայն ներգործական սեռի բայերը, դառնալով կրավորական սեռի։ Ի խոնարհման բայերն ունեն միայն կրավորաձև վերջավորություններ (—իր, —իք), Ա և Ու խոնարհումների բայերը՝ ընդհանուր վերջավորություններ (—ար, —այք, —ուր, —ուք)։



§ 220. **Ե խոնարհում**

Ներգործաձև

| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| մի՛ շարժեր (մի՛ շարժիր) | մի՛ շարժէք (մի՛ շարժեք) | մի՛ գտաներ (մի՛ գտնիր) | մի՛ գտանէք (մի՛ գտնեք) |

Կրավորաձև

| | | | |
|---|---|---|---|
| մի՛ շարժիր (մի՛ շարժվիր) | մի՛ շարժիք (մի՛ շարժվեք) | մի՛ գտանիր (մի՛ գտնվիր) | մի՛ գտանիք (մի՛ գտնվեք) |

§ 221. **Ի խոնարհում**

Կրավորաձև

| | | | |
|---|---|---|---|
| մի՛ նայիր (մի՛ նայիր) | մի՛ նայիք (մի՛ նայեք) | մի՛ անկանիր (մի՛ ընկնիր) | մի՛ անկանիք (մի՛ ընկնեք) |
| | | մի՛ թռչիր | մի՛ թռչիք |
| | | մի՛ մատչիր | մի՛ մատչիք |

§ 222. **Ա խոնարհում**

Ներգործաձև

| | | | |
|---|---|---|---|
| մի՛ աղար (մի՛ աղա) | մի՛ աղայք (մի՛ աղաք) | մի՛ գողանար (մի՛ գողանա) | մի՛ գողանայք (մի՛ գողանաք) |
| մի՛ մնար (մի՛ մնա) | մի՛ մնայք (մի՛ մնաք) | մի՛ զարմանար (մի՛ զարմանա) | մի՛ զարմանայք (մի՛ զարմանաք) |

Կրավորաձև

| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| մի՛ աղար (մի՛ աղացվիր) | մի՛ աղայք (մի՛ աղացվեք) | մի՛ գողանար (մի՛ գողացվիր) | մի՛ գողանայք (մի՛ գողացվեք) |

Մնալ և զարմանալ բայերը չեզոք սեռի լինելով՝ այստեղ ևս մի կերպ են խոնարհվում։

Ներգործական

| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| մի՛ կիզուր | մի՛ կիզուք | մի՛ ջեռնուր | մի՛ ջեռնուք |
| (մի՛ այրիր) | (մի՛ այրեք) | (մի՛ տաքացիր) | (մի՛ տաքացեք) |

Կրավորական

| Եզակի թ. | Հոգնակի թ. | |
|---|---|---|
| մի՛ կիզուր | մի՛ կիզուք | Չունի։ |
| (մի՛ այրվիր) | (մի՛ այրվեք) | |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այստեղ ևս կրավորական խոնարհման ձևերում կրկնել ենք ընդհանուր ձևերը ներգործական սեռի բայերի համար, որպեսզի ցույց տանք, որ նույն ձևով նրանք արտահայտում են նաև կրավորական սեռի իմաստ, իսկ չեզոք սեռի բայերը չենք կրկնել, որովհետև բոլոր դեպքերում նրանք չեզոք են։

## ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

§ 224. Առանձին առիթներով վերը արդեն խոսվել է անորոշ դերբայի մասին։ Այստեղ այն հիշատակում ենք ներկայի հիմքից կազմվող ձևերի ամբողջականության համար։

Ինչպես նշել ենք, ներկայի հիմքը գտնելու համար վերցնում ենք բայը անորոշ դերբայի ձևով և հեռացնում դերբայական մասնիկները. իսկ դա նշանակում է, որ անորոշ դերբայը կազմված է ներկայի հիմքից և համապատասխան դերբայական մասնիկներից՝ ալ, ել, իլ (իլ), ուլ։

§ 225. Անորոշ դերբայում ներգործական և կրավորական խոնարհումների համար առանձնակի դերբայական մասնիկներ չկան։ Հիշյալ մասնիկներն ընդհանուր են, ուստի նույն ձևով կարող են արտահայտել տարբեր սեռերի նշանակություն։

Անորոշ դերբայում Ի խոնարհիչը փոխվում է Ե-ի ոչ միայն Ի խոնարհման բայերի մեջ, այլև Ե խոնարհման բայերի մեջ այն դեպքում, երբ դրանք արտահայտում են կրավորական սեռի նշանակություն։ -Իլ մասնիկի գործածությունն անորոշ դերբայում ընդհանրապես համեմատաբար ուշ շրջանում։ Միջնադարյան շրջանի երկերում նա շատ հազվադեպ է։



Մեր վերցրած բայերը անորոշ դերբայում կունենան հետևյալ ձևերը՝ շարժել, գտանել, հայել, անկանել, թաչել, մարանչել, աղալ, մնալ, գողանալ, զարմանալ, կիզուլ, ջեռնուլ։

Ինչպես տեսնում ենք, սրանց մեջ կան և՛ ներգործական, և՛ չեզոք սեռի բայեր։ Կրավորական սեռի իմաստ կարող են արտահայտել միայն ներգործականները, սակայն դրանք անորոշ դերբայում առանձին ձև չեն ունենա, կրավորական սեռի իմաստը կարող են արտահայտել նույն ձևով, ինչպես՝ շարժել (շարժվել), գտանել (գտնվել), աղալ (աղացվել), գողանալ (գողացվել), կիզուլ (այրվել)։ Սեռի տարբերությունը այս դեպքում որոշվում է ըստ կիրառության։

## ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

§ 226. Ապառնի դերբայը գրաբարում երկու տարբերակ ունի։ Դրանցից մեկը ձևավորվում է -ոց, իսկ մյուսը՝ -ի մասնիկով։ Դերբայական այս մասնիկները դրվում են անորոշ դերբայի վրա։ Այստեղ ևս Ե և Ի խոնարհումների բայերը ձևական տարբերություններ չեն ունենում, որովհետև Ի խոնարհիչը փոխված է լինում Ե խոնարհիչի, ինչպես՝ շարժել—շարժելոց, շարժելի, գտանել—գտանելոց, գտանելի, հայել—հայելոց, հայելի, անկանել—անկանելոց, անկանելի, թաչել—թաչելոց, թաչելի, մարանչել—մարանչելոց, մարանչելի։ Իսկ Ու խոնարհման բայերում Ու խոնարհիչը պահվում է, օրինակ՝ արգելուլ—արգելլոց, արգելլի, թողուլ—թողլոց, թողլի, ջեռնուլ—ջեռնլոց, ջեռնլի։ Ա խոնարհման բայերում այդ կարգի փոփոխություններ չեն լինում, մասնիկներն ուղղակի դրվում են անորոշ դերբայի վրա ու ձևավորում ապառնի դերբայը, օրինակ՝ աղալ—աղալոց, աղալի, մնալ—մնալոց, մնալի, գողանալ—գողանալոց, գողանալի, զարմանալ—զարմանալոց, զարմանալի, տանալ—տանալոց, տանալի և այլն։

Առանձին քերականներ -ոց մասնիկով ապառնի դերբայը յուրահատուկ են համարում ներգործական սեռին, իսկ -ի մասնիկով ձևը՝ կրավորականին։ Սակայն սխալ է որոշակիորեն այդ տարբերությունը դնել. թե՛ մեկը, թե՛ մյուսը ընդհանուր են բոլոր սեռերի համար։ Միայն պետք է նկատի ունենալ, որ ներգործական սեռի բայերի ապառնի դերբայի -ի մասնիկով կազմված տարբերակը կարող է արտահայտել նաև ենթակայական դերբայի նշանակություն, օրինակ՝ տանելի=տանող, կատարող (Գործ. Առաք., Ա, 25). կրելի=կրող (Եզնիկ, I, ժԷ, էջ 44)։

## ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԸ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԱԶՄՎՈՂ ՁԵՎԵՐԸ

§ 227. *Անցյալ կատարյալի հիմքն ըստ կազմության երկու տեսակ է լինում՝ ա) արմատական, բ) բաղադրյալ։*

§ 228. Արմատական հիմքը *համընկնում է բայարմատին։ Բայարմատը հանդես է գալիս որպես անցյալ կատարյալի հիմք, օրինակ՝*

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| նկանել | *արմատ՝* | նկ. | *անց.* | *կատարյալի* | *հիմք՝* | | նկ |
| իջանել | » | էջ | » | » | » | | էջ (*անշեշտ՝ իջ*) |
| նստանել | » | նստ | » | » | » | | նստ |
| անկանել (*անկանիմ*) | | անկ | » | » | » | | անկ |
| սնանել (*սնանիմ*) | | սուն | » | » | » | | սուն (*անշեշտ՝ սն*) |
| թողուլ | » | թող | » | » | » | | թող |
| հեղուլ | » | հեղ | » | » | » | | հեղ |
| ջեռնուլ | » | ջեռ[1] | » | » | » | | ջեռ |
| զրօսնուլ | » | զրօս | » | » | » | | զրօս |

§ 229. Բաղադրյալ հիմքը *ըստ իր մեջ մտնող բաղադրիչների երկու տեսակ է ունենում՝ ա) ցոյական հիմք, բ)* ի *թույլ բաղադրիչ ունեցող հիմք։*

Ցոյական հիմք *է կոչվում անցյալ կատարյալի այնպիսի հիմքը, որը բայարմատի հետ ունենում է նաև* աց, եաց (*անշեշտ՝* եց), *օրինակ՝*

| | | | | |
|---|---|---|---|---|
| աղալ | *անցյալ* | *կատարյալի* | *հիմք՝* | աղաց |
| ունալ | » | » | » | ունաց |
| խաղալ | » | » | » | խաղաց |
| զոնալ | » | » | » | զոնաց |
| ննջալ | » | » | » | ննջաց |
| կարծել | » | » | » | կարծեաց (*անշեշտ՝* կարծեց) |
| պահել | » | » | » | պահեաց (*անշեշտ՝* պահեց) |
| սիրել | » | » | » | սիրեաց (*անշեշտ՝* սիրեց) |
| բազմել (*իմ*) | » | » | » | բազմեաց (*անշեշտ՝* բազմեց) |
| ծիծաղել (*իմ*) | » | » | » | ծիծաղեաց (*անշեշտ՝* ծիծաղեց) |

[1] *Ավելի նախնական՝ ջեր։*



Ի *թույլ բաղադրիչ* ունեցող հիմք *է կոչվում անցյալ կատարյալի այնպիսի հիմքը, որը բայարմատից բացի ունի նաև* ի *բաղադրիչ, օրինակ՝*

| | | | | |
|---|---|---|---|---|
| եկեղել (*եկեղիմ*) | *անցյալ* | *կատարյալի* | *հիմք՝* | եկի |
| թռչել (*թռչիմ*) | » | » | » | թռի |
| կորնչել (*կորնչիմ*) | » | » | » | կորի |
| փախչել (*փախչիմ*) | » | » | » | փախի |
| առնուլ | » | » | » | առի |
| զարթնուլ | » | » | » | զարթի |
| մտանել | » | » | » | մտի |

*Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերով բայերը խոնարհելու համար շատ կարևոր նշանակություն ունի հիմքի որոշումը. անհրաժեշտ է իմանալ, թե ո՞ր բայը ի՞նչ տիպի հիմք է ունենում։ Վերցնենք հիմքի տիպերն ըստ լծորդությունների (խոնարհումների)։*

## ԲԱՅԵՐԻ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ

### Ե խոնարհում

**§ 230.** Ե *խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի հիմքը բաղադրյալ-ցոյական է, ըստ որում բայարմատի հետ հանդես է գալիս* եաց *բաղադրիչը*[1], *որը շեշտազրկության դեպքում դառնում է* եց: *Օրինակներ՝ ատաբել—ատաբեաց, բուծել—բուծեաց, բրել—բրեաց, գործել—գործեաց, գրել—գրեաց, երգել—երգեաց, խնդրել—խնդրեաց, կատարել—կատարեաց, կարդել—կարդեաց, կարել (=չար կարել)— կարեաց, կարծել—կարծեաց, կարօտել—կարօտեաց, կեղեքել—կեղեքեաց, հերկել—հերկեաց, յարել—յարեաց, շարժել—շարժեաց, պահել—պահեաց, սիրել—սիրեաց, վաղել—վաղեաց, քայլել—քայլեաց և այլն։*

*Հետևյալ հինգ բայերը անցյալ կատարյալի հիմքում ունենում են* աց *բաղադրիչը՝* ասել—ասաց, գիտել—գիտաց, կարել (=*կարողանալ*)—կարաց, մարթել—մարթաց, մերկել—մերկաց:

[1] *Եթե բայարմատին հաջորդում են բառակազմական ածանցներ կամ բաղադրող (ինչպես նաև բաղձաստականական) բայածանցներ, ապա այս դեպքում հիմքի բաղադրիչը դրվում է դրանցից հետո, ինչպես՝ չարչարել—չարչարեաց, մեծարել—մեծարեաց, աղաչել—աղաչեաց, փոփոխել—փոփոխեաց և այլն։*

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գիտել և մերկել բայերը առանձին ձևերում պահպանել են նաև բաղադրիչի հետքերը (գիտեա՛, մերկեա՛, մերկեաց): Մարել բայը նաև բաղադրիչով այլ նշանակություն ունի՝ ճարել, ճարահարել, իսկ մարքանալ ձևը բառ կանանի աց բաղադրիչով է. նույնպես պետք է հիշել մերկել բայի զուգաձևը՝ մերկանալ, որը կանոնավորապես աց բաղադրիչով է:

Այս խոնարհման պարզ բայերից բացառություն են կազմում ածել, բերել, ճաճել, ճեղուել (=գամել, մեխել, մխրճել) և մասամբ էլ համբերել բայերը, որոնք ունենում են անցյալական հիմք, այսպես՝ ածել—ած, բերել—բեր, ճաճել—ճաճ, ճեղուել—ճեղոյս, համբերել—համբեր կամ համբերեաց:

§ 231. Ե խոնարհման ածանցավոր բայերը արմատական հիմք ունեն, այսինքն ածանցները դուրս են ընկնում, օրինակ՝ անցանել—անց, արկանել—արկ, բեկանել—բեկ, բուծանել—բույծ (անցյալ՝ բուծ), գտանել—գիտ (անցյալ՝ գտ), ելանել—ել, եղծանել—եղծ, զարկանել—զարկ, իջանել—էջ (անցյալ՝ իջ), լուցանել—լույց (անցյալ՝ լուց), լքանել—լիք (անցյալ՝ լք), հասանել—հաս, հատանել—հատ, հարկանել—հար[1], հարցանել—հարց, մտանել—մուտ (անցյալ՝ մտ), սպանանել—սպան, տեսանել—տես, ցուցանել—ցույց (անցյալ՝ ցուց) օծանել—օծ և այլն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Բազմապատկական ածանցներ ունեցող բայերն անցյալ կատարյալի հիմքում լինում են Ե խոնարհման պարզ բայերի նման՝ բաղադրյալ-ցույական, [illegible]րում ածանցները հիմքում պահպանվում են, օրինակ՝ խածատել—խածատեաց, խոցատել—խոցատեաց, փաղատել—փաղատեաց, բեկատել—բեկատեաց:

### Ի խոնարհում

§ 232. Ի խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի հիմքը բաղադրյալ-ցույական է, բայարմատի հետ հանդես է գալիս եաց (անցյալ՝ եց) բաղադրիչը, օրինակ՝ բազմել (բազմիմ)—բազմեաց, խորհել (խորհիմ)—խորհեաց, ծածանել (ծածանիմ)—ծածանեաց, ծիծաղել (ծիծաղիմ)—ծիծաղեաց, կամել (կամիմ)—կամեաց, հոյել (հոյիմ)—հոյեաց, նայել (նայիմ)—նայեաց, շրջել (շրջիմ)—շրջեաց, ողորմել (ողորմիմ)—ողորմեաց, սատանել (սատանիմ)—սատանեաց և այլն:

[1] Այստեղ ածանցի հետ դուրս է ընկնում նաև կ բաղաձայնը: Այս բայի արմատն է հար, կ բաղաձայնը նրա մեջ հավելյալ գործածություն ունի:



Բացառություն է կազմում նստել (նստիմ) բայը, որն արմատական հիմք է ունենում՝ նիստ (անցյալ՝ նստ):

Այստեղ խոսքը չի վերաբերում նաև սակավ գործածված բային (=ամփոփել, կծկել), որը իբրև Ե խոնարհման պարզ բայ բաղադրյալ-ցույական հիմքով է:

§ 233. Այս խոնարհման պատկանող ան ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալի հիմքում լինում են արմատական, ան ածանցը դուրս է ընկնում, և բայարմատը ծառայում է որպես հիմք, օրինակ՝ ագանել (ագանիմ)—ագ, անկանել (անկանիմ)—անկ, բուսանել (բուսանիմ)—բույս (անցյալ՝ բուս), ծնանել (ծնանիմ)—ծին (անցյալ՝ ծն), մեռանել (մեռանիմ)—մեռ, չքանել (չքանիմ)—չիք (անցյալ՝ չք), ուսանել (ուսանիմ)—ուս, սկսանել (սկսանիմ)—սկիս (անցյալ՝ սկս), սնանել (սնանիմ)—սուն (անցյալ՝ սն) և այլն:

§ 234. Չ և նչ ածանցներ ունեցող բայերը (որոնք բոլորն էլ պատկանում են Ի խոնարհման) հանդես են գալիս ի ձույլ բաղադրիչ ունեցող բաղադրական հիմքով. բայարմատին կցվում է ի բաղադրիչը, իսկ չ և նչ ածանցները դուրս են ընկնում, օրինակ՝ երկնչել (երկնչիմ)—երկի, թռչել (թռչիմ)—թռի, կառչել (կառչիմ)—կառի, կորնչել (կորնչիմ)—կորի, հանգչել (հանգչիմ)—հանգի, մատչել (մատչիմ)—մատի, մարտնչել (մարտնչիմ)—մարտի, յարնչել (յարնչիմ)—յարի, փախչել (փախչիմ)—փախի և այլն: Սրանցից այն բայերը, որոնք ունենում են Ն ածանցով և Ու խոնարհման տարբերակներ, վերջիններիս մեջ ևս հանդես են գալիս նշված տիպի հիմքով (թռչնուլ—թռի, մատնուլ—մատի և այլն):

### Ա խոնարհում

§ 235. Ա խոնարհման բոլոր բայերի (թե՛ պարզ, թե՛ ածանցավոր) անցյալ կատարյալի հիմքը բաղադրյալ-ցույական է: Այստեղ բայարմատի հետ հանդես է գալիս աց բաղադրիչը, օրինակ՝ աղալ—աղաց, ամալ—ամաց, անոալ—անոաց, գթալ—գթաց, գնալ—գնաց, գոալ—գոաց, գլալ—գլաց, դողալ—դողաց, եռալ—եռաց, զգալ—զգաց, լալ—լաց, խաղալ—խաղաց, խայտալ—խայտաց, խնդալ—խնդաց, խոկալ—խոկաց, հոգալ—հոգաց, մկթալ (կամ մքթալ)—մկթաց (կամ մքթաց), մնալ—մնաց, յուսալ—յուսաց, ողբալ—ողբաց, որսալ—որսաց, ջանալ—ջանաց, սգալ—սգաց, տոկալ—տոկաց, ցնծալ—ցնծաց, փութալ—փութաց և այլն:

§ 236. Ածանցավոր բայերի անցյալ կատարյալի հիմքում ածանցները դուրս են ընկնում, և նրանց տեղը գրավում է հիմքի բաղադրիչը, օրինակ՝ բարձրանալ—բարձրաց, դոհանալ—դոհաց,

հողանալ—հողաց, զարմանալ—զարմաց, իմանալ—իմաց, լուանալ—լուաց, հնանալ—հնաց, մեծանալ—մեծաց, մերկանալ—մերկաց, մոռանալ—մոռաց, ուռանալ—ուռաց, ստանալ—ստաց և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Ա խոնարհման են ածանց ունեցող բայերը անցյալ կատարյալի հիմքում ստանում են եաց (եց) բաղադրիչը, օրինակ՝ մերձենալ—մերձեաց (մերձեց), յագենալ—յագեաց (յագեց)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Բառնալ և դառնալ բայերի անցյալ կատարյալի հիմքում վերականգնվում է արմատի ձ հնչյունը (բարձ, դարձ), որը ներկա ժամանակում հիմքից դուրս է ընկել։

Բանալ և թանալ բայերի հիմքերն անցյալ կատարյալում լինում են՝ բաց, թաց։ Թանալ բայի հնագույն արմատը եղել է թա («Արմ. բառ.», հատ. II, էջ 1120), նշանակում է ց-ն կատարյալի հիմքում մուծվում է։ Այս ճանապարհով գոյացել է արմատի թաց տարբերակը։ Թերևս նույնը կարելի է ասել բաց արմատաձևի գոյացման մասին, սակայն բանալ բայի արմատի սկզբնաձևը առայժմ հայտնի չէ։

## Ու խոնարհում

§ 237. Ու խոնարհման բայերի անցյալ կատարյալի հիմքը հիմնականում արմատական է, բայարմատը հիմքի դեր է կատարում, օրինակ՝ արգելուլ—արգել, գելուլ—գել, զենուլ—զեն, թողուլ—թող, լեզուլ—լեզ, լնուլ—լնու, կասուլ—կաս, կիզուլ—կէզ (անշեշտ՝ կիզ), հարուլ—հար, հեղուլ—հեղ, յանկուլ—յանկ, յեղուլ—յեղ, յեռուլ—յեռ, ցելուլ—ցել. ածանցավոր բայերի ածանցը դուրս է ընկնում, օրինակ՝ առնուլ—առ, դրոշնուլ—դրոշ, ընկլնուլ—ընկուլ (անշեշտ՝ ընկլ), թքնուլ—թուք (անշեշտ՝ թք), կլնուլ—կուլ (անշեշտ՝ կլ), հեծնուլ—հեծ, հեղձնուլ—հեղձ, հերձնուլ—հերձ, ջեռնուլ—ջեռ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Սրանց զուգահեռ ձևերն ու տարբերակներն ըստ կազմության և լծորդության համապատասխանաբար փոխում են հիմքի տիպը, օրինակ՝ արգելուլ—արգել, բայց՝ արգելել—արգելեաց և այլն։

§ 238. Այս խոնարհման պատկանող Ն ածանց ունեցող մի խումբ բայեր անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ են ունենում, դրանք են՝ այտնուլ—այտի, զարթնուլ—զարթի, խափնուլ (=դադարել, կուրանալ)—խափի, հարթնուլ—հարթի, մածնուլ—մածի, շրջնուլ—շրջի, ոստնուլ—ոստի, ուռնուլ—ուռի, պակնուլ—պակի, պշնուլ—պշի, սարսնուլ—սարսի, ցածնուլ—ցածի, ցասնուլ—ցասի, քաղցնուլ—քաղցի։

§ 239. Ու խոնարհման բայերից վեց բայ ցոյական են համարվում, դրանք են՝ ընկենուլ (=նետել, գցել), ընթեռնուլ, զգենուլ, լնուլ, խնուլ, յենուլ (=կռթնել, հենվել)։ Կատարյալի հիմքում լինում են՝ ընկեաց (ընկեց), ընթերց, զգեց (զգեաց), լից (անշեշտ՝ լը), խից (անշեշտ՝ խց), յեց։ Ընկենուլ բայի են ածանցը դուրս է ընկնում, և արմատին ավելանում է եաց բաղադրիչը։

Զգենուլ բայի արմատն է զե (հնխ. ves —«Արմ. բառ.», II, էջ 923)։ Մյուսների մեջ ց-ն կա՛մ արմատական է, կա՛մ արմատի հնագույն ձևերից գոյացած տարբերակներից է գալիս։ Այսպես, լնուլ բայի հնագույն արմատն է լի (<հնխ. plē), որի մի տարբերակն է լից («Արմ. բառ.», III, էջ 202—204), լնուլ բայի կատարյալի հիմքը և արմատի հիշյալ տարբերակը համընկնում են։ Ընթեռնուլ կազմվել է ընդ նախդիրից և բերց ենթադրյալ արմատաձևից («Արմ. բառ.», II, էջ 1046—1047)։ Խնուլ և յենուլ բայերի համար գոյություն ունեն խից և յեց արմատները («Արմ. բառ.», III, էջ 503—504, IV, էջ 1284—1285)։

## ՆԵՐԳՈՐԾԱՁԵՎ ԵՎ ԿՐԱՎՈՐԱՁԵՎ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԸ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԻՑ ԿԱԶՄՎՈՂ ԴԻՄԱՎՈՐ ՁԵՎԵՐՈՒՄ

§ 240. Արդեն նշվել է (§ 192), որ դիմավոր ձևերից անցյալ կատարյալի հիմքից կազմվում են անցյալ կատարյալը, երկրորդ ապառնին, հրամայական եղանակի ներկան (բուն հրամայականը), հրամայական եղանակի ապառնին (հորդորական հրամայականը)։ Բացի վերջինից, մյուս բոլորն ունեն երկու տիպի վերջավորություններ՝ ներգործաձև և կրավորաձև, ասել է՝ ներգործաձև և կրավորաձև խոնարհումներ։

Այժմ տեսնենք խոնարհման այդ ձևերն ըստ առանձին լծորդությունների։

§ 241. Ե խոնարհման բոլոր բայերը հիշյալ ձևերում խոնարհվում են ներգործաձև, իսկ ներգործական սեռի բայերը ըստ պահանջի կարող են խոնարհվել նաև կրավորաձև՝ ստանալով կրավորական սեռի նշանակություն։

§ 242. Ի խոնարհման բոլոր բայերը, անկախ սեռից, անցյալ կատարյալի հիմքից կազմվող դիմավոր ձևերում խոնարհվում են միայն կրավորաձև։

§ 243. Ա խոնարհման պարզ բայերը անցյալ կատարյալի հիմքից կազմվող դիմավոր ձևերում խոնարհվում են ներգործաձև, ըստ պահանջի դրանցից ներգործական սեռին պատկանողները կարող են խոնարհվել նաև կրավորաձև, այս դեպքում արդեն ստանում են կրավորական սեռի նշանակություն։

Կան բացառություններ՝ ա) գթալ, յուսալ, փութալ, խիթալ (=կասկածել, վախել, խեթ նայել, ատարանել) բայերը խոնարհվում են միայն կրավորաձև՝ յուսացայ, գթացայ, փութացայ, խիթացայ, բ) մի շարք բայեր, անկախ սեռից, զուգահեռաբար խոնարհվում են ներգործաձև և կրավորաձև. այդ բայերից են՝ դառնալ—դառնացայ || դառնացի, կշտալ—կշտացայ || կշտացի, գլալ—գլացայ || գլացի, դողալ—դողացայ || դողացի, եռալ—եռացի || եռացայ, զեռալ (=սողալ, վխտալ)—զեռացի || զեռացայ, խանդալ (=նախանձել)—խանդացայ || խանդացի, խեթալ (=ծուռ նայել, ոխ պահել)—խեթացի || խեթացայ, խոկալ—խոկացի || խոկացայ, հոգալ—հոգացայ || հոգացի, շոգալ—շոգացայ || շոգացի, ողբալ—ողբացի || ողբացայ, ռնչալ—ռնչացի || ռնչացայ, որսալ—որսացայ || որսացի, պիտալ (=պետք ունենալ, կարոտել)—պիտացայ || պիտացի, ջանալ—ջանացայ || ջանացի, սգալ—սգացայ || սգացի, սիգալ (=հպարտանալ, պարծենալ)—սիգացայ || սիգացի, ցնծալ ցնծացայ || ցնծացի։

Չի կարելի պնդել, թե այս բայերը հավասարապես կիրառվում են խոնարհման երկու ձևերով։ Դրանց խոնարհման մեջ սովորաբար իշխում է մի ձևը։ Այսպես օրինակ՝ եռալ, զեռալ, խեթալ, խոկալ, ողբալ, ռնչալ բայերը ավելի շատ խոնարհվում են ներգործաձև, իսկ մյուսները՝ դառնալ, կշտալ, գլալ, դողալ, խանդալ, հոգալ, շոգալ, որսալ, պիտալ, ջանալ, սգալ, սիգալ, ցնծալ՝ ավելի շատ կրավորաձև։

Ա խոնարհման ածանցավոր բայերը խոնարհվում են կրավորաձև (անկախ սեռից)։ Բացառություն են կազմում **բանալ**, **բառնալ**, **լվանալ**, **մերկանալ** բայերը, որոնք խոնարհվում են ներգործաձև և քանի որ բոլորն էլ ներգործական սեռի են (մերկանալ բայը գրաբարում ունի ներգործական սեռի իմաստ, հետևաբար ներգործական սեռի իմաստով է, այստեղ չենք խոսում մյուս իմաստների մասին), ուստի ըստ պահանջի կարող են խոնարհվել նաև կրավորաձև։

§ 244. Ե խոնարհման պարզ բայերը խոնարհվում են ներգործաձև, դրանց թվին պատկանող ներգործական սեռի բայերը ըստ պահանջի կարող են խոնարհվել նաև կրավորաձև (ստանալով կրավորական սեռի նշանակություն)։



Այս խոնարհման ածանցավոր բայերը խոնարհվում են կրավորաձև։ Բացառություն են կազմում առնել, ընկնել, լնել, լինել բայերը, որոնք խոնարհվում են ներգործաձև, իսկ հարկ եղած դեպքում՝ նաև կրավորաձև։

§ 245. Որևէ բայ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերով խոնարհելու համար նախ պետք է որոշել դրա հիմքը, ապա պետք է իմանալ, թե ի՛նչ ձևով է խոնարհվում տվյալ բայը և ըստ այնմ էլ ավելացնել համապատասխան վերջավորությունները։

Այժմ տեսնենք, թե ինչպիսի վերջավորություններ ունեն անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերը։

## ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼ

§ 246. Գրաբարի անցյալ կատարյալ ժամանակը իմաստով համապատասխանում է աշխարհաբարի համանուն ժամանակին։ Այն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ։ Այդ վերջավորություններն են՝

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դեմք | —ի | —աք | —այ | —աք |
| 2-րդ » | —եր | —էք, —իք | —ար | —այք |
| 3-րդ » | — | —ին | —աւ | —ան |

Սրանք ավելանում են կատարյալի հիմքին, որի վերջին ձայնավորը, բնականաբար, փոխարկվում է վերջավորության ձայնավորի վրա։ Այդ պատճառով էլ կատարյալի հիմքի վերջին վանկի ձայնավորը կամ երկբարբառը ենթարկվում է հնչյունափոխության՝ համաձայն գրաբարի հնչյունափոխական կանոնների։ Այսպես օրինակ՝ սիրեաց+ի=սիրեցի (եա>ե), լոյց+ի=լուցի (ոյ>ու), շէջ+այ=շիջայ (է>ի), գիտ+ի=գտի (ի>ը), մուտ+ի=մտի (ու>ը) և այլն[1]։

§ 247. Ինչպես ցույց է տրված՝ ներգործաձև խոնարհման դեպքում անցյալ կատարյալի եզակի թվի երրորդ դեմքը վերջավորություն չի ունենում, ուստի և այստեղ անցյալ կատարյալի հիմ-

[1] Այս փոփոխությունները կատարվում են նաև մյուս ժամանակներում, այնտեղ որտեղ հիշատակվածներից ներգործաձև խոնարհման եզակի թվի 3-րդ դեմքում հնչյունափոխված ձևերի վերականգնումը ավելի պարզ ցույց տալու նպատակով։

որ դիմավոր ձև է դառնում, իր վերջին վանկի վրա շեշտ կրելով, որի հետևանքով հնչյունափոխված ձայնավորներն ու երկբարբառները վերադառնում են իրենց նախկին վիճակին. ե—եա՝ սիրեց—սիրեա՛ց, ու—ոյ՝ լուց—լո՛յց, ի—է՝ իջ—է՛ջ, ը—ի՝ գըտ—գի՛տ, ը—ու՝ մըտ—մո՛ւտ: Այդ նույն ձևերում եթե բայը միավանկ է, սկզբից ընդունում է ե կամ է, բաց որում ե-ն ավելանում է բաղաձայնով սկսվող բայի վրա, օրինակ՝ բաղ—եբաղ, ճաշ—եճաշ, հար—եհար, մուտ—եմուտ, տես—ետես, գյց—եգյց և այլն, իսկ է-ն դրվում է ձայնավորով սկսվող բայի վրա, օրինակ՝ անց—էանց, առ—էառ, արկ—էարկ, ած—էած: Այս երևույթը կոչվում է վանկային աճեցում (augmentum sillabicum):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եթե անցյալ կատարյալի եզակի թիվ երրորդ դեմքում բայը միավանկ է և սկսվում է ե-ով կամ է-ով, վանկային աճեցում չի ունենում, օրինակ՝ ել (ելանել), էջ (իջանել):

§ 248. Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի ի թույլ բաղադրիչը, հանդիպելով վերջավորության ա ձայնավորին, հնչյունափոխվում է ե-ի, օրինակ՝ թռչել (թռչիմ), կատարյալի հիմք՝ թռի+այ=թռեայ, փախչել (փախչիմ)—փախի+այ=փախեայ, երկնչել (երկնչիմ)—երկի+այ=երկեայ, կորնչել (կորնչիմ)—կորի+այ=կորեայ, մարտնչել (մարտնչիմ)—մարտի+այ=մարտեայ, այտնուլ—այտի+այ=այտեայ, զարթնուլ—զարթի+այ=զարթեայ, մածնուլ—մածի+այ=մածեայ, սառնուլ—սառի+այ=սառեայ, ցամնուլ—ցամի+այ=ցամեայ և այլն:

Օրինակներ բոլոր առանձին խոնարհումների

§ 249. **Ա խոնարհում**

| | | | |
|---|---|---|---|
| Պարզ՝ | շարժել | Հիմք՝ | շարժեաց (բաղադրյալ-ցուցական) |
| | վազել | | վազեաց |
| Անծանցավոր՝ | գտանել | Հիմք՝ | գիտ (արմատական) |
| | իջանել | | էջ |

Ներգործական

Եզակի թ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | շարժեցի | (շարժեցի) | վազեցի | (վազեցի) |
| 2-րդ » | շարժեցեր | (շարժեցիր) | վազեցեր | (վազեցիր) |
| 3-րդ » | շարժեաց | (շարժեց) | վազեաց | (վազեց) |



| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | գտի | (գտա) | իջի | (իջա) |
| 2-րդ » | գտեր | (գտար) | իջեր | (իջար) |
| 3-րդ » | գիտ կամ եգիտ | (գտավ) | էջ | (իջավ) |

Հոգնակի թ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | շարժեցաք | (շարժեցինք) | վազեցաք | (վազեցինք) |
| 2-րդ » | շարժեցէք (իք) | (շարժեցիք) | վազեցէք (իք) | (վազեցիք) |
| 3-րդ » | շարժեցին | (շարժեցին) | վազեցին | (վազեցին) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | գտաք | (գտանք) | իջաք | (իջանք) |
| 2-րդ » | գտէք (իք) | (գտաք) | իջէք (իք) | (իջաք) |
| 3-րդ » | գտին | (գտան) | իջին | (իջան) |

Կրավորաձև

| | Եզակի թ. | | Հոգնակի թ. | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | շարժեցայ | (շարժվեցի) | շարժեցաք | (շարժվեցինք) |
| 2-րդ » | շարժեցար | (շարժվեցիր) | շարժեցայք | (շարժվեցիք) |
| 3-րդ » | շարժեցաւ | (շարժվեց) | շարժեցան | (շարժվեցին) |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | գտայ | (գտնվեցի) | գտաք | (գտնվեցինք) |
| 2-րդ » | գտար | (գտնվեցիր) | գտայք | (գտնվեցիք) |
| 3-րդ » | գտաւ | (գտնվեց) | գտան | (գտնվեցին) |

Մյուսները կրավորաձև չեն խոնարհվում (չեզոք են):

§ 250. **Ի խոնարհում**

| | | | |
|---|---|---|---|
| Պարզ՝ | նայել | Հիմք՝ | նայեաց (բաղադրյալ-ցուցական) |
| Անծանցավոր՝ | անկանել | | անկ (արմատական) |
| | թռչել | | թռի (ի թույլ բաղադրիչով) |
| | մարտնչել | | մարտի |

Կրավորաձև

Եզակի թ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | նայեցայ | (նայվեցի) | անկայ | (ընկա) |
| 2-րդ » | նայեցար | (նայվեցիր) | անկար | (ընկար) |
| 3-րդ » | նայեցաւ | (նայվեց) | անկաւ | (ընկավ) |

1-ին դ. թռեայ (թռա) մարտեայ (մարտնչեցի)
2-րդ » թռեար (թռար) մարտեար (մարտնչեցիր)
3-րդ » թռեաւ (թռավ) մարտեաւ (մարտնչեց)

Հոգնակի թ.

1-ին դ. նայեցաք (նայեցինք) անկաք (ընկանք)
2-րդ » նայեցայք (նայեցիք) անկայք (ընկաք)
3-րդ » նայեցան (նայեցին) անկան (ընկան)

1-ին դ. թռեաք (թռանք) մարտեաք (մարտնչեցինք)
2-րդ » թռեայք (թռաք) մարտեայք (մարտնչեցիք)
3-րդ » թռեան (թռան) մարտեան (մարտնչեցին)

*Ընդգծված բայերը չեզոք սեռի են, թեև խոնարհվել են կրավորաձև, սակայն սեռը չեն փոխել, մնացել են չեզոք սեռի։*

§ 251. **Ե. խոնարհում**

Պարզ՝ աղալ, մնալ — Հիմք՝ աղաց, մնաց
Ածանցավոր՝ գողանալ, զարմանալ — գողաց, զարմաց (բաղադրյալ-ցուցական)

Ներգործական

Եզակի թ.

1-ին դ. աղացի (աղացի)
2-րդ » աղացեր (աղացիր)
3-րդ » աղաց (աղաց)

1-ին դ. մնացի (մնացի)
2-րդ » մնացեր (մնացիր)
3-րդ » մնաց (մնաց)

Հոգնակի թ.

աղացաք (աղացինք)
աղացէք (իք) (աղացիք)
աղացին (աղացին)

մնացաք (մնացինք)
մնացէք (իք) (մնացիք)
մնացին (մնացին)

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. աղացայ (աղացվեցի)
2-րդ » աղացար (աղացվեցիր)
3-րդ » աղացաւ (աղացվեց)

Հոգնակի թ.

աղացաք (աղացվեցինք)
աղացայք (աղացվեցիք)
աղացան (աղացվեցին)



1-ին դ. գողացայ (գողացա ‖ գողացվեցի)
2-րդ » գողացար (գողացար ‖ գողացվեցիր)
3-րդ » գողացաւ (գողացավ ‖ գողացվեց)

գողացաք (գողացանք ‖ գողացվեցինք)
գողացայք (գողացաք ‖ գողացվեցիք)
գողացան (գողացան ‖ գողացվեցին)

1-ին դ. զարմացայ (զարմացա) զարմացաք (զարմացանք)
2-րդ » զարմացար (զարմացար) զարմացայք (զարմացաք)
3-րդ » զարմացաւ (զարմացավ) զարմացան (զարմացան)

*Մնալ բայը որպես չեզոք սեռի պարզ բայ՝ կրավորաձև չի խոնարհվում։*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Գողանալ և զարմանալ բայերը ածանցավոր լինելով՝ խոնարհվում են կրավորաձև։ Դրանցից առաջինը (գողանալ) ներգործական սեռի է, ուստի կարող է արտահայտել նաև կրավորական սեռի իմաստ, իսկ դրա համար խոնարհման առանձին ձևեր չունի, նույն ձևերով արտահայտում է նաև այդ իմաստը, որը և ներգործականին զուգահեռ նշվել է փակագծերում։*

§ 252. **Զ. խոնարհում**

Պարզ՝ կիզուլ — Հիմք՝ կէզ, ջեռ (արմատական)
Ածանցավոր՝ ջեռնուլ, զարթնուլ — զարթի (ի թույլ բաղադրիչով)

Ներգործական

Եզակի թ. — Հոգնակի թ.

1-ին դ. կիզի (այրեցի) — կիզաք (այրեցինք)
2-րդ » կիզեր (այրեցիր) — կիզէք (իք) (այրեցիք)
3-րդ » կէզ կամ եկէզ (այրեց) — կիզին (այրեցին)

Կրավորաձև

Եզակի թ. — Հոգնակի թ.

1-ին դ. կիզայ (այրվեցի) — կիզաք (այրվեցինք)
2-րդ » կիզար (այրվեցիր) — կիզայք (այրվեցիք)
3-րդ » կիզաւ (այրվեց) — կիզան (այրվեցին)

1-ին դ. ջեռայ (տաքացա) ջեռաք (տաքացանք)
2-րդ » ջեռար (տաքացար) ջեռայք (տաքացաք)
3-րդ » ջեռաւ (տաքացավ) ջեռան (տաքացան)

1-ին դ. զարթեայ (արթնացա) զարթեաք (արթնացանք)
2-րդ » զարթեար (արթնացար) զարթեայք (արթնացաք)
3-րդ » զարթեաւ (արթնացավ) զարթեան (արթնացան)

Ինչպես տեսնում ենք, կիզուլ բայը կրավորաձև խոնարհվելով՝ ստացել է կրավորական սեռի նշանակություն, իսկ ածանցավորները՝ ջեռնուլ, զարթնուլ նույնպես խոնարհվում են կրավորաձև, սակայն պահում են իրենց չեզոք սեռի նշանակությունը։

## ԵՐԿՐՈՐԴ ԱՊԱՌՆԻ

§ 253. Երկրորդ ապառնի ժամանակը իմաստով համապատասխանում է աշխարհաբարի սահմանական, ըղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիներին, օրինակ՝ գնացից—գնալու եմ, գնամ, կգնամ, պիտի գնամ. ուրեմն, առաջին ապառնուց տարբերվում է նրանով, որ արտահայտում է նաև սահմանական եղանակի ապառնի ժամանակի իմաստ։

Վերջավորություններն են՝

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դեմք | —ից | —ցուք | —այց | —ցուք |
| 2-րդ » | —ցես | —ջիք | —ցիս | —ջիք |
| 3-րդ » | —ցէ | —ցեն | —ցի | —ցին |

Այս վերջավորությունները ավելանում են անցյալ կատարյալի հիմքի վրա՝ ներգործաձև և կրավորաձև խոնարհումները անցյալ կատարյալի հիմքից կազմվող դիմավոր ձևերի հատվածում շարադրված կանոններին համապատասխան։

§ 254. Բաղադրյալ-ցոյական հիմք ունեցող բայերի հետ, այդ բաղադրիչների ց աֆիքսը հանդիպելով այս վերջավորությունների ց և չ աֆիքսներին՝ տարնմանության օրենքով պարզվում և վեր է ածվում ս-ի, օրինակ՝ սիրեաց+ցես=սիրեսցես, սիրեաց+ցէ=սիրեսցէ, սիրեաց+ցուք=սիրեսցուք, սիրեաց+ջիք=սիրեսջիք, սիրեաց+ցեն=սիրեսցեն, հեռաց+ցիս=հեռասցիս, հեռաց+ցի=հեռասցի, հեռաց+ցուք=հեռասցուք, հեռաց+ջիք=հեռասջիք, հեռաց+ցին=հեռասցին, ասաց+ցես=ասասցես, գիտաց+ցէ=գիտասցէ, կարաց+ցես=կարասցես, մարթաց+ցէ=մարթասցէ, մերկաց+ցուք=մերկասցուք, խորհեաց+ցիս=խորհեսցիս, բազմեաց+ցի=բազմեսցի, շրջեաց+ջիք=շրջեսջիք և այլն։



Այստեղ տարնմանության երևույթը իրականում տեղի է ունենում ց-ի մոտ, իսկ չ-ի մոտ կատարվում է նմանակությամբ. հոգնակի թվի 2-րդ դեմքը մյուս դեմքերի նմանակությամբ հիմքի ց-ն դարձնում է ս։

Ց աֆիքսի այսպիսի պարզում տեղի չի ունենում այն դեպքում՝ ա) երբ ց-ն արմատական է կամ ձուլվում է արմատին՝ դառնալով արմատի մի նոր տարբերակ, բ) երբ բայը միավանկ է, օրինակ՝ անցանել—անց+ցես=անցցես, անց+ցէ=անցցէ, անց+ցուք=անցցուք, անց+ջիք=անցջիք, անց+ցեն=անցցեն, հարցանել—հարց+ցես=հարցցես, հարց+ցէ=հարցցէ, ցուցանել—ցոյց+ցէ=ցուցցէ, ընթեռնուլ—ընթերց+ցիս=ընթերցցիս, զգենուլ—զգեց+ցիս=զգեցցիս, յենուլ—յեց+ցիս=յեցցիս, լնուլ—լից+ցէ=լցցէ, խնուլ—խից+ցուք=խցցուք, կեալ (=ապրել)—կեաց+ցես=կեցցես, մյուս դեմքերը՝ կեցցէ, կեցցուք, կեցջիք, կեցցեն, բանալ—բաց+ցուք=բացցուք, թանալ—թաց+ջիք=թացջիք և այլն։

§ 255. Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերը երկրորդ ապառնի ժամանակում խոնարհվում են խառն խոնարհմամբ. եզակի թվի առաջին դեմքում ստանում են կրավորաձև վերջավորություն՝ այց (որտեղ ի բաղադրիչը հանդիպելով ա ձայնավորին՝ փոխվում է ե-ի), իսկ մյուս ձևերում՝ ներգործաձև վերջավորություններ, որոնցից առաջ հիմքի ի բաղադրիչը նույնությամբ պահպանվում է, օրինակ՝

1-ին դ. բարձի+այց=բարձեայց բարձի+ցուք=բարձիցուք
2-րդ » բարձի+ցես=բարձիցես բարձի+ջիք=բարձիջիք
3-րդ » բարձի+ցէ=բարձիցէ բարձի+ցեն=բարձիցեն

1-ին դ. մածի+այց=մածեայց մածի+ցուք=մածիցուք
2-րդ » մածի+ցես=մածիցես մածի+ջիք=մածիջիք
3-րդ » մածի+ցէ=մածիցէ մածի+ցեն=մածիցեն

## ՕՐԻՆԱԿՆԵՐ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ

### Ե խոնարհում

§ 256. Վերցնենք նույն օրինակները, որոնք ցույց են տրված § 249-ում, Այդ նույն տեղում նշված հիմքերը կիրառվում են նաև այստեղ, ստանալով երկրորդ ապառնու վերջավորությունները։ Նույնը վերաբերում է նաև մյուս խոնարհումների բայերին։

### Ներգործաձև

#### Եզակի թ.

1-ին դ. շարժեցից (*շարժելու եմ, շարժեմ, կշարժեմ, պիտի շարժեմ*)
2-րդ » շարժեցես (*շարժելու ես, շարժես, կշարժես, պիտի շարժես*)
3-րդ » շարժեցէ (*շարժելու է, շարժի, կշարժի, պիտի շարժի*)

1-ին դ. վազեցից (*վազելու եմ, վազեմ, կվազեմ, պիտի վազեմ*)
2-րդ » վազեցես (*վազելու ես, վազես, կվազես, պիտի վազես*)
3-րդ » վազեցէ (*վազելու է, վազի, կվազի, պիտի վազի*)

1-ին դ. գտից (*գտնելու եմ, գտնեմ, կգտնեմ, պիտի գտնեմ*)
2-րդ » գտցես (*գտնելու ես, գտնես, կգտնես, պիտի գտնես*)
3-րդ » գտցէ (*գտնելու է, գտնի, կգտնի, պիտի գտնի*)

1-ին դ. իջից (*իջնելու եմ, իջնեմ, կիջնեմ, պիտի իջնեմ*)
2-րդ » իջցես (*իջնելու ես, իջնես, կիջնես, պիտի իջնես*)
3-րդ » իջցէ (*իջնելու է, իջնի, կիջնի, պիտի իջնի*)

#### Հոգնակի թ.

1-ին դ. շարժեցուք (*շարժելու ենք, շարժենք, կշարժենք, պիտի շարժենք*)
2-րդ » շարժեջիք (*շարժելու եք, շարժեք, կշարժեք, պիտի շարժեք*)
3-րդ » շարժեցեն (*շարժելու են, շարժեն, կշարժեն, պիտի շարժեն*)

1-ին դ. վազեցուք (*վազելու ենք, վազենք, կվազենք, պիտի վազենք*)
2-րդ » վազեջիք (*վազելու եք, վազեք, կվազեք, պիտի վազեք*)
3-րդ » վազեցեն (*վազելու են, վազեն, կվազեն, պիտի վազեն*)

1-ին դ. գտցուք (*գտնելու ենք, գտնենք, կգտնենք, պիտի գտնենք*)
2-րդ » գտջիք (*գտնելու եք, գտնեք, կգտնեք, պիտի գտնեք*)
3-րդ » գտցեն (*գտնելու են, գտնեն, կգտնեն, պիտի գտնեն*)



1-ին դ. իջցուք (*իջնելու ենք, իջնենք, կիջնենք, պիտի իջնենք*)
2-րդ » իջջիք (*իջնելու եք, իջնեք, կիջնեք, պիտի իջնեք*)
3-րդ » իջցեն (*իջնելու են, իջնեն, կիջնեն, պիտի իջնեն*)

### Կրավորաձև

#### Եզակի թ.

1-ին դ. շարժեցայց (*շարժվելու եմ, շարժվեմ, կշարժվեմ, պիտի շարժվեմ*)
2-րդ » շարժեցիս (*շարժվելու ես, շարժվես, կշարժվես, պիտի շարժվես*)
3-րդ » շարժեցի (*շարժվելու է, շարժվի, կշարժվի, պիտի շարժվի*)

1-ին դ. գտայց (*գտնվելու եմ, գտնվեմ, կգտնվեմ, պիտի գտնվեմ*)
2-րդ » գտցիս (*գտնվելու ես, գտնվես, կգտնվես, պիտի գտնվես*)
3-րդ » գտցի (*գտնվելու է, գտնվի, կգտնվի, պիտի գտնվի*)

#### Հոգնակի թ.

1-ին դ. շարժեցուք (*շարժվելու ենք, շարժվենք, կշարժվենք, պիտի շարժվենք*)
2-րդ » շարժեջիք (*շարժվելու եք, շարժվեք, կշարժվեք, պիտի շարժվեք*)
3-րդ » շարժեցին (*շարժվելու են, շարժվեն, կշարժվեն, պիտի շարժվեն*)

1-ին դ. գտցուք (*գտնվելու ենք, գտնվենք, կգտնվենք, պիտի գտնվենք*)
2-րդ » գտջիք (*գտնվելու եք, գտնվեք, կգտնվեք, պիտի գտնվեք*)
3-րդ » գտցին (*գտնվելու են, գտնվեն, կգտնվեն, պիտի գտնվեն*)

*Վազել և իջանել բայերը չեզոք սեռի են, կրավորաձև չեն խոնարհվում։*

### Ի խոնարհում

§ 257. Այս լծորդության պատկանող պարզ և ան ածանց ունեցող բայերը խոնարհվում են միայն կրավորաձև, իսկ չ և նչ ածանց ունեցողները, որպես անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղաձայնը ունեցող բայեր, խոնարհվում են խառն ձևով։

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. նայեցայց (նայելու եմ, նայեմ, կնայեմ, պիտի նայեմ)
2-րդ » նայեսցիս (նայելու ես, նայես, կնայես, պիտի նայես)
3-րդ » նայեսցի (նայելու է, նայի, կնայի, պիտի նայի)

Հոգնակի թ.

1-ին դ. նայեսցուք (նայելու ենք, նայենք, կնայենք, պիտի նայենք)
2-րդ » նայեսջիք (նայելու եք, նայեք, կնայեք, պիտի նայեք)
3-րդ » նայեսցին (նայելու են, նայեն, կնայեն, պիտի նայեն)

Եզակի թ.

1-ին դ. անկայց (ընկնելու եմ, ընկնեմ, կընկնեմ, պիտի ընկնեմ)
2-րդ » անկցիս (ընկնելու ես, ընկնես, կընկնես, պիտի ընկնես)
3-րդ » անկցի (ընկնելու է, ընկնի, կընկնի, պիտի ընկնի)

Հոգնակի թ.

1-ին դ. անկցուք (ընկնելու ենք, ընկնենք, կընկնենք, պիտի ընկնենք)
2-րդ » անկջիք (ընկնելու եք, ընկնեք, կընկնեք, պիտի ընկնեք)
3-րդ » անկցին (ընկնելու են, ընկնեն, կընկնեն, պիտի ընկնեն)

Խառն

Եզակի թ.

1-ին դ. թռեայց (թռչելու եմ, թռչեմ, կթռչեմ, պիտի թռչեմ)
2-րդ » թռիցես (թռչելու ես, թռչես, կթռչես, պիտի թռչես)
3-րդ » թռիցէ (թռչելու է, թռչի, կթռչի, պիտի թռչի)



1-ին դ. մարտեայց (մարտնչելու եմ, մարտնչեմ, կմարտնչեմ, պիտի մարտնչեմ)
2-րդ » մարտիցես (մարտնչելու ես, մարտնչես, կմարտնչես, պիտի մարտնչես)
3-րդ » մարտիցէ (մարտնչելու է, մարտնչի, կմարտնչի, պիտի մարտնչի)

Հոգնակի թ.

1-ին դ. թռիցուք (թռչելու ենք, թռչենք, կթռչենք, պիտի թռչենք)
2-րդ » թռիջիք (թռչելու եք, թռչեք, կթռչեք, պիտի թռչեք)
3-րդ » թռիցեն (թռչելու են, թռչեն, կթռչեն, պիտի թռչեն)

1-ին դ. մարտիցուք (մարտնչելու ենք, մարտնչենք, կմարտնչենք, պիտի մարտնչենք)
2-րդ » մարտիջիք (մարտնչելու եք, մարտնչեք, կմարտնչեք, պիտի մարտնչեք)
3-րդ » մարտիցեն (մարտնչելու են, մարտնչեն, կմարտնչեն, պիտի մարտնչեն)

§ 258 **Ա. խոնարհում**

Ներգործաձև

Եզակի թ.

1-ին դ. աղացից (աղալու եմ, աղամ, կաղամ, պիտի աղամ)
2-րդ » աղասցես (աղալու ես, աղաս, կաղաս, պիտի աղաս)
3-րդ » աղասցէ (աղալու է, աղա, կաղա, պիտի աղա)

1-ին դ. մնացից (մնալու եմ, մնամ, կմնամ, պիտի մնամ)
2-րդ » մնասցես (մնալու ես, մնաս, կմնաս, պիտի մնաս)
3-րդ » մնասցէ (մնալու է, մնա, կմնա, պիտի մնա)

Հոգնակի թ.

1-ին դ. աղասցուք (աղալու ենք, աղանք, կաղանք, պիտի աղանք)
2-րդ » աղասջիք (աղալու եք, աղաք, կաղաք, պիտի աղաք)
3-րդ » աղասցեն (աղալու են, աղան, կաղան, պիտի աղան)

1-ին դ. մնասցուք (մնալու ենք, մնանք, կմնանք, պիտի մնանք)
2-րդ » մնասջիք (մնալու եք, մնաք, կմնաք, պիտի մնաք)
3-րդ » մնասցեն (մնալու են, մնան, կմնան, պիտի մնան)

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. **աղացայց** (*աղացվելու եմ, աղացվեմ, կաղացվեմ,*
2-րդ » **աղասջիս** (*աղացվելու ես, աղացվես, կաղացվես,*
3-րդ » **աղասցի** (*աղացվելու է, աղացվի, կաղացվի,*

*պիտի աղացվեմ)*
*պիտի աղացվես)*
*պիտի աղացվի)*

1-ին դ. **գողացայց** (*գողանալու եմ, գողանամ, կգողանամ,*
2-րդ » **գողասջիս** (*գողանալու ես, գողանաս, կգողանաս,*
3-րդ » **գողասցի** (*գողանալու է, գողանա, կգողանա,*

*պիտի գողանամ || նույնը՝ կրավորական ձև.)*
*պիտի գողանաս || նույնը՝ կրավորական ձև.)*
*պիտի գողանա || նույնը՝ կրավորական ձև.)*

1-ին դ. **զարմացայց** (*զարմանալու եմ, զարմանամ, կզարմանամ,*
2-րդ » **զարմասջիս** (*զարմանալու ես, զարմանաս, կզարմանաս,*
3-րդ » **զարմասցի** (*զարմանալու է, զարմանա, կզարմանա,*

*պիտի զարմանամ)*
*պիտի զարմանաս)*
*պիտի զարմանա)*

Հոգնակի թ.

1-ին դ. **աղասցուք** (*աղացվելու ենք, աղացվենք, կաղացվենք,*
2-րդ » **աղասջիք** (*աղացվելու եք, աղացվեք, կաղացվեք,*
3-րդ » **աղասցին** (*աղացվելու են, աղացվեն, կաղացվեն,*

*պիտի աղացվենք)*
*պիտի աղացվեք)*
*պիտի աղացվեն)*

1-ին դ. **գողասցուք** (*գողանալու ենք, գողանանք, կգողանանք,*
2-րդ » **գողասջիք** (*գողանալու եք, գողանաք, կգողանաք,*
3-րդ » **գողասցին** (*գողանալու են, գողանան, կգողանան,*

*պիտի գողանանք || նույնը՝ կրավ. ձև.)*
*պիտի գողանաք || նույնը՝ կրավ. ձև.)*
*պիտի գողանան || նույնը՝ կրավ. ձև.)*



1-ին դ. **զարմասցուք** (*զարմանալու ենք, զարմանանք,*
2-րդ » **զարմասջիք** (*զարմանալու եք, զարմանաք,*
3-րդ » **զարմասցին** (*զարմանալու են, զարմանան,*

*կզարմանանք, պիտի զարմանանք)*
*կզարմանաք, պիտի զարմանաք)*
*կզարմանան, պիտի զարմանան)*

*Գողանալ բայը ներգործական սեռի ածանցավոր բայ է և ըստ կանոնի խոնարհվում է կրավորաձև. խոնարհման այսպիսի ձևով այս բայը կարող է արտահայտել և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի իմաստ, այսպես՝* **գողասցի** = *գողանալու է || գողացվելու է, գողանա || գողացվի, կգողանա || կգողացվի, պիտի գողանա || պիտի գողացվի։*

*Մնալ բայը կազմությամբ պարզ բայ է և որպես այդպիսին ըստ կանոնի խոնարհվում է ներգործաձև, իսկ քանի որ չեզոք սեռի է, ուստի այլևս կրավորաձև չի խոնարհվում։*

§ 259. **Ու. խոնարհում**

Ներգործաձև

Եզակի թ.

1-ին դ. **կեցից** (*ապրելու եմ ապրեմ, կապրեմ, պիտի ապրեմ)*
2-րդ » **կեցցես** (*ապրելու ես, ապրես, կապրես, պիտի ապրես)*
3-րդ » **կեցցէ** (*ապրելու է, ապրի, կապրի, պիտի ապրի)*

Հոգնակի թ.

1-ին դ. **կեցցուք** (*ապրելու ենք, ապրենք, կապրենք,*
2-րդ » **կեցջիք** (*ապրելու եք, ապրեք, կապրեք,*
3-րդ » **կեցցեն** (*ապրելու են, ապրեն, կապրեն,*

*պիտի ապրենք)*
*պիտի ապրեք)*
*պիտի ապրեն)*

Կրավորաձև

Եզակի թ.

1-ին դ. **կեցայց** (*ապրվելու եմ, ապրվեմ, կապրվեմ, պիտի ապրվեմ)*
2-րդ » **կեցջիս** (*ապրվելու ես, ապրվես, կապրվես, պիտի ապրվես)*
3-րդ » **կեցցի** (*ապրվելու է, ապրվի, կապրվի, պիտի ապրվի)*

1-ին դ. չեռայց (տարանալու էմ, տարանամ, կտարանամ, պիտի տարանամ)
2-րդ » չեռցիս (տարանալու ես, տարանաս, կտարանաս, պիտի տարանաս)
3-րդ » չեռցի (տարանալու է, տարանա, կտարանա, պիտի տարանա)

Հոգնակի թ.

1-ին դ. կիզցուք (այրվելու ենք, այրվենք, կայրվենք, պիտի այրվենք)
2-րդ » կիզչիք (այրվելու եք, այրվեք, կայրվեք, պիտի այրվեք)
3-րդ » կիզցին (այրվելու են, այրվեն, կայրվեն, պիտի այրվեն)

1-ին դ. չեռցուք (տարանալու ենք, տարանանք, կտարանանք, պիտի տարանանք)
2-րդ » չեռչիք (տարանալու եք, տարանաք, կտարանաք, պիտի տարանաք)
3-րդ » չեռցին (տարանալու են, տարանան, կտարանան, պիտի տարանան)

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կիզուլ բայը քանի որ կազմությամբ պարզ է, ուստի և խոնարհվում է ներգործաձև, իսկ քանի որ միաժամանակ ներգործական սեռի է, ըստ պահանջի խոնարհվում է նաև կրավորաձև՝ ստանալով կրավորական սեռի իմաստ։ Չեռնուլ բայը որպես աճանցավոր բայ խոնարհվում է կրավորաձև ու այս ձևով էլ պահպանում է չեզոք սեռի իմաստը։*

Խառն

Եզակի թ.

1-ին դ. զարթեայց (արթնանալու էմ, արթնանամ, կարթնանամ, պիտի արթնանամ)
2-րդ » զարթիցես (արթնանալու ես, արթնանաս, կարթնանաս, պիտի արթնանաս)
3-րդ » զարթիցէ (արթնանալու է, արթնանա, կարթնանա, պիտի արթնանա)



Հոգնակի թ.

1-ին դ. զարթիցուք (արթնանալու ենք, արթնանանք, կարթնանանք, պիտի արթնանանք)
2-րդ » զարթիջիք (արթնանալու եք, արթնանաք, կարթնանաք, պիտի արթնանաք)
3-րդ » զարթիցեն (արթնանալու են, արթնանան, կարթնանան, պիտի արթնանան)

## ԲՈՒՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԿԱ)

§ 260. *Բուն հրամայականը (հրամայական եղանակի ներկան) իմաստով համապատասխանում է աշխարհաբարի բուն հրամայականին։ Ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ 2-րդ դեմքի համար (մյուս դեմքերը չունի)։*

§ 261. **Ներգործաձև խոնարհման եզակի թվի 2-րդ դեմքում** *բայը նոր վերջավորություն չի ստանում։ Անցյալ կատարյալի արմատական հիմքը շեշտի տակ դառնում է հրամայական ներկա, օրինակ՝ եկանել, անցյալ կատարյալի հիմք՝ եկ, բուն հրամայական (եզ. թ.)՝ ե՛կ, անցանել—ա՛նց, հասանել—հա՛ս, տեսանել—տե՛ս, մտանել—մո՛ւտ, հեղուլ—հե՛ղ, զենուլ—զե՛ն, թողուլ—թո՛ղ, կիզուլ— կէ՛զ, ցելուլ—ցե՛լ և այլն։ Բաղադրյալ-ցույական հիմքն ապառող հանդես է գալիս բաղադրիչի ց հնչյունի անկումով, օրինակ՝ գրել, կատ. հիմք՝ գրեաց, բուն հրամ.՝ գրեա՛, կազմել—կազմեա՛, կարդել—կարդեա՛, արբել—արբեա՛, աղալ—կատ. հիմք՝ աղաց, բուն հրամ.՝ աղա՛, անսալ—անսա՛, կարդալ (=կանչել)—կարդա՛, ատել—ատա՛, գիտել—գիտա՛ կամ գիտեա՛, մերկել—մերկա՛ կամ մերկեա՛, ընկենուլ—ընկեա՛ և այլն։*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Եթե հիմքի ց-ն արմատական հնչյուն է կամ արմատի տարբերակի մեջ է մտնում՝ ձուլվելով նրան, այս դեպքում պահպանվում է, ինչպես՝ բանալ—բա՛ց, թանալ—թա՛ց, լնուլ—լի՛ց, խնուլ—խի՛ց։ Այսպես էլ՝ լալ—լա՛ց, կալ(=մնալ, կանգնել)—կա՛ց, կեալ (=ապրել)—կեա՛ց։*

*Թառնալ և դառնալ բայերում պահպանվում է ձ աֆրիկատը՝ թա՛րձ (*թարձնալ), դարձ (*դարձնալ)։ Դառնալ բայը, սակայն, հիմնականում խոնարհվում է կրավորաձև՝ դարձի՛ր։*

**Ներգործաձև խոնարհման հոգնակի թվի 2-րդ դեմքի** *վերջավորությունն է—էք, որը ավելանում է բայի անցյալ կատարյալի հիմքի վրա, օրինակ՝ գրեաց+էք=գրեցէ՛ք, կազմեաց+էք=կազ-*

մեղէ՛ք, կարդեաց+էք=կարդեցէ՛ք, սիրեաց+էք=սիրեցէ՛ք, աղաց+էք=աղացէ՛ք, անսաց+էք=անսացէ՛ք, կարդաց+էք=կարդացէ՛ք, ասաց+էք=ասացէ՛ք, գիտաց+էք=գիտացէ՛ք, մերկաց+էք=մերկացէ՛ք, ընկեաց+էք=ընկեցէ՛ք, անց+է՛ք=անցէ՛ք, եկ+էք=եկէ՛ք, հաս+էք=հասէ՛ք, տես+էք=տեսէ՛ք, մատ+էք=մատէ՛ք, գեն+էք=գենէ՛ք, կէզ+էք=կիզէ՛ք, թող+էք=թողէ՛ք, հեղ+էք=հեղէ՛ք, ցել+էք=ցելէ՛ք և այլն։

§ 262. **Կրավորաձև խոնարհման եզակի թվի 2-րդ դեմքում** հանդես է գալիս -իր վերջավորությունը, որը դրվում է անցյալ կատարյալի հիմքի վրա, օրինակ՝ տես+իր=տեսի՛ր (=տեսնըվի՛ր), չէշ+իր=չիշի՛ր, թող+իր=թողի՛ր (=թողնվի՛ր), հեղ+իր=հեղի՛ր (=թափվի՛ր), աղաց+իր=աղացի՛ր (=աղացվի՛ր), հեռաց+իր=հեռացի՛ր և այլն։ -Իր վերջավորության առկայության դեպքում կատարյալի հիմքում ի թույլ բաղաձայնից ունեցող բայերի հիշյալ բաղաձայնը դուրս է ընկնում. օրինակ՝ թաքի+իր=թաքի՛ր, փախի+իր=փախի՛ր, մածի+իր=մածի՛ր, ցասի+իր=ցասի՛ր և այլն։

Բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքի կրավորաձև -իր վերջավորությունը չի դրվում Ի խոնարհման պարզ բայերի (որոնք միայն կրավորաձև խոնարհում ունեն) և Ն խոնարհման այն պարզ բայերի կատարյալի հիմքի վրա, որոնք ըստ պահանջի խոնարհվում են նաև կրավորաձև (ներգործական սեռի բայեր, որոնք ստանում են կրավորական սեռի նշանակություն)։ Որպես այդպիսի դիմավոր ձև այդ բայերի համար ծառայում է նրանց անցյալ կատարյալի չեզոքված հիմքը (առանց ց ածանցի), օրինակ՝ բաղմել (բաղմիմ)—բաղմեա՛ց, խորհել (խորհիմ)—խորհեա՛ց, կամել (կամիմ)—կամեա՛ց, գրել—գրեա՛ց, սիրել—սիրեա՛ց և այլն։

Ի խոնարհման պարզ բայերից բացառություն է կազմում նստել (նստիմ) բայը, որը եզակի թվում լինում է **նի՛ստ**:

**Կրավորաձև խոնարհման հոգնակի թվի 2-րդ դեմքում** հանդես են գալիս -այք կամ -արուք վերջավորությունները, որոնք դրվում են անցյալ կատարյալի հիմքի վրա, օրինակ՝ գրել, կատ. հիմք՝ գրեաց+այք || արուք=գրեցա՛յք || գրեցարո՛ւք[1], կազմեաց+այք || արուք=կազմեցա՛յք || կազմեցարո՛ւք, կարդեաց+այք || արուք=կարդեցա՛յք || կարդեցարո՛ւք, սիրեա՛ց+այք || արուք=սիրեցա՛յք || սիրեցարո՛ւք, տես+այք || արուք=տեսա՛յք || տեսարո՛ւք, աղաց+այք || արուք=աղացա՛յք || աղացարո՛ւք, բաղմեաց+այք || արուք=բաղմեցա՛յք || բաղմեցարո՛ւք, խորհեաց+այք || արուք || խորհեցա՛յք || խորհեցարո՛ւք, կամեաց+այք || արուք=կամեցա՛յք = կամեցարո՛ւք, նիստ+այք || արուք=նստա՛յք=նստարո՛ւք, չէշ+այք || արուք=չիշա՛յք || չիշարո՛ւք, սկիս+այք || արուք=սկսա՛յք || սկսարո՛ւք (սկսանել—սկսանիմ), թող+այք || արուք=թողա՛յք=թողարո՛ւք, հեղ+այք || արուք=հեղա՛յք || հեղարո՛ւք, կէզ+այք || արուք=կիզա՛յք || կիզարո՛ւք, հեղձ+այք || արուք=հեղձա՛յք || հեղձարո՛ւք և այլն։

[1] Այս վերջավորություններից բառ գործածության լայն տարածված ու ընդունված է -արուք ձևը։ Կանոնավոր բայերի մեջ -այք վերջավորությունը հազվադեպ է հանդես գալիս։



Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղաձայնից ունեցող բայերում հոգնակի թվի այս վերջավորությունները ձևափոխություն են կրում. -այք վերջավորությունից առաջ ի թույլ բաղաձայնը փոխվում է Ն-ի, իսկ -արուք վերջավորության մեջ ձուլվում է ա ձայնավորին, տալով Ն. այդպիսով բայն ունենում է -նայք կամ -նրուք վերջավորություններ, օրինակ՝ թաքի+այք || արուք=թաքնա՛յք || թաքնրո՛ւք, փախի+այք || արուք=փախնա՛յք || փախնրո՛ւք, մածի+այք || արուք=մածնա՛յք || մածնրո՛ւք, ցասի+այք || || արուք=ցասնա՛յք || ցասնրո՛ւք և այլն։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Հոգնակի թվում -նրուք վերջավորություն են ստանում Ի խոնարհման ան ածանց ունեցող բայերից անկանել և ազանել բայերը՝ անկնրո՛ւք (փոխ. անկա՛յք կամ անկարո՛ւք), ազնրո՛ւք (նաև՝ ազարո՛ւք)։

Բայերի խոնարհումն բառ ձևերի բուն հրամայականում ևս կատարվում է §§ 240—245-ում շարադրված կանոնների համաձայն, ինչպես այդ տեղի է ունենում անցյալ կատարյալ և երկրորդ ապառնի ժամանակներում։

Այդ՝ օրինակներով ցույց տանք բուն հրամայականի պատկերը բառ առանձին խոնարհումների։

### § 263. Ե խոնարհում

#### Ներգործական

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| շարժե՛ա (շարժի՛ր) | շարժեցէ՛ք (շարժեցե՛ք) |
| վազե՛ա (վազի՛ր) | վազեցէ՛ք (վազեցե՛ք) |
| գի՛ա (գտի՛ր) | գտէ՛ք (գտե՛ք) |
| է՛ջ (իջի՛ր) | իջէ՛ք (իջե՛ք) |

Հրամայական

շարժեա՛ց (շարժվի՛ր) շարժեցա՛յք կամ շարժեցարո՛ւք (շարժվեցե՛ք)

զոհի՛ր (զոհվի՛ր) զոհա՛յք կամ զոհարո՛ւք (զոհվեցե՛ք)

Չեզոք սեռի բայերը (վազել, իջանել) կրավորական չեն խոնարհվում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ե լծորդության այն պարզ բայերը, որոնք անցյալ կատարյալի հիմքի կազմությամբ բացառություն են կազմում, այսինքն անցողական հիմք ունեն, բուն հրամայականում խոնարհվում են նույն լծորդության ածանցավոր բայերի օրինակով, այսպես՝ ածել—ա՛ծ, ածէ՛ք, բերել—բե՛ր, բերէ՛ք, հանել—հա՛ն, հանէ՛ք, հեղուլ—հեղո՛յ, հեղուէ՛ք, համբերել—համբե՛ր, համբերէ՛ք, նաև՝ համբերեա՛, համբերեցէ՛ք։ Ներգործականները բուն պահանջի կարող են խոնարհվել նաև կրավորական, դարձյալ ածանցավոր բայերի օրինակով։

§ 264. **Ի խոնարհում**

Հրամայական

| Եզակի թ. | | Հոգնակի թ. |
|---|---|---|
| նայեա՛ց[1] | (նայի՛ր) | նայեցա՛յք կամ նայեցարո՛ւք (նայեցե՛ք) |
| անկի՛ր | (ընկի՛ր) | անկերո՛ւք (ընկե՛ք) |
| ուսի՛ր | (սովորի՛ր) | ուսա՛յք կամ ուսարո՛ւք (սովորեցե՛ք) |
| թռի՛ր | (թռի՛ր) | թռեա՛յք կամ թռերո՛ւք (թռե՛ք) |
| մարտի՛ր | (մարտնչի՛ր) | մարտեա՛յք կամ մարտերո՛ւք (մարտնչեցե՛ք) |

Ի խոնարհման պարզ բայերից շատերը եզակի թվում հանդես են գալիս նաև հիմքի եաց բաղադրիչի ց աֆրիկատի անկումով (Ե խոնարհման պարզ բայերի ներգործական խոնարհման նման), օրինակ՝ հաճիմ (=հավանել, ախորժել, սիրել, հաշտվել)—հաճեա՛ց կամ հաճեա՛, խոսիմ—խոսեա՛ց կամ խոսեա՛, համարիմ—համարեա՛ց կամ համարեա՛, նայիմ—նայեա՛ց կամ նայեա՛, ողորմիմ—ողորմեա՛ց կամ ողորմեա՛ և այլն։

[1] Ունենում է նաև նայեա՛ ձևը։



§ 265. **Ա խոնարհում**

Ներգործական

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| աղա՛ (աղա՛) | աղացէ՛ք (աղացե՛ք) |
| մնա՛ (մնա՛) | մնացէ՛ք (մնացե՛ք) |

Հրամայական

| | | |
|---|---|---|
| աղացի՛ր | (աղացվի՛ր) | աղացա՛յք կամ աղացարո՛ւք (աղացվեցե՛ք) |
| գողացի՛ր | (գողացի՛ր ‖ գողացվի՛ր) | գողացա՛յք կամ գողացարո՛ւք (գողացե՛ք ‖ գողացվեցե՛ք) |
| զարմացի՛ր | (զարմացի՛ր) | զարմացա՛յք կամ զարմացարո՛ւք (զարմացե՛ք) |

Մնալ բայը չեզոք սեռի է և կրավորական չի խոնարհվում, իսկ գողանալ բայը խոնարհվում է միայն կրավորական և այստեղ էլ այդ նույն ձևով արտահայտում է և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի նշանակությունը։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.— Գթալ, լուալ, փութալ պարզ բայերը, որ ընդհանրապես անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում կրավորական են խոնարհվում, բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքում լինում են ներգործական՝ գթա՛, լուա՛, փութա՛։ Անկախ սեռից կրկնաձև խոնարհում ունեցող պարզ բայերը նույնպես (§ 243) այստեղ եզակի թվում գերազանցապես ներգործական են խոնարհվում՝ գոչալ—գոչա՛, գնալ—գնա՛, խոկալ—խոկա՛, հոգալ—հոգա՛, ողբալ—ողբա՛, որսալ—որսա՛, ցնծալ—ցնծա՛ և այլն, բայց հանդիպում է նաև կրավորական խոնարհում, օրինակ՝ գտալ—գտացի՛ր, ջանալ—ջանացի՛ր (կա նաև ջանա՛ ձևը)։ Հոգնակի թվում սրանք միայն կրավորական են խոնարհվում՝ գթացա՛յք կամ գթացարո՛ւք, լուացա՛յք կամ լուացարո՛ւք, հոգացա՛յք կամ հոգացարո՛ւք, ողբացա՛յք կամ ողբացարո՛ւք, որսացա՛յք կամ որսացարո՛ւք և այլն։ Բացառություն է կազմում ցնծալ բայը, որն ունենում է ներգործական վերջավորություն՝ ցնծացէ՛ք։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.— Ա խոնարհման ածանցավոր բայերից մի քանիսը բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքում ունենում են զուգահեռ ձևեր, օրինակ՝ ընթանալ—ընթացի՛ր ‖ ընթա՛ց ‖ ընթա՛, իմանալ—իմա՛ ‖ իմա՛ց ‖ իմացի՛ր,

մոռանալ—մոռացի՛ր || մոռա՛ց: Հոգնակի թվում խոնարհվում են ըստ կանոնի, այսինքն երկձև՝ ընթացե՛ք կամ ընթացրե՛ք, իմացե՛ք կամ իմացրե՛ք, մոռացե՛ք կամ մոռացրե՛ք:

§ 266. **Ու խոնարհում**

Ներգործաձև

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| կի՛զ (այրի՛ր) | կիզե՛ք (այրեցե՛ք) |

Կրավորաձև

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| կիզի՛ր (այրվի՛ր) | կիզա՛յք կամ կիզարո՛ւք (այրվեցե՛ք) |
| ջեռի՛ր (տաքացի՛ր) | ջեռա՛յք կամ ջեռարո՛ւք (տաքացե՛ք) |
| զարթի՛ր (արթնացի՛ր) | զարթեա՛յք կամ զարթերո՛ւք (արթնացե՛ք) |

## ՀՈՐԴՈՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՊԱՌՆԻ)

§ 267. *Հորդորական հրամայականը կամ հրամայական եղանակի ապառնին բուն հրամայականի (հրամայական եղանակի ներկա) համեմատությամբ իմաստով ավելի մեղմ բնույթ ունի, և նրանով արտահայտված գործողության կատարումը նկատի է առնվում համեմատաբար ուշ ժամանակում:*

*Հորդորական հրամայականը աշխարհաբարում թարգմանվում է ըղձական, պայմանական, հարկադրական ապառնիներով՝ հրամայականի չեզոքով կամ կարելի է թարգմանել նաև հրամայականով. օրինակ՝ գրեսջի՛ր—գրե՛ս, կգրե՛ս, պիտի գրե՛ս, գրի՛ր: «...Ցանկութեամբ և տրամադրութեամբ որդիս ծնջի՛ր» (Եղիշե, I, ԺԷ, էջ 51)՝ Ցանկությամբ և տրամադրությամբ որդիներ կծնես: «...Գիտասջի՛ր՝ զի որ օր հասանէ յերկիրն Հայոց, զնոյն ձայն առնէ ընդ քեզ...» (Բուզ., IV, ԽԴ, էջ 252)՝ Իմացի՛ր, իմացա՛ծ եղիր՝ որ օրը հասնի Հայոց աշխարհը, նույն ձևով կխոսի քեզ հետ: «Տեսջի՛ր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զնա կատարածի զորսա» (Եղիշե, I, էջ 15)՝ Կտեսնե՛ս երբ կհայտնվի, ապա կիմանաս դրա վախճանը:*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Քերականներից ոմանք հորդորական հրամայականն առանձնապես չեն բնութագրում, իսկ ոմանք էլ վերը նշված ձևերը համարում են ստորադասական եղանակի ձևերի տարբերակներ:*

§ 268. *Հորդորական հրամայականը կազմվում է երկրորդ ապառնի ժամանակի հոգնակի թվի երկրորդ դեմքից, որի վերջավորության ք հնչյունը եզակի թվում փոխարինվում է ր-ով, իսկ հոգնակին մնում է նույնը, բայց որում երկուսն էլ շեշտ են կրում: Բոլոր խոնարհումներում վերջավորությունները ընդհանուր են:*

§ 269. **Ե խոնարհում**

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| շարժեսջի՛ր | շարժեսջի՛ք |
| վազեսջի՛ր | վազեսջի՛ք |
| գտջի՛ր | գտջի՛ք |
| իջջի՛ր | իջջի՛ք |

§ 270. **Ի խոնարհում**

| | |
|---|---|
| ճայեսջի՛ր | ճայեսջի՛ք |
| անկջի՛ր | անկջի՛ք |
| բռիջի՛ր | բռիջի՛ք |
| մարտիջի՛ր | մարտիջի՛ք |

§ 271. **Ա խոնարհում**

| | |
|---|---|
| աղասջի՛ր | աղասջի՛ք |
| մնասջի՛ր | մնասջի՛ք |
| զարմասջի՛ր | զարմասջի՛ք |
| գոդասջի՛ր | գոդասջի՛ք |

§ 272. **Ու խոնարհում**

| | |
|---|---|
| կիզջի՛ր | կիզջի՛ք |
| ջեռջի՛ր | ջեռջի՛ք |
| զարթիջի՛ր | զարթիջի՛ք |

§ 273. Գրաբարի անցյալ դերբայը ձևավորվում է -եալ դերբայական մասնիկի միջոցով, որը դրվում է գլխավորապես անցյալ կատարյալի և մասամբ էլ ներկայի հիմքի վրա, օրինակ՝ մնացեալ, աղացեալ, զարմացեալ, զօրացեալ, հեռացեալ, մոռացեալ (Ա խոնարհում), արգելեալ, թողեալ, կիզեալ, հեղեալ, հեղձեալ, ջեռեալ (Ու խոնարհում), արկեալ, զգեալ, բեկեալ, լուցեալ, տեսեալ (Ե խոնարհում), անկեալ, ծնեալ, ուսեալ, սնեալ (Ի խոնարհում) և այլն։

Ե և Ի խոնարհումների պարզ բայերի անցյալ դերբայը կազմվում է և՛ կատարյալի, և՛ ներկայի հիմքերից, այսպես՝ գրեմ—գրեալ և գրեցեալ, սիրեմ—սիրեալ և սիրեցեալ, այրեմ—այրեալ և այրեցեալ, կարծեմ—կարծեալ և կարծեցեալ, հաշտիմ—հաշտեալ և հաշտեցեալ, բնակիմ—բնակեալ և բնակեցեալ և այլն։

Այս կարգի մի շարք բայերի անցյալ դերբայը կազմվում է միայն անցյալ կատարյալի հիմքից. դրանցից են՝ աղաչել—աղաչեցեալ, աճել—աճեցեալ, ննջել—ննջեցեալ (Ե խոնարհում), հայել—հայեցեալ, կամել—կամեցեալ, նայել—նայեցեալ (Ի խոնարհում)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Քերականները սովորաբար այս կարգի բայերի հետ հիշատակում են նաև **կոչել** բայը, սակայն սրա անցյալ դերբայը տեղ-տեղ հանդիպում է նաև ներկայի հիմքից կազմված ձևով՝ **կոչեալ** (Համմ. Բուզ., IV, Ե, էջ 136, այլև V, Դ, էջ 236)։

Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղաձայնը ունեցող բայերի անցյալ դերբայը կազմվում է նրանց պատճառականի կատարյալի հիմքից[1] այսպես՝ երկնչել—երկուցեալ, թաքչել—թաքուցեալ, թռչել—թռուցեալ, կառչել—կառուցեալ, կորնչել—կորուսեալ, հանգչել—հանգուցեալ, մատչել—մատուցեալ, մարտնչել—մարտուցեալ, յարնչել—յարուցեալ, այտնուլ—այտուցեալ, զարթնուլ—զարթուցեալ, խափնուլ—խափուցեալ, հարթնուլ—հարթուցեալ, մածնուլ—մածուցեալ, ջեռնուլ—ջեռուցեալ, ուռնուլ—ուռուցեալ, ոստնուլ—ոստուցեալ, պակնուլ—պակուցեալ, պշնուլ—պշուցեալ, սարտնուլ—սարտուցեալ, ցածնուլ—ցածուցեալ, ցասնուլ—ցասուցեալ։ Բացառություն է կազմում **հեղձնուլ** բայը, որի անցյալ դերբայը լինում է **հեղձեալ**։

Այս ձևով է կազմվում նաև **մեղանչել** բայի անցյալ դերբայը՝ մեղուցեալ, որը թեև ունի **անչ** ածանցը, սակայն անցյալ կատարյալի հիմքում ոչ բոլոր դեպքերում ունի ի թույլ բաղաձայնը (մեղ)։

[1] Տե՛ս § 282։



Այս տիպի անցյալ դերբայ են ունենում **ճանաչել** (որն ունի աչ ածանցը), **յանցանել** (=հանցանք գործել, ան ածանցով) և յառնել (=առողջանալ, վեր կենալ, ն ածանցով) բայերը՝ ծանուցեալ, յանցուցեալ (երբեմն նաև՝ յանցեալ), յարուցեալ։

§ 274. Գրաբարի անցյալ դերբայը իմաստով համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի վաղակատար և հարակատար դերբայներին. ու դերբայական մեկ մասնիկով (—եալ) ընդհանուր է բոլոր սեռերի համար, ըստ որում ներգործական սեռի բայերը առանց ձևական փոփոխության անցյալ դերբայում կարող են արտահայտել ներգործական և կրավորական սեռի նշանակություն, այսպես օրինակ՝ **գրեալ**=գրել, գրվել, գրած, գրված, **տեսեալ**=տեսել, տեսնվել, տեսած, տեսնված, **կազմեալ**=կազմել, կազմվել, կազմած, կազմված, **ստացեալ**=ստացել, ստացվել, ստացած, ստացված, իսկ չեզոք սեռի բայերը միայն չեզոք սեռի իմաստ են արտահայտում, օրինակ՝ **հասեալ**=հասել, հասած, **անցեալ**=անցել, անցած, **բազմեալ**=բազմել, բազմած, **անկեալ**=ընկել, ընկած, **գնացեալ**=գնացել, գնացած, **հեռացեալ**=հեռացել, հեռացած, **ջեռեալ**=տաքացել, տաքացած և այլն։

## ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ (ՆԵՐԿԱ) ԴԵՐԲԱՅ

§ 275. Ենթակայական դերբայը գրաբարի քերականության պատմության մեջ հայտնի է նաև **ընդունելություն ներկա** կամ **ներկա դերբայ** անվանումներով։

Այս դերբայը ձևավորվում է դերբայական -ող կամ -օղ (<աւղ) մասնիկներով, որոնք իմաստային որևէ տարբերություն չունեն. թերևս հնում, նախագրային շրջանում, տարբերություն եղել է, սակայն մեզ հասած գրավոր հուշարձաններում չի զգացվում։

§ 276. Ենթակայական դերբայի կազմության մեջ -ող (օղ) մասնիկը դրվում է բայի անցյալ կատարյալի, այլև ներկայի հիմքերի վրա։

Ե և Ի խոնարհումների պարզ բայերի ենթակայական դերբայը կազմվում է ներկայի հիմքից, օրինակ՝ յաղթող, խնդրող, սիրող, գնող, շինող (Ե խոնարհում), խօսող, դիպող (Ի խոնարհում), հանդիպում են նաև կատարյալի հիմքից կազմված ձևեր՝ երգեցող, ստացող (նաև՝ ստող), կամեցող։

Ե և Ի խոնարհումների ածանցավոր բայերի ենթակայական դերբայը զուգահեռաբար կազմվում է ներկայի և անցյալ կատարյալի հիմքից, բայց ավելի շատ՝ անցյալ կատարյալի հիմքից՝

գտանող || գտող, հարցանող || հարցող, տեսանող || տեսող, հար-կանող || հարող, հատանող || հատող (Ե խոնարհում), ուտանող || ու-տող, ծնանող || ծնող (Ի խոնարհում)։ Նույն պատկերն ունի նաև պատճառական բայերի ենթակայական դերբայը՝ դարձուցանող || դարձուցող, զգեցուցանող || զգեցուցող, հատուցանող || հատուցող։ Սակայն սրանք ավելի շատ հանդիպում են -իչ մասնիկով՝ զորա-ցուցիչ, գնացուցիչ և այլն։

Ա և Ու խոնարհումների բայերի ենթակայական դերբայը կազմվում է անցյալ կատարյալի հիմքից, օրինակ՝ բարկացող, գո-հացող, դառնացող, վայրացող, ընթացող, լացող, խնդացող, գի-նացող, ատացող, ցանկացող (Ա խոնարհում), առող, արգելող, ընկենող (Ու խոնարհում)։

Ա խոնարհման բայերից մի քանիսը դերբայական մասնիկն ընդունում են ներկայի հիմքի վրա՝ որսալ—որսող, յուսալ—յուսող, մուրալ—մուրող, հոգալ—հոգող։ Այս ձևով սրանք գործածվում են գոյականի իմաստով։

§ 277. Ենթակայական դերբայ չեն ունենում՝

ա) Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերը, Ի խոնարհման պատկանող չ և նչ ածանց ունեցող բայերը (թռչել, մարանչել, կորնչել և այլն), ինչպես և Ու խոնարհման Ն ածանց ունեցող մի շարք բայեր (այրնուլ, զարթնուլ, ու-նուլ և այլն)։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Մ. Խորենացու մոտ կա փախչող ձևը՝ «...փախչողք ի ժառանգութենէ» (III, ԿԸ, էջ 364)։

բ) Կրավորական սեռի բայերը. սիրող=սիրող և ոչ թե սիր-վող, գովող=գովող և ոչ թե գովվող։ Համառոտ բայերը ենթակա-յական դերբայում հանդես են գալիս միայն ներգործական նշա-նակությամբ, օրինակ՝ ծնող=ծնող (և ոչ ծնվող), դատող=դատող (և ոչ դատվող)։

գ) Ու խոնարհման չեզոք բայերը։

§ 278. Ենթակայական դերբայը գրաբարում լայն տարածում չունի, նա սահմանափակ կիրառությամբ է հանդես գալիս։ Նրա իմաստը սովորաբար արտահայտվում է այլ միջոցներով։ Այդ մի-ջոցներից են՝

ա) -Իչ մասնիկով կազմվող բայանվանական ձևերը, որոնք հնարավոր դերբայական ձևեր են եղել, սակայն գործածվում են ածականի և մասամբ էլ գոյականի իմաստով։ Հիշյալ մասնիկով հանդես են գալիս հատկապես անցողական բայերը, օրինակ՝ այրիչ (Եղնիկ, I, Բ, էջ 8), սիրիչ (Ագաթ., էջ 108), անիծիչ (Մատթ., Ե, 44), դատիչ, ծնիչ, գնացուցիչ, ապրեցուցիչ, անուցիչ



և այլն։ Այստեղ ևս համառոտ բայերը ներգործական նշանակու-թյուն ունեն, օրինակ՝ ծնիչ=ծնող (և ոչ ծնվող)։

բ) Բայի դիմավոր ձևը ու հարաբերական դերանվան հետ. այս դեպքում շատ հաճախ չարտահայտված հարաբերյալի փոխա-րեն բայի դիմավոր ձևի վրա դրվում է Ն հոդը, օրինակ՝ «... Որ շարժին և փոփոխին...» (Եղնիկ, I, Բ, էջ 9)՝ նա, որ շարժվում և փոփոխվում է, շարժվողը և փոփոխվողը։ Նույն նախադասության մեջ կարող են գործածվել երկու ձևն էլ, օրինակ՝ «Մատուցողն մի՛ խնդասցէ, և ոչ վաճառէն (=վաճառողն) մի՛ ողբասցէ» (Եզեկ., Է, 12)։

Նկատված է, որ հունարենից կատարված թարգմանություն-ների մեջ հունարենի համապատասխան դերբայը շատ հաճախ թարգմանվել է դիմավոր բայով և հարաբերական դերանվամբ։

գ) Դերբայական այլ ձևեր։ Այսպես. Ի մասնիկով ապառնի դերբայը ներգործական նշանակությամբ՝ գործելի=գործող, կրե-լի=կրող։ Այս իմաստով երբեմն գործածվում է նաև անցյալ դեր-բայը, օրինակ՝ «Դուռն իմ բաց էր ամենայն եկելոց»՝ իմ դուռը բաց էր բոլոր եկողների համար։

Ենթակայական դերբայի թերին լրացվում է նաև ածանց-մամբ, զանազան ածանցներով, օրինակ՝ ու—այցելու, փրկաւու, ուն—շարժուն, խօսուն, եց-իկ—երգեցիկ, ոչ—ահաւոչ, օն—գոր-ծօն և այլն։ Սրանք, իհարկե, դերբայական ձևեր չեն, ուրիշ խոսքի մասեր են (գոյական, ածական), սակայն արտահայտում են գոր-ծողություն կատարողի, մի բան անողի կամ լինողի իմաստ։

## ԳՐԱԲԱՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՆԱՐՀՈՒՄՆԵՐԻ

### Ե խոնարհում

§ 279. Ա) Պարզ բայի խոնարհման օրինակ՝ սիրել, ներկայի հիմք՝ սիր, անցյալ կատարյալի հիմք՝ սիրեաց։

**Սահմանական եղանակ**

Ներկա

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | սիրեմ | սիրեմք | սիրիմ | սիրիմք |
| 2-րդ » | սիրես | սիրէք | սիրիս | սիրիք |
| 3-րդ » | սիրէ | սիրեն | սիրի | սիրին |

### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | սիրէի | սիրէաք | |
| 2-րդ » | սիրէիր | սիրէիք | նույնը |
| 3-րդ » | սիրէր | սիրէին | |

### Անցյալ կատարյալ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | սիրեցի | սիրեցաք | սիրեցայ | սիրեցաք |
| 2-րդ » | սիրեցեր | սիրեցէք (իք) | սիրեցար | սիրեցայք |
| 3-րդ » | սիրեաց | սիրեցին | սիրեցաւ | սիրեցան |

## Ստորադասական եղանակ

### Առաջին ապառնի

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | սիրիցեմ | սիրիցեմք | սիրիցիմ | սիրիցիմք |
| 2-րդ » | սիրիցես | սիրիցէք | սիրիցիս | սիրիցիք |
| 3-րդ » | սիրիցէ | սիրիցեն | սիրիցի | սիրիցին |

### Երկրորդ ապառնի

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | սիրեցից | սիրեսցուք | սիրեցայց | սիրեսցուք |
| 2-րդ » | սիրեսցես | սիրեսջիք | սիրեսցիս | սիրեսջիք |
| 3-րդ » | սիրեսցէ | սիրեսցեն | սիրեսցի | սիրեսցին |

## Հրամայական եղանակ

### Ներկա (բուն հրամայական)

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 2-րդ դ. | սիրեա՛ | սիրեցէ՛ք | սիրեա՛ց | սիրեցա՛յք կամ սիրեցարու՛ք |



### Ապառնի (հորդորական հրամայական)

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ դ. | սիրեսջի՛ր | սիրեսջի՛ք | նույնը |

### Արգելական ձև

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ սիրեր | մի՛ սիրէք | մի՛ սիրիր | մի՛ սիրիք |

| | | Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ՝ | սիրել | սիրել(իլ) |
| | ապառնի՝ | սիրելոց (սիրելի) | նույնը. սիրելի |
| | անցյալ՝ | սիրեալ (սիրեցեալ) | նույնը. սիրեցեալ |
| | ենթակայական՝ | սիրող | չունի |

*բ) Ածանցավոր բայի խոնարհման օրինակ՝* արկանել, *ներկայի հիմք՝* արկան, *անցյալ կատարյալի հիմք՝* արկ:

## Սահմանական եղանակ

### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | արկանեմ | արկանեմք | արկանիմ | արկանիմք |
| 2-րդ » | արկանես | արկանէք | արկանիս | արկանիք |
| 3-րդ » | արկանէ | արկանեն | արկանի | արկանին |

### Անցյալ անկատար

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | արկանէի | արկանէաք | | |
| 2-րդ » | արկանէիր | արկանէիք | նույնը | |
| 3-րդ » | արկանէր | արկանէին | | |

### Անցյալ կատարյալ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | արկի | արկաք | արկայ | արկաք |
| 2-րդ » | արկեր | արկէք (իք) | արկար | արկայք |
| 3-րդ » | արկ, էարկ | արկին | արկաւ | արկան |

### Ստորադասական եղանակ

#### Առաջին ապառնի

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | արկանիցեմ | արկանիցեմք | արկանիցիմ | արկանիցիմք |
| 2-րդ » | արկանիցես | արկանիցէք | արկանիցիս | արկանիցիք |
| 3-րդ » | արկանիցէ | արկանիցեն | արկանիցի | արկանիցին |

#### Երկրորդ ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | արկից | արկցուք | արկայց | արկցուք |
| 2-րդ » | արկցես | արկջիք | արկցիս | արկջիք |
| 3-րդ » | արկցէ | արկցեն | արկցի | արկցին |

### Հրամայական եղանակ

#### Ներկա (*բուն հրամայական*)

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 2-րդ դ. | ա՛րկ | արկէ՛ք | արկի՛ր | արկա՛յք կամ արկարո՛ւք |

#### Ապառնի (*հորդորական հրամայական*)

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ դ. | արկջի՛ր | արկջի՛ք | նույնը |

#### Արգելական ձև

| Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| մի՛ արկաներ | մի՛ արկանէք | մի՛ արկանիր | մի՛ արկանիք |

| | Ներգործական | Կրավորական |
|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ՝ արկանել | արկանել (իլ) |
| | ապառնի՝ արկանելոց (լի) | նույնը, արկանելի |
| | անցյալ՝ արկեալ | նույնը |
| | ենթակայական՝ արկող, արկանող | չունի |



§ 280. **Ի խոնարհում**

*Ա) Պարզ բայի խոնարհման օրինակ՝* բազմել, *ներկայի հիմք՝* բազմ, *անցյալ կատարյալի հիմք՝* բազմեց:

### Սահմանական եղանակ

#### Ներկա

| Ներգործական | | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| | | 1-ին դ. | բազմիմ | բազմիմք |
| Չունի: | | 2-րդ » | բազմիս | բազմիք |
| | | 3-րդ » | բազմի | բազմին |

#### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| | 1-ին դ. | բազմէի | բազմէաք |
| Չունի: | 2-րդ » | բազմէիր | բազմէիք |
| | 3-րդ » | բազմէր | բազմէին |

#### Անցյալ կատարյալ

| | | | |
|---|---|---|---|
| | 1-ին դ. | բազմեցայ | բազմեցաք |
| Չունի: | 2-րդ » | բազմեցար | բազմեցայք |
| | 3-րդ » | բազմեցաւ | բազմեցան |

### Ստորադասական եղանակ

#### Առաջին ապառնի

| Ներգործական | | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| | | 1-ին դ. | բազմիցիմ | բազմիցիմք |
| Չունի: | | 2-րդ » | բազմիցիս | բազմիցիք |
| | | 3-րդ » | բազմիցի | բազմիցին |

#### Երկրորդ ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| | 1-ին դ. | բազմեցայց | բազմեցուք |
| Չունի: | 2-րդ » | բազմեսցիս | բազմեսջիք |
| | 3-րդ » | բազմեսցի | բազմեսցին |

### Հրամայական եղանակ

Ներկա (բուն հրամայական)

| | | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|---|
| | | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| Չունի: | 2-րդ դ. | | | բազմեա՛ց | բազմեցա՛յք կամ բազմեցարո՛ւք |

Ապառնի (հորդորական հրամայական)

| | | | |
|---|---|---|---|
| Չունի: | 2-րդ դ. | բազմեսջի՛ր | բազմեսջի՛ք |

Արգելական ձև

| | | | |
|---|---|---|---|
| Չունի: | 2-րդ դ. | մի՛ բազմիր | մի՛ բազմիք |

| | Ներգործական | Կրավորական |
|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ— | բազմել(իլ) |
| | ապառնի— | բազմելոց (լի) |
| | անցյալ— | բազմեալ կամ բազմեցեալ |
| | ենթակայական— | բազմող կամ բազմեցող |

բ) Ածանցավոր բայի խոնարհման օրինակ՝ շիջանել, ներկայի հիմք՝ շիջան, անցյալ կատարյալի հիմք՝ շէջ:

### Սահմանական եղանակ

Ներկա

| | | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|---|
| | | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| Չունի: | 1-ին դ. | | | շիջանիմ | շիջանիմք |
| | 2-րդ » | | | շիջանիս | շիջանիք |
| | 3-րդ » | | | շիջանի | շիջանին |

Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| Չունի: | 1-ին դ. | շիջանէի | շիջանէաք |
| | 2-րդ » | շիջանէիր | շիջանէիք |
| | 3-րդ » | շիջանէր | շիջանէին |



Անցյալ կատարյալ

| | | | |
|---|---|---|---|
| Չունի: | 1-ին դ. | շիջայ | շիջաք |
| | 2-րդ » | շիջար | շիջայք |
| | 3-րդ » | շիջաւ | շիջան |

### Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

| | | Ներգործական | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | | | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| Չունի: | 1-ին դ. | | շիջանիցիմ | շիջանիցիմք |
| | 2-րդ » | | շիջանիցիս | շիջանիցիք |
| | 3-րդ » | | շիջանիցի | շիջանիցին |

Երկրորդ ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| Չունի: | 1-ին դ. | շիջայց | շիջցուք |
| | 2-րդ » | շիջցիս | շիջջիք |
| | 3-րդ » | շիջցի | շիջցին |

### Հրամայական եղանակ

Ներկա (բուն հրամայական)

| | | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|---|
| | | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| Չունի: | 2-րդ դ. | | | շիջի՛ր | շիջա՛յք կամ շիջարո՛ւք |

Ապառնի (հորդորական հրամայական)

| | | | |
|---|---|---|---|
| Չունի: | 2-րդ դ. | շիջջի՛ր | շիջջի՛ք |

Արգելական ձև

| | | | |
|---|---|---|---|
| Չունի: | 2-րդ դ. | մի՛ շիջանիր | մի՛ շիջանիք |

| | Ներգործական | Կրավորական |
|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ— | շիջանել(իլ) |
| | ապառնի— | շիջանելոց, շիջանելի |
| | անցյալ— | շիջեալ |
| | ենթակայական— | շիջող, շիջանող |

§ 281.

## Գ. Խոնարհում

Ա) *Պարզ բայի խոնարհման օրինակ՝ ամալ, ներկայի հիմք՝ ամ, անցյալ կատարյալի հիմք՝ ամաց:*

### Սահմանական եղանակ

#### Ներկա

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | ամամ | ամամք | | |
| 2-րդ » | ամաս | ամայք | նույնը | |
| 3-րդ » | ամայ | աման | | |

#### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | ամայի | ամայաք | |
| 2-րդ » | ամայիր | ամայիք | նույնը |
| 3-րդ » | ամայր | ամային | |

#### Անցյալ կատարյալ

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | ամացի | ամացաք | ամացայ | ամացաք |
| 2-րդ » | ամացեր | ամացէք (իք) | ամացար | ամացայք |
| 3-րդ » | ամաց | ամացին | ամացաւ | ամացան |

### Ստորադասական եղանակ

#### Առաջին ապառնի

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | ամայցեմ | ամայցեմք | ամայցիմ | ամայցիմք |
| 2-րդ » | ամայցես | ամայցէք | ամայցիս | ամայցիք |
| 3-րդ » | ամայցէ | ամայցեն | ամայցի | ամայցին |

#### Երկրորդ ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | ամացից | ամասցուք | ամացայց | ամասցուք |
| 2-րդ » | ամասցես | ամասջիք | ամասցիս | ամասջիք |
| 3-րդ » | ամասցէ | ամասցեն | ամասցի | ամասցին |



### Հրամայական եղանակ

#### Ներկա (բուն հրամայական)

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 2-րդ դ. | ամա՛ | ամացէ՛ք | ամացի՛ր | ամացա՛յք կամ ամացարո՛ւք |

#### Ապառնի (հարգական հրամայական)

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ դ. | ամասջի՛ր | ամասջի՛ք | նույնը |

#### Արգելական ձև

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ամար մի՛ ամայք | նույնը |

| | | Ներգործական | Կրավորական |
|---|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ՝ | ամալ | նույնը |
| | ապառնի՝ | ամալոց(ի) | նույնը, ամալի |
| | անցյալ՝ | ամացեալ | նույնը |
| | ենթակայական՝ | ամացող | չունի |

Բ) *Ածանցավոր բայի խոնարհման օրինակ՝ սառնալ, ներկայի հիմք՝ սառն, անցյալ կատարյալի հիմք՝ սառց:*

### Սահմանական եղանակ

#### Ներկա

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | սառնամ | սառնամք | | |
| 2-րդ » | սառնաս | սառնայք | նույնը | |
| 3-րդ » | սառնայ | սառնան | | |

#### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | սառնայի | սառնայաք | |
| 2-րդ » | սառնայիր | սառնայիք | նույնը |
| 3-րդ » | սառնայր | սառնային | |

Անցյալ կատարյալ

| | | | |
|---|---|---|---|
| Չունի | 1-ին դ. | մոռացայ[1] | մոռացաք |
| | 2-րդ » | մոռացար | մոռացայք |
| | 3-րդ » | մոռացաւ | մոռացան |

**Ստորադասական եղանակ**

Առաջին ապառնի

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | մոռանայցեմ | մոռանայցեմք | մոռանայցիմ | մոռանայցիմք |
| 2-րդ » | մոռանայցես | մոռանայցէք | մոռանայցիս | մոռանայցիք |
| 3-րդ » | մոռանայցէ | մոռանայցեն | մոռանայցի | մոռանայցին |

Երկրորդ ապառնի

| Ներգործական | | Կրավորական | | |
|---|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| Չունի | | 1-ին դ. | մոռացայց | մոռասցուք |
| | | 2-րդ » | մոռասցիս | մոռասջիք |
| | | 3-րդ » | մոռասցի | մոռասցին |

**Հրամայական եղանակ**

Ներկա (*բուն հրամայական*)

| Ներգործական | | Կրավորական | | |
|---|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| Չունի | | 2-րդ դ. | մոռացի՛ր | մոռացա՛յք կամ մոռացարո՛ւք |

Ապառնի (*հորդորական հրամայական*)

2-րդ դ. մոռասջի՛ր   մոռասջի՛ք   նույնը

Արգելական ձև

2-րդ դ. մի՛ մոռանար մի՛ մոռանայք   նույնը

[1] Կրավորական խոնարհմամբ արտահայտվում է և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի նշանակությունը (տե՛ս § 251 ծան.)։



| | | Ներգործական | Կրավորական |
|---|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ՝ | մոռանալ | նույնը |
| | ապառնի՝ | մոռանալոց(ի) | նույնը, մոռանալի |
| | անցյալ՝ | մոռացեալ | նույնը |
| | ենթակայական՝ | մոռացող | չունի |

§ 282. **Բ. խոնարհում**

*Ա) Պարզ բայի խոնարհման օրինակ՝* հեղուլ, *ներկայի հիմք՝* հեղ, *անցյալ կատարյալի հիմք՝* հեղ։

**Սահմանական եղանակ**

Ներկա

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | հեղում | հեղումք | | |
| 2-րդ » | հեղուս | հեղուք | նույնը | |
| 3-րդ » | հեղու | հեղուն | | |

Անցյալ անկատար

| | Ներգործական | | Կրավորական | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | հեղուի | հեղուաք | | |
| 2-րդ » | հեղուիր | հեղուիք | նույնը | |
| 3-րդ » | հեղոյր | հեղուին | | |

Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | հեղի | հեղաք | հեղայ | հեղաք |
| 2-րդ » | հեղեր | հեղէք (իք) | հեղար | հեղայք |
| 3-րդ » | հեղ, եհեղ | հեղին | հեղաւ | հեղան |

### Ստորադասական եղանակ

#### Առաջին ապառնի

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | հեղուցում | հեղուցումք | | |
| 2-րդ » | հեղուցուս | հեղուցուք | նոյնը | |
| 3-րդ » | հեղուցու | հեղուցուն | | |

#### Երկրորդ ապառնի

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | հեղից | հեղցուք | հեղայց | հեղցուք |
| 2-րդ » | հեղցես | հեղջիք | հեղջիս | հեղջիք |
| 3-րդ » | հեղցէ | հեղցեն | հեղցի | հեղցին |

### Հրամայական եղանակ

#### Ներկա (բուն հրամայական)

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 2-րդ դ. | հե՛ղ | հեղէ՛ք | հեղի՛ր | հեղա՛յք կամ հեղարո՛ւք |

#### Ապառնի (հորդորական հրամայական)

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ դ. | հեղջի՛ր | հեղջի՛ք | նոյնը |

#### Արգելական ձև

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 2-րդ դ. | մի՛ հեղուր | մի՛ հեղուք | նոյնը | |

| | Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ՝ հեղուլ | նոյնը |
| | ապառնի՝ հեղլոց (լի) | նոյնը, հեղլի |
| | անցյալ՝ հեղեալ | նոյնը |
| | ենթակայական՝ հեղող | չունի |



Բ) Ածանցավոր բայի խոնարհման օրինակ՝ գրօսնուլ. ներկայի հիմք՝ գրօսն, անցյալ կատարյալի հիմք՝ գրօս:

### Սահմանական եղանակ

#### Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | գրօսնում | գրօսնումք |
| 2-րդ » | գրօսնուս | գրօսնուք |
| 3-րդ » | գրօսնու | գրօսնուն |

#### Անցյալ անկատար

| | |
|---|---|
| գրօսնուի | գրօսնուաք |
| գրօսնուիր | գրօսնուիք |
| գրօսնույր | գրօսնուին |

#### Անցյալ կատարյալ

| Ներգործաձև | | Կրավորաձև | | |
|---|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| | | 1-ին դ. | գրօսայ | գրօսաք |
| Չունի | | 2-րդ » | գրօսար | գրօսայք |
| | | 3-րդ » | գրօսաւ | գրօսան |

### Ստորադասական եղանակ

#### Առաջին ապառնի

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | գրօսնուցում | գրօսնուցումք |
| 2-րդ » | գրօսնուցուս | գրօսնուցուք |
| 3-րդ » | գրօսնուցու | գրօսնուցուն |

#### Երկրորդ ապառնի

| Ներգործաձև | | Կրավորաձև | | |
|---|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| | | 1-ին դ. | գրօսայց | գրօսցուք |
| Չունի | | 2-րդ » | գրօսջիս | գրօսջիք |
| | | 3-րդ » | գրօսցի | գրօսցին |

Հրամայական եղանակ

Ներկա (բուն հրամայական)

Ներգործական — Կրավորական

Եզակի թ. Հոգնակի թ. Եզակի թ. Հոգնակի թ.

Չունի՝ զբօսի՛ր զբօսա՛յք կամ զբօսարո՛ւք

Ապառնի (հորդորական հրամայական)

2-րդ դ. զբօսջի՛ր զբօսջի՛ք

Արգելական ձև

2-րդ դ. մի՛ զբօսնուր մի՛ զբօսնուք

Դերբայներ. անորոշ՝ զբօսնուլ
ապառնի՝ զբօսնլոց (լի)
անցյալ՝ զբօսեալ
ենթակայական՝ չունի

## ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔՈՒՄ Ի ԹՈՒՅԼ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՕՐԻՆԱԿՆԵՐ

§ 283. Ա) Ի խոնարհման պատկանող բայ՝ թաքչել (թաքչիմ), ներկայի հիմք՝ թաքչ, անցյալ կատարյալի հիմք՝ թաքի:

Սահմանական եղանակ

Ներկա

Ներգործական — Կրավորական

Եզակի թ. Հոգնակի թ. — Եզակի թ. Հոգնակի թ.

Չունի՝
1-ին դ. թաքչիմ թաքչիմք
2-րդ » թաքչիս թաքչիք
3-րդ » թաքչի թաքչին

Անցյալ անկատար

Ներգործական — Կրավորական

Եզակի թ. Հոգնակի թ. — Եզակի թ. Հոգնակի թ.

Չունի՝
1-ին դ. թաքչէի թաքչէաք
2-րդ » թաքչէիր թաքչէիք
3-րդ » թաքչէր թաքչէին



Անցյալ կատարյալ

Ներգործական — Կրավորական

Եզակի թ. Հոգնակի թ. — Եզակի թ. Հոգնակի թ.

Չունի՝
1-ին դ. թաքեայ թաքեաք
2-րդ » թաքեար թաքեայք
3-րդ » թաքեաւ թաքեան

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

Ներգործական — Կրավորական

Եզակի թ. Հոգնակի թ. — Եզակի թ. Հոգնակի թ.

Չունի՝
1-ին դ. թաքչիցիմ թաքչիցիմք
2-րդ » թաքչիցիս թաքչիցիք
3-րդ » թաքչիցի թաքչիցին

Երկրորդ ապառնի

(խառն խոնարհում)

Եզակի թ. Հոգնակի թ.

թաքեայց թաքիցուք
թաքիցես թաքիջիք
թաքիցէ թաքիցեն

Հրամայական եղանակ

Ներկա (բուն հրամայական)

Ներգործական — Կրավորական

Եզակի թ. Հոգնակի թ. — Եզակի թ. Հոգնակի թ.

Չունի՝ 2-րդ դ. թաքի՛ր թաքեա՛յք կամ թաքիրո՛ւք

Ապառնի (հորդորական հրամայական)

2-րդ դ. թաքիջի՛ր թաքիջի՛ք

### Արգելական ձև

| Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| Չունի | | մի՛ թաքչիր | մի՛ թաքչեք |

| | Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ՝ | թաքչել(իլ) |
| | ապառնի՝ | թաքչելոց(լի) |
| | անցյալ՝ | թաքուցեալ |
| | ենթակայական՝ | չունի |

*Բ) Ու խոնարհման բայ՝ ստանուլ, ներկայի հիմք՝ ստան, անցյալ կատարյալի հիմք՝ ստաց:*

## Սահմանական եղանակ

### Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | ստանում | ստանումք |
| 2-րդ » | ստանուս | ստանուք |
| 3-րդ » | ստանու | ստանուն |

### Անցյալ անկատար

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | ստանուի | ստանուաք |
| 2-րդ » | ստանուիր | ստանուիք |
| 3-րդ » | ստանոյր | ստանուին |

### Անցյալ կատարյալ

| Ներգործաձև | | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| | | 1-ին դ. | ստացայ | ստացաք |
| Չունի | | 2-րդ » | ստացար | ստացայք |
| | | 3-րդ » | ստացաւ | ստացան |



## Ստորադասական եղանակ

### Առաջին ապառնի

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | ստանուցում | ստանուցումք |
| 2-րդ » | ստանուցուս | ստանուցուք |
| 3-րդ » | ստանուցու | ստանուցուն |

### Երկրորդ ապառնի

*(խառն խոնարհում)*

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | ստացայց | ստասցուք |
| 2-րդ » | ստասցես | ստասջիք |
| 3-րդ » | ստասցէ | ստասցեն |

## Հրամայական եղանակ

### Ներկա *(բուն հրամայական)*

| Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|
| Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| *Չունի* | *2-րդ դ.* | *ստացի՛ր* | *ստացէ՛ք կամ ստացարու՛ք* |

### Ապառնի *(հորդորական հրամայական)*

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 2-րդ դ. | ստասջի՛ր | ստասջի՛ք |

### Արգելական ձև

*2-րդ դ. մի՛ ստանուր մի՛ ստանուք*

| | | |
|---|---|---|
| Դերբայներ. | անորոշ՝ | ստանուլ |
| | ապառնի՝ | ստանելոց (լի) |
| | անցյալ՝ | ստացեալ |
| | ենթակայական՝ | չունի |

## ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

§ 284. *Ինչպես աշխարհաբարում, նույնպես և գրաբարում պատճառական բայերը ցույց են տալիս միջնորդավորված գործողություն։ Այստեղ ենթական գործողությունը կատարել է տալիս մի ուրիշին (խնդրին), հրահրում, դրդապատճառ է դառնում գործողության կատարման համար ու այդպիսով էլ մասնակցում է գործողության կատարմանը։ Օրինակ՝ «Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու, յետոյ ածէին* **բազմեցուցանէին** *զարքայն Արշակ» (Բուզ., IV, ԾԴ, էջ 255)՝ նախ՝ երբ բոլորը բազմեցին՝ յուրաքանչյուրն իր աստիճանի համաձայն, հետո բերեցին բազմեցրին Արշակ արքային (տառացի՝ բերում բազմեցնում էին)։ Ընդգծված օրինակում բազմելու գործողությունը ներկայացված է որպես միջնորդավորված գործողություն, որի կատարման համար դեր ունեն և՛ ենթական* (**նրանք**, *որ արտահայտված չէ), և՛ ուղիղ խնդիրը* (**զարքայն Արշակ**)։ *Կամ՝* «**Եւ նա ածել** *զԱրշակ արքայ Հայոց զառաջն իւրոյ» (Բուզ., IV, ԾԴ, էջ 258)՝ Եվ Հայոց Արշակ արքային բերել ավեց իր առաջ։ Այստեղ ենթական (նա՝ Շապուհը) ոչ թե բերում է, այլ բերել է տալիս, ուրիշներն են բերում Արշակին՝ Շապուհի հրամանով։*

§ 285. *Գրաբարում պատճառական բայերն արտահայտվում են երկու ձևով՝ ա) ածանցմամբ, բ) նկարագրական եղանակով։ Նախ՝ առաջինի մասին։*

§ 286. *Իբրև պատճառական ածանց գրաբարում գործածվում է* **ույց** *ածանցը, որը ներկայի հիմքից կազմվող անորոշում հանդես է գալիս* **ան** *ածանցի հետ՝* **ույց+ան=ուցան**, *իսկ անցյալ դերբայում այս ածանցներին կցվում է դերբայական եալ մասնիկը՝ անկախ այն բանից, թե ածանցվող բայը ո՛ր խոնարհման է պատկանում։ Այստեղ* **ույց** *ածանցը շեշտակրությունից զրկվելով դառնում է* **ուց**։

**Ույց** *ածանցը (մյուսների հետ) դրվում է բայի անցյալ կատարյալի հիմքի վրա։ Օրինակներ՝*

**Ե խոնարհում՝**

| | | | | |
|---|---|---|---|---|
| *հնչել, անց. կատ. հիմք՝* | | *հնչեաց, պատճ.՝* | | *հնչեցուցանել (=հընչեցնել)* |
| *վազել* | » | *վազեաց* | » | *վազեցուցանել (=վազեցնել)* |
| *զարկանել* | » | *զարկ* | » | *զարկուցանել (=խփել, խփել տալ)* |
| *իջանել* | » | *էջ* | » | *իջուցանել (=իջեցնել)* |
| *հասանել* | » | *հաս* | » | *հասուցանել (=հասցնել)* |

**Ի խոնարհում՝**

| | | | | |
|---|---|---|---|---|
| *բազմիլ (իմ)* | » | *բազմեաց* | » | *բազմեցուցանել (=բազմեցնել)* |
| *յոգնիլ (իմ)* | » | *յոգնեաց* | » | *յոգնեցուցանել (=հոգնեցնել)* |
| *նստիլ (իմ)* | » | *նիստ* | » | *նստուցանել (=նստեցնել)* |
| *բուսանիլ (իմ)* | » | *բոյս* | » | *բուսուցանել (=բուսցնել)* |
| *սնանիլ (իմ)* | » | *սուն* | » | *սնուցանել (=սնել, սնել տալ)* |
| *ուսանիլ (իմ)* | » | *ուս* | » | *ուսուցանել (=սովորեցնել, ուսուցանել)* |

**Ա խոնարհում՝**

| | | |
|---|---|---|
| *գնալ, հիմք՝* | *գնաց* | *գնացուցանել (=շարժել, տանել, գնալ տալ)* |
| *զգալ* | *զգաց* | *զգացուցանել (=զգացնել)* |
| *զարմանալ* | *զարմաց* | *զարմացուցանել (=զարմացնել)* |
| *հեռանալ* | *հեռաց* | *հեռացուցանել (=հեռացնել)* |

**Ու խոնարհում՝**

| | | |
|---|---|---|
| *լնուլ* | *լից* | *լցուցանել (=լցնել, լցնել տալ)* |
| *հեղձնուլ* | *հեղձ* | *հեղձուցանել (=խեղդել, խեղդել տալ)* |
| *ջեռնուլ* | *ջեռ* | *ջեռուցանել (=տաքացնել)* |

*Ինչպես տեսնում ենք, տարբեր խոնարհումների բայերը պատճառական դառնալիս անցնում են մի ընդհանուր խոնարհման տակ* (**Ե** *խոնարհում*)։

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1.—* **Ե** *խոնարհման պատկանող* **մտանել** *բայի պատճառականը լինում է* **մուծանել**։ *Շատ հազվադեպ կիրառությամբ հանդիպում է* **մտուցանել** *ձևով։ Հայկազյան բառարանը նույն խոնարհման պատկանող* **իջանել** *բայի համար* **իջուցանել** *սովորական ձևի հետ տալիս է նաև* **իջեցուցանել** *ձևը։*

*ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2.—* **Ու** *խոնարհման պատկանող* **թողուլ** *բայի պատճառականը ըստ կանոնի կլիներ* **թողուցանել**։ *Մեր հին մատենագրության մեջ գործածվում է նաև* **թողացուցանել** *ձևը, օրինակ՝* **թողացուցանէ** *(Բուզ., IV, ԾՁ, էջ 265),* **թողացուցին** *(Բուզ., IV, ԾԷ, էջ 266)։ Դրանք, համանաբար,*

կազմված են լողանալ բայից, որը գործածվում է որպես միջակի բայ։

§ 287. Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերը պատճառականի այց ածանցն ընդունելիս կատարյալի հիմքի ի բաղադրիչը կորցնում են, օրինակ՝

թռչել, անց. կատ. հիմք՝ թռի, պատճ. թռուցանել (=թռցնել)
թաքչել » » » թաքի » թաքուցանել (=թաքցնել)
մատչել » » » մատի » մատուցանել (=մատուցել, մոտեցնել)
փախչել փախի փախուցանել (=փախցնել)
զարթնուլ զարթի զարթուցանել (=արթնացնել)
մածնուլ մածի մածուցանել (=կպցնել)
պակնուլ պակի պակուցանել (=սաստիկ վախեցնել)

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Անցյալ կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող երկնչել (երկնչիմ) բայի պատճառականը մեր հին մատենագրության մեջ ընդունված է երկնցուցանել ձևով (տե՛ս Եզնիկ., էջ 67, Բուզ., IV, Դ, էջ 11 և այլն), փոխանակ՝ երկուցանել: Համանմանաբար սա կազմված է անցյալ կատարյալի բաղադրյալ-ցոյական բայերի հիմքի նմանակությամբ։ Համեմատաբար ուշ շրջանից կա վկայված բառ կանոնի կազմված ձև՝ երկուցանել:

Մի քանի բայերում այց ածանցի ց աֆրիկատը ատամնայնացվում և վերածվում է ս պարզ հնչյունի, իսկ սա էլ կա՛մ մնում է նույնությամբ, կա՛մ էլ ձայնեղանում է, դառնալով զ: Այդ բայերն են՝ կորչել—կորուսանել, ելանել—ելուզանել (=դուրս հանել, դուրս բերել), ընդելանել (իմ)—ընդելուզանել (=հյուսել, կցել, շարել, ամբողջ հանել), ընկլնուլ—ընկլուզանել (=կուլ տալ, ընկղմել, խեղդել), փլչել (իմ)—փլուզանել (=փլցնել): Վերջինս տեղ-տեղ հանդիպում է նաև փլուցանել ձևով։

§ 288. Պատճառական բայերը կարող են կազմվել թե՛ չեզոք և թե՛ ներգործական սեռի բայերից։ Չեզոք սեռի բայերը պատճառականի վերածվելով՝ ստանում են ներգործական սեռի իմաստ՝ պատճառական որոշ երանգով և դրանով իսկ յուրահատկություն են ունենում ներգործական սեռի հանդեպ (ինչպես՝ արշաւեցուցանել, բազմեցուցանել, զգացուցանել, դիմեցուցանել և այլն)։ Իսկ ներգործական սեռի բայերն այդ դեպքում հանդես են գալիս պատճառականության բաղադրյալ գաղափարի զուգահեռությամբ (ինչպես՝ կարծել—կարծեցուցանել, ջիջել—ջիջեցուցանել և այլն)։ Այս պատճառով էլ բոլոր դեպքերում պատճառական բայերը անվիճա-



պահորեն չի կարելի նույնացնել ներգործականներին։ Թե՛ սոսկ ներգործականները և թե՛ պատճառականները անցողական բայեր են (verba transitiva, переходные глаголы), բայց որում սոսկ ներգործականները անցողական-ներգործականներ են, պատճառականները՝ անցողական-պատճառականներ։

Եթե նկատի չունենանք որոշ մասնակի դեպքեր, ապա իբրև կանոն կարելի է նշել, որ պատճառական բայերը անցողական բայեր են և ներգործական սեռի (ոչ պատճառական) բայերի հետ կազմում են անցողական (transitiv) բայերի խումբը, սակայն նրանք այդ խմբի մեջ մտնում են յուրահատուկ սեռային առումով՝ պատճառական սեռային առումով։ Այնպես որ պատճառական բայերը ներգործական սեռի իմաստ ունեն, բայց սոսկ ներգործականները պատճառական իմաստ չունեն. այստեղից էլ բխում է նրանց տարբերակումը։ Գրաբարի հանրահայտ բառարանները («Նոր բառգիրք հայկազեան լեզուի», «Առձեռն բառարան հայկազեան լեզուի») պատճառական բայերի դիմաց ներգործականի նշում են անում (ն). ճիշտ է, դրանով ընդգծվում է, որ նրանք ներգործական իմաստ ունեն, սակայն միաժամանակ անտեսվում է նրանց պատճառականության գաղափարը։ Անշուշտ, սեռային իմաստով տարբերություն ունեն ջիջել, ջիջեցուցանել և բազմեցուցանել բայերը, առաջինը սոսկ ներգործական է, մյուս երկուսը պատճառական սեռային առում ունեն, սակայն դրանք էլ որոշ տարբերություն ունեն. բազմեցուցանել բայը կազմված է բազմել չեզոք սեռի բայից և ունի պատճառականության որոշ երանգ, իսկ ջիջեցուցանել կազմված է ջիջել ներգործական բայից, այստեղ պատճառականությունը ցայտուն է և զուգահեռ է ներգործական սեռին, մինչդեռ հիշյալ բառարանները ջիջել, ջիջեցուցանել և բազմեցուցանել բայերը (և ընդհանրապես նրանց նմանները) նշում են որպես ներգործական բայեր։ Քերականական արդի ըմբռնմամբ՝ դրանք անցողական բայեր են, բայց որում մեկը՝ ներգործական սեռով, իսկ մյուսները՝ պատճառական սեռային առումով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Քերականներից ոմանք ներգործական սեռի բայերից կազմված պատճառական բայերը համարում են անցողական բայեր (օրինակ՝ Չալըխյան, Այտընյան), իսկ ոմանք էլ այդպես են անվանում պատճառական բոլոր բայերը անխտիր՝ թե՛ չեզոք և թե՛ ներգործական սեռի բայերից կազմվածները (Ջամչյան, Ավետիքյան, Ստ. Մալխասյանց և այլք)։

§ 289. Նկատելի է, որ գրաբարում պատճառական բայեր են կազմվում ավելի շատ չեզոք սեռի բայերից, քան ներգործականներից։

§ 290. Ույց ածանցով կազմված պատճառական բայերը խոնարհվում են Ե խոնարհման ածանցավոր բայերի օրինակով։ Անցյալ կատարյալի հիմքում ան ածանցը չի պահպանվում, օրինակ՝ փախուցանել, կատ. հիմք՝ փախույց, թաքուցանել—թաքույց, զորացուցանել—զորացույց, յիշեցուցանել—յիշեցույց, իջուցանել—իջույց, սնուցանել—սնույց, զարթուցանել—զարթույց և այլն։

Բուն հրամայականի եզակի թվի 2-րդ դեմքում սուր շեշտի հետևանքով ույց ածանցի յ և ց հնչյունները դուրս են ընկնում, և այդպիսով բառը վերջավորվում է ո-ով, օրինակ՝ հնացուցանել, անց. կատ. հիմք՝ հնացույց, բուն հրամ. եզակի 2-րդ դեմք՝ հնացո՛, զարմացուցանել—զարմացույց—զարմացո՛, կարծեցուցանել—կարծեցույց—կարծեցո՛, հնչեցուցանել—հնչեցույց—հնչեցո՛, անցուցանել—անցույց—անցո՛, հատուցանել—հատույց—հատո՛, ուսուցանել—ուսո՛յց—ուսո՛, մատուցանել—մատույց—մատո՛, ջեռուցանել—ջեռույց—ջեռո՛, մածուցանել—մածույց—մածո՛։

Բացառություն է կազմում մուծանել բայը, որը լինում է մո՛յծ։

## § 291. Խոնարհման օրինակ

Հատուցանել. ներկայի հիմք՝ հատուցան. անցյալ կատարյալի հիմք՝ հատույց։

### Սահմանական եղանակ

#### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | հատուցանեմ | հատուցանեմք | հատուցանիմ | հատուցանիմք |
| 2-րդ » | հատուցանես | հատուցանէք | հատուցանիս | հատուցանիք |
| 3-րդ » | հատուցանէ | հատուցանեն | հատուցանի | հատուցանին |



#### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | հատուցանէի | հատուցանէաք | Նույնը՝ կրավորական նշանակությամբ։ |
| 2-րդ » | հատուցանէիր | հատուցանէիք | |
| 3-րդ » | հատուցանէր | հատուցանէին | |

#### Անցյալ կատարյալ

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | հատուցի | հատուցաք | հատուցայ | հատուցաք |
| 2-րդ » | հատուցեր | հատուցէք(իք) | հատուցար | հատուցայք |
| 3-րդ » | հատոյց | հատուցին | հատուցաւ | հատուցան |

### Ստորադասական եղանակ

#### Առաջին ապառնի

##### Ներգործաձև

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | հատուցանիցեմ | հատուցանիցեմք |
| 2-րդ » | հատուցանիցես | հատուցանիցէք |
| 3-րդ » | հատուցանիցէ | հատուցանիցեն |

##### Կրավորաձև

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | հատուցանիցիմ | հատուցանիցիմք |
| 2-րդ » | հատուցանիցիս | հատուցանիցիք |
| 3-րդ » | հատուցանիցի | հատուցանիցին |

#### Երկրորդ ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | հատուցից | հատուցուք | հատուցայց | հատուցուք |
| 2-րդ » | հատուցես | հատուցջիք | հատուցջիս | հատուցջիք |
| 3-րդ » | հատուցէ | հատուցեն | հատուցի | հատուցին |

### Հրամայական եղանակ

#### Ներկա (բուն հրամայական)

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 2-րդ դ. | հատո՛ | հատուցէ՛ք | հատուցի՛ր | հատուցա՛յք կամ հատուցարո՛ւք |

Ապառնի (հորդորական հրամայական)

| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| 2-րդ դ. | հատուցի՛ր | հատուցե՛ք | նույնը | |

Արգելական ձև

2-րդ դ. մի՛ հատուցաներ մի՛ հատուցանեք մի՛ հատուցանիր մի՛ հատուցանիք

| | Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|---|
| Դերբայներ. անորոշ՝ | հատուցանել | նույնը |
| ապառնի՝ | հատուցանելոց (լի) | նույնը, հատուցանելի |
| անցյալ՝ | հատուցեալ | նույնը |
| ենթակայական՝ | հատուցանող կամ հատուցող | չունի |

Պատճառական շատ բայեր սովորաբար կրավորաձև չեն խոնարհվում։ Կրավորաձև խոնարհում չեն ունենում հատկապես պատճառական այն բայերը, որոնք կազմված են բաղադրյալ-ցոյական հիմք ունեցող բայերից, օրինակ՝ հեռացուցանել, ամրացուցանել, խոնարհեցուցանել և այլն, իսկ արմատական և ի թույլ բաղադրիչ ունեցող հիմքից կազմված պատճառական բայերը կրավորաձև կարող են խոնարհվել, օրինակ՝ շիջուցանել (=հանգցնել), ուսուցանել, ջեռուցանել, սնուցանել, թացուցանել, մատուցանել, ծածուցանել, փախուցանել և այլն։

§ 292. Արդեն նշվել է, որ գրաբարում պատճառականի իմաստն արտահայտվում է նաև նկարագրական եղանակով։ Դա կատարվում է բայի անորոշ դերբայի և տալ բայի հարադրությամբ, օրինակ՝ տալ առնել, տալ սպանանել, տալ գործել (=անել տալ) և այլն։ Երբեմն պատահում է, որ տալ բայը դրվում է ածանցմամբ կազմված պատճառական բայի վրա, օրինակ՝ «...Զեղբայրն իւր եա կոտուսանել» (Բուզ., IV, ծԸ, էջ 189)՝ Իր եղբորը կոտորել տվեց։ Այստեղ միջնորդավորման գաղափարը կրկնակի է դառնում։

Այստեղ տալ բայը սպասարկու դեր է կատարում։ Խոնարհելիս բուն բայը մնում է անփոփոխ՝ անորոշ դերբայի ձևով, խոնարհվում է տալ բայը (տալ բայի խոնարհման մասին տե՛ս § 302)։

Հազվադեպ կիրառությամբ տալ բայի դերը կատարում է նաև առնել բայը, օրինակ՝ «արա՛... մատնել» (Ղուկ., ԺԴ, 23),



փոխ. մո՛յծ. առաջացէ առնել (Բուզ., IV, Ի, էջ 207)։ Ինչպես բերված օրինակներն էլ ցույց են տալիս, այս դեպքում էլ խոնարհվում է սպասարկու բայը՝ առնել, իսկ բուն բայը մնում է անփոփոխ, այսինքն՝ խոնարհման մեջ պահպանում է անորոշ դերբայի ձևը։

Նկատելի է, որ այս նկարագրական ձևերում առավել ցայտուն է գործողության միջնորդավորման գաղափարը։

## ԱՆԿԱՆՈՆ ԿԱՄ ՔԱՐՏՈՒՂԻ ԽՈՆԱՐՀՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԲԱՅԵՐ

§ 293. Գրաբարում կան մի շարք բայեր, որոնք խոնարհման մեջ զանազան ձևերում շեղվում են վերը հիշված կանոններից և խոնարհման յուրահատուկ ձևեր ունեն։ Մեր քերականության պատմության մեջ այդ կարգի բայերը կոչվում են անկանոն կամ քարտուղի բայեր։

Անկանոն կամ քարտուղի խոնարհում ունեցող բայերի խոնարհման շեղումներն ու յուրահատկությունները արտահայտվում են անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում, իսկ ներկայի հիմքից կազմվող ձևերում այդ բայերը խոնարհվում են գրաբարի բայերի խոնարհման ընդհանուր կանոններով։ Ուրեմն, «անկանոն կամ քարտուղի» անվանումն այստեղ բացարձակ առում չունի, այն իրականում վերաբերում է այդ բայերի անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերին։

§ 294. Ուսումնասիրելով անկանոն կամ քարտուղի խոնարհում ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերը՝ այդ բայերը կարող ենք բաժանել երկու խմբի՝ ա) բայեր, որոնց անցյալ կատարյալի հիմքը կազմվում է նույն բայից, սակայն կրում է զանազան յուրահատուկ փոփոխություններ կամ խոնարհման մեջ շեղումներ է ունենում, բ) բայեր, որոնք անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում ամբողջովին կամ մասամբ (կամ բոլոր ձևերում, կամ մի մասում) առնում են այլ արմատ, որպիսին նույն բայի ներկայի հիմքից կազմվող ձևերում չկա, վերցվում է ուրիշ բայերից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Յուրահատկություններն ու շեղումները ընդունվում են գրավոր շրջանի օրինաչափությունների համեմատությամբ։ Կան այնպիսիները, որոնք հնագույն օրինաչափության հետքեր են, սակայն գրավոր շրջանում դիտվում են որպես շեղումներ։

## Առաջին խմբի բայեր

### 1. Առնել (=անել, կատարել, ստեղծել)

§ 295. Առնել բայը ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ն խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև։

#### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | առնեմ | առնեմք | առնիմ | առնիմք |
| 2-րդ » | առնես | առնէք | առնիս | առնիք |
| 3-րդ » | առնէ | առնեն | առնի | առնին |

#### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | առնէի | առնէաք | |
| 2-րդ » | առնէիր | առնէիք | նույնը |
| 3-րդ » | առնէր | առնէին | |

#### Առաջին ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | առնիցեմ | առնիցեմք | առնիցիմ | առնիցիմք |
| 2-րդ » | առնիցես | առնիցէք | առնիցիս | առնիցիք |
| 3-րդ » | առնիցէ | առնիցեն | առնիցի | առնիցին |

#### Արգելական հրամայական

2-րդ դ. մի՛ առներ մի՛ առնէք մի՛ առնիր մի՛ առնիք

| | Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|---|
| Անորոշ դերբայ՝ | առնել | առնել (իլ) |
| Ապառնի դերբայ՝ | առնելոց (առնելի) | նույնը, առնելի |

Անցյալ կատարյալի հիմքը հանդես է գալիս արար ձևով՝ ար արմատի կրկնությամբ, որը երկրորդ ապառնու եզակի թվի երկրորդ դեմքից սկսած՝ վերջին ր ձայնորդը փոխարինում է ս-ով (համանմանաբար բաղադրյալ-ցոյական բայերի նմանությամբ)։



#### Անցյալ կատարյալ

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | արարի | արարաք | արարայ | արարաք |
| 2-րդ » | արարեր | արարէք (իք) | արարար | արարայք |
| 3-րդ » | արար | արարին | արարաւ | արարան |

#### Երկրորդ ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | արարից | արասցուք | արարայց | արասցուք |
| 2-րդ » | արասցես | արասջիք | արասցիս | արասջիք |
| 3-րդ » | արասցէ | արասցեն | արասցի | արասցին |

#### Բուն հրամայական

2-րդ դ. արա՛ արարէ՛ք արարեա՛լ լեր արարեա՛լ լերուք

#### Հորդորական հրամայական

2-րդ դ. արասջի՛ր արասջի՛ք նույնը

| | Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|---|
| Անցյալ դերբայ՝ | արարեալ | նույնը |
| Ենթակայական դերբայ՝ | արարող (հնագույնը՝ արարիչ) | չունի |

### 2. Գնել

§ 296. Ներկայի հիմքից կազմվող ձևերում կանոնավորապես խոնարհվում է Ն խոնարհման բայերի օրինակով՝ և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև։

#### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | գնեմ | գնեմք | գնիմ[1] | գնիմք |
| 2-րդ » | գնես | գնէք | գնիս | գնիք |
| 3-րդ » | գնէ | գնեն | գնի | գնին |

[1] Կա նաև գնիմ կրավորաձև չեզոք բայ, որը գործածվում է գնալու նշանակությամբ։

### Անցյալ անկատար

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| ն դ. | դնէի | դնէաք | | |
| դ » | դնէիր | դնէիք | նոյնը | |
| դ » | դնէր | դնէին | | |

### Առաջին ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| ն դ. | դնիցեմ | դնիցեմք | դնիցիմ | դնիցիմք |
| դ » | դնիցես | դնիցէք | դնիցիս | դնիցիք |
| դ » | դնիցէ | դնիցեն | դնիցի | դնիցին |

### Արգելական հրամայական

| | | | | |
|---|---|---|---|---|
| դ. | մի՛ դներ | մի՛ դնէք | մի՛ դնիր | մի՛ դնիք |

| | Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|---|
| Անորոշ դերբայ՝ | դնել | դնել (իլ) |
| Ապառնի դերբայ՝ | դնելոց (լի) | նոյնը, դնելի |

Շեղումներն ու յուրահատկությունները երևան են գալիս անց-
յալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում։ Անցյալ կատարյալում
...ան է գալիս եդ հիմքը (որտեղ ե-ն հավելում է), անցյալ կա-
...յալի բոլոր դեմքերում երևան եկող ե հնչյունը պահպանվում է
... երկրորդ ապառնի ժամանակի եզակի թվի 1-ին դեմքում
...յալ դերբայում։

### Անցյալ կատարյալ

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| դ. | եդի | եդաք | եդայ | եդաք |
| » | եդիր (եդեր) | եդիք | եդար | եդայք |
| » | եդ | եդին | եդաւ | եդան |

### Երկրորդ ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| դ. | եդից | դիցուք | եդայց | դիցուք |
| » | դիցես | դիջիք | դիցիս | դիջիք |
| » | դիցէ | դիցեն | դիցի | դիցին |

### Բուն հրամայական

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 2-րդ դ. | դի՛ր | դի՛ք | եդեա՛լ լեր | եդեա՛լ լերուք |

### Հորդորական հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ դ. | դիջի՛ր | դիջի՛ք | նոյնը |

| | Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|---|
| Անցյալ դերբայ՝ | եդեալ | նոյնը |

## 3. Լսել

§ 297. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ե խոնարհման պարզ բայերի օրինակով՝ ներգործաձև և կրավորաձև։

### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | լսեմ | լսեմք | լսիմ | լսիմք |
| 2-րդ » | լսես | լսէք | լսիս | լսիք |
| 3-րդ » | լսէ | լսեն | լսի | լսին |

### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | լսէի | լսէաք | |
| 2-րդ » | լսէիր | լսէիք | նոյնը |
| 3-րդ » | լսէր | լսէին | |

### Առաջին ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | լսիցեմ | լսիցեմք | լսիցիմ | լսիցիմք |
| 2-րդ » | լսիցես | լսիցէք | լսիցիս | լսիցիք |
| 3-րդ » | լսիցէ | լսիցեն | լսիցի | լսիցին |

### Արգելական հրամայական

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ լսեր | մի՛ լսէք | մի՛ լսիր | մի՛ լսիք |

| Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|
| Անորոշ դերբայ՝ լսել | լսել (իլ) |
| Ապառնի դերբայ՝ լսելոց (ի) | նույնը, լսելի |

Կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է կրավորաձև՝ լու հիմքով. երկրորդ ապառնին ունենում է խառն խոնարհում. եզակի թվի 2-րդ դեմքից սկսած վերջավորություններից առաջ երևան է գալիս ի ձայնավորը։

### Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | լուայ | լուաք |
| 2-րդ » | լուար | լուայք |
| 3-րդ » | լուաւ | լուան |

### Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | լուայց | լուիցուք |
| 2-րդ » | լուիցես | լուիջիք |
| 3-րդ » | լուիցէ | լուիցեն |

### Բուն հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | լո՛ւր | լուա՛յք կամ լուարո՛ւք |

### Հորդորական հրամայական

| | |
|---|---|
| լուիջի՛ր | լուիջի՛ք |

Անցյալ դերբայ՝ լուեալ
Ենթակա-ածական դերբայ՝ լուող (միայն ներգործ. նշանակությամբ)։

Լսել բայի կրավորական սեռի նշանակությունն արտահայտելու համար հաճախ գործածվում է նրա ի մասնիկով ապառնի դերբայը լինիմ բայի հարադրությամբ՝ լսելի լինիմ (լսելի եմ լինում, այսինքն՝ լսվում եմ), լսելի լինիս, լսելի լինի և այլն։ Այս ձևով լսել բայը ավելի շատ հանդես է գալիս անցյալ կատարյալի հիմքից կազմվող ժամանակներում (լսելի եղէ, լսելի եղեր և այլն)։

## 4. Ճանաչել (*ծանաչել)

§ 298. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է և խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ ներգործաձև և կրավորաձև։



### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | ճանաչեմ | ճանաչեմք | ճանաչիմ | ճանաչիմք |
| 2-րդ » | ճանաչես | ճանաչէք | ճանաչիս | ճանաչիք |
| 3-րդ » | ճանաչէ | ճանաչեն | ճանաչի | ճանաչին |

### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | ճանաչէի | ճանաչէաք | |
| 2-րդ » | ճանաչէիր | ճանաչէիք | նույնը |
| 3-րդ » | ճանաչէր | ճանաչէին | |

### Առաջին ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | ճանաչիցեմ | ճանաչիցեմք | ճանաչիցիմ | ճանաչիցիմք |
| 2-րդ » | ճանաչիցես | ճանաչիցէք | ճանաչիցիս | ճանաչիցիք |
| 3-րդ » | ճանաչիցէ | ճանաչիցեն | ճանաչիցի | ճանաչիցին |

### Արգելական հրամայական

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ ճանաչեր | մի՛ ճանաչէք | մի՛ ճանաչիր | մի՛ ճանաչիք |

Անորոշ դերբայ՝ ճանաչել    նույնը
Ապառնի դերբայ՝ ճանաչելոց (ի), նույնը, ճանաչելի

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի օրինակով։ Կրավորաձև (երկրորդ ապառնիում՝ խառն) խոնարհմամբ արտահայտում է ներգործական սեռի իմաստ։

### Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | ծանեայ | ծանեաք |
| 2-րդ » | ծանեար | ծանեայք |
| 3-րդ » | ծանեաւ | ծանեան |

### Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | ծանեայց | ծանիցուք |
| 2-րդ » | ծանիցես | ծանիջիք |
| 3-րդ » | ծանիցէ | ծանիցեն |

### Բուն հրամայական

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 2-րդ դ. | ծանի՛ր | ծանեա՛յք կամ ծանիրո՛ւք |

### Հորդորական հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | ծանիջի՛ր | ծանիջի՛ք |

*Անցյալ դերբայ՝ ծանուցեալ*
*Ենթակայական դերբայ՝ ճանաչող*

### 5. Յառնել (=առողջանալ, վեր կենալ)

§ 299. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ե խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ միայն ներգործաձև (չեզոք է)։*

### Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | յառնեմ | յառնեմք |
| 2-րդ » | յառնես | յառնէք |
| 3-րդ » | յառնէ | յառնեն |

### Անցյալ անկատար

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | յառնէի | յառնէաք |
| 2-րդ » | յառնէիր | յառնէիք |
| 3-րդ » | յառնէր | յառնէին |

### Առաջին ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | յառնիցեմ | յառնիցեմք |
| 2-րդ » | յառնիցես | յառնիցէք |
| 3-րդ » | յառնիցէ | յառնիցեն |

### Արգելական հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ յառնիր | մի՛ յառնէք |

*Անորոշ դերբայ՝ յառնել*
*Ապառնի դերբայ՝ յառնելոց*

*Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի օրինակով, բուն հրամայականում ունի յուրահատուկ ձև։*



### Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | յարեայ | յարեաք |
| 2-րդ » | յարեար | յարեայք |
| 3-րդ » | յարեաւ | յարեան |

### Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | յարեայց | յարիցուք |
| 2-րդ » | յարիցես | յարիջիք |
| 3-րդ » | յարիցէ | յարիցեն |

### Բուն հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | արի՛ | արի՛ք |

### Հորդորական հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | յարիջի՛ր | յարիջի՛ք |

*Անցյալ դերբայ՝ յարուցեալ*

### 6. Յանցանել (=հանցանք գործել, սխալվել, մեղք գործել)

§ 300. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ե խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ միայն ներգործաձև (չեզոք է)։*

### Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցանեմ | յանցանեմք |
| 2-րդ » | յանցանես | յանցանէք |
| 3-րդ » | յանցանէ | յանցանեն |

### Անցյալ անկատար

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցանէի | յանցանէաք |
| 2-րդ » | յանցանէիր | յանցանէիք |
| 3-րդ » | յանցանէր | յանցանէին |

### Առաջին ապառնի

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցանիցեմ | յանցանիցեմք |
| 2-րդ » | յանցանիցես | յանցանիցէք |
| 3-րդ » | յանցանիցէ | յանցանիցեն |

### Արգելական հրամայական

2-րդ դ. մի՛ յանցաներ      մի՛ յանցանէք

Անորոշ դերբայ՝ յանցանել

Ապառնի դերբայ՝ յանցանելոց

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի օրինակով՝ կրավորաձև և խառն։

### Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցեայ | յանցեաք |
| 2-րդ » | յանցեար | յանցեայք |
| 3-րդ » | յանցեաւ | յանցեան |

### Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | յանցեայց | յանցիցուք |
| 2-րդ » | յանցիցես | յանցիջիք |
| 3-րդ » | յանցիցէ | յանցիցեն |

### Բուն հրամայական

2-րդ դ. յանցի՛ր      յանցեա՛յք կամ յանցերու՛ք

### Հորդորական հրամայական

2-րդ դ. յանցիջի՛ր      յանցիջի՛ք

Անցյալ դերբայ՝ յանցուցեալ

### 7. Մեղանչել (=մեղք գործել, սխալվել)

§ 301. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ե խոնարհման ածանցավոր բայերի օրինակով՝ միայն ներգործաձև (չեզոք է)։

### Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղանչեմ | մեղանչեմք |
| 2-րդ » | մեղանչես | մեղանչէք |
| 3-րդ » | մեղանչէ | մեղանչեն |



### Անցյալ անկատար

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղանչէի | մեղանչէաք |
| 2-րդ » | մեղանչէիր | մեղանչէիք |
| 3-րդ » | մեղանչէր | մեղանչէին |

### Առաջին ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղանչիցեմ | մեղանչիցեմք |
| 2-րդ » | մեղանչիցես | մեղանչիցէք |
| 3-րդ » | մեղանչիցէ | մեղանչիցեն |

### Արգելական հրամայական

2-րդ դ. մի՛ մեղանչեր      մի՛ մեղանչէք

Անորոշ դերբայ՝ մեղանչել

Ապառնի դերբայ՝ մեղանչելոց

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է կրավորաձև՝ երկրորդ ապառնիում, բուն հրամայականի եզակի թվում և հորդորական հրամայականում հանդես բերելով կատարյալի հիմքում ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի առանձնահատկությունները։

### Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղայ | մեղաք |
| 2-րդ » | մեղար | մեղայք |
| 3-րդ » | մեղաւ | մեղան |

### Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | մեղայց | մեղիցուք |
| 2-րդ » | մեղիցես | մեղիջիք |
| 3-րդ » | մեղիցէ | մեղիցեն |

### Բուն հրամայական

2-րդ դ. մեղի՛ր      մեղա՛յք կամ մեղարու՛ք

### Հորդորական հրամայական

2-րդ դ. մեղիջի՛ր      մեղիջի՛ք

Անցյալ դերբայ՝ մեղուցեալ

## 8. Տալ

§ 302. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ա խոնարհման պարզ բայերի նման։*

### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | *տամ* | *տամք* | | |
| 2-րդ » | *տաս* | *տայք* | *Ընդունված չէ։* | |
| 3-րդ » | *տայ* | *տան* | | |

### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | *տայի* | *տայաք* | |
| 2-րդ » | *տայիր* | *տայիք* | *Ընդունված չէ։* |
| 3-րդ » | *տայր* | *տային* | |

### Առաջին ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | *տայցեմ* | *տայցեմք* | *տայցիմ* | *տայցիմք* |
| 2-րդ » | *տայցես* | *տայցէք* | *տայցիս* | *տայցիք* |
| 3-րդ » | *տայցէ* | *տայցեն* | *տայցի* | *տայցին* |

### Արգելական եղանակ

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 2-րդ դ. | *մի՛ տար* | *մի՛ տայք* | *Ընդունված չէ։* | |

| Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|
| *Անորոշ դերբայ՝ տալ* | *նույնը* |
| *Ապառնի դերբայ՝ տալոց* | *նույնը, տալի* |

*Կրավորական սեռի իմաստ արտահայտելու համար գործածվում է անցյալ դերբայի և լինիմ բայի հարադրությամբ՝ տուեալ լինիմ, տուեալ լինէի և այլն։*



### Անցյալ կատարյալ

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | *ետու* | *տուաք* | *տուայ* | *տուաք* |
| 2-րդ » | *ետուր* | *ետուք* | *տուար* | *տուայք* |
| 3-րդ » | *ետ* | *ետուն* | *տուաւ* | *տուան* |

### Երկրորդ ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | *տաց* | *տացուք* | *տուայց* | *տացուք* |
| 2-րդ » | *տացես* | *տաջիք* | *տացիս* | *տաջիք* |
| 3-րդ » | *տացէ* | *տացեն* | *տացի* | *տացին* |

### Բուն հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ դ. | *տո՛ւր* | *տո՛ւք* | *տուեա՛լ լեր տուեա՛լ լերուք* |

### Հորդորական հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ դ. | *տաջի՛ր* | *տաջի՛ք* | *նույնը* |

| Ներգործաձև | | Կրավորաձև |
|---|---|---|
| *Անցյալ դերբայ՝* | *տուեալ* | *նույնը* |
| *Ենթակայական դերբայ՝ տուող* | | *չունի* |

### Երկրորդ խմբի բայեր

## 1. Գալ

§ 303. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ա խոնարհման պարզ բայերի օրինակով։*

### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | *գամ* | *գամք* | | |
| 2-րդ » | *գաս* | *գայք* | *Չունի։* | |
| 3-րդ » | *գայ* | *գան* | | |

### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | գայի | գայաք | |
| 2-րդ » | գայիր | գայիք | Չունի։ |
| 3-րդ » | գար | գային | |

### Առաջին ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | գայցեմ | գայցեմք | |
| 2-րդ » | գայցես | գայցէք | Չունի։ |
| 3-րդ » | գայցէ | գայցեն | |

### Արգելական հրամայական

| | | | |
|---|---|---|---|
| 2-րդ դ. | մի՛ գար | մի՛ գայք | Չունի։ |

| Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|
| Անորոշ դերբայ՝ գալ | Չունի։ |
| Ապառնի դերբայ՝ գալոց | |

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս եկ արմատը։ Երկրորդ ապառնի ժամանակի եզակի թվի 2-րդ դեմքից սկսած՝ վերջավորություններից առաջ ունենում է ս հնչյունը (համաբանաբար բաղադրյալ-ցոյական բայերի նմանությամբ)։

### Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | եկի | եկաք |
| 2-րդ » | եկիր | եկիք |
| 3-րդ » | եկն | եկին |

### Երկրորդ ապառնի

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | եկից | եկեսցուք |
| 2-րդ » | եկեսցես | եկեսջիք |
| 3-րդ » | եկեսցէ | եկեսցեն |

### Բուն հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | ե՛կ | եկա՛յք |



### Հորդորական հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | եկեսջի՛ր | եկեսջի՛ք |

Անցյալ դերբայ՝ եկեալ
Ենթակայական դերբայ՝ եկող

## 2. Ուտել

§ 304. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է ե խոնարհման պարզ բայերի օրինակով՝ և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև։

### Ներկա

| | Ներգործաձև Եզակի թ. | Ներգործաձև Հոգնակի թ. | Կրավորաձև Եզակի թ. | Կրավորաձև Հոգնակի թ. |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | ուտեմ | ուտեմք | ուտիմ | ուտիմք |
| 2-րդ » | ուտես | ուտէք | ուտիս | ուտիք |
| 3-րդ » | ուտէ | ուտեն | ուտի | ուտին |

### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | ուտէի | ուտէաք | |
| 2-րդ » | ուտէիր | ուտէիք | Նույնը |
| 3-րդ » | ուտէր | ուտէին | |

### Առաջին ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | ուտիցեմ | ուտիցեմք | ուտիցիմ | ուտիցիմք |
| 2-րդ » | ուտիցես | ուտիցէք | ուտիցիս | ուտիցիք |
| 3-րդ » | ուտիցէ | ուտիցեն | ուտիցի | ուտիցին |

### Արգելական հրամայական

| Ներգործաձև Եզակի թ. | Ներգործաձև Հոգնակի թ. | Կրավորաձև Եզակի թ. | Կրավորաձև Հոգնակի թ. |
|---|---|---|---|
| մի՛ ուտեր | մի՛ ուտէք | մի՛ ուտիր | մի՛ ուտիք |

Անորոշ դերբայ՝ ուտել    նույնը
Ապառնի դերբայ՝ ուտելոց նույնը, ուտելի

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս կեր արմատը։ Այս ձևերում ընդհանրապես խոնարհվում է

կրավորաձև։ Երկրորդ ապառնիում ունենում է ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի օրինաչափություն (միայն եզակի թվի 1-ին դեմքում ի չի լինում)։ Անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքում ունենում է նաև ներգործաձև տարբերակ՝ եկեր։

### Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | կերայ | կերաք |
| 2-րդ » | կերար | կերայք |
| 3-րդ » | կերաւ (եկեր) | կերան |

### Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | կերայց | կերիցուք |
| 2-րդ » | կերիցես | կերիջիք |
| 3-րդ » | կերիցէ | կերիցեն |

### Բուն հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | կե՛ր | կերա՛յք |

### Հորդորական հրամայական

| | | |
|---|---|---|
| 2-րդ դ. | կերիջի՛ր | կերիջի՛ք |

*Անցյալ դերբայ՝ կերեալ*

*Ենթակայական դերբայ՝ կերող (միայն ներգործ. նշ.)*

Կրավորական սեռի իմաստն արտահայտվում է հիմնականում նույն ձևերով, միայն անցյալ կատարյալի 2-րդ տարբերակը (եկեր) այս դեպքում չի լինում, իսկ երկրորդ ապառնու վերջավորություններում է-ն և ե-ն փոխվում են ի-ի՝ կերիցիս, կերիցի, կերիցին։ Կրավորական սեռի իմաստ արտահայտելու համար կեր արմատը հանդես է գալիս նաև լինել բայի հարադրությամբ՝ կեր լինել։ Այս ձևով գործածվում է հատկապես կատարյալի հիմքից կազմվող ձևերում։

## 3. Ըմպել (=խմել)

§ 305. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ե խոնարհման պարզ բայերի օրինակով՝ և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև։



### Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | ըմպեմ | ըմպեմք | ըմպիմ | ըմպիմք |
| 2-րդ » | ըմպես | ըմպէք | ըմպիս | ըմպիք |
| 3-րդ » | ըմպէ | ըմպեն | ըմպի | ըմպին |

### Անցյալ անկատար

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | ըմպէի | ըմպէաք | |
| 2-րդ » | ըմպէիր | ըմպէիք | նույնը |
| 3-րդ » | ըմպէր | ըմպէին | |

### Առաջին ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | ըմպիցեմ | ըմպիցեմք | ըմպիցիմ | ըմպիցիմք |
| 2-րդ » | ըմպիցես | ըմպիցէք | ըմպիցիս | ըմպիցիք |
| 3-րդ » | ըմպիցէ | ըմպիցեն | ըմպիցի | ըմպիցին |

### Արգելական հրամայական

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2-րդ. դ. | մի՛ ըմպեր | մի՛ ըմպէք | մի՛ ըմպիր | մի՛ ըմպիք |

| Ներգործաձև | Կրավորաձև |
|---|---|
| *Անորոշ դերբայ՝ ըմպել* | *նույնը* |
| *Ապառնի դերբայ՝ ըմպելոց* | *նույնը, ըմպելի* |

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս արբ արմատը (արբենալ բայից)։

### Անցյալ կատարյալ

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | արբի | արբաք | արբայ | արբաք |
| 2-րդ » | արբեր | արբէք(իք) | արբար | արբայք |
| 3-րդ » | արբ, էարբ | արբին | արբաւ | արբան |

Երկրորդ ապառնի

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | արբից | արբցուք | արբայց | արբցուք |
| 2-րդ » | արբցես | արբջիք | արբցիս | արբջիք |
| 3-րդ » | արբցէ | արբցեն | արբցի | արբցին |

Բուն հրամայական

2-րդ դ. ա՛րբ    արբէ՛ք    արբեա՛լ լեր արբեա՛լ լե-րուք կամ՝ արբարո՛ւք

Հորդորական հրամայական

2-րդ դ. արբջի՛ր    արբջի՛ք    նոյնը

Ներգործական    Կրավորական

Անցյալ դերբայ՝ արբեալ    նոյնը

Ենթակայական դերբայը հանդիպում է արբեցող ձևով, որը իրականում արբենալ բայինն է և գրաբարում ածականի իմաստ ունի։

Դ. Լինել (լինիմ)

§ 306. Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է որպես Ի խոնարհման բայ՝ կրավորաձև։

Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | լինիմ | լինիմք |
| 2-րդ » | լինիս | լինիք |
| 3-րդ » | լինի | լինին |

Անցյալ անկատար

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | լինէի | լինէաք |
| 2-րդ » | լինէիր | լինէիք |
| 3-րդ » | լինէր | լինէին |

Առաջին ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | լինիցիմ | լինիցիմք |
| 2-րդ » | լինիցիս | լինիցիք |
| 3-րդ » | լինիցի | լինիցին |

Արգելական հրամայական

2-րդ դ. մի՛ լինիր    մի՛ լինիք

Անորոշ դերբայ՝ լինել
Ապառնի դերբայ՝ լինելոց

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս ներկայի հիմքից կազմվող ձևերում շատ քիչ գործածական եղանել բայի եղ արմատը՝ խոնարհման յուրահատկություններով։ Երկրորդ ապառնիում զուգահեռաբար գործածվում են նաև անփական ձևեր (առանց եզակի թվի 1-ին դեմքի)։ Հրամայականը և անցյալ դերբայը գործածվում են անփական արմատով։

Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | եղէ | եղաք կամ եղեաք |
| 2-րդ » | եղեր | եղէք |
| 3-րդ » | եղև | եղեն |

Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | եղէց | եղիցուք |
| 2-րդ » | եղիցիս կամ եղիցես | եղիջիք |
| 3-րդ » | եղիցի | եղիցին |
| 1-ին դ. | (լիցիմ) | լիցուք |
| 2-րդ » | լիցիս | լիջիք |
| 3-րդ » | լիցի | լիցին |

Բուն հրամայական

2-րդ դ. լե՛ր    լերո՛ւք

Հորդորական հրամայական

2-րդ դ. լիջի՛ր    լիջի՛ք

Անցյալ դերբայ՝ լեալ

5. Ունել (*ունիմ՝ բռնել, ունենալ, համարել և այլն*)

§ 307. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ի խոնարհման բայերի նման։ Կրավորաձև խոնարհվելով՝ արտահայտում է ներգործական և կրավորական սեռի իմաստ (հասարակ է)։*

Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | *ունիմ* | *ունիմք* |
| 2-րդ » | *ունիս* | *ունիք* |
| 3-րդ » | *ունի* | *ունին* |

Անցյալ անկատար

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | *ունէի* | *ունէաք* |
| 2-րդ » | *ունէիր* | *ունէիք* |
| 3-րդ » | *ունէր* | *ունէին* |

Առաջին ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | *ունիցիմ* | *ունիցիմք* |
| 2-րդ » | *ունիցիս* | *ունիցիք* |
| 3-րդ » | *ունիցի* | *ունիցին* |

Արգելական հրամայական

2-րդ դ. *մի՛ ունիր* *մի՛ ունիք*

*Անորոշ դերբայ՝ ունել*

*Ապառնի դերբայ՝ ունելոց, ունելի*

*Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում հանդես է գալիս* կալ *արմատը* (կալայ *կամ* կալեայ *բայից*)։ *Խոնարհվում է կրավորաձև։*

Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | *կալայ* | *կալաք* |
| 2-րդ » | *կալար* | *կալայք* |
| 3-րդ » | *կալաւ* | *կալան* |



Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | *կալայց* | *կալցուք* |
| 2-րդ » | *կալցիս* | *կալջիք* |
| 3-րդ » | *կալցի* | *կալցին* |

Բուն հրամայական

2-րդ դ. *կա՛լ կամ կա՛* *կալա՛յք կամ կալարո՛ւք*

Հորդորական հրամայական

2-րդ դ. *կալջի՛ր* *կալջի՛ք*

*Անցյալ դերբայ՝ կալեալ*

*Ենթակայական դերբայ՝ (ունող)*

Կալ *արմատով կազմվող դիմավոր ձևերը սովորաբար ունենում են բռնելու նշանակություն, իսկ ունենալու իմաստ արտահայտելու համար գործածվում են հարադրական այլ ձևեր, օրինակ՝ եղեն իմ (կամ ինձ) որդիք՝ ես որդիներ ունեցա։*

*Համապատասխան կրավորական սեռի նշանակություն արտահայտելու համար* ունել *բայը երբեմն գործածվում է անցյալ դերբայի ձևով* լինել *բայի հարադրությամբ՝ կալեալ լինիմ, կալեալ եղէ և այլն։* Ունել *բայի ձևով խոնարհվում է նաև* ընդունել *(ընդունիմ) բայը։*

6. Երթալ

§ 308. *Ներկայի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է Ա խոնարհման պարզ բայերի օրինակով։*

Ներկա

| | Ներգործաձև | | Կրավորաձև | |
|---|---|---|---|---|
| | Եզակի թ. | Հոգնակի թ. | Եզակի թ. | Հոգնակի թ. |
| 1-ին դ. | *երթամ* | *երթամք* | | |
| 2-րդ » | *երթաս* | *երթայք* | *Չունի։* | |
| 3-րդ » | *երթայ* | *երթան* | | |

Անցյալ անկատար

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1-ին դ. | *երթայի* | *երթայաք* | | |
| 2-րդ » | *երթայիր* | *երթայիք* | *Չունի։* | |
| 3-րդ » | *երթայր* | *երթային* | | |

Առաջին ապառնի

| | | | |
|---|---|---|---|
| 1-ին դ. | երթայցեմ | երթայցեմք | |
| 2-րդ » | երթայցես | երթայցէք | Չունի: |
| 3-րդ » | երթայցէ | երթայցեն | |

Արգելական հրամայական

2-րդ դ. մի՛ երթար    մի՛ երթայք    Չունի:

| Ներգործական | Կրավորական |
|---|---|
| Անորոշ դերբայ՝ երթալ | Չունի: |
| Ապառնի դերբայ՝ երթալոց | |

Անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում խոնարհվում է չոգ և սեփական երթ արմատներով: Չոգ արմատը գործածվում է միայն անցյալ կատարյալում, իսկ մնացած ձևերը կազմվում են երթ արմատով: Երկրորդ ապառնի ժամանակը և սրանից կազմվող հորդորական հրամայականը ունենում են ի թույլ բաղադրիչ ունեցող բայերի հատկանիշը:

Անցյալ կատարյալ

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | չոգայ | չոգաք |
| 2-րդ » | չոգար | չոգայք |
| 3-րդ » | չոգաւ | չոգան |

Երկրորդ ապառնի

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | երթայց | երթիցուք |
| 2-րդ » | երթիցես | երթիջիք |
| 3-րդ » | երթիցէ | երթիցեն |

Բուն հրամայական

2-րդ դ. ե՛րթ    երթա՛յք

Հորդորական հրամայական

2-րդ դ. երթիջի՛ր    երթիջի՛ք

Անցյալ դերբայ՝ երթեալ



## ԴԵՖԵԿՏԻՎ ԲԱՅԵՐ

**§ 309.** Գրաբարում կան այնպիսի բայեր, որոնց խոնարհումն ամբողջական չէ: Նրանց խոնարհման մեջ պակասում են զանազան ժամանակներ կամ եղած ժամանակներում էլ՝ առանձին դիմային ձևեր: Այդպիսի բայերը կոչվում են պակասավոր բայեր, որոնց թիվը գրաբարում մեծ չէ:

### 1. Եմ

**§ 310. Եմ** բայն ունի հետևյալ ժամանակները.

Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | եմ | եմք |
| 2-րդ » | ես | էք |
| 3-րդ » | է | են |

Անցյալ անկատար

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | էի | էաք |
| 2-րդ » | էիր | էիք |
| 3-րդ » | էր | էին |

Առաջին ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | իցեմ | իցեմք |
| 2-րդ » | իցես | իցէք |
| 3-րդ » | իցէ | իցեն |

Կան նաև բուն հրամայականի ձևերը՝ **Ե՛ր, Է՛ք** կամ **Երո՛ւք**, որոնք առանձին չեն գործածվում, սովորաբար հանդիպում են ո՛չ եր (= ո՛չ եղիր), ո՛չ էք կամ ո՛չ երուք (= ո՛չ եղեք) արտահայտությունների մեջ:

**Եմ** բայը գրաբարում գործածվում է բաղադրյալ ժամանակների կազմության մեջ որպես օժանդակ բայ, այլև՝ ինքնուրույնաբար, որպես էական բայ, օրինակ՝ «Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքի կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա» (Եղիշե, 1, էջ 13)՝ Եվ բռնեց ու նրա ձեռքը տվեց պարսիկ մարդկանց, որոնք փախել էին քրիստոնեու-

թյան համար և գտնվում էին կայսեր քաղաքում։ Այս նույն նախադասության մեջ էին բայաձևը գործածված է երկու անգամ, մի դեպքում օժանդակ բայ է, դերբայի հետ դիմավոր ձև է կազմել (փախուցեալ էին), մյուս դեպքում ունի ինքնուրույն բայի արժեք, էական բայ է (էին ի քաղաքի կայսեր)։

### 2. Գոլ (=գոյություն ունենալ, լինել)

§ 311. Գոլ բայն ունի միայն ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները, ըստ որում վերջին երկուսը գործածվում են միայն 3-րդ դեմքում։ Դերբայներից ունի միայն անորոշը՝ գոլ։

Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | գոմ | գոմք |
| 2-րդ » | գոս | գոյք |
| 3-րդ » | գոյ | գոն |

Անցյալ անկատար

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | — | — |
| 2-րդ » | — | — |
| 3-րդ » | գոյր | գոյին |

Առաջին ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | — | — |
| 2-րդ » | — | — |
| 3-րդ » | գուցէ | գուցեն |

### 3. Կայ (=կա)

§ 312. Այս բայն ունի ներկա, անցյալ անկատար և առաջին ապառնի ժամանակները միայն 3-րդ դեմքում. ներկա՝ կայ, կան, անցյալ անկատար՝ կայր, կային, առաջին ապառնի՝ կայցէ, կայցեն, շատ հազվադեպ գործածվում է նաև ներկայի առաջին դեմքը՝ կամ։ Ժխտականը լինում է չ-ով՝ չկայ, չկայր, իսկ ո՛չ-ով այլ իմաստ է արտահայտում (ոչ կայ=չի մնում, չի կանգնում)։



Գրաբարում կա նաև կալ բայ՝ մնալ, կանգնել նշանակությամբ, որը բոլոր ձևերն ունի և խոնարհվում է Ա խոնարհման պարզ բայերի օրինակով։

### 4. Պարտել (պարտիմ=պետք եմ, պարտավոր եմ)

§ 313. Ունի ներկա, անցյալ անկատար, առաջին ապառնի ժամանակները և անորոշ դերբայը։

Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | պարտիմ | պարտիմք |
| 2-րդ » | պարտիս | պարտիք |
| 3-րդ » | պարտի | պարտին |

Անցյալ անկատար

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | պարտէի | պարտէաք |
| 2-րդ » | պարտէիր | պարտէիք |
| 3-րդ » | պարտէր | պարտէին |

Առաջին ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | պարտիցիմ | պարտիցիմք |
| 2-րդ » | պարտիցիս | պարտիցիք |
| 3-րդ » | պարտիցի | պարտիցին |

Կա նաև պարտել բայ՝ հաղթել, պարտության մատնել նշանակությամբ, որն ունի բոլոր ձևերը։ Այս բայի կրավորական խոնարհումը հիշյալ ձևերում համընկնում է պարտիմ պակասավոր բայի (պարտիմ=պարտվում եմ...), դրանք պետք է տարբերել ըստ իմաստի։

### 5. Դոգ (=ասա՛)

§ 314. Ունի երկրորդ ապառնի (առանց եզակի թվի 1-ին դեմքի), հրամայական եղանակի ներկա և ապառնի ժամանակները։

Երկրորդ ապառնի

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | — | դոգցուք |
| 2-րդ » | դոգցես | դոգջիք |
| 3-րդ » | դոգցէ | դոգցեն |

Հրամայական եղանակի ներկա

2-րդ դ. *գո՛գ* *գոգէ՛ք*

Ապառնի

2-րդ դ. *գոգջի՛ր* *գոգջի՛ք*

6. Չ ի ք

§ 315. *Ունի միայն այս ձևը՝ չիք (=չկա):*

## ԲԱՂԱԴՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 316. *Գրաբարում բաղադրյալ ժամանակները կազմվում են անցյալ և ապառնի դերբայներով ու օժանդակ բայով: Որպես օժանդակ բայ գրաբարում սովորաբար գործածվում են* **եմ** *և* **լինիմ** *բայերը:*

*Առանձնապես լայն տարածում ունեն* **եմ** *բայով կազմված բաղադրյալ ժամանակները, որոնց կազմության մեջ հանդես են գալիս թե՛ անցյալ և թե՛ ապառնի դերբայները:*

*Բաղադրյալ ժամանակների կազմության մեջ անցյալ և ապառնի դերբայները ըստ դերբայական խմբերի և սեռերի հանդես են բերում իրենց յուրահատկությունները (յուրաքանչյուր դերբայի մասին տե՛ս համապատասխան տեղում): «...*Հասեալ է ժամանակ *կենաց. մտէ՛ք հայրէ՛ք հնձանս, զի* լցեալ են *հնձանք և գեղուն գուբք իւրեանց...» (Ագաթ., էջ 269),* հասեալ է*=հասել է,* լցեալ են*=լցվել են, լցված են: «*Լցեալ էին *շահմարանք նոցա անօրէնութեամբ» (Ն. տ.),* լցեալ էին*=լցված էին: «Եթէ* խաւարեալ իցեմ *ի բէն...» (Եղիշէ, III, էջ 61),* խաւարեալ իցեմ*=խավարված լինենք (այսինք նաև՝ խավարված ենք): «*Ընկենլոց են *յհուր դդրաժ ուխտին...» (Ագաթ., էջ 391),* ընկենլոց են*=գցելու են: «...Ի նոյն գձախս* անկանելոց են*» (Եզնիկ, IV, ԺԱ, էջ 190),* անկանելոց են*=ընկնելու են: «...Զի գիտէր եթէ* խաբելոց է *զնոսա հրեղն» (Եզնիկ, IV, Զ, էջ 180),* խաբելոց է*=խաբելու է: «...*Գայթագղելոց էք *յինէն յայսմ գիշերի» (Մատթ., ԻԶ, 31),* գայթագղելոց էք*=գայթակղվելու եք: «Յայնմ սերմանէ, կոյս մի* ծնանելոց է*» (Եզնիկ, II, Ժ, էջ 99),* ծնանելոց է*=ծնվելու է: «...Անթարգմանելի լեզուն ի մէջ մեծութեանն որ ի վերայն էր* հասանելոց*» (Ագաթ., էջ 281),* հասանելոց էր*=հասնելու էր: «...*Գալոց իջանելոց էր*» (Ն. տ., էջ 312)=գալու իջնելու էր: «...Յորմէ առնիցէ զօր* առնելոց իցէ*...» (Եզնիկ, I, Ա, էջ 6),* առնելոց իցէ*=անելու լինի:*



§ 317. *Անցյալ և ապառնի դերբայների հետ եմ օժանդակ բայը կազմում է երեքական ժամանակ (ինչպես ցույց է տրվել, եմ բայն ունի միայն 3 ժամանակ):*

§ 318. *Անցյալ դերբայի հետ եմ օժանդակ բայը կազմում է վաղակատար-հարակատար ներկա (հարակատար), վաղակատար-հարակատար անցյալ (գերակատար), ստորադասական բաղադրյալ ապառնի ժամանակները:*

Վաղակատար-հարակատար ներկան *(հարակատար) կազմվում է անցյալ դերբայով և եմ օժանդակ բայի ներկայով: Գրաբարի այս ժամանակը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի հարակատար և վաղակատար ներկաներին: Ներգործական սեռի բայերը նույն ձևով կարող են արտահայտել նաև կրավորական սեռի նշանակություն:*

### Խոնարհման օրինակներ

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ եմ=*սիրել եմ, սիրվել եմ, սիրած եմ*[1], *սիրված եմ*
2-րդ » սիրեալ ես=*սիրել ես, սիրվել ես, սիրած ես, սիրված ես*
3-րդ » սիրեալ է=*սիրել է, սիրվել է, սիրած է, սիրված է*

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ եմք=*սիրել ենք, սիրվել ենք, սիրած ենք, սիրված ենք*
2-րդ » սիրեալ էք=*սիրել եք, սիրվել եք, սիրած եք, սիրված եք*
3-րդ » սիրեալ են=*սիրել են, սիրվել են, սիրած են, սիրված են*

Եզակի թ.

1-ին դ. հնացեալ եմ=*հնացել եմ, հնացած եմ*
2-րդ » հնացեալ ես=*հնացել ես, հնացած ես*
3-րդ » հնացեալ է=*հնացել է, հնացած է*

Հոգնակի թ.

1-ին դ. հնացեալ եմք=*հնացել ենք, հնացած ենք*
2-րդ » հնացեալ էք=*հնացել եք, հնացած եք*
3-րդ » հնացեալ են=*հնացել են, հնացած են*

[1] *Ժամանակակից հայերենում հարակատար ներկայի և անցյալի ձևերը ներգործական նշանակությամբ գրեթե գործածություն չունեն:*

Ինչպես տեսնում ենք, սիրել բայը, որ ներգործական սեռի է, վաղակատար-հարակատար ժամանակում միևնույն ձևով արտահայտում է թե՛ ներգործական, թե՛ կրավորական սեռի նշանակություն, իսկ **հնացեալ** բայը նույն ժամանակում ունի միայն չեզոք սեռի նշանակություն։ Այսպես էլ հաջորդ ժամանակներում։

**Վաղակատար-հարակատար** անցյալ (գերակատար) ժամանակը կազմվում է անցյալ դերբայով և եմ օժանդակ բայի անցյալ անկատարով։ Իմաստով համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի վաղակատար և հարակատար անցյալ ժամանակներին։

Եզակի թ.

1-ին դ. **սիրեալ էի**=սիրել էի, սիրվել էի, սիրած էի, սիրված էի
2-րդ » **սիրեալ էիր**=սիրել էիր, սիրվել էիր, սիրած էիր, սիրված էիր
3-րդ » **սիրեալ էր**=սիրել էր, սիրվել էր, սիրած էր, սիրված էր

Հոգնակի թ.

1-ին դ. **սիրեալ էաք**=սիրել էինք, սիրվել էինք, սիրած էինք, սիրված էինք
2-րդ » **սիրեալ էիք**=սիրել էիք, սիրվել էիք, սիրած էիք, սիրված էիք
3-րդ » **սիրեալ էին**=սիրել էին, սիրվել էին, սիրած էին, սիրված էին

Եզակի թ.

1-ին դ. **հնացեալ էի**=հնացել էի, հնացած էի
2-րդ » **հնացեալ էիր**=հնացել էիր, հնացած էիր
3-րդ » **հնացեալ էր**=հնացել էր, հնացած էր

Հոգնակի թ.

1-ին դ. **հնացեալ էաք**=հնացել էինք, հնացած էինք
2-րդ » **հնացեալ էիք**=հնացել էիք, հնացած էիք
3-րդ » **հնացեալ էին**=հնացել էին, հնացած էին

**Ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնին** կազմվում է նույն անցյալ դերբայով և եմ օժանդակ բայի առաջին ապառնիով։ Այս ժամանակը համապատասխանում է ժամանակակից գրական հայերենի ըղձական, պայմանական, հարկադրական եղանակների երկրորդական բաղադրյալ ապառնիներին՝ կազմված հարակատար դերբայով և լինել բայով։

Եզակի թ.

1-ին դ. **սիրեալ իցեմ**=սիրած կամ սիրված լինեմ, սիրած կամ սիրված կլինեմ, սիրած կամ սիրված պիտի լինեմ
2-րդ » **սիրեալ իցես**=սիրած կամ սիրված լինես, սիրած կամ սիրված կլինես, սիրած կամ սիրված պիտի լինես
3-րդ » **սիրեալ իցէ**=սիրած կամ սիրված լինի, սիրած կամ սիրված կլինի, սիրած կամ սիրված պիտի լինի

Հոգնակի թ.

1-ին դ. **սիրեալ իցեմք**=սիրած կամ սիրված լինենք, սիրած կամ սիրված կլինենք, սիրած կամ սիրված պիտի լինենք
2-րդ » **սիրեալ իցէք**=սիրած կամ սիրված լինեք, սիրած կամ սիրված կլինեք, սիրած կամ սիրված պիտի լինեք
3-րդ » **սիրեալ իցեն**=սիրած կամ սիրված լինեն, սիրած կամ սիրված կլինեն, սիրած կամ սիրված պիտի լինեն

Եզակի թ.

1-ին դ. **հնացեալ իցեմ**=հնացած լինեմ, հնացած կլինեմ, հնացած պիտի լինեմ
2-րդ » **հնացեալ իցես**=հնացած լինես, հնացած կլինես, հնացած պիտի լինես
3-րդ » **հնացեալ իցէ**=հնացած լինի, հնացած կլինի, հնացած պիտի լինի

Հոգնակի թ.

1-ին դ. **հնացեալ իցեմք**=հնացած լինենք, հնացած կլինենք, հնացած պիտի լինենք
2-րդ » **հնացեալ իցէք**=հնացած լինեք, հնացած կլինեք, հնացած պիտի լինեք
3-րդ » **հնացեալ իցեն**=հնացած լինեն, հնացած կլինեն, հնացած պիտի լինեն

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Առանձին քերականներ (Հովհ. Հոլով, Մ. Սեբաստացի և այլն) քերականության գրքերում հիշատակում են այս ժամանակի անցյալ ձևերը՝ գնացեալ իցէի, սիրեալ իցէի և այլն։ Սակայն գրաբարում այդպիսի ձևեր չեն եղել, դրանք արհեստական են։ Ստորադասական եղանակի

անցյալ ապառնու իմաստն արտահայտվում է վերը ցույց տրված ստորադասական ապառնու ձևերով (այլև ուրիշ ժամանակների երկրորդական կիրառությամբ)։

**§ 319.** Անցյալ դերբայով կազմված վերոհիշյալ բաղադրյալ ժամանակները գրաբարում հանդես են գալիս նաև մի այլ կառուցվածքով։ Դրանցից յուրաքանչյուրի եզակի թվի 3-րդ դեմքին կցվում են անձնական դերանունները՝ սեռական հոլովով։ Այս դեպքում դեմքը և դեմքի թիվն արտահայտվում են ոչ թե եմ բայի, այլ անձնական դերանվան միջոցով, օրինակ՝

### Վաղակատար-հարակատար ներկա

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ է իմ=ես սիրել կամ սիրած եմ
2-րդ » սիրեալ է քո=դու սիրել կամ սիրած ես
3-րդ » սիրեալ է նորա(իւր)=նա սիրել կամ սիրած է

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ է մեր=մենք սիրել կամ սիրած ենք
2-րդ » սիրեալ է ձեր=դուք սիրել կամ սիրած եք
3-րդ » սիրեալ է նոցա=նրանք սիրել կամ սիրած են

### Վաղակատար-հարակատար անցյալ

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ էր իմ=ես սիրել կամ սիրած էի
2-րդ » սիրեալ էր քո=դու սիրել կամ սիրած էիր
3-րդ » սիրեալ էր նորա (իւր)=նա սիրել կամ սիրած էր

Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ էր մեր=մենք սիրել կամ սիրած էինք
2-րդ » սիրեալ էր ձեր=դուք սիրել կամ սիրած էիք
3-րդ » սիրեալ էր նոցա=նրանք սիրել կամ սիրած էին

### Ստորադասական ապառնի

Եզակի թ.

1-ին դ. սիրեալ իցէ իմ=ես սիրած լինեմ, կլինեմ, պիտի լինեմ
2-րդ » սիրեալ իցէ քո=դու սիրած լինես, կլինես, պիտի լինես
3-րդ » սիրեալ իցէ նորա(իւր)=նա սիրած լինի, կլինի, պիտի լինի



Հոգնակի թ.

1-ին դ. սիրեալ իցէ մեր=մենք սիրած լինենք, կլինենք, պիտի լինենք
2-րդ » սիրեալ իցէ ձեր=դուք սիրած լինեք, կլինեք, պիտի լինեք
3-րդ » սիրեալ իցէ նոցա=նրանք սիրած լինեն, կլինեն, պիտի լինեն

Ստորև տալիս ենք օրինակներ բնագրերից։ «Ո՛չ երբէք ասացեալ է նոցա ցրել զայդ...» (Ագաթ., էջ 40)։ «...Քո իսկ ձեռաց է զմեզ...» (Ն. տ., էջ 297)։ «Եւ յուսալ ես է իմ, թէ ի պար- արկս խօսի» (Բուզ., V, Դ, էջ 290)։ «...խօսել զանձնէ խորմէ զանօրէնութիւնս և դրամրասանս մեզոյ՝ որ իւր չէր գործեալ» (Բուզ., IV, Դ, էջ 107)։ «...Որպէս և տեսեալ էր իւր...» (Ն. տ., V, Ա, էջ 282)։ «Վասն նամակին զոր քո ի մեր աշխարհս տուեալ էր...» (Եղիշէ, II, էջ 31)։ «Նոցա էր փորձեալ զխոր- խորատն...» (Ն. տ., III, էջ 53)։ «Եւ զայն մոռացեալ իցէ նոցա՝ որք զայսն կամին» (Թուղթ Պետրոսի, II, Գ, 5)։ «Թէպէտ լուեալ իցէ ձեր՝ զտնտեսութիւն շնորհացն...» (Առ եփես., Գ, 1)։ «Զի գիտէ Հայրն ձեր զինչ պիտոյ է ձեզ, մինչ չև ձեր խնդրեալ իցէ ի նմանէ» (Մատթ., Զ, 8)։

Ինչպես բերված օրինակներում էլ կարելի է տեսնել, այս ձևերը երբեք կրավորական նշանակությամբ չեն գործածվում։ Այսպիսի կազմությամբ հիմնականում հանդես են գալիս ներգործական սեռի բայերը (հատուկներն էլ՝ ներգործական նշանակությամբ)։

Բնագրերում հանդիպում են նաև չեզոք սեռի բայերի նույնպիսի կազմություն ունեցող դիմավոր ձևեր։ Օրինակներ. «Եւ կերայ յամենայնէ մինչ չև քո եկեալ էր» (Ծն., ԻԷ, 33)։ «Արդ՝ երկու որդիք քո որ եղեն յԵգիպտոս, մինչ չև եկեալ էր իմ յԵգիպտոս՝ իմ են...» (Ծն., ԽԸ, 5)։ «Հայր քո երդմնեցոյց զմեզ մինչ չև վախճանեալ էր նորա» (Ծն., Ծ, 16)։ «Դորա յանթիւ ճակատ մտեալ էր, և վէր երբէք չէր առեալ» (Բուզ., V, ԼԶ, էջ 356)։ «Ի բազում պատերազմունս մտեալ է իմ...» (Եղիշէ, V, էջ 92)։ «Եւ եթէ չէր մեր անապարտեալ...» (Եղիշէ, III, էջ 58)։ Բերված ձևերում բայերը չեզոք սեռի են՝ գալ (անց. դերբայ՝ եկեալ), վախճանել= =մեռնել (վախճանիմ=վախճանեալ)[1], մտանել (մտեալ), անապարտել (անապարտեալ)։

[1] Կա նաև **վախճանել (վախճանեմ)** ներգործական սեռի բայ։ Այստեղ խոսքը դրա մասին չէ։

Այս կարգի դիմավոր ձևերից յուրաքանչյուրը՝ սիրեալ է իմ, սիրեալ է քո, սիրեալ էր իմ, սիրեալ էր քո..., սիրեալ իցէ իմ, սիրեալ իցէ քո... առանձին վերցված նախադասության արժեք ունեն, որոնց ենթական արտահայտված է սեռական հոլովով՝ սիրեալ է իմ=ես սիրել եմ (կամ երկրորդաբար նաև՝ ես սիրեցի)։ Իսկ եթե մոռանանք ծագումնաբանական տեսակետից, ապա կտեսնենք, որ եմ բայի եզակի թվի 3-րդ դեմքը (է, էր, իցէ) ստորոգյալ է, դերբայը՝ ենթակա, դերանունը (սեռական հոլովով)՝ հատկացուցիչ ենթակա-դերբայի, դիցուք՝ իմ սիրեալ է նշանակի «իմ սիրածը կա, իմ սիրածը գոյություն ունի», որն արդի ըմբռնմամբ նշանակում է «ես սիրել եմ» կամ երկրորդաբար՝ «ես սիրեցի»։

Գրաբարում կարելի է ցույց տալ այդ տիպի նախադասություններ, ուր դերբայի փոխարեն ենթակայի դերը կատարում է գոյական անունը, օրինակ՝ «Է իմ եղբայր մի»=իմ մի եղբայր կա ‖ ինձ մի եղբայր կա ‖ Ես մի եղբայր ունեմ: Սրանով բացատրվում է այդ տիպի դիմավոր ձևերի ծագումը, սակայն ելնելով թարգմանությունից՝ ենթակա ենք համարում սեռական հոլովով դրված դերանունը, իսկ ստորոգյալ՝ դերբայը օժանդակ բայի հետ։

Գրաբարում հանդիպում են նաև նույնատիպ կազմության ունեցող դիմավոր ձևեր, ուր օժանդակ բայի դերը կատարում է լինել բայը, օրինակ՝ տեսեալ լինի իմ, տեսեալ լինի քո և այլն։

§ 320. Բաղադրյալ ժամանակների կազմության մեջ հանդես է գալիս ոչ մասնիկավոր ապառնի դերբայը, որը կազմում է սահմանական եղանակի ապառնի, անցյալ ապառնի և ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնի ժամանակները և նույն ձևով խոնարհվում է բոլոր սեռերի համար։

Սահմանական եղանակի բաղադրյալ ապառնին կազմվում է ապառնի դերբայով և եմ բայի ներկայով։

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | սիրելոց եմ=սիրելու եմ, սիրվելու եմ | սիրելոց եմք=սիրելու ենք, սիրվելու ենք |
| 2-րդ » | սիրելոց ես=սիրելու ես, սիրվելու ես | սիրելոց էք=սիրելու եք, սիրվելու եք |
| 3-րդ » | սիրելոց է=սիրելու է, սիրվելու է | սիրելոց են=սիրելու են, սիրվելու են |
| 1-ին դ. | հեռանալոց եմ=հեռանալու եմ | հեռանալոց եմք=հեռանալու ենք |
| 2-րդ դ. | հեռանալոց ես=հեռանալու ես | հեռանալոց էք=հեռանալու եք |
| 3-րդ » | հեռանալոց է=հեռանալու է | հեռանալոց են=հեռանալու են |



Ինչպես ցույց է տրված, սիրել բայը նույն ձևով արտահայտում է թե՛ ներգործական և թե՛ կրավորական սեռի նշանակություն, իսկ հեռանալ բայը՝ միայն չեզոք սեռի նշանակություն։ Նույնը կարելի է տեսնել հետևյալ երկու ժամանակներում։

Անցյալ ապառնին կազմվում է նույն դերբայով և օժանդակ բայի անցյալ անկատար ժամանակով։

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | սիրելոց էի=սիրելու էի, սիրվելու էի | սիրելոց էաք=սիրելու էինք, սիրվելու էինք |
| 2-րդ » | սիրելոց էիր=սիրելու էիր, սիրվելու էիր | սիրելոց էիք=սիրելու էիք, սիրվելու էիք |
| 3-րդ » | սիրելոց էր=սիրելու էր, սիրվելու էր | սիրելոց էին=սիրելու էին, սիրվելու էին |
| 1-ին դ. | հեռանալոց էի=հեռանալու էի | հեռանալոց էաք=հեռանալու էինք |
| 2-րդ » | հեռանալոց էիր=հեռանալու էիր | հեռանալոց էիք=հեռանալու էիք |
| 3-րդ » | հեռանալոց էր=հեռանալու էր | հեռանալոց էին=հեռանալու էին |

Ստորադասական եղանակի բաղադրյալ ապառնին կազմվում է նույն ապառնի դերբայով և եմ օժանդակ բայի առաջին ապառնիով։

Եզակի թ.

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | սիրելոց իցեմ=սիրելու կամ սիրվելու | լինեմ, կլինեմ, պիտի լինեմ |
| 2-րդ » | սիրելոց իցես= » » » | լինես, կլինես, պիտի լինես |
| 3-րդ » | սիրելոց իցէ= » » » | լինի, կլինի, պիտի լինի |

Հոգնակի թ.

1-ին դ. սիրելոց իցեմք=սիրելու կամ սիրվելու լինենք, կլինենք, պիտի լինենք

2-րդ » սիրելոց իցէք= » » » լինեք, կլինեք, պիտի լինեք

3-րդ » սիրելոց իցեն= » » » լինեն, կլինեն, պիտի լինեն

Եզակի թ.

1-ին դ. հեռանալոց իցեմ=հեռանալու լինեմ, կլինեմ, պիտի լինեմ

2-րդ » հեռանալոց իցես= » լինես, կլինես, պիտի լինես

3-րդ » հեռանալոց իցէ= » լինի, կլինի, պիտի լինի

Հոգնակի թ.

1-ին դ. հեռանալոց իցեմք=հեռանալու լինենք, կլինենք, պիտի լինենք

2-րդ » հեռանալոց իցէք= » լինեք, կլինեք, պիտի լինեք

3-րդ » հեռանալոց իցեն= » լինեն, կլինեն, պիտի լինեն

Այսպիսով, գրաբարի բայի բաղադրյալ ժամանակների կազմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ստորադասական եղանակն ունի երկու տիպի բաղադրյալ ապառնի, որոնցից մեկը կազմված է անցյալ դերբայով, իսկ մյուսը՝ ապառնի դերբայով։ Դրանք մի ժամանակի անվանում ունեն, երկուսն էլ համապատասխանում են ժամանակակից գրական հայերենի բղձական, պայմանական և հարկադրական եղանակների ապառնիների երկրորդական բաղադրյալ ձևերին։ Տարբերությունն այն է, որ անցյալ դերբայով կազմված ստորադասական ապառնին թարգմանվում է հարակատար դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ձևերով, իսկ ապառնի դերբայով կազմվածը՝ աշխարհաբարի ապառնի դերբայով կազմված երկրորդական բաղադրյալ ձևերով։ Այսպես՝ տեսեալ իցեմ=տեսած կամ տեսնված լինեմ, կլինեմ, պիտի լինեմ, տեսանելոց իցեմ=տեսնելու կամ տեսնվելու լինեմ, կլինեմ, պիտի լինեմ։ Այստեղ, անշուշտ, խոսքը չի վերաբերում ժամանակների երկրորդական կիրառություններին։



Անցյալ դերբայից վերլուծական կառուցվածքի դիմավոր ձևեր են կազմվում նաև լինել բայի հարադրությամբ, որտեղ խոնարհվող բայը արտահայտվում է անցյալ դերբայի ձևով և բոլոր դեմքերում մնում է անփոփոխ, խոնարհվում է լինել բայը, որով որոշվում են բայի դեմքը, թիվը, եղանակը, ժամանակը։ Օրինակ՝

Սահմանական եղանակ

Ներկա

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | սիրեալ լինիմ | սիրեալ լինիմք |
| 2-րդ » | սիրեալ լինիս | սիրեալ լինիք |
| 3-րդ » | սիրեալ լինի | սիրեալ լինին |

Անցյալ անկատար

| | Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|---|
| 1-ին դ. | սիրեալ լինէի | սիրեալ լինէաք |
| 2-րդ » | սիրեալ լինէիր | սիրեալ լինէիք |
| 3-րդ » | սիրեալ լինէր | սիրեալ լինէին |

Անցյալ կատարյալ

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | սիրեալ եղէ | սիրեալ եղաք (կամ եղեաք) |
| 2-րդ » | սիրեալ եղեր | սիրեալ եղէք |
| 3-րդ » | սիրեալ եղև | սիրեալ եղեն |

Ստորադասական եղանակ

Առաջին ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | սիրեալ լինիցիմ | սիրեալ լինիցիմք |
| 2-րդ » | սիրեալ լինիցիս | սիրեալ լինիցիք |
| 3-րդ » | սիրեալ լինիցի | սիրեալ լինիցին |

Երկրորդ ապառնի

| | | |
|---|---|---|
| 1-ին դ. | սիրեալ եղէց | սիրեալ եղիցուք |
| 2-րդ » | սիրեալ եղիցիս (կամ՝ -ցես) | սիրեալ եղիջիք |
| 3-րդ » | սիրեալ եղիցի | սիրեալ եղիցին |

կամ՝

1-ին դ. սիրեալ (լիցիմ) — սիրեալ լիցուք
2-րդ » սիրեալ լիցիս — սիրեալ լիջիք
3-րդ » սիրեալ լիցի — սիրեալ լիցին

Հրամայական եղանակ

Ներկա

2-րդ դ. սիրեա՛լ լեր — սիրեա՛լ լերուք

Ապառնի

2-րդ դ. սիրեա՛լ լիջիր — սիրեա՛լ լիջիք

Արգելական ձև

2-րդ դ. սիրեալ մի՛ լինիր — սիրեալ մի՛ լինիք

Անցյալ դերբայով և լինել բայով կազմված այս բաղադրյալ դիմավոր ձևերը արտահայտում են տարբեր իմաստներ։ Օրինակ՝ սիրեալ լինիմ=սիրվում եմ, սիրած եմ լինում, սիրված եմ լինում։

Գրաբարում սովորաբար բայն այս ձևով է խոնարհվում այն դեպքում, երբ ընդհանրապես կամ միայն տվյալ դիմավոր ձևերում կրավորական սեռի համար չի ունենում որևէ տարբերիչ ձև, օրինակ՝ «...Եւ այնու կերակրեալ լինէր...» (Ագաթ., էջ 72)՝ Եվ նրանով էր կերակրվում։ «Իսկ յայն վիրապ, ուր ընկեցին զնա՝ պահեալ լինէր նա կենդանի» (Ն. տ.)՝ Նա պահվում էր այն հորում, ուր գցեցին նրան։ «Մեծարեալ լինէին» (Ն. տ., էջ 463)՝ Մեծարվում էին։ «...Կերակրեալ լինէին ի ծովէ անտի» (Բուզ., IV, Զ, էջ 145)՝ Կերակրվում էին այն ծովից։

Սրանք պարզ ձևով կլինեն՝ կերակրէր, պահէր, մեծարէին, որոնք առանց ձևական փոփոխության ունեն կրավորական սեռի նշանակություն՝ կերակրվում էր, պահվում էր, մեծարվում էին։ Սրանք մի այլ դեպքում կարող էին ունենալ ներգործական սեռի նշանակություն։

Ընդհանուր առմամբ նկատելի է, որ մեր մատենագիրները այսպիսի ձևեր կրավորական նշանակությամբ գործածում են մեծ մասամբ անցյալ անկատար ժամանակում, իսկ անցյալ անկատար ժամանակը, ինչպես հայտնի է, ներգործաձև և կրավորաձև խոնարհումների համար տարբերիչ ձևեր չունի, նրա վերջավորությունները ընդհանուր են։ Լինել բայով կազմված բաղադրյալ ձևերը



գործածվում են՝ բաց ձևի կրավորական սեռը ներգործականից տարբերելու համար։

Կրավորական սեռի նշանակություն արտահայտելու համար այս կարգի բաղադրյալ ձևերով խոնարհվում են հատկապես Ու և Ա խոնարհումների ներգործական սեռի բայերը՝ ներկայի հիմքից կազմվող ժամանակներում, որտեղ, ինչպես ցույց է տրվել, այդ բայերը ներգործաձև և կրավորաձև խոնարհումների համար առանձին վերջավորություններ չունեն, նրանց վերջավորությունները յուրաքանչյուր դիմավոր ձևում ընդհանուր են բոլոր սեռերի համար (չհաշված Ա խոնարհման բայերի առաջին ապառնին, որն ունի և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև վերջավորություններ)։ Օրինակ՝ **թողում**=թողնում եմ || թողնվում եմ, **թողեալ լինիմ**=թողնվում եմ, **թողուի**=թողնում էի || թողնվում էի, **թողեալ լինէի**=թողնվում էի, **թողուցում**=թողնեմ, կթողնեմ, պիտի թողնեմ || թողնվում էի, **թողեալ լինիցիմ**=թողնվեմ, կը-թողնվեմ, պիտի թողնվեմ, **մի՛ թողուր**=մի՛ թողնիր, մի՛ թողնվիր, **թողեալ մի՛ լինիր**=մի՛ թողնվիր։ Կամ՝ **զգամ**=զգում եմ || զգացվում եմ, **զգացեալ լինիմ**=զգացվում եմ, **զգայի**=զգում էի || զգացվում էի, **զգացեալ լինէի**=զգացվում էի, **մի՛ զգար**=մի՛ զգա || մի՛ զգացվիր, **զգացեալ մի՛ լինիր**=մի՛ զգացվիր։

Այս ձևով է արտահայտվում շատ բայերի բուն հրամայականը կրավորական նշանակությամբ, օրինակ՝ եղեա՛լ լեր, եղեա՛լ լերուք, տուեա՛լ լեր, տուեա՛լ լերուք, արարեա՛լ լեր, արարեա՛լ լերուք և այլն։

Սակայն, այսպիսի բաղադրյալ ձևեր կարող են ունենալ նաև այն ժամանակները և այն բայերը, որոնք ունեն և՛ ներգործաձև, և՛ կրավորաձև վերջավորություններ, օրինակ՝ «...Կատարեալ եղև ի Վասակայ...» (Բուզ., IV, ԽՆ, էջ 234), փոխանակ՝ «կատարեցաւ ի Վասակայ»։ «...Զի զարմացեալ լինի ուրախութիւնս մեր յանխոճ նոցա, և արհամարհեալ լինի արքայութիւնս մեր ի նոցանէ» (Ագաթ., էջ 86), փոխ. զարմացի, արհամարհի։ «Եւ ի մերոց արդար օրինացս դատապարտեալ լինին...» (Ն. տ.), փոխ. դատապարտին։

Չի կարելի պնդել, որ անցյալ դերբայով և լինել բայով կազմվող դիմավոր ձևերը միայն կրավորական նշանակություն կարող են ունենալ։ Կարելի է ցույց տալ չեզոք սեռի բայերի այսօրինակ խոնարհման օրինակներ։ Ահա՛ «ելեալ եղիցես» (Մն., Գ, 12), «լինիցիմ երթեալ» (Մն., Գ. 14), «եղև մեռեալ» (Յայտն., Բ, 8), «զօրացեալ լինիմ» (Կորյուն, էջ 80), «անցեալ եկեալ լինէր» (Ագաթ., էջ 16), «զարմացեալ լինէր» (Բուզ., IV, ԺԵ, էջ 189) և այլն։

Նույնիսկ հանդիպում են ներգործական նշանակությամբ՝ «...Պարտեալ լինէր զթագաւորն...» (Ագաթ., էջ 100)՝ Հաղթում էր թագավորին (ըստ կիրառության՝ հաղթեց թագավորին)։ «...Նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս» (Բուզ., IV, ԾԵ, էջ 181)՝ Նենգություն էր նյութում երկար ժամանակ։

Իբրև եզրակացություն կարելի է նշել հետևյալը։ Գրաբարում անցյալ դերբայով և լինել բայով բաղադրյալ դիմավոր ձևեր կազմվում են բոլոր սեռերի բայերից։ Սովորական է կրավորական սեռը այն բայերի կամ այնպիսի դիմավոր ձևերի համար, որոնք ընդհանրապես կրավորական սեռի համար առանձին ձև չունեն։ Դրանցից պակաս գործածություն ունեն չեզոք սեռի բայերը, իսկ ավելի պակաս՝ ներգործական սեռի բայերը։ Պետք է նշել նաև, որ այսպիսի դիմավոր ձևերում արտահայտվում է գործողության վիճակի յուրահատկություն, այնպես որ **արգելեալ լինիմ** կարող է նշանակել ոչ միայն արգելվում եմ, այլև՝ **արգելված եմ լինում, արգելված եմ լինում**։

§ 321. Ժամանակի բայի դերում անցյալ դերբային հարադրվում են նաև **ունել** և **կալ** բայերը։ Օրինակներ. «Նոյն օրինակ և ամենայն գիրք հոգեպատումք նշանակեալ ունին զպաշտութիւն ամենայն զօրացս» (Կորյուն, էջ 26), **նշանակեալ ունին**=նշանակած ունեն, նշանակել են։ «Ո՞ր իցէ տեղին, որ զնա թաքուցեալ ունիցի...» (Ագաթ., էջ 139)՝ Ո՞րն է այն տեղը, որ նրան վերցրած ունի (այսինքն՝ իր վրա է պահում)։ «...Զքաջա՞ց արդեօք եթէ զվաստակոց անցեալ ունիցի զանցս» (Խոր., I, Ը, էջ 29), **անցեալ ունիցի**=անցել է, գրավել է։ «Եւ նա նշանացի խօսէր ընդ նոսա, և կայր պապանձեալ» (Ղուկ., Ա. 22), **կայր պապանձեալ**=մնում էր պապանձված, պապանձված էր։ «...Որոց աղջամուղջք խաւարին պահեալ կան» (Թուղթ Պետրոսի, 2-րդ, Բ, 17), **պահեալ կան**=պահված են։ «...Ամենայն արարածք զնորա բնութենէն կախեալ կան, որպէս ճառագայթք արեգական զանուէն կախեալ կան» (Եղնիկ, III, Գ, էջ 142), **կախեալ կան**=կախված են։

## ՄԻԱԴԻՄԻ ԲԱՅԵՐ

§ 322. Գրաբարում կան բայեր և բայական խմբեր արտահայտող կապակցություններ, որոնք գործածվում են միայն երրորդ դեմքով և այդ պատճառով էլ կոչվում են միադիմի բայեր։ Գրաբարի քերականության պատմության մեջ դրանք անվանվել են նաև դիմազուրկ բայեր։



§ 323. Միադիմի բայերն ընդհանուր գծերով կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) ֆունկցիոնալ միադիմի բայեր, բ) բուն կամ բացարձակ միադիմի բայեր։

Առաջին խմբին կարելի է դասել այն միադիմի բայերը, որոնք ծագում են կանոնավոր բայերից, առանձնանալով նրանցից ըստ կիրառության և որոշ ձևափոխությամբ (կրավորական խոնարհմամբ) կամ առանց դրան ձևականորեն արժեքավորվում են որպես միադիմի բայեր։ Օրինակ՝ **թուի** (=թվում է, երևում է, համարվում է), **կարծի** (=կարծվում է, համարվում է), **հասանէ** (=վիճակված է, պիտի լինի), **մարթ** (=կարելի է, հնարավոր է, հարմարվում է) և այլն։

Մյուս խմբին պատկանում են բայական խմբեր արտահայտող այնպիսի կապակցությունները, որոնք կազմված են որևէ այլ խոսքի մասից և եմ կամ լինիմ բայերի 3-րդ դեմքից։ Դրանք կոչվում են բացարձակ միադիմի բայեր։ Այդ բայերից են՝ **անկ է** (=վայել է, ընկնում է, հասնում է), **արժան է** (=պատշաճ է, պետք է), **ի դէպ է** (=հարմար է, կարելի է), **դէպ լինի** (=կպատահի, կհանդիպի), **կամ է ‖ կամ լինի** (=ցանկալի է)՝ «կամ է ինձ»=ուզում եմ, ցանկանում եմ, «կամ եղև ինձ»=ցանկացա, կամեցա, **հաճոյ է** (կամ **հաճոյ թուի**), **հարկ է** (=պետք է), **ճար է** կամ **գոյ ճար** (=հնարավոր է), **չէ ճար ‖ չիք ճար** (=անկարելի է, անհնար է), **ի ճահ է** (=հարմար է, պատշաճ է), **մարթ է** (=կարելի է), **յայտ է, եղև** (=հայտնի է, հայտնի եղավ), **շատ է** (=հերիք է, բավական է), **պատեհ է** (=հարմար է), **պատշաճ է** կամ **պարտ և պատշաճ է** (=պատշաճ է, պետք է, հարմար է), **պարտ է** (=պետք է), **պիտոյ է** (=պետք է), **վայել է** (=հարմար է, վայել է), **փոյթ է** (=հոգ է, հոգ ունի)՝ «զի՞ փոյթ է քեզ»=ինչի՞դ է պետք, «մեզ չէ փոյթ»=մեր հոգը չէ, «նմա փոյթ չէ, ոչ ինչ փոյթ լինէր նմա»=նրա հոգը չէր, նրան փույթ չէր, **օրէն է** (=կարելի է, վայել է, սովորություն է, օրենք է)։

Միադիմի բայեր են համարվում նաև բնության զանազան երևույթներ ցույց տվող հետևյալ բառերն ու դարձվածքները՝ **մթնացաւ** (=մթնեց), **ոչ տեղաց (յերկիր)** (=անձրև չեկավ), **սկսաւ (օրն) տարաժամել** (=սկսեց մթնել), **երեկոյացեալ էր (ժամն)** (=երեկոյացել էր), **(տիւն) լուսաւորէր, լուսանայր (առաւօտն)** (=լուսանում էր)։

Շարահյուսական առումով սրանցից յուրաքանչյուրն իրականում մի նախադասություն է։

§ 324. Միադիմի բայերից շատերը գրաբարում հանդես են գալիս եղանակավորման դերով, որպես եղանակիչ բայեր։

Հայտնի է, որ գրաբարը հարկադրական եղանակի հատուկ ձև չուներ։ Այդ եղանակի իմաստով գործածվում են ստորադասական եղանակի ձևերը։ Սակայն, բացի այս եղանակային ձևերից, հարկադրական եղանակի նշանակությամբ գրաբարում գործածվում են նկարագրական ձևով կազմված արտահայտություններ։ Դրանք կազմվում են հարկադրական-պարտավորական կամ անհրաժեշտության գաղափար արտահայտող միադիմի նշանակիչ բայերի (պարտ է, պիտոյ է, արժան է և այլն) միջոցով։ Այդ կարգի միադիմի բայերը դրվում են անորոշ դերբայի վրա՝ տրական հոլովով ենթակայի մոտ։ Օրինակ՝ «...Զոր ձեզ պարտ է ընդունել» (Ագաթ., էջ 253)՝ Որը դուք պիտի ընդունեք։ «...Զի՞ արդ էր զի նմա միայն պարտ էր լսել և խօսել...» (Եղիշե, IV, է, էջ 183)՝ Ինչո՞ւ էր, որ միայն նա պիտի լսեր և խոսեր։ «Նմա պարտ է աճել, և ինձ մեղմանալ» (Յովհ., Գ, 30)՝ Նա պիտի աճի, իսկ ես պիտի փոքրանամ։ «...Որպէս և պարտ իցէ ինձ խօսել» (Առ Եփես., Զ, 20)՝ Ինչպես որ ես պիտի խոսեմ։ «...Պիտոյ է ինձ յղել զքեզ առ թագաւորն Պարսից Շապուհ...» (Բուզ., V, Զ, էջ 305)՝ Ես քեզ պիտի ուղարկեմ Պարսից Շապուհ թագավորի մոտ։ «...Ձեզ արժան էր զիս ի հրապարակի ազատանել...» (Բուզ., V, Զ, էջ 307)՝ Դուք ինձ հրապարակում պիտի ազատեիք։

Այս դեպքում եթե ենթական գոյական անուն է կամ գոյականաբար անվանված որևէ բառ, միայն արտահայտվում է 3-րդ դեմքի գործողություն, օրինակ՝ «...Ուտել պարտ էր զնոսա երկրի» (Եղիշե, I, ժե, էջ 46)՝ Երկիրը (կամ հողը) նրանց պիտի ոչնչացներ։ Իսկ եթե ենթական անձնական դերանուն է, այդ դեպքում գործողությունը դրսևորվում է բոլոր դեմքերով և եզակի ու հոգնակի թվով։ Ասված փաստերի հիման վրա կարելի է կազմել այսպիսի աղյուսակ՝

| Եզակի թ. | Հոգնակի թ. |
|---|---|
| պարտ է ինձ խօսել | պարտ է մեզ խօսել |
| պարտ է քեզ խօսել | պարտ է ձեզ խօսել |
| պարտ է նմա խօսել | պարտ է նոցա խօսել |
| պարտ էր ինձ խօսել | պարտ էր մեզ խօսել |
| պարտ էր քեզ խօսել | պարտ էր ձեզ խօսել |
| պարտ էր նմա խօսել | պարտ էր նոցա խօսել |
| պարտ իցէ ինձ խօսել | պարտ իցէ մեզ խօսել |
| պարտ իցէ քեզ խօսել | պարտ իցէ ձեզ խօսել |
| պարտ իցէ նմա խօսել | պարտ իցէ նոցա խօսել |



Այս ձևով էլ կարելի է կազմել մյուս նշանակիչ միադիմի բայերով։

Ըստ էության այս ձևերից յուրաքանչյուրը մի նախադասություն է։ Սրանք աշխարհաբար թարգմանվում են ուղղական ենթակայով և դիմավոր ձևերով՝ պարտ է ինձ խօսել=ես պիտի խոսեմ, պարտ էր ինձ խօսել=ես պիտի խոսեի, պարտ իցէ ինձ խօսել=ես պիտի խոսեմ։

§ 325. Անորոշ դերբայը հարկադրական նշանակություն ունեցող միադիմի նշանակիչ բայերի հետ միասին՝ առանց ենթակայի, պարտավորություն արտահայտում է ընդհանուր բնույթի հարկադրական, պարտավորական կամ անհրաժեշտաբար կատարելիք գործողություն։ Օրինակներ. «Բայց զայն պարտ է գիտել, թէ զոր գործէ ինչ ոք՝ ոչ ինքնակամ նոյն է...» (Եղիշե, I, է, էջ 21)՝ Բայց այն պետք է իմանալ, թե ինչ որ մեկը կատարում է, ինքը նույնը չէ։ «Արդ հարկ է ի պատճառս չարեացն գալ և ցուցանել...» (Եղիշե, I, Զ, էջ 19)՝ Այժմ պետք է չարիքների պատճառներին գալ և ցույց տալ։

Բացի հարկադրական բնույթի միադիմի նշանակիչ բայերից, անորոշ դերբայի հետ գործածվում են նաև այլ բնույթի միադիմի բայեր, որոնք այլևայլ երանգավորումներով (կարելիություն, հնարավորություն, հարմարություն և այլն) եղանակավորում են բայերը։ Օրինակներ. «Չէր մարթ մարմնաւորի անմահ կալ» (Եղիշե, I, ժԸ, էջ 51)՝ Մարմնավորը չէր կարող անմահ մնալ։ «Զմտրի բնութեան խիկը՝ առանց կամաց՝ մերթ բարի լինել, մերթ չար» (Եղիշե, I, ժԳ, էջ 38)՝ Որևէ էություն առանց կամքի չի կարող մերթ բարի լինել, մերթ չար։ «...Արդեօք գնդին պատահեալ է, դիպեալ նշանել զօրացն ծանուցս...» (Բուզ., V, Դ, էջ 288)՝ Արդյոք գնդին հաջողվե՞լ է զորքին հանդիպել։ «...Այսրել քեզ չէ՞ հնար է զեմ գալու գալ Հունաց զորքերին։ «...Այսօր դու մեր այսօր ի ձեռաց մերոց» (Բուզ., V, ԽԴ, էջ 380)՝ Այսօր դու մեր ձեռքից չես կարող ազատվել (այսօր մեր ձեռքից քեզ փրկություն հնար չկա)։ Հաճախ միադիմի բայը անորոշ դերբայի հետ գործածվելով՝ արտահայտում է պայմանավորության գաղափար, օրինակ՝ «Բայց ի կղզի ինչ հասանէ մեզ անկանել» (Գ. Առաք., ԻԷ, 26)՝ Բայց մենք մի կղզի ենք ընկնելու, մի կղզի պիտի ընկնենք։

Այս իմաստով անորոշ դերբայի հետ գործածվում են նաև պակասավոր և անկանոն խոնարհում ունեցող բայերից շատերը, որոնց վրա այստեղ հարկ չենք համարում կանգ առնել։

# ՆԱԽԴԻՐ ԵՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆ

§ 326. Գրաբարում բավականաչափ լայն տարածում ունեն նախդիրները և նախադրությունները, որոնք քերականական կառուցվածքի մեջ հանդես են գալիս սպասարկու դերով: Նրանք սպասարկում են հոլովման համակարգին:

Գրաբարի հոլովման համակարգում հանդես եկող վեց հոլովաձևերը քերականական յուրահատուկ ձևավորմամբ արտահայտում են քերականական որոշակի իմաստներ. նրանք խոսքի մեջ ցույց են տալիս առարկաների անունների միջև եղած տարբեր հարաբերությունները: Թեև յուրաքանչյուր հոլովաձև իր հիմնական իմաստի հետ ունի նաև այլ զուգահեռ իմաստներ, սակայն, այդուհանդերձ, դրանք սահմանափակ են և լիովին չեն արտահայտում իրականում առարկաների միջև եղած բոլոր տեսակի հարաբերությունները: Իսկ այդ հարաբերություններն այնքան բազմազան են, որ նախադասության մեջ կարող են դրսևորվել ոչ միայն հոլովակերտմամբ (բառ ֆունկցիայի), այլև հոլովառությամբ: Հենց այստեղ մեծ դեր ունեն այն սպասարկու բառերը, որոնք գրաբարի քերականության մեջ կոչվում են նախդիրներ և նախադրություններ:

Նախդիրները և նախադրությունները որպես սպասարկու բառեր իրենց բառական, իմաստային ու ֆունկցիոնալ առանձնահատկություններով բաժանվում են երկու խմբի՝ ա) նախդիրներ, բ) նախադրություններ:

## ՆԱԽԴԻՐՆԵՐ

§ 327. Գրաբարի նախդիրներն են՝ առ, զ, ընդ, ըստ, ի (յ), ց: Սրանցից զ և ց նախդիրները կցվում են այն բառերին, որոնց հետ գործածվում են, օրինակ՝ զայր, ցայժմ, այդպես է նաև ի նախդիրը ձայնավորից առաջ, որտեղ վերածվում է յ-ի և գրվում է կից, օրինակ՝ յաշխարհի: Մյուսները՝ առ, ընդ, ըստ, ի (վերջինս բաղաձայնով սկսվող բառի մոտ) գրվում են առանձին:



Ինքնատիպության հատկանիշ է, որ զ, ց և ի (ձայնավորից առաջ՝ յ) նախդիրները կորցրել են իրենց բառական անկախությունը, իսկ մյուսները թեև պահպանում են, սակայն իմաստավորված են կապակցությունների մեջ, գործածվելով բառերի հետ: Նրանց բառային արժեքը շատ աղոտ է, նրանց մեջ իշխում է քերականական արժեքը, այն էլ, ինչպես տեսանք, արտահայտվելով կապակցությունների մեջ:

§ 328. Այս նախդիրները հայերենում դեռ շատ վաղ ժամանակներում կիրառվել են նաև ածանցական նշանակությամբ: Շատ բառերում դրանք այնքան սերտ են ձուլված բառարմատին, որ բառի այդպիսի ածանցումը գրեթե չի գիտակցվում, օրինակ՝ առաւել, առողջ, զատամ (զ-ատ-ամ), զարդ, զարկ, զեղծ, ընկեր (<ընդ+կեր), ըմբռնել (<ընդ+բռնել=ընբռնել>ըմբռնել), ընդունել, ըստանձնել,[1] յանցանք, յարգանք, ցայգ (=գիշեր), ցանկ և այլն:

Նախդիրների ածանցական կիրառությունն ընդհանուր երևույթ է նախդիրներ ունեցող լեզուներում: Այս տեսակետից խիստ բնորոշ է ռուսերենը, որտեղ գրեթե բոլոր նախդիրներից առաջացած նախածանցներ կան, որոնք կենդանի և գործուն լինելով՝ շատ լայն կիրառություն ունեն ժամանակակից ռուսերենում (օրինակ՝ за—записать, на—написать, от—отпускать, по—покупать և այլն):

§ 329. Նախդիրները գործածվում են միայն թեք հոլովների հետ: Ուղղական հոլովի հետ նախդիրներ չեն դրվում:

Նախդիրները հոլովաձևերի հետ հանդես են գալիս միայն նախադաս: Յուրաքանչյուր բառ միաժամանակ մեկից ավելի նախդիր չի կարող ունենալ: Երբ նախդիր ունեցող բառը նոր նախդիր է առնում, նախորդը դուրս է ընկնում, նոր նախդիրը դրվում է նրա տեղը, օրինակ, ընծայորենք: Թե զ նախդիրը գործածում ենք նա գերանվան եզակի բացառականի հետ, այդ կարող ենք անել առանց ի նախդիրի՝ ի նմանէ—զնմանէ, կամ՝ որոշյալ հայցականի հետ որևէ նախդիր գործածելիս զ նախդիրը դուրս է ընկնում, օրինակ՝ զնա—ի նա, ցնա, առ նա և այլն: Այս տեսակետից բացառություն է կազմում առ նախդիրը, որը նույն բառի վրա կարող է դրվել ի նախդիրի հետ, օրինակ՝ «Առ ի տալ պատասխանի» (Բուզ., II, Զ, էջ 22), «Առ ի սպառել» (Ագաթ., էջ 135), «Առ ի յայտնելոյ» (Եզնիկ, I, էջ 7):

[1] Այժմ ընդունված է **ստանձնել** ձևը, որտեղ ը-ի անկումը տեղի է ունեցել ստ հնչյունախմբով սկսվող բառերի նմանությամբ, ինչպես՝ ստանալ, ստուգել և այլն: Առանց ը-ի գրությունը եղել է նաև անցյալում:

Երբ նախդիր կրող բառը նախադաս լրացում է ունենում, նախդիրն անցնում է վերջինիս վրա. օրինակ՝ «Երկին ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկ. ընդ եղեգան փող ծուխ ելանէր» (Խոր., I, ԼԱ(ԼԲ), էջ 85—86)։

§ 330. Նախդիրները դրվելով հոլովաձևերի հետ՝ արտահայտում են տարածական, ժամանակային, պատճառական, նպատակային, բաշխական, վերաբերական և այլ կարգի հարաբերություններ։ Նրանք մի հոլովաձևի կարող են հաղորդել մի այլ հոլովաձևի նշանակություն։

Գրաբարի բոլոր նախդիրները, բացի զ նախդիրից, գործածվում են մի քանի հոլովների հետ։

## ԱՌ

§ 331. Առ նախդիրը գործածվում է տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ։

### Առ նախդիրը տրական հոլովի հետ

§ 332. Առ նախդիրը դրվելով տրական հոլովի վրա, ցույց է տալիս՝

1. Պատճառ. այդ դեպքում նախդրավոր բառը աշխարհաբար կարելի է թարգմանել նաև բացառական հոլովով (պատճառի բացառական), օրինակ՝ «...Դուք առ ձերում անմտութեան...» (Բուզ., III, ԺԳ, էջ 61)՝ Դուք ձեր անմտության պատճառով, ձեր անմտությունից...։ «Առ տկարութեա՞ն ինչ, թէ առ չարակամութեան» (Եղիշ., II, Գ, էջ 87)՝ Անկարողությա՞ն, թե չարակամության պատճառով, անկարողություննե՞րց, թե չարակամություններից։ «...Կամ թէ առ երկիւղի չաղթեցաւ...» (Եղիշ., I, Է, էջ 23)՝ Կամ թե երկյուղից հաղթվեց, երկյուղի պատճառով հաղթվեց։ «Իսկ նա իւրն զանձն չկամէր արժանի իբրև առ յոյժ խոնարհութեան իւրում...» (Բուզ., IV, Գ, էջ 107)՝ Իսկ նա քանի որ իրեն արժանի չէր համարում այն բանին՝ իր խիստ խոնարհություններից։ «Եւ առ յոյժ յիմարութեանն իւրոյ զգազան մի կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց» (Եղիշ., I)՝ Եվ տառապիկ հիմարության պատճառով ինչպես կատաղի գազան հարձակվեց Հունաց աշխարհի վրա։ «Այր, ասէ, առ քաղցի խիբում չրջեսցի և կերիցէ...» (Եղիշ., I)՝ Մարդը, ասում է, իր քաղցից կշրջվի և կուտի։ Այսպես էլ՝ առ նախանձու (=նախանձից), առ ահի (=ահից), առ վշտին (=վշտից) և այլն։



2. Դադարում, մի առարկայի մոտ լինելը, մի բանի մոտ գտնվելը։ Օրինակներ. «...Ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա» (Եղիշ., II)՝ Համախմբված չէին մի տեղում՝ նրա մոտ։ «Զգոյգ և զընկեր կային առ նմա, և օթևանք նոցա առ նմա լինէին...» (Ագաթ., էջ 376)՝ Գիշեր ու ցերեկ մնում էին նրա մոտ, նրանց օթևանները նրա մոտ էին։ «...Կայր առ նմա թագաւորն Պապ ի վերայ լերինն...» (Բուզ., V, Դ, էջ 296)՝ Պապ թագավորը կանգնած էր նրա մոտ, լեռան վրա։

### Առ նախդիրը հայցական հոլովի հետ

§ 333. Առ նախդիրը հայցական հոլովի հետ բազմազան նշանակություններ է արտահայտում։

1. Անձ ցույց տվող բառերի վրա դրվելով՝ կազմում է ուղղորդման հայցական։ Այս դեպքում նախադասության մեջ ստորոգյալի դեր է կատարում տեղափոխություն ցույց տվող որևէ բայ՝ ածել, արձակել (=ուղարկել, բաց թողնել), առաքել (=ուղարկել), գալ, գնալ, երթալ, կոչել (հրավիրելու իմաստով), հասանել և այլն։ Նախդիր կրող բառը ցույց է տալիս այն անձը, որին ուղղված է գործողությունը։ Օրինակներ. «Առ ինքն կոչէր զամենայն թագաւորս և զկուսակալս և զնախարարս և զզօրավարս և զպետս և զիշխանս...» (Ագաթ., էջ 19)՝ Իր մոտ կանչեց (տառացի՝ կանչում էր) բոլոր թագավորներին, կուսակալներին, նախարարներին, զորավարներին, պետերին և իշխաններին։ «...Որ որ ի նոցանէ վաղ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից» (Եղիշ., II, Ա էջ 78—80)՝ Նրանցից ով որ շուտ ինձ մոտ հասնի, նրան թագավոր կդարձնեմ։ «Զրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ որ ի մէնջ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուցէ» (Եղիշ., II, Ա, էջ 80)՝ Մեր հայր Զրվանը մտածեց, թե մեզանից ով շուտ գնա իր մոտ, նրան թագավոր կդարձնի։ «...Սակայն առաքէին դեսպանս առ տիկին աշխարհին առ Փառանձեմ» (Բուզ., V, ԾԵ, էջ 258)՝ Հաճախ լրաբերներ էին ուղարկում աշխարհի տիկնոջ՝ Փառանձեմի մոտ։ «...Առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց, գալ առ նա ի Նինուէ...» (Խոր., I, ԺԵ, էջ 48—49)՝ Արա Գեղեցիկի մոտ պատգամավորներ է ուղարկում՝ ընծաներով և նվերներով, շատ աղաչանքներով և պարգևների խոստումով, որպեսզի նա գա իր մոտ, Նինվե։ «Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 251)՝ Այժմ որ քեզ մոտ է եկել Հայոց Արշակ թագավորը։

2. Արտահայտում է գտնվում, հայցական հոլովով դրված բառի հետ ցույց է տալիս այն տեղը կամ այն առարկան, որտեղ կամ որի մոտ կատարվում է գործողությունը։ Օրինակ՝ «...Առ մեզ բնակեալ է...» (Ագաթ., էջ 70)՝ Մեզ մոտ է բնակված։ «Ընդդի-մէջ և զոսկին և զարծաթն և զկտաւսն փութով կուտէին առ դուրս հնձանին» (Ագաթ., էջ 395)՝ Նույնպես և ոսկին, արծաթը և կտավները շտապ կուտակում էին հնձանի դռների մոտ։ «Եւ դիպեցան միմեանց առ ափն ծովուն Բզնունեաց, յԱռեստ աւանի...» (Բուզ., III, Ը, էջ 30)՝ Եվ հանդիպեցին միմյանց Բզնունյաց ծովի ափին, Առեստ ավանում։ «Կարգէր և կազմէր զմանկտին յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին ընդդէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ գետոյն» (Եղիշե, VI)՝ Կարգավորեց ու հաստատ կազմեց՝ զգուշավորելով ամբողջ դաշտի երեսին, Արյաց զորքին դեմ հանդիման, Տղմուտ գետի ափին։

3. Արտահայտում է դիմում. հայցական հոլովով դրված բառի հետ ցույց է տալիս այն առարկան, որին դիմում է խոսողը։ Օրինակներ. «...Առ մեծամեծս և առ իշխանս և առ նախարարս և առ գործակալս և առ այլ մարդիկ, որ ընդ իմով իշխանութեամբ էք. յաւանս, ի շէնս, ի գեօղս, յագարակս, առ ազատս և առ շինականս, միանգամայն իսկ առ ամենեսեան, ողջոյն» (Ագաթ., էջ 73)՝ Մեծամեծներին՝ իշխաններին, նախարարներին, գործակալներին և իմ իշխանության տակ գտնվող մյուս մարդկանց (կամ մյուս մարդկանց, որ իմ իշխանության տակ եք), ավաններում, շեներում, գյուղերում, ագարակներում, ազնվականներին, շինականներին բոլորին միասին (վերջում)՝ ողջույն։ «Առ ամենայն ազգս տէրութեան իմոյ Արեաց և Անարեաց, բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան մերոյ» (Եղիշե, I)՝ Իմ տերության բոլոր ազգերին՝[1] պարսիկներին և ոչ պարսիկներին, մեր մարդասիրական բազմաթիվ ողջույնները ձեզ (բառացի՝ թող բազմանա մեր մարդասիրական ողջույնը ձեր մեջ)։

4. Արտահայտում է վերաբերություն, համեմատություն, նշանակում է «նկատմամբ», «վերաբերյալ», «համեմատությամբ»։ Օրինակներ. «Փորձեն առ այսպիսի ճշմարիտ ասացեալս անպատշաճ հարցուածս մատուցանել» (Եզնիկ, I, Դ, էջ 14)՝ Այսպիսի ճշմարիտ ասածների նկատմամբ անպատշաճ հարցեր են տալիս։ «...Զնախանձն, որ առ մարդն եղև...» (Եզնիկ, I, ԺԱ, էջ 32)՝ Նախանձը, որ մարդու նկատմամբ եղավ։ «Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն...» (Բուզ., IV, ԺԶ, էջ 194)՝ Եվ չէր

[1] Այստեղ ազգ բառը գործածված է ցեղ, ժողովուրդ իմաստով։



հավատում նրան, որ իր նկատմամբ սերն ու մտերմությունը կպահի։ «Որպէս առ մի մարդ՝ այսպէս առ բոլոր աշխարհս» (Եղիշե, II)՝ Ինչպես որ մի մարդու վերաբերմամբ է, այնպես էլ ամբողջ աշխարհի վերաբերմամբ։ Այս ձևով էլ՝ «...Որպէս լոյս առ խաւար»՝ ինչպես լույսը խավարի համեմատությամբ։ «Ենդ առ ստամոքս՝ ստամոքսի մեջ, ստամոքսի վերաբերմամբ, ստամոքսի կողմից ծակը։ «...Մեզ բան էր առ հանդերձս» (Ագաթ., էջ 71)՝ Հագուստի հարցում էր։

5. Այսպես էլ հայցական հոլովի վրա դրվելով՝ ասել բայի մոտ արտահայտում է վերաբերություն՝ «մասին»։ Օրինակներ. «...Առ մե՞զ ասացեր զառակդ զայդ՝ թէ և առ ամենեսեան» (Ղուկ., ԺԲ, 41)՝ Այդ առակը մե՞ր մասին ասացիր, թե բոլորի։ «Ասաց և առակ մի նոցա առ այն...» (Ղուկ., ԺԸ, 1)՝ Նրանց մի առակ էլ ասաց այն մասին։ «...Առ նոսա ասաց զառակն զայն» (Ղուկ., Ի, 19)՝ Նրանց մասին ասաց այն առակը։

6. Առանձին կամ ի նախդիրի հետ դրվելով հայցական հոլովով դրված անորոշ դերբայի կամ այլ բառերի վրա՝ արտահայտում է նպատակային հարաբերություն։ Օրինակներ. «Հանդերձ քո մի՛ լիցի առ ի պճնել, այլ միայն առ ի պէտս մարմնոյդ...» (Եզնիկ, էջ 215)՝ Քո հագուստը թող չլինի պճնելու համար, այլ միայն մարմնի պետքերի համար։ «...Մինչև զանձն ի կրթութիւն փորձութեանց և՛ վշտաց, և ի պատրաստութեան ունէր ամենայն համարձակութեամբ (Բուզ., III, Զ, էջ 22)՝ Իր անձը վարժեցնում և նախապատրաստում էր ամեն տեսակ փորձությունների ու վշտերի՝ ամենայն համարձակությամբ։ «Եւ ժողովեալ մանկունս առ ի պաշտամանն տալոյ նպատակով...» (Կոր., էջ 60)՝ Եվ մանուկներ հավաքեց վարդապետության... «...Առ ի սթափել և զարթուցանել և խրատել քաջալերելոց (Կոր., էջ 78)՝ Սթափեցնելու, արթնացնելու և խրատելու նպատակով։ «...Որ զխառնուածս հիմանցն բաժանեալ յարմարեալ կազմէ առ ի բնակութիւն կենդանեաց ամենայնի» (Եղիշե, II)՝ Որ խառնվածքները համարձակելով կազմեց՝ բոլոր կենդանիների բնակության համար։ «...Որք կապեալ էին ի կապակցութեան անլուծանելի հանգոյցիւ, վառեալ և ջեռեալ իբրև զհնոց առ այրել զոսկի...» (Եղիշե, I)՝ Որոնք անխախտ կապերով կապված էին կապակցության մեջ, վառված և տաքացած՝ ինչպես հնոցը ոսկի այրելու համար։

Նման դեպքերում աշխարհաբար թարգմանության մեջ նախդիրի՝ հաղորդած իմաստը կարելի է արտահայտել նաև ուրիշ

կամ իրեն կապերով, օրինակ՝ «Եւ ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ՝ առ ի յանդիմանութիւն և յամօթ խորոցն արշաւանէիցն» (Եզնիկ, I, Գ, էջ 12)՝ Եվ ժամանակ առ ժամանակ խավարում է՝ որպես հանդիմանություն և ամոթ իրեն պաշտողների կամ՝ իրեն պաշտողներին հանդիմանելու և ամաչեցնելու նպատակով։

Հետևյալ օրինակները ցույց են տալիս, որ ի նախդիրը կարող է կրկնվել՝ «Քաղեցէ՛ք նախ զորոմնն և կապեցէ՛ք զայն խրձունս առ ի յայրելն» (Մատթ., ԺԳ, 30)՝ Նախ այդ մոլախոտը հնձեցե՛ք և խրձեր կապեցե՛ք այրելու համար։ «Եւ ի յազատումն» (Փարպ., էջ 2)՝ Ազատվելու համար։

7. Նույնպիսի կիրառությամբ ցույց է տալիս պատճառ, սաստի և աշխարհաբար թարգմանելիս բառը կարելի է դնել նաև բացառական հոլովով։ Օրինակներ. «...Եւ ի չգիտանա եկեր» (Եզնիկ, I, ԺԲ, էջ 35)՝ Չիմանալուց կերավ, չիմանալու պատճառով, չիմանալով կերավ։ «Եւ առ չհանդուրժել սրտին իւրոյ՝ կատարէր զգործութիւնս մարմնոյն...» (Եղիշէ, II)՝ Եվ իր սրտի անհամբերությունից կատարում էր մարմնի գործությունը։ Այսպես էլ առ ցաւս ճչել՝ ցավերից ճչալ, առ նախանձ՝ նախանձից, առ ահի՝ ահից և այլն։

8. Կրկնվող բառերի հետ գործածվելով՝ արտահայտում է հաջորդականություն։ Օրինակներ. «...Արարէ՛ք բան առ բան նամակիս պատասխանիս» (Եղիշէ, II)՝ Նամակիս բառ առ բառ պատասխանեցե՛ք։ «...Բան առ բան եկայց և իմացուցից ձեզ...» (Եղիշէ, II)՝ Բառ առ բառ բացատրեք և ձեզ հասկացրեք։

9. Արտահայտում է բաշխական հարաբերություն։ Օրինակներ. «Մէն մի բանարար առ այր հրամայէին, զի բերցեն ընկեսցեն՝ չեղչ կուտեալ» (Բուզ., III, Է, էջ 25)՝ Հրամայում էին, որ յուրաքանչյուր մարդ մի ձեռքի քար բերի դնի՝ կույտ կազմելու համար։ Գառն մի առ օր՝ օրական մի գառ, նկանակ մի առ այր՝ յուրաքանչյուր մարդուն մի հաց։

10. Մի շարք բայերի հետ գործվում է առ նախդիրով և հայցական հոլովով խնդիր՝ տրականի նշանակությամբ (նախդրիվ տրական)։ Այդ բայերից են՝ կարդալ (կանչելու իմաստով), յանգել, աղաղակել, ասել, գթալ և այլն։ Օրինակներ. «...Ասէր առ նոսա...» (Ագաթ., էջ 96)՝ Ասում էր նրանց։ «Մի՛ դու, որդեակ, և մի՛ զայդ այլես առ մեզ ասեր» (Եղիշէ, II)՝ Որդյա՛կ, դու այդ այլես մի՛ ասիր մեզ։ «Խոնարհեցուցեր զանձն քո բարերար, և մեք կարդացաք առ քեզ» (Ագաթ., էջ 107)՝ Խոնարհեցրիր քո բարերար անձը, և մենք կանչեցինք քեզ։ «Գթած առ ամենեսեան որ կարդան առ նա...» (Ագաթ., էջ 225)՝ Գթացող է բոլոր նրանց, ովքեր



օգնության են կանչում նրան։ «Աղաղակէր առ նա այր մի...» (Բուզ., VI, Թ, էջ 401)՝ Նրան մի մարդ ձայն տվեց (կամ ձայն էր տալիս)։ «Եւ յետ այսորիկ հանգեաւ և յաւելաւ առ հարս իւր» (Բուզ., III, ԺԶ, էջ 69)՝ Դրանից հետո վախճանվեց և ավելացավ իր հայրերի վրա (գնաց իր նախնիների մոտ)։

11. Տալու, մատուցելու գաղափար արտահայտող բայերի հետ (տալ, մատուցանել, մատակարարել) դրվելով հայցական հոլովի վրա՝ արտահայտում է տրական հոլովի իմաստ (մատուցման տրական, կազմությամբ՝ նախդրիվ տրական)։ Օրինակներ. «Եւ նա ոչ առնոյր յանձն զնոցա ինչ առ նոսա մատուցանել» (Ագաթ., էջ 395)՝ Իսկ նա հանձն չառավ (կամ առնում չէր) նրանց ինչքը նրանց մատուցել։ «Եւ ետու առ նոսա զթուղթս թագաւորին» (Նեեմիա, Բ, 9)՝ Թագավորի թղթերը տվեցի նրանց։ «...Շնորհք առ ամենայն ազգս երկրածնաց մատակարարին» (Կոր., էջ 52)՝ Շնորհքը մատակարարվում է հողածինների բոլոր տեսակների (այսինքն հասկացիս մարդկանց նկատի ունի)։

12. Ունել բայը համարելու նշանակությամբ, երբ հանդես է գալիս ստորոգյալի դերով, կարող է ընդունել կրկնակի հայցական, արտահայտելու ուղիղ խնդիր, որոնցից մեկը անպայմանորեն արտահայտվում է հոլովակի թվով և ընդունում է առ նախդիր։ Սա աշխարհաբար կարելի է թարգմանել «մի բան մի բանի տեղ դնել» ձևով։ Օրինակներ. «...Զկուռս կռեալս, կոփեալս, քերեալս և տաշեալս՝ ոչ կալայ երբեք առ աստուածս» (Ագաթ., էջ 65)՝ Կռած, կոփած, քերած և պատրաստած կուռքերը երբեք աստված չհամարեցի։ «...Զնա առ աստուածս ունին» (Եզնիկ, II, Գ, էջ 85)՝ Նրան աստված են համարում։ «Եւ զայնպիսի աստուածս ոչ առ աստուածս պարտ է ունել, այլ առ չաստուածս» (Եզնիկ, II, Ժ, էջ 100)՝ Եվ այնպիսի աստվածներին չպետք է աստվածներ համարել, այլ՝ չաստվածներ։

Նման կիրառությամբ է առաջացել «առ ոչինչ համարել» ոճը (=բանի տեղ չդնել, ոչինչ համարել). «Առ ոչինչ համարիմ» (Բուզ., III, Ե, էջ 18), «Առ ոչինչ համարեալ» (Ագաթ., էջ 87)։

13. Կազմում է մի շարք ոճեր. «առ երես» (Եզնիկ, I, Ի, Գ, էջ 69), «առ ժամանակ մի» (Բուզ., IV, ԺԳ, էջ 174), «առ ոտն» (տե՛ս Բուզ., էջ 385, Եղիշէ, էջ 37), կոխել՝ ոտնատակ անել, «առ հասարակ». «...Հատանէին, զմեծ և զփոքր առ հասարակ սատակէին» (Բուզ., V, Գ, էջ 296)՝ Հատում և մեծ ու փոքրին առհասարակ կոտորեցին (սատակէին՝ հատանում էին... կոտորում էին)։

### Առ նախդիրը բացառական հոլովի հետ

§ 334. Առ նախդիրը գործածվելով բացառական հոլովի հետ (ի նախդիրին զուգահեռ կամ առանց դրան)՝ արտահայտում է.

1. Պատճառ. «Առ ի չգոյէ հիւթոյ երկրին» (Մատթ., ԺԳ, 5)՝ Հողի խոնավության բացակայության պատճառով:

2. Նպատակ. «Կամ զի՞նչ գեղեցկագոյն քան զսիրամարգ՝ զոր առ ի ցուցանելոյ զգեղեցկագործութիւնն արարս» (Եզնիկ, III, Ը, էջ 97)՝ Կամ ի՞նչն է սիրամարգից ավելի գեղեցիկ, որին ստեղծեց՝ գեղեցկագործությունը ցույց տալու նպատակով: «Եւ զայն ոչ եթէ առ եղեռնէ ինչ լինել ասեմք մարդոյն, այլ վասն յաւու-թեանցս» (Եզնիկ, I, ԺԱ, էջ 30)՝ Եվ ասում ենք, որ այն ոչ թե մարդու վնասի համար է, այլ լավությունների համար:

3. Տեղ, «մոտ». «Խնդրեսցես զիմաստութիւն առ ի չարաց՝ և ոչ գտցես և զհանճար առ յիմաստնոց՝ գտցես» (Առակ., ԺԴ, 6)՝ Իմաստությունը չարերի մոտ կորոնես և չես գտնի, բայց հանճարը իմաստունների մոտ կգտնես:

4. «Կողմից», «մոտից», օրինակ՝ **առ ի քէն** (=քո կողմից, քո մոտից), **եղբայր առ մօրէ** (=եղբայր մոր կողմից), **առ ի** ծառոյն (=ծառի մոտից, ծառի կողմից):

### Առ նախդիրը գործիական հոլովի հետ

§ 335. Առ նախդիրը դրվելով գործիական հոլովի վրա՝ հիմնականում արտահայտում է տեղի, ժամանակի և համեմատության հարաբերություն: Այս հոլովի հետ ունի գործածության հետևյալ դեպքերը.

1. Գործածվելով գործիական հոլովով դրված բառի հետ՝ ցույց է տալիս մոտավոր տեղ (մի բանի մոտերքը) կամ որոշակի տեղ: Օրինակներ. «Եւ եղև ի սերմանելն ումն անկաւ առ ճանապարհաւ» (Մարկ., Դ, 4)՝ Եվ սերմանելիս մեկն ընկավ ճանապարհի մոտ: «Եւ անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց...» (Մարկ., Ե, 11)՝ Եվ այնտեղ, լեռան մոտ խոզերի մի երամակ կար: «...Անցանէր առ անկելովք դիակամբք և առ խոց վիրաւորօքն պատերազմին» (Բուզ., V, ԼԷ, էջ 363)՝ Անցնում էր ընկած դիակների և խոցված վիրավորների մոտով: «Առ երկայնանիստ միով լերամբ» (Խոր., I, Ժ, էջ 33)՝ Մի երկայնանիստ լեռան մոտ: «Որպէս սոյն Յոհան անցանէր առ այգեօք ուրումն» (Բուզ., VI, Թ, էջ 401)՝ Մի անգամ այս Հոհանն անցնում էր մեկի այգիների մոտով: «Գայր հասանէր առ ստորոտով Նպատական լերինն» (Ագաթ., էջ 427)՝ Գալիս հասնում էր Նպատ լեռան ստորոտով: «Իսկ որդի նորա Արամայիս շինէ իւր տուն բնակութեան ի վերայ բլրոյ միոյ առ եզերբ գետոյն» (Խոր., I, ԺԲ, էջ 39)՝ Իսկ նրա որդի Արամայիսը իր համար բնակության տուն է շինում գետի ափին, մի բլրի վրա:

2. Անձնանունների կամ դրանց փոխարինող դերանունների կամ տեղի ունեցած որևէ դեպք ցույց տվող և այլ կարգի բառերի հետ արտահայտում է ժամանակի գաղափար: Օրինակներ. «Առ Սերուգաւ եղև, ասեն, սկիզբն հեթանոսութեանն» (Եզնիկ, III, ԺԵ, էջ 160)՝ Ասում են՝ Սերուգի օրոք եղավ հեթանոսության սկիզբը: «Առ հայրապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանայ [illegible]» (Խոր., էջ 36)՝ [illegible] Առավանի՝ մեր Հայոց աշխարհի հայրապետության ժամանակ: «...Որպէս և տեսեալ էր իւր առ հնոցն թագաւորօքն» (Բուզ., V, Ա, էջ 282)՝ Ինչպես և ինքը տեսել էր հին թագավորների ժամանակ: «...Առ ջրհեղեղաւն» (Եզնիկ, II, ԺԴ, էջ 107)՝ Ջրհեղեղի ժամանակ: «...Արք քաջք և անուանիք, որպէս և որք առ մեօք են այժմ երևելիք» (Խոր., I, ԺԲ, էջ 38)՝ Քաջ և անվանի մարդիկ, որոնք ինչպես այժմ էլ, մեր օրոք երևելի են: «...Առ Արտաշիսիւ թոռամբ Վաղարշակայ ումն Վարած անուն պատանի լեալ...» (Խոր., I, ԺԲ, էջ 41—42)՝ Վաղարշակի թոռ Արտաշեսի ժամանակ Վարած անունով մի պատանի է եղել:

3. Գործիական հոլովով դրված բառի հետ ցույց է տալիս այն առարկան, որի հետ համեմատվում է մի այլ առարկա: Օրինակներ. «Զի՞նչ է յարդ առ ցորենաւ» (Երեմիա, ԻԳ, 28)՝ Հարդն ի՞նչ է ցորենի համեմատությամբ: «Ոչ առ այլովք վաստակօքն վեհ երևի» (Եղիշե, II)՝ Ոչ թե ուրիշ վաստակների համեմատությամբ է վեհ երևում:

## Ձ

§ 336. Ձ նախդիրը գործածվում է տրական, հայցական, բացառական և գործիական հոլովների հետ:

### Ձ նախդիրը տրական հոլովի հետ

§ 337. Տրական հոլովի հետ այս նախդիրը գործածության միայն մի դեպք ունի. **հարկանել, զարկանել** բայերի մոտ, դրվելով տրական հոլովի վրա՝ ցույց է տալիս այն առարկան, որին խփվում, զարնվում է մի բան: Օրինակներ. «Զոր իբրև լուաւ Տիգրան, զահի հարեալ յարքայէն՝ գիշերի փախստական լինէր»

(Բուզ., IV, ԺԵ, էջ 189)՝ Երբ Տիրիթն այս լսեց, արքայից վախեցած՝ գիշերը փախավ։ «Մտախ գնացի հարևալ» (Ն. տ.)՝ Մտափ առավ։ «...Ցնոս յետս յայան՝ և զարկան զգետնիս» (Յովհ., ԺԸ, 6)՝ Նրանք գնացին և գետնին զարկվեցին։ Այս կիրառությամբ առաջացել են «զարհի հարկանել» (=վախենալ), «զամօթի հարկանել» (=ամաչել), «ծափ զծափի հարկանել» (=ծափ տալ) դարձվածքները։

## Զ նախդիրը հայցական հոլովի հետ

§ 338. Զ նախդիրը հայցական հոլովով դրված բառի հետ սովորաբար գործածվում է որոշյալ առման ցուցչում։ Օրինակներ. «Եւ զհաղարջ՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զովացուցիչ է, զցաւս ի փորոյն փարատէ. և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, մեռանէ. և եթէ զջուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք, սատակի և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արգելու» (Եղնիկ, I, ԺԵ, էջ 47)՝ Եթե մեկը տաք ժամանակ հաղարջ (բույս է) ուտի, որովհետև զովացնող է, փորից ցավը կհեռացնի. իսկ եթե մեկը հով ժամանակ ուտի, կմեռնի, իսկ եթե մեկը ջուրը քամելով անապակ (այստեղ անխառն իմաստով է) խմի, կմեռնի, և եթե մեկը աղացած սերմը ջրով խմի, ցանկությունից կզրկվի։ «Այնուհետև կոչեաց Բագարատն Փառնից Նախարար զգիւղն և զաւանդապահսն և զպաշտօնեայսն. խօսէր ընդ նոսա և ասէր՝ եթէ «Ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց. և նա համակ անարգեաց զիս» (Բուզ., IV, ԾԴ, էջ 250)՝ Այդ Փառնից Նախարար Բագարատը կանչեց կախարդներին, ատրուշականներին ու քրմերին, խոսեց նրանց հետ և ասաց՝ «Ես շատ անգամ կամեցա սիրել Հայոց Արշակ արքային, սակայն նա ինձ շարունակ անարգեց»։

Ինչպես վերը բերված օրինակներում էլ նկատելի է, որոշյալ առման ցուցչում հայցական հոլովով դրված բառը, որոշյալ առում արտահայտող զ նախդիրից բացի, կարող է միաժամանակ ունենալ նաև Ն հոդ (զջուրն, զգիւղն, զաւանդապահսն և այլն)։

Զ նախդիրը հայցական հոլովի հետ արտահայտում է նաև գործիական հոլովի գաղափար։ Օրինակներ. «...Զայս օրինակ ասպատակ տանէին՝ աւերէին զամենայն երկիր...» (Ագաթ., էջ 19)՝ Այս ձևով ավար վերցնելով՝ ավերում էին ամբողջ երկիրը։ «...Զի՞ գործեմ. զմահ աղուեսու սպանից զքեզ» (Բուզ., IV, ԾԴ, էջ 356)՝ Ինչպե՞ս ես, աղվեսի մահով սպանեմ քեզ։



Պետք է նկատել, որ հայցական հոլովն առանց նախդիրի էլ կարող է արտահայտել գործիական հոլովի իմաստ. այդ դեպքում հայցական հոլովով դրված բառը իմաստով մոտ է լինում բայարմատին կամ կազմված է լինում նույն բայարմատից, օրինակ՝ «Երկեան երկիւղ մեծ» (Ղուկ., Բ, 9)՝ Վախեցան մեծ երկյուղով։

## Զ նախդիրը բացառական հոլովի հետ

§ 339. Երբ Զ նախդիրը դրվում է բացառական հոլովի վրա, վերջինիս հետ միասին գործածվող Ի նախդիրը դուրս է ընկնում։ Այս հոլովի հետ զ նախդիրի գործածությունը ընդհանրապես կապված է նախադասության մեջ հանդես եկող բայերի բնույթից։ Այս հոլովի հետ զ նախդիրն ունի գործածության մի քանի դեպք։

1. Որոշ բնույթի բայերի մոտ, դրվելով հիշյալ հոլովի վրա՝ արտահայտում է քերականական այն իմաստը, որն աշխարհաբարում սովորաբար դրսևորվում է մասին կապով։ Ինչպես արդեն նշվել է, գրաբարի շատ քերականների կողմից զ նախդիրի այս գործածությունը բացառական հոլովի հետ համարվել է առանձին հոլովաձև՝ «պատմական հոլով» անվանումով (տե՛ս § 39)։

Պատմական բացառականով ընդունող բայերը խմբավորվում են հետևյալ կերպ.

ա) Ասացական բայեր, որոնք արտահայտում են ասելու, խոսելու, պատմելու գաղափար՝ ասել, պատմել, ճառել, խօսել, յայտնել, հարցանել, համբաւել, բարբառել, չարախօսել, բամբասել, վկայել, հռչակել, ամբաստանել (=մեղադրել), այլև հարադիր կազմությամբ՝ ամբաստան լինել, հռչակ հարկանել, յայտ առնել և այլն։ Օրինակներ. «Որ չարախօսեսցէ զհօրէ կամ զմօրէ, մահու վախճանեսցի» (Մարկ., Է, 10)՝ Ով հոր կամ մոր մասին չարախոսի, մահանացի։ «Եւ կէս թագաւորացն առաւել՝ պատմեաց զնոցանէ» (Ագաթ., էջ 90)՝ Իսկ մեկը սկսելով պատմել նրանց մասին «Իսկ իբրև Հռչակեցան զնոցանէ...» (Ն. տ.)՝ Իսկ երբ այն բաները իրերն հռչակեցան նրանց մասին... «Զի լուաւ զնոցանէ» (Կոր., էջ 30)՝ Քանանացի կնոջ (և նրա) մեծ հավատքի մասին ասում էր «...Որ յամենայնի հռչակ հարկանել զմէնջ...» (Ն. տ.)՝ Որ ամեն բանում հռչակում է մեր մասին։ «Զորմէ խսկոյն պատմէին յարքունիսն...» (Ն. տ., էջ 66)՝ Նրա մասին իսկույն պատմեցին (պատմում էին) արքունիքում։ «...Որպէս զվիշապացն և զհսկայիցն համբաւէին» (Եղնիկ, I, ԻԵ, էջ 72)՝ Ինչպես վիշապների և հսկաների մասին են համբավում։ «...Զկիտացն ասեն և զդիւցազնաց...» (Ն. տ., էջ 73)՝

կանանց և գեղեցկուհիների մասին են ասում. «...Ամբաստանէին առ թագաւորին Պարսից զՄուշեղէ զայսպիսի բանս...» (Բուզ., V, Բ, էջ 285)՝ Պապ թագավորի մոտ ամբաստանում էին Մուշեղ սպարապետին, Մուշեղ սպարապետի մասին մեղադրական խոսքեր էին ասում. «Բայց արդ ամբաստան լինէին... զզօրավարէն Մուշեղէ...» (Բուզ., V, Դ, էջ 297—298)՝ Բայց այնուհետև մեղադրում էին զորավար Մուշեղին, մեղադրական խոսքեր էին ասում զորավար Մուշեղի մասին. «Մահապարտ են այնոքիկ՝ որ իշխեն խօսել չարութիւն զՄուշեղէ, զառնէ քաջէ և պատուականէ» (Ն. տ., էջ 298)՝ Մահապարտ են նրանք, որոնք համարձակվում են չար բան խոսել Մուշեղի՝ քաջ և պատվական մարդու մասին. «...Զի՞նչ զորս զքէն վկայեն» (Մարկ., ԺԴ, 60)՝ Դրանք ի՞նչ են վկայում քո մասին.

բ) Իմացական բայեր՝ գիտել, կարծել, ուսանել, ուսուցանել, լսել, լինել, գուշակել, կարգել (սահմանելու նշանակությամբ), քննել և այլն. Օրինակներ. «Նոյնպէս կարծի և զսատանայէ...» (Եղիշե, I, ԺԲ, էջ 34)՝ Նույնպես էլ սատանայի մասին է կարծվում. «Կամեցաւ դիտաց զՃակատսյ...» (Եղիշե, II, ԺՁ, էջ 114)՝ Նույնպես իմացավ Հայերի մասին. «Եւ այնպէս կարգէ զաշխարհէ և զարարածոց...» (Եղիշե, IV, Ա, էջ 169)՝ Եվ այնպես է սահմանում աշխարհի և արարածների մասին. «...Ուսուցանէ զբարւոյ և զչարէ» (Եղիշե, IV, ԺՁ, էջ 206)՝ Սովորեցնում է բարու, արդարի և չարի մասին. «Վասն զի լուեալ էր զնմանէ՝ թէ այր չար և անզգամ է...» (Բուզ., III, էջ 37)՝ Որովհետև լսել էր նրա մասին, թե չար և անզգամ մարդ է. «Լուաւ կին մի զնմանէ» (Մարկ., Է, 25)՝ Մի կին լսեց նրա մասին. «...Գուշակեսցէ զնմանէ...» (Յովհ., ԺԱ, 56)՝ Կգուշակի նրա մասին.

գ) Զգացական և հոգեկան վիճակ արտահայտող բայեր՝ գոհանալ, զարմանալ, տրտմել, կարօտել, խորհել, հաւանել, այլև հարադրական կապակցությամբ՝ գոհ եմ, փոյթ է (=հոգն է, հոգ ունի), յուրախս կալ (=ուրախանալ, մտահոգվել), ուրախ լինել, ուրախ եմ, կարիս առնել (=կարեկցել, ողալ), կածօգի լինել (=կարոտագին մղկտալ, զուրգուրել), խոստովան լինել (=խոստովանել) և այլն.

Այս կարգի բայերի մոտ զ նախդիրի արտահայտած իմաստը բացառապես մասին կապով չի թարգմանվում. Նախդիր կրող բառը թարգմանվում է նաև բացառական հոլովով կամ նույնիսկ այլ հոլովով՝ ըստ կիրառության. Օրինակներ. «...Ոչ ինչ փոյթ է քեզ զմէնջ» (Մարկ., ԺԲ, 14)՝ Ոչ ոքից հոգս չունես. «Ինձ ոչ է փոյթ զայնմանէ» (Ագաթ., էջ 68)՝ Ես հոգս չունեմ նրանից, ես հոգս չունեմ այն բանի նկատմամբ. «Եւ ես գոհ էի զվաստակոց քոց...» (Ագաթ., էջ 30)՝ Եվ ես գոհ էի քո ծառայություններից.



«Խնդութեամբ և մեծաւ ուրախութեամբ գոհանայր զայնմանէ...» (Ագաթ., էջ 459)՝ Խնդությամբ և մեծ ուրախությամբ գոհանում էր նրանից (շնորհակալ էր լինում նրանից). «Այլ որպէս զԱղեք-սանդրէ խորհէին զնը՝ թէ կենդանի կայցէ» (Եղիշե, II, ԻԵ, էջ 73)՝ Այլ ինչպես գիտեր Ալեքսանդրի մասին էին խորհում (մտածում), որ կենդանի է. «Զնմանէ յուրաստ էր՝ թէ չես դու իմ որդի, և զմիւսմէն խոստովանս՝ թէ որդի իմ էս» (Եղիշե, II, Զ, էջ 95)՝ Ուրանում էր, որ նա իր որդին է (տառացի՝ ուրանում էր նրա մասին, թե դու իմ որդին չես), բայց խոստովանում էր, որ մյուսն իր որդին է. «Զորմէ և ոչ մեք յուրաստ լինիմք...» (Եղիշե, III, Զ, էջ 147)՝ Դա մենք էլ չենք ուրանում. «Տրտմեցին զնորարոցն» (Եղ., էջ 216)՝ Եղբայրներից տրտմեցին, անհանգստացան լինել եղբայրների, էջ 216)՝ Եղբայրներից տրտմել. «Զայնու ժամանակաւ ձի մի էր նորից. զմզահել եղբայրներից. «Զայնու ժամանակաւ ձի մի էր երկվար արքային Տիրանայ, զորմէ կարի զարմանայինն» (Բուզ., III, Ի, էջ 77)՝ Այն ժամանակ Տիրան արքան մի ձի ուներ, որի վրա շատ էին զարմանում. «Զորմէ չհաւանեալ, տալ ոչ առնոյր յանձն» (Ն. տ.)՝ Դրան չհամաձայնելով՝ հանձն չառավ տալ, չհամաձայնեց տալ. «Ամենայն մարդ զհօրէ ի կարի անէէին զնմանէ...» (Բուզ., V, ԽԴ, էջ 387)՝ Ամեն մարդ նրան սգում էր՝ ինչպես հորը. «...Կա-թոգի լինէին զիւրեանց քաջ զօրավարէն, զփրկչէն իւրեանց, զպաշտպանին զարգաւորութիւնէն...» (Ն. տ.)՝ Կարոտագին թախծում, զանուանին զարգաւոր պաշտպանին, թախծում էին իրենց քաջ զորավարի, իրենց փրկչի, հաղթական, անվանի, արդարարար (զորավարի) համար.

2. Բանելու իմաստ արտահայտող սակավաթիվ բայեր՝ ունել (բռնելու իմաստով), առնուլ (բռնելու իմաստով), բուռն հարկանել (=բռնել) բնդունում են զ նախդիրով և բացառական հոլովով անուղղակի խնդիր. Ինչպես աշխարհաբարում էլ գործածում ենք՝ «Ձեռքից բռնել», «Պոչից բռնել» և նման ձևեր. Օրինակներ. «Եւ առեալ զձեռանէ նորա առաջ և անտի՝ ընթացուցանէին զնա յայս կոյս և յայն կոյս» (Ագաթ., էջ 52)՝ Եվ նրա ձեռքից բռնած՝ առաջ և յայն կոյս (Ագաթ., էջ 52)՝ Եվ նրա ձեռքից բռնած՝ տարաբերում էին այս ու այն կողմ. «Մատեաւ թագաւորն՝ բուռն հարկանէր զնմանէ, կատարել զկամս ցանկութեանն» (Ագաթ., էջ 100)՝ Թագավորը մոտեցավ՝ բռնեց նրան՝ կամքն ու ցանկությունը կատարելու. «Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 253)՝ Իսկ Շապուհ արքան նրա ձեռքից բռնած՝ շրջում էր. «Թագաւորն Պապ իբրև յուէր զրանս զայս... բուռն հարկանէր զՄուշեղէ» (Բուզ., V, Դ, էջ 298)՝ Երբ Պապ թագավորն այս խոսքը լսեց... բռնեց Մուշեղին. «...Խոնարհէր բուռն հարկանէր զոտից նորա» (Բուզ., IV, ԾԴ, էջ 254)՝ Խոնարհվում բռնում էր նրա ոտքերից (կամ՝ նրա ոտքերը). «Եւ մատուցեալ յարեալ էր նրա ոտքերից (կամ՝ նրա ոտքերը).

ձեռն՝ կալեալ զձեռանէ նորա» (Մարկ., Ա, 31)՝ Նա մոտենալով նրան՝ վեր հանեց ձեռքից բռնած (կամ՝ ձեռքը բռնած)։

Այսպես էլ զ նախդիրը բացառական հոլովի վրա դրվում է կախել, կապել, կալ ... բայերի մոտ։ Օրինակներ. «...Բանզի էր կախեալ զեօթն օր զմիոյ ոտանէ» (Ագաթ., էջ 61)՝ Որովհետև յոթ օր կախված էր մի ոտքից։ «...Կալեալ ձի մի ամեհի, կապեցին կախեցին զմանուկն Գրիգորիս զագւոյ ձիոյն...» (Բուզ., III, Զ, էջ 23)՝ Մի կատաղի ձի բռնեցին և մանուկ Գրիգորիսին կապեցին, կախեցին ձիու պոչից։ «...Տայր հրաման կախել զբարձր աշտարակէն և սպանանել» (Բուզ., IV, ԾԹ, էջ 270)՝ Հրաման տվեց՝ կախել բարձր աշտարակից և սպանել։ «Եւ արկեալ կապ զոտիցն, գլխիվայր կախեցին զնա զբարձուէն կուսէ» (Ն. տ., էջ 270—271)՝ Եվ ոտքերին կապ գցելով՝ նրան գլխիվայր կախեցին այն բարձր կողմից։

3. Զ նախդիրը բացառական հոլովի հետ արտահայտում է նաև նպատակի գաղափար (հատկապես առաքել, արձակել, ... և նման բայերի մոտ)։ Օրինակներ. «...էին բազում պատառերք արքունի, որ ... էին զնմանէն՝ տանել յարքունիս...» (Ագաթ., էջ 95)՝ Կային արքունական շատ ..., որոնք ... էին նրան արքունիք տանելու նպատակով։ «Եւ որք ... յարքայէ զնոցանէն, զի ածցեն զնոսա՝ այսոքիկ են...» (Ագաթ., էջ 451)՝ Եվ ովքեր արքայի կողմից ուղարկվեցին նրանց հետևից (բերելու նպատակով), որպեսզի նրանց բերեն, սրանք են։ «Առաքեաց թագաւորն Պարսից, բանզի զայս լուեալ ... ի Հայս ... և ... Եւ ընդ ... բերին ...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)՝ Այդ Պարսից թագավորը այս լսելով ... ուղարկեց Հայաստան ... Եվ ... բերեցին այն, ինչի համար նա ուղարկել։

## Զ նախդիրը գործիական հոլովի հետ

§ 310. 1. Արտահայտում է «շուրջ» գաղափարը և թարգմանվում է շուրջ կապով։ Այս դեպքում զ նախդիրից առաջ սովորաբար դրվում է նաև շուրջ նախադրությունը։

Արդեն նշվել է, որ որոշ քերականների կողմից զ նախդիրի կիրառության այս դեպքը համարվել է առանձին հոլովաձև՝ «պարառական հոլով» անվանումով։ Իրականում դա առանձին հոլովաձև չէ, այլ զ նախդիրի կիրառության մի դեպք։ Օրինակներ. «...Շուրջ զպարսպաւն էին...» (Ագաթ., էջ 117)՝ Պարսպի շուրջ էին։



«Եւ սա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն» (Բուզ., IV, ԾԵ, էջ 257)՝ Այդ պարսից ... բոլոր զորքերն եկան հասան, ... բերդի շուրջ, պաշարեցին։ «...Եւ ինքն ... զբանակաւն իւրեանց ... ի ... մերձ ի ...» (Բուզ., V, Դ, էջ 287)՝ Իրենց բանակի շուրջը ... «...Պատեցին զնոքօքն, ... և ... զնոսա ...» (Բուզ., V, ..., Զ, էջ 307)՝ Շրջապատեցին նրանց, վեր բարձրացրին ... «Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց և հատուածոց կազմութիւն, որպէս շուրջ զբրովն զայլ բոլորակութիւն ...» (...., II, ԽԹ, էջ 167)՝ Իսկ մարդկության (բնակչության) շուրջ կազմում է ծաղկանոցներ և բուրաստաններ, ինչպես ... շուրջ ... բոլորակը։

Երբեմն էլ տեղն է ցույց տալիս, առանց «շուրջ» գաղափարի։ Օրինակ՝ «Եկն եհաս թագաւորն Հայոց Արշակ ... դաշտավայրակս» (Բուզ., IV, ԺԶ, էջ 193)՝ Հայոց ... Պարսից ... Արշակ թագավորը եկավ ... «...Պատահէին ... զամամբ ... » (Կոր., ... էջ 54)՝ Հանդիպեցին ... ։

2. Ժամանակ ցույց տվող բառերի հետ ցույց է տալիս ժամանակ։ Օրինակներ. «Զայնու ժամանակաւ ... ։ Օրինակներ ... բեաց յարքայէն Հայոց մի ի ծառայից նորա մեծ իշխանն Աղձնեաց» (Բուզ., III, Թ, էջ 32)՝ Այն ժամանակներում Հայոց արքայի դեմ ... Աղձնիքի մեծ իշխանը։ «Եւ զայնու ժամանակաւ ... պատերազմ ընդ Պարսից ընդ Հայս» (Բուզ., V, Է, էջ 307—308)՝ Եվ այն ժամանակներում ... պարսիկները ... հայերի հետ։

Այս ձևով կազմվել են մի շարք արտահայտություններ՝ զցերեկ՝ ...։ ... զգիշերու՝ գիշերվա մոտ, ... ժամանակները, ... ժամը ... մոտ և այլն։

3. Մի շարք բայերի մոտ զ նախդիրը դրվելով գործիական հոլովի վրա՝ ցույց է տալիս այն տեղը կամ այն առարկան, որի վրա մի բան է դրվում, մի բան է փաթաթվում։ Այդ բայերից են՝ ... արկանել, ... ։ Օրինակներ. «...Արկեալ զիւրեաւ ...» (Ագաթ., էջ ...) ... «...Զգեստս ...» (Ագաթ., 396)՝ Իր վրա ... «...» ... էջ 90)՝ Դրվում էին իրար վրա։ «...Անկաւ ... նորա և համբուրեաց զնա» (Ղուկ., ԺԵ, 20)՝ Նրա վզովն ընկավ և համբուրեց նրան։ «...Զհանդերձս իւրեանց տարածանէին զճանապարհաւն

(Ղուկ., ԺԳ, 36)՝ Իրենց շորերը տարածում էին ճանապարհի վրա։ «...Ոչ գարշի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ...» (Եզնիկ, I, ԻԴ, էջ 65)՝ Չի խորշում այնպիսի անուններն իր վրա առնելուց։ «...Սամոյրսն զգլխովն ածեալ...» (Բուզ., IV, ԺԵ, էջ 184)՝ Սամույրենին գլխին գցած։ «...Ոտն զոտամբ արկեալ...» (Բուզ., IV, Ե, էջ 125)՝ Ոտքը ոտքի վրա գցած։

4. Մի շարք բայեր ընդունում են զ նախդիր կրող գործիական հոլովով անուղղակի խնդիր։ Այդ բայերից են՝ հայել, կատակել, անցանել, զանց առնել, ծիծաղել, այպն առնել (=ծաղրել), բամբասել (=արհամարհել), արհամարհել, զգուշանալ, մեթալ (կամ մրթալ) և այլն։ Օրինակներ. «Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն...» (Մատթ., ԻԲ, 11)՝ Եվ թագավորը մտավ՝ բազմականներին նայելու։ «Եւ կատակեսցեն զնովաւ և հարկանիցեն զնա...» (Մարկ., Ժ, 34)՝ Նրան կծաղրեն և կծեծեն։ «...Եւ երկոքեան անցեալ էին զաւուրբք իւրեանց» (Ղուկ., Ա, 7)՝ Երկուսն էլ իրենց օրերն անցկացրել էին, ծերացել էին։ «...Ես ծեր եմ և կին իմ անցեալ զաւուրբք իւրովք» (Ղուկ., Ա, 18)՝ Ես ծեր եմ և իմ կինն էլ իր օրերն անցկացրել է, նա ծեր է, կինս՝ նույնպես։ «...Ո՞չ աստուածքն զկարգօք իւրեանց անցանեն...» (Ագաթ., էջ 128)՝ Աստվածները իրենց կարգից դուրս չեն գալիս։ «...Եւ ոչ անցանեն զչափովն» (Ագաթ., էջ 140)՝ Չափից դուրս չեն գալիս, չափից չեն անցնում։ «Իբրև լուան մարդիկն՝ սկսան ծիծաղել զբանիւքն զոր ասացն» (Ագաթ., էջ 114)՝ Երբ մարդիկ լսեցին, սկսեցին ծիծաղել նրա ասած խոսքերի վրա, սկսեցին նրա ասածները ծաղրել։ «Անցանել զհրամանաւն» (Եզնիկ, I, ԺԲ, էջ 34)՝ Հրամանից անցնել, հրամանից դուրս գալ, հրամանը չկատարել։ «Անցին զպատուիրանաւն» (Եզնիկ, II, ԺԲ, էջ 105)՝ Պատվիրանից անցան, պատվիրանը չկատարեցին։ «Զտաճարաւն այպն առնէին» (Բուզ., III, ԺԹ, էջ 74)՝ Ծաղրում էին տաճարը։ «...Զսուրբ և զնուիրեալ տեղեօքն բամբասեալ, կռոցն առնէին» (Ն. տ.)՝ Սուրբ և նվիրական տեղերը բամբասելով՝ արհամարհելով՝ ավերակ էին անում։ «Եւ զսուրբ տեղեօքն բամբասեալ արհամարհէր...» (Բուզ., IV, ԺԴ, էջ 178)՝ Սուրբ տեղերը բամբասում, արհամարհում էր։ «Իսկ թագաւորն ծաղր առնէր զբանիւ կաթողիկոսին, և մեթայր զնորա զասացեալսն» (Բուզ., IV, ԺԴ, էջ 173)՝ Իսկ թագավորը ծաղրում էր կաթողիկոսի խոսքերը, ծիծաղում էր նրա ասածների վրա։ «...Զգուշանայր զպահմանօքն երկրին իւրոյ» (Բուզ., IV, Է, էջ 227)՝ Զգուշությամբ պահպանում էր իր երկրի սահմանները։ «Եւ սպարապետն Հայոց Մուշեղ առաջնորդէր Հայոց. և զգուշանայր զսահմանօքն Հայոց...» (Բուզ., V, ԼԴ, էջ 351)՝ Եվ Հայոց սպարապետ Մուշեղը առաջ-



նորդում էր հայերին և զգուշությամբ պահպանում էր Հայաստանի սահմանները։ «Եւ զբազում բերդօք զանց առնէին...» (Բուզ., IV, ԻԴ, էջ 289)՝ Շատ բերդեր թողեցին ու անցան։

5. Գործիական հոլովի հետ զ նախդրի զանազան կիրառություններից դուրս գոյացել են բազմազան դարձվածքներ ու արտահայտություններ, ինչպես՝ զմտաւ ածել՝ մտածել, [illegible] ելրալ՝ որից ընկնել, [illegible]՝ խելքը կորցրած, խելագարված, զմիմեամբ ելանել՝ իրար անցնել, [illegible] զսիրով գալ՝ [illegible], զզօրօք գալ՝ [illegible], զանձամբ գալ՝ իր մասին հոգ տանել, զձեռօք ածել՝ ձեռք դնել, ձեռք բերել և այլն։

ԸՆԴ

§ 341. Ընդ նախդիրը գործածվում է բոլոր թեք հոլովների հետ։

### Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ

§ 342. Այս հոլովի հետ ընդ նախդիրը սակավ գործածություն ունի. արտահայտում է «դիմաց», «փոխարեն», երբեմն էլ «համար» գաղափարը։ Օրինակներ. «...Նա ինձ չար ընդ բարւոյ հատոյց» (Բուզ., IV, ԾԴ, էջ 250)՝ Նա ինձ բարու փոխարեն (բարու դիմաց) չար հատուցեց։ «Եւ այլն անկաւ յերկիր բարւոք, և ելեալ աճեցեալ տայր պտուղ, և բերէր ընդ միոյ՝ երեսուն, և ընդ միոյ՝ վաթսուն, և ընդ միոյ՝ հարիւր» (Մարկ., Դ, 8)՝ Եվ ուրիշն ընկավ բարվոք տեղ (հողի վրա) և ելնելով, աճելով պտուղ տվեց, և բերեց մեկի փոխարեն երեսուն, մեկի փոխարեն վաթսուն, մեկի փոխարեն հարյուր։ «...Տալ գինս ընդ կերակրոյ» (Ագաթ., էջ 86)՝ Գին տալ կերակրի համար, կերակրի դիմաց։ «Եւ նոքա զթերագրութիւնս վարդապետին ի մահ եդեալ, և զպարգևս ընդ յաղթութեանն, զոր ի վերայ լինիցին ախոյեանին...» (Եզնիկ, I, ԺԴ, էջ 40—41)՝ Եվ նրանք հիշելով ուսուցչի [illegible] ու պարգևները՝ հաղթության դիմաց, [illegible]։

Ընդ նախդիրին զուգահեռ երբեմն այս կիրառությամբ հանդես է գալիս նաև փոխանակ նախադրությունը, թեև առանց դրան էլ ընդ նախդիրն արտահայտում է այդ իմաստը։ Օրինակներ. «...Մահու պատիժ փոխանակ ընդ վաստակեանն կրեն» (Եզնիկ, I, ԺԴ, էջ 41)՝ Վաստակի համար, վաստակի դիմաց մահվան պատիժ են կրում։ «Իսկ թագաւորքն [illegible]

կանք՝ գեղից) կամ ագարակաց մուրհակս գրեալ և կնքեալ դնէին ի վերայ մէջքին Յոհաննու փոխանակ ընդ մեղաց իւրեանց» (Բուզ., VI, Ժ, էջ 403)՝ Իսկ թագավորները գյուղերի կամ ագարակների մուրհակներ գրելով և կնքելով, դնում էին Հոհանի մեջքին՝ իրենց մեղքերի փոխարեն։ «...Փոխանակ ընդ կնոջ միոյ...» (Եղիշե, II)՝ Մի կնոջ փոխարեն։ Այլև փոխարէն՝ «...Փոխարէն ընդ հողեղէն յարկացն...» (Ագաթ., էջ 376)՝ Հողե հարկերի փոխարեն։

### Ընդ նախդիրը տրական հոլովի հետ

§ 343. Ընդ նախդիրը այս հոլովի հետ դրվում է սովորաբար նույնի թվում, այն էլ առանձնահատուկ կիրառումով։

1. Արտահայտում է միասնության գաղափար։ Օրինակներ. «Խօսել սկսաւ ընդ նմա» (Ագաթ., էջ 20)՝ Սկսեց խոսել նրա հետ։ «Ուստի յայտ իսկ է՝ թէ հրոյ ընդ խոտոյ ոչ ամուսնութիւն լինի...» (Եզնիկ, I, ԺԴ, էջ 64)՝ Այդտեղից էլ հայտնի է, որ կրակը խոտի հետ չի կարող ամուսնանալ, չի կարող միանալ (բառացի՝ որտեղից էլ հայտնի է, որ կրակին խոտի հետ ամուսնություն չի լինում)։ «...Կին նորա եկեալ էր ընդ նմա...» (Բուզ., IV, ԺԵ, էջ 183)՝ Նրա կինը եկել էր իր հետ։

2. Մի քանի բայեր, որոնք ընդհանրապես ընդունում են ընդ նախդիրով և հայցական հոլովով խնդիր (տե՛ս § 344, 2-րդ կ.), այդպիսի խնդիր ընդունում են նաև տրականով։ Այս դեպքում ընդ նախդիրի արտահայտած իմաստը աշխարհաբար թարգմանելիս փարելի է արտահայտել վրա, նկատմամբ բառերով կամ միայն տրական հոլովով։ Օրինակներ. «...Որպէս ամենայն տանուտէր ընդ տան և ընդ ընտանեաց իւրոց[1] հոգայ՝ սոյնպէս և մեք հոգամք ընդ մեր Հայոց աշխարհիս շինութեանս» (Ագաթ., էջ 75)՝ Ինչպես յուրաքանչյուր տանտեր հոգ է տանում իր տան և ընտանիքի նկատմամբ, նույնպես էլ մենք ենք հոգ տանում մեր Հայոց աշխարհի շինության նկատմամբ։ «Համբերեաց ընդ նմա» (Մատթ., ԻԶ, 49)՝ Համբերեց նրան։ «Ընդ որում ես համբերեցի՝ նա էր» (Ն. տ., 48)՝ Որին ես համբերեմ, նա է։ Այսպես էլ՝ նախանձել ընդ ումեք՝ նախանձել մեկին, զարմանալ ընդ ումեք՝ զարմանալ մեկի վրա, գութ ունել ընդ ումեք՝ գութ ունենալ մեկի

[1] Մեր օգտագործած հրատարակության մեջ տան բառից առաջ դրված է իւրոյ. այդ դեպքում ավելի ճիշտ կլինի իւր (սեռականով, իբրև հատկացուցիչ իր անձնական դերանունից) կամ իւրում (իր ստացական դերանվան տրական), սակայն ուղղում ենք ըստ այլ ընթերցումների (Ագաթ., էջ 75)։



նկատմամբ, խղճալ մեկին. անցանել ընդ մարդկան նեղութիւնս՝ մարդկանց նեղություններ են հանդիպում, մարդկանց դիմաց նեղություններ են անցնում։

### Ընդ նախդիրը հայցական հոլովի հետ

§ 344. Ընդ նախդիրն ամենից շատ գործածվում է հայցական հոլովի հետ՝ արտահայտելով բազմազան նշանակություններ։

1. Մի տեղից մի այլ տեղ ուղղված գործողություն ցույց տվող բայերի հետ, դրվելով հայցական հոլովի վրա՝ ցույց է տալիս այն տեղը, դեպի ուր ուղղված է գործողությունը (ուղեորման հայցական)։ Օրինակներ. «Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս դեսպանս արձակել» (Ագաթ., էջ 18)՝ Ապա հրաման տվեց՝ լրաբերներ ուղարկել դեպի զանազան կողմեր։ «...Թագաւոր թուղթս խրատականս և զգուշացուցիչս ընդ ամենայն գաւառս առաքէր...» (Կոր., էջ 92)՝ Թագավորը խրատական և զգուշացուցիչ թղթեր էր ուղարկում բոլոր գավառները։ «Եւ ինքն խաղայ, ասէ, այլով աղխիւն ընդ արեւմուտս հիւսիսոյ...» (Խոր., I, Ժ, էջ 33)՝ Եվ ինքը, ասում է, մյուս ունեցվածքով շարժվում է դեպի հյուսիս-արևմուտք։ «...Աւետարանս առաքեաց ընդ ամենայն տարածանս աշխարհին իւրոյ» (Եղիշե, I)՝ Ավետարաններ ուղարկեց դեպի իր երկրի բոլոր տարածությունները։

2. Մի շարք բայերի մոտ դրվում է ընդ նախդիրով և հայցական հոլովով անուղղակի խնդիր։ Այստեղ նախդիրն արտահայտում է տրական հոլովի իմաստ (նախդրիվ տրական)։ Այս դեպքում այդ նախդրավոր կապակցությունը պետք է թարգմանել տրական հոլովով կամ նախդիրի հաղորդած իմաստը արտահայտել զանազան կապերով։

Այդպիսի խնդիր ընդունող բայերից են՝ հաշտել, նայել, աչնալ, խնդալ, ուրախ լինել, տրտմել, ցնծալ, խառնվել, հաճել, բարկանալ, զայրանալ, դշտել (=չարանալ, այլև՝ ցավել, տրտմել), ցասնուլ, զարմանալ, հոգալ, նախանձել, գրգռել, խառնել, հաւասարել և այլն։ Օրինակներ. «Եւ նա ընդ բանսն խռովեցաւ...» (Ղուկ., Ա, 29)՝ Եվ նա խոսքերի համար խռովվեց։ «Իսկ իբրև լուաւ զայն թագաւորն՝ բարկացաւ ընդ բանսն...» (Ագաթ., էջ 68)՝ Իսկ թագավորն երբ այն լսեց, բարկացավ խոսքերի վրա։ «Եւ զարմացեալ թագաւորն ընդ ժուժկալութիւն համբերութեանն կարի անհնարին և ընդ տոկալ նորա՝ ասէ...» (Ագաթ., էջ 69)՝ Թագավորը՝ զարմացած նրա սաստիկ ժուժկալության և համբերության ու տոկալու վրա, ասում է...։ «...ի հոգալ ընդ շինութիւն իւրեանց աշխարհին...»

(Ագաթ., էջ 74)՝ Իրենց աշխարհի շինության համար հոգալիս
«Աւերակս եղաք ընդ այս...» (Ագաթ., էջ 106)՝ Սրա վրա ուրախ
եղանք։ «Տրտմեալ ընդ մահ աղջկանն տիրացելոյ պայազատ» (Ագաթ.,
էջ 109)՝ Այն աղջկա մահվան համար տրտմած և տխրած արքան
էր։ «Եւ ա՛ որ ընդ ճառագայթս արեգականն հայել կամիցի...»
(Եզնիկ, I, Ա, էջ 5)՝ Նաև նա, ով արեգակի ճառագայթներին նայել
կամենա...։ «...Տեսանեմք երկուս արս միաբանս ընդ միմեանս
գրգռեալ, միմեանց մահու և արեամբ ծարաւի են» (Եզնիկ, I, Գ,
էջ 14)՝ Տեսնում ենք, որ մի ցեղի երկու մարդիկ միմյանց վրա
գրգռված՝ իրար մահվան և արյան ծարավի են։ «...Ոչ խնդայ ընդ
կորուստ մարդկան» (Եզնիկ, I, ԺԲ, էջ 53)՝ Չի ուրախանում մարդ-
կանց կորստյան վրա։ «...Զայրացան ընդ բանս նորա...» (Բուզ.,
III, Զ, էջ 22)՝ Զայրացան նրա խոսքերի վրա։ «...Նայէր ընդ
պէսպէս ամբոխ զօրականացն...» (Բուզ., V, ԼԲ, էջ 348)՝ Նայում էր
զորականների խայտաբղետ խմբին։ «...Զչուեկաւ նայէր ընդ պէսպէս
ամբոխս զօրականացն...» (Ն. տ.)՝ Հայացքը հառած նայում էր զո-
րականների զանազան խմբերին։ «Յառաջեաւ ընդ նոսա, այսպէս
պարապեալ, հալածեաց յիւրոց սահմանացն» (Բուզ., V, ԼԷ, էջ 358)՝
Նրանց վրա բարկանալով, անարգելով՝ հալածեց իր սահմաններից։
«...Յայտ նախանձէր նա ընդ փառսն Մանուէլի...» (Բուզ., V, ԼԸ,
էջ 359)՝ Նա խիստ նախանձում էր Մանվելի փառքին։ «Ընդ այն
եւ ցնծացեալ առնէին մեծապէս ուրախութիւն...» (Բուզ., V, ԽԴ,
էջ 384)՝ Նրա վրա ցնծալով՝ շատ ուրախանում էին, մեծ ուրա-
խություն էին անում։ «...Բայց ոչ ինչ զչարեցաւ ընդ կարգս Զա-
ւենայ...» (Բուզ., VI, Գ, էջ 395)՝ Բայց Զավենի կարգերի վրա
չչարացավ։ «...Ամաչեցեալ կորանային և ընդ երկիր պշնուին»
(Եղիշե, III)՝ Ամաչելով կորանում և նայում էին գետնին։ «Հա-
ւասարեսցէ մահու մեր ընդ մահ քաջ նահատակացն, և խառնեսցի
արիւն մեր ընդ արիւն անկելոյ վիրաւորացն...» (Եղիշե, VII)՝
Մեր մահը թող համասարվի քաջ նահատակների մահվանը, և մեր
արյունը թող խառնվի ընկած վիրավորների արյանը։

3. Արտահայտում է միասնության գաղափար, համակցական
հոլովակի թվում։ Օրինակներ. «...Ածին ընդ իւրեանս պատարագս՝
ոսկի և արծաթ, ձիս և ջորիս և հանդերձս զանազան գունակս...»
(Ագաթ., էջ 418)՝ Իրենց հետ վերցրին նվերներ՝ ոսկի, արծաթ,
ձիեր, ջորիներ և զանազան հագուստներ։ «...Զէր մարթ անմարմ-
նոց ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ» (Եզնիկ, I, ԻԵ, էջ 70)՝
Անմարմինները չէին կարող մարմնավոր կանանց հետ ամուսնա-
նալ։ «...Ի մասց իւր անկանի մարդ, և խօսի ընդ որմս, և կայի
ընդ հողմս» (Եզնիկ, II, ԻԱ, էջ 125)՝ Մարդը խելագարվում է և



խոսում է պատերի հետ, կռվում հողմերի հետ։ «Եւ զբազում բեր-
դորս զանց առնէին, զի ոչ կարէին մարտնչել ընդ ամուրսն» (Բուզ.,
IV, ԻԴ, էջ 219)՝ Եվ շատ բերդեր թողին ու անցան, որովհետև
չէին կարողանում այն ամրոցների հետ (կամ դեմ) մարտնչել։

Ընդ նախդիրը նույնպիսի գաղափար կարող է արտահայտել
նաև ես դերանվան եզակի թվի հետ, օրինակ՝ «...Զի՞նչ այն բանք
իցեն, զոր դու ընդ իս խօսել խօսիս» (Բուզ., VI, Ը, էջ 399)՝
Ի՞նչ են այն խոսքերը, որ դու ինձ հետ պիտի խոսես։

4. Արտահայտում է «միջով», «տարածությամբ» գաղափարը։
Ցույց է տալիս այն տարածքը, որի միջով, վրայով, տարածու-
թյամբ անցնում է գործողությունը։ Օրինակներ. «Ջանացարո՛ւք
մտանել ընդ դուռն նեղ» (Ղուկ., ԺԳ, 24)՝ Ջանացե՛ք նեղ դռնով
ներս մտնել։ «...Ի լեռն անցանէր ընդ գետն Եփրատ» (Ագաթ., էջ
109)՝ Լողալով անցնում էր Եփրատ գետով, գետի միջով։ «...Յոր-
ժամ շողն ընդ երդ մտանիցէ, և հողմածուք իմն երևին ի շողն...»
(Եզնիկ, III, ԺԳ, էջ 159)՝ Երբ շողը երդիկով ներս է ընկնում
(բառացի՝ մտնում), և ինչ-որ փոշու հատիկներ են երևում շողի
մեջ։ «...Ամենայն ինչ որ մտանէ ընդ բերան մարդոյն, ոչ պղծէ
զնա» (Եզնիկ, IV, ԺԲ, էջ 194)՝ Այն ամենը, ինչ որ մտնում է
մարդու բերանով, նրան չի պղծում։ «...Ընդ քիթսն և ընդ բե-
րանն առ հասարակ զոլորշի ջերմախառն ելանէր...» (Եղիշե, II)՝
Քթով և բերանով (կամ՝ քթից և բերանից) առհասարակ ջերմա-
խառն գոլորշի էր ելնում։ «...Կուտեաց զամենայն բազմութիւն
զօրու իւրոյ, և փութանակի անցանէր ընդ մեծ գետն Կուր անուն»
(Եղիշե, III)՝ Հավաքեց իր զորքի ամբողջ բազմությունը և շտապ
անցավ Կուր անունով մեծ գետը։ «Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
ընդ եղեգան փող բոց ելանէր» (Խոր., I, ԼԱ/ԼԲ, էջ 86)՝ Եղեգնի
փողով ծուխ էր ելնում, եղեգնի փողով բոց էր ելնում։

5. Ցույց է տալիս այն անցքը, որտեղ կատարվում է գործո-
ղությունը, որը աշխարհաբար թարգմանությամբ մեծ մասամբ
արտահայտվում է ներգոյական, հայցական կամ տրական հո-
լովներով։ Նախդիրի հաջորդած խնդիր կարելի է արտահայտել
նաև տեղ ցույց տվող կապերով (մեջ, վրա և այլն)։ Օրինակներ.
«...Յածիք ընդ ծով և ընդ ցամաք...» (Մատթ., ԻԳ, 15)՝ Շրջում
եք ծովում ու ցամաքում։ «Եւ երթեալ ածեալ ընդ խորանն, ասէ
ցնա...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 253)՝ Եվ երթևեկելով՝ դահլիճում,
ասում է նրան...։ «Իսկ Մուշեղ զօրավարն Հայաստանեայց շրջէր
ընդ երկիրն...» (Բուզ., V, Ա, էջ 281)՝ Իսկ Հայոց Մուշեղ զորա-
վարը շրջում էր երկրում։ «Ընդ բազում տեղիս գայր առնէր ի
վրէժս հօրն իւրոյ Վասակայ» (Ն. տ.)՝ Եվ շատ տեղերում (կամ

հայցականով՝ շատ անգամ) այս կատարում էր՝ իր հայր Վասակի վրեժը լուծելու համար։ «...Սրոյ ճարակ զամենեսեան տային ընդ երեսս դաշտին...» (Եղիշե, III)՝ Բոլորին սրի ճարակ արին դաշտի վրա (կամ՝ դաշտի երեսին)։ «...Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել զզի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի» (Խոր., I, Ժ, էջ 32)՝ Սա խրոխտանալով՝ ձեռք բարձրացրեց Բելի բռնության դեմ, երբ մարդկային ցեղը տարածվում էր ամբողջ երկրի լայնության վրա։ «...Երևեցան նոքա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով» (Խոր., I, ԺԱ, էջ 35)՝ Նրանց երևաց Բելի ամբոխի անկարգ հրոսակի բազմությունը՝ ցիր ու ցան, հանդուգն հարձակումով երկրի երեսին սուրալով։ «...Ընդ բազում տեղիս կարեալ զքարինսն...» (Խոր., II, ԼԹ, էջ 165)՝ Շատ տեղերում քարերը կտրելով...։

Կամ ներգոյական հոլովի իմաստ է արտահայտում՝ այլ ֆունկցիայով։ Օրինակներ. «...Ապա խորհեցաւ նա ընդ միտս իւր զնենգութիւն չար...» (Բուզ., V, ԼԸ, էջ 369)՝ Ապա նա իր մտքում չար նենգություն մտածեց։ «Եւ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միմեանս...» (Մատթ., ԻԱ, 38)՝ Իսկ մշակները երբ որդուն տեսան, ասացին մտքներում։

6. Անորոշ դերբայի հայցական հոլովի հետ գործածվում է ժամանակի գաղափար։ Օրինակներ. «...Ընդ կուսակելն բազումք զրուցումս կոխեալ սատակէին» (Ագաթ., էջ 97)՝ Կուսակեզնելիս շատերը շարերին ոտքերով սպանում էին։ «...Ընդ առաւօտանալն ծագելոյ տեառն» (Ագաթ., էջ 392)՝ Երբ առավոտը բացվեց, տեսիլը չքացավ։ «...Ընդ ծագել արեգականն...» (Եզնիկ, II, ԻԲ, էջ 129)՝ Արևը ծագելիս, արևածագին։ «Եւ ընդ վաղիւն ծնանէր զմանուկն» (Բուզ., IV, ԺԸ, էջ 122)՝ Վաղըսն ծնեց մանկանը։ «Նա և արքք օրհասականք ընդ փախճանել շնչոյն հզօրագոյնս կռուին» (Եղիշե, I)՝ Նաև օրհասական արքերը շունչը փչելիս ավելի ուժգին են կռվում։

Այս իմաստով ընդ նախդիրը հանդես է գալիս նաև ժամանակ ցույց տվող բառերի հայցական հոլովի հետ։ Օրինակներ. «...Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ խնդրեաց իւր կին կայսրն Դիոկղետիանոս» (Ագաթ., էջ 78)՝ Այն ժամանակներում Դիոկղետիանոս կայսրը իր համար կին ուզեց։ «Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ թագաւորեաց Կոստանդիանոս որդի Կոստանդեայ արքայի...» (Ագաթ., էջ 455)՝ Այն ժամանակներում թագավորեց Կոստանդիոս արքայի որդի Կոստանդիանոսը։ «Եւ ընդ այգն ընդ առաւօտն՝ յարուցեալ՝ ել և գնաց յանապատ տեղի» (Մարկ., Ա,



35)՝ Եվ վաղ առավոտյան վեր կացավ և գնաց մի անապատ տեղ։ «Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)՝ Եվ քիչ օրեր անց եկան բերեցին։

7. Բաժանելու, կտրելու իմաստ արտահայտող [illegible] բայերի հետ դրվում է թվական անվան վրա։ Օրինակներ. «Ընդ երկուս բաժանեալ զզօրսն, երկուց գնդացն զԱնդիկան և զՀազարաւուխտ զօրագլուխս կացուցանէր. և միում գնդին ինքնին թագաւորն լինէր զօրագլուխ» (Բուզ., IV, ԻԲ, էջ 212)՝ Զորքերը երկու բաժանելով՝ երկու գնդերին զորագլուխ նշանակեց Անդիկանին և Հազարավուխտին. իսկ մի գնդի զորագլուխը եղավ ինքը՝ թագավորը։ «...Եւ լաւ համարեցան զաշխարհն Հայոց նախ ընդ երկուս ի մէջ իւրեանց բաժանել» (Բուզ., VI, Ա, էջ 392)՝ Եվ լավ համարեցին նախ Հայոց աշխարհը երկու բաժին անել իրենց մեջ։ «...Ընդ երկու զհատն կտրեալ՝ զի մի՛ բուսանիցի» (Եզնիկ, III, ԺԸ, էջ 121)՝ Հատիկը երկու մաս անելու, որպեսզի չբուսնի։

8. Կախել և կապել բայերի մոտ ընդ նախդիրը դրվելով հայցական հոլովի վրա՝ ցույց է տալիս այն առարկան, որից մի բան է կախվում, որին մի բան է կապվում։ Օրինակներ. «...Լաւ է նմա՝ եթէ կախիցի երկան իշոյ ընդ պարանոց նորա՝ և ընկղմիցի ի խորս ծովու» (Մատթ., ԺԸ, 6)՝ Լավ է նրան, որ մեծ երկանաքար կախվի նրա պարանոցից և ընկղմվի ծովի խորքերը։ Կախել ընդ ոճգունան՝ թելից կախվել։ Կապէին ընդ նաւ՝ կապում էին նավին (կամ՝ նավից)։

9. Արտահայտում է միջոցի գործիականի իմաստ, օրինակ՝ «...Ծառայ որ ընդ ունկն ոչ լսէ՝ ընդ մկանունս տան լսել նմա» (Եզնիկ, I, ԺՍ, էջ 43)՝ Եթե ծառան ականջով չի լսում, մկաններով են լսել տալիս նրան։ «Ընդ իւրեանց ձեռն ընկեցին»՝ Իրենց ձեռքով նետեցին։

10. Հայցական հոլովի հետ կրկնվելով (և շաղկապով), նշանակում է «միջև», տարբեր առարկաների միջև։ Օրինակներ. «...Վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ...» (Ղուկ., ԺԶ, 26)՝ Մեր և ձեր միջև մեծ վիհ կա։ «Յաղագս թէ զի՞նչ եղև պատերազմ ընդ Շապուհ թագաւորն Պարսից և ընդ Արշակ թագաւորն Հայոց զառաջինն...» (Բուզ., IV, ԻԱ, էջ 210)՝ Այն մասին, թե ինչպես առաջին պատերազմը եղավ Պարսից Շապուհ թագավորի և Հայոց Արշակ թագավորի միջև։ «Յաղագս դարձեալ պատերազմին, որ եղև ի Բագաւան յաւանին Բագրեւանդ գաւառին ընդ Պապ թագաւորն Հայոց և ընդ զօրսն Պարսից» (Բուզ., V, Դ, էջ 287)՝ Երկրորդ պատերազմի մասին, որ եղավ Բագրևանդ գավառի Բագավան ավանում Հայոց

Հայոց թագավորի և Պարսից զորքերի միջև։ «Եւ երկար միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն» (Խոր., I, ԺԱ, էջ 35)՝ Եվ երկար տարածություն կար նրա ու ամբոխի միջև։

11. Նույնպիսի կրկնությամբ արտահայտում է ամբողջականության գաղափար (առարկաների միասնություն, առարկաները միասին վերցված)։ Օրինակներ. «...Ընդ այր և ընդ կին և ընդ մանուկ աւելի քան զչորեքհարիւր բիւր» (Ագաթ., էջ 435)՝ Տղամարդ, կին և մանուկ միասին՝ ավելի քան չորս հարյուր բյուր։ «...Լինէր հանդէս համարուն վաթսուն և վեց հազար այր՝ ընդ հեծեալ և ընդ հետևակս» (Եղիշե, V)՝ Նրանց թիվը եղավ վաթսունվեց հազար մարդ՝ հեծյալ և հետևակ (միասին հաշված)։

12. Կազմում է մի շարք ոճեր՝ ճանել ընդ սուր՝ սրի մատնել, ընդ ցից ճանել՝ հանել ցցի վրա, սպանել, ընդ գինիս մտանել՝ գինով ընկնել, գինովնալ, ընդ ժամանակս ժամանակս՝ ժամանակ առ ժամանակ, ընդ այս ընդ այն՝ այս ու այն կողմ, բարբ.՝ գեն ու գեն։ Օրինակներ. «Ապա չոգան յաղթեցին զօրացն Պարսից և առ հասարակ ընդ սուր հանին զամենայն» (Բուզ., III, Թ, էջ 33)՝ Ապա գնացին, հաղթեցին Պարսից զորքերին և բոլորին առհասարակ սրի մատնեցին։ «...Այրաւերակ զերկիրն Հայոց առնէին առաջնորդ Մեհրուժանաւ. զորս տային ի կոխումն փղաց, և զկանայս ընդ ցից սայլից հանէին» (Բուզ., IV, ԻԳ, էջ 217)՝ Մեհրուժանի առաջնորդությամբ Հայոց աշխարհը այրում ու ավերում էին, ոմանց փղերին ոտնակոխ էին անել տալիս, կանանց սայլերի ցցի վրա էին հանում։ «Իբրև ընդ գինիս մտին...» (Բուզ., V, ԼԲ, էջ 348)՝ Երբ գինով ընկան... երբ խմեցին...։ «Փախեան ընդ այս ընդ այն գնացին» (Բուզ., IV, ԾԸ, էջ 267)՝ Փախան և այս ու այն կողմ գնացին։ «Զորս ընդ ժամանակս ժամանակս իբրով իսկ անձամբն օրինակ ցուցանէր» (Կոր., էջ 80)՝ Ժամանակ առ ժամանակ հենց ինքն անձամբ նրանց օրինակ էր ցույց տալիս։

### Ընդ նախդիրը բացառական հոլովի հետ

§ 345. Երբ ընդ նախդիրը հանդես է գալիս բացառական հոլովի հետ, ի նախդիրը դուրս է ընկնում։ Այս հոլովի հետ նա ունի գործածության սահմանափակ դեպքեր։

1. Արտահայտում է դադարման գաղափար. ցույց է տալիս այն տեղը, որտեղ լինում կամ գտնվում է մի բան։ Օրինակներ. «Նի՛ստ ընդ աջմէ իմմէ...» (Մատթ., ԻԲ, 44)՝ Նստի՛ր իմ աջ կողմում։ «Յայնժամ ասասցէ թագաւորն՝ որ ընդ ահեկէն իցեն...»



(Մատթ., ԻԵ, 41)՝ Այն ժամանակ կասի ձախ կողմում եղածներին։ «...Հրաման պատուիրանի տայր ընդ աջմէ կողմանէ գնդին իւրոյ պատրաստ լինել ընդդէմ Հայոց զօրավարին» (Եղիշե, VI)՝ Հրաման ու պատվեր տվեց՝ իր գնդի աջ կողմում պատրաստ լինել Հայոց զորավարին դիմադրելու։

2. Խիստ սակավ գործածությամբ արտահայտում է պատճառի գաղափար, օրինակ՝ «ընդ երկիւղէն» (=երկյուղից), «ընդ տկարութենէն մնաց» (=տկարության պատճառով մնաց), «ընդ հեղգութենէն լինի» (=ծուլությունից է լինում), «ընդ դատարկ բանէն համարս տալ» (=դատարկ բանի համար հաշիվ տալ), «տալ համար ընդ կորստենէն» (=հաշիվ տալ կորուստի համար)։

3. Որևէ նոր իմաստ չի ավելացնում, այլ սոսկ ի նախդիրի դերն է կատարում. օրինակ՝ «ընդ արևելից կողմանէ» (=արևելյան կողմից) և այլն, «ընդ հարաւոյ կողմանէ» (=հարավային կողմից) և այլն։

### Ընդ նախդիրը գործիական հոլովի հետ

§ 346. Ընդ նախդիրը գործիական հոլովով ցույց է տալիս՝

1. «Տակ»՝ տարածական իմաստով։ Օրինակներ. «Միթէ գայ ճրագ, զի ընդ գրուանաւ դնիցի կամ ընդ մահճօք» (Մարկ., Դ, 21)՝ Մի՞թե ճրագը գալիս է, որ գրվանի (ամանի, ծածկոցի) կամ մահճի տակ դրվի։ «Եւ այլք զգերեզմանս կրկանեն, և զթաղեալ մարմինս ընդ հողով՝ մերկացեալ խայտառակեալ՝ արտացուցանեն» (Եզնիկ, I, Դ, էջ 14—15)՝ Եվ ուրիշները գերեզմաններն են պրպտում ու հողի տակ թաղված մարմինները մերկացնելով, խայտառակելով՝ արևին են ցույց տալիս։ «...Լինել պատուանդան ընդ ոտիւք այլոյ...» (Եզնիկ, IV, Ժ, էջ 189)՝ Պատվանդան լինել ուրիշի ոտքերի տակ։

Այս նշանակությամբ էլ առաջացել են զանազան ոճեր, ինչպես՝ ընդ գրով արկանել (=գրի առնել, գրի տակ դնել), ընդ վնասիւ արկանել, ընդ ահիւ անկանել (=ահի տակ ընկնել)։ «...Յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյս» (Եղիշե, II)՝ Սաստիկ երկյուղի տակ է ընկած մարմնի էությունը։ «Բազում և այլ ևս յանարժան հարուածս չարչարէին, զոր ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել» (Եղիշե, I)՝ Եվ ուրիշ շատ անարժան հարվածներով չարչարում էին, որ նույնիսկ արժանի չհամարեցինք անգամ գրի առնել։ «Հրապուրելով արկանէ ընդ վնասիւ զանմեղն» (Եզնիկ, I, ԺԵ, էջ 44)՝ Անմեղին խաբելով գցում է վնասի տակ (տառացի՝ վնասների տակ)։

2. «Տակ»՝ իրավական իմաստով, ենթարկման, հնազանդման իմաստով։ Օրինակներ. «Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինև զինուորս...» (Մատթ., Ը, 9)՝ Որովհետև ես էլ իշխանության ենթարկվող մարդ եմ և ինձ ենթակա զինվորներ ունեմ։ «...Որչափ անասունս փառն մերոց պիտոյից ընդ մեօք հնազանդեցաւ...» (Եղնիկ, II, ԺԱ, էջ 103)՝ Որքան անասուններ մեր կարիքների համար մեզ ենթարկեց։ «Ի նմին ամսեան ի նմին շաբաթու ի նմին աւուր հասանէր Բագոս, հանդերձ զօրօք՝ որ ընդ իւրև էին...» (Բուզ., IV, ԻԲ, էջ 213)՝ Նույն ամսին, նույն շաբաթ, նույն օրը Բագոսը հասավ՝ իրեն ենթակա զորքերով հանդերձ։

3. Ընդհանրապես տակ։ Օրինակներ. «...Ես ոչ կարեմ ձեզ հովիւ կալ, և ոչ զձեր մեղաց ընդ անձամբ բառնալ...» (Բուզ., IV, Գ, էջ 108)՝ Ես չեմ կարող ձեզ հովիվ լինել և ձեր մեղքերն ինձ վրա վերցնել։ «Ընդ լերանց ստորոտովք» (Եղնիկ, II, ԻԵ, էջ 131)՝ Լեռների ստորոտներում։

## ԸՍՏ

§ 347. Ըստ նախդիրը գործածվում է տրական, հայցական և բացառական հոլովների հետ։

### Ըստ նախդիրը տրական հոլովի հետ

§ 348. Ըստ նախդիրը տրական հոլովի հետ գործածության մի դեպք ունի միայն. նշանակում է «համաձայն», «նման», որը թարգմանելիս կարելի է արտահայտել նաև գործիական հոլովով։ Օրինակներ. «Եւ տանջեցին զնա տասն այր՝ ըստ հրամանի թագաւորին» (Ագաթ., էջ 42)՝ Եվ նրան տանջեցին տասը մարդ՝ թագավորի հրամանի համաձայն, թագավորի հրամանով։ «Արդ՝ և դուք զասացեալսն ըստ հրամանացն փութացարո՞ւք կատարել» (Ագաթ., էջ 393)՝ Արդ՝ դուք էլ շտապեցի՞ք ասածները հրամանների համաձայն կատարել։ «...Ըստ հայերէն լեզուին Մածաք կոչեն» (Ագաթ., էջ 415)՝ Հայերեն լեզվով Մաժաք են կոչում։ «Ըստ գործոց և զհատուցումն նոյնպիսի առնուցու» (Եղնիկ, II, ԺԸ, էջ 120)՝ Այն գործերի համաձայն էլ նույնպիսի հատուցումն է ստանում։ «...Եւ զայլսն կատարեաց ըստ նմին օրինակի» (Բուզ., V, ԼԷ, էջ 365)՝ Մյուսներին էլ նույն ձևով կատարեց։ «Ուստի և ընդոստ ի քնոյն լինելով՝ ոչ յամէ ըստ սովորութեան կարգին ի ժամ խորհրդակա-



նութեանն» (Խոր., I, ԻԶ (Իէ), էջ 75)՝ Ուստի վեր թռչելով քնից՝ սովորական կարգով չի սպասում խորհրդակցության ժամին։

### Ըստ նախդիրը հայցական հոլովի հետ

§ 349. Հայցական հոլովի հետ ըստ նախդիրն ունի գործածության հետևյալ դեպքերը.

1. Ելանել, անցանել և նույնպիսի նշանակության արտահայտող այլ բայերի մոտ դրվելով հայցական հոլովի վրա՝ նշանակում է մի բանից այն կողմ, դուրս, որը թարգմանությամբ կարելի է արտահայտել նաև բացառական հոլովով։ Օրինակներ. «...Ի կառս ելեալ կամէր թագաւորն ըստ քաղաքն ելանել...» (Ագաթ., էջ 113)՝ Թագավորը կառք բարձրանալով՝ ուզում էր քաղաքից դուրս գալ։ «...Ոչ կարացին հանել ըստ ձորակն...» (Ագաթ., էջ 423)՝ Չկարողացան այն ձորակից դուրս հանել։ «...Անցին ըստ ջուրն» (Բուզ., IV, ԻԲ, էջ 215)՝ Ջրից անցան։ «...Անցուցին ըստ Տափերն կամուրջ...» (Բուզ., IV, ԾԵ, էջ 261)՝ Անցկացրին Տափերի կամուրջից այն կողմ։ «Զամենայն ազգս ժողովեա՛ և անցո՛ ըստ Գահ դուռն ի ներքս» (Եղիշե, I)՝ Բոլոր ժողովուրդներին հավաքի՛ր և անցկացրո՛ւ Գահ դռնից ներս։

2. Նշանակում է «համեմատ», «համաձայն» (հատկապես հոգնակի թվում)։ Օրինակներ. «...Եւ յայնժամ հատուցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր» (Մատթ., ԺԶ, 27)՝ Եվ այն ժամանակ յուրաքանչյուրը կհատուցի իր գործերի համաձայն։ «Մի՛ ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէ՛ք» (Յով., Է, 24)՝ Աչքերի համեմատ, աչքերի տեսքով մի՛ դատեք, այլ ուղիղ դատաստան արեք։ «Եւ գնացին նոքա ըստ կամս անձանց իւրեանց» (Ագաթ., էջ 122)՝ Եվ նրանք գնացին իրենց կամքով։

Այս դեպքում անորոշ դերբայը սովորաբար եզակի թվով է արտահայտվում (ընդհանրապես անորոշ դերբայը հոգնակի թվով չի գործածվում), օրինակ՝ «...Որոց ջուրն ըստ աճել լուսնին՝ աճէ, և ըստ լնուլն՝ լնու, և ըստ պակասելն՝ պակասէ» (Եղնիկ, III, Ը, էջ 150)՝ Որոնց ջուրը լուսնի աճելու հետ աճում է, լցվելու հետ (այսինքն մեծանալու հետ)՝ լցվում, պակասելու հետ՝ պակասում։ Ես դերանունը եզակի է դրվում, այստեղից էլ առաջացել է ըստ իս ոճը։

3. Կազմում է սակավաթիվ ոճեր. օրինակ՝ ըստ ակն անկանել՝ աչքից վրիպել, աչքին չերևալ, ըստ այն յառաջել՝ նրանից առաջ անցնել։

## Ըստ նախդիրը բացառական հոլովի հետ

§ 350. Ըստ նախդիրն այս հոլովի հետ ևս գործածության քիչ դեպքեր ունի։

1. Ցույց է տալիս հաջորդականություն։ Օրինակներ. «Եւ զի՞ մի ըստ միոջէ թուեմ» (Ագաթ., էջ 109)՝ Եվ ինչո՞ւ մեկ առ մեկ թվեմ։ «Զայս ամենայն կարգաւ մի ըստ միոջէ ուռով պատմեցից...» (Ագաթ., էջ 130)՝ Եվ այս ամենը կարգով, մեկ առ մեկ, ուռով պատմեմ։ «...Օր ըստ օրէ...» (Ագաթ., էջ 392)։ «...Օր ըստ օրէ գրէր և ցուցանէր մեծ հաղթութիւնն...» (Եղիշ., IV)՝ Օրեցօր գրում և ցույց էր տալիս մեծ հաղթությունը։

Այսպիսի իմաստ (հաջորդականության) արտահայտվում է նաև առանց միևնույն բառի կրկնության, օրինակ՝ «Հայք և որ ըստ նմանէ նախարարք»։

2. Ըստ հազվադեպ գործածությամբ նշանակում է «համաձայն», «հետ», «նման», օրինակ՝ «...Ըստ նոցանէ և պարագայքն այսպիսում եղանութեան դիւանագիրք մատենից՝ ներբողականքն կանաց ի մէնջ արժանի եղեն առից» (Խոր., I, Գ, էջ 10)՝ Նրանց նման նաև այս ծանր աշխատանքով պատրաստված դիվանների մատենագիրները մեր կողմից գովասանական խոսքերի արժանացան։

## Ի

§ 351. Այս նախդիրը գործածվում է տրական, հայցական և բացառական հոլովների հետ։

## Ի նախդիրը տրական հոլովի հետ

§ 352. Ի նախդիրը տրական հոլովի հետ գործածվում է միայն եզակի թվում։

1. Արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ։ Օրինակներ. «Երկն ի ծովուն ունէր և զկարմրիկն եղեգնիկն» (Խոր., I, ԼԱ (ԼԲ), էջ 85—86)՝ Երկունքը ծովում բռնել էր նաև կարմրիկ եղեգնիկին։ «Երկու որդիք էն յորովայնի մնոջ...» (Ծննդ., II, Ա, էջ 78)՝ Որովայնում երկու որդիներ կան։ «Ամենայն մարդիկն, որ եղեն ի բանակին...» (Բուզ., IV, ԾԵ, էջ 187)՝ Բոլոր մարդիկ, որ եղել են բանակում։ «...Մուշեղ պատրաստական էր ի նմին գաւառին, բանակեալն էնս «...Մուշեղ պատրաստական էր ի նմին գաւառին, չխրում բերդին...» (Բուզ., V, Գ, էջ 285)՝ Մուշեղ պատրաստական գտնվում էր նույն գավառում, իր բերդում։

Այս կիրառությամբ արտահայտում է նաև «վրա» իմաստը։ Օրինակներ. «...Բանակեալ էին նորա ի լերինն՝ որ կոչի Ցլու



գլուխ» (Բուզ., III, էջ 26)՝ Նրանք բանակ էին դրել Ցլու գլուխ կոչված լեռան վրա։ «...Հատին զգլուխ նորա, և հանին հարին ի նիզակի, և կանգնեցին ի հրապարակին արքունի» (Բուզ., V, Զ, էջ 307)՝ Նրա գլուխը կտրեցին, հանեցին ու խփեցին նիզակի վրա և կանգնեցրին արքունի հրապարակում։

Ինչպես արդեն նշվել է, եզակի տրականի միջոցով չի արտահայտվում այն բառերի եզակի ներգոյականի իմաստը, որոնք ո կամ և հոլովիչը և միաժամանակ ենթարկվում են վերջավորական հոլովման (տե՛ս § 52, այլև §§ 54, 58, 64)։

2. Ժամանակ ցույց տվող և այլ կարգի մի քանի բառերի հետ ցույց է տալիս գործողության կատարման ժամանակը։ Օրինակներ. «...Որ էր ինքն ի կենդանութեանն իւրում յառաջացեալն բանեկեալ» (Բուզ., III, ԺԶ, էջ 69)՝ Որոնց ինքն առաջ իր կենդանության ժամանակ բնակվում էր։ «Այլ յայնմ ժամանակի դեռ կանութեան ժամանակ բնակվում էր։ «Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին ևս կայր կենդանի Արշակ արքայ Հայոց» (Բուզ., V, Է, էջ 207)՝ Այն ժամանակ դեռևս կենդանի էր Հայոց Արշակ արքան։ «Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիսս» (Ագաթ., էջ 28)՝ Իսկ մյուս օրը վաղ առավոտյան հրամայեց ծիրանի հագցնել։ «...Եւ յանդիման կորուսան յաղթութեան ի մահուան իւրում» (Եղիշ., II)՝ Եվ մեռնելիս կորցրել է անդառնալիորեն։

3. Հազվադեպ կիրառությամբ արտահայտում է նպատակի, օրինակ՝ «Եւ եսուն նոցա զդստերս իւրեանց ի կնութիւն...» (Բուզ., III, ԺԸ, էջ 73)՝ Եվ իրենց դուստրերին նրանց կնության տվեցին։ Սովորաբար հայցականով է՝ ի կնութիւն կամ միայն տրականով, առանց նախդիրի՝ կնութեան տալ։

## Ի նախդիրը հայցական հոլովի հետ

§ 353. Ի նախդիրն ամենից շատ գործածվում է հայցական հոլովի հետ, արտահայտելով բազմազան նշանակություններ։

1. Բոլոր հոլովվող բառերի հոգնակի հայցականի հետ արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ։ Օրինակներ. «...Դի՛ք ի սիրտս ձեր...» (Ղուկ., ԻԱ, 14)՝ Դրե՛ք ձեր սրտերում։ «...Գտանէ յինէքին նորա ի հնձանս չինուածոցն» (Ագաթ., էջ 90)՝ Նրանք գտնվում էին շինությունների հնձաններում։ «...Համեստութիւն ոչ գոյ ի նոսա» (Ագաթ., էջ 86)՝ Նրանց մեջ համեստություն չկա։

Եզակի հայցականի միջոցով արտահայտվում է ո կամ և հոլովիչ ունեցող և միաժամանակ վերջավորական հոլովման ենթարկվող բառերի ներգոյականի իմաստը (այն բառերի, որոնք

եզակի բացառականում է հոլովակերտ մասնիկը չեն ունենում), ինչպես՝ ի հուր, ի ջուր, յաթոռ, ի գործ, ի տիտան և այլն (տե՛ս համապատասխան հոլովումների բաժնում)։ Հատուկ անունների եզակի ներգոյականի իմաստը սովորաբար արտահայտվում է եզակի հայցականի միջոցով, ինչպես՝ յԱրտաշատ, ի Տարօն, յԱրշակ և այլն. բայց՝ ի Բաբելոնի (Խոր., I, Ժ, էջ 33)։ Եվ գերանվան եզակի ներգոյականի իմաստը ևս արտահայտվում է եզակի հայցականով՝ յիս։

2. Տեղափոխություն նշանակող բայերի մոտ դրվելով հայցական հոլովի վրա՝ ցույց է տալիս շարժման ուղղություն (ուղեվորման հայցական)։ Օրինակներ. «Ե՛րթ ի տուն քո, առ ընտանիս քո» (Մարկ., Ե, 19)՝ Գնա՛ քո տունը, քո ընտանիքի մոտ։ «Յայնմ ժամանակի գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք...» (Ագաթ., էջ 85)՝ Այն ժամանակ եկան հասան (տառացի՝ գալիս հասնում էին) Հայոց երկիրը, Այրարատ գավառ, Վաղարշապատ քաղաքը։ «...Անդուստ յաշխարհն դարձան» (Բուզ., IV, Դ, էջ 113)՝ Այնտեղից վերադարձան աշխարհը։ «...Առաքեա՛ դու զհապանս յերկիրն Հայոց...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 252)՝ Դու պատվիրակներ ուղարկիր հայոց երկիրը։ «Եւ եկին հասին ի սահմանս Հայոց» (Բուզ., V, Ա, էջ 278)՝ Եվ եկան հասան Հայաստանի սահմանները։ «...Ոչ թէ յարևելից յարևմուտս գնան՝ այլ յարևմտից յարևելս» (Եզնիկ, III, Ա, էջ 139)՝ Ոչ թե արևելքից դեպի արևմուտք են գնում, այլ՝ արևմուտքից դեպի արևելք։

3. Մի շարք բայերի հետ տրական հոլովով [illegible] անուղղակի խնդիրը արտահայտվում է ի նախդիրով և հայցական հոլովով (ի նախդիրով կազմված նախդրիվ տրական)։ Այդ բայերից են՝ յուսալ, հաւատալ, փափագել, հայել, յարել, գթալ, նախանձել, անխայել (=խղճալ, խնայել), խնայել, վստահանալ, մատնել, տալ, ցուցանել, մատչել և այլն։ Սրանց թվում հիշատակված ներգործական սեռի բայերը այդ դեպքում իրենց անմիջական խնդիրը (ուղիղ խնդիր) կարող են ունենալ։ Օրինակներ. «...Ի քաջութիւն զօրացն յուսացեալ» (Ագաթ., էջ 16)՝ Զորքերի քաջության վրա հույս ունենալով։ «...Եւ մահկանացութեամբ հաւատաց ի նա» (Ագաթ., էջ 21)՝ Եվ մահկանացությամբ հավատաց, վստահեց նրան։ «...Ի կորուստ մատնեաց զայս աշխարհ և ի գերութիւն» (Ագաթ., էջ 70)՝ Այս աշխարհը կորստի և գերության մատնեց։ «...Եւ ոչ խնայեցի յիմ վաստակաւոր Գրիգորիոս, յիմ սիրելին...» (Ագաթ., էջ 77)՝ Ես չխնայեցի իմ վաստակավոր Գրիգորիոսին՝ իմ սիրելիին։ «Եւ ոչ իւրն ի թագաւոր ցանկութեամբ փափագեցին յիս» (Ագաթ., էջ



87)՝ Ցանկությամբ փափագեցին ինձ ոչ որպես թագավորի։ «...Դրթեացի ի ձեզ...» (Ագաթ., էջ 374)՝ Կսկծա ձեզ, գութ կունենամ ձեր նկատմամբ։ «...Ի հուրն անշէջ մատնեսցին» (Ագաթ., էջ 391)՝ Կմատնվեն անշեջ կրակին։ «...Զի մի՛ մթարքն՝ ու զրոյց շողացեն, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն լիցին» (Եզնիկ, I, Ա, էջ 5)՝ Որպեսզի բիբերի շուրջ եղող (շողացող) ճաչուները (տառացի՝ մթություններ) լույսի հստակությանը նայելու արգելք չլինեն։ «...Եւ վասն այնորիկ զբարութիւնն յՈրմիզդ տայր...» (Եզնիկ, II, Ե, էջ 91)՝ Եվ այդ պատճառով բարությունը (ճյուղերի կաղաղը) տվեց (տառացի՝ տալիս էր) Որմիզդին։ «Հաւատալ ի քեզ» (Եզնիկ, IV, Ա, էջ 173)։ «...Ապա ի գիրս ապաւինին» (Եզնիկ, IV, Է, էջ 181)՝ Այնուհետև գրքին են ապավինում։ «...Ի կայսր և ի զօրս նորա յուսացեալ, խորհէր հանել զթագաւորութիւն Պարսից յազգէն Սասանայ» (Բուզ., III, Ի, էջ 78)՝ Հույս դնելով կայսեր և նրա զորքերի վրա՝ մտադիր է Պարսից թագավորությունը խլել Սասանի ցեղից։ «...Լաւ է յամենայն ժամ նախանձել ի բարիս» (Բուզ., IV, Դ, էջ 122)՝ Լավ է միշտ բարուն, բարիքին նախանձել։ «Ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զքեզ ի մահ...» (Բուզ., IV, ԺԵ, էջ 188)՝ Ես սիրեցի քեզ և այս պատճառով նրան մահվան մատնեցի։ «Վասն այսորիկ անխնայեաց ի դա, պահել հրամայէր» (Բուզ., V, ԼԷ, էջ 365)՝ Դրա համար դրան խնայեց, հրամայեց պահել։ «...Մատուցեալ ի նա՝ պատառ պատառ կտրեալ... ատամնեաւ զնա» (Ն. տ.)՝ Մոտենալով նրան՝ պատառ-պատառ կտրատեց, ատամներեց։ «...Բայց ինքեանք և հայել ի նա ոչ կամին» (Եղիշե, II)՝ Բայց իրենք նրան նայել էլ չեն կամենում։ «...Ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց» (Խոր., I, ԺԱ, էջ 34—35)՝ Վստահ լինելով ուժեղ մարդկանց սրտի և մարմնի վրա։ «...Զաջողութիւն մտաց մերոց ի նա ցուցեալ՝ ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութիւն տուեալ» (Խոր., I, ԺԱ, էջ 35)՝ Մեր մտքերի հաջողությունը նրան ցույց տալով, ամբոխը ցրվի, և մենք հաղթենք։ «...Եւ եթէ յարեցելոց ի նա...» (Խոր., I, ԺԱ, էջ 34)՝ Եվ նրան հարած եկվորներով։

4. Արտահայտում է գործիական հոլովի իմաստ։ Օրինակներ. «...Եբրայեցւոց լեզու երկին չմարթի ասել, որպէս և ոչ յասորի լեզու՝ ջուր կամ երկին» (Եզնիկ, IV, Է, էջ 181)՝ Եբրայեցիների լեզվով երկինք չի կարելի ասել, նույնպես և ասորերեն լեզվով՝ ջուր կամ երկինք։ «Այլ և անարգանս ևս ընէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու...» (Բուզ., IV, ԺԶ, էջ 193)՝ Այլև ծաղր ու ծանակի ենթարկեց, պարսկերեն լեզվով ասելով...։ «Եւ երդնու Շապուհ արքայ յարեգակն և ի ջուր և ի կրակ...» (Բուզ., Ն. տ.,

էջ 196)՝ Եվ Շապուհ արքան երդվում է արեգակով, ջրով ու կրա-
կով. «...Եւ ի ձայն մեծ գաղտափողոյն դիւր զանդամ առնելէր...»
(Եղիշե, VI)՝ Գաղտափողերի բարձր ձայնով իր գնդերին շտա-
պեցրեց (բառացի՝ առիպում էր)։ «Շինէ և գիւղ մի, և անուանէ
զիւր անուն Հայկաշէն» (Խոր., I, Ժ, էջ 33)՝ Շինում է և մի գյուղ
ու իր անունով անվանում է Հայկաշեն։
5. Անորոշ դերբայի հետ ցույց է տալիս ժամանակ։ Օրի-
նակներ. «Եւ եղև ի մերձանալն ամն անկաւ առ ճանապարհաւ»
(Մարկ., Դ, 4)՝ Եվ սերմանելիս մեկն ընկավ ճանապարհի մոտ
«...ի հասարակել գիշերին աշամբիկ...» (Ագաթ., էջ 382)՝ Այս գի-
«...ի հասանել Տի-
գերմա կեսին, երբ գիշերը կես էր դարձել։ «...ի հասանելն Տի-
գրանայ աթենական առաջէ ի
առանձնութեան Բելայ զնացյալ...
կողմն հիւսիսոյ դմի ամն յորդոց իւրոց...» (Խոր., I, ԺԱ, էջ 34)՝
Երբ Տիգրանյան Բելը իր թագավորությունը հաստատում է բոլորի
վրա, իր որդիներից մեկին ուղարկում է հյուսիսի կողմը։ «Յեկեա-
լ(ա)պ, իր որդիներից մեկին ուղարկում է հյուսիսի կողմը։ «Յելա-
նելն մեր հանդէպ ամբոխին Բելայ՝ զիտել քանասցուք անդստին...»
(Խոր., Ն. ա.)՝ Երբ մենք դուրս կգանք Բելի ամբոխի դեմ, ա-
խտանք հանդիպել այնտեղ։ «Իսկ ի լինել մարտին հարկանէ
զօրն Արայի» (Խոր., I, ԺԵ, էջ 49)՝ Իսկ մարտի ժամանակ Արայի
զորքը ջարդվում էր։ «Եւ ի սատականալ պատերազմին՝ փախստա-
կան լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտի ի Հայս» (Խոր., I, ԺԷ, էջ
56)՝ Երբ պատերազմը սաստկանում է, Շամիրամը Զրադաշտի
երեսից փախչում է Հայաստան (Զրադաշտից փախուստ է տալիս
և գնում է Հայաստան)։
6. Անորոշ դերբայի, բայական ծագում ունեցող գոյական
անունների և ընդհանրապես իմաստով գործողության հետ կապված
այլ բառերի հայցական հոլովի հետ արտահայտում է նպատակ։
Օրինակներ. «Վասն չարագործաց խոկ էր շինեալ զայն տեղի և ի
պատժումն մահապարտացն...» (Ագաթ., էջ 72)՝ Այն տեղը շինել
էր հենց չարագործների համար, մահապարտներին սպանելու նպա-
տակով։ «Նա և նախարարք և մեծամեծք ասպանդոյն ընթացեալ
ի տեսանել՝ զմիմեանս պեպտէին» (Ագաթ., էջ 90)՝ Նաև նախա-
րարներն ու ավագանու մեծամեծները տեսնելու գնալով՝ իրար էին
անցնում։ «Հարկ է ասել պատասխանի, ի ցուցանել...» (Եղիշե, II,
Բ, էջ 81)՝ Պետք է պատասխանել՝ ցույց տալու համար։ «Արհմեն.
ամեն, զերծեալ ի ճաշ կոչեսցի» (Եղիշե., II, Թ, էջ 98)՝ Առում են՝
Արշամը Արմեղինին ճաշի հրավիրեց։ «Պարթևք և մեք շատ կան ի
թաղել զառամանս նորա...» (Բուզ., IV, ԺԱ, էջ 163)՝ Մենք էլ
շատ բարեր ունենք նրա առամները թաղելու համար։ «...Որպէս
թագաւոր ի հաց մեծ կոչել» (Բուզ., V, ԼԲ, էջ
...էն էր զայր ...

347)՝ Ինչպես սովորություն էր՝ թագավոր մարդուն հրավիրել մեծ
ճաշկերույթի։ «...Սպարապետին Մանուէլի ամենայն Հայոց գնդին
առեալ էր ժամ յորս երթալոյ» (Բուզ., V, ԽԴ, էջ 377)՝ Սպարա-
պետ Մանվելը Հայոց ամբողջ գնդին որսի գնալու ժամ էր տվել։
«Եւ զունդս զարձեալ զումարէին ի նոցանէ յերկիր հեռաստան՝ յա-
ձուրս անապատին ի մարտ պատերազմի թշնամեացն արքայի»
(Եղիշե, II)՝ Եվ դարձյալ նրանցից գնդեր կազմեցին և ուղար-
կեցին հեռու երկիր՝ անապատի ամուր տեղերը՝ թագավորի թշնա-
միների հետ պատերազմելու։
7. Փոխելու, դարձնելու, մի բան մի այլ բանի վերածելու
իմաստ արտահայտող բայերի մոտ դրվելով հայցական հոլովի վրա՝
ցույց է տալիս, որ մի բան մի այլ բանի է վերածվում։ Օրինակ-
ներ. «...Եւ զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն ի փոքր մի-
բում զարձուցանէմք» (Եղիշե, I, Դ, էջ 12)՝ Եվ նրանց անուշու-
թյունը ժանտահոտության ենք վերածում մեր փորում։ «Եւ ի բազ-
մութենէ զիակացն անկելոց՝ յատակ չուրջ զետոյն յարիւն զառ-
նայրին» (Եղիշե, III)՝ Ընկած դիակների բազմությունից գետի հա-
տակի ջրերը արյուն դարձան (սառույցի՝ էին դառնում)։ «...Պէտ
արարեալ զամենայն աշխարհ զմտաւանդս և վէրդս ի յոյն լեզու փո-
խարկեսցէ» (Խոր., I, Բ, էջ 8)՝ Կարենը համարելով՝ բոլոր ժո-
ղովուրդների մատյանները ու վեպերը հունարենի փոխել (թարգ-
մանել հունարեն)։
8. Եսեւ հայցականով կիրառությամբ հանդես է գալիս առո-
րոգեյիական վերադիրի հետ, օրինակ՝ «Եւ եղիցին երկոքին ի մար-
մին մի...» (Մարկ., Ժ, 8)՝ Եվ երկուսը մի մարմին կլինեն։

### Ի նախդիրը բացառական հոլովում

§ 354. Ի նախդիրը միշտ հանդես է գալիս բացառական հո-
լովի կազմության մեջ։ Առանց ի նախդիրի բացառական հոլովը չի
կարելի պատկերացնել։ Սակայն որոշ դեպքերում այստեղ ի նախ-
դիրը չի գործածվում։[1] Այդ դեպքերն են՝ ա) երբ բացառական հո-
լովով դրված բառի մոտ կրկնվում է նույն բառը ի նախդիրով և
հայցական հոլովով։ Օրինակներ. «Մի փոխիցիք տանէ ի տուն»
(Ղուկ., Ժ, 7)՝ Տնից տուն չփոխվե՛ք։ «Թէպէտ և հալածեսցեն
զձեզ քաղաքէ ի քաղաք» (Ագաթ., էջ 82)՝ Թեպետ և ձեզ հալա-
ծեն քաղաքից քաղաք։ «Եւ սցային... ծաղէ ի ծաղ...» (Բուզ.,

[1] Տե՛ս Վ. Առաքելյան. «Գրաբարի հոլովումը և խոնարհումը», Երևան
1955 թ., էջ 96—97.

V, Լ, էջ 340)՝ Եվ ագում էին ծայրեծայր։ Ինչպես տեսնում ենք, կրկնվող բառը առաջ է բերում յուրահատուկ կապակցություն, որը մակբայական կիրառություն ունի։ բ) Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների բացառական հոլովի երկրորդական ձևերը, որոնք եղանակիչ վերջահար բառերի կիրառություն ունեն՝ ինձէն, մեզէն (մեզնից), քեզէն (քեզնից), ձեզէն (ձեզնից), տե՛ս § 376։ գ) Երբեմն ի նախդիրը հանդես չի գալիս այն բառերի բացառականում, որոնք իրենց կազմության մեջ ունեն այդ նախդիրը (որպես ածանց, որը, սակայն, ձուլվել է արմատին)՝ յանցանք (արմատ՝ անց), յարգանք (արմատ՝ արգ), օրինակ՝ «որք ոչ երբեք սուրբ են յանցանաց» (փոխ. ի յանցանաց) կամ՝ «որպէս ոչ այնչափ ի հոգոցն խոցին՝ որչափ յագեցութենէն» (փոխ. ի յագեցութենէն)։

Ց

§ 355. Ց նախդիրը գործածվում է միայն հայցական հոլովի հետ.

1. «Մինչև» նշանակությամբ՝ մինչև մի տեղ, մինչև մի ժամանակ, մինչև մի սահման։ Այս նշանակությամբ հաճախ հանդես է գալիս մինչև նախադրության հետ։ Օրինակներ. «Որ ցայժմ կենդանի կայ...» (Եզնիկ, Ա, ԻԵ, էջ 74)՝ Որը մինչև այժմ կենդանի է մնում։ «...Ցայժմ ես քեզ առիւծ էի, եւ արդ աղուէս» (Բուզ., IV, ԾԴ, էջ 256)՝ Մինչ այժմ ես քեզ համար առյուծ էի, իսկ այժմ աղվես։ «...Զայն առաքինութիւն մինչև ցայնժամ եւ ունէին գաղտնի...» (Բուզ., III, Գ, էջ 12)՝ Մինչև այն ժամանակ էլ գաղտնի պահում էին նույն առաքինությունը։ «Մինչև ցայս վայր ոչ ինչ կարի զանգիտէի...» (Եզնիկ, IV)՝ Մինչև այստեղ շատ չէի վախենում։ «...Սահմանս հաստատէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արևելս մինչև ցդաշտ մի...» (Խոր., I, ԺԲ, էջ 41)՝ Նրա համար ժառանգության սահմաններ է կարգում ծովից դեպի արևելք, մինչև մի դաշտ։ Ուտել ցյագ՝ ուտել մինչև հագենալը, ուտել հագենալու աստիճան։ Կռուել ցմահ՝ կռվել մինչև մահ և այլն։

2. Սակավաթիվ բայերի մոտ (առնել, տալ, հարցանել) դրվելով հայցական հոլովի վրա՝ արտահայտում է տրական հոլովի իմաստ (նախդրիվ տրական)։ Օրինակներ. «Եւ ասէ ցնա» (Ագաթ., էջ 383)՝ Եվ ասում է նրան։ «...Ետ ցՈրմիզդ և ասէ...» (Եզնիկ, II, Ա, էջ 80)՝ Տվեց Որմիզդին և ասաց։ «Ապա սկսաւ ճչել վայել պատանեակն. և ասէ ցմայր իւր» (Բուզ., IV, ԽԴ, էջ 237)՝ Ապա պատանյակն սկսեց ճչալ, բղավել և ասաց մորը։ «Եհարց ցնոսա՝ մէջ ո՞վ է այդ...» (Բուզ., V, ԼԷ, էջ 364)՝ Հարցրեց նրանց, թե ո՞վ է դա։

## ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 356. Նախադրությունները հոլովառու սպասարկու բառեր են։ Նրանք պահանջում են որևէ պատրաստի հոլովով դրված խնդիր (նախադրության խնդիր, կապի խնդիր) և այդ դեպքում հանդես են գալիս իրենց որոշակի իմաստով։

Եթե նախդիրները կորցրել են իրենց բառական անկախությունը, կամ նրանցից մի քանիսը միայն ձևականորեն են պահպանում այն, ապա նախադրությունները հոլովական կապակցություններից դուրս էլ պահպանում են իրենց բառական անկախությունը՝ բառական նշանակությամբ։

Նախադրությունները ծագում են զանազան խոսքի մասերից (գոյական, մակբայ, ածական), նրանցից շատերը զանազան հոլովաձևեր են, որոնք քարացած վիճակում գործածվում են սպասարկու դերով, որպես նախադրություն։ Նրանց մեջ կարելի է ցույց տալ նաև նախդրավոր հոլովաձևեր։

Նախադրությունների առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանցից յուրաքանչյուրը հիմնականում մի հոլովով է խնդիր պահանջում, իսկ նախդիրները դրվում են մեկից ավելի հոլովների վրա, բացի ց նախդիրից, որը թեև գործածվում է մի հոլովի հետ, սակայն չունի նախադրությունների մյուս հատկանիշները՝ և համարվում է նախդիր։

Նախադրությունների մեծ մասը գրաբարում նախադաս գործածություն ունի (այստեղից էլ «նախադրություն» անվանումը)։ Կան նախադրություններ, որոնք գործածվում են թե՛ նախադաս, թե՛ ետադաս։ Շատ սակավ նախադրություններ ետադաս կիրառություն ունեն (ետադրություններ են)։

Ստորև տալիս ենք նախադրությունների օրինակներ՝ ըստ հոլովառության. բերված օրինակներում կարելի է տեսնել վերոհիշյալ առանձնահատկությունները։

### ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 357. Գրաբարի նախադրությունների ճնշող մեծամասնությունը գործածվում է սեռական հոլովի հետ (պահանջում է սեռական հոլովով նախադրության խնդիր)։ Հենց սա էլ ապացույց է այն բանի, որ այդպիսի նախադրությունների և նրանց խնդրի հա-

բարեկրությունը սկզբնապես եղել է համակացյալի և համակացողի հարաբերություն, որտեղ պահպանվում է նախադրության բառական անկախությունը։

**Վասն** (=համար, մասին, վերաբերյալ, պատճառով և այլն)։ «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» (Եղիշե)՝ Վարդանի և Հայոց պատերազմի մասին։ «Վասն միոյ բանի ո՞չ է օրէն դիւցազանց՝ գայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն» (Խոր., II, Ծ, էջ 178)՝ Դյուցազուններին վայել չէ բանի համար ուրիշ դյուցազուն ցեղերի կենդանությունը վերացնել։ «...Փորձելոյ վասն հաստատեալ է գնա...» (Եղնիկ, II, ԻԳ, էջ 126)՝ Փորձելու համար է նրան հաստատել։

**Պատճառաւ**, ի պատճառս (=պատճառով, պատրվակով)։ «...Ելեալ երթայր հասանէր պատճառաւ ի կողմանս Հայոց...» (Ագաթ., էջ 21)՝ Դավթի պատրվակով եկավ գնաց Հայաստանի կողմերը։ «...Խաղեալ ընդ նոսա ի պատճառս սիրոյ...» (Եղիշե, II, էջ 22)՝ Նրանց հետ խոսելով սիրո պատրվակով։ «Եւ արդ ի պատճառս ձեր և զմեզ անպարտ դատին» (Եղիշե, IV)՝ Եվ այժմ ձեր պատճառով մեզ էլ են անպարտ դատում։ «...Ի ձեր պատճառս և զնոսա ետ չարչարեսցէն» (Ն. տ.)՝ Ձեր պատճառով նրանց էլ չարչարելու են։

**Յաղագս** (=համար, մասին, վերաբերյալ)։ «Յաղագս աշխարհատրութեանն Հայկեայց» (Խոր., I, Ժ, էջ 32)՝ Հայկի աշխարհատրության մասին։ «Յաղագս Դանիելեան նշանագրացն» (Խոր., III, ԾԲ, էջ 325)՝ Դանիելյան նշանագրերի մասին։

**Աղագաւ** (=պատճառով, համար)։ «Այնր աղագաւ պատուիրէր նմա...» (Եղնիկ, II, Ծ, էջ 90)՝ Այն պատճառով (կամ՝ դրա համար) պատվիրում էր նրան։ «Յաղագս Շամիրամայ, թէ է՞ր աղագաւ կոտորեաց զորդիս իւր» (Խոր., I, ԺԷ, էջ 55)՝ Շամիրամի մասին, թե ի՞նչ պատճառով կոտորեց իր որդիներին։

**Առանց**. «Եւ երկիր առանց ջուրց պատառի և խորխորի» (Եղնիկ, I, Բ, էջ 9)՝ Իսկ հողն առանց ջրերի ճաքճքվում է։ «...Եթէ ելք և մեք առանց քո ապրեսցուք» (Բուզ., V, Դ, էջ 289)՝ Եթե լինի, որ մենք այստեղ առանց քեզ կենդանի մնանք։

**Յետ** (=հետո)։ «Եւ յետ այսորիկ հրաման ետ Տրդատ արքայ...» (Ագաթ., էջ 73)՝ Դրանից հետո Տրդատ արքան հրաման տվեց։ «...Եւ յետ հազար ամի յարուցանելոյ՝ սկսաւ ածել զմտաւ...» (Եղնիկ, II, Ա, էջ 79)՝ Հազար տարի զոհ անելուց հետո սկսեց մտածել։ «Եւ ահա յետ աւուրց բազմաց եկն եհաս...» (Եղիշե, III)՝ Եվ ահա շատ օրերից հետո եկավ հասավ։

**Յետոյ**. յետոյ նորա կայր՝ մնացել էր նրա ետևում։



**Առաջի** (=առջևը, առաջ և այլն)։ «Իմ իսկ առաջի ընթերցան զգիրս մոլորութեան ձերոյ» (Եղիշե, I)՝ Հենց իմ առջև կարդացին ձեր մոլոր գիրքը։ «Քաջընթացս առաջի իւր առաքէ...» (Խոր., I, ԺԱ, էջ 34)՝ Իրենից առաջ արագաշարժ մարդիկ է ուղարկում։

**Զկնի** (=ետևից, հետո)։ «Ինքն իսկ Մանուէլ աղաղակէր զկնի որդւոցն իւրոց...» (Բուզ., V, ԼԷ, էջ 362)՝ Հենց ինքը՝ Մանվելը աղաղակում էր իր որդիների ետևից։ «...Զմեր կնի ոչ շրջէր...» (Մարկ., Թ, 37)՝ Մեր ետևից չէր շրջում։ «Հուսկ յետոյ զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն անկէին...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 255)՝ Ամենից վերջը, ամենքից հետո, բոլորից ներքև Արշակի բազմելու տեղը պատրաստեցին։

**Զհետ** (=հետքով, ետևից)։ «Զհետ կնոջ իւրոյ ասէ, և ոչ զհետ կանանց...» (Եղնիկ, I, Ի, էջ 57)՝ Ասում է՝ իր կնոջ ետևից և ոչ թե կանանց ետևից։

**Ի մէջ** (=մեջ, միջև)։ «...Երթէր ի մէջ գազանացն...» (Ագաթ., էջ 379)՝ Երթում էր գազանների մեջ։ «...Իբրև հրապ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան և յատակի կայցեալ» (Եղնիկ, I, Գ, էջ 11)՝ Իբրև մի հրապ մեծ տան մեջ առաստաղի և հատակի միջև վառված։ «...Բազում վիրաւորք տապալեցան յարիւն յապաւնայց ի մէջ դաշտին...» (Եղիշե, VII)՝ Բազմաթիվ վիրավորներ արյունաշաղախ տապալվեցին դաշտի մեջ։

**Ի վերայ** (=վրա)։ «...Որ կայ ի վերայ գետոյն Եփրատայ...» (Բուզ., V, Գ, էջ 285)՝ Որը գտնվում է Եփրատ գետի վրա։ «...Նստէր նա ի գրաստու վերայ և գայր» (Բուզ., VI, Ը, էջ 398)՝ Նա նստել էր գրաստի վրա և գալիս էր։ «Դարձեալ յարձակէին ոչ սակաւ քաջութեամբ ի վերայ բերդին և քաղաքաց...» (Եղիշե, III)՝ Դարձյալ ոչ պակաս քաջությամբ հարձակվեցին այն բերդերի և քաղաքների վրա։ «Եւ այսր յամենայնի վերայ՝ այլ եւ չարութիւն խորամանկեաց» (Եղիշե, II)՝ Եվ այս բոլորի վրա մի ուրիշ չարություն էլ նյութեց (բառացի՝ խորամանկեց)։

**Ի վերուստ** (=վրայից, վերևից)[1]։ Ի վերուստ երկիվարացն՝ երկիվարների վրայից։

**Ի վերոյ** (=վերևը)։

**Ի ներքոյ** (=ներքև, տակ)։ «...Ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն անկէին...» (Բուզ., IV, ԾԴ, էջ 255)՝ Բոլորից ներքև Արշակի բազմելու տեղը պատրաստեցին։ «Խլուրդ ի ներքոյ երկրի շրջի»՝ Խլուրդը գետնի տակ է շրջում։

[1] Ավելի ճիշտ կլինեի՝ ի վերայ այսր ամենայնի։

**Ի ներքուստ**. *ի ներքուստ ձեռինն՝ ձեռքի տակից։*

**Յանդիման, հանդէպ** (նաև նախդիրով՝ ի հանդէպ, այլ հոլովաձևերով), **ընդդէմ**. բոլորի ընդհանուր նշանակությունն է դիմաց, դեմ. «Նստէր յանդիման տաճարին»՝ նստած էր տաճարի դիմաց։ «Գիւղդ որ ընդդէմ ձեր կայ»՝ այդ գյուղը, որ ձեր դիմացն է։ «Գիւղս որ հանդէպ մեր կայ»՝ այս գյուղը, որ մեր դիմացն է։ «...Ի հանդէպ երեսացն ենթ արշաւին» (Եղնիկ, I, Գ, էջ 14)՝ Միայն դեմի երեսների կողմն են արշավում։

**Փոխանակ**. «...Փոխանակ իմ թագաւորեցո՝ զԱրշակ զորդի իմ» (Բուզ., III, ԻԱ, էջ 89)՝ Իմ փոխարեն թագավոր դարձրու Արշակին՝ իմ որդուն։ «...Փոխանակ իւր յղեաց զիւր աթոռակիցն եաղն» (Բուզ., IV, ԺԵ, էջ 183)՝ Իր փոխարեն ուղարկեց իր աթոռակից եաղին։ Սա գործածվում է նաև ընդ նախդիրի հետ (տե՛ս «Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ», § 342)։

**Ի ձեռն** (=ձեռքով, միջոցով). «...Այրուձին Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի» (Եղիշէ, I)՝ Հայոց ամբողջ հեծելազորը նախարարների միջոցով (ձեռքով) էր առաջնորդվում պատերազմում։

**Զօրէն** (=պես, նման). «Եւ զօրէն մարդոյ ի վեր առեալ զթաթուլն՝ ցուցանէր նմա զվէրսն...» (Բուզ., V, ԻԶ, էջ 329)՝ Եվ մարդու նման թաթը վեր բարձրացնելով՝ նրան ցույց էր տալիս վերքը։ «...Եւ զուգառ զձայն ածէր կառաչելով, զօրէն ուղտու այնպէս փարփելով» (Բուզ., VI, Ժ, էջ 402)՝ Եվ ուղտի ձայն էր հանում աղերսելով, ուղտի նման այնպես շնչելով։

**Պէս**. օձից պէս՝ օձերի նման։

ՀԱՅՑԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 358. Կան նախադրություններ էլ, որոնք հայցական հոլովով են խնդիր ընդունում։ Սակայն դրանցից մի քանիսը ընդունում են տրականի իմաստ արտահայտող հայցականով խնդիր (նախդրիվ տրական). այդ դեպքում նախադրություններին զուգահեռ գործածվում են այնպիսի նախդիրներ, որոնք հայցական հոլովի հետ արտահայտում են տրական հոլովի իմաստ։

**Քան**. «Առաւել եթէ բռնագոյն քան զնա էր հիւղն...» (Եղնիկ, IV, Զ, էջ 180)՝ Իսկ եթե նյութը նրանից ավելի ուժեղ էր... «Որպէս և անուանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ՝ այլ և յոր մեծն է քան զամենայն» (Եղիշէ, II)՝ Ինչպես և անվանում ենք էլ ոչ միայն հասարակ մարդկանց մեջ, այլև նրա մեջ, ով բոլորից մեծ է։



Արդեն նշվել է, որ սա ածականների համեմատական աստիճանի արտահայտման մի եղանակն է։ Ինչպես, բոլոր դեպքերում պարտադիր չէ ածականների համեմատությունը այս եղանակով։

**Իբրև**. «...Ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար իբրև զաւազ առ ափն ծովու» (Բուզ., IV, ԻԲ, էջ 212)՝ Հավաքեց իր անթիվ ու անհամար զորքերը՝ որպես ավազը ծովափին։ «...Հեղեալ ծաւալէր բազմութեամբ իբրև զջուրս բազումս» (Բուզ., IV, ԻԴ, էջ 219)՝ Թափվում ու ծավալվում էր բազմությամբ՝ որպես հեղեղ (բառացի՝ որպես շատ ջրեր, շատ ջրերի նման)։ «Մերթ շանթէր զայրէր իբրև զօձ թունաւոր, մերթ պարզէր գոչէր իբրև զառիւծ զայրացեալ» (Եղիշէ, II)՝ Մերթ շանթում, զայրանում էր թունավոր օձի նման, մերթ ձգվում, գոչում էր զայրացած առյուծի նման։

**Որպէս**. «...Եւ անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն...» (Խոր., II, Ծ, էջ 179)՝ Եվ սրաթև արծվի նման անցավ գետը։

**Մօտ**. պահանջում է ի և առ նախդիրներ կրող հայցական հոլովով (նախդրիվ տրականով) խնդիր. «...Մօտ ի բուն պողոտայն, որ երթայր յԱրտաշատ քաղաք» (Ագաթ., էջ 104)՝ Դեպի Արտաշատ քաղաքը տանող բուն պողոտայի մոտ։ «...Որ մօտ առ ծովուն կային...» (Եղնիկ, II, ԻԵ, էջ 132)՝ Որոնք ծովի մոտ են։ «Ընկեալ նստէր մօտ առ գին...» (Բուզ., IV, ԺԵ, էջ 187)՝ Ընկել նստել էր գինու մոտ։

**Մերձ**. նույն իմաստով և նույնպիսի կիրառությամբ։ «...Մերձ ի սահմանս Հայրենի աշխարհին» (Եղիշէ, III)՝ Հայրենի երկրի սահմանների մոտ։ «Գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարատայ, մերձ ի տունն Կադմեայ» (Խոր., I, ԺԱ, էջ 34)՝ Գալիս հասնում է հյուսիս, Արարատի երկիրը, Կադմոսի տան մոտ։ «Մերձ ի գետն Եփրատ» (Բուզ., V, Դ, էջ 287)՝ Եփրատ գետի մոտ։ Մերձ առ նա՝ նրա մոտ, մերձ առ դուրս՝ դռների մոտ։

**Մինչև՝ ի, ց և առ** նախդիրներին զուգահեռ. «Եւ արքայն Արշակ ընդ առաջ երթայր նոցա մինչև ի լեառն, որ անուանեալ կոչի Առեւծ» (Բուզ., IV, Դ, էջ 113)՝ Եվ Արշակ արքան նրանց ընդառաջ գնաց մինչև Առյուծ կոչված լեռը։ «...Մինչև ցքառասուն և ինն դար» (Եղնիկ, IV, Ա, էջ 171)՝ Մինչև քառասունինը դար։ «...Կոչէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ» (Եղիշէ, I)՝ Կոչվում էր մինչև Վռամշապուհի որդի Հայոց Արտաշես արքայի վեցերորդ տարին։ «...Ի սկզբանէ մինչև առ մեզ» (Խոր., I, Ե, էջ 17)՝ Սկզբից մինչև մեր ժամանակները (բառացի՝ մինչև մեզ)։ «...Յաշտարակագործութենէն մինչև առ մեզ»

(Խոր., I, էջ 28)՝ Աշտարակաշինությունից մինչև մեր ժամանակները։

Ի սակս (=պատճառով, համար). «...Յայդ սակս մեռանին» (Եղնիկ, I, ԺԸ, էջ 51)՝ Այդ պատճառով են մեռնում, դրա համար են մեռնում։ «Յոր սակս... սահմանեցին կանոնս» (Եղնիկ, IV, ԺԴ, էջ 199)՝ Դրա համար կանոններ սահմանեցին։

### ԲԱՑԱՌԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 359. Բացառական հոլովով խնդիր պահանջող նախադրություններն են.

Բաց, բայց (=բացի). «Զիք այլ որ բաց յինէն» (Եղնիկ, IV, Ե, էջ 172)՝ Ինձանից բացի ուրիշը չկա։ Բայց ի նոցանէ՝ նրանցից բացի։

Գաղտ (=գաղտնի). «Գաղտ յերանելւոյ ազատապետէն Վարդանայ» (Փարպ.)՝ Երանելի Վարդան ազատապետից գաղտնի։ Գաղտ ի մօրէն՝ մորից գաղտնի։

Հեռի (=հեռու). հեռի յամպարշտաց՝ ամբարիշտներից հեռու։

Մեկուսի (=զատ, հեռու, մի կողմ). «Մեկուսի յամբոխէ» (Մարկ., Է, 33)՝ Ամբոխից մի կողմ, ամբոխից մեկուսի։ «Եւ առ առեալ զնա մեկուսի ի ճանապարհէն» (Բուզ., VI, Ը, էջ 399)՝ Եվ նրան առնելով տարավ ճանապարհից մի կողմ։

Ուրոյն (=զատ, առանձին, բացի). «Բայց Երուանդայ չիշխել զքաղաքն իւր և փոխել անդր զամենայն ինչ յԱրմաւրայ, ուրոյն ի կռոցն...» (Խոր., II, Խ, էջ 166)՝ Բայց Երվանդն իր քաղաքը չիշխեց Արմավիրից այնտեղ փոխադրել ամեն ինչ, բացի կուռքերից։

Հետէ (=հետո, ի վեր). «Ապա յայն օրէ հետէ և անդր յուղեցաւ պատերազմ...» (Բուզ., IV, Ի, էջ 209)՝ Ապա այն օրվանից ի վեր պատերազմ սկսվեց։ «Բազում զանձս մթերեալ մնացեալ կային ի նախնեացն ի հնոց ժամանակաց հետէ» (Բուզ., IV, ԽԴ, էջ 219)՝ Նախնի, հին ժամանակներից ի վեր շատ գանձեր էին կուտակված։

Սրանով կազմվում են նաև մակբայներ։

### ԳՈՐԾԻԱԿԱՆ ԽՆԴՐՈՎ ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 360. Գործիական հոլովով խնդիր են ընդունում հանդերձ, շուրջ և չափ նախադրությունները, բայց որում շուրջ նախադրությունը զուգահեռ հանդես է գալիս զ նախդիրը, որը, ինչպես նշվել է, արտահայտում է «շուրջ» գաղափարը (պարագական).



Հանդերձ (=հետ, միասին, համերձ). «...Հանդերձ զորավարաւն Վաչէիւ» (Բուզ., III, Ը, էջ 30)՝ Զորավար Վաչեի հետ։ «...Հանդերձ բազում զօրօք» (Բուզ., III, Թ, էջ 33)՝ Շատ զորքերով հանդերձ։ «...Եղբարբք և որդւովք իւրովք հանդերձ» (Ն. տ.)՝ Իր եղբայրներով և որդիներով հանդերձ, իր եղբայրների և որդիների հետ։ «Յայնմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ Պարթևն եղբարբն իւրով հանդերձ...» (Ագաթ., էջ 20)՝ Այն ժամանակ Պարթևը նախապատրաստվեց իր եղբոր հետ։ «Նորիմբք հանդերձ» (Ագաթ., էջ 112)՝ Նրանց հետ միասին։

Շուրջ. «...Ժողովեալ կային շուրջ զնովաւ...» (Բուզ., V, ԽԴ, էջ 385)՝ Հավաքված էին նրա շուրջը։ «...Շուրջ զքաղաքաւն էին...» (Ագաթ., էջ 117)՝ Քաղաքի շուրջն էին։ Տե՛ս նաև § 340։

Չափ. Յիսնից չափ՝ հիսունի չափ, ձեր չափ՝ ձեզ չափ, մահու չափ և այլն։

# ՄԱԿԲԱՅ

**§ 361.** Մակբայը որպես խոսքի մաս իր մեջ ընդգրկում է այնպիսի բառեր, որոնք ցույց են տալիս գործողության կատարման զանազան հանգամանքներ, պարագաներ (տեղ, ժամանակ, ձև, չափ), այլև հատկանիշի հատկանիշ ու սաստկանք։ Խոսքի մասային այդ յուրահատկությամբ կիրառության մեջ նրանք հարում են բայերին, ածականներին, ինչպես նաև մակբայներին։ Գործողության կատարման հանգամանքները և հատկանիշի հատկանիշ ու սաստկանք ցույց տալով՝ մակբայները փոփոխություններ չեն կրում, չեն հոլովվում կամ խոնարհվում։ Մակբայները հենց դրանով էլ տարբերվում են այն խոսքի մասերից (որպես օրինակ ասենք՝ գոյական անուններից), որոնք ևս նախադասության անդամ դառնալով կարող են ցույց տալ գործողության կատարման զանազան հանգամանքներ միայն այն դեպքում, երբ փոփոխություններ են կրում (ամբողջ դեպքում հոլովվում են) և փոփոխված համապատասխան ձևերով արտահայտում այդ հանգամանքները։

## ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԴԱՍԴԱՍՈՒՄԸ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

**§ 362.** Ըստ իրենց արտահայտած իմաստի գրաբարի մակբայները լինում են՝ տեղի, ժամանակի, ձևի, չափի և սաստկանքի։

### Տեղի մակբայներ

**§ 363.** Տեղի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման տեղը. դրանցից են՝ այլուր (=ուրիշ տեղ), այլ ուրեմն, այլ ուրեք (նույն նշ.), այսր (=այստեղ, դեպի այստեղ), այսրէն (=այստեղ, դեպի այստեղ, նորից դեպի այստեղ, նորից), այսր անդր (=այս ու այն կողմ), անդ (=այնտեղ)[1], անդէն (=

[1] Անդ նշանակում է նաև այն ժամանակ, սակայն այս իմաստով ժամանակի մակբայ է. այս կարգի մակբայների մասին խոսվում է առանձին։



այնտեղ, նույն տեղը, այլև՝ նույն ժամանակ, շուտով, իսկույն. այս իմաստով ժամանակի մակբայ է), անդր (=այնտեղ, դեպի այնտեղ, մի կողմ), անդրէն (=ետ, նորից դեպի այնտեղ, նույն տեղը, նույն տեղը, այլև՝ նորից, նույն ժամանակ. այս վերջին իմաստներով ժամանակի մակբայ է), աստ (=այստեղ, այս ժամանակ. վերջին իմաստով ժամանակի մակբայ է), աստանօր (=այստեղ), աստէն (=այստեղ, այստեղից, այլև՝ այժմվանից, այս ժամանակից. այս իմաստով ժամանակի մակբայ է), աստի (=այստեղից), այտի, այդրէն, ուրեք (=մի տեղ), արտաքս (=դուրս), արտաքուստ (=դրսից), անդուստ (=այնտեղից, նրանից հետո, այն կողմից, այն ժամանակից. վերջին իմաստով ժամանակի մակբայ է), ուստեք, ուստեմն (=մի տեղից, ինչ-որ տեղից), այլուստ || յայլուստ (=ուրիշ տեղից), բացուստ || ի բացուստ (=հեռվից), երկնուստ || յերկնուստ (=երկնքից), ի մօտուստ || մօտուստ (=մոտիկից), յետուստ (=ետևից), յետս (=ետ, դեպի ետ, ետևից, ետևում), ներքուստ || ի ներքուստ (=ներսից, ներքևից, տակից), ի վերուստ (=վերևից), ի ներքս (=ներս, դեպի ներս, դեպի խորքը), ի վեր, ի վայր (=վայր, ցած), յառաջ (=առաջ, դեպի առաջ), առաջուստ || յառաջուստ (=առջևից), ի բաց (=հեռու), հեռուստ || ի հեռուստ (=հեռվից), ի մօտոյ, ընդ մօտոյ (=մոտից, մոտերը), մօտ առ մօտ || մօտ ի մօտ (=իրար մոտ, մոտերը), զճանապարհայն (=ճանապարհին), յայսկոյս (=այս կողմ, այստեղ), յայնկոյս (=այն կողմ, այնտեղ, մյուս կողմը, դիմացը) և այլն։

### Ժամանակի մակբայներ

**§ 364.** Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը. դրանցից են՝ ամարայնի (=ամռանը), ամարանի կամ ամարանից (=ամռանը, ամառվանից), անագան (=ուշ), անագան ուրեմն, անագան երբեք, արդ (=այժմ), այժմ, այժմիկ, յայնժամ (=այն ժամանակ), յորժամ (=երբ), իբրև (=երբ, երբոր, նրանից հետո, երբ), տակաւին || տակաւին ևս (=դեռ, դեռևս, էլ), դեռ, դեռևս, արդէն, արդէն իսկ, արդ ևս (=հենց նոր, այժմ), այլ ևս || ա՛յլ ևս (=էլ, դեռ ավելի), այսօր, վաղի (=առավոտյան, վաղը), վաղիւն, ի վաղիւ անդր, ի վաղիւն (=հաջորդ օրը. վաղը, առավոտյան), երէկ, եռանդ (=երեկվան նախորդ օրը), հերու (=անցյալ տարի), այգուց || յայգուց (=առավոտյանից, վաղը, առավոտյան), այգուն || ընդ այգս (=առավոտյան, լուսաբացին), առաւօտու կամ առաւօտուց (=առավոտյան), ընդ առաւօտն կամ ընդ առաւօտս (=առավոտյան դեմ), ընդ երեկս,

առ երեկս (=երեկոյան դեմ), գիշերային || գիշերի (=գիշերը, գիշերով), գիշերաւ, գիշերնաւ, գիշերուոյ (=գիշերով), ցերեկ, վաղ, վաղուց || վաղու եւ || ի վաղուց հետէ, այսուհետև, այնուհետև, մինչ, ցանկ կամ ցանց (=մինչ, շարունակ, մինչև վերջ), հանապազ || հանապազորդ (=միշտ, շարունակ), հանապազօր (=ամեն օր), յաւէտ, յաւիտեան, երբեմն, երբեք (=երբեմն, մի անգամ, մի ժամանակ), դարձեալ || միւս անգամ, վայր մի || վայրիկ մի (=մի պահ), յառաջ (=առաջ՝ ժամանակի իմաստով), յառաջագոյն (=ավելի առաջ), կանխաւ, վաղվաղակի (=շուտով, անմիջապես), իսկոյն, առժամայն, նոյնհետայն, նոյնժամայն (=նույն ժամին, իսկույն), տարաժամ (=վաղաժամ), յար (=շարունակ, անդադար, միշտ), յարաժամ (=միշտ, անդադար), երբեք երբեք (=երբեմն-երբեմն), մերթ ընդ մերթ, որ քան զօր, որ ըստ օրէ (=օրեցօր), ամ ըստ ամէ (=տարեցտարի) և այլն:

### Ձևի մակբայներ

§ 365. Ձևի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման ձևը. դրանցից են՝ արագ, թեթևակի, փութով, փութապէս, փութանակի (=շուտով, շտապ կերպով), առատապէս, առաւելապէս, քաջապէս, անյապաղաբար, առատաբար, առնաբար || առնապէս (=տղամարդու պես, քաջությամբ), առիւծաբար, գազանաբար, դիւրաւ կամ դիւրեաւ (=հեշտ կերպով), կամաւ (=կամովին), հազիւ, հազիւ հազիւ, կենդանւոյն (=ողջ-ողջ), յանզգաստից || յանզգաստաց || յանզգաստս (=առանց զգույշ լինելու կամ զգալու, հանկարծ), յանպատրաստից, տարապարտուց || ի տարապարտուց (=իզուր տեղը, իզուր), յանգէտս (=չիմանալով), արմատաքի (=արմատով, արմատից), ոտնացի (=ոտքով, քացով), բռնցի (=բռով), բերանացի (=բերանով, բերանացի քաղել՝ բերանով քաղել), գլխովի || գլխովին || ի գլխովին, իբրովի || իբրովին, զուր || իզուր, ընդ վայր, վայրապար (=իզուր տեղը), վարկպարազի (=վայրիվերո), ինքնակամ, ակամայ, ի ծածուկ, լռելեայն (=լուռ կերպով), անդամ անդամ (անդամ անդամ յօշել՝ կտոր-կտոր չարդել), արագ արագ, կաղ ի կաղ || կաղ ի կաղս || կաղս ի կաղս (=կաղալով), կեղծս ի կեղծս (=կեղծ, շինծու կերպով), ձեռն ի ձեռն (=ձեռքով), վեր ի վայր, խառն ի խուռն, կարճ ի կարճոյ (=համառոտ կերպով), փոյթ ի փութոյ || ճեպ ի ճեպոյ (=շտապելով), այլ ընդ այլոյ (=տարբեր ձևով), խիտ առ խիտ (=իրար կից, խտությամբ, հաճախ), անձամբ անձին (=ինքնիրեն, ինքն իր



կողմից), կերպս կերպս || ի կերպս կերպս (=զանազան ձևերով), ահ ընդ ահ (=վախվխելով) և այլն:

### Չափի և աստիճանի մակբայներ

§ 366. Չափի մակբայները ցույց են տալիս գործողության կատարման չափը. այդպիսի մակբայներ են՝ երկիցս (=երկու անգամ), երիցս, երիցս անգամ (=երեք անգամ), չորիցս (=չորս անգամ), հնգիցս (=հինգ անգամ), ութիցս (=ութ անգամ), բազմիցս, քանիցս անգամ, բազում անգամ, յոլովակի || յոլով անգամ (=շատ անգամ), կրկին, կրկնակի, ի սպառ, ստէպ, ստէպ ստէպ, յաճախ, համարակ առ համարակ (=համաչափ չափով), գամ քան գամ (=քիչ-քիչ), հազ քան զհազ (=քիչ-քիչ), դամու դամու (=շատ անգամ), սակաւ սակաւ || առ սակաւ սակաւ || ըստ սակաւ սակաւ, վերստին || ի վերստին և այլն:

Աստիճանի մակբայները ցույց են տալիս հատկանիշի աստիճանը և այդ պատճառով էլ դրվում են ինչպես բայերի, այնպես էլ ածականների ու մակբայների վրա: Այդպիսի մակբայներից են՝ կարի, յոյժ, սաստիկ, շատ, առաւել և այլն:

## ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԴԱՍԴԱՍՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 367. Գրաբարում կարելի է ցույց տալ բազմաթիվ մակբայներ, որոնք շատ ընդհանուր նշանակության պատճառով կարող են տեղադրվել մեկից ավելի բաժիններում: Այդպիսի մակբայները նույն ձևով կարող են ցույց տալ գործողության տարբեր հանգամանքներ, օրինակ՝ «...Անդ կայցես, և զլոյս մի՛ տեսցես» (Խոր., II, ԿԱ, էջ 192)՝ Այնտեղ մնաս և լույս չտեսնես: «Զանդ մոլեգնեալ այր իւրաքանչիւր, ասէ ի կող ընկերի իւրոյ ձգելով՝ ջանայր անկել ի վերայ միմեանց» (Խոր., II, Ժ, էջ 33)՝ Որովհետև այն ժամանակ ամեն մի մարդ, կատաղած, ուրիշ ընկերոջ կողքը խրելով՝ ձգտում էր՝ տիրել նրան (բառացի՝ ձգտում էին տիրել միմյանց վրա): Այս բերված օրինակներից առաջինում անդ մակբայը տեղ է ցույց տալիս, իսկ երկրորդում՝ ժամանակ: Այսպես էլ անդէն, անդրէն, աստէն մակբայներն ունեն և՛ տեղի, և՛ ժամանակի, և՛ նույնիսկ ձևի ու չափի իմաստ, յաճախ, ստէպ, ստէպ ստէպ մակբայները ցույց են տալիս թե՛ չափ, թե՛ ժամանակ, թե՛ ձև: Այս և նման շատ մակբայների միաժամանակ տարբեր բաժիններում տեղավորելը կառաջացներ անհարմարություն: Նկատի ունենա-

լով իմաստի գերակշռումը և կիրառությունը՝ դրանք տեղավորում ենք մի որևէ բաժնում, ինչպես, չմոռանալով, որ դրանք այլ իմաստով էլ կարող են հանդես գալ։

Մակբայներից անջատել ենք եղանակավորող բառերը, որոնք ստորև ներկայացվում են առանձին խմբավորմամբ։

## ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 368. Գրաբարի մակբայների կազմությունը շատ հետաքրքրական պատկեր է ներկայացնում։ Այստեղ կարելի է գտնել արմատական բառեր, ածանցավոր և բարդ բառեր, կրկնավորներ, քարացած հոլովաձևեր, նախդրավոր ձևեր և այլն։

## ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 369. Գրաբարում արմատական մակբայները մյուսների համեմատությամբ քիչ են։ Հիշենք մի քանի օրինակներ՝ արդ, դեռ, միշտ, շատ, վաղ և այլն։

## ՄԱԿԲԱՅԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 370. Գրաբարում կան մի շարք ածանցներ, որոնց օգնությամբ կազմվել են շատ մակբայներ։ Մակբայակերտ ածանցները դրվում են զանազան խոսքի մասերի և այդ թվում նաև մակբայների վրա։ Այդ ածանցներն են՝

Բար—անյագաբար, առատաբար, անձաբար, գաղտնաբար, առիծաբար և այլն։

Պէս—առատապէս, առաքելապէս, առնապէս, մեծապէս և այլն։

Օրէն—յանկարծօրէն (Բուզ., էջ 81), մարդկօրէն և այլն։

Ակի—վաղվաղակի, թեթևակի, արշաւակի և այլն։

Անակի—փութանակի, չորեքանակի (=չորս կողմը, չորս բոլորը)։

Ոյն—իսկոյն, կենդանոյն, միահաղոյն (=միանգամից, միաժամանակ, անընդհատ, շարունակ)։

Այն—առժամայն, գիշերայն, վաղորդայն (=վաղը, վաղ առավոտյան), յաւելայն (=լավ կերպով)։

Ի—բանի, հետի (=հետիոտն, ոտքով), կարի, ձրի և այլն։

Ցի (ացի)—բանցի, աքացի, նշանացի, բերանացի և այլն։

Աքի—արմատաքի։



Իցս—քանիցս, երկիցս, երիցս, չորիցս, հնգիցս և այլն։

Եք կամ էք—ուստեք, ուրեք, երբեք կամ երբէք և այլն։

## ԶԱՆԱԶԱՆ ՀՈԼՈՎԱՁԵՎԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 371. Շատ մակբայներ ծագում են անունների զանազան հոլովաձևերից, որոնք այդ ձևերում կայունանալով ու քարանալով բառական նոր արժեքավորում են ստանում և ճանաչվում են որպես մակբայներ։ Այդ բառերի մեջ կարելի է ցույց տալ և այնպիսիները, որոնք հնագույն հոլովաձևեր են և բոլորովին կորցրել են իրենց հոլովական նշանակությունը ու այլ գործածումներ չունեն։ Դրանք կարելի է տեսնել ստորև բերված օրինակներում։

### Ա. Սեռական հոլովից կազմված մակբայներ

Գիշերի կամ գիշերւոյն (=գիշերը, գիշերով, գիշերանց), այգուն || այգոյն || այգուց, զամու միոջ (=մի անգամ), հերու (=անցյալ տարի), ուր, այսր, այդր (թերևս՝ անդր) և այլն։

### Բ. Հայցական հոլովից կազմված մակբայներ

Զոր օրինակ (=ինչպես օրինակ), զայս օրինակ (=այսպես, այս ձևով), զօր հանապազ (=միշտ, ամեն օր), զառաջին (=առաջին անգամ, սկզբից)։ Առավել տարածված է հոգնակի հայցականի մակբայական առումը. այս հոլովի ս հոլովակերտ մասնիկը շատ բառերում վերածվել է մակբայակերտ ածանցի, օրինակ՝ բազումս, թեթևս (=հեշտությամբ, շուտով), հզօրագոյնս (=ավելի ուժեղ կերպով), խորագոյնս (=ավելի խոր կերպով, խիստ խոր կերպով), հետիոտս (կամ ի հետիոտս՝ ոտքով, հետիոտն), արտաքս, մեծամեծս (=մեծ-մեծ)՝ մեծամեծս փրայրս (Ագաթ., էջ 116) և այլն։

### Գ. Բացառական հոլովից կազմված մակբայներ

Ի բնէ (=սկզբից, հնուց, առաջուց), ի մօտոյ, յանդգաստից, յանպատրաստից (=հանկարծ), ի տարապարտուց, յարբելեաց (=գինովության մեջ, գինով լինելով), յայլակարծուց (=հանկարծ, անսպասելի կերպով), ի մերկուց (=մերկ կերպով), ի հետևակուց, յանկելեաց (=ոտքի վրա կանգնած տեղը), ի լռիկաց կամ ի

յերէ (=արթուն ժամանակ, արթուն դրությամբ), յանձնէ, յանձանց (=ինքնիրեն, ինքն իր կողմից, իրենց կողմից) և այլն։

Մակբայներ հանդիպում են նաև բացառական հոլովի հնագույն ուստ մասնիկով։ Այդ դեպքում ի նախդիրը կարող է լինել կամ չլինել, օրինակ՝ այլուստ || յայլուստ, անդուստ, առաջուստ || յառաջուստ, արտաքուստ, բացուստ || ի բացուստ, երկնուստ || յերկնուստ, ի մօտուստ || մօտուստ, յանկարծուստ, յետուստ, ներքուստ || ի ներքուստ, ի վերուստ, օտարուստ || յօտարուստ (=դրսից, ուրիշ տեղից), հեռուստ || ի հեռուստ և այլն։

Բացառական հոլովի է հոլովակերտ մասնիկը և հոգի հետ որոշ բառերում հանդիպում է ածանցական նշանակությամբ. օրինակ՝ ասուէն, անդէն, անդրէն և այլն։

### Դ. Գործիական հոլովից կազմված մակբայներ

Ճեպով (=շտապ կերպով), կամաւ, կանխաւ, դիւրաւ || դիւրձաւ, դժուարաւ (=դժվարությամբ), ճշդիւ (=ճիշտ կերպով, ստույգ կերպով), ստուգիւ, ճշմարտիւ (նույն իմաստով), լիով (=լիապես), մեղմով (=մեղմությամբ, մեղմ կերպով, դանդաղ), փութով, տագնապաւ || տագնապով (=շտապ կերպով, խուճապահար), ստիպաւ || ստիպով (=շտապելով, ստիպմամբ), խնամով (=հոգ տանելով, հոգատարությամբ), նենգաւ (=նենգությամբ, խաբեությամբ), բարեաւ (=բարով), հազիւ, ողջամբ (=ողջ և առողջ ձևով), սերտիւ (=հաստատ), տակաւ (=դեռ, էլ), վաղիւ և այլն։

Հանդիպում են նաև այնպիսի մակբայներ, որոնց մեջ գործիական հոլովի վերջավորության հետ հանդես է գալիս ածանց (հատկապես ի և ին ածանցները), իսկ երբեմն էլ ին ածանցից հետո դրվում է ք հոլովակերտը, որից առաջ ածանցի ն հնչյունը առնմանության օրենքով վերածվում է մ-ի. օրինակներ՝ իւրովի || իւրովին, բոլորովին || բոլորովիմբ, գլխովին || ի գլխովին, երամովին (=խմբով, երամով), կամովին, տակաւին || տակաւին ևս։

## ԿՐԿՆԱՎՈՐ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 272. Գրաբարն ունի նաև կրկնավոր մակբայներ։ Կրկնավոր մակբայները կազմված են զանազան խոսքի մասերի, այդ թվում և մակբայների կրկնությամբ։ Օրինակներ՝ ոտն ոտն (=քայլ առ քայլ), անգամ անգամ, դէշ դէշ (=պատառ-պատառ), արագ արագ,



յոյժ յոյժ, սակաւ սակաւ (կամ՝ առ սակաւ սակաւ), տակաւ տակաւ (=կամաց-կամաց), ստէպ ստէպ, երբէք երբէք, ուրեք ուրեք (=տեղ-տեղ), աստեք աստեք (=այս ու այն կողմից), զամու զամու, հազիւ հազիւ, կերպս կերպս (կամ՝ ի կերպս կերպս), զարիւ և զարիւ (=ափերով լի՝ դեպի հասնելու վերաբերյալ)։

Կրկնավորներ կան նաև նախդրավոր մակբայների մեջ, որոնց մասին խոսվում է առանձին։

## ՆԱԽԴՐԱՎՈՐ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 373. Շատ բառերում նախդիրները դրվելով զանազան հոլովների վրա՝ կայունացել են և իրենց հաղորդած քերականական իմաստով դիտվում են բառի ամբողջականությամբ։ Այդպիսի նախդրավոր ձևերը լեքսիկական արժեք են ստացել և դիտվում են որպես մակբայներ։ Այդպիսի մակբայների մեջ կարելի է տեսնել նաև կրկնավոր մակբայներ։

### Ա. Ի նախդիրով կազմված մակբայներ

Յանդէտս, յանդէպս (=կարգից դուրս, ժամանակից դուրս), յանդգաստս, յանխնայս (=առանց խնայելու), յանծանօթս (=չճանաչելով), յանկամս (=չկամենալով), ի դէպ (=հարմար ձևով, արժանապես, բառ պատշաճի), յառաջինն (=առաջ) և այլն։ Կրկնությամբ՝ կեղծս ի կեղծս, ձեռն ի ձեռն, մօտ ի մօտ, կէս ի կէս (=ոչ լրիվ կերպով), կաղ ի կաղ || կաղ ի կաղս || կաղս ի կաղս, խառն ի խուռն || խառնիխուռն, կարճ ի կարճոյ, մօտ ի մօտոյ, փոյթ ի փութոյ (=շտապելով), ճեպ ի ճեպոյ (նույն նշ.), վեր ի վեր (=դեպի վեր, բարձր, դուրս), վեր ի վերոյ (=վերևից, երեսից, արտաքուստ) և այլն։

### Բ. Առ նախդիրով կազմված մակբայներ

Առ ժամանակ || առ ժամանակն || առ ժամանակ մի, առ տնին || առտնին (=տանը), առ օրին (=նույն օրը)։ Կրկնությամբ՝ խիտ առ խիտ, մօտ առ մօտ, հասարակ առ հասարակ և այլն։

### Գ. Ընդ նախդիրով կազմված մակբայներ

Ընդ վայր (=իզուր, իզուր տեղը), ընդ առաջ (=առջևը), ընդ հուպ (=շուտով, իսկույն, մոտ, կից), ընդ հանուր (=դեպի ամեն տեղ, ամեն կողմ), ընդ բնաւ (=ամեն տեղ, դեպի ամեն

անց, ընդամենը)։ Կրկնությամբ՝ նու ընդ նու (=նորից, միանգամից, նույն ժամանակ), խիտ ընդ խիտ (=իրար կից, խտությամբ, հաճախ), մոտ ընդ մոտ (=իրար մոտ, քիչ ժամանակից, շուտով), մերթ ընդ մերթ, հուպ ընդ հուպ (=շատ շուտով, շատ մոտ կերպով), մերձ ընդ մերձ (նույն նշ.) և այլն։

### Դ. Ըստ նախդիրով կազմված մակբայներ

*Արդեն նշվել է, որ ըստ նախդիրը բացառական հոլովի հետ ցույց է տալիս նաև համեմատականություն (§ 350)։ Այդ նշանակությամբ որոշ բառեր կրկնվելով՝ մակբայական կիրառություն ունեն, ինչպես՝ ամ ըստ ամէ, օր ըստ օրէ, մի ըստ միոջէ (=մեկ առ մեկ), կարգ ըստ կարգէ (=հաջորդաբար, կարգով)։*

**Ե. Զ նախդիրով ևս կազմվում են մակբայներ։** *Այդպիսի օրինակներ ցույց են տրված հայցական հոլովից կազմված մակբայների շարքում։ Զ նախդիրը հանդես է գալիս նաև* **այն** *մակբայակերտ ածանցով և* **ճանապարհ** *բառով կազմված մակբայի մեջ՝ զճանապարհայն։*

### ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 374. *Գրաբարի մակբայների կազմության մեջ որոշ դեր են կատարել նաև նախադրությունները։ Այդպիսի դեր ունեն* **քան**, **հետ** *նախադրությունները, որոնցից վերջինը, ինչպես նշվել է, ետադաս գործածություն ունի։ Օրինակներ՝ նա քան զնա (=ավելի ու ավելի, միշտ), զամ քան զամ, հազ քան զհազ, օր քան զօր (=օրեցօր, օրավուր), յայսմ հետէ (=այսուհետև), յայնմ հետէ (=այնուհետև)։ Ինչպես տեսնում ենք, հիշյալ կազմությունների մեջ կա բառական ամբողջականություն, նախադրությունները գործածված են իրենց խոսքի մասային նշանակությամբ, բայց այդ նշանակությունը ձուլվել է մյուս բառերի արտահայտած իմաստին, և այդ պատճառով էլ բերված բառակապակցությունները արժեքավորվում են խոսքի մասային մեկ ընդհանուր արժեքով, դիտվում են որպես մակբայներ։*

### ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄՎԱԾ ԱՅԼ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 375. *Մակբայներ են համարվում նաև այնպիսի բառակապակցությունները, որոնք մեկից ավելի տարբեր կամ նույն խոսքի մասերի հարադրություններ են և ամբողջական իմաստով մակբայի*



*նշանակություն ունեն։ Նկատելի է, որ այդպիսի բառակապակցությունների մեջ զանազան խոսքի մասերին (այդ թվում և մակբայներին) հարադրվում են որոշ մակբայներ և անորոշ դերանուններ ու սպասարկու բառեր՝ անգամ, ուրեք, ուրեմն, իմն, մի[1], օրինակ՝ այս անգամ, բազում անգամ, բիւր անգամ, երիցս անգամ, երկիցս անգամ, այլ ուրեմն, այլ ուրեք, հազիւ ուրեմն ‖ հազիւ ուրեք ‖ հազիւ իմն (=հազիվ, դժվարությամբ), սակաւ մի ‖ սակաւիկ մի, վայր մի ‖ վայրիկ մի և այլն։*

---

[1] Այստեղ մի թվականը գործածվում է անորոշ իմաստով։

## ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 376. Գրաբարում կան բառեր, որոնք որպես խոսքի մաս որոշ չափով մոտ են մակբայներին, սակայն չեն նույնանում վերջիններիս հետ։ Մակբայներից, անշուշտ, պետք է տարբերել այդպիսի բառերը, որոնք եղանակավորում են նախադասությունը կամ նախադասության անդամները՝ նրանց հաղորդելով հաստատական, ժխտական, հարցական, երկբայական բնույթ, այլև ուժգնացնում, երանգավորում են դրանց քերականական իմաստը։ Դրանք մակբայներից տարբերվում են նրանով, որ վերաբերության ավելի լայն շրջանակներ ունեն և հարում են նախադասության զանազան անդամների, ինչպես նաև կարող են եղանակավորել կամ երանգավորել ամբողջական նախադասություններ։ Ըստ այդ իմաստների էլ եղանակավորող բառերը լինում են՝

ա) **Հաստատական՝** այո՛, արդարև, յիրաւի, հաւաստեաւ, ապաքէն (=իհարկե, անշուշտ, իսկապես) և այլն։

բ) **Երկբայական՝** թերևս, գրեթէ[1]։ Այս իմաստով գործածվում են նաև գոլ և գոգ բայերի առանձին ձևերը՝ գուցէ, գոգցես (=ասես թե, կարծես թե)։

գ) **Հարցական՝** ընդէ՞ր (=ինչո՞ւ), զի՞ (=ինչո՞ւ), մի՞թէ, ո՞չ ապաքէն (=չէ՞ որ), զիա՞րդ (=ինչպե՞ս, ինչո՞ւ) և այլն։

դ) **Ժխտական՝** ո՛չ, մի՛ (արգելական), ամենևին, բնաւ, քա՛ւ։

ե) **Ցուցական՝** ահա, ահաւասիկ || աւասիկ, ահաւադիկ || աւադիկ, ահաւանիկ || աւանիկ։

Եղանակավորող կամ երանգավորող բառերի մեջ մտնում են նաև **իսկ**, **ևեթ** վերջահար բառերը։

Դրանք, իհարկե, նախադասությունը ամբողջովին վերցրած չեն երանգավորում, այլ հարադրվելով զանազան բառերի՝ ուժգնացնում են իմաստը։ Օրինակներ. «...Նորին **իսկ** իւրաքանչիւր փոփոխմամբք յայտ առնեն...» (Եզնիկ, I, Բ, էջ 13)՝ Հենց նրանք՝

[1] Կազմված է գրել բայի հրամայականից՝ գրեա՛ թէ.



յուրաքանչյուրն իրենց փոփոխություններով հայտնի են դարձնում։ «...Ի հանդէպ երեսացն ևեթ արշաւին...» (Եզնիկ, I, Գ, էջ 14)՝ Միայն դեպի երեսները դարձրած կողմն են արշավում։ «...Եթէ անձին ևեթ խորհիցէ զգիտութիւնն... Եթէ ինքեան ևեթ պահիցէ զզօրութիւնն» (Եզնիկ, I, Ա, էջ 7)՝ Եթե միայն իրեն պահեր զօրությունը... Եթե միայն իրեն պահեր գիտությունը։

Նույնպիսի նշանակությամբ հանդես են գալիս նաև անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքերից առաջացած՝ **ինձէն**, **մեզէն** կամ **մեզոյն**, **Քեզէն** կամ **Քեզոյն**, **ձեզէն** կամ **ձեզոյն** ձևերը՝ ոչ անձնական, այլ վերջահար կիրառությամբ, այնպես էլ **ԻՆՔՆ** անձնական դերանունից կազմված **ԻՆՔՆԻՆ** բառը (տե՛ս § 115—118)։

## ՇԱՂԿԱՊ

§ 377. *Շաղկապները գրաբարում քերականական նույնպիսի արժեքավորում ունեն, ինչպես և աշխարհաբարում, այսինքն այնպիսի բառեր են, որոնք միմյանց շաղկապում են նախադասություններ և նախադասության անդամներ։*

*Շաղկապները ընդհանուր գծերով բաժանվում են երկու խմբի՝ համադասական և ստորադասական։*

ա) Համադասական շաղկապներ, *որոնք շաղկապում են համազոր նախադասությունները և նախադասության համազոր անդամները՝* և (*=և, նաև, էլ*), և... և (*=էլ... էլ*), այլ (*=բայց, իսկ, այլ*), այլ և (*=այլև*), այլ ևս (*=այլևս*), բայց, սակայն (*որոնք երբեմն հանդես են գալիս համանիշների զուգորդությամբ՝ այլ սակայն, բայց սակայն*), եթէ... եթէ (*=թե՛... թե՛*), թէ... թէ, եթէ (*=թէ՝ առանց կրկնության, հարցական նախադասությունների մեջ, որոնց միաժամանակ կա նաև ժխտում, օրինակ՝ Տացո՞ւք, եթէ ոչ տացուք՝ տա՞նք, թե չտանք*), կամ, կա՛մ... կա՛մ, կամ թէ... կամ թէ (*=կա՛մ... կա՛մ, կամ թե*), ոչ եթէ, ոչ թէ... այլ (*= ոչ թե... այլ*), մանաւանդ, ևս (*=մանավանդ, մանավանդ թե*), մանաւանդ թէ || ևս թէ (*=նամանավանդ*) *և այլն։*

բ) Ստորադասական շաղկապներ, *որոնք շաղկապում են գլխավոր և երկրորդական նախադասությունները՝* զի (*=որ, թե, այնպես որ, որպեսզի, որովհետև*), հանզի (*=որովհետև*), վասն զի (*=որովհետև, որպեսզի*), որովհետև, որպէս զի (*=որպեսզի, որ, այնպես որ*), փոխանակ զի (*=նրա համար, որ*), իբր զի || իբրու զի, իբր թէ (*=որ, այնպես որ, այնքան որ*), մանաւանդ զի (*=մանավանդ որ*), քան, քան եթէ ||քան թէ (*=քան թե*), եթէ (*=թե, որ, եթե*), թէ (*=եթե, որ, թե որ*), եթէ... ապա, ապա ուրեմն, ապա եթէ || ապա թէ (*=ուրեմն, իսկ եթե*), եթէ ոչ (*=եթե ոչ, բայց եթե*), մինչ || մինչև || մինչդեռ (*=մինչ, մինչդեռ, երբ, քանի դեռ, երբ դեռ, մինչև որ*), մինչ զի (*=այնպես որ, այնքան որ, մինչև որ*), իբրև || յորժամ (*=երբ, երբ որ*), ուստի, ապա թէ ոչ, բաց թէ, այսինքն, այս ինքն է || այս է (*=այսինքն*), թէպէտ ||թէ-պէտ և || թէ և *և այլն։*



## ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

§ 378. *Ինչպես ամեն մի լեզու, այնպես էլ գրաբարն ունի ձայնարկություններ, որոնք արտահայտում են զգացական զանազան վերաբերություններ՝ զարմանք, հիացում, ափսոսանք, վախ, ուրախություն, վիշտ և այլն։*

*Գրաբարում ամենից շատ գործածված ձայնարկություններից են՝* աղէ՛ (*=հապա՛, դե՛*), ա՛յ, աւա՜ղ (*=ափսո՛ս, վա՜հ*), բարէ՛ (*զարմանք է արտահայտում*), եղո՛ւկ (*=վա՛խ, վա՛յ, ափսո՛ս, ա՜խ*), երանի՛, իցի՛ւ (*=երանի՛*), հա՛պա, ո՛, ո՛վ, ո՜հ, վա՜հ, վա՛յ, վա՛շ, ո՛ն (*=հապա՛*), ո՛չ (*=երանի*)։

*Որանցից մի քանիսի հետ հաճախ գործածվում է* թէ *շաղկապը, ինչպես՝* երանի՛ թէ, իցի՛ւ թէ, ո՛չ թէ:

*Ձայնարկությունների իմաստով երբեմն գործածվում են նաև այլ խոսքի մասեր, հատկապես բայեր, հրամայական ձևով, ինչպես՝* ա՛ռ, բե՛ր, թո՛ղ, *որոնք, սակայն, վերջնականապես չեն ձևավորվել որպես ձայնարկություն, ուստի և չեն դիտվում որպես այդպիսին։ Դրանք յուրատեսակ միջին դիրք են գրավում (ըստ գործածության) ձայնարկությունների և եղանակավորող բառերի միջև։*

# ԳՐԱԲԱՐԻ ԾԱՂԿԱՔԱՂ

## Ա. ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

1.

Երկնէր[1] երկին, երկնէր երկիր,
Երկնէր և ծովն ծիրանի.
Երկն ի ծովուն ունէր[2] և զկարմրիկն[3] եղեգնիկ.
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր[4],
Ընդ եղեգան փող բոց ելանէր.
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ[5].
Նա հուր հեր ունէր[6],
(Ապա թէ)[7] բոց ունէր[8] մօրուս[8],
Եւ աչկունքն[9] էին արեգակունք։

(Խոր., I., ԼԱ/ԼԲ)

2.

Հատուած[10] գնացեալ Վարդգէս մանուկն[11]
Ի Տուհաց գաւառէն, զՔասաղ գետով[12],
Եկեալ նստաւ[13] զԵրէշ բլրով[12],
ԶԱրտիմէդ քաղաքաւ[12], զՔասաղ գետով[12],
Կռել կոփել զդուռնն[14] Երուանդայ արքայի։

(Խոր., II, ԿԵ)

3.

Քեզ ասեմ, այր[15] քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր[16] քաջ ազգին Ալանաց,
Ե՛կ[17] հաւանեա՛ց բանից[18]
Աչագեղոյ դստերս[19] Ալանաց՝
Տալ[20] զպատանիդ[21].
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն[22] դիւցազանց՝

Զայլոց[23] դիւցազանց զարմից[24]
Թողեալ զկենդանութիւն[25],
Կամ ծառայեցուցանելով
Ի սարկաւագ կարգի պահել[26],
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց[27] ազգաց՝ քաջաց Հաստատել։
(Խոր., II, Ծ)

4.

Եւ ուստի՞ տացէ քաջն[28] Արտաշէս
Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրուց
Ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս[29] Ալանաց։
(Խոր., II, Ծ)

5.

Հեծաւ[30] արի արքայն[31] Արտաշէս ի սեաւն
գեղեցիկ,
Եւ հանեալ զոսկէօղ շիկափոկ պարանն[32],
Եւ անցեալ որպէս զարծուի[33] սրաթև ընդ գետն,
Եւ ձգեալ զոսկէօղ շիկափոկ պարանն՝
Ընկէց[34] ի մէջք[35] օրիորդին[36] Ալանաց.
Եւ շատ[37] ցաւեցոյց զմէջք[38] փափուկ օրիորդին[36],
Արագ հասուցանելով ի բանակն իւր։
(Խոր., II, Ծ)

6.

Տեղ[39] ոսկի տեղայր[40] ի փեսայութեանն[41]
Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն[41]
Սաթինկանն։
(Խոր., II, Ծ)

7.

Վիշապազունք գողացան զմանուկն Արտաւազդ,
Եւ դև փոխանակ եդին։
(Խոր., II, ԿԱ)



8.

Ճաշ գործեալ Արգաւանայ[42] ի պատիւ Արտաշիսի,
Եւ խարդաւանակ լեալ[43] նմին ի տաճարին
վիշապաց։
(Խոր., I, ԼԱ)

9.

Արտաւազդայ[44] ոչ գտեալ, թողի որդւոյն
Արտաշիսի[45],
Տեղեկիկ ապարանից՝ ի հիմնանալն[46]
Արտաշատու,
Նա[47] անց գնաց և շինեաց
Ի մէջ Մարաց զՄարակերտ։
(Խոր., I, ԼԱ)

10.

Տենչայ Սաթինիկ տիկին տենչանս[48]
Զարտախուր խաւարտ և զտից խաւարծի
Ի բարձիցն Արգաւանայ[49]։
(Խոր., I, ԼԱ)

11.

Մինչ[50] դու գնացեր,
Եւ զերկիրս[51] ամենայն ընդ քեզ տարար,
Ես աւերակացս[52] ո՞ւմ թագաւորեմ։
(Խոր., II, ԿԱ)

12.

Եթէ դու յորս[53] հեծցիս յԱզատն ի վեր ի Մասիս,
Զքեզ կալցին քաջք[54],
Տարցին յԱզատն ի վեր ի Մասիս.
Անդ կացցես, և զլոյս մի՛ տեսցես։
(Խոր., II, ԿԱ)

13.

Ո՞ տայր[55] ինձ զծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց և զվարգելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք[56],
Որպէս օրէն էր[57] թագաւորաց։
(Մագ., ԼԴ)

14.

*Թէ քո Շարայի որկորն է,*
*Մեր Շիրակայ ամբարքն չեն[58]։*

(Խոր., I, ԺԹ)

15.

*Ուլունք Շամիրամայ ի ծով։*

(Խոր., I, ԺԸ)

16.

*Իբրև զանզգն Տրդատ, որ սիգալովն*
*Աւերեաց զբնաւորս գետոց և ցամաքներոյց,*
*Իսկ ի սիգալն խրում զյորձանս[59] ծովուց։*

(Ագաթ., § 123)

17.

*Կերան զազանք զմարմինս զիւղկանցն և*
*զերրացեալ.*

*Կուռ կերեալ ասեն որպէս զարջ.*
*Եւ աղուէս հայարա եղև[60] քան զառիւծ.*
*Գայլ, քանզի շատակեր էր, պայթեաց.*
*Եւ արջ, քանզի զօր ասէն[61]*
*Զմնալ առ ինքն, ի սովոյ մեռաւ.*
*Անգղք, քանզի ագահ էին, Նաւան*
*Եւ այլ[62] ոչ կարացին վերանալ.*
*Մկունք, քանզի շատ կերեալ ի ծակոն,*
*Ոտքն մաշկեան[63]։*

(Յովհ. Մամ., էջ 42)

---

## Բ. ԿՈՐԻՒՆ (5-րդ դար)

## ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

*(Հատվածներ)*

*Այն, զոր ի նախակարգ բանին[1] նշանակեցաք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր[2] պատմելոյ, էր Մաշտոց անուն, ի Տարօնական գաւառէն, ի Հացեկաց գեղջէ, որդի առն երանելւոյ Վարդան կոչեցելոյ։ Ի մանկութեան տիսն վարժեալ[3] հելլենական դպրութեամբն, եկեալ հասեալ[4] ի դուռն[5] Արշակունեաց թագաւորացն Հայոց Մեծաց, կացեալ[6] յարքունական դիւանին, լինել սպասաւոր արքայատուր հրամանացն առ հազարապետութեամբն[7] աշխարհին Հայոց՝ Առաւանայ ուրումն։ Տեղեկացեալ և հմուտ եղեալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուորական արուեստին իւրոց զօրականացն։ Եւ անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղէն գրոց, որով առ ժամայն լուսաւորեալ և թևամուխ միջամուխ եղեալ[8] յաստուածատուր հրամանացն հանգամանս, և ամենայն պատրաստութեամբ զանձն զարդարեալ, հարկանէր զիշխանացն սպասաւորութիւն։*

*... Ապա այնուհետև երանելւոյն զհաստատեցեալս իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան[9]։ Այլ և ընդառաջ եկանէր նմա իշխանն Գողթան, այր երկիւղած և աստուածասէր, որում[10] անուն էր Շաբիթ, և աստուածեղէն հիւրամեծար գտեալ՝ բարեպաշտութեամբ սպասաւորէր ըստ աշակերտաց հաւատոցն Քրիստոսի։ Իսկ երանելւոյն[11] վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառովն հանդերձ մրցմամբ ստուգութեամբ իշխանին. գերեալ զամենեսեան ի հայրենեաց աւանդելոց, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն՝ ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր։*

*... Եւ իբրև աւուրս բազումս անդէն ի նմին գեղերէր, յարուցեալ այնուհետև հասանէր առ սուրբ կաթուղիկոսն Հայոց Մեծաց,*

որոյ անունն ճանաչէր Սահակ, զոր պատրաստական գտանէր նմին փութոյ հասանելոյ...

Ապա լինէր նոցա պարգևական յամենաբարին աստուծոյ ժողովել զաշխարհահոգ խորհուրդն երանելի միաբանելոցն, և ի գիւտ նշանագրաց Հայաստան ազգին հասանել:

Բազում հարցափորձի և քննութեան զանձինս[9] պարապեցուցեալ և բազում աշխատութեանց համբերեալ, ազդ առնէին ապա և զկանխագոյն խնդրելին թագաւորին Հայոց, որոյ անուն կոչէր Վռամշապուհ:

Յայնժամ պատմէր նոցա արքայն վասն առն ուրումն ասորւոյ եպիսկոպոսի ազնուականի՝ Դանիէլ անուն[10] կոչեցելոյ, որոյ[11] յանկարծ ուրեմն գտեալ նշանագիրս այբուբենից հայերէն լեզուի: Եւ իբրև պատմեցաւ նոցա յարքայէ վասն գտելոյն ի Դանիէլէ, յորդորեցին զարքայ՝ փոյթ առնել վասն պիտոյիցն այնոցիկ: Եւ նա առաքէր զոմն Վահրիճ անուն[10] հրովարտակօք առ այր մի երէց, որոյ անուն Հաբէլ կոչէին, որ էր մերձաւոր Դանիէլի ասորւոյ եպիսկոպոսի:

Իսկ Հաբէլին[11] փոյթ յանձն լեալ, փութանակի հասանէր[12] առ Դանիէլ, և նախ ինքն տեղեկանայր[12] ի Դանիէլէ նշանագրացն, և ապա առեալ ի նմանէ առաքէր[12] առ արքայն յերկիրն Հայոց: Ի հինգերորդ ամի թագաւորութեան նորա ի նա հասուցանէր[12]: Իսկ արքային հանդերձ միաբան սրբովքն Սահակաւ և Մաշտոցիւ ընկալեալ զնշանագիրսն ի Հաբէլէն, ուրախ լինէին[12]:

Ապա առեալ երանելի հոգաբարձուացն[11] զյանկարծագիւտ խնդրելին, հայցէին[12] ևս յարքայէ մանկունս մատաղս, որով զնշանագիրսն արժարժել մարթասցեն: Եւ յորժամ բազումք ի նոցանէ տեղեկանային, ապա հրաման տայր ամենայն ուրեք նովին կրթել. որով և յաստիճան իսկ վարդապետութեան գեղեցիկ՝ երանելին հասանէր, և իբրև[13] ամս երկու կարգեալ զվարդապետութիւն իւր, և նովին նշանագրովք առնէր:

Իսկ իբրև ի վերայ հասեալ[14], թէ չեն բաւական նշանագիրքն՝ ողջ ածել զսիղոբայս զկապս հայերէն լեզուին, մանաւանդ զի և նշանագիրքն իսկ[15] յայլոց դպրութեանց թաղեալք և յարուցեալք գտեալ էին, յետ այնորիկ դարձեալ կրկին անգամ[16] ի նոյն հոգս դառնային, և նմին եւս խնդրէին ժամանակս ինչ:

Վասն որոյ առեալ երանելւոյն Մաշտոցի զաս մի մանկանց հրամանաւ արքայի և միաբանութեամբ սրբոյն Սահակայ, և հրաժարեալք ի միմեանց համբուրիւ սրբութեանն՝ խաղայր գնայր[17] ի հինգերորդ ամի Վռամշապհոյ արքային Հայոց, և երթեալ հասանէր ի կողմանս Արամի՝[18] ի քաղաքս երկուս Ասորւոց. որոց առաջինն Եդեսիա[19] կոչի, և երկրորդին Ամիդ[20] անուն: Ընդդէմ լինէր սուրբ եպիսկոպոսացն, որոց առաջնոյն Բաբիլաս անուն և երկրորդին Ակակիոս. հանդերձ կղերիկոսօքն և իշխանօքն քաղաքաց պատահեալ, և բազում մեծարանս ցուցեալ հասելոցն՝ ընդունէին հոգաբարձութեամբ...



Իսկ աշակերտասէր վարդապետին[21] զաշակերտսն ընդ իւր եկեալսն բաժանեալ, զոմանս յասորի դպրութիւն կարգէր [ի քաղաքին Եդեսացւոց], և զոմանս ի յունական դպրութիւնն՝ առաքէր ի Սամոսատական[22] քաղաքն գումարէր:

Եւ նորա[21] իւրովք հաւասարօք զսովորականն առաջի եդեալ զաղօթս և զպաշտօնութիւնս և զպաղատանս արտասուալիցս, զխստամբերութիւնս, զհոգս զաշխարհահեծեծս[23], յիշելով զառաքելոյն մարգարէին, եթէ՝ «Յորժամ հեծեծեսցես, յայնժամ կեցցես»:

Եւ այնպէս բազում աշխատութեանց համբերեալ[24] վասն իւրոյ ազգին բարեաց ինչ օգնել դարմանելոյ: Որում պարգևէր իսկ[15] վիճակ յամենաշնորհողէն աստուծոյ. հայրական յափուռ ծնեալ ծնունդս նորոց և սքանչելի՝ սուրբ աջովն իւրով, նշանագիրս հայերէն լեզուին: Եւ անդ վաղվաղակի նշանակեալ, անուանեալ և կարգեալ, յօրինէր սիղոբայիւք կապօք:

Եւ ապա հրաժարեալ յեպիսկոպոսէն սրբոյ, հանդերձ օգնականօք իւրովք իջանէր ի քաղաքն Սամոստացւոց, յորում մեծապատիւ իսկ[15] յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր[25]:

Եւ անդէն ի նմին քաղաքի դպրի[26] ումն հելլենական դպրութեան Հռոփանոս անուն գտեալ, որով զամենայն բնորոշութիւնս նշանագրացն զնրբագոյնն և զլայնագոյնն, զկարճն և զերկայնն, զառանձինն և զկրկնաւորն, միանգամայն յօրինեալ և յանկուցեալ, ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք, աշակերտօքն իւրովք. որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին, յԵկեղեաց գաւառէն[27], և երկրորդին Յովսէփ անուն՝ ի Պաղնական տանէն[28]: Եւ եդեալ սկիզբն թարգմանելոյ զգիրս նախ յԱռակացն Սողոմոնի, որ ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել, ասելով՝ «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»[29]: Որ և գրեցաւ ձեռամբն այնորիկ դպրի, հանդերձ ուսուցանելով զմանկունս գրել նմին դպրութեան:

Ապա յետ այնորիկ առնոյր[30] թուղթս յեպիսկոպոսէ քաղաքին և հրաժարեալ[31] ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն[32], բերէր[33] առ եպիսկոպոսն Ասորւոց: Որ յորոց նախընկալն եղև[34], առաջի արկեալ նոցա զնշանագիրս աստուածատուրս. վասն որոյ բազում իսկ[15] գովութիւնք յեպիսկոպոսաց սրբոց և յամենայն եկեղեցեաց բարձրանային ի փառս աստուծոյ, և ի մխիթարութիւն աշակեր-

անկոցն ու ասկաւք[35]։ Յորոց հրամարեալք այնուհետև և առեալ թուղթս աւետագիրս, հանդերձ շնորհատուր պարգեւօքն և ամենայն իրալիքքն[36], ի շնորհացն աստուծոյ ճանապարհորդ լինէր[37]. զօթե-ւանօք անցեալ[38] աջողութեամբ և հոգեւոր ուրախութեամբ եկեալ հասանէր ի Հայաստան աշխարհն[39], ի կողմանս Այրարատեան գաւառին, առ սահմանօք նոր Քաղաքին[40], ի վեհերորդ ամի Վաղարշապատոյ արքային Հայոց Մեծաց։

... Եւ արդ եկեալ յիշեալն[41] մերձ ի Թագաւորական քաղաքն, ուր լինէր Թագաւորն և արքայ նախիշխանութեն։ Որոց[42] առեալ զա-մենայն նախարարացն տաճարին ամբոխ, ի քաղաքէն եկեալ՝ պատահէին[43] երանելւոյն զափամբ Բահ[44] գետոյն։ Եւ զգան-կայի ողջոյնն միմեանց տուեալ, ուստի և բարբառօք ցնծութեան և երգօք հոգեւորօք և բարձրագոյն օրհնութեամբ ի քաղաքն դառ-նային, և զաւուրս սօնական ուրախութեամբ անցուցանէին։

Յայնժամ վաղվաղակի հրաման առեալ ի Թագաւորէն՝ ակիզբն առնելոյ[45] գիտնադրեալ կողմանն Մարաց[46], որք ոչ միայն վասն զինական պատերազմական բարուցն ձիւաղութեան[47], այլ և վասն խեցբեկագոյն և խաշարագոյն յեղուին՝ դժուարամատոյց էին։ Առ ի յարդարել[48] և զնոցա հարուստ ամացն ծնունդս առեալ՝ պարգա-ւորս, հանդերձանս, կրթեալս, աստուածատուր իմաստութեանն ծանօթս կացուցանէին։ Եւ այնպէս միջամուխ եղեալ հանգամանօք օրինապատգամացն, մինչև բնաւ արտաքոյ իւրեանց բնականու-թեանն գերծանել[49]։ (էջ 36—54)։

## Դ. ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ (5-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

*(Հատվածներ)*

### 1.

Յաղագս անօրէնութեան թագաւորին Արշակայ, թէ ո՛րպէս եսպան
զօրդի եղբօր իւրոյ, որում անուն Գնել[1], ի նախանձէն[2] չարութենէն[3]
Տիրիթայ... կամ ո՛րպէս զմեռ եւ եղբօրորդին Տիրիթ. կամ ո՛րպէս
զկինն Գնելայ արար իւր կին. կամ ո՛րպէս էած իւր կին
ի Յունաց զՕղիմպիոն, կամ ո՛րպէս երէցն Մրջիւնիկն[4]
մահուան դեղովն զնա ընդ օրհնեալ սպանանէր՝
խորհրդով Փառանձեմայ։

Զայնու ժամանակաւ էր դուստր մի գեղեցիկ Անդովկայ[5] ուրումն, մի ի նախարարացն նահապետին Սիւնեաց, որում անուն Փառանձեմ կոչէր. զորմէ[6] կարի անուանեալ էր գեղեցկութեամբ և պարկեշտութեամբ։ Արդ Գնել պատանեակն[7] եղբօրորդին արքային էառ զնա ի կնութիւն[8] իւր։ Եւ համբաւ գեղեցկութեան աղջկանն ընդ վայրսն տարածեալ, և համբաւ գեղոյ նորա յաճախեալ[9] բազմանայր և հնչէր։ Արդ առ համբաւ յանդկութեան անուանն[10] տրփեալ լինէր մին եւ հօրեղբօրորդին Գնելոյ, որում անուն Տիրիթ կոչէր։ Վասն որոյ անկանէր ի գաղտագողոնս, մինչ զի զնա իւր տեսանել կարասցէ։ Եւ յորժամ կարացն տեսանելն՝ որում ցան-կայր, այնուհետև հնարս խնդրէր առնէ կնոջն կորուսանել ո՛ զիա՞է զկին նորա նմա հնար լիցի յափշտակել։

Ապա Տիրիթն ի հնարս նենգութեան մտանէր, և բազում վարձէր իւր օգնականս և սատարս[11], որով[12] զիւր չարախօսու-թիւնն յառաջ վարել կարասցէ։ Եւ բանս ստութեան զԳնելոյն[13] նենգութեամբ առ Թագաւորն Արշակ մատուցանէր՝ թէ «Գնել թա-գաւորել կամի, և զքեզ սպանանել. և ամենայն մեծամեծք և նա-խարարք և ազատք սիրեն զԳնել, և ամենայն աշխարհիս նա-

խորարկ կամին զաւրութիւն նորա ի վերայ իւրեանց առնել քան զքու։ Արդ, ասեն, գիտե՛ս և տե՛ս, արքայ, զինչ գործեսցես, որպէս և կամիս, զիարդ մարթասցես ապրել։ Եւ այսպիսի բանիւք գրգռէին զթագաւորն Արշակ, մինչև հաստատէին ի միտս թագաւորին զիւրեանց ասացեալսն։

Ապա ոխացեալ թագաւորն ընդ պատանեկին Գնելայ, և[14] բազում անգամ հալածական առնէր զնա. և նիւթեալ լինէր նենգութիւն բազում ժամանակս։ Ապա զնուաստարդեայ ժամանակօքն առնէր խորհուրդ թագաւորն Արշակ, կոչել առ ինքն զպատանեակն Գնել և սպանանել։ Ապա առաքէր[15] զՎարդան զեղբայր սպարապետին զնահապետ ազգին Մամիկոնեան տոհմին, զի մեծաւ երդմամբ և նենգութեամբ կոչել կարասցէ, զի մի՛ խորհուրդն յայտնեսցի. զույշ փախիցէ և ապրիցի. այլ զի պատրանօք և հրապուրանօք ածիցէ մինչև ի տեղին մահուն։ Եւ էր բանակ թագաւորին ի Շահապիվանի ի բուն բանակի տեղւոյն[16] Արշակունեացն ի ներքոյ Միւսնոյն և ի վերայ աղբերականցն։ Եւ առաքեալ զՎարդանն[17], զմեծ նահապետն յարքայէն Արշակայ, եկն եգիտ զպատանեակն Գնել ի մօտաւոր տեղւոջն, այս ինքն ի գիւղն Առաւիւսոյ[18] անուանեալ։ Մեծաւ ուխտիւ և բազում պատրանօք զպատանեակն Գնել հանդերձ իւրով կնաւն և զրամբն[19] հասանեցուցանէր երթալ հասանել ի բանակն արքունի. իբրև այն թէ ի մեծարանս ինչ զնա կոչիցէ թագաւորն, բազում խնդանօք տարեալ հասուցանէր՝ եթէ թագաւորն Արշակ ոչ կամեցեալ զանձն նուաստարդեայ առանց քո անցուցանել, զի համեալ և քաղցրացեալ է ընդ քեզ, վասն զի բառ բանից չարախօսացն ոչ ինչ գտաւ ի քեզ, չարութիւն. և հնաս ինքն ի վերայ, զի զուր այժմ առէք զքեզ՝ որ ի նմանէն մեծ սիրոյ արժանի ես։

Ապա չուեաց ամենայն կազմութեամբն իւրով Գնել, երթեալ հասանէր[20] ի բանակն արքունի զզիշերն ամենայն բազում փութով տագնապաւ...

Իսկ իբրև առաւօտն ծագեաց, հասանէր[20] վաշտն Գնելայ ի բանակն արքունի. և մինչ Գնելն արքունական բանակին լինէր մերձաւոր, աղդ լինէր թագաւորին եկն նորա։ Ապա եկանէր հրաման յարքունուստ[21], արտաքս ունել և տանել սպանանել։ Եւ մինչ դեռ զայր նա ընդ բանակամէջն, և էր հեծեալ յերիվարին իւրում, իբրև մերձ եղև ի հրապարակին արքունի, և անդ ի[22] յարքունուստ[21] հասանէին բազում սպասաւորք վառեալք սուսերաւորք նիզակաւորք վաղրաւորք սակրաւորք տաճաւորք և սպարակիրք հետևակք, որք մատուցեալք բուռն հարկեալք[23] ընկենուին յերիվարէ անտի[24] զպատանեակն Գնել. և ձեռն յեալ կալեալ զնա, և տանեալ



զնայլին ի տեղի կառափելոյն։ Եւ քանզի կին նորա հիւրայ էր ընդ նմա մանուա[25], ի նմին ի նորին վաշտու էր ընդ առն իւրում։

... Իսկ զպատանեակն Գնել առնուին գնային մօտ ի Միւսն արքունի և անդէն կառափէին ի սարակ լերինն. որում անուանն Լերին անուանեալ է, մօտ յարմածս արգելոցացն որսոյն էրիոյն, ընդդէմ մարտաստանին աղբերացն բազմացացն արքունի, յանդիման բանակետեղ բնկին։

Ապա հրաման եղև յարքայէն. «Ամենայն մարդիկն որ իցեն ի բանակին, մեծ և փոքր առ հասարակ, մի՛ ոք իշխեսցէ չերթալ, այլ ամենայն որ առ հասարակ երթիցեն գիցեն աշխար կոծոց[26], և լացցեն զԳնել մեծ սգաւոր արշակունի զաւակնեայն»։ Իսկ ինքն թագաւորն գնացեալ ի լալիսն, նստեալ լայր զկեղծաւորդին իւր, զոր ինքն եսպան։ Երթեալ նստէր մօտ առ դին, լայր ինքն, և տայր հրաման՝ կոծ մեծ և աշխար դնել չուրջ զպատանեկաւն[27] զգակամբն։ Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձս պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր, ձայն արկանելով[28] ճչէր, յորս արտասուաց[29] յաղիողորմ ձայնի առ հասարակ զամենեսեան լացուցանէր։ Իսկ թագաւորն Արշակ ի լալիսն[30] տեսանէր զկինն սպանելոյն, տարփէր և ակն ունէր առնուլ զնա իւր կնութեան։

Իսկ այն որ զնենգութիւն բանսարկութեանց[31] նիւթեաց, և զաւուր ի վերայ իւրոյ հարազատին սպանութիւնս[32] կատարեաց, վասն նորին կնոջն արար զայն. զի մեծապէս սիրով հարեալ էր ի նմա։ ԶՏիրիթն ասեմ, որ յառաջագոյն հարեալ ի կնոջն յանմիկ, վասն որոյ զնենգութիւնս սպանութեանցն թագաւորաւն գործեաց։ Իսկ մինչ դեռ ի նմին կոծն սատակեցեալ էր, Տիրիթն սկսանէր ձայն չունելոյ տոփանացն։ Պատգամ յղէր առ կին մեռելոյն, ասէ՝ զի «Մի՛ կարի զանձն քո աշխատ առներ այդչափ, զի այր քաջի ես իմ քան զնա. ես սիրեցի զքեզ, վասն այսորիկ մատնեցի զնա ի մահ, զի զքեզ առից ինձ կնութեան»։ Արդ մինչ դեռ կոծ մեռելութեան զգիրկամբն ցայլէին, զայսպիսի պատգամս առաքէր Տիրիթն։ Բողոք բառնայր՝ թէ «Լուարո՛ւք ամենեքեան, զի մահ առն իմոյ վասն իմ եղև. զի որ ինձ ակն եդ վասն իմ, զայրն իմ ետ սպանանել»։ Զհերն փետէր, ճչէր ընդ[33] կոծելն։

Ապա իբրև մեծ իբրև համարձակ յայտնեցան ի չարիս ամենեցուն և ի ձայնարկուն ամենայն, եղև նա մայր ողբոցն, և ձայնարկուն ամենայն ի ձայն ողբոցն սկսան նուագել զիւրեանց տրփանացն Տիրիթայ, զակն գնելն, զբռութիւնն, զհնարս մահու նիւթել, զպատճառն, ձայնիւքն մրմնջէին ի վերայ սպանելոյն ի մէջ կոծոյն բարբառէին զեղգեղեալ խանդաղատութեամբ։ Ի նուաճել

խորհեալ ձայնիցն, իբրև յայտնեալ հռչակ հարկանէր։ Զոր իբրև լուաւ թագաւորն Արշակ, և հձաօ ի վերայ իւրոյն, զարմացեալ լինէր արմանայր ընդարմանայր[34], սարսեցեալ ի միտ առնոյր զիրսն։ Ապա խօսել սկսանէր թագաւորն, ծափս զծափս հարեալ մեծաւ զղջմամբ ընդ իւրն՝ զոր գործեաց, ասէ. «Վասն զի ի կնոջն Գնելոյ զանարժան սիրով հարաւ Տիրիթն, առ այնմ զչարիսն նիւթեաց զբասութիւն, զմահուն զրաութիւն զուր և սուտապատ և զմեզ եւ արդար արեանն շաղախեաց վասն իւրոյ պղծութեանն. զեղբայրն իւր եւ կորուսանել, և զանհնարին չարիսն և զանէծս որ ոչ անցանեն՝ եդ մեզ ժառանգելոյ»։

Ապա իբրև հասանէր թագաւորն յիւրայն հաստատութեան ի վերայ, և ճշգրտէր զիրսն, խլխլեալ անսայր բանին առ ժամանակ մի։ Իսկ իբրև զմեռեալն ծածկեցին անդէն ի տեղւոջն՝ յորում սպանաւն[35], և աւուրք հարուստ անցին ի վերայ իւրայն գործելոյ, պատգամ յղէր Տիրիթն առ թագաւորն. «Կա՛մ լիցի, ասէ, ընդ արքայի[36], զի հրաման տացես, զՓառանձեմ կին Գնելոյ թող առից ինձ կնութեան»։ Զոր իբրև լուեալ արքային, ասէ. «Արդ հաստատ գիտեմ զոր լուայն[37] թէ ստոյգ է, վասն կնոջ իւրոյ եղև մահն Գնելոյ»։ Եւ անդէն արքայն մահ խորհէր, սպանանել զՏիրիթ եւ փոխանակ ընդ[38] մահուն Գնելոյ։ Զոր իբրև լուաւ Տիրիթ, զահի հարեալ յարքայէն՝ գիշերի փախստական լինէր։ Ապա ազդ լինէր թագաւորին Արշակայ փախուստն Տիրիթայ, տայր հրաման թագաւորն Արշակ սպասաւորաց բանակին զհետ լինել Տիրիթայն. զի իբրև հասցեն նմա, անդէն ի տեղւոջն սպանցեն։ Բազումք և քաջք զհետ լինէին փախուցելոյն Տիրիթայ, ապա երթեալ հասանէին ի գաւառին Բասենոյ ի մէջ մայրեացն. ի տեղւոջն յորում հասանէին, անդէն զՏիրիթն սպանանէին[39]։

Եւ յետ այսորիկ էառ իւր Արշակ զկինն սպանելոյն զՓառանձեմ։ Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ. ասելով՝ թէ «Թաւ է մարմնով, և թուխ է գունով»։ Ապա իբրև կինն ի նմա ոչ յանգայր զմիտս իւր, առաքեաց արքայն Արշակ յերկիրն Յունաց, և խնդրեաց էած անտի կին ի կայսերական տոհմէն ազգաւ[40], զի անուն էր նորա Ողոմպի։ Եւ ամօթին սիրով սիրեաց զնա, և նախանձուկս արկանէր նովաւ առաջին կնոջն. և կինն Փառանձեմ ոխացաւ ընդ Ողոմպին, և խնդրէր սպանանել զնա։ Բայց ծնաւ ապա Փառանձեմ թագաւորին ուստր մի, և կոչեցին զանուն նորա Պապ, և սնուցին զնա, և ի չափ հասուցին։ Եւ իբրև չափեցաւ և եղև հուժկու, եդուն զնա պատանդ ի դուռն կայսերն յերկիրն Յունաց։



Իսկ Փառանձեմն ի մեծ նախանձու և ոխութեամբ գնայր ընդ Ողոմպին, և խնդրէր սպանանել զնա դեղովք։ Իբրև ոչինչ հնարս մերձենալոյ[41] չկարէր գտանել, վասն զի անձինն իւրում կարի զգոյշ կայր, մանաւանդ ի կերակրոց և յըմպելեաց. բայց զիրոց նաժշտացն կերակուրս արարեալ և կամ զնորին պարզեալ զգինի ձաշակէր, և եթէ ոչ ինչ գտանէին հնարս դեղել զնա մահուան դեղովն, ապա զոմն երէց ոմն արքունի՝ որ էր ի ժամանակին յայնմ[42], որում անուն Մրջիւնիկ, յԱրշամունեաց տեղեացն ի նահանգէն Տարօն գաւառէն, զնա ի բանս արկանէր Փառանձեմն անօրէնն։ Զանարժանս զանկատար զանջնջելի զչարեացն մեղացն չմոռացական տանջանացն կատարեաց զգործն զանարժանս զանասս զանյուր, այս ինքն ընդ կենաց զեղծ զդեղ մահուն խառնելով. որ ուրեք երբէք այսպիսի գործ յաւելեալ ի վերայ երկրի ոչ գործեցաւ։ Ընդ տէրունական ընդ սուրբ ընդ աստուածական մարմինն ընդ հացն օրհնեաց խառնէր զդեղն սատակման. երէցն Մրջիւնիկ անուն, տալով յեկեղեցւոջն Ողոմպեայ տիկնոջն ընձեռել զմահուն գործ, սպանանէր։ Ըստ չարեացն կատարելոյ զՓառանձեմայն ամենայն չարեաց լցեալ զկամս[43] կատարէր. և յանօրէնն Փառանձեմայն պարգև առեալ չէրիցն[44] զգեղն՝ ուստի իսկ ինքն էր ի նահանգէն Տարօն գաւառէն, որում անուն Գոմկունք կոչին...» (IV, ԺԵ)

2.

Յաղագս[45] թէ ո՛րպէս կամ զի՛ա՛րդ կոչեցեալ եղև[46] Արշակ արքայ Հայոց ի Շապհոյ արքայէ Պարսից, կամ զի՛ա՛րդ մեծարեցաւ ի նմանէն մեծապէս. կամ զի՛ա՛րդ Վասակ Մամիկոնեան սպարապետն Հայոց սպանանէր [illegible] արքային Պարսից. կամ թէ զի՛ա՛րդ Արշակ արքայ անհնարին նեղեալ արքային Պարսից, ոխակէր նմա, կամ թէ զի՛ա՛րդ սատակ յետոյ և փախեաւ. կամ թէ զի՛ա՛րդ ար հրամանաւն զաւառոյն պաշտօնէայն կապեցաւ[47] արքային Պարսից վասն նորա:

Յայնմ ժամանակի կոչէր առ ինքն Շապուհ արքայն Պարսից զթագաւորն Հայոց, զԱրշակ. և մեծարեցաւ[48] ի նմանէ բազում պատուով և մեծաւ փառօք, բազում գանձու ոսկւով և արծաթով, ամենայն մեծութեամբ թագաւորութեանն։ Եւ իբրև զեղբայր որպէս զորդի[49] զգեցեալ եղև ի նմանէ, և երկրորդական զմեծ տունն տայր նմա յԱտրպատական աշխարհին[50]. և ի միասին ի միում տախտի գահուն ի ժամ ուրախութեանն բազմէին, զմիագոյն զմիանման զհամահանդերձ զարդու[51]։ Եւ զմիօրինակ զթագն որ ըստ օրէ

խորհեան և նմա թագաւորն Պարսից զարդ պատրաստէր. զոյգ[52] երկոքին ի միասին որպէս զեղբարս հարազատս անբաժինս յշփացեալք էին ի միում ուրախութեան, և յանզատում ուրախութեան ուրախ լինէին։

Ապա եղև դէպ օր մի յաւուրց[53], եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ շրջել[54] զասպատտանաւ[55] միով զարբայիւն[56] Պարսից. իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպատտանին։ Իբրև տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ յուս կալեալ[57] մեծարելոց զնա, և ոչ ինչ շուքս դնէր նմա. այլ և անարգանս եւս դնէր թշնամանաց[58], ասելով ի[59] պարսկերէն լեզու՝ թէ «Այծից Հայոց արքայ, ե՛կ նի՛ստ ի խրձան խոտոյ ի վերայ[60]»։ Զոր բանս իբրև լսէր սպարապետն զօրավարն Հայոց Մեծաց, որում Վասակն կոչէր,[61] ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ և բազում սրտմտութեամբ[62] բարկանայր. ի վէր առեալ զսուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անցէն ի անցուցն զախոռապետն արքային Պարսից զլխատէր[63] ի ներքս յասպատտանին անդ։ Զի ոչ կարաց լսել և ժոյժ ունել զխօսս թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եդեալ[64] լաւ համարէր բազում անգամ, քան զանարգանս իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս։ Իբրև ի Պարսից աշխարհի էին, յոյժ ի տեղի և ի նմին հրապարակի աներկիւղ և անկասկած յանկարծօրէն զայսպիսի զգործ[65] կարաց գործել։ Իսկ թագաւորն Պարսից յորժամ զայս լսէր, բազում շնորհ ունէր զօրավարին Վասակայ, ընդ քաջասրտութեանն զարմացեալ և ընդ բազում աներկիւղութիւնն[66]։ Եւ բազում պարգևս և պատուոյ արժանի առնէր, զքաջութիւն և զանխարութիւնն գովեալ։ Վասն այնր[67] իրաց մեծաւ սիրով սիրէր զնա, և ըստ արժանի իւրում պատուէր զնա. մեծարէր զամենայն աւուրս հաշտութեան և խաղաղութեանն, որ ի մէջ նոցա էր։

Ապա մինչ դեռ անդէն եւ էր արքայն Հայոց առ արքային Պարսից և մեծ սէր էր ի մէջ նոցա և մեծ խաղաղութիւն, երկրնչեալ[68] երկեաւ թագաւորն Պարսից Շապուհ, եթէ գուցէ ստեսցէ սիրոյն նորա Արշակ արքայ Հայոց, և լքցի միարան ընդ կայսերն Յունաց, և կամ կողմանակ ինչ լիցի[69] ի նմանէ։ Եւ ոչ հաւատայր նմա, թէ պահեսցէ առ նա զմտերմութիւն սիրոյն, և կացցէ յուխտին միարանութեան ընդ նմա։ Վասն այսորիկ երդումն պահանջէր ի նմանէն, մինչև կարի ստիպեալ բռնադատեաց զնա Հաւանեաց, ասէ, «Ե՛կ երդուի՛ր ինձ յօրէնս քո, զի մի՛ ստեսցես ինձ»։ Իսկ իբրև կարի բռնադատեցաւ և ի նեղ անկաւ և չառապեալ[70] տագնապեցաւ, ետ հրաման ածել զերիցունս եկեղեցւոյն Տիզբոնի քաղաքի, որում անուն զլխաւորին Մարի[71]. և բերին զաւետարանն սուրբ,



և տայր երդումն արքայն Պարսից Շապուհ արքային Հայոց Արշակայ՝ երդնուլ յաւետարանն ահաւորն, զի այլ մի՛ եւ ստեսցէ նմա. այլ կացցէ յուխտի նորա, և պահեսցէ զդաշինս նորա։ Եւ վասն զի պատրպամաւոր իրացս այսոցիկ էր սանուցէրն նահապետն Մամիկոնեան տոհմին եղէն եղբայր Վասակայ սպարապետին, որում անուն Վարդան կոչէր, մեծապէս արքայ Շապուհ յանձն առեալ սիրէր[72] զնա։ Իսկ իւր եղբայրն Վասակ զօրավարն Հայոց նախանձ բերէր ընդ երիցու եղբօրն իւրում ընդ Վարդանայ։ Կամեցաւ խանգար առնել[73] ի մէջ Արշակայ թագաւորին Հայոց և փախչել. այլ[74] ասէր Շապուհ. «Թէ ձեր[75] սրտի մտօք էր տալ զերդումն, զիա՞րդ կարէք ըստ հաւանութիւն եղանել երդմանցն[76] և կամ փախչել։ «Այլ, ասէ, գիտեմ զի կախարդութեամբ խաբեցէք զիս. և որ ունի զօրէնան ձեր, զնա սիրեցէք. Եւ նենգութեամբ նմա խորհրդակից եղեալ, յինէն փախուցէք։ Եւ կամիք դուք զտէրութիւն Արշակունեաց ի վերայ ձեր, և զնոյն խնդրէք»։

Եւ երդնու Շապուհ արքայ յարեգակն և ի ջուր և ի կրակ, եթէ ոչ մեռեալ մարդոյ, որ յոյժ օրէնս քրիստոնէութեան է, ոչ տամ ապրել. և հրաման տայր զամենեսեան տանել սպանանել։ Եւ տանէին[77] զգլխաւորն նոցա զՄարի երէց և զայլ երիցունսն և զսարկաւագունսն, աւելի քան զհինգհարիւր այր, ի մի գոր զամենեսեան զնոսա փողոտէին։ Եւ զաւետարանն սուրբ՝ յոր երդուաւ թագաւորն Արշակ՝ կապէր պատէր երկաթի ապխօր, և իւրով մատանեաւ կնքեալ, ի գանձն տան հրամայէր. և տայր հրաման պահել զգուշութեամբ։

(IV, ԾԴ)

3.

Յաղագս կոչելոյն կրկին անգամ Շապուհ արքայի զԱրշակ արքայ Հայոց. և նորա երթալոյն. և միանգամայն կորնչելոյն նորա։

Ապա յետ այսորիկ դարձեալ առաքեաց[78] առ Արշակ արքայ Հայոց Շապուհ արքայ Պարսից, և ասէ. «Իսկ եթէ հաճ եմք ես և դու ընդ միմեանս, ե՛կ տեսցուք զմիմեանս. և յայսմ հետէ իբրև զհայր և զորդի լիցուք ընդ միմեանս։ Ապա թէ[79] ոչ տեսանես[80] դու զիս, խնդրես[81] պատերազմ ի մէջ իմ և ի մէջ քո»։ Իսկ Արշակ խնդրէր հաստատագիր երդումն ստիպուի ի նմանէն, զի յայսմ հետէ անկասկած երթիցէ առ նա։ Եւ նա ետ բերել՝ ըստ օրինացն

* Այստեղ պատմությունն ընդհատվում է։ Ենթադրվում է, որ ժամանակի ընթացքում ձեռագրից մի ամբողջ թերթ դուրս է ընկել։

հաւատարիմ եղեալ թագաւորութեանն Պարսից՝ աղ՝ կնքել վարազ նկարագիր մատանեաւ[81], և յղեաց։ Զի թէ իցէ և զայն երդման ես զհետ ոչ եկեալ է, ապա կազմ լիցի առ ալ ճակատս պատերազմի[82] ի մէջ իւրեանց։

Իսկ զայն ևս յորժամ տեսին և լուան ամենայն մարզիկն երկրին Հայոց ստիպեցին բռնադատեցին զիւրեանց թագաւորն զԱրշակ և շտապեցին, զի յարիցէ գնասցէ երթիցէ[83] յանդիման լիցի թագաւորին Պարսից Շապհոյ։ Յայնժամ հետէ, թէ կամաւ կամաւ՝ և թէ ոչ կամաւ, յարեաւ թագաւորն Հայոց Արշակ, առ ընդ իւր զզօրավարն սպարապետն Հայոց զՎասակն իւր, խաղաց գնաց յերկրէն Հայոց յերկիրն Պարսից առ Շապուհ արքայ Պարսից. չոգաւ յանդիման եղև թագաւորին Պարսից Շապհոյ։ Իբրև տեսին զնոսա, արկին զերկոսեանն զարքայն Արշակ և զսպարապետն Վասակ, և պահէին զնոսա արձակ ի մէջ ապարանիցն փուշտիպան զօրացն։ Եւ կոչեաց արքայ[83] Շապուհ զարքայ[84] Արշակ, և իբրև զծառայ իւր պատուհասեաց զնա. և նա յանդգնաբար և մահապարտ զանձն իւր առ նա համարեցաւ[85], Դարձեալ անդրէն ի նոյն կարգ փուշտիպանաց ետուն զԱրշակ արքայ ի պահեստ։

(IV, ԾԴ)

4.

Յաղագս[86] թէ ո՛րպէս զդիւթսն և զմոգպետսն հարցեալ Շապհոյ[87] փորձէր զմիտս[88] Արշակայ, և ապա[89] զնա յԱնյուշ բերդն, և կամ զՎասակ սպարապետն Հայոց չարամահ հրամայէր[90] առնել։

Ապա կոչեաց թագաւորն Պարսից Շապուհ զդիւթսն և զաստեղագէտսն և զքաղդէայսն. խօսէր ընդ նոսա և ասէր[91] եթէ «Ես բազում անգամ կամեցայ սիրել զԱրշակ արքայ Հայոց, և[92] նա համակ անարգեաց զիս։ Եւ եդի ընդ նմա ուխտ խաղաղութեան, և երդուաւ ինձ յիւրեանց օրէնս քրիստոնէութեանն[93] ի գլխաւորութիւն այնմ, զոր աւետարանն[94] կոչեն. նախ այն երդմանն առնէր։ Ես նմա բիւր բարիս խորհեցայ որպէս հայր որդւոյ կատարել նմա[95], և նա ինձ չար ընդ բարւոյ[96] հատոյց։ Իսկ ես կոչեցի զերիցունս եկեղեցւոյն[97] Տիսբոնի[98] քաղաքի, և կարծեցի թէ նոքա նենգութեամբ ինչ[99] ետուն նմա զերդումն և ետուն ինձ առնել։ Եւ պատուհասել զնոսա որպէս զմահապարտս[100]. իսկ ասաց ցիս[101] Մարի երէց գլխաւորն նոցա. ասէին՝ թէ մեզ արդարութեամբ առեալ նմա զերդումն. բայց եթէ նա ստեաց, նոյն աւետարանն ածէ[102] զնա առ ոտս քո։ Եւ ես նոցա ոչ լուայ. և ետու հրաման՝ եթանասուն զնոսա ի մի գուբ փորեալ, և զուսումնա-



կիցս[103] նոցա հանել ընդ սուր։ Զաւետարանն՝ յոր երդուաւ Արշակ արքայ, որ է գլխաւորութիւն[104] ուսմանց[105] նոցա քրիստոնէութեանն[93], կապեցի շղթայիւք. և կայ ի գանձի[106] իմում։ Բայց բանքն Մարեայ երիցոյ[107] ուշ եղեն ինձ[108]. և յիշեցի զի ասէր՝ թէ մի՛ սպանաներ զմեզ, այլ[109] ես գիտեմ՝ զի նոյն աւետարանն ածէ[109] զԱրշակ արքայ ի ձեռս քո։ Ահաւասիկ բանք արդարութեամբ կատարեցան, զոր ասէրն[110]։ Բայց Արշակ արքայ Հայոց այս երեսուն ամ է Արեաց՝ զի ետուն ընդ նմա ճակատս, և յաղթել և ոչ մի ամ ոչ[112] կարացաք. և եկեալ է եկեալ ոտիւք իւրովք[111]։ Բայց թէ գիտէի[113], թէ յայսմ հետէ կայցէ յուխտին իմում և ի հնազանդութեան բարեաւ ուխտի, մեծապէս մեծարանօք արձակէի[113] զնա խաղաղութեամբ յիւր աշխարհն»։

Իսկ քաւդեայքն ետուն նմա պատասխանի և ասեն[114]. «Թո՛ղ մեզ այսօր, և վաղիւն[115] պատասխանի տարացուք քեզ։ Իսկ ի վաղիւ անդր[116] ժողովեցան եկին ամենայն քաւդեայքն և աստեղագէտքն և ասեն[117] ցարքայն[118]. «Այժմ զի եկեալ է առ քեզ թագաւորն Հայոց Արշակ, զխօ՞րդ խօսի ընդ քեզ, կամ զի՞նչ ձայն ածէ[119], կամ զխօ՞րդ ունի զանձն[120]»։ Ասէ արքայն. «Իբրև զմի ի ծառայից իմոց համարի զինքն, հող ոտից իմոց յանձն լինել»։ Ասեն նոքա. «Սա[121] սրա՛ զոր ասեմքս[122] քեզ. պահեա՛ դու զնոսա առաջին, և տարբեա՛ դու զնապանս յերկիրն Հայոց, և առ՛ր բերել անտի հող ի սահմանացն Հայոց իբրև[123] բեռինս երկուս, և կաշոյր մի ջուր։ Եւ հրաման տացես հարկանել[124] զկէս խորանի յատակ ի բերեալ հողոյն Հայոց. և տացես բերել[125] զձեռանէ[126] արքային Հայոց Արշակայ, և տարցես[127] նախ յայն տեղ[128] որ բնակ իւր իցէ[129] հողն, և հարցցես զնա[130] բանս։ Եւ դարձեալ տացես դու զձեռանէ նորա, և տարցես ի հայաստանն[131] ի հարեալ հողոյն. և լուիցես դու բանս ի նմանէ. և ապա գիտասցես դու՝ եթէ կա՞յ յուխտի քո և պահէ՞ զդաշինս քո թէ ոչ, յետ արձակելոյ քո զնա ի Հայս[132]։ Ապա թէ ի վերայ Հայ[133] հողոյն խօսի ինչ[134] յանդգնեսցի, գիտասջի՛ր՝ զի որ որ հասանէ[134] յերկիրն Հայոց, զնոյն ձայն ածէ ընդ քեզ, և զնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ, զնոյն ճակատս և զնոյն թշնամութիւն յուզէ»։

Ապա թագաւորն Պարսից, քանզի զայս լուեալ ի քաւդէիցն[135], առաքէ[136] ուղտուք արձակէ ի Հայս արս զհողոյ և զջրոյ[137], զի եկեսցեն բարձցեն նմա զհմայսն[138]։ Եւ ընդ սակաւ աւուրս եկին բերին զայն ինչ, զորմէ[137] յղեացն։ Ապա հրաման տայր թագաւորն Շապուհ, զկէս յատակին խորանին հարկանել ի բերեալ հողոյն Հայոց, և զջուրն ցանել ի վերայ նորա. և զկէսն ի նոյն հողն զիւրոյ բնակութեանն[139] երկրին թողուլ։ Եւ նա ածել զԱրշակ

տրքայ Հայոց զաւազն խրով, և զայլ մարդիկն ի բաց հրամայեաց[140] կացուցանել. և զձեռանէ առեալ՝ շրջէր ճեմելով[141]։ Եւ հրթեկես առեալ ընդ խորանն, ասէ ցնա յարժամ ի պարտիզ ի Հողոյն ի վերայ[142] ճեմէին՝ թէ «Ընդէ՞ր եղեր իմ թշնամի, Արշակ արքայ Հայոց. զի ես որպէս զորդի սիրեցի զքեզ, և կամեցայ տալ քեզ զդուստր իմ ի կնութիւն, և որդի ինձ առնել զքեզ. իսկ դու խրոխտացար ընդ իս, և քոյդ կամօք՝ առանց իմոց կամաց՝ եղեր ընդ իս թշնամի. և այս յի՞ երեսուն ամ է, զի պատերազմեցար ընդ իս»։

Ասէ Արշակ արքայ, թէ «Մեղայ քեզ և յանցեայ. զի ես եկի և կոտորեցի, և յաղթեցի թշնամեաց քոց. և ակն ունէի ի քէն պարգև կենաց, և թշնամիք իմ հրապուրեցին[143] զիս, և արկին երկիւղս[144] ի քէն, և փախուցին ի քէն։ Եւ երդումն իմ, զոր երդուայ քեզ, յատաղ ածն զիս. և եկի առաջի քո։ Եւ առաջի ծառայ քո ի ձեռս քո կամ. զինչ և պէտք է[145] քեզ, արա՛ զիս, զինչ և կամ իցէ. սպա՛ն զիս, զի ես ծառայ քո առ քեզ կարի յանցաւոր եմ, մահապարտ եմ»։

Իսկ Շապուհ արքայ առեալ զձեռանէ նորա, շրջէր ճեմելով[146], ի շրջեցս առեալ զնա ածէր ի Հայակողմն ի Հողն Հայոց յատակն։ Իսկ իբրև յայն տեղի հասանէր, և զՀայ[138] Հողն կոխէր, մեծամեծս ըմբռնութեամբ հպարտութեամբ՝ այլ ձայն շրջէր[139]. սկսանէր խօսել և ասել. «Ի բա՛ց կաց յինէն, ծառայ չարագործ, տիրացեալ տեարանցդ քոց. այլ ո՛չ թողից զքեզ[147] և որդւոց քոց զվրէժ նախնեաց իմոց, և զմահն Արտաւանայ արքայի[148]։ Զի այժմիկ ձեր ծառայից զմեր տեարանց ձերոց զբարձ կալեալ է[149]. բայց ոչ թողից, եթէ ոչ տեղիդ[150] մեր առ մեզ եկեսցէ»։

Իսկ դարձեալ առեալ զձեռանէ, դարձեալ տանէր յայն Հող Պարսից. ապա աշխարէր զառացեալսն, խոնարհէր բուռն Հարկանէր զոտից[151] նորա, մեծապէս աղաչխարհելով զղջմամբ զառացեալ բանիւն։ Իսկ յարժամ առեալ զձեռանէ զնա տանէր[152] ի Հայ Հողն, եւ խստագոյն բան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միւսանգամ[153] հանէր յայնմ Հողոյն, բանիւք յաղաչխարհութիւն դառնայր։ Յայսպէս և[154] երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց[155] զնա. զի իբրև ի վերայ Հայոց Հողոյն տանէր, խստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ բուն գետնոյն յատակին՝ և կայր[156], ի զղջումն դառնայր։

Իսկ իբրև երեկոյ եղև ժամ ընթրեաց թագաւորին Պարսից. քանզի սովորութիւն էր Հայոց թագաւորին բազմական անդէն ընդ նմին առ նմա ի նորին տախտին[157] արկանել[158] բազմական, որէնք էին՝ զի թագաւորն Պարսից և թագաւորն Հայոց ի միում տախտի բազմէին ի միում գահոյս։ Իսկ այն օր նախ զատող[159] բազմականացն թագաւորացն, որ անդն էին, զամենեցունց կարգեցին. Հրամայեաց զկնի ամենեցունց ի ներքոյ բոլորին զԱրշակայ բազմականն առնէին[160], ուր դնայ Հողն յատակն Հայոց էր։ Նախ ամենեքեան իբրև բազմեցան յիւրաքանչիւր չափու[161], յետոյ ածէին[160] բազմեցուցանէին[160] զարքայն Արշակ։ Արդ եկաց բազմեալ ուրուցեալ վայր մի. իսկ յառն եկաց, ասէ ցթագաւորն Շապուհ. «Իմ[162] այդ տեղի, ուր դուդ[163] ես բազմեալ. յառն կաց այդի[164], թող ես այդր բազմեցայց, զի տեղի ազգի մերոյ այդ լեալ է. ապա եթէ յաղթահարեն զիս Հարց, մեծամեծ վրէժս խնդրեցից ի քէն»։

Ապա տայր[160] հրաման Շապուհ արքայ Պարսից, բերել շղթայս և արկանել ի պարանոցն Արշակայ և յոտս և ի ձեռս նորա երկաթս[165], և խաղացուցանել զնա ի յԱնդմըշն՝ զոր Անուշ բերդն կոչեն, և պնդեալ զնա մինչև անդէն մեռցի։ Եւ եղև ի վաղիւ անդր եա հրաման Շապուհ արքայ, ածել զառաջեաւ իւր զՎասակ Մամիկոնեան զզօրավարն սպարապետն Հայոց Մեծաց. սկսաւ պատուհասել զնա, քանզի էր Վասակ անձամբ[166] փոքրիկ, ասէ ցնա արքայն Պարսից Շապուհ. «Աղուէս, դու էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դու ես այն՝ որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործեմ. զմա՞հ աղուէսու սատակեցից զքեզ»։ Իսկ Վասակ առեալ պատասխանի, ասէ. «Այժմ քո[167] տեսեալ զիս անձամբ փոքրիկ, ոչ առեր զչափ մեծութեան իմոյ. զի ցայժմ ես քեզ առիւծ էի, և արդ աղուէս։ Բայց մինչ ես Վասակն էի, ես սկայ էի. մի ոտն[168] ի միոյ լերին կայր[168], և միւս ոտն[169] իմ ի միւս լերին կայր[169]. յորժամ յաջ ոտնս յենուի, զաջ լեառն ընդ գետին տանէի. յորժամ ի ձախ ոտնն յենուի, զձախ լեառն ընդ գետին տանէի»։ Ապա հարցանէր[170] թագաւորն Պարսից Շապուհ և ասէ. «Ասէ՛ ատ՛ ինձ գիտել[171], ո՞յք են լերինքն այնոքիկ՝ զորս դուն ընդ ոտնս տանէիր»։ Եւ ասէ Վասակ. «Լերինքն երկուք. մի դու էիր, և մի թագաւորն Յունաց...»։

(IV, ԾԴ)

## 5.

**Յաղագս գերութեանն և աւերածոյն աշխարհին Հայոց և աւերածոյն. և գերութեան[172] տանելոյն ի Պարս[173]. և չարամահ լինելոյ տիկնոջն Փառանձեմայ, և Քաղաքացն Հայոց աւերելոյ[174], և նիմանց աշխարհին ապականելոյ[174]։**

Ապա արձակեաց արքայն Պարսից Շապուհ ի վերայ աշխարհին Հայոց երկուս ոմանս յիշխանաց անտի[175] իւրոց, միումն Զիկ անուն և միումն Կարէն, հինգ հարիւր բիւրով. զի եկեալքն բրբա-

ցեն քանդեցին[176] զաշխարհն Հայոց։ Եւ եկին հասին ի վերայ երկրին Հայոց։ Ապա իբրև ետես տիկին աշխարհին Հայոց, կինն Արշակայ թագաւորին Հայոց Փառանձեմ, զզօրս թագաւորին Պարսից, եթէ եկին չքին զաշխարհն[177] Հայոց, առեալ ընդ իւր մարդիկ իբրև[178] մետասան հազար ազատս ընտիրս սպառազէնս պատերազմօղս, և հանդերձ նոքօք գիմեալ եմուտ ի բերդն Արտագերից[179]՝ որ[180] ի[181] յերկրին Արշարունեաց՝ յերեսաց զօրացն Պարսից։ Ապա եկին հասին ամենայն զօրքն Պարսից, շուրջ զբերդաւն[182] նստէին, պահ արկանէին[183], պատեցին պաշարեցին[178]։ Իսկ նոքա ի ներքս ամրացեալք[184] յամրոցին ի տեղւոջն ամրութեանն[185] և նոքա յակիշ անձուկ[186]՝ նստէին պատատեալ շուրջ զձորօքն[182]։ Եւ նստան շուրջ զբերդաւն ամիսս երեքտասան, և անհնար զբերդն ոչ կարացին, զի կարի ամուր էր տեղին։ Անկեցին քանդեցին զերկիրն ամենայն. նստէին առնուին աւար զերկիրն ամենայն, շուրջ ի գաւառացն և յաշխարհացն ածէին զգերի մարդկանն և զանասունս ի բանակին իւրեանց. այլուստ բերէին հանդերձ, և ուտէին. և զբերդն պաշարեալ պահէին։

Իսկ Պապ որդին Արշակայ ոչ գիւտեալ անդ[187] ի Հայոց աշխարհին, զի առ թագաւորն Յունաց գնացեալ։ Զի թէպէտ և զայս ամենայն լուան[188] աղաղակաւոր բանակի Հայոց, չոգան իւրեանց խնդրել[189] թիկունս օգնականութեան[190]. և էր նոցա զօրագլուխ Մուշեղ որդին Վասակայ սպարապետին։ Եւ չոգան նոքա առ իւրեանց արքայորդին. մինչ դեռ նորա ընդ թագաւորին Յունաց խօսէին, հաւանեցուցանէին զնոսա թիկունս լինել իւրեանց։ Իսկ յերկիրն Հայոց ասէին առաքէին դեսպանս առ տիկինն աշխարհին առ Փառանձեմ, զի ժուժկալ լինիցի բերդին[191], և մի՛ ձեռս տացէ ի պարսիկս[192]։ Եւ դեսպանս տուեալ տալ յորդւոյ նորա ի Պապայ զմխիթարանս զկնի ի շարաթու շարաթու[193] ենեալ հասանէին. և զաղտ ընդ զաղանի ցուցան ուրեմն մերձաւորութեամբ[194] ի բերդն մտանէին, տային քաջալերս[195] տիկնոջն. և յերկարեաց ի բերդին ամիսս երեքտասան պաշարմամբ։ Այլ որք գային և երթային, ասէին ասէին գային՝ թէ «Պինդ կաց, զի հասեալ է Պապ որդի քո և զանց կայսերական ի թիկունս օգնականութեան[190]»։ Եւ յերկարեաց խրախոյսն որ հասանէր, զի ասէին. «Վայրիկ մի[196] ևս սակաւիկ մի ևս կացցես ժոյժ, և ահա հասեալ է օգնականութիւնն»։

Եւ եղև յետ չորեքտասաներորդ ամսեանն հարուածոց՝ որ յաստուծոյ հասին ի վերայ աղթականին[197] բերդնորդեացն, զի մահ անկաւ ի վերայ նոցա՝ որք ի բերդին էին, զի ի անձանէ հասին պատուհասք։ Առաջի տիկնոջն Փառանձեմայ ուտէին և ըմպէին և



ուրախ լինէին որք էին ի ամրոցին[198]. յանկարծակի ի միում ժամու հարիւր այր, և ի միւսում երկերիւր, և էր՝ զի[199] հինգ հարիւր այր մեռան ի բազմականին՝ յորժամ բազմեալ կային.[200] և որ ընդ որք սատակէին։ Յորժամ սկսան, զամիս մի ոչ յերկարեաց՝ զի սատակեցան առ հասարակ. զի էին որք իբրև մետասան հազար, և կանայք իբրև վեց հազար. զի ամիս մի ոչ կացին, զի ամենեքեան՝ որ էին ի բերդին՝ առ հասարակ սատակեցան։

Բայց մնաց ի բերդին Փառանձեմ տիկին, երկու նաժշտօք։ Ապա եկն եմուտ զաղտ ի ներս ի բերդն Հայր մարդպետ ներքինին, և թշնամանեաց զտիկինն մեծապէս իբրև զբոզ մի։ Սկսաւ զնել թշնամանս ազգին Արշակունեաց, զի վատախորհուրդք են, վատանշանք[201], կորուսին զաշխարհս ևս. իրաւի անց ընդ ձեզ այդ, և այլ[202] զի անցցէ։ Եւ զաղտուկ, և փախեաւ։ Իսկ տիկինն Փառանձեմ իբրև ետես՝ եթէ միայն մնաց, երաց զդուռն բերդին, և թողացոյց[203] զօրացն Պարսից մտանել ի բերդն։ Եւ եկին կալան զտիկինն, և իջուցին ի բերդէն։ Եղանէին ի բերդն ի վեր զօրավարն[204] Պարսից, գերէին զգանձս թագաւորին Հայոց, որ կային ի բերդին. և սկսան կրել իջուցանել զամենայն զանձս, որ կայր ի բերդին[205]։ Զինն աւուր և զինն գիշեր հանէին իջուցին զոր զանձ յԱրտագերական բերդին, հանդերձ տիկնաւն խաղացուցին։

Եւ յետ այսորիկ եկին ի քաղաքն մեծ յԱրտաշատ, և առին զնա, և կործանեցին զպարիսպ նորա. առին անտի զգանձս մթերեալս՝ որ կային, և գերեցին զամենայն քաղաքն։ Եւ խաղացուցին յԱրտաշատ ի քաղաքէ ինն հազար տուն երդ[206] Հրէայ, զոր ածեալ էր գերի Տիգրանայ արքայի Արշակունւոյ յերկրէն Պաղեստինացւոց. և քսանուհինգ հազար երդ[207] Հայ. զոր յԱրտաշատ քաղաքէ խաղացուցին։ Եւ զամենայն շինուած քաղաքին հրձիգ արարին զփայտակերտն, և զքարակերտն քանդեցին. զպարիսպն բանիմն օրինակի և զամենայն շինուած քաղաքին մինչև ի հիմունս տապալեցին[208], և ոչ թողին մի, և ոչ թողին քար ի քարի վերայ. անմարդի և թափուր յամենայն բնակչաց իւրոց կացուցանէին։

Եւ եղև[209] յորժամ առին ժողովեցին զամենայն զգերին[210] քաղաքին ի մի վայր, և անցուցին ընդ Տափերն կամուրջ[211], և տանէին Հաւայր[212] գերւոյն, ի մէջ յերասխական զօրացն պատէին, ասեն զօրագլուխն Պարսից զՉուրթ[213] երէց քաղաքին Արտաշատու. ընկեալ ի միջոյ գերւոյն. Ի՛րթ գնա[214] դու յո ըկէար է[215] ընդ։ Եւ ոչ առնայր դարձ յանձն երէցն Զուրթն, այլ ասէր. «Ես զխաչին[216] տանիք, և զհովիւս[217] տարա՞յք. զի ո՛չ է մարթ հովուի[218] թողուլ զխաչն իւր, այլ պարտ է հովուի[219] զնել զանձն ի վերայ

ոչխարին իւրայ։ Եւ զայս առաքեցաւ նմա ի գերութիւն[220], և խաղաց ի գերութիւն ընդ իւրում ժողովրդեանն յերկիրն Պարսից։

Առնուին և զՎաղարշապատ քաղաք. քանդէին բրէին[221] զքաղաքն ի հիմանց տապալէին, և խաղացուցանէին յայնմ ևս քաղաքէ իննևտասն երդս հազար[222]։ Ընդ ամենայն քաղաքս[223] ոչ թողին ամենևին շինած. զի զամենայն տապալէին, քակէին[224] քանդէին. և ընդ ամենայն երկիրն ասպատակ սփռեալ՝ զամենայն այր ի չափ հասեալ կոտորէին, զկանայս և զորդիս ի գերութիւն վարէին. և զբերդս ամենայն թագաւորին Հայոց կալան, և լցեալ բազում ամրապար՝ բերդակալս թողուին։ Առնուին և զմեծ քաղաքն զԵրուանդաշատ, և խաղացուցանէին անտի երդս քսան հազար Հայ, և երդս երեսուն հազար Հրէայ. և զքաղաքն ի հիմանց տապալէին։ Ապա առնուին և զքաղաքն Բագրևանդայ Զարեհաւան, և խաղացուցանէին անտի հինգ հազար երդ Հայ, և ութ հազար երդ Հրէայ. և զքաղաքն ի հիմանց տապալէին։ Առնուին և զքաղաքն մեծ Զարիշատ՝ որ էր ի գաւառին Աղիովտի, չորեքտասան հազար երդ Հրէայ, և տասն հազար երդ Հայոց. և զնա ի հիմանց քանդեալ տապալէին։ Առին և զամուր քաղաքն Վան, որ է ի գաւառին Տոսպայ[225], և Հրէից աւերեալ, քակէին զհիմունս նորա. և խաղացուցանէին անտի երդս հինգ հազար Հայ, և ութ և տասն հազար երդս Հրէայս...

Եւ եղև[226] իբրև չոգան տարան զտիկինն Փառանձեմ յերկիրն Պարսից, և զայլ ամենայն գերութիւնն[227] Հայոց և զգանձսն կալան առաջի թագաւորին և զտիկինն Փառանձեմ, շնորհ մեծ ունէր թագաւորն Պարսից իւրոց զօրավարացն։ Եւ իբրև կամեցաւ թագաւորն Պարսից Շապուհ թշնամանս առնել ազգին աշխարհին Հայոց և թագաւորութեանն, ետ հրաման ժողովել զամենայն զզօրս[228] իւր և զմեծամեծս իւր և զփոքունս և զամենայն մարդիկ աշխարհին իւրոյ՝ որ ինչ իշխէր, և ի մէջ ամբոխին ածել զտիկինն Հայոց զՓառանձեմ։ Եւ հրամայեաց ի հրապարակին իմն առնել հրապարակս մերկանալից[229], որով հրամայեաց զկինն արկանել և արձակել ամբոխին Փառանձեմայ ի խառնակութիւն պոռնկութեանն անասնական պղծութեանն։ Այսպէս սատակեցին[230] զտիկինն զՓառանձեմ։ Իսկ զայլ գերին զամենայն տարան բնակեցուցին, որ յԱսորեստան, որ յերկիրն Խուժաստանի։

(IV, ԾԵ)



6.

Յաղագս թէ իբրև մնացին Վահան և Մերուժան, թէ զի՞նչ չար չարիս գործեցին ընդ երկիրս[231] Հայոց, և կամ զիա՞րդ սատակեցան[232] Վահան և կինն իւր յիւրեանց որդւոյն:

Այնուհետև Վահանն Մամիկոնեան և Մերուժանն Արծրունի[233], այս երկոքեան որք ուրացեալք էին, ապստամբեալք[234] էին յուխտէ[235] աստուածպաշտութեանն, և զանաստուածն Մազդեզանց աղանդն յանձն առեալ պաշտէին, սկսան այնուհետև յերկրին Հայոց աւերել զեկեղեցիս՝ զտեղիս աղօթից քրիստոնէից յամենայն կողմանս Հայոց՝ գաւառաց գաւառաց և կողմանց կողմանց[236]։ Եւ նեղէին զբազում մարդիկ՝ զոր ի բուռն արկանէին, թողուլ զաստուածպաշտութիւն և ի պաշտօն դառնալ Մազդեզանցն[237]։ Եւ յետ այսորիկ տային[238] հրաման Վահանն և Մերուժանն, զամենայն կանայս փախուցելոցն զնախարարացն[239], որ թողին և գնացին, տային հրաման[240] ի բերդսն զի նեղեսցեն զնոսա՝ դարձուցանել[241] յօրէնս Մազդեզանց. եթէ ոչ առնուցուն յանձն, սատակեսցեն զամենեսեան չարաչար։ Եւ բերդակալսն յորժամ զայն հրաման ընկալան, ամենայն որ ո[242] որ առ ումեք էին՝ նեղեցին զնոսա ըստ հրամանին տանելոյ։ Ապա իբրև ոչ մի ոք յանձն առնուին[243] ուրանալ ի քրիստոնէութենէն, չարամահ սպանանէին զամենեսեան յամենայն ի[244] բերդսն յորս տարեալ էր[245] զնոսա առեալ։

Իսկ Վահանայ էր քոյրաթիւ[246] ի Մամիկոնեան տոհմէն, քոյր Վարդանայ, Համազասպուհի. և էր նա կին Գարեգնի տեառնն Ռշտունեաց գաւառին։ Զսա եթող և փախեաւ Գարեգին այր իւր ի ժամանակին, յորում եկն Շապուհ արքայ Պարսից յերկիրն Հայոց. իսկ զտիկինն Ռշտունեաց ի միջնաբերդն Վան բերդի[247], որ էր քաղաքն ի Տոսպ գաւառին։ Իսկ անօրէնն Վահան և Մերուժանն հրաման տային բերդակալին, զի նեղեսցէ զկինն. եթէ ոչ առցէ յանձն զօրէնս Մազդեզանցն[237], տայր հրաման կախել զբարձր աշտարակէն[248] և սպանանել։ Իբրև ոչ առնոյր յանձն Համազասպուհի պաշտել զօրէնս Մազդեզանցն[237], հանէին ի բարձր աշտարակն՝ որ կայր ի վերայ բարձր պարսպին[249] քաղաքին, որ հայէր ի կողմն ծովակին ի գետոյ կուսէ. և մերկացուցին զնա իբրև ի մօրէ. և արկեալ [illegible] զոտիցն, գլխիվայր կախեցին զնա զբարձունէն կաւե- և այնպէս մեռաւ ի կախաղանին։ Եւ էր նա ազնուական մարմնով, և պայծառ տեսանելովն[250], կայր[251] կախեալ յերևոյթ անձին նշանակի[252], և փայփայէր մարմինն ի բարձունէն զոր օրինակ ձիւն[253] սպիտակութեամբն. և բազում մարդիկ ժողովէին տեսանել[254] զոր բան որէ, զի իբրև սքանչելի ինչ երևէր յաշխարհին։ Յայս տեսիլ

տիկնոջն Համազասպուհւոյ՝ էառ կին մի դայեակն նորին, ապա նա պարկեալ մի՛ զօր անակնկալս կոչին, և էած զօտի ընդ մէջ իւր. և կալաւ առ բարձր զաւճառն բարին ի ներքոյ աշտարակին՝ զորմէ[255] կախեալ էր զանձն իւր, մինչև կորուսանիցէ ամենայն մարմինք դիոցն[256]: Եւ որչափ ի վայր վայրէին ոսկերքն, նա յիւր ձոցն ժողովէր բովանդակ զամենայն ոսկերս սանին[257]. և տանել գնաց յիւրսն[258]:

Եւ այնչափ չար էին արքն երկարին, զի անգամ իւրեանց ումեք ոչ ողորմէին. այլ անխնայութեամբ զաւէրին զտարս և զիւրեանց ընդանիս: Ատրուշանս շինէին ի բազում տեղիս, և զմարդիկ հնազանդէին օրինացն Մազդեզանց. և բազում յիւրեանց սեպհականն շինէին ատրուշանս, և զորդիս և զդստերս իւրեանց տային յուսումն Մազդեզանցն: Ապա որդի մի Վահանայ, անուն Սամուէլ, եհար սուսերաւ զՎահան զհայր իւր, և զՏրմիզդուհի զմայր իւր՝ զքոյր Շապհոյ Պարսից թագաւորին. և ինքն փախստական լինէր[259] յերկիրն Յունաց:

(IV, ՄԹ)

7.

Յաղագս զօրավարին Մուշեղայ Հայոց, թէ ո՛րպէս անկաւ[260] ի վերայ բանակին Շապհոյ թագաւորին Պարսից և եհար զնա ի հարուածս անճանարինս[261], մինչ զի միայն Շապուհ ճողոպրէր:

Ապա Մուշեղ որդի Վասակայ, սպարապետ Հայոց Մեծաց ընտրեաց իւր արս ընտիրս միամիտս[262] ազատս ազգայինս քառասուն հազար, միաբանս միակամս, և կազմեաց զնոսա ձիով և թոշակաւ և զինու. և առեալ զնոսա ընդ իւր, երթալ նստէր[263] ի սահմանս Ատրպատականին[264] և պահէր[265] զաշխարհն Հայոց: Ապա յայնմ ժամանակի կազմեաց պատրաստեցաւ Շապուհ արքայ Պարսից ամենայն կազմութեամբ զօրովք իւրովք, եկն եհաս յերկիրն Ատրպատականի[266]. և Մերուժանն առաջնորդ գնայր բանակի նորա, և բուն բանակն արքայն թագաւորին ի Թաւրէշն բանակեալ էին[267]:

Եւ հասանէր սպարապետն զօրավարն Հայոց Մուշեղ, անկանէր ի վերայ բանակին բազմամբոխ հազարաց, և անդէն-ձեռն ի գործ արկանէր[268] կոտորէր: Ապա միայն մազապուր թագաւորն Պարսից Շապուհ ճողոպրեալ փախչէր. և զամենայն կարաւան բանակին առ հասարակ ընդ սուր հանէր Մուշեղ հանդերձ զօրօքն Հայոց: Զի բազումս կոտորէին, և զբազումս յաւագանւոյն Պարսից ձերբակալս առնէին, և առնուին զգանձս թագաւորին Պարսից յա-



ւարի. և զկանայս թագաւորին զտիկնայս տիկնանց[269] հանդերձ այլովք կանամբքն: Եւ զամենայն մաշկապարզան[270] ի բուռն արկանէր Մուշեղ սպարապետն, և զամենայն աւագանին՝ արս իբրև վեց հազար՝ հրամայէր մորթել զօրավարն Հայոց Մուշեղ, և լնուլ խոտով. և տայր բերել առ Պապ արքայն Հայոց: Առնէր զայս ի վրէժս հօրն իւրոյ Վասակայ:

Բայց զկանայսն Շապհոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանուարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանել արձակէր զամենեսեան զհետ առ նոյն Շապհոյ արքայի: Եւ ի պարսկացն ընդ նոսա արձակէր, զի երթիցեն առ Շապուհ թագաւորն Պարսից ողջս և անարատս[271]: Իսկ թագաւորն Պարսից զարմացեալ ընդ բարերարութիւնն Մուշեղի և ընդ քաջութիւնն և ընդ ազատութիւնն, զի ոչ արար ինչ նմա յաղագս կանանցն թշնամանս: Եւ էր ի ժամանակին յայնմիկ երիվարն Մուշեղի[272], ճերմակ ձի մի. իսկ թագաւորն Պարսից Շապուհ յորժամ առնոյր զգինի ի մատուցեան բմպել[273], յորժամ ուրախութեանն իւրոյ խրախութիւնս առնէր զօրացն իւրոց, ասէր. «Ճերմակաձին գինի արբցէ»: Եւ հա նկարել զաշտ ի պնակիս զՄուշեղ ճերմակաւն. և ի ժամ ուրախութեանն իւրոյ դնէր զպնակն առաջի իւր. և յիշէր հանապազ զնոյն բանս ասելով՝ թէ «Ճերմակաձին գինի արբցէ»:

Այլ[274] Մուշեղ և ամենայն զօրքն Հայոց անչափ աւերն գործէր ի բանակէն Պարսից, և անչափ լցան գանձօք և աւարաւ մեծաւ. և զբազում աւարառման Պապայ տանէին թագաւորին իւրեանց. և զօրացն Հայոց որ անդէն առ թագաւորին Պապայ էին մնացեալ հանին աւարառման և զօրավարացն Յունաց որ էին առ թագաւորին Հայոց. այնպէս և ամենայն զօրացն տային բաշխել ի մեծամեծ աւարացն անձկոցն: Այլ[275] իբրև դարձան զօրքն Հայոց յաշխարհն իւրեանց, բազումք ի զօրացն Հայոց ամբաստանէին առ թագաւորին Պապայ զՄուշեղ[276] զապաշտպանէ, թէ ընդէ՞ր արձակեաց զկանայս թագաւորին Պարսից զթշնամեացն մերոց և թագաւորին Հայոց Պապայ. վասն այսր[277] իբրաց ոչ ինչ սակաւ լինէր թշնամութեամբ ընդ Մուշեղի մինչև ի բազում ժամանակս:

(V, Բ)

8.

Յաղագս մահուան Արշակայ թագաւորին Հայոց, թէ զիա՛րդ մեռաւ յերկրին Խուժաստանի[278] յԱնդմըշն բերդին իւրն իւրեամբ ձեռօք, և Դրաստամատն էր պատճառ[279] մահուն:

Այլ յայնմ ժամանակի դեռ տակաւին[280] եւ կայր կենդանի Արշակ արքայ Հայոց յերկրին իշխանութեանն թագաւորութեանն Պարսից ի կողմանս Խուժաստանի յԱնդմըշն բերդին. այս իսկն որ

անուն Անյուշն[281] բերդն կոչեն։ Եւ դարձեալ ժամանակաւ խաղաղա-ցաւ պատերազմ տալ Պարսից ընդ Հայս. զի Արշակունին թագաւորն Քուշանաց[282], որ նստէր ի Բահլ[283] քաղաքի. նա յարոյց տալ պատերազմ ընդ Սասանականին Շապհոյ[284] և թագաւորին Պարսից։ Եւ Շապուհ թագաւորն զամենայն զզօրսն Պարսից գումարեալ խաղացոյց տալ պատերազմ ընդ նմա, և զօրս միանգամ ածեալ էր գերութիւն յերկրէն Հայոց զամենայն այրուձի գումարեալ՝ խաղացոյց ընդ ինքեան, և զներքինին անգամ թագաւորին Հայոց Արշակայ տանէր ընդ ինքեան ի գործ պատերազմին։

Եւ էր ներքինի մի Հայոց թագաւորին Արշակայ, ռամիկան հաւատարիմ լեալ, ներքինի սիրելի մեծի իշխանութեան և մեծի պատուոյ, և անուն Դրաստամատ։ Իսկ իբրև եղև պատերազմ ընդ թագաւորին Քուշանաց և ընդ թագաւորն Պարսից, շարաշար տարածէին[285] զզօրսն Պարսից զօրքն Քուշանաց, և դրագումս կոտորեցին ի զօրացն Պարսից զօրքն Քուշանաց, և դրագումս ձերբակալ արարին, և զկէս փախստականս հալածական առնէին[285]։ Իսկ Դրաստամատն ներքինին, որ յամս Տիրանայ թագաւորին Հայոց և Արշակայ որդւոյ նորա թագաւորին Հայոց լեալ էր իշխան տան գաւառին և հաւատարիմ գանձուց Անգեղ բերդին, և ամենայն բերդացն արքունի՝ որ[286] ի կողմանս յայնս[287], այնպէս և յերկրին Ծոփաց ի Բնաբեղ բերդին գանձքն լեալ էին ընդ նովաւ, և բարձ նորա ի վեր քան զամենայն նախարարացն։ Եւ քանզի այս գործակալութիւն և մարդպետութիւն, որում Հայքն կոչէին ներքինեաց՝ գործ լեալ էր ի բնէ ժամանակաց ի թագաւորութեանն Արշակունոյ[288], և զայս Դրաստամատ ներքինի զիշխանն զԱնգեղ[289] տանն գերեալ տարեալ էր յերկիրն Պարսից ի ժամանակին՝ յորժամ կալան զԱրշակ արքայն Հայոց։

Եւ այս Դրաստամատ էր յայնմ ճակատու, յորում վատթարեցին Քուշանքն զՇապուհ արքայն Պարսից։ Եւ Դրաստամատ գործեաց անհնարին քաջութիւն այնչափ կռուէր նա ի վերայ Շապհոյ արքային, և ապրեցոյց զնա ի մահուանէ. և բազումս ի Քուշանաց անտի[289] կոտորեաց, և զբազում կախոյանից[291] զգլուխս բերէր զառաջեաւ։ Եւ զՇապուհ թագաւորն Պարսից փրկէր ի նեղութենէն պատերազմին թշնամեաց անտի[290], որ արգելին զնա ի խուռն պատերազմին ի զօրաց անտի[290]։ Իսկ իբրև եղև յորժամ դարձաւ Շապուհ թագաւորն Պարսից յերկիրն Ասորեստանի, և մեծ շնորհակալութիւն առնէր ներքինւոյն Դրաստամատայն վաստակոցն, և ասէր ցնա[293] Շապուհ թագաւորն Պարսից. «Խնդրեա՛ դու ինչ յինէն. զինչ և խնդրեսցես, տաց քեզ և ոչ արգելից»։ Եւ ասէ Դրաստամատ ցթագաւորն[294]. «Ինձ ի քէն այլ ինչ ոչ պիտի, բայց տո՛ւր



ինձ հրաման, զի երթայց տեսից զբնակ տէրն իմ զԱրշակ արքայ Հայոց։ Եւ տո՛ւր մի օր, իբրև ես երթայց առ նա, հրաման տուր՝ արձակել զնա ի կապանացն, և ես իշխեցից[295] լուանալ զգլուխ նորա և օծանել, և ագուցանել նմա պատմուճան, և արկանել նմա բազմականս, և դնել առաջի նորա խորտիկս, և տալ նմա գինի, և ուրախ առնել զնա արուեստականօքն մի օր ճիշդ»։ Եւ ասէ թագաւորն Շապուհ. «Խիստ են խնդրուածքդ, զոր խնդրեցեր[296]. զի յաւուրց ժամանակաց՝ յորմէ[297] թագաւորութիւնս Պարսից կանգնեալ է, և բերդն այն Անյուշ բերդ կոչեցեալ է, չիք ոք մարդ եղեալ ի մարդկանէ՝ որ իշխեցեալ է յիշեցուցանել թագաւորաց զոր յայնմ բերդի եղեալ դոք է թագաւորաց. յիշելով զայն մարդ՝ որ յայնմ բերդի զոք եղեալ է, թող թէ զնա զայր[298] թագաւոր և զիմ ընկեր կարգեալ եղեալ յայնմ բերդի զճակատակիցդ, որ այնքան աշխատ արար զմեզ[299], և դու աստղիկ զանձն ի մահ եդիր և յիշեցուցեր զԱնյուշն, որ ոչ էին լեալ երբէք օրէնք թագաւորութեանս Արեաց ի սկզբանէ։ Բայց զի վասն[297] քո մեծ վաստակք են առ իս[298], զոր ինչ խնդրեցեր[299]՝ ե՛րթ տուեալ լիցի քեզ[300]. բայց քեզ արժան էր զգոյշ քո անձինդ խնդրել կամ աշխարհս կամ գաւառս կամ գանձս։ Բայց յորժամ դու զայդ խնդրեցեր, անցեալ լիցի զօրինօք[301] Արեաց թագաւորութեանս. ե՛րթ, տուեալ լիցի քեզ որ ինչ յինէնս խնդրեցեր փոխանակ քոցդ»։

Եւ ետ նմա փուշտիպան մի հաւատարիմ. և հրովարտակ՝ արքունի մատանեաւ, զի գնասցէ[302] երթիցէ նա ի բերդն յԱնդմըշն, և զիարդ և կամք իցէ[303] նորա, զոր օրինակ և խնդրեացն[304]՝ արասցէ կապելոյն Արշակայ, որ յառաջ թագաւորեալն էր ի Հայս։ Եւ չոգաւ Դրաստամատ հանդերձ փուշտիպանաւն[305] և հրովարտակաւն արքունի յԱնուշ բերդն, և եհաս զտէրն բնակ և արձակեաց զԱրշակի կապանացն երկաթեաց ի ձեռակապացն և յոտիցն երկաթեաց և յանտոց պարանոցէն շղթայիցն արծաթեացն. և լուաց զգլուխ նորա, և լոգացոյց զանձն նորա։ Եւ ագոյց նմա պատմուճան ազնիւ. և էարկ նմա բազմականս, և բազմեցոյց զնա, և եդ առաջի նորա ընթրիս ըստ օրինաց թագաւորաց, և եդ առաջի նորա գինի որպէս օրէն էր թագաւորացն. մխիթարեաց զնա և մխիթարեաց, և ուրախ առնէր զնա գուսանօք։

Եւ ի ժամ աղանդերն մատուցանելոյ՝ եդին առաջի նորա միրգ, խնձոր և վարունգ և ամիճ, զի կերիցէ. և եդին դանակ նմա, որպէս զի հատցէ և կերիցէ զիարդ և կամեսցի։ Եւ Դրաստամատ մեծապէս ուրախ առնէր զնա. կայր յոտն, և մխիթարէր զնա։ Իսկ յորժամ արբեցաւ, և գինին եկն դակամբ[306] նորա, արբեցաւ հպարտացաւ և ասէ. «Վա՜յ ինձ Արշակայ. այս, ես և այս, և յայսմ չա-

փու և այս անցք անցին ընդ խաղ։ Եւ զայս ասացեալ, զդանակն՝ զոր ունէր և ձեռինն, որով զմիրգն կամ զամիճն կամէր ուտել, եհար ի սրտի իւրում. և անդէն սատակեցաւ, և մեռաւ անդէն ի նմին ժամու մինչ դեռ կայր ի բազմականսն։ Իսկ յորժամ զայն եսես Դրաստամատն, հարձակեցաւ եհան ի նմանէ զնոյն դանակ, և եհար յիւրում կշտին. և անդէն մեռաւ և նա ի նմին ժամու յայնմ[307]։

(V, Է)

9.

### Յաղագս թագաւորին Պապայ, թէ ո՛րպէս խռովեցաւ ի թագաւորէն Յունաց. և կամ ո՛րպէս սպանաւ ի զօրացն Յունաց:

Եւ շրջեալ[308] զմիտս իւր թագաւորն Պապ և խոտորեալ զկնի իւր ի թագաւորէն Յունաց, և կամեցաւ խառնել զսէր իւր և առնել միաբանութիւն ընդ թագաւորին Պարսից։ Եւ սկսաւ թիկունս իւր առնել զարքայն Պարսից, և արձակել անդրէն հրեշտակս յաղագս միաբանութեան։ Եւ առաքէր հրեշտակս առ թագաւորն Յունաց, եթէ «Կեսարիա՝ և տասն քաղաք մեր լեալ է, արդ ի բա՛ց տուր. և զՈւռհա քաղաք շինեալ է նախնեացն մերոց. արդ եթէ ոչ կամիս խռովութիւն ինչ առնել, տո՛ւր ի բաց. ապա թէ ոչ, կռուիմք[309] մեծաւ պատերազմաւ»։ Այլ[310] Մուշեղ և ամենայն իշխանքն Հայոց շատ եկին ի մէջ արքային, զի մի՛ քակեսցէ զուխտ յերկրէն թագաւորութենէն Յունաց. և ոչ անսայր նոցա[311], և յայտնեաց զթշնամութիւն իւր՝ զոր ունէր ընդ թագաւորին Յունաց։

Այլ իշխանքն Յունաց և զօրքն նոցին տակաւին էին յերկրին Հայոց. և անուն իշխանացն՝ միումն Տէրէնտ, միւսումն Ադէ։ Եւ յղեաց դեսպան մի գաղտուկ թագաւորն Յունաց առ իշխանսն զօրացն իւրոց՝ որ էին յերկրին Հայոց, և հրաման տայր[312] սպանանել զթագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև[313] իբրև ընկալան զայս հրաման ի թագաւորէն Յունաց իշխանքն իւր՝ որ էին ի Հայոց երկրին, սպասէին մահու ի դէպ՝ սպանանել զթագաւորն Հայոց զՊապ։ Եւ եղև ի դիպան ժամանակի իբրև գիտացին Տէրէնդն և Ադէն զօրավարքն զօրացն Յունաց՝ թէ միայն է թագաւորն Հայոց Պապ, և ամենայն մեծամեծքն և զօրքն Հայոց չէին անդ. և էր թագաւորն Հայոց Պապ բանակեալ ի դաշտին ի Բագրաւանդ գաւառի ի Խու անուն աւանին, և բանակ զօրացն Յունաց բանակեալ էր անդէն մօտ առ բանակին Հայոց արքային. ապա զօրավարն Յունաց հաց[314] մեծապէս գործեալ՝ յընթրիս հրաւիրեալ[315] կոչեցին զմեծ թագաւորն Հայոց զՊապ մեծապէս ըստ արժանաւորութեան նորա, որպէս օրէն էր գոլ[316] թագաւոր ի հաց մեծ կոչել. և առնէին կազմութիւն պատրաստութեան։

Եւ եկեալ թագաւորն Պապ յընթրիս, մտեալ բազմեցաւ յուտել և յըմպել[317]։ Եւ իբրև մտանէր արքայն ի խորանն Տէրէնդի զօրավարին Յունաց, և յեղէսն ապարանկիր հետևակն վահան ի ձեռն, ասկեար զգօտւոյ, շուրջ ի ներքոյ զարմոյ խորանին պատեալ պատէին[318]. այնպէս և արտաքոյ կազմէին ի ներքոյ կուռ վահանսք և ի վերոյ հանդերձս զգեցեալք պատրաստէին։ Իսկ թագաւորն Պապ համարէր ի միտս իւր թէ ի պատիւ ինչ[319] նորա զայն առնիցեն։ Եւ մինչ դեռ յընթրիսն[320] ուտէր, ասկրաւոր զօրքն ի թիկանց կուսէ նորա կարգեալք պատեալք կային[321] շուրջ զնովաւ յամենայն կուսէ։ Իբրև ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուագն[322] մատուցին արքային Պապայ, և առ հասարակ թմբկահարք և սրնգահարք քնարահարք և փողահարք, իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան։ Եւ վահանաւոր յեղէսնն հրաման եառուն. և մինչ դեռ թագաւորն Պապ զուրախութեան գինին ունէր ի մատունս իւր, և նայէր ընդ պէսպէս ամբոխ գուսանացն, աճեակ ձեռամբն յարմուկն՝ յոր յեցեալ բազմեալ էր՝ ունէր տաշտ ոսկի ի մատունս իւր, իսկ աջ ձեռնն եդեալ էր ի դաստապան նրանին՝ զոր կապեալ էր յարտ ազդերն իւրում. և մինչ դեռ բերանն ի բաժակին էր յըմպելն, և, աչօքն յառաջ կոյս պշուցեալ հայէր ընդ պէսպէս ամբոխս գուսանացն, հրաման յեղէր ակնարկելով զօրացն Յունաց։ Եւ յեղէսն ասկրաւորքն երկու ի թիկանց կուսէ կային ի սպասու ոտկիմբէ վահանօքն յանկարծօրէն կից ի վեր առեալ զսակուրսն, զարկանէին թագաւորին Պապայ. մին եհար զուլն հարկանէր սակրաւն, և միւսն եւս սակրաւորն զաջ թաթ ձեռինն՝ որ կայր ի վերոյ դաստապանի նրանին՝ հարկանէր, կտրէր և ի բաց ընկենոյր[323]։ Անդէն ի բերանս տապալէր թագաւորն Պապ. և գինին տաշտին և արիւնն պարանոցին նովաւ հանդերձ ի վերայ բաժակայ սկտեղն անկանէր առ հասարակ. և անդէն սատակէր թագաւորն Պապ։ Ընդ շփոթելոյ ուրախարին խռովութեանն՝ Գնէլ ոմն գուսանին Անձևացեաց յառն կոչեցեալ յիրումէ բազմականէն, հանեալ զիւր սուսերն՝ հարկանէր զմի ի յեղէսնաց անտի[324] սպանանէր, յայնցանէ՝ որ հարին զթագաւորն։ Ապա Տէրէնդ զօրավարին Յունաց զիւր սուսերն հանեալ առէր[325], սարսափեաց ի գլխոյն Գնելոյ գանգատակն գլխոյն ի վերայ ուշացն ի բաց ընկենոյր[326]։ Եւ այլ ինչ որ ոչ կարաց յանդգնել առնել ինչ ընդ նոսա և ոչ ինչ։

(V, ԼԲ)

## 10.

### Յաղագս Յոհաննու եպիսկոպոսի, և վարուց նորա, և անմտութեանն և շաղփաղփ խօսիցն և գործոցն, և նշանացն[326] որ յաստուծոյ ի վերայ նորա եղեն:

Այլ Յոհան եպիսկոպոսն, որդի Փառինեայ հայրապետի, հինաւուրց. թէ արժան իցէ զնա կոչել եպիսկոպոս: Եւ էր սա այր կեղծաւոր, և երևեցուցանէր յինքն զանձն[327] իւր մարդկան պահող և խորգահանդերձ, մինչ զի մսոյ անգամ ոչ ագանէր, այլ գամառն[328] հեկով պատէր, և զմխոն[329] կեմոէր: Եւ յագահութեան առանց չափոյ էր հեղեալ, և ոչ կարէր առնուլ զագահութիւն իւր ընդ երկիւղին աստուծոյ[329], այնչափ մինչ զի[330] գործս անարժանս և չնաւատալիս գործէր:

Զի էր երբեմն գիպեալ ի ճանապարհի ուրեմն[331], զի նստէր նա ի գրաստու վերայ և գայր. եկն գիպեցաւ սմա սոսր պատանի մի աշխարհական հեծեալ ի ձի, սուսեր ընդ մէջ, թուր զգօտւոյ[332], աղեղնակապարճ զմիջով[333]. յուսացեալ զհերս իւր օծեալ մերձեալ[334], վարսաւորեալ եղեալ ի գլուխ իւր, և ոդիկ արկեալ զուսովք իւր. և գայր զճանապարհս իւր. թերևս յաւազակութենէ: Իսկ ձին՝ յորում հեծեալ՝ մեծ հասակաւ, և էր գանձաւոր, գեղեցիկ, մինչ զի ի բացէ տեսանէր եպիսկոպոսն Յոհան զձին, մեծապէս զարմացեալ՝ ակնկառոյց[335] լինէր: Ապա իբրև եկն մերձեցաւ հեծեալն մօտ ի նա անցր, ապա սկսանի Յոհաննէս բուռն հարկանէր[336] զերասանակաց[337] ձիոյն, և ասէր. «Էջ դու վաղվաղակի ի ձիոյ այտի[338], զի բանս են ինձ ընդ քեզ[339]»: Ասէ այրն. «Զի ոչ դու զիս գիտես և ոչ ես զքեզ, զի՞նչ այն բանք իցեն, զոր դու ընդ իս իցես խօսելոց[340]»: Մանաւանդ զի այրն արբեալ էր գինեաւ, և չատ յամառեաց այրն իջանել ի ձիոյն: Ապա բռնադատեաց զնա Յոհան, իջոյց ի ձիոյ անտի[338], և սա տարաւ զնա մեկուսի ի ճանապարհէն: Եւ առնն խոնարհել հրամայէր և ասէր. «Զերիցութեան ձեռն դնեմ ի վերայ քո»: Իսկ նա ասէր պատասխանի զանձնէ[341], եթէ «Այր աւազակ ազատ շարագործ և խառնագնաց կեամ ի մանկութենէ իմմէ, ես ոչ ինչ եմ արժանի[342] այդպիսի իրաց. և այժմ զեն ի նմին գործ կամիս»: Եւ շատ ի վեր եկեալ[343] յամառէր այրն, և նա ես չար բան զնա: Ապա բռնաբար զգետնեալ զայրն, դնէր Յոհան զձեռն իւր՝ առնել զնա երէց. և յարուցեալ հրամայէր լուծանել զհանգոյցս մեկնոցին, և արկանել նմա աղարազան: Եւ ասէր. «Երթ ի գեղ քո, և լինիր դու անդ երէց գեղջն՝ ուստի ես»: Եւ անգամ ոչ գիտէր զայրն թէ յորմէ գեղջէ իցէ[344], ինքն Յոհան



մատուցեալ բուռն հարկանէր զձիոյն[345], և ասէր. «Այս ինձ կօշիկք լիցին, փոխանակ զի երէց արարի զքեզ»: Իսկ այրն յամառեալ ի վերայ ձիոյն չառնէր յանձն տալ. ապա բռնաբար յինքն հանեալ[346] զձին, և զայրն արձակեաց: Եւ այս ամենայն իբրև վասն ձիոյն եղեն:

Ապա այրն թէ ոչ կամօք՝ աղերսաւոր արկեալ, գնայր ի տուն իւր, և երթեալ մտանէր ի մէջ ընտանեաց իւրոց, ասէ ցկին իւր և ցընդանիսն. «Արի՛ք յաղօթս կացէք[346]»: Եւ նոքա ասեն. «Մոլի՞ս դու, զի՞ է ուրեմն հարաւ ի քեզ»: Իսկ նա ասէ. «Արի՛ք կացէք[347] յաղօթս, վասն զի երէց եմ»: Իսկ նոքա զարմացեալք մերթ շիկնէին, մերթ ծիծաղէին. մինչև բազում անգամ յամառեալք[347], ապա ուրեմն հաւանեցան կալ յաղօթս ընդ նմա: Ապա ասէ կինն ցայրն իւր. «Ո՞չ դու երախայ էիր, և չէիր մկրտեալ»: Ասէ այրն ցկինն իւր. «Աղաչեմ զքեզ, չեմ յիշել[348], և ոչ ես յիշեցի զայդ առնել, գնա. զիս երէց արար, և ձին առեալ թամբաւ հանդերձ»: Եւ ասեն ցայրն ընդանիքն իւր. «Յարիցես անդրէն գնասցես առ եպիսկոպոսն, և ասասցես. «Մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց»: Իսկ նորա[349] յարուցեալ գնացեալ առ եպիսկոպոսն, ասէ ցնա. «Ես մկրտեալ չէի, զի՞ արարեր զիս երէց»: Եւ ասէ Յոհան. «Սափորով միով ջո՛ւր բերէք»: Եւ առեալ զջուրն էարկ զգլխով նորա, և ասէ. «Երթ, մկրտեցի զքեզ»: Եւ արձակէր զայրն վաղվաղակի յիւրմէ:

(VI, Ը)

## 11.

### Յաղագս նորին Յոհաննու

Երբեմն[350] սոյն Յոհան անցանէր առ այգեօք[351] ուրումն. և էր ժամանակն զայգիան յատելոյ: Աղաղակէր առ նա այր մի յայգւոյն, և ասէ[352]. «Օրհնեա՛, տէր եպիսկոպոս, զմեզ և զայգիս»: Ասէ Յոհան. «Փուշ և տատասկ բուսցին[353]»: Ասէ այրն. «Ի մարմինդ քո բուսցի[353] փուշ և տատասկ, փոխանակ զի տարապարտուց անիծանես զմեզ»: Եւ եղեն նշանք յաստուծոյ. զի իբրև չոգաւ եպիսկոպոսն ի վանս իւր, հասին հարուածք ի վերայ նորա, սկսաւ ընդ ամենայն անդամս մարմնոյ նորա որպէս զփուշ հարկանել: Եւ մեծապէս չարաչար անկեալ ի տանջանս չարաչարս հարուածոց, և ի մեծ տագնապի կայր աւուրս բազումս: Ապա յղեաց կոչեաց առ ինքն զայգորդն, աղաչեաց զնա առնել ի վերայ նորա[354] աղօթս, զի փրկեսցի նա ի ցաւոցն: Այգորդն ասէր. «Իսկ ես ո՞վ եմ, զի կարեմ զոք օրհնել կամ անիծանել. թող թէ զայր[355] եպիսկոպոս»: Իսկ նա բռնադատէր զնա յաճախ. մինչև յանձնէր այ-

զորդն կայր յաղօթս և ասէր. «Տէր աստուած. դու գիտես՝ զի ես այր մեղաւոր եմ և անարժան, ոչ գիտեմ զաղմուկս՝ յորում ըմբռնեցայս[356]. դու փրկեա՝ զիս յայս ի չարէս[357], զի ասեն՝ թէ զայր եպիսկոպոս դու անիծեր, և ասեն՝ քո բանիւ եղև։ Զի լաւ էր ինձ մահ, քանզի չգիտեմ զայս՝ զոր ինչ զինէն ասեն։ Եւ զայս ասացեալ՝ անդէն բռնեցաւ եպիսկոպոսն, և սկսաւ յամենայն մարմնոյն փուշն ի բաց թափել. և էր իբրև զփուշ խոտոյ. վաղվաղակի յարուցեալ[358] առողջացաւ յախտէն։

(VI, Թ)

12.

Յաղագս նորին Յոհաննու

Այն Յոհան եպիսկոպոս՝ որդի Փառինեայ յորժամ երթայր առ թագաւորն[359] Հայոց, խաղալկատակ լինէր նոցա[360]. որպէս[361] խաղալիկ[362] զանձն իւր կրթէր յագահութեան, որում ծարաւեալ[363] պատրեալ փափագէր. առ այն միահանէք[364] այն էին նորա ի չորք[365] անկեալ յոտս և ի ձեռս առնէր առաջի թագաւորացն, և զուգեալ զձայն[366] ածէր կառաչելով, զորէն ուղտու այնպէս փարբ-յալ։ Ընդ կառաչելն[367] ասէր մի մի բան խառնելով առնէր ի ձայն կառաչելոյն, ասելով՝ թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեղս[368] բառնամ. դի՛ք ի վերայ իմ զմեղս արքայի, Թող բառնամս[369], Իսկ թագաւորքն զմուրհակս գրեալ կամ զադարանաց գրեալ և կնքեալ դնէին ի վերայ ողնին Յոհաննու փոխանակ[369] ընդ մեղաց իւրեանց. և ի թագաւորացն Հայոց առնոյր իւր զձիս և զզարդս և զգանձս յաղագս լինելոյ և զմեղսն բառնալոյ ըստ բանիցն։ Այսպիսի էր այրն Յոհանն[370] կացեալ յեպիսկոպոսութեան[371] և յագահութեան զամե-նայն աւուրս կենաց իւրոց. զայսպիսի գործս գործէր վասն ագահութեան, որ չէր արժան։

(VI, Ժ)

---

Դ. ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ (Ե-րդ դար)

## ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ

(Հատվածներ)

1.

Արդ՝ բարիոք է արեգակն և գեղեցիկ բնութեամբ, և մեզ և ամենայն արարածոց՝ որ ի ներքոյ երկնից[12] յօգուտ և ի զարման, իբրև ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձգեալ և յառաջ լուցեալ՝ առ ի պիտոյսն և զուարճութիւն զերկրաց մեծացն անօթոց ի բաց ի միջոյ փարատելոյ[7]. բայց ինքն եթէ՝ ի՞նչ է[8] և եթէ՝ ընդէ՞ր՝ զայն ոչ գիտէ[9], զի չէ ի բանաւորաց և ի մտաւորաց. նոյնպէս և այլքն յանշնչոցն արարածոց։ Եւ թէ ցուրտ թէ ջեր թէ երկիր թէ օդ, թէ ինքն և թէ ընդէ՞ր՝ զայն ոչ գիտեն, և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան՝ անգիտաբար մատուցանեն, վարելով այնր[17] որ կազմեացն զնոսա։ Եւ մեզ ոչ անարգելիք լինին, և ոչ պաշտօն մատուցանելիք[8] նոցա. այլ հաւանեալ ընդ նոսա՝ փառաւորելիք զարարիչն նոցա և զօրինիչն[9], զի մեզ ի պէտս են, և կարգեցին իւրեանց ի փառս։

Զի՞նչ պաշտելիք արեգակն, որ մերթ կոչի իբրև զծառայ առ ի սպասն՝ յոր կարգեցաւ՝ հասանելոյ[10], և մերթ երթայ զօրէ իբրև զարհուրեալ, և տայ տեղի խաւարին լինել[11] զմիջոց ի մեծի տանս[12] և ընդ ժամանակս ժամանակս ի խաւար զանձն[13] առ ի յանդիմանութիւն և յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ առնելով եթէ «Չեմ ես արժանի պաշտաման, այլ այն՝[14] որ զիս և՛ զամենայն ինչ լուսատու կարգեաց, և զգայոյ զօգնյուցանէ, և երբեք երբեք[15] խաւարեցուցանէ», և իբրև խօսան բերանով անշնչական բարբէ՝ եթէ «Չեմ արժանի պաշտօն առնելոյ[16] այլ պաշտօն հարկանելոյս։ Կամ զլուսին՝[17] որ ամսոյ ամսոյ[18] հիւծանի, զրեթէ և մեռանի, և ապա նկինըն աստւ կենդանանալոյ, զի քեզ զյարութեան օրինակն ներկայեսցէ։ Կամ զօդ՝ որ մերթ զոչեսցէ վարագացեալ՝ հրամա-

նաւ, մերթ սաստէ ի գոչիւնն՝ սաստիւ։ Եւ կամ զՀուր՝[19] որում և զեղջ իսկ երկրորդ տարրիս կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես, և յորժամ կամիցիս՝ խափանեսցիցես։ Կամ զերկիր՝[19] զոր Հանապազ բրեմք, և ցանկ կոխեմք և զաղբ զմեր և զանասնոց[20] մերոց ի նա Հեղումք։ Կամ զջուրս՝[19] զոր Հանապազն ըմպեմք, և զանուշութիւն նոցա ի ժամաՀասութիւն ի փորի մերում դարձուցանեմք, և զներքին և զարտաքին աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք։

Եւ այսու ամենայնիւ յայտ է՝ թէ զոր առ աստուածն[21] ունին, անարգեն չարք[22] և անպատուեն։ Նա և զգղումն և սաստկումն ունի զարարածն, յորժամ զպատիւ արարչին որ նոցա մատուցանիցէ[23]. և յայտ առնէ երկիր շարժելովն, և լուսաւորքն խաւարելովն, և օդքն զգմելովն և քամնելով, և ծով սաստկութեամբ ալեացն ապստամբելով[24]։ Զի թէ ոչ սաստ արարչին նաՀանջէր[25] զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել՝ առ ի խնդրելոյ զվրէժ անարգանաց Հասարակաց արարչին։ Կամ ծով ծածկելով, որ ունի աւազովն պաշարեալ՝ չիշխէ անցանել ըստ Հրամանն։ Կամ երկիր կլանելով, որ ի վերայ ոչընչի կայ[26] Հաստատեալ, և յոչինչ դառնալ և դարձուցանել չէ պատշաճ զիւր զդնակիչն։ Կամ Հողմ պարուսանցուցանելով, որ կենդանութիւնն է ամենայն շնչաւորաց. և չիշխէ արգելուլ զկենդանութիւնն՝ առանց Հրամանի կենդանատուին։ Կամ օդք[27] երբեմն զատանամանիւն ջնջելով, և երբեմն զխորշակն բերելով. և լինէր ամենայն ինչ ոչ ինչ։

Այլ նա[28] առանիկ իբրև զկառս իմն լծեալ ի չորից երիվարաց զաշխարՀս[29] տեսանեմք, ի ջերմութենէ ի ցրտութենէ ի ցամաքութենէ և ի խոնաւութենէ. և[30] զօրութիւն իմն ծածուկ կառավարէ, որ զչորս կազմեցոյն ընդ միմեանս ի Հաշտութեան և ի Համանութեան պաՀել ձգեալ։ Ամենայն կառք ի Համազգեաց երիվարաց լծին, բայց[31] միայն[32] այսոց կառաց՝ որ ի չՀամազգեաց լծեալ են. և որ ի Համազգեացն[33] լծեալ են՝ երբեմն սայթաքին, երբեմն ոտէն և ի տագնապի զկառավարն և զանձինս կացուցանեն. և երբեմն խորտակումն իսկ կառացն գործեն. և յորժամ ողջ կառքն իցեն, և ողջ կառավարն, և վարժ երիվարքն, ոչ եղեալ ի Հանդէպ երեւացն ինչ արշաւեն. և այս կառք զարմանալիք ի Հակառակ և յաննման երիվարաց լծեալ և ծածուկ ձեռամբ ուղղեալք. ոչ ի միմեանց կողմն ի Հանդէպ երեւացն ինչ արշաւին, այլ յամենայն կողմանս վարին, և ընդ Հանուր արշաւին, և ընդ բնաւ սլանան[34], և ամենայնի բաւական են[35]։ Յորժամ ընդ արեելս ընթանան, չէ ինչ արգել՝ թէ ընդ արեմուտս ոչ արշաւիցին, և յորժամ ընդ Հիւսիսի վարգին, չէ ինչ արգել՝ թէ ընդ Հարաւ ոչ ստրաշեսցին[36]. զի ձեռն կառավարին բաւական է[35] յամենայն կողմանս զիմեցուցանել, և ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել։

(I, Գ)



2.

...Եւ եթէ զազանացն զազանութիւն չար ինչ բնութեամբ կարծեցուցանիցէ նոցա, գիտասցեն՝ զի կէսքն յանասնոցն ի պէտս սպասուն[37], որպէս[38] և արջառ և ոչխար և ամենայն ինչ, որ ուտելի[39] է և կրելի[40] է. և կէսքն վասն երկիւղի[41] ի մէտս մարդկան ծնուցանելոյ։ Զի թէ զազանք աՀագինք են, և վիշապք և օձք և այլ ճճիք վնասակարք, և մարդն այնչափ Համարձակեալ է՝ մինչ ըստ աստուծոյ երկիւղին սաՀմանս արտաքոյ ելեալ անսաստ, եթէ այնպիսի զարՀուրեցուցիչք չէին՝ ո՞րչափ ևս առաւել չկայր երբէք յանկասանէ[42]։

Նա և նորին իսկ, որ չարքն կարծին անմտաց[43], երբէք երբէք օգտակար լինին և գերծուցիչք ի մաՀուանէ։ Զի՞նչ չար քան զօձ կայցէ[44], և ի նմանէ թերիակէ. և ի այսմանէ դեղոց, որք ի նեղութենէ մարդկան կազմեցան, չև Հասուցեալ ի անդէն բուժէ։ Եթէ բնութեամբ չար ինչ էր օձ. կամ չարի իրիք արարած, ապա չգտանէր ինչ ամենեւին ի նմա օգտակար, և ոչ գզօրանայր երբէք ի զազանութենէ անար[45] իրմէ. Նա առաւելեալ տեսանեմք ի Հնարագիտութենէ[46] թոյնս զզօրացեալ, և իբրև զշուան խաղալիկ է նոցա, և բազում անգամ բռնելոյ ի տան՝ չմեղանչեն բնակչացն։

Եւ արդ եթէ Հեթանոս իցէ՝ որ չար ինչ բնութեամբ կարծիցէ, յանդիմանեսցի յիւրոց արուեստակցացն օձապաշտացն, որ այնչափ գզօրացուցանել զօձս գիտեն, մինչև կոչել յաւթիւս ի տանս, և կերակուրս մատուցանել[47], որպէս Բաբելացիքն վիշապին՝ զոր պաշտէին...։

Եւ եթէ մեզ իցէ, և չարի արարած զզազանսն վասն զազանութեանն ասիցէ, ի Հնարապետաց մտաց փորձման կրեալ ընթերանեսցի։ Զի եթէ զազանքն չարի արարածք իցեն, և երկիր բարւոյ, զիա՞րդ բարւոյն արարած չարին արարածոցն դայեակ մատոյ՝ սնուցիչ լինիցի, որք ի նմանէ կերակրին և ի ծոց նորա Հանգչին. զի երկու Հակառակք իրերաց՝ միմեանց ծախիչք[48] են, որպէս խաւարի լոյս, և ջեր սառամանեաց։

Արդ՝ եթէ գաղանք չարի արարածք էին, և երկիր բարւոյ, ծախել պարտ էր զնոսա երկրի[49] և ոչ սնուցանել, սպառել և ոչ աճեցուցանել. այլ եթէ երկիր և զգաղանսն սնուցանէ և ոչ ապականէ, յայտ է՝ եթէ յորմէ արարչէ երկիր լեալ է, ի նմանէ և գաղանքն արարեալ են. և չիք ինչ չար բնութեամբ. քանզի չիք ինչ չար արարիչ բնութեամբ։ Եւ մանաւանդ թէ և գաղանք իսկ, զորոց[50] ասեն՝ թէ ի չարէ արարչէ եղեալ են, ցուցանեն թէ չեն ուստեք՝ այլ յերկրէ, այնու զի յերկրէ կերակրին և ի նմա բնակեն, և անդրէն ի նոյն շրջեալ հոսանան։

Նա՝ թէ և ի չարէ ինչ էին չարք արարեալք, ոչ ինչ ի նոցանէ օգտակար գտանէր[51], այլ ամենեքին իսկ վնասակարք։ Իսկ արդ եթէ տեսանեմք, զի կիտոցն մորթքն պատսպարան մերկութեան մերոյ լինին, և կիտոցն ճրագուն դեղնեղի լինի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիւծուն և արջոյ և այլոցն՝ բառ իւրաքանչիւր մի բառ միայն, յայտ է՝ եթէ ի բարւոյ արարչէ լեալ են, վասն միոյ իրիք օգտակարին գտանելոյ ի նոսա։ Զի որ չար ինչ է, նորա և ամենայն ինչ վնասակար է, և մորթ և միս. այլ նոցա որպէս զմորթն զգենումք, և ոչ վնասէ, և զմիսն եթէ ուտէ ուրուք աննոյր[52] և ուտէր[53] ոչ վնասէր[51]. որպէս վարազի՝ որ գաղանագոյն է քան զամենայն գազանս՝ ուտի միսն, և ոչ վնասէ. նոյնպէս և նոցայն՝ եթէ ուտէր[53] որ՝ չվնասէր[51]։

Եւ յարգաւ, զոր ասեն՝ եթէ ի բարւոյ արարչէ արարեալ է, գտանի ինչ վնասակարութիւն։ Զգլու միս ուտել՝ զարման է մարմնոյ, բայց եթէ զարինն որ ըմպիցէ՝ սատակի[53]։ Նոյնպէս և ի բանջարս է ինչ՝ որ առանձին սատակիչ է, և խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս ցաւոց լինի։ Զմանրագորն եթէ որ լոկ ուտիցէ՝ սատակիչ է, և խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի բնահատացն։ Եւ զհողմար[54] եթէ ի սոթ ժամանակի ուտիցէ ոք, քանզի զօրացուցիչ է, զաւուս ի փորոյն փարատէ[55]. և եթէ ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ[55]. և եթէ զջուրն բամնեալ անապակ ըմպիցէ ոք, սատակի. և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, ի ցանկութենէ արգելանէ[55]։ Եւ կանեփուկն թուի ինչ է, որոյ սերմն նորա[56] դեղ է, և նոյն զարձեալ կամակցուցիչ ցանկութեանն։ Եւ մայախինոջ, որ առանձինն ի յայտնի ինչ ժամանակի սպանող է, նովիմբ զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատանել։ Եւ կաղանչանան ազգ[57] ինչ՝ առանձինն սպանող է, և[58] խառնեալ ընդ այլ դեղոյ՝ մաղձազեղ է բուժիչ ի մահուանէ։

Արդ յայսմանէ իսկ անհարթն ու ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթէ չար ինչ բնութեամբ իցէ. բայց աստուած այսպէս իմաստուն զմարդն կազմեաց զի և ի դարմանիցն մարթիցէ վայելել. և



որք վնասակարք կարծիցին, և անտի ևս հնարիւք օգտակարութիւնս կարիցէ գտանել, առ ի յանդիմանելոյ զբարս անմտացն՝ թէ չիք ինչ որ բնութեամբ չար է։

(I, ժե)

3.

Այլ և վիճեալ ևս պնդին ի բանիցն վերայ[59]։ Մին ասէ՝ թէ «Ի մերում գեղջ[60] ծովացուլ զկով գործեաց և զդոյզնն հանապազ մեք լսեմք ամենեքեան»։ Եւ միւսն ասէ. «Զայլոյն իսկ իմ[61] աչօք տեսեալ է»։

Մի՞ թէ և զարալէզս[62] ևս որ կարիցէ ասել՝ թէ և զայն ուրուք[63] տեսեալ իցէ. և եթէ յառաջին ժամանակսն արալէզք լինէին զվիրաւորս և ողջացուցանէին, արդ ընդէ՞ր ոչ լիզիցեն և ողջացուցանիցեն[64]. ո՞չ նոյն պատերազմունք են, և նոյնպէս վիրաւորք անկանին։

Այլ յայնժամ, ասեն, դիցազունք էին։

Եւ մեք զգիցն իսկ պահանջեմք ի նոցանէ։ Մարմնաւո՞րք էին արդեւք գիցն, թէ անմարմինք։ Եթէ մարմնաւորք էին, յայտ է, թէ մարդիկ էին, և զմարդկան ուրուականս ի պաշտօն առեալ գիս անուանէին. այլ եթէ անմարմինք էին, չէր մարթ անմարմնոցն[65] ընդ կանայս մարմնաւորս ամուսնանալ։ Զի եթէ այժմ հնար ինչ էր, ոչ երբէք դադարէր սատանայ ի կանանց ստահակութեամբն ծնուցանել. զի որ անմարմին ոք է, նա և անսերմն է. վասն զի սերմն մարմնաւորաց[66] է, և ոչ անմարմնոց...։

Այլ և վիշապք, ասեն, և նհանգք կերպս ի կերպս լինին. յորոց մին անձնաւոր է, և միւսն ոչ անձնաւոր։

Վիշապն՝ որ մարմնաւոր է, զիւր կերպարանսն ոչ կարէ փոխել։ Զի եթէ հնար ինչ էր մարմնաւորաց[67] զկերպարանս փոփոխել, նախ մարդ՝ որ առաւել քան զնոսա է՝ փոխէր զկերպարանս յինչ և կամէր[68]. այլ որպէս մարդոյ[67] ոչ է հնար փոխել ի կերպարանս ինչ՝ յոր և կամիցի, նոյնպէս և ոչ վիշապին։

Նա և ոչ նհանգ ինչ անձնաւոր գոյ, բայց եթէ գն ի տեղիս բնակեալ իցէ, և մերթ կերպարանիցի, և մերթ վնաս գործիցէ։ Եւ ոչ վիշապք զհնձմականս արդեանց[69] կրեն, և ոչ զրաստ գոյ նոցա[70] եթէ զարդիւն ի կալոյ ուրեք կրիցեն, և ի զուր է կա՛լ կա՛լն ասել ումեք[71] ի կալս՝ և ոչ ա՛ռ ա՛ռ։ Զի վիշապն որ ինքն զրաստ է, այնու զի անասուն և անխօսուն է, զի՞արդ՝ որ ինքն զրաստ է՝ զայլ զրաստ վարիցէ. զի վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՝ եթէ ոչ օձի[72], այն յայտ իսկ է։ Եւ զօձ յաղթանդամ, կամ

զդազան ինչ ծովածին, կոչեն գիրք վիշապ. որպէս զմարդ յաղթանդամ Հսկայ անուանեն, նոյնպէս և զօձ ցամաքային անճոռնի, և զդազանն ծովական յանձնաձև, զկիտացն ասեմ և զգերփինաց[73], վիշապս անուանեն. բայց այնմ՝ թէ դու չախչախեցեր զգլուխ վիշապացն ի վերայ ջուրց. և ետուր կերակուր ժողովրդոց եթովպացւոց։

Տեսանե՞ս, զի զձկունս մեծամեծս ծովածինս՝ վիշապս կոչեն գիրք. և յայտ անտի է՝ թէ զձկանց[74] ասէ, այնու եթէ նոքա կերակուր ազգաց եթովպացւոց. թէպէտ և ասա այլք ի սատանայ առակեցին զվիշապն, որպէս և զայն՝ զոր Յոբն գրեալ է։ Եւ այլ ինչ ոչ են վիշապք՝ բայց կամ օձք մեծամեծք ցամաքայինք, կամ ձկունք անարիք ծովականք. զորոց[75] ասեն, թէ յեռանդնեայ և մեծամեծք են. և որս և կերակուր նոցա մանր ձկունք են[75], որպէս և օձից մեծամեծաց մանր մանր ինչ ճճիք կամ անասունք։ Եւ ոչ որս երբէք՝ որպէս մարդկան՝ արարեալ են վիշապաց, կամ անհիցն. և ոչ ստամոքս իւրեանց մարդկան են նոցա ի բնակութիւն. և ոչ զօր ի թագաւորազգեաց և ի գիւղաքաղաքացն ունին կալեալ առ իւրեանս կենդանի. զի կենդանիք ի մարմնաւորաց երկու եւեթ կան, Ենովք և Եղիաս։

Այլ որպէս զԱղեքսանդրէ խաբէին ոմանք՝ թէ կենդանի կայցէ[76], որոց բան եղիպտական հնարողութեանն կարգեալ արկեալ կախարդանօք զգն ի շէջ, կարծեցուցանէին, թէ Աղեքսանդրոս կենդանի իցէ[76] և մահ խնդրիցէ. և զպայտան Փրիաոսի խայտառակեաց զխաբէութիւնն. և եդաւ ի մէջոյ զպայթակղութիւնն։ Նոյնպէս և մոլորութիւնն զխաց խաբեաց զդիւցազանցն Հայոց, եթէ զոմն Արտաւազդ անուն[77] արգելեալ իցէ դիւաց, որ ցայժմ կենդանի կայ, և նա ելանելոց է և ունելոց[78] զաշխարհս, և ի նմանէ յոյս կալեալ կան անհնարար...

Եւ այնպէս ցանկալ սատանայ՝ զի զամենայն որ ի բարւոք անհնարութեանէ վրիպեցուսցէ, և ի նմանէ յոյս կալցին։ Մեծացուցանէ յոյս մարդկան զվիշապս, զի յորժամ աճապինք երևեսցին ամպոց՝ անմտացեալ զնոսա ի պաշտամանս կարծեցուցանէ, թէ և նշանք ինչ իցեն զնոցա, և շահապետք վայրաց. և յետ կարծեցուցանելոյ՝ իբրև կերպարանին կամ ի վիշապի կերպարանս կամ ի նշանաց իմն և ի շահապետ, զի այնու զմարդն յիմարէ արարչէն թիւրեսցէ։ Զի եթէ էր ինչ նշանակ անձնաւոր, ոչ երևեալ ի նոյն կերպարանս երևէր, և երբեմն փոխ լինէր և յայտնագոյն ընդ սոսա անկեալ՝ հեղձուցանէր. այլ կամ կինն կին կայր, կամ փոկն փոկ։

Նոյնպէս՝ և զօր շահապետս վայրաց կոչեն. ոչ մերթ մարդ երևէր, և մերթ օձ, որով և զմանապաշտութիւնն հնարեցաւ յաշխարհ



մուծանել։ Նոյնպէս և վիշապն ոչ մի անգամ օձաձև երևէր, և միւս անգամ մարդակերպ, որպէս յառասպելսն իսկ ասացաւ՝ թէ որ մարմնաւոր ինչ է, յայլ կերպարանս չկարէ փոխել։

Այլ թէ ի կալս շարիս և ուղտ երևեցին՝ դիւաց կերպարանք են[79] այն, և ո՛չ վիշապաց. և եթէ ի դաշտս երազատանս ձիերին, և հեծեալք իբրև զմարդիկ զհետ երէոյ արշաւիցեն, կեղծիք դիւաց են և ոչ ճշմարտութիւն ինչ իրաց. և եթէ ի գետս ի կանանց ինչ ի կերպարանս երևիցին, սատանայի կերպարանք են՝ քանզի նշանք ինչ անձնաւոր չիք, և ոչ ի մարդ իբրև զդն մտանէ վիշապ, որպէս ասեն ի շչեղոյ դիւահարին կարծեցին, քանզի մարմնաւորին[80] ի մարմնաւոր չէ հնար մտանել։ Եւս եթէ բանաւորի ի վեր աշխարհի վիշապն, ոչ եթէ եղջերք ինչ անուանեսցի՝ այլ ծածուկ զօրութեամբ իւիք յաստուծոյ հրամանէ, զի մի՛ շոգին մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ. որպէս որ բարկիքեան կոչի ազգ ինչ օձից[80]՝ հարկեալ միայն սաստիկ զմարդ կամ զանասուն. սատի յորժամ ի շրջոյս զառանցի՝ ծրագ առեալ իշանեն ի ներքս ըմբռնել, զի հալածեալ ընդ ճրագն՝ ոչ մեղանչիցէ մարդոյն օձն։

(Ա, ԻԵ)

4.

Մինչ չև ինչ էր[81] ինչ, ասեն, ոչ երկինք և ոչ երկիր և ոչ այլ ինչ արարածք՝ որ յերկինս կամ յերկրի[82], Զրուան ոմն անուն էր[83], որ թարգմանի բախտ կամ փառք։ Զհազար ամ յաշտ արար[84] զի թերևս որդի մի լինիցի նմա, որում[85] անուն Որմիզդ, որ զերկինս և զերկիր և զամենայն որ ի նոսա՝ արասցէ։ Եւ յետ հազար ամի յաշտ առնելոյ[86] սկսաւ ածել զմտաւ, ասէ. «Օգո՞ւտ ինչ իցէ յաշտս[87] զոր առնեմ, և լինիցի՞ ինչ որդի Որմիզդ, եթէ ի զուր ինչ ջանամ»։ Եւ մինչ դեռ նա զայս խորհէր, Որմիզդ և Արհմն յղացան յորովայնի մօր իւրեանց. Որմիզդն ի յաշտն[88] առնելոյ, և Արհմն ի յերկուանալոյ անտի[89]։ Ապա իմացեալ Զրուանայ[90], ասէ. «Երկու որդիք են յորովայնի անդ. որ որ ի նոցանէ վաղ առ իս հասցէ՝ զնա թագաւոր արարից»։ Եւ ծանուցեալ Որմիզդի[90] զխորհուրդս հօրն՝ յայտնեաց Արհմենին. ասէ[91]. «Զրուան հայր մեր խորհեցաւ՝ թէ որ ի մէնջ վաղ առ նա երթիցէ, զնա թագաւորեցուսցէ»։ Եւ զայն լուեալ Արհմենին[90] ծակեաց զորովայնն, և ել եկաց[92] առաջի հօրն։ Եւ տեսեալ զնա Զրուանայ[90], ոչ գիտաց եթէ ո՛ ոք իցէ. և հարցանէր՝ եթէ «Ո՞վ ես դու»։ Եւ նա ասէ. «Ես եմ որդի քո»։ Ասէ ցնա Զրուան. «Իմ որդին անուշահոտ և լուսաւոր է, և դու խաւարին և ժանդահոտ ես»։ Եւ մինչ դեռ նոքա զայս ընդ

միմեանս խօսէին, ծնեալ Որմզդի[92] ի ժամու իւրում լուսաւոր և անուշահոտ, եկն եկաց[93] առաջի Զրուանայ։ Եւ տեսեալ զնա Զրուանայ[94], գիտաց՝ եթէ Որմիզդ որդի նորա[94] է, վասն որոյ զյաշտն առնէր. և առեալ զբարսմունսն՝ զոր ի ձեռին իւրում ունէր, որովք զյաշտն առնէր, ետ ցՈրմիզդ և ասէ[95]. «Ցայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմհետէ դու վասն իմ առնիցես»։ Եւ ի տալ Զրուանայ զբարսմունսն ցՈրմիզդ և օրհնել[96] զնա, մատուցեալ Արհմնի[96] առաջի Զրուանայ՝ ասէ ցնա. «Ո՞չ այսպէս ուխտեցեր՝ թէ ո՛ր յերկուց որդւոցն իմոց յառաջ առ իս հասցէ[97], զնա թագաւոր արարից»։ Եւ Զրուանն առ ի չստելոյ զուխտն՝ ասէ ցԱրհմն. «Ա՛յ սուտ[98] և չարագործ, տացի քեզ թագաւորութիւնն ինն հազար ամի, և զՈրմիզդ ի վերայ քո արքայ կացուցեալ[99]. և յետ ինն հազար ամի Որմիզդ թագաւորեսցէ, և զինչ կամիցի առնել՝ արասցէ»։ Յայնժամ սկսան Որմիզդ և Արհմնն առնել արարածս. և ամենայն ինչ՝ զոր Որմիզդն առնէր՝ բարի էր և ուղիղ, և զոր ինչ Արհմնն գործէր՝ չար էր և թիւր։

(II, Ա)

5.

Արդ՝ մեր թողեալ զնոսա, հարցցուք զոսա. Զրուանն[100], զոր յառաջ քան զամենայն ինչ ասեն, կատարեա՞լ ոք էր, թէ անկատար։ Եթէ ասիցեն՝ եթէ[101] կատարեալ էր, յուիցեն՝ եթէ կատարեալ յումմէ՞ կարօտանայր[102] խնդրել որդի, որ զայլս և զերկինս և զերկիր առնիցէ. զի եթէ կատարեալ էր, ինքն իսկ կարող էր առնել զերկինս և զերկիր։ Ապա եթէ անկատար էր, յայտ է, թէ էր ումն ի վեր քան զնա[103], որ զնորա թերակատարութիւնն լնուլ[104] կարէր։ Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա, նմա[105] պարտ էր առնել զերկինս և զերկիր և զամենայն որ[106] ի նոսա՝ առ ի ցուցանելոյ[107] զիւր բարերարութիւնն և զօրութիւն. և ոչ Զրուանայ որդի շնորհել, որ զերկինս և զերկիր և զամենայն որ[106] ի նոսա՝ առնիցէ։

Այլ, ասեն, փառաց առնէր զյաշտն։

Հարցցուք. փառքն յումմէ՞ յաջողեալ էին նմա. թէ վասն զի մեծանձնաւոր էր՝ փառաւոր էր։ Եթէ յումմէ պարգեւեալ էին նմա փառքն, հարկ է կարծել՝ թէ էր ումն ի վեր քան զնա զօրագոյն և փառաւորագոյն, ուստի ի նա փառքն հասին[108]։ Ապա եթէ չէր ոք ի վեր քան զնա, ի զուր էր զյաշտն հազարամեան առնել. զի փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ են, այլ ի յաջողութենէ ուրուք անուանին փառք, որպէս ի չաջողութենէ ուրուք անուանի թշուառութիւն. և երկոքին և դիպաց արդասիք են, և ոչ անձանց հաստատութիւնք։



Եւ այլ ևս. զի եթէ արեգակն և լուսինն չև ևս էին լեալ, որով ժամքն և աւուրք և ամիսք և տարիք կարգին[109], հազար ամն ուստի՞ երևէր. զի չէին ի միջի լուսաւորքն, որք զթիւ աւուրց և ամսոց և տարեաց կարգէին. այլ յայտ է՝ թէ անմտութեամբ լի են բաջաղանքն։

Դարձեալ թէ[110] երկինք և երկիր և որ ի նոսայն՝ չէին, ո՞ւր առնէր զյաշտն կամ ի՞ւ. Յորժամ երկիր չէր և ոչ ուռենիք ինչ որ ի նմանէ, զբարսմունսն ուստի՞ զատանէր ունել ի ձեռին. կամ ընդ զի՞նչ իսկ յաղէր, զի անասունք չև ևս էին արարեալ[111]։ Եւ որ քան զամենայն անմտագոյն է, զհազար ամ, ասեն, յաշտ արար. և յետ հազար ամին յերկուացաւ. ասէ՝ թէ լինիցի՞ ինձ որդի Որմիզդ, և եթէ չլինիցի. և ի զուր ինչ վաստակիցիմ։ Եւ այնու ցուցանէ՝ թէ տկար էր Զրուանն և կարօտ[112] և առանց[113] գիտութեան. և պատճառ[114] չարեացն նոյն է, և ոչ Արհմն։ Զի եթէ նորա[115] չէր յերկուացեալ, որպէս ասենն[116], Արհմն ոչ լինէր[117]. այլ ինքն երկմտեաց, որ անզօր չարեացն արարիչ հայրացաւն. այլ ինքն երկմտեաց հաւատն է և լի անկարգութեամբ...։

(II, Գ)

6.

Դարձեալ ասեն. «Զբարսմունսն զոր ի ձեռին ունէր, ցորդին[118] իւր ցՈրմիզդ ետ, և ասէ. «Ցայժմ ես վասն քո յաշտ առնէի, յայսմ հետէ դու վասն իմ առնիցես»։

Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր, զի որդի լինիցի նմա[119], իսկ Որմիզդ վասն նորա յո՞ր աստիս առնէր. մի թէ կասկա՞ծ ինչ ուստեք էր նմա, և այնր աղագաւ պատուիրէր նմա վասն իւր յաշտ առնել, մի թէ յումմէ զորդի՞ն խնդրեաց, թէ զուգէ ընդ որդւոյն տայր՝ զնա բաժ առնուցու։ Եթէ այն ինչ ի մահ էր նորա, բարսմունքն ինչ ոչ կարէին օգնել. և ի տալ[120] զբարսմունսն ասաց նմա՝ թէ «Դու ինձ յաշտ առնիցես», զի ցուցցէ թէ էր ումն՝ որում նա վասն որդւոյն յաշտ առնէր. և որդւոյն պատուիրեաց վասն իւր նմին յաշտ առնել։

Եւ եթէ էր ոք ի վեր քան զնա և քան զորդին, որում զյաշտն առնէին, զնա պարտ էր իմանալ պատճառ իւրեանց և արարիչ ամենեցուն, և ոչ զԶրուան պատճառ Որմզդի և Արհմնի. և զնոսա արարիչ չարեաց և բարեաց։ Քան Զրուանայ որդի արարիչ տայր, որ ի վերն քան զԶրուանն էր, ինքն իսկ իրաւի՞ չկարէ՞ր զերկինս և զերկիր և որ ինչ ի նոսա՝ առնել, որպէս յառաջագոյն ասացաւ, և զիւր զօրութիւնն և զբարերարութիւնն ցուցանել։ Կամ թէ յորդւոյն իւրմէ Արհմնեայ կասկած ինչ էր նմա[121],

և վասն այնորիկ զբարսմունսն յՈրմիզդ[122] տայր, զի նորօք յաջող արարեալ վերադարձին՝ անկասկած լինիցի, ապաքէն պարտ էր ուրեք ի միջի լինել[123], որում զյաջողն առնէր։ Եւ եթէ էր որ ի միջի՝ որում օրէն էր զյաջողն առնել, ապա Զրուանն չէր մշանջենաւոր, այլ յումեքէ եղեալ[124]։ Եւ պարտ է խնդրել[125] յումէ՝ նայն եղև. և ո՞վ էր՝ ում ինքն զյաջողն առնէր, և ով այն՝ որում որդւոյն հրամայեաց վասն իւր յաջող առնել։ Զի ո՞չ է մարթ ումեք սկիզբն առնուլ լինելոյ[126], եթէ ոչ յայլմէ առնուցու զլինելն. և աստուած միայն կարող իցէ առնել յոչընչէ ինչ որպէս և կամի։ Եւ արդ ո՞վ իցէ որ զԶրուանն արար, եթէ ոչ աստուած, որում և զյաջողն առնէր. որ և որդի այնպիսի եա նմա, զի զերկինս և զերկիր և որ ի նոսա՝ առնիցէ։ Եւ այն են զարմանք[127] զի ինքն ոչ արար, և որդւոյն Զրուանայ կարող է տալ զառնելն։

Այլ չէր որ ի միջի, ասեն, որում Զրուան զյաջողն առնէր. եթէ այնպէս իցէ. և ոչ Զրուանն իսկ էր. և մեծի ծաղու արժանի է, զի չէրն չէին վասն չէին յաջող առնէր[128]։

(II, b)

## Ա. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ (5-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

*(Հատվածներ)*

### 1.

Ընդ նուազել[1] ժամանակաց թագաւորութեանն Պարթևաց, ի բառնալ[2] տէրութեանն յԱրտաւանայ որդւոյ Վաղարշու, ի սպանանել[3] զնա Արտաշրի որդւոյ Սասանայ,— որ էր նախարար ոմն ի Ստահր գաւառէ, որ եկեալ[4] միաբանեաց զզօրս Պարսից, որք լքին խոտեցին մերժեցին[5] անարգեցին զտէրութիւնն Պարթևաց, և հաճեցան հաւանութեամբ ընտրել զտէրութիւնն Արտաշրի որդւոյ Սասանայ,— արդ իբրև լեա մահուն հասանելոյ[6] զուժս այսորիկ առ Խոսրով թագաւորն Հայոց,— որ էր երկրորդ տէրութեանն Պարսից, զի որ Հայոց թագաւոր էր՝ նա էր երկրորդ Պարսից տէրութեանն,— արդ՝ թէպէտ և վաղու լուեալ[7] զբօթն՝ ոչ ինչ ժամանեաց հասանել[8] յամբոխ գործոյն պատերազմի իւրոյն պատրաստութեան[9]։ Յետ այսորիկ դարձեալ լինէր յիւրացն եղելոց մեծաւ տրտմութեամբ, զի ոչ եհաս[10] ինչ նմա գործել գործ. ի մեծ ի տրտմութենէն և յիւրացն վճարելոյ դարձեալ անցեալ եկեալ լինէր[11] յաշխարհն իւր։

Արդ՝ ի միւս ևս ի գլուխ տարւոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց գունդ կազմել և զօր բովանդակել, գումարել զզօրս[12] Աղուանից և Վրաց, և բանալ զդրունս Ալանաց[13] և զճորայ պահակին, հանել զզօրս Հոնաց[14], ասպատակ դնել[15] ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ասորեստանի մինչև ի դրունս Տիզբոնի։ Աւար առեալ զերկիրն ամենայն՝ յապականութիւն դարձուցանէր զշինանիստ քաղաքացն և աւանացն ցանկալեաց. զշէն երկիրն ամենայն թափուր և աւերակ թողոյր. ջնջել ի միջոյ ի բաց կորուսանել, խլել քակել, հիմն ի վեր քանդել առնել, համարէր[16] բառնալ զօրէնս տէրութեանն Պարսից։ Ուխտ եղեալ միանգա-

մայն[17] վրէժ խնդրել մեծաւ բռնութեամբ զանկանելն իւրեանց ի տէրութենէն. այսօր այսու չանայր զվրէժ խնդրել, մեծաւ բռնու նախանձաբեկ լինելով. մեծամեծս փութայր՝ ի բազմութիւն զօրացն այսպատան եղեալ, և ի քաջութիւն զօրացն յուսացեալ։ Վաղվաղակի ի Թիկունս հասանէրին մեծաւ բազմութեամբ ձիւ և քաջ առն և ձիոյ և բուռն կազմութեամբ Աղուանք, Լփինք և Ճիղպք, Կասպք[18] և այլ ևս որ ի սմին կողմանց, զի զվրէժ արեանն Արտաշատայ խնդրեսցեն։

Զի Թէպէտ և էր ինքն ի մեծի արամութեան վասն բնութեան եղբայրութեան ազգատոհմին[19], զի հնազանդեցան և ի ծառայութիւն մտին Համբարձելոյ Թագաւորութեան Սասանացւոյն, և ընդ նմին միաբանեցան[20]. զի Թէպէտ և էր խռովեալ և դեսպան արարեալ, զի իւրեանց առհմայինքն ի Թիկունս եկեսցեն և նոցա ընդդէմ կայցեն ընդ նորա Թագաւորութեանն, անուր այս ձեռն առեալ ի կողմանց Քուշանաց[21], և յայնժմ մարզէ և յիւրեանց ի բուռն աշխարհէն և ի քաջ ազգաց և ի մարտիկ զօրացն զի ի Թիկունս հասցեն. սակայն տոհմքն և ազգապետքն և նախարարքն և նահապետքն Պարթևաց ոչ լինէին ունկնդիր. զի միաբանեալ և հաւանեալ և հնազանդեալ էին ի տէրութիւնն Արտաշրի, քան ընդ տէրութիւն իւրեանց ազգատոհմին և եղբայրութեանն։

Սակայն առեալ խռովիւ[22] զբազմութիւն զօրաց իւրոց, և որ ուստեք ուստեք եկեալ հասեալ էին ի Թիկունս օգնականութեան[23] նիզակակիցք զօրացն պատերազմի։ Իսկ իբրև ետես Թագաւորն Պարսից զայն անբաւ բազմութեան[24] գնդի, զի մեծաւ ուժով դիմեալ եկեալ հասեալ էին ի վերայ նորա՝ եւ և նա ընդ առաջ նոցա ի պատրաստութիւն պատերազմի։ Բայց սակայն[25] ոչ կարաց ունել զդէմ նորա, փախստեայ լինէր առաջի նոցա. զհետ մտեալ կոտորէին զամենայն զօրսն Պարսից, և զաշտացն և ճանապարհացն ցիր ցիրաթեալ կացուցանէին և չարախտաւոր վառնէին[26] և անհնարին հարուածս ի վերայ հասուցանէին։ Եւ Թագաւորն Հայոց դառնայր ի մեծ կատարածէն մեծաւ յաղԹութեամբ և բազում աւարաւ և ցնծալից ուրախութեամբ ի կողմանսն Հայոց յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք, մեծաւ ուրախութեամբ և բարի անուամբ և բազում աւարաւ։

Ապա հրաման տայր ընդ կողմանս կողմանս[27] դեսպանս արձակել, հրովարտակս առնել, յաղԹն բազինս մեհենիցն[28] ուխտաւոր լինել պատկերաց կոոց դիցն պաշտամանս։ Սպիտակ ցլուք և սպիտակ նոխազօք, սպիտակ ձիովք և սպիտակ ջորովք, ոսկեղէն և արծաթեղէն զարդուք, ի վերջաւորս փողփողեալս, նշանակաւ պալարակաւ մետաքսիւքն և ոսկովք պսակօք և արծաթի զոհարանօք,



յանօթս ցանկալիս ակամբք պատուականօք, ոսկով և արծաթով, ի հանգերձս պայծառս և ի զարդս գեղեցիկս, զիւր ազգին Արշակունեաց զհայրենեացն[29] պաշտամանց տեղիսն մեծարէր[30], նա և հինգերորդ ևս հանէր[31] յամենայն մեծամեծ աւարացն ածելոց, և մեծամեծ պարգևս քրմացն շնորհէր։ Իսկ զօրացն որ դիպեցեալ էին՝ նա պարգևս և արձակեաց յիւրմէ։

Իսկ ի գալուստ[32] ամին միւսոյ զօր բազում կուտէր[33] յոյժ, զումարտակ առնէր, զնոյն զօր կոչէր, և ևս բազում քան զնոյն ապատակ սփռեալ զկողմամբքն[34] Ասորեստանի. մանաւանդ զի և զօրք Տաճկաց[35] ի Թիկունս եկեալ էին. աւար առեալ զերկիրն ամենայն՝ քաջութեամբ դառնային յիւրաքանչիւր[36] տեղիս։ Եւ ամս մետասան ամէ ամէ զայս օրինակ աւար առեալ՝ աւերէին զամենայն երկիր սահմանացն, որ ընդ Պարսից Թագաւորութեամբն և ընդ իշխանութեամբն էր։

Իսկ իբրև զայն ամենայն չարիս ետես Թագաւորն Պարսից, որ եկին հասին ի վերայ նորա՝ նեղեցաւ, տառապեցաւ, տագնապեցաւ[37], վարանէր յանձն իւր. առ ինքն կոչէր զամենայն Թագաւորս և զկուսակալս և զնախարարս և զզօրավարս և զպետս և զիշխանս իւրոյ տէրութեանն. ի խորհուրդ մտանէր. աղաչէր զամենեսեան՝ հնարս ինչ մարթել խնդրել գտանել. աղէ աղէ պարգևս խոստանայր, Թէպէտ ոք միայն գտցի, ասէ, որ զվրէժս հատուցանէն խնդրել մարթասցէ. յերկրորդական զահ իւրոյ տէրութեանն մատուցանել խոստանայր, Թէ միայն նախանձու մեծի ձեռն արկեալ հատուսցէ ոք. բայց միայն աԹոռոյս ևս ի վեր եղէց քան զնա, եԹէ կարի յանդգնեաց ոք իցէ կամ ի պատուականաց. աղէ աղէ պատիւս և պարգևս և վարձուց հատուցմունս շնորհել խոստանայր։

Արդ՝ այն ի միջոյ խորհրդեանն գլխաւոր նահապետ էր ՊարԹևաց տէրութեանն, որոյ անուն էր Անակ. յառն կացեալ, ի մէջ անցեալ՝ յիւրմէ ազգէն իբրև ի Թշնամւոյ վերայ[38] խոստանայր վրէժ խնդրել։

Խօսել սկսաւ ընդ նմա և ասէ. «ԵԹէ միայն զայդ նախանձ[39] խնդրեսցես միամտութեամբ»[40] զինուԹիւնն պարԹևական գձեր սիփական Պալհաւն ի ձեզ դարձուցից, Թագ Թող եդեալ փառաւորեցից, և երկրի և փառաւոր ի Թագաւորութեանս իմում արարից, և երկրորդ ինձ կոչեցից»։

Պատասխանի ետ ՊարԹևն և ասէ. «Զմնացորդս ազգի իմոյ կեցուսցես դու. այլ ես և եղբայր իմ հարազատ այսօր հրաժարիմք ի քէն»։

Յայնժմ ժամանակի հանդերձեցաւ կազմեցաւ[41] ՊարԹևն եղբարբն իւրով հանդերձ, բնտանեօք կանամբք և որդւովք և ամե-

նայն աղխիւ իւրեանց. չու արարեալ յուղի անկեալ[42], դէտ ակն կալեալ[43] ճանապարհացն՝ եկեալ երթայր հասանել պատճառաւ[44] ի կողմանս Հայոց, իբրև թէ ապստամբեալ իցէ յարքայէն Պարսից։ Եկեալ յանդիման եղև թագաւորին Խոսրովու յՈւտի գաւառի, ի Խաղխաղ քաղաքի, ի ձմերոցս արքայութեանն Հայոց։

Իբրև ետես թագաւորն Հայոց՝ ցնծացեալ ել ընդ առաջ նորա և մեծաւ խնդութեամբ ընկալաւ զնա. մանաւանդ իբրև կեղծաւորութեամբ և դաւով սկսաւ խօսել ընդ նմա և զիւրոյ գալոյն հաւատարմութիւն ցուցանել. «Վասն այնորիկ եկի ես առ քեզ, ասէ, զի հատուցից[45] զհատուցանելոյ վրէժ խնդրել մարթացուցից»։

Արդ՝ իբրև ետես թագաւորն զայրն, զի դիմեալ եկեալ էր առ նա[46] ամենայն ընտանեօքն հանդերձ, և մտերմութեամբ հաւատաց ի նա. յայնժամ ետուր նմա պատիւ ըստ օրինաց թագաւորաց, և հանէր նստուցանէր զնա յերկրորդ աթոռ թագաւորութեանն. և զամենայն ժամանակս ձմերայնոյն ուրախութեամբ զաւուրս ցրտաշունչ հողմաշունչ սառնամանեացն անցուցանէին։

Իսկ իբրև եկին հասին աւուրք ջերմոյ հարաւահողմն գարուն գրանցն բանալոյ[47] համբարձաւ[48] թագաւորն ի կողմանցն յայնցանէ. եկին իջին[49] յԱյրարատ գաւառ, ի Վաղարշապատ քաղաք. և մինչդեռ ուրախութեամբ հանգուցեալ էին, ի միտ արկեալ թագաւորին՝ գումարտակ առնէր՝ անցանել արշաւել ի կողմանս Պարսից։

Իբրև զայն լսէր Պարթևն՝ վերջացեալ ուխտին[50] յիշէր որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր։ Նա և զխոստմունսն յիշէր զպարգևացն[51], և ի բուն աշխարհն փափագէր որ Պահլաւն կոչէր, և վասն խորհրդոց ի միտ արկանէր. առնոյր զթագաւորն մեկուսի նա և եղբայր իւր հարազատ՝ իբրև ի պատճառս ինչ զրուցանաց, իբրև խորհուրդ ինչ խորհել ընդ նմա. և զսուսերսն պողովատիկս թերաքարեայս ունէին. յանկարծ յեղակարծումն[52] ժամանակի զէնս վերացուցեալ՝ զթագաւորն զետեղեալ կացուցեալ յերկիր կործանէին։ Անդստին աղաղակն իբրագոյժ եղեալ իբրև որ եղեն՝ զոյժ աղաղակի ամբոխին թանձրանայր. մինչ այս մինչ այն՝ նոքա հեծեալ յիւրաքանչիւր[53] երիվարս փախստական լինէին։

Իսկ իբրև զայն գիտացին նախարարք հայկական զօրացն՝ զունդ զունդ հասանէին[54], զկնի լինէին. ոմանք ընդ ցամաքն աճապարեալ, հասանել ի խելս կամրջացն առ գրունս Արտաշատ քաղաքի։ Զի գետն Երասխ յարուցեալ գայր լի դարիւ և դարիւ, ստահակ, ջրակուտակ, ձիւնատոյգ, ձիւնախաղաղ բազմութեամբն յաւուրս իւրոյ պղտորութեանն։ Կէսքն անցեալ ընդ կամուրջն Վաղարշապատ քաղաքի, զոր և կամուրջ Մեծամօրի կոչեն՝ աճապարէին



հասանել յառաջ մի[54] խելս կամրջին Արտաշատու։ Ի կիրճս ճանապարհացն արգելին զնոսա, ի մէջ արարեալ զնոսա՝ ի Տափերականն կամրջացն գետակէծ առնէին զնոսա։ Եւ խնդեանք անդրէն դարձեալ՝ վայիւք, ճչովք և ողբովք, և ամենայն երկիրն ժողովեալ զթագաւորն աշխարէին։

Եւ մինչ դեռ ջերմ ոգին[55] ի ծոցոյն չև էին թափեալ, և չև ևս վախճանեալն չև էր հասեալ՝ հրաման տայր զազգատոհմն սատակել։ Յայնժամ սկսան սատակել և կոտորել. մինչև ոչ թողին յերիտասարդաց մինչև յայն՝ որ ընդ ստեան կաթն ոչ դիտէր. նաև զերդակաց տոհմն մաշէին[56] ի սուր սուսերի[57] իւրեանց։ Բայց միայն երկուս մանկունս փրկեալս յորդւոցն Պարթևին ապրեալ ումն ապրեցուցանէր ի ձեռն դայեկաց ուրումն. զմին ի կողմանս Պարսից, և զմին ի կողմանս Յունաց առեալ փախչէին։

Եւ եղև[58] իբրև լուաւ զայս ամենայն թագաւորն Պարսից զուարճանայր[59], զուարթանայր, առնէ մեծ ուրախութեան առնէր զօրն զայն, և բազում ուխտ արարուցանէր կատարել։ Զօրաժողով լինէր, խաղայր գնայր, առաջատակ արշաւէր զկողմամբքն[?] Հայաստան աշխարհին. գերէր և կողոպտէր, զմարդ և զանասուն, զծեր և զտղայ, զերիտասարդ և զմանուկ առ հասարակ խաղացուցանէր[60] ի գերութիւն։

Անդ ումն ապրեալ ազատեցուցանէր ի հինէ անտի յորդւոցն Խոսրովու թագաւորին Հայոց՝ մանկիկ մի փոքրիկ, անուն Տրդատ, առեալ դայեկացն փախուցեալ ի դուռն կայսեր ի կողմանս Յունաց։ Եւ զերկիրն[61] Հայոց այնուհետև եկեալ արքային Պարսից յիւր անուն զանգիրն անուանէր. և զզօրսն Յունաց փախստական արարեալ Հայաստանեան տանէին մինչև ի սահմանս Յունաց։ Վիճս փորեալ՝ ամրացուցեալ՝ սահմանս հաստատէին, և անդուստ անուն եդեալ Դրան Փոսիդ, առ անդեանն որում[62] Սոյզն կոչէին։ Եւ զայլ մարզից երկրին խաղացոյց, և զաշխարհն յինքն գրաւեաց։

2.

...Յաւուրս ժամանակացն այնոցիկ զօրաժողով լինէր իշխանն Դիթայ[63], և բազում գունդս զօրաց ժողովեալ՝ գայր առ Մարտ պատերազմի[64] ընդ իշխանին Յունաց։ Պատգամս յղէր օրինակաւ այսուիկ, եթէ «Ընդէ՞ր ընդ նմանեմ խառնամբխ ի պատերազմ՝ այսուհետև զզօրս մեր, և վասն և տագնապ մեծանգամայն աշխարհի հասուցանեմք. ես առանձին ելանեմ ընդ ի մէջոյ զօրաց ասպարի, և դու ինձ ի յանդիմանակ այսր. հաղթող եղիցուք ի մարտի անդ. եթէ ես զքեզ յաղթահարեցից՝ Յոյնք ինձ հնազանդեսցին ի ծառայութիւն. և եթէ դու ինձ յաղթեսցես՝ մեք կեանօք ընդ

նուաճեսցին և հնազանդեսցին և առանց արեան և կոտորածոյ լիցի շինութիւն կողմանցս երկոցունցս։

Եւ իբրև զայն ամենայն լուաւ Թագաւորն Յունաց՝ երկեաւ. քանզի սրինօք կազմութեամբ, գունդ առ գունդ ճակատել ոչ առնուլին յանձն, և ըստ պատգամին պատշաճի ոչ կարէր ունել յանձին, քանզի տկար էր յանկերպոց[64] զօրութեամբ, սրտաթափ եղեալ զարհուրեցաւ[65], քանզի ոչ գիտէր, զինչ տացէ բանիցն պատասխանի[66]։

Յայնմ ժամանակի հրաման տայր Թագաւորն՝ հրովարտակս և դեսպանս առնել առ իշխանս և զօրս զօրութեան[67] իւրոյ, զի ուր և իցեն՝ առ նա հասանիցեն վաղվաղակի։ Յայնմ ժամանակի իշխանք և զօրք և նախարարք առ նա հասանէին վաղվաղակի։ Առեալ և Լիկիանէ զբուն գունդն որ ընդ իւրով ձեռամբն էր՝ փութայր հասանէր ի տեղի պատերազմին՝ յանդիման լինել Թագաւորին, և Տրդատէս ընդ նմա։

Եւ մինչ դեռ գային գունդք զօրացն[68] դէպ եղև նոցա գալ մտանել ի նեղագոյն տեղի մի, յառաւամէջս այգնատանեայն, ի փողոցամէջս համբարացացն, առ դրունս քաղաքին. քանզի զդրունս քաղաքին ալխեալ էր[69], զի ժամ էր հասարակ գիշերոյ[70]։ Իբրև ոչ գտան խար երիվարաց զօրուն բաղմութեան դարման կերակրոյ մինչև ի մէջ գիշեր՝ հայեցեալ տեսանէին ի դաւարափակ քաղաքարդի մերոյ՝ զի խառահամբար մթերեալ էր. և ոչ որ կարաց ձգել զձեռն իւր վասն որմոյն բարձրութեան։ Յայնժամ Տրդատէս եկեալ և իջեալ՝ հանէր ընկենոյր բարդս բարդս[71] ի մէջ զօրացն մինչ ի լիութիւն բաւականի[72]։ Նա և զհամբարապահսն իսկ և բաղումս ի շանց յայնկոյս որմոյն ընկենոյր ի մէջ զօրացն, և ինքն անդրէն եկեալ իջանէր։

Զայն ամենայն ոյժ ընդդիմութեան[73] տեսեալ Լիկիանէս զարմացաւ։ Իսկ իբրև այգն զառաւօտն մերկացաւ[74] դրունք քաղաքին բացան, և զօրքն ամենայն առ հասարակ ի ներքս մտանէին. և Լիկիանէս յանդիման լինէր Թագաւորին, և ամենայն մեծամեծքն և սպարապետքն և զօրագլուխքն և իշխանքն[75]։

Ապա կալ պատմեաց Թագաւորն իշխանացն զամենայն պատգամս Թագաւորին Գոթաց։ Յայնժամ խօսել սկսաւ Լիկիանէս ընդ արքային և ասէ. «Մի՛ ինչ զարհուրեսցի սիրտ տեառն իմոյ. զի գոյ աստ այր մի ի դրան քում, զի իբրև այգ[76] նուազ վճարին[77]. Տրդատէս անուն նորա, ի տոհմէ Թագաւորին Հայոց աշխարհին։ Եւ կալ պատմեաց զերեկորին զգործս քաջութեան[78] նորա։ Յայնժամ հրաման ետ, և ածին զՏրդատիոս[79] յանդիման Թագաւորին. և պատմեաց նմա կարգաւ զամենայն։ Յայնժամ ժամ եառն կազմութեան մարտի՝ առ ի ժամ վաղուի զմիմեանս տեսանել պատերազմաւ։

Իսկ ի միւսում աւուրն ընդ այգն ընդ առաւօտն հրամայեաց արկանել ծիրանիս[80]. և զարդարեցին զՏրդատիոս ի զարդ[81] կայսերական, արկեալ զնովաւ զնշան Թագաւորութեանն. և ոչ որ գիտէր վասն նորա. հրաման եւ ամենեցուն, թէ ինքն իսկ կայսրն իցէ։ Եւ նորա առեալ զգունդն զօրաց բաղմութեան՝ ի ձայն[81] փողոյ տագնապաւ յառաջ մատուցանէր մինչև յանդիման թշնամեացն։ Իբրև յանդիման եղեն միմեանց կայսերականերցն և Թագաւորն՝ մարտ ի կուշտ արարեալ երիվարացն[82] ի միմեանս հասանէին. անդ յաղթահարէր կայսերականերցն զԹագաւորն. ձերբակալ արարեալ՝ ածեալ յանդիման առաջի կայսերն կացուցանէր։

Յայնժամ մեծացոյց յոյժ Թագաւորն զՏրդատիոս, և մեծամեծ պարգևս ետ նմա. Թագ կապեաց ի գլուխ նորա և ծիրանեօք զարդարեալ մեծացոյց զնա, և կայսերականերցն զարդու[83] շքեղացուցեալ մեծարեաց զնա. և գումարեաց ի ձեռս նորա զօրս բաղումս յօգնականութիւն նմա, և արձակեաց յիրական[84] աշխարհն Հայոց։

(էջ 15—29)

## Զ. ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ (5-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

(Հատվածներ)

### 1.

### Յաղագս անիմաստասէր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց

Կամիմ զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց նախնեացն ոչ առանց յիշատակի բամբասանաց թողուլ, այլ աստէն իսկ[1], ի սկզբան մերոյ գործառնութեանս, զվասն նոցա կշտամբութեան յարմարել զբանս[2]։ Զի թէ արդարև արժանի գովութեան այնք ի թագաւորաց իցեն[3], որք գրով և պատմութեամբ զիւրեանցն հաստատեալ կարգեցին զժամանակս[4], և զգործս իմաստութեան և զքաջութիւն իւրաքանչիւր արձանացուցին ի վէպս[5] և ի պատմութիւնս՝ ըստ նոցանէ[6] և զարդարեալքն այսպիսեաւ ճգնութեան[7] գիտնականքն մատենից՝ ներբողականաց ի մէնջ արժանի եղեն ասից[8]. ի ձեռն որոց և մեր յընթեռնուլն[9] զառ[10] ի նոցանէ շարամանս բանից՝ ըստ աշխարհահորէն[11] կարգաց իմաստնանալ ասեմք. և քաղաքականս ուսանել[12] կարգս, յորժամ զայսպիսիս[13] ընթերցանիցեմք իմաստութեան[14] ճառս և զբուցատրութիւնս[15], որք են Քաղդէացւոց և Ասորեստանեայց, Եգիպտացւոց և Հելլենացւոց[16]. առ այսորիկ և փափագիցեմք եւ արդեօք իմաստութեան արանցն այնոցիկ, որ զայսպիսի փոյթ յանձին կալան. այսպ ուրեմն ամենեցուն մեզ յայտնի է թագաւորացն մերոց և այլոց առաջնոցն առ ի յիմաստն[17] անմտութիւն, և անհոգութիւն ոգւոյն բանականին։ Զի թէպէտ և եմք ածու փոքր, և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար, և ընդ այլով[18] յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին[19] գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի, զոր և ոչ մի ոք ի նոցանէ պէտս յանձին կալաւ



ժառանգելոյ։ Արդ՝ այնոքիկ, որ և ոչ անձանց խորհեցան բարի առնել, և առնել յիշատակի յաւիտենի թողուլ, զի՞ արդեօք և մտադրութիւն մեր այնպիսեացն ի ճահ պատահիցէ[20], զմեծամեծսն ի նոցանէ պահանջել և որ ինչ հնագոյն քան զնոսա։

Այլ ասիցէ ոք արդեօք. վասն ոչ լինելոյ գիր և դպրութիւն ի ժամանակին, կամ վասն պէս պէս պատերազմացն, որ կուռ զմիմեանց զկնի ի վերայ գային։ Այլ ոչ արդարև այսորիկ կարծեցեալանց զկնի ի վերայ գային։ Այլ ոչ արդարև այսորիկ կարծեցեալ էին. քանզի դատանին[21] և միջոցք լեալ պատերազմացն, և գիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց, եւ և իւրաքանչիւր տանց տանձնականութեանց և հանուրց հասարակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ դրուցաց[22] մատեանք, մանաւանդ որ ի սեպհական[23] ազատութեան պայազատութիւն։ Այլ ինձ թուի, որպէս այժմ՝ և առ հնոյն Հայաստանեայցս լեալ[24] անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանաւորաց։ Վասն որոյ աւելորդ է մեզ և այլ յաղագս արանց անբանից, թուլամոլաց, վայրենեաց ճառել։

Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն, որ ի սկզբանցն մերոց ազգաց[25] մինչև ցայժմուս միայն գտար զայսպիսւոյ մեծէ իրէ[26] բուռն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել—երկար և շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշգիւ՝ զթագաւորացն և զնախարարականաց ազգաց և տոհմից թէ ո՛վ յումմէ, և զի՛նչ իւրաքանչիւր ոք ի նոցանէ գործեաց, և ո՛վ ոք ի ցեղիցս որոշելոց[27] բնտանի և մերազնեայ, և ո՛յք ամանք եկք բնտանեցեալք և մերազնացեալք. և զգործս և զժամանակս իւրաքանչիւր գրով դրոշմել, ի ժամանակէ անկարգ ամբարտակին շինուածոյ[28] մինչև ցայժմ.—զեղեցի՛կ զայս քեզ[29] համարեալ ի փառս և անջան հեշտութիւն...։

(I, Գ)

### 2.

### Յաղագս պատմութեանն Հայկայ

«Այս[30], ասէ[31], Հայկ գեղապատշաճ և անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբազուկ[32]։ Սա ի մէջ սկայիցն քաջ և երևելի լեալ[33], և ընդդիմակաց ամենեցուն, որք ամբառնային զձեռն միապետել ի վերայ ամենայն սկայիցն և դիւցազանց։ Սա խրոխտացեալ ամբարձ զձեռն ընդդէմ բռնաւորութեանն Բելայ, ի տարածանել[34] ազգի մարդկան ընդ լայնութիւն ամենայն երկրի, ի մէջ բազմախոյս սկայիցն, անհուն խոլաց և ուժաւորաց։ Քանզի անդ[35] մոլեգնեալ այր իւրաքանչիւր[36], սուր ի կող ընկերի իւրոյ

ձգելով՝ չանաչին տիրել ի վերայ մեծեանց. ուր պատահմունք ի մէջ եկանէին[37] Բելայ՝ բանանալ ունել[38] զամենայն երկիր: Որում ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ[39] գնայ յերկիրն Արարատայ[40] որ է[41] ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք, թուով իբրև[42] երեքհարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր ստացուածովք. բնակէ ի ստորոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուեալքն դադարեալ[43] բնակէին. զորս հնազանդ իւր արարեալ Հայկ՝ շինէ անդ[44] տուն բնակութեան կալուածոց[45] և տայ ի ժառանգութիւն Կադմեայ՝ որդւոյ Արամանեկայ: Այս արդարացուցանէ զանգիր հին աւանդեալ զրոյցս:

«Եւ ինքն խաղայ, ասէ[31], այլով աղխին ընդ արեւմուտս[46] հիւսիսոյ. գայ բնակէ ի բարձրաւանդակ դաշտի միում, և անուանէ զանուն լեռնադաշտին Հարք, այս ինքն թէ հարք են աստէն բնակեալք՝ ազգի տանն Թորգոմայ: Շինէ և գիւղ մի, և անուանէ յիւր անուն Հայկաշէն: Յիշի աստանօր ի պատմութեանս՝ ի հարաւոյ կողմանէ[47] դաշտիս այսորիկ, առ երկայնանիստ միով լերամբ, բնակեալ յառաջագոյն արք սակաւք, ինքնակամ հնազանդեալ[48] դիւցազինն: Արդարացուցանէ և այս զաւանդեալ զրոյցս անգիրս:

(I, ժ)

3.

## Յաղագս պատերազմին և մահուանն Բելայ[49]

Եւ յաւուրս մատուցեալ զրանս իւր ասէ[50], թէ ի հատուածոր[51] Տիտանեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց առ Հայկ[52] արամբք հաւատարմօք, գալ նմա ի հնազանդութիւն և կեալ խաղաղութեամբ[53]: «Բնակեցեր, ասէ, ի մէջ ցրտութեան[54] սառնամանեացն, այլ ջեռուցեալ մեղմեա՛ զցրտութիւն սառուցեալ քո հպարտացեալ բարուցդ. և հնազանդեալ ինձ՝ կեա՛ց ի հանդարտութեան, ո՛ր հաճոյ է քեզ յերկրիս իմում բնակութեանս»: Եւ ի բաց դարձուցեալ Հայկայ[55] զպատգամաւորսն Բելայ՝ խստութեամբ պատասխանեաց[56], դառնայ աւետեացն անդրէն ի Բաբելոն[57]:

Այլ զօրաժողով լինի ի վերայ նորա Տիտանեանն Բէլ ամբոխիւ հետևակ զօրաց. գայ հասանէ ի հիւսիսի, յերկիրն Արարատայ, մերձ ի տունն Կադմեայ: Փախստական լինի Կադմոս առ Հայկ,



քաջընթացիկս առաջի իւր առաքէ. «Գիտեա՛, ասէ, ո՛վ մեծդ դիւցազանց[58], զի դիմեալ գայ ի վերայ քո Բէլ յաւիտենիւք քաջօք և երկնաձիգօք հասակօք սկայիւք մրցողօք[59]: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ՝ փախեայ, և գամ աստանօր փութանակաւ: Արդ աճապարեա՛ խորհել զոր ինչ գործելոց ես»:

Իսկ Բէլն, յանդուգն և անճոռնի զօրութեամբ ամբոխին, որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառ ի վայր հեղեղեալ՝ փութայր հասանել ի սահմանս բնակութեանն Հայկայ, ի սիրտ և ի մարմին վստահացեալ արանց զօրաւորաց: Այլ ուշիմ և խոհեմ սկայն[60] քաջագանգուրն և խայտակնն, աճապարեալ հաւաքէ զորդիս իւր[61] և զթոռունս, արս քաջս և աղեղնաւորս, թուով յոյժ նուազունս, և զայլսն որ ընդ իւրով ձեռամբ[62], հասանէ յեզր ծովակի միոյ, որոյ ջուրք աղի են, մանունս[63] ունելով յինքեան ձկունս: Եւ կոչեցեալ զզօրս իւր՝ ասէ ցնոսա. «Յեկանելն[64] մեր հանդէպ ամբոխին Բելայ, ջանասցուք հասանել տեղւոյն, ուր անցեալ կայցէ ի մէջ խուռն քաջացն Բէլ: Զի կա՛մ մեռցուք, և աղխ մեր ի ծառայութիւն Բելայ կացցէ, կամ զաջողութիւն մատանց մերոց ի նմա ցուցեալ[65] ցրուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթութեան ստացեալք»:

Եւ յաւուր կոյս անցեալ բովանդակ ասպարէզս՝ հասանեն ի միջոց[66] ինչ դաշտաձև՝ լերանց բարձրագունից: Եւ յայմէ[67] ջուրց հոսանաց ի բարձրաւանդակում[68] կուռ[69] կալեալ ի տեղւոջ. ի վեր գերեաս ամբարձեալ[70] երևեցան նոցա բազմութիւն անկարգ հրոսակի ամբոխոյն Բելայ, ցան և ցիր յանդուգն յարձակմամբ ընդ երեսս երկրին սուրալով. իսկ Բէլ հեզ և հանդարտ ամբոխիւ մեծաւ ի ձախմէ[71] ջրոյն ի վերայ բլրոյ[72] միոյ, իբրև ի դիտանոցի[73]: Ծանեաւ Հայկ զխումբ վառելոյ ջոկատին, յորում Բէլ առաջի ամբոխին եկեալ համեալ ընտրովք և վառելովք[74] ամբոխն. և երկայր միջոց ճանապարհի ընդ նա և ընդ ամբոխն[75]: Եւ ինքն գլխանոց առուցեալ երկաթի, նշանաւորօք[76] վերջիւք, և ասպատակս պղնձիս թիկանց և յանչաց, և պահպանակս բարձից[77] և բազկաց. գօտեւորեալ զմէջսն, և յաջմէ կողմն երկսայրի. և նիզակ ունէր ի ձեռին իւրում աջոյ և յահեկում վահան, և ընտրեալք յաջմէ և ի ձախմէ: Եւ տեսեալ Հայկին[78] զՏիտանեանն կուռ վառեալ, և զարս ընտրեալս ընդ նմա աջմէն և ահեկէն՝ կարգէ զԱրամանեակ երկու եղբարբք ընդ աջմէ, և զԿադմոս և զայլս երկուս յորդւոց իւրոց ի ձախմէ, զի արք կորովիք էին յաղեղն և ի սուսեր. և ինքն առաջի, և զայլս հրոսակին զհետ իւր կարգեաց. երեքանկիւնիմն կարգեաց ձևով[79], հանդարտ յառաջ մատուցեալ:

Եւ հասեալ երկոցունց կողմանց սկայիցն[80] ի միմեանս՝ ահա-

գին զգոռումն ի վերայ երկրի առնէին շաչատակելով, և ահս պակուցանողս[81] տարազաւ[82] յարձակմանցն սկայազունքն զմիմեամբք արկանէին։ Անդ ոչ սակաւք երկոցունց կողմանց արք յաղթանդամք բերանոյ սրոյ դիպեալք՝ տապալ յերկիր կործանէին, և մարտն յերկոցունց կողմանց մնայր անպարտելի։ Զայսպիսի անակնկալելի դիպուած տարակուսանաց տեսեալ արքայն Տիտանեան զարհուրեցաւ, և ի նոյն բլուր ուստի էջն՝ վերստին ելանէր[83]. քանզի խորհէր ի մէջ ամբոխին ամրանալ, մինչև հասցէ բովանդակ զօրն, զի միաբանեալ ճակատ յօրինեսցէ։ Զայս իմացեալ աղեղնաւորն Հայկայ՝ յառաջ մատչի, մօտ հասանէ յարքայն, լի քարշէ զլայնալիճն, դիպեցուցանէ զերեքթևեանն կրծից տախտակին, և շեշտ ընդ մէջ թիկանցն թափանցիկ լեալ՝ յերկիր հարաւ սլաքն. և այսպէս ճոխացեալն Տիտանեան կործանի յերկիր զարկուցեալ, և փչէ զոգին. Իսկ ամբոխն տեսեալ զայսպիսի ահագին գործ քաջութեան՝[84] փախեան իւրաքանչիւր դէմ երեսաց իւրեանց։ Եւ վասն այսորիկ այսչափ բաւական լիցի ասել։

Բայց զտեղի[85] ճակատուն շինէ դաստակերտ, և անուն կոչէ Հայք. վասն յաղթութեան[86] պատերազմին. այսորիկ ասացաւ և գաւառն այժմ անուանի Հայոց Ձոր. Իսկ զբլուրն, ուր քաջամարտակօքն անկաւ Բէլ՝ անուանեաց Հայկ Գերեզմանս, որ այժմ ասին Գերեզմանք. Բայց զդիակն Բելայ պաճուճեալ դեղովք, ասէ, հրամայէ Հայկ տանել ի Հարք, և թաղել ի բարձրաւանդակ տեղւոջ, ի տեսիլ կանանց և որդւոց իւրոց. Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք։

(I, ԺԱ)

4.

## Յաղագս Արայի, և մահուան նորա պատերազմաւ ի Շամիրամայ

Արայ սակաւ ամօք յառաջ քան զվախճանելն Նինոսի իշխանակալեալ[87] իւրոց հայրենեացն, նոյնպիսում շնորհի արժանաւորեալ[88] ի Նինոսէ՝ որպէս և հայրն իւր Արամ. Բայց վաւաշոտն այն և բորբոքեալն[89] Շամիրամ ի բազում ամաց լուեալ զգեղեցկութենէ[90] նորա՝ ցանկայր հասանել. այլ[91] ոչ ինչ յայտնապէս գործադրել իշխէր. Իսկ յետ վախճանելոյն, կամ փախստական լինելոյն Նինոսի ի Կրետէ, որպէս հաւանեալ[92] եմ, համարձակ լինելով[93] Շամիրամայ[94] զախտն՝ առաքէ հրեշտակս առ Արայն գեղեցիկ՝ ընծայիւք և պատարագօք, բազում աղաչանօք և խոստմամբ պարգևաց, գալ առ նա[95] ի Նինուէ[96], կա՛մ առնուլ կնութեան և թագաւորել ի վերայ ամենայնի՝ որոց տիրէր և Նինոս, և կամ կատարել զկամս ցանկութեան[97] նորա և դառնալ մեծաւ պատարագօք ի խաղաղութեամբ ի տեղի իւր։

Եւ ի բազում անգամ երթևեկութեան հրեշտակութեանն լինելոյ[98], և յոչ հաւանել[99] Արային, ի սաստիկ ցասման լինել Շամիրամայ՝ ի վախճանի պատգամաւորութեանն առեալ զբազմութիւն զօրաց իւրոց, և փութայ երթալ հասանել յերկիրն Հայոց ի վերայ Արայի. Բայց որչափ դիմացն էր նշանակել[100], ոչ այնչափ ի սպանանել[101] զնա և ի հալածել փութայր, քան թէ ի նուաճել կամ զօրաւ ածել[102], զի լցցէ զկամս ցանկութեան[97] իւրոյ. զի սա յոյժ ցանկական մոլեգնութեանն[103], ի բանին որ զնմանէ[104] որպէս ի տեսութիւն[105] չամբերութեամբ վառեալ[106] էր. Գայ հասանէ տագնապաւ ի դաշտն Արայի, որ և յանուն նորա անուանեալ[107] Այրարատ. Եւ ի լինել[108] ճակատուն՝ պատուէր տայ զօրապետաց իւրոց, թէ դէպ լինիցի՝ հնարել ապրեցուցանել զԱրայն. Իսկ ի լինել մարտին[108] հարկանի զօրն Արայի, մեռանի և Արայ ի պատերազմին ի մանկանցն[109] Շամիրամայ. Դիտակապուտ առաքէ տիկինն յետ յաղթութեանն ի տեղի ճակատուն, խնդրել ի մէջ դիականցն անկելոց զըղձալին իւր և զտարփածուն[110]. Գտանեն զԱրայն մեռեալ ի մէջ քաջամարտկացն, և հրամայէ դնել զնա ի վերնատան ապարանիցն։

Իսկ ի զօրանալ[111] միւսանգամ զօրացն Հայոց ի մարտ պատերազմի[112] ընդ տիկնոջն Շամիրամայ, քինախնդիր լինել[113] մահուանն Արայի, ասէ. «Հրամայեցի աստուածոցն իմոց լիզուլ զվէրս նորա, և կենդանասցի». Միանգամայն և ակն ունէր դիւթութեամբ վհկութեան իւրոյ կենդանացուցանել զԱրայ, ցնորեալ ի տարփական ցանկութենէն. Իսկ իբրև նեխեցաւ դի նորա՝ հրամայէ ընկենուլ ի վիհ մեծ և ծածկել. զմի ումն ի հոմանեաց իւրոց զարդարեալ ունելով ի ծածուկ՝ համբաւէ զնմանէ[114] այսպէս. «Լիզեալ աստուածոցն զԱրայ և կենդանացուցեալ լցին[115] զփափագ մեր և զհեշտութիւն. վասն որոյ առաւել յայսմ հետէ պաշտելիք են ի մէնջ և փառաւորեալք, իբրև հեշտացուցիչք և կամակատարք». Կանգնէ[116] և նոր իմն պատկեր[117] յանուն դից, և մեծապէս զոհիւք պատուէ, ցուցանելով ամենեցուն, իբր թէ այս զօրութիւն աստուածոցն կենդանացուցին զԱրայ. Եւ այսպէս համբաւեալ զնմանէ ի վերայ երկրիս Հայոց, և հաւանեցուցեալ զամենեսեան՝ դադարեցուցանէ զխաղմնս։

Եւ որ ինչ յաղագս Արայի կարճառօտիւ և այսչափ շատ լիցի յիշատակել. Սա կեցեալ ամս՝ ծնաւ զԿարդոս։

(I, ԺԵ)

## 5.

### Թէ որպէս յետ մահուանն Արայի Շամիրամ շինէ զքաղաքն և զամբարտակ գետոյն և զիւր տունն:

Իսկ զկնի այսպիսեաց իրաց յաջողութեանց[118] գնացեալ Շամիրամայ աւուրս ինչ սակաւս ի դաշտին, որ անուանեալ[119] կոչի յանուն Արայի Այրարատ, ելանէ ի լեռնակողմանս երկրի հարաւակողմանն, քանզի ժամանակ ամառնային էր, զբօսնուլ կամելով ի հովիտս և ի դաշտս ծաղկաւէտս։ Եւ տեսեալ զգեղեցկութիւն երկրին և զօդոյն մաքրութիւն և զաղբերացն յստակագոյն բղխմունս և զգետոցն քաղցրահոսութիւն գետոց բարեգնացից՝ «Պարտ է մեզ, ասէ, յայսպիսում բարեխառնութեան[120] օդոց[121] և մաքրութեան[120] ջուրց ի երկրի, քաղաք և արքունիս շինել բնակութեան, որպէս զի զչորրորդ մասն ի բոլորման տարւոյն, որ է ամառնային եղանակ, բաւ ամենայն քաղցրայեղլութեան անցուցանիցեմք ի Հայս, և զայլս եա երիս սրոյմանս[122] ցրտոյն զովութեան վայելեսցուք ի Նինուէ»։

Եւ անցեալ ընդ բազումս ի տեղեաց՝ գայ հասանէ յարևելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ. և տեսեալ առ եզերբ ծովուն երկայնաձև բլուր մի, որոյ երկայնութիւնն ի մուտս կայր արեգակնան[123], սակաւ ինչ ատեկոցեալ[124] ի հիւսիսոյ, իսկ ի միջօրէայ[125] կողմանէ դէպ ուղիղ առ երկինս հայելով՝ քարանձաւ կանգուն անշեղ. և ի սմանէ զհարաւով բացագոյն[126] հովիտ իմն դաշտաձև և երկայնաձիգ[127] յարևելից կողմանէ լերինն իջանելով յեզր ծովուն, ընդարձակ և գեղեցիկ ձորաձև. որոյ ընդ մէջն հոսանք ջուրց քաղցրահամաց ի լեռնէն իջանելով, ի ձորձորս և ի հովտաց բաւնելով, և ի հիմանց փեշկից լերանց միաւորեալք ի ծաւալումն գետոյ պերճանայինն[128]. և շէնք ոչ սակաւք[129] ի հովտաձև ձորակին, յաջմէ և յահեկէ ջուրցն յօրինեալք. և յարևելից կողմանէ հանգեալ բլրոյն, լեառն մի փոքրագոյն[130]։

Աստ խիստ անձնահատոյց լեալ[131] աշխատասէրն այն և կաթոտն Շամիրամ, հրամայէ տալ չորից բիւրոց և երկուց հազարաց արանց անարուեստից գործաւորաց յԱսորեստանեայց և յայլոց իշխեցելոց[132], և վեց հազար իրոց ընտրելոց յամենայն արուեստաւոր գործաւորաց[133] փայտի և քարի, պղնձոյ և երկաթոյ, որք ամենեքին կատարեալք էին յարուեստագիտութեան[134], ամէն անխափան ի փութացեալ տեղին. և գործն հասանէր հրամանին առնոյր զկատարումն[135]. Եւ վաղվաղակի առնէր լինէին[136] բազմութիւն խառնադանձից գործաւորացն և բազմարուեստից հանճարեղաց իմաստնոցն։ Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և



մեծամեծ վիմօք շինել, կրով և աւազով մածուցեալ, անբաւ լայնութեամբ և բարձրութեամբ. որ կայ հաստատուն, որպէս ասեն, մինչև ցայսօր ժամանակի[137]։ Եւ ի պատառուածս նոյն ամբարտակի գետոյն այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հէն և ի զաղթականս[138] փախստեամբ ամրանան, իբր ի ծայրս քարանձաւաց լերանց ամրացեալք։ Եւ եթէ զփորձ առնուլ[139] ոք կամի, ոչ ինչ քար մի արժանաւոր ի շինուածոյ ամբարտակին խլել որ[140] զօրեսցէ, թէև մեծաւ աշխատութեամբ ջանասցէ։ Եւ ի հեղուսուածս արուեստին[141] որ զքարամբքն հաշեցեալ ուրուք, որպէս ճարպոյ ինչ հեղման հալեցողացն երևեցուցանէ կարծիս։ Եւ այսպէս ընդ բազում ասպարէզս անցուցեալ զամբարտակն՝ հասուցանէ ի նկատեալ[142] տեղի քաղաքին։

Եւ անդ՝ հրամայէ զամբոխն ի բազում դասս որոշել[143] և ի վերայ իւրաքանչիւրոց[144] դասուց զընտիրս ի ճարտարացն վարդապետս կարգել. և այսպէս ի սաստիկ ճգնութեան պահեալ՝ յետ սակաւ ամաց կատարէ զհրաշալին ամրագունիւք[145] պարսպօք, հանդերձ դրամբք պղնձակերտիւք։ Շինէ և բնաւ բնուրս և բազումս ի մէջ քաղաքին ապարանս ի պէս պէս քարանց և ի գունից զարդարեալս, երկնայարկս և եռայարկս, և բաւ պատշաճի իւրաքանչիւր՝ արեգակնակս. և գեղեցկաձևութիւնք[146] և ընդարձակ փողոցիւք զկողմանս քաղաքին որոշելով։ Շինէ և զբաղնիս սքանչելիս ի պէտս և զպարմանալոյ արժանաւորս բաւ պիտոյից միջոցաց քաղաքին յօրինէ։ Եւ զմասն ինչ գետոյն ընդ մէջ քաղաքին բաշխեալ անցուցանէ ի պէտս ամենայն պիտոյից և յոռոգմունս[146] բուրաստանաց և ծաղկոցաց. և զայլն զեզերբ ծովակին յաջմէ և յահեկէ քաղաքին և բովանդակ շրջակայից յոռոգումն[148]։ Եւ զամենայն արևելեան և զհիւսիսային և զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ տաղաւարօք, և սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալս ի պտուղս և ի տերևս. և բազումս բազմարեր և գինեբերս ի նմա տնկեաց այգիս։ Եւ զամենայնիւ հոյակապ և հռչակաւոր պարսպականն յօրինէ, և անթիւ բազմութիւն մարդկան ի ներքս բնակեցուցանէ։

Իսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմա հրաշակերտութիւնք՝ բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ, և ոչ պատմել է կարողութիւն[147]։ Զորոյ պարսպեալ զգագաթնն՝ դժուարամուտ ոմանս և դժոխելանելիս ի նմա յօրինէ շինուածս արքայանիստս, և ծածուկս իմն ահագինս։ Որոյ որակութիւն զրութեանն յօրինուածոյ ոչ ի յանկիս մեր հասեալ ճշմարտութեամբ յուշեաց, և ոչ մեք ի պատմութիւնս հիւսել հաւանիմք. այլ ասեմք միայն, թէ ամենայն

թագաւորականաց[147] գործոց, որպէս լուաք, տապարին և վէմագործին[148] համարեալ։

Իսկ զընդդէմ արեգական կողմն անձաւին, ուր և ոչ գիծ մի երկաթով այժմ վերագրել[149] ոք կարէ, զայսպիսի կարծրութիւն[150] նիւթոյ զէշ զէշ տաճարս և սենեակս օթից և տունս գանձուց և վիհս երկայնս, ոչ գիտէ ոք, թէ որպիսեաց իրաց պատրաստութիւն հրաշակերտեաց։ Իսկ զամենայն երեսս քարին իբրև զգրչաւ զմոմ հարթեալ[151] բազում գիրս ի նմա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ[152]։ Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս աշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր։

Արդ՝ որ ինչ յաղագս Շամիրամայ գործոց որ ի Հայս՝ ասացեալ է։

(I, ԺԶ)

6.

Յաղագս Շամիրամայ, թէ է՛ր ազգաւ կոտորեաց զորդիս իւր, և թէ ո՛րպէս փախստական լինի ի Զրադաշտէ մոգէ ի Հայս, և մեռանի ի Նինուասայ որդւոյ իւրմէ:

Սա հանապազ յամառնայինսն[153] ի խաղալն[154] իւրում ի կողմանս հիւսիսոյ ի քաղաքն ամարաստանին[155] զոր շինեաց ի Հայս՝ կողմնակալս և վերակացուս Ասորեստանի և Նինուէի թողու զԶրադաշտ մոգ՝ նահապետ Մարաց։ Եւ զայս այսպէս բազում ժամանակս կարգեալ Շամիրամայ՝[156] ամենևին հաւատայ[157] նմա յարգարել զիւր իշխանութիւնն։

Եւ բազում անգամ յանդիմանեալ յորդւոց իւրոց վասն սաստիկ և վաւաշ պոռնկական բարուց իւրոց՝ կոտորէ զամենեսեան, և այրի[158] կրտսերագոյնն[149] միայն, որ է Նինուաս։ Բարեկամաց և հոմանեաց իւրոց պարգևելով զամենայն իշխանութիւն և զգանձս՝ ոչ ինչ վասն որդւոց իւրոց փոյթ յանձին ունէր[159]։ Քանզի և այրն նորա Նինոս ոչ, որպէս ասի[160], մեռեալ թաղեցաւ ի նմանէ ի Նինուէ յարքունիսն, այլ իմացեալ զախտաւէր բարս նորա և զլարաւէր[161], թողեալ զթագաւորութիւնն՝ փախստական անկանէր ի Կրետէ։ Իսկ ի հասակ և ի միտս հասեալ[162] որդւոց[156] նորա՝ յիշեցուցանէին նմա զայս ամենայն, կարծելով ցածուցանել զնա ի գիւական պակշոտութենէն, և աւանդել զիշխանութիւնն և զգանձս՝ որդւոց իւրոց։ Ընդ որ առաւել զայրացեալ՝ սատակէ զամենեսեան. և մնայ միայն, որպէս վերագոյնն ասացաք, Նինուաս



Իսկ ի լինել[163] սրտմտութեան ինչ Զրադաշտի առ տիկինն, և հակառակութեան ի ներքս անկանել[163], պատերազմ ի վերայ նորա յարուցանէ Շամիրամ, քանզի բռնանալ ի վերայ ամենայնի խորհէր մոգն։ Եւ ի սաստկանալ[163] պատերազմին՝ փախստական լինի Շամիրամ յերեսաց Զրադաշտի ի Հայս։ Առ ժամանակաւ վրէժխնդրութեան պատեհ գտեալ Նինուասայ՝ սպանանէ զմայրն և ինքն թագաւորէ ի վերայ Ասորեստանի և Նինուէի։ Ահա ասացաք և յաղագս մահուանն Շամիրամայ, թէ ուստի՞ և ո՛րպէս[164]։

(I, ԺԷ)

7.

Յաղագս շինուածոյ Երուանդաշատ քաղաքի

Յաւուրս սորա փոխին[165] արքունիքն յԱրմաւիրն անուանեալ բլրոյ. քանզի էր հեռացեալ գետն Երասխ[166], և ի յերկարել ձմերայնոյն[167], և ի զանանհոտ[168] փչմանէ հիւսիսոյ[169] պաղացեալ ձուլեալ[170] վտակն՝ ոչ ունէր արքունիսն բաւական թագաւորականին գտանէր տեղւոյ[171]։ Ընդ որ ննջեալ Երուանդայ, նա և ամրագունի ևս տեղւոյ ելեալ ի խնդիր[172] փոխէ զարքունիսն յարևմուտս կոյս, ի բարձրաւանդակ մի բլուր, զորով պատ առեալ Երասխայ[173] ընդդէմ Ախուրեանն հոսի գետոյ[174], Պարսպէ զբլուրն, և ի ներքսագոյն քան զպարիսպն ընդ բազում տեղիս կարեալ զպարիս[illegible]որն մինչև ի յատակս բլրոյն հաւասար գետոյն, մինչև դիմել[175] ջուրց գետոյն ի փորուածն, յըմպելեաց պատրաստութիւն[176], զմիջնաբերդն ամրացուցանէր բարձր պարսպօք, և դրունս պղնձիս կանգնէր[177] ի միջոցի պարսպին, և երանեկիս երկաթիս ի ներքուստ ի վեր մինչև ցդուռն. և ի նմա արագայթս իմն ծածուկս ընդ մէջ ատրճանայն, որպէս զի բմբռնեսցի՝ եթէ ոք գաղտ ելանելոյ զանել կամիցի զարքայիւ։ Եւ էր, ասեն, երկդիմի[177], որպէս զի մինն լիցի ապստամբաց արքունի և ամենայն երկմտից ճանապարհ ատուրչենային, իսկ միւսն գիշերային և մարդադատաց։

(II, ԼԹ)

8.

Վասն ձեռակերտին[178], որ կոչի Երուանդակերտ:

Քաղցր է ինձ ասել[179] և յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յօրինեաց[180] նոյն ինքն Երուանդ գեղեցիկ և շքեղ յօրինուածովք։ Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ և պայծառ շինուածովք՝ լուսաւոր որպէս ական բիբ։

Իսկ չորս զմարդկութեամբն[181] ծաղկեցայց և հաստատեաց կազմութիւն, որպէս չորս տարերքն[181] զալ բոլորակութիւն ակաւն[182]։ Իսկ զրազմութիւն այլևասանոյ[183] իբր զարտևանանց խիտ և գեղեցիկ ծիր[184]. որոյ հիւսիսային կողմանն գիր կարակնեալ՝ արդարև գեղաւոր կուսից յօնից զարատանդաց համեմատ[185]։ Իսկ ի հարուստ համբուրիւն[186] գաշտաց՝ ծնօտից պարզութեան գեղեցկութիւն[186]։ Իսկ զեան բերանացեալ զարատանդոք ափանցն՝ զերկթերթիւն նշանակէ շրթունս[187]։ Եւ այսպիսի գեղեցկութեան[188] զիր՝ անբթթելի իմն զօգնես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածն ունի. և արդարև բերքի և թագաւորական զատատակերտն։

Զայս ամենայն գործեցելայն[188] Երուանդայ պարգևէ մեծն Տրդատ մարդկան ազգին Կամսարականաց, որպէս մատուցելոց և արեան կցորդաց[189] ազգին Արշակունեաց. զոր յիշում տեղւոջն պատմեսցուք։

Բայց ասեն զԵրուանդայ[190] չար հմայից զմնեալ գոլ ակաւն հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ[191] արքայական սովորութիւն ունել սպասաւորացն[192] արքունի՝ վէմս որձաքարեայս ունել[193] ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն զօրութենէ ասեն պայթել որձաքար վիմացն[194]։ Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ դիւականս[195] ինչ առ իւր ունել զօրութիւնս, զի այսպէս հայեցուածոցն անուամբ վնասեսցէ զորս կամի։

(II, ԽԲ)

9.

### Յաղագս մեծի պատերազմին՝ որ եղև ի Ձիրաւ[196], և նահատակման[197] ամբարշտին Մեհրուժանայ։

Ապա պատմեալ[198] Մեհրուժանայ յերկիրն Խորասանոյ առ Շապուհ զամենայն օգնականութիւն Թէոդոսի զոր արար առ Պապ՝ եղանէ հրաման ի Շապհոյ՝ ամենայն զօրացն Պարսից երթալ ընդ Մեհրուժանայ ի Հայս ի պատերազմ։ Դոյնպէս ասէին[199] ինքնակալին Թէոդոսի Պապ և Տերենտիանոս[200], զՃապհոյ[201], թէ ամենայն զօրացն հրամայեաց երթալ ի վերայ մեր, բայց ի դրանկացն։ Ապա և Աւգոստոսն Թէոդոս հրամայեաց Ադդէի կոմսին մեծի երթալ յօգնականութիւն Պապայ, առնուլ զամենայն զօրս Յունաց, ոչ զոր Թագուլ՝ զոր ոչ տայէ. այլ և զհեծեալս պահապանս քաղաքացն, որք զմետաքսեայսն[202] ունէին զկիրչապս։

Եւ խմբեցաւ պատերազմն ի դաշտին որ կոչի Ձիրաւ. և մտանէն ճակատ առ ճակատ։ Եւ մանկունք քաջ նախարարացն Հայոց, ինքնակամ նահատակեալք[203], մտին ի մէջ ճակատուցն, առաջ-



նորդութեամբ սպարապետին իւրեանց Սմբատայ ասպետի, որդւոյ Բագարատայ, որ[204] յազգէն Բագրատունեաց։ Եղին և ի զօրացն Պարսից համարիք նոցա. և խաղացին ի մէջ ճակատուցն. և ցիրք ընդ ցիրս լինէին։ Եւ ի դառնալ մանկանցն Պարսից, ընդ հուպ դարձեալ մերոցն[205] զհետ նոցա, օրինակ իմն որպէս[206] փոթորիկ յանտառէ տերևաթափ. այնպէս երագ յերիվարացն առեալ[207] ներդակօք, զի յուրաք յերկիր ընկենուին, ոչ կարելով[208] նոցա յիրեանց ճակատն մտանել։ Իսկ յորժամ պարսիկքն զմերն շրջէին[209] նոքա ի վահանափակն Յունաց իբր յամուր քաղաք մտանէին, առ ոչ ինչ վնասելոյ։ Քանզի այնպէս արար Տերենտիոս իշխան հեծեալ զօրուն, իբր պարիսպ պատեաց վահանօք զճակատն Պապայ։

Քանզի զօրքն Յունաց վառեալ[210] էին ի զէնս[211] ոսկւոյ և արծաթոյ, և երիվարքն նոցա նոյնպէս զարդու, և էր տեսանել[212] իբրև զպարիսպ ինչ, յորոց յոլովք ի շղթայ և ի կաշեայ պահպանակաց զգեստուն զկարծրութեան[213] վիմաց բերէին երևոյթս. և ի վերայ նոցա անխայլամ զէնք[214] նշանք արծաթեալք իբր զապարթս ինչ հովանաւոր ծառոց։ Բայց զկիրչապացն[215] մանուածս, ահագին բերանարացութեամբ ոռնացեալ ի փչմանէ օդոյն, ոչ ինչ այլոք կարեմ նմանեցուցանել, այլ միայն իբրև զիւան ինչ ադամանդեայ խոնարհիլ[216] ի ծով—բովանդակ ճակատն Յունաց ի պարսկական զօրսն։ Քանզի և զնոսա որ տեսանել[212] իբրև զհզօր ինչ զետ առ ի կողմն ի յայն ծառայեալ. արդարև զչրոյ զոյն զրահազգեստացն բերէր տեսութիւն[217]։

... Իսկ ի ծագել արեգականն ընդդէմ մերոց զօրացն, ի պղնձապատ վահանացն նշոյլք զիրամբքն փայլատակէին իբրև յամպոյ մեծէ, և ի նոյանէ ի զայրս սաստկին ի մերոց նախարարացն քաջ զրահաւորք՝ որպէս փայլատականց ճառագայթք. յորոց միայն ի տեսութենէն[217] զանգիտեալ պարսկական զունդն, սակաւ ինչ և մերն, վասն ոչ կարել[218] հայել ընդդէմ արեգականն ծագմանն։ Իսկ ի բաղխել[219] զմիմեանս՝ եղև ի վերայ հովանի ամպոյ, և հողմ սաստիկ ի մերոցն կոյսէ ընդդէմ պարսկականին փչեալ։ Եւ ի խառնակել[219] մարտին՝ պատահէ Կամսարականն Սպանդարատ խմբի մեծի, յորում էր քաջն Շերգիր Լեկաց արքայ, գգլուխ միջին գնդին մնդութեամբ զունդի ճակատուն կալեալ։ Եւ յարձակեալ Սպանդարատ, և հերձեալ զխումբն, որպէս զշանթահար յերկիր կործանէր զքաջն, և զխումբն պատուհեալ՝ ի փախուստ դարձուցանէր։ Եւ այսպէս ի վերին օգնականութենէն զօրացեալ առ հասարակ զօրքն Յունաց և Հայոց, զիւակամբք թշնամեացն լցին զդաշտն ամենայն, և զմնացորդսն ամենայն ի փախուստ

չրչեալ հալածեցին։ Ընդ որս և զՈւռնայր Աղուանից արքայ խո-ցոտեալ ի Մուշեղայ որդւոյ Վասակայ Մամիկոնենի, հանին ի պատերազմէն։

Բայց ամբարշտին Մեհրուժանայ վիրաւորեալ ձին՝ ոչ կա-րաց երագել ընդ փախստեայսն. որում անապարեալ հասանէ ասպարապետն Հայոց Սմբատ, և զորս ընդ նմայն էին կոտորեալ ձերբակալ առնէ զվատաչուէրն յեզերս շամբին Կոգայովտի։ Եւ դժր-ուար առնեալ, թէ գուցէ թափիցէ[20] զնա մեծն Ներսէս, այնորիկ պատշաճ ոչ առնէ ի բանակն. այլ զանդեհեալ գտանէ պատրաստու-թիւն առ ի կորուստ ամբարշտին զնմանէ խորհնուրդս։ Հուր լու-ցեալ, և շամփուր երկաթի՝ մեծ խորովելոյ. զոր շիկացուցեալ, երկնեաց բոլորեալ օրմէն պսակ, և յայտ պատուէրն արարեալ, ասէ. «Պսա-կեմ զքեզ, Մեհրուժան, քանզի ի խնդիր էիր թագաւորել Հայոց. և ինձ[21] ասպետիս պարտ է զքեզ պսակել ըստ սովորական իշ-խանութեան հարց հայրենեացս»։ Եւ մինչ դեռ տարուէր իբրև ընդ՝ եդ ի գլուխն Մեհրուժանայ, և այնպէս սատակեցաւ չարն։ Եւ յայնմ հետէ խաղաղեցաւ երկիրն, ընդ ձեռամբ Պապայ նուաճեալ։

(III, լէ)

---

## Ե. ԵՂԻՇԷ (5-րդ դար)

## ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

(Հատվածներ)

1.

Արդ որովհետև ընկալայ զհրաման պատուիրանի[1] յանձնա-ձայն քոյոց բարուց բնութեանդ[2], սկսցուք ուստի արժան է սկսա-նել. թէպէտ և ոչ յօժարեցեալ զվշտաւորութիւն ազգիս մերոյ ող-բալ։ Ահա ոչ ըստ կամաց արտասուալիր ողբովք ճառագրեմք զբա-զում հարուածս՝ յորում[3] պատահեցաք և մեք ինքն[4] ականատեսք[5] լինելով։

* * *

Քանզի ի բառնալ[6] ազգին Արշակունեաց, տերեցին[7] աշխար-հիս[8] Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանու-թիւնն օրինօք մոգուց[9]. և բազում անգամ մարտնչէր ընդ այնո-սիկ՝ որ[10] ոչ ընդ նովին օրինօք մտանէին, սկիզբն արարեալ յա-մացն Արշակայ արքայի որդւոյն Տիրանայ, և կռուէր մինչև յամն վեցերորդ Արտաշիսի[11] արքայի Հայոց, որդւոյն Վռամշապհոյ։ Եւ իբրև զնա ևս մերժեաց ի թագաւորութենէն, ի նախարարսն Հայոց անկանէր[12] թագաւորութիւնն. զի թէպէտ և զանձն[13] յար-քունիս Պարսկաց երթայր, սակայն այրուձին[14] Հայոց բովանդակ ի ձեռն նախարարացն առաջնորդէր ի պատերազմի։ Վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրագոյն կամակարութեամբ երեւէր յաշխարհին Հայոց, ի սկզբանէ տէրութեանն Շապհոյ արքա-յից արքայի[15] մինչև յամն երկրորդ Յազկերտի արքայից արքայի՝ որդւոյ Վռամայ, զոր եղեւ սատանայ իւր գործակից, և զամենայն մթերեալ թոյնն թափեաց ի բաց, և եղից զնա իբրև զպատական-դարան լցեալ նետիւք։ Եւ սկսաւ եղջիւր առնել անօրէնութեամբ, գոռոզանայր, և գաւալով հողմն հանէր ընդ չորս կողմանս երկրի

և Թշնամի և հակառակորդ երևեցուցանէր իւր զհաւատացեալսն[15] ի Քրիստոս, և նենգեալ տաղտկայր անխաղաղական կենօք։

Քանզի յայժմ սիրելի էր նմա խաւարութիւն, ապիրատութիւն, վասն ագահութեան յանձն իւր առաքինեալ, եթէ յո՞ Թափեցից[17] զզօրութիւն[18] Թինեաց*, կամ ո՞ւր բացատրեցից[17] զբազմութիւն[18] նմանեցն։ Եւ առ յայժմ չիմաստութեան իւրն զգազան կատաղի յարձակեցաւ ի վերայ աշխարհին Յունաց. եհար մինչ ի քաղաքն Մծբին[19], և բազում զաւառս Հռոմոց[20] աւերեաց առաւատակաւ, և զամենայն եկեղեցիս հրձիգ արար. կոտորեաց զաւառ և զգեղս, և առհասարակ արար զամենայն զօրս աշխարհին։

Իսկ երանելին Թէոդոս կայսր՝ քանզի էր խաղաղասէր... ոչ կամեցաւ ընդ առաջ նորա ելանել պատերազմաւ. այլ այր մի Անատոլ անուն[21], որ էր նորա սպարապետ արևելից, առաքեաց առ նա բազում գանձիւք։ Եւ արք պարսիկք, որք փախուցեալ էին վասն քրիստոնէութեան և էին ի քաղաքն[22] կայսեր, կալաւ և ետ ի ձեռս նորա։ Եւ զամենայն զոր ինչ ասաց ի ժամանակին՝ կատարեաց ըստ կամաց նորա, և արգել զնա ի բազում բարեկութենէն, և դարձոյց** անդրէն ի քաղաքն իւր Տիզբոն։

Եւ իբրև եւս պնդէն իշխանն, եթէ յաջողեցաւ չարութիւն նորա[23], սկսաւ այլ ևս խորհուրդ յանձնել, որպէս որ զի ի հուր բորբոքեալ յանկարծ բազում նիւթս փայտից։ Քանզի ուսեալ սակաւ մի կարկառուն էր, անուն աներկիւղ հաստատեցաւ. վասն ագահութեան զդաւանութեան զբաղեալ ի սուրբ ուխտէն քրիստոնէից, էր՝ զոր բանիւք սպառնայնոց, էր՝ զոր կապանօք և տանջանօք, և էր՝ զոր չարաչար մահուամբ վախճանէր[24]։ Յափշտակութիւն առնէր[25] ընչից և արարոց[26], և մեծաւ անարգանօք տանջէր զամենեսեան։ Եւ իբրև եւս՝ եթէ վարատեալ[27] ցրուեցան ի բազում կողմանս, ի խորհուրդ կոչէր[28] դպրապետեանս ձախակողմանն*[29] որք կալեալ էին ի կապաշտութեան անյուծանելի հանդերձիւք, վասն այնր և ցնծայր իբրև զհետ առ այրեալ զախտ սուրբ եկեղեցւոյ։

Քանզի էին իսկ այնպիսիքն բնակեալ ի կեանս իւրեանց իբրև ի Թանձրամած խաւարի, և ոգիքն արգելեալք ի մարմնի իւրեանց գերեզմանի ի գերեզմանի... Նա և արդ օրհասականք ընդ վախճանին չէջոցն հզօրագոյնս[30] կամին. յորոց և իմաստունքն տեղի տային փախչելն ի նոցանէ[31]։ Այսպիսի իմն եկեալ հասեալ է վախճան աւերութեանն. եթէ հարկանելն՝ չզգան, և եթէ հարկանեն՝ չիմանան. և իբրև ոչ զսանի արտաքին Թշնամի, ընդ անձինս իւրեանց մարտ եդեալ[32] կամին...

* Կամ՝ բիւրաւոր։

** Այլ օրինակներում՝ դարձաւ։



Արդ զի՞ կոծիս, զի՞ մռչես, զի՞ ողբաս, զի՞ բորբոքիս, զի՞ չչիչանես. զի՞ կոչես ի խորհուրդ զայնոսիկ՝ որոց[33] զոգիսն ձեր ի ձեռս քաղեալ՝ համեալ է զանապականդ յապականութիւն, և զա... պահանելի մարմինդ զէշարարշ արարեալ իւրեն զազիր մեհեանի ի բաց ընկեցեալ։ Այսպէս զայդ կամիս՝ զի ծածկեսցի խորհուրդ ամբարշտութեանդ[34]. տեսցի՞ր յորժամ յայտնեսցի, ապա գիտասցես զեզ կատարածի[35] զորս։

Ասեն մոգքն. «Արքայ քաջ, աստուածքն ետուն քեզ զօրութիւնս և զյաղթութիւն, և ոչ ինչ կարօտ են նորա մարմնաւոր մեծութեան. բայց եթէ ի մի օրէնս դարձուցանես զամենայն ազգս և ծառայս, որ են ի տէրութեան քում, յայնժամ և աշխարհն Յունաց հնազանդեալ մտցէ ընդ օրինօք քովք։ Արդ զմի բան զմեր[36] վաղվաղակի կատարեսցես դու, արքայ. զոր գումարեա և զունդ կազմեա, խաղա՛ գնա՛ դու յերկիրն Քուշանաց[37]. և զամենայն ազգս ժողովեա՛ և տարցե՛ս ընդ Փաճ դուռն[38] ի նորա. և դու անդէն առա՛ ընդ ընակութիւն. Յորժամ արգելցես և փակես[39] զամենեսեան ի հեռաւոր ստարութեան, կատարեսցին[40] խորհուրդք կամաց[41] քոց. և որպէս երևիս մեզ ի գնալս մերում, աւրիշ[42] դու և երկիրն Քուշանաց, և Յոյնք իսկ ոչ ելանեն[43] ընդ քո իշխանութեանդ. Քանզի միայն զազանդ քրիստոնէից բա՛րձ ի միջոյ։»

Հաճոյ Թուեցաւ խորհուրդն Թագաւորին և մեծամեծացն, որ էին ի նմին բանի. հրովարտակս գրէր[44], պնդագրեալ արձակէր յամենայն ազգս տէրութեան իւրոյ։ Եւ այս է պատճէն հրովարտակին.

«Ես ամենայն ազգս տէրութեան իմոյ արեաց և անարեաց[45], բազմասցի ի ձեզ ողջոյն մարդասիրութեան[46] մերոյ. զոր ողջ լիջիք, և մեք ողջ եմք զիցն ողորմածութեամբ։

«Առանց զձեզ ինչ աշխատ առնելոյ խաղաղացար գնացաք յերկիրն Յունաց, և առանց գործոյ պատերազմի սիրով մարդասիրութեամբ նուաճեցաք զամենայն երկիրն մեր ի ծառայութիւն. Դուք զբաւեք զմտաւ առնէք, և անխափան յերկրէ յայտնութեան, բայց զգուշ զայս[46] կատարեցէ՛ք վաղվաղակի, զոր ասեմք[47]։

«Մեք ի մտի եդաք անվրէպ խորհրդովք խաղաղ գնալ յաշխարհն արևելից, աստուածոցն օգնականութեամբ դարձուցանել ի մեզ զաշխարհն Քուշանաց. զոր իբրև զհրովարտակս զայս տեսանէք[48]՝ անխափան վաղվաղակի այրեամբ գումարեսջիք առաջոյ բանն զիս. յանդիման լինիջիք ինձ յԱպար[49] աշխարհին։

Ըստ այսմ պատճենի հրովարտակ եհաս յաշխարհն Հայոց, ի Վրաց և յԱղուանից[50] և ի Լփնաց[51], ի Ծաւդէից[52] և ի Կոր-

* Այլ օրինակներում՝ նաւաքեաւ։

գուաց[53], յԱղձնեաց[54] և բազում այլ անկեալ հնազանդաց, որոց ոչ էին օրէնք երթալ զայն ճանապարհ յառաջ ժամանակաւ։ Գունդ կազմէր ի Հայոց մեծաց գաւառ և գաւառարդի, և յաշխարհի ամէն զօրաւորիկ մարդիկ. բա՛ռ նմին օրինակի ի Վրաց և յԱղուանից և յաշխարհէն Լփնաց, և որ այլ են ի կողմանց կողմանց հարաւ-ւոյ մերձ ի սահմանս Տաճկաստանի[55] և ի Հոռոմոց աշխարհն և ի Կորդուաց և ի Դասն[56] և ի Մաղէ և յԱրզնարզիւն[57]...։

Ապա իբրև ետես թագաւորն զամենայն կազմութիւն և զբազ-մութիւն զնդին բարբարոսաց[58], որք արտի մտօք եկեալ էին ի վաստակ արքունի, առաւելապէս ուրախ լինէր առաջի մեծամեծացն և ամենայն բազմութեան զօրաց իւրոց։ Ի վերին երեսս թագուցա-նէր զխորհ մտաց[59] իւրոց, և ակամայ առաւելապէս պարգևէր զնոսա։ ճաշակս մեծաց միանգամայն ի վերայ տէրութեան Հոնաց աշխարհին, զոր Փուշանս անուանեն. և զերկեամ[60] մի կռուեալ՝ ոչ ինչ կարաց առնել նոցա։ Ապա արձակեաց զմարդիկն յիւրա-քանչիւր տեղիս, և զայլս փոխանակ[61] նոցա առ իւր կոչեաց նո-վին պատրաստութեամբ։ Եւ այսպէս ամ յամէ ստէպութիւն կար-գեաց. և իւր անդէն քաղաք բնակութեան շինեաց. ակնեալ ի շար-բարդ ամէ տէրութեանն իւրոյ մինչև յամն մետասաներորդ թագա-ւորութեանն[62]։

Եւ իբրև ետես, եթէ հաստատուն կացին Հոնք յուխտին իւրեանց, զոր եդին ընդ նմա, և դադարեցին յասպընջութեանց[63] նստա-նել ընդ պահակին ճորայ, և յամենայն կողմանց խաղաղութեամբ բնակեալ աշխարհն նորա[64], և ի նեղ ևս էարկ զթագաւորն Հոնաց, բանզի աւերեաց զբազում գաւառս նորա, և յաղթեցաւ տէրու-թիւն նորա, առատարս աւարեաց ընդ ամենայն առաւշանս աշխարհին իւրոյ. ըստ ամբարտակօք և զիսաւոր նոխազօք առա-ւաղիւք զդոփ կրանի. և խիստ առ խիստ թանձրացոյց անզգու-թեամբ զպաշտօն պղծութեան[65] իւրոյ. պատիւս և պատուէր մե-ծարեաց զբազումս ի մոգաց[66] և զբազմացեալս ի մոգպետաց։ Եւ ետ հրաման յափշտակել զամենայն ինչս քրիստոնէից և զաստ-ուածա[67], որք էին ի մէջ Պարսկաց աշխարհին։

Եւ այսպէս հպարտացեալ բարձրացաւ ի միտս իւր, ի վեր քան զմարդկային բնութիւն ընդվզեալ ամպարտաւանէր ոչ միայն յիւր մարմնական պատերազմացն, այլ մեծ ևս զինքն կարծէր քան զբնութիւն հոգիոց կարգին. վասն այնորիկ կեղծաւորու-թեամբ թագուցանէր զինքն բաղ կարծեացն, և որպէս երևէր ի-մաստնոցն, յանմահից իմն կարգի զնէր զինքն...։

(1 3ԵՂ.)



2.

Որոց աչքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յայժմ ընդ աչօք անկեալ է բնութիւն մարմնոյ[68]. յամենայն հողմոյ շար-ժի, և յամենայն բանէ խռովի, և յամենայն իրաց դողայ. երա-զագէտ է այնպիսին ի կենաս իւրում, և յանդիւտ կորուստ յա-ղարկի ի մահուան[69] իւրում։ Որպէս և ասաց ոմն ի հնումն, մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է։ Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ. իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ։

Եւ այս ամենայն չարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսում-նութենէ։ Կոյր աչկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն[70] զրկի ի կատարեալ կենաց։ Լաւ է կոյր աչօք քան կոյր մտօք։ Որ-պէս մեծ է հոգի քան զմարմին՝ այսպէս մեծ է տեսանողութիւն մտաց քան զմարմնոյ։

Եթէ որ կարի առաւելեալ իցէ աշխարհական մեծութեամբ, և[71] մտօքն աղքատացեալ, այնպիսին ողորմելի է քան զբազումս. որպէս և տեսանեմք իսկ՝ ոչ միայն ի չափաւոր մարդիկ, այլ և յար[72] մեծն է քան զամենայնս։ Թագաւոր եթէ ոչ ունի զիմաստու-թիւն աթոռակից իւր, ոչ կարէ ի վիճակին իւրում վայելուչ գոլ։ Իսկ եթէ առ մարմնաւորս այսպէս, ո՞րչափ ևս առաւել առ հո-գևորսն...։

Իսկ անօրէն իշխանն իբրև զիտաց եթէ յայտնեցաւ խորա-մանկութիւն[73] խորհրդոյն, և պատրաստեալ հօրն՝ մինչև ուրուք ի նա փչեալ[74] վատուժն նորա յայտնի իմացաւ երկիւղածացն աս-տուծոյ, սկսաւ ծածուկ նետիւք խոցոտել զմիտս իւրոյ չարու-թեանն[75]. և անբժշկական վէրս յոգիս և ի մարմինս տեսանէր։

Մերթ չանթէր զայրէր իբրև զաձ թունաւոր, մերթ պարզէր զոչէր իբրև զառիւծ զայրացեալ. զեղոյր, զլորէր, ապալէր երկ-դիմի մտօք. զխորհուրդս կամացն[76] կամէր կատարել։ Քանզի ձեռն արկանել և ունել ոչ կարէր,—վասն զի ոչ էին համագունդ ի միում վայրի առ նմա,— սկսաւ այնուհետև յառաջ կոչել զերեսս յաւա-գաց և զանարգս ի պատուականաց և զադէտս ի գիտնոց և զա-նարիս[77] ի քաջ արանց. և զի՞ մի մի թուիցեմ, այլ զամենայն զանարժանն յառաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորն յետս տանէր. մինչև զհայր և զորդի բակէր ի միմեանց...։

Եւ առնա իշխանութիւն առնել յարտաքր աղաստաւորացն[78], զի զչորս զինուորսն ի բաց ատագացն մատուցէին ի փորձութիւն ատեանացն[79]. Եւ զառաջնոյ զատեալ բազում հարկաւորք, նախին

կապանօք անցուցին ի տեղիս արգելանին։ Իսկ այլոցն խորէս-թեամբ առ ժամանակ մի խաղաղութիւն արարեալ[80], և զամենայն վնասուն պատճառս արկանէր զկապելովքն. և զայս առնէր առ-տանելոյական խրատուն[81]։

Իսկ յետ երկոտասան աւուր հրաման տայր[82] ընթերցս գործել սատարութեամբ և անելի քան զառաջ ամբարտութեան, և կոչէր[83] զբազումս ի զինուորական բարեկամէնցն։ Եւ ի ժամ զոհին[84] պատարագութեան զիւրաքանչիւր տեղի չնորհէր նոցա զբազմա-կանին[85]. և սիրով խնդրողութեամբ խօսէր ընդ նոսա բաւ առաջ-նում կարգին, զի թերևս հաւանեսցին ուսել զմիս զոհեաց, զոր ոչ էր երբէք արէն ուսել քրիստոնէից։ Իբրև ոչ կոչան յանձին ամենեքին, ոչ ինչ կարէ առնելոյ, այլ հրամայէաց մատուցա-նել նոցա զաւրքական կերակուրն, և առաւել զինեօքն յանկոյր ի տաճարին զխորախութիւն։

Եւ անաք ի զայրս նկեալ ի սրտէն արքունի, արդեամբ զմանս ի նոցանէ ձեռս յետս կապելով, և զխանչանաւոնսն[86] կերթելով. և զզուշութեամբ պահելով էր որ զերկուս ամիս, և էր որ զերիս. Թագաւոր և այլ եւս յանարժան հարուածս չարչարէին, զոր և ոչ ընդ գրով իսկ արժանի համարեցաք արկանել։ Եւ զոմանս ի նո-ցանէ հնացուցին և բարչեցին յաղնուական պատուոյն անարգելով։

Եւ գունդս գունդս[87] զարհեալ զամարէին ի նոցանէ յերկիր հեռաւոր յամուրս անապատին՝ ի մարտ պատերազմի[88] թշնա-մեացն արքային. և բազմաց իսկ անդէն հատանէր վախճան մահու սրով։ Եւ զամենեցունց զերեզմանս[89] թողական նուաղեցուցանէին, և բաղցիւ և ծարաւով տառապեցուցանէին զնոսա, և ձմերոցի տեղիս զզենուլ վայրան հրամայէին նոցա. և անարգս և վատ-թարս յայս ամենեցուն զնոսա ցուցանէին։

(II ՏԵՂ.)

3.

...Իսկ այրն Վարդան յառաջ մատուցեալ և զպատերազմն[89] հարցանէր[90], և միաբան ամենեցուն խրատու զգուշացուցանէր կար-գէր։

Զգունդն առաջին տայր ի ձեռն իշխանին Արծրունեաց, և նի-զակակից նմա զմեծ իշխանն Մոկաց. և զայլն ամենայն նախա-րարեան[91] համհարզս երկոցունց, և զամենայն բազմութիւն գնդին թևս առնէ և անձամբ կազմէր նոցա։

Եւ զգունդն երկրորդ տայր ի ձեռն Ներշապհոյ Ռմբոսենւոյ, և նիզակակից նմա զԸնծայեան և զՆերսեհ Քաջբերունի։

Եւ զգունդն երրորդ մատուցանէր ի ձեռն Թաթլոյ Վանանդ-



ացւոյ, և նիզակակից նմա հրամայէր զՏաճատ Գնթունի, և զբա-զումս ի քաջ արանց ստորև և անդր ի թևս նոցա։

Յանձն իւր առնոյր զգունդն չորրորդ, և նիզակակից իւր զքաջն Արշաւիր և զհարազատ եղբայրն իւր զՀամազասպեան։

Կարգէր և կազմէր զճակատն յորդորելով ընդ ամենայն երեսս դաշտին[92] դէմ յանդիման Արեաց գնդին, առ ափն Տղմուտ[93] գետոյն։

Եւ իբրև այս այսպէս պատրաստեցան, երկոքեան կողմանքն լի սրտմտութեամբ[94] և մեծաւ բարկութեամբ զայրանային, և զա-զանացեալ զօրութեամբ յիրեարս յարձակէին. և մռնչիւն աղաղա-կին երկոցունց կողմանց՝ իբրև ի մէջ ամպոց շփոթելոց՝ ճայթ-մունս գործէր, և հնչումն ձայնից զքարանձաւս լերանցն շարժէր։ Ի բազմութենէ սաղաւարտիցն և ի փայլիւն զրահիցն փառա-ւորացն իբրև նշոյլք ճառագայթից արեգական հատանէին։ Նա և ի շողալ բազում սուսերացն, և ի ճօճել բազմախուռն նիզակացն իբրև յերկնուստ ահագին հրաձգութիւնք հատանէին։ Բայց զի ո՞վ իսկ է բաւական առել զմեծամեծ աղմկալ ահաւոր ձայնիցն, որպէս կոփիւնք վահանաւորացն և ճայթմունք լարից աղեղանցն զխլեին ամենեցուն առ հասարակ խլացուցանէին։

Անդ էր տեսանել[95] շտապ մեծի տագնապին[96] և զաղէտա-ւորս տարակուսանացն երկոցունց կողմանցն առ ի յանդուգն յարձակմանէն զմիմեանս բախելով. բանզի թանձրամբոխքն յիմա-րէին և վատասիրտքն յանձէին, քաջքն խիզախէին և նահատակքն կոչէին։ Եւ խումբ արարեալ ամենայն բազմութեանն՝ զգեստ ի մէջ փակէին, և դանդիռեալ գունդն Պարսից ի զձաւարութենէ զե-տոյն՝ զանգիտեալ զնալ սկսան։ Իսկ գունդն Հայոց հասեալ ան-ցանէին[97], մի ի վէր ամ առեալ յարձակէին մեծաւ զօրութեամբ. սամանապէս բախեալ ընդ միմեանս, յերկոցունց կողմանց բա-զում վիրաւորք յերկիր անկեալ զլորելով խաղային[98]։

Յայնժամ մեծ տագնապի ի վեր հասեալ քաջն Վարդան, և տե-սանէր զխումբ չնաբի քաջ նահատակաց Պարսից զօրուն, որ ձախակողմն շարժեցին զՀայոց գնդին. մեծաւ ուժով յարձակէր ի տեղին, և զայ թէև Պարսից գնդին բեկեալ՝ արկանէր զզաւրանօքն, և շրջան առեալ հատանէր մինչև ի նոյն տեղին։ Եւ այնպէս շտապ տագնապի[99] ի վերայ հասուցանէր, մինչև գունդն Մուշկան[100] քա-կեալ[101] բանակեցան[102] ի մեծամեծ պատերազմութենէն, դեռ ևս քաջ քաջ ի փախուստ դառնային։

Ապա դէտակն ի վեր համբառնայր Մուշկան նիւսալաւուրտ, բակեալ զոմանս տեսանէր ի գնդէն Հայոց, և զնիդ մնացեալ ի հովիտս լերանցն։ Վասն որոյ զադազակ բարձեալ՝ բաջալերէր

շուրջ զԲիւրեաւ զզօրս Արեաց, որք զօտեկի առեալ կային ընդդէմ գնդին Վարդանայ։ Եւ անդէն ի տեղւոջն երկոքին կողմանքն զպարտութիւն խոստովանէին, և առ յոյժ թանձր անկեալ դիականցն իւրեանց զբարձրակոյտ բլրակաց երևէին։

Ձայն իբրև եհաս Մուշկան Նիւսալաւուրտ, մեծայր զաղանացն Արշաւրի, որ ի վերայ նոցա նստէր ի բարձր դիտանոցին իբրև յամուր քաղաքի. և ի ձայն մեծ գալարափողոցն զիւր գունդն առնոյր, և յառաջամարտիկ զօրօքն զնա ի մէջ փակէր։

Իսկ կորովին Վարդան խրոխտ քաջ նիզակակցօքն ոչ սակաւ նախճիր ի տեղւոջն գործեաց, յորում անգամ և ինքն իսկ արժանի եղև առնուլ զկատարեալ նահատակութիւնն։

Եւ յերկարել գործոյ պատերազմին՝ օրն տարաժամէր, և մօտ առ երեկս կարճատէր, բազմաց օրահար մահու հասանէին, մանաւանդ ի թանձրութենէ անկեալ դիականց մօտ առ մօտ խառնեալ իբրև զփայտահատս մայրեաց։

Անդ էր տեսանել զբեկումն նիզակացն և զխորտակումն աղեղանց. վասն այնորիկ և ոչ կարէին կալ ճշմարտիւ ի վերայ սուրբ մարմնոյ երանելեացն, և սաստիկ խուճապ տագնապի[100] էր կողմանցն երկոցունց անկելոց։ Եւ որք մնացեալքն էին՝ վառեալք և ցրուեալք լինէին[101] ի յեռանդաշատ ամուր ձորոցն. և յորժամ, պատահէին միմեանց՝ դարձեալ միաբանեալ զմիմեանս սատակէին։ Եւ մինչև ի մուտս արեգականն անդադար լինէր գործ զանազանութեանն[102]։

Եւ քանզի գարնանային էր ժամանակն, ծաղկալից դաշտքն զառնային հերձաձևս արեանց բազմաց։ Մանաւանդ յորժամ տեսանէր ոք զբազմակոյտ դիականցն անկելոց, սիրտն բեկանէր և աղիքն զալարէին՝ լսել զմնչիւն[103] խոցելոցն և զմռնչիւնս[100] բեկելոցն, զթաւալգլոր խաղալ սաղաւ վիրաւորացն, զփախուստ վատացն, զթարթուտ լքելոցն, զարտաթափումն զանարի[77] արանցն, զճչիւն[103] կանացեալն, զողբս սիրելեացն, զաշխարումն մերձաւորացն՝ զլալ և զաւաղ բարեկամացն։ Քանզի ոչ եթէ կողմ էր՝ որ յաղթեաց, և կողմ էր՝ որ պարտեցաւ, այլ քաջք ընդ քաջս ելեալ՝ երկոքին կողմանքն ի պարտութիւն մատնեցան։

Բայց քանզի անկեալ էր զօրավարն Հայոց ի մեծ պատերազմին, ոչ որ գոյր այնուհետև ի մէջ զխաւոր՝ յոր յեցեալ ժողովէին զունդք մնացելոցն։ Թէպէտ և բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռան, սակայն ցանեալ[79] ցրուեցան, և հա-



սեալ անկանէին ի տեղիս տեղիս յամուրս աշխարհին, և բռնանային ի վերայ բազում դաստաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր...։

(V ԳԼ.)

4

Իսկ կանայք երանելի առաքինեացն և կապելոցն և անկելոցն ի պատերազմին՝ ընդ ամենայն աշխարհն Հայոց համօրէն համարել են ոչ կարեմ, զի բազում այն են՝ զոր ոչ գիտեմ, քան թէ գիտիցեմ[104]։ Զի հինգ հարիւրով չափ յականէ յանուանէ ճանաչեմ, ոչ միայն որ ազատազգիքն էին, այլ զբազումս ի կրտսերագունեաց[105] անտի[106]։

Ամենեքեան միահամուռ զկրկնաւոր նախանձ բերելով, ոչ ինչ ընդդէմ երենցեան յայտնեալ՝ որ ոչ ճաշակեցին զաշխարհն։ Քանզի եթէ ազատազգիք էին, և եթէ մանկազգիք, զմի առաքինութիւն հաւատոյ զգեցան։ Ոչ ինչ յիշեցին ամենեքին՝ զանուն փափկութեան մայրենի ազատութեանն, այլ իբրև մարդք, որ վշտամբերք լեալ իցեն անդստին ի չինական սովորութեանցն, առանձինն վարեալ զկեանս աշխարհիս, անդրադարձեալ են բան զնոսա յանձն առին զհամբերութիւն վշտացն։

Ոչ միայն յուսոյն մխիթարեալ կային առ անհերանայթ զօրութիւն յաւոյն յաւիտենից, այլ և մարմնոյ նեղութեամբք առաւել քան զբարձին զբեռն ծանրութեան[107]։ Զի թէպէտ և ունէին[108] զդրաստանչիք ձեռնասուն սպասաւորս, ոչ ոք երևէր ի նոցանէ՝ թէ ո՛ր տիկինն իցէ[104] և կամ ո՛ր նաժիշտն. մի հանդերձ էր համայնական[109], և միագէս զեռնախիշտք երկոքեան։ Ոչ ոք ուռէր անկողնարկ լինէր. քանզի և չձանաչէին իսկ զխտրոցեան ընդրել ի միմեանց. մի գոյն Թխութեան[110] փափկացն, և մի գոյն սևութեան[110] սնարից բարձիցն։

Ոչ գոյր նոցա խաձամարր անուշարար սառնէին, և ոչ հայրարար դրաշեալ ի պէսս պէսս բառ ազգաց կարգի, այլ համարականք էր։ Նարաթովմուան բառ կարգի միայնակեցաց, որ յանապատս բնակեալ են։ Ոչ ոք ուռէր ջուր ի ձեռս արկանէր, և ոչ կրտսերք[111] ասացեալ զաստատակս մատուցանէին. չանկաւ օշնաւ ի ձեռս փափկասուն կանանց, և ոչ մատուցաւ եղ ի զուարթութիւն խրախութեան։ Զեղան առաջի սպաս սեղանոց, և ոչ անկան բաժակակալք յուրախութիւն. չեկաց սպասս նոցա նուիրակ առ դուրս, և ոչ կոչեցան պատուականք յարանց ի սեղանս նոցա. սիրեցեալ նոցա, թէ զուցէ ոք ամենեքին ի բնակարանաց զալնեկաց և կամ ընտ ի սիրելի հարազատաց։

Փոխանակեցան և ծիածանեցան արուեստք և որսկալանք նորին ճարտարանց, և սարդիոստայնք ձգեցան ի սենեակս ապարանից նոցա. կործանեցան բարձրաշէնք տաճարաց նոցա. և խանգարեցան սպասք երախանաց նոցա. անկեալ կործանեցան ապարանք նոցա, և տապալեալ աւերեցան ամուրք[112] ազատաց նոցա։ Զարդարանք ապականեցան բազմականք ծաղկեցաց նոցա, աւերակ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա։

Աչօք իւրեանց տեսին զյափշտակութիւն աւարոց իւրեանց, և ականջօք իւրեանց լուան զչարչարանս մեծաց սիրելեաց իւրեանց. տարան գանձք իւրեանց յարքունիս, և ոչ մնացին ամենևին զարդք երեսաց իւրեանց։

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին, որ գրգեալք և գգուեալք էին յիւրաքանչիւր[113] բազմականս և ի գահաւորակս, հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից, անձանձրոյթ խնդրելով ուխտիւք՝ զի համբերել կարասցեն մեծի նեղութեանն։ Որ ի մանկութենէ իւրեանց սնեալ էին ուղղովք[114] կաքաւաց և ամենայն էրէոց, խոտաբուտ կենօք իբրև զվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խնդութեամբ, և ոչ յիշէին ամենևին զսովորական փափկութիւնսն։ Սևացեալ ներկան մորթք մարմնոյ նոցա, վասն զի ցերեկ արևակէզք էին և զամենայն գիշերսն գետնադիրք։

Սաղմոսք էին մշտնջենաւորք՝ մրմունջք ի բերանս նոցա, և մխիթարութիւնք կատարեալք ընթերցուածք մարգարէիցն։ Միաբանեցին երկու երկու իբրև ամոլք հաւանք[115] և հաւասարք՝ ուղիղ տանելով զակոսն արդարութեան, զի առանց վրիպելոյ հասցեն ի նաւահանգիստն խաղաղութեան։

Մոռացան զկանացի տկարութիւն, և եղեն արք առաքինիք ի հոգևոր պատերազմին. մարտ եդեալ[116] կռուեցան ընդ մեղսն կարևորս, հատին կտրեցին[117] և ընկեցին զմահաբեր արմատս նորա։ Միամտութեամբ յաղթեցին խորամանկութեան, և սուրբ սիրով լուացին զկապուտակ ներկուածս նախանձուն. հատին զարմատս ագահութեան, և չորացան մահաբեր պտուղք ոստոց նոցա։ Խոնարհութեամբ կոխեցին զամբարտաւանութիւն, և նովին խոնարհութեամբ հասին երկնաւոր բարձրութեանն...։

Այրիք որ ի նոսա էին՝ եղեն վերստին հարսունք սրբութեան, և բարձին յանձանց զնախատինս այրութեանն։ Իսկ կանայք կապելոցն կամօք կապեցին զմարմնաւոր ցանկութիւնս, և եղեն կցորդ չարչարանաց սուրբ կապելոցն. ի կենաս իւրեանց նմանեցին քաջ նահատակացն մահուամբ, և ի հեռաստանէ եղեն վարդապետք մխիթարիչք բանտարգելեացն։ Մատամբք իւրեանց վաստակեցին և կերակրեցան, և զկարգեալ ռոճիկ նոցա յարքունուստ՝ ամ յամէ թօշակ առնէին և տային տանել նոցա ի մխիթարութիւն։ Անտրիւն ճիգանց նմանեցին, որ երգոյն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան, և կենդանի են միայն զօդն ծծելով, զանմարմնոյն բերեն զնմանութիւն։

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք[118], եհաս գարուն, և եկին նորեկ ծիծառունք. տեսին և խնդացին կենցաղասէր մարդիկ. և նոքա ոչ երբէք կարացին տեսանել զանձկալիսն իւրեանց։ Ծաղիկք[119] գարնանայինք յիշատակեցին զպսակասէր ամուսինս նոցա, և աչք իւրեանց կարօտացան տեսանել զցանկալի գեղ երեսաց նոցա։ Սպառեցան բարակք որսականք, և խցեալ կուրացան[120] արշաւանք որսորդաց։ Բանգրոք յիշատակեցան նոքա, և ոչ մի տօնք տարեկանաց ոչ ածին զնոսա ի հեռաստանէ. ի ճաշատեղս նոցա հայեցան և արտասուեցին, և յամենայն յատեանս[121] յիշեցին զանուանս նոցա։ Բազում արձանք կանգնեալ էին յանուն նոցա, և անուանք իւրաքանչիւր նշանակեալ ի նոսա։

Եւ թէպէտ այսպէս յամենայն կողմանց ալէկոծ լինէին միտք նոցա, ոչ ինչ կասեալ թուլացան յերկնաւոր առաքինութենէն։ Արտաքնոցն երևէին իբրև այրիք սգաւորք և չարչարեալք, և յոգիս իւրեանց զարդարեալք և մխիթարեալք երկնաւոր սիրով։

Ոչ ևս սովորեցին հարցանել զինչ ոք ի հեռաստանէ, եթէ ե՞րբ լինիցի մեզ տեսանել զսիրելիսն մեր...

(էջ 179—182)[1]

[1] Համեմատել և որոշ ուղղումներ ենք կատարել ըստ գիտական նորագույն հրատարակության (Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957 թ.)։

## Ը. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ (5-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

*(Հատված)*

Եւ ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունեացն յերկուս, առ ի հնազանդեցուցանել զկողմն արեւմտից աշխարհիս Հայոց թագաւորին Յունաց ընդ իշխանութեամբ իւրոյ տէրութեանն, և զկողմն արևելից խոնարհեցուցանելով դառն և բռնաւոր ծառայութեամբ՝ արքային Պարսից՝ երթեալ այնուհետև նախարարքն Հայոց ի վիճակէ[1] մասին արքային Պարսից՝ խնդրէին իւրեանց թագաւոր ըստ բնիկ նախնի կարգին յազգէն Արշակունեաց։ Եւ արքայն[2] Պարսից Շապհոյ կատարեալ զհայցուածս նոցա՝ շնորհէր[3] նոցա թագաւոր Խոսրով անուն[4] յազգէն Արշակունեաց։

Քանզի նախկին թագաւորն Հայոց Արշակ ունէր միահեծան զթագաւորութիւնն ի վերայ ամենայն աշխարհիս Հայոց։ Իբրև եւս, թէ խախտեալ քայքայեալ մասնեցաւ ի բաժանումն մեծ իշխանութիւն թագաւորութեան ազգին իւրեանց՝ մեծաւ տրտմութեամբ խռովեալ[5] տարակուսէր յանձն իւր. տեսանէր նախ զանկանելն ընդ լծով ծառայութեան երկուց թագաւորաց զաշխարհս Հայոց. և դարձեալ՝ զմեծ մասն, զլաւն և զպիտանին և զարգաւանդն աշխարհիս Հայոց անկեալ ի բաժին արքային Պարսից. քանզի թէպէտ հասեալ բազում գաւառք այլ ի ժառանգութիւն մասին թագաւորին Յունաց՝ սակայն համեմատէին այն միայն Այրարատեան գաւառին։ Խորհուրդ բազմածուփ հանդերձ խռովք սրբելոց ի մէջ առեալ թագաւորն Արշակ՝ մտաւոյոյ լինէր ի սիրտ իւր առնլով. «Թէպէտ երբէք մինչև ցայժմ կա՛մ հակառակութեամբ կամ սիրով եղեալք մեք ընդ միմեանս՝ զդադարեցեալ էր մեր[6] նոցա գործով պատերազմի, որպէս և պարտ էր ճանաչել առն զփորձ միւսոյ ևս յառաջնոյն քան զինքն. և թէ խոնարհեալ դիպէաք ի սէր առ միմեանս՝ սակայն եղբայր լինէաք հաշուեալ նոցա, պատուով և զահակցութեամբ ըստ կրսերագոյն մասին, և ոչ ընաւ անկեալք ի բաժին՝ զանուն ծառայութեան առաջնոյ կրէաք յանձինս։ Իսկ այժմ, յաղագս դատուցանելոյ մեր և մերոց ազգայնոցն զերկայնամիտ և զքաղցր Աստուած՝ մատնեալ անկաք ի ստրկութիւն, և խոնարհեալք յանարգութիւն՝ անզօրութեամբ գանեալք ի բաժանումն... Վասն որոյ ընտրելագոյն լինի ինձ թողուլ զանձկալի և զամենատենչ վայրս երկիրս Այրարատոյ, զդինին և զանուշահոտ անդիս նախնեաց իմոց, և գնալ զկնի ազատութեան և կեալ բազմայի կարգաւոր՝ քան թէ սիրել զկենցաղս աշխարհիս, զոր իբրև թողլոց եմք սակաւ. և ընտրել զհնազանդութիւն մասին այսորիկ՝ քան բնակել անարգանօք ի մէջ անօրինաց և կեալ միշտ ցաւօք մտաց զյիշելով և կամ զկարճ կեանս անյոյսս կենցաղոյս, և վախճանել անարգութեամբ, ըստ որում ոչ արժանի թագաւորական պատուոյ և շքեղութեանս։

Եւ խորհելով զայս ամենայն Արշակ թագաւորն ի միտս իւր յենալ մերժեալ թողուլ[7] զԴուրս և զհին ժառանգութիւն նախնեաց իւրոց, զգաւառն Այրարատոյ[8], զհոյակապն և զհռչակաւորն և զականաւորն. զամենաբերն[9], զամենաբուղխն, զամենալին, զամենագիւտն ի շահս և ի զարդարանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սնգափութեան. զդաշտս մեծատարածս և որսալիցս. զլերինս շուրջանակի զեղեցկանիստս և պարարտարօտս. զհոծեալս էրէովքն կճղակաւորածնիւք և որոճայնովքն՝ և այլովք ևս բազմօք ընդ նոսին։ Յորոց[10] ի վերուստ ի կատարացն ջրոց հոսմունք անկարօտ առողջան արբուցանելով զդաշտս՝ մատակարարէ անբաւ բազմութեամբ յառատն, կանամբք, արմտիք և ընտանեօք, զանպակասութիւն[11] հացի և գինւոյ, զանուշահոտ զմեղրահամ[12] քաղցրութիւն[13] բանջարացն և զզանազանումն խոզարալիցս ծաղկանցն։ Իսկ ի լանջակողմանան կամ ի ստորահարթ անտառ սփռեալ, յոր զփախեղուցեալ զհայեցած նորաբուսակ մարդոց հանդերձս ինչ և ոչ ծաղկարոյս զոյնս կարծեցուցանեն սփռեալս պարարտարօտք և պարարտ արօտք պարարտաշամբ. որոց թանձրախիտ մեծամեծք խառոյն զանթիւ արտասահմանս ընդանի իւրեանց և զանհամբոյր բոլոր վայրենի էրէոցն յագեցուցեալ՝[14] թանձրաթաւանթ, առոգագոյնք, անպայման զիրութեամբ զինու մարմինն ցուցանեն։ Իսկ սառնկարկառումն անուշահոտ ծաղկանցն, որ զարմացն բաղեաց պատուէր ներքոյդեմն և զհոտաւետ բուրմէլեացն, ընձեռելով առողջութիւն՝ զօրացուցանեն զզայութիւն խելացն և նորոգեն[15]։ Անդ զառանին և ազգի ազգի արմատք բուսոց ի դեղս օգտակարութեան ցեղոց, ըստ ճարտարագէտ ճանաչողութեան առուցանմուստ բժշկացն յօրինուածոցն, երագահաս ախտահալած սպեղանիք, և կամ արմատք՝ յերկարելոյն ի ցաւս պատահացուցանեն առողջութիւն։

*Իսկ զոչացեալ ամենայնութիւն զկամս աշխատասիրացն կորզելով քննութեանց իբրև բանիւ, և ասելով որ զինչ և է բարով՝ եւ առանց փութանակի զգործն առ ինքեանս հրաւիրեն մխիթարաժայնս. Որք ոչ միայն երևելութեամբն ցուցանեն, վերաբերեալ աշխահասարութիւն օգտից[11] մարդկան, այլ առանց յորդորականաց աշխատողացն[15] զառ[16] ընդ երկրաւ ծածկեալ օգտաւ ուսուցանեն, զանձեւ անձանց շահս և զվայելս այսր աշխարհիս ի մեծութիւն թագաւորաց և ի հաստատութիւն հարկահանաց, զոսկի և զարծաթ և զերկաթ և զպատուական քարինս. զոր ընկալեալ արուեստով ձեռաց՝ զարդարեն զթագաւորս մեծատունս, զարդերն յօրինուածովքն, զոր ի խոյրսն և ի թագսն և ի հանդերձսն յաւելեալ պաճուճեալս ընդելուզանեն։ Այլ և մաշեալ քրոջ՝ համառօտ անուշութիւնս մասուցանեն կերակրացն զխորտիկացն որոշութիւնս. Նաև զարմանս եղջերուաց թռոցն ոչ ընդունայն անուցանէ ցինքեան ամենապատած գոչուն Արարչութեան, այլ և ի նմանէ[17] ծնեալ որդւոց, ի զարդ կազմելու թևոց. ընծայէ օգտաւորացն շահս և շքեղութիւնս. Եւս և զհաւոցն զնոցա բազմապէսս ձկամբք մեծամեծօք և փոքունք, զանազանեալ համովք և այլ և այլ տեսովք՝ արարաքացուցեալ ցուցանէ[18] զչորեքին ընչից և յազգաց որովայնից մարդկայոց և անփոփեր ջանացողացն։*

*Սնուցանէ ցինքեան երկիրն ջրովք արուեստիւք և զաւակութիւն հաւուցն յօրախութիւն և ի մխիթարութիւն որսասէրաց մատուցն. զկենդանեացն բազդրածոյն առապարաւէր վիմաւորս արաման երամս կարաւաց և այծեմանց, և կամ զեղջերուաց թիւմուաս մազառատող պարարտամարմին զանազանեալ[19] աղջ աբարացն վայրենեաց. այլ և զբազմազան մանրախնդիր խոզակեր մեծամեծաց և յաղթամարմինս հաւքն, փորն և թևնձրն և աղջն. և կամ այլ բազում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն չորք թռչնոցն Իսկ թագաւորացն շրջափակութեամբք, երամակներն և զանհաշիւն, եկեալ ի յորս[20] զօրեղք նախարարացն որդւոցն ազատացն. որ ամանք զհետ ցուցն և այծեմանցն արշաւելով՝ զերամակն զազգեղնածայնն ենթ բարբառեցին. և այլք զհետ բոցից եղջերուացն և եզանց ձիարձակ եղեալ՝ զզօրծ կորովամիտ արանցն ցուցանեն. և կէսք ոսամբոք իբրև զմենամարտիկս՝ զառատկանգամ երամս վարազացն զլորեցուցեալ սպանանեն։ Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն զաստիարակօք և ծառայիւք զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազմաչիւք՝ զարձեալ ընծայեն ի յանձամն[21] ընթրեացն ուրախութեան. և այսպէս առլցեալ իւրաքանչիւր որսով՝ զնան ուրախացեալք։*

(Գրաւագ Ա.)

## Ե. ՍԵԲԵՈՍ (7-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

*(Հատվածներ)*

*1.*

Նենգութիւն Խոսրովայ ընդդէմ Մուշեղի: Անբատանութիւն իշխանացն Յունաց զԽոսրովայ[1] առ Մորիկ կայսր: Մորիկ պաշտպանէ[2] Խոսրովայ և զՄուշեղ կոչէ ի պալատն: Խոսրով առաջ կայսեր զաշխարհն բաժ ունի խոստմանն:

*Եւ եղեւ[3] բազում աւուրց յետ յաղթութեանն պատերազմին այնորիկ մեծի, մինչդեռ արքայն Խոսրով նստէր ի մէջ խորանին իւրում, և զօրն Պարսից շուրջ զնովաւ բանակեալ, և զօրն Յունաց հեռագոյն ի նոցանէ օթիւ[4] միով, արքայն բանակեալ հոծ բազմամբոխ լիութեամբ ասպատ իւրեանց, և կային զառաջեաւ[5] արքային ամենայն մեծամեծք նախարարք իւր—խօսել սկսաւ արքայն և ասէ[6]. «Եղէ՞ որ արժանի յետ[7] ի թագաւորաց աշխարհի, որ կարող է ընդունել զմեծ այդ թագաւոր զթշնամի իւր, զանկել թագաւորութեան իւրոյ, և ոչ առանցէ զնա և ՞չնչէ՞ զամենայն արու յաշխարհէ նորա, այլ առնիցէ զնա յորդեգիրս. Թող կացցէ նմա և ծիրանեար զարդարեալ մեծարիցէ, վանեալ զթշնամիս նորա, և հաստատեսցէ զնա յաթոռ թագաւորութեանն[8], և առնել նմա զանձ արքունական ի գանձուց իւրոց, արձակէ զնա բարեաւ զնալ զճանապարհ իւր։ Այսմ թիւ պարգևս շնորհեաց ինձ Մորիկ թագաւոր հայր իմ, զոր ոչ որ կարէ ի մարդկանէ շնորհել որդւոյ իւրում սիրելւոյ։ Պատասխանի ետուն նմա ի նոցանէ, և ասեն. «Արքայ, յաւիտեա՛ն կեաց. մեք ոչ գիտեմք, արժա՞ն իցէ[9] շնորհ առնել և թէ ո՛չ։ Զի ամենայն թագաւորութիւն զանձիւք հաստատեալ կայ. և զորս զամենայն գանձս թագաւորութեան առ՛ք վարեցին։*

Պատասխանի ետ արքայն և ասէ. «Զգանձս թագաւորութեանս իմոյ ընդ կողս դոցա ալյարէն արտաքս թափեցից հանդերձ նորանց ազխեալ գանձիւք, քանզի իմ է այն ամենայն։ Բայց ինձ այս կարի է, զի ապրեցաւ տիրատեացն այն և գնաց։ Այր քաջ է նա և վիրաւորն այլ զօրս գումարէ ի բաղչաց ազգաց արևելից»։

Պատասխանի եառւն նմա և ասեն. «Զախրատեացն զայն նորա զկրծուցին, քանզի մերով[10] աչօք իսկ տեսաք, զի կալաւ զնա Մուշեղն այն Մամիկոնեան, և ետ նմա երիվար և գէն, և արձակեաց»։ Զայս ասացին՝ զի կամեցան ի վերայ նորա չարիս։ Քանզի տեառնելով դհաւայս նորա չարաչարս՝ զարհուրեալ խռովեցան սիրտք իւրեանց ի նմանէ։ Եւ ոչ ինչ էած զմտաւ արքայն, եթէ զի՞նչ իցէ բանն այն, քանզի մանուկ տղայ էր և խակ։ Եւ ոչ ինչ յիշեաց զխոստովութիւն այնպիսի զօրացն. այլ հաստատեաց զմիտս իւր ի վերայ բանիցն ստութեան[11], և ասէ. «Կոչեսցի այսր[12] Մուշեղ. կապեսցի ոտիւք և ձեռօք, մինչև ես վասն նորա ծանուցից կայսերս»։

Ի նմին ժամու հրամայէ գրել նա յենեկար, և արձակու[13] զմի ի սուրհանդակացն առ Մուշեղ. «Փութով ե՛կ, ասէ, գործ հանել է կարի կարևորագոյն»։ Եւ հրաման ետ փուշտիպանացն իւրոց և ասէ. «Պատրա՛ստ լերուք, զի յորժամ եկեսցէ նա, և ես ձեռամբ նշանակեցից[14] ձեզ՝ յանկարծակի զձեռս նորա յետս կապեսջի՛ք և կապեսջի՛ք զնա. բայց պատրա՛ստ լերիք, զի այր քաջ է նա, և մի՛ թէ[15] կամ ինքն մեռանի[16], կամ զես սպանանէ[16]։ Եւ թէ ինքն իսկ մեռանի՛[16] ետ պատասխանի առաջ կայսեր վասն նորա»։ Այնպէս և բարապանացն պատուէր ետ, ասէ. «Զգո՛յշ կացէք, զի յորժամ եկեսցէ Մուշեղ ի դուռն խորանին իմոյ՝ ի բաց լուծէք ի միջոյ նորա զկամարն և զսուսերն, ասելով, եթէ «Ոչ է օրէն զինու հանդերձ մտանել յանդիման թագաւորին»։

Արդ՝ մինչդեռ առնէր նա համար հանդերձ ի մէջ զօրացն իւրոց, տեսանել[17] զթիւ կենդանեացն և մեռելոց, որք անկան ի պատերազմին՝ եկն եկաց առաջի նորա սուրհանդակն և ասաց նմա զգոյժն, և մատոյց նմա զթուղթն։ Իսկ Մուշեղայ[18] առեալ զթուղթն՝ ասէ ցնա, եթէ «Ողջո՞յն իցէ և խաղաղութիւն»։ Պատասխանի ետ սուրհանդակն և ասէ. «Ողջոյն է և խաղաղութիւն, և զայլ ինչ ես ո՛չ գիտեմ, բայց միայն զի հրամայեցաւ ինձ փութանակի կոչել զքեզ»։ Եւ տեղէն վաղվաղակի պատրաստեցաւ նա որպէս ի պատերազմ, քանզի արկ ի միտս իւր, եթէ գուցէ[19] հանել ինչ իցէ[20] գործ պատերազմի, կամ շնորհ ինչ իցէ[20] պարգևս[21] փութանակ վաստակոցն։ Եւ առնու ընդ իւր արս երկու



հազարս ի սպառազինաց՝ յազատաց և յանազատաց, որոց զինէր արժանիս պատուոյ, և վստահ էր հեծելութեամբ։

Էր գրեալ վասն նորա և առ Պապրիկն Յովհան, զի արձակեսցէ զնա, և նորա դարձեալ հրաման առեալ նմա երթալ այնպէս պատրաստութեամբ, և հրամայեաց ամենեցուն նոցա արկանել զանձամբ[22] զիւրաքանչիւր[23] զսպառազինութիւն։ Վառեցան և գնացին։

Եւ եկն[3] իջին մտին ի մէջ բանակին և մերձ եկին մօտ ի մաչկապերճանն արքունի, և հրաման հասանէր[24] ընդդէմ, մի՛ երթալ այնքան բազմութեամբ, այլ բացագոյն նստուցանել զնոսա, և նմա[25] սակաւ արամբք յանդիման լինել արքային։

Եւ նորա ոչ առեալ[26] յանձին առնել այնպէս, այլ գնաց զօրութեամբք մօտ ի դուռն խորանին արքունի. և զօրն Պարսից կային[27] շուրջ զխորանաւն սպառազինեալք. և իջեալ յերիվարէն՝ գնաց ի դուռն խորանին .Ռ. արամբք։ Եւ զօրն կային[27] այնպէս զինեալ իւրաքանչիւր երիվարօք։ Զարհուրեցաւ արքայն, և ամենայն զօրք նորա. և սկսան ծածկել զնենգութիւնն։ Եւ եկն[3] իբրև եհաս ի դուռն խորանին՝ մատեան բարապանք զդանն և ասեն. «Ե՛րթ զկամարդ և զսուսերդ ի միջոյ[28] քումէ, և մերկեա՛ ի քէն զսպառազինութիւն քո. զի ո՛չ է օրէն մտանել առաջի թագաւորին»։ Անկաւ կասկած ի սիրտ[29] նորա, սկսաւ պատրաստել և կազմել զինքն յարձակումն։ Պատասխանի ետ բարապանացն և ասէ. «Ի մանկութենէ իմմէ սնեալ եմ ես թագաւորաց ի նախնեաց իմոց և հարց, և այժմ հանել կամ[30] ի դուռն արքունի, ի տեղի հանդերձի։ Ես զսպառազինութիւնն իմ յանձնէ իմմէ ի բա՞ց մերկացայց, և լուծի՞ց զկամարս[31] և զգօտիս[31] յանձնէ իմմէ, զոր ո՛չ երբեք լուծանեմ ի տան իմում յայրախութեան...»։ Եւ հրաման ետ միում ընթանալ մանկանցն[32], զի յառաջ մատուցէ զզօրն յօգնութիւն. և ինքն դարձաւ անդրէն ի գնալ։

Ապա եկն արքայի, եթէ ոչ կամեցաւ այնպէս մտանել, այլ դարձաւ անդրէն և գնաց։ Եւ սկսաւ թագաւորն ծածկել զչարութիւնն և ասէ. «Թողցի արդ ի բաց խորհուրդն այն, թող[33] եկեսցէ, որպէս և կամեսցի»։ Քանզի ինքն մանուկ էր, և զօրութիւն զօրացն սաստ ինչ և սակաւ։ Կոչեն անդրէն և ասեն. «Հրաման ետ մտանել որպէս և կամիս»։ Նա դարձաւ և ասէ. «Թող[33] տեսից, եթէ զի՞նչ բարի խորհեցի առ ինձ արքայից արքայս»։

Եւ եկն մինչդեռ երթայրն նորա՝ ի դիմի հարաւ սոցա մի խոնարհեցաւ ի վերայ երեսաց իւրոց, երկիր եպագ արքայի, և կանգնեցաւ։ Եւ արքայ ոչ ձգեաց զձեռն իւր որպէս երեկն և

Եւանդըն՝ ընդդիմանալ զնա և աղջատել, այլ կայր այնպէս յամառու-թեամբ. և անդ կացին այսպէս յամառութեանն։

Երկեաւ արքայ և զանգիտեաց[34], և ոչ կարաց տալ հրաման՝ որպէս խորհեալ էր, և տալ կամ մեծ կամ փոքր՝ յերկիւղէն։ Եւ նա զարմացեալ եւ փութանակի ի խորանէն. մատուցին նմա զերի-վարն, հեծաւ և գնաց։ Եւ եղև իբրև եկն զայն արքայ՝ յոյժ երկ-նեաւ, և կամեցաւ ծածկել զխնդ իւր. յանն եկաց ի զաւճայքն և ընթացաւ ի դուռն խորանին, եւ արտասուօք և արձակեաց զձեռս նորա զամն գլխաւոր նախարարի։ Եւ տանել առ կնքեալ՝ երդումն, և կոչել անդրէն, որի պատուով և մեծարանօք գնացցես, ասէ, ասա ի, և մի՛ համարիր ի միտս քո խորհել վասն քո այլազգ ինչ։

Եւ նորա ո՛չ կամեցեալ[35], այլ գնաց ճանապարհ[36] իւր։ Եւր՝ նա խորհեալ նոցա զայս՝ յիրորդ ժամու գիմել ի վերայ խորա-նին և սպանանել զնա։ Եւ հրաման տուեալ[37] զօրացն՝ որք պա-տրաստեալ շուրջ զխորանաւն Խոսրովու կային։ Վասն զի եկեալ ի զգացումն և զօրաց նորա զխռովութիւն՝ զազդարեցին ի խորհրդ-դոյն և գնացին։

Եւ եղև մինչդեռ երթայրն նորա՝ ի գիմի հարաւ սոցա մի ոմն ի փուշտիպանաց արքային, և ըմբռնեալ զնա՝ տարին զնային ընդ իւրեանս. և պատմեցաւ նմա Մուշեղ երդմամբ, զի եթէ ոչ պատմեսցէ նմա[38] զնենգն վասն նորա խորհրդոյ՝ մեռցի։

Իսկ նորա երդմնեցուցեալ զնա, զի մի՛ ասասցէ զնա ի ձեռն արքային. և պատմեաց զամենայն։ Եւ նա ի միւսում աւուրն ընդ առաւօտն գնացեալ ի դուռն Պատրկին Յովհաննու, եւ նա զնա և խռովեաց զամենայն զաւրսն, ամենայն առանց զստրիկան փուշ-տիպանն, որ և նա եկաց և խռովեաց զամենայն եդեալ բանս խոստմանց իշխանօքն և ամենայն զօրն. բայց և նոցա[39] յիշելով ընդդէմն և զխռովութիւնն կայսերն, ոչ ինչ ի վեր հանէին զբան-սն։ Առաքեն գրել առ թագաւորն և ծանուցանել նմա զամենայն զարմսն. Բայց սակայն Մուշեղ յանդիման ամենեցուն. եթէ ոչ մեծայն այդ այն՝ ի նորա ձեռն կորնչելոց է ամենայն երկիր Հռովմայեցւոց տէրութեանցս։

Յայնմ ժամանակի զօրացեալ ընդդէմ, մեծ աւարառութեամբ թագաւորին իւրեանց, պատկեր և խաչ մի ի զմբուխտ և ի մար-գարիտս յօրինեալս ոսկի և արծաթ բազում յոյժ, և ակունս պա-տուականս չընդհատելի, և հանդերձս պճնեալս և զգեստուց՝ որ է զարդ իւրեանց յօրինեալ թագաւորացն Պարսից. երիվարս ար-քունականս հանդերձ նոցուն իսկ արքունական կազմուածովքն։ Եւ զօրձեալ ընծայս, և ատորն հանդերձ ոսկետար հրովարտակաւ,



գրեալ և ամբաստանութիւն զարքայէն Խոսրովայ[40], և զամարսն զհետ ընծայքն հեծեալս չորիք հարիւր։ Ազդ լինի Խոսրովայ, եթէ հասին տանել ի զանձուց քոց՝ զանձ առաքումն թագաւորին իւ-րեանց, և գրեցին զրէն ամբաստանութեան։ Եւ ընդդէմ առաքեալ զաւ-նութեամբ Խոսրով՝ արձակէ զկնի նոցա զօր, զի հասցեն ի ճա-նապարհ և կոտորեսցեն զՄուշեղն յանկարծօրէն զաղտագողի. և առեալ զգանձն արքունի՝ հասուսցեն առ նա։ Այնպէս իսկ[41] փու-թանակի զհետ գնացեալ և վասն իրացն և իշխանացն յանկասկածս՝ և նո-ցա առեալ զկնի նոցա զօր բռնադրյն, և հասեալ անդէն ի մօտոյ՝ ոչ ապրեցուցին ի նոցանէ և ո՛չ մի։ Եւ բանն ի վեր ոչ ել. և զզօրն տարեալ հասուցին ի պալատն մեծաւ խնդութեամբ։

Ընկալաւ թագաւորն զընծայսն, և առաքէ[42] հրովարտակ մե-ծաւ շնորհակալութեամբ ի ձեռն իւրոց հրեշտակի, և գրէ[43] առ նոսա ի բաց կալ ի խորհրդոյն յայնմանէ, զոր ամբաստանեալ զթագաւորէն. «Եթէ ոչ զգուշանայցէք անձին դորա՝ ի ձեռաց ձե-րոց խնդրեցից զդա»։ Գրէ և առ արքայն՝ զհաւութեամբ արձակել զամենեսեան։

Յայնժամ արքայն Խոսրով ետ ամենեցուն բազում իւրաքանչիւր չափոց պարգևս, և արձակեաց յերկէլ։ Եւ իւր չու արարեալ[44] յԱտրպատականէ՝ գնաց յԱտրեւ..., ի բնիկ թագաւորական կա-յեանս իւր։ Եւ հաստատեցաւ յաթոռ թագաւորութեան. և զխոս-տացեալ պարգեւն կայսերն կատարեաց. ետ նոցա զԱրուաստան ամենայն մինչև ցՄծբին, և զերկիրն Հայոց, որ ընդ իւրով իշխա-նութեամբն էր, զաւանն Տանուտէրականն[45] մինչև ցգետն Հրազ-դան[45], և զգաւառն Կոտէից[46] մինչև յաւանն Գառնի և ցեզր ծովուն Բզնունեաց[47], և զԱռեստաւան[48] և զԳոգովիտ[49] գաւառ մինչև ցՀեր-թին[50] և զՄակու։ Եւ կողմն Վասպուրական գնդին էր ի ծառա-յութիւն Պարսից արքային։ Եւ ի նախարարացն Հայոց՝ բազումք ի Յունաց կողմանէ և սակաւք՝ ի Պարսիկս։ Ետ և զմեծ մասն Վրաց աշխարհին մինչև ցՏփխիս քաղաք։ Բայց զՄուշեղն զայն կոչեաց թագաւորն ի պալատն. և այլ ո՛չ ետես զերկիրս։

(մ)

§ 2.

Նենգաւոր խորհուրդ Մօրկայ՝ բառնալ յիշխանաց Հայոց կացուցանել զՀայս: Փոխումն բազում իշխանաց յունական մասինն Հայոց առ Պարսիկս:

Յայնմ ժամանակի թագաւորն Յունաց Մօրիկ հրամայէ գրել առ թագաւորն Պարսից գիր ամբաստան վասն իշխանացն ամե-նայն Հայաստանեայց և զօրաց իւրեանց. «Ազգ մի խոտոր և ան-

հնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորեն: Բայց ե՛կ, ասէ, եւ զիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ. և դու զզօրս ժողովէ[51] և հրամայէ[51] յՍիրենիս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն[52]. և մեք կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ դոցա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանգչել ոչ լինի[53]:

Միաբանեցան երկոքին: Եւ սկսաւ կայսրն հրաման տալ, զի ժողովեսցին զամենեսեան և ի Թրակէ գումարեսցին. և սաստիկ տագնապաւ էր՝ հրամանն կատարէր: Եւ սկսան փախչել ի կողմանէն յայնմանէ և գալ ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ[54] որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր: Իսկ նա զամենեսեան ընդունէր մեծարանօք և մեծամեծ պարգևս քան զկայսր պարգևէր նոցա. մանաւանդ իբրև տեսանէր զխափանումն նոցա ի կայսերէն՝ եւ առաւել մեծապէս սիրով կամէր կորզել առ ինքն:

(ԺԳ)

3.

**Հրաման դարձեալ ի կայսերէն՝ ժողովել զօրս ի Հայոց և առաքել ի ձեռն Սահակայ Մամիկոնենի և Սմբատայ Բագրատունւոյ, դառնալ Սմբատայ անդրէն յետս և խորհուրդ ապստամբութեան: Սմբատ բռնեալ և ածի ի Կոստանդնուպոլիս. ճառանի վճիռ[55] ի վերայ նորա արկանել ի կիւնիկն[56]: Նահատակութիւն Սմբատայ և զատանել օղորմութիւն. զկնի առնոր նորա յԱփրիկէ[57]:**

Յայնմ ժամանակի դարձեալ հրաման ելանէր[58] ի կայսերէն՝ վերստին քննել և խնդրել յաշխարհէն Հայոց զայր և զձի արս ընտիրս սպառազէնս .ՌԹ. հեծելոց, և տալ ռոճիկս[59] արս հաւատարիմս և արձակել մեծաւ ստիպով:

Յայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս .ՌԹ. սպառազէնս և ետուն երկու հազար ռոճիկս[59] արս հաւատարիմս, մի հազար զՍահակ Մամիկոնեան և մի հազար ի ձեռն Սմբատայ Բագրատունւոյ, որդւոյ Մանուէլի: Եւ ոչ ընդ մի ճանապարհ արարեալ նոցա գնալ, այլ Սահակ Մամիկոնեան արձակեն միով հազարաւ ընդ Սեբաստիա, և զՍմբատ Բագրատունի միւսովն ընդ կողմանս Խաղտեաց[60]: Եւ Սահակ գնացեալ տանի հասուցանել զզօրն ի պաղատան, և յանդիման լինի Թագաւորին:

Իսկ Սմբատ հասեալ ի Խաղտիս՝ բանակեալ, քանզի երկեաւ զօրն ի ճանապարհէն, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն ընդ Թագաւորին խնդրել: Ապա լինի[61] Թագաւորին եղեալ իբրև. ապա



ի ձեռն հրովարտակաց և հաւատարիմ հրեշտակաց երդմամբ խոստանայ՝ մեծաւ պատուով փութանակի արձակել յերկիրն իւր: Եւ զորան խոստանայր պարգևս մեծամեծս և ինչս, և այնպէս ողոքեալ ածէ ի հաշտութիւն: Եւ գնացեալ միաբանութեամբ յանդիման լինէին Թագաւորին: Եւ Թագաւորն սպառազինէ զզօրն և զարդարէ և գումարէ ի սահմանս Թրակացւոց, և զՍմբատ մեծաւ պատուով յուղարկէ անդրէն հասանել յերկիրն իւրեանց բազում ստացուածովք:

Ապա դարձեալ սկսան միաբանել միացեալ նախարարքն Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց Թագաւորին և նուաճանել իւրեանց Թագաւոր, զի մի՛ և նոցա հասցէ[62] մեռանել ի կողմանս Թրակացւոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց: Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ունէր[63] զմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ, այլ ոմանք ի նոցանէ չոգմոգութեամբ հասուցին զբանս խորհրդեանն յականջս Թագաւորին, և ինքեանք այսր և անդր ցրուեալ խուսափէին[64]:

Յայնմ ժամանակի հասանէին[65] զնա պատուհասք հրովարտակօք, և կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ամարք նեխն արամբք և տարան յանդիման Թագաւորին: Եւ քննեալ զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարակին՝ հատաւ վճիռ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենուլ ի կիւնիկն[66]:

Եւ էր սա այր անհեթեթ անձամբ[67] և գեղեցիկ տեսլեամբ[67] և բարձր և յայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով: Յայնժամ հզօր և պատերազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ էր զիւր քաջութիւնն և զդիւցազնութիւն[68]: Այս է զօրութիւն նորա. քանզի անցեալ սա ի նիզակ անտառախիտ մայրեաց և զօրաւոր ծառոց, ի վերայ յաղթանդամ և հզօր երիվարին, և յարձակեալ զառաւօտ ծառոյն՝ բուռն հարկանէր, և կծկեալ ուժգին երանօքն և առեալ զմէջ երիվարին՝ վերացուցանէր երանօքն ի գետնոյն. մինչ զի ամենայն զօրացն[69] տեսեալ անհարին լինէին ի զարմացման:

Եւ արդ՝ մերկացուցեալ զնա և պատուեալ անդրավարտիւ և ընկեցեալ[70] ի կիւնիկն, զի կալի լիցի գաղանաց:

Եւ արձակեալ[71] ի վերայ նորա արջ: Եւ եղև՝ իբրև դիմեաց ի վերայ նորա արջն՝ նա աղաղակեաց մեծաձայն և ընթացաւ ի վերայ արջոյն, և զարկեալ բռամբ իւրով զճակատն, և անդէն սատակէր[72] զնա ի տեղւոջն:

Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցուլ: Իսկ նորա բուռն հարեալ զեղջերացն[73] ցլուն... և զաղաղակ հզօրին... և յօգնեալ ցուլն ի մարտին՝ գլուխ[74] պարարանոցն և խորտակէր զերկուսին եղջիւրսն ի վերայ գլխոյն. Թուլանայր ցուլն և յետս գնա-

յով ի փախուստ դառնայր։ Իսկ նորա[75] զնոսա ըմբռնեալ՝ բուռն հարկանէր յաջին[75] և ի կճղակն[76] աջոյ միոյ ոտին նորա, և ճմլեալ զկճղակն՝ մնայր ի ձեռին նորա։ Եւ ցուլն փնայր[76] ի նմանէ փախստական, միով ոտամբն բոկ։

Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա առիւծ։ Եւ եղև՝ ի վերայ նորա յարձակել առիւծուն՝ այնպէս իմն[77] յարձակեալ նմա ի առատնէ, բուռն հարեալ յականց[78] առիւծուն՝ հեծաւ ի վերայ նորա։ Եւ անդէն բուռն հարեալ զխոչափաղիցն[79] խեղդէր զառիւծն և սպանանէր։ Անդ աղաղակ բազում ամբոխին զերկինս լնոյին[78], և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի թագաւորէն։

Եւ նա վստահեալ ի մարմին՝ նստէր[79] ի վերայ առիւծուն մեռելոյ, զի փոքր մի հանգիցէ։ Անդ և կին թագաւորին անկեալ առ ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն, վասն զի սիրելի էր յառաջն[80] այրն այն թագաւորին և կնոջ նորա, և անուանեալ էր զնա իւր յորդեգիրս[81]։ Եւ նա զարմացեալ ընդ զօրութիւն և ընդ պնդութիւն առնն և լուեալ աղաչանաց կնոջն և ամենայն պաղատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա ողորմութիւն։

Ցայնժամ տարան զնա ի յատեանն[82] ի բաղանիս[83]. լուացին զնա և զգեցուցին, և կոչեցին զնա յընթրիս արքունի, զարմանացին զնա կերակրովք։ Եւ զկնի սակաւ ինչ աւուրց, մանաւանդ եթէ ոչ ի չար ինչ կամաց[84] թագաւորին, այլ ի նախանձորդաց չարախօսութենէ, հրամայէ հանել զնոսա ի նաւ և տարեալ ի կղզիս հեռաւորս. և ապա անտի հրամայէ ընդունել յԱփրիկէ, (և առնել նոցա անդ ի մէջ նոցա) և առնել զնա անդ ի մէջ զօրացն, որ էին անդ՝ արքունի։

(ՎԼ)

4.

Պատերազմ ի դաշտին Եղեվարդայ[84] և պարտութիւն Պարսից. այլ պատերազմ ի դաշտին Շիրակայ և պարտութիւն Յունաց: Երրորդ պատերազմ ի Սադկունս[85]: Անձնատուր լինել Թէոդոսի Խորխոռունւոյ զօրավարին Պարսից. Երթալ ի դուռն արքունի և ապա սպանանել:

Իսկ Զաւանն Վեհ, զոր արձակեաց ի կողմանս Հայոց հանդերձ զօրու իւրով[86] երթեալ հասանէ յԱտրպատական գաւառ և ի Դուին քաղաք ի ձմերային ժամանակի, և դադարեալ հանգուցանէ զզօրս իւր մինչև ի գալ հասանել գարնանային ժամանակի։



Ցայնժամ ապա և զօրն Յունաց ժողովեալ[87] գումարեցան[88] ի քաղաքագիւղն Եղեվարդ. և հասեալ ի վերայ նոցա զօրն Պարսից[89] եղև պատերազմ ի դաշտին Եղեվարդայ. հարին զզօրն Պարսից և կոտորեցին կոտորանամբ մեծաւ. և սպանին զզօրավարն ի պատերազմին, և զմնացեալսն փախստական արարեալ հալածական առնէին։ Եւ առեալ զաւ և զաւար զրանոցին[90] Պարսից՝ դարձան ի բանակետղն իւրեանց, որ կայ ի վերայ գետեզերն, որ կոչի Հրազդան մարզ։

Եւ եղև ի գալ ամին միւսոյ, մինչդեռ արքայ Խոսրով մարտնչէր ընդ Դարա[91] քաղաքի, գումարեցաւ այլ զօր Պարսից ի կողմանս Հայոց, և Դատոյեան զօրավար[92] նոցա։ Եւ զօրն Յունաց գումարեցան[88] ի դաշտն Շիրակ և ի գիւղն, որ կոչի Շիրակաւան[93]։ Եւ անդ զետեղեալ պատրաստեցան առաւօտ ինչ, և ինքեանք տագնապեալք յընթանս պատերազմէն և զարհուրեալք յարձակմանէ օտար թշնամւոյն։ Եւ զօրն Պարսից հասեալ[94] ի վերայ նոցա իբրև զխոյանալ արծուոյ։ Իսկ նոցա[95] թողեալ զաղէղ բանակին իւրեանց՝ անցին յայնկոյս գետոյն ի դաշտն, որ կոչի Աշկանից. և զօրն Պարսից հետամուտ եղեալ հասանէին նոցա։ Եւ լինի պատերազմն ի գիւղն որ կոչի Գետիկ[96]։ Եւ մինչդեռ տակաւին կախեալ էին ըզմ յանդիման գալ և մերձենալ առ միմեանս, իսկ բնակիչք գաւառին, որ էին ժողովեալ ի բերդն Երգինայի[97], և եկեալ անտի բազմութեամբ մանկտւոյ պերանդօք[98] և սփռանօք[99] անկան ի վերայ նոցա, և գործեցին մեծ ահիւ[100] վնասուց[101], թողին վիրաւորս, և առեալ զաւ և զաւար և զկապուտ՝ գնացին ի բերդն իւրեանց։

Եւ նոցա բաշխեալ պատերազմաւ՝ փախստական լինէր[102] զօրն Յունաց առաջի նոցա։ Իսկ նոցա[95] զհետ մտեալ կոտորէին զբազումս ի դաշտացն և ի ճանապարհացն գիր և թուալ կացուցանէին։ Եւ սակաւք մնացեալք փախստեայս գնացին։ Իսկ նոցա[96] առեալ զաւ և զաւարն՝ գնացին ի բանակն իւրեանց։ Եւ իբրև տեսին զհեծեալ չարութիւնն՝ համագունդ արշաւեալ ի բերդն՝ առնել զնա, զրաւեալ արով սպառազէնն և բազում զահաւէժ լինէին յանէ անտի[103], և կէսքն եկեալ ընդ զաւանն՝ որ բանակէր[104] ի կողմն գետոյն՝ փախստական զնայինն, և զայլսն ամենայն ի գերութիւն վարեցին։ Եւ գերեցան յաւուր[105] յայնմիկ ի բերդէն յայնմանէ գիւղ ․ՀՊ․ Եւ զամենայն նոյնպէս ի գերութիւն վարեցին, և ժողովեալ զամենայն զաւ և զաւար գաւառին. և զօրքն դարձան և գնացին Ատրպատական[106]։

Ապա եկն Մեհրան Խոսրով։ Եւ զօրն Յունաց գումարեալ հասանէ ի Սադկաւանն, մերձ ի գիւղն որ կոչի Անգղ, ընդ որ

անցանել գետն Արածանի. և ի միւս կողմանէ քակեալ զկուղն՝ ածին ամրութիւն շուրջ զինքեամբ[107], Եւ զօրագլուխ նոցա Թէոդոս Խորխոռունի[108], Եւ զօրն Պարսից եկեալ բանակեցան մերձ առ նոսա ի թիկանց կողմանէ. և նոքա զարհուրեալ խօսեցան ընդ նոսա, նախ՝ ի խաղաղութիւն, առայժմ ոչ ունել[109] պատերազմ, այլ թողուլ[109] զերեսն և երթալ[109] խաղաղութեամբ։ Ապա միաբանեալ եղեալ[110] ոչ հաստատեցաւ բանն, այլ վստահացեալ յամրութիւն իւրեանց կարծէին առնել ինչ։ Եւ եղև ի վաղիւ անդր[111] զինեալ գնաց ի վերայ նոցա զօրն Պարսից։ Եւ ոչ որ արկանէր ի նոցանէն զէն զանձամբ իւրով, և կամ թամբէր զերիվար իւր։ Եւ թէ որ զինէր զանձն կամ թամբէր զերիվար՝ հասանէին մահկունք իշխանացն, և հանեալ ի բաց ձգէին զզէնն, չարաչար տանջելով զայրն, և զզօտիս երիվարացն սրով հատանէին։

Եւ եկեալ զօրն Պարսից ճակատեցան մերձ առ նոսա զէմ յանդիման ի դաշտին կողմանէ, և ձգեալ բազմութեամբն՝ զօրու աղեղնաւորացն, և թափեցին ի նոսա զկապարճս իւրեանց, և ծակոտէին նետիւք իւրեանց առ հասարակ զամենայն այր և զերիվարս։ Եւ ընդոստուցեալ ամենայն երիվարք, որ կապեալ էին առ մսուրս առ իւրաքանչիւր դրան խորանաց, ընթացեալ աստթաւք հարկանէին զխորանսն և զբանակն ամենայն։ Եւ թշնամւոյն[95] հասեալ զամրութիւնն՝ անկաւ ի բանակն, և անհնարին լինէր կոտորածն. և նոցա[95] հասեալ զանգի մի, ամենք հեծեալք և ամենք հետևակք յանկուածոյն[112] ձի, եկին և գնացին փախստական։ Եւ Թէոդոս Խորխոռունի անկեալ ի բերդն ամրանայր[113], և ձառան նորա անդէն յայնմ գիշերի ի նոյն բանակեալքն։ Եւ եղև ընդ առաւօտն, պատգամ արձակէին[113], զի թողցեն զերեսն և գնասցեն իւրեանց կարաւանաւ և ամենայն կազմածովքն։ Եւ յանձին կալեալ նոցա[95] առնել այնպէս[114], Եւ յաւուրն երրորդի բացին զդուռն բերդին, և ելին գնացին ամենեքեան բստ տասցելոյն բանին։ Իսկ զԹէոդոս Խորխոռունի կոչէր[115] զօրավարն Պարսից և ասէր[113] ցնա. ոչ ունիմ իշխանութիւն[115] արձակել զքեզ առանց արքունի հրամանի, այլ տաց տանել զքեզ ի դուռն[116], և գրեցից վասն քոյ առ արքայ զամենայն բանս բարութեան[117], եթէ ո՛րպէս միամտութեամբ և արդարութեամբ գործեցեր, զի զզօրս նոցա ի ձեռս մեր այնպէս մատնեցեր, և այս զերեսդ առանց աշխատութեան ո՛րպէս եղաւ մեզ, և եկիր կամօք քովք ի ծառայութիւնս։ Եւ գրեաց բստ նմին բանի, և ետ տանել զնա ի դուռն։ Եւ արքայ խորով սիրով ընկալաւ զնա, և կարգեաց նմա ռոճիկս և հանդերձացիկս յարքունուստ։ Բայց յայս ժամանակիս եղեալ կարծիս[118] նենգութեան՝ հրամայեաց սպանանել։ Իսկ ի բերդին



Անգեղ նստուցեալ բերդակալ, և գումարեալ զզօրս իւր գնաց ինքն ի ներքսագոյն և նուաճեաց զերկիրն ի ծառայութիւն։

Եւ եղև յետ այնորիկ միաբանեալ պատերազմն ի կողմանս Բասենոյ[119], և եհար զԹայեն և հալածեաց. և փախստական արարեալ ընկէնոյր յերկիրն իւրեանց։ Եւ կալաւ նա բազում՝ զՄանզ և զԳայլատուս[120], զԹորգինայ, և ի Դարային զքաղաքն Միննինորք։ Եւ հրաման հասեալ յարքայէն՝ գնաց։

(Է)

---

### Հ. ՅՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ (7-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

*(Հատված)*

**Վահան գալայն Վախտանգայ ի Տարօն երևում ճակատու, որ և շինեաց զՕձոյ Բագաւն և գամուրն[1] զՎահանն[2], և կեցեալ ի Դըրգուռ[3] ամս երեք[4]:**

Դարձեալ[5] զօրաժողով եղև Խոսրով արքայ ի վերայ Յունաց երկրորդ անգամ, ի ժամ կայեալ[6] զմահն Միհրանայ քեռորդւոյն իւրոյ. և առաքեաց զՎախտանգ՝ զնորին հօրեղբայրն, երեսուն հազար բանիւք առն և ձիոյ: Իսկ նորա[7] եկեալ ի գաւառն Ապահունեաց[8], արձակէր հարկապահանջս ի Հարք և ի Հաշտեանս[9] և ի Տարօն: Եւ որ զրեն զաւառապետքն. «ԶԹէ Վահան տայ[10], և մերստացա թէ ոչ, ունայն զերայս[10] ի մէնօ»: Զայրացեալ յոյժ Վախտանգայ[11], խոռոխացաւ և բորբոքեցաւ. և թողեալ կողմնակալս յԱպահունիս, և փութացեալ այնօր եկն ի գլուխ Տարօնոյ: Եւ շինէ զառաջեայն Զիւնկերտ[12] քաղաք մեծ. և փոխէ զանուն քաղաքին բստ անուան կնոջն իւրոյ՝ զոր էած ընդ իւր՝ Գորդէս, այս ինքն Համեդ: Տնկեաց այգիս և բուրաստանս. և փոխէ[13] զաւարուշանն ի զուռն Կաթուղիկէին, զոր հիմնարկեալ էր սրբոյն Մաշտոցի[7]: Եւ ի վերայ լերինն Տարոնոյ շինեաց ամրոց, և կոչեաց զանուն նորա Դարհօր. քանզի անդ ունանք զաւանէ եղեն ի վերայ անասնոյ, կարծելով թէ հեծեալք են: Փոխէ զԳեռոյ լեռնարդյուրն, յանուն որդւոյն իւրոյ Գաէգունոյ՝ Գագիս, զբօսանելով յամառան աւուրն ի վերայ նորա: Եւ յղեաց պատգամ բազում Վահանայ[14], և թուղթ՝ գայս ինչ.

«Փաշ և հզօր բազկիդ Վահանայ ռկայի, զիցն ողնակենութեամբ ողջոյն:

Որ թէպէտ և ընդ մահ եղբօրորդւոյն մերոյ արտմեցար. բայց ընդ հզօր քո իմաստութիւնդ զարմացայ: Արդ ես եկալ եմ վասն



սիրոյ և խաղաղութեան, և դու արի՛ եկ առ իս, և երդուիր առ զեարկ արքային և կալ հնազանդ. և յառաջին պատուին ձեր մնալ, և այլ ոչ մատնել ի նենգութիւնս: Ո՞չ չեր ի զիցն աշխարհ»:

Եւ նա յղեաց նմա պատասխանի այսպէս.

«Վասն և թողլ անձինդ Վախտանգայ, և խաղ քոյոց զաւակացդ՝ որք զաղբս նաշակեն, ողջոյն:

Այլ թէպէտ ընդ մահն Միհրանայ խնդացի, բայց ընդ անմըտութիւնդ[15] քո լացի. որ զմահն[16] նորա յանցեր[17], և զիմ կորովութիւնս[15] ծանեար..., զիա՞րդ իշխեցեր գալ ի վերայ մեր: Այլ թէ ոչ եկիր առնել[18], զինչ ի հետ[19] բերէ՞ր անձն. մի՛ թէ որդի՞ խնդրես յերամաց մերոց. և եթէ սիրոյ պատճառանօք եկիր, զիմ քաղաքդ[20] է՞ր շինեցեր և ամրոցս: Այլ զիտեմ զի սուտ[21] ես, և իբրև գշուն բնՆիս: Արդ զկեանս քո առաջի մահու դիր, և յերկրէս արի՛ ել և գնա՛ խաղաղութեամբ. ապա թէ ոչ, զմահն՝ որ ընդ քեզ անցանելոց է՝ զայն[22] ամենայն երկիր տեսանէ[23]»:

Եւ նորա[7] բարկացեալ առաքեաց վեց հազար այր ի վերայ նորա ի Մուշ: Իսկ ունանք այդ արարին նմա, և ասեն՝ թէ գայ Թաճան ի վերայ քո վեց հազարաւ: Եւ նորա[7] զիշերագնաց եկեալ, գնաց ի վերայ նոցա՝ որք իջեանեալ էին ի Մեծամէն[24], և յանկարծակի եհար զնոսա որով, և ոչ ժամանեցին բերանել զերիվարսն: Թանգի որդի նորա Սմբատ ընդ մէջ անցեալ, կարեաց չորեք հազար երիվարս, և անցուցանէր[25] յայնկոյս Արածանւոյ[26], և հանեալ ի կողմն Հաշտենից: Եւ երկերիւր ձի յառաջին յաղթութեանն առաքեաց նասն եկեղեցւոյն ի Գլակայ վանսն. զի այն էր աւուր նոցա հայրենական. և անդ կերեցին զնա: Իսկ Վահանայ[7] առեալ զնոսա մօրացն[27] զբաղգամս կատարեաց, և զբազումս խոցոտեաց, և երկերիւր այր ի մօր անդր[28] ընկղմեաց:

Իշխանն Հաշտենից ունէր ընդ ձեռամբ իւրով երեք հազար վեց հարիւր այր, և իշխանն Պալունեաց երկու հազար և երկերիւր, և իշխանն Արշուց երեք հազար, և իշխանն Ծղնօտայ հինգ հազար, և իշխանն Վահան ութ հազար, և Սմբատ որդի նորա վեց հազար. ընդ ամենայն քսան և ութ հազար: Այս ամենայն զօրք կային ընդ ձեռամբ Վահանայ. բայց բռնաւորեալ էր, և կողմնապահս թողեալ ամենայն տեղեացն. և կային առ ինքն յաւուր[29] յայնմիկ երեք հազար այր: Եւ բազում նախճիրս գործեաց անդ իշխանն Հաշտենից. զի անապարհեալ կարեաց[30] զգլուխն Թաճանայ, և զզօրսն փախուստական դարձոյց: Եւ նեղեալ զնոսա, մինչև յաղաչանս անկեալ՝ և հարկս խոստանային տալ նոցա: Իսկ Վահան ասէ. «Տո՛ւք ի մեզ զգլուխն Թաճանայ, և թողում[31] զձեզ»: Եւ զօրքն ի բազում աղբաչանս լեալ՝ խնդրէին, և ոչ զտանէին: Ապա կալեալ զորդի

նորա զՎահ, եւառն զՎահան։ Իսկ իշխանն Հաչենից յառաջ մատուցեալ, ասէ. «Կամ տո՛ւք զԹահան ի մեզ, կամ տա՛ք երեսուն Հազար դահեկան»։ Եւ նորա ետուն երեսուն Հազար դահեկան, և դարձան։ Իբրև ետես Վահան եթէ գնան ամբողջ, ընտրանձն առանձայ նախանձեալ՝ յարձակեցաւ ի վերայ նոցա և սկսաւ կոտորել զնոսա։ Իսկ նոցա՝ դաղադակ բարձեալ, ասեն. «Ա՛ռ ի՞նչ զարձայր ի պատերազմ, ո՛վ անիրաւագործ»։ Եւ կոչեցաւ տեղին այն Ապիրատ։ Եւ տարեալ անձամբ զնոսա ի դաշտին, կոտորած սաստիկ գործեցին. և որք փախեանն՝ էին պակաս քան զՀինգ Հարիւր այր. որք երթեալ պատմեցին Վախտանգայ։ Իսկ նորա՝ բարկացեալ, հրամայեաց զխաւանել զնոսա՝ որք դարձանն. և ոչ մնաց ի վեց Հազարէն և ոչ մի։

Իսկ Վախտանգայ՝ ի լսումն բարկութեան[32] շարժեալ վասն Թահանայ, առաքեաց զօրձեալ զԱշոտ ի վերայ ութ Հազարաւ։ Որք եկեալ բանակեցան յեզերս Մեղրայ, և արձակեցին[33] առ Վահան այսպէս. «Ա՛յ չարաբարոյ դայլ Վահան, մինչ գիտես եթէ ծառայեալ ես Արեաց արքային, ընդէ՞ր այդպէս յանդգնեալ անօրէնես։ Արդ արի՝ ե՛կ առ մեզ, և լի՛ր հարկատու. ապա թէ ոչ, մեռանիս[34] որպէս դշխոյ։ Եւ նորա՝ լուեալ զայն, առեալ վեց Հազար այր՝ գնաց ի վերայ նոցա՝ ինքն և որդին իւր Սմբատ։ Իբրև կացին հանդէպ իրերաց, սկսաւ Աշոտ Թշնամանել զՎահան, և զայլ կոչէր նմա։ Եւ նա ասէ. «Ցիրուցի է անուն[35] ինձ, բանզի զամ կոտորեմ, երթամ և այլ զամ»։ Եւ սկսան մարտնչել ընդ միմեանս։

Իբրև խմբեցաւ պատերազմն, ահն կալաւ Սմբատ որդին Վահանայ ի վերայ Աշոտայ, և պատահեցաւ նմա։ Իսկ Աշոտ տեսեալ՝ եթէ պատանի է, քամահեաց զնա, և ասէ. «Պարապաշտ հարճորդի, ի բա՛ց կաց, զի ի պատերազմող արան նկանեմ անգամնեմ»։ Եւ նա ասէ. «Որդի սատանայի, չիրաւի է անուն քո Աշոտ, զի ասիր քո չէ ինչ, և ի մարտնչել ընդ մանկանն՝ ծանիցես զպարտութիւն քո»։ Եւ անձեալ զաւյրն՝ կորեաց[36] զգլուխ երիվարի նորա, և զնա յերկիր ընկէց. և յարձակեալ՝ էառ զգլուխն ի նմանէ... Եւ մինչ դեռ նա զայն առնէր, տասն այր պատեցին զՎահան. որպէս[36] որք զանտառն հատանեն, այնպէս յանխնայ կոփէին և նորա։ Եւ սկսաւ պակասել Վահան. և ձայն բարձեալ, ասէր. «Ո՞ւր ես Սմբատ որդեակ, հասի՛ր[37] յօգն ծերոյս։ Զի էր ամաց ութսուն և ութից[38]։ Իսկ նորա՝ քաջաբար ի վերայ յարձակեալ որպէս զարծիւ սրաթռիչ, ասէր. «Օգնեա՛ մեզ սուրբ Կարապետ»։ Եւ անդէն եհատ զգլուխ որդւոյն Աշոտայ, և ընդ մէջ ճեղքեալ՝ հանդերձ թիկամբն աչաց ի բաց ընկենոյր[39]։ Եւ զօրացեալ Վահանայ՝, զվեց երիվարին զգլուխն կորեաց[36]. և մտանէաց ոէր ի ձեռս նոցա զզօրսն Պար-



սից, և փախստական արարին զնոսա մինչև ցերեկոյն։ Եւ ի[40] յութ Հազարէն երեք Հազար միայն գնացին առ Վախտանգ։ Եւ նորա՝ լուեալ[41] մինչև ցմիւս ամն. և ի նոյն ամին վախճանեցաւ Վահան քաջն վրէժխնդիր ի վերայ եկեղեցւոյ, և նա առանել գրէրն ի Գլակայ վանսն. և կայ ի թաղմանն[42] ի դուռն սրբոյ Կարապետին, առաջի սեմոցն։

Իսկ ի միւսում ամի զօրս կազմեալ գումարեաց Վախտանգ քսան Հազար, և առաքեաց առ Սմբատ, եթէ «Կամ ե՛կ՝ որ[43] պատերազմիմք[44], և կամ հնազանդեա՛ց և տո՛ւր հարկս»։ Իսկ նորա՝ ժողովեալ տասն Հազար այր, գնաց ի վերայ նորա յԻննդակն[45]. և թողեալ զՀինգ Հազարն ի ջերմն, որ կոչին Մահու աղբիւր, և ինքն գնաց հինգ Հազարաւ ընդդէմ նորա՝ ի գդգանել զնա։ Եւ առաքեաց Վախտանգ տասն Հազար այր ի վերայ նորա, կարծելով թէ ինքն միայն էր ինքն զօրքն, և ի գիշերի պատեցին զնա. և նա կամէր ի գիշերի ելանել ընդդէմ, բայց արգելուին զնա բռնանայր զրան նորա... Եւ ել չահիւք ի վերայ զօրացն Պարսից. և յանկարծակի տեսին այր մի գեղեցիկ, որ լոյս փայլէր ի հերաց նորա, և զայս թշնամեացն կուրացուցանէր։ Զոր տեսեալ քաջին Սմբատայ՝, ասէ զզօրսն. «Քաջալերացարո՛ւք, որդեակք, և մի՛ երկնչիք... Եւ մի՛ ոք անհաւատալի զիրսն կարծիցէ»։ Զի ինքեանք սկսան մարտնչել ընդ միմեանս, և զմիմեանս սատակել... Եւ այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղատք արեանց ելանէին. որ և Թիլ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ։

Եւ իբրև վճարեցին ի կոտորելոյ զայնչափ բազմութիւնն, երկերիւր այր համարով թողեալ զբուցարարս այլոցն վասն առն՝ զոր տեսին ի գիշերին, զի և թշնամիքն ևս տեսին, և ինքն յառաջեաց[46] զերիվարսն նոցա ի Մուշն առան՝ առ որդին իւր, որ կոչէր ըստ պապանուանն՝ Վահան Կամսարական, զի զհետեւեալ բազաքին Հեծեալս տարաւ, և յաղթեցէ[46] փութով։ Եւ նորա՝ կազմեալ հեծեալս երկու Հազար և հինգ Հարիւր, հանէ առ Սմբատ իշխանն։ Իսկ նորա՝ խոյս տուեալ[47] աւուրս ութ, և պատրաստեաց զզօրս իւր. և յետ ութ աւուրն եկն եհաս Վախտանգն ի դաշտ անդր, և առ վաղին ընդպատրաստեցան ի պատերազմ։ Իսկ Սմբատ կարգեաց[50] ի գիշերին երկու Հազար այր հեծելոց, և անցոյց ի տեղի թաքստեան զդդարակէն յետուստ կողմանէ, և ի ջերմն՝ չայս[48] կողմանէ երեք Հազար։ Եւ յերկուս կողմանէն[49] սաղմ զաղտ կարգեաց. և ինքն զութ Հազար արան բաժանեաց ի վեց տեղիս։ Եւ ընդ առաւօտն կազմեցան. զի մի՛ զգացէ զարանան զիտասցեն, փութայէր ի դիմի հարեալ՝ չարժեաց զնոսա ի վերայ իւր։

Իբրև ճակատեցան ի պատերազմն ընդ իրեարս, զառաջինն յաղթահարեցին զՍմբատ։ Իսկ նորա ի բլուրն ելեալ, ասէր. «Ո՞ւր էք քաջք, յառաջ մատիք»[50]։ Եւ յամենայն կողմանց ի վերայ յարձակեցան, և ի մէջ առին զզօրսն Պարսից. և խառնեցաւ պատերազմն ընդ իրեարս[51], մինչ զի ոչ գայր հնար ճանաչել զմիմեանս, բայց միայն ի ձայն փողոցն և ի տեսս դրօշացն։ Իբրև ի դիմի հարան Վախտանգ և Սմբատ, ասէ[52] Վախտանգ. «Կա՛ց, հարճորդի, թէպէտ և զդաւաճանս ցնջեցեր, սակայն այսօր չպրծանիս[53] ի ձեռաց քաջ զօրացս, որ զէշ զէշ պատառեն զձեզ սուսերք մերս»։ Եւ Սմբատ ընդ մէջ անցեալ, եհար և կարեաց[54] զանձապահն բարձից նորա, և կործանէր խոցոտելով, և մերձ տարեալ կռնկենոյ(?) զՎախտանգ։ Եւ նորա՝ ձգեալ զաղեղն, եհար զկուրծս նորա. և ցցեալ, ի ներքս ոչ կարաց անցուցանել։ Եւ Սմբատայ ձայնս արձակելով... Եւ բախեալ տէգաւ ի թիկունս նորա, և անց ընդ դրահն ի ներքս, և եհան ընդ սիրտ նորա։ Եւ հանեալ զսուրն՝ կտրեաց զգլուխ նորա, և ոչ կարաց ունել. զի զրագոյն(?) մարդկանն վաղեաց զգլուխն Վախտանգայ։

Իսկ մի ոմն ի ծառայիցն նորա էառ զգլուխն նորա, և փախեաւ. և հասեալ Սմբատայ՝ եհար մրճովն ի վերայ գագաթանն, և զգեաց զսաղաւարտն, և զխոյծն ուղեղն փռեալ՝ անկաւ առաջի սաղաւարտն մրճին[55] Սմբատայ, և հայրի(?) կարաց հանել։ Եւ նորա՝ հանեալ ընկէց զգլուխն, և ինքն մեռաւ։ Եւ միւս այլ ծառայի՝ առեալ զգլուխն փախեաւ. և Սմբատ զհետ մտեալ, ասէ. «...Մի՛ անմտանայք(?), զի մինչև յայս անկաւ Վախտանգ, որ արտաքոյ ծառայից զգլուխդ առեալ փախչիք. ապա զիտասջի՛ք թէ ձեզ[56] այդպէս պարտ է լինել»։ Եւ ձգեալ ծառային զգլուխն ի կուրծսն Սմբատայ, և ասէ. «Տա՛ր խորովեա՛ և կե՛ր զդա. վա՜յ ձեզ, որ այլ վաղ ոչ պահէք»։ Եւ Սմբատայ առեալ զգլուխն, և զհետ մտեալ ծառային, ասէ. «Ա՜յ տիրատեաց, զգլուխդ քո ընդէ՞ր ոչ փոխանակեցեր տեառն քո։ Արդ որովհետև տիրատեաց էր, եւ բաժանեմ զգլուխ քո ի քէն»։ Եւ եհար զնա տիգաւն ի սիրտն, և անցոյց զաղէղն յայնկոյս, և ընկեցեալ յերկիր(?), կտրեաց զգլուխ նորա. և դարձեալ մեծաւ յաղթութեամբ ի բլուրն։ Եւ զօրքն չորս պատեալ ի վայրին զօրավարին պահէին(?), և ոչ մնացին ի նոցանէ, բայց[57] այնոքիկ՝ որք առ ոտս ուղտուցն բանակին էին արք չորեքհարիւր. զորս ոչ հրամայեաց սպանանել, զի փախստականք էին. բայց էառ ի նոցանէ հազար և քառասուն ուղտ, և ութ հազար ընդ ձի և ընդ ջորի։

Եւ իբրև վճարեցաւ պատերազմն, հրամայեաց ծածկել զնոսա ի ձորս և ի հեղեղատս. և կոչեցաւ բլուրն այն Մահու բլուր։ Եւ



Սմբատ առեալ զզօրսն, գնաց ի վերայ քաղաքին Պարսից ի գիշերի...

Իսկ զորդին Վախտանգայ և զկինն առեալ տարան յԱյծից բերդն[58], զոր յառաջ Արծուիս կոչէին, ի պահել[59] զնոսա անդ։ Եւ յղեալ առ Պարսից թագաւորն Խոսրով, և ասէ. «Տո՛ւր ինձ երկոտասան տարւոյ հարկ, որ զօրքդ քո զիմ երկիրս վերան[60] և զհացն[60] կերան, և զխաղաղան(?) այրեցին, և զքրոջ՝ զոր արբին՝ զգինին[61] և զառաճարացն զգինս[62] զոր իմ հայրն այրեաց վասն քո Դայլ Վահան. և դարձեալ զապարանս[63] զինուն վաթսուն հազար դահեկան, որ զքո զօրացն զգիշահաս հալած[63] և զարհեստաւորս(?) հանդերձանօք յուանեալ տուր և ապա։ Ապա թէ ոչ, գամ[64] հարիւր մարդով ի վերայ քո, և զամենայն պարսիկս գերեալ՝ ի Տարօն ածեմ[65], և ի քո աստուածոյդ չուն խառնեմ[66], որ փոխանակ գոցա հոգւոց ի ձեռս։ Արդ փութով, զոր ինչ առաջի քեզ, արձակեա՛. ապա թէ ոչ, տեսանես[67] թէ զի՞նչ անցք անցանեն[68] ընդ ձեզ»։ Իսկ նորա՝ լուեալ, ծաղր առնէր զՍմբատ. և ոչ գրեաց պատասխանի թղթոյն Սմբատայ։

Բայց եղբայրն Վախտանգայ Սուրէն, առեալ հարիւր հազար դահեկան, և ինն հազար այր, եկն ի Տարօն գնել[69] զկինն և զորդին Վախտանգայ։ Եւ ընդ առաջ գնացեալ Սմբատայ՝, ընկալաւ զՍուրէն եղբայրն նորա սիրով, և էած ի Մուշ։ Եւ կացեալ աւուրս սակաւ, խնդիր արար Սուրէն եղբօրորդւոյ իւրոյ՝ թէ ո՞ւր է։ Իսկ նորա ցուցին զորդին՝ թէ անդ է. և նա՝ ասէ. «Անդ այծարա՞ծ է թէ գիարածս»։ Եւ ծիծաղեալ Սմբատայ՝ ընդ այդ բանսն Սուրէնայ, առաքեաց և նա բերել զկինն և զորդին առաջի իւր։ Եւ իբրև ածին, ասէ[65] Սուրէն. «Իշխան հզօր ի վերայ աշխարհիս Հայոց, առ ո՞[?] զառաս Պարսից արքային տարաւ»։ Իշխանն ասէ. «...Բայց զագնել թէ կամիս, բաց տամ[69], ապա թէ ոչ, գնացէ՛ք դուք երկրիանց յԱրծրունիս այծ արածեցէք, և բերցին ծառայութիւն արարէ՛ք, և զիմ հացս կերայք աներախտաբար»։

Իսկ Սուրէն բանիւ ի խմաստուն այր էր, ասէ. «Ո՞վ բարեպաշտ և հզօր իշխան, թէ և զչուն զարաւպաւոյդ քո արածել տայիր, գեթ պարծանս էր ձեզ՝ որ ի դրան քում կայցր, թող թէ այծ արածել։ Բայց թէ յանէք մեզ, առէ՛ք ի մէնջ հարիւր հազար դահեկան և երկու հազար ուղտ, և վեց պարսիկ ձի. և մեզ աւուրս տուր զոյս կինս և զմանուկս»։ Իշխանն ասէ. «Զայդ՝ որ բերեալ ես, այդ մեր է. զի զքո զլուխդ կարեմ[70], և զոր ունիս՝ յիս առնում[71]...»։ Իսկ Սուրէն բերեալ եառ զհարիւր հազար դահեկանսն և զուղտսն և զձիսն առաջի, և ասէ ցիշխանն. «Աւարիկ է տուրքս»։ Իսկ նա ասէ. «Հաւանիմ արդէդ. բայց հարիւր և ութսուն հազար փոխ են տարեալ

ի Բարքէոյ, և չորեքհարիւր հազար դահեկանի խոտ են կերեալ ի գաւառէդ, և վաթսուն հազար դահեկանի՝ որ զեղն և զեղջերուս և զնապաստակ երկրիս որսացեալ են և կերեալ. զջրոյ և զհացի զինն թողումք: Բայց զանոյշ գինին Ասորոց և Մասնայ և զՄոխրայ այս երկու ամի է՝ որ յինէն կերեալ[66] էին, և ինքեանք արբին, զայն թող ասեն[67], և զվեց գաւառին հարկն՝ զոր առեալ են, և զքաղաքին մուտսն՝ զոր կերեալ են չորեքհարիւր դահեկան, զայդ ամենայն թող բերեն[67]...»:

Տրտմեցաւ Սուրէն, և ոչ կարաց խօսել զերիս աւուրս: Եւ ապա արձակեաց իշխանն առ նա,* և ասէ. «Մի՛ տրտմիր, զի ըստ քո կամացդ առնեմ զամենայն ինչ. բայց արի՛ անցանեմք[63] յայնկոյս, և յանկարծ երթամք[63] ի վանս իմ, զոր շինեաց հայրն իմ: Եւ առեալ զՍուրէն ածցին յայնկոյս Արածանոյ, և զկինն և զորդին ի Հեռ[66] տարան: Բայց զի նենգել կամէր պարսկին, զկին և զորդին և զՎահան Կամսարական յայնկոյս թողեալ, զի որ ի նա անկցի՝ նա ապանցէ: Եւ ինքն թողեալ զզօրս իւր ի Մեղտի չորեք հազար այր, և զՊարսիցն յանդաստան փախուցին՝ զոր Արտից զեղն կոչեն, և առեալ չորեքհարիւր այր ընտիր զինեալս, և չորեքհարիւր զնորայն, և գնացին երկարեամն ի վանսն...»:

Արդ իբրև մերձեցան ի վայրս վանացն, ընդ առաջ ելին պաշտօնեայքն, և արգելուին[69] զնա վասն Սուրենայ... Եւ յարձակեալ ի վերայ նորա Վարազայ իշխանին Գողթնեաց, եհար սրով և կոտորեաց զզօրսն Սուրենայ: Եւ զերկու[70] իշխանսն Պարսից կախեալ զծառայն խեղդեցին, և ինքեանք դարձան յերիվարսն. քանզի զօրք իշխանին Գողթնեաց թագուցեալ էին ի բլուրն ի փոքր ամրոցին ի Մեծամօրին, որք երեքհարիւր, ի ներքոյ Անդախայ. և հեծեալ նոցա յերիվարսն, մինչև իջուցին ի Մեծամօր: Եւ որք ի գաւառին էին, ընդդէմ ելին. և ի մէջ առեալ զայն չորեքհարիւր արսն կոտորեցին, և ինքեանք իջեալ յայլ զօրսն գնացին: Արդ այնք, որք յամրոցին Արտից զեղջն էին, ի գիշերին ի դուրս ելեալ՝ իջին ի վերայ Պարսից. և կոտորեալ[68] զերիվարս նոցա աւելի քան զերկու հազար և հինգ հարիւր, և հանին ի Սրոց ձոր: Իսկ զօրացն Պարսից զհետ մտեալ զգացին, և հասեալ յայն տեղի՝ որ կոչի Դողոզաղբիւր, և դարձան ի վերայ նոցա ձիաւորքն, և հարին պարտաբարս և աղեղնաւորս հինգհարիւր և քսան այր. և զերիվարսն առին և խաղացին յայլոսն, և եղեն երեք հազար ձի:

Իսկ ոմանք հետևակք ձորամուտ եղեն ի Պարսից զօրացըն և գնացին յանտառն, և անկան ի վերայ ձիապանացն, և սկսան կոտորել: Իսկ որ աւագն էր ի ձիապանսն, որոյ Սրեմն կոչէին, դարձաւ ընդդէմ. և սուր հանեալ՝ ինքն միայն պատերազմեցաւ,



մինչև դարձան ընկերք նորա: Եւ իբրև նոքա դարձան՝ Սրեմ մեռաւ, զի հարին նետիւ ի սիրտ նորա. և թաղեցաւ ի նոյն ձորն, և կոչեցաւ անուն ձորոյն այնորիկ Սրեմաձոր: Եւ ընկերքն բարձին և նետիւ ընդդէմ դարձան, և սպանին զբազումս. և այլքն փախըստական եղեալ՝ եկին ժողովեցան ի մի վայր, և իջեալ ճաշէին:

Իսկ ոմանք յՈղկանայ[71] ելեալ գնացին որսոյ պատճառանօք երկերիւր և յիսուն այր: Իբրև տեսին՝ զի յանհոգս էին իջեալ պարսիկքն, զաղաղակ յարձակեցան ի վերայ, ոչ որ կարաց յերիվարն նստանել. այլ ի շուրջ եկեալ, և ի սեղան անդր սպանին հինգհարիւր և ութ այր. և վասն[72] որ անդ ժողովեալ սպանին, կոչեցաւ անուն տեղւոյն Ժողովախ:

Եւ մինչ այս այսպէս գործեցաւ, Սմբատ և իշխանն Գողթնեաց թագեան ի ձոր ուրեք: Եւ առաքեցին զոմն ի Մեղտի. թէ «Փութացէ՛ք գալ ի վերայ նոցա»: և ինքեանք առաքեցին առ հարիւր, զգանել[73] զզօրսն Պարսից: Զօր տեսեալ զօրացն[7], զրո՛հ առեալ զհետ՝ մի մի հատանէին: Իբրև եկին զօրքն առ Սմբատ, ասեն. «Տէ՛ր, զձեզ ի բլուրն, զի տեղին այդր է պատերազմի. և անձնապա՛հ լեր[74], մինչև մեք զօրն հասանէ[75]: Եւ նոքա ի բլուրն ելին...»:

Եւ փաղանգ առեալ ի վերայ բլերն, Սմբատայ յաջ թևն, և Վարազայ յահեակն, և սկսան արեամբ թաթաւել ինքեանք և երիվարք իւրեանց: Եւ մածաւ[76] սուրն ի ձեռին Սմբատայ, և ոչ կարաց հանել, քանզի մածեաւ արիւնն ընդ սուրն և ընդ ձեռնամեղսն, և կոտորեցաւ: Եւ իբրև տեսին պարսիկքն՝ եթէ ոչ կարաց առնել այլ ինչ, ձայն տուեալ՝ ասէին ցմիմեանս. «Փութացի՛ք, զի մածեալ է ձեռն քաջին, և կապեալ զնա տարցուք իւր. և սուրն ի ձեռին կոտորեալ է»: Եւ պատեցին զնա բազումք: և իբրև դիպայր չոր, որ ի ձեզքին[77] ճարճատէ, այնպէս ճարճատէին ի վերայ զինուցն Սմբատայ զէնք: Իսկ նա բարձր ձայնիւ ասէր. «Վա՛յ քաջութեանց ձերոց, զի ոչ կարացիք հերձուլ զզրահս իմ: Զայս ասաց, զի յիշէր յերգ[78] բանն: Բայց իբրև գիտաց՝ եթէ կարի սաստկացան ի վերայ նորա, ձայն բարձեալ՝ ասէ. «Ո՞ւր էք, բազում քաջք, և մուրճ հզօր ընդդէմ թշնամեաց, զաւազան իմոյ ծերութեանս, իշխան Գողթնեաց. յառաջ մատիր որպէս քաջ արծուի, զի անգէտ և բուէճք պատեցին զիս»: Եւ նորա[7] թողեալ զահեակ թևն յորդին իւր Վահան, որ զՎահանավանս շինեաց, և ինքն թռչարար որպէս զարծուի՝ կանչեալ զիմեայ ի վերայ: Որ և ի զոգման հարեալ ամենայն երիվարացն, և հասեալ ի թիկունս Սմբատայ, և բախեալ զաէցն ի վերայ պարսկին թիկանն, և անգէն եհան ընդ ոգն երիվարին. և այլ ոչ ժամանեաց հանել

գաւէզն։ Զօր ծառը արարեալ, ասէր. «Ո՛րթ չափես՝ գաւէզդ՝ թէ քանի՞ կանգուն է. մի՛ որ սուտ ասէ՝ թէ երեք գիրկ է. և խաբէ զքեզ»։ Եւ անդէն մեռաւ։

Իսկ Սմբատայ[7] եկեալ յետ պատերազմին... և փախեալ այլ սուր, և եկեալ յերկիրն. և իբրև հեծաւ, նոքա զի հազար այր պատեցին զնա կրկին, և ի մէջ առեալ զհինգհարիւրսն։ Եւ իբրև զխաւարին՝ եթէ կացեալ են երկիրքն, ետուր այր մի և բնկէց, և զերկիրսն առեալ մատոյց Վարազայ իշխանին, և ասէ[78]. «Էջ և հեծի՛ր իշխան Գաղանեանցս»։ Իսկ նորա[7] փախեալ զատեն, նստաւ ի վերայ նորա, զոր առեալ զօրացն[77] զարմացան. և այսպէս արարեալ՝ ի մէջ ահագին պատերազմին փրկեցին զերկիրսն իւրեանց։ Զի որչափ և զօրքն բազմանային, նոքա յանհոգս լինէին ի մէջ նոցա. զի այնչափ կոտորեցան ի վերայ, որ և տեղի չգտանէին՝ որ[80] յետ եղանէին[81]։

Եւ իբրև սկսան ամանք երկմտել ի զօրացն Սմբատայ, բանակցութեան աստուծոյ տեսին զմեծ Սմբատ՝ զի զայր, որ էր իշխան Հաշտենից. և ածէր զՎահան Գամսարական զորդին Սմբատայ. և վեց հազար այր ընդ նմա։ Զօր տեսեալ Վարազ իշխանին, ազաղակեաց և ասէ[79]. «Քաջորդի Վահան, ո՞ւր էիր՝ որ ոչ վաղ եկիր յօգնութիւն»։ Իսկ Վահան ձայն բարձեալ, ասէր հանդերձ արտասուօք. «Վա՜յ այն տառապեալ հայրն իմ ծերունի, եթէ փախեցաւ ետ ածէ ի հանգիստ»... Իսկ նորա գոհացեալ զաստուծոյ, և ի զիմի հարեալ՝ կարկեցին փաղուց, անցին ի ներքս. և պարզեցին զմի թեւն նոա, և զմիւսն իշխանին Հաշտենից Սմբատ. և յինքեանս առեալ զպատերազմն, սկսան կատարել զպատերազմացուցիչս։ Եւ ի վերայ շրջեալ, զմիւս թեւն Վահանայ բուռբեալ, ի մէջ առեալ զզօրսն Գաւիթ, կոտորեցին մինչև յերեկոյն։

Եւ իբրև ի մուտս եղև արևն, մնացին ի Գաւիթ չորեքհարիւր այր, որք ընդ մէջսն եկեալ փախեան, և բանգի մնացեալք էին երկիրք նոցա, երթեալ մտին ի ձոր մի, և թաղեան նոճեցին խոյս առեալ մինչև ի մեծ աստ հասարակն։ Զօր եկեալ զօրացն զտին, և չոր ցանեալ ի վերայ նոցա՝ զարթուցին, և առեալ տարան զնոսա ի Մեղրի. և կոչեցաւ անունն այն Թմբրաձոր։ Իսկ Սմբատ հրամայեաց զգիակունսն կուտել ի վերայ իրերաց ի բլուրս. և վասն Վարազայ կատարածին՝ կոչեցաւ անունն այն Վարազակերտ։

(էջ 30—42)

---

ԺԹ. ՂԵՒՈՆԴ (Ը-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(Հատված)

Իբրև տեսին նախարարքն Հայոց զվտանգ տարակուսանացն հասեալ ի վերայ իւրեանց՝ եդին զոգիս ի ձեռին իւրեանց և ձեռնամուխ եղեն յիրս[2], զոր ոչ կարէին վճարել, վասն զի նուազունք էին։ Այլ սակայն յաւ համարեալ զմահ քաջութեամբ քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիրս ապստամբութեան, և ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի[3]։ Եւ սկիզբն բանին այսորիկ լինէր[4] ի ձեռն Արտաւազդայ, որ էր ի տանէ Մամիկոնէից. սորայ երթեալ ի մայրաքաղաքն Դուին՝ կարգութեան մեծ անէր զօրաց իւրոց. և սոտանայր անդ զէնս և անօթս պատերազմի[5], և վառէր զինքն զրահիւք և սաղաւարտիւք և ամենայն սպառազինութեամբք, և մանկիմ զինքն երևեցուցանէր զօրացն Իսմայելի, իբր թէ մարտնչել ընդ թշնամիս նոցա կազմիցի։ Եւ առաջնոյ զինքն ի միաբանութենէ նոցա՝ հասանէր ի գաւառն Շիրակ ի գիւղն Կումայրի[6], և սպանանէր զհրամանատար հարկինս։ Եւ որ ինչ գտանէր ի ձեռին նորա առեալ՝ համբառնայր ամենայն տամբ իւրով. գնայր ի կողմանս Վրաց աշխարհին, և ընդ նմա ամենայն տոհմորդք աշխարհիս։ Եւ հասեալ[7] համբաւն ի քաղաքն Դուին, եթէ այս ոմն իրք գաղտ գործեցան յազգացն Իսմայելի՝ վաղվաղակի առնայր զօր բազում Մահմեան, և զՍմբատ որդի Աշոտոյ զսպարապետն Հայոց և զայլ նախարարսն, և հետամուտ լինէր զհետ նոցա. հասանէր յաշխարհին Վրաց ի գաւառն որ կոչի Սամցխէ. և կալեալ զկիրճսն՝ Թափէր սպուռ ինչ յաւարէն. և դնայր վարեալ վտարանդեան առնէր յաշխարհէն Հայոց։

Իսկ նորա երթեալ պատսպարէին յաշխարհին Եգերացւոց. և սատանայր անձամբ զիշխանութիւն անձին իւրոյ ի վերայ Եգերացւոց և ի վերայ Վիրքոյ, որ են Վիրք։ Եւ ի ձեռն այսր գործոյ առանել գայրացեալ հրամանատարն Հագան՝ վաղվաղակի առա-

քեր յամենայն կողմանս իւրոյ իշխանութեանն զդառնութիւն հարկին ծաղրելի մեծաւ ստիպով. և յայն տառապանաց հեծութեան աշխարհիս ի պահանջողաց հարկին. քանզի ամենեքին նուաղեալ էր զի աղքատութեան յաշխարհէս Հայոց։ Անդ ուրեմն շարժէր սիրտ նախարարի միոյ ուրումն յաւուրսն, որ էր որդի Հրահատայ կամսի ի տանէ Մամիկոնեան, որոյ անուն էր Մուշեղ։ Սա միաբանեալ ընդ իւր զոմանս ի նախարարացն Հայոց՝ ի բաց ելեալ ի հնազանդութենէ Իսմայելի և գնացեալ զոմանս յարքայն Իսմայելի ի գաւառի իւրում և ի տան իւրում, որք եկեալ պահանջէին ի նմանէ զարծաթն[11] ամանց ստացեալոց ի տանէ իւրեանց՝ խողխողէր զնոսա ի սուր սուսերի իւրոյ։ Եւ ինքն զաղթէր յամրոցն Արտագերոյ հանդերձ տամբ իւրով։

Եւ եկեալ նոյնժամայն ի գաւառն Բագրեւանդ, և ընդ նմա արք .ՄԿ. և ըմբռնեալ զպահանջօղսն հարկին, որում անունն էր Ապումճուր և զորս ընդ նմա՝ հարեալ սատակէր ի սուր սուսերի[12] իւրոյ. և յանցուցանէր զպահանջումն հարկին յերկրէս։ Եւ իբրև այս այսպէս վճարէր՝ ժողովէին առ նա ամենայն մշտամուռք և վտանգեալք հացաւ։ Եւ յայնմհետէ զարթեան յամենայն կողմանց թշնամիք ի վերայ նորա։ Եւ նախ քան զայս յորդւոցն Իսմայելի ի քաղաքէն Կարնոյ հասանէին ի վերայ նորա, որք էին իբրև արք երկերիւր, վառեալք կուռ սպառազինութեամբ. յորոց վերայ հասեալ ի գիշերի ի գիւղն Խաղս առկաւ տրամբք, զի էին բանակեալ ի մէջ այգեստանեացն, շուրջ կալեալ զնոսա՝ փլուցին զցուցնարկեալ պատուար այգեստանեացն, զի էր կարկառակույտ քարանց առանց հողոյ. և յանկարծ զդիմանէ քարանցն բախեալ երիվարացն՝ զբազումս սատակէր հարեալ սատակէին. և առեալ զզէնս և զկապուտ անկելոցն՝ տայր զօրաց իւր[13], և զնիժակս և զամենայն կազմած զինուց. և ինքն խաղացեալ դնայր ի կողմն ամրոցի իւրոյ։

Եւ իբրև այս լուր աղէտի հասանէր ի քաղաքն Դուին առ զօրավարն Իսմայելի Մահմետ՝ յամենայն կողմանց տագնապ մեծ յառնէր ի վերայ նորա. և գումարեալ զզօրս քաղաքին Դունայ՝ տայր ի ձեռս զօրագլխի միում, որում անուն էր Ապաւնճիւ, ելանել ի խնդիր վրիժու արեան սպանելոցն։ Եւ առեալ զօրավարին այնմիկ[14] զընտիրսն հեծելոց իբրև արս .Տ.՝ ուշ եղեալ ընդ սպանողին արքունի՝ հասանէր ի գաւառն Բագրեւանդ ի գիւղն Բագուանն։ Անդ ի վերայ հասանէր նոցա Մուշեղ և ընդ նմա արք իբրև .Մ. և մարտուցեալք ընդ միմեանս՝ օգնութիւն ի տեառնէ վաղվաղակի հասանէր ի թիկունս զնդին Մուշեղայ. և բազում հարուածս հարեալ սատակէին ի զօրացն Իսմայելի, և զմնացեալսն



ի փախուստ դարձուցեալ՝ հալածեալ լինէին մինչև յաւանն Արուճ, և զբազումս ճարակ առնէին, մինչև զնոյն ինքն զզօրագլուխն հարեալ սատակէին։ Եւ մեծաւ յաղթութեամբ դարձեալ ի հետոց նոցա՝ լնուին բազում աւարաւ յաւարէ թշնամեացն։

Եւ փախստեայքն անկեալ ի քաղաքն Դուին սակաւք ի բազմաց։ Որոց ընդ առաջ լինէին համայնքն արք և կանայք վայիւք և ճչօք, հող ի գլուխ լինելով, զճակատ հարկանէին և զձեռս պատառէին, և ողբովք և աշխարանօք լնուին ամենայն փողոցս յայնանիստ քաղաքին։ Եւ ահ մեծ անկանէր ի վերայ Սառակինոսացն. և ոչ լինէր նոցա համարձակ ելանել քան զքաղաքն. այլ ամփոփեալ լինէին յամրութեան քաղաքին։

Այս իբրև զայս յաջողուած գործոյ տեսանէին նախարարք Հայոց՝ ամենեքեան միաբանեալ ընթանային զհետ անմիտ խորհրդին. զի կարծէին լքեալ զժամանակ իշխանութեանն Իսմայելի, և մանաւանդ պատրեալք առաւել ի կարծիս առն միոյ մենողանի, որ մոլորութեան հոգւովն շարժեալ՝ մարգարէանայր սնոտիս և ընդունայն առակօք. «Ահա մերձեալ է ժամանակ փրկութեան ձերոյ, զի այժմ ընդ հուպ դարձցի դասաւորութիւնն միապետութեան ի տան Թորգոմայ, առնուլ ձեռն զվրէժ յազգէն Իսմայելի. և դուք մի՛ զանգիտեսջիք յերկեղէ նոցա, թէ նուազունք իցէք, զի մի այր ի ձէնջ հալածեսցէ զհազարս, և երկուքն[15] զբիւրս. զի զպատերազմն ձեր տէր պատերազմեսցի. զօրացարո՛ւք, մի՛ զանգիտէքս։ Եւ այսպէս տեսիլ սուտ և ըղձանս ի սրտից որ զատ արէ պատմէր նոցա, որում առհասարակ հաւանեալ՝ տեսանող[16] զնա կոչէին։ Եւ յայսմ բանէ ամենեքեան պատրեալք՝ զգոնդեցուցանէին զմեծ սպարապետն Սմբատ որդի Աշոտոյ՝ հասանել այնմ խորհրդի։ Իսկ նա իբրև յակամայ կամաց շարժեալ յիրմէ հաստատուն և յանխոնարհելի խորհրդոցն՝ չոգաւ զկնի խաբեբայ և մոլեկան առնն այնորիկ։

Եւ ժողովեալ ամենայն նախարարք Հայոց ի մի վայր՝ առնէին առ միմեանս երդմունս և դաշինս ուխտի՝ կեալ և մեռանել ընդ միմեանս։ Եւ այսպէս միախումբ ժողովեալք առ միմեանս՝ արք իբրև .Բ. զի բազմաց ի ռամիկ ժողովոց եկեալ խառնէին ի գունդն նոցա. և համբարձեալ գնային ի կողմանցն այնորիկ պաշարել[17] զքաղաքն Թէոդուպոլիս որ է Կարնոյ քաղաք։ Եւ պաշարէին զնա պատնիշօք, և զամենայն ժամանակս ձմերայնոյն մարտ եդեալ[18] կռուէին ընդ նմա, կանգնեալ զնովաւ մանգանարձան, և հասանէին վէմս ծանունս[19] արտաքուստ ի քաղաքն. այլ ոչ ինչ կարացին առնուլ, բայց որչափ առնէին ինչ ի քարէ մերձենալոյն. որովք սատակէին ի քաղաքէն։

Իսկ Աշոտ ի տանէ Բագրատունեաց, որդի իշխանին Սահա-կայ, զի էր այր խոհական հանճարով՝ ոչ միաբանեաց ի գործ վնասակար աղէտին. այլ և զնոսա ևս խրատէր, ի բաց թողուլ զվնասակար կարծիսն՝ զոր ունէին ի վնասակար խրատուէ մոլե-կան մանկանցն, և անձնապահ լինել անձանց և ընտանեաց նո-ցին. զի ասէր. «Մանկունք էք և կրտսերագոյնք հասակաւ. և զի-տեմ եթէ ոչ կարէք զդէմ ունել զօրութեան բազմագլուխ վիշապին, զի հզօր է զօրութիւն նորա և անթիւ բազմութիւն ընդ ձեռամբ նորա, և անչափ պատրաստութիւն զինուց ի գանձս նորա[20]. և ամենայն թագաւորութիւնք որք հակառակ կացին իշխանութեան նորա փշրեցան որպէս զանօթ բրտի. զի թէ Հոռոմայեցւոց թա-գաւորութիւնն ոչ կարաց համբառնալ զձեռս ի վեր, այլ սարսեալ[21] դողայ յերեսաց նորա, և ոչ յանդգնել ընդդէմ ակերեանեան հրա-մանին. զի և դուք չէք անտեղեակ ամենայն զօրութեան արքային Յունաց, քաջութեան անձին նորա և բազմութեան և պատրաս-տութեան զօրաց նորա, զի ամենեքին ընդ միտ անգամ ոչ էառ-նէին ածել դմաւ առնուլ զաշխարհս Հայոց ի ձեռաց նորա. Կոստան-դին որդի Լևոնի, որ մենամարտեալ ի միում աւուր ընդդէմ անհա-սար գազանացն՝ սպան զառիւծն իբրև զուլս այծեաց[22]: Արդ որ զայս այժմ զօրութեան[23] ունէր՝ այնպէս ընթացքնեալ է յանէ յարա-թոյն գազանին որ ապականէ զերկիր. իսկ դուք յո՞վ արդեօք ա-պաւինեալ, և կամ որո՞վ զօրութեամբ և որո՞վ ուժով կարէք զդէմ ունել անյաղթելի իշխանութեան նորա: Այլ արդ եթէ հաճոյ թուի անձանց ձերոց՝ ընկալարո՛ւք զխրատ իմ, քանզի զօգուտ ձեր և զխաղաղութիւն աշխարհիս տեսանեմ ես. զի այս լինի[24] նոյն ցուցանէ, կամ զառնալ ձեզ[25] և մտանել ընդ հնազանդութեամբ նոցա, և հանդարտել և կեալ խաղաղութեամբ յերկրիս ձեր, և կամ մերժել փախստեամբ համօրէն ընտանեօք յերկրէս ձերմէ, և լքանել, թողուլ զժառանգութիւն հարցն ձերոց զբնակու-թիւնս ձեր, և զանտառս և զանդաստանս, նա և զգերեզմանս հարցն ձերոց, և երթալ բնակել հնազանդութեամբ ընդ արքային Յու-նաց: Եւ կամ թէ ոչ՝ անկանիցիք ի ձեռս նենգչաց ձերոց ի միում աւուր, անախորժելի մահուամբ բառնայցին զձեզ ի կենաց, զի գիտեմ ես զլայս անաստուածութեան իշխանին Իսմայելի, զի ոչ դադարէ[26] մինչև կատարէ[27] զկամս անձին իւրոյ»:

Իսկ նորա ոչ ընկալան զոր լուան. զբանս խրատու օգտու-թեանն յանձնաց բարէին, իբրև զխրատ նենգութեան. քանզի յայժմ հասանեալք էին աստուածատուր առն մոլորելոյ, որ օր ըստ օրէ յորդորէր զնոսա կալ պնդակազմ ի գործն առաջարկեալ և մի՛ ինչ երկմտութեամբ տարտամել զանձինս. որոյ անուղղայ կամակորու-



թիւն չախչախումն խորհրդին անզէն ընդ հուպ հրեէր. զի բաժանել ի միմեանց անմիաբանք լինէին: Զի նախարարք տանն Արծրու-նեաց Համազասպ և եղբարք իւր և զօրք նոցին մնացին անզէն ի կողմանս Վասպուրական աշխարհին. և Վասակ որդի Աշոտոյ և որք ի տանէ Ամատունեացն և Տրունեաց՝ մնացին անզէն, ոմանց յամուրն բերդի ի Դարիւնս գեօղ և ի ծագն Մաքուայ. և ոմանք ի ձորն Արտազակայ ամրացեալք՝ ապաւէին շուրջ զգաւառօքն ի պէտս կերակրոց և անզէն զառնայքն յամուրս իւրեանց:

Իսկ զօրքն Տաճկաց[27] որ ի Դուին քաղաքի՝ նկեալ ասպատա-կէին ի տեղիս տեղիս[28] գաւառաց որ շուրջ զինքեամբք, և առ-նէին աւարառութիւնս և հեղմունս արեանց ի գիւղն Գառնեա և ի Թայրին և ի Կողբ, և յայլ բազում տեղիս առ ի գործ արարեալ՝ զբազումս դիաթաւալ կացուցանէին:

Իսկ ի գալ գարնանայնոյն ժամու հասանէր իշխանն Իսմայելի ի վերայ երկրիս Հայոց. և գումարէր զհեծելս հեծելոց իբրև արս .ՀԹ. ընտիր երիվարօք և կռուազինութեամբ ի տանէ Խու-րասան գնդին, և սպայ ի ձեռս զօրավարի միոյ որում անունն էր Ամր. և ասպէ զնա յինքեանէ ի յայնանկատ և ի հաշակառ անուն քաղաքէն. զոր շինեաց ինքն Արգէս ապաւէն ամրութեան հզօրա-գոյն և անառիկ պարսպով ամրացեալ, որ անուանեալ[29] կոչէր Բաղդադ:

Եւ համբարձեալ զօրավարին ի կողմանցն Ասորոց՝ գայր հասանէր յաշխարհս Հայոց ի քաղաքն Դուին, մեծաւ զգուշու-թեամբ և բազում պատրաստութեամբ զինուց: Իբրև մտանէր ի քաղաքն՝ տեղեկանայր ի քաղաքացւոցն անտի զորպիսութիւն զօ-րացն Հայոց, եթէ քանի՛ք և եթէ ո՛յք իցեն[30] զօրագլուխք, և եթէ միաբանե՞ք իցեն ի սէր միմեանց եթէ երկբայք, եթէ քաջայա՞ղթ իցեն եթէ յամրեալք, եթէ ունիցի՞ն պատրաստութիւն զինուց եթէ ոչ: Զայս ամենայն տեղեկացեալ՝ պատրաստէր բառ նմին զզօ-րագլուխս զօրաց իւրոց:

Իսկ Աշոտ որդի Սահակայ, զի էր ի քաղաքին յայնմիկ՝ զե-կուցանէր զգաղտնիս թշնամեացն նախարարացն Հայոց, զի որ ուրեք և իցեն, ի մի վայր գումարեսցին կեալ և միաբանել ի վերայ միմեանց: Իսկ նոցա անհաւատալի թուեալ իբր հրովարտակին համարէին, (թէ) զասող խորամանկութեամբ կամի փրկել զքաղաքն ի պաշարմանէ անտի, իբր մաներիմ զինքն ցուցանել Իսմայելա-ցւոցն. և զայս առեալ ի միտ՝ անփոյթ եղեն բանից նորա, այլ ամենայն զառաջի արկեալ իւրեանց խոկային կատարել: Այս յետ այսորիկ գումարէին նախարարք ազգին Արծրունեաց զզօրս

Վասպուրական աշխարհին, Համազասպ և եղբայր իւր և որք ի տանէ Ամատունեաց և զօրքն որ ընդ նոսա Կոչէին ի թիկունս ազնուականութեան[30] զՎասակ որդի Աշոտոյ, զեղբայր Սմբատայ սպարապետի ի տանէ Բագրատունեաց և զզօրսն նորին: և խաղացեալ յառաջ՝ երթային ի վերայ Արճէշն աւանի՝ բրել զնա ի հիմանց և զզօրսն որ ի նմա՝ հարկանել սրով:

Եւ իբրև հասանէին ի գաւառն Աղբերանի ի գիւղն Բերկրի՝ մնային միմեանց զամարութեան: Եւ զբաղեալս յաշխարհականացն հրապուրեալ զկնի ինքեանց՝ ի հետևոս տանէին ի մարտ պատերազմի[31]: Եւ մինչդեռ զայս խորհուրդ առհասարակ կամէին կատարել՝ վաղվաղակի հասանէր առ նոսա լուր զօրացն Իսմայէլի. քանզի եկեալ ուն պատմեաց նոցա, եթէ զօր բազում յորդւոցն Իսմայէլի հասեալ ի վերայ՝ ապա է ձեզ: Որում ոչ անսացեալ Համազասպ տէրն Արծրունեաց՝ հարուածովք տանէր զնա իբրև զհրապուրիչ ստութեան. և ինքն խրախտացեալ գնաց ի վերայ Արճէշն աւանի հանդերձ զօրօքն իւրովք: Եւ իբրև մօտ հասանէին ի քաղաքագիւղն՝ բնակիչք քաղաքին յառաջ զգացուցին ի քաղաքն՝ Ալալն առ Ամր զօրավարն Իսմայէլի զգալուստ նախարարացն Հայոց: Եւ նորա[?] խաղացեալ՝ բազմութեամբ զօրացն՝ զայր և զդանդաղում լինէր մերձ ի գիւղն Արճէշ: Եւ մինչդեռ մարտնչէին[32] զունդն Հայոց ընդ ամբոխին՝ վաղվաղակի յարեան զարանամուտքն ի Թագաւանէն և գնդաւ ի վերայ զօրացն Հայոց և ի փախուստ դարձուցեալ՝ կոտորեցին զմեծ մասն հեծելոց զօրուն որ յաշխարհէ Վասպուրական մարզպանէն էին. քանզի էին մերկ և առանց զինուց և անհմուտ պատերազմի. որք միանգամ հանդիպեցան զառն լուսոյ ասուրն այնորիկ, ի սուր անկեալ մաշեցին զնոսա, և ամենք առ վտանգի տարակուսանացն[33] ընկղմէին և ծովահեղձ լինէին: Իսկ ի տանէ նախարարացն վախճանեցան արք .Դ. որք էին ի նոցանէն երեքն ի տանէ Տրունեաց և միոյն Յուրծայ զեղջէնան որ յամենի ժողովելոյն վախճանեցան՝ էին իբրև .ՌՆ. մարդ: Եւ այլք ի փախուստ դարձեալք՝ հազիւ ապրեցան զարզուստ[34] անձանց զամանէին: Եւ եղև չարաչար նեղութիւն վտանգիս այսորիկ յամենայն հրատիցն[34], որ օր չորրորդ էր ամսոյն յաւուր շաբաթու: Եւ Բզնունեացն հետամուտ եղեալ՝ հալածէին զզօրսն Հայոց մինչև ի տեղին որ կոչի Տայ դիւղ. և ապա դարձան ի հետոյ նոցա և առնէին ուրախութիւն մեծ ի բանակին իւրեանց:

Յայնժամ ոչ ևս յաճախէր հեծութիւն աշխարհիս Հայոց, և ուրախագոյն Բզնունեացն ցնծութիւն և հրճուանք. քանզի նոյնժամայն չունէր կենալ՝ դարձեալ յարձակէին, ուշ եղեալ եղանել



յառաջին պողոտայն արքունի ընդ գաւառն Ապահունիս հասանէին ի գաւառն Բագրեւանդ ի գիւղն Արձնի. անդ հարկանէին զբանակս իւրեանց առ եզերբ գետոյն որ ընդ նա անցանէ. և ընդ նոսա ամենայն արուեստաւորք և յարդարիչք զինուց, որք պատրաստէին զէնս և անօթս պատերազմի:

Իսկ այն զօրք, որք պահէին զքաղաքն Կարնոյ՝ հասուցանէին զնա մերձ յաղաղակութիւն. քանզի սաստկացաւ սով ի քաղաքին. և կամէին յանձնել ապա զքաղաքն ի ձեռս: Եւ իբրև ետես զրոյց զպարտութեան զնդին ի քաղաքն Կարնոյ՝ յայնժամ լքաւ սիրտ արանց պատերազմողաց զօրացն Հայոց. և թող եռուն պաշարման քաղաքին: Եւ թէպէտ կարօղ էին մենել ի կողմն Յունաց և ապրեցուցանել զանձինս ի չարաչար ապիրատութենէ գրգռարանացն՝ սակայն յաւ համարեցան զմահ անձանց քան տեսանել զկորուստ աշխարհիս... Եւ զայս զմտաւ ածեալ՝ թէպէտ և նուազունք էին քան զթիւ Բզնունեացն՝ ինքնակամ յօժարութեամբ դիմեցին ի վիշտն. և ժողովեալ զգունդս իւրեանց իբրև արս .ՍԹ.՝ գնացին ի քաղաքէն Կարնոյ, անցանէին ընդ սահմանս Բասենոյ ի գաւառն Բագրեւանդ: Իսկ և իսկ[35] անկեալ ընդ գետն Արածանի՝ յարձակէին արիութեամբ սրտի ի վերայ Բզնունեացն. և բազմագոյն երկու վտանգօք զատուցանէին զաղխն իւրեանց և զերիվարս, և ի հետևոս պայքարեալ պատրաստէին ի մարտ պատերազմի[31] Բզնունեացն: Եկանէին ապա և գունդք Բզնունեացն ի վերայ նոցա բազում պատրաստութեամբ:

Եւ ընդ ծագել[36] արեգականն խմբեցաւ պատերազմն. և իբրև բախեցին ընդ միմեանս՝ նախ զօրացեալ գունդն Հայոց՝ հարկանէին բազում հարուածս, և ի փախուստ դարձուցեալ զԲզնունեացն սատակէին զբազումս: Եւ դարձեալ զօրացեալ՝ դարձան ի փախուստ, և զիմադարձեալ զայլոցն յաստամբ՝ լնուին արհաւիրօք զբազմութիւն ամենայն ժողովոյն. և ի փախուստ դարձուցեալ՝ կոտորեցին ի նախարարացն և ի նոցին հեծելոցն և զամենեքեան որք ընդ նոսա, զի զբազումս ի նոցանէն հարեալ տապաստ դաշտացն արկանէին:

Իսկ քաջայաղթ նահատակքն թէպէտ և նուազունք էին ի մէջ չարաչար ոսոխացն՝ սակայն ոչ ինչ զանգիտեցին ի զանձնազանց օրհնանէն, այլ մինչ ի սպառ զուամարտին բացի մարդէին զմիմեանս բանիւք առակով. «Քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս, և մի՛ տեսցուք այլ մեր կորուստ լինել պղծալից պրանց զորքարանս մեր... այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի սուր Բզնունեացն. և ապա լիցի զոր կամիցին...»:

Զայս և առաւել ևս քան զայն մատուցանէին խնդրուածս աղերսանաց և մաղթանս փափագելիս։ Եւ յետ այսորիկ դարձեալ զօրացեալք յաղթականութեամբ վերնոյն՝ ոչ ինչ կասեցին յառաջի արկեալ խորհրդոյն. քանզի չէին առեալ բան զի. մի արանց ի մէջ Լիոյն... Եւ անխնայ կատարմամբ խնդրեցին զվրէժ անձանց մինչև պարտեցան ձեռք նոցա ի ծանրութենէ զինուցն միանգամայն. զի ամանք թափուր մնացեալք ի զինուցն՝ անկան ի ձեռս նոցա, և իսկոյն առեալք զհրամանս մեղանչական կենդաղոյս՝ փոխեցան ի Հանդերձեալ յաւայն անկեղծութիւնն երանելի և քաջ նահատակքն...։

(Լ?)

---

## ԺԲ. ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ (9—10-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ

*(Հատված)*

### Վասն մահուանն Յովսեփու[1] ի լեռնայնոցն Խութայ և պատմութիւն նոցա

Իբրև ձմեռն ընդմիջեցաւ և օդն խառնեցեալ թանձրացաւ միգախառն մրրկալից, և թանձրութիւն ձեանն հարթայատակ դիզացեալ շուրջ զատորատով լերինն յորում անկեալ քաղաքն Տարօնոյ շինեալ էր, ուր բնակեալ բազմամբք[2] զօրավարն Տաճկաց, զորհատակեան արջոյն բերելով նմանութիւն, որ յաւուրս ձմերայնոյ արմատովք պարենաւորեալ՝ ի մէջ կենաց և մահու անցեալ, որչափ ի բոյնսն իւրեանց։ Իսկ ի շնչել[3] հարաւային օդոյն, հալեցուցանելով երկրի ի վեր զջերմային զօրութիւն, զուարթացուցանելով անդրնդական բերմամբն զընդարմացեալ արմատս և զբոյս ի հիւսիսային սառնամանեաց օդոյն շնչելոյ, և բազմացեալքն եթէ զաղանդր և եթէ թռչունք, յորժամ զգան զջերմութիւն օդոյն ի հասարակել[3] ատուրեցեալն և զիջեալ՝ ի զարնանային եղանակի ելեալք յիւրաքանչիւր[4] կայենից. և քաղաքն այն են որ ի նմին իսկ սատակին. և կէսքն զիւրքմբանելի որսորդաց լինին. և ապրեալքն սաստիկս հասուցանեն վնասս ուր և գիւղեցին, եթէ մարդկան և եթէ այլոց ինչ կենդանեաց։ Սոյնպէս և այրն այն Յովսէփ զօրավարն Տաճկաց մնայր[5] անցանել ձմերանն, զի եկեալ ի վերայ աշխարհիս Հայոց սրով և գերութեամբ և մեծամեծ հարուածովք և զմեծամեծս աշխարհիս խաղացուցանէ[6] ի գերութիւն և կացուսցէ ի վերայ աշխարհիս գործակալս, որ ըստ իւրեանց հրամանի զկարգս աշխարհիս յօրինեսցեն, և իւրեանց հանդերձ ընտանեօք իւրեանց նստցին յամուրս Հայոց։

Յայնժամ բնակիչք լերինն իբրև տեսին, թէ փութացաւ իշխանն ի գերութիւն, ինքեանք պատրաստեալ էին զնոյն փարչմանն

կրել զոր դաշտայինքն կրեցին՝ հասին միաբան բազմութիւնն մենակեացքն խուժեալ ի հետս արուեստդիտութեանն իւրեանց, զոր ի պէտս սպանդականութեան ձմերայնոյ հնարաւորեալ էին։ Եւ բարձեալ աշտանակս հանապազականս ի պատրաստութիւն պաշտամանցն որ ի մայրին որջանան, կամ թշնամեաց ի վերայ հասանելոց, և եկեալ ի վերայ բաղարին պաշարեալ զնա, և զզօրսն մատնեն ի սատակումն սրոյ. և զպատանդսն Վասպուրականի հանեն յարգելանէն, և գերեացն ընդարձակեն, զկապուտ նոցա բաժանեն յինքեանս։

Բայց ինքն կարծեցեալ մարզպանն փախուցեալ անկանի ի բարձրաբերձ եկեղեցին, որ շինեալ էր յիշխանէն Բագարատայ, ի ծախս մեծամեծ գանձուց իւրոց .ՅԾ. ամ։ Եւ անդ ի միջոց զմբեթին զօղեալ սալարեալ՝ սպասայից դողմամբ զետեղեալ յինքն։ Եւ մենակեացքն պատեցին շուրջ զեկեղեցեաւն, և եկեալ առ նա ամենեցին ընդ փորուած զմբեթին՝ և հնար մի ամն աշտէիւն ընդ միջոց թիկանցն՝ և ընդ անթոփքն հանեալ ի ներքոյ թողացն՝ փչեաց զոգին և թաղեցաւ զթաղումն՝ իշոյ։

Եւ ես աչօք իմովք տեսի զայրն զայն, որ հարեալն էր զնա, և ի նմանէ ստացեալ վասն նորա։

Եւ անդէն իսկ և իսկ փութացաւ, հնաւ զօրքան առ Թագաւորն, եթէ սպանաւ զօրավարն քո և ապստամբեաց ի պետութենէ քումէ աշխարհն Հայոց։

Առատներ ասկաւար բաղայայտեցից զորպիսութիւն բնակչաց լերինն. թէ զի՞րդ կամ ո՞րպիսի որ են և ո՞րչէս հնարաւորեալ յապրուստ անձանց վճարեն զկարեւոր պէտս իւրեանց ըստ աշխատութեամբ և աստուծոյ առաջնորդ և բնակութիւն նոցա ի խոռոչս և ի սապարս լերանց և ի պրակս մայրեաց, ի պարսպեալս լերանցն։ Եւ բնակեն առանձին բաւ տունս ազգաց, և այնչափ ի բացեալ են ի միմեանց՝ մինչ թէ որ յարանց զօրաւորաց ի բարձրաբերձ անդեաց ուժգին խանչիցէ՝ հազիւ թէ ուրեք կարիցէ առնուլ զբամբիւն ձայնին, իբրև ի վիմաց ինչ արձագան լինելոյ կարծիս բերելով, և կէսքն վրիպեալք ի բնական մայրենի լեզուէն, յաղագս հեռաւորակ լինելոյ և անհամբոյրք միմեանց հանդիպելոյ, և խօսս միմեանց եղեալ կարկատուն մուրացածի բանիւք։ Եւ այնքան խրթնի անծանօթք պատահին առ միմեանս, մինչև թարգմանաց անգամ կարօտանալ. և զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, տաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ամանս ի սոյն ժամանակի հաց անուանեն. և զնոյն առագեալ ամիսս ի միջոցս պրակացն, կամ երկմատնի փայտատովք սերմանեալ. և է զգեստ նոցա աուիս ի ծածկոյթ մերկութեանն, և



ըստ սովորեն հնարաւորեն կեն կօշկաց, ի մորթոյ այծից կազմեալ, և միով կերակրով և միով հանդերձիւ բաւականանան զամառն և զձմեռն. և են սոսցեալ զէնս աշտեայս, հանապազ կրելով ընդ ինքեանս, ի պատրաստութիւն զազանացն որք ի լերինն բնակեն։

Այլ և ի ժամանակս հասելոց թշնամեաց յերկիրն իւրեանց՝ զան միաբան լեռնայինքն յօգնութիւն իշխանացն... Իսկ վասն ձեանն անկայուն զօրութեանն որ այն ինչ յամպոյն ի վայր զեցեալ լինին հնարաւորեալ իւրեանց փայտս իբրև զանուրս շաւանօք պարանակեալ շուրջ զոտամբք, զիրաւ ընթանան ի վերայ ձեանն իբրև ընդ ցամաք երկիր։

---

## ԺԳ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ *(10-րդ դար)*

## ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

*(Հատված)*

### ԲԱՆ Թ.

Եւ արդ զի՞նչ արժանաւոր բան քեզ բամբասանս չարագործեցս ի կատակ մոլութեանց մատենի այսր ողբերգութեան, ո՜վ անձն իմ թշուառ, ամենապարտական և առ պատասխանիս բանից անպատրաստ, անպիտան աստուծոյ և սրբոց մասնակցութեան։ Զի եթէ զծով մի ծովուց ի[1] յորակութիւն[2] ցեղոյ[3] յեղյեղեցից, և զդաշտս ասպարիսաց բազմաց սահմանեալ՝ ի տարածումն լայնութեան քարտէսի[4] չափեցից, և զգուբակս յորունց անտառաց շամբից եղեգանց ի համաւտս գոյութեան գրչաց կազմեցից, և ոչ զԹիւ մի ի բազմերոյն անօրէնութեանց գործեցից ընդ գրով սահմանի գրաւել։ Նա՝[5] զի թէ զմայրսն Լիբանանու ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ զլեառն Արարատեան ի կէտ ամբարձման նժարի միոյ արգարութեան միջնորդ կացուցից, ոչ համասարէ[6] այնր հարթութեան համազուգակցել։

Սաստ[7] ամբարձուղէշ՝ սաւառնատեսլն՝ տերևալից՝ ունայն ի պտղոց, նմանակից յանէտ հարազատ այնր թզենւոյ՝ զոր անէծն ցամաքեցոյց, քանզի սաղարթօք վարսից, այս է արտաքին զիմօք բարեշուք կերպից իբր պտղալից իմիք պաճուճեալ, բացականացն գոս բաղձալի, իսկ եթէ մերձեսցի անկողն խուզել[8] զխնդրելին, գտցէ զքեզ ունայն ի բարեաց և զարշելի ի գեղեցկութեանց, ծայր անարգաց և նշաւակութիւնք նախատողաց։ Զի եթէ ապաժամման յանդգնէ ժամուն[9] հերապանծ տունկն պտղաբերոյս անկենդան, որ գոյգն պատկերն է անպատրաստից, եկն ընդ անիծիւք[10], և կամ երկիր տողեալ ցօղով, և[11] ոչ բազմապատիկ զաւանդս արդարոց երկրագործութեան ատծողացն մատուցանէ՝ լքեալ մոտանի[12], իսկ դու, ո՜վ անձն իմ եղկելի, սահման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ ի ժամու իւրում պտղաբեր, ի՞բր[13] ոչ զնոյն կրեսցես պատիժ նախնում առակին[14]։ Վասն զի զհամայնն ընկալար ի քեզ անպակաս յառաւելութեանց, սկզբնաւորեալ ի մարդն առաջին և մինչև ի պատումն ծննդոց նորին, զինչս գործոց նանրութեանց[15] և զգիտս նորոգս՝ ատելիս և անախորժելիս հատակին զքեզ աստուծոյ։

Եւ վասն զի եղի զքեզ նպատակ հանդէպ երեսաց տեսութեան մտացս՝ անձն իմ անպիտան, վիմօք ձգեալ արձանաց[16] բանից, իբր զանհնդել զազան վայրենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ և ոչ պատահիմ անուանել արդար[17], սակայն յառաջնումն պատասխանւոյ իբր ընդ ոսոխի ումեմն ընդ անձին յաղաւամիտ կամօք ողորմ, բառ իմաստութեանն[18] բանի. և զյայտ մտաց խորհրդոցս[19] զաղանեաց իբր զգլխաւորեալ յանդգնութիւն չարութեան[20] գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից՝ աստուած իմ և տէր։ Զի որով չափով չափեցից զանձինս աղաղանիր[21], ի բազմ անհնար զթութեանց այսրէն չափեսցայ՝ ընկալեալ զշնորհս յաճախագոյնս ընդ մեծագունիցս պարտեաց։ Եւ որպէս վիրացն հարուածք անբժշկականք և անհնարինք ճարակեսցին, այնքանեօք չափուք կրկին առ ամին և իմաստ[22] արուեստից բարձրեալ բժշկից բարեհռչակեալ յուսացուսցին. և ի պարտուցն առատութիւն, նոյնքան փոխատուից առատաբաշխութեան բարերարեալ միջնա պակեսցի...։

## ԺԴ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ (XI-րդ դար)

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

*(Հատված)*

...Ջերմեռանդ և զՀանձէլն յորժամ յիշեմ և որ ինչ ի նոսա գործեցաւ, հառաչեմ արտասուօք, փղձկի սիրտ իմ, և յիմարին միտք իմ, և զդողի հարկանին ձեռքս և ոչ կարեմ զոճ առաջիս յառաջ խաղացուցանել: Բազում և անհամար հողքը ի վերագոյն գաւառացն, վասն տեղեացն ամրութեան՝ անդր ժողովեալ էին. յորոց վերայ հասեալ անօրինացն[2] արագապէս որպէս թռչունք, անողորմաբար որպէս գազանք, սրտմտութեամբ հասեալք որպէս վրէժխնդիրք, և խիղ արկեալ ի քարանձաւս և յանտառախիտ մայրիս՝ անխնայաբար կոտորեցին զորս և գտին. մինչ զի արիւն զորէն գարնանաբեր ժամանակին, յորժամ ի ջերմութենէ օդոյն ջուրն ծորեալ իջանէ՝ ի ձեանն առու առու վիժելով, զհող երկրին զկնի իւր հեղեղատելով, այսպէս և յայնժամ լինէր. արեանն առուք ի զիակացն անկելոցն եկեալ, ի դաշտ ի կող տեղիս ի յորդութեան գնացիցն զհող երկրին հեղեղատէին:

Այլ դու յայնժամ եղեալդ ա՛ծ զմտաւ, զկրօնաւորացն դաս և զքահանայիցն՝ որ անդ հանդիպեցան, կամ զերամս ծերոցն, կամ զերիտասարդացն զգաստութիւնս, որոց զեռաբոյս մօրուացն՝ իբրև ընկեր գեղեցկայարմար զայտան զարդարէին, և խաղողք վարսիցն փաղփեալք ի վերայ ճակատուն զօրէն վարդի վառ ի վառ գունով զդէմս երեսացն պայծառացուցանէին, թէ որպէս յանկարծակի ի սրոյ թշնամեացն իբրև ի կարկտոյ հարեալք՝ յերկիր թաւալ անկեալ գլոր խաղային: Ո՞ւր ի մէջ և զաղայոցն համար, զորս առեալ ի գրկաց մարցն յերկիր ընկենուին, որ մեծահասակ հառաչմամբ զմարմինս խողխողէին. Իսկ զծնողսն զանոյից հարուածովք՝ առ չառաց ի նոցանէ բաժանէին: Ո՞ր սիրտ քարեղէն, որ զայս լսելով ոչ հեծծեաց արտասուօք ընդ բազմադիմի չարեացն յաճախութեամբ: Կոյսք ի խայտառականս անկեալք, նորահարսանք յարանց



բաժանեալք և ի գերութիւն մատնեալք. ի միում վայրկենի երկիրն՝ որ իբրև զդրախտ մարգախիտ ատատութեամբ խճողեալ էր, եղև անմարդ ամայի, յերկուս բաժանեալ կամ սրակոտոր կամ գերի:

... Իսկ զոր ի Դերջան և յԵկեղեաց և ի միջասահմանս նոցա եղև կոտորումն, զայն և ընդ գրով արկանել չէ որ բաւական. բայց դու ասացելովքս կշռեա՛ զայն: Իսկ որ ի Տայսն մտին, առեալ զերկիրն և հասեալք մինչև ի գետն մեծ՝ որ կոչի Ճորոխ[3], և զկնի գետոյն դարձեալ իջին յաշխարհն Խաղտեաց. և առեալ զառ և զգերի գաւառին՝ դարձան, և եկեալ մինչև ի բերդաքաղաքն որ կոչի Բայբերդ, հանդիպի և անդ գունդ մի ի զօրացն Հոռոմոց որ կոչին Փռանկք, որք յանդէտս մերձեանց ի դիմի հարեալք ճակատեցան. և յաղթութենէն աստուծոյ զօրացան գունդն Հոռոմոց, և յաղթեալ թշնամեացն՝ զգլուխ զօրուն սպանին և զբազումս ընդ նմա, և զայլսն ի փախուստ դարձուցեալ, զառ և զգերի զամենայն թափեցին, բայց փախստէիցն զհետ ոչ իշխեցին չերկարել, քանզի երկեան թէ գուցէ ծանր զօրու հանդիպեսցին: Իսկ զերիքն որ ազատեցան, գոհացեալք զաստուծոյ, չոգան ի տունս իւրեանց: Իսկ որ ի վերայ Հայոց գնացին, զոր և գտին՝ ի սուր և ի գերութիւն մատնեցին, և լցեալ աւարաւ՝ դարձան անդրէն. և եկեալ ի սահմանս Վանանդայ, որոց ի դիմի հարեալ քաջազուն իշխանքն Գագկայ որդւոյ Աբասայ, և բազում նախճիրս ի նոսա գործեալ[4]: Որոց ի վերայ հասեալ զօրք անօրինաց ի մէջ փակեցին. և քանզի յերկարել պատերազմին և յահագին կոտորածէն ի զօրութենէ պակասեալք էին ինքեանք և երիվարք իւրեանց, վասն որոյ ոչ կարացեալ զդիմանէս թշնամեացն պատահել և եղանել, յորոց սուր ի վերայ եդեալ կոտորեցին յաղթողացն արս երեսուն:

Իսկ զմի ոմն յաղթողացն կալեալ, որում անուն էր Թաթուլ, որ էր այր հզօր և պատերազմասէր, զոր[5] առեալ տարան առ Սուլտանն: Եւ քանզի կարեւէր խոցեալ էր զորդի Արսալանայ Պարսից ամիրային, զոր իբրև եսես Սուլտանն՝ ասէ[6], «Եթէ դու արարեր[7], զքեզ սպանեմ[7]. ապա թէ մեռանի[7], զքեզ զմա մատաղ հրամայեմ[7] առնել»[8]: Որ յետ սակաւ աւուրց մեռաւ: Իսկ նորա[9] պատասխանի տուեալ, «Թէ իմ է զարկածն[10], չէ կենաց. թէ այլում է, զայն ոչ գիտեմ»: Սուլտանն իբրև լուաւ թէ մեռաւ, հրամայեաց սպանանել զնա, և զաջ բազուկ նորա հատեալ, եա առնել Արսալանայ ի միխիթարութիւն, թէ ի վասն քաջէ չէ մեռեալ քո որդին:

Արդ զի՞նչ է ինձ մի բուռ մրոջէ զանկանգնելի կործանումն բրխատանէից ընդ գրով սահմանել, որ իբրև ծով ի սաստիկ հողմոյ յուզեալ՝ ահագին ծփանօք, և փրփրադէզ կուտակօքն յամենայն կողմանց զայս ի ծփանս, այսպէս և մեզ հանդիպեցաւ. աշխարհս

ամենայն յանկարծակի լի եղև խռովութեամբ, և ոչ ուրեք գտանէր անդր ապաւինի. զի վասն անհնարին չարեացն՝ բարձաւ յոյս կենաց յամենայն մարդկանէ։

...Յետ երից աւուրց չարժեալ ամենայն բանակաւն, խաղայ իջանէ ի տափարածոյ տափ, և անտի իջանէ յընդարձակ դաշտն Բասենոյ առ անտառ ամրոցաւն որ կոչի Աւնիկ, յորում եսես աշխարհամերգով մարդոյ և անասնոյ, և ոչ ինչ փոյթ առնէր, քանզի ի հայնյոյն միայն ծանեաւ թէ անառ է. և անցեալ առ նովաւ գայ ի գլուխն Բասենոյ, մերձ ի գետղն՝ որ կոչի Դու։ Եւ եկեալ անտի առեալ աւարս յանդէտս ի վերայ դաշտին[11] որ հայի ի Կարին, եւ ես զքաղաքն վառեալ ամենայն պատրաստութեամբ. և նոյնչեալ յերկար ժամս՝ դարձաւ անդրէն։ Իսկ առքն Մանազկերտոյ անկեալ ի դուրս ելեալ ի քաղաքէն՝ պատրաստեցին աստուածայինս զորմանս մարդոյ և անասնոյ, քանզի ժամանակն հնձոց իսկ էր։ Եւ մինչ Սուլտանն զայսու զայնու եղեալ դարձաւ անդրէն, նորա յանհոգս եղեալ էին. և ապա եկեալ նորա վառեալ արտմութեամբ, գնէ մարտ պատերազմի ընդ քաղաքին։

...Արդ ամսակամաց աւուրբք եկաց ի վերայ քաղաքին. առ մի մի օր երկիցս անդամ գնէր մարտ պատերազմի ընդ քաղաքին, մի ի լուսանալ աւուրն և մի ընդ երեկս։ ...Արդ մինչեւ քաղաքն յոյս ապաւինեալ և ի վառեալ կայր, արկանէր խորհուրդս բարւոք ի սիրտ իշխանին միոյ, որ էր յոյժ ի մտերմաց Սուլտանայ, որ գտա ի նմանէ խորհրդային ծանուցանէր քաղաքին՝ կամ բանիւ կամ գրով։ Բազում անգամ գրեալ ի թղթոյ ի ստորնեաւքն կապէր, և պատերազմի օրինակաւ մերձեալ ի պարիսպն՝ ձգեալ ի քաղաքն ընկենոյր. և այնու զամենայն կամաց օրինական ծանուցանէր նոցա, թէ առ վարիչն այսպէս և բան այսմ ձևոյ է կամայն օրինակն և եթէ յոյս նիշ տեղւոյ ի գիշերին կամին ի ներքոյ պարսպին գերկիր փորել և մտանել ի ներքս. բայց դուք զգոյշ և ամուր կացէք, և ի տեղիացն վերայ[12] զգուշացարո՛ւք։

...Արդ յո՞ր կողմ և նորա ի պատերազմ կայրին թէ ի գիշերի և թէ ի տուընջեան, առցա վառեալ և պատրաստ անդր գտանէին։ Յետ այսորիկ մերձեալ կանգնեալ, այնու պատերազմէին։ Իսկ երէց ոմն ի մերոցս հնացեալ անձնական աւուրս, որ յոյժ տեղեակ էր արուեստին, և աա իւր կանգնեալ փիլիկուանն. և յինէր յորժամ նորա քար եդեալ ի պարսատիկս մեքենայի և ձգէին ի քաղաքն, երէցն գիր բարն դէպ ուղիղ նոցա քարին արձակէր, որպէս զի դիպեալ քար երիցուն ի քար անօրինացն, ի վերայ իրեանց ընկենոյր[13]։ Զայս տեսեալ անօրինացն եոթն անգամ, ոչ ինչ կարացին վնասել. քանզի զօրացաւ քարն երիցուն ի վերայ քարի նոցա։

Ապա ա՛յլ պատերազմական գործի պատրաստեալ, զոր ինքեանք քարան կոչէին, որ յոյժ ահագին էր, զոր առէին թէ չորս[14] հարիւր ապաստանք էին նորա, որք զպարսպան քարշէին, և վաթսուն լիտր քար եդեալ ի պարսատիկսն՝ ի քաղաքն ձգէին. և առաջի նորա պարիսպ կանգնեցին ի քամբակի բերանց և յայլ բազում կողմանց, զի մի՛ քար երիցուն հասցէ ի նա։ Եւ իբրև զայս այսպէս յարդարեցին, արձակեցին քար մի, որ դիպեալ ի պարիսպն ամրոցացն, փլոյց[15] և խռովեաց զնա. զոր տեսեալ քաղաքին՝ յոյժ զդողդ հարան, և առ աստուած աղաղակէին մեծաւ հառաչմամբ, գալ յօգնականութիւն. իսկ անօրինացն լինէր մեծ ուրախութիւն։ Իսկ ի գալ երկրորդ աւուրն Պրոթիմեզ՝ որ զօրուն իշխանն էր, առեալ զզօրս իւր եկեալ մարտ եդեալ կռուէր ընդ մերսն, քանզի այր քաջ էր. եկեալ խոռին կամէր հզօրապէս ի ներքս մտանել, և յանկարծակի գիտացեալ երթեալ անկաւ։ Իսկ որ ի վերայ պարսպին էին, ձգեալ զճանկ երկաթի՝ կալան զնա և քարշեալ ձգեցին ի ներքոյ պարսպին. և զօրացն[2] տեսեալ՝ դարձան լի տրտմութեամբ ի բանակն. իսկ քաղաքին լինէր ուրախութիւն ոչ սակաւ։

Յայնժամ մի ոմն զօրաւոր ի զօրացն Հոռոմոց պատրաստեալ հուր նաւթիւ և ծծմբով, արկեալ յաման ապակեղէն, և նստեալ ի վերայ աղեխ երիվարի, քաջասիրտ և արի գոլով, վաղվաղակի միայն դիմեաց ամրացուցեալ, և ելեալ ընդ դուռն քաղաքին՝ մտանէ ի բանակն այլազգեացն. Մանաւանդ ծայրեկեալ դիմեցն՝ այրերն Թաթարք, և երթեալ մինչև ի բարանն՝ շուրջ անցեալ զնովաւ. և յանկարծակի ի վեր առեալ զշիշն նետեց ի վերայ բարանացն, և նոյնժամայն բորբոքեալ հրայն[3] բաց ծիրանի ի դուրս ելանէր, և ինքն դառնայր փութապէս։ Զոր տեսեալ անօրինացն[4], ի հիացման եղեալ, հեծեալ յերիվարսն, զհետ մտեալ և ոչ կարացին հասանել։ Եւ նորա[5] եկեալ խաղաղութեամբ եմուտ ի քաղաքն, գոհացողութեամբ առատածոյ ոչ ինչ անձնյով վէրս յանձին։ Իսկ Սուլտանն իբրև ետես զեղեալսն, ցասմամբ մեծաւ հրամայեաց զպահապանսն սրակոտոր առնել...։

Իսկ Վասիլն՝ որ քաղաքին իշխանն էր, հրամայեաց ամենեցուն ի վերայ պարսպին մեծամեծ աղաղակաւ անարգել և թշնամանել զՍուլտանն, որ յետ երկուց աւուրց չարժեալ բանակաւն գնաց ի տեղւոյն և երթեալ՝ հանգեաւ քաղաքի միոջ, որ կոչի Արծկէ, որ է ի մէջ ծովուն Բզնունեաց, և ունի մօտ յինքն բերդ ամուր և անառիկ. և քաղաքացիքն յոյս ապաստան եդեալ ի ծովն և յամրոցն,

*յանհնարս կայրին։ Իսկ արխիմարրու գաղտնի ծանծաղ տեղի գտեալ ի ծովուն, եթէ առաջնորդութեամբ ուրուք, և եթէ իւրեանց հնարագիտութեամբն, մտին ի քաղաքն. և սուր ի վերայ եդեալ կոտորեցին զամենեսին. և առեալ զգերին և զկապուտ քաղաքին, ելին ի անդուշէն։ Եւ այս արարին դիւր եղև Սուլտանին, և գնաց մեծաւ արտմութեամբ յաշխարհն իւր, քանզի ոչ զոր ինչ կամէր՝ կարաց վճարել ինչ։*

(ԺԶ)

---

# ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
# ԵՎ
# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՈՃԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գրաբարյան բնագրերը ճշտությամբ հասկանալու տեսակետից խիստ կարևոր նշանակություն ունի գրաբարի ոճական առանձնահատկությունների հաշվառումը. այդ նկատի ունենալով՝ ստորև տալիս ենք դրանցից մի քանիսի համառոտ բնութագիրը։

## I. ՆՈՒՅՆԱՆԻՇ ԵՎ ՀՈՄԱՆԻՇ ԲԱՌԵՐԻ ԱՎԵԼԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գրվածքի ոճին զարդարանք տալու, իսկ առանձին դեպքերում էլ իմաստային որոշ նրբություններ արտահայտելու համար հեղինակները, որպես ոճական միջոց, գործածում են ավելադրություններ, որոնք տարբեր բնույթի են լինում։ Առանձին հետաքրքրություն է ներկայացնում նույնանիշ և համանիշ բառերի ավելադրությունը։ Սա բնորոշ է նրանով, որ մի բառի հետ ավելադրությամբ հանդես են գալիս նաև նույնանիշ և համանիշ այլ բառեր, որոնք ավելալ դեպքում բովանդակային նոր ֆունկցիա չեն ունենում։ Այսպես՝ «Չոգաւ գնաց յերկիրն Յունաց» (Բուզ., V, լէ)՝ Գնաց Հունաց երկիրը։ Այստեղ չոգաւ և գնաց բառերը նույնանիշ են և երկուսը միասին վերցված նախադասության մի անդամի (ստորոգյալի) արժեք ունեն, ուստի նրանցից մեկն ավելադրություն է։ Որպես ավելադրություն հանդես են գալիս շատ խոսքի մասեր։ Ահա մի քանի օրինակներ. «... Զօրն զարանակալ յանպատրաստից յանկարծօրէն յայլակարծուց ընդոստ յանկարծուստ յիւրաքանչիւր բազմականին ի վերայ հասանէր թմբրունէին...» (Բուզ., III, Ի, էջ 81)՝ Դարանակալ զորքը հանկարծ վրա հասնելով նրանց՝ յուրաքանչյուրին իր բարձի վրա բռնում է սպանում կերպով։ «Դարձեալ միւանգամ անդրէն հարցանել սկսան...» (Եղիշե, VII)՝ Կրկին սկսեցին հարցնել։ Այսպես էլ՝ վաղվաղակի փութանակի, դեռ տակավին, բայց սակայն, ապա ուրեմն, փշաբեր տառապակարեք, նորոշէն նորակերտ և այլն։

*Նույնանիշ և համանիշ գոյական անունների հետ ավելադրությունը սովորաբար դրվում է սեռական հոլովով՝ անկախ այն գոյական անվան պաշտոնից, որի վրա դրվում է նույնանիշ կամ համանիշ գոյական անունը որպես ավելադրություն, ուստի սրանց դերը պատկանում է առաջին բառին և ոչ թե սեռականով ավելադրությանը։ Ինչպես դրանից երևում է՝ աշխարհաբար թարգմանելիս նկատի ենք ունենում առաջին բառի հոլովը, իսկ առաջին բառը սեռականով ավելադրության նման սահմանափակված չէ, կարող է արտահայտվել տարբեր հոլովներով։ Օրինակներ. «...Դայր առ* **մարտ պատերազմի** *ընդ իշխանին Յունաց» (Ագաթ., էջ 26)՝ Գալիս էր պատերազմ անելու (պատերազմելու) Հունաց իշխանի հետ։ «Մանալ թագաւորն՝ բուռն հարկանէր զնմանէն. կատարել* **զկամս ցանկութեանն»** *(Ագաթ., էջ 100)՝ Թագավորը ձեռնելով բռնեց նրան՝ կամքն ու ցանկությունը կատարելու համար։ «Եւ չիշխէր կրել* **պատիժ պատուհասից** *այնպիսին...» (Եզնիկ, I, ԺԴ, էջ 41)՝ Եվ հիշավի պատիժ է կրում այնպիսին։ «Յորժամ արգելուս և փակես զամենեսեան ի հեռաւոր օտարութեան, կատարին* **խորհուրդ կամաց քոց»** *(Եղիշե, I)՝ Երբ բոլորին արգելես ու փակես հեռավոր օտարության մեջ, կկատարվեն քո մտադրությունները։ «...Եւ* **թիւ համարոյ** *եւ առնէր...» (Եղիշե, VI)՝ Եվ հաշվում էլ էր, հաշիվ էր անում։*

*Աշխարհաբար թարգմանելիս կարող ենք՝ ա) վերցնել երկու բառերից մեկնումեկը, ինչպես՝* **«մարտ պատերազմի»**— *պատերազմ կամ՝ մարտ,* **«զկամս ցանկութեանն»**— *կամքը կամ՝ ցանկությունը, բ) վերցնել երկուսն էլ, միավորելով և կամ ու համադասական շաղկապներով, օրինակ՝* **«զկամս ցանկութեանն»**— *կամքն ու ցանկությունը,* **«զելս կատարածի»**— *ելքն ու վախճանը, գ) երկուսն էլ փոխարինել մի ուրիշ բառով կամ արտահայտությամբ, որը կարող է դրսևորել նրանց իմաստը, օրինակ՝* **«խորհուրդ կամաց»**— *մտադրություններ,* **«թիւ համարոյ»**— *հաշիվ,* **«պատուէր հրամանի»**— *հանձնարարություն և այլն։ Այս բոլոր դեպքերում էլ հիմք է ընդունվում առաջին բառի հոլովը։ Թարգմանության նշված դեպքերի մեջ սահմանափակում չկա։ Յուրաքանչյուր օրինակ պետք է թարգմանել ըստ նպատակահարմարության։*





*Բայական ավելադրությունն արտահայտվում է թե՛ դիմավոր և թե՛ դերբայական ձևերով։*

## ա) Դիմավոր

*Նույնանիշ կամ համանիշ բայերը դիմավոր ձևերով ավելադիր գործածությամբ արտահայտվում են նույն դեմքով, թվով, եղանակով, ժամանակով։ Բերենք օրինակներ. «...*

**Խաղայր գնայր երթայր** *իջանէր ի դաշտն Այրարատեան գաւառին...» (Բուզ., III, Է, էջ 26)՝ Գնաց իջավ Արարատյան գավառի դաշտը։ «...* **Այրէին կիզուին** *զատենս պաշտօնարկի և պաշտաման կրակին» (Եղիշե, II)՝ Այրում էին կրակի պաշտամունքի տները։*

## բ) Դերբայական

*Դերբայական ավելադրությամբ հանդես են գալիս անորոշ և անցյալ դերբայները։ Սրանք սովորաբար սաստկացնում, ընդգծում են բայի դիմավոր ձևերի իմաստը, առանձին երանգ էլ իմաստի վրա չեն ազդում։*

*Այս դեպքում անորոշ դերբայը դրվում է նույն բայի դիմավոր ձևի վրա և արտահայտվում է գործիական ու հայցական հոլովներով։ Օրինակներ. «...* **Երկնչելով երկեաւ** *թագաւորն Պարսից Շապուհ...» (Բուզ., IV, ԺԶ, էջ 194)՝ Պարսից Շապուհ թագավորը երկյուղ զգաց։ «...Նոցա* **պատերն պատելով պատեցին»** *(Ագաթ., էջ 428)՝ Նրանց պատերով պատեցին։ «...* **Աճելով աճէին և բազմանալով բազմանային...»** *(Եղիշե, III)՝ Աճում և բազմանում էին։ Կամ՝* **«Անկանել անկանէին** *ի պաշտօն դիւաց...» (Ագաթ., էջ 293)՝ Ընկնում էին դևերի պաշտամունքի համար։* **«Արհամարհել արհամարհեցին** *զմեզ...» (Ագաթ., էջ 325)՝ Խիստ արհամարհեցին մեզ։ «...Այն ամենայն ի ձեռն այլոց՝* **գրել գրեցաւ»** *(Բուզ., II, Ա, էջ 9)՝ Այն ամենը ուրիշների ձեռքով գրվեցին։ Երբեմն նույն բայի փոխարեն գործածվում է համանիշ բայ, օրինակ՝* **«աճել բազմացաւ»** *(Բուզ., III, Գ., էջ 11)* **«մերձել մատիցի»** *(Եզնիկ, I, ԺԴ, էջ 41)։*

*Գրաբարում համեմատաբար լայն տարածում ունի անցյալ դերբայի ավելադիր գործածությունը։ Բայի դիմավոր ձևի վրա դրվում է համանիշ բայը՝ անցյալ դերբայի ձևով, որը դրվածքով նախորդում է առաջինին, ինչպես և ընդգծում, սաստկացնում է բայ-ստորոգյալի իմաստը, ուստի և հաղորդվող միտքն ավելի որոշակի է դառն-*

նում, բայց երբեմն էլ չի ազդում իմաստի վրա և դրվում է իբրև զարդարանք։ Այս վերջին դեպքում բայերը նույնանիշ են լինում։ Օրինակներ. «...Ասաց հարկանէին և զայն աղքատաց բաժանեալ բաշխէին» (Ագաթ., էջ 405)՝ Ավար էին վերցնում և այն բաժանում էին աղքատներին։ «Քանդեալ բրէին զերկիրն...» (Բուզ., IV, ԻԵ, էջ 224)՝ Քարուքանդ էին անում երկիրը։ «Թէպէտ և բազում այն էր որ ապրեցան՝ քան թէ որ մեռանն, սակայն ցանեալ ցրուեցան...» (Եղիշե, VI)՝ Թեև ողջ մնացածներն ավելի շատ էին, քան մեռածները, սակայն ցիրուցան եղան։ «Մի՛ երկուցեալ զանգիտեսցուք ի բազմութենէ հեթանոսացն...» (Եղիշե, V)՝ Զարհուրենք հեթանոսների բազմությունից։ «...Որ անուանեալ կոչի Թորդան» (Բուզ., III, Բ, էջ 10)՝ Որը կոչվում է Թորդան։

Նաև հազվադեպ հանդիպում է նույն բայի տարօրինակ գործածություն, օրինակ՝ «Զարմացեալ զարմացեալ եմ...» (Ագաթ., էջ 66)։

Բացառապես ոճական նպատակով հանդես եկող այս կիրառությունները չպետք է շփոթել այն դեպքերի հետ, երբ մեկից ավելի ստորոգում ունեցող նախադասության դեպքում դիմավոր ձևերը փոխարինվում են անդեմ դերբայով։

## II. ՊԵՍՊԻՍՈՒԹՅՈՒՆ

Հեղինակները հաճախ միևնույն միտքը կրկնում են տարբեր բառերով՝ նույնանիշ կամ հոմանիշ։ Այս երևույթն ընդունված է կոչել պեսպիսություն։ Օրինակ՝ «...Եւ այս կարգ զարմանալիք ի հակառակ և յանհնարին երկմտուրց լինել և ծածուկ ձեռամբ սաղջեալս, ոչ ի միմիայն կողմն ի հանդէպ երեսացն եւեթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարգին, և ընդ հանուր արշաւին, և ընդ բնաւս սլանան... (Եղնիկ, I, Գ, էջ 14)։ Այս հատվածում միմիայն իմաստը արտահայտված է **միմիայն, եւեթ** հոմանիշներով, կողմ իմաստը (դեպի երեսի կողմը, դեպի առաջ)՝ **կողմն, հանդէպ** բառերով, ընթանալու գաղափարը՝ **արշաւել, վարգել, սլանալ** բառերով, դեպի ամեն կողմ գաղափարը՝ **«յամենայն կողմանս», «ընդ հանուր», «ընդ բնաւս»** արտահայտություններով։

## III. ՎԵՐԱՑԱԿԱՆԸ ԹԱՆՁՐԱՑԱԿԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Գրաբարում շատ հաճախ հանդիպող ոճական հնարներից մեկն է վերացականը թանձրացականի իմաստով գործածելը։ Առանձնապես տարածված է ածականը **ութիւն** գոյականակերտ վերջածանցի միջոցով գոյականի վերածելը, սակայն ածականի իմաստով գործածելը։ Ածականն ստանալով **ութիւն** ածանցը՝ վերածվում է գոյական անվան, սակայն կիրառվում է ածականի իմաստով և մեծ մասամբ հանդես է գալիս սեռական հոլովաձևով՝ անկախ նախադասության մեջ ունեցած պաշտոնից։ Աշխարհաբար թարգմանելիս նման բառերը պետք է թարգմանել որպես ածական, օրինակ՝ «Ապաքէն զայդ կամիս՝ զի ծածկեսցի խորհուրդ **ամբարշտութեանդ**...» (Եղիշե, I)՝ Իսկապես այդ ես կամենում, որ ծածկվի այդ ամբարիշտ (չար) խորհուրդը։ Երբեմն էլ լրացյալն է արտահայտվում սեռական հոլովով, իսկ **ութիւն** ածանց ստացած ածականը հոլովվում է ըստ կիրառության, օրինակ՝ «Իսկ անօրէն իշխանն իբրև գիտաց եթէ յայտնեցաւ **խարամանկութիւն** խորհրդոյն...» (Եղիշե, II)՝ Իսկ անօրեն իշխանը երբ իմացավ, որ հայտնվեց (իր) խարամանկ մտադրությունը...։ Այլ կերպ ասած՝ այս վերջին դեպքում **ութիւն** վերջածանց ստացած ածականը դառնում է հատկացյալ, իսկ դրան վերաբերող բառը՝ հատկացուցիչ, սակայն դրանք աշխարհաբար թարգմանում ենք որպես որոշիչ և որոշյալ։

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

## Ա. ՀԱՏՎԱԾՆԵՐ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Երկնել (երկնեմ). երկնել, ծննդաբերական ցավերով բռնվել. «Երկներ երկին երկներ երկիր»՝ Երկնում էր երկինքը, երկնում էր երկիրը.

2. Ունել (ունիմ) բայն այստեղ գործածված է բռնելու, պահելու իմաստով. երկունքը ծովում բռնել էր նաև կարմրիկ եղեգնիկին.

3. Այստեղ կատարված է և Հայկի [illegible]: Նման [illegible] Հայկ է կրում լրացյալը՝ «զկարմրիկ եղեգնիկն»: Հայկի այսպիսի [illegible] գրաբարում բացառված չէ։

4. Ելնում էր, դուրս էր գալիս, եղեգնի փողով, փողի միջով ծուխ էր ելնում, ծուխ էր դուրս գալիս։ Նույնը և հաջորդ տողում՝ եղեգնի փողով բոց էր ելնում։

5. Բառերը նմանաձայնական-բաղաձայնական ձևով գործածելը Հայ հին բանահյուսության [illegible] բնորոշ հատկանիշներից մեկն է, ինչպես՝ կարմրիկ, եղեգնիկ, պատանեկիկ, աչկունք։ Պատանեկիկ և աչկունք բառերն ունեն կրկնակի փոքրացուցիչ-փաղաքշական ածանցներ՝ [illegible]

6. Այստեղ ունել (ունիմ) բայը գործածված է ունենալու իմաստով, [illegible] կարող ենք թարգմանել նույնությամբ՝ ունէր:

7. Փակագծերում գրված բառերը հեղինակինն են և չեն մտնում բուն երգի մեջ։

8. Որոշիչը (բոց) և որոշյալը (մորուս) բաժանված են ստորոգյալով (ունէր), նման շարադասությունը շատ հազվադեպ է հայերենում։ Մորուս բառը որպես ունէր ստորոգյալի խնդիր չպետք է անջատվեր իր որոշիչից։ Պետք է լիներ՝ «Ունէր բոց մորուս» կամ «Բոց մորուս ունէր», ինչպես վերը՝ «Հուր ունէր հեր»։
Մորուս ձևը մորուք բառի հայցականն է։ Մորուք բառը գրաբարում սովորաբար անհոգնական է (սեռ. մորուաց), գործում է նաև մորուս: Հանդիպում է նաև եզակի ձևով՝ մորու կամ մորուս։

*) Կրճատման ու բացատրական առանձնահատկություններից ելնելով՝ [illegible] անհրաժեշտաբար անցկացրել ենք նաև մի քանի այլ [illegible] հատվածներ ([illegible] վիպասանական և մեսրոպյան շրջանից), որոնք առկա են [illegible] այլ հեղինակների կազմած ժողովածուներում ու այլ բնույթի գործերում։ Այդ կարգի բնագրերը ծանոթագրելիս [illegible] օգտագործել ենք այդ հեղինակների (Բ. [illegible], Վ. Առաքելյանի և այլն) որոշ ծանոթագրությունները։



9. Աչկունք – աչիկ+ունք. աչիկներ, աչք բառի արմատը (աչ) իր փոքրացուցիչ-փաղաքշական ածանցով։ Ունք հոգնակերտի հավելման հետևանքով ի ձայնավորը սղվել է։

10. Հատուած. գագաթ, այս իմաստով գործածվելով [illegible] բառերի հարաբերությամբ՝ նշանակում է գագաթներ, ինչպես այստեղ է՝ «Հատուած [illegible]»: Անցյալ դերբայը (գնացեալ) գործածված է դիմավոր նշանակությամբ։

11. Սովորաբար և հոգ են բնորոշում հատուկ անունների [illegible] լրացումները, սակայն երբեմն էլ առնում են [illegible] լրացումները, ինչպես այստեղ՝ «Վարդգէս մանուկն»:

12. Պարառական գործիական է, որը [illegible] մի բանի [illegible] իմաստ է արտահայտում, սակայն այստեղ [illegible] իմաստ՝ կարող ենք թարգմանել նաև մոտ. Քասաղ գետի մոտ:

13. Անցյալ դերբայը դիմավոր նշանակությամբ՝ նկատել նստեց:

14. Կոել կափել զդուռն. դուռ թակել, դուռ ծեծել։ Հատուկ զարգացած է, նշանակում է՝ խնամախոսության գնալ այդ տունը, այդ տեղից աղջիկ ուզել։ Այստեղ անցյալ դերբայը արտահայտում է նպատակի [illegible] «Կոել կափել զդուռն Երուանդայ արքային»՝ [illegible] աղջիկ ուզելու։

15. Անհեթեթություն է։ Սովորաբար այր և կին բառերը գրվում են [illegible] վրա, երբ [illegible] այր մարդ, կին մարդ, այր ձիավոր, այր [illegible] գրվում է առանց այդ [illegible], ինչպես այստեղ։

16. Յաղթել (յաղթեմ) բայը ներգործական սեռի է, սակայն նրա անմիջական խնդիրը (ուղիղ խնդիրը) գրվում է տրական հոլովով, ինչպես այստեղ՝ աղջիկն. այսպես էլ՝ յաղթել թշնամեաց։

17. Այստեղ նույն [illegible] է, ինչպես և [illegible] բովանդակությունը. Սաթենիկը դիմելով Արտաշեսին՝ խնդրում է վերադարձնել գերի առած պատանուն և ո՛չ թե նրան կանչում է իր մոտ։ «Ո՞վ [illegible]»:

18. Բանից. բան բառի հոգնակի տրականն է՝ խոսքերից:

19. Ս-ն Հայ է, չպետք է շփոթել հոգնակի հայցականի հոլովակերտ մասնիկի հետ. գրված է [illegible] հոլովի վրա։

20. Անցյալ դերբայը նախադասության [illegible] գերում՝ [illegible]։

21. Գրաբարում ս, դ, և [illegible] միաժամանակ արտահայտում են նաև ստացական հարաբերություն։ Այստեղ դ-ն որոշիչ-ցուցական է և գրված է 2-րդ դեմքին [illegible]: Նույնպես և՝ «[illegible]» [illegible] (որ [illegible] է) [illegible]։

22. Ո՛չ է ունէն, ունէն է միայն [illegible] բայի [illegible] ձևն է՝ [illegible]։ [illegible] գրված «Ո՛չ է ունէն [illegible]»՝ [illegible] չէ։

23. Լուսոյ [illegible] է կրել իր վրա, սակայն լրացյալը [illegible] ունի՝ [illegible]:

24. Հոգնակի սեռականով է գրված, նշանակում է ցեղերի:

25. Բառնալ զկենդանութիւն. կենդանությունը վերացնել, վերջ տալ կյանքին։

...ասչեր, Բաբկեն Վարդան, Աղասի Խանջյան:

29. Ենթ. նախադասությունը վերաբերում է ուխտող բառին, որը գրված է սեռական հոլովով՝ ուխտողի փոխարեն. դիմաց, համար (ս-ն հոդ է):

30. Ունի երկու ձև՝ ճենանել (ճենանում) և ճենճում:

31. Հոդ է ընդունում նաև այն ենթադրյալ որոշյալը՝ որի որոշիչը հատուկ անուն է՝ արքայն Արտաշէս, գետն Երասխ, Խաղաղն Տիգրան:

32. Մարդիկ ող ունենալու պատճառով հնում պատկերացվի ժամանակ մարդիկ էին բռնում, իսկ որոշ ժամանակ՝ կենդանիները:

33. Գրված է հայցականով, ուղիղ ձևն է աշխարհ, որտեղ ի-ն հոլովական վերջավորություն չէ, ինչպես և պատասխանի, հիմնարի, տեղի, կարասի բառերում նա նաև արմատի ձևը:

34. Ընկենալ (ընկենում) բայի անցյալ կատարյալի եզակի 3-րդ դեմքն է, որն ունենում է նաև ընկնալ ձևը. նետել, գցել:

35. Փոխ. ի մէջ:

36. Դրապարում սեռական հոլովը հոդ ընդունում է, ուխտողին սեռական հոլովով է:

37. Սովորական են յոյժ, կարի, առաւել:

38. Փոխ. զմէջս:

39. Առաջ անձրև: Այստեղ նկատի է առնված հարանիքի ժամանակ առնի ու մարդկանց յաղ տալը՝ բառ ազատագրության:

40. Անձրևում էր, անցնում էր: Ոսկի անձրև էր անցնում:

41. Այստեղ նախդիրը ժամանակի դարձվածք է արտահայտում՝ փնտրողության ժամանակ, ճանապարհության ժամանակ:

42. Սեռական հոլովով ենթակա անցյալ դերբայի մասը: Պետք է թարգմանել ստորադասականով՝ Արդյունքը:

43. Սաղ. ինչպես և գործնալ դերբայները գործածված են դիմավոր նշանակությամբ. «Սոյ գործեալ» եւ. ճաշկերույթ տալը, «խաղաղասեր լինալ» եւ. գամ յաղթել:

44. Սեռականով ենթակա է: Տե՛ս նաև ծան. 42:

45. Այս բառակապակցությունը (Գրքի որդին Արտաշիսի) Արտաշատայ ենթակայի լրացումն է, հնացած է նրանից:

46. Ի նախդիրը անորոշ դերբայի հետ ժամանակի դարձվածք է արտահայտում՝ ճիմելիս: ժամանակ, ճիմանդրվելիս:

47. Անկայուն է, ենթական սրբին արտահայտված է:

48. Մարդացայինը նույն արմատով կազմված է ընդունել՝ տանելով անելույս եւ. անելով անելու է, ինչպես անելու է:

49. Այս նախադասությունը շատ վենեի սակոր է, ավելի ճշմարտվում է, որ այսպես արտացոլված է այն հին ժողովրդական սովորությունը, որի համաձայն բանակը մի-տոյով նվաճում էին մեկի մեջը: Հետ պրոն. Հ. Անտոյանի՝ առավոտ և այլ բառերը (դ-ն նախդիր է) անձանոթ բառերի անուններ են, իսկ խնամուր և խառնելի անները են՝ բաղնի, ազնվագույն, բրդու նշանակությամբ:

50. Այստեղ նշանակում է երբ, երբ դու գնացիր:



...ները այն հենինս (ձի) որոն գնալու համար:

54. Այստեղ ոգի, գն խմացում է:

55. «Ո՞ առայն բառացի նշանակում է՝ ո՞վ կտար, անց, անհատակը... բաղադրական... թարգմանությունն է՝ ով, ո՞ւր է իր լինել, ո՞ւր է իր տար:

56. Մենք փող էինք հղացում և թողում էինք խլում:

57. Վայել էր, սովորություն էր:

58. Թե դու ճարպի որկորին ունես, մենք Միրակի ավարաները չունենք:

59. Ուղիղ խնդիրը (դյարժաս) և առորդյալը (բառարկգույց) ընդգծված են «ձեռ ի միջում խառում» արտահայտությունը, բառեր որ առորդյալը նույնն է նաև առաջին նախադասության համար: Թարգմանելիս պետք է գտնել որևէ «ձեռ ի միջում խառում» համարժեք դարձվածքը:

60. «Հայտաս եղեն», հայտա լինել հարավորությունն է՝ բայի խոնարհման, եւ. հայտարարել:

61. Այստեղ ե-ն հոդ է, բայց եզակի թիվ է գրված: «Զոր ասեն...» Այն, ինչ որ ասում էր:

62. Այստեղ նշանակում է այլևս, էլ:

63. Դիմավոր նախադասության ենթական է միանի, սակայն ստորադասության մեջ նոր ենթակա է հանդես եկել՝ սար, ձիշտ կրիներ «մարդկանց գրա»:

## Բ. ԿՈՐԻՒՆ

### ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ

1. Նախակարգ բանի. խոսքի սկիզբ, առաջաբան:

2. Փոյթ առնել. հոգ տանել. «Փոյթ արարեալ մեր պատմելոյ» Մենք պատմելու հոգ տարանք, պատմելու հոգ ենք տարել: Մեր՝ սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մասը:

3. Անցյալ դերբայով արտահայտված բայոր բայերը գործածված են դիմավոր նշանակությամբ՝ փութեր էր (կրթել էր), եղել էր, մնացել էր: Անցյալ դերբայի նման գործածություն կա նաև հայերեն բարբառում:

4. Դասն բառը այստեղ գործածվել է պայմանի, արդյունքի իմաստով:

5. Թուանալ միջամտել լինել (լինում). ձեռնարկել, ձեռք զարկել:

6. Դարձ. զաման Հին Հայաստանում, Աշխարհի իր յուրահատուկ պատմությամբ:

7. Սաղացական սրբոց է, կայանի է թարգմանել սեռականով: Դրապարում սովորաբար անում բառը սովորաբար սեռական հետ միշտ եւ մեծ բայի միջնորդ կազմվում է արտահայտվող գրված դերանվան հետ, այսպես՝ «Ուում անուն էր ճարիւր», որի անունը ճարիւր էր: Հանդիպում է նաև սեռականով՝ «Որոյ անուն էր Անակ» (Ագաթ. § 25): Կապվում է նաև այլ բայերով՝ և՝ սեռականով, և՝ տրականով, ինչպես՝ «...Որոյ անուն կոչէր Վաղարշապատ» (Կոր.): «Որում անուն Փառանձեմ կոչէր» (Բուզ.):

8. Ենթակա է՝ գրված սեռական հոլովով:

9. Գործածված է իներն գերադրական իմաստով։

10. Դրարգուում հաճախ անուն բառը հատուկ անվան հետ ուղիղ ձևով գրվելով արտահայտում է պարզականի իմաստ՝ «Դանիէլ անունն» եւ. Դանիէլ անունով, «Վաչէրին անունն» եւ. Վաչէին անունով։

11. Սեռական հոլովով ենթակա է։

12. Անդ. անկատարը անցյալ կատարյալի իմաստով, եւ. հասավ, անցնեցավ, ազդարկեց, հասցրեց, ուրախացան։ Նույնպիսի գործածություն կա նաև հատուկ անվան մեջ՝ Նայզլին, անդեկանայիչ, Նոտանահ տայր, Նուսանէր, տանէր։ Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

13. Այստեղ՝ մասամբություն, մաս։

14. Ի վերայ նստանել, այստեղ՝ հասկանալ, խմանալ, վերահասու լինել։ «Մտել ի վերայ նստանալ» երկիրգրական նախադասություն է, ստորոգյալի դերը կատարում է անցյալ դերբայը. եւ. երբ հասկացան, երբ վերահասու եղան։

15. Նոկ բառն այստեղ շաղկապ չէ, այլ եղանակավորող բառ է։

16. Դարձեալ և կրկին անգամ համանիշ են, գործածված են ավելադրությամբ։

17. Ապա, դեռ, բոլորը համանիշ բառեր են, գործածված են ավելադրությամբ։

18. Արամ անունով կոչվում էր Տարբերը։ Դա տարածվում էր նաև Միջագետքի և Ասորեստանի վրա։

19. Հին Նշանավոր քաղաք էր Հյուսիսային Միջագետքում, Եփրատ գետից արևելք, կոչվում էր նաև Ուրհա, Ուռհա (Ուրֆա)։

20. Քաղաք Տիգրիս գետի վրա, այժմ՝ Դիարբեքիր։

21. Սեռական հոլովով ենթակա է։

22. Սամոսատ քաղաքի անունը ամփոփված ձևով է գործածված (այսպես և Տարոնական գավառ)։ Սամոսատ՝ քաղաք Եփրատի վրա, Եդեսիայից հյուսիս։

23. Դերբայական նախադասություն է. դերբայը (առաջին եղնալ) պետք է թարգմանել գիմավոր ձևով։

24. Սաորգոյալի արտահայտված է անցյալ դերբայով։ Պետք է թարգմանել դիմավոր ձևով. «Ու այնպես բացում աշխատությամբ հավաքելով վասն իւրոյ ազգին բարեաց ինչ ռամն գանձեալս» նմ այնպես էա չառ տանջանքների դիմացավ, տանջանքներ կրեց՝ իր ժողովրդին մի բարի օգնություն գանելու համար։

25. Անցյալ դերբայով և լինել (լինել) բայով կազմված բաղադրյալ ժամանակի՝ գրաբարական նշանակությամբ։

26. Այստեղ գործածված է գրաբարի նշանակությամբ։

27. Եկեղեցի գավառ, այժմյան Երզնկայի գավառը։

28. Դաղանական սան կամ Դաղնատան, գավառ Տայքում (Չորրորդ Հայքում), այստեղից էր Հովնեփ (Տափաչի Դադնացին)։

29. Այս արտահայտությամբ է սկսվում «Մատուռածագանը»-ի այն հատվածը, որն առաջին անգամ թարգմանվել է հայերեն լեզվով. Մեսրոպի ձեռքով։ Այդ հատվածի վերնագիրն է՝ «Առակք Սողոմոնի որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայելի»։

30. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ սածայ՝ առավ, առագավ, վերցրեց։



31. Հրամարել (հրամարիմ). այստեղ՝ հրաժեշտ տալ, բաժանվել, հեռանալ (չերթալ եւ.)։

32. Իւրաքանչ. յուրաքանչյուրով (բնագրում և հոգ. ուն)։

33. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ բերէր. բերեց։

34. Նախերկել լինել (լինիմ). նախ ընդունվել։ Նախորդնապն ձեռում ե-ն հոլ է՝ գրված հարաբերյալի փոխարեն։ Ամբողջ արտահայտությունը պետք է դարձնել այսպես՝ «Որ առաջի արդ նոցա յարոց նախերեկաց եղև՝ գերակայք...»՝ նա նշանագրերը նորագույնների հրաման, որոնց կողմից նախ ընդունվեց։

35. Այսինքն՝ «...Ի մխիթարութիւն աշակերտելոցն ում էին ոչ սակավք»։

36. Սովորական ձևն է իւրաքանչ. եւ. յուրաքանչյուրով։

37. Համապարփակ լինել (լինիմ). ամփոփում լինել։ Բնագրում բայն անկատարով է գրված, առկայն անի կատարյալի նշանակությամբ՝ համապարփ լինելով։

38. Անցանել (անցանեմ) բայը պ նախդիրով և գործիական հոլովով խնդրի է ընդունել։ Անցանել զօրեանով, օժնտներ անցնել։

39. Հայաստան, Յունաստան և նման հատուկ անունները գրաբար մատենագիրների մոտ առանձին հոլովել չեն դրվել, այլ գործածվում են Հայոց աշխարհ, Յունաց աշխարհ կամ Հայաստան աշխարհ (Ինչպես այստեղ է) ձևերով կամ էլ Հայք, Յոյնք ձևերով։

40. Նոր Քաղաք էր կոչվում Վաղարշապատը, որն այն ժամանակ Հայաստանի մայրաքաղաքն էր։

41. Հիշել արժանի անձը՝ Մեսրոպը։

42. Սեռական հոլովով ենթակա է։

43. Ինչպես այս, այնպես էլ մյուս դիմավոր ձևերը անցյալ անկատարով արտահայտում են անցյալ կատարյալի իմաստ։

44. Ենթադրվում է, որ Եւստաթի անվան աղավաղված ձևն է։

45. Անորոշ դերբայը տրական հոլովով արտահայտում է նպատակի գաղափար՝ «մկրտելոյն տանելոյն» սկսելու, սկսելու համար։

46. Հոգևոր Մարաց անվան տակ հասկացվում էին Մասիս լեռան հյուսիսարևելյան կողմից սկսած, Երասխ գետի երկու կողմերը, Նախիջևանից մինչև Երևան, Ջուղա։

47. Անտիպեր գործակատարները անանց է ասացել և վերաբերել է գործական սեռ դրվել սեռականով (վերաբերական թանձրացականի փոխարեն), պետք է թարգմանել որպես անուղղակի խնդրով անորոշով արտահայտված (քանի որ երկու կարգ)։

48. Ու և ի նախդիրները բացառական գործածությամբ անորոշ դերբայի հայցական հոլովի հետ արտահայտում են նպատակային հարաբերության՝ հասցրելու համար, հասցրելու նպատակով, հասցրելու։

49. Դերբայական նախադասություն, որն սկսվում է մինչև բառով՝ «Մինչև ընտ առաջնոյ իւրեանց բնակութեանն զերծանել»՝ Մինչև անցած բարերարներ գտնել նրանց իրենց բնական վիճակից։

## Գ. ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

1. Բայը չի արտահայտված, փոխ. «...Արամ անուն էր Դանի»։
2. Գրվում է երկու ձևով՝ Խոսրով, Հոսրով։
3. Գործածված է ավելադրությամբ։

4. Հօղը կրկնված է, սովորականն է «Իւէյլն Մեղքինեիկս»:

5. Եմ. ինչպես նաև զոլ (զոլ), կոյս, չիք բայերը սեռական հոլովի հետ անորոշ ողջախոհով ունենալ են նշանակում։ Տվյալ դեպքում նեթակա է սեռականի հոլովով դրված բառը, սակայն աշխարհաբար թարգմանության մեջ ենթակա է դառնում սեռական հոլովով դրված բառը, այսպես՝ «...Եր դուռը մի գեղեցիկ Անգղիկայ...»՝ Անզուկը մի գեղեցիկ զուստր ունէր։

Սեռականի փոխարեն երբեմն տրական էլ է գրվում՝ «Այժմ խնդրոյ չիք ողջութեան (նզնիկ)՝ Այն խնդիրը վերջ չունի։

6. Պատմական բացառական է, սակայն չի արտահայտված այն բայ-ստորոգյալը, որի խնդիրն է. դա Պետք է ենթադրել սանկին, պատմեին և այլն. այսինքն՝ «զարմ, սանկին» կամ «զարմ, պատմեին» եւ. որի (կամ նրա) մասին սաստ էին, պատմում էին։

7. Նման դեպքերում սովորաբար բառը հոդ է ընդունում Նախադասությունը՝ «Զքատանինակն Գենկս», սակայն երբեմն էլ հոդով է հանդես գալիս նաւդրաստ կիրառությամբ, ինչպես այստեղ՝ «Գենկ պատանենակն»: Տե՛ս նաև Ա., ծան. 11։

8. Անեալ (առնում) ի կնութիւն. կին առնել։ Հիմնում է նաև առանց ի նախդիրի, տրականով՝ առնուլ կնութեան:

9. Բայական ածականգործությունն է՝ անցյալ դերբայով։

10. Ենթադրվում է, որ սա ապավաղված է, պետք է լինի նոււնն, այսինքն նաւակն:

11. Այսինքն՝ «...Վարձեր իր բաղում պղնձակա և մասարսա՝ իր համար շատ պղնձականներ ու զարմակնեներ էր վարձում։

12. Գրաբարում հարաբերականք և հարաբերյալի համաձայնությունը թվով պարտադիր չէ։ Հոգնակի հարաբերյալի հետ կարող է գրվել եզակի հարաբերական, ինչպես այստեղ է։

13. Զ նախդիրն այստեղ բացառականի հետ է՝ մասին, վերաբերյալ նշանակությամբ՝ Գենկի մասին, Գենկի վերաբերյալ (պատմական բացառական)։

14. Այստեղ և-ն ածխորդ է, դա անցին կլինեն, եթե նախորդեթից բայը (ունայնում) դիմավոր լիներ։

15. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ առաւէր, ազարկեց (առաւաջի՝ ազարկում էր)։

16. Ածխորականը՝ անդիան:

17. Այստեղ Վարդան բառը և նրա լրացումը պետք է լինեին սեռականով և ոչ թե հայցականով, որովհետև կա բացառական հոլովով դրված երավորական սեռի խնդիրը՝ «...Վարդեալ... յարմայէն Աշոտկայ»։

18. Հնչյունների հանրի հաստ տեղաշարժերը տեղ գույք սխալ հատվածական սեռերի հետ սեռականով են գործածում, ինչպես՝ գիւղ (գիւղ) Առաքելոց, Հովհնկյան գիւղ և այլն։

19. Այստեղ գործածված է գերընտրանի իմաստով։

20. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ գնաց հասավ։ Նույն ձևով էլ հաջորդ տողում շատ բայեր կատարյալի իմաստով են գրված։

21. Բացառական հոլովի հետ այն են է, գործածվում է որպես մակբայ։

22. Կրկնված է։

23. Անցյալ դերբայը հոգնակի թվով ենթակայի հետ գործածվում է նաև հոգնակի թվով, սակայն դա անխախտ կանոն չէ, գերակշռում է հոգնակի թվով ենթակայի հետ եզակի թվով անցյալ դերբայի գործածությունը։

24. Այստեղ հոդի գեր է կատարում՝ «յերկնային անուն» Հ յերկնայինն:



25. Այլ տեղերում հանդիպում է ժամաւոր, ժամաւոր ձևերով։

26. Սեռականով ածխորդություն է՝ աշխար հովանիջ բառի մասը։

27. Պետք է լիներ «զօրավորաց գիտակարգեն» եւ, սահմանված գիտակի ձևերը կրօնքային նմանակությամբ ազանելոյ (սահմանելի) հաստկացուցիչը դրվել է գործիական հոլովով (զ նախդիրով, պարառական), կատարված է հոլովների նույնության օրենքով։

28. Բայական ածխորդություն է, անորոշի գործիական հոլովով։

29. Սեռականով ածխորդություն է։ Պետք է թարգմանել առաջին բառի հոլովով՝ ողբով ու արտասուքով։

30. Ի լալիսն. լալ լինելիների մեջ։ Սրանից հետագայում առաջացել լալիս անկատար դերբայը։

31. Սեռականով ածխորդություն է։

32. Այստեղ ս-ն հոդ է։

33. Ընդ նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով՝ կանկելիս, կանկելու ժամանակ:

34. Բայական ածխորդություն՝ դիմավոր ձևերով։

35. Հօղը փոխարինում է նաև դերանունը, այսինքն՝ «նա սպանուս եւ. նա սպանեցէք»։

36. Ես կամքը լինի, արքա՛, բարեհաճե՛ր։

37. Ի հօդը դրված է այն հարաբերյալի փոխարեն՝ այն որ լսեցի:

38. Փոխանակ նախադասությունը և ընդ նախդիրը սեռական հոլովի հետ նույն իմաստն են արտահայտում, մեկնումենը ածխորդություն է։

39. Անցյալ անկատար ժամանակով դրված բայերը գործածված են անցյալ կատարյալի իմաստով։

40. Կամ ածխորդ է գործածված, կամ՝ ընդհանրապես, պակասում է նրա լրացումը։

41. Սեռականով ածխորդություն է։

42. Ավելի ճիշտ կլիներ «ի ժամանակին յայնմիկ»:

43. Նախդիրը կրկնված է լրացումից հետո լինելու պատճառով, փոխ. «զԹաստենմայն կանեա»:

44. Սեռական հոլովով ենթակա է։

45. Ձևափոխված է յաղագս նախադասության խնդիրը, որը սովորաբար սեռական հոլովով է դրվում՝ «Յաղագս քէ», փոխ. «Յաղագս այնորիկ՝ քէ» եւ. այն մասին, թե...։

46. Նույն բայն արտահայտված է քննել (քննեմ) բայի հարադրությամբ, որը շատ տարածված է մեր հին մատենագիրների երկերում, առանց հարադրության կլինի կոչեցաւ, եւ. կոչվեց, կանչվեց։

47. Ամբողջ վերևրդրում բայերը դիմավոր ձևերից մի քանիսը գործածված են անցյալ կատարյալով, մի քանիսն էլ՝ անցյալ անկատարով, սակայն բոլորն էլ ունեն անցյալ կատարյալի իմաստ։ Այս երևույթին հանդիպում ենք նաև բոլոր տեքստում։

48. Այս նախադասության ստորոգյալն արտահայտված է երավորական սեռի բայով՝ մեծարեցաւ (մեծարվեց), որից պարզ երևում է, որ այստեղ ենթակայի փոխված է, բայց չի արտահայտված։ Նորին Արշակի մասին է. մեծարվեց Արշակը և ո՛չ թե Տաղուհը։

49. «Երեւ գնայայր, որպէս զօրքն» դիմավորություն է։

50. Վերջակետից մինչև նշանակված տեղը 2 նախադասություններ են, որոնց ենթականերն արտահայտված չեն։ Ըստ բովանդակության առաջինում ենթական

է Արշակ բառը, իսկ երկրորդում՝ Տաճատ։ Այսպես՝ «Ու իրրև չէր կարայր որպես զորքի զորավոր եղև (Արշակ) ի ներքս, և երկրորդական զինքն տանի առաջ նա (Տաճատ) յինքըսպասավորական աշխարհին» Ինչպես երբայր, ինչպես որդի փոխարինվեց նրանից (Տաճատից՝ Արշակը), և ավելի նրան (Տաճատը՝ Արշակին) երկրորդական մեծ տանը Աշխարհատերական աշխարհում։

51. «...Ձիթայուղ զմխանջած զենամանագերեն զարդար արտահայտությունը թարգմանելիս պետք է ավելացնել ազանելին (հագնում էին) բառը որպես ստորոգյալ. մետաքսի, մրանջան, մետաքսյա զարդով զգեստ էին հագնում։

52. Զարմանալի է ավելադրությունը։

53. «Որ մի յաուրց» նշ. որևիցե մի օր, մի օր։

54. Անօրոշ դերբայը նպատակի պարագայի դերում՝ ցույց տալու, ցույց տալու համար։

55. Չ նախդիրը գործիական հոլովի հետ։ Այստեղ չօշափ չի նշանակում, այլ արտահայտում է գործողության անցքի պատճառը, որը կարելի է ներգործականով թարգմանել՝ տեսնում։

56. Նախդիրը կրկնված է։

57. Ունել (ունիմ) բայը համարելու նշանակությամբ բնորոշ է առ նախդրով և հայցական հոլովով երկրորդական խնդիր, որը ստորադասելու հոլովի ձևով է արտահայտում։ «...Ոչ ինչ առ յուս կայեալ մեծատենց զնա» էս հաշվելով, չի տեղ զնելով՝ ընծայելով նրան։ Ճիշտ բացատրությունը տվել է Վ. Առաքելյանը, տե՛ս 2000 Թվ. Եզյի խնարաստևի «Աշխատությունների ժողովածու», հատ. III, էջ 320։

58. «Անարգանս բյեռնանաց» անտանելով ավելադրության պարզանալով արտահայտության է. առկայն բնորոշված է «նա զնէր» արտահայտությամբ։

59. Ի նախդիրը հայցականի հետ գործիականի իմաստով. պարանիներով լեզվով։

60. Ամենի մեջը՝ «Ո՛չ եթ՛ես ի վերայ խորան խաաչյո» Ո՛չ, նաև խաչի խորի վրա։

61. Արտահայտված չէ առուն բառը, փոխ. «...Որում անուն Վասակ կոչէր»։

62. «Տեսա բազկաթոռոք», «բազում ատամնաբեռոք» համանիշ արտահայտություններ են։

63. Կատարյալի իմաստով է։

64. «Զնա մանն առաջի եղեալ» ի՛ր մահն աչքի առաջ ունենալով։

65. Նախդիրը կրկնված է, փոխ. ազատայական զարծ։

66. Զարմանալ բայի մասն երկու համանման լրացումները նույն նախդիրով, բայց տարբեր հոլովներով՝ «զնա Իազատարանչեաան և զնա ամենակալութիւնս», արտահայտելով երկուսն էլ պետք է թարգմանել մի ձևով՝ քաջության և ամենակալության վրա։

67. Այն ցուցական դերանունը հոդնակի զայական անկյան մեջ մնացել է եզակի, ստորադասանաը հոդնակին է։

68. Բայական ավելադրության՝ արտահայտված նույն դիմավոր բայի անորոշ դերբայի գործիական հոլովով, ուսանկացնում է դիմավոր ձևի նշանակությունը։

69. Կոզացած լինել (յանձին). բառանջել մեկի կողմնակցությունից։

70. Բայական ավելադրությունը՝ անցյալ դերբայի ձևով։

71. Բայը զեղչված է. թարգմանելիս պետք է վերականգնել՝ էր կամ կոչէր։



72. Յանն առնել մեկի. ուշքը վրան պահած՝ մեկին։

73. Խանգար առնել (առնեմ). խանգարել։

74. Այստեղ նշանակում է բայց։

75. Սեռական հոլովով ենթակա՝ էր առնել (առնել էր) ստորոգյալի հետ, առկայն ենթական և ստորոգյալը բաժանված են մեկ պարագայով (որոշ ժամանակ). «...Թէ՝ մեր արտի մտօք էր առնել զերդանն...»՝ եթե դեռ սրտանց եք կրում ավելի։

76. «Ընդ նմանութիւն կամել եղանանել» նշ. նրանմանության չլինել։

77. Այս և անցյալ անկատարով արտահայտված մյուս դիմավոր բայերը կատարյալի իմաստ են արտահայտում։

78. Առանձնակ ստորոգյալի ուղիղ խնդիրն արտահայտված չէ՝ հարկադրաբար՝ պատգամ։

79. Այսպ ըէ՝ իսկ եթե։

80. Ներկան ապառնի իմաստով է՝ լսեմներ, այսինքն՝ չպետք տեսնելու՝ հանդիպելու։

81. Մասանց, որի վրա փորագրված էր լինում փորանց՝ պարզական գիրքը, որ ծառայում էր որպես կնիք։

82. Սեռականով ավելադրություն է։

83. Բայական ավելադրության՝ դիմավոր ձևով։ Դնել և Երթալ նայանեյչ-են։

84. Այսպիսի գործածությամբ բառն անպայման պետք է նոր անեն՝ «ստուգայն Տաճատին», «զաշխարհն Արշակի»։

85. Երակերուան է, առկայն ներգործական սեռի նշանակությամբ։

86. Նախադասության խնդիրը զեղչված է, փոխ. «յաղագս ազնուաց»։ Տե՛ս ծան. 45։

87. Ենթակա է, հաշվել անցյալ դերբայի մեջ արտահայտված է սեռական հոլովով։ Պետք է թարգմանել ուղղականով։

88. Փոխել (փոխեմ) զմիտս. միտքը փոխել, մտադրությունը փոխելով իմանալ։

89. Տալ (տամ) բայով բանս, բերդ բառերի հետ կազմվում է համանիշ զարձվածք՝ տալ ի բանս, տալ ի բերդ, նշ. բանտարկել, գնել բանտը։ «...Տալը զնա յԱնուշ բերդն» նրան բանտարկեց Անուշ բերդում։ Այստեղ անց. անկատար ձևով արված բայը կատարյալի իմաստով է (պատմ. անցյալ)։

90. Հրամայեր դիմավոր բայը (անկատարը կատարյալի իմաստով) բնորոշել է բայական հարադրությունը (չարամահ առնել)։ Պետք է լինեն «Հրամայեր չարամահ առնել»՝ Հրամայեց չարաչար մահով սպանել։

91. Նույն ենթակայի հետ երկու ստորոգյալները դրված են տարբեր ժամանակներով, առաջինը (կոչեաց) անց. կատարյալով է, մյուսները (խօսէր, ասէր)՝ անցյալ անկատարով, որոնք նույնպես կատարյալի իմաստով են (պատմական անցյալ). կանչեց, խոսեց և ասաց։

92. Այստեղ նա չարչարում է եզրեմական հարաբերություն ունեցող համաձայն նախադասություններ, արտահայտում է բայց, սակայն շաղկապների իմաստ։

93. Անձնական դերանունի ձևով, պետք է թարգմանել որպես անձնական՝ Շապուհին։

94. Հոգը դրված է առ հարաբերական բառի պատճառով։

95. Դերանունը կրկնված է։

96. Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ, դիմաց. փոխարեն նշանակությամբ՝ բարու դիմաց չար հատուցել:

97. Ածականական ձեւ է նիհարացյալ (-ն հոդ է):

98. Այս անունները հանդիպում է տարբեր դրությամբ, ածականականն է Տիգրան: Հատուկ անունները անգ գույն ամով հասարակ անվան հետ գրված է սեռական հոլովով: Տե՛ս նաեւ ծան. 18:

99. Ինչ անորոշ դերանունը գործածված է զարդի համար, թարգմանելի չէ:

100. Դերբայական նախադասություն է, պատասխանում անցյալ դերբայը ստորոգյալ է, ուստի պետք է թարգմանել որպես դիմավոր բայ՝ անարգեցի, նախատեցի:

101. Նախդիրով տրական առնել բայի հետ՝ «առաց զնա» նշ. առաց ինձ:

102. Ներգոյական գործածված է ազատման իմաստով, փոխ. անցք կամ անցից:

103. Այստեղ նշանակում է կռանակից:

104. Այստեղ՝ գլուխ, հիմք:

105. Այստեղ գործածված է կրակի իմաստով:

106. Այստեղ նշանակում է գանձարան: Հիմնականում գանձ բառը հոլովվում է Ու հոլովմամբ, սակայն հանդիպում է նաեւ Ի հոլովմամբ, ինչպես այստեղ:

107. Տարածված ձեւը ու-ով է՝ նոյզս:

108. Տրական հոլովով է գործածված, որի հետ «առ» նախդիր հարազատ կապակցությամբ բայը աշխարհաբար պետք է թարգմանել իմ կողմից նկատվեցին:

109. Այլ այստեղ նշ. արդեն:

110. Հոգը գործածված է հոգաբերության փոխարեն:

111. Այս բառը նախադասության անկախ համաձայնություն ունի: Թարգմանելու համար կարելի է ավելի այսպես՝ «Բայց Արշակ արքայ Հայոց՝ այս երկուսն ամ է՝ զի էր ընդ Արիս նահատա, և Արիք յաղթել և ոչ մի ամ ոչ կարացին, նյեալ է նկնալ սաստիկ խռովքը՝ Բայց Հայոց Արշակ արքան, որ ամեն երկուսն տարի պատերազմեց պարսիկների հետ, իսկ պարսիկները ոչ մի տարի չկարողացան հաղթել, նրան նկնել է իր ոտքով:

112. Միասնը կրկնակի է:

113. Անցյալ անկատար ստորոգյալ անցյալի փոխարեն, որպիսի ժամանակ գրաբարը չունի: Պետէ—ինչպես, աւանդէր—կարծանքեր, հաղթեցին, բաց կթողնեի:

114. Նախադասության երկու ստորոգյալները արտահայտված են տարբեր ժամանակներով: Առաջինը կատարյալով է, երկրորդը՝ ներկայով: Պետք է թարգմանել մի ժամանակով՝ պատասխանեցին (և ասացին), պատասխանում են (և ասում):

115. Վասը, առավոտյան:

116. Հողի վրա է կատարում:

117. Նույն ժամանակի իմաստ արտահայտող բայ-ստորոգյալները գրված են տարբեր ժամանակներով: Տե՛ս նաեւ ծան. 114:

118. Նախդիրով տրական՝ առնել բայի հետ: Տե՛ս նաեւ ծան. 101:

119. Զայն առնել (առնեմ). ձայն հանել, խոսել:

120. Անձն դերանվան սեռականը գրված է իմէ դերանվան իմաստով. «Զիա՞րդ ունի զանձն», նշ. ինչպե՞ս է զգում իրեն:



121. Առնուլ (առնում) բայը հրամայականով ավելացրած գործածությամբ սովորաբար արտահայտում է դե՛, հապա՛ իմաստները:

122. Ս հոդը դրված է բայի դիմավոր ձեւի վրա՝ կախված ու հարաբերականից: Աշխարհաբարում բայի դիմավոր ձեւի վրա հոդ չի դրվում:

123. Այստեղ նշանակում է մոտավորապես, մոտ:

124. Այստեղ նշ. տարածել, փռել:

125. Դու, դու ինքդ, հենց դու:

126. Առնուլ բայի անցյալ կատարյալի խնդիրն է՝ բացառական հոլովով և զ նախդիրով: Վերջինս այստեղ չի արտահայտում մասին իմաստ:

127. Տանել (տանիմ) բայը կրավորական է խոնարհվում (տարցիս), սակայն հատկապես ներգործական նշանակությամբ գործածվելիս հանդես է գալիս ներգործական խոնարհմամբ, ինչպես այստեղ՝ տարցես, նշ. կտանես:

128. Փոխ. անցի:

129. Իմ բայի ապառնին ապառնին է՝ ներկայի իմաստով: Այսպիսի կիրառություն կոչված է ու հարաբերականից: Ու, ուստի, ուր, յորժամ և նման հարաբերականների հետ բայը մեծ մասամբ դրվում է ապառնի ապառնիով, բայց արտահայտում է ներկայի իմաստ. «...Ուր բնակ իցէ իցէ նացեն» Որ բան իսկ հաջ է, հենց բան հաջն է:

130. Նախդիրով տրական ճարցանել բայի հետ:

131. Այսինքն՝ համառոտ. «...Ի նայատակն ի հարկել նոցայն» Դեպի հայկական հողով (սառույցի՝ հողից) ծածկված (սառույցի՝ փոխված) հատակը:

132. Քո կողմից դրան Հայաստան ուղարկելուց հետո: Ի Հայս ուղեւորման հայկական է՝ դեպի Հայաստան:

133. Գործածված է որպես ածական, նշ. նախկինն:

134. Այս և սրան հաջորդող մյուս բայերը դրված լինելով ներգոյա ժամանակով՝ արտահայտում են ստորոգական ապառնու իմաստ՝ հասնի, հասնի, գնալի ձայն ավել, նույն ձեւով կխոսի, հեռացի—կհեռանի, յուղէ — կհուղի, կըրգորի:

135. «...Քանզի զայս լուեալ ի Բաղէշն...» միջոցա երկրորդական նախադասություն է: Այստեղ Քանզի շաղկապի հետ դերբայական ստորոգյալի գործածությունն անհամարժար է, կամ շաղկապը չպետք է լինի, կամ լուեալ դերբայը պետք է դրվի դիմավոր ձեւով՝ «Քանզի զայս լուաւ...» կամ «Զայս լուեալ...»:

136. Այստեղ նշանակում է առավոտ, առավոտյան:

137. Զ նախդիրը բացառականի հետ է, այստեղ արտահայտում է նպատակի գաղափար:

138. Բառնալ (բառնամ) զմեռեալն. հեռացնել վերացնել, դիակները տարել:

139. Վերջացական թանձրացականի փոխարեն՝ բնակութիւն՝ բնակ, բան:

140. Ի բաց կացուցանել (հեռացնել) բայական հարադրությունը բնորոշված է ծառայել բայով, այսինքն՝ ծառայելուց ի բաց կացուցանել:

141. Բայական ավելադրությունը է՝ անորոշ դերբայի գործիական հոլովով:

142. Նախդիրները կրկնված են, և ի վերայ նախադասությունն էլ ավելորդ է գործածվել (որ երկրորդն է պատահում), ավելի ճիշտ կլինեին՝ ի վերայ պարանոցի նոցայն. պարանոցի հողի վրա:

143. Այստեղ գործածված է խաչելու իմաստով:

144. Երկիրպագս առնել (առնեմ). վար նետվել, վար խոնարհվել:

145. Պէտք գործածում հոգնակի է, ուստի բայը պետք է լինի հոգնակի՝ են:

146. Զայն չորել, զարմանալ է, նշ. ձայն հանել, խոսել:

147. Ցրտահանով պետք է լինի, դ-ն ավելորդ է, ինչպես ցույց է տալիս նրան հաջորդող համաձայն լրացումը՝ աղացը։

148. Պարթևական ցեղատոհմի վերջին ներկայացուցիչն էր Արտավանը, որին սպանեց Արտաշիր Սասանյանը և հիմնադրեց Սասանյան ցեղատոհմը Պարսկաստանում։

149. Ստորոգյալն արտահայտված է անցյալ կատարյալ բաղադրյալ ժամանակով։ Ենթական է ձեր՝ գրված սեռականով, ձեր կոչման էր ինչ. ձեր գրածն էր (բարձր. գործը)։ Ենթական (ձեր) և համաձայնողը (ձեր) ունեն նույն հոլովով գրված լրացումներ՝ ձեր ծառայքը, ձեր՝ ծառաները, ձեր տերանց ձեռոց. ձեր՝ ձեր տերերի ամբողջ նախադասությունը՝ Արտաշեսի ուժն գործ՝ ծառաները ձեր՝ ձեր տերերի բարձր գրածն էր։

150. Սեր անգը, որ ձեզ մոտ է։

151. Բատմ նարկանել (նարկանեմ) բայի խոնարհն է՝ գրված բաղդատականով և զ նախդիրով։ Բանում էր նրա առջևից։

152. Անորոշ դերբայով նպատակի պարագա։

153. Համանիշի ավելորդություն է։

154. Այստեղ մինչև իմաստն ունի։

155. Փարձել (փարձեմ) բայի հետ գրված է նույն բայի արմատը որպես խնդիր։ Փարձ փարձել. հարց ու փորձ անել։

156. Հենց որ կանգնում էր։

157. «...Անդէն ընդ նմին առ նմա ի նորին առախին...»՝ Այնտեղ, նրա հետ, նրա մոտ, նրա (նույնի) թախտի վրա։

158. Բաղձական արկանել (արկանեմ). բարձ գցել, բարձ դնել։ Այս նախադասության մեջ բաղձական բառը կրկնված է, վերջինն ավելորդ է։

159. Այստեղ նշանակում է չարի։

160. Անցյալ անկատարը անց. կատարյալի իմաստով է։

161. Խոսամանչիս բառն այստեղ ատացական իմաստ ունի՝ յուրաքանչյուրը չար. «չխոսամանչիս յաճախ» ևլ. յուրաքանչյուրն իր չափով, իր տարածանով։

162. Է-ն սխալված է, փոխ. «Իմ է այդ ամենը»։

163. Դրարքարում այնտեղի գերեզմանները են հող են լցնում։

164. Նամ այսի։ Այստեղ ինքնուրույն գործածություն ունի՝ այդպեսից ծրա- նակարկությամբ։

165. Այստեղ՝ կաղանդ։

166. Այստեղ՝ մարմնով։

167. Սեռական հոլովով ենթական՝ անցյալ դերբայի մոտ։

168. Սասնական հող է։ Այս իմաստով թույլանքի մոտ ավելի գործածու- թյուն ունի։

169. Այստեղ եչ. էր։

170. Սա՝ անցյալ անկատարով և տալս նույն նախադասության մյուս ստո- րոգյալը (սուշ) ներկայով արտահայտում են կատարյալի իմաստ։

171. Պատճառական բայ՝ կազմված տալ բայի հարաբերությամբ, տալ վիանել. խմացնել։

172. Պետք է թարգմանել վերև։

173. Հոգնակի հայցականի և հոլովականերում պահպանում է արմատի ա-ի չթե- թևացումը, փոխ. ի Պասա։

174. Անորոշ դերբայի մոտ գրված է ենթակայական անսական՝ «Մաղաման- ամերկուլս», անձանց տաղայելույս։ Այս նշանակում է, որ բայերը կրավորական



սեռի են՝ բաղարների ավերվելու (մասին), հիմքերի տապալվելու (մասին)։ Նույն- պես և կրավորական է տանել բայը, ազգրաչման տանելույն ևլ. գերի տարվելու (մասին)։

175. Այստեղ հողի դեր է կատարում։

176. Բայական ավելորդություն՝ գիտակից ձևով։

177. Այստեղ ա-ն հոդ է, չպետք է շփոթել հոգնակի հայցականի նշանի հետ։

178. ԵՒլ. մոտպիտասպես, մոտ։

179. Հատուկ անգամնաեր սեռական հոլովով՝ հատարակ անվան մոտ։

180. Ստորոգյալը զեղչված է։

181. Նախդիրը կրկնված է։

182. Զ նախդիրը գործիականի հետ՝ շուրջ նշանակությամբ։ Աշխարհաբարում գործածված է շուրջ նախադրությունը։

183. Նախադասության բաղմակի ստորոգյալները արտահայտված են անց. կատարյալով և անկատարով։ Հեղինակը նախ կատարյալ է գործածել, ապա՝ անկատար, իսկ շարունակության մեջ՝ նորից կատարյալ։ Բոլորը պետք է թարգ- մանել անցյալ կատարյալով։

184. Ենթակայի հետ անցյալ դերբայը համաձայնել է թվով, որը դասական չէ։ Տե՛ս ծան. 23։

185. Նախդրիվ տրականով խնդիր յուսալ բայի մոտ՝ «յուսալ յամուսրբիւն» ևլ. հույս ունենալ ամրության վրա։

186. Լակել կամ դակել ածել (ածեմ). բանակ դնել։

187. Այստեղ ժամանակի մակբայ է, ևլ. այն ժամանակ կամ այդ ժամանակ։ «...Եւ դիպեցաւ ի Հայոց աշխարհին», բառացի՝ Հայոց աշխարհում չպատահեց, այսինքն՝ Հայաստանում չէր։

188. Ստորոգյալը (լուան) ենթակայի հետ (բանակ) համաձայնել է բառ բովանդակությամբ և ո՛չ բառ ձևի։ Բանակ բառը ձևով եզակի է, սակայն հա- վաքական նշանակություն ունի։ Այստեղ գործ ունենք բովանդակության հետ։ Աշ- խարհաբար պետք է թարգմանել եզակի թվով։

189. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում։

190. Սեռականով ավելորդություն է։ Երկրորդ միասին կարելի է թարգմանել օգնություն բառով։

191. «...Չի ժամիկալ լինիցի բերդին...»՝ Բերդաքի պարզ (պղտառ) չինի բերդի նկատմամբ։

192. «...Եւ մի՝ մնա առնել ի պատահիսն»՝ ինչ պարսիկներին չենթակել։

193. Երբ բառը եզակի թվով կրկնվում է, նշանակում է ամեն, ամեն մի. ինչպես այստեղ՝ «ի յարաբու յարաբու» ևլ. ամեն ջարդի։

194. Ուռեմն բառը վերաբերում է մինչնաարդին բառին, ևլ. մի հազար- գով. մի հազարով։

195. Տալ (տամ) Եաջուլեա. բաղալերել. սիրտ տալ։

196. Մի պահ, մի փոքր ժամանակ։ Կա նաև փայր մի ձևով։

197. Այստեղ աղջկան մասնիկը հավաքական իմաստ է արտահայտում, ուստի բառը պետք է թարգմանել հոգնակիով։

198. Այստեղ գործածված է անցանատար իմաստով։

199. Էր՝ փի. պատահում էր որ, կար որ։

200. Գործածված է արդեն ամանյակ բայ. «բաղմեալ կային» ևլ. բազմած էին, բազմած էին լինում։

201. Չարամիտ, վատահամբավ, ատրաճոյակ։

202. Մակբայի իմաստ է արտահայտում՝ էլի, նորից, դարձյալ։

203. Թողալ (թողում) բայից պատճառական ձևեր չկան, թողեց, սա համանման թողուլ հնչյունական գործածվող բայից է։

204. Բառն ավելացված է։ Համանման ձևով է զորական (զորական) ձևով, որը հոգնակի իմաստ ունի, ինչ. զորականներ, զինվորներ։

205. Դանիան բառի չորրորդ հետևյալ երկրորդական խմբագրության ժամանակ գրված է հեղինակի ձեռքով (կարմիր), իսկ առաջին խմբագրության մեջ նույնը հեղինակի ձեռքով է (կապույտ)։ Երկուսն էլ պետք է թարգմանել հեղինակի ձեռքով։

206. Նրա՝ տան երկրից, ժամը ասված է ամբողջ տան փոխարեն (ժամն ամբողջի փոխարեն)։ Սակայն տուն բառը կա, որեմն նույն բառն ավելորդ է։

207. Այստեղ արդեն ավելորդ չէ, գործածված է տան, բնակարանի իմաստով։

208. Այստեղ նշանակում է ավերել, կործանել։

209. Ավելացված գործածություն։ Թարգմանելիս կարելի է նկատի չառնել։

210. Նախդիրը կրկնված է։ Նախորդ տողի վրա նախդիր կա, ուստի վերի բառը նախդիր չպետք է ունենար։

211. Ըստ նախդիրը հայցական հոլովի հետ՝ մի քանից այն կողմ նշանակությամբ։ Համեմատ կամարը։ Այս անվանումը հանդիպում է նաև այլ ձևերով։

212. Առնել (առնում) նաև. հաշվել, հաշվառում կատարել։ Բնագրում անդ. անկատարով է գրված՝ կատարյալի իմաստով։

213. Նախդիրով արտաքին՝ առնել բայի ձևը։

214. Բայական ածականություն է՝ գրեթե ձևով։

215. Տե՛ս ծան. 145։

216. Ի հոլը այստեղ առանձնական կամ դիմորոշ չէ, այլ արտահայտում է 2-րդ դեմքին պատկանելությամբ մոտ լինելու հարաբերության, խոսքն—այդ հարկ (որ ձեզ մոտ է)։

217. Բառը հայցականով է գրված, ո՛չ հոլ է։

218. Տրական հոլովով նշանակա՝ միացման բայի մոտ. «...Զի ոչ է նման թողուլ զնայն խոր՝ Զի կարեմ, որ հոգին իր համար թողնի, որովհետև հոգին իր համար չպետք է թողնի։

219. Տրական հոլովով նշանակա՝ պարտ է միացման բայի մոտ։

220. Ոսկի հեղինակի նշանակությունը «Ոմանք ի գերութեան»՝ Մասով գերիների մեջ։

221. Բայական ածականություն՝ գրեթե ձևով։ Անկատարը անցյալ կատարյալի իմաստով է գործածված։

222. Փոխ. «Ծննդոցան նազար նոյա»։ Բնականն բնագրված է նոյա բառաձևով։

223. Ընդ նախդիրը հայցական հոլովի հետ՝ ներգոյականի իմաստով։

224. Բայական ածականություն՝ անցյալ դերբայով։

225. Ուղղականն ձևն է Տաոյ։

226. Տե՛ս ծան. 209։

227. Հոգնակի իմաստ ունի՝ գերիներ։

228. Նախդիրը նախորդ լծորդման վրա է, ուստի այստեղ ավելորդ է։

229. Բնագրից չի հասկացվում, թե ինչպիսի հարմարանքներ էին դրանք՝ Փառանձեմին ծառայելու համար։

230. Սատակել (սատակեմ) բայը ներգործական խոնարհմամբ ներգործական սեռի է, ուստի և բնդունում է ուղիղ խնդիր։



231. Ս-ն հոգ է, չպետք է շփոթել հոգնակի հայցականի հոլովակերտի հետ։

232. Այստեղ ապանվելու իմաստով է, կրավորական սեռի է, ունի բայդարձական սեռի խնդիր՝ յորդայն։

233. Այստեղ նախադասությունն ընդհատվում է միջանկյալ բարդ նախադասությամբ և որից հետո շարունակվում է «սկսան այնուհետև...» արտահայտությամբ։

234. Անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակի մեջ դերբայը գրված է հոգնակի թվով, սակայն պետք է եզակի թվով թարգմանել՝ արդարամտելով էին։ Խոսքը վերաբերում է միայն ապստամբներին։

235. Ապստամբել բայը գրաբարում բացառականով է խնդիր ընդունում, ինչպես այստեղ՝ յուխոյ։

236. Դիմավոր հոգնակի թվով կրկնվելով՝ արտահայտում է բազմապատկություն, ինչպես այստեղ՝ «զգաստոյ զգաստոյ» նշ. զանազան պահակներին, «կոզմանց կողմանց» նշ. զանազան կողմերից։

237. Սովորաբար հոգնակի թվով արտահայտված հատուկ անունը հոգ չի ընդունում, սակայն երբեմն էլ ընդունում է, ինչպես այստեղ։

238. Անցյալ կատարյալի իմաստով է։

239. Հատկացուցիչ խնդիրը կրկնված է հատկացյալի վրա՝ «զամենայն կանայս... զնախարարացն»։

240. «Յայլն նրամանն» արտահայտությունը կրկնված է։ Այդ պատճառով էլ կրկնված է ուղիղ խնդիրը դերանվան ձևով՝ զնոսա, այսինքն զկանայս։

241. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում՝ պահելու, պահելու համար։

242. Համար ո դերանունը գործածվում է ով դերանվան հարցականությամբ՝ ով որ նշանակությամբ։

243. Նման դեպքերում գրաբարում ժխտումը կրկնակի չի լինում, ինչպես՝ «...Ոչ մի ով յանձն առնուին» Ոչ որ հանձն չէր առնում, ոչ ոք համաձայն չէր։

244. Նախդիրը կրկնված է։ Փոխ. «յամենայն բերդսն»։

245. Ենթական գեղչված է, որը այս տիպի ասացվածքի մեջ պիտի լիներ սեռական հոլովով՝ «տանել էր նոցա», այսինքն՝ «Ի բերդս տանել էր նոցա գնալ»՝ նրանք բանտարկել էին նրանց։ Տալ ի բերդ արտահայտության մասին տե՛ս նաև ծան. 89։

246. Էր սեռական հոլովի հետ՝ ունենալ իմաստով՝ «Կանանցն էր Բագրաշն»՝ Կանանք մի բարպառ ունեին։ Տե՛ս ծան. 3։

247. Ստորոգյալն արտահայտված չէ, պետք է նկատի ունենալ էին, աղցին։

248. Նախորդ լծորդման վրա գրված զ նախդիրը վերաբերում է պատառակնեն բառին, սակայն պատճառական բայաձևերի իմաստ չունի, այլ կախված է կախել բայից, որն ուղղակի խնդիր է ընդունում, կախել պաշտառակել, կախել աշտարակից։

249. Դառ. այստեղ՝ բարձր տեղ, ծայր, գլուխ։

250. Նշ. տեսնել։

251. Այստեղ սեռական բայի դեր է կատարում, անցյալ դերբայի հետ բաղադրյալ ժամանակ է կազմել։

252. Սեռականով ածականություն է, կարող ենք թարգմանել տեսարան։ «Յերևայր տեսիլ նշանակին» նշ. որպես երևութական տեսարան։

253. «Ձոր օրհնակ նիւն» նշ. ձյան պես, ձյան նման, ինչպես ձյուն։
254. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում։
255. Կախել (կախեմ) բայի ձևերն է՝ բացառականով և զ նախդիրով։
256. Անսովորական ավելադրություն է։
257. Սան բառը ստանիկ նշանակությամբ սովորաբար հոլովվում է Ո․ հոլովմամբ, բայց այստեղ Ի հոլովմամբ է։
258. Ցիրան. գեղի յուրայիններր, յուրայինների մոտ։
259. Անցյալ կատարյալի իմաստով է, նշ. փախավ։
260. Այստեղ նշանակում է հաճախակի. իսկ ազգային նշանակությամբ՝ բոլորը։
261. Նշանակում է սարսափելի։ Ի նախդիրը հայցականի հետ գործածված է գործիականի հոլովի իմաստով՝ սարսափելի հարվածներով։
262. Այստեղ՝ [illegible]։
263. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։
264. Նույն Նահապետական բառն է, որ հանդիպում է նաև Աշուղայական ձևով։
265. Նպատակի պարագա է՝ հայցականով, նշ. պահելու համար, պահելու նպատակով։
266. Հատուկ անունները սեռ ցույց տվող հասարակ անվան մոտ՝ սեռական հոլովով։ Կապակցությունը պետք է թարգմանել առանց հ բառի հոլովով, որն ուղղականով հայցականով է արտահայտված, «երկիրն Աստղաբաշխականի» նշ. Աստղաբաշխական երկիրը։
267. Բաղաձայնություն է։ Ձևով նշանի ներքնակայի հետ (բառեկ) դրված է հոգնակի թվով անորոշությամբ։ Տե՛ս ծան. 158։
268. Ձևն ի ցեղ ատնել (ատնեմ). ձևը ցածրել, ավելի։
269. Գրաբարում հանդիպում են նախադասություններ, որոնք հատկացյալի հետ միասնական գործածություն ունեն և նրա հետ համաձայն են դրվում մեկ բառի արմատով, ինչպես՝ տիկնաց տիկին, արքայից արքա, աստի գիր, բանից կարգ և այլն։
270. Մաշտոցադրած բառամեջ բառ Հ. Աճառյանի մաշկապարենց բառի ապավողված ձևերից մեկն է («Արմ. բառ.», հատ. IV, էջ 842); նշ. Պարսից թագավորական կանանցի վրան։
271. Ս-ն մասնիկի իմաստ է տվել, նշ. անարատ բառերին, նշ. ազգ և անարատ ձևով։
272. «Եր... Մուշեղի» նշ. Մուշեղն ուներ։ Տե՛ս ծան. 5։
273. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում, նշ. խմելու, խմելու համար։
274. Այստեղ նշանակում է իսկ։
275. Այստեղ նշանակում է բայց։
276. Պատմական բացառական՝ կախված ամբաստանել բայից։
277. Սովորաբար այս ցուցական դերանունը թվով համաձայնում է, փոխարինողի [illegible]։
278. Հատուկ անունները սեռական հոլովով՝ սեռ ցույց տվող հասարակ անվան մոտ, նշ. Խաչատուրյանում, Խաչատուրյան երկրում։
279. Գրաբարում սովորական է ստանալ բառը հոգնակի ձևով՝ որպես եզակի գործածելը։ Այստեղ էլ պետք է թարգմանել եզակի թվով։
280. Համանիշների ավելադրություն։



281. Այս բերդի անունը Փավստոսի «Հայոց պատմության» մեջ հանդես է գալիս տարբեր ձևերով՝ Անգղբ, Անյուշ, Անուշ։
282. Քաղաքացի երկիրը կանչվում էր հին հարկերի կողմերում. Օրստ (—Անա-Պարիս) դեպի այլ կողմում՝ Բաղկ մայրաքաղաքով։
283. Նույն Բաղկ քաղաքի անունն է՝ Բաղխ ձևով։
284. Սովորաբար հոլովվում է Ո հոլովմամբ՝ [illegible]։
285. Պետք է թարգմանել նույն ժամանակով, որով արտահայտված են մյուս ստորոգյալները՝ անց. կատարյալով։
286. Ստորոգյալը չի արտահայտված (էր)։
287. Սովորականն է ի կողմանս յարեւելից (հոլովական գործածությամբ, հոգնակի թվով)։
288. Սովորականն է Արշակունեաց։
289. Նախդիրը կրկնված է։
290. Հողի դեր է կատարում։
291. Նախդիրը կրկնված է։
292. Իջանել (իջանեմ) բայն այստեղ գործածված է իրավունք ունենալու իմաստով։
293. Գրաբարում հոգ կարող է դրվել նաև բայի դիմավոր ձևի վրա, ինչպես այստեղ. կախված է ոչ հարաբերականից և արտահայտում է Հ-րդ [illegible] մոտ չլինելու հարաբերությունը։
294. Եզակի թվով գործածված հարաբերականը արտահայտում է հոգնակի թվի իմաստ։ Սա սովորական է գրաբարում։
295. Տե՛ս Ա., ծան. 15։
296. Բնագրերն ունի՝ «...Ձեռնկառակորդն, Քան մինչ ավխառ առաւել զմեզ»։ Ստ. Մալխասյանցն ուղղել է՝ «Զձեռնկառակորդն, որ ավելի ավխառ առավ զմեզ», որին հետևեցինք և մենք։
297. Ավելի սովորական է վասն զի։
298. «...Քո մեծ վտանգի են առ իւս՝ Դու իմ նեղամտանք մեծ ծառայություններ ունես։
299. Հոգ՝ բայի դիմավոր ձևի վրա՝ կախված զոր ինչ հարաբերականից, դրված այն հարաբերյալի փոխարեն։
300. «...Տունս՝ լինի Հեզ», բառացի՝ արված լինի քեզ. Թող քեզ արվի՝ աղոթերն՝ թող կատարվի խնդրանքը։
301. Զ նախդիրով և գործիական հոլովով խնդիր՝ անցանել բայի համար «Անցանել զորինաւ» նշ. օրենքից դուրս գալ, այստեղ՝ բացառություն կազմել։
302. Բայական ավելադրություն՝ նույնանիշ բայի անցյալ դերբայով։
303. Նաև բառը գրաբարում հոգնակի է, ուստի բայը նրա հետ պետք է դրված լինի հոգնակի թվով՝ «կամէ իցեն»։
304. «...Ձոր օրհնակ և խնդրեսցեն»՝ ինչպես որ խնդրեն։
305. Համընկնում է զուգահեռ ձևով՝ փաղաքշական և փոխական, ինչպես այս համաձայն՝ նշ. Թեկնածուն, Համհարզ։
306. Դինի զակատոր զող գրաբարյան գործածությունը համանիշ է աշխարհաբարի գիտեն գլուխ բերել, գիտեն գլուխ խփել դարձվածքներին, նշ. հարթել։
307. Ետադաս գործածությամբ սովորականն է յաղթել։
308. Այստեղ գործածված է ծանյալ, չուն տալու, փախչելու իմաստով։
309. Ներքնան գործածված է ազատի ժամանակի իմաստով։
310. Այստեղ նշանակում է ըստ, ըստը։

311. Այս նախադասության մեջ արդեն ենթական փոխված է, խոսքը վերաբերում է արքային։

312. Անցյալ կատարյալից հետո՝ անկատար։ Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ հունական ձևից, բառ յոթից բայ-առարկայի ժամանակի։

313. Տե՛ս ծան. 209։

314. Հաց այստեղ նշանակում է նավթեւալը։

315. Հրաժարել անցյալ գերբայը կոչեցին գիմավոր բայի մաս ավելացրիր գործածություն ունի։ Կարող ենք թարգմանել միենուժներ՝ հրաժարեցին կամ կոչեցին։

316. Տե՛ս Ա., ծան. 15։

317. Ի նախդիրը դրված է անորոշ դերբայի հայցական հոլովի վրա, արտահայտում է նպատակի գաղափար՝ ուտելու և խմելու։

318. Դրաբարում պատել և պատկել բայերը հոմանիշ են, սակայն պատել անցյալ դերբայը բայական ավելադրություն է։

319. Թարմատար է, դրված է զարդի համար։

320. Ի նախդիրը հայցականի հետ այստեղ ժամանակի գաղափար է արտահայտում, յոթերորդ. ընթրիքի ժամանակ։

321. Անցյալ դերբայի հետ (հոգն. թվով) բաղադրյալ ժամանակ է կազմել, գործածվել է որպես սեռական բայ։ «Պատկեալ [illegible] կայինս» պետք է թարգմանել չօգտագործել էին։

322. Այստեղ նշանակում է բաժակ։

323. Ի բաց թեկնեալ. մի կողմ դնել, գեն նետել։

324. Հոգի գեր է կատարում։

325. Ինչպես այս բայը, այնպես էլ այս համաձայնում գործածված աղբիչ բառ բայերը անցյալ անկատար ժամանակով՝ անցյալ կատարյալի իմաստ են արտահայտում։

326. Այստեղ գործածված է եռաչի իմաստով։

327. Անձն բառը գործածված է խեղճ դերանվան իմաստով։

328. Այստեղ զաման և զմիեռն ձևերը ժամանակական կիրառություն ունեն։ Դրանք չպետք է համարել ուղիղ խնդիր (ժամանակի պարագաներ են)։

329. «...Ոչ կարէր տալ զպատասխանի իւր ընդ երկիւղին առաւածոյ», բառացի՝ նշ. չէր կարողանում իր պատասխանը փոխարինել աստծու երկյուղով, այսինքն՝ իր պատասխանից աստծու երկյուղը մոռանում էր։

330. «Այնչափ ինչ գի» արտահայտության մեջ ինչ բառը թարմատար է, «այնչափ գի» նշ. այն աստիճան, որ...։

331. «...Էր երբեմն գերելոյ ի նաւապարկի ուրեմն...»՝ Մի անգամ պատահեց մի նավապարկի վրա։

332. Զեղչված է կախել բայը, որն ընդունում է զ նախդիրով և բացառականով խնդիր։ Զգոտւոյ բառը կախել բայի խնդիրն է։ Կախել զգոտւոյ. գոտուց կախել։

333. Բայը (հավանաբար պատել) զեղչված է, որից կախված է այս բառաձևը։ Տե՛ս Զ նախդիրի կիրառությունը գործիական հոլովի հետ։

334. Այստեղ նշանակում է նարդաւել։

335. Աչքէկառոյց կամ ակնակառոյց բարդ բառ է, վերջին բաղադրիչը կառչել (=կպչել) բայի պատճառական ձևի (կառուցանել) կատարյալի հիմքն է՝ կառոյց, արեւն ակնկառոյց լինել նշ. աչքը գիշելի, այսինքն՝ աչքը գցել մի բանի վրա, ինչպես որ գործածում ենք աշխարհաբարում։

336. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ ձևերը գցել, բանել։



337. Տե՛ս ծան. 151։

338. Հոգի գեր է կատարում։

339. «...Բանք են ինձ ընդ քեզ», բառացի՝ ես խոսքեր ունեմ քեզ հետ, այսինքն՝ քեզ ասելիք ունեմ։

340. Փոխ. խոսելով. խոսելիս ձևից հետադարձում ձևափոխվել խոսելու ձև, որը հատուկ չէ գրաբարին։

341. Անձն բառը՝ խեղճ դերանվան իմաստով։ Զանձնէն պատմական բացառական է, նշ. իր մասին։

342. «Ոչ ինչ եմ արժանի»՝ արժանի չեմ։

343. Ի վեց զալ (զամ). վհատվել, վհատել։

344. Սորբագրական ածականին առհամանական ներկայի իմաստով է գործածված։

345. Յենէրն հանել (հանեմ). խոել, հափշտակել։

346. Ներկան գործածված է ապառնու իմաստով։

347. Անցյալ դերբայը դրված է հոգնակի թվով և ունի դիմավոր բայի իմաստ՝ համաձայնելին։

348. «Զետ քիչեւ»՝ Թույլ չավեց հեռն։

349. Սեռականով ենթակա՝ անցյալ դերբայի հետ։

350. Երբեմն, այստեղ՝ մի անգամ։

351. Առ նախդիրը գործիական հոլովի հետ՝ մոտ նշանակությամբ։ «...Անցանէր առ այգեաւ ուրումն»՝ Անցնում էր մեկի այգիների մոտով։

352. Նույն նախադասության մեջ երկու ստորոգյալները դրված են տարբեր ժամանակներով՝ աղաղակէր (անց. անկատար), ասէ (ներկա), երկուսն էլ անցյալ կատարյալի իմաստով են՝ նույն ձևից, ասաց։

353. Փուշ և տատասկ հոմանիշ են, գործածում են որպես բառական մի ամբողջություն։ Այդ պատճառով էլ ստորոգյալը եզակի թվով է դրված (բուսցի)։

354. Այստեղ նշանակում է յուր, փոխարինել է իւր դերանվանը։

355. Տե՛ս Ա., ծան. 15։

356. Դիմավոր բայի վրա դրված ս հոդը փոխարինում է այս ցուցական դերանվանը, փոխ. «...Զաղմուկս զայս՝ յարում բերանեցայս»։

357. Ավելի ճիշտ կլինենր շյալած չարէլ։

358. Յառնել (յառնեմ) բայն այստեղ գործածված է առաջընթացու իմաստով, որեմն հոմանիշ է ողջանալ բային, որի դիմավոր ձևի վրա դրված է անցյալ դերբայի ձևով, որպես բայական ավելադրություն։

359. Նախադասության շարունակությունից երևում է, որ բացասում բառը պետք է հոգնակի լինի՝ բացասուս։

360. «...Խաղակատակ լինէր նոցա»՝ նրանց համար խեղկատակություն էր անում։

361. Այստեղ՝ այսպես, այդպես։

362. Խաղալ. այստեղ՝ ծաղրանքություն անել, միմոսություն անել։

363. Բայական ավելադրություն՝ անցյալ դերբայով։

364. Միաանէկէ. անստույգ բառ է։ Ըստ Հայկազյան բառարանի՝ կատակ, բստ Հ. Աճառյանի՝ փորձանք, վտանգ։ Թերևս կարելի է պատահել թարգմանել։

365. Հայցականը չփոխված է սեռականի հետ։ Փոխ. «Ի չարս անկեալս»։

366. Նախդիրը կրկնված է։

367. Ընդ նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով, նշ. կառուցելիս, կառուցելու ժամանակ։

368. Ներկա ժամանակը գործածված է առաջանի ժամանակի իմաստով, իսկ այս բայանձի վրա դրված շեշտ ձևը, որ բաղդ բայի հրամայականն է, այստեղ գործածված է իբրև եղանակավորող բառ։

369. Ընդ նախդիրը սեռական հոլովի հետ նույն իմաստն է արտահայտում, ինչ փոխանակ նախադրությունը։

370. Այստեղ հոգն ավելորդ է, պետք է լինեն տպյուս ձեռնոն։

371. Ընդգրկում. մյասնությունն, կծծիություն։ Արմատն է ռիշտ, որ հանդես է գալիս տարբեր ձևերով՝ ռիշդ, թռիչք, ռիժա, ռիժդ, բռչյա։

## Դ. ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

### ԵՂԾ ԱՂԱՆԴՈՑ

1. Երկու պարբերությունների միջև մասի արտահայտական կապ ստեղծելու համար հաճախ գործածվում են զանազան ապատարկու բառեր, շաղկապներ։ Այստեղ առդ բառը գործածված է այդ իմաստով։

2. Սաորոգյալը զեղչված է. Թարգմանելիս պետք է վերականգնել (էին)։

3. Եւ և ի նախդիրները վերաբերում են փառաւոն՝ անորոշ դերբային, սակայն նրանից բաժանված են մյուս լրացումներով։ Թարգմանելիս դրանք պետք է բերել իրենց տեղը, այսպես՝ «Եւ ի բաց փարատելոյ ի միջոյ զբռասքն և զառակին...»։

4. Այստեղ երէ նշանակում է թե։

5. Եմ բայի առաջին առաջանին երէ շաղկապի հետ ներկա ժամանակի իմաստով է գործածված։ Այստեղ նշանակում է կա։

6. «...Զայն ոչ գիտէ՝ Այն չգիտե, այսինքն՝ «Ո՛չ գիտէ եթէ իցէ և եթէ չիցէ՝ Չգիտե՝ կա, թե չկա, իր լինելը կամ չլինելը չգիտե։

7. Սեռական հոլովով ներգործող խնդիր է, երա մաս վերել բայի կրավորական սեռի է, «վարելով ավելո՞ ևլ. զեկավարվելով նրա կողմից»։

8. Պայման մասնացանել. պայմանել։

9. Շարադասությունը փոփոխված է. փոխ. «զեղարգիշն և զյուրինիշ նոցա»։

10. Եւ և ի նախդիրները վերաբերում են ճանաճել անորոշ դերբային (նպատակի իմաստով), բաժանված են երկարությամբ նախադասությամբ։ Թարգմանելիս պետք է շարադասությունը փոխել այսպես՝ «Եւ ի ճանաճելոյ ի աղանդ յոր կարգեցաւ՝ Հասնելու այն ճանապարհնե, որի համար սահմանվեց։

11. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում՝ չլինելու, որպեսզի չինի։

12. Այստեղ ս-ն հոգ է։ «ԱՆձ տաւեր արտահայտությունը փոխաբերական իմաստով է, նշանակում է աշխարհ, տիեզերք։

13. Ի խառնար դառնալ, խառնվել։

14. Ու հարաբերական դերանունից առաջ դրվում է այն ցուցական դերանունը, իսկ երանից հետո՝ նա կամ նույն։

15. Վերը գործածել է ընդհ ժամանակս ժամանակաւ, այստեղ չկրկնելու համար գործածել է «Երբէ՛ երբէ՛» համանիշը, եւ. ժամանակ առ ժամանակ, երբեմն-երբեմն։

16. Անորոշ դերբայում կրավորական սեռը ձևով եռ տարբերելու համար հեղինակը գործածել է հարադրական բարդությունը՝ պաշտօն առնել, պաշտվել, իսկ պաշտօն նորհանել եւ. պաշտել։



17. Այստեղ չի կրկնված «Զիա՞րդ պաշտիցեմ» արտահայտությունը, դրանից պաշտիցեմ չկրկնված ստորոգյալի ուղիղ խնդիրն է։

18. Բառը եղանի թեյով կրկնելով՝ արտահայտում է ամեն, ամեն մի իմաստ, ինչպես այստեղ՝ «ամենայ ամեայ» եւ. ամեն ամիս։

19. «Զիա՞րդ պաշտիցեմ» արտահայտությունը չի կրկնված. սա պաշտիցեմ ստորոգյալի խնդիրն է։

20. Համեմատության նախդիրը կրկնված է երկու համեմատություններ մեջ՝ զմեր, զանասնոց։

21. Կրկնակի հայցական՝ առ նախդիրով, առնել (առնուլ) բայի մոտ, որը գործածված է համարել նշանակությամբ։

22. Եմթական ընկել է երկու ստորոգյալների միջև, այսինքն՝ «Հնազա՛ ամարգեն և ամբարտաւան՝ նրանք անարգում և ամբարտավանում են։

23. Նորմամ, ոչ, ուր, երէ և նման բառերով սկսվող նախադասություններ մեջ բայ-ստորոգյալը ամփոփարար ներկայի փոխարեն դրվում է առաջին ապառնիով, ինչպես այստեղ։ Մատուցանիցէ=մատուցանէ։

24. Այստեղ պետք է թարգմանել աղանդով։

25. Նանանչել բայը գործածված է ներգործական նշանակությամբ՝ նա պաշտել։

26. Սեռանդակ բայի դեր է կատարում, անցյալ դերբայի հետ բաղադրյալ ժամանակ է կազմել. «կայ նուաստանալ» եւ. հաստատված է։

27. Այստեղ գործածված է եզակի իմաստով։

28. Այստեղ շաղկապ է։

29. Զգեստ է չփորել հոգնակի հայցականի հետ, ս-ն հոդ է։

30. Ստորոգյալը զեղչված է, փոխ. «Ու՛ է զարմիքն խմն...»՝ Կա ինչ-որ տեղ։

31. Այստեղ նշանակում է բայց. բայց այս կարգից։

32. Միայն ավելորդություն է։

33. Հոգը դրված է զեղչված հարաբերյալի փոխարեն։

34. Պնդումություն է. նույն միտքն արտահայտված է երեք նախադասությամբ, որոնք կազմված են զուգահեռ համանիշ բառերով՝ 1. «Անմեռնայն կողմանս վարդին», 2. «Ընդ նանօր աշխարհն», 3. «Ընդ բնաւս սպառեն, եւ. բնակում են ամեն կողմ։

35. Բառակեն լինել, ի մեծակի լինել, կարողանալ։

36. Բայերով արտահայտված պնդայնություն, բերանով, արյամբ, վարդել, ասոալ համանիշ են, նույնպես և հարցրը նախադասության մեջ զիմեցուցանել, աշխարհացուցանել։

37. «Ի պէտս աշտաւ»՝ Գործածության համար, պետքերի համար ծառայելու։

38. Այստեղ նշանակում է օրինակ, ինչպես օրինակ։

39. Կրավորական նշանակությամբ է, ասվելու, ասելու համար։

40. Ներգործական է, ենթակայական դերբայի իմաստ է արտահայտում՝ կրկնելով, բեռ տեղափոխող։

41. Սնուցանել բայ-ստորոգյալի ուղիղ խնդիրն է։

42. Կալ (կալ) յանկարծակի. հաստատ մնալ, ապահով լինել։

43. «...Ու յարէն կարծին անձամբ» Որոնք անձիններին կողմից չար են կարծվում, որոնց անձինները չար են համարում։

44. Ներկայի փոխարեն առաջին ապառնի՝ հարցական երանակ նախադասության մեջ։

45. Հոգի դեր է կատարում։

46. Նշ. հնարագիտությամբ, բացառական հոլովը գործիականի իմաստով։

47. Գրաբարում սովորական է մինչև բառով սկսվող նախադասությունների մեջ դիմավոր բայի փոխարեն դերբայական ձևով ստորոգյալ գործածել, ինչպես այստեղ է։

48. Ցախիչ. փչացնող, ապականող, ոչնչացնող, ավերող։

49. Տրական հոլովով ենթակա՝ միադիմի բայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

50. Պատճառական բացառական՝ առնել բայի մոտ։ «Ձորոց առնէ»՝ Որոնց ձեռքն առած են։

51. Գրաբարում ստորադասական եղանակի անցյալ ապառնի ժամանակ չկա, նրան փոխարինում է ապառնին կամ էլ սահմանականի անցյալ անկատարը, ինչպես այստեղ։

52. Սիրտ առնուլ. սիրտ վերցնել, արիանալ։ Այստեղ անց. անկատարը ստորադասականի իմաստով է։

53. Ներկա ժամանակը գործածված է ստորադասական եղանակի ապառնու իմաստով. առաւելի—առավելում է, իսկ այստեղ՝ կավելի, կմեծանի։

54. Բույսի տեսակ է։

55. Տե՛ս ծան. 53։

56. Անվերջություն է։

57. Արդ. այստեղ՝ տեսակ։

58. Այստեղ և վերը մի քանի տեղ և շաղկապը արտահայտում է բայց, իսկ նշանակությամբ, շաղկապում է ներհակական համարժեքության անկացող նախադասությունները։

59. Ի վերայ նախադրությունը սովորաբար դրվում է իր խնդրից առաջ, սակայն հանդիպում է նաև հակառակ գործածությամբ, ինչպես այստեղ։ Տե՛ս նաև Գ., ծան. 142։

60. Սովորականն է ի գնալ։

61. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայով կազմված բաղադրյալ ժամանակով արտահայտված ստորոգյալի մոտ։ «Իմ իսկ աչոք տեսեալ էր»՝ Ինձ (իմ) աչքերով եմ տեսել եմ։

62. Պատճառական բացառական է՝ կախված առնել բայից։

63. Սեռական հոլովով ենթակա է։ Պետք է թարգմանել ուղղականով՝ մենք։

64. Տե՛ս ծան. 44։

65. Տրական հոլովով ենթակա՝ միադիմի բայի մոտ (չէր մարթ)։ Պետք է թարգմանել ուղղականով՝ անմարմինները չէին կարող մարմնավոր կանանց հետ ամուսնանալ։

66. «...Վասն զի սերմն մարմնաւորաց է»՝ Որովհետև մարմնավորները սերմ ունեն. որովհետև սերմը հատուկ է մարմնավորներին։ Սերմն բառը կապված է մարմնաւորաց սեռականով դրված բառին է-ի միջոցով և արտահայտում է ունենալու, հատուկ լինելու իմաստ։ Տե՛ս նաև Գ., ծան. 5։

67. Տրական հոլովով ենթակա՝ միադիմի բայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

68. Ինչպես այս, այնպես էլ դրան նախորդող մի քանի բայեր անցյալ անկատարով ստորադասականի ապառնու իմաստ են արտահայտում։

69. Սեռականով ավելորդություն է, կարող ենք թարգմանել [illegible]։



70. Տե՛ս Գ., ծան. 5։

71. Տրական հոլովով ենթակա է՝ ի դուր է միադիմի բայի մոտ։ «Ի դուր է կա՛լ կա՛լն առնել ասմինս»՝ Անտեղի է, որ մենք կա՛լ կա՛լ ասենք։

72. «Վիշապի այլազգ ինչ բնութիւն չէ՞ երէ ոչ օձի»՝ Վիշապն ինչ-որ այլ տեսակ կենդանի չէ, եթե ոչ՝ օձի, այսինքն՝ վիշապն իր էությամբ օձից չի տարբերվում։

73. «Զկիտաց. զգեղջկինայ». կետերի, գեղջիկների ձեռքին, պատճառական բացառական՝ կախված առնել բայից։ Այս միջանկյալ նախադասությամբ հեղինակը բացահայտում է արտահայտած միտքը։

74. Պատճառական բացառական է։

75. Հանդույցի հոգնակիությունը կախված է ստորոգելիական վերադիրից (ձկունք)։ Հանդույցը նույն թվով կլիներ, եթե նույնիսկ լիներ միայն եզակի ենթական։

76. Կենդանի է։ Ապառնին ներկայի իմաստով է գործածված։

77. Տե՛ս Բ., ծան. 10։

78. Ունել (ունիմ) բայն այստեղ գրավելու, տիրելու իմաստով է գործածված։

79. Բաղադրյալ ստորոգյալի հանդույցը թվով համաձայնել է ստորոգելիական վերադիրի հետ, իսկ ենթական, որ արտահայտված է այն ցուցական դերանվամբ, եզակի է։

80. Շրջուն շարադասություն է, փոխ. «Արդ ինչ օգուտ ոչ բանականն կոչիս»։

81. Գրաբարում ժխտումն արտահայտող հատուկ եղանակ չկա։ Դա ժխտականը վերաբերում է և էր բառին։ «Մինչ չև բնաւ էր ինչ»՝ Քանի դեռ ոչինչ չկար։

82. Ստորոգյալը զեղչված է, փոխ. «...Որ են յերկինս կամ յերկրի»՝ Որոնք երկնքում կամ երկրում (երկրի վրա) են։

83. Փոխ. «Էր ումն Զրուան անուն»՝ Մեկը կար՝ Զրվան անունով։

84. Յաւրս առնել (առնեմ). զոհ անել, ժառանգ անել։

85. Զեղչված է էր բայը։ Տե՛ս Բ., ծան. 7։

86. Փոխ. «Յետ զհազար ամ յաւրս առնելոյ»՝ Հազար տարի զոհ անելուց հետո։

87. Այստեղ և-ն հոդ է։

88. Հոդը տեղափոխված է, փոխ. «Ի յաւրս առնելոյն»։

89. Հոդի դեր է կատարում։

90. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։

91. Անցյալ կատարյալից հետո ներկա, պետք է թարգմանել նույն ժամանակով՝ նայեց, ասաց։

92. Եղավ կանգնեց։

93. Երկամ կանգնեց։

94. Տե՛ս Գ., ծան. 254։

95. Տե՛ս ծան. 21։

96. Ի նախդիրը գործածված է անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի նշանակությամբ։ Դա վերաբերում է ինչպես տալ, այնպես էլ առնել բային, սակայն վերջինիս մոտ չի կրկնված։

97. Հատանել բայը փոխարինել է զալ բային, սա շատ սովորական երևույթ է դասական մատենագիրների երկերում։

98. Այստեղ՝ ստախոս, խաբեբա։

99. Այստեղ չի արտահայտված լինել բայը. սեռական բայի գերադասն «Զի՞ միթէ ի վերայ ոտնայ կացուցեալ»՝ Որմիզդին քեզ վրա թագավոր դարձրած լինեմ։

100. Գրաբարում հատուկ անունները սովորաբար հոգ. չեն ընդունում, բայց երբ հավաքական ձևով գործածվում են, կարող են ընդունել, ինչպես այստեղ։

101. Եթէ, այստեղ՝ թէ, կամ որ։

102. Այստեղ՝ կարիք ունենալ, կարիք զգալ։

103. «...Էր ում ի վեր համ զնա»՝ Դրանից վեր մինչև հիմա։

104. Լնուլ, այստեղ՝ լրացնել, լրիվ վճարել։

105. Տրական հոլովով ենթակա՝ միադիմի բայի հետ (պարտ էր)։ «Նմա պարտ էր սանձել զերկինս և զերկիր...»՝ Նա պետք է սանձեր երկինքը և երկիրը։

106. Սաստկացյալ կերպված է։

107. Խույս տալու համար, խույս տալու նպատակով։

108. Հատանել բայը փոխարինում է գալ բային։ Տե՛ս ծան. 97։

109. Նշանի ունի ժամանակի միավորների առնմանումն ըստ լուսնի և արեգակի։

110. Թէ, այստեղ՝ եթե։

111. «...Անասունք չև եւս էին առարեալ»՝ Անասունները դեռ չէին ստեղծված։

112. Կարօտ, այստեղ՝ կարիք ունեցող, պակաս ունեցող։

113. Գրաբարում առանց նախադրությունից երբեմն ան բացառական առանձին իմաստով է գործածվում, ինչպես այստեղ՝ «առանց վտարեալ» եւ. ան- [illegible]։

114. Տե՛ս Գ., ծան. 279։

115. Անորոշ հոլովով ենթակա։ «...Եթէ եւս չէր յերկնացուցեալ»՝ [illegible] չէր կարողանալ կամ կատարած չլինելը։

116. Այստեղ հոգը փոխարինում է նաև ա գերադասականը։

117. Անցյալ անկատարը ստորադասական անցյալի դեր է կատարում (որը չկա գրաբարում)։

118. Նախդրիվ տրական՝ առաջ բայի հետ։

119. Այսինքն՝ արդեհայի իրեն արդի չլինի։

120. Տե՛ս ծան. 98։

121. «...Յարդարէ իւրն Արամենայ կապված ինչ էր նմա»՝ Իր սրտի [illegible] կամ ինչ-որ կապված ունիր։

122. Նախդրիվ տրական՝ առաջ բայի հետ՝ կարգված ոչ թե գ., այլ ի [illegible]։

123. «...Պարտ էր ումեք ի միջի լինել»՝ Մեկը միջամտող պետք լիներ, մեկը պետք է լիներ։

124. Այսինքն՝ «...Յորմէ՞ կենալ էր»՝ Ինչ-որ մեկից էր առաջացել, առնվել։

125. Այստեղ՝ արձակել, փրկել։

126. Անիշխան առնուլ (առնում) լինելոյ, առնվելու, լինելու ակնկալ ասելը։

127. Տե՛ս ծան. 79։ Այստեղ ենթական հոգնակիով է։

128. Որովհետև չեղածը (նա, որ չկար) չեղածին չեղածի համար ոչ՞ էր անում։



## Ե. ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1. Ընդ նախորդը գործածված է նուազել բայի անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։ Այստեղ նուազել վերջանալու իմաստով է գործածված։ «Ընդ նուազել ժամանակաց թագաւորութեանն Պարթևաց»՝ Պարթևների թագավորության ժամանակները վերջանալիս, երբ վերջացան պարթևների թագավորության ժամանակները։

2. Ի նախդիրը բառնալ բայի անորոշ դերբայի հայցական հոլովի հետ նույնպես ժամանակի գաղափար է արտահայտում՝ վերանալիս, վերանալու ժամանակ, երբ վերացվեց։

3. Ի նախդիրը նույնպիսի կիրառությամբ՝ առնանալ բայի հետ։

4. Հանգույն նույն ենթակայի հետ անդ. կատարյալով արտահայտված երկու ստորադասականներից մեկը հանդես է գալիս անցյալ դերբայի ձևով, այսպես՝ «Եկն միաբանեաց»—«Եկան միաբանեցան»։

5. Համանիշ բայերով արտահայտված ամբողջություն։

6. Անորոշ դերբայը սեռականով՝ ժամանակի պարագայի դերում (բացարձակ կամ անկախ սեռական)։

7. Դերբայական երկբարդական նախադասություն է։ Նման անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալը պետք է թարգմանել դիմավոր ձևով։ «...Թէպէտ և վաղու լուեալ զբարն...»՝ Թեպետ բանը շուտ էր լսել։

8. Ժամանել (ժամանեմ) հասանել (հասանեմ) յամբոխել (կամ յամբոխլ) գործողի. կործն ավարտել, վերջացնել. բառացի՝ հասնել գործի վախճանին։

9. Գրաբարում կան որոշ գոյական անուններ, որոնք հարադրվում են սամանին գոյական անունների սեռական հոլովներին, որպես ամբողջություն։ Դրանք սովորաբար թարգմանվում են վերջին բառով, առանց առաջին բառի հոլովոյ։ Այդպիսի են այստեղ գործածված «զօրն պատերազմի», «զօր պատերազմին» եւ. պատերազմություն։ «Ոչ ինչ ժամանեաց հասանել յամբոխլ զործոյն պատերազմին իւրոյն պատերազմին»՝ Չկարողացավ պատերազմի պատերազմությունն ավարտել։

10. Այստեղ հասանել բայը չի արտահայտում իր իսկ իմաստը, մի անորոշ պարագայի դեր ունի։ «...Ոչ ինչ եմա զործել զործն»՝ Նրան չհաջողվեց գործ կատարել, ոչ մի ինչ կարողացավ անել։

11. Կենալ (կենամ) բայով և անցյալ դերբայներով (սպանեալ, անցեալ, եկեալ) կազմված բաղադրյալ ժամանակ՝ անց. անկատար, որը գործածված է անցյալ կատարյալի իմաստով։

12. Համանիշ արտահայտություններ են, «զօր բանակաւորել», «զօրաւորել զօր» եւ. զորք հավաքել։

13. Դաոն Արտեմոյ աշխարհ Դարիպայի կերպը. պատմելով հասնում ենք անցել է սարսափական նշանակություն ունեցող ճանապարհ։ Հայերն է նաև Գան դուռն։ Ճորայ պահակ մեր ժամանակներ անվանում են Դերբենդի ամրություններ։ Բանավորության մեջ այս անցքերի պաշտպան մասին վեճ կա։

14. Հոնաց նույն բաշխաները են։ Տե՛ս նաև Գ., ծան. 282։

15. Սալարակ ղնել. ձիավոր զորք ավելի՝ կողոպտելու համար։

16. Համարել, այստեղ՝ հատել, քանդել, ջախջախել։

17. Միանգամայն, այստեղ՝ միաժամանակ։

18. Սրանք Գողթնում բնակվող ցեղեր ու ժողովուրդներ էին, որոնք այժմ չկան։

19. Այստեղ բուն և հարազատական անձնանունները գործածված են գոյականի ձևով (վերացականը թանձրացականի փոխարեն)։ Պետք է թարգմանել որպես անձնական՝ իր բուն հարազատական ազգականների անձի համար, այսինքն՝ իր որ-յունակիցների անձի համար։

20. Միամտել (միամտվել), այստեղ՝ հանգստանալ, հնազանդությամբ ծառայել։ Նույն իմաստն արտահայտված է նաև «Հնազանդեցան և ի ծառայութիւն մտին» ձևով։

21. Տե՛ս Գ., ծան. 282։

22. Ստացական հոլովով նմանակ է։

23. Սեռականով ամփոփողություն է։ «Նմնայ հասեալ էին ի բնիկսն ազնուականութեանն» Օգնություն էին նրանց։

24. Սեռականով ամփոփողություն է։ Կարելի է թարգմանել մենեամենքի՝ ամբողջ կամ բազմությամբ։

25. Նույնանալ շարժական ամփոփողություն։ Պետք է թարգմանել մենեամենքը՝ բոլոր կամ ամեն։

26. Ջարախառնված վառել (վառված). դաժան ձեռքով գրել տալ, կտորել, ջարդել։

27. Ուղղորդական հոլովական՝ ընդ նախդիրով։ Նույնն գոյական անունը հոգնակի թվով դրված է, արտահայտում է բազմազանության գաղափար։ «Ընդ կողմանս կողմանս»՝ Դեպի զանազան կողմեր։

28. Սեռականով ամփոփողություն է։ Բաղին և Մենենան համանիշ են։

29. Նախդիրը կրկնված է։

30. Միևնույն բայով արտահայտված առարկաները [illegible] բազմաթիվ անհատական [illegible], որոնց մի մասն արտահայտված է գործիական հոլովանիշով, իսկ մի մասն էլ՝ ի նախդիրը կրող հայցականով, որոնք ի նախդիրը գործիական հոլովի իմաստ է արտահայտում, այսպես՝ դլու, նախագաւ, ձիով, զոռավ (փոխ. զորավոր), փարգաւ, մեծաւնիւ, պանծով, զանազանով, ակամբ, ուկով (փոխ. ոսկով) ամրացով (գործիական), մյուս կողմից՝ ի վերջասարս, յանուրս, ի նանգեռնս, ի զաւրս (հայցական՝ ի նախդիրով, գործիականի իմաստով)։

31. Հինգերորդ հանել (հանվել), հինգերորդ մասը բաժին հանել։

32. Այստեղ ի նախդիրը բայական ձևերում անձնացող գոյական անվան հայցական հոլովի հետ ժամանակի գաղափար է արտահայտում. բառացի՝ մյուս առավոտ դալուստի ժամանակ, այսինքն՝ հաջորդ առավոտ։

33. Այստեղ և շատ այլ տեղերում անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստ է արտահայտում։

34. Աստատել սփռել (սփռվել) բայական հարաբերությունը ընդունում է գործիականով և զ նախդիրով լրացում։

35. Սեր հին ժառանգորդները մանկունքներ էին անվանում անձնական արարողներին։

36. Կրաւորում խոստանալիս բառի անձերի շատ հանդես է գալիս առաջական նշանակությամբ՝ յուրաքանչյուրը յուր։

37. Բայական ամփոփողությունները դիմավոր ձևերով։

38. Փոխ. «Ի վերայ բլեանսն»։ Տե՛ս նաև Գ., ծան. 142։

39. Այստեղ գործածված է վերծ իմաստով։

40. Միանաստրիչն, այստեղ՝ համաստանանությամբ։

41. Հանդերձել կազմել (հանդերձվել կազմվել), պատրաստվել։



42. Ջու առնել (առնվել), յաղթ անկանել (անկանվել). համանիշ բայական հարաբերություններ են, նշ. հանդարտվել, անդորրանալ։

43. Դէտ ածն անել (անվել), աչքադիր նայել, զննել, հետախուզել։

44. Դաշնակցություն, դաշինքով պատերազմել։ Այստեղ պատմում են պատերազմի։

45. Հայաստան, այստեղ՝ միասին, միասնաբար, համաձայնությամբ։ «...Ըն համաձայն զխորհուրդս վրեժ խնդրել ժողովուրդը» Որպեսզի կարողանան միասին բոլորի վրեժը լուծել։

46. Սա նա, այսինքն՝ սա ինքը։

47. Ներքոյ գերդասը սեռականով՝ ժամանակի պարագայի դերում (բացառական կամ անհայտ սեռական), ցանկը բազմելու ժամանակ։

48. Համբառնալ (համբառնվել), այստեղ՝ վեր կենալ գնալ, հեռանալ։

49. Այստեղ նեխական սխալ է հարկանոց ներքո։ Դրանով միայն թագավորին նկատի չունի։

50. Սեռականով ամփոփողություն է։

51. Համեմատությունը և համեմատվածը ընդունված են ուղիղ բառով, այդ պատճառով էլ նախդիրը կրկնված է։

52. Ամփոփողության մակբայական։

53. Այստեղ բայը կրավորական նշանակությամբ է. «...Դանայ զորեղ հաստանկին» խմբերի էին բաժանվում։

54. Ձեռաց մի. որքան կարելի է շատ, որքան կարելի է առատ։

55. Ոռն, այստեղ՝ շունչ, հոգեկան ձևով նշանակելով իմաստով է գործածվել։

56. Մաշել (մաշվել) ի սուր սուսերի, սրով սպանել (մեռնել)։

57. Սեռականով ամփոփողություն է։

58. Տե՛ս Գ., ծան. 209։

59. Անցյալ կատարյալով արտահայտված առարկայից հետո անցյալ անկատարով առարկայություն թարգմանելիս ժամանակները պետք է միօրինակ դարձնել՝ յանգ, զվարճացավ, զվարթացավ։

60. Խաղալ (խաղալ) բայի պատճառականն է, նշ. քշել, տանել, հեռացնել։

61. Ուղղորդական հայցական է, առանց զ նախդիրով չի կարող լինել, պետք է լինի յուրիսն։

62. Ջնջված է անուն բառը, փոխ. «...Որում անուն Սայգն կոչէին»։

63. Դարձ կամ դարձ, դառն, գաղթեր։

64. Սեռականով ամփոփողություն է։ «Տեղ մարտ պատերազմի» նշ. պատերազմ տալ, պատերազմել, այստեղ՝ պատերազմելու, պատերազմի տեղը։

65. Բացառական հոլովով խնդիրը կախված է անցած անձնանունից։ «Եկաւ նր յանկարծ զաւուրեանց»՝ Բայց տարբեր անուններ։

66. Վհատվեց ու զարհուրեց։

67. Պատասխանի տալ (տավ). բայական հարաբերություն է, նշ. պատասխանել։ Անուղղակի խնդիրը բառանման է հարաբերության բաղադրիչներից։

68. Սեռականով ամփոփողություն է։

69. Ներգործական նշանակությամբ է, ունի ուղիղ խնդիր (զզորսն), ներգործական-արտահայտված չէ (Նոցա)։ «Ջղրանս հաղաղին ագանել էր (նոցա)»՝ նրանք բազմաթիվ զորքեր ցանկանալ էին։

70. «...Ժամ էր հասարակ գիշերոյ» կեսգիշեր էր։

71. Բառ. այստեղ՝ գնա. «...Հայր բնիկնոյր բարդ բարդս»՝ Բարդ-բարդ թափված էր։

72. Սեռականով ավելադրություն է։

73. Վերացականը թանձրացականի փոխարեն։

74. «...Երեւն այգն զառաստան մերկացաւ...», բառացի՝ երբ այգը առավո-տը մերկացրեց, այսինքն՝ երբ լույսը բացվեց։

75. Այս բացվածքի նշանակումների մասն առարկայացվել չի արտահայտվել, որով-հետև նախորդ նախադասության մեջ կա (յանդիման լինել=ներկայանալ), մի-այն այստեղ հոգնակի թվով պետք է թարգմանել՝ ներկայացան։

76. Ինչ այդ. առարկական է ինչ այդպիսի, այդ բաները։

77. Այստեղ նշանակում է կատարվել, ... [illegible] այր մի ի գրան Ծուռ, զի ինչ այդ եղեւ վեհաբին՝ [illegible] այստեղ՝ [illegible] մի մարդ կա, որով այդ բաները կկատարվեն։

78. Դարձ Լաբուբեան, քաղաքադարձություն։

79. Հանդիպում է տարբեր ձևերով՝ Տրդատ, Տրդատէս, Տրդատիոս։

80. Ծիրանի. այստեղ գոյական է, նշ. արքայական ծիրանեգույն պատ-մուճան։

81. Ի նախնիքը հայկական հոյակի հետ՝ դարձյալ հայկական հոյակի իմաստով։

82. Մատաղ ի կոչս առնել նախնեացն, ձեն մորթելիս։

83. Դասականներով զարդ. կապականի զարդ։

84. Իսրայելի աշխարհ. իր աշխարհը, իր երկիրը։

## Դ. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

1. Առաջն խոկ. հենց այստեղ։ Իսկ բառն այստեղ չարչկար չէ, այլ՝ նա-խադասության բառ։

2. Միմյանց նկատմամբ լրացում և լրացյալ հանգիստությանց բառերը միմյանցից անջատված են յուրահատուկ տեսության։

3. Առաջին սպառներին ներկայի իմաստով է գործածված, ինչն՝ են։

4. Փոխ. «...Հաստատուն կարգերին զնունացին ժամանակս»։ Հատկացուցի-չը և հատկացյալը բաժանված են առարկայական (այդ պատճառով էլ նախա-դասությունը կրկնված է)։ Այս երևույթը շատ է հանդիպում նորմանցու երկե-րում։

5. Ազդ. այստեղ՝ պատմություն։

6. Ըստ նախնիքի հաջորդական գործածության՝ նման, ըստ նշանակության, ըստ նույնից էլ իրանց պես, իրանց նման։

7. Գրաբարում պատմել բայը գրավել նշանակությամբ արտահայտել խոս-քը է [illegible], հետևաբար այստեղ՝ [illegible] այսպիսի նշանակումն եւ այսպիսի հղացությամբ գրավածները, այսինքն՝ նրանք, որոնք գրավվելուն այսպիսի ձևով արտահայտվում։

8. Փոխ. «Ի մէջ առնելի եղեն առից Եւրոպացիներու»՝ Մեր կողմից գո-վաստական խոսքերի արժանացան։ Սրանցից և որոշյալն անջատված են նախա-դասության մյուս անդամներով։ Այդ պատճառով էլ Եվրոպական բազմաթիվ տեղական նախադասա գործածությամբ հոլովված է։

9. Ի նախնիքը տեսորոշ գիրքերի հայկական հոյակի հետ՝ ժամանակի իմաս-տով կարգադրիչ, կարգապահ ժամանակ։

10. Երբ ի նախնիքը կրող բառի վրա պետք է լինում դ նախդիր գործա-ծել, նրանից միջև հանդես է գալիս առ նախդիրը, և այսպիսով նախդիրները կու-



տակվում են՝ զառ ի։ Այստեղ դ նախդիրը յուրած բառին է։ «...Միջնաձայն զառ ի ճոցանէ յուռածս բանիցս՝ նրանց կողմից շարադրված գրվածքները հաղորդ-վա հաղորդակից լինում է նաև մեր նախնիքի մոտ։

11. Այստեղ ածականի իմաստով է, նշ. աշխարհական, աշխարհիկ։

12. Արտաքին (բաղադրականը) և արտաքինը (կողոսը) անջատված են ստանել (ստանելով) բայով։

13. Թարգմանելիս դրայակեսը բառը պետք է առնել իր լրացման մասի Ան-ջատված է առարկայաով։

14. Իմաստուներան ճառ. գիտական ճառ։

15. Զրուցատրութիւն, այստեղ՝ գրավոր պատմություն։

16. Եմ բայը անցյալ հոլովի հետ՝ անկնայու նշանակությամբ։ Տե՛ս Գ., ծան. 5։

17. Իմաստ, այստեղ՝ գիտություն։ Նախդիրը կրկնված է։

18. Իմա՛ էջեր այլով բացատրությամբ։

19. Դասել (դասեմ) բայը հրամայական խոնարհմամբ սեռական բայի պեր է կատարում անցյալ դերբայի մասը, սրանից զուգահեռ նշ. կատարված են, կատարված կան։

20. Ի ճան դատանել. հարմար լինել, հարմար գալ, հարմարվել։

21. Տե՛ս ծան. 19։

22. Զրոյց. այստեղ՝ գրավոր պատմություն։

23. Սեպհական=անդրաց+ական, այսինքն՝ ինքնահատուկ, ավելորդ[illegible]-

24. Դիմավոր բայի նշանակություն ունի՝ եղել է։

25. Աղդ. այստեղ՝ գեղ։

26. Բուռն հարկանել (հարկանեմ) բայից կազմված խոսքը է՝ բացասականով և զ նախդիրով. նախդիրը նախադասա լրացման վրա է։

27. Արոճետ, այստեղ՝ բաժանված։

28. Ակնարկում է Բաբելոնի աստղաբաշխական աշխարհահռչակությանը։

29. Այս հատվածում խորհուրդն իր խոսքն ուղղում է Սահակ Բագրատու-նուն՝ իր մեկենասին, որի խնդրանքով գրել է իր գիրքը։

30. Հայի հոտոտ ունման լրացումն է, թարգմանելիս պետք է առնել նրա մոտ՝ այս ձողիր...։

31. Մերձակայ նախադասության է։ Հաջորդը նշանակ անի Մար-Աբասին։

32. Հանդուցը արտահայտված չէ (էր)։ Այս ձևը շատ բնորոշ է նորմանցուն։

33. Լռել. անցյալ դերբայ է, առկայի գործավոր բայի իմաստ ունի։

34. Ի նախնիքը տեսորոշ գիրքերի հայկական հոյակի հետ՝ ժամանակի իմաս-տով, որը կարելի է թարգմանել գիրքագական ձևով (ապագամերձից, ապագա-մերձով ժամանակ) կամ՝ ժամանակի պայման երկրորդական նախադասությամբ (երբ ապագամերձ էր...)։

35. Անդ, այստեղ՝ այն ժամանակ։

36. Այստեղ իսրաէլացիս բառն ստացական նշանակություն չունի, նշ. սոսկ մի, յուրաքանչյուր։

37. Ի դէպ ելանել. հարմար գալ, հաջողվել։ «...Պատահեմնէ ի դէպ ելանէին Բելայն բառացի՝ պատահմանը Բելին հարմար էր գալիս, այսինքն՝ Բելին պա-տահարը հաջողվեց։

38. Ունել (ունիմ), այստեղ՝ գրավել, տիրել։

39. Զաւ առնել (առնեմ) հոմանիշ բայով ավելադրություն՝ զնալ բայի մասն։

40. Սա Այրարատյան երկիրը չէր, այլ Վանա լճից հարավ ընկած մասը։

41. Ճակատ բառ է, բերնաբացի գործածությամբ, նշ. ճակատում է, կա։

42. Եթե, այսինքն՝ ժամանակավորապես։

43. Անցյալ գերբայով բայական ածականություն։

44. Անդ, այսինքն գործածված է այնտեղ նշանակությամբ։

45. Սեռականով ամբողջություն է՝ տասն բառի մասը։ Այստեղ տասն բառը գործածված է չայի իմաստով՝ կայսեր, տասն ու տեղ։

46. Ուղղական հայցական բնդ նախդիրով՝ գետի հյուսիս-արևմուտք։

47. Բացառական հոլովը այստեղ ներգոյականի իմաստ է արտահայտում՝ (այս դաշտի) հարավային կողմում։

48. Անցյալ գերբայ է, գործածված է դիմավոր նշանակությամբ՝ հաստատվեցին։

49. Սա հատկացուցիչ է միայն մամ բառի համար, իսկ վերջինս պատճառով բառի հետ յաղագս նախադրությամբ խնդիրն է։

50. Հայոց վերաբերում է Մար-Աբասին։

51. Ի նախդիրն անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։

52. Նույն նախադասության մեջ երկու ուղղական հայցական, որոնցից մեկը ի նախդիրով (ի կողմն), իսկ մյուսն առ նախդիրով (առ Հայկ)։ Նման դեպքերում առ նախդիրը դրվում է անձի անվան վրա։

53. Դերբայական երկրորդական նախադասություն, որտեղ ենթական արտահայտված է սրական հոլովով (նմա), ստորոգյալները՝ անորոշ դերբայով (գալ, կեալ)։

54. Վերացականը թանձրացականի փոխարեն, պետք է թարգմանել որպես անձական՝ չարը։

55. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի հետ։

56. Նախորդ հեղինակների երկերում այս բառը գործածված է հարազատական թարգմանությամբ՝ պատասխանի առաջ։

57. Բարեկոն և Բարեկոմն ձևերը զուգահեռ գործածության ունեն։

58. Մասնական սեռական է, որի ձևը մեծ ածականը գերադրական աստիճանի իմաստ է ստանում՝ դյուցազունների մեջ, ամենամեծը դյուցազուններից։

59. Մրցող՝ կովող։

60. Այս բառի որոշիչները բաժանվել են երկու մասի, այսպիսով որոշյալն ընկել է որոշիչների միջև։ Թարգմանելիս պետք է խմբավորել մի կողմում։

61. Կրավորն ընկած է իր երկու համադասի լրացումների միջև, փոխ. ազատիչ և կրտսեր էր։

62. Երկրորդական նախադասության ստորոգյալը չի արտահայտված (էին կամ անէր)։

63. Մանր բառի հոգնակի հայցականն է, նախադասության մեջ ձևավոր ազգից խնդրի որոշիչն է, որն իր լրացումից անջատված է ուրիշ բառերով՝ ունելով չինելով (թերևս ճիշտ չինել չինելովս), որտեղ ունել պարտավորության իմաստով է գործածված։

64. Տե՛ս ծան. 51։

65. Անցյալ դերբայ դիմավոր բայի նշանակությամբ՝ ցույց տանք։



66. Սա ամբողջական բառակն է, դրված է նրանց հայցականով, ուղղական հայցական ի նախդիրով, նշ. մերանը։

67. Տե՛ս ծան. 47։

68. Սեռ հոլովակերտ մասնիկը գոյական անունների հետ չատ հազվադեպ է։ Սա սակավ դեպքերից մեկն է։

69. Սա տեղի բառի որոշիչն է, որն իր լրացումից անջատվել է կոչով բառանմով։

70. Հաջորդ նախադասության (գլխավոր նախադասության) ենթական տարբեր է, ուստի սա պետք է դիմավոր ձևով թարգմանել՝ երբ երեսները վեր բարձրացրին, նրանց երեսը ինչի ամբողջ անհայտ հրաշքի բաղմությունը։

71. Տե՛ս ծան. 47։

72. Ոստ, այսինքն՝ բլուր, մի փոքր բարձր տեղ։

73. Նախադասության ստորոգյալը չի արտահայտված (կայր)։

74. Վառել, այսինքն՝ սպառազինված։

75. Նախադասության ստորոգյալը չի արտահայտված (էր՝ կար)։

76. Նշանատու, այսինքն՝ նշան կրող, նշան ունեցող։

77. Բարձ, այսինքն՝ տղերք։ Այս իմաստով ամբողջապես հոգնակի ձևով է հանդես գալիս, ինչպես այստեղ։

78. Ամբողջապես հոլովվում է Ա հոլովմամբ, երբեմն նաև՝ Ի, ինչպես այստեղ, սեռական հոլովով ենթակա է՝ անցյալ դերբայի հետ։

79. Թարգմանելիս պետք է տանել եռեմանկիւնի բառի մասը։

80. Սեռական հոլովով ենթակա է։ Պետք է թարգմանել ուղղականով՝ երկու կողմերի նախանձը։

81. Ան պակուցանող, բառացի՝ վախեցնող ահ, կարելի է թարգմանել ահ ու սարսափ։

82. Տարազ, կերպ, եղանակ, ձև։

83. Վերջանալ նյանել (նյանեմ), եռ քաշվելով բարձրանալ։

84. Տե՛ս Ն., ծան. 78։

85. Ուղիղ խնդիր է, չպետք է շփոթել անցի դարաշրջի հետ։

86. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել անձական՝ հաղթական։

87. Խնամակալել (խնամակալեմ), խնամակալ դառնալ, այսինքն՝ թագավորել։

88. Արժանաւորել (արժանաւորեմ), արժանանալ։

89. Հանդիպում է նաև բարբարիս ձևով, նշ. վայրագ, անասուն։

90. Պատմական բացառական է՝ կախված յանէ բայից։

91. Այլ, այսինքն՝ բայց։

92. Հատանել (հատանեմ), այսինքն՝ համոզվել։

93. Այստեղ ազգակի իմաստով չէ, այլ հետևողական ցեղերը, իր ժառանգությունը հարգելու իմաստով է։

94. Սեռական հոլովով ենթակա՝ անորոշ դերբայի գործիական հոլովի հետ, որը շատ հազվադեպ է գրաբարում։ Նման դեպքերում գործածվում է անցյալ դերբայը։ «Պատուելով նահիրաձայն», փոխ. «Պատուեալ նահիրաձայն»։

95. Նա՝ ինէն դերանվան փոխարեն, փոխ. ստա ինէն։

96. Արտահայտված է ուղղական հայցականով։ Չպետք է շփոթել բացառականի հետ։ Ուղիղ ձևն է Նինոս։

97. Սեռականով ամբողջություն է։

98. Ի նախկինը ամբողջ գրքույկի հայկական հոգևոր հետ՝ ժամանակի իմաստով։ Կարելի է թարգմանել երկրորդական նախադասությամբ։

99. Այստեղ եւ. համանմանները՝ նույն ձևով ի նախկինը ժամանակի իմաստ է արտահայտում։

100. «Բայց արշալույսի գիմացն էր նշանակետ»՝ Բայց արշալույսին զինվորները երևում էր, ցնծիր ցույց էր տալիս։

101. Իրչպես այս, այնպես էլ հաջորդ գերբայների մոտ ի նախկինը նպատակի գաղափար է արտահայտում։

102. Զրահք անել (անեմ)․ բանել, ձևորը գցել։

103. Վերացական թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել որպես անձական՝ մոլեգին։

104. Չի արտահայտված այն բայը, որից կախված է պատմական բացառականը՝ զինման։ Թարգմանելիս պետք է վերականգնել (պատմէին, ասէին)։

105. Որպես թե անմեղին, անմեղին լինելը։

106. Այստեղ տառերի սերտահարված լինելու իմաստով է։ Սրա խնդիրն է ի բանն, որ այստեղ պատմության, գրույց իմաստով է գործածված։ Այսինքն՝ «Ճարցուպեանք փառաւոր էր ի բանն՝ որ զնմանէ (պատմէին)»՝ Տոփանքով սիրահարվել էր այն պատմությունների, որ նրա մասին (Արայի մասին) պատմում էին։

107. Դիմավոր բայի իմաստով է գործածված՝ անվախաբար, հարվեց։

108. Ի նախկինը ամբողջ գրքույկի հայկական հոգևոր հետ՝ ժամանակի իմաստով։ «Եւ ի լինել նախատան...»՝ Ճակատամարտ լինելիս, երբ ճակատամարտ եղավ։

109. Մանուկ, այստեղ՝ զինվոր։

110. Լռությամբ բնակել է իր երկու յրացյալների միջև։ Տե՛ս նաև ծան. 61։

111. Նախդիրն այստեղ ժամանակի գաղափար է արտահայտում։

112. Մասնականերով ամբողջություն է։

113. Ամբողջ գերբայը հոլովականով՝ նպատակի պարագայի գերում։

114. Պատմական բացառական՝ կախված համբավել բայից։ «Համբավէ զնմանէ»՝ լուր է տարածում նրա մասին։

115. Լցին, այստեղ՝ կատարեցին։

116. Կանգնել (կանգնեմ), այստեղ անցողական նշանակությամբ է՝ կանգնեցնել։

117. Պատկեր, այստեղ՝ արձան։

118. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել նաչալ։ «Ջինի այսպիսաց իւրոց յաղթողութեանց...»՝ Այսպիսի հաղթող զորքերից հետո։

119. Անցյալ գերբայով արտահայտված բայական ամբողջություն է։

120. Վերացականը թանձրացականի փոխարեն։

121. Ող, այստեղ գործածված է եղանակի իմաստով։

122. Նշանի անդի տարվա մշտա երեք եղանակները՝ աշուն, ձմեռ, գարուն։

123. «Ի մասնս կոյս արեգակնանց»՝ Դեպի արևմուտք։

124. «Մակաւ ինչ ամփոփելով ի Տիգրանոյ»՝ Հրամանատարին նվազում մի քիչ թեթևած։

125. Միջօրեայ, այստեղ՝ հարավային. «ի միջօրեայ կողմանէ» եւ. հարավային կողմից։

126. Բացադրյն, այստեղ՝ ավելի հեռուն։

127. Թարգմանելիս պետք է վերականգնել ստորոգյալը՝ պարունակէր—ստա-



րունվում էր։ Ամբողջ նախադասությունը պետք է թարգմանել այսպես՝ և արևելից հարավ ավելի հեռուն տարածվում էր մի դաշտավայր և երկայնությունը հավասար՝ լեռան արևելյան կողմից իջնելով ծովի եզրը, ընդարձակ և գեղեցիկ ձորի նման։

128. «Ի ծառաղուծն գետոց զեռնանայինս»՝ Ծավալվում, գեղեցիկ գետեր էին հոսում, բարակե՝ ցանկացած ծավալմամբ սերմանում էին։

129. Պետք է վերականգնել ստորոգյալը՝ կային կամ էին։

130. Այսինքն՝ «Եւ լեառն մի փառաւորեալ»՝ Մի փոքր լեռ կար։ Այստեղ դույն անանցը համեմատական իմաստ չի արտահայտում։

131. Տե՛ս Դ., ծան. 335։

132. Այսինքն՝ իր իշխանությանը ենթակա ստրիկ տեղերից։

133. Արանասար գործառ. վարպետ բանվոր։

134. Արանապետութիւն, այստեղ՝ արհեստ։

135. Անել (անեալ զկատարումն)․ կատարվել։

136. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով՝ «ամենայ լինէին» եւ. բերվեցին, տառերը՝ բերված էին լինում, բերվում էին։

137. Ամբողջություն է, կարող ենք չթարգմանել. «Մինչև ցայսօր ժամանակի»՝ Մինչև այսօր։

138. Այստեղ ընդ և զաղղական բառերը գործածված են որպես գործողության անուն՝ ընդ. հիմությունն, ավագակությունն, ապաստանությունն, զաղղականութ. զաղթ, զաղթականությունը։ Ընդ այս դեպքում էլ ի նախդիրը հայկական հոգևոր հետ ժամանակի գաղափար է արտահայտում, որենն «ի ընդ և ի զաղղականս» կարող ենք թարգմանել ապաստանության և զաղթերի ժամանակ։

139. «Եւ երկ փառն առնել ըէտ առնէ լինելոյ»՝ նա երե պատահի, որ մեկը փորձի, այսինքն՝ եթե մեկը կամենա փորձել։

140. Ամբողջ գերբանակը չինելու։ Համար ևս թարգմանության մեջ կարող ենք փոխարինել նա գերանվամբ։

141. Մտ. Մալխասյանցն այս բառը փոխել է ադրեսա բառով և թարգմանել է կիր, որը շատ հավանական է (տե՛ս Խորենացու գրքի նրա թարգմանությունը, էջ 268, ծան. 60)։

142. Նկարեալ, այստեղ եւ. նկարի անկցած, նշանակված։

143. Առնել, այստեղ՝ բանանել։

144. Հավաքող հերթականների երկխոսում խոսակցելու բառը հայտված ձևով չի համեցվում։

145. Բազմապատիկ անձական դրական հետ նախադասությամբ հայտված ձևով, որը նախորդ հերթականների երկխոսում շատ հաճախակի է, իսկ նորաբնակյան համար է գործածում։

146. Յարբուցանեն, այստեղ՝ ասացին համար, ասացին նպատակով։

147. «...Եւ ոչ պատմել է կարողութիւն»՝ Եվ ոչ էլ կարելի է պատմել, պատմելու հնարավորություն չկա։

148. Խորենացու մոտ հաճախ է հանդիպում անձական համեմատական պարունակով գերադրական իմաստով, ինչպես այստեղ։

149. Վերադրել, այստեղ՝ վրան դնել։

150. Վերացականը թանձրացականի փոխարեն։

151. Համեմատություն կատարելիս նկատի է ունեցել պետքերը, որի վրա ժամ էին բանում, համարել ձևով հարթում էին և նույն ձևը սար միասով գրում ժամի վրա։

152. Ի գործուն առնել (առնիմ). գործունյա դարձնել, գործածել։

153. Ամառնային, ամառները, ամառ ժամանակ, ամառային եղանակին։

154. Ի խաղալ, գնալիս, երբ գնում էր։

155. Բազում ամառատանի. ամառանոցային քաղաք։

156. Սեռականով ենթակա՝ անցյալ դերբայի հետ։

157. Հասարակ, այսինքն՝ փառահեղ։

158. Նշ. աղավաղվում է, փոխվում է։

159. Փոյթ յանձին առնել (առնիմ). հոգ տանել։ Բնագրում ժխտական բնույթի է՝ հոգ չէր տանում։

160. Միջանկյալ նախադասություն է, նշ. ինչպես ասվում է, ինչպես պատմվում է։

161. Փոխ. «Չախտասէր և չարասէր բարս նորա»։ Բառը [illegible] ստորոգյալները դասավորված են նրա երկու կողմերում, իսկ համադասական (նաև) ընկնելով ստորոգյալներից մեկի և որոշյալի միջև՝ դրանց համաչափ է դարձնում։ Այսպիսի զուգադասությունը թեև գրաբարում հաճախակի է, սակայն նորմալ գրքում սովորական է։ Տե՛ս նաև ծան. 60, 61։

162. Ի նստել և ի մտել նստանել (նստանեմ). չափահաս և խելահաս դառնալ։

163. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի իմաստով։ Նախդիրն անկանել (անկանիմ) բայի հետ չի երկնված։

164. Այսինքն՝ «...թէ ուստի՝ և ո՛ւսկի եղեն»։

165. Նախադասություն ենթական է առնմիմ, որը գրաբարում հոգնակի է, ստորոգյալն էլ այդ պատճառով արտահայտված է հոգնակի թվով։ Աշխարհաբար թարգմանում ենք եզակի՝ տղաները փոխադրվում է։

166. «...էր Աստուծոյ դիմէ նորա»՝ նրանից գետը հեռացել էր, այսինքն՝ հունը փոխել էր։

167. Ձմեռը երկարելիս, երբ ձմեռը երկարում էր։

168. Դառնանալ, այսինքն՝ դրդաշունչ։

169. Հնուց, այսինքն՝ քաղի, հնադարյան քաղի։

170. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։

171. Որոշիչը և որոշյալը բաժանված են ստորոգյալով (որը գործածված է հրամայական եղանակով), «Ոչ ոստոր աշխարհիս բազմանոց կամարներ տեղայոյ»՝ Թագավորական տեղի համար բավականաչափ խմելիք (ջուր) չէր գտնվում։

172. Ի խնդիր եղանել (եղանեմ). որոնել, փնտրել։

173. Ամբողջական նախադասություն է. «Զորով պատ առնել Երուսաղէմ...»՝ Որը շրջապատում է Երուսաղեմը։

174. Միմյանց նկատմամբ լրացում և լրացյալ հանդիսացող Աթուրեան և գետ բառերը բաժանված են նաև ստորոգյալով։ Սա նորմալայն նաև սովորական երևույթ է։

175. Դերբայական նախադասություն է։ Անորոշ դերբայը պետք է թարգմանել դիմավոր ձևով. «...Մինչև դիմել քաղաք գնալոյն ի փորուածն»՝ Այնպես, որ գետի ջրերը հասնեն գետի փորվածքը։

176. Նշ. որպես խմելու ջրի (ըմպելիքի) պատրաստություն, հարմարանք։

177. Նորը տանջանքի մասին է, տանջանքը երկու անգամ էր։

178. Չնախիրս և պատանիս նույնանիշ բառեր են։



179. Ասել, այսինքն՝ պատմել։

180. Յարինել (յարինեմ). այսինքն՝ կառուցել։

181. Չ նախդիրը գործիական հոլովի հետ արտահայտում է շուրջ գաղափարը. այդպիսակերպ՝ գործածված է շուրջ նախադրությունը։

182. Ամբողջ նախադասության մեջ ստորոգյալն արտահայտված չէ։ Սա նորմալայն մեռ շատ սովորական երևույթ է։ Թարգմանելիս պետք է ստորոգյալ ավելացնել ըստ բովանդակության։

183. Այսինքն ասում մասնիկը հոգնակիության գաղափար է արտահայտում, այդևտում կամ այգևտանի նշ. այգիներ։

184. Այս նախադասության մեջ էլ ստորոգյալ չկա։ Ըստ իրր բառի իմաստի թարգմանության մեջ պետք է ավելացնել՝ նմանվում էր։

185. Այսինքն՝ «Նմանեմա էր»։ Համեմատը չի արտահայտված։

186. Վերջադաս թանձրացական փոխարեն։ Այսինքն նախադասության ստորոգյալը զեղչված է։ Թարգմանելիս պետք է վերականգնել։

187. Որոշիչը և որոշյալը բաժանված են ստորոգյալով, փոխ. «Եղանակէ գեղեցկերի յորսանս»։ Ամբողջ նախադասությունը թարգմանվում է այսպես՝ իսկ գետը բերան դարձած՝ ափերի բարձրություններով ներկայացնում է երկիրների շրթունքները։

188. Նախդիրը անգամփոփվել է նախադասության լրացման վրա, ուստի այսինքն ավելորդ է։

189. Առնում կյանք. արյունակից։

190. Պատմական բացառականով արտահայտված ենթակա՝ կախված առնել բայից, որից կախված է նաև հայցով դերբայական երկրորդական նախադասությունը։ «Բայց տանն զԵրուանդայ՝ բառ ևմայից դժնեայ զայ ական նայեցուածովս»՝ Բայց Երվանդի մասին ասում են, թե հմայքով չար հայացք ուներ։ Ասում են, որ Երվանդը կախարդական, չար հայացքով էր։

191. Ընդ նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։

192. Տրական հոլովով ենթակա՝ անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալի հետ (dativus cum infinitivo)՝ «...Սովորութիւն առնել սպասաւորացն աւնանի...»՝ Արքունի սպասավորները սովորություն են ունեցել։

193. Առնել (առնիմ) այսինքն նշ. բռնել, իսկ ըստ վերջ՝ ունենալ։

194. Տրական հոլովով ենթակա՝ անորոշ դերբայով արտահայտված ստորոգյալի հետ (dativus cum infinitivo), որտեղ ենթական իր ստորոգյալի հետ ներկայացնում է մի զարմանք, որը կախված է առնել ստորոգյալից և նրա լրացումն է։ Այդ զարմանքը թարգմանում ենք երկրորդական նախադասությամբ. «Ի հայեցուածոց զծնաւթեն առնէ արքայից որձաքար վիմացն»՝ Ասում են, որ որձաքար վեմերը պայթելիս են եղել՝ հայացքի չարությունից։

195. Սա զօրութիւն բառի սրողին է, որից ածանցված է այրել բառերով։

196. Գրաբարում սովորաբար հատուկ անունների ներգոյականի իմաստը արտահայտվում է դրանց հայցական հոլովի միջոցով (և ի նախդիրով)։ Զերաւան այսինքն հայցականով է, ի նախդիրը նրա մեջ ներգոյականի իմաստ է արտահայտում, ի Զերաւ նշ. Զերավում։

197. Յաղագս նախադրությունը միամտաբար վերաբերում է սատանական բառին։

198. Ոնի դիմավոր բայի նշանակությունն, որի մեջ ենթական դրված է սեռականով։ «Ըղղ առաւել Անհուսական...»՝ Մեհրուժանն խելք ունեն, տրամաբանական։

199. Պղղել (պղղիմ) այսինքն՝ խմոր տալ, ունկնդրել։

200. Այս հատվածը մեր ձեռագրերի երկուսում հանդես է գալիս տարբեր ձևերով։

201. Պատմական բացատրական՝ կախված ազդել բայից։

202. Որոշներ որոշներից անջատված է ստորակետով։ Այդ պատճառով էլ նախորդը կրկնված է։

203. Այստեղ նախատակիծ բայն է, չնայած անում, որը նշանակում է խնդալ, բացարձակ առաջ նետվել։

204. Այսինքն՝ «...Որ էր յազգէն Բագրատունեաց»՝ Որը Բագրատունիների ազգից էր։

205. Ռամկական հայցական ենթակա՝ անցյալ դերբայի մաս։

206. Այստեղ արժանի և ուղիղ համառոտ են։

207. Ծերխարացին առնել ենթակա. երկիրներից նշանակություն ցած դրել (հենքերին)։

208. Պետք է թարգմանել գրեթե այդ ձևով։

209. Շողել (շողիմ), այսինքն՝ շատ տալ, ետ գալ։

210. Տե՛ս ծան. 74։

211. Ի նախդիրը հայցական հոլովի հետ՝ գործիականի իմաստով։

212. Եւ անուանել, կարելի էր անվանել։

213. Վերացականը թանձրացականի փոխարեն։

214. Անխոցելի զէն. մարդը ասանց զէնքի Սրանք մարդկանց ձևերը էին, որոնցով զարդարվում էին զինվորականները՝ կրելով զանազան հագուստներ (ապարանջան, վահան և այլն) վրա։

215. Վիշապ էին կոչվում հռոմեական պատերազմական դրոշակները, որոնք երկնից վրա կրում էին վիշապի կերպարանք։

216. Իվ մասնիկով անորոշ դերբայը նախորդ հեղինակները շատ հազվադեպ են գործածում, իսկ ներկայացնում և մանավանդ նրան հաջորդող ձեռագրերի երկերում այդպիսի դերբայի գործածությունը սովորական է։

217. Տեսութիւն, այսինքն՝ տեսք, արտաքին տեսություն։

218. Փոխ. կարեկալ։

219. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։

220. Թափել, այսինքն՝ փրկել։

221. Տրական հոլովով ենթակա՝ պատճառ է մերաբերի բայի մաս։

## Է. ԵՂԻՇԷ

### ՎԱՍՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

1. Անսովոր արտահայտություն է։

2. Այստեղ բնութիւն բառը գործածված է բնավորության իմաստով, ուստի համարիչ է բառ՝ բառին։ Անսովոր արտահայտություն է։

3. Հարաբերականն արտահայտված է եզակի թվով, հոգնակիի փոխարեն։ Սա սովորական երևույթ է գրաբարում։ Պետք է թարգմանել հոգնակի թվով։

4. Եվ բառն այստեղ շաղկապ չէ, այլ եղանակավորող բառ, ստանում է իմաստ՝ անմ խոսք եւ, հենց մենք, հենց մենք էլ։

5. Սրանից պարզ երևում է, որ հեղինակը դեպքերը նկարագրել է իբրև ականատես։



6. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ՝ ժամանակի իմաստով։ Կարելի է թարգմանել դերբայական դարձվածքով կամ ժամանակի պարագա երկրորդական նախադասությամբ՝ վերադառնալիս, վերադառնալու ժամանակ, երբ վերադարձավ։

7. Հոգնակի թվով ստորոգյալ՝ եզակի թվով ենթակայի (ազգն) մասը։ Համաձայնությունը կատարված է բովանդակության սկզբունքով։ Աշխարհաբարում պետք է թարգմանել եզակի թվով։ Տե՛ս նաև Գ., ծան. 18։

8. Տիեզերքն բաղ-ստորոգյալի ուղիղ խնդիրն է՝ դրված տրական հոլովով։ Տիեզել բայը ներգործական սեռի է, բայց տրականով է խնդիրը ընդունում։

9. Որմիզդ մոգութ. մոգերի կրոն, այսպես էր կոչվում պարսիկների պաշտոնական կրոնը, որը հիմնադրել էր Զրադաշտ մոգը։ Իրենք՝ պարսիկներն այդ կրոնն անվանում էին դենի մազդեզն, իբր թե՝ իմաստության կրոն։

10. Եզակի հարաբերական (որ) հոգնակի հարաբերյալի մասը (ազատքն)։ Թարգմանելիս թվով պետք է համաձայնեցնել։ Տե՛ս նաև ծան. 3։

11. Սա Հայաստանում Արշակունիների թագավորության վերջին ներկայացուցիչն էր, որից հետո Արշակունիների թագավորությունը վերացավ (428 թ.)։ Արտաշիրից հետո Հայաստանում սկսվեց Վեհմիհրշապուհի մարզպանությունը։

12. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով (պատմական անցյալ)։ Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ ընկավ։

13. Դաևն այստեղ գործածված է հուրի իմաստով։

14. Այրումն. հենց այսպես, հանդիպում է նաև՝ այրեան ձևով։ Կցական բարդություն է, որտեղ արմատները միավորված են ու. և շաղկապներով։ Այդ կարգի նման գործածությունը գրաբարում չափազանց հազվադեպ է։

15. Տե՛ս Գ., ծան. 269։

16. Դրված է հոգնակի հայցականով։ Անցյալ դերբայը հոլովվելիս հոգնակի հայցականում ուղղականի Ք մասնիկը շատ հազվադեպ կարող է պահպանել, ինչպես այստեղ։

17. Արիքն խոսքը բերված է պատմագրաբար, առնչվում [illegible] է [illegible] գծերը՝ բաժինը, բաղադրյալ. փոխ. [illegible] բաժինը, բաղադրյալ. թափել, բաց թողնել, արձակել։

18. Վերացականը թանձրացականի փոխարեն։

19. Մծբինը քաղաք էր, որը գտնվում էր Միջագետքում, Նիզիբիս [illegible] վառակի մոտ։

20. Հասել անվան տակ այստեղ նկատի են առնված բյուզանդական հույները։

21. Տե՛ս Բ., ծան., 10։

22. Նկատի ունի Կոստանդնուպոլիսը։

23. Փոխ. իր։ Տե՛ս Գ., ծան. 334։

24. Այստեղ վախճանել (վախճանիմ) բայն է, ներգործական նշանակությամբ՝ սպանել։

25. Ճակատամարտին առնել (առնեմ), հարձակվել։

26. Ասա, այսինքն՝ անեղծված, համարիչ է ինչի բառին։

27. Անցյալ դերբայով արտահայտված բայական ստորոգյալ է։ Բայն անհեթեթ է կարդալ ձևով, չէր վայելում։ Ուղղում ենք ըստ Գ, Ժ, Լ, Ս, Տ ձեռագրերի ընթերցվածքի։ Տե՛ս պրոֆ. Ե. Տ.-Մինասյանի կազմած գիտական բնագրի նախաբանի հրատարակությունը (էջ 8)։

28. Անցյալ անկատար՝ անցյալ կատարյալի իմաստով։

29. Այսպես էին կոչվում մոգերը։

30. Մակրուչ՝ կազմված եղոր ածականի համեմատական աստիճանից և մասնիկի միջոցով։ Նորագույն հրատարակության մեջ հեղինակի ուղղականի ձևով է տրված՝ Եզրագույն։

31. Այս նախադասության մեջ յարոց և ի նոցանէ բառամիները նույն գործն են կատարում, ուստի մեկնաբանվելը ավելորդ է։ Պետք է թարգմանել մեկը միայն։

32. Մարտ եղեալ հարակատարական անցյալ դերբայը ավելորդություն է՝ կռվին պատրաստ էին մերը։

33. Սեռական հոլովով ենթակա է, որի ստորոգյալն է Բաղեալ եմենալ է։ Պետք է թարգմանել ուղղականով (որոնք), իսկ այդ դեպքում ստորոգյալը կլինի հոգնակի թվով (բաշել հանել են՝ խլել են)։

34. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Անբարշտություն բառը պետք է թարգմանել ածականով՝ ամբարիշտ, չար։

35. Սեռականով ավելադրություն է։

36. Նախդիրը կրկնված է բառ կանոնի։

37. Տե՛ս Գ., ծան. 282։

38. Տե՛ս Ա., ծան. 13։

39. Սահմանականի ներկան գործածված է պատմողական անցյալի իմաստով։ Ցասուցի եւ, արգելում և փակում էր, իսկ բառ գործածությամբ՝ արգելեց և փակեց։

40. Պետք է թարգմանել կոտորեմն. ներկան գործածված է ապառնի իմաստով։

41. Սեռականով ավելադրություն է։

42. Սահմանականի ներկան գործածված է պատմողական եղանակի ապառնի իմաստով։

43. Այս և հաջորդ բայերը պատմական անցյալի իմաստով են գործածված, թեև ձևով անցյալ անկատարով են արտահայտված։ Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ գրեց, ուղարկեց։

44. Արիք և անարիք. պարսիկներ և ոչ պարսիկներ։ Պարսիկները իրենց անվանում էին արիներ (էրան), իսկ ոչ պարսիկներին՝ անարիներ (անէրան)։

45. Վերացականը թանձրացականի փոխարեն։

46. «Արաճն գայր» ավելանում են բառ նորագույն հրատարակության մեջ հիշատակված Դ, Լ, Ռ, Տ ձեռագրերի ավելացները (էջ 10)։

47. Բայի դիմավոր ձևը հոգ է ընդունել։ Այլ օրինակներում բայը եզակի է՝ առանց հոգի։

48. Պետք է թարգմանել ըղձական ապառնիով՝ տանեն։

49. Սողար աշխարհը գտնվում էր Իրանի հյուսիս-արևելյան կողմում, բուրտասների երկրին կից։ Դիլամներ քաղաքն էր Դիլաշյանում։ Հին անվանումն է Սողդ չամ, եւ. վերին աշխարհ, վերին երկիր։

50. Սոյսանից աշխարհն. աղվանների երկիրը։ գտնվում էր այժմյան Սովետական Ադրբեջանի հյուսիս-արևմտյան մասում։

51. Կինեփ. կովկասյան ցեղ, որի անունով կոչվում էր երկիրը, որի տեղը որոշակի հայտնի չէ (Մ. Աբեղյանը ենթադրում է Ալբանիայի Կալխեթը)։

52. Սաղզեից աշխարհն. նույն համախմբում երկու անգամ հիշատակված այս անգամները բառ բանաձևերի ավելացումների մի երկրի անուն չէ այլ՝ երկու. Առաջինը գտնվում էր Կովկասում (Սողդր—Սուտեր), իսկ մյուսը ընկնում էր Կորդվաց աշխարհից հարավ։ Տիգրիս գետից արևմուտք։ Տե՛ս Եղիշէի Նորագույն թարգմանության (Ե. Տ.-Մինասյանի) 26-րդ ծանոթությունը, էջ 271։



53. Կողպուոց աշխարհն կամ Կուրճէք. Մեծ Հայքի նահանգներից (աշխարհ) մեկն էր, առհանձինվյալ Կարինապատից։

54. Աղձնիք. Մեծ Հայքի նահանգներից մեկը։

55. Մեր հին հեղինակները Տանիստան անվանումով նկատի ունեին Արաբիան։

56. Սա ենթադրվելով որպես գրիչի երկրի անուն այլ և այլ օրինակներում գրվել է Գողթ ձևով։ Ե. Տ.-Մինասյանն առաջարկում է Դյանի ուղղել Դյան ձևով (տե՛ս Եղիշէի աշխարհաբար թարգմանությունը, ծան. 29, 71)։ Այսպես էլ նա ուղղել է բնագրի գիտական հրատարակության մեջ (էջ 10)։

57. Արզնարզին. ճիշտ տեղը հայտնի չէ։ Ենթադրում են, որ Աղձնյաց աշխարհի Արզն կամ Արզն գավառն էր։

58. Հույները քարքարոս էին անվանում օտար ցեղերին ու ժողովուրդներին։ Եղիշէն էլ գործածում է ոչ պարսիկ ցեղերի ու ժողովուրդների իմաստով։

59. Սեռականով ավելադրություն է։

60. Զերկեամ մի. մի երկու տարի, երկու տարու չափ։

61. «Փոխանակ եռցաւ» նորանց փոխարեն։

62. Նույն նախադասության մեջ կրկնությունը և բազմությունը բառերը գործածված են միևնույն իմաստով, ուստի թարգմանելիս կարելի է թողնել դրանցից մեկը։

63. Այսպես էին կոչվում կովկասյան հոները։

64. Փոխարինել է իր դերանվանը։ Տե՛ս Գ., ծան. 354։

65. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել որպես ածական՝ զինվ.

66. Մոգ բառը հոլովման մեջ տատանումներ է տալիս։ Հենց նույն բնագրում կա նաև Ա. հոլովիյով։

67. Հատկացուցիչը դրվել է երկու հոմանիշ հատկացյալների միջև։

68. Հարաբերյալը (Նոցա) չի արտահայտված։ Սա գրաբարում սովորական է։ Թարգմանելիս պետք է վերականգնել։

69. Այստեղ նախդիրը եզակի տրականով ժամանակի պարագա է արտահայտում՝ միանգամից։

70. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել ազատը։

71. Այստեղ Ն շաղկապը ներհակական հարաբերություն է արտահայտում։ Պետք է թարգմանել իսկ կամ բայց։

72. Հարաբերյալի նախդիրը անցել է հարաբերականի վրա։ Փոխ. «Ի եմն ոչ մեծն է Իմն զանձնոյն»՝ Այն որը մեջ, ով բոլորից մեծն է։

73. Վերացականը թանձրացականի փոխարեն, փառասիրությունը պետք է թարգմանել խառնաշփոթ մարդասիրությունը։

74. «Մինչև ուրուժ ի նա ժխձալ...»՝ Դեռ մեկը նրա վրա չհասած։

75. Վերացականը թանձրացականի փոխարեն՝ իր չար մարդը (մանդրություն)։

76. Սեռականով ավելադրություն է։

77. Անարի. այստեղ՝ վարիկոս, թույլ, թուլամորթ։

78. Սեռական հոլովով ենթակա է՝ անցյալ դերբայի մասն։ Պետք է թարգմանել ուղղականով։

79. «Մատուսցէն ի փորձութիւն տանջանացն»՝ Ենթարկեն տանջանքի։

80. Անցյալ դերբայը դիմավոր բայի նշանակությամբ։ Պետք է թարգմա-

նել գիմավոր ձևով։ Քաղաքին տանել. նկրել, բռնաքարքիճ [illegible], այսպես՝ ներքև։

81. Այստեղ գործածված է՝ խրատով, խրատի համաձայն։

82. Անցյալ անկատարը անցյալ կատարյալի իմաստով է գործածված։

83. Դան. այսինքն՝ անդուլ, [illegible]։

84. Նախադիրը կրճատված է։

85. Խոնջան. [illegible] կոչը։ Խոնջան [illegible] Պարսկաստանում բնակված պատմի ձևերից մեկն էր։ Դա անում էին պատիվ կրողին տոնաբար [illegible] հրամանով։

86. Կրկնությունը հեղինակի թվով՝ բազմազանության, շատության իմաստով, [illegible] նշ. այլևայլ գնդեր, շատ գնդեր։

87. Սեռականով ամփոփագրություն է։

88. Նախդիրը կրճատված է։

89. Բառը հեղինակի թվով է գրված։ Այստեղ հոգնակիությունն արտահայտված է այլ մասնիկներով՝ անի (առավանի), նան (նախարարեան)։

90. Այստեղ և շարունակության մեջ շատ տեղերում անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով։

91. Նկատի ունի Ներսեհ [illegible] դաշտը։

92. Ենթադրվում է, որ Տղմուտ գետը Մակու գետն (Մակու-չայ) այժմ կոչվածն է երեք։

93. Համընկնում է նաև առանձին ձևով։

94. Եվ բայը երրորդ դեմքով անորոշ դերբայի հետ գործածվելով՝ արտահայտում է կարելիության, անհրաժեշտության իմաստ։ «Եւ եղ էր տեսանել»՝ Այնտեղ կարելի էր տեսնել, պետք էր տեսնել։

95. Շատաց և տարիեաց համանիշ են։ Այդ պատճառով էլ բնագրում վերջինն արտահայտված է ամփոփագրությամբ։

96. Համանունության բազմաթիվությամբ։

97. Խաղալ, այսինքն՝ ժամանցի վիճակում չլինել շարժումներ անել, թռչել։

98. Այսպես էր կոչվում պարսկական զորքի ամենաընտիր գունդը։

99. Անցյալ դերբայով արտահայտված ամփոփագրություն է։

100. Սեռականով ամփոփագրություն է։

101. Բաղաձայնյալ ժամանակ՝ լինել (լինիմ) բայով և անցյալ դերբայով, որոնք դերբայները ևս հեղինակի թվով են գրված։

102. Վերացականը թանձրացականի փոխարեն։

103. Այս կարգի բառերը թեք հոլովներում նույն անանցով չեն հոլովվում, այլ հանդես են գալիս ձևափոխումներով, ինչպես ցույց է տրված բնագրի § 74-ում։

104. Ռամիկի ապառնին գործածված է ներկայի իմաստով։

105. Սակայնակոչը ի հոլովմամբ է՝ կրանոտագունից (կամ կրանոտագունից)։

106. Այստեղ հոգի դեր է կատարում։

107. Վերացականը թանձրացականի փոխարեն, «զգեստ ծառայութեան» նշանակ բառը։

108. Այլաբերականի նման է գործածված։

109. «Մի՛ ճանաչեն էր ճանաչողաց»՝ Բայերը մի անանց գլխավ ունենին։ Եվ բայը սեռական հոլովի մասը՝ ունենալու նշանակությամբ։ Տե՛ս նաև Դ., ծան. 5։



110. Վերացականը թանձրացականի փոխարեն, անուրիե՛ ան, թշուրիե՛ թուխ։

111. Այս բառը գրաբարում երկու ձևով է գրվում՝ կրտանս, կրանս։

112. Ամուր, այսինքն՝ ամրոց։

113. Այստեղ ևս առացական իմաստ ունի՝ յուրաքանչյուրն իր, յուրաքանչյուրն իրենց։

114. Սա ուղիղ բառն է, որը կա նաև ուղիղ ձևով։ Այս վերջին ձևում ի-ն չնշտակորույս լինելով՝ ավելում է։

115. «Ամուլ նուաճ և նուաստ» նշ. համառոտ և (իրար) համաձայն ամուլներ։ Այստեղ համեմատություն է կատարված։

116. Տե՛ս ծան. 32։

117. Բայական ածականություն՝ ցիմավոր ձևով։

118. Սաստամանիմ, այսինքն՝ սաստիկ։

119. Սաղին բառը հեղինակի ուղղականում հանդիպում է երկու ձևով՝ ծաղկունք և ծաղիկք, որոնք թեք հոլովներում հոլովմամբ ու ձևով տարբերվում են՝ ծաղկունք—ծաղկանց, ծաղիկք—ծաղկաց կամ ծաղկաց։

120. «Նգէտալ կուրացան» այստեղ նշ. բուրումին պարզորեցին։

121. Նախդիրը կրճատված է։

# Ը. ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

1. Այստեղ վինակ բառը գործածված է բաժին նշանակությամբ, սակայն մասն բառը համանիշ է նրան և դրված է որպես ամփոփագրություն (սեռականով ամփոփագրություն)։

2. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղական հոլովով։

3. Անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով։

4. Տե՛ս Բ., ծան. 10։

5. Անցյալ դերբայով ամփոփագրություն է։

6. Սեռական հոլովով ենթակա, որով և սրբագրվում են առաջացյալի դեմքն ու թիվը, սակայն թարգմանելիս ենթական պետք է դնել ուղղական հոլովով, իսկ բայատարբերակը՝ հոգնակի թվով և առաջին դեմքով։

7. Անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով՝ թողել։

8. Փոք վերը հոլովված է ի հոլովիչով։ Համընկնում է նաև ուրիշ հոլովներով։

9. Այս և հետևյալ բառերի մեջ ամեն բառը գերադրականի իմաստ չի արտահայտում, այլ նշանակում է ամեն ինչ, ամեն բան, այսպես՝ ամենաբույս, ամեն ինչ բուսնող, որտեղ ամեն բան բուսնում է, ամենաբուղխ. ամեն բարիք արտադրող և այլն։

10. Այստեղ նկատի ունի լեռները։ Ստորև հարաբերականը վերաբերում է նախորդ նախադասության գլխավոր բառերին, թեև երկու նախադասությունները անջատված են վերջակետով։

11. Վերացականը թանձրացականի փոխարեն։

12. Նախդիրը կրճատված է։

13. Փոխ. «Զօրացուցանէն և նորոգէն զզաւրութիւն խելացն»: Ուղիղ խնդիրն իր հատկացուցիչով ընկնել է երկու ստորոգյալների միջև։

14. Սեռականով ամփոփագրություն է։

15. Այստեղ նշանակում է ձգտող, ջանացող։

16. Առ նախդիրն առանց քերականական իմաստ ավելացնելու հանդես է եկել զ և ընդ նախդիրների միջև։ Այստեղ զ նախդիրը վերաբերում է օգուտ բառին, իսկ ընդ նախդիրը՝ եկեր բառին։ Տե՛ս նաև Զ., ծան. 10.

17. Փոխ. ի նոցանէ:

18. Փոխ. յցուցանէն: Ենթական է զնոցա, որի մոտ ստորոգյալը հոգնակի թվով պետք է լինի։

19. Նախդիրն ավելորդ է։

20. Ի նախդիրը կրկնված է։

21. Ի նախդիրը կրկնված է։

## Բ. ՍԵԲԷՈՍ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Պատմական բացառական՝ կախված ամբաստանութիւն բառից։ Վերջինիս մեջ նկատի է առնված բայական բովանդակությունը, գործողության իմաստը՝ ամբաստանել, մեղադրել։ Ամբաստանել բայի մոտ բացառականով և զ նախդիրով խնդիրը սովորական է։

2. Պաշտպանել (պաշտպանեմ) բայը տրականով խնդիր ունի (հնարավոր)։ Նրա այսպիսի խնդրառությունը գրաբարում սովորական է։

3. Տե՛ս Գ., ծան. 209։

4. Օր. իշխան, ավտան, այստեղ գործածված է որպես տարածության չափի միավոր՝ մի իշխանով հեռու, մի օրվա ճանապարհի չափ հեռու։

5. Այստեղ գործածված է որպես նախադասություն։

6. Ու եւ անց. կատարյալով պետք է թարգմանել՝ սաստ.

7. Եսոյ անցյալ դերբայը բաղադրյալ ժամանակ է կազմել եմ բայի հետ. Սակայն դրանք ընդմիջված են ու և արդեոք բառերով։ Եմ բայը ստորադասականի ձևով՝ ներկայի իմաստ է արտահայտում։ Դա սովորական երևույթ է հայերեն երանգի նախադասությունների մեջ։

8. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել որպես անտականի՝ թագավորական։

9. Ստորադասականի առաջին ապառնին սահմ. ներկայի իմաստով հարցական երանգի նախադասության մեջ։

10. Մեր առաջական գերանունը գործիական հոլովում երբեմն թվով չի համաձայնում գոյական անվան հետ, ինչպես այստեղ։

11. Վերացականը թանձրացականի փոխարեն։ Պետք է թարգմանել սատ:

12. Այստեղ մակբայ է։ Չպետք է շփոթել այս դերանվան անուական հոլովի հետ։ Նշ. այստեղ, գնալ այստեղ։

13. Նախորդ հեղինակների երկերում հանդիպում էր ի խոնարհիչով՝ առ-նակել ձևով։ Դա խորթ չէ գրաբարին։ Սեբեոսը երկուսն էլ զուգահեռաբար գոր-ծածում է։

14. Նշանակել (նշանակեմ) այստեղ նշանակում է նշան անել, նշան տալ:

15. Մի՛թէ, այստեղ՝ չլինի՞ թե։



16. Սահմ. ներկան գործածված է ստորադասականի երկրորդ ապառնու իմաս-տով՝ մեռնի, ապրի (չլինի թե մեռնի... ապրի)։

17. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում։

18. Նույն համաձայնում հանդիպում է տարբեր հոլովներով՝ Մուշեղի Մուշեղայ։

19. Գործածված է որպես եզանակավորող բառ, և ո՛չ որպես բայ, ինչպես աշխարհաբարում։

20. Ստորադասականի առաջին ապառնին սահմ. ներկայի իմաստով՝ գոր-ծածված թեական երանգի նախադասության մեջ։

21. Թերևս բառ է թողնված տալ բայը, որի խնդիրն է պատուհաս բառը։

22. Գործածված է խնդիր դերանվան իմաստով։ Զ նախդիրով և գործիակա-նով խնդիր է՝ առնչանել բայի մոտ։

23. Նախդիրն ավելորդ է։

24. Ըստ կիրառության պետք է թարգմանել նաստով։

25. Տրական հոլովով ենթակա է՝ անորոշ դերբայով արտահայտված ստո-րոգյալների մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով, իսկ անորոշ դերբայները՝ դիմավոր ձևերով։ Այսպես. «...Մի՛ երբեք այնման բազմութեամբ, այլ բազմացոյն նուազեցանել զնոսա, և նմա տանել առանցն յանձնիման լինել առ մայն» (Որ) եւ այնքան բազմությամբ չգնա, այլ նրանց (իր հետ եղողներին) ավելի հեռու (անդում) նստեցնի և քիչ մարդկանցով ներկայանա արքային։

26. Պետք է թարգմանել դիմավոր ձևով, իսկ ենթական՝ ուղղականով (նա-քա՛ նա)։

27. Համաձայնության բացառությամբ։ Տե՛ս նաև Դ., ծան. 188։

28. Այստեղ նախադրություն չէ, այլ՝ գոյական անուն, նշ. մեջքից։

29. Այստեղ ս-ն ավելորդ է։

30. Օժանդակ բայի դեր է կատարում, անցյալ դերբայի հետ բաղադրյալ ժամանակ է կազմել։

31. Այստեղ ս-ն հոդ է և ո՛չ հոգնակի հայցականի հոլովակերտ։

32. Ավելի հեշտ կլինեի՝ «Եւ նա հրաման մեռոյ ի մանկանցն բերանոյ...»։

33. Թողուլ բայի հրամայականն է, սակայն այստեղ գործածված է որպես եզանակավորող բառ։

34. Բայական ամփոփագրություն՝ դիմավոր ձևով։

35. Պետք է թարգմանել դիմավոր ձևով, իսկ ենթական՝ ուղղականով՝ նա չկամեցավ։

36. Սովորական է զ նախդիրով՝ զգնահատարան խոս:

37. Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ ավեր, հրաման ավերի։

38. Այս վերջին գիտում ես գերանվամբ (նոսա) հեղինակը նկատի ունի Մուշեղին, իսկ առաջին գիտում՝ արքայի թիկնապահին։

39. Սեռական հոլովով ենթակա՝ անորոշ դերբայի գործիական հոլովի մոտ։ Սա առակավորվել օրինակներից մեկն է։ Տե՛ս նաև Զ., ծան. 94։

40. Ճիշտ նույն հեղինակի մոտ հանդիպում է նաև Ռ. հոլովիչով՝ նա-բովա։

41. Թարմատար է, գործածված է որպես զարդ։

42. Թարգմանելիս պետք է ժամանակները միօրինակ դարձնել։ Առաջին ստո-րոգյալն արտահայտված է անցյալ կատարյալով (բնկայաւ), որանք ևս այդ ժա-մանակով պիտի թարգմանվեն։

43. Բայական ամփոփագրություն է՝ զնաց դիմավոր ձևի մոտ։

44. Տանուտերական տունը Հայաստանի հարավային մասն էր, որն անցել էր Բյուզանդիային։

45. Այդ երկրը կոչվում է Հրազդան, այժմյան Զանգու գետն է։

46. Խոսքը Կոտայք գավառի մասին է։

47. Բզնունյաց ծով էր կոչվում Վանա լիճը։

48. Անհատական կամ Անհատ ատոմ. Հին ավան Վասպուրականի Աղբակի գավառում, Վանա լճի հյուսիսում։

49. Նույն Կողոփոն է, գտնվում Հին Հայաստանում՝ Արարատից հյուսիս-արևմուտք։

50. Դյուղ՝ Մանկու քաղաքի մոտ։ Ենթադրվում է, որ դա Հայաստանն է, որը գտնվում է Մանկից 15 կիլոմետր հեռավորության վրա։

51. Է վերջավորությամբ հրամայականի ներկան հատուկ է բարբառներին՝ ժողովէ՛, հրամայէ՛. փոխ. ժողովիր՛, հրամայիր՛։

52. Այս նախադասության մեջ աոր. ներկա ժամանակով գործածված բոլոր բայերը ստորադասական եղանակի ապառնի ժամանակների իմաստով են։ Այսպես կարելի է թարգմանել աշխարհաբարի բաղձական և պայմանական եղանակների ապառնիներով։ «...Որդ մեռանին՝ բյուրավոր մեռանին. և որդ սպանանեն՝ գրչնամիս սպանանեն»՝ եթե մեռնեն, թշնամիները կմեռնեն, և եթե սպանեն, թշնամիներին կսպանեն։

53. Փոխ. ա՛յ քեզ։ Ներկան ապառնու դեր է կատարում։

54. Թարգմանիչները պետք է վերականգնեին հարաբերյալը (նորա)՝ «...Մանավանդ Եկեա՝ որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր»՝ Մանավանդ նրանք, որոնց երկիրը նրա իշխանության տակ էր։

55. «Հասարակ վեհով» վերագրվում է. այստեղ կրավ. նշանակությամբ է։

56. Սա հոմարքն բառ է, եր. գաղտնամարտ կռիվ։ Դասադաշտավորների զավակներ կռիվը ցցելը պատճ մի գաման են էր Բյուզանդիայում։

57. Սերխուի ժամանակ գետ մեր այբուբենում ֆ տառը չկար։ Այժմ այդ հնչյունը մենք գրում ենք ֆ-ով՝ Աֆրիկա։

58. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

59. Ի նախդիրն այստեղ հայցական հոլովի հետ տրականի իմաստ է արտահայտում (նախդրիվ տրական), երկու հոմանիշ մարդկանց։ Տալ բայի մոտ ավելի սովորական է ց նախդիրի գործածությունը, թեև ի նախդիրի գործածությունը բացառված չէ։

60. Խաղտիք-ը բնակած էր Սև ծովի հարավ-արևելյան ափերին, Փարխար լեռների մոտ։

61. Փոխ. լինին, ենթական հոգնակի է՝ իւրն:

62. Այստեղ ճառանել բայը ապառնու դեր է կատարում. «...Մի՛ և ճոգա ճառայել մեռանել...»՝ Նրանք էլ չմեռնեն։

63. Ենթական հոգնակի է՝ ձանէ, ուստի ստորոգյալը ևս հոգնակի թվով պետք է լինի՝ ասէ ասենին։

64. Պետք է թարգմանել մյուս ստորոգյալի ժամանակով՝ անցյալ կատարյալով։

65. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

66. Անձն, այստեղ՝ մարմին։

67. Տեղի, այստեղ՝ տեղ։

68. Նախդիրը կրկնված է։

69. Սեռականով ենթակա է՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։



70. Դերբայական նախադասություն է։ Նման բոլոր դեպքերում պետք է թարգմանել դիմավոր ձևով (անցյալ կատարյալով), կամ վերջինս միայն անցյալ կատարյալով, իսկ մյուսները՝ անորոշ դերբայի գործիական հոլովով։

71. Պետք է թարգմանել արձակեցին, բաց թողեցին։ Դերբայական նախադասության ստորոգյալն է՝ արտահայտված անցյալ դերբայով, ունի՝ դիմավոր նշանակությամբ։

72. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ սատկեցրին, սպանեցին։

73. Բուն նախանձել (նախանձեմ) հարաբերական բայի խնդիրն է՝ զ նախդիրով և բացառականով։ Տե՛ս նաև Գ., ծան. 151։

74. Այստեղ ենթական փոխվում է (նա՝ Սմբատը), նախորդում ենթական է զորք. ատոր յոգնեալ դերբայը պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ հոգնեցին։ Այս բառը հանդիպում է զուգահեռ ուղղագրությամբ՝ յոգնել (իմ) և յոգնիլ (իմ)։

75. Բուն նախանձել (նախանձեմ) բայը սովորաբար զ նախդիրով և բացառականով խնդիր է ընդունում (տե՛ս վերը), սակայն երբեմն հանդիպում է ի նախդիրով և հայցականով խնդիր, ինչպես այստեղ։

76. Այս, նախորդ և հաջորդ նախադասությունների մեջ շատ տեղերում անցյալ անկատարը գործածված է անցյալ կատարյալի իմաստով։

77. Տե՛ս ծան. 41։

78. Համաձայնությունը կատարված է բանաստեղծության օրենքով. ենթական է արդարև. իսկ շարունակության մեջ ենթական է ամբոխ բառը, որը, սակայն, իր տեղում չի արտահայտված, այլ հասկացվում է այս նախադասության մեջ։

79. Պետք է թարգմանել կատարյալով՝ եկավ։

80. Այսինքն՝ առաջ, առաջ ժամանակ։

81. Առաջին նախադասության մեջ խոսվում է Սմբատի մասին (...), սակայն առանց ենթական փոխելու հեղինակը շարունակել է հաջորդ նախադասությունը, որոնց ենթական արտահայտված չէ։ Ճարտասանության մեջ բառ բազմանդամության պետք է ընդունել բազմաթիվ բառը և այդպես թարգմանել՝ «...Եւ անուանեալ էր զնա իւր յարգելիս» եմ (Թագավորը) նրան (Սմբատին) իրեն որդեգիր էր համարել։

82. Ի նախդիրը գործածված է հայցական հոլովի հետ, սակայն տարբեր նշանակությամբ. լուսացումն բառի մոտ նպատակի պարագա է արտահայտում (լուսացնելու), իսկ քաղաքիս բառանիշ մոտ ուղղություն է ցույց տալիս (ուղղորդման հայցական՝ դեպի քաղաքը)։

83. Կամք բառը դրված է բացառական հոլովով, սակայն արտահայտում է գործիական հոլովի իմաստ։

84. Սա այժմյան Եղվարդ գյուղն է՝ Աշտարակի շրջանում։

85. Դավթա Հին Հայաստանում, որն ընկած էր Կողոփոն գավառից դեպի հյուսիս-արևմուտք։

86. Այս նախադասության ենթական չի արտահայտված, սակայն բառ բովանդակության աշխարհաբար թարգմանելիս պետք է ավելացնել խոսող բառը։

87. Բայական ավելցությունն՝ անցյալ դերբայով։

88. Հոգնակի թվով ստորոգյալ՝ եզակի թվով արտահայտված ենթակայի (զոր) մոտ։ Համաձայնեցությունը կատարված է բովանդակությամբ։ Տե՛ս նաև Գ., ծան. 188։

89. Դերբայական նախադասություն է։ Անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալը պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ հասեալ, հասավ։

90. Չ նախդիրն ավելորդ է։

91. Սա ամրացված կետ էր այն սահմանագլխային գծի վրա, որը Հայաստանը բաժանում էր պարսկական պետության և Հռոմի միջև։

92. Բայը չի արտահայտված (է—...), «Ծառայեմ» էր պատշաճ նույնը։ Թարգմանելիս պետք է ավելացնել։

93. Ավան՝ Արաքսյան գետի մոտ, հայտնի է նաև Արտագերս (Արտագերս-բերդ) անունով։

94. Ստորոգյալ է՝ արտահայտված անցյալ դերբայով։ Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ հասավ։

95. Սեռական հոլովով ենթակա՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

96. Խոսքը Եփրատի ափին գյուղի մասին է, որի անունը որոշակի չէ։

97. Հայտնի է նաև Արշեմա անունով, գյուղաքաղաք էր Եփրատում, Արածանի գետի վրա, ուներ ամուր բերդ։

98. Ավելի ճիշտ կլինեն գնոանգեաւ, որովհետև ուղիղ ձևն է գնոանգի, թեև ճիշտ ձևն էլ բացառված չէ, մանավանդ որ ի նախդիրը անփոխարեն հանդիպում ենք նաև այլ հրատարակությունների մեջ, ինչպես՝ գնոանգարաւ, գնոանգաւքն։

99. Արհամ բառը, որ գործածել է Սեբեոսը, անհասկանալի բառ է հայերենում։ Պրոֆ. Հ. Աճառյանը թարգմանում է մանգաղ։

100. Սա նույն սերի բառն է, կա նաև սեիր ձևով։

101. Անտանելի ավելորդություն է։

102. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ փախավ։

103. Այստեղ հոդի դեր է կատարում։

104. Այստեղ կրավորական նշանակությամբ է՝ բռնվում էր։

105. Փոխ. այսոստէն յայնմիկս։ Սովորական գերանունը հոգնակի է, ուստի փոխված անունը պետք է ունենա համապատասխան ձև։

106. Փոխ. յԱսորեստանեայս։ Բացառական հոլովական է, ուստի պետք է ունենա համապատասխան վերջավորություն։

107. Փոխ. գՃՃնամբՐ։

108. Բաղադրյալ ստորոգյալի հանգույցը (էր) չի արտահայտված։ Թարգմանելիս պետք է ավելացնել։

109. Այս դերբայները, որ կախված են ստորոգյալից, պետք է թարգմանել դիմավոր ձևերով, նախադասությամբ գործնեկով բառը։ «Առաջին ոչ ունել պատերազմ, այլ բազում զորքով և երթալ խաղաղութեամբ»՝ հասցին, որ չեն պատերազմի, այլ կհագնեն բերդը և կգնան խաղաղությամբ։

110. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։

111. Տե՛ս Դ., ծան. 115, 116։

112. Այս բառը հանդիպում է միայն այստեղ։ Պրոֆ. Հ. Աճառյանը ենթադրում է, որ կարող է նույնը լինել արմաղ, կոմաղ բառերի հետ (անկումային ձևով)։ Հետևաբար նշանակում է անվարժ։ Տե՛ս «Հայերեն արմատական բառարան», Անկումայ բառի տակ։

113. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

114. Դերբայական նախադասություն է, ստորոգյալն արտահայտված է անցյալ դերբայով, իսկ ենթական՝ սեռական հոլովով, առաջինը պետք է թարգմանել դիմավոր ձևով, իսկ երկրորդը՝ ուղղական հոլովով։

115. Դշխանորդին, այսինքն՝ իշխանուհի։



116. Դուռն, այսինքն՝ պալատ։

117. Վերացականը թանձրացականի փոխարեն, թարգմանվում է որպես անդականի՝ բարքը։

118. Փոխ. կարծիլ (ենթակա է), այսինքն՝ կը. կամեցան։ Անցյալ դերբայով արտահայտված ստորոգյալը (կարծել) պետք է թարգմանել դիմավոր ձևով։

119. Բասեն, հանդիպում է նաև Բասեան(Ը) ձևով, Այրարատի գավառներից մեկն էր։

120. Այս քաղաքի անունը, բոլոր բառարանների, հանդիպում է միայն Սեբեոսի գրքում։ Տեղը որոշակի չէ։

## Ժ. ՅՈՎՀ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՕՆՈՅ

1. Ամուր, այսինքն՝ ամրոց։

2. Այլ կերպ կոչվում է Դարձոր, հին ամրոց Տարոնում։

3. Նշանավոր գետ է, բխում է Նպատ լեռից հարավ-արևմուտք։ Նույն բնագրում հանդիպում է նաև Դոզրո անունով։

4. Փոխ. սամս նոխազ։ Մամիկոնյանի մոտ հայերեն ուղղականն և հայցականն նույնացնում հաճախակի են։ Այդ հանդիպում է հատկապես անձնական բառերում։

5. Նույն նախադասության մեջ գործածված է նաև «Ներկայով անցած» արտահայտությունը, որն այսինքն նույն իմաստն է արտահայտում, ինչպես պարզեց բառը, ուստի պետք է թարգմանել դրանցից մեկը։

6. Ի մոյն ունել (ունիմ). մտքում պահել, հիշել։

7. Սեռական հոլովով ենթակա է՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով։

8. Գավառ էր Տուրուբերանում, որը համապատասխանում է Մանազկերտին։

9. Հաշտեանք էր կոչվում Չորրորդ Հայքի գավառներից մեկը, ընկած էր Ծոփքի և Բալահովտի միջև։ Այս հատված անունը բառ նախադասության մեջ կատարում պաշտոնի պետք է արտահայտվեր հայցական հոլովով (ուղղորդման հայցական), ուստի պետք է լիներ Հաշտեանս։ Ուղղական հոլովները գործածվել է որպես հայցական, որը այս հեղինակի մոտ հաճախ է հանդիպում։

10. Սահմանական եղանակի ներկան գործածված է պատմողական եղանակի պատմելու իմաստով, առաջ ու (իսկ ստացվի՝ ...է), գնալ, կգնա (իսկ ստացվի՝ գնում էր)։ Այս երևույթը Մամիկոնյանի մոտ այնքան հաճախ է հանդիպում, որ բարբառային առանձնություն է թվում։

11. Նույն համատեքստում, այս հատված անունը հանդիպում է տարբեր ուղղագրությամբ՝ Վախտանգ, Վաղտանգ։

12. Նման բարդությունների մեջ ա հոդակապի սղումն ավելի հաճախ է բարբառներին, փոխ. Զինակիրս։

13. Նախորդ բայ-ստորոգյալը անցյալ կատարյալով է, ուստի սա էլ պետք է թարգմանել նույն ժամանակով։

14. Տրականով է արտահայտված։

15. Այս հեղինակի մոտ առարկայական հոգնակի կիրառությունն սովորական խառնություն է։

16. Կարող էր լինել նաև պատմական բացառականով՝ զՄանուանէ, յանկ բառի մոտ։

17. Գրաբարում սովորականն է լսաւ։ Այստեղ աշխարհաբարի նման է, միայն 2-րդ գծիկի -իր վերջավորության փոխարեն ունի -եր (ինչպես գրաբարում, բայց ոչ այս բայում)։

18. «Ելէ» ասելը հարազատությունն ընդմիջված է նրա առարկայով։

19. Փոխ. «ի միասին» կամ «ընդ ինքն»։

20. Պետք է թարգմանել իմ այդ հայրը, այստեղ դ-ն ստացական կամ դիմորոշ հոդ չէ։

21. Տե՛ս Գ., ծան. 98։

22. Անձնավորությամբ է գործածված։

23. Սահմ. ներկան գործածված է սաստկ. ապառնու իմաստով։ Պետք է թարգմանել կսպանի (իսկ սպասողի՝ սպանում է)։

24. Լեռ Տարոնում։

25. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

26. Ավելի սովորական է Արամանից։

27. Սա մեր բառն է, որ նշ. ցեխ, տիղմ, տղմուտ անդ։

28. Այստեղ հոդի դեր է կատարում։

29. Հոդը պակասում է, փոխ. «յառաջոյն յայնմիկ»։

30. Գրաբարում սովորաբար նման դեպքերում գործածվում է հատանել բայը, որին պետք է լինեք նկատ։

31. Սահմ. ներկան գործածված է սաստկ. ապառնու իմաստով։ Տե՛ս նաև ծան. 10։

32. Անտանելի ավելորդություն է։

33. Աղիդ խաղերը չի արտահայտված։

34. Սահմ. ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնու իմաստով։ Տե՛ս նաև ծան. 10։

35. Այստեղ դ-ն ցուցական հոդ է, անուանց այդ անունը։

36. Թարգմանելիս պետք է ավելացնել հարաբերյալը (նորա), այսինքն՝ նրանց նման, որոնք անտառներն են կտրում, անտառներ կտրողների նման։

37. Փոխ. նա՛ս։ Նման ձևերը Մամիկոնյանի գրքում գրեթե սովորական են։

38. Գրաբարում սովորական է տարբեր ցույց տվող բառերը անուղղական հոլովով արտահայտելը։

39. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

40. Նախդիրը կրկնված է։

41. Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ յանց, յուռ մեռցը։

42. «Ելայ ի քաղաքէն». ձևի բառացի թարգմանելը, որտեղ ինչյանակի գործածվում է քաղաքն մեջ, քաղաքի մեջ է, այսինքն՝ քաղաքից է։ Այստեղ ի դուրս ավելի ճիշտ պիտի լիներ՝ ի դրան։

43. Գործածված է բարբառների և աշխարհաբարի ձևով, փոխ. զի։

44. Սահմ. ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնու փոխարեն։ Պետք է թարգմանել ըղձական եղանակի ապառնիով՝ պատերազմենք։ Ինչպես երևում է նախորդ ծանոթություններում, սա սովորական երևույթ է Մամիկոնյանի գրքում։

45. Անգղի կամ Արդյալ, փոքր լեռ Տարոնում, որի վրա հնում բերդ է եղել։

46. Գրաբարի համար նման դեպքում ավելի գործածական է անանել բայը, սակայն սրա գործածությունը ևս բացառված չէ։



47. Պետք է թարգմանել դիմավոր ձևով։

48. Փոխ. «յայսմ կողմանէ»։

49. Երկու թվականը գոյական անվան հետ նախադաս գործածությամբ սովորաբար հոլովվում է, իսկ գոյական անունը դրվում է հոգնակի թվով։ Այստեղ գործածված ձևերը հիշեցնում են բարբառները և աշխարհաբարը, փոխ. «յերկուց կողմանց»։

50. Նախորդ դարերում սովորականն է եղել մատնեա՛լ կամ մատնեա՛յ։ Մատնի՛ր ձևը լայն կիրառություն ունի միջին հայերենում։

51. Փոխ. իւրեար կամ ավելի ճիշտ՝ միմեանս։ Իրար ձևը բարբառներին և աշխարհաբարին է հատուկ։

52. Պետք է թարգմանել կատարյալով։

53. Գրաբարի համար սովորականն է «ո՛չ փրծանիցս» կամ «ո՛չ փրծցիս», այլև «ո՛չ պրծանիցս» կամ «ո՛չ պրծցիս»։

54. Հատանել և կտրել բայերը նույնանիշ են։ Երկուսի միասնական գործածությունը ավելորդ է։ Պետք է թարգմանել մեկնումեկը։

55. Նույն բնագրում մասն բառը հոլովված է տարբեր ձևով՝ ն և ի հոլովիչներով։

56. Տրական հոլովով ենթական՝ սրա է միացյալի բայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղականով՝ դուք արդյոք պիտի լինեք։

57. Բայց, այստեղ՝ բացի։

58. Բերդ Տարոնում, որը ավելի առաջ կոչվել է Արծուիք։

59. Նպատակի պարագա է՝ արտահայտված ի նախդիրով և անորոշ դերբայով։

60. Նախդիրը կրկնված է։

61. Սա ըստ հանգամանքի հատկացյալն է, սակայն իր հատկացուցիչը անջատվել է «զոր տուրքն» արտահայտությամբ։

62. Մամիկոնյանի գրքում հանդիպում են այնպիսի բառեր, որոնք բարբառային են (փոխառյալ կամ ածանցական), ինչպես՝ սառոն, նաշաւ (այգեստանգին, գցեստ)։

63. Նշված բայերը ձևով սահմանական եղանակի ներկա ժամանակով են գրված, սակայն փոխարինում են ստորադասականին։

64. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում։

65. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

66. Կտրել բայը անբաժանելու, առանձնացնելու իմաստով գործածելը ավելի բնորոշ է բարբառների և աշխարհաբարի համար։

67. Թող բառանձնը լինելով քաղաք բայի բուն հրամայականը՝ այստեղ գործածված է եղանակավորող բառի իմաստով, նրա մոտ դրված բայերը (տանել, բերել) ձևով սահմ. ներկա են, սակայն ստորադասական եղանակի ապառնու իմաստ են արտահայտում։ Այդ ձևերը համընկնում են բարբառների և աշխարհաբարի համապատասխան ձևերին։ Նման դեպքի հանդիպում ենք նաև այլ հեղինակների երկերում։ Տե՛ս նաև Գ., ծան. 363 և այլն։

68. Նախորդ հեղինակները նման դեպքերում ավելի շատ գործածում են «ի միասին»։

69. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

70. Գրված է հայցականով, մինչդեռ պետք է լինի գերելու։

71. Ողջական անվան մեջ ա ձայնավորի նման սղումը հատուկ է բարբառներին։

72. Ջնջված է նույն բառը, որը վաղ նախադասության խնդիրն է և միաժամանակ հարաբերյալ է։

73. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում։

74. Փոխ. լինո՞ւմ կամ լինի՞։

75. Սահմանական եղանակի ներկան գործածված է ստորադասական եղանակի ապառնի իմաստով։

76. Սա **մածանել** (**մածանիմ**) բայից է։

77. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի պարագա է արտահայտում։

78. Փոխ. **լիցին**։

79. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով։

80. Տե՛ս ծան. 42։

81. Սահմ. անցյալ անկատարը գործածված է ըղձական եղանակի անցյալ ապառնու իմաստով, որպիսի ժամանակ գրաբարը չունի։

## ԺԱ. ՂԵՒՈՆԴ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Ոգի ի ձեռին ունել, ժամն այդն առնել, կյանքը վտանգի ենթարկել։

2. Այստեղ նախդիրը հայցական հոլովի հետ տրական հոլովի իմաստ է արտահայտում (նախդրիվ տրական)։

3. Խալիֆը անվան տակ նկատի ունի Աբուբեքրին։

4. Այստեղ և ամբողջ հատվածի ընթացքում անցյալ անկատար ժամանակը անցյալ կատարյալի իմաստ է արտահայտում։

5. Սեռական հոլովով ենթակա է՝ անցյալ դերբայի մոտ։ Պետք է թարգմանել ուղղական հոլովով։

6. Անօր սպառազինվել. զենք, պատերազմական գործիք։

7. Կազմել, այստեղ՝ պատրաստվել, նախապատրաստվել։

8. Որոշել, այստեղ՝ բաժանվել, անջատվել։

9. Այծ՝ կենդանական։

10. Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ նստում։

11. **Պահանջել զարիւն**. սպանվածի համար հատուցում պահանջել։

12. Սեռականով ամփոփագրություն է։

13. Ամենքի հետ կլինեն խոսքով։

14. Ռանայ անցյալ դերբայի մոտ դրված է սեռական հոլովով ենթակա՝ զորավարին, ուստի նրա մոտ դրված այն ցուցական դերանունը ևս պետք է լինի սեռական հոլովով՝ այնորիկ։

15. Երկու թվականը ուղղականում ըստ հոլովվում է։ Սա սակավ գործածական ձևերից մեկն է։

16. **Տնտեսել**, այստեղ՝ մարդկանց։

17. Անորոշ դերբայը նպատակի պարագայի դերում, եր. ազատագրելու, պաշտպանելու համար։

18. Բայական ամփոփագրություն է՝ անցյալ դերբայով։

19. Վէտ, այստեղ՝ անգը, ուստի համանիշ է ձայն բառին, որը նրա մոտ արտահայտվել է սեռականով ամփոփագրությամբ։



20. Երկու անգամ ստորոգյալը արտահայտված չէ։ Թարգմանելիս պետք է ավելացնել բառ բովանդակությամբ (է)։

21. Անցյալ դերբայով ամփոփագրություն է՝ դրված դիմավոր ձևի մոտ։

22. Այս բառը ի հոլովիչով է հոլովվում, ուստի պետք է լինի՝ այդից։

23. Սեռականով ամփոփագրություն է։

24. Փոխ. **լիցին**։

25. Տրական հոլովով ենթակա է՝ անորոշ դերբայի մոտ (շարունակության մեջ կա մի քանի դերբայ կա)։ Ամբողջ նախադասությունը դերբայական է։ Ենթական պետք է թարգմանել ուղղականով, իսկ ստորոգյալի դեր կատարող անորոշ դերբայները՝ դիմավոր ձևով։

26. Ներկան գործածված է ապառնու իմաստով՝ չի զարդարի, մինչև չկատարի իր կամքը։

27. Նկատի ունի արաբական զորքը։

28. Տեղի բառն է՝ կրկնված հոգնակի թվով, արտահայտում է բազմապատկության իմաստ՝ զանազան տեղերում։

29. Անցյալ դերբայով ամփոփագրություն է։

30. Ստորադասական եղանակի անցյալ ապառնին գործածված է սահմանական եղանակի ներկայի իմաստով։ Նույն ձևով էլ հաջորդ բայերը։

31. Սեռականով ամփոփագրություն է։

32. Ենթակայի և ստորոգյալի համաձայնության բացառություն։

33. Ապրուստ, այստեղ՝ փրկություն։

34. Հոռից ամիսը հայկական տոմարի վերջին ամիսն էր ([illegible])։

35. Իսկ և իսկ, այստեղ՝ իսկույն։

36. Ընդ նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի պարագա է արտահայտում՝ արևը ծագելիս, արևածագին։

## ԺԲ. ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՆՆ ԱՐԾՐՈՒՆԵԱՑ

1. Խոսքը Յուսուֆի մասին է։

2. **Թալանել**, այստեղ փոխաբերական իմաստով է գործածված՝ ամբողջապես ավերել։

3. Ի նախդիրը անորոշ դերբայի հայցական հոլովի հետ ժամանակի պարագա է արտահայտում։

4. Ունի ստացական նշանակություն։

5. Մնալ, այստեղ՝ սպասել։ Այս դեպքում խնդիրը տրականով է լինում, իսկ այստեղ անցյալ հայցականով է արտահայտված։

6. Փոխ. **խաղացուցէ**: Մյուս բայերը ևս երկրորդ ապառնիով են։

7. Ամփոփագրություն է։

8. Այստեղ զ նախդիրը հայցականի հետ գործիականի իմաստ է արտահայտում։

## ԺԴ. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

### ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

1. Նախդիրը կրկնված է։
2. Ուղղ. խնդիր գործածված է ուղղականի ձևով։
3. Դեղ, այսինքն՝ թույն։
4. Քառյակն բառն է, նշ. թույն կամ մաղձաղեղ։
5. Այստեղ շաղկապ է, նշ. նաև, և։
6. Սահմանականի ներկան գործածված է ապառնի, ապառնու իմաստով։
7. Այստեղ ռ-ն գիմարդ հող է. ծառս նշ. ձն՝ ծառս։
8. Աներող դերբայը հայցական հոլովով՝ նպատակի պարագայի դերում։
9. «Ցանկցայց ժամուն» (=ցանկալի ժամին) արտահայտությունը համանիշ է ապաժամանի բառին։
10. «Ինչ ընդ անհեթի» բառերը նշ. նեղմ անհերի տակ, այսինքն՝ անիրեի, անհեր ընդունելը։
11. Այստեղ նշ. բայց։
12. Մատնեալ բայը կրավորական իմաստով է գործածված՝ հասնել Անա-փոխությամբ՝ մատնել։ Ինչպես վաղ շրջանի գրաբարում այդ բայը ասում այս-պիսի հնափոխության միջանկյալ կրավորական իմաստ է արտահայտում, այսպես՝ մատնեալ=մատնում է (ներգ.) և մատնվում է (կրավ.)։
13. Ո՞ր, այսինքն՝ ինչպե՞ս։
14. Առակ, այսինքն՝ օրինակ։
15. Վերացականը թանձրացականի փոխարեն։
16. Առձան, այսինքն՝ քար, ստացի անասնական ամենաբարդություն է վէմ (վիմոց) բառի մաս։
17. «...Ոչ պատմեմ մասնանցնել առաջարկ» նշ. արժանի չեմ արդար կոչվելու։
18. Իմաստուրին գործածված է իմաստուն նշանակությամբ։
19. Անասնական ամենաբարդություն է։
20. Վերացականը թանձրացականի փոխարեն։
21. Հայցական է, սակայն սեռականի ձևով։
22. Իմաստ, այսինքն՝ գիտություն։

## ԺԴ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՑԻ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

1. Փոխ. նորկանին: Ենթական է ձևով բառը, որը գրաբարում հոգնակի է։ Այստեղ նրա հոգնակիությունը չի զգացվում։
2. Սեռական հոլովով ենթակ է։
3. Այդ գետը ավելի հայտնի է Ճորոխ անվամբ։
4. Ամբողջ նախադասությունը դերբայական է։ Ստորոգյալները պետք է թարգմանել դիմավոր ձևով։
5. Անկեղծ է։
6. Պետք է թարգմանել անցյալ կատարյալով՝ առաջ։
7. Սահմանական եղանակի ներկան ստորադասական եղանակի ապառնու իմաստով է։



8. Չոամայլն բայով ընդմիջված է «մասամբ ամենեյ» բայական հարադրու-թյունը։
9. Պետք է թարգմանել դիմավոր ձևով՝ պատասխանելը։
10. Հարակատար դերբայ է՝ դայակաձարքար գործածված։ Դա հատուկ է բարբառներին և աշխարհաբարին։
11. Դան, այսինքն՝ բարձանք։
12. Սովորականը նախադասության է՝ «ի վերայ անդեաց»։
13. Անցյալ անկատարը գործածված է ստորադ. անցյալ ապառնու իմաստով։
14. Փոխ. չարժ։ Բարբառներին և աշխարհաբարին նման է գործածված։
15. Սովորականը՝ փլոյց։

# ԲԱՌԱՐԱՆ

Ա.

Աբեթ, ի, իւ, գ. այրած կտավից, անկից կամ այլ նյութից պատրաստված դյուրավառ լուցկի, որ բռնկվում է կայծքարի կայծից (պատ)։

Ագանիմ, ագայ, ագի՛ր. ագնել կամ ագուցանել. Հմ. Հագնել, Հագնվել։

Ագանիմ, ագայ, ագի՛ր, չր. 1. իջեւանել, 2. գիշերել, գիշերը մնալ մի տեղ։

Ագարակ, ի, աց. գ. 1. արտ, 2. հողային կալվածք, 3. գյուղ, 4. ա. ագարակային, գյուղական։

Ագի, գւոյ, եաւ. գ. պոչ։

Ագոն, ի. գ. 1. մրցանք, մրցության հանդես, 2. ողիմպիական խաղ։

Ագուգայլ, յից. գ. քարից կամ թրծած աղյուսից խողովակ, որի միջով անցնում է ջուր կամ այլ հեղուկ նյութ. փողրակ։

Ագուցանեմ, ուցի, ցո՛. ներ. 1. հագցնել, 2. անցկացնել (մի բան մի այլ բանի մեջ)։

Ագուցանեմ, ուցի, ցո՛. ներ. տեղ տալ գիշերելու կամ իջեւանելու համար։

Ագուցիկ, ա. հագցրած, ներս անցկացրած։

Ագցան կամ ակցան, ի, աց. գ. մետաղյա գործիք՝ մեխ դուռը փակելու կամ մի տարբեր տեղը բանալու համար։

Ազազանամ, ացայ. ազազանիմ, ազազայ. չր. չորանալ։

Ազազիմ, եցայ, տ. Ազազանամ։

Ազազուն, ա. 1. չորացած (բույս), 2. խեղճացած, անբեկ մեռած։

Ազատ, ի, աց. 1. գ. ազնվական, իշխան, ա. 2. անկախ, 3. ազատված, 4. բացարձակ, 5. զերծ (ինչից), 6. հեռու, 7. առանց արգելքի։

Ազատագունդ, գնդի, գ. 1. ազնվականներից կազմված խումբ կամ զինվորական գունդ, 2. ա. ազնվականներից խմբված։

Ազատորդի, դւոյ, դւոց. գ. 1. ազնվականի որդի, 2. ազատ մարդու որդի։

Ազատութիւն, թեան. գ. 1. ազատություն, 2. անկախություն, 3. համարձակություն, 4. ազնվականություն, 5. ազատամտություն, 6. մեծահոգություն։

Ազբն, բին, բամբ. գ. 1. շարժական շրջանակ՝ ամրացված թելերով, որոնց արանքով անցնում են հյուսվածքի թելերը, 2. հյուսվածքի թելերի ձագը։

Ազգ, ի, աց. գ. 1. տեսակ, 2. սերունդ, 3. տոհմ, 4. ցեղ, 5. ժողովուրդ, 6. տուն, 7. դար. հարյուր տարվա շրջան, ժամանակ, 8. կարգ, դաս, 9. կերպ։

— Ազգ ազգ կամ ազգի ազգի. տեսակ-տեսակ, այլեւայլ ցեղեր, ժողովուրդներ։

—Ի ազգ. մի կերպ։

—Նոյն ազգ. նույնպես։

Ազգային, յնոյ, նոց. ա. 1. իր ցեղին, ժողովրդին, սերնդին վերաբերող, 2. գ. ազգական։

Ազգապետ, ի, աց. գ. տոհմի, ցեղի պետ, նահապետ։

Ազգատոհմ, ի,ից կամ աց. գ. 1. տոհմ, ցեղ, 2. մի տոհմի, ցեղի ճյուղավորությունը։

Աղդ. գ. 1. լույս, տեսողություն, 2. զգայք։
— Աղդ առնել. իմաց տալ, տեղեկացնել, հայտնել։
— Աղդ տալ. նույն նշ.։
— Աղդ լինել. իմացվել, իմաց տրվել։
— Առնում զաղդ (իրիք). իմանալ, տեղեկանալ, մի բանի զգացում ունենալ։
Աղդել, եցի. եա՛. նր. 1. իմաց տալ, տեղեկացնել, 2. գրգել, թելադրել, 3. ներշնչել, մի գործողություն առաջ բերել մեկի կամ մի բանի վրա, 4. իր ազդեցությունը ներթափել, 5. շարժել, բախել։
Աղճ, ղին, ղինք, ղանց, գ. ներանց, բեղ, ծաղկափոշի։
Աղն, ադունք. գ. ադելյուկան։
Աղոխ, ի, իղ. գ. խոնկ խաղող։
Արոտակալ, ի, աց. գ. 1. հովերդ, անդր բանող, 2. փոխանորդ, տեղապահ, 3. իշխանության՝ աստիճան ունեցող։
Արտավիրք, կցի, կցաց. գ. 1. մեկի իշխանությանը համաձայն իշխանություն ունեցող, 2. խորհրդակից, ընդանակից, 3. փոխանորդ, 4. հակից, փառակից։
Աչոր, ի, աց. գ. էղ այծ։
Աչք, աչից. գ. խոր անց, խորք, ցեղի ները բնկած անց։
Ախոյան, ի, իղ կամ աց. ախոյեան, ենի, ենից. գ. 1. կռվի մեջ առաջին հարձակվող, նախամարտիկ, 2. հակառակորդ, թշնամի, 3. հաղթանակ։
Ախտ, ի, ից. գ. 1. բնական կիրք, կարիք, 2. չար հիվանդություն, 3. վատ բնավորություն, պակասություն, 4. ցանկասիրություն, 5. փորձանք, 6. կանանց ամսականը։
Ախտաժետ, ժետի, ից, աց. ա. 1. հիվանդոտ, ցավոտ, 2. վնասակար, ախտացոզ (անձ), 3. անկարգ։
Ախտածագած. ա. ախտերը՝ հիվանդությունները փարատող։
Ախտաւէր, սիրի, աց. ա. մարմնասիրող, հեշտասեր։
Ախտարէ կամ ադդարէ, ռաց. գ.
1. աստղերի միջոցով բախտ գուշակող, 2. գուշակություն՝ աստղերի շարժումով, 3. կախարդական միջոցների գիրք, 4. բնական կիրք, 5. աստղ։
Ածել. ածի, ա՛ծ. նր. 1. բերել, 2. անդից անց առնել, 3. շարժել, բանեցնել, 4. հորդորել, դրդել, 5. կապել, պատել, 6. լցնել, 7. խփել, 8. վրան գնել, 9. բանել, 10. ձու ածել, իր կաշին գրավել։
— Ածել զխոց. վերքը փակել։
— Ածել զենս. սափրել։
— Ածել զբոցով. բոցից անցկացնել։
— Ածել զդրունս. դռները փակել։
— Զայս չուրջ ածել. չուրջը նայել։
— Ածել զմ զիւր. մեկին իր կողմը բաշել, գրավել։
— Ածել զմիմեամբք. մեկմեկու հետ բարեկամացնել։
— Առանց ընդ բանս ինչ ածելոյ. առանց առարկության կամ գեմ կենալու։
Ածու, ոյ. գ. 1. բանջարանոցի մարգ, ածու, 2. փոքր կամ բիչ բան։
Ակամ. ա. անգայուն։
Ակաղձեալ, ակաղձան. չոր ցմած։
Ակամայ, ի, ից. աչք. ա. 1. կամքին հակառակ եղած, 2. չմտածված եղած։
— Ակամայ, յակամայս, յակամայ կամօք, ակամայ կամօք, յակամայ, յակամայի, յակամայց. մ. ակամա կերպով։
Ական. գ. փոս, անցք։
— Ական հատանել. փոս՝ անցք բացել։
Ականակապ. ա. 1. վրան թանկագին քարեր շարած, 2. գ.՝ թագ։
Ականակիտ. ա. 1. վճիտ, մաքուր (ջուր), 2. փայլուն, շողշողուն։
Ականակուռ. ա. թանկագին քարերով զարդարված։
Ականատ, ի, իղ կամ աց. գ. թակարդ։
Ականատես, ի, աց ա. անձամբ, ներ- վկայի։
Ականջ, յականջն. ապահով վիճակ։
Ակն, ական. գ. 1. աչք, 2. հույս,



3. կանխած, 4. խորշ, փոս, ծակ։
— Ակն առնել. ակնդետել։
— Ակն զինեալ. չարի ծայրը՝ զադափր։
— Ցածլեն յանհաւանէ. անհարգ ու անհաւանով, անձամբ։
— Ցածլեն, մ. հայտնապես։
— Ցածլեն կայնել զոք. մեկին անտանելի փակել։
— Առ ակնէ. երեսպաշտություն, դուրս զալու համար, աչառությամբ։
— Ակն ի խոնարհ. աչքը գետնի վար խոնարհած։
— Ակն ի նանապարհ. աչքը ճանապարհին։
— Ցակամ բարառիլ. մի ակնթարթում։
— Ցակն ածկանիլ. աչքի բնկնել, տեսանելի դառնալ։
— Ցակն առկանել. 1. երևացնել, 2. աչքի անցկացնել։
— Ակն ածել ի վերայ ուրուք. մեկին նկատմամբ հոգ տանել։
— Զակն արկանել յումեք. աչքը մեկից զարձնել, անտես առնել։
— Ցակն առնում. աչքը վրան լինել։
— Ակն առնում. 1. երեսպաշտություն անել, 2. գերադասել, 3. ցանկալ։
— Ակն առնում (արտաքին խորքով), բնդունել (խնդիրը)։
— Ակն առնում (կր. նշ.). չար աչք առնել։
— Ակն դնել. 1. աչք անկնել, 2. հետամուտ լինել։
— Ակն ունիլ. սպասել, աչք պահել, հույս ունենալ։
— Ակն կամ զակն տալ. աչքով տալ, նայել։
— Ցակն դալ. 1. մեկի աչքին երևալ, 2. հաճելի լինել։
— Ըստ ակն անկանիլ. աչքից փախչել, աներեւութանալ։
— Ընդ ականբ նայել. 1. ծուռ աչքով նայել, 2. կասկածել, 3. արհամարհել։
— Ընդ ականբ լինել (ումեք). անհաճո լինել։
— Ընդ ակն խոցել ուրուք. մեկի սիրտը խոցել, նեղսել։
— Ակն. ական, ականք. գ. թանկագին քար։
— Ակն, ական, ականք. գ. աղբյուրի ակունքը, բուն խոն բխման տեղը։
— Ակնածել, եցի, ակն ածել. ամի չբազվել, ամաչել, վախենալ։
— Ակնակապուտ. ողորմ. գ. զենքի ակի փոս մաներ, որոնց ամրացված են աչքերը։
Ակնակառոյց կամ ակնկառոյց լինել. աչքը գցել մի բանի վրա, աչքը հառել մի բանի։
Ակնկալ. ա. անձրեւ, անձամբ ականատես։
Ակնոցա կամ ակնոցատ. ա. 1. աչքով տեսած, 2. աչքով տեսած։
Ակն, ի, իղ. գ. 1. վախ, 2. դող, 3. սարսափ, չարիք, աղետներ։
— Ակն արկանել. վախեցնել։
— Ակն առն. մ. վախից, ահից։
— Ակն ընդ ակն. մ. վախվխելով, դողդողալով։
— Զակն հարկանել. վախենալ, երկյուղ կրել։
Ահարկու առնել, ահարկուել, եցի. երկյուղ վախեցնել, ահաբեկել։
Ահարկու լինել. ահաբեկվել, վախենալ։
Ահաւասիկ, ահաւանիկ, ահաւադիկ. ձայն. ահա՛ այս (անձ), ահա՛ այդ (անձ), ահա՛ այն (անձ)։
Ահեակ, եկի. ա. գ. 1. ձախ, ձախ կողմը, 2. ձախլիկ։
— Յահեակ. ձախի ձախ։
— Յահեկէ. ընդ ահեկէ. ձախ կողմը, ձախ կողմում, ձախ կողմից։
Ահաբեկել. ահաբեկուն, ահաբեկել, ահաբեկման, ահաբեկանք, ահաբեկում. գ. վտանգավոր, կարճ փիլոն։
Ահեղ. ի. ու. գ. 1. ճանապարհ, 2. հոսանք, ճամ, ընթացք, 3. կերպ, 4. ապաստան։
Ահեղու. ծխու. պատմանություն, ճամփորդ։
Ահաւոր, ի, ու. գ. բարձր խոսանքի ձայն, աղաղակ։
— Ահաւոր բարձրած՝ զենել՝ ոտների հարկանել՝ տալ. ա. Ահաւորել։
Ահագնակել. եցի. չր. 1. ձայն տալ, աղաղակել, 2. կանչել, 3. նր. բարձր ձայնով մի բան ասել, երգել։

Աղամ, ացի. էր. 1. աղալ, 2. ծեծել, մանրել, փշրել, 3. ծամել, պատռել, 4. խորտակել։
Աղամող. ա. 1. ջնջված, մոլորված, խառնված, 2. ցրված։
Աղանդ, ոյ, ոց. ի. ող. գ. 1. կրոնական ուսմունք՝ ուղղված եկեղեցում ընդունված կրոնի կամ դավանանքի դեմ, 2. կրոն, որն օտար է մի երկրում ընդունված կրոնին և մոլորություն է համարվում այնտեղ, 3. աղանդավորների խումբ, 4. կուսակցություն, 5. ընդհանրապես կրոն, դավանանք։
Աղանդաւոր ի, ող. ա. գ. 1. աղանդի հետևող, 2. կուսակցական։
Աղանդեր. գ. ճաշին՝ կերակուրից հետո ուտվող մրգեղեն կամ քաղցրեղեն. դեսերտ։
Աղաչեմ, եցի. էր. աղերսագին խնդրել, աղոթել։
Աղեղն, աղեղան, ղանց, ղանց. գ. 1. աղեղ, 2. ցուցմունքի աղեղը։
— Առ աղեղանց. լավ նետաձիգներ։
— Մտանել ընդ աղեղն ձեռօք. աղեղ լարել։
— Աղեղն երկնից. ծիածան։
Աղեղնակապարճ. գ. 1. կապարճ՝ նետերի աման, 2. զինվորական մի տեսակ զգեստ։
Աղէ՜. ձ. հապա՜, դե՜։
Աղի, աղւոյ. եաւ. գ. 1. աղիք, 2. ներսում ... 3. խորք։
Աղի. ոյ. ա. աղի։
Աղիողորմ. ա. խղճալի, ցավալի։
Աղխ. ի. իւ. գ. 1. մեկի դիրքատարանը կապվող մարդկանց բազմություն, 2. տանը մեջ ապրող ու աշխատող մարդկանց բազմություն, 3. ունեցվածք, գույք, 4. ճանապարհորդների բազմության՝ ամբոխ։
Աղխաղխեմ, եցի ն. կապկպել, գցել, կոտրատել։
Աղխատրայք. ա. աղմկալի, աղմկահույզ։
Աղխեմ, եցի. էր. կապել, փակել։
Աղկաղկ. ի. ող. ա. 1. խեղճ, թշվառ, աղքատ, 2. զուրկ, 3. փոքր, անպիտան։
Աղու. ա. 1. համով, համեղի, 2. հեզ բնավորություն ունեցող, 3. կենդանակոր, ... թանկագին։
Աղտեղի, եղւոյ, եաւ. ա. 1. կեղտոտ, 2. անմաքուր։
Աղտեղութիւն, թեան. գ. 1. կեղտոտություն, աղտ, 2. զազրելի ցանկություն, 3. զազրելի գործ, արարք, 4. ապականություն։
Աղքատ, ի. ող. ա. 1. չունևոր անկարող, կարիքավոր, 2. սրտանեղ, համեստ, 3. ներքին ընկած։
Աղօթք, ծից, ծեաց. գ. չարախոս, որ մեծ պատիվ չէին տալիս։
Աղփարեր. գ. այրուբեն, տառեր։
Աղօրի, ոյ, եաւ. գ. 1. ջրաղաց, 2. աղացող համրադրանք, 3. սնդանատաղ։
Աճապարեմ, եցի. չբ. շտապել։
Աճիւն, ի կամ ոյ և աճեան կամ ենի, եանք. գ. 1. փոշին կամ այլ նյութերի այրվածքի մնացորդը, մոխիր (տաք մոխիր), 2. մոր, 3. մարմնի փոշիացած կամ այրվելուց դարձած մոխիրը։
— Յաճիւն փոխանել. անյուն դառնալ։
Անպարտ կամ անպարտաւոր. ա. զարմանալի բաներ անող, հնարագետ, խորհրդան։
Ամ, ի. ող. գ. 1. տարի, 2. տարիք, հասակ, ժամանակ, 3. թվական։
— Յամէ ամ. մի տարի հետո, երկրորդ տարին։
— Ամ յամ ամեւ. տարեցտարի երկարաձգել, աշխատել։
— Ամ յամէ, ամ ըստ ամէ, ամ զամի զկնի, ամի ամի. տարեցտարի։
— Ամ ամին. նույն տարին, նույն տարում։
Ամամ, ացի. ա՞. էր. լցնել, թափել, դատարկել։
Ամանակ. գ. ժամանակ։
Ամանոր. գ. նոր տարի, տարեգլուխ։
Ամառայն. մ. ամառը։
Ամառային, նոյ կամ նոյ. 1. գ. ամառ,



2. մ. ամառ ժամանակ, ամառը։
— Ամառայնոյ. մ. ամառվանից։
Ամառանի. գ. ամառ։
— Ամառանի կամ նից. մ. ամառը, ամառվանից։
Ամառատած, ամառատան. 1. գ. ամառանոց, 2. ա. ամառային։
Ամառի. մ. ամառը, ամառ ժամանակ։
Ամբառնամ, բարձի. էր. 1. վերցնել, վեր բարձրացնել, 2. բարձր առանձնանի հասցնել, 3. խանգնեցնել։
— Ամբառնալ զգլուխ կամ զծնգն. գլուխը բարձրացնել, ապստամբել, ոտքի կանգնել։ Ամբառնալ զձեռն, իր վրա վերցնել, չայամին առնել։
Ամբառնամ, բարձայ. չբ. 1. վեր ելնել, 2. հասնել, 3. բարձրանալ, մեծանալ, 4. հպարտանալ, 5. կանգնել, 6. վերաբերվել, 7. վերանալ։
Ամբաստան, ի. ող. ա. մեղադրող, ամբաստանող։
— Ամբաստան լինիլ. մեղադրել։
Ամբաստանեմ, եցի. չբ. էր. 1. ամբաստանություն անել, 2. մեղադրել, 3. արհամարհել։
Ամբաստանութիւն. գ. 1. մեղադրանք, 2. դանդատ, 3. մատնություն։
Ամբար, ոյ, ող. գ. 1. ամբար, 2. պահված՝ ամբարված մթերք։
Ամբարիշտ կամ ամպարիշտ, րշտի, տաց. ա. օրենք չճանաչող, անիրավ, չարագործ, անօրեն, չար։
Ամբարտաւան, ի. ից. ա. 1. ինքնահավան, հպարտ, 2. վեհ, փառավոր (գեղեցկություն)։
Ամբարտաւանութիւն, ամբարտաւանութեան. գ. 1. ինքնահավան լինելը, գոռոզանալը, 2. ամբարտավան արարք՝ գործ։
Ամբարձումն. ա. երկինք բարձր։
Ամբարշտութիւն կամ ամպարշտութիւն. գ. չարություն, անօրենություն։
Ամբարտակ. ի. ող. գ. 1. բարձր շենք՝ աշտարակի պես, 2. պատ, թումբ։
Ամբարտաւանեմ, եցի. ամբարտաւանեցայ. չբ. գոռոզանալ, հպարտանալ։
Ամբարտաւանութիւն. գ. գոռոզություն հպարտություն։
Ամբոխ, ի կամ ոյ, իւ. գ. 1. բազմություն, ամբոխ, 2. շփոթություն, խռովություն, 3. աղմուկ, աղաղակ, 4. ա. ամբոխին հատուկ, ամբոխային։
Ամբոկ կամ ամբոկի. գ. ամպրոպ, որոտում, յամբոկ գործույն. որդին որոտման։
Ամեր. ա. 1. առողջ, անփոփոխ հաստատ, 2. պատրաստ, ընդի։
Ամենի, նույ, նաց. ա. 1. անկապուտ կատարյալ, 2. վայրենի, անմշակ։
Ամենաբողջն. ա. ամենքին բաշխող։
Ամենաբոյս. ա. ամեն ինչ բուսցնող։
Ամենաբուղխ. ա. ամեն ինչ բան առատորեն, ամեն բարիք բխեցնող, առատաբեր։
Ամենագիտ. ա. 1. ամեն բան գիտող՝ Աստված, 2. որտեղ ամեն բան գրանցված է։
Ամենայն, ամենայնի, յի. ի. ամենալից. ա. 1. լիություն, 2. ամեն տեսակ բաներով լեցուն։
Ամենայնութիւն. գ. ամեն բանի առատություն։
Ամենայն, ի. իւ. գ. 1. ամեն, բոլոր, 2. ամեն մարդ, ամեն բան, 3. որևէ բան։
Ամենապատճառ. ա. 1. խիստ ամբողջ, 2. խիստ պատճառներ։
Ամենասեն. ա. 1. ամեն բանի անհայտ՝ փոփոխող, 2. ամենափոփոխիչ։
Ամենեքեան, եցունց, ամենեքին, եցուն. դ. 1. ամենքը էլ, 2. ամեն, ամբողջ։
Ամիկ, ամկի կամ ամկան. գ. տարեկան ամբողջ։
Ամիս, ամսոյ, ոց. գ. 1. որոշ ժամանակ ժամ, 2. որոշ փոփոխ մեջ։
Ամուլ, ի. ոյ, ամլոյ կամ ամլի, ամլաց կամ ամուլ. գ. ծիրեն, հասարակ, կարավարդից՝ երեխանի աշխարհում խաղաղ հավաքված կազմված։
Ամեղան. ի. գ. հայտնութ, վկայություն։
Ամեայ, ոյ կամ ի. [illegible]

ձևով՝ ամալ, լոց. լեց. լեոց. գ. ա. 1. լուծ քաշող եզներ, զույգ եզներ, 2. ողնաշար, մեկ տեղ մեկ հոգի։

**Ամալ**, ամլոյ, լոց. եամ՝ ի. ած. ա. 1. գամփռ շներով (էշեր), 2. անպտուղ։

**Ամառ.** ա. 1. հասուն, ավեր, ավերի. 2. անմարդաբնակ, 3. մ. ամառային։

**Ամառ**, ամռի, ամռայ կամ ռոյ. ող. գ. արդարեւ և քաղաք անմ, բերդ, ամրոց։

**Ամոլ**, ամոլախառն. ա. մեղմ. փափուկ. անուշ, քաղցր, քաղցրահամ։

**Ամոլեմ**, եցի. եր. 1. քաղցրացնել, համեղացնել, 2. մեղմել, 3. կոկել, 4. մաքրել։

**Ամպարիշտ**, տ. Ամբարիշտ։

**Այգ**, ու, ան, ուց եամ՝ այ. գ. 1. վաղ առավոտ, առավոտ, 2. լուսաբաց, 3. հաջորդ օրվա առավոտը, 4. օր։

— Ընդ այգ. ընդ այգս այգուն, այգոյ, առավոտյան, լուսադեմին։

— Խայգուն, առավոտից։

— Այգոյ, այգուն, այգոյ այգոյ. առավոտները, առավոտյան։

— Այգուն, ուց. մ. առավոտյան, լուսադեմին. վաղը, առավոտները։

**Այգաձայն**, ացաւ. ըր. լուսաձայն լուսաբացին։

**Այգեկիր** կամ այգեկուր, կրաց. գ. 1. այգու պատուհները հավաքելը, այգեկութ, 2. այգեկութի ժամանակը։

**Այգեստան**, ի. ած. այգեստանեայ, եայց. այգեստանի, եաց. եեաց. գ. այգիներ։

**Այգարդ**, գ. այգեպան, այգեգործ։

**Այգերեմ**, եցի. ըր. դալ լույս բացվելու ժամանակ, առավոտ կանուխ։

— Այգերեկի ժամ. առավոտ՝ մթնշաղին ժամանակ։

— Այգերեկի տեղի. զանցեմ։

**Այգոց**, յայգոց. մ. 1. առավոտից, 2. վաղը, առավոտյան (կուց)։

**Այդանօր**, մ. այդտեղ։

**Այդր.** մ. 1. այդտեղ, 2. այդ տեղով. 3. որպես ցուցական հոդ՝ այդ երանակությամբ։

**Այդրէն.** մ. 1. նորից այդ տեղ, այդտեղ, 2. նույն. հենց, բան։

**Այժմէն**, այժմէն խոկ. մ. այժմվանից, հենց այժմվանից։

**Այժմիկ.** մ. այժմ, հիմա։

**Այլ**, ոյ, մէ. գ. 1. այլ. ուրիշ. 2. տ. մնացածը։

— Այլ յայլմէ լինիմ. այլայլվել, շվարել։

— Այլ այլ. շատերը։

— Այլ ընդ այլոյ, այլ այլ. մ. 1. տարբեր ձևով. խառն, շփոթ, 2. խառնաշփոթ, միմյանց հակառակ։

— Այլ ի վերայ այլոյ. հաջորդաբար, մեկից հետո մյուսը։

— Այլ. մ. դարձյալ, կրկին, էլ. այլեւ, էլ։

Այլ կամ այլ. շ. բայց. իսկ, այլ և, այլև։

**Այլազգ.** տ. մ. ուրիշ տեսակ, ուրիշ կերպ։

Այլ եւ. ա. 1. ուրիշ, ուրիշն էլ, 2. մ. էլ, մեկ էլ, 3. շ. այլև։

**Այլուստ**, յայլուստ, այլ ուստէ, յայլուստէ. մ. ուրիշ տեղից։

**Այլուր**, այլ ուրեմն. մ. ուրիշ տեղ։

Այլ ուրէ. մ. ուրիշ տեղ։

**Այծեամն**, ծեման, մանէ, մանց. գ. վայրի այծ. այծյամ։

**Այծենական.** գ. թաղիքե վերնազգեստ։

Այն իմն. մ. այնպես, այն ձևով։

Այնու զի. շ. որովհետև։

**Այպանեմ**, եցի. այպն առնեմ. եր. 1. ծաղրել, 2. նախատել, պախարակել։

**Այս**, ոյ կամ ու, ոց. գ. 1. հով, քամի, 2. դև, չար ոգի։

Այս, այսր, այսորիկ... գ. այս։

— Ընդ այս ընդ այն. այստեղ ու այնտեղ, դես ու դեն։

**Այսր.** մ. 1. այստեղ, դեպի այստեղ, 2. որպես ցուցական հոդ՝ այս իմաստով։

— Այսր անդր. այս ու այն կողմ, դեպի այս և այն կողմ, այստեղ ու այնտեղ։

— Այսր անդր լինիմ մտաց. այսր անդր նահանջեմ. տարակուսել, երկբայել։

**Այսրէն.** մ. 1. դեպի այստեղ, 2. նորից դեպի այստեղ, 3. նորից, 4. այստեղ,



3. գ. այս տեղը։

**Այսփ** կամ այսցի. մ. 1. այստեղից, 2. այստեղ, 3. որպես ցուցական հոդ՝ այդ նշանակությամբ։

**Այտնում**, ահայ, ահ՛ր, տուցեալ. ըռ. ուռչել։

**Այտույց.** գ. 1. ուռուցք, 2. դրսից պալար։

**Այտուստ**, տ. Այտփ։

**Այր**, առն, յառնէ... գ. 1. տղամարդ, 2. ամուսին։

— Առն տամ, առն կամ արանց լինիմ. ամուսնացնել, ամուսնանալ։

— Առ այր. ամէն մի մարդու, յուրաքանչյուր մարդու։

— Այր զարամբ նկանել. իրար անցնել, իրարից անցնել։

— Զարամբ գալ. տղամարդու հետ՝ մուտ լինել՝ սիրել։

**Այր**, ի, իգ. գ. քարայր։

**Այրասիրտ.** ա. տղամարդու սիրտ ունեցող, կորիճ։

**Այրացուցանեմ.** այրել ու ավերել։

**Այրեմի**, տ. Այրումի։

**Այրընտիր.** ա. կորիճ։

— Այրընտիր լինիմ. կորիճներ հավաքել։

**Այրութիւն.** գ. 1. տղամարդու յափշտակություն, կատաղի հասակ, 2. այրություն, այրի լինելը։

**Այրումի**, այրումիոյ կամ առնումիոյ. գ. ձիավոր զորք. հեծելազոր։

**Անազան.** ի. ա. մ. 1. ուշ, ուշ մնացող, հապաղ, 2. ուշ ժամանակ, երեկոյան դեմ։

— Անազան, անազան ուրեմն, անազան երբէմ. մ. արդեն ուշ, վերջը միայն։

**Անազորոյն**, անազորոն, անազորուֆն. ա. 1. անգութ, անողորմ, 2. անխիղճ, 3. անզգույշ։

**Անալիւղ**, անալիւղ(ո)ս. գ. մի տեսակ կարճ պարեգոտ, վրայի զգեստ։

**Անախտութեւ.** ա. 1. անապական, 2. հույս չունեցող։

**Անախուլ**, եխոյ. գ. բույսի մի տեսակ. անանուխ։

**Անաղխարհիկ.** ա. 1. օտարական, 2. իր հայրենիքից արտաքսված, քաղաքացիական իրավունքներից զրկված, 3. աշխարհիկ կյանքից հրաժարված, կրոնավոր։

**Անայաո.** ա. 1. խորության չունեցող, աղքատ, 2. անպատկառ, լակոտ, 3. մ. անայաշ կերպով։

**Անապակ**, ի. աց. ա. 1. չոր լիստնում (գինու մասին), 2. բեզահավարագետ առանց խառնուրդի, մաքուր, 3. լիկ, սուտ, պարզ, 4. արատավոր, սուրբ, 5. գ. անխառն գինի, բանաձև անխառն գինի լցրած։

**Անապականն.** ի. աց. ա. 1. անարատ, չփչացող, չապականվող, 2. մաքուր, կույս, 3. անախտ։

**Անապաշաւ.** ա. մ. 1. անզղջում, չզղջացող, 2. ըավ արարքի համար չարտահայտող կամ չարամիտ։

**Անապատ.** ի, աց կամ իգ. ա. գ. 1. անշեն, 2. անբնակ տեղ, 3. ամայի, անմարդ, 4. վանք, մենաստան։

**Անատ**, անատի. ա. անոթ, տապաղ (տեղ), որը չի դրսևորում։

**Անարգ**, ի, աց կամ իգ. ա. անպատիվ, ստոր, չար։

**Անարգանք**, ի, անարգանէ, նաց. գ. 1. անպատվություն, արհամարհանք, 2. վիրավորանք, նախատինք, 3. խայտառակություն, նվաստություն։

**Անարգեմ**, եցի. եր. արհամարհել, նախատել, անպատվել, խայտառակել, նվաստացնել։

**Անարգութիւն.** գ. 1. նվաստություն, 2. անպատվություն, խայտառակություն, նախատինք, 3. նվաստանալը, խոնարհվելը։

**Անարժան**, ի, ից և աց. ա. 1. անարժան, 2. անիրավ, 3. անշնորհք, 4. անմաքուր, 5. մ. անիրավությամբ, 6. խայտառակաբար։

**Անարի**, ւոյ, ւեաց. ա. 1. վախկոտ, թույլ, թուլամորթ, 2. անզոր ջանքերով։

**Անարի**, ւոյ, ւեաց, 1. գ. ոչ արարիչ, ա. վեհերոտի, հեղաբանակ, անհամեստ։

**Անարուեստ**, ի, իգ. ա. 1. արհեստ չունեցող, անվարժ, 2. հասարակ բանի

վոր, 3. պարզ, 4. անշնորհք, 5. անձնապաստ, անկշռելի։

Անբան, ի. ից. ա. գ. մ. 1. բանականության չունեցող, անասուն, 2. անխելք, 3. բնական, զգայական, նյութական, 4. անխոս, լուռ, 5. առանց խոսքի, առանց ձայն հանելու։

Անբանիր, անբանաւական. ա. անձնագանքելի։

Անբառ, ի. ից. ա. 1. անհասանելի, անչափ, 2. անհաշիվ, 3. ծայր չունեցող, 4. անհարկելի, 5. անանցյալ, 6. մ. երկար շատ։

Անբժշկական, ի. աց. ա. անբուժելի։

Անգայտ, ի. ից. ա. 1. նոր, ջահել, 2. նորը, թարմ, 3. երկու ասող վանկերից բաղկացած։

Անգառապետ, անգառապետի. ա. առանց վանգակի, ազատ շրջող։

Անգետ. ա. 1. չգիտեցող, 2. անմիտ, 3. անգրագետ, փոքր, 4. անփորձառու։

— Տանգիտութ. մ. չգիտենալով, չիմանալով։

Անգղ, գեղ. գեղք. գեղ՞. գ. մի տեսակ թռչուն։

Անգղ, գեղ՞. գ. աղավնի կամ, անգղ։

Անգոսնեմ. եցի. եր. արհամարհել, պախարակել, պարսավել։

Անգրագ. ա. անգրավ, անխիղճ։

Անդ, ոյ, ով և ի. իզ. գ. վարելահող ցանած կամ չցանած, հանդ։

Անդ. մ. 1. այնտեղ, 2. այն ժամանակ, ժամանակով, 3. այնուհետ, 4. որպես քաղաքական հող այն գերանված ի-մաստով, 5. ա. այնտեղից։

— Անդ և անդր վաղվաղակի, իսկույն, անմիջապես, միանգամից։

Անդամեմ, եցի. եր. բռնել, խորհրդածել, փորձել։

Անդամ, ոյ, կամ ու, ոց կամ աց. գ. 1. մարմնի մաս, 2. ամբողջ մարմինը, 3. որևէ բանի մաս։

— Անդամ անդամ. մ. կտոր-կտոր։

Անդանօր. մ. այնտեղ, նույն տեղը։

Անդաստան, ի. աց. գ. 1. արտեր, հանդ, 2. արտերի և արոտավայրի բաժանված որոշումից (կրոնական ծես)։

Անդարձան. ա. անփոխ թողած։



Անդեալ, դեալ, ոց նաև իշ. անդեալք, հայց. անդի, ղայ, ոց. գ. խոշոր եղջերավոր անասուններ, նախիր։

Անդեղն. անդեղնուն. ա. անշարժ, հավասար։

Անդէն. մ. 1. այնտեղ, նույն տեղը, 2. շուտով, իսկույն, անմիջապես, նույն ժամանակ։

— Անդէն իսկ, անդէն և անդ, անդէն առ նմին, անդէն վաղվաղակի. անդամակ, իսկույն, անմիջապես։

— Անդէն ի սկզբանէ. հենց սկզբից։

Անդէորդ, անդեւորդ, անդիարդ, անդարդ, ի. աց. գ. նախորդական։

Անդորրութիւն. գ. հանդստություն, խաղաղություն։

Անդուլ. ա. մ. դադար չունեցող, անդադար։

Անդուլութիւն. գ. անդադարություն, անդադար լինելը, չարունակություն։

Անդուստ. մ. 1. այնտեղից, 2. նրանից հետո, 3. այն ժամանակից, այն կողմից, 4. այնուհետ։

Անդունդ. մ. 1. հենց սկզբից, նրանից հետո, 2. հենց այն (տեղից), 3. նորից, 4. իսկույն, անմիջապես։

Անդր. մ. 1. այնտեղ, դեպի այնտեղ, 2. մի կողմ, 3. որպես հող այն գերանված իմաստով, 4. ա. այնտեղ եղած։

— Անդր և անդր նա, անդր ևս, անդր ևս հետ. ավելի այնտեղ։

— Եւ անդր. 1. ավելի այնտեղ, 2. այն տեղից կամ այն ժամանակից սկսած, շարունակաբար։

Անդրաւար կամ անդրաստր, անդրաստր. ի. աց. գ. 1. գույց մի կամ բարի կերպի կամ ընթացքի չեղած, 2. ընդմեջ կանոն կամ ընտանեկան։ 3. խարազ ած։

Անդրէն. մ. 1. ետ, նորից դեպի այնտեղ, նույն տեղը, 2. նորից, դարձյալ, կրկին, 3. այնտեղ ևեթ, իսկույն, նույն ժամանակ, 4. փոխարինաբար, տեղը, եղա տեղը։

Անդրի, ռայ, ռեաց. գ. արձան (մարդու)։

Անեղ. ա. 1. չեղած, չստեղծված, 2.



իրեն ինքնագո, 3. գոյություն չունեցող, 4. չարադարձված՝ պարզ (ծին)։

Անեղծ, անեղծական, անեղծանելի. ա. չեղծված, չապականված, չփչացված։

Անեղեր. ա. մ. պակասություն չունեցող, անվնաս։

Աներաժշտ, իւ. ա. մ. 1. երաժշտել չհամաձայնված, չհամահնչված, 2. երաժշտական չհամաձայնելու։

Աներկիւղ, ի. իզ. կամ աց. ա. 1. անվախ, 2. ոչ վախ չեղ, աղատուն, անկասկածելի, 3. անհրկյուղած։

Աներևութիւն. գ. 1. անմարմնություն, անհամապատասխանություն, անտեսանելիություն, 2. կուսություն։

Աներկրան. ա. անպաշտելի։

Աներևելի կամ աներեւելի, ի. իզ. ա. 1. չերևացած, անտեսանելի, անփորձ, 2. անհամար, խորհ, աստարաի, 3. վարքի։

Աներեւոյլ. մ. որևէ բան չունենալով։

— Աներեւոյլ լինելի. չերևալով, ոչ-արդյունք չդարձնել, կր. չունեցող, աներևակելի լինել։

Աներկքիա կամ աներկքիա- ա. 1. պակասության չունեցող, 2. կատարելապես աղատ։

Աներաուբիւր կամ աներաուբիւր. ա. անկոկոր, ողորկ, չմշորված։

Անթ կամ անութ, անթոյ կամ ի. ոց. գ. ձեռք տակը։

Անժայտ, ժամի, իզ. անժամնյալ, ի. իզ. ա. անժամկետ, իրեն չպատող, չարի։

Անիմաստական, անիմաստաբաներեն. ա. իմաստություն չունեցող։

Անիյծ, յուծի, իզ. անյուծական, ի. աց. անլուծանելի, յոյլ, եալ. ա. 1. անխախտելի, չքանդվող, 2. ոչ լույծ, պինդ, 3. ծանր։

Անիր. ա. 1. չզված. 2. չլսող, ու-շադրություն չդարձնող, 3. չհասկացող։

Անիրավել կամ անիրավեալ, եցի. եր. չր. 1. անիրավել, զրկել, նեղել անհանգել, զգուշանալ, 2. չխնայել, զգուշանալ։

Անիրաւութիւն կամ անիրաւումն. գ. խաբեություն, զգուշանալը։

Անխառն. ա. մ. 1. որից մի չի խառնված՝ արդիք, առանց արդյունքի, 2. մ. իսկույն, անմիջապես։

Անխոր. ա. չոր, ավազոտ, անջրդի։

Անխոստն, սնոյ, ոց. ա. 1. ճիշտ և իրեք չունեցող, 2. լեզուն չտրված (երեխա)։

Անծոյն. ա. 1. չծնված, չծնված, 2. առանց ծնողի։

Անծանօթան, նույն նր.։

Անձեն, ի. աց. գ. քաղաքացի։

Անկան, ի. գ. փորրին առավ։

Անկանիմ, անկի, ա՛նկ. եր. հյուսել, գործել։

Անկանիմ, անկյալ, անկի՛ր. չր. 1. ընկնել, 2. գցվել, հոսել, 3. վիճակվել, հարմարվել, 4. ձառնվել, պարտավել, 5. դադարել, պակասել, զրկվել, 6. դրավվել, պարտվել, 7. վրա հասնել, 8. կանգնել, 9. վրան ոտքեր, 10. հաղթվել, 11. տեղավորվել, 12. ծնունդ։

— Անկանիմ զզիննոր. շարքից ավելի գինի խմել։

— Անկանիմ զինի. խմելը բռնել։

— Անկանիմ ի միտս. խելքը գլուխը գալ։

— Անկանել ի մտաց. խելագարվել։

— Անկանել զմօօր. ի միտս, ի սիրտս. հիշել։

— Անկանել երեսաց. անձնից գլուխը խոնարհել։

— Անկանել յարկէ. ձևանել։

— Անկանիմ ի ճանապարհ. յույժ ի չու. ճանապարհ ընկնել։

— Անկանիմ ընդ ոտիւ. մեկին հետ կռվել։

— Անկանիմ ի ակրաբեէ. նախանձություն զրկվել, պատահելով լինել։

— Անկանիմ զրանիւ. խաղաղություն ընկնել։

— Անկնիլ զենիմ. պառկել մեռել։

— Անկատար. ի. իզ. ա. 1. ոչ լրիվ, թերատար, 2. վերջ չունեցող։

Անկատարութիւն. գ. պակասավորություն, պակասություն։

Անկարօտ, ի. իզ. ա. 1. պակասության կարիք չունեցող, անհոգ, 2. անդա-

կուռ, ամուր, 3. չճնշուած, կարօտ չմնացած, 4. մ. առատութեամբ։

**Անկողնաւոր լինիմ.** անկողին ըլլալ։

**Անկուածոյ, ի, ից.** ա. հիւսուած, գործած, անկցնագործած։

**Անկոփ, ի, ից.** ա. չտաշուած, չկոկած, չկոփած, ձեռք չզարկուած։

**Անհամբոյր, բուրի, ից. անհամբուրելի.** ա. վայրենի, կոպտաբի, անհաշտելի, անտանելի, անհամբեր։

**Անհնար, ի, ից.** ա. 1. անհնարաւոր, 2. անըմբռնելի, անքննելի, անհասանելի, 3. ոչ հասու, ոչ խելամուտ, 4. որհաս, 5. զօրաւոր։

**Անհեդեդ կամ անհեթեթ,** ա. 1. անհասնի, անչափելի, այլանդակ (ձեւով, մեծութեամբ), 2. խոշոր, 3. մ. այլանդակ կերպով։

**Անհնարին.** ա. մ. 1. անկարելի, անճար, 2. խիստ, սաստիկ, 3. անտանելի, 4. չափազանց, խիստ շատ։

**Անհուն, նէի, նից կամ նունց.** ա. 1. ծայր՝ եզր՝ անոր չունեցող, անյատակ, անհամար, անհատնում, անքննելի, 2. մ. չափէն դուրս, չափազանց։

**Անձաւ, ի, աց.** գ. քարայր։

**Անձեռ.** ա. ոչ ձեռագործ, աստուածային։

**Անձկալի, լւոյ, լեաց.** ա. 1. կարօտով փափաքելի, սիրուն, 2. կարօտով փափաքուած ըլլալ։

**Անձկամ, ացի. անձկացեալ, ացայ.** չր. 1. անձուկ՝ կարօտ՝ փափաք զգալ, 2. նեղ զգալ, նեղանալ։

**Անձկութիւն.** գ. 1. նեղութիւն (անձի), 2. տագնապ, սրտի նեղութիւն, 3. փափաքելը, անձկալը։

**Անձն, ձին, ինէ, անց.** գ. 1. մարդ, 2. հոգի, անհատ։

— **Ցանձն առնել.** հանձնել։

— **Ցանձն առնուլ, յանձին ունիմ.** հանձն առնել, համաձայնիլ։

— **Ցանձնէ, յանձնուց, անձամբ, ըստ. անձամբ անձին.** իրեն իրեն, ինքն իր կողմէն, իրենց կողմէն։

— **Ժամանել յանձնէ խոհել.** ինքն իրեն ճանաչել։

— **Մոռանալ լինել ըստ անձն.** ինքզինքն մոռնալ։

— **Ցանձն գալ. զանձամբ լինել.** խելքը գլուխը գալ։

— **Անձին առնել կամ հրամայել.** անձնասպան ըլլալ։

— **Զանձամբ առնուլ կամ հարկանել.** վրան առնել, հագնիլ։

— **Ցանձն բերկանիմ, զանձամբ զատանիմ.** պառկիլ։

— **Ցանձնէ անկանել.** կեանքէն զրկուիլ։

— **Զնոս յանձին հարկանել.** համարձակիլ, համեցնիլ։

**Անձնաւոր, ի, ից. անձնաւորեալ.** ա. ինքնահաճոյ։

**Անձնապահ, ի, աց.** ա. գ. 1. պաշտպան, թիկնապահ, 2. իր անձը պահող, պահպանող։

**Անձնաւոր, ի, աց.** ա. 1. մարմին ունեցող, 2. յանձն ունեցող, կենդանի։

**Անձնեայ, անձնեղ.** ա. մեծ, խոշոր, հսկայական։

**Անձնիշխան, ի, աց.** ա. իր կամքի տէր, ազատ, անկախ, ինքնագլուխ, հաճոյասէր։

**Անձեւիք կամ անձկելի, ևոր, ևոց կամ եւոց.** ա. յուրաքանչիւր մարդ, յուրաքանչիւր բան, ամէն մէկը։

**Անձուկ, ի, աց կամ ոյ, ոց.** ա. 1. նեղ, 2. քիչ, 3. ծանր, դժուար, 4. կարօտութիւն (անի), գ. 5. նեղութիւն, տագնապ, վտանգ, 6. փափագ, կարօտ։

**Անճառ, ի, ից.** ա. 1. անպատմելի, 2. անհնարին (բան), որ չի կարելի ասել։

**Անմատոյց, անմատչելի, անմերձելի.** ա. 1. որուն մօտենալ չի լինիր, 2. որգելուած, 3. մօտենալ չկարողացող, 4. շատ հեռու։

**Անմարդ, անմարդի.** ա. 1. անմարդաբնակ, 2. ամայի, 3. կիսամարդի։

**Անմնացորդ, անմնացորդաբար, անմնացորդելի.** մ. առանց մնացորդի, բոլորը։

**Անյագ.** ա. 1. չկշտացող, անյագուրդ, 2. անյագուրդ, 3. Հոգւոյ անյագ։

**Աննախանձ.** ա. 1. նախանձ չունեցող, 2. առատ, 3. հասարակ, աննախանձելի։

**Անշունչ.** ա. 1. անհոգի, անձայն, մեռել, 2. մ. ասուլի-փառուլի։

**Անոյշ, ի, ից.** ա. 1. կաղրը, անմեղ, ամօթխած, 2. վայրի, 3. մ. անչափ կերպով։

**Անուանարկ, ի, աց.** ա. անունն աղաւաղուած, վատահամբաւ եղած, անվանարկուած։

**Անուանեմ, եցի.** եր. 1. անունը դնել տալ, կանչել, 2. անունը հիշել, 3. անվանի դարձնել, հռչակել, 4. ասել մի անուն տալ, 5. թարգմանել, 6. համարել։

**Անուղղայ, ի, ից.** ա. 1. անխորտ, 2. ծուռ։

**Անուն, ուան, ուամբ, անց.** գ. 1. անուն, 2. գոյականը և ածականը միասին, անուն, 3. համբաւ, 4. անձ, մարդ։

— **Այս անուն, այն անուն.** այսինչ, այնինչ, այսինչ բանը, այնինչ բանը։

— **Ցանուանէ.** 1. մեկնումէկը, անձամբ, 2. միայն անունով, 3. անունը տալով։

**Անուամբ, յանուն.** (մէկի) անունով, մէկի իշխանութեամբ, կողմէն, փոխանորդութեամբ։

— **Ցանուն ուրուք.** 1. մէկի համար, 2. մէկի կողմէն։

— **Առնել իւր անուն.** անուն հանել, իր համբաւը տարածել։

**Անուշաւոր.** ա. 1. անուշաբեր պատրաստող, 2. անուշացնող, անոյշ, 3. անուշահոտ։

**Անուշութիւն.** գ. 1. համեղութիւն, 2. անուշահոտութիւն։

**Անուսումնութիւն կամ անուսումնութիւն.** գ. անկրթութիւն, անուսումնութիւն։

**Անուր, ըի.** ա. որ այր չունեցող հօրանց չէ։

**Անուր, անրոյ.** գ. փայլուն կամ մետաղէ ապարանջան։

**Անպաճոյճ, ճուճի, ից.** ա. 1. պարզ, անպաճոյճ, 2. անհիւթ։

**Անպատում, ամի.** ա. 1. անպատմելի, 2. չպատմուած, չլսած, 3. չպատմուող։

**Անպարտելի.** ա. անհաղթելի։

**Անջատ, ի, ից.** ա. 1. բաժնուած, զատուած, 2. զատ, 3. մ. առանց չարչարուելու։

**Անջրպետ, ի, աց.** գ. 1. բաժանող սահմանագիծ, արգելք, հեռաւորութիւն, բաժանում, տարբերութիւն, ա. 2. զատող, 3. զատուած։

**Անռակաւոր.** ա. ճանապարհէն չեղած։

**Անսալ, ացի.** սա', չր. 1. յանձն մէկի խօսքին, հնազանդիլ, հպատակիլ, 2. համբերել, ներել, թոյլ տալ, 3. զիջանել, 4. ապաւինել, մնալ։

**Անսաստ, անսասանելի.** ա. 1. անսասան, հաստատ, 2. բռնագոյն, ամրագոյն։

**Անսաստեմ, եցի.** չր. չնկատուիլ, չմտածել, չտեսնել, ընդդիմանալ, հակառակիլ։

**Անսիրելութիւն կամ անսիրութիւն,** գ. սէր չունենալը, անսէր լինելը, սիրելի չըլլալը։

**Անվրդով.** ա. մ. անխռով, անխռով, անվրդով։

**Անվկանդ.** ա. որուն գնահատել կամ հայթել չի լինիր, անհասցի։

**Անփոյթ.** ա. մ. 1. անփոյթ, անտարբերաբար, առանց, 2. արագահոգ, անփոյթ, 3. առանց վրդովելու, ուղղակի, անմիջապէս։

**Անտառախիտ.** ա. խիտ ծառերով, ծառերն ու թփերը շատ, առատ անտառ։

**Անտես, ի, ից.** ա. 1. անտեսանելի, աներեւոյթ, 2. չտեսնուած, նոր, 3. կոյր, 4. մ. առանց տեսնելու։

— **Անտես առնել, լինիմ.** 1. ուշադրութիւն չդարձնել, աչքէն գցել, 3. այր փախել, չտեսնելու տալ։

**Անտեղութ կամ անտեղութ.** ա. մ. 1. տեղ չունեցող, անդադրում, 2. խենթ։

**Անտի.** մ. 1. այնտեղից, 2. այնպէս, 3. որուն յաջորդ հող՝ այն չբաժնուած ժամանակ։

**Անտի, անդոյ.** ա. 1. փորձառուի, ընտանի, 2. չհասած, խակ։

— **Անտի կամ անտիօ առնել.** կրակերէ զրկել։

**Անտինեղծ.** ա. անտարատ։

Անտառոտ. տ. Անդառոտ։
Անուղի. ի. ազ. գ. ուղի ուղղը։
Անցանեմ, անցի, ա՛նց. չր. 1. անցնիլ, 2. առաջ գնալ, գերազանցել, 3. չափէն անցնիլ, 4. ջանալէն չերթալ, զանց ընել, 5. հասնիլ, 6. աւերվիլ գնալ, պակսիլ, 7. մարիլ, հանգչիլ, 8. մեռնիլ, 9. մոռցվիլ։
— Անցանել ըստ ժամանակս բնութեան. կրկնել անհնարին ժամանակին անցնիլ։
— Անցանեմ բանիւ, գրով. խօսիլ, պատմել, չարաչարիլ։
— Անցանել ամբոխ. գիտքերի հանգիտելը։
— Անցանել զանձամբ. անցնիլ վրիպել, չանսալ, չերթալ։
— Անցանեմ ընդ ծով. կրակի միջով անցնիլ (առանց այրվելու)։
— Անցանեմ զգինեաւ. գինովութենէն սթափիլ։
— Անցանեմ ընդ կին. կենակցիլ։
— Անցանել ընդ փուշ խրիմ. փորձով անցնիլ, խմանալ։
— Անցանեմ ընդ ինչ. թափանցել մինչև խորքը։
— Անցանեմ ընդ գիրս. գիրք կարդալ։
— Անցանեմ զմ. ինչ, զանձամբ. զինի. ընդ ամ. ընդ ինչ. գերազանցել։
— Անցանեմ զանցանեմ զանձամբ. գերազանցել։
— Ի բաց անցանեմ. զատու զալ գործէ։
— Անցանել յաշխարհէ. մեռնիլ։
— Անցեալ զատուրք կամ զժամանակօք. ծերացած։
— Անցանել ընդ եւխս. երկնչելով։
— Անցանեմ ըստ հրաման. հրամանը չկատարել։
Անցներ, տ. Անձներ։
Անցուցանեմ, ցուցի, ցո՛. պր. 1. անցկացնել, 2. ավելցացնել, 3. վերցնել, հեռացնել, 4. հանել, արձակել, 5. հանգցնել, 6. պատահեցնել, 7. կորցնել լռացնել, 8. բանեցնել, 9. ջնջել։
Անփոյթ. տ. 1. անհոգ, 2. անխնամ թողած։
— Անփոյթ առնեմ. չհոգալ, չխնամել։
— Անփոյթ լինիմ. չհոգացվել։
Անճառ, ի. իզ կամ ազ. տ. 1. անպատմելի, անբացատրելի, 2. նկատ։
Անճառելի, ի. ազ. տ. անհնար, անճառելի։
Անճրկելի կամ անճրկելի. տ. մ. առանց աշխատանքի, համբերող անեհար։
Անճոյթ, ճոյթի, իզ. տ. 1. խառնակ, անկատար, աղանդաւոր, 2. զազրելի։
Անօր, ոյ. ոց և ի. իզ. գ. 1. ամաչ, 2. կաշ-կարասի, հաղուստ, 3. զորքեր, զենք։
— Յանօր առնեմ. փոխ առնել։
Անօսր, ի. իզ և անօսրումն, անօսուն. տ. 1. նոսր, ծածկած, ցանցառ, թե-թև, նուրբ, 2. անխիտ, 3. պարզ, բաց/ված (գիրք), 4. մ. քիչ անգամ։
Անօրէն. տ. 1. օրենք չճանաչող, անիրավ (մարդ, գործ), 2. օրենք չունեցող։
Անօրէնութիւն. գ. չարություն, մեղք, անօրինություն։
Աշխատաւոր, տ. Աշխատութիւն։
Աշխատ առնեմ, արարի. եր. նեղություն պատճառել, չարչարել։
Աշխատ լինիմ. չր. հոգնիլ, չարչարվիլ, աշխատիլ։
Աշխատութիւն. գ. 1. նեղություն, չարչարանք, խանչանք, ճիգ, 2. աշխատանք։
Աշխար. գ. ողբ, լաց, վայնասուն։
— Աշխարն դնեմ. ողբալ, լաց լինել, վայնասուն բարձրացնել։
Աշխարան, ի. գ. լացի անգ։
Աշխարեմ, եցի. եր. 1. լալ, ողբալ, լաց լինել, 2. ողբալ։
Աշխարհ, ի. ազ. գ. 1. աշխարհ, 2. բոլոր կողմերը, աշխարհի բոլոր մարդիկ, 3. հայրենիքը, 4. աշխարհի մի մասը, 5. աշխարհի ազգը, ժողովուրդը, 6. երկիրը։
— Չգալի աշխարհ. ծով ու ցամաք։
— Յաշխարհէ ելանել, փոխիլ. մեռնիլ։
— Ընդ աշխարհ հանեմ. տարածել։
Աշխարհաբանական. գ. ամեն կողմից հավաքված զորք։
Աշխարհաբնակ, ի. ազ. տ. գ. անդրաշխարհ։
Աշխարհագիր, գրի. րաւ. գ. 1. մարդա-



համար, 2. աշխարհի պատմութիւն գրող, գիրք։
Աշխարհաժողով. տ. գ. 1. աշխարհէն հավաքված, աշխարհով, 2. համաշխարհային ժողով։
Աշխարհական. ի. ազ. տ. գ. 1. համաշխարհային, ամբողջ աշխարհին վերաբերող, 2. սրբէ երկրի վերաբերող, 3. աշխարհի մասն կամ մարմնոյ մարդ, 4. երկրի բնակիչը, 5. տ. աշխարհիկ։
Աշխարհաշէն. տ. երկրի նկատմամբ հոգ տանող։
Աշխարհօրէն. տ. մ. 1. աշխարհային, աշխարհի կարգով, 2. ամբողջ աշխարհով։
Աշխարունմն, տ. Աշխար։
Աշխէտ. տ. ցեղնակարմրավուն (ձի)։
Աշտանակ. ի. ազ. գ. մոմակալ, ճրագակալ։
Աշտեայ կամ աշտէ. էի. իզ. նոյն՝ աշտէն. գ. տեգ, նիզակ։
Աշտիճ. գ. ծածկոց։
Աշուն, անոյ. ով. չոր. ցամաք (հող)։
Աչագեղ, ոյ. աչագեղեաց. տ. գեղեցիկ աչքեր ունեցող, գեղաչյա։
Աչալուրջ. տ. արթուն. զվարթ. պարզ։
Աչալուրջք կամ աչալուրջք, լուսոց կամ լուսոյ. արշալույսի ժամանակը։
Աչացու. ի. ազ. տ. աչքի լույսից զրկված, կույր։
Աչք, աչաց, երբեմն՝ աչից. գ. 1. աչքեր. 2. դեմք (փոխաբերությամբ)։
— Աչս առնում. երեսպաշտություն անել։
— Յաչս բերեմ. մտածել, երեւակայել։
— Յաչս դնեմ. 1. արհամարհել, 2. համարձակվել։
— Աչս արծակեմ կամ արկանեմ կամ բերեմ. աչք անել։
— Յաչաց հանեմ. աչքից գցել։
— Յաչաց ելանեմ. աչքից ընկնել։
— Ի վայր՝ ի խոնարհ արկանեմ զաչս յամօթոյ. մեկից երես դարձնել։
— Կոյ աչաց. կուրանալ։
— Առ աչս. 1. աչքի երեւույթի համար, ձեւի համար, 2. աչառությամբ, 3. աչքին թվացող, երեւութական, կեղծ։

— Առ աչօք կամ առաջի ինչ. գ. երեւութական երեւույթ։
— Առ աչօք. մ. 1. աչքի առաջ, ընդառաջ, 2. երեւակայելով։
— Յաչս. 1. աչքերի առաջ, առջեւ, 2. համեմատությամբ։
— Ակաց աչք. մ. մեջք։
Ապա կամ ապայ. յապա. յապայ. ապա ի յապայս. զատ յապայս. տ. մ. 1. հետո լինելիք, դալիք, ապագա, հետք, 2. հետո, այնուհետեւ։
— Ապա. ապի. ապէ. գ. ապագա։
Ապա կամ և ապա. մ. երկրից հետո։
Ապա. ը. արդեն, հապա։
Ապագէն. տ. 1. անգեն, թույլ, 2. մ. առանց զենքի։
Ապաժաման. տ. ետ մնացած, ուշ մնացած, թույլ, դանդաղկոտ, անփութան։
Ապաժոյժ, ժուժի, ժու. գ. տ. 1. թափված արյուն, արյունահեղություն, արյան հարց հոսելը, 2. անառակություն, 3. արյունաթաթախ, 4. կնոջ ամսական։
— Ընդ արիւն և ընդ ապաժոյժ գալ. ընդ ճիրան և ընդ ապաժոյժ գալ. արյան զբաղվել լինել։
Ապալիր, ապալիրի. տ. որոնց ...ի բաւնեաւ։
Ապախտ առնեմ. արհամարհել, զանց անել, վանել, խափանել։
Ապականացու. ի. ազ. ապականելի. լոյ. լեաց. տ. մահկանացու, անցավոր։
Ապականեմ. եցի. ե. 1. փչացնել, 2. խանգարել, ավերել, 3. պղծել, 4. սպանել, 5. ջնջել։
Ապականիչ. եչի. չազ. տ. փչացնող, ապականող։
Ապականութիւն. գ. 1. փչանալը, ավերվելը, ավերածություն, 2. կործանում, 3. զարշելիություն, 4. մեռնելը, 5. կոտորած, ջարդ։
Ապաշաւ. ի. իզ կամ ազ. գ. 1. զղջում, 2. տ. խիղճ, ցավակից, խղճահար, ապաշավող։
Ապաշխարեմ, եցի կամ ապա աշխարեմ. չր. եր. մեղքը լալ. ողբալ մեղքերի համար, զղջալ։

— Առնեմ զոհ պարգեւս. մեկին պարգևատրել։
Առնում, առի, ա՛ռ. նր. 1. առնել, բռնել, 2. ձեռք բերել, 3. վերցնել, ստանալ, 4. գրավել, տիրել, 5. հափշտակել, խափանել, 6. գործածել, 7. հանդուրժել, 8. ընդունել, 9. սկսել, 10. հաղորդել։
— Առեալ, առնելով. առած։
— Առնում նշանեմ. իրեն քաշել։
— Առնում զզուանս. գանձերը փակել։
— Ահ առնում, սարսուռ առնում, վախենալ, սարսափել։
— Խումբ առնում. հավաքվել, ժողովվել։
— Առնե՞յր առնէր ո՞ք. երանի՜ թե մեկն աներ։
— Ա՛ռ, առէ՛ք. ա՛ռ, առե՛ք, ահա՛, հապա՛։
Առոգապատակ. ա. առույգ գանգուրով, գանգուր մազեր, մանր։
Առաւօտեան, առաւօտեանն. մ. վաղը։
Առտնին կամ առ տնին. մ. ա. 1. տանը, 2. տնային։
Առօրին կամ առ օրին. մ. նույն օրը, իսկույն։
Ասեմ, ասի, ա՛ս. նր. 1. ասել, պատմել, խոսել, 2. անունը տալ, 3. կանչել (հաճի)։
Ասուի, ասւոյ, ասուոց. ա. 1. բրդե, բրդյա, 2. գ. բրդե շոր։
Ասպազէն, զինի, նաց. գ. 1. ձիու զենք ու զարդ, ձիավորի զենք ու զարդ, 2. զինված ձիավոր։
Ասպակ. գ. ուտելիքի պատառ, փշրանք։
Ասպահանդապան. գ. ձիավոր որսորդի [illegible]։
Ասպանջական, եայ, ենաց. գ. օտարը՝ մտերմաբար ընդունող։
Ասպաստան, ի, աց. գ. ձիու ախոռ։
Ասպատակիկ. ա. գ. 1. սփռված խմբակ՝ բաժանված մի, 2. պահեստի մի՝ փախստականին հասնելու համար։
Ասպատակ, ի, ալ կամ ասպատ. գ. 1. ձիավոր խումբ՝ կողոպտելու համար, 2. արշավանք՝ ձիավոր խմբով։
— Ասպատակ սփռեմ կամ արձակեմ, ասպատակել, զինել, սփռել, տանել, կալել. ձիավոր զորք սփռել՝ կողոպտելու համար։
— Ասպատակի, յասպատակի. արշավի, վազելով։
Ասպատակեմ, եցի. չր. 1. ասպատակություն անել, ասպատակությամբ հարձակվել, 2. ձիով արագ վրա հասնել, ձիավարել։
Ասպար, ի կամ ոյ, աց. գ. վահան։
Ասպարափակ, ի, աց. ա. գ. վահաններով շուրջ կողմից փակված, փակելը։
Ասպարէզ, ասպարէս. գ. 1. ձիարշավարան, 2. տարածության չափ, ձիու մի շնչով վազելու տարածություն (մոտ 200 մետր), 3. բաց տեղ, հրապարակ։
Ասպետ, ի, աց. գ. ձիավոր, իշխան։
Ասպնջական, ի, աց. ձան՝ ից. ա. 1. հյուրընկալ, հյուրերին սիրով ընդունող, 2. առհասարակ ընդունող, ընդունակ, 3. գ. [illegible]։
Աստ. մ. 1. այստեղ, 2. այս ժամանակ, 3. որպես հոդ՝ այս գրաբարյան նշանակությամբ, 4. ա. այստեղի, 5. գ. այս աշխարհը։
Աստանօր. մ. 1. այստեղ, 2. ա. այստեղի, այժմյան։
Աստանդական, կանի, կաց. ա. գ. թափառական, [illegible]։
Աստէն. մ. 1. այստեղ, 2. այստեղից, 3. այժմվանից, այս ժամանակից։
— Աստէն և անդ. հենց այստեղ, հենց հիմա։
Աստի. մ. 1. այստեղից, 2. իբրև հոդ գրվում է բացառական հոլովի հետ՝ այս գրաբարյան նշանակությամբ։
— Աստի և անդր. այստեղից հետո։
— Աստի անտի. չորս կողմից։
— Աստի և անտի. մի կողմից մյուս կողմը։
— Աստի, ա. այստեղի, ժամանակավոր։
— Աստիք, անաց. մարդիկ, աշխարհը։
Աստանն, ա. Աշտանն։
Աստուստ. մ. 1. այստեղից, 2. այս ժամանակից, այս կողմից, 3. արտենից, 4. այստեղ։
Ասր, ասու, ասու, ասուոյ կամ ասուրք. ասուոց կամ ասրոց. գ. ոչխարի բուրդ՝ կտրած և մաքուր, բրդի հավաքածու։
Ատ, ատից. գ. խռով, ճառ, չարախոսություն։
Ատակ. ա. կարող, ընդունակ։
Ատաղձ, ի, ից. գ. 1. նյութ, 2. փայտանյութ։
Ատեան, ենի, ից. գ. 1. տեղ՝ պաշտոնական գործեր քննելու, 2. դատարան, 3. դատաստան և դատավորները։
Ատոք. ա. լավ լցված, ծանր կշռով, [illegible]։
Ատրուշան, ի, աց. գ. կրակարան, կրակատուն, մեհյան։
Արալէզ կամ արլէզ, առլէզ. յարալէզ. գ. առասպելական կենդանի, որ իբր լիզելով պատերազմներում ընկածների վերքերը՝ առողջացնում է մեռածներին։
Արահետ, ի, ից. գ. 1. բանուկ ճանապարհ, 2. նեղ ճանապարհ։
Արամբի, բայ, բեաց կամ բից. ա. գ. ամուսնու անկողին, ամուսնացած կին։
Արատոյ, ի, ից կամ ոյց. ամուր, կարծր (քար)։
Արար, ոյ, ոց. գ. 1. շենք, շինվածք, կազմություն, 2. գործ, իրեր, ունեցվածք, 3. բերք, արդյունք, 4. երկրագործություն։
Արարած, ոյ, ոց. ա. գ. 1. ստեղծված, եղած, ստեղծված, 2. գործեր, արարք, 3. ստեղծել, ստեղծվելը։
Արարիչ, րչի, չաց. ա. գ. ստեղծող, անող։
Արբենամ, բեայ, բեցայ, բեցաւ կամ բեայ. չր. 1. գինովնալ, հարբել, 2. լավ թրջվել։
Արբշիռ, շռի, ռաց կամ ից. ա. հարբեցող, հարբած, կերուխումի սիրող, ցոփ, անառակ։
Արբուցանեմ, ուցի, ո՛. նր. 1. խմեցնել, 2. ծարավը անցկացնել, 3. ջրել, 4. հարբեցնել։
Արբուցումն, ցման. գ. 1. խմեցնելը, 2. խմելը, 3. ջրելը, ոռոգելը, 4. խմիչք։
Արգահատեմ, եցի. չր. 1. (տր. խնդ.) խղճալ, գթալ, ողորմել, ափսոսալ, ցավել, 2. նր. (տր. և հայց. խնդ.) աղաչել, գութ շարժել, 3. սփոփել, մխիթարել։
Արգանակ, ի, աց. գ. ժողովուրդ, խուժան։
Արգասիք, սեաց. գ. արդյունք, պտուղ, վաստակ, բերք։
Արգաւանդ. ա. 1. բերրի, բարեբեր, 2. հարգելի, բարի։
Արգել, ոյ, ոց, իմ. գ. 1. արգելք, 2. բանտ։
Արգել առնեմ, լինիմ, արկանեմ, առ. արգելք հանդիսանալ, խափանել։
Արգելան, ի, աց. գ. 1. փակ տեղ, բանտ, 2. արգելարան, արգելք։
Արգելոց, ի, աց. գ. որսի կենդանիների արգելավայր։
Արգելում, գլի, գե՛լ. նր. 1. արգելել, թույլ չտալ, 2. փակել, բանտարկել, 3. պահել, 4. տիրել։ Այլն՝ արգելեմ, եցի։
Արգոյ. ա. 1. պատվական, ընտիր, 2. գործուն, ազնիվ, 3. սիրանելի, հարգելի։
Արդ, ու, ուց. գ. ձև, կերպարանք, զարդ։
Արդ. մ. 1. այժմ, 2. ա. արդիական, նոր, այժմյան։
— Արդ և առ արդ. հենց նոր, այժմ, իսկույն։
Արդ. շ. ուրեմն, այսպիսով, ապա ուրեմն. նույն եւ. և արդ, բայց արդ։
Արդարացուցանեմ, ցուցի, ցո՛. նր. 1. արդարացնել, իրավունք տալ, 2. մեղքը քավել, 3. անարատ՝ արդար անել, 4. հատուցել՝ խոսքը, միտքը։
Արդարեւ. մ. 1. իսկապես, 2. անտարակույս, ստույգ, ճշմարտապես, [illegible]։
Արեգ. ի. գ. հայկական ամսվա ութերորդ ամիսը։
Արեգակնակ, ի, աց. գ. արեգակնային՝ արևահայաց տեղ՝ շինության մեջ կամ [illegible]։
Արև, ու. գ. 1. արեգակ, 2. արևի լույս, 3. ջերմություն, 4. կյանք։
— Արև կեալ. ապրել։
— Յարևէ արկանեմ. զարև հատանեմ. կյանքից զրկել։

— Ծարին անկանել. մեռնել։
Արևակէզ. ա. արևից այրված։
Արևմայք, արևմտայք, արևմտեայք, արևմտիք. գ. արևմտյաններ։
Արժան. ի. ից. ա. գ. 1. պատշաճ, վայելուչ, 2. արժանավոր, 3. հման, 4. արժեք։
— Արժան է. մբ. 1. վայել է, պատշաճ է, պետք է. 2. արժե։
— Ըստ արժանի, ըստ արժանեաց. արժանիքի համեմատ՝ չափով։
Արժանաւորիմ, եցայ. չբ. արժանի լինել, արժանանալ։
Արժանաւորութիւն. գ. 1. արժանավոր լինելը, արժանավորի հատկությունը, 2. պատիվ, հեղինակություն, իշխանություն, պատվի աստիճան՝ չափ։
Արժանի. նոյ, նեաց. ա. 1. արժանավոր, համարժեք, պիտանի, 2. արժեքով։
— Արժանի առնել, լինել. արժանի անել, արժանացնել, արժանի համարել, արժանանալ, արժանի համարվել։
Արի, ւոյ, եաց. ա. քաջ, սրտոտ, կտրիճ, ուժեղ։
Արիք. գ. պարսիկներ (իրենց անվանումով)։
Արիութիւն. գ. քաջություն։
Արծարծանեմ. ծի, արծարծեմ, եցի. նբ. 1. բորբոքել, հրահրել, վառել, 2. գրգռել, 3. վերանորոգել, վերականգնել, կազդուրել, 4. նբ. ոգևորվել, ուժ առնել, 5. վառվել։
Արծաթ, ծաթոյ, ծաթեաց կամ արծթի, ծթի. գ. արծաթ, դրամ։
Արկանեմ. արկի, ա՛րկ. նբ. 1. նետել, գցել, ձգել, 2. դիպչել, 3. մտցնել, 4. փակել, 5. լցնել, 6. հագնել, հագցնել, 7. վերցնել, 8. վրան գցել, 9. անել, շինել։
— Ցանցս արկանել. իր կողմը ձգել։
— Ձեռն արկանել. ձեռք գցել մի բանի, ձեռնարկել։
— Ի ձեռն արկանել. ձեռք բերել, ձեռք գցել։
— Արկանել ակն ընդ... մեկի վրա աչք գցել, տիրել։
— Արկանել զպարս առաջի ումեք. մեկի գովքը լարել։
— Արկանել ի սուր սուսերի. սրի քաշել, կոտորել։
— Արկանել յուղիղ ճանապարհէ. ուղիղ ճանապարհից շեղել, մոլորեցնել։
— Արկանել ընդ միմեանս. իրար հետ գժտեցնել։
— Արկանել ի միտս. միտք գցել։
— Արկանել ակն յինչ. աչքի անցկացնել։
— Ձայն արկանել, գոյժ արկանել. ձայն տալ, կանչել, գոռալ։
— Առաջի արկանել. առաջարկել։
— Յուշ արկանել. հիշեցնել։
— Ի վայր արկանել. վայր գցել։
— Ի կիր արկանել, ի գործ արկանել. կիրառել, գործադրել։
Արձակեմ, եցի. նբ. 1. ուղարկել, 2. արձակել, ազատել, ներել, թույլ տալ, 3. գցել, նետել, 4. բաց թողնել, դուրս հանել, 5. սփռել, 6. վճռել։
— Արձակել զպարտս. պարտքը թողնել, քավել։
— Արձակել զոգի. շունչը փչել, մեռնել։
Արձակում, արձակի, արձա՛կ. տ. Արձակեմ։
Արձան, ի. աց. գ. 1. անտաշ քար, 2. ուղիղ քար, քարե կոթող, 3. քար՝ արձանագրությամբ, 4. հաստատուն գրվածք, հիշատակ, 5. արձան, 6. կոթող՝ քարից կամ փայտից։
Արձանացուցանեմ. ցուցի, ցո՛. նբ. 1. հաստատ կանգնել, ամրացնել, 2. անշարժ կանգնեցնել, արգելել, խափանել, 3. հաղթել, հաղթության նշան կանգնեցնել, 4. հիշատակ թողնել, 5. քարացնել։
Արձոյլ, ձուլի, եան՝ արձուղ, արձող. ի. գ. ոստիկան, ցանկ։
Արմ. ի. ով կամ մասնր. գ. ծառի բնի ստորին մասը։ Այլև՝ զարմ։
Արմանամ, ացայ. չբ. զարմանալ։
Արմատովին. մ. արմատով, արմատից։
Արշաւեմ, եցի. չբ. վազել, արշավել։



Արոյր, ւրի. գ. դեղին պղինձ։
Արուղ. ա. նիհար, չոր, անպտուղ։
Արուեստ, ի, ից. աց. գ. 1. արհեստ, հմտություն, 2. հնարագիտություն, 3. մարդու ճարտարությամբ ստեղծված բան, 4. հնարք, պատրվակ, 5. խարդախություն, կեղծիք, 6. հրաշք, 7. ճարտարարվեստ գործ։
Արուեստական. ի. աց. ա. գ. 1. երաժշտական և երաժիշտ, երաժշտություն, 2. նկարչություն, 3. արվեստագետ մարդ։
Արուեստակից. կցի. ցաց. ա. արհեստակից։
Արուեստաւոր, ի, աց. ա. գ. 1. արհեստավոր, արհեստի տեր, 2. վարպետ, ճարտար, 3. ճարտարապետ, ամենագետ, 4. արվեստով հյուսված։
Արուեստագիտութիւն. գ. հնարագիտություն, վարպետություն։
Արուեստեմ, եցի. նբ. կամ արուեստաւորեմ. արհեստով շինել, ճարտարել, հնարել։
Արութիւն. գ. 1. քաջություն, 2. առաքինություն, 3. արու լինելը։
Արջն. ա. մուգ սև։
Արտախոյր կամ արտախուր, ի. գ. 1. թագի գլխի կապը, 2. նմանությամբ՝ մի տեսակ [illegible] 3. [illegible]։
Արտաշէկ, արտաշիկագոյն. ա. կրակով շառագունած, շիկացած, կաս-կարմիր։
Արտափայլութիւն, արտափայլումն. գ. պայծառություն։
Արտաքոյ. նխդ. մ. 1. դուրս, դուրսը, դրսից, 2. զատ, 3. հեռու։
— Արտաքոյ կոյս. դրսից, դրսի կողմից։
— Արտաքոյ բնական լինել. իրեն կորցնել։
— Արտաքոյ մտաց. խելքը գցած։
Արտաքուստ. մ. 1. դրսից, արտաքուստ, 2. ա. դրսի։
Արտաքս. մ. դուրս, դուրսը։
— Արտաքս հան. [illegible] դուրս։
— Արտաքս հան զկարծիս. երևակայություններից վեր։
— Արտաքս ելանել. դուրս գալ։
— Արտաքս ելանել յինքենէ. իրեն կորցնել։
Արտեւան, ի, նանց կամ նոց. գ. 1. (եզ.) [illegible], 2. թարթիչի մի թելը, 3. (հոգն.) աչքի թարթիչները։
Արտոյտ. գ. արտույտ։
Արտօսրալից. մ. ա. արտասվալից, արցունքով։
Արքայատուր. ա. թագավորի կողմից տրված։
Արքայական. ա. թագավորական։
Արքունի, նոյ, նեաց. ա. թագավորական։
Արքունիք, նեաց. գ. 1. պալատ, 2. թագավորական գանձ, 3. պալատականներ։
Արքունուստ, յարքունուստ. մ. 1. պալատից, 2. թագավորական գանձից։
Արօտական, ի, աց. ա. գ. 1. արոտավոր (կենդանիք), 2. հովիվներ։
Աւագ. ի. աց. ա. գ. 1. մեծ, 2. իշխան։
— Աւագ այր. մեծ մարդ։
Աւագանի, նոյ, նեաց կամ նաց. գ. ավագներ։ Նաև՝ ավագանին։
Աւադիկ. տ. Ահաւադիկ։
Աւաղ. ձ. 1. ավա՛ղ, վա՛յ, 2. գ. դժբախտություն, վայ, լաց։
Աւաղեմ, եցի. նբ. ափսոսել, խղճալ, լալ։
Աւանդեմ, եցի. նբ. ավանդ տալ, ձեռքը տալ, հանձնել։
Աւանիկ. տ. Ահաւանիկ։
Աւաչ կամ աւաչ, ոյ. ով կամ ի. ից. 1. ձայն, երգ, 2. ճիչ։
— Աւաչ առնել. երգել։
Աւասիկ. տ. Ահաւասիկ։
Աւար, ի կամ ոյ. աւ. աց կամ ից. գ. կողոպուտ, ավար։
— Աւար, յաւար, յաւարի՝ առնել, առնուլ, արկանել կամ առնուլ յաւար. կողոպտել, թալանել։
Աւարամասն, սին. գ. ավարի բաժին։
Աւարեմ, եցի. նբ. 1. [illegible], 2. հափշտակել։
Աւետաբեր. ա. գ. բարի լուր բերող, ավետաբեր։

Անտառ, ի, աց. ա. գ. թաւր յուր ծառոց, 2. խառնակութ.

Անտառել, եցի. եր. 1. թաւր յուր ծառոց. ...ուրախութ յուր Համարբելոյ Նոյն եւ. անտառաւորել:

Անտառեայ, ըկի. գ. ամենայն թաւր յուր ընթացքի արգելած պարզեւ.

Ափր. ափրին. ափրոս, ափրով. ափովք. գ. Նաւաց Հանգիստ.

Ափին. գ. 1. ցանկապատած երբոր մայնաքի բազմանայ, 2. ողջագուրութիւն, հատակ, ափյան:

Ափ, ոյ, ով. գ. ձեռքի ափ, թաթ:

— Ափ յափոյ. մ. ձեռաց. բռնուլն, հանդարտութիւն:

Ափս զափի նուանանել. ձեռք տալ, ձեռքի ափերն իրար խփել՝ ուրախութիւնից կամ շփոթելուց:

Աքաղաղ, այք, այից. գ. աքլոր, թռչուն անձնիք:

— Աքաղաղ զեւան. ձայնը հանելը:

Աքն. ափին կամ ափան, ափանք, ափանց. ափանց. գ. էյին՝ զնայի ձախի ափ, 2. ձայն:

Աւ, ի, իւ. գ. ոտք՝ սրունքի հետ միա֊ սին. ոտքեր:

Աւար, ի, աց. գ. վայրի պատերազմ թափուն:

Աւագի. մ. աւարով, թալանով:

Աւեալ, եցաւ. գ. ոտք, ոտքեր:

Աւիտ, Եսի. գ. մի տեսակ հենգուածք:

Աւնել, աւնաստել, աւնատեւ, աւնազնել. չր. վեր-վեր թռչել, ոստոստել, եր. տոգողել:

Բ

Բագին, ի, աց. գ. 1. պաշտպանողական հեթ Հին զորեքից, որով նորանք էին արձանական թշնամու վրա կամ խոշոր բարեր՝ պարգեւաներ կործանել֊ յու Համար, 2. մի տեսակ խորանիկ:

Բագինք, գլխ. նաց կամ ենց. եւաց. ա֊ պա՝ նոյ. գ. 1. կռապի անդամ, 2. զոհարան, 3. կուռքերի տաճար, եր֊ կրպագուն:

Բագնադարան, մ. մեհեանք:

Բագնապետ. ա. Համբարձեալ:

Բագնանել, եցի. եր. մեհեանքել, ան֊ րաբրաբեն, աճեցնել:

Բազուկ, ի, աց. ա. մասնակից:

Բազմաւ, բազմեն. գ. 1. կրաւեն ազդ֊ ատանց շարքին, 2. նեղյալ Հագուստ:

Բազմայ, բազմ, ի, եց. գ. բազմ:

Բազմակից, կցի. ցաց. ա. ընկերակաւ, թե ու թշեկակ:

Բազմակոց. գ. ապարանքում:

Բազմակալի. մ. բազմակով, թեով, ձեռ֊ քով:

Բազմարծ. ա. 1. բերքը՝ պտուղը շատ, 2. շատ զավակ բերող, 3. շատ, 4. մ. առատութեամբ:

Բազմարդյ. ա. բազմաբնակ, շատավոր:

Բազմարուփ, բազմ. ա. անտառ բերող՝ ըմբոց:

Բազմապուրակ. ա. 1. զույգեղուն, 2. բազմատանակ, ընկուզն:

Բազմաբիւր. ա. ծառատնկան, ազնվա֊ գույն:

Բազմախոհ. ա. շատ տեսակ ներքիններ֊ նեղում:

Բազմախոտան. ա. շատ խոտոտում, խոտ֊ որն բազմութեամբ կատակված:

Բազմախոխի. ա. որպես շատ ծոխի՝ գործի՝ փոշ կա:

Բազմածիր. ա. մեծ շրջան անող:

Բազմածաղի. ա. շատ ազնիվեհավոր՝ Հագ֊ ված՝ ծաղաւ:

Բազմակ, ի, աց. գ. 1. հրապ, ման, կանթեղ, 2. երգարան, աշտանակ:

Բազմակալ, ի. բազմակակալ, ի, աց. գ. 1. հրապ, ման, կանթեղ, 2. երգա֊ րաձայն, աշտանակ, 3. աշտանակի անձերքու:

Բազմական, ի, աց. գ. 1. անգամ երա֊ ապ, անգամի Հրավիրված, 2. Համ֊ գիտական, 3. անգամ, 4. ճաշարան,

բարձ, աթոռ, 5. պատիվ, առաքինութ. 6. Հրավերք 7. խումբ, գաս. բազմու֊ թյուն:

Բազմականակից. ա. ընկերակից:

Բազմակեր. բազմակերպարան, բազ֊ մակերպի. իՐ. ա. զանազան կերպի, ձեւերի, տեսակ-տեսակ, շատ ձեւով:

Բազմակույտ. կույտ. ից. ա. շատ կու֊ տակված՝ դիզված, 2. խմբված, 3. գ֊ տակված՝ գիզված, մեծ բազմու֊ մեծ կուտակություն.

Բազմանալ. ա. մեծ խումբ կազմող.

բազմանիթիլ. բազմանալ.

Բազմանոռ, բազմանոտան. ա. առատա֊ Հոս, Հորդահոս:

Բազմանաձայն. ա. շատ գործողություն, զույնզգույնի, խառնամբի:

Բազմանետ. ա. շատ ճոռոց. երկարա֊ խոռ:

Բազմաշրթի. ա. 1. շատ ամբոխված, խռնված, խռովված, վրդովված, 2. հայ ձեռքի տակ մեծ շառավոր, 3. իր ձեռքի տակ մեծ խռովարական ունեցող. 4. գ. խռ֊ ովարական աճեցող. մեծ ամբոխի֊ ովն բազմությունն. շատ աշխարհով, շատ

Բազմաշէն. մ. շատ աշխարհով, շատ աշխարհներից ի վեր.

Բազմաշնորհ. ա. շատ շնորհ:

Բազմաոճ. ա. Հոգիակից:

Բազմաչար. ա. 1. բազմաչար, բազմարաց. չր. 1. տառանելու, 2. մ. 2. ցցվել:

Բազմապան. ա. շատ ցանկով՝

Բազմապատիկ. կանի. զամեն. զանց. բազ֊ մապատկեն. ա. 1. շատ ծնողներով, 2. ճառագայթավոր:

Բազմառատ, ի, իւ. ա. շատ արդիւնա֊ Հատներ բերող, Հզոր արշավա֊ վոր՝ վայրկյան. 2. ճարտար, Հնարա֊ գետ:

Բազմասցուցանել. ցուցի. ցո՛. ար. բազ֊ մացնել, շատացնել, ավելացնել:

Բազմավարական. ի, աց. ա. 1. Հեղինա֊ կի, 2. շատ, 3. մ. շատ անգամ:

Բազմեցուցանել. ցուցի. ցո՛ ար. նստե֊ ցնել, պատվավոր նստեցնել:

Բազմիլ, եցայ. չր. 1. անգամ նստել, Հանգիստ 2. փառավորապես նստել, նստել:

Բազմիր. գ. նստելու անկյուն:

Բազմոց, ի, աց. գ. 1. նստելու անկ֊ յուն (ճանապարհին անգամի յարկի). 2. նկեղեցու անկյուն թարեր անող, 3. պատգամների դիրքը՝ կոնքերերը:

Բազուկ. գլխ. կաց. գ. 1. թև, ձեռք, 2. ուժ, 3. Նիզակ, բուռ, Համակրակն փայ֊ տի շարժող մաս, 4. ձախիկային անի֊ ւի ձախընկից, 5. ծովի նեղ մաս, նեղուց:

— Բազուկ առ բազուկ. մ. խումբ խումբ:

Բազում, գլխ. մեղ. ա. 1. շատ, 2. գ. շատ բան:

— Բազում, բազում ինչ. բազումս. շատ անգամ:

— Բազմաւ. շատ հերով:

— Ո՛չ բազում. ո՛չ շատ. մի քանի:

— Բազում այն է. մեծ մասամբ, գլ֊ խավորապես:

Բազում անգամ. շատ անգամ:

— Բազում ուռեք. շատ կողմերից, շատ տեղերից:

— Բազում աւուրք. շատ կողմեր:

— Ի բազմաց հետէ. վաղուց ի վեր. (Բոլորը ժամերայի Նշանակությամբ):

Բաժ, ի, ից. գ. 1. բաժին, մաս, պա֊ րանի մասը. ձայն, 2. ատենման֊ ված գինաւի, 3. ա. մասնակից:

— Բաժ առնուլ. Հարկ վերցնել. վարձ առնելով արտի փոխարեն:

Բաժակցայ. ա. բաժակը բանող (ափսե):

Բաժակակից. ա. գինի բաժանող, բա֊ ժակներ (ափսե):

Բաժակից. ա. մասնակից:

Բաժանիմ. ա. թերահավատ:

Բաժանող. ա. բաժին անող:

Բաժանում. գ. մասնատոն:

Բայ, ի, ից. գ. 1. բառ, բայնուն պատ֊ մություն, 2. կեռաս:

Բալ, ի, ից. գ. 1. ձեղ, մառախուղ, մշուշ, 2. ա. մրրկալից, մթնկեղ, մթագույն:

Բալաս. 1. գ. անոթային խոտ՝ նորի պես, Համեմունքի խոտ, 2. ա. նեղի֊ ման, սխալի. փուշ:

Բալիչ. գ. Հաղթողին տրված զարդ:

Բալուտ. ա. մշուշապատ:

Բալուտ. գ. վայրի կաղին:

Բախտ, ի, ից. ա. ճակատագիր, վիճակ, պատահար։

Բախել, եցի, եր. չր. 1. հարվածել, զարկել, 2. ուժգնությամբ դիպչել, ընդհարվել, 3. [illegible], 4. [illegible], 5. [illegible], 6. [illegible], 7. [illegible]։

— Բախիլ [illegible]. [illegible]։

Բածին. գ. մի տեսակ [illegible] ([illegible])։

Բակ, ի, ից կամ աց. գ. 1. բակ, գավիթ, 2. [illegible] փարախ, 3. շրջանակ, շրջան, գոտի, 4. համաստեղությունների միջև ընկած տարածություն, 5. գունդ (արևի)։

— Բակ արկանել. [illegible]։

— Բակ առնուլ, ունել, շրջապատել, պատել։

Բակառել, եցի. եր. շուրջ կողմից մեջ առնել, շուրջ կազմել, պատել։

Բաղանիք, ի, ից կամ աց. գ. [illegible]։

Բաղդատել, եցի. եր. համեմատել, [illegible]։

Բաղդատութիւն. գ. համեմատություն, [illegible]։

Բաղել, եցի. եր. [illegible]։

Բաղխել, տ. Բախել։

Բաղձանալից. ա. [illegible]։

Բաղձանալ, եցի. եր. [illegible]։

Բաղձանք, [illegible]. գ. 1. [illegible], 2. [illegible]։

Բաղձալի, բաղձալից. ա. [illegible]։

Բաղձալ, բաղձացայ. չր. [illegible]։

Բամբ, ի, ից. գ. [illegible]։

Բամբասանք. ա. [illegible]։

Բամբիշն, բշան. գ. թագուհի, իշխանուհի։

Բամբիռն, բռան. գ. մի տեսակ նվագարան։

Բայ, չ. 1. որ, 2. [illegible], 3. [illegible] է։

Բայ, ի, ից. գ. 1. բայ, 2. բառ, 3. խոսք, բան։

Բայ, ի, ից. գ. 1. [illegible], 2. [illegible]։

Բայանալ, [illegible]. չր. [illegible]։

Բայլոյ, ի, աց. գ. [illegible]։

Բան, ի, ից. գ. 1. խոսք, զրույց, պատմություն, 2. խորհրդածություն, 3. գրվածք՝ բանաստեղծություն, ճառ, 4. պատգամ, հրաման, պատվեր, 5. առած, առասպել, 6. բառ, 7. [illegible], 8. [illegible], 9. պատճառ, հանգամանք, [illegible], 10. [illegible]։

— Բան ի գործ առնել. միտքն իրագործել։

— Բան առնել. խոսք տալ, պատասխան տալ։

— Մի՞թե բան ինչ իցէ. ի՞նչ կա որ։

— Բանիւ [illegible]. [illegible]։

— Ի բան ածել. խոսքի մեջ բերել, վրան խոսել։

— Ի բան արկանել, ի բան առնել. գործածել, գործադրել։

— Ի բան ունել. հաշվի առնել, նկատի ունենալ։

— Ի բանի առնել. խորհրդի մասնակից անել, համաձայնել։

— Ընդ բանիւ առնել. [illegible]։

— Զբանիւ առնել. խոսքով [illegible]։

— Զբանիւ անկանել. [illegible]։

— Ընդ այդր չեն ինչ բանք. այդ մասին խոսք չկա։

Բանադրել, եցի. եր. 1. [illegible], 2. մեղադրել։

Բանակ, ի, աց. գ. 1. բանակ, 2. [illegible], 3. զորքի կայան, պատերազմի ժամանակ զորքի դադար առնելու տեղ։

— Բանակ առնուլ. զորք գումարել։

Բանակակից. [illegible]. գ. [illegible]։

Բանական, ի, աց. ա. 1. բանականություն ունեցող, 2. [illegible]։

Բանակատեղ, բանակետեղ, [illegible]. գ. 1. [illegible], 2. [illegible]։

Բանակել, եցայ. չր. 1. [illegible], 2. [illegible]։

Բանալ, բացի, բա՛ց, բացեալ. եր. 1. բացել, 2. [illegible], 3. չր. [illegible]։

Բանաւոր, ի, աց. ա. գ. 1. բանական, 2. [illegible], 3. [illegible], 4. [illegible], 5. [illegible], 6. [illegible]։

Բանդագուշանք, շանց. գ. [illegible]։

Բանդիռն կամ փանդիռն. գ. [illegible]։

Բանեար, [illegible]. գ. [illegible]։

Բանսարկել, եցի. եր. [illegible]։

Բանսարկու, ուի, աց. ա. գ. 1. [illegible], 2. սատանա։

Բանսարկութիւն, թեան. գ. [illegible]։

Բաշխ, ի ([illegible]). գ. 1. բաժին, [illegible], 2. [illegible], 3. [illegible]։

Բաշխել, եցի. եր. 1. բաժանել, [illegible], 2. բաժին տալ, [illegible]։

Բաշխողական, [illegible]. գ. 1. [illegible], 2. [illegible]։

Բաշխիլ, եցայ. չր. 1. [illegible], 2. [illegible]։

Բառնալ, բարձի, բա՛րձ. եր. 1. վերցնել, առնել, 2. [illegible], 3. [illegible], 4. [illegible], 5. [illegible], 6. [illegible], 7. [illegible]։

— Բառնալ [illegible]. [illegible]։

— Բառնալ [illegible] կամ [illegible]. [illegible]։

— Բառնալ զգլուխ. [illegible]։

Բասիլիսկոս. գ. [illegible]։

Բասիր. ա. [illegible]։

Բաստեղն. [illegible]. գ. [illegible]։

Բավական. ա. [illegible]։

Բավարար. ա. [illegible]։

Բավել, եցի. եր. 1. [illegible], 2. [illegible]։

Բավիղ, ի, աց. ա. [illegible]։

— Բավիղ. [illegible]։

Բավիղ. գ. [illegible]։

Բավիղս. ա. 1. [illegible], 2. [illegible]։

Բավական, ի, աց. գ. [illegible]։

Բավականք, [illegible]։

Բավասար, ի, աց. գ. [illegible]։

Բարբառ, բարբառոյ, ի, ից. բարբառմամբ. գ. [illegible]։

Բարբառել, եցի, բարբառիլ, եցի. եր. չր. [illegible]։

Բարձր, ոյ, ոց. գ. 1. [illegible], 2. [illegible], 3. [illegible], 4. [illegible]։

— Բարձր առնել [illegible]. [illegible]։

Բարձրանալ, եցի. եր., բարձրանիլ, եցայ. չր. 1. [illegible], 2. [illegible]։

Բարդ, ի, ից. 1. գ. [illegible], 2. ա. [illegible]։

Բարդել, եցի. եր. դիզել, իրար վրա [illegible]։

Բարերանեմ, եցի. եր. գովել, բարի բաներ ասել, օրհնել։
Բարեկեաց. ի. ից. ա. երջանկութեամբ, ա-[illegible]։
Բարեյուշ. ա. [illegible]։
Բարենամ. ի, աց կամ ից և ող. ա. համ-բոյր, անուշ։
Բարեձիր. ա. առատութեամբ տուող, ա-ռատութեամբ տուած։
Բարեմոյն. ա. 1. կայտառ, առողջ. 2. հանգիստ սրտով, 3. լաւ։
Բարեպաշտ. ա. շատ համեստ, անգին, մաքրասիրտ։
Բարեվայելչութիւն. գ. վայելուչ զար-դարանք, կարգ-կանոն, գեղեցկու-թիւն. 2. բարի վարվեցողութիւն, քաղաքա-վարութիւն, ազնուութիւն։
Բարեպաշտ. ա. 1. բարեպաշտ, 2. բարե-սիրտ էր։
Բարի. ւոյ. եաց. ա. լաւ, բնաւոր, համեստ, բարի։
— Բարի գին. լաւ գին։
— Բարի, բարիք. գ. բարի՝ լաւ լինելը, լաւ բանը, 2. ունեցվածք, 3. հան-գստութիւն, հարստութիւն, 4. բա-րեգործութիւն, 5. օգուտ, շահ, 6. բերք, 7. ողջութիւն, խաղաղութիւն։
— Բարի. մ. լաւ, բարի։
— Բարեացն. լաւ մարդկանց գործե-րը։
— Բարով իմն. անցով, բարութեամբ։
Բարիոք կամ բարւոք. մ. ա. լաւ, բա-րեյաւ, կարգին, լաւ կերպով, բա-րեյաջողաբար։
Բարկ. ա. 1. զայրացկոտ, բարկոտ, կրքոտ, բռնկվող, 2. խիստ աղդու, թեժ, կծու, թունդ, 3. մ. սաստկա-պէս։
Բարկացայտ. ա. սաստկապես զայրացող, սաստիկ հուզված, խռովված (ալիք)։
Բարձ. ի.ից. գ. 1. գլխի բարձ, 2. նստարան, 3. պատիվ, աստիճան, 4. նավի նստարանը, 5. նստելիք կամ երկրպագելու այլ մարմինների հիմքը։
Բարձր ուրեք. արդյոք։
Բարձրեալ. ա. ամենի՝ նախապատիվ



բարձ ունեցող, գ. (հոգն.) նախա-պատիվ բարձ ունեցող ավագները։
Բարձրեմբեր. արի. րաց. ա. 1. բնակը-ված առաջին բարձի համար, պատա-գլուխ. 2. ավագութեան ձգտող։
Բարձրեալ. եւոյ. գ. բարձրէջները՝ եր-կուցված փրած հենքերը։
Բարձումն. ման. գ. 1. վերցնելը, վեր բարձրացնելը, 2. վերանալը, ոչնչա-նալը, պակասելը։
Բարձրագահ. ա. 1. աթոռը՝ պատիվը բարձր, 2. գերը բարձր, բարձրա-ստիճան, փառավոր։
Բարձրավանդակ. ա. 1. գլխավոր, գերա-զանց, 2. հանգար բոլ. 3. մ. գլուխը վեր բռնած, աղատ ու համարձակ կերպով։ Նաև՝ բարձրիկլաբ։
Բարձրաստեղծ. ի. աց կամ բարձրա-տանեղծի. ա. գ. 1. խիստ բարձր, 2. բարձր տեղ՝ ձեռք։
Բարձունք. ուանց. գ. ծառի բարձր հյուղերի խումբ՝ մարդկանց արդարա-ցիութիւնների համար։
Բարք, բուց. բուք կամ բիւք, բարոյք. ոյից. ոյից. գ. 1. բնավորութիւն, բնական սովորութիւն. 2. նշանակ, կերպ, 3. կարծիք, ակզբունք, 4. կամք, համաձայնութիւն, 5. օրենք, սովորույթ։
Բաց. ա, օք. ա. բաց։
— Բացու գիտել. 1. գիտարար, 2. ա-նամոթաբար։
— Ի բացի. մ. բաց տեղ, դուրս տեղ։
— Ի բացոյ. մ. բաց լինելով։
— Բաց ի նմա. 1. դատ. 2. առանց։
Բացախոն, ի, աց. ա. 1. հեռավոր, 2. գրավոր մեծ... 3. բացված, բաց։
Բացաառնեմ, եցի. եր. 1. տալ, ավանդել, 2. բացահայտել, մեկնաբանել, 3. զգել, նետել, բաց թողնել, 4. ա-ռանձնացնել, մի կողմ անել։
Բացերևակի. մ. հայտնապես։
Բացէ, ի բացէ. մ. 1. հեռու, 2. հեռվից։
— Բացէ ի բաց, ի բացէ ի բաց, բաց ի բաց. 1. շատ հեռու, հեռվից, 2. բոլորովին, խիստ, ընավ։
Բացօթեայ, եայ, եայց. բացօթեայ, եի.

եայ. ա. մ. բաց երկնքի տակ գիշե-րած կամ գիշերող։
Բազկան, ի. աց. ա. 1. հերկ, չափա-վոր, բավական, 2. ձեռնհաս, կարող, 3. համար, արժանավոր, 4. անհրա-ժեշտ, 5. շատ, 6. զոհ, 7. երկար (ժա-մանակ), 8. գ. կարողութիւն, 9. կարիք, պետք։
— Բավական է. մր. բավական է, հե-րիք է։
Բաւիղ, ւղի. ւղաց. գ. լաբիրինթոս։
Բղխումն. բղխման. գ. 1. կոշմնացանս, զորավոր, ռուբ, 2. հյուսվածք, 3. մի նշանակի անուն։
Բեկանեմ, բեկի. բե՛կ. եր. 1. մաս-մաս անել, կոտրել, 2. կտրել, 3. պատռել, բզկտել, 4. ուժը կոտրել, խորտակել, ջնջել։
— Բեկանեմ զսիրտ. 1. սիրտը կոտրել, 2. սիրտը շարժել, 3. փափկացնել, թուլացնել։
— Բեկանել (իւլ) սրտի. 1. սիրտը սրտ-բել, սիրտը կոտրվել, չդիմանալ, 2. խոնարհվել, զղջալ, 3. փափկանալ, լրվել։
— Բեկանեմ առ նախանձու. նախան-ձից տրաքել։
Բեկար. ի. աց. գ. 1. արքունի տուրք, 2. մեծ պաշտոնյայի փոխանորդ։
Բեկումն. կման. գ. 1. կտրելը, կոտրը-վելը, 2. չարդ, 3. կործանում, մարմ-նական կամ հոգեկան անկում, 4. կսկիծ, 5. զղջում։
Բեկանեմ. եցի. եր. բոլոր կողմերից կտրատել։
Բեհեզ կամ բեհէզ, ոյ. ուց կամ ի, աց. գ. 1. փուշի նուրբ թել, 2. փուշի թելից հյուսած նուրբ կտոր։
Բեհեզափայլ. գ. աստղալիմական մի քա-ղաքի։
Բեմբ. գ. բեմ։
Բեռն. ռին. ռինք. ռանց. գ. 1. բեռ, 2. սպրանք։
Բեռնաւորեմ, որեցի. եր. բեռներ դնել բարձել, բերան առաջ բերել, անցք դառնալ՝ հասանքի, նավազայինի հա-մար։
— Բեռնաւորեալ ի միտսն. մեկը միտ-

ք մեջ բազմել, իրեն բերածը մի վերը մյուսի մեջ թողնելով մի անցք կազմել։
Բերդակալ. ի. աց. գ. բերդի պետ, բերդի զորքի պետ։
Բերդապահութիւն. գ. 1. բերդապահներ, բերդապահների կարգ, 2. բերդապահ զորք։
Բերդեան. գ. 1. բերդեր, 2. բերդա-պահներ։ Այլև՝ բերդարայք, բերդաստ։
Բերդնուրդ, բերդնարդի. գ. բերդում պատսպարված, բերդում գտնվող մարդ։
Բերրի, րւոյ. րեաց. ա. 1. բերք տվող, շատ պտղաբեր, արգավանդ, առա-տաբեր, բերրի, 2. բարիբերում (?) Այլև՝ բերրեղ, բերրիք։
Բևեռ. գ. 1. մեխ, գամ, 2. ատամնք, 3. շիւեռ, 4. կեռակայ։
Բզալ. գ. արու այծ՝ անդրձատված։
Բժժանք, ճաց. բժիժ, բժժոյ. ոց. գ. գեղի մանր տուփեր, կախարդի ուռա գե-ղեր։
Բիբ, բբի. աց. գ. աչքի բիբը։
Բիծ, բծոյ. գ. 1. աչքի հիվանդություն, հիվանդություն, 2. բիծ, արատ՝ ար-ժանիք, 3. բիծ, արատ։
Բիւր, րու. ուց կամ ի, ոյ. թ. ա. 1. տասը հազար, 2. շատ, անհամար։
— Բիւր, բիւրիւ, բիւրս. մ. բյուր ան-գամ։
Բծկան, բծկանք. ա. գ. արատավոր, ա-րատ։
Բղխեմ կամ բխեմ, եցի. եր. չր. 1. բխե-ցնել, բխել՝ աղբյուրի, ծովի աղբյուրնե-րին, 2. բացվելը, բուսնել, 3. խոր-քից դուրս գալ, արտահոսել, 4. կաթեցնել, 5. հոսեցնել, 6. հանել, վանել։
Բղխումն, ման. գ. բխելը, բխեցնելը։
Բղջախոհ, ի. աց. կամ ից. ա. 1. պղծ-ծութիւն սիրող, ցանկասեր, 2. լու-րամոլ։
Բնակ. ի. աց. գ. ա. 1. անցորդի, բնիկ, բուն, 2. բուն տեղը, բնակարան։
Բնակաբնութ. ա. բուն ունեցող, իր կաճով ունեցող։
Բնակեմ. եցի. չր. բնակիմ. եցայ. չր.

բնակվել, մի տեղ մնալ, կանգ առնել, բնակութիւն հաստատել։
Բնակեղ, նոյն. գ. բնակատեղի, բնակարան։
Բնակիչ, կչի, չաց. ա. գ. 1. բնակվող, բնակիչ, 2. բնակեցնող։
Բնակութիւն. գ. 1. բնակվելը, 2. բնակվելու տեղ, 3. առհամանակցութիւն, 4. ամփոփութիւն։
Բնաւ. ա. բոլոր, ամէն, ամբողջ։
— Բնաւ, բնաւ իսկ. նմբ. 1. բոլորովին, բնաւ, 2. չ. հասպա։
— Բնաւ ո՛չ, ո՛չ բնաւ, բնաւ իսկ ոչ. բոլորովին, խալֆ։
— Ընդ բնաւ. 1. ամէն տեղ, գնացի ամէն տեղ, ամենուր, ամենուրեք, 2. բոլորը, բոլորը միասին, ընդամէնը։
Բնիկ, բնկի. ա. 1. բուն, հասուն, բնիկ, հարազատ, 2. նախահայր, ընտանիք, 3. բուն տեղացի, բնիկ։
Բնիոն, ի. ից. գ. խիստ մանր գրած։
Բնութիւն. գ. 1. խնութիւն, էութիւն, գոյութիւն, 2. էակ, արարած, 3. աշխարհ, բնութիւն, 4. բնաւորութիւն, ամփոփութիւն, բարք, 5. արուի և էգի տարբերում, 6. ինչք, գերազանցութիւն, 7. բնութեան ուժը, ներգործութիւնը։
Բնաւառ, ի բնաւառ. մ. բնավորութեամբ, բնութեամբ։
Բողոք, ի. աց. գ. կոչ բան, ձայն, շչականչ։
Բոշարակ, ի. աց. ա. 1. շղթաներ նոյն, կոր. 2. ամբողջ, ընդհանուր։
Բողոքաւորութիւն. գ. 1. բողոքել չենել, շղթայած չենել, կորութիւն, բացորոշ, 2. բաղադրում, չրամն (համանական)։
Բողոքել, եցի. եր. 1. փաթաթել, հյուսել, 2. շուրջ կազմը պատել, 3. ամփոփել, համարել, 4. կատարել, բովանդակել, 5. ամփոփել։
Բողոքումն, ման. գ. 1. շղթան կատարելը, շղթայի չլացնելը, 2. ամբողջութիւն, լրիվութիւն, բովանդակութիւն։

Բոկ, բոկանի. ա. մ. բոբիկ, բոբիկ ոտքով, ոտաբոբիկ։
Բոկեղ, ի. իւ կամ աւ. գ. փափուկ հող՝ բոլորակ կամ մանյակաձև։
Բոկոտն. ա. մ. ոտաբոբիկ։
Բոզմ, ոյ, ով. գ. բոզոր, գանգատ, աղաղակ՝ յայտ։
— Բողոք բառնալ, ճառկանել, արկանել, ունել, կարդալ. բողոքել։
Բոմբիւն. գ. 1. խուլ աղմուկ, թնդյուն, դղրդյուն, դղրդոց, 2. ձայնի ժխորյուն, 3. թմբուկի կամ զնարի ձայն, 4. փոխաբերաբար՝ զանազան խոսք։
Բույլ, բույլք, բուլից. գ. խումբ, ջոկ, երամակ։
Բոյծ կամ բուծ. գ. սնունդ, ճարակ։
Բոյժ. գ. արյունի գույն։
Բովանդակ, ի. ա. 1. բոլոր, ամբողջ, 2. մ. ամբողջապես, լրիվ, առանց մնացորդի, 3. բովանդակություն, բազմակաքան, 4. ընդամէնը, բոլորը միասին։
— Բովանդակ լինել. բովանդակվում, բաշխել։
Բովանդակել, եցի. եր. 1. բովանդակվել, մեջը առնել, 2. համարել, 3. լրացնել, ամբողջացնել, ամփոփել։
Բորբորիտ, բորբորիտոն կամ բորբորիտոս. ա. վավաշոտ, ցանկասեր, անառակ, գարշելի աղանդի։
Բուէճ. գ. բառ։
Բուծ, բծի. աց կամ ոց. գ. կաթնակեր զառ կամ ուլ։
Բուծանել, բուծի, բո՛յծ, բուծեալ, եցի. եր. բուծել, պահել, սնել։
Բուծիչ, ծնոյ. գ. դաստիարակ։
Բուն, բնի կամ բնոյ. իւ կամ աւ, իւ, իմ. գ. 1. ծառի բունը, անկյունների, բույսերի հիմնական մասը, 2. աշտանակի կոթը՝ պատվանդանով, 3. տեղի հիմքը, 4. ռունգների կողքի պատերը, 5. ակիզբը, հիմքը, 6. պատճառ, 7. հին բառերը, արմատները։
— Ի բուն. մինչև վերջը, ծայրը։
— Ի բնէ, ի բնուստ. սկզբից, հնուց, առաջուց, հիմքից, արմատից, բնականից։
— Բնէ ի բուն. խորը թափանցող։

Բուն. 1. ա. իսկական, բնիկ, բուն. 2. նմբ. իսկապես, հենց։
Բուռ, բռոյ, ով. գ. 1. կիր, 2. ջուր, 3. աղամիք։
Բուռն, բռին (այլև՝ բռան), ամբ, ունք, անց. գ. 1. բռու, 2. ձեռք, կարողություն, իշխանություն, 3. բռնություն, ստատկություն։
— Բուռն հարկանել. բռնել, ձեռք խփել մի բանի, ձեռնարկել։
— Ի բուռն առնուլ, ի բռին արկանել, զբռամբ ածել. ձեռք գցել, բռնել, նվաճել, հպատակեցնել։
— Զբռամբ ունել. ձեռքի տակ՝ նվաճված պահել։
— Ի բռին ունել կամ զենել զոք. կյանքը մահվան վտանգի ենթարկել։
— Բուռն լինել. բռնանալ։
— Բուռն, ռան. ա. գ. բռնակալ, զորավոր, կարճ, ուժեղ մարդ, խիստ, սաստիկ։
— Բուռն. մ. 1. ուժգնությամբ, 2. զորավորությամբ։
Բռնանալ, ացյ, ա՛ր. չր. 1. բռնվել, 2. ուժեղ ասել, անել։
Բռնաստան, ի. աց. գ. 1. բռնավոր ծառերի և ծաղիկների անտառաւ, բուրաստան, 2. խաղավետ, ծաղկավետ պարտեզ, մարգ, 3. բազմաց ընդարձակայր։
Բուրդն, բրդան, ունք. գ. 1. աշտարակ,
աշտարակաձև շենք, 2. աշտարակաձև կոթող՝ շինության վրա, 3. փողոցի բրգաձև սանձ։
Բռնաբար. մ. 1. բռնությամբ, բռնի կերպով, 2. հարկադրաբար, ստիպմամբ։
Բռնադատել, եցի. եր. 1. ներքը զգել, ստիպել, հարկադրել, 2. բռնությամբ տակը գցել, չարչարել։
Բռնադրոշմել, եցի. եր. հարկադրել, ստիպել, չարչարել։
Բռնանալ, ացայ. չր. 1. բռնությամբ տիրել, իր ձեռքի տակ պահել, 2. ճնշում գործ ածել, հարկադրել, 3. բռնակալություն անել։
Բռնաւոր, ի. աց. ա. գ. 1. բռնակալ իշխան, թագավոր, 2. ուժեղ, զորավոր, սաստիկ։
Բռնաւորութիւն. գ. բռնակալություն, բռնություն։
Բռնաւոր, ի. րին, անց. գ. ձեռքով բռնելու և նետելու քար։
Բռնել, եցի. եր. սեղմ, գերացնել։
Բրաբիոն, ի. աց. գ. 1. մրցության մեջ հաղթողներին տրվող պսակ, 2. բարոյական հաղթանակ, 3. մի անմահ անապատի նախագծման հաւլինի։
Բրել, եցի. եր. փորել, քանդել։ ...
բալլի։
Բրէտ, խոյ. աց. գ. բյամբռն, աղեղակ։
Բօր, ի (կամ ոյ). գ. վատ յուր, քոսոտ

Գ

Գար, ի. գ. 1. բույս՝ խաշխաշ, խաչփոխիկ, 2. բույսի սանկի մասը։
Գար. գ. փոքրիկ կարթ։
Գաղաղոտ. ա. 1. ծեդած, ծածկված, 2. պատ, պաշտում։
Գաղիչ, ղչի. գ. խոտի և ցորենի զեղ։
Գաղ, ի. ից. գ. փշի տեսակ, մի տեսակ փշոտ բույս։
Գաղաղ կամ գաղախ, ի. աց. գ. մոշ, խեցի։
Գաղանաղոյն, գոյնի, ից. ա. աղեկի վայրենի, կատաղի, սաստիկ։
Գաղանաբար. ա. գազանի նմանվող գազանաբար։
Գաղտաղօտ, ոյ, ոց կամ ից. գ. գաղտնիքը ունեցող, փոխ՝ հրամայականի գործերը։
Գաղտեալ, եցի. եր. 1. ծածկել, թաքցնել, 2. սիրտը ենթել, մտքանցնել, ագահը կոտրել։
Գաղտաւէտ, յոտնան. գ. գայլ, գազանատ։
Գաճ, ու կամ ոյ, ոյց նաև՝ ի. ից. գ. 1. փառաւոր՝ պատվավոր աթոռ, իշ-

խոնարհություն, պատիվ, 2. անգամ, հաջողություն։
Գահ, ի, ից. գ. բարձր տեղ, բարձունք, ծայր, գլուխ։
Գահակցություն. գ. միասին նստելը, աթոռակից լինելը։
Գահավէժ. ա. բարձր տեղից ներքև գլորված։
Գահավէժ առնել, լինել. գահավիժել, գահավեժ անել, լինել։
Գահավիժեմ, եցի, իմ, եալ. նույն եղ։
Գահաւանդ, ի. աց. գահաւանդակ. գ. բարձր տեղ, լեռան գլուխ։
Գահաւորակ, ի, աց. գ. 1. բարձր բազմոց՝ նստելու և պառկելու համար, 2. շարժական բազմոց, դեսպակ, 3. կառակապաս։
Գահոյք, ոյ, ից. գ. արքայի թիկնաթոռ։
Գահոյանի, նոյ, նեաց. գ. աթոռներ, գահեր։
Գահոյք, ոյից. գ. 1. արքայական գահ, 2. թախտ, անկողին, 3. դեսպակ, ժանվար։
Գաղթ, ի, ից. գ. 1. գաղթ, տեղափոխություն, պանդխտություն, գերություն, փախուստ, 2. փախչողների խումբ։
Գաղթական, ի, աց. 1. ա. փախստական, գաղթող, 2. գաղթած, 3. գ. գաղթ, գաղթականություն։
Գաղձն, ձին. գ. այգու մոլախոտ։
Գաղտ, ի, ից. ա. ոչ տեսք և ոչ ձայն։
Գաղտ. մ. ծածուկ, գաղտնի, գաղտնաբար։
Գաղտաբար. մ. գաղտնաբար, գաղտնի կերպով։
Գաղտագողեան. գ. ծածուկ հետքը, գողություն։
— Ի գաղտագողեան անկանիմ. ծածուկ պահվել՝ մի բան տեսնելու համար։
Գաղտակ. մ. գաղտնի կերպով, ծածուկ կերպով։
Գամ. եկի. ե՛կ. եկա՛յք. եկեալ. գալ։
— Գամ (զանազան խնդիրներով). իբար հետ ընկնել, մի բանի հետ լինել, փոխվել, միանալ և այլն։
— Զգանիմ գամ. խառնվել ընկնել, շատանալ։
— Ընդէմ գամ. ընդդիմանալ, խնդիր դնելով գալ։
Գաղ բանի. խառը կառավարել, լինել։
—Ուշաթափ իսր գաղ էր... ձեռքից ելածը չափ։
— Գամ ի կամս, ի կարծիս, բստ կամաց, բստ կարծեաց, բստ բանի ասուած կամ բստ ասում. զիջել, համաձայնել, ուրիշի կարծիքին միանալ։
— Յաղէտս գամ. աղաչանքի ընդունել, զիջել։
— Գամ ի զղջումն. զղջալ, զարթնի գալ։
— Գամ զինուոք ասում. ոխ(վ)ամարտել, մեկի սիրով տարվել։
Գամ. գ. 1. զույգ՝ երկու բան միմյանց միացնելու միջոց, մեխ, բևեռ։
Գամ, ու կամ ոյ, գ. 1. անգի հնարան, ազգի կոչում, 2. հերթ, միջոց, երկարաչ դիրքված, 3. դարձ, որով ժամանակ, անգամ, 4. քայլ։
Գամագիտ կամ գամագիտ լինել կամ գամագիծ գտանել, 1. երբ՝ ճամփորդ միջոց գանել մեկին պատահելու, հանդիպելու համար, իր ուզածն անելու համար, 2. վճռել, հաջողել։
Գայր. ի, ից. գ. 1. ասար մի բանի դիպչելը, արդեւքի հանդիպելը, պայթելը, 2. խոչընդոտ, արգելք, որին ասաօր դիպչելով՝ պայթազում է, 3. որոգայթ։
— Գայթ ի գայթ. մ. անհաստատ կերպով, կաղ ի կաղ։
Գայթագղութիւն կամ գայթակղութիւն. գ. 1. արգելք, որոգայթ, վնաս, չար օրինակ, ճանապարհից շեղող դրդապատճառ, 2. գայթակղություն, պարտիզանություն։
— Առանց գայթակղութեան. անխափան, անարգելորեն, անվրեպ։
Գայթեմ, եցի, գայթիմ, եալ. չր. 1. սայթաքել, ոտքն արգելքի դիպչել, 2. չար օրինակից մոլորվել, մեղքը պղտորվել, սխալանքի մեջ ընկնել։
Գայիսոն, ի, աց. գ. 1. ենթակ, տեղ, գերագոյն, 2. զավզական՝ երբե եղած երխանություն։
Գայլախաղ. ի, ից. գ. կարճ և սուր



քար. նշանակ ատամի՝ գանազան գույներ, կայծքար։
Գայռ, ի, ից. գ. գինի, այգի։
Գայտ. ա. խիտ, հաճ, ոչ հսոր։
Գան, ի, ից. գ. ծեծ։
— Գան հարկանեմ. ծեծել։
— Գան քմեղեմ. ծեծվել։
Գանայի կամ գանայից. ա. չարաչար ծեծված։
Գանգիւն. գ. առարկաների իրար զարկվելուց առաջացած ձայն, աղմուկ։
Գանձ, ու, ուց և ի, ից. գ. 1. գանձ, հարկ, 2. գանձարան, 3. երգ, տաղ։
Գանձեմ, եցի, եր. գանձել, հավաքել, գիզել։
Գառագիղ, նան՝ գառագեղ, գառանգիւղ, ի, իւ և աց. գ. 1. մեղադի վանդակ՝ գազաններ պահելու, 2. արգելարան, բանտ, գեղձան։
Գարգմանակ, ի, աց. գ. գինեգործական աշխատանքի գործ կամ աշխատանքի արձակի նշանով։
Գարնայինն, յնոյ, գարնայինն, նոյ. ա. գարնանային, 2. գ. գարուն։
— Գարնայնի կամ գարնայնայ. մ. գարնանը։
Գարշապար, ի, աց. գ. 1. ոտքի կրունկ, 2. ոտքի ներքի մասը, 3. ոտքի ստորև հետքը։
Գզեմ, եցի, եր. 1. քաշել, փաշփաշել, փաղաքշել, սիրով գրկել, 2. հարգել, խնամել։
— Գզանել զաննան իւր. իր պատիվը պահել ուրիշի հանդեպ։
Գելարան, ի, աց, գելոյ, ի, ոյ. գ. ձեռքին, մատին, ասանելու միջոց՝ գործիք։
Գելում, գելի, գե՛լ. եր. ճզմել, պրծել, ոլորել, ոլորել, անցնել (մարմինը, սիրտը), ճնշել։
Գեն. գ. 1. զենք, զինք, զինվածս, 2. զինված բար։
Գէն. գ. ուխտերի հետ։
Գեղ, ի, ից. գ. գյուղ (բարբառային)։
Գեղ, ոյ, ոց. գ. 1. գեղեցկություն, 2. երես, տեսք, դեմք։
Գեղապաշտուն. ա. վայելուչ, փառավոր։

Գեղարդն. գան կամ գեղոյ, գանի, գ. կոթավոր տեգ, մեծ նիզակ։
Գեղաւոր, ի, աց. ա. 1. գեղեցիկ, 2. պայծառ բանով։
Գեղաւորութիւն. գ. գեղեցկություն։
Գեղեցկեմ, եցի. եր. 1. գեղեցկանալով երգել, 2. գեղեցիկ կարգավորել։
Գեղեցկայարմար. ա. գեղեցիկ հարմարեցված, բարեկարգ։
Գեղեցկանիստ. ա. լավ գիրք ունեցող, գեղեցիկ գիրք ունեցող։
Գեղմն, մառ, մանց. գ. բուրդ։
Գեղոն, ոնի. գ. 1. վայելչություն, պայծառություն, 2. պարերգ, 3. պար՝ երգով։
Գետակոր առնել, գետահեղձ առնել, գետահեղձիկ առնել. գետը գցել, խեղդել։
Գետաձայն. ա. գետի մեջ թաղված, գետի մեջ ընկղմված։
Գետավէժ (այլև՝ գետավոյգ) առնել, լինել. գետի մեջ ընկղմել, ընկղմվել։
Գետեզերք. ա. գետի վրա պառկող՝ ասասնից անկանոն։
Գետնախոյզ կամ գետնախուզաց. ա. ասանց անկանոն մարդ գետնի վրա պառկող, գետնաքարշ։
Գերեմ, եցի. եր. գերի վերցնել, գերել։
Գերեվար, ի. աց կամ գերեվար, ի, աց. ա. գերի տանող, գերի վարող։
— Գերեվար լինել, գերեվարել. եալ. գերի գնալ։
Գեր ի վերոյ, գեր ի վերոյ քան. նախ. մ. ավելի վեր, շատ ավելի։
Գերութիւն. գ. 1. գերի լինելը, 2. գերիները։
Գզար. ու կամ ի. գ. բուրդ։
Գէշ, գիշոյ, ոց կամ ուց և ի. գ. 1. մեռած մարդու կամ կենդանու մարմին, լեշ, 2. կապված բանի կապը։
Գէշ ի գէշ կամ գէշագէշ. մ. պատառ-պատառ, կտոր-կտոր։
Գիշահամուկ կամ գիշահամուկ. ա. գէշի համար քարշ տրված կամ տարված։
— Գիշահամուկ կամ գիշահամուկ առնել. գէշի համար քարշ տալ։
Գէջ, գիջոյ, ոց կամ ի, ոց. ա. 1. թաց,

խռնամ, 2. վաճառում. ցանկատեր, ա-
ճառակ:

Գէս. գիսոյ. ով կամ ի. ուց. աց. գ. եր-
կար մազ:

Գիտամ, ացայ. գիտա՛. չր. 1. իմանալ, ու-
շադրել, ճանաչել, 2. փափագել:

Գիտելիմ, եցայ կամ գիտելենիմ, ենցայ.
չր. ճանաչվել:

Գիլ. գիլ՛. գ. գցելու քար:

— Ի գիլ գալ. գլորվելով գալ (անիվի):

Գին, ա. գին:

Գինեբեր կամ գինեբեր. ա. առատ գինի
տվող, առատ գինի բերող, գինեավետ:

Գինեբուսյն կամ բուսն. նույն ն՝...

Գինի, նւոյ, նեաց. գ. գինի:

— Ընդ գինի կամ գինիս մտանել,
գինեհով անկանել. ի գինւոյ լինել.
գինովանալ, հարբել:

Գիշահոտ. ա. գիշի հոտ ունեցող:

Գիշեր, գիշերեաւ, գիշերոյ. մ. գի-
շերով:

— Զտիւն ամենայն և զգիշերն ամենայն
մ. գիշեր ու ցերեկ:

Գիշերազգեաց. ա. գիշերները գերեզ-
մանում, գիշերները թափառող:

— Գիշերազգեաց լինել. գիշերով թափա-
ռել:

Գիսակ. գ. երկար կամ հյուսած մազ,
մազերի հյուս:

Գիսաւոր. ի. աց. ա. 1. երկար մազեր
ունեցող, 2. ...ավոր, վանական,
3. ...ավոր աստղ:

Գիտեմ. առացի. առ՛ կամ «ասա», եր.
1. գիտենալ, ճանաչել, տեղեկանալ,
2. ...ավոր լինել, կարող լինել, 3. հա-
մարել, ընդունել, 4. կնոջ հետ են-
թակցել:

Գիտք. ա. փափուկ, ...ամբ..., ...
նի:

Գլխաւոր. ի. աց. գ. գլխարկ, ...
վարտ:

Գլխացաւ. նույն ն՝...

Գլխաւոր. ի. աց. ա. գ. 1. գլխավոր,
2. վերին մասերը (մասերի):

Գլխովին (նաև գլխովի). մ., ի գըլ-
խովին. մ. 1. ինքն էլ, իր գլխով,
իր անձով, 2. ամբողջապես, բոլորո-
վին, 3. գրամարկով միջոցին:

Գլորեմ, եցի. եր. գլորեցուցանել, գլո-
րել. գն՝. պր. գլորել, քաշ դցել, կոր-
ծանել, գլորել տալ:

Գլուխ, գլխոյ, ոց. գ. 1. գլուխ, 2. ծայր,
3. գլխավոր կառավարող, 4. մարդ,
5. գրամագլուխ, 6. գրքի գլուխ, 7.
վերջ, վախճան:

— Ի գլուխ ածել՝ բերել՝ հանել՝ տա-
նել. գլուխ բերել, վերջացնել, ա-
վարտել:

— Ի գլուխ գալ՝ եղանել՝ ելանել՝ հա-
սանել. գլուխ գալ, վերջանալ, ա-
վարտվել:

— Եալ ի գլուխ. գլուխ կանգնել, ա-
պստամբել:

— Անկանել զգլխով. հարձակվել (հան-
կարծակի կերպով), վրա հասնել:

— Արկանել զոք զգլխով ուրուք. մե-
կին ուրիշի ձեռքը գցել:

— Դնել զգլուխ ի կշիռ. մահվան վը-
տանգի ենթարկվել:

— Ամ մի ի գլուխ. մի ամբողջ տարի:

Գնում, գննոյ. ա. անտարդ, փուչ, խեղճ:

Գնաց. գնացք. գնց. գիւ. գ. 1. գնալը,
ընթացք, շարժում, ճանապարհ, հետք,
2. քայլելու ձև, 3. կյանք, վարքե-
գնացություն:

Գնողող. ա. ...(ձի):

Գո՛գ. գոգցի՛ր, գոգցի՛ք, գեա. գուք. գեն.
եր. (պակասավոր). ասա՛, ասե՛ք:

— Գո՛գ. գոգցես թէ կամ իմն. կարծես
թե, համարյա թե:

Գոգնեմ, եցի. եր. 1. փռնացնել, գոգա-
վոր դարձնել, 2. պատել, պարանոց-
կել, ամփոփել:

Գոմ, գոմ. գոյ... (պակասավոր բայ).
լինել, գոյություն ունենալ:

Գոմ, ոյ. ոց. գ. անասունների գոմ:

Գոյժ, գուժի, ից. գ. 1. գույժ, բոթ, 2.
դժբախտություն, 3. ճիչ, կոծ, լա-
ցոց:

— Գոյժ առնել՝ արկանել՝ տալ. բոթ
բերել:

Գոյժկան կամ գուժկան, ի. աց. ա. գ.
1. վատ լուր բերող, բոթ բերող, 2.
գուժող, ճչացող, 3. ողբասացի լուր,
գույժ, դժբախտություն:

Գոչ կամ գոչ. ա. քարձ, քաւու:



Գոչիւն կամ գոչումն. գոչման. գ. գո-
չելու ձայնը, գոռում-գոչյուն:

Գոռ. գ. 1. գոռոզ, ամբարտավան, հպարտ, խուո-
նականություն, 2. ա. ահավոր, խրոխտ,
կռվարար, քաջ, աարաստիճան:

Գոռամ, ացայ կամ ացի. չր. 1. կռվել,
կռվի անձնով քաշվել, կռվի քաշվել,
2. բարձրաձայն գոչել, գոռալ:

Գոտեխ կամ գոտեղ. ի և ոյ. գ. վարդի
նման՝ քարի նման, խրամատ:

Գոռութիւն. գ. 1. գռաւր, 2. գոռոզու-
թյուն, 3. թշնամություն, ոխ:

Գոս, գսոյ կամ գոսեր. գ. մեծ ճյուղ:

Գոփուրթիւն, այլն՝ գոփզորութիւն, գոփա-
մրն գ. գոփելը, քարշարար, արշավա-
թյուն, գոռությու:

Գործառնութիւն. գ. 1. գործի ձեռնար-
կելը, 2. գործունեություն, 3. գործա-
ցրած միջոցների ամբողջությունը:

Գործակալ. ի. աց. գ. աշխատողների
վերակացու:

Գործաւոր. ի. աց. ա. գ. 1. աշխատա-
վոր, բանվոր, գործ անող մարդ, 2.
մշակ, հողագործ, 3. գործունյա,
ազդու, ուժեղ:

Գործեմ, եցի. եր. 1. գործ անել, 2.
անել, 3. ներգործել, ազդել, 4. մշա-
կել, 5. ստեղծել, 6. ձևել:

Գործք, ոյ. ոց կամ ի. ից. գ. 1. բանի
ախտ և գթության զգացմունք, 2.
ա. գորովական, գորովով լի:

Գոյր, գրոյ և ի. գ. 1. փոս, հոր, գե-
րեզման, 2. (հոգն.) խորխորի բույն-
ներ, 3. փոս, ադամար:

Գուգաց. գ. անկյունին ու անկյունաձևերով
զարդ:

Գուղձ. գղձի, գուղձեր, գղձան. գ. հողա-
կոշտ, մի բուռ հող:

Գուն, գունք գ. 1. ձանձ, 2. ձանձի
նման՝ ձայները:

— Ի գունս բերանել՝ ճարկանել՝ կամ.
ձանձի գալ, ձնկել:

Գուն. ա. կենդի, մշտա:

Գումարեմ, եցի. եր. 1. հավաքել, մա-
ղովել, խմբել, 2. հանձնել բոլորը, 3.
խառնել, նեկել:

— Գումարիմ. 1. կռվի գումարվել, 2.

...ափոփվել, ...ոց գալ, 3. ...ոց
մեկս:

Գումարտակ. ի. աց. գ. 1. խումբ, ...
միություն, 2. զորքի խումբ, զորա-
գունդ, 3. ...ոց մշակել ...ոց
մանկան, 4. ա. խմբված, համախմբված,
բազմախումբ:

— Գումարտակ առնել՝ գնել՝ կազմել.
զորք գումարել:

— Գումարտակ սխալել. զորք սխալել,
զորքով ...:

— Ի գումարտակին. կռվի մեջ:

Գուն. գ. ձեռք, ճիգ:

Գուն. գ. ջանք. ճիգ. ...
[illegible]
...ել. ...

Գունակ. գ. 1. գույն, 2. տեսակ, կերպ,
նմանակ, 3. ձեւ, նման, ձևով, ...

— Գունակ գունակ. գույնզգույն, ա-
...:

— Գունակ(ս) գունակ(ս). գանազան
ձևերով:

Գունաւոր. ի. աց. ա. գունավոր, ...
գույնով (ձի):

Գունդ, գնդի, աց կամ իւ. ող. գ.
1. գունդ, շրջանակ, կամար, 2. երկ-
նակամար, մոլորակ, ...ի կամ ...
նի գունդը, 3. անիվ, 4. ...
...

Գունդ, գնդի, իւ կամ աց. գ. 1. կազ-
մակերպված զորք, 2. բազմություն
զորքի մի խումբ մաս, 3. ...
թեմ (...), 4. ...

Գունդագունդ. գունդ գունդ. ա. մ. գըն-
դերով, բազմություն, գունդ գնդի
ձևերից:

Գուպար, ի. աց կամ իւ. գ. 1. կռիվ,
պատերազմ, 2. մենամարտ, մրցու-
թյուն, 3. գումար:

— Գուպարս նստել. ...

Գուսան, ի. աց. գ. 1. երգող, պարող
կամ կին, 2. թերթասեր կին, 3.

խնկեղատակ, մեհեան։

Գռեհ, ի, աց կամ իք. գ. 1. փողոց, հրապարակ, 2. գյուղ, շեն, 3. փողոցում թափված աղբ, ցեխ։

Գռմռալ, ցաց, ցի՛ր. եր. 1. գռմռալ, 2. կարկաչել։

Գրաստ, ու, ուց. գ. 1. նավակը կամ բեռնակիր անասուն, ձի, էշ, ջորի, 2. բեռնակրության անասուն, 3. ա. բիրտ, կոպիտ, բթամիտ։

Գրատ. գ. զինվորական վերարկու։

Գրգամ, ացայ կամ ացի. չէ. գուրգուրալ, փափկանալ։ Այլն՝ գրգամ։

Գրգել, եցի. եր. գուրգուրանքով պահել, փափկացնել, 2. ամոքել, մեղմացնել, 3. չէ. ա. գրգամ։

Գրգռել, եցի. եր. գրգռեցուցանել, ցուցի. ցո՛. ներ. գրգռել, հրահրել, գրգռել, մղել կռվի. մղել մի բանի, գրգռել առաջ։

Գրիչ, գրչի, աց. գ. 1. գրագիր, գրող, նոտար, 2. նկարիչ, 3. գրելու գործիք, եղեգ, փետուր, 4. փորագրության գործիք։

Գրիւ, գրուի, ուաց. գ. 1. հացահատիկի, ալյուրի և այլ ցամաք նյութերի չափ, 2. գրված, ամանը։

Գրչաման. գ. 1. ամանը՝ մեջ գրիչի տարողությամբ, 2. ընդհանրապես աման, 3. աման, որ գործածվում է խորտիկի ծանելուց։

Գուշել, եցի. եր. հուշադրել, պատասխանել, բղխանել։

Գող, ի, իգ. ա. չորացած, չոր (մարմնի անդամների և ծառերի մասին)։

Գոսանալ, ացայ. չէ. չորանալ, թառամել։

Գտանուեմ, եցի. եր. գտանուիլ, եցայ, չէ. գտնել կարել, գտանարկել։

Գտեք տեղել. գտնի կարել՝ իրեն կամ ուրիշին, գտանարկել, գտանարկվել։

Դ

Դադարել, եցի. դադարիլ, եցայ. չէ. 1. հանգիստ առնել, հանգստանալ, մնալ, 2. մի տեղ իջնել, իջևանել, օթևանել։

Դադարեցուցանել, ցուցի. ցո՛. ներ. դադարեցնել։

Դալարի, ոյ, եաց. գ. կանաչ խոտ, կանաչեղեն։

Դանդանակ կամ անի դանդանակ. գ. կանաչ կամ սեւի գույնի թանկագին քար։

Դահեկան, ի, աց. գ. դրամի չափ, տասնոց ոսկի կամ արծաթ։

Դայեակ, յեկի, աց. գ. 1. ծծմայր (հառակագն ուրիշի երեխայի), 2. ընդհանրապես սնուցիչ, 3. դաստիարակ, խնամակալ, 4. աշխարհիկ։

Դանգ կամ դանկ, ի, աց. գ. 1. հատիկ, ոսկեգործի կշռաքարի մասը, 2. պղինձ դրամի քառորդ մասը, 3. ծանրության չափ, երկու գարեհատիկ կշիռ, 4. մանր դրամ։

Դանդաղանք, նաց. գ. 1. դանդաղկոտ շարժում, դանդաղկոտ քայլ, 2. ծուլություն, ցնորամտություն։

Դանդաղել, եցի. չէ. 1. երկարել, ուշանալ, ուշարկվել, 2. մարդ տատանվել, ցնդաբանել, հետաձգել զործը առաջ։

Դանդաղեցուցանել, ցուցի. ցո՛. ներ. ուշացնել, տատանել, ձգձգել։

Դաշխուրան, ի, աց. գ. տաշտ, կոնք։

Դաշն, շին, շինք, շանց. գ. 1. ուխտ, պայման, պայմանադրություն, դաշինք, 2. համաձայն հանգամանք, համաձայնություն, 3. ներդաշնակություն, 4. ա. մ. չափավոր, մեղմ, կանոնավոր։

Դառնահամ. ա. դառն համ ունեցող, փոխաբերաբար՝ դառնացուցիչ։

— Դառնահամ փշանել, դառն ցավել։

Դաստակերտ, ի, աց կամ իգ. գ. 1. ձեռքով շինված շեն, ագարակ, ավան, գյուղաքաղաք, 2. ձեռքի աշխատանք։

Դաստարակ, ի, աց. գ. սրբի կտոր, թաշկինակ, երեսսրբիչ։

Դաստառակ, ի, աց. գ. ձեռքի սրբիչ, թաշկինակ, մաքուր կտոր։

Դատել, եցի. եր., դատիլ, եցայ. հր. 1. դատաստան անել, վճիռ կարդալ, 2. դատապարտել, 3. պատժել, 4. համարել, 5. աշխատել, վաստակել։

— Դատել (կամ դատիլ) նոյն, արոյ կամ ի սուր, յաղթ. ալքել, չարչարել, մեռցնել։

— Դատիլ ընդ ումեք, մեկի հետ դատավել։

Դար, ու, ուց. գ. 1. անորոշ երկար ժամանակաշրջան, 2. մի ակունք, մի սերունդ, 3. հարյուր կամ հազար տարվա շրջան, 4. տարիք, հասակ։

Դար, ի, իգ. գ. 1. բարձրավանդակ, լեռնալանջ, բարձր մաս, 2. գետի ափերի բարձրությունը։

— Դարի դարիւ. մ. ափերով էր, մինչև ափերը բարձրացած, լիքնլեցուն։

Դար. ա. գոյցը։

Դարան, ի, աց. գ. պահելու տեղ, պահարան։

Դարան, ի, աց. գ. 1. թաքստոց, ուր պահվում են՝ թշնամու վրա անակնկալ հարձակվելու համար, 2. որոգայթ, թակարդ, 3. դավաճանություն, 4. ատյանի որջ, 5. ամրանալու տեղ։

Դարանակալ. ի, աց. ա. 1. դարանում պահ մտած, 2. աթոռակից, մասն։

— Դարանակալ լինել. 1. դարան պատրաստել, 2. մնալ, չարաչարել։

Դարանամուտ. ա. դարան մտած, դարանակալ։

Դարապան, ի, աց. գ. դռնապան։

Դարաստան, ի, աց. գ. ծառաստան։

Դարաւանդ, ի, աց. գ. 1. բարձր տեղ, 2. լեռան գլուխ, 3. գետի ափ, 4. տափարակի դուրս ցցված մասը։

Դարձ, ի, իգ. գ. 1. դառնալը, դարձ, 2. դարձվածք, 3. մ. դարձյալ։

— Դարձ առնել. 1. դառնալ, 2. դարձնել։

Դարձուցանել, ձուցի. ձո՛. ներ. դարձնել, փոխել։

Դարման, ոյ, ոց կամ ի, իգ. գ. 1. դեղ, ճար, հնար, 2. խնամք հիվանդի նկատմամբ, հիվանդի սնունդ՝ բուժելու պատճառ, 3. կերակուր, սնունդ։

Դարմանիչ, նչի, աց. ա. դարմանող։

Դաս, ոյ կամ ու. գ. դասակի միջոցառումն՝ մեկին ապահովելու կամ վճարելու համար, նեղություն, չար միտք, խորհուրդ, որոգայթ։

Դաւել, եցի. եր. դավ դնել, դավաճանություն անել մեկի դեմ։

Դեգերել, եցայ. չէ. 1. մի տեղ մնալ, 2. մի բանով զբաղվել, երկար ժամանակ անցկացնել, տևել, 3. ասաճնություն, դարդարել մի բանով, 4. տատանվել։

Դեգերումն, ման. գ. 1. դեգերելը, մի տեղ մնալը, 2. տևելը, 3. մի բանով զբաղվելը, ասաճնություն։

Դեղնել, եցի. եր. դեղնեցուցանել, ցուցի. ցո՛. ներ. երերել, երերցնել։

Դեղեւիլ, եցայ. չէ. երերալ, այս ու այն կողմ շարժվել, դողդողալ, դեդևվել։

Դելփին, փինի կամ փնի. աց. գ. ծովային կաթնասուն կենդանի, ծովախոզ։

Դենդեա կամ դենդեալա, ի, աց. գ. կտակոյ, ... կամ գույնի ակնը։

Դեղ, ոյ, ոց կամ ի, իգ. գ. 1. խոտ, 2. բժշկական, բժշկական նյութ, 3. հիվանդի դեղ, 4. թույն, 5. կախարդական միջոց, 6. օծանելիք, 7. ներկ, 8. թանաք։

Դեղակուր լինել. 1. թունավորվել, 2. թունավորված մեռնել։

Դեղել, եցի. եր. 1. դեղ անել, դեղ տալ, 2. թունավորել, 3. կախարդել, 4. ներկել։

Դեղձան, ի, աց. ա. բաց դեղին, խարտյաշ, շիկահերմին, ոսկեգույն։

Դեղնեղի. գ. դեղ, հաճ. Թույն և դեղ. ենթի. նեղության դեղ, ապաշխարության դեղ։

Դեն, ի, իչ. գ. կրօն, հաւատք։
Դեսպակ, ի, աց. գ. պատարագաւորի երկձիան կառք՝ ծածկոցով։
Դեսպան, ի, աց. գ. պատգամաւոր, պատուիրակ, լուր տանող, դրաշնիկ։
Դերբուկ, բկի, աց. ու. գ. թմբկաձեւ ու խեցեղէն նուագարան, բարակի մէջ [illegible] հաւաքուած։
Դէ, դէի. աց. գ. 1. ոգի, սատանայ, դեւ, 2. հեթանոսական աստուած, կուռք։
Դէմ, դիմի, մաս մարմնոյ ճակատէն մինչեւ ծնօտ՝ դէմք, դիմաց. գ. 1. երես, դէմք, 2. երեսի կողմը, դիմացը, ընդդէմ, առաջ, հակառակ, 3. ալք, 4. անձ, 5. երեւակայութիւն, 6. արիութիւն, 7. պատասխանատուութիւն, համարձակ, պատճառ։
— Դէմ դնել. դիմել, ընդդէմ։
— Դէմ կալ. դէմ կենալ։
— Չդէմ ունիլ. դէմ առնել, դիմադրել։
— Ի դիմի հարկանել. դիմի հարկանել. ընդդիմանալ, զարնել, հանդիպել։
— Դիմի կալնել. դիմադրել, ընդդէմ կենալ։
— Դէմ յանդիման. 1. դէմառդէմ, երես առ երես, 2. ամբողջ, ներկայութեամբ, 3. անձամբ։
— Դէպ, դիպի. աց. գ. դիպուած, դէպք։
— Դէպ. մ. պատահմամբ, դիպուածով։
Դէպ, դիպի. ի դիպող. ա. համեմատ։
— Ի դէպ. մ. արժանապէս, ըստ պատշաճի, համեմատ ձեւով։
— Ի դէպ է. մր. համեմատ է, կարելի է։
— Ի դէպ գալ. հասնել, համեմատ ըլլալ, համեմատ գալ, համաձայնել։
Դէպ և դէպ. մ. շատ համեմատ։
Դէտ, դիտի. աց. գ. ա. 1. դիտող, 2. լրտես, 3. դիտանոց, 4. նպատակ։
— Դէտ ունել, առնել. աչք դնել։
— Դէտ ածել ունել. 1. ուշադրութեամբ նայել, 2. սպասել, 3. փորձել, անձնել, դիտել, քննել, հետաքրքրել։
— Դէտակն ի վեր ունել կամ ամբառնալ. վերել։
Դժնդակ, ի, աց. ա. դժնեայ ու անտանելի, չարաչար, սոսկալի, 2. ամեհի, ճարտար։
Դժնեայ, դժնեայ. նոյն եղ.։
Դժնիկ, նկի. գ. 1. փուշ, 2. ա. դժնդակ։
Դժնութիւն. գ. 1. դաժանութիւն, դժնդակութիւն, 2. դժկամակութիւն։
Դժպեհդանելի. ա. դժուարանցանելի, որ անցնիլը դժուար է, դուրս գալ կամ վեր բարձրանալ։
Դժուարամատոյց, դժուարամատչելի. ա. որուն դժուար է մօտենալ։
Դժուարանալ. ա. որուն դժուար է ժուժել, դժուար մոռցնել անձերով։
Դժոխք. ա. անհանգ, ծանր և խիստ։
Դի, դիոյ, աց. գ. դիակ։
Դիարտաքոյ. ա. խրախ նման ճանոյն թափուած, տապալուած։
— Դիարտաքոյ կացուցանել. սպաննել, փառքն փոել, դիապատաղ գարնել։
— Դիարտաքոյ անկանել. խողխել. սպանելով ընկնել, փառքն վրայ թափուիլ։
Դիականալոտ, ադի. իդ կամ աց. գ. դիակը կողոպտող, դիակի վրայէն զգեստ կամ այլ իրերը թալանող։
Դիակն, կան. գ. մր. դիակ, մեռած մարմին։
Դիմեալ, եցի. չր. 1. դէպի առաջ դիմել, 2. առաջ վազել։
Դիմեցուցանել, ցուցի. չն'. պր. վազեցնել, քշել, դիմել տալ։
Դիմակ, ի դիմակաց. գ. ժամանակաւոր արդիւնքային, թանձր՝ քիչ ժամանակի համար։
Դիպան. ա. պատշաճ, համեմատ, նման։
— Դիպան պատահիլ, եղանիլ. դիպչիլ, զարկելի, հանդիպել, դէմ ելնել։
Դիպեցուցանել. ցուցի. չն'. պր. 1. դիպցնել, 2. հասցնել։
Դիպել, իմ. եպաւ. մր. դիպելի, եպաւ. չր. (3-րդ դէմքով միայն գործածուած). 1. հանդիպել, պատահիլ, գտաց ըլլալ, 2. դիպչիլ, 3. զարնուիլ, ըլլալ։
Դիպուած, ոյ. աց. գ. 1. պատահմունք, դիպուած, դէպք, 2. դիպչիլը՝ դիպուած անձը։
Դիտանոց. ի. աց. գ. 1. դիտելու՝ պա-

տահակի աշտարակ, 2. բարձր տեղ, ամրոց, 3. ա. բարձր։
Դիր, դրի, իդ. գ. 1. դնելը, դրուելը, դրութիւն, *դիրք, 2. կարգ, կերպ, 3. բնաւորութիւն, 4. հետ դրուած բան, որ բնական չէ, 5. գիրկ, դիրքաւորական, 6. կազմարար, 7. խօսքի մէջ կէտ դնելու տեղը։
Դիտական. ի. աց. ա. դիտի համար, աստուածայայտնական։
Դիւան, ի. աց. գ. 1. արքունի դահլիճ, ատեան՝ գործեր քննելու համար, 2. պետական գրագրութիւններ վարելու տեղ, գրասենեակ, 3. գրատուն, հրատարակչատուն, արխիւ, 4. ժողով։
Դիւանագիր. ա. գ. 1. հրատարակչական գրող, 2. դիւանում գրուած, 3. դիւանական դրութիւն, արձանագրութիւն։
Դիւապաշտ. ա. 1. դեւ պաշտող, 2. կռապաշտ, 3. կռապաշտական։
Դիւր, ի, աց կամ իդ. գ. հանգիստ, մեղմութիւն, փափկութիւն։
Դիւրութիւն. գ. կանխարգելութիւն։
Դիւր. ի. իդ. ի դիւրի. ուր. ա. 1. դիւրին, հեշտ, 2. հանգիստ, հեշտ գնալու (համապատասխան ճամբին), 3. համեստ, անդորրեւ, դիւրեկան, գ. 4. հեշտութիւն, հանգստութիւն, անդորրութիւն, 5. հանգիստ տեղ, հանգստավայր, 6. մ. հեշտութեամբ, դիւրին կերպով։
Դիւրաւ կամ դիւրաւ. մ. 1. հեշտ կերպով, հեշտութեամբ, առանց դժուարութեան, 2. հանգստութեամբ, անխռով, 3. ա. դիւրին, յարմար։
Դիւցազն, զին կամ զան, զանց, զանց. ա. գ. 1. աստուածներէ ծագում առած, հերոսացած, 2. քաջ, կտրիճ, առաջին, նշանաւոր հերոս։
Դիւցազնութիւն. ա. հեթանոսական աստուածներ պաշտող, կռապաշտ։
Դղեակ, դղեկի կամ դղեկ, դղեակ. գ. 1. հեթանոսական աստուածներ կամ նշանաւոր արձաններ, կուռք։
Դղրդ կամ դղրդել, ալոյ կամ ալի. իդ. ցնցարկել, ցնցող ձայն։
Դնել, եդի, դի'ր, դի'ք. նր. 1. դնել, 2. համարել, եղելու, 3. անել, կարգել, 4. ա.
Դնեմ. ...
հաստատել, ենթադրել, 3. անել, կարգել, 4. ամբ
— Դնել զանձն. անձնուրել։
— Դնել զգիտս՝ զգիտս (ի վերայ ի-րիք). 1. հաւատ, 2. ազդել։
— Դնել ի սրտի. ժամանել։
— Դնել ի մտի. մտքում դնել, մտադրել։
— Դնել աղօթս. աղօթելով։
— Դնել զուրն ունել. համաձայնութեան ձեռքին (մէկ բան)։
— Դնել զանձն (տուալ). կեանքն տալ (մէկուն)։
— Դնել զանձն իւր ի վերայ այլոց կամ զոգին ի բաժն. իրեն կեանքը նուիրել։
— Այն դնել ունել. մէկի վրայ կամ մտքով ալ գնալ։
— Դնել դիրս. դիրք շարադրել։
Դողալ, ացայ կամ ալի, դա'. չր. դողալ, սարսափիլ։
Դողումն, ման կամ դողութիւն. գ. դողդողալը, սարսուռ, սասանում, վախ։
— Ի դողման լինել. դողալ։
— Զդողման՝ դողդմանց՝ դողդողանք դողանի հարկանել. դողալ, սարսափիլ, սարսափել։
Դոյզն. ա. մ. 1. քիչ, փոքր ինչ, փոքր չափով, 2. չնչին, աննշան։
Դոյզնաքեայ, քեի կամ քեայ, քեայ. ա. 1. չնչին, թեթեւ, հասարակ, 2. քիչ, 3. մ. փոքր չափով։
Դուռն, դրան, դրունք, դրանց. հոգ. դուռս, դրաց. գ. 1. դուռ, 2. թագաւորական պալատ, արքունիք։
— Առ դրան, ի դուրս, դրան մօտ։
— Ի դուրս ի դուրս. դռնէ դուռ։
— Դրան արքունի. պալատ և պալատականներ։
— Դրան երէց. պալատի կամ եպիսկոպոսարանի քահանայ։
— Դուրս դառնալ (իրաց). ելք գտնել։
Դուստր, դստեր. եղ. եղաց. գ. աղջիկ զաւակ։
Դպիրք կամ դպրութիւն. փոխան գ. գրքի ձայն։
Դպրութիւն. գ. 1. գիր, արուեստ, 2. գրագիտութիւն, գրականութիւն, 3. գրքեր

ջեր. դրականություն, ժառանգություն. 4. դպիրի պաշտոն, ատենականութիւն։

Դրոշմել, եցի. ներ. կամ դրոշմիլ, եցի. պարտավորել, նախատել, քամահրել, պախարակել, հանդիմանել։

Դրօշակ, ի, ից. ազ. ա. պայմանական պաշտոնյա, թագավորի ձեռք (ձողը) կամ զանազ զանգվածի, զրահի ընկած։

Դրդուեցուցանել. ցուցի. ցո՛. պր. 1. դրդվել տալ, շարժել դրդել, հրել, 2. խախտել, տեղից շարժել, դղրդեցնել։

Դրժել, եցի. ներ. ուխտադրժել լինել, խոստումը չկատարելով խաբել, զանցառնել, ճնշել։

Դրուժել, եցի. ներ. 1. նշան դնել, դրել, փորագրել, 2. տպագրել, ձեռք կամ կնիք դնել, 3. փակել, ցանկապատել, 4. ներկել։

# Ե

Ել, ի, իւ, ելք, ելից. գ. 1. ելք՝ ներսից դուրս. 2. վեր բարձրանալը, 3. անցք, ճանապարհ, ելք. 4. վերջ. 5. հաջողություն, ճարը, 6. արմատ. 7. բխելը. 8. բերք. 9. շրջան. 10. աղբ, 11. ծախս։

Ելանել, ելի, ե՛լ. չզ. 1. ելնել, 2. ծագել, բխել, 3. հաջողվել, առաջանալ, 4. վեր ելնել, բարձրանալ, 5. հեծնել, նստել, 6. վիճակվել, համար գալ, 7. կատարվել, լինել։

— Ելանել բան..., դուրս գալ։

— Ելանել ընդ առաջ. թշնամական [illegible] լինել։

— Ելանել ընդ ինչ. մի բանով զբաղվել։

— Ելանել ի վերայ իրաւանց այլոց. ուրիշի իրավունքը հափշտակել։

Ելանելիք, եաց. գ. ամբողջը, ելքերը։

Ելուզանել, ուզի. պր. դուրս հանել, դուրս բերել, ելնել տալ։

Եկ, ի. ազ. գ. եկվոր, դրսեցի։

Եհ, ի. ից. գ. բաժակ, գավաթ։

Եղբայր, բօր, բարք, րց. գ. 1. եղբայր, 2. մոտ ազգական, 3. ընկեր, 4. կրոնավոր։

Եղբայրութիւն. գ. 1. եղբայր լինելը, 2. վանականները, վանք։

Եղեամն, եման. գ. եղյամ, սառած ցող։

Եղեգն, եղեգան կամ ան, եղեգունք կամ եղեգք. գ. շամբ, կնյուն, փողանոթ։

Եղէգն, եղեգան, գանք. գ. 1. եղեգ, 2. եղեգնյա գրիչ. 3. եղեգնյա ձող, գավազան կամ չափ, 4. եղեգի տեսակ՝ բույրավետ նյութ։

Եղէգնաբնակ կամ եղեգնաբնակ. ա. եղեգնուտում բնակվող։

Եղէգնաւոր կամ եղեգնեաւոր. ա. եղեգ ունեցող, եղեգ բուսցնող, եղեգի տեսակ։

Եղծ. գ. 1. փչացնելը, ապականելը, ջնջելը, մերժելը. 2. ա. եղծված, անշուք, փչացած, վատթար։

Եղծանել, եղծի, ե՛ղծ. ներ. 1. փչացնել, ապականել, աղճատել, վնասել, 2. դուրս գցել, ոչնչացնել, 3. հերքել, ընդդիմադարձյալ միտքը հրապարակ հանել։ Նույն եր. եղծել և եղծանել։

Եղկելի. ա. ողորմելի, թշվառական, ողորմելի։

Եղն, եղին, եղինք, եղանց. գ. եղնիկ, եղջերու։

Եղուկ. ձ. վա՛յ, վա՜յ, ավա՜ղ, աղեկտուր, ո՜հ, ա՜խ։

Եղուկ առնել. ցավակցել։

Եղեռանք, եաց. գ. պարտավորություն, ամոթանք, նախատինք, հանդիմանություն։

Եղեռնել, եցի. ներ. պատճառել, պատճառաբանել, հանդիմանել, նախատել։

Եռալ, եռի կամ եռայ, եռեաց կամ եռեայ. չզ. 1. եռալ, 2. վառվել, բորբոքվել, 3. վխտալ, գնա ու գալ շարժվել։

Եռանդ, ի. յեռանդն կամ յեռանդն. գ. 2. երեկվան նախորդող օրը, երեկ չէ՝ մյուս օրը։

Եռանդն, դեան. գ. 1. եռալը, 2. տաքություն, 3. ջանասիրություն, աշխատասիրություն, 4. սրտերի վճռականությունը։

Եռոց, եռեց. գ. անդ։

— Առ եռեց. անցնելուց, անցյալ։

— Ձեռաց առնում. ձեռք առնել։

Երագ, ի. երագք կամ գունք. ա. 1. թեթև, արագընթաց, արագ։

— Երագ, երագս, երագումն, երագ երագ. մ. արագորեն, շուտ, անընդհատ։

Երագաց, ի. ից. հնդկ. լինում է նաև երագագնաց, գ. ձին՝ կենդանիների բանակի համար, թռչուն, արագաթև հանդիպում է նաև առանձին ձևով։

Երագահաս. ա. արագահաս։

Երագել, եցի. չզ. 1. շտապել, արագանալ, 2. ներ. արագացնել։

Երագաջեր, ջիոյ. ազ. ա. 1. երագ ձեռքով, 2. երագներով ավարող, երագներով գեղավիճարվող։

Երախան, ի. ազ. գ. 1. սերում, սերմանություն, 2. խոտը։

Երանելի, լւոյ, լեաց. ա. երանի տալու արժանի, երջանիկ։

Երանի, նայ. նաւ. գ. մեծ, հանուն, առաջ։

Երաստ, ի. ազ. երաստական, ի. ազ. գ. 1. ստեղ, 2. շանկեր փորձեր, ընկ։

Երաշտ, ի. ից կամ ու, ուց. գ. ցամաք, համախորություն, երաշտ, ձագ։

Երբեմն. մ. 1. երբեմն, մի ժամանակ, մի անգամ, առաջները, ժամանակով, 2. ժամանակ առ ժամանակ, պատահում է որ։

— Էր երբեմն, յերբեմն ժամանակի. մի ժամանակ, մի անգամ։

— Երբեմն երբեմն, յերբեմն երբեմն ժամանակի. երբեմն-երբեմն։

Երբէք կամ երբէք. մ. երբեմն։

— Երբէք երբէք. մ. երբեմն-երբեմն։

Երգ, ոյ, ոց. գ. 1. երգեր. 2. ասերգ, աղոթ, բնաւանք (փոխաբերությամբ)։

Երդմնեցուցանեմ, ցուցի. ցո՛. պր. 1. երդվեցնել, 2. դյութել, երդումի ձեվով։

Երդնում, դուայ. դուի՛ր, դուեալ. չզ. երդում անել, երդվել։

Երեկ, ցերեկ, յերեկ. ընդ երեկս, առ երեկս, ցերեկս, յերեկս. գ. 1. երեկո 2. մ. երեկոյան դեմ, 3. գ. արևմուտք. 4. երեկոյան ատոր։

Երեկոր. գ. 1. երեկո, 2. մ. երեկոյան։

Երեկորի, ւոյ կամ ւոյ, ւեայ. գ. երեկո։

— Երեկորի. մ. երեկոյան դեմ։

Երեկորին. 1. ա. երեկոյան, իրիկնային. 2. մ. երեկոյան, երեկոյան դեմ։

Երես, ի. մանավանդ երեսք, աց. գ. 1. դեմք, 2. ան, 3. աչք։

— Երեսք, 1. երեսպաշտություն, 2. արտաքին տեսք։

— Երեսս առնել. աչառել, խույսը կատարել։

— Ընդ երեսս. դիմացը, երեսին։

— Ընդ երեսս բերել. ղամ. հայտնի գործել, հայտնի գալ։

— Ընդ երեսս իմ. Ես, Ըստ. իմ, գիտե գոյություն։

— Ընդ երեսս (սուսեր). ընդդեմ (մեկին)։

Երեւելի, լւոյ, լեաց. ա. 1. երևացող, տեսանելի, 2. նշանավոր, հայտնի, ականավոր, 3. թափանցիկ։

— Երեւելի առնել. հայտնի դարձնել, հայտնել։

— Երեւելի է. հայտնի է, պարզ է։

— Երեւելի անել. երևան հանել, հայտնել, պարզել։

Երեւութիւն. գ. երեւալը, երեվույթ, տեսիլ։

Երեւեցուցանել, ցուցի. ցո՛. պր. ցույց տալ, երևցնել։

Երեւիլ, եցայ. չզ. 1. երևալ, 2. ցույց կենել, բացվել, ծագել։

Երեւոյթ, ութի, ութից. գ. երևույթ, երևակայություն, թվացող բան, նմանություն, երազ։ Այլև՝ ա. 1. երեվելի, ըղձալի, 2. նշանավոր, 3. խաղտասանակ, 4. ամբողջությամբ։

Երեքանկիւնի. ա. եռանկյունի։

Երեքձայնի. ա. երեք ձայն ունեցող (ձայն)։

Երեքտասան, ի, ից. թ. տասներեք։
Երէ կամ Էրէ. ոյ. ոց. գ. 1. վայրի կենդանի, գազան. 2. այծ կենդանի։
Երէկ, րեկի, աց. ա. բոլորաբար, առաջի, խորան, 2. գ. անցեալ, առաջ անցած օր։
Երէց, երիցու, ցունք, ցանց. ա. 1. տարիքով մեծ, 2. առաջին, նախապատուական, աւագ, 3. քահանայ։
Երթալ, չոգայ, ե՛րթ, երթա՛յք, երթեալ. չր. 1. գնալ, 2. յառաջադիմել։
Երասան, ի. աց. գ. 1. անզուսպ, գը-նաց ձիւն, հրթեծեկեր, 2. վարդ, կլանքի ընթացքը, 3. ընթացք ձիոց, երթեւեկող։
— Երասանս առնել, երասանս առնուլ. երթեւեկել, գնալ գալ։
Երասանել, եցի. չր. երասանիլ, եցայ. չր. գնալ գալ, անցուդարձ անել, երթեւեկել։
Երասանութիւն. գ. գնալ գալը, անցու-դարձ, երթեւեկութիւն։
Երիվար կամ Երիվար, ի, աց. գ. 1. ձի, արագավազ ձի, 2. ծառայ ձի։
Երիցութիւն. գ. 1. երէց՝ աւագ լինելը, 2. առաջնութիւն, իշխանութիւն, 3. քահանայ լինելը, 4. հոգեւոր պաշտոն։
Երիցս, երիցս անգամ. մ. երեք անգամ։
Երկայնաձեւ. ա. երկար ձեւ։
Երկայնաձիգ. ա. 1. երկար, 2. երկարաձեւ, 3. հեռու, 4. հեռու տեղ գնող (նետը)։
Երկայնամիտ. ա. համբերատար, հեզ, բարեմիտ։
Երկայնակեաց. ա. երկար կեանք ունեցող, երկարակեաց։
Երկայն, ի, ից. ա. տարածականութիւն։
— Յերկայնս լինել, առնել. տարածուել, տարածել մէջ եղելը։
Երկդիմի. ա. 1. երկու դէմք՝ կերպարանք ունեցող, 2. երկու երես ունեցող, երկու երեսն էլ գրուած (գիրք), 3. երկու իմաստ ունեցող, երկու կերպ հասկացուող, 4. երկու հոգւով, 5. անորոշ, խորհրդաւոր, խորամանկ։
Երկեամ. ա. 1. երկու տարուայ, 2. գ. երկու տարուայ ժամանակ, երկու տարի։
— Ընդերկեամ. մ. երկու տարուայ անցութեամբ, երկու տարուայ ընթացքում։
Երկթերթի. ա. 1. երկու թերթ ունեցող, երկու թերթի բաժանուած, 2. երկու թերթի ձեւով։
Երկին, կնի, նու, նիւ, Երկինք, կնից, կնօք. գ. երկինք։
Երկիր, կրի, րաւ. գ. 1. երկիր, երկրագունդ, 2. երկրի մի մաս, մի նահանգ, գաւառ, 3. աշխարհ, մարդիկ, 4. հող, գետին, 5. ցամաք։
Երկիր պագանել կամ Երկրպագանել, պագի, պա՛գ. եր. երկրպագել։
Երկիւղ, ի, ից. գ. վախ, երկիւղ։
— Յերկիւղի հարկանել. վախենալ, երկիւղ զգալ։
Երկիւղած, ի, աց կամ ից. ա. վախեցող, վախկոտ, երկչոտ, երկիւղ զգացող։
Երկիւղումն կամ Երկեղումն. գ. վախ։
— Երկիւղումն (կամ Երկեղումն) արկանել. վախ ներշնչել, վախ առաջացնել, վախեցնել։
Երկմտել, եցի. չր. 1. տարակուսել, կասկածել, վախենալ, 2. անհաւատարիմ լինել մէկին։
Երկն, կան, կանց, անց. գ. 1. ծննդաբերական ցաւ, երկունք, 2. հղացում, 3. տանջանք, տառապանք, ցաւ, հալածանք։
Երկնաձիգ, ձգի, աց. ա. բարձր, երկար։
Երկնել, եցի. եր. 1. ծննդաբերական ցաւով բռնուել, երկնել, 2. կարօտով սպասել, 3. չարիք նիւթել, 4. պատճառել, առաջ բերել, աշխատանքով մի բան գոյացնել։
Երկնչել, երկեայ, երկի՛ր, երկուցեալ. չր. վախենալ։
Երկոտասան, ի, ից. թ. տասներկու։
Երկոտասանեւորդ, ի, աց. թ. տասներկուերորդ։
Երկուանալ, ացայ, կամ յերկուանալ, ացայ. չր. 1. տարակուսել, կասկածել, 2. երկու մասի բաժանուել։



Երկուեան, երկոցունց կամ երկոցին, երկոքեան, թ. երկուսն էլ։
Երկսայր կամ Երկսայրի, ա. գ. երկու բերան ունեցող՝ թուր։

Եւ եթ կամ Եւեթ. նշր. միայն, միայն։
Եղ կամ Իւղ. ոյ, ոց. գ. 1. իւղ, 2. ձէթ, 3. կարագ։
Եւս. մ. շ. 1. էլ, 2. ա. աւելի։

## Զ

Զաղիր, զրի. աց կամ ից. ա. 1. զզուելի, զարշելի, 2. մ. չարութեամբ, վատ ձեւով։
Զազրոյթ, րոյ, րաց. ա. գ. զզուելի բան, անպարկեշտ, փոխաբերութեամբ՝ կեղտ։
Զայրագնիլ, նայ. չր. խիստ բարկանալ, զայրանալ, կատաղել։
Զանազանել, եցի. եր. 1. զատել, որոշել, տարբերել, 2. փոփոխել, տեսակ-տեսակ անել։
Զանգիտել, եցի. չր. վախենալ, երկիւղ կրել, տատանուել։
Զանց, զանցք, ցից. գ. չափից անցնելը, թողնել անցնելը։
Զանց առնել. չր. 1. մոռացի անցնել, թողնել անցնել, 2. գերազանցել, յառաջ անցնել, 3. եր. անտես անել, ուշադրութեան չարժանացնել։
Զանցանել, զանցի կամ ցեայ. չր. 1. գերազանցել, առաջ անցնել, 2. ժամանակը անցկացնել, ձգձգել, 3. անտես անելով անցնել, անուշադիր լինել։
Զառանցանք, քաց. մ. զառանցք, ցնդաբանք։
Զառ ի վայր. ի, ից. ա. գ. 1. դէպի վար թեքուած, 2. զառիվայր տեղ։
Զարթնուլ, թեայ, թի՛ր. չր. արթնանալ։ Այլն՝ զարթչիլ, թեայ։
Զարկանել, զարկի, զա՛րկ. եր. խփել, հարուածել։
Զարկուցանել, ուցի, ո՛. պր. ստիպել խփել, բախել, գետնին զարկել։
Զարդ, ի, ից. գ. 1. զարդ, 2. պատրաստանք, գեղ, զարդ։
Զբօսանք, նաց. գ. 1. հանգիստ, զբաղմունք, 2. հանգստութիւն, 3. ուշադրութեան գրաւում, 4. զբաղմունք, 5. որեւէ գործ՝ զբօսնելու համար։

Զբօսնուլ, սայ, սի՛ր. զբօսանել, ացայ. զբօսնիլ, սայ, սի՛ր. չր. 1. զբօսնել, 2. զբաղուել մի բանով՝ բաւականութեան համար, ուրախանալ, 3. ուշադրութիւնը գրաւել։
Զբօսուցանել, ցուցի, ցո՛. պր. 1. զբօսնել, 2. զբաղեցնել ուրախ, հանգստացնել, 3. անհոգութեան տալ, խնայել։
Զգենուլ, նայ, գի՛ր. հր. հագնել, հագնուել։
Զգեստանել, եցի. եր. զգեստն հագցնել, զգեստ տալ։
Զգեցուցանել, ցուցի, ցո՛. պր. հագցնել։
Զգոյշ, զգուշի, ի զգուշի. ա. 1. զգուշաւոր, աչալուրջ, ուշադիր, 2. ապահով։
— Զգոյշ լինել, զգոյշ կալ. 1. զգուշանալ, 2. ուշադիր լինել, ուշադրութիւն դարձնել։
Զգուշանալ, ացայ. չր. 1. զգոյշ լինել, 2. բան հասկանալ, բան պահել, ուշադիր լինել։
Զգօն, ի, ից. ա. 1. ուշիմ, խոհեմ, խոհուն, 2. հեզ, համեստ, 3. խոհական, հանճարեղ։
Զգօնանալ, ացայ. չր. 1. զգօն դառնալ, զգաստանալ, խելօքանալ, հանդարտուել, 2. ուշադիր լինել, զգոյշ լինել։
Զգօնացուցանել, ցուցի, ցո՛. պր. 1. զգօն դարձնել, զգաստացնել, հանդարտեցնել, խելօքացնել, 2. ուշադիր դարձնել։
Զեկուցանել, կուցի. կո՛. պր. 1. իմաց տալ, հայտնել, ծանօթացնել, 2. ճանաչել տալ։
Զեղուլ, զեղի, զե՛ղ. եր. 1. լցնել, լիքը լցնել, 2. թափել, կուտակել, 3.

ծածկել, սփռել, լիքը լցնելով դուրս թափել։

Զենում, զենի, զե՛ն. եր. 1. մորթել, մերթ կտրել, 2. զոհել, զոհի համար մորթել, 3. մորթը հանել։

Այլն՝ զենել։

Զեղում, ացի կամ ացայ, եա՛. չր. 1. թափել, 2. վիրավորել։

Զեղեցեմ, եցի. եր. 1. անդավորել, հասցնել, բնակեցնել, 2. պատվիրել, կարգով շարել։

Զերծանեմ, զերծի. եր. 1. ազատել, փրկել, 2. քաշել, հանել։

Զերծանիմ, ծայ, ծի՛ր. զերծիմ, զերծեալ, ծայ, ծի՛ր. չր. 1. փրկվել, ազատվել, 2. ձեռքից ելնել, 3. փախչել։

Զերծում, ծի, զե՛րծ. եր. վրայից քաշել հանել, հանել։

Զերծուցանեմ, ծուցի, ծո՛. պր. փրկել, ազատել։

Զերծուցիչ. ա. փրկող, ազատող։

Զէն, զինու, ուց կամ իւց. գ. զենք։

Զէնքնկէց լինիմ. զենքը վար դնել։

Զի. շ. 1. որովհետև, 2. որպեսզի, 3. այնպես որ, մինչև որ, 4. որ, թե։

Զի՞. եղր. ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչպե՞ս, որչա՞փ։

Զիա՞րդ. եղր. 1. ինչպե՞ս, ինչո՞ւ, 2. զիարդ. ինչպես որ, 3. որպիսություն։

Զիջանիմ, զիջայ. չր. 1. վար իջնել, փափկել, թուլանալ, 2. ներել, տեղի տալ, ուրիշի համաձայնել։

Զկնի. 1. նխդ. ետևից, հետո, մ. 2. հետզհետե, ետևից, 3. հետո (ժամանակի նկատմամբ)։

— Եւ որ զկնի. և ինչ որ ետևից գալու է, և այլն։

— Զկնի կամաց իւրոց ածել զոք. մեկին իր կամքին ենթարկել, հնազանդեցնել։

— Զկնի լինիմ. գնալ. ետևից գնալ, հետևել։

Զհետ. նխդ. մ. 1. հետզհետե, ետևից, 2. հետո, 3. հետք, միասին։

— Զհետ մտանեմ. հետամուտ լինել։

— Զհետ պնդեմ. հետապնդել։

— Զհետ յարձակիմ, վարեմ. ետևից հարձակվել, հալածել։

Զղջումն. չման կամ զղջման. գ. 1. զղջում, 2. ափսոսանք։

Զմելին. ի. աւ. կամ զմլինն. գնի. գ. սանկիրի, դանակ։

Զմռնենի. նոյ. նեաց. գ. [illegible]

Զմրուխտ, ռխտոյ կամ ի. աց. գ. կանաչ գույնի թանկագին քար։

Զնարան. ի. աց. գ. 1. գունի ակնով, բազմն, 2. գունի ամաններ։

Զոլոք կամ զուռղ. ի. աց. գ. ընկեր, ընկերակից, գործակից։

Զուարակ. ի. աց. գ. 1. եզ, հորթ, մատղի, 2. ցուլ կենդանակերպը։

Զուարթաղաց կամ զուարթադէմ. գ. անասունների բազմ՝ գոմ։

Զուգութիւն. գ. 1. զույգ լինելը, 2. միաձայնություն, համաձայնություն, 3. համաչափություն, նմանություն, 4. միաբանություն, համերաշխություն, 5. զուգավորություն։

Զուգամիտիմ, եցայ. չր. գնալով ի վայր զնորվել, վերը կարել՝ զնորվելով (ձիու մասին)։

Զրահազգեստ, ի. իւ կամ աց. ա. զրահավոր։

Զրաւ. գ. վերք, վախճան, ապառում, մահ։

Զրկեմ, եցի. եր. 1. վիրավորել, անվարժ, կասորել, 2. մեղցնել։

Զրուցատրութիւն. գ. 1. պատմություն, ճառ, 2. մեկնություն, բացատրություն, 3. խոսակցություն, զրույց։

Զօդեմ, եցի. եր. կցել, փակցնել, կապել։

Զօրական, ի. իւ կամ աց. ա. 1. ապարանքի կերպով փոր շինող, յարաչարի, ապահաւ, արժանաւոր, 2. մ. ապահովութեամբ։

Զօր. ու. ու. ուէ կամ ըէ, ըաց. ըոՙ և ըու. ըով, ըուց. ըովՙ. գ. զորք։

— Զօր հատանեմ կամ առնեմ. զորք հավաքել։

Զօր. գ. 1. զորություն, 2. մարմնի ուժ։

Զօրագլուխ. գլխի. խաց. գ. զորքի մի մասի գլխավոր, հրամանատար։

Զօրաժողով. գ. 1. զորք հավաքելը, 2. զորքի հավաքվելու տեղը։

— Զօրաժողով լինիմ կամ առնեմ. զորք հավաքել։

Զօրական. ի. աց. գ. 1. կարգին զինվորներ, 2. պահապան զորք։

— Զօրական. գ. 1. զինվոր, 2. ա. զինվորական, 3. զորավոր, կարգին։

Զօրանամ, ացայ. չր. 1. ուժը առնել, կարգին զորանալ, 2. աճել, զորանալ, 3. առատանալ, ավելանալ։

Զօրապետ, ի. աց. գ. 1. զորապետ, 2. ապարապետ։

Զօրավար. ի. աց. գ. զորապետ։

Զօրավիգ, զօրավիգն. ա. գ. 1. թև ու թիկունք, հենարան, 2. օգնական, զորավիգ, պաշտպան, ապավեն։

Զօրաւոր, ի. աց. ա. 1. ուժեղ, զորավոր, կարգին, 2. հզորավոր, կարեկի, 3. մ. կարգին ուժով։

Զօրեմ, եցի. չր. կարողանալ, ուժ ունենալ, զորանալ։

Զօրէն. 1. նխդ. ըստ, նման, ձևով, 2. մ. շ. որպես, 3. երբ, որպես թե։

Զօր հանապազ. մ. 1. ամեն օր, միշտ, 2. ամբողջ օրը։

Զօրութիւն. գ. 1. ուժ, կարողություն, բազմություն, ամրություն, 2. ներգործություն, ազդեցություն, հաղորդություն, 3. նշանակություն, գործավորություն, 4. հրաշք, սքանչելիք, 5. գոյացություն, 6. հարստություն։

Է

Է. էի. էք. էից կամ էաց կամ էոց. գ. ինչ որ կա, արարած, էակ։

Է՛ զի, Է՛ երբեմն, Է՛ ուրեք. մ. 1. երբեմն, պատահում է որ, կա որ, 2. մի կողմից։

Է որ, են որ. 1. ոմն, ոմանք, կա որ, կան որ, 2. երբեմն։

Էմէ, զէմս. գ. զուռն բանալու անցքը։

Էջ. իջոյ. ոց կամ ու, ուց. գ. 1. էշ, 2. պատերազմական մեքենա՝ շարժ առաջով ու անիվով, 3. բեռնի շարքի հենարան։

Էութիւն. գ. 1. բնություն, գոյություն, 2. ինքնագոյություն, առանձնություն, 3. իսկական իրողություն, 4. էակ, 5. բնավորություն, 6. գույք, ունեցվածք։

— Էջ առնեմ. իջնել։

— Էջ և ելք առնեմ. բարձրանալ և իջնել։

Էջ. իջի. էջք. իջից. իջմբ. գ. իջնելը։

Էջ. իջի. էջք. իջից. գ. գրքի էջ։

Էրէ. ա. Երէ։

Ը

Ըղձալի, լւոյ, լեաց. ա. փափագելի, ցանկալի, սիրելի, բաղձալի։

Ըղձամ, ացի. ձա՛, ըղձացեալ, ացայ, ցի՛ր. չր. եր. 1. փափագ ունենալ, բաղձալ, փափագով ուզել, խնդրել, 2. հմայել, գուշակել։

Ըղձանք, նաց. գ. բաղձանք։

Ըմբերանեմ, եցի. եր. 1. բերանը փակել, ձայնը կտրել տալ, լռեցնել, 2. առանձին բերանը կապել։

Ըմբան. ի. իւ. ա. համարձակ, պատշաճ, անցյալ։

Ըմբոշխնեմ, եցի. եր. ըմբոշխնեցի, եցայ, հր. 1. ճաշակել, ուտել, 2. վայելել, ժառանգել, 3. զգործածել բառ իր հաճույքի։

Ըմբռնեմ, եցի. եր. 1. բռնել, ձեռք գցել, 2. համակերպել, ըմբռնել, 3. հանձնել (ցանցով), 4. ուրել, 5. գրավել, 6. ժառանգել։

**Ըմպիչ**, չոյ, չաց. ա. գ. *1. խմիչու, խմիչքոււ, 2. խմող, 3. խմելու բան՝ գինի, օղի, և այլն. 4. կերուխում, 5. բաժակ*։

**Ըմպել**, արբի, ա՛րբ. նր. *խմել*։

— Դառն կամ աղտոտ ըմպել. *մեծ վշտեր*։

**Ըն** ատար. մ. *առջևը*։

**Ընդառաջանալ**, ացայ. չր. *1. թռչել, փայլատակել, 2. առաջին գալ, առաջանալ, 3. զգայութիւնքը կորցնել*։

**Ընդդէմ** կամ **ընդ դէմ**. նխդ. *1. հակառակ, 2. դիմացը, դիմացից, առջևից, 3. փոխարէն, համար, 4. ա. դիմացի, հակառակ*։

— Ընդդէմ լինել, դառնալ, դառնել. *կամ, հակառակ կամ փոխանակ դրուել, դէմ կանգնել, հակառակվել*։

**Ընդդիմակաց** կամ **ընդդիմակացը**. ա. *1. դէմ կանգնող, դիմացող, նեղ-հակ, 2. դէմը կանգնած, առաջը կանգնած, ներքև*։

**Ընդհարանել**, յացի, յա՛. այր. *1. իրար հարցնել, կցել, հյուսել, շարել, 2. ատկից հանել, 3. բաժանացնել*։

**Ընդ երկար առնել**, **ընդ երկարաձգել**, **ել**, **ընդերկարել**, **ել**. նր. չր. *երկարացնել, երկարել, ուշացնել, ուշանալ, երկարածգել, երկարաձգվել*։

**Ընդէ՞ր**. նղր. *ինչո՞ւ, ի՞նչ պատճառով*։

**Ընդհատ**. ա. *1. տարբեր, առանձին, 2. ընդհատ, նեղ, 3. հատուած, առանձնացած, 4. գ. որոշ տարածութիւն, արանք, որտեղ ընդհատված է լինում*։

**Ընդ հուպ**. մ. *1. շուտով, իսկույն, 2. մոտ, կից*։

**Ընդմիջել**, եցի. նր. *1. միջանկից բաժանել, կտրել, 2. խափանել, ընդհատել*։

**Ընդմէջ** կամ **ընդմիջ**, ձեռ. ուղ. ա. գ. *1. ամէնայն ընդմիջելու ծածկած, բայց ոչ արդյունավոր, տարածք, պատկերի որսի, 2. ընդհանրապես տարածք, 3. բնակիչ, ընդարձակ*։

**Ընդառաջել**, ակայ, առաջնայ կամ ընդառաջել, ընդառաջիլ, ընդառաջել. չր. *1. հանդիպած վեր թռչել անցկից*։

*2. խորանել, մի կողմ նետվել, 3. ապշածվել, անհարկելի*։

**Ընդառաջանալ**, առցի. առ՛. այր. *1. վեր թռցնել, 2. արթնացնել, շարժել, դրդել, 3. անզգայ թռցնել, խրտնեցնել, վանել, բռնել, ձեռացնել*։

**Ընդունայն**. ա. *1. դատարկ, փուչ, ունայն, անպետք, անարժեք, 2. մ. դատարկ տեղը, իզուր*։

**Ընդունել**, ընկալայ, ընկա՛լ, ընկալա-ռ՛ու կամ ընկալա՛յք. Հր. *1. ընդունել, պատրաստակել, 2. ողջունել, լինել*։

**Ընդվզել**, եցի. նր. *վերը ոտքով՝ չափազանցել*։

**Ընդվզիլ**, եցայ. չր. *1. վերը անցնել, չափազանցել, անհնազանդ լինել, 2. ըմբոստանալ, ապստամբել, 3. գլխիկոր լինել*։

**Ընթացել**, եցի. նր. *1. առաջ գնալ, առաջուց անել, 2. գնալու սկսել, գնացքը գնալ, 3. արշավարձել, 4. գնալ մի տեղ, անցավորել, գատավորել, 5. առաջը գնալ*։

**Ընթանալ**, րցայ. ցի՛ր. Հր. *կարդալ, կարդացվել*։

**Ընթերցասիրել**, եցի. նր. *սիրով կարդալ, ուսումնասիրել*։

**Ընթերցուած**, ոյ և ի. ոց. գ. *1. կարդալը, ընթերցանությունը, ընթերցում, 2. գրքի հատված, 3. փոխաբերակ, տարբերակը*։

**Ընթրիք**, րեաց, րեօք. գ. *1. երեկոյան կերակուր՝ հացկերույթ, ընթրիք, 2. Հրավերք՝ երեկոյան հացկերույթի*։

**Ընձայ**, ի. իզ. գ. կամ ընձայ. *փոքրից մեծին տրվող նվեր, ընծա*։

— Ընձայ լինել. *ընծայել*։

**Ընկենուլ**, կեցի. կեաց կամ կէց. կեա՛. նր. *1. գցել, նետել, դուրս գցել, մի կողմ գցել, ցած գցել, 2. արհամարհել (փախաբերությամբ)*։

— Ընկենուլ, յաշաց՝ յերեսաց. *աչքից հեռացնել գցել*։

— Ընկենուլ ի պատուոյ, ի գահոյից-պատուելից կամ գահից գցել, զրկել։

**Ընկեցիկ**. ա. *1. գցած, դուրս գցած, արհամարհված, 2. լքված, անտեր, անտիրական*։

— Ընկեցիկ առնել, լինել. *գցել, նե-տել, ընկնել, նետվել*։

**Ընկլնուլ**, ընկլայ (ն. ընկլոյ. ե. ընկլու-ցի). *կուլ տալ, ընկղմել, սուզել, խեղդել*։

**Ընկղմանել**, լուցի. լո՛. այր. *ընկղմել ջուր, սուզել ջուր, սուզել, խեղդել*։

**Ընձեռել**, եցի. նր. *1. ձեռքը տալ, ընծայել, ավանդել, 2. ձեռք դարձել, փարթել, 3. ձեռք բերել, ձեռքում ունենալ, պահել*։

**Ընձիղ** կամ **ընձիւղ**, ընձիղ. ընձիղ. գ. *բողբոջ, ծիլ, ճյուղ*։

**Ընչազուրկ**. ա. *անչյը՝ գիթը ծածուկ, ծածկամտություն, խեղճավաճառություն առնող (կարգին)*։

**Ընչաց**, յընչաց. ա. Ինչ։

**Ընտանենալ** կամ **ընտանանալ**, ացայ. չր. *մտերիմ լինել, մտերմանալ, փոր-ձել, ընտանեցնել, ընտանեացած*։

*ընտանեցած, ընտանեցում*։

**Ընտանենալ**, եցի. նր. *1. իր մոտ վերցնել, հանձն առնել, 2. սիրելի դարձնել, հանձնել*։

**Ընտանի**. գ. *1. հանգստոց, մերձավորի գործ, 2. մերձավորական, ազգականական, հարազատություն, 3. ա. ազգական, մերձավորության արժանի, 4. մ. ամենակալ, խնամատարող*։

— Ընտանի լինել. *1. մերձավորի՝ ազգականակի լինել, 2. մերձենալ, ազգականալ, 3. քնանալ, ծանոթնալ, 4. հասնել (փորձառությամբ)*։

**Ընտրանել**, ընտ. ընտ՛ր կամ ընտրա՛ր. նր. *1. մեջից վրա մերձավորին բան գտնել, մերձավորել, ազգականել, դատավարական, 2. հանդերձ բանել*։

**Ընտրեփորել** կամ **ընտրեփորել**, եցի. նր. *ճանապարհից շեղել, խառնել, ձա-յրությամբ ներմարկել*։

**Թ**

**Թաղ**, ի. ու կամ ու կամ ոյ. ոց կամ ից. իւ. ով. ովք. գ. *թաղ, պատճ*։

— Թաղ առնուլ. *թաղավորել*։

— Թաղ կապիլ՝ դնել. *թագավորել*։

— Թաղ դնել. կապել առնել. *թագա-վորեցնել*։

— Թաղ ի գլուխ. *գլխին թագ դրած*։

**Թագաւորեցուցանել**, ցուցի. ցո՛. այր. *թագավոր դարձնել*։

**Թագաւորութիւն**. գ. *1. թագավորի իշխանություն, 2. պետություն, երկիր, որ գտնվում է թագավորի իշխանության տակ, 3. ժամանակը, որի ըն-թացքում թագավորը իշխում է*։

**Թարախեղծ**. ա. *որի կենդանիները բաժանված են երկու մասի՝ նույն էջ-կենդանիության*։

**Թարախել**, եցի. նր. *ընկղմել, մխրճել, թաթախել (հեղուկի կամ այլ բանի մեջ)*։

**Թարգմ**. րդյ. ոց. գ. *կենդանիների աղիքի առաջին (փոքրիկ) թաթը*։

**Թացանալ**, ացայ. չր. *թացանալ, ու-շաթափվել, մարել*։

**Թանալ**, թացի, թա՛ց. նր. *թրջել*։

**Թանձր**, ձու, ձրու, ձրոյ, ձրովք, ձունք, ձրովք. ա. *1. թանձր, խիտ, հաստ, խոշոր, գեր, 2. մ. ստուգին, խիտ*։

**Թանձր**. ղ. *շրջան ստվարաթղթ թղթում, թերթի՝ բանձ*։

**Թանձրաբազմէջ**. ա. *թանձր թակարդ ունեցող, գեր*։

**Թանձրաթիթղ**. ա. *թանձր և խիտ, շատ թանձր, շատ խիտ*։

**Թանձրախոհ**. ա. *1. թանձր ու կոշտուն, թանձր, խիտ, 2. խորանալ*։

**Թանձրամարմին**. ա. *թանձր մարմին ունեցող, թանձր նյութից*։

**Թանձրամիտ**. ա. *միտքը թանձր, ըթա-միտ, անըմբռնունակ, տխմար*։

**Թանձրանալ**. ացայ. չր. *1. թանձրա-նալ, խտանալ, հաստանալ, մակարդ-վել, շատանալ, ստվարանալ, խտա-նալ, կարծրանալ, 2. Հաստատուն*

կերպարանք առնուլ, տեսանելի ու շօշափելի դառնալ։

**Թանձրացուցանել**, ցուցի. ցո՛. որ. թանձրացնել, շատացնել, գզալի դարձնել։

**Թառ**, ի. աց կամ ու. ուց. ա. 1. թառեր, ձող, 2. մագաղ, ցրցուռ, 3. գ. հաւու ու թռչնոց ձայն, խուզ չիչեզ Աշխյան, 4. տաղաչափութեան մի նշան։

**Թառ**, ու. երբայական այբուբենի վերջին տառը։

**Թառամ**. գ. 1. թարշամեալ, 2. ա. թառամած, 3. մի կողմ դրուած։

**Թաւալագլոր** կամ թաւալագլոր. մ. թաւալելով ու գլորելով. գետնի վրայ ու այն կողմ գալարուելով, թաւալումով։

**Թափ**, այ. կամ ու. իցյ կամ ուց. գ. 1. ամէն, խորքը, հատակը, 2. ձեռնի կամ ոտքի պատսպարը, 3. ամբողջութիւն, տարածութիւն, բաժնուած ուժը, 4. առնական ուժ։

— **Թափ** կամ ընդ թափ կամ գթափ անցանել. թափանցել։

— **Թափ** անկանիմ կամ մտանել. նայն նշ։

— **Թափ** կամ ընդ թափ անցուցանել. հանել. հատուցանել. խորը խրել, թափանցել տալ։

**Թափանցիկ** լինել. ծակել անցնել, մի-ջով անցնել, թափանցել։

**Թափել**, եցի. եր. 1. թափել, 2. ուժով խլել, կորզել, 3. ուժով քաշելով պոկել անկից, 4. ազատել, փրկել, 5. ցուրտ մզել, վանել, 6. կազատել, զրկել։

— **Թափել** զոգի. հոգին հանել, չարչարել։

— **Թափել** զզաստուն, զոխս (ի վերայ ուրուք). բարկութիւնը՝ վրէժը հանել, խառնարել։

— **Թափել** զոք ի կենաց. կյանքից զրկել, սպանել։

— **Թափել** ի միմեանց (զաւս ի կռուի). կռվողներին միմյանցից բաժանել։

— **Թափել** զոյժ. շանց զարծացրել։

— **Թափել** կապուտ կամ աւար բազում կամ դիւրաւոր առաւելի. շատ ավար վերցնել։

— **Թափել** զբանն յաւէնէ. մեկի բերանից խոսքը խլել։

— **Թափել** զշինի. զինավորությունից բաթափվել, զզաստանալ։

— **Թափել** զանձն. ազատանալ։

— **Թափիլ** յիմնէ. մեկից ազատվել։

— **Թափիլ** ի խելաց կամ ի մտաց. խելքը կորցնել, խելագարվել։

— **Թափիլ** յամէնէ ի բաց. մեկից հեռանալ։

— **Թափիլ**. պահպանեալ զառնալ։

— **Թափել** զանձս. զույներ զզեւ, զառնաթափվել։

— **Թափել** եռալ (ջինէ). կայծ տալ։

**Թափուր**. ա. 1. դատարկ, դատարկված, ամայի, 2. զրկված, անօգնական, 3. զերծ, ազատ, անմասն։

**Թափուր**. գ. փոքրի մատուցարան, անփոր։

**Թաւոււտ**, Թաւաւան կամ Թաւի. գ. 1. թարմաբեր, թարթուռ, 2. թաւածոյ ամպ։

— **Թաւաւի** կամ Թաւաւանութ. մ. ծածկարար, դարամի կերպով։

— **Թաւաւան** կամ ի թաւաւան լինել. թաւալվել, ծածուկ ապրել։

— **Ի թաւուտ մտանել**. տեղ մտնել, թաքնվել։

**Թաւացանել**, Թացի, Թա՛ որ. թավացնել։

**Թաւշիլ**, Թեալ, Թի՛ր, Թեցեալ. չր. թավ[illegible], պառկել, ծածկել։ Այլև՝ թաւնալ, թաղնալ։

**Թեր**, ի. գ. կողմ։

**Թերակատարութիւն**. գ. անկատարություն, պակասավորություն։

**Թերաւեղ**, ա. 1. կիսով չափ. անկատար, պակաս, 2. թույլ թեքած, թույլ խորած (սուր), 3. կիսաբաց (դուռ), 4. նման, անորոշ (յոյս)։

**Թերաւանել**, եցի. եր. կիսով չափ խրել պատրաստի մեջ (սրի մասին)։

— **Թերաւանեալ** սուր. կիսամերկ սուր, կիսով չափ հանած, հարվածելու համար պատրաստ։

**Թերիակէ** կամ թիւրակէ, ի. ից կամ կեայք, կեայց. գ. օձաթոյն՝ թույնի դեմ, հակաթույն՝ օձի կամ այլ գազանների մարմիններից պատրաստված։

**Թեւամուխ** լինել. 1. թևանցուկ, ձեռ-ներկել, ձեռք զարկել, 2. չանալ, ջանալ, 3. կռթել, 4. համոզել, իր կողմը գրավել։

**Թեւել**, եցի. եր. 1. ծեծելով, ծակելով՝ քշելով, կոխել, որել, 2. կռթել, 3. հարթեցնել, 4. ջուր տալ, պատել, թեթևել։

**Թիկն** կամ թիկն, թիկան, կունք, կանց. գ. 1. բազուկը ուսի հետ միասին, 2. օգնականություն, 3. նախի կողմը։

**Թիկունք** (թիկն կամ թիկն բառի հոգնակին), թիկանց. գ. 1. թիկունք, 2. նախի կողմը, 3. օգնականություն։

— **Թիկունս առնել**. մեկին իր համար օգնական՝ պաշտպան դարձնել, մեկի պաշտպանությունն ապահովել։

— **Թիկունս դարձուցանել**. թիկունք դարձնել, մեկից երես դարձնել, արհամարհել, փախչել։

— **Կալ՝ հաստանել ի թիկունս**. օգնություն գալ, օգնություն հասնել։

**Թիւ**, ի. ից կամ ոց և այ. ոց. ա. 1. թիվ, ծախած, թուաճառ(?), 2. մ. թիւ կերպով։

**Թիւրել**, եցի. եր. ծռել, բան ուղղու-թյունից շեղել։

— **Թիւրել**, եցի. չր. զծավել։

**Թշնամանել**, եցի. եր. նախատել, անարգել, թշնամաբար հայհոյել։

**Թշնամանք**, նաց. գ. 1. նախատինք, անարգանք, հայհոյանք, 2. զրկանք, վնաս։

— **Թշնամանս դնել**. նախատել, անարգել։

— **Ի թշնամանս լինել**. անարգվել, նախատինքի ենթարկվել։

**Թոխիւ**. գ. գազանի ձագ, կորյուն, արջի ձագ։

**Թոզորդին**. գ. 1. ներում, ներողու-թյուն, 2. արձակում (պարտականությունից, պարտքից, գերությու-նից), 3. ազատություն, արտոնու-թյուն, 4. [illegible]։

**Թողուլ**, թողի. թո՛ղ. եր. 1. թողնել, 2. թողացնել։

— **Թողուլ զոք ի մահուանէ**. մեկին մահից ազատել։

— **Զայն թողուլ**. ձայն արձակել։

— **Թող ըէ**. չ. ո՛չ միայն, ո՛չ միայն որ, մի կողմ թողնելով։

**Թոշակ** կամ թօշակ, ի. աց. գ. 1. պարէն, ուտելիք, 2. ռոճիկ, մուծա-վճար ծառայության համար, 3. զոր-քի ապրելու միջոց, որ վճարվում էր նյութեղենով կամ դրամով, 4. հովերի պաշար։

**Թոպաման**. ա. խիտ ծածկոց մեռած, հարվածների տակ ընկած։

— **Թոպաման առնել**, լինել. հարված-ներով, ջախջախելով սպանել, մեռ-նել։

**Թոփել**, եցի. եր. 1. կոխարզդային մի-ջոցներով, երգով կամ սրոշ խոսք-րով հնազանդեցնել (օձին), 2. հրա-պարել ջնջել մի վատ բան, դրժել։

**Թոփիչ**, փչի. չաց. ա. գ. օձ կախարդող, կախարդ։

**Թուել**, եցի. եր. հաշվել, թվել, եր-բորդ. 1. կարծվել, համարվել, 2. հաշվվել։

**Թուի**. մր. թվում է, երևում է, համար-վում է, կարծվում է։

**Թուլամիտ**, մաց. աց. ա. վախկոտ, անհամարձակ, ծույլ։

**Թոթափել**, եցի. եր. 1. թափ տալ, թափթափել, 2. ցնցել, շարժել, սասանել, 3. ցնցելով թափել, 4. վանել, հեռացնել, 5. հեռ պահել, ետ քաշել, 6. թափել, ազատել, 7. չարծել, թոթա-փել (սրտախառնությունը), 8. թոթափել։

— **Թոթափել զանկողինս**. անկողինը հավաքել, շալել։

— **Թոթափել զոք ի տապարանաց**. մեկին անկողինից զրկել։

— **Թոթափել** զսուր. սուրը շարժել։

— **Թոթափել** զճղաքս. ցնցել, կորզա-նել (ճղաքը)։

— **Թոթափել** զփոշեառս. ոտների փոշին թափել։

— **Թոթափել** զձեռս. ձեռները...

**Ժամ**, ու, ուց կամ ի,ից. [illegible]

**Ժամանակ**, ի, ա. 1. [illegible], 2. [illegible]

**Ժամեր**, ի, գ. [illegible]

**Ժամանց**, ա. [illegible]

— **Ժամանց ընել**, [illegible]

— **Ժամանց անցնել**, **Ժամանց կացուցանել**, [illegible]

**Ժամանել**, եցի. [illegible]

**Ժամանեցուցանել**, [illegible]

**Ժամատր** կամ **Ժաման**, **Ժամատր**, [illegible]

**Ժամ**, ի,ից կամ աց. ա. 1. [illegible]

**Ժամավաճառ**, ա. [illegible]

**Ժամանակ**, ա. [illegible]

**Ժամանակաւորութիւն**, գ. [illegible]

**Ժիր**, ա. 1. [illegible]

**Ժողովել**, եցի. եր. 1. [illegible]

[illegible]

— **Ժողովս ժողովել** (էր). [illegible]

**Ժոյժ**, գ. [illegible]

— **Ժոյժ ունել**, **կամ ժոյժ առնել**. 1. [illegible]

**Ժամ**, **Ժամ** կամ **Ժամել**: [illegible]

**Ժամկալ**, ի, ից կամ աց. ա. 1. [illegible]

— **Ժամկալ լինել անձին**. [illegible]

— **Ժամկալ լինել իմիք**. 1. [illegible]

**Ժպրհել**, եցայ. [illegible]

**Ժառանգ**, [illegible]

**Ժանել**, եցի. եր. 1. [illegible]

**Ժուժել**, եցայ. [illegible]

**Ժտել**, ա. [illegible]

**Ժտանել**, ացայ. [illegible]

Ի

**Ի բաց**. ա. [illegible]

**Ի բաց**. մ. 1. հեռու, մի կողմ, 2. [illegible]

— **Ի բաց առնել**. [illegible]

— **Ի բաց թողուլ**. [illegible]

— **Ի բաց դնել**. [illegible]

— **Ի բաց ...** [illegible]

— **Ի բաց անցուցանել**. [illegible]

— **Ի բաց լինել**. [illegible]

— **Ի բաց լինել յանէ**, [illegible]

— **Ի բաց կալ**. [illegible]

— **Ի բաց կացուցանել**. [illegible]

**Ի բացեայ**, [illegible]

**Ի բացէ**. ա. **Բացէ**, **ի բացէ**:

**Իր**. 1. [illegible]

**Իր այն է**, **իր երէ**, [illegible]

**Իրեւ**, [illegible]

**Իրն**, [illegible]

**Իրեւ**, [illegible]

**Իրեւ այն է**, **իրեւ զի է**, [illegible]

— **Իրեւ զի**, [illegible]

**Իրք** էլ, [illegible]

**Իր զի**, **իրրւ զի**, **իրր էր**, [illegible]

**Իմ**, ի, ից. [illegible]

**Իւ**, **իւր**, **իւրն**, [illegible]

**Իմանալ**, **իմացայ**, **իմա'** կամ **իմա'ց** կամ **իմացի'ր**. [illegible]

**Իմաստ**, ի, ից. գ. 1. [illegible]

**Իմաստնանալ**, ացայ. [illegible]

[illegible]

**Ի մէջ**, ա. [illegible]

**Իմն**, **իմի**, **իմիք**. 1. [illegible]

— **Իմն իմն**. [illegible]

**Ինչ** կամ **ինչ**, **ընչի**, [illegible]

**Ինչ**, գ. 1. [illegible]

**Ինչ**, **ընչի**, **ինչէ**, **ընչից**. [illegible]

**Ինքն**, **ինքեան** ([illegible]). [illegible]

— **Ինքն առ ինքն**, **ինքն յինքեան**. [illegible]

— **Առ ինքեան** կամ **յինքեան**. [illegible]

— **Ինքն զալ**. [illegible]

— **Ինքն յինքեան**. [illegible]

— **Ինքնիր**, [illegible]

— **Ինքն յինքեան**. [illegible]

— **Ինքն հանել**. [illegible]

**Իշխանութիւն**. գ. 1. [illegible]

**Իշխել**, եցի. եր. 1. [illegible]

**Իջանել**, **իջի**. [illegible]

խոնարհվել, 3. ընկնել, 4. հալածվել, ննջել։
— Ի միտ իր իջանել. ուշքի գալ, խելքը գլուխը գալ։
Իրացանեմ, իրացի. իրա՛. պր. 1. իրագործել, 2. պատմությունը՝ ճշմարտությունը հաստատել։
Իսկ. ի. իւ. գ. 1. բուն գոյություն, 2. ա. իսկական, ստույգ, 3. հատուկ, 4. եզր. իրոք, հենց իսկ։
Իսկ. շ. 1. բայց, և, իսկ, 2. հապա, 3. էլ, 4. որպես թարմատար։
Իր, ի, աց. գ. 1. իր, առարկա, մի բան, գույք, գործ, 2. միտք, մտածողություն, 3. համբավ, լուր, 4. հանգամանք, պարագա։
— Իրաց իրաց. զանազան բաների։
— Իրս իրս. զանազան բաների մեջ։
— Իրք առնեմ. գործի մեջ դնել, գործածել։
— Ամին իրի. զինչ իրի, ընդէր իրի. ինչո՛ւ, ինչի՛ համար, ինչ պատճառով։
— Անձնային իրօք. անձն կերպով։
Իրագէտ, գիտի, գիտաց. ա. տեղյակ, իրազեկ։

Իրազգած կամ իրազգաց. ա. համապատասխաներին ծանոթ, տեղյակ։
— Իրազգած կամ իրազգաց լինիմ. 1. տեղյակ լինել, տեղեկանալ, 2. անդրադառնալ, խելքը գալ։
Իրաւի կամ յիրաւի. եզր. հիրավի, իսկապես, անշուշտ։
Իցէ. եմ բայի ստորադասական ապառնի եղանակի թվի 3-րդ դեմքը, եղ. լինի, կլինի, պիտի լինի։
— Իցէ՞. կլինի՞ արդ, արդյոք։
— Իցէ թէ. կարելի է, գուցե։
— Իցէ զի. երբեմն։
— Իցի՞ւ, իցի՞ւ թէ. երանի՜ թե, ո՜րքան լավ կլիներ։
Իւղաբուղխ. ա. որտեղից յուղ է բխում։
Իւրական. ա. իր սեփական, իր։
Իւրովի կամ իւրովին. մ. 1. անձամբ, ինքնին, 2. իր կամքով, ինքնակամ, ինքնաբերաբար, 3. նույն ինքը, 4. ա. իր. իրենով։
— Զիւրովին երթալ. անձնատուր լինել, ինքնասպան լինել։

## Լ

Լալի. իՙ. լեաց. ա. լաց լինող, լացող։
Լալիւն, լալեաՙ, լեաց, լալութիւն, լալումն, լման. գ. լաց, ողբ։
Լալօնք, եից. գ. 1. լաց, ողբ, 2. լաց լինելու տեղ։
Լակին. ա. Լակին։
Լայնալիճ. 1. ա. որի աղեղի երկու ծայրերն իրարից շատ են հեռացած, 2. գ. լայնալիճ աղեղ, մեծ աղեղ։
Լանջակողմն, մանց. գ. լանջի կողքը։
Լանջապան, լանջապանի, լանջապանակ. գ. կրծքը պաշտպանող զրահ, կրծքի պահպանակ։
Լանջք, լանջ, լոյ կամ իւ. գ. կուրծք։
Լաշկար. ի. աց. գ. զորք, զորագունդ։
Լացուցանեմ, ցուցի, ցո՛. պր. լացացնել։
Լեառն, լերին, րամբ, րինք, րանց. գ. լեռ, սար։
— Ջիւնոտ լեռնային. [illegible]։
Լեգէոն կամ լեգէոնն, լեգէոնի. ի. ից կամ աց. գ. 1. հռոմեական զորքի ամենամեծ միավորը, որը տարբեր ժամանակներում պարունակում էր 3000—6000 զինվոր, 2. մեծ բազմություն, մեծ խումբ, 3. լեգեոնի զինվորներից մեկը, 4. սատանայական կենդանի։
Լեզում, լեզի, լե՛զ. նր. լիզել։ Այլև՝ լիզել, լեզուլ։
Լեռնաբերձ. ա. լեռան պես բարձր՝ մեծ։
Լեռնադաշտ, ի. աց. լեռնադաշտակ, ի. աց. գ. լեռների միջև ընկած դաշտ։
Լեռնակողմն, մանց, մանց. գ. լեռան կողմերը, լեռնային տեղ։
Լեռնոտն, ոտին, ոտամբ. գ. լեռան ստորոտ։



Լեսում, լեսի, լե՛ս. նր. 1. մանրել, փշրել, 2. քարերի վրա հղկել, կոկել։
Լերկ, ի. ից. ա. 1. անմազ, մազից զուրկ, 2. նմանությամբ՝ բուսականությունից զուրկ, 3. խուլ (բաղաձայն՝ պ, կ, տ և այլն)։
Լի, այ. ով. ա. 1. լցված, լեցուն, լիքը, 2. առատ, բերրի, 3. ամբողջ, լրացած, լրիվ։
— Լի առնեմ. լցնել, լրացնել։
— Լի աւուրբ. տարիքն առած, խոր ծերության հասած։
— Լի կատարեալ. լի և կատարյալ, լիովին։
— Լի և լի. ա. մ. 1. լիուլի, լեցուն, լիակատար, 2. ծայրեծայր։
— Լի՛ ի լի. մ. լեցուն, լրիվ, լիովին։
Լիբանան, լիբանան կամ լիբանան, լիբանանս կամ լիբանանս. գ. 1. ծխունք, տաքի ուժը, 2. ողբաշարքի ող, 3. լիբանան, խունկը, ռանի, 4. խնկի ծառ։
Լիտր, լտեր, տեր. տեր. գ. ծանրության չափ՝ 12 ունկի։
Լիր, լրի. րից. գ. լրիվություն, ամբողջություն։
— Լիր առնելեմ. փառք լցնել։
Լկանք, եաց. գ. չարչարանք, տառապանք, մեծ փորձ, ձեղություն, [illegible]։
Լկեմ, եցի. նր. 1. չարչարել, տանջել, 2. բռնաբարել։
Լկրեկէց. ա. 1. լավը չար գործ, լկտի խոսակից, 2. անհնազանդ, ապստամբ։
Լկում. գ. ատամ։
Լկնիմ, եցայ. չր. 1. լկտիանալ, 2. համարձակվել։
Լկտի, ատեաց, եաւ, եալք. գ. պոռնկական, զազրաբերան։
Լնում, լցի, լի՛ց. նր. 1. լցնել, 2. լրացնել, ավարտել, լրիվ դարձնել, 3. հագեցնել, կշտացնել, 4. առատացնել։
— Լնում աղեղն. աղեղը լարել, ձգել։
— Լնուլ յաւուրս. լրանալ ժամանակը, ժամանակ լրանալը։

Լողացուցանեմ, ցուցի, ցո՛. պր. լողացնել, լվանալ, մաքրել։
Լու, ոյ. ով. գ. լու։
Լու. գ. լսելը (լսել բայից)։
— Լու առնեմ. իմաց տալ, տեղեկացնել։
— Լու լինիմ. լսել։
— Լու ի լու. բոլորի լսելով, լսելի կերպով։
Լուալիք, լեաց. գ. 1. բաղանիք, 2. ավազան, որտեղ մկրտվում է նոր եկեղեցի մտնող՝ լոգանք։
Լուանամ, ացի. լուա՛. նր. լվանալ, մաքրել։
— Լուանամ զոտ. մեկին խոնարհվել։
Լուացումն, ցման. գ. 1. լվանալը, լվացվելը, մաքրություն, լվացողությունը, լվացում, մկրտություն, 3. բաղանիք։
Լուծանեմ, լուծի, լո՛յծ. նր. 1. արձակել, բանալ, ազատել, 2. վերացնել, ջնջել, փարատել, 3. բացատրել, մեկնել, 4. պահքը՝ պասը կամ ծոմը խախտել, 5. կռիվը կամ ճակատամը խափանել, ցրել, 6. թուլացնել, փափկեցնել, հալել, հեղուկ դարձնել։
— Լուծանեմ զկեանս. լուծանիմ ի կենաց. մեռցնել, մեռնել։
— Լուծանեմ փոխառ. պարտք ջնջել։
— Լուծանիմ. 1. թուլանալ, մարել, 2. ընդունակությունից զրկվել։
— Լուծանիմ ուրեք. մի տեղ իջնել, իջևանել, հյուրի պես մի տուն մտնել։
Լուղուրղ կամ լողորդ, ի, աց. գ. լողացող, լող անող մարդ։
Լուսաւոր, ի. աց. ա. 1. լույս ունեցող, լուսավոր, հստակ, պայծառ, 2. գ. երկնային լուսատու մարմին, արեգակ, լուսին։
— Լուսաւոր առնեմ. լուսավորել։
Լուցանեմ, լուցի, լո՛յց. նր. վառել, այրել։
Լռելի, լլի. ա. գ. լուռ, [illegible]։
Լռելիք, լեաց. գ. 1. [illegible], 2. [illegible]։

Լուծմութիւն. գ. 1. զվարթություն, 2. առատաձեռնություն:

Լքանեմ, լքի, լք՛ր. եր. 1. թողնել, թողնել հեռանալ, ձեռք քաշել, երես դարձնել մի բանից, 2. անօգնական թողնել, հուսահատության մատնել:

Լքանիմ, լքայ, լքեալ, լքայ՝ կր. 1. զրկվել, անօգնական մնալ, թուլանալ:

Լօդիկ, դկի, կաց. գ. վերարկու:

Խ

խաբէութիւն. գ. 1. խաբելը, 2. սուտ, սուտ բան:

խաղ, ի, ից. գ. 1. կռիվ, պատերազմ, վեճ, 2. խռովություն, աղմուկ:

— խաղ առնել. աղմուկ բարձրացնել, վիճել:

խարխարեմ, եցի. եր. ավերել, քանդել, կործանել, խորտակել:

խան, ի, ից. գ. կերակուր: Այլև՝ խան:

խանակիր կամ խանակեր. գ. խոհարար:

խանարար, ի, աց. խանարար, ի, աց. գ. կերակուր եփող, խոհարար:

խաղալկատակ. գ. խեղկատակ, ծաղր ու կատակի առարկա:

— խաղալկատակ լինել. խեղկատակություն անել, միմոսություն անել:

խաղաղանամ, ացայ. չր. խաղաղվել, հանդարտվել, հաշտ լինել:

խաղամ, ացի. ա՛. չր. 1. շարժվել, խաղալ, 2. այս ու այն կողմ շարժվել, վխտալ, 3. համաքայլորեն, ճեմել, մեջ վազել, 4. ծիծաղել, 5. կատակ անել, խեղկատակություն անել, ծաղրանք անել, միմոսություն անել:

խաղացուցանեմ, ցուցի. ցո՛. եր. 1. գնալ տալ, շարժել, տանել, առաջ բերել, հեռացնել, անցկացնել, մի տեղից մի այլ տեղ տանել, գաղթեցնել, 2. հանեցնել (ջուր):

խայտակն. ա. զվարթ՝ կենդանի աչքերով:

խայտամ, ացի. չր. 1. ուրախությունից թռչկոտել, 2. առատորեն ուրախանալ, ցնծալ, 3. խելքը թողնել, շփոթվել մի բանով, 4. ըմբոստանալ:

— խայտալ զինի. ըմբոստանալ, ապստամբել:

խանդար. գ. 1. խանդավառելը, 2. խանդավառություն, ա. 3. խանդավառված, 4. [illegible]:

խանդակաթ. ա. 1. սիրով վառված կարոտով, սիրով՝ գթով, 2. մ. կարոտանքով, սիրով:

խանդաղատիմ, եցայ. չր. եր. 1. գորովը՝ գութը շարժվել, սիրով լցվել սիրով՝ գորովով, 2. գութ շարժել, ողորմածին խնդրել:

խանդաղատութիւն, խանդաղատումն, այլև՝ խանդաղատանք, խանդաղատանք. գ. աղերսալից խնդրանք, գութ, գորովանք, կարոտ, սեր:

խանդամ, ացայ կամ ացի. չր. նախանձել:

խանձեմ, եցի. չր. զոդել, կակղել, ծայրն արծաթել:

խայծ, ծին, ծինք, ծանց. գ. 1. մանր կերակրովոր անասուններ, այծյամներ և այլնի բազմություն, հոտ, 2. ընդհանրապես խառնարանի անասուն:

խառն, ի, աց. գ. 1. պարան, 2. փայտե անոթ, որ անցկացնում էին պատառվածի պարանոցին:

խառանեմ, եցի. եր. 1. պարանով կապել, 2. պարանով կախել, խեղդել:

խառնադենց, ի, ից. ա. գոխ. անտանելի, անբարոյական, շարադրող:

խառնակեմ, եցի. եր. 1. իրար խառնել, 2. խառնելով շփոթել, խառնել, աղավաղել, հուզել:

խառնակիմ, եցայ. չր. 1. անկարգ վարվել, կենակցել, ամուսնանալ, 2. իրար զարկվել կռվով, 3. անկարգ կամ ապօրինի կերպով զուգավորվել, պղծություն գործել:

խառնակութիւն. գ. 1. շփոթություն, իրարանցում, 2. խառնուրդ, 3. մերձավորում, կենակցում՝ մանավանդ ապօրինի:



խառնաղանն կամ խառնաղանջ, ի, ից. ա. 1. խառն (բազմություն, ամբոխ), 2. խառնիխուռն, խառնիխնդաձև:

խառնամիխ. մ. իրար խառնվելով, խառնիխուռն կերպով:

խառնամխիմ, եցայ. խառնամուխ լինել. չր. անկարգ կերպով զույգ մտնել:

խար. գ. անասունների կեր, յոր խոտ:

խար, գ. փուշ:

խարազնազգեաց, եցի. ից. խարազնազգեստ, ի, ից կամ աց. ա. մ. բուրձ՝ ցնցոտի հագած:

խարամանի, նայ կամ նոյ, նեաց. գ. 1. ած, չար ոգի, 2. չարության աստվածը զրադաշտական կրոնի մեջ, 3. սատանա, դև:

խարան, ի, աց. գ. 1. շիկացած երկաթ, որով խարում՝ դաղում էին մարմինը, 2. խարելը, խարած՝ դաղած տեղը, 3. կնիք:

խարակ. գ. 1. փառ, խորխորատ, 2. որոգայթ:

խարբ, ի, ից. գ. թուր, սուր:

խարդ. ա. 1. անիրավ, անգութ, 2. հարբեցող:

խարդաւանակ լինել. դավ լարել:

խարձ, ի, ից Նաև՝ ձանց, ձանց. գ. 1. եղեգնուտ, 2. թիթուռ:

խարտիշ կամ խարտեաշ, տեշի. ա. խարտյաշ, շեկ:

խաւարեցուցանեմ, ցուցի. ցո՛. եր. խավարեցնել, մթնեցնել, հանգցնել, կուրացնել:

խաւարծի. ա. 1. խավար, աղջամուղջով ծածկված, 2. գ. մառախուղ, քուլա, [illegible]:

խաւար, ի, ից կամ աց. ա. 1. աղջամուղջ, խավար, մթար, 2. գ. աղջամուղջով ծածկված քուլա, 3. ընդհանրապես բանտարկողներ:

խափուցանեմ, փուցի. փո՛. եր. 1. խաբելով փախցնել, 2. դադարեցնել, վերացնել, 3. կորցնել:

խել, լաց. գ. 1. գլխի ուղեղ, 2. խելք, միտք, բանականություն, 3. կամուրջի գլուխ, 4. նավի գլուխ, նավի ցինին կողմը, 5. նավի նստարաններ, 6. ատամներ:

խեցբեկ. ա. կցկտուր, փշրված, ջարդված:

խէր, խերի կամ խեռի, ից. գ. 1. խայթ, խայթոց, խայթվածք, 2. կատաղած, վեր կենալ, 3. կատաղած՝ ճանկ՝ խարանված, ոխ, ատելություն, 4. սուրբ, խոշ, խոյթ, գայթակղություն, փառք, 5. կատաղած, վախ, 6. սրագայթ, 7. բախ:

խիզախական, ա. խիզախի հատուկ, համարձակ, հերոսական:

խիզախեմ, եցի. չր. 1. համարձակվել, քաջաբար հանդուգն կերպով ձեռնարկել, 2. կորովի այնտեղ ..., 3. պարծենալ, ինքն-իրեն խոսել, 4. արիաբար խրախուսվել:

խիթամ, ացայ. չր. 1. կասկածել, հոգս անել, վախենալ, 2. խույս տալ, 3. ստորանալ իր հանդեպ, 4. քաշվել, ամաչել:

խիղ. գ. 1. փշրանք, որմնեքը, խուսափ-/կելը, փորելը, 2. խիղճը, համբերատարություն:

— խիղ արկանել. որմնել, փշրել, խուսափել:

խղճուցանեմ, ցուցի, ցո՛. եր. խղճահարել:

խղեմ, եղի. եր. 1. ուժով քաշելով պոկել, անդից հանել, արմատից հանել, պոկել, քաշել, 2. ատամը քաշել, աչքը հանել, 3. շենքը կործանել, 4. մեջտեղից վերացնել, ջնջել, 5. ձեռքից խլել, հափշտակել:

խլխլեմ, եցի. եր. 1. քարշել, շարժել՝ խլելու, ավերելու՝ պոկելու համար, 2. զառամյալ պառավառությամբ մեջ բերել:

խնդեմ, եցի եր. շատ խոսք լցնել (փորի, մարդկանց բազմության և հողի մասին ասված):

խնդիմ, եցայ. չր. զվարճանալ, ցնծալ:

խնամակալեմ, եցի. չր. խնամակալ լինել, խնամք տանել, հոգ տանել:

խնդանք, նաց. գ. խնդություն, խնդումն

**խնդիր**. դրոյ. ոց. գ. 1. խնդրելը, որոնելը, փնտրելը. 2. քննություն, հարցափորձում, վեճ. 3. խնդրանք, աղոթք խոսք. 4. պահանջը.

— **ի խնդիր լինել՝ ելանել՝ երթալ՝ գալ՝ լինիլ՝ անկանիլ՝ առնել**. խուզարկել, որոնել, փնտրել.

**խնդրանք**. գ. ա. 1. մեծ որոնում, փնտրում. 2. խնամակալություն, աղերս. 3. վիճաբանություն, վեճ. 4. նվերի, պարգևի.

**խնդրել**. եցի. եր. 1. ուզել, խնդրել. 2. որոնել, փնտրել. 3. հարցնել, քննել. 4. պահանջել. 5. հետամուտ լինել, ջանալ, ձգտել.

**խնդրուած**. ոյ. ոց կամ այց. գ. խնդրանք, աղաչանք.

**խնուլ**. խցի. խի՛ց. եր. խցկել, փակել.

**խոյակ**. ակայ. ակաց. գ. գլխի վրա դրվելիք ամն (մարգարեից և զորավարների համար), ասյուն սյունների ծանրությունը հեղնակի վրա է գտնվում.

**խոկալ**. ացի կամ ացայ. կա՛, կացող կամ կող. չր. եր. մտածել, մտածել, մտադրվել, մտքով ու սրտով տա-

**խոհական**. ի. աց. ա. 1. խելացի, իմաստուն. 2. խոհարար մտածված, լավ դատողություն. 3. խորամանկ. 4. գ. խորհուրդ կամ, բանական զորություն. 5. խոհականություն, խոհեմություն.

**խողխողել**. եցի. եր. 1. մորթել, սպանել, յարաբերութեամբ կտրտել աղանդել. 2. ջարդջարդել.

**խոյ**. ի. ից կամ ոյ. ովք կամ ով. գ. 1. արու ոչխար. 2. աստղաբաշխ կենդանակերպերից մեկը. 3. Հին պատերազմական մեքենա.

**խոյակ**. ի. աց. գ. սյան վերնախարիսխ՝ խոյի գլխի ձևով, ջերքի կատար.

**խոյանալ**. ացայ. չր. խոյի նման թռ-չել վրա արշավել. վրա վազել, արշավել.

**խոյզ**. խուզի. ի. իւ. գ. որոնում, ո-րոնելը, փնտրելը, հարցափորձ, քննություն.

— **խոյզ և խնդիր առնել**, **խոյզ տա-** նալ, ի խոյզ անկանիլ՝ ելանել՝ արկանել՝ եղանել... 1. խուզարկել, քննել, հե-տազոտել. 2. հալածել, դրդել.

**խոյս տալ**. խոյս տալ, խոյս լինել, չինել. խուսափել, խորշել, հեռանալ, փախչել, խուսափել, անցք տալ.

**խոնարհեցուցանել**. ցուցի. ցո՛. եր. 1. ցած իջեցնել, խոնարհեցնել. 2. նվաստացնել, ստորացնել. 3. ընկճել, նեղել, հպատակեցնել. 4. մեղմացնել. 5. շարժել, ձգել դեպի մի բան.

— **խոնարհեցուցանել զանձն**. իրեն ի-րեն խոնարհեցնել, խոնարհվել.

— **խոնարհեցուցանել զունկն**. ականջ դնել, լսել.

**խոնարհիլ**. եցայ. չր. 1. ծռվել դեպի ցած. կռանալ. 2. բարձր տեղից՝ ստորին իջնել ցած տեղ՝ ցած դառնալ. 3. ընկճվել, հպատակվել, նվաստա-նալ. խոնարհվել, ձգվել. 4. դեպի մեզ վերադառնալ. 5. խոնարհանալ.

— **Ահա խոնարհեցաւ**, երեկո դարձավ.

**խոնջան**. ջանաց. գ. անզորություն, հոգնություն.

**խոնջիլ**. եցայ. չր. հոգնել.

**խոշորացուցիչ**. ցուցի. ից. ա. ավելի լավ, խոշոր, անցնողներ, խիստ ա-մուր.

**խոռ**. 1. գ. անցք, ծակ, ծերպ, պա-րսպի վրա բացված խորշ. 2. փոս, տռփակ, ա. 3. սրախոսանք, թերի, անտ, անշնորհք. 4. խառը, ցարված, փառացված.

**խոռ կամ խոռն**. գ. մի անոթի խուռ.

**խոռ**. ա. մյուս.

**խոռել**. եցի. եր. 1. խոռոչ՝ անցք բացել, խրամատ պատրաստել (պատի վրա). 2. մարմնի վրա վերք բացել. 3. խախտել, ձևափոխել.

**խոստանալ**. ացայ. եր. 1. խոսք տալ, ուխտել. 2. հույս տալ. 3. պարտավորվել. 4. համաձայն լինել. 5. խոստովանել.

— **խոստանալ զանձն**, խոսք տալ՝ հարս գնալու համար.

**խոստաբուռն**. ա. 1. խոստում անող, խոստում անող. 2. խոստացած բանը չկատարող.



**խոստովանաբար**. գ. ապաշխարած խոստ, ցեղած խոստ.

**խոստովանել**. եցի. եր. 1. արտահայտորեն մի կողմ դնել, երկար դնել. 2. ա-նարգել.

**խոստովանութիւն**. ա. 1. ծուռ, ուղղությունից շեղված. 2. մոլորված, սխալ, մոլորա-կան, թյուր.

**խոտորել**. եցի. եր. 1. ուղղությունից հանել, շեղել. 2. սխալ ուղղու-թյուն տալ. 3. ծռել.

**խոտորեցուցանել**. ցուցի. ցո՛. եր. մո-լորեցնել, խոտորել տալ.

**խոտորիլ**. եցայ. չր. 1. մի կողմ դառ-նալ, մի կողմ թեքվել. 2. խոյսել, սատարակել.

**խորան**. ի. աց. գ. 1. վրան (բողոքան կամ զատկական ձևով). 2. երկնա-կամար. 3. կամարաձև շինված զար-դի մասը, Թագավորական ոս-յան. 4. ատյան, եկեղեցի. 6. ատե-նեկ. 7. տաղավարի խորք՝ բա-ժանմունք (կամարանձև զարդով).

**խորանավոր**. ի. աց. ա. խորան ունե-ցող, խորանով բնակվող. վրանա-բնակ.

**խորգ**. ոյ. ոց. գ. 1. կոպիտ մազեղեն, քուրձ. 2. քուրձե զգեստ.

**խորգանիստիրեծ**. ա. մազեղեն կոպիտ կտորից շորեր հագած, քուրձ հա-գած. Այլև՝ խորգազգեստ, խորգազ-գեաց.

**խորդ**. ոյ. ոց կամ ու. ուց. գ. կոտեմ.

**խորդենի**. գ. կոտեմներ.

**խորել**. եցի. եր. 1. խորացնել, փո-րացնել. 2. խորք թաղել, ծածուկ պահել. 3. գողանալ, պահպանել. 4. ստորերկրյա երկրի վերայից, չա-րացնել. 5. խանդաղել.

**խորխոյիլ**. եցայ. չր. ճարճատել, պա-տռվել, ճաքել (հողի մասին).

**խորհիլ**. եցայ. եր. 1. մտածել, հղա-նալ. 2. դատողություն անել, դատել. 3. կարծել, համարել, ենթադրել. 4. միտք դնել, դիտել, նպատակ ունենալ. 5. մտամտալ. 6. հոգալ մեկի մասին, խնամք տանել.

— **խորհիլ ընդ՝ բան ինքեան**. ինքն-իրեն մտածել.

— **խորհիլ ընդ այլում**. խորհրդակցել.

**խորհուրդ**. դեան. դեանց. նույնը. ող կամ ի. ից. գ. 1. մտածություն, միտք. 2. խորհրդածություն, խորհ-րդածում. 3. մտադրություն, դի-տավորություն. 4. խելք. 5. զորա-վոր. 6. գործուծ, եղանակ. 7. եկեղե-ցական արարողություն.

**խորհրդակից**. կցի. կաց. ա. գ. խոր-հրդական, ամենահավատ գործակից, խորհուրդ անող, խորհուրդ ավող.

**խորշակ**. ի. աց. գ. 1. ատտամի տաք քամի, չոր օդ, որը չորացնում է բույսերը. 2. շատ տաք եղանակ. 3. երաշտ.

**խորտակումն**. կման. գ. 1. խորտակելը, փշրելը. 2. հաղթելը, հաղթա-հարելը. 3. արտադրել՝ անկերդ գոր-ծել.

**խորտիկ**. տկի. կաց. գ. կերակուր, ճաշակավոր՝ ջուր պատրաստված կե-րակուր.

**խուզել**. եցի. եր. 1. շատ սեղմած կամ շատ անկերից խուզել. 2. փխրա-փորակ հասցնել. կոկհեցնել, կեղ-ծը խայթել.

**խուզել**. եցի. եր. 1. խուզարկել, քըն-նել, հետազոտել. 2. հուզել, որոշ-ակել.

**խուժադուժ**. ի. աց. ա. 1. բարբարոս, վայրենաբարո. 2. կոպիտ, անկիրթ-բարբարոսական.

**խուճապ**. ի. իւ. կամ ոյ. գ. 1. ամբ-բոխ, շփոթ խառնակված. 2. ար-շավանք, անաջ, չար ոգի (ճիվաղնե-րի, հավատալով հարս. Թիվ).

**խուռն**. խռան. 1. գ. խառնված՝ խոժոռված կառավոր ժողովություն, մթերք. 2. ա. Խառնված, խճճված, կառավոր, խառնիճաղանջ խմբված (մարդկանց և անասունների մասին). 3. 4. խառն ներքով. խռնված ներքով.

— **Ըն խուռն, ի խռան ի խռան**. խառ-նիխուռն ներքով.

**խուսափումն**. ի. աց. ա. առաջնորդ, խոյս

**խուսափելութիւն**. գ. հեռացման կամի

[illegible]

Խօլ, ի. ազ. ա. 1. խենթ, անմիտ, 2. [illegible]

Խօսիլ, եցայ. [illegible]

— Խօսիլ ի սրտի. [illegible]

— Խօսիլ ի խաղաղութիւն [illegible]

Խօսուն, [illegible]

Խօսք, սից. գ. [illegible]

— Խօսս առնել կամ ընել. [illegible]

— Խօսս առկանել. [illegible]

— Ի խօսս առնել. [illegible]

— Ի խօսս գալ կամ մտանել. [illegible]

— Խօսք [illegible]

Ծ

Ծաղ, ի. իւ. ազ. [illegible]

— Ծաղ լինել. [illegible]

— Ի ծաղու մինչև ի ծաղս. [illegible]

Ծաղել, եցի. նբ. [illegible]

Ծաղումն, զման. գ. [illegible]

Ծախել, եցի. նբ. [illegible]

Ծածուկ. ա. [illegible]

— Ծածուկ. գ. [illegible]

— Ծածուկ, ի ծածուկ. [illegible]

Ծածկել, եցի. նբ. [illegible]

Ծաղկաբոյս. [illegible]

— Ծաղկաբոյս գոյն. [illegible]

Ծաղկալից. ա. [illegible]

Ծաղկոց, ի. ազ. [illegible]

Ծաղր, զու. եան՝ ղեր և դրու. գ. [illegible]

— Ծաղր առնել, ծաղր դնել, ծաղր [illegible]



[illegible]

— Ընդ ծաղր առկանել, ձայն եշ.։

[illegible]

Կ

[illegible]

յու ճանապարհների վրա. 3. լուսատու մարմինների շուրջ եղած բոլորակ։

**Կալուած.** ոյ. ոց և ի. գ. 1. դրական' բանում անձնավոր, ամբողջ, անխառնություն, իշխանություն. 2. անփոփոխականություն (մասնակցություն բաժին), ամբողջության երկիր. սահման. 3. հողային անշարժ ունեցվածք, կալված։

**Կալում.** կալի. եր. ունենալ, բռնել, պահել։

**Կալյան.** ի. ագ. գ. նրգ, նշայր, ջրածխ.

**Կախայր.** գ. շրթ ամանի, սափոր։

**Կաղապ.** ի. իզ կամ ագ. գ. ձուլածո ամբ. որը. թարգման։

**Կաղամար.** ի. ագ. գ. թանաքաման։

**Կաղանչյան.** յանյան կամ կաղանչյան, կաղնեյան, կաղանչյան են. մի անտակ բույս է. թերևս բուսաբանի կազմած բույսը։

**Կամ.** տ. կամ։

**Կամ.** կաս. կայ. կայք. կա՛ց. կացե՛ք. մր. մնալ, կանգնել։

— **Կայ,** չկայ. կա, չկա։

— **Կամ.** աշխել. որպես մասնակից մնալ։

— **Կամ.** համաձայնել։

— **Կամ.** գործարել։

— **Կամ,** կամ մնամ. սպասել։

— **Կամ մնամ յիմիք.** շարունակել, համառել։

— **Կամ ի վերայ.** 1. հսկող լինել, հսկել. 2. վերահսկող լինել։

— **Կամ յաղօթս.** աղոթել։

**Կամակար.** ա. 1. համաձայնությամբ' սեփական կամքով. 2. ինքնակամ, անձնիշխան, ինքնիշխան, իր կամքի տեր, ազատ ընտրության իրավունք. 3. հոժարակ, հաճո. 4. մ. համաձայնությամբ։

**Կամակարութիւն.** գ. 1. համաձայնություն, բարի կամք. 2. բուն կամքի գործելու ազատություն. 3. կարողություն' ինքնիշխանություն մի բան անելու. 4. կամակորություն։

**Կամար.** գ. 1. մեջքը կորացած կար-



կարգում գոտի (զինվորականների կամ կանանց). գոտի։

**Կամար,** ի. ագ. գ. 1. շենքի կոր ծածկը, կամարակապ շինվածք, գմբեթ, խորան. 2. երկնակամար։

**Կամիմ.** եցայ. կամեա՛յ. եցեալ. եցող կամ կամող. հր. կամենալ, ուզել։

**Կամն.** մնն. մունք. մանց. գ. կամ' կալսելու գործիք։

**Կամք.** մաց. գ. 1. կամք. 2. ցանկություն. 3. կամեցածը, ուզածը. 4. հաճույք. 5. համաձայնություն. 6. հավանել, կամ եւս հեշտանալիքն և հոժարակամը։

— **Ըստ կամս.** մ. ուզածի պես։

— **Ի կամաց.** մ. սրտով, կամենալով։

— **Ոչ կամաց.** մ. ակամա, չկամենալով։

— **Ոչ ըստ կամաց.** ակամա։

— **Ըստ կամաց.** կամովին, ուզածի պես։

— **Կամ է՛ էր եղև՛ իցէ. կամ էր՛ էին. եղեն՛ իցեն** (սրանից հետո մաս' ին. ենք. եմք. մեք. ձեզ. նոցա կամ իւրեանց). մր. ուզում եմ, ցանկանում եմ, կամենում եմ (ես, է. ենք, էք, են), կամենում էր..., կամեցավ..., կամենում է ոչ։

**Կայ.** ի. իզ. գ. 1. կենալը, կանգնելը. 2. կենալու տեղ, կայան. 3. դիրք. վիճակ. 4. դադարում, կանգ առնելը. 5. մարդ, սավառումը. 6. գոյություն. ա. 7. կայուն, հաստատուն. 2. ներկա։

— **Ձիոյ առնում.** դադարել, կանգ առնել, կանգնել։

— **Ի կայս և ի կոյս.** կողմերը, սահմանները, կողմերում, սահմաններում։

**Կայան.** ի. իզ կամ կայեան. եաց. իզ. գ. 1. մնալու' կանգնելու տեղ. 2. մնալը, կանգ առնելը. 3. իր բան անելը. բնակարան, կաց. 4. հաստատ մնալը. 5. ա. կայուն, հաստատուն։

**Կայլակ.** ի. ագ. գ. կաթիլ։

**Կանամբի.** բույս, բնոց. ա. ամբողջացած ապաժառը. կին ունեցող ապաժառը։

**Կանգնեմ,** եցի. եր. 1. կանգնեցնել, վեր բարձրացնել, ամփել, շահել. 2. չր. կանգնել, կանգ առնել։

— **Կանգնեմ զոտս.** խոսքը կատարել։

— **Կանգնեմ սյունակ.** արձան կանգնեցնել։

**Կանգուն.** ա. մ. կանգնած, կանգ առած, կանգնած վիճակում, շիտակ, հաստատ, ուղիղ, անթերի։

— **Կանգուն, ի կանգուն.** մ. ամբողջությամբ, անպակաս։

**Կանթեղ.** ղոյ. ոց կամ ղի. եաւ. գ. յուղի ճրագ, կանթեղ, երկարության չափ։

**Կանեփուկ.** գ. մի տեսակ բույս, որի սերմը դեղ է և մրսածության դեմ հարմարություն է պատրաստում։

**Կանչխա.** գ. իրար վրա իրեն դարսած քարերի կույտ։

**Կապ.** ոյ. ով. ովք և ի. ա. իզ. կամ ակ. գ. 1. պարան, թել. 2. կապ, հանգույց, կապանք. 3. ոսկ. երկաթ. արգելք. 4. փակել. հեղ. 5. կախարդի գործադրած միջոց, կախարդական բան։

**Կապան.** ի. ագ. գ. 1. նեղ անցք երկու լեռների միջև, կիրճ. 2. ամրացված կիրճ, ցրրուն կիրճի մեջ։

**Կապարեմ,** եցի կամ եաց. գ. նեանքի ամանը։

— **Կապարես զուճապանեմ.** ապատամբել։

**Կապիճ.** պճի. ագ. գ. 1. արմատներ չափելու աման, մի գրիվի տասներորդ մասը, 2. բնական բերդով փրկավորված մի հին հայրն. 3. գինու չափ. 4. աչքի փոս. 5. արուեստից դատող գործի կամ նման առանձնական մի գործիք։

— **Կապիճք աչաց.** այն փոսերը գլխի վրա, որտեղ տեղավորված են աչքերը։

— **Կապիճք կոչեաց.** կոչելիների վերին մասերը' մինչև ծունկերը, ոտնազան։

**Կապուտ.** ի. իզ. կապուտ կողոպուտ. 1. գ. կողոպուտ, ավար. 2. ա. կողոպտված։

— **Կապուտ կողոպուտ.** ա. 1. կողոպտը-

ված, մերկ մնացած, 2. մի բանից զուրկ։

**Կառանչեմ,** եցի կամ կառաչեմ. եցի. չր. ճչալ, աղաղակել, թնդացնել, սաստիկ հառաչել։

**Կառավար.** ի. ագ. գ. 1. կառք վարող, կառապան. 2. կառավարող, ղեկավար, առաջնորդության տեր։

**Կառափեմ,** եցի. եր. գլխատել, գլուխը կտրել։

**Կառափն.** փին. փամբ, փանց. գ. մարդու գլուխ, գանգ։

**Կառչիմ.** եայ, ռուցեալ. չր. կպչել, փակչել. ամուր մնալ, կանգնել. 2. հաստատվել, շինել. 3. ստանալ։

**Կասեմ,** եցի կամ կասուցի. կասի. եր. կասեցնել։

**Կասեմ,** եցի. եր. ետ պահել, արգելել, կասեցնել, ցո՛. ող. կասեցնել։

**Կաշեմ,** եցի. կաշիմ, եցայ. չր. ետ կանգնել, քաշվել, դադարել, զգուշանալ։

**Կասկածոտ.** ա. խուսափող, կասկածոտ։

**Կատարած,** ի. իզ և ագ. 1. գ. ավարտվելը. վերջանալը, վերջ, վախճան, 2. կատարելը, գործադրություն. 3. ծայր, գլուխ։

— **Ի կատարած.** վերջապես։

**Կատարեմ,** եցի. եա՛. եր. 1. կատարել, ավարտել. 2. լրացնել. 3. մեծարել։

— **Կատարումն,** ման. գ. 1. վերջանալը, ավարտելը. 2. կյանքի վերջ, նահատակություն. 3. բովանդակությունը, ավարտ. 4. իրագործելը, գործադրելը. 5. լիակատարություն. 6. կատարելություն։

— **Կատարումն առնել.** կատարել, իրագործել։

— **Ի կատարումն ածել.** կատարել, իրագործել։

**Կարակեան.** ա. կամարաձև, բոլորաձև։

**Կարասեղ.** գ. զրահի կոճ, կարվում կոճերի կարծիք, մարմնի վրա կարերից հագած զրահ։

**Կարգ,** ի. ագ. գ. 1. դասավորություն, շարք. կարգ ու կանոն. 2. աստիճանավորում, դասավորում, աստիճան.

գրոն, ամփոփումն և այլն. 3. ասոյ. 4. ամուսնանալ։

— Ի ու ի կարգին. և այլն։

— Կարգաւ. մ. կարգով, իրար ետևից։

— Ըստ կարգի. կարգ ու կանոնով։

— Կարգ ըստ կարգի. կարգ ըստ կարգէ. հաջորդաբար, կարգով։

— Ի կարգ արկանել. կարգով դնել, շարել, շարադասել։

— Ի կարգ անկանիլ. կարգի՝ շարքի մեջ ընկնել։

Կարգել, եցի. նր. 1. կարգավորել, կարգի բերել, դասավորել, որոշել, անել, սահմանել. 2. դնել, շարադրել։

Կարգիչ, գչի. ագ. ա. կարգավորող։

Կարդալ, ացի. նր. չր. 1. ձայնել, աղաղակել, կանչել, կոչել, ողջույն կանչել, 2. ձեռնադրել, 3. անվանել, անուն դնել, 4. բարձրաձայն կարդալ, 5. կարդալ։

Կարդիլ, ացի. ացեալ. չր. կարդացվել։

Կարել, եցի. ելաւ, ելով. նր. կարել, կցել, ձևել։

Կարեկից. ա. մ. 1. ուրիշի՝ ծանր վիշտը ունեցող և ցավող, 2. խոր վիշտ պատճառող, խիստ վիրավորող։

Կարեւան կամ կարաւան, ի. ագ. գ. 1. ուղևորների խումբ՝ բեռնակիր կենդանիներով ճանապարհ գնացող, 2. երթ-ընթաց, ապրանքակիր բանակ։

Կարի. մ. ամենևին, հույժ, առավել, չափազանց, առավել։

— Ու կարի յոյժ. ու կարի ևս. ու կարի խիստ ևս. շատ էլ լավ. շատ էլ իրավացի, անտարակույս, ճիշտ այդպես։

Կարիք, ռեաց. գ. 1. հոգեկան և մարմնական կարիք. 2. աղետ, թշվառություն, վիշտ։

Կարիք, ռեաց. գ. 1. կարիք, հարկավորություն, պակասություն. 2. մերձավոր ազգականություն։

Կարծել, եցի. նր. 1. կարծել, համարել, կասկածել, 2. կասկածել։

Կարծեցուցանել, ցուցի. ցո՛ պր. կարծել տալ, թվալ տալ։

Կարկաչահոսութիւն. գ. կարկաչելը, վերևից վար ջրի արագ հոսելը։

Կարկառակերտ, կառի. ից. գ. իրար վրա կուտակված քարեր, քարերի կույտ։

Կարկառել, եցի. եա՛. նր. 1. ձեռք երկարել, ձեռք մեկնել, 2. ձեռք տալ, օգնել, մի բան տալ, 3. գրգռել։ Նույն եւ. կարկառումն։

Կարճառօտի. մ. կարճ կերպով, համառոտ կերպով։ Նույն եւ. կարճառօտաբար, կարճառօտիւ, կարճառօտ։

Կարմրատեսիլ ա. կարմիր տեսքով, կարմրերանգ, կարմրագույն։

Կարօտ, ի, ից. ա. 1. կարիքավոր, կարիք ունեցող, պակասություն ունեցող, կարոտ ունեցող, չքավոր. 2. գ. կարիք ունենալը, կարոտ ունենալը, կարոտելը, կարիքը։

Կարօտանամ, ացայ. չր. 1. կարոտություն քաշել, կարիք զգալ, պակասություն ունենալ, 2. փափագել։

Կարօտանք, նաց. գ. 1. չքավորություն, 2. փափագ։

Կարօտիմ, եցայ. չր. տ. Կարօտանամ։

Կացուցանեմ, ուցի. ցո՛. պր. 1. ոտքի վրա կանգնեցնել, 2. կանգնեցնել, դադարեցնել, 3. դնել, զետեղել, 4. նշանակել, կարգել, 5. հաստատել, կատարել, 6. բաղադրել։

— Առաջի կամ յանդիման կացուցանել. առջև բերել, դեմք հանել։

— Կացուցանել պաշտ. աչքերը կոտրացնել։

— Ի հարկի կացուցանել. հարկի տակ դնել, հարկատու դարձնել։

Կաքաւեմ, եցի. չր. նր. 1. պարել, ոստոստել, թռչկոտել, 2. ծաղրի առարկա դարձնել, 3. վրա հարձակվել, 4. խաղալ, ցնծալ։

Կեամ, կեցի. կեայր. կեցի. կեցայ. կեաց. չր. 1. ապրել, 2. կենդանանալ։

Կեանք, կենաց. գ. տ. Կեամ։

Կեղեքեմ, եցի. նր. 1. դղրդել, քերթել, պատառոտել, 2. չարչարել, տանջել, 3. հարստահարել, նեղել, նվաստացնել, ճնշել, պղծել։



Կեմ, ոյ. գ. խոտից պատրաստած պարան (կողովներ կապելու համար)։

Կենդանութիւն. գ. կյանք, կենդանի լինելը, ողջություն։

Կենսապարգեւ. ա. աշխարհին կյանք տվող, կյանքի վայելքը տվող, կենսատու։

Կեռ, ի, ից. գ. 1. կրոն, հովվակ, 2. վարդապետարան, գիրք։

Կերակրանք, նաց. գ. կերակուր, ուտելիք։

Կերպարանեմ, եցի. նր. 1. ձևացնել, համապատասխանեցնել, ցույց տալ, 2. նմանեցնել, համեմատել։

Կերպարանիմ, նեցայ. կ. հր. կերպարանք առնել, նմանվել, ձևանալ ուրիշ կամ նոր կերպով, կերպարանափոխություն անել։

Կեցուցանեմ, ցուցի. ցո՛ պր. 1. կենդանացնել, կենդանի պահել, 2. աջակցել, 3. փրկել, ազատել, 4. առողջացնել։

Կէտ, կիտի և կէտի կամ կետի. կէտք. կիտից կամ կէտից. գ. կետ կոչված ջրային կենդանին։

Կէտ, կիտի. ից կամ կէտի, ից. գ. 1. կետ, նիշ, 2. ընթացք, 3. նշանի թիվ, 4. նպատակ, նշանակված սահման, հասարակական տեղ, 5. ժամկետ, պայմանաժամ, 6. կենտրոն, 7. տոմարական հաշ։

Կիզում. կիզի. կիզեմ, եցի. նր. այրել, բորբոքել։

Կինճ, կնճի, նաց կամ կինճք, կնճի, ճաց. գ. վայրի արու խոզ, վարազ։

Կիճն. գ. մանր քար, խիճ։

Կիճք. գ. ոտքի տակը, ոտքի հետքը։

Կից, կիցք. ա. գ. 1. կցած, կցած, կից, իրար մոտ, 2. զույգ, 3. մտերմություն, 4. ճանապարհների միացման տեղը, 5. անդամների հանդի ոսկորները։

— Կիցս ընկենուլ կամ հարկանել. քացի տալ, աքացել։

Կից. 1. նոյն. կից. հետը, 2. մ. միասին, համատեղ, 3. միաժամանակ։

Կլանեմ, կլի. կլ'ւլ. նր. կլանել, կլլեմ. նր. 1. կուլ տալ, 2. ընկղմել։

Կղերական, ի. ագ. ա. 1. հոգևորական, հոգևոր պաշտոնյա, կղերին պատկանող, 2. հոգևորականությանը հատուկ։

Կճղակաբաժին, ժի. ից. կճղակաբաշխ, ի. ից. կճղակաճեղք, ի. ագ. ա. կճղակը երկու մասի բաժանված (անասուն)։

Կճղուկ, ռկի. ագ. գ. յուղ անասունի խառնել։

Կնութիւն. գ. 1. կին լինելը, հարսնություն, 2. կնոջ բնավորություն։

Կնքեմ, եցի. նր. 1. կնիք դնել, կնքել դնել, 2. փակել, 3. արգելել, արգելք չթողնել, 4. հաստատել, վկայել, ավարտել, վերջացնել, 5. մկրտել։

Կշիռ, կշռոյ. ագ. գ. 1. կշեռք, 2. կշեռքի թաթը, 3. ծանրություն, չափ, 4. հավասարակշռություն, 5. ընտրություն, դատաստան, 6. ռամկավարի չափ, 7. մի համաստեղություն, 8. ա. համաչափ, զուգահեռ, մ. 9. նմանությամբ, 10. ճիշտ, ժամանակին։

— Ունել զգլուխ ի կշիռս. տալ զանձն ի կշիռս. իրեն վտանգի ենթարկել։

— Ձեռին կշիռ. մ. նույն չափով։

— Կշիռ հաստատել. երկու մասի բաժանող սահմանագիծ։

Կշտամբութիւն. գ. 1. համբերատարություն, պարսավանք, մեղադրանք, 2. նախատ, պարսավ, պախարակ։

Կոզն, ոտն կամ ոտն, ոտնց. գ. ուղտի ձագ։

Կոխան առնել՝ լինել. ոտնատակ տալ, ոտնատակ լինել։

Կոխել, եցի. նր. ոտնով տրորել, ոտքի տակ առնել։

Կոծ, ոյ, ոց. գ. 1. ծեծելը, հարվածելը, բախելը, 2. կուրծքը՝ երեսը՝ գլուխը ծեծելը՝ ի նշան սգի, 3. լաց ու կոծ, սուգ, 4. ողբաձայնություն, ծեծանք։

— Կոծ շիրմացուցանել. ատաղին լացանել։

Կողմնակալ, ի. ագ. գ. երկրի մի մասի կառավարիչ, կուսակալ, կողմնակալ։

Կոկորդաձայն. ա. կոկորդային ձայնով (հն-չյուն)։
Կոկոնել, եցի. եր. ողորկել, փայլեցնել, զարդել, անճոխել։
Կոտան կամ կոտոր, ոյ. ով կամ ու, աց. կամ ոց. օ՛ և ով՛. ա. ասպրո-րով, երկաթաձուլության կամ ատաղձա-գործ փորր։
Կպչուն, ի. աց. ա. գ. 1. մածուցիկ, ցորենակից, հաղորդակից. 2. ուրիշ

բանի հետ կապ ունեցող, հարակից։ Այսպես կցում։
— Կպչուն ասելով, պրոտեաստիկ։
— Կպչուն լինել, մածուցիկ դառնալ, մածուցիկի, հաղորդակից դառնալ, զորանակից դառնալ։
Կպչիկ, չէ. կալ. գ. 1. սոսնձոտ, կա-չիչ. 2. հուլ. ձեռք վերաբերմունքով, վարձ, ազատման փող. 3. կաշառք։

Հ

Հագագ, ի. աց. գ. 1. շունչ, ձայն հա-նող շունչ, հագագ. 2. Է հնչյունը կամ նրա նման հնչյուն. 3. լեզվի անգույթ։
Հագնվողություն, գ. 1. բանաստեղծու-թյուն, տաղ, քերթված. 2. վիպասա-նական բնույթ ունեցող քերթված, պոեմ, հատկապես հոմերոսի ստեղ-ծագործությունները. 3. բանաստեղ-ծության կամ այլ գրվածքի գլուխ, մաս, բաժին։
Հագնել, եալ. ենաց. գ. բարդի։
Հազար, ոյ. գ. [illegible] կարգին պատկանող բույս, որ զար-դարվում է իրոք ազգան կամ կերա-կուր. ունի շատ տեսակներ. Այս տեսակներից են դաշտին և եղերդ։
Հազար, ի. աց. թ. 1000 թվականը։
Հազարամյա, մեի. ից կամ եայց, հա-զարամյան. ա. հազար տարի գոյու-թյուն ունեցող, հազար տարեկան։
Հազարապետ, ի. աց. գ. 1. զինվորա-կան պաշտոնյա, 1000 զինվորի հրա-մանատար. 2. արքունի գործակալ, երկրի տնտեսական էական վրա հսկող հին հայաստանում՝ Պարսից Սասանյան թագավորների կողմից նշանակված. 3. արքունական պա-լատի տնտեսական գործերի կառա-վարիչ, տնտես։
Հազարապետություն. գ. հազարապետի լինելը, հազարապետի պաշտոնը։
Հաղթական, ի. աց. ա. մ. հաղթ-ված, վասրված, դուրս քշված, վի-տարանդի, հալածվածի վիճակում։

— Հալածական անել՝ անձին՝ ա-կանել, հալածել, վտարել, դուրս քշել, քշել։
— Հալածական լինել՝ երթալ. հալած-վել, վտարվել, քշվել։
Հալում, ի. եց. գ. 1. փոսա և հյութա-լի տերևներով մի տեսակ բույս. 2. հալվեի հյութ, խանձ. 3. անուշահոտ-յուղ տվող փայտ։
Հախտապաշտություն. գ. 1. հախտապաշտ՝ գեմ՝ ներհակ լինելը. 2. հակառա-կորդ լինելը, դիմադրություն. 3. թշնամություն, կռիվ, գժտություն, տարաձայնություն. 4. առարկա-թյուն, ընդդիմախոսություն. 5. մրր-ցություն, մրցանք։
Հաղղ՝. եց. գ. թանկարժեք, երրորդայինի լար։
Հաճ, ոյ. եանց. ա. 1. լավ տրամադրված դեպի մի բան կամ մեկը, բարեհամ-բույր, հաճո. 2. հաճոյական, հաճե-լի. 3. գ. հաճություն։
— Հաճ և հաճոյ. հաճո, հաճելի, ախորժելի, [illegible]։
Հաճել, եցի. եր. 1. հաճություն, հաճոյանալ, հաճելություն բերել. 2. սիրտ անել, հաճոյանալ. 3. վճա-րել։
Հաճիմ, եցայ, եա՛ց կամ եա՛. չբ. 1. հաճանել, ախորժել, սիրել. 2. հաճանալ։
Հաճոյ, ա. հաճելի, ախորժելի, սիրե-լի, ընդունելի։
Հաճոյ է. հաճոյ բան. մ. հաճելի է, լավ է, լավ է ճիշտ, լավ է հաճար-վում։



Համադասեր. ա. մ. համախմբված, միա-սին խմբված, մի տեղ հավաքված, մի գունդ կազմած։
Համազգամ, ի. աց. ա. 1. համեղ, ըն-տիր, բազդրահամ, անուշ (կերակրի մասին). 2. գ. համեղ ուտելիք և ըմպելիք։
Համազգի, գույ. գեաց. ա. 1. միե-նույն ցեղից՝ ազգից եղող, ազգա-կից. 2. նույնատեսակ, համատեսակ, նույնակերպ։ նույն եւ. համազգամ, համազգի։
Համաձայն. ա. 1. միասին ծնված, երկ-վորյակ. 2. նույն ծագումով, ցեղա-կից, ազգակից. 3. բնածին, բնա-բույս։
Համակ, ա. մ. 1. ամբողջապես, լրիվ, ամբողջովին. 2. շարունակ, միշտ. 3. միանգամայն։
Համակ, ի. աց. ա. ան և ազնիվ խա-ղոն (գույն), գորշախայտ։
Համանմանված. ա. միատեսակ շարք հագած, նույնտիպ հանդերձներով։
Համասեռ, տեղց. ա. հասակակից, նույն տարիքի։
Համար, ոյ. ոց կամ ու. ուց և ի. գ. 1. թիվ. 2. հաշիվ. 3. հաշվեկշռու-թյուն, հաշիվների ընթացություն, պա-տասխանատվություն. 4. գնահատական գումար. 5. ինչ որ հաշվի պետք է առնել, հաստատում, հարգ, արժեք. 6. համեմատություն, կարգ, դաս. 7. հնթադրում։
— Համար առնել, համար առնում. հա-շիվ տեսնել, հաշվել, հաշվառում կա-տարել, հաշիվ պահանջել։
— Ի համար անել՝ արկանել՝ բերել. հաշվել, թվարկել, համեմատել, բաղ-դատել։
— Համար զնել բեր ասել. վճռել, մեկի հետ վեճի մեջ մտնել, վիճա-բանել։
Համարիմ, եցայ. հր. 1. հաշվել, թվել. 2. կարծել, ենթադրել։
Համբառնամ, բարձի, բա՛րձ, ձեռք. եր. 1. վեր բարձրացնել, 2. միասին վերցնել։

Համբառնամ, բարձայ, ձի՛ր, ձ. չբ. 1. վեր բարձրանալ, բարձրացվել. 2. գլուխ բարձրացնել, գոռոզանալ. 3. վերանալ, վեր կենալ գնալ, հեռա-նալ։
Համբար, ոյ. ոց և աց. գ. 1. ցանման-քան, պահեստ. 2. պաշար, կենսա-մթերքի պաշար։
Համբարանոց. գ. ցանկմանքի՝ պա-հեստի վերակացու, պահեստապետ։
Համբարուց կամ համբարանոց, ի. աց. գ. ցանմարան, պահեստ, կոստակե-րո՝ դիրքերի տեղ։
Համբարու, ի. աց կամ համբարվի, բոյ-րեաց. գ. ծովային կամ ցամաքային առասպելական կենդանի, մարմնով հրեշ, հավերժահարսին, պարիկ, որին հանձնառում էին հանդերձյալ աշխար-հներ հետ՝ կերակրել, կերտ-անել։
Համբավեմ, եցի. եր. 1. համբավ լուր տարածել. 2. մեկի գովքը՝ բարի անունը տարածել, հռչակել։
Համբույր, բուրի. ից կամ ոց. գ. 1. համբույր. 2. փոխադարձ սեր, հաշտություն, միաբանություն. 3. մեղմություն, հանդարտություն. 4. բաժանված լինելը, բնական լինելը (կենդանիների մասին). 5. երկու եր-կար վանդից բաղկացած տաղաչա-փական հատված, ա. 6. երբեք հետ հաշտ՝ միաբան՝ սիրով. 7. մեղմ, հանդարտ. 8. հեզ, բնակեցված, բն-տանի ցարած (կենդանիների մա-սին)։
Համբեմ, ի. ոց. օ՛ կամ իվ՛. գ. 1. կե-րակրին համար համ տվող նյութ՝ բույս՝ գինի, աղ, և այլն. 2. կե-րակրի նյութ. 3. բերքի կերակուր. 4. բերքի խոհարար։
Համեմել, եցի կամ համեմեմ, եցի. եր. համ տալ համեմունքով, ախորժելի դարձնել։
Համեղ կամ համադամ, ի. եց կամ աց (ացն). գ. եկեղեցական, պաշտական, պաշտոնական, թեթևության։
Համզոն. ա. 1. ամբողջ, բոլոր, բա-վական, ընդհանուր, համայն. 2. մ. ամբողջովին, բոլորովին, համակ։

Հայածոցին. գ. Հայերի բնակութեան կեդրոն, Հայկական կայան։

Հայաստան. Հանրապետութիւն Խորհրդային Հայաստանի ձեւի կրճատումն է՝ արտասահմանեան թեան սրբերով՝ Փոխանորդ ժամ՝ Հայաստանի այն մասը, որը միացված է Հայաստանեայց բերված նաւով։

Հայեցած կամ Հայեցուած, ոյ. ով. գ. 1. Հայացք, նայուածք, մի բանի վրա նայելու եղանակը, 2. տեսք, արտաքին կերպարանքը։

Հայիլ, եցայ, եա՛ց կամ եա՛, եցէ՛ք չէ. 1. նայել, 2. աչքը վեր բարձրացնել, դէպի վեր նայել, 3. յամ նայել, 4. վախենալ, կերպարելով, 5. հետամուտ լինել, աչք անել, 6. հոգս կամ վախ ունենալ, 7. տեսնել։

Հայրապետ, ի, աց. գ. 1. նախահայր, նահապետ, 2. եկեղեցու հայրերի պետ, ավագ եկեղեցական, 3. որևէ եկեղեցու պետ, պատրիարք, կաթողիկոս, պապ։

Հայցել, եցի, եր. 1. աղաչելով ուզել, խնդրել, 2. կամենալ, ցանկանալ, 3. փնտրել։

Հայցուած, ոյ. Ժամանակակից հայերէնի ձեւով՝ Հայցուածք, ոց. գ. 1. աղաչանք, խնդրվածք, խնդրանք, 2. խնդրված բանը, ինչ որ մարդ հայցում է։

Հանապազ. մ. միշտ, շարունակ։

Հանապազօր. մ. ամեն օր։

Հանապազորդիկ. ա. մ. միշտ վրան կրող՝ կրելով։

Հանգանակ, ի, աց. գ. 1. որևէ նպատակի համար մեջ հավաքված գումար, 2. այդ գումարի հավաքման ժամանակը, 3. Հանգանակի մեջ յարաբերակցութեան մասին գումարը։

Հանգիստ. 1. Երբ. հանգիստ (մի բանի), հանգստություն, դադար, 2. մ. հանգիստ ձեւով, հանգիստ, 3. սրբերու քուն, 4. ա. համեստ, անվտանգ, 5. հանգիստ բան, հանգստութիւն։

Հանգոյց, գուցի, եր. գ. 1. հանգույց, կապ, 2. բոյսերի, որոնց փափուկ են ների, 3. Հին երաժշտական մի խաղի անուն, 3. ա. խճճված, կնճռոտ, բարդ։

Հանգուցանել, ցուցի, ցո՛. եր. 1. հանգուցել, 2. կապել, միացնել, ամփոփել, 3. անդամալուծել, 4. թաղել։

Հանգչիլ, գեայ, գի՛ր. գուցիայ. չէ. 1. հոգնածութիւնից հանգիստ առնել, հանգստանալ, 2. անդորրանալ, հանդարտվել, խաղաղվել, 3. դիմանալ, մի տեղ կանգ առնել, դադար առնել, մնալ, բնակվել, 4. իջնել, նստել, դադարել, 5. զեղծվել, դրվել, 6. ամփոփվել, լռանալ, փչրանալ, 7. ումը դադարել, թողնել, 8. վախճանվել, թաղվել։

Հանգրուան, ի, աց. գ. 1. կանգ առնելու տեղ, հանգստանալու տեղ, կայան, իջևան, 2. անասունների փարախ, մակաղատեղ, 3. նավահանգիստ (հանգրուան նավաց), 4. նահատակների գերեզման, վկայարան։

Հանդարտութիւն. գ. 1. հանդարտ լինելը, շարժման՝ հուզմունքի բացակայութիւն, 2. անդորրութիւն, խաղաղութիւն, հանգստութիւն, 3. մեղմութիւն, հեզութիւն, 4. չափ, ժուժկալութիւն, համեստութիւն, համբերատարութիւն։

Հանդերձ, ի,ից, ոյ. գ. 1. հագուստ, զգեստ, լաթ, շոր, զարդ, 2. զարդարանք, կահույք, զարդարանք ընդհատ, պաճուճանք, 3. զարդ, պատրաստութիւն, 4. ծածկոց, վերմակ։

Հանդերձ. նախ. միասին, հետ։

Հանդերձատուն. գ. Հագուստի տուփ։

Հանդերձել, եցի. եր. 1. պատրաստել, շտկել, սարքել, կազմել, 2. հանդերձանքի անհրաժեշտ կարիքները հոգալ, նախապատրաստել, 3. բոլոր անհրաժեշտ բաներով ու պարագաներով ապահովել, համապատասխան գնել։

Հանդերձիլ, եցայ. չէ. 1. կարգի ու պատրաստ լինել մի բանի համար, 2. հարկ լինել, պետք լինել։

—Հանդերձեալ կամ հանդերձելի (որին միացին բառ). Հարկ է լինել, լինելու է, գալիք։

Հանդէպ, դիպի և ոյ. ա. հարմար, պատեհ, պատշաճ։

Հանդէպ. 1. նխ. դիմաց, դեմ, 2. դ. դիմացի կողմը, դիմացինը, 3. մ. առաջուց, առաջ գնալով։

— Ի հանդէպ. դիմացը, դեմքի առաջ։

— Ի հանդիպակ. Հակառակ կողմից, դիմացի կողմից։

— Ի հանդիպոյ. դիմացինը, առջևում։

Հանուր, նոյ. նուր, նուրք, նուրց. ա. 1. ընդհանուր, բոլոր, ամբողջ, 2. մ. ամեն տեղ, ամենուրեք, 3. գ. (հոգն. ձեւով) ընդհանուրը, ընդհանրութիւն, 4. ամեն ինչ, ամենքը։

Հաշ, ա. նիհար, մաշված, տկար. Հաշ ու մաշ եղած։

Հաշել, եցի. եր. հյուծել, տկարացնել, մաշել. Հաշ ու մաշ անել։ Սովորաբար մաշել բայի հետ՝ հաշել և մաշել. նույն նշանակությամբ։

Հաշիլ, եցայ. կ. չ. հյուծվել, տկարանալ, մաշվել, հաշ ու մաշ լինել։

— Հաշել աւուրս. ժամանակաշրջանի երկրորդ յուրաք Թողացում։

Հաշիւ, ի, իւ (հոգն. ալք. նաև հաշուեմ). ա. ֆինանսական պահպանութեան ունեցող, արտադրական, խնդ, անդամակցութիւն։

— Հաշիւ մաք, մասնավոր պահպանութեան ունեցող, ապաւէ։

Հասանել, հասի, հա՛ս, հասէ՛ք, չէ. 1. հասնել, 2. գալ, իջնել, հանդիպել, 3. փնտրելով գտնել, ձեռք բերել, հանդիպել, 4. վերահասու լինել, հասկանալ, իմանալ, ճանաչել, 5. հասունանալ, 6. պատահել, վիճակվել։

— Ի վերայ հասանել, հասու լինել. 1. հասկանալ, իմանալ, ճանաչել հասնել, 2. վրա հասնել, վերահասու լինել, 3. վրան հարձակվել։

— Հասանի. մր. լինելու է, պիտի լինի, վիճակված է։

Հասանիլ, հասայ, հասի՛ր. չէ. 1. հասնել, 2. գտնել, համաձայնել լինել, մարդի մեջ ամփոփվել։

Հասարակ, ի, աց և ից. ա. 1. կես եղած, 2. ընդհանուր, ամբողջ, բոլոր. 3. Համատարր, միաժամանակ, միօրինակ, միատեսակ, հանուր, 4. հասարակ (գոյական), հասարակ (բայց), ներգործական և կրավորական սեռ արտահայտող, 5. պարզ, սովորական, հասարակ, 6. գ. կեսը, կես մասը, 7. մ. համատարածաբար, միասին, միանգամայն, ընդհանրապես։

— Ըստ հասարակ. 1. համատարր չափով, համատարածաբար, 2. ընդհանրապես, 3. միասին, միանգամայն։

Հասարակել, եցի, եր. 1. կիսել, կես անել, միջին կետը հասնել, 2. համատարածաբար բաժանել, 3. ամբողջացնել, ամփոփել, լրացնել։

Հաստատաչափիկ. ա. Հաստ և ամեն բանով պատկեր ունեցող, ուժեղ, զորավոր։

Հաստատել, եցի, եր. 1. Հաստատ դարձնել, անդամալորել, 2. կանգնեցնել, 3. ամրացնել, պնդել, 4. որոշել, կարգել, սահմանել, 5. կայացնել, ամրացնել, 6. Հաստել (մի՛ն), անկախ, 7. Հանել, անկանել (աչքը, Հայացքը)։

— Հաստատեալ գնեան՝ գնեան՝ պնդութեամբ որոշել մի բան անել, մտավորապես պատրաստվել։

Հաստատիլ, եցայ. չէ. 1. Հենվել, կանգնել, ապաւինել, 2. կառուցել, 3. Համոզվել։

Հաստատութիւն. գ. 1. Հաստատուն լինելը, Հաստատակամութիւն, Հաստատութիւն, 2. Հաստատուն բան, Հիմնարան, Հենարան, 3. ամրութիւն, ուժեղութիւն, ամ, զորութիւն, 4. առողջութիւն, 5. ապացույց, 6. Հաստատունի՝ որոշակի տարածութիւն, 7. Հաստատված բան, որոշում։

— Հաստատութեամբ. մ. Հաստատապես, Համոզված կերպով։

Հաստատուն, տնոյ, ոց. ա. 1. Հաստատ կանգնած, ամուր, անշարժ, 2. տևոյն, ճշմարիտ։

Հաստել, եցի. եր. 1. Հաստատել, ամրացնել, արմատավորել, 2. ստեղծել, կազմել, արարել, 3. ստեղծել, Հորինել։

Հասարակ, ի, աց և ից. ա. 1. կես

Զառածեմ, [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible] 7. [illegible] 8. [illegible] 9. [illegible] 10. [illegible] 11. [illegible] 12. [illegible]

— [illegible] [illegible]

— Զառածիմ [illegible]

Զառիկիմ, [illegible] 1. [illegible] 2. [illegible]

Զառամած, ոյ, ոց կամ ի, ից. գ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible]

— Զառամած [illegible]

— Զառամած [illegible]

Զառացուցանեմ, [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible]

Զառացուանք, [illegible] գ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible]

Զառաւանդ, գ. [illegible] 1. [illegible] 2. [illegible]

Զարդարանք, [illegible] 1. [illegible] 2. [illegible]

Զարթնում, զարթիմ, [illegible]

Զարկ, ի, ու կամ իւ, ազ, ամ, գ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible]

— [illegible] զարկի, [illegible]

— Զարկ (ս) [illegible]

— [illegible]

— Զարկս զարկանեմ. [illegible]

— Զարկ է. [illegible]

Զարկանեմ, զարկի, զա՛րկ. ներ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible] 7. [illegible] 8. [illegible] 9. [illegible] 10. [illegible] 11. [illegible] 12. [illegible] 13. [illegible]

— Զարկանեմ [illegible]

— Զարկանեմ [illegible]

— [illegible] զարկանեմ. [illegible]

— Զարկանեմ (կամ [illegible]) [illegible]

— [illegible] զարկանել [illegible]

— [illegible] զարկանեմ. [illegible]

— [illegible] զարկանեմ. [illegible]

— Զարկանեմ [illegible]

— [illegible] զարկանեմ. [illegible]

— [illegible] զարկանեմ. [illegible]

— Զարկանեմ [illegible]

— [illegible] զարկանեմ. [illegible]

— [illegible] զարկանեմ. [illegible]

— Ընդ միմ զարկանեմ. [illegible]



— Ընդ [illegible] զարկանեմ. [illegible]

— Զարկանիմ, զարկայ, [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible]

— [illegible] զարկանիմ. [illegible]

— [illegible] զարկանիմ. [illegible]

— [illegible] զարկանիմ. [illegible]

— Զարկանիմ ի [illegible]

— Զարկանիմ [illegible]

— Զարկանիմ ի [illegible]

— Զարկանիմ ի [illegible]

— Զարկանիմ ընդ [illegible]

— Զարկանիմ ընդ [illegible]

Զարն, ի, ից. [illegible]

Զարնուղի. [illegible]

Զարուած, ոյ, ոց. գ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible] 7. [illegible] 8. [illegible] 9. [illegible]

Զարում, զարի, զա՛ր. ներ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible]

Զարտար, [illegible] 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible] 5. [illegible] 6. [illegible]

— [illegible]

— [illegible]

Զարտնեմ, [illegible] 1. [illegible] 2. [illegible]

Զարգանեմ, զարգի, զա՛րգ. ներ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible]

— Զարգանեմ [illegible]

— Զարգանեմ [illegible]

Զագ, ի, ից. գ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible] 4. [illegible]

Զաղարար, ի, ազ. գ. [illegible]

Զաղկառակ, ի, ազ. [illegible]

Զաւ, ու, ոյ կամ ոյ, ազ. գ. 1. [illegible] 2. [illegible] 3. [illegible]

Զաւ, ու, ո. [illegible]

Զաւու [illegible]

Զաւ. [illegible]

— Զաւ [illegible]

Զաւակ, ի, ազ. գ. 1. [illegible] 2. [illegible]

նախադասություն, 3. դրդիչ, 4. առաջնորդ, 5. հեղինակ։

Հաւալ. գ. բարեգործություն, հաճություն։

Հաւան. գ. ա. 1. համախոհություն, հաճություն, համաձայնություն, 2. համաձայնված, համակերպված, համաձայն, հավանած, համոզված։

— Ի հաւան ածել. համոզել, համաձայնեցնել։

— Ի հաւան գալ. համաձայնել, հավանել։

— Հաւան առնել. համաձայնության բերել, համոզել։

— Հաւան լինել. համաձայնել, հավանել։

— Հաւանէ՞ս և հաւատա՞ս. ինչպե՞ս հաճեցիր մտածած՝ խոսքով՝ ասրով։

Հաւանեցուցանել, ցուցի, ցո՛. պր. համաձայնեցնել, հաճության բերել, համոզել, համոզեցնել, համաձայնել, արդյոք։

Հաւանի. ա. գ. ավել կենդանի։

Հաւանիմ. եցայ. չր. 1. համաձայնվել, անսալ, լսել, ականջ դնել, 2. կամակից լինել, համաձայն լինել, 3. համախոհությամբ հաճություն հայտնել, ընդունել, համաձայնել, համակերպվել, 4. իր հոժարիչի համաձայնությամբ գալ, հավանել։ Նույն եւ. և հաւանէ՞ս յետոյ անուն։

Հաւանութիւն. գ. 1. հավան լինելը, հաճություն, համաձայնություն, 2. հպատակություն, հնազանդություն, 3. համոզիչ՝ հավանեցնող խոսք, առաջարկ։

Հաւատամ, ացի, տա՛, ցի՛ր. եր. 1. հավատալ, վստահել, ընդունել վստահությամբ, 2. հուսալ, հույս ունենալ, 3. վստահություն ունենալ, վստահել։

— Հաւատամ զոք. մեկի խոսքին հավատալ։

Հաւատարիմ, րմի, մաց. ա. 1. վստահելի, մտերիմ, անկեղծ, 2. անդավաճան, իր խոսքին հավատարիմ, 3. ստույգ, հավաստի, ճիշտ, 4. ապահով, բնակելի, 5. պղտոյանքով, 6. մ. հավատալով, հավատարմորեն։

— Հաւատարիմ առնել. հավատալի դարձնել, ստույգ դարձնել, հաստատել։

— Հաւատարիմ լինել. 1. հուսալ, հավատացել, բնակելի լինել, 2. հավատալ, 3. հավատարիմ մարդու հանձնվել, 4. մի բան մեկին վստահված լինել, մի բանի պատասխանատու լինել։

Հաւատարմութիւն. գ. 1. հավատարիմ լինելը, հավատարիմի հատկությունը, 2. ստույգ՝ հավատալի ճիշտ լինելը, 3. հավատալի լինելը, 4. վկայելը։

Հեթանոս, ի, աց. գ. ա. 1. այլազգի ժողովուրդ (ըստ հին հրեաների), ոչ հրեա, այլազգի, 2. հույն (հրեաների նկատմամբ), 3. կռապաշտ, 4. օտարապաշտ։

Հելլենական, ի, աց. ա. 1. հելլեններին (հույներին) հատուկ, հելլեններին վերաբերող, 2. գ. հելլենական մշակույթ կամ երկիր։

Հեծան, ի, աց. գ. գերան, ծառի բուն, հաստ գավազան, ձեռնափայտ։

Հեծանիմ կամ հեծանում, ծայ, ծի՛ր. չր. հեծնել, նստել գրաստի վրա. այլև՝ կառք նստել։

Հեծելութիւն. գ. 1. ձի հեծնելը, ձի հեծած արշավելը, ձիով պատերազմ գնալը, 2. կառք նստելը։

Հեծեծեմ, եցի. չր. վշտից հառաչանք արձակել, հառաչել, լալ ու կոծ անել, ախ ու վախ անել։

Հեծութիւն. գ. վշտալից հառաչանք, հեծեծանք, խոր վիշտ, լաց։

Հեղգ, ի, աց. ա. 1. ծույլ, անհոգ, դանդաղաշարժ, 2. ծուլությամբ եղած, 3. թեթև, խեղճ, աղքատիկ։

Հեղձանել, եր. 1. խեղդել, 2. ճնշել։

Հեղձանիմ, ձեղձիմ, հեղձնում կամ հեղձնում, ձայ. չր. 1. խեղդվել, 2. պաշարվել, ճնշվել, 3. կոկորդը չորանալ։

Հեղձուցանել, ձուցի, ձո՛. պր. 1. խեղդել, 2. պաշարել, ճնշել։

Հեղոյս, ղուսի, սից. գ. 1. գամ, բևեռ, մեխ, 2. մետաղե ձող՝ երկու ծայր միմյանց հետ կապելու և ամրացնելու համար։

Հեղում, հեղի, հե՛ղ. եր. 1. թափել, հանգցնել, լցնել, ջրարկել, 2. հալել, փռել, տարածել, 3. փ. վրա թափվել, վրա վազել, յուծվել։

Հեղումն, ման. գ. թափելը, թափվելը, հոսելը։

Հեղուսեմ, ղուսի. եր. 1. գամել, մեխել, 2. հյուսել, միացնել։

Հեղուսումն. գ. միացնելը, բևեռելը, մեխելը, հեղույսներով ամուր կապելը։

Հեմիկլ. գ. հակառակություն, մեկին զայրացնելու կամ արհամարհելու համար կատարված թշնամական գործ։

Հեշտ, ի, ից. ա. 1. ախորժելի, հաճելի, ցանկալի, 2. դյուրին, 3. գ. հաճույք, հաճույք, դյուրություն։

Հեշտացուցիչ. ա. հեշտանքով՝ ախորժելի, ցանկալի, հաճելի ու դյուրին դարձնող։

Հեշտութիւն. գ. 1. ախորժելի ու հաճելի լինելը, ցանկալի ու ցանկալի լինելը, 2. հաճույք, զվարճություն, ուրախություն, 3. մարմնական հաճույք, անառակ հաճույք, 4. դյուրություն, հեշտություն։

Հեռ, ի, իւ և ոյ. գ. 1. հակառակություն, վեճ, կռիվ, 2. նախանձ։

Հեռ. ա. կռվարար, տրտնջող, նախանձոտ։

Հեռաստան. ա. գ. 1. հեռավոր տեղ, հեռուն, 2. հեռու, հեռավոր։

— Ի հեռաստանէ. 1. հեռվից, հեռվանից, 2. հեռուն։

Հեռի, ոյ, հեռւոյ կամ հեռւոյ և հեռւոյ. գ. 1. պարան՝ կապ, 2. խաչի կամ նման հյուսած բան՝ առջին փաթաթելու համար։

Հեռանեմ, նեցի. չր. բռնաճնշել, դյուրաբերեցնել, անհնազանդություն ցույց տալ, ապստամբել։

Հեռ, ոյ, հեռէ, ռաց. գ. 1. ոտքի հետք, 2. հանապարհ, 3. օրինակ։

Հետ. նխդ. 1. հետևից, 2. հետ, հետո։

— Ի հետ, հետևից, հետո։

— Ի հետոյ. հետևից, թիկունքից։

— Կապկապանի հետ կամ զհետ. չար սովոր։

— Հետ մի. մի անգամ։

Հետամուտ լինել. հետևից վազել, հետապնդել, գտնել, հալածել։

Հետի. ա. 1. ոտքով գնացող, հետևակ, 2. մ. ոտքով, հետիոտն զորությամբ հետևակ։

Հետն. նխդ. հետևից, հետո։

Հետիոտ, տոմ, տաց. ա. ոտքով գնացող, հետևակ։

— Հետիոտ, հետիոտս, ի հետիոտս, հետիոտին, հետիոտիւ, հետիոտից. մ. ոտքով, քայլելով։

Հերակլեա. ա. վարագույր, յուղ մաղեր կամ աղբեներ անցկացող։

Հերձանել, հերձի, հերձեմ, եցի. եր. 1. ճեղքել, երկու մասի բաժանել, 2. պատռել, 3. անդամահատել, 4. պառակտում առաջացնել, հերձվածողություն անել։

Հերձուած, ոյ. գ. 1. պառակտում, երկպառակություն, տարաձայնություն, անմիաբանություն (մարդկանց, կարծիքների), 2. պառակտում եկեղեցու մեջ՝ դավանական կամ ծիսական տարաձայնության պատճառով, 3. հերձվածողություն, եկեղեցու ընդունած դավանության հակառակ դավանություն։

Հերձում. ձի, ա. Հերձանել։

Հեց կամ հէց. գ. անիվի շրջանակը, որի վրա ամրացված են ճառագայթները։

Հէն, հինի, ից. գ. 1. ավազակ, 2. թշնամի զորք, որ թալանի էր ենթարկում հակառակորդի երկիրը, 3. ավազակություն, թալան, հրոսակություն, 4. թալան, կողոպուտ, ապստամբություն, 5. ավարառու, ավազակ։

Հի՛րար (հի և րար). եղբ. 1. ինչպե՛ս, ի՞նչ կերպով, 2. մ. ինչպես արժանի։

Հի՛զան (հի և զան). եղբ. 1. ինչպե՛ս,

խնդրե՞ս, 2. մ. սրտիս, խնդիրս ո-րինակ։

Հիմն, հման, հմանէ, հմանց. գ. 1. պատի հիմք, 2. խորք, հատակ, 3. սկիզբ, ծագում, 4. հաստատություն, ամրություն։

— Հիմն արկանել. հիմք դնել, հիմնել։

— Հիմն անկանիլ. հիմնադրվել, հիմնվել։

— Հիմն ի վեր. հիմնահատակ։

— Հիմն ի վեր աւերանել. կործանել, քարուքանդ անել։

— Հիմն ի վեր առնել. կործանել, քարը քարի վրա չթողնել։

Հիմնանալ, ացայ. չը. հիմնադրվել, հիմնվել, չինվել, հաստատվել։

Հիմնաւորիլ, եցի. եր. հիմք դնել, հիմնել։

Հինաւուրց. ա. 1. հնացած, տարեց, 2. վաղեմի, վաղուց գոյություն ունեցող։

Հի՛ոյն. տ. Հի՛րար։

Հիւ գալ. պատահել գալ, չքել։

Հիւծանիլ, հիւծայ. հիւծիլ, եցայ. չը. հյուծվել, մաշվել, նվաղել, փոքրանալ։

Հիւղ. ի. իւ. գ. խուց, պատրաստվածից խրճիթ։

Հիւս, հիւսոյ, հիւսէ կամ հիւսի. ի. իւ. գ. 1. հյուսք, հյուսվածք, տարր, 2. արհեստ։

Հիւսակ, ի. աց. գ. 1. մազերի հյուս, հյուսված մազ, գիսակ, 2. հյուսված բան, ցանց, հյուս։

Հիւրամեծար. ա. հյուրին մեծարող՝ հարգանքով ընդունող։

— Հիւրամեծար լինել. ծախ։

Հմայք. չից. գ. 1. աստղ գուշակություն, կախարդություն, հմայություն, 2. հմայված իր, հմայիլ, հմայակ, հմայիլք, 3. գուշակել։

Հնար, ի. իւ. գ. 1. միջոց, ճար, եղանակ (մի բան հաջողեցնելու), ելք, 2. կարելիություն, հնարավորություն, 3. ճկունություն, 4. ցանց, հնք։

— Հնար. 1. կարելի ճանապարհություն, 2. հնարավորություն, հնարագիտու-թյուն, 3. խորամանկություն, վար-պետություն, 4. ձեռք։

Հնարաւորել, եցի. եր., հնարաւորիմ. եցայ. չը. հր. ճար անել, միջոց գտնել, կարողանալ, ամեն կերպ ջանալ։

Հնարել, եցի. եր., հնարիմ, եցայ. հր. 1. հնար գտնել, 2. գյուտ անել, հորինել, 3. սարքել, ձևացնել, 4. չանր գործ գնել, աչքաթող, ճիշ թափել, 5. հնարավորություն՝ կարելիություն ստանալ, 6. կարողա-նալ։

— Հնարք. մր. հնարավոր է, կարելի է։

Հոգաբարձու. ի. աց. գ. ա. վերակացու, խնամատար, հոգացող, չանա-ցող։

Հոգաբարձութիւն. գ. 1. հոգաբարձու լինելը, 2. հոգ, խնամք, հոգատա-րություն։

Հոգալ, ացայ կամ ացի. չր. եր. հոգալ, հոգ տանել, հոգս քաշել։

Հոգեկի. ա. մ. 1. մեռելոցի, տոնակը ոգևորի կամ ննջեցյալի, բաց. 2. գինի կամ ուրիշ բանը ցանց, բաց գինով, բաց երեսով։

Հոծ. ի. իւ. ա. 1. խիտ գիզված, խիտ, առատ, 2. չեղբ, աստ։

Հոծել. եցի. եր. խտացնել, ամրացնել, թանձրացնել։

Հոծիմ, եցայ. չր. 1. խտանալ, ամրա-նալ, 2. հասնել։

— Հոծեալ. 1. խտացած, թանձրացած, լցված, 2. հասած։

— Հոծեալ լինել. թանձրանալ, զոր-վոր խտանալ։

Հողանալ. ացայ. չր. հող դառնալ, հողի վերածվել։

Հոգի, ոյ, ով, հոգւոյն, մանէ. գ. 1. հոգի, շունչ, 2. աչխարհի շուրջ կողմերը, 3. գեղեցկություն, գեղեցկություն։

— Զհոգին առնել. շունչ հատցնել. ի-րար աշխատել, չեղյալ բանի համար ընկնել։

— Զհամ զհոգւոյ. շրթունք, քարշել։

— Զհոգին ժառանգել. գարաբախանձել մեռնել։

— Ի հոգւոյն լինել. խղճմ խաղալ։



Հոմանի. նւոյ, նեաց. գ. 1. սատարի հետ հասակակից եղած՝ սիրող, սիրե-կան, 2. գործակից կամ գործի մեջ (համախոհությամբ)։

Հոյակապ, ի, ից. ա. 1. փառավոր, հռչակավոր, երևելի, մեծ, հրաշա-կերտ, 2. խիստ զորավոր, 3. ամուր (քաղաք)։

Հոյլ, հուլից կամ հոյլից և լից. գ. խումբ, բազմություն։

— Հոյլ ի հոյլ. միասին, բազմություններ։

Հոսել, եցի. եր. 1. հոսեցնել, թափել, 2. ցած գցել, նետել։

Հոսել, եցի. չը., հոսիմ, եցայ. չը. 1. հոսել, թափվել, 2. ցած ընկնել։

Հովանաւոր, ի, աց. ստվեր՝ հով անող, ստվեր կամ հով ունեցող։

Հովանի, նւոյ, նեաց. գ. 1. ստվեր, հով, շուք, 2. պաշտպանություն։

— Հովանի լինել կամ առնել. 1. ստվեր անել, 2. պաշտպանել։

Հովուաձև. ա. հովվի ձև ունեցող, հարթ և խոր ընկած։

Հովտարան, ի. աց. գ. բարձրադիր, ձորահովիտ։

Հուժկու, ա. 1. ուժեղ, հզոր կորովի. 2. չափազանց զորավոր։

Հում, հմոյ կամ հմի. ա. 1. ծառական, մերձավոր, 2. կցորդ, հաղորդակից, մասն, 3. նեղ. ձոր (անկյուն, ծածկա-ծածկոց), 4. գեղի, 5. մ. չուտով, խաղալու։

— Հում ընդ հում. չատ չուտով, չատ մոտ կերպով։

— Հում լինել. հում երթալ. մոտ գնալ, մոտենալ, գիշերել, ներս տալ։

Հուն. մ. (գործածվում է որոշ ժամ-կետներին և ածականների հետ՝ ժամ-կետային աստիճան ցույց տալու հա-մար.) ամենա (վերջը), ամենա (վեր-ջին)։

— Հուն կրտսերն. ամենակրտսերը։

— Հուն յետոյ. ամենավերջը։

Հուն յետին. ամենավերջինը։

— Հուն ուրեմն. վերջ ի վերջո, վերջա-պես։

Հուր, հրոյ, հրով կամ հուրբ. գ. 1. կր-րակ, 2. տ. կրակել։

— Հուր հարկանել՝ արկանել՝ վառել՝ տալ, հուր զառնել. կրակ գցել, հրդեհել, վառել, այրել։

Հրաժիլ, եցայ. չը. 1. սրբվել, զգուշա-վել, 2. չփոխել, խոհեմաբանություն անել, միմնություն անել։

Հրաշակերտ. ա. հրաշագործված՝ հրա-շակերտ, հնարքի ձևով խոսող։

Հրաշակ նախկանել. ջուրը տարածել, հրաշքը տարածել, հրաշել։

Հրապոյր. եաց կամ եղայոյր. եաց. գ. 1. պշրանք, պճնություն, ամեն-մի զարդարանք, 2. խորհրդածու-թյուն, միմնություն, 3. գեղեցկու-թյուն։

Հրաշակերտել. եցի. եր. զարմանալի կերպով կերտել, կառուցել, չինել։

Հրապոյր, գ. 1. վատ խորհուրդ, խորհր-դություն, փորձություն, 2. չարագոր-ծություն, 3. նենգություն, են. 4. կախարդող՝ դյութող հմայություն։

— Ի հրապոյրս ածել կրթել. մեկի վատ խորհուրդ հանել, խորհրդի մե-կի կողմից։

Հրապուրանք, նաց. տ. Հրապոյր։

Հրապուրել. եցի. եր. 1. խաբել, գր-գռել հանել, 2. խորհուրդով խորհր-դով ու խոստումներով գրավել (գե-պի մի վատ բան), գրգռել, հրապու-րել, թելադրել (մի վատ բանի հա-մար)։

Հրեշտակ, ի. աց. գ. 1. աստվածային պատգամաբեր, գեսպան, 2. լրաբեր, թղթատար, 3. հրեշտակ, 4. մարգա-րե, 5. եկեղեցական աստիճան, գն., 6. մի բանի նչանը՝ հատկանիշը, նեղանյութ կռանը՝ հոգին, կանխահայտա-նչան։

Հրեշտակակրօնութիւն. գ. իրրև պատ-գամավոր գնալը, պատգամավորություն։

Հրճիգ առնել. հրդեհել, այրել։

Հրճիգ լինել. այրվել, հրդեհվել։

Հրոս, ի. իւ. գ. 1. զորք, 2. ավարառու-ների խումբ, ամբոխ, 3. օտարի ասպատակողների արշավանք։

Հրոսակ, ի. աց. գ. 1. զորք, 2. արշա-վող՝ հարձակվող զորք, խումբ։

Հրովարտակ, ի. աց. գ. թագավորա-

կամ հրամանագիր։ 2. բնջհանքրապետ դրութիւն։
Հօտաղած, գ. 1. խոշորացած, 2. համատարածութեանց հողմոր կարկիններ հոգացող։

Հուան. ի. ազ կամ հուան. գ. 1. ատամնաւորի խումբ, հոտ, հաւաք, 2. փարախ, բակ։
Հուաւ. ի. ազ. գ. խարխ հալք։

# Ձ

Ձագ. ու. ուց. գ. ա. 1. ձագը, ձագը ու ձաձանկ, խաղրութիւն, խաղաղութիւն, 2. ձագրի տարիքը, 3. խաղաղական, ծիծաղելի։
Ձագ ցնել. ձագրի տարիքս գալով։
Ձագել, եցի. եր. 1. ձագը ու ձաձանքի ննջարկել, խաղաղանալ, նշանակել, 2. հրապարակով անտրգանքի ներթարկել, 3. հաջողութեան համբերատարել, համբել, նմանել։
Ձագի. ի. ու կամ ոյ, ով. գ. 1. զավզան, հրաշք, 2. ձեռ, զանաւորութիւն, 3. ա. շիտակ, ուղիղ բռնած, երկարած (նշեր, հյուղ)։
Ձագկել. եցի. եր. ձեռել, զանազանել (նրբագոյն, ձարպաղով և այլն)։
Ձայն. ի. եր. գ. 1. ձայն (մարդու, կենդանու, փողի, երգի և այլն), 2. ձայնի եղանակ, 3. հեղինակ, բառ, 4. խոսք, լեզու, 5. ողբ։
— Ձայն ածել՝ առնել՝ առնուլ՝ արկանել՝ արձակել՝ բառնալ. ձայն հանել, ձայն տալ, կանչել, խոսել։
— Ձայն չշնել, ձայն եղ.
Ձայնակից, ի. ազ. ա. գ. 1. ձայն համող, կանչող, 2. լուրտալ, լրագող (կենդ), 3. ողջույն ձայն արձակող։
Ձառ, ա. ծուռ, թիւր, անշնորհք, անշուք։
Ձառայլել. գիմի. ազ. ա. անշնորհք դիմքով, խոժոռ, ազնոյ։
Ձգել, եցի. եր. 1. տարածել, սփռել, երկարացնել, 2. քաշել, կորզել, երկել, 3. զցել, նետել։
Ձեղուն, ուան. անց. գ. 1. առաստաղ, ծածկ, տանիք, 2. ձաղկան, հարկ, 3. բերդ։
Ձեռակապ. կապ՛. ազ կամ եղ. գ. ձեռքի կապ, շղթայ, կապանք։
Ձեռակերտ, ի. ազ կամ եղ. գ. 1. եր

ձեռքով շինած դլուղ, ավան, քաղաք, 2. բնանկարչութեան այն, ինչ իր ձեռքով է արված, ստեղծված, 3. երկրագ. ա. 4. արհեստական, 5. ձեռքով կերտած։
Ձեռն, ոյն, ձեռ, ռաց. գ. 1. ձեռք, 2. ձեռքի ափ, բուռ, 3. մէջը, դրդծիւ, դրդծ, 4. կարողութիւն, զօրութիւն, իշխանութիւն, 5. մարդ, անձ, 6. պաշտպանութիւն, օգնութիւն, հովանաւորութիւն, 7. զաւաք, կայմ.
— Ձեռն արկանել. 1. ձեռնարկել, սկսել, 2. տիրանալ մասնաւորութեան ունենալ, 3. բռնել, 4. տապալեցել։
— Ձեռն ի գործ արկանել կամ առնել. ձեռնարկել, սկսել, ձեռք զարկել։
— Ձեռն տալ. 1. օգնել, 2. դիպել, խառնվել։
— Ձեռամբ ունել՝ առնուլ՝ ձգել. ձեռքից բռնել, առաջնորդել։
— Ձեռն բառնալ, ձեռք վերցնել։
— Ձեռն դնել. 1. ձեռնադրել, 2. ստորագրել։
— Ձեռն առաջ ադրկան. նշանակել։
— Ի ձեռն. նիւթ. ձեռքով, միջոցով։
— Ի ձեռն առնել. բռնել, ունենալ, սրբել։
— Ի ձեռն առալ. ձեռքը տալ, յանձնել։
— Ձեռն ի գլուխ կամ ձեռս ի գլուխ. գլխին տալով, գլուխը ծեծելով, վայ տալով։
Ձեռնածու, ի. ազ. գ. կախարդ, վհուկ, հմայող։
Ձեռնատու. ա. գ. 1. մեկի ձեռքի տակ ընկած՝ գործակալ, տարրական, 2. բնակեցված, փոփոխված։
Ձեռնակալ առնել կամ ձեռնակալել. եր. բռնել, կենդանի վիճակում բռնել, ձերբակալել։
Ձեռնաւոր. ի. ազ կամ եղ. գ. 1. եր

Ձիր, ձրի. եղ. գ. 1. պարգև, բնծա, 2. շնորհք, տաղանդ։
Ձիւնախառն կամ ձիւնախառնուող. ա. 1. հալված ձյունով տարածված, հորդացած (գետ), 2. ձյունաշատ (ձմեռ)։
Ձիւնաղոյն. ա. ձյունով ծածկված՝ լցված, ձյան ջրով առատացած (գետ)։
Ձմեռային, յնոյ. ոց. ա. 1. ձմեռային, 2. դաժան, ցրտաշունչ։
Ձմեռային, յնոյ, ձմեռային. եայ, ձմեռնի, եայ կամ եաց. գ. ձմեռ, ձմեռ ժամանակ՝ եղանակ։
— Ձմեռայնի, ձմեռանի. ի ձմեռայնի, ձմերային. մ. ձմեռը, ձմռանը։
Ձմեռոց. ի. ազ. գ. ձմեռանոց։

Ձորան. ա. ձորի մեջ ունեցող։
Ձոր, ոյ, ոց. գ. 1. վերջավորութ, փոքր, 2. բնական աշխարհագիր, 3. հողը, 4. ծածկոյթ, 5. զարդ, զարդ, ջուր։
Ձուլածոյ. ի. եր. ա. գ. 1. ձուլված, ձուլածոյ շինված, 2. ձուլելով իր հատկացնել կողպ, 3. մետաղարձան։
Ձուլել, եցի. եր. 1. մետաղը հալեցնել և կաղապարի մեջ լցնել, 2. միացնել, ամրացնել, 3. ամրացնել, կարծրացնել, զօդել։
Ձունել, եցի. եր. 1. նվիրել, նվեր մատուցել, 2. զոհ բերել (ճանաչման զոհերին, կուռքերին)։

# Ղ

Ղօղիր. եղի կամ կերի. չաց. գ. դերբ. բաժակ։
Ղենջակ. ի. ազ կամ դենջակ. եկի. գ. չորի կտոր, զորկոց, սրբիչ։
Ղողել. եցի. եր. ծածկել, պահել, թաքցնել։
Ղողել, եցի. չր. 1. թաքնվել, ծածկվել,

պահվել, 2. գաղտնի՝ լուռ մնալ։
Ղօղնցուցանել. ցուցի. ցո՛. եր. թաքցնել, ծածկել, պահել։
Ղողել. եցայ. չր. թաքնվել, ծածկվել, պահվել։
Ղողել. եցայ. չր. լողալ։
Ղողվել. եցայ. չր. թաքնվել, պահվել։

# Ճ

Ճախրաս. ու. ուց կամ ի. ազ. գ. 1. հանգստ՝ մարմնի մաս, 2. առարկայի տարածական մասը, 3. դրքի առաջին էջը, խորագիրը, գլխի վերին մասը, 4. պատերազմական բանակի դիմ, որը զգտավորութիւն՝ պատերազմի համար, 5. ճակատամարտ, պատերազմ։
— Ճակատ յօրինել կամ ճակատ յարդարել. զորք դասավորել ու նախապատրաստել պատերազմելու համար։
Ճակատել, եցի. եր. զորքը կարգավորել պատերազմելու համար։
Ճակատիլ. եցայ. չր. 1. ճակատ առ ճակատ կանգնել թշնամու դեմ՝ պատերազմելու համար, 2. հարվածի ուժգնութիւնից վեր թռչել, ընդդեմ ձա՛ ըմբռնել։

Ճաճ. ի ճաճ, դճաճ. ա. պատրաստ, հարմար։
— Ի ճաճ. մ. չափ համար, լավ, անդին, բառ պատշաճի։
— Ի ճաճ է. մր. պատշաճ է, անպին է, վայել է, հարմար է։
Ճամարտակել, եցի. եր. չր. 1. ճեմաբանել, ճառախոսել, ձեռ-ձեռ խոսել, 2. շատ ճառել, հրապարակախօսել բարբել։
Ճայ. ի. եր. գ. մի տեսակ թռչուն, ճայ։
Ճայթյուն. մւն. գ. ամեն ձայն, պայթյուն, շառաչյուն։
Ճանի, ի. ազ. գ. 1. կեռ, կարթ, 2. թռչունի կամ զազանի մագիլ, ճանկ։
Ճաճճել. ա. ազիտակ՝ ու բանալ.

Ճաշակեմ, եցի. եր. 1. համն առնել, համտես անել, 2. ուտել, խմել։
— Ճաշակեմ զայխառն. [illegible] ...
Ճաշակ. ա. ճաշ, [illegible], [illegible]։
— Ընդ ճաշակն. ճաշի ժամին, [illegible]։
Ճառ, ի, ից. գ. 1. ճառ, 2. քարոզ, 3. պատմվածք, պատմություն, զրույց. 4. գովեստ, 5. ընդհանրապես խոսք, բան, 6. խոսքի [illegible], [illegible], 7. գրվածքի բովանդակ, [illegible], 8. նկարագրություն։
— Ճառ արկանեմ. խոսք մեջ գցել, խոսք բացել։
Ճառագեմ, եցի. եր. 1. նկարագրել, ճառ խոսքերով նկարագրել, պատմել, 2. գրել, գիր անել, արձանագրել։
Ճառեմ, եցի. եր. 1. ճառ ասել, ճառախոսել, 2. պատմել, նկարագրել։
Ճարակ, ի, աց. գ. 1. անասունների կեր, արոտ, խոտ, 2. արոտ, արոտատեղ, 3. [illegible], 4. [illegible], 5. ճար, [illegible]։
— Ճարակ լինել. կերակուր դառնալ, [illegible]։
— Ճարակ առնել. կերակուր դարձնել, [illegible]։
Ճարակեմ, եցի, եր., ճարակիմ, եցայ. եր. 1. կերակրել, [illegible], 2. [illegible], 3. [illegible], 4. [illegible], 5. [illegible]։
Ճարտար, ի, աց. ա. 1. հմուտ, [illegible], 2. [illegible], 3. ճարտարությամբ կառուցված, 4. գ. վարպետ, [illegible], 5. [illegible], 6. [illegible]։
Ճարտարագէտ. ա. [illegible]։
Ճգնութիւն. գ. 1. ճիգ ու ջանք [illegible], 2. [illegible], [illegible]։

[illegible]
Ճեմարան, ի, աց. գ. 1. զբոսավայր, [illegible], 2. [illegible], 3. [illegible], 4. [illegible]։
— Ճեմարանք. [illegible]։
Ճեմիմ, եցայ. չր. 1. [illegible], 2. [illegible]։
Ճեմիչ, մչի. գ. [illegible]։
Ճենճեր, ոյ կամ ի, ի և աց. գ. 1. [illegible], 2. [illegible]։
Ճետ, ոյ, ով կամ ի, ից. ա. գ. 1. [illegible], 2. [illegible], 3. [illegible]։
Ճետ, ի, ից. գ. 1. [illegible]։
Ճիռմակամ. ա. [illegible]։
Ճիպոտ կամ ճիպոտ, [illegible]։
Ճիւղ, ճեղ, ոյ կամ ից (բացառ. ի ճեղ). գ. 1. փոքրիկ [illegible], 2. [illegible]։
Ճշգրտութիւն. գ. [illegible]։
Ճիչ, ճճոյ կամ ճճոյ, ճիճ. ճճուոց. գ. [illegible]։
Ճոխանամ, ացայ. չր. 1. [illegible], 2. [illegible], 3. [illegible]։
Ճողոպրեմ, եցի. եր. [illegible]։

Ճողոպրիմ, եցայ. չր. [illegible]։
Ճողոպրում. ա. [illegible]։
— Ճողոպրել առնեմ, [illegible]. 1. [illegible]
[illegible]
Ճոյ (ճոյ) կամ [illegible], ի, [illegible], ի, աց. գ. [illegible]։

Մ

Մագաղաթ (նաև մագաղաթա), ի, ից. գ. 1. հորթի, գառան կամ ուլի մորթի՝ հատուկ մշակված պատրաստված գրելու համար, 2. գիրք։
Մագաղաթագործ կամ մագաղաթոծ. ա. [illegible]։
Մածեմ, եցի. եր. 1. ճմլել, տրորել, 2. մածնել, [illegible], 3. [illegible], 4. [illegible], 5. [illegible], 6. [illegible]։
Մածուխ, [illegible]։
Մախաղ, ի, ից. գ. 1. [illegible], 2. [illegible], 3. [illegible], 4. [illegible]։
Մածանիմ, մածայ, ձեալ, մածնում, [illegible], չր. 1. [illegible], 2. [illegible], 3. [illegible], 4. [illegible]։
Մածուցիկ, ոյ, ոց. [illegible]։
Մակաղ, ի, աց. գ. [illegible]։
Մակացու. ա. [illegible]։
Մակացութիւն. գ. 1. մի բանի վերա հասու լինելը, [illegible], 2. [illegible], [illegible]։
Մակոյկ. կոյկի, կոց. գ. փոքրիկ նավակ։
Մահապարտ, ի, աց. ա. 1. [illegible], 2. [illegible]։
[illegible], ճեաց. [illegible] գ. 1. [illegible]

[illegible]
— Ելանեմ ի մաճկնս [illegible]։
Մաղթանք, ոյ. [illegible] և ի. գ. [illegible]։
Մաղձանք, եաց. գ. [illegible]։
Մաղձ, ոյ կամ ի. գ. 1. [illegible], 2. [illegible]։
Մաղձաձոր, ոյ. [illegible]։
Մաճկալ. ա. [illegible]։
Մայր, մօր, մարբ, մարէ, մարց. գ. 1. մայր, 2. մայրություն, 3. ակունք, [illegible]։
— Մայր եկեղեցեաց. [illegible]։
— Մայր քաղաք. մայրաքաղաք, [illegible]։
— Մայր լեռնական. [illegible]։
— Մայր, ի, ից. գ. 1. [illegible], 2. [illegible]։
Մայրաքաղաք, ի, աց. գ. 1. [illegible], 2. [illegible], 3. [illegible]։
Մայրի, րոյ, րեաց. գ. 1. անտառ, 2. [illegible]։
Մայրի, րոյ, րեաց. գ. [illegible]։
Մանաւանդ, մանաւանդ զի, մանաւանդ եթէ. 1. [illegible], 2. [illegible]։
Մանեակ, եկի, աց. գ. 1. [illegible], 2. [illegible]։

Մանուած, ոյ, ոց. գ. 1. մանկիք, մանուածք. 2. մանուած իր. թել, դերձան, 3. ոստայն, [illegible]. 4. [illegible] 5. [illegible] [illegible] [illegible]:

Մանուկ, նկան, կունք, կանց. գ. 1. երեխայ, հասակաւոր տղայ, 2. երիտասարդ, պատանի, 3. [illegible], ծառայ, 4. զինուոր, [illegible]. 5. ա. փոքր, մանր, [illegible]. 6. [illegible]:

Մանրատառ. գ. 1. [illegible], [illegible]. 2. [illegible] [illegible], [illegible]:

Մանրուք, ի, ւոց. գ. 1. մանրամասնութիւններ [illegible] [illegible] [illegible]. 2. [illegible]. 3. [illegible]. 4. [illegible] [illegible]:

Մաշել, եցի. եր. 1. հիւծել, հալել, մաշել. 2. [illegible], 3. [illegible], [illegible], [illegible]. 4. [illegible]. 5. [illegible], [illegible]:

Մաշկապատեան, ենի, մաշկապատենք, մաշկապատեան, մաշկապատեայ. գ. Պարսից թագաւորների կառավարչի վրան:

Մաս, սին, սունք, սանց. գ. 1. մաս, կտոր, բաժին, 2. կողմ, [illegible], երկրամաս, 3. կէսը, 4. մասունք, նշխարք. 5. [illegible], [illegible]:

— Մասն առ մասն. մաս առ մաս, մաս-մաս:

— Ի պարգեւ մասին. իբրև պարգեւ, պարգեւի փոխարէն:

— Ի մասնէ. մասամբ, փոքրիշատէ:

— Մասամբ ինչ, մասամբ իմն. փոքր-ինչ, փոքր չափով:

Մասուք, ոյ, ոց. ա. 1. մասունք, փոքր, 2. գ. մանուկ, երեխայ, 3. Հոգւոյ մարմնոյ և սրբազաններին բաժանեալ համար:

Մատեան, ենի, ից (կա նաև նանց). գ. 1. որևէ գրվածք գրքի ձևով կամ մագաղաթի՝ թղթի թերթի վրա, 2. գիրք, 3. հաշվական պաշտոնական բովանդակութիւն ունեցող գիրք. 4. գրքի մասը գլուխ, 5. մագաղաթ կամ թուղթ, որի վրա գրում էին:

— Ի մատենի նարկանել կամ առնել. գրի առնել, արձանագրել, գրել:

Մատեան. գ. էջ մի, մատեան մի, գամ-բիկ:

Մատենագրել, եցի. եր. 1. գիրք շարադրել, մատենագրութիւններ գրագրել, 2. մատյան մտցնել, գրի առնել, արձանագրել:

Մատուռն, տրան, ռանց, ռանց. գ. մկրտարան, փոքր եկեղեցի, աղոթարան:

Մատուցանել, տուցի. ած. եր. 1. մոտեցնել, 2. մերձեցնել առաջ, մատուցել, նվիրել, ընծայել:

Մատչիլ, մատեայ, մատուցեալ. չր. 1. մոտենալ, մոտ գնալ, գիմել, 2. ընծայվել, նվիրվել: Այլև՝ մատենալ:

Մատուռանք, ի. աց. գ. ընդհանուր մատենադարան. գինի լցնելու աման, [illegible]:

Մարախ, ոյ, ոց, ով. ովք; նաև ու. օք. գ. մորեխ:

Մարգարիտ, ի. աց. ա. զարդարանք, գոհարներ, մարգարտյա:

Մարգախիտախ, մարգախիտող. ա. մարգարտյա, մարգարիտով խաղացող, արյունաքրքում, [illegible]:

Մարգեւոյց, յուցի. յուցից. ա. 1. մարգարիտ իր ունեցող վճռականից հանող, մարդ գողացող՝ փախչելով, 2. դաշտ, [illegible], [illegible] ձանապարհից հանող:

Մարգարէական, գ. 1. մարդու բնական կառավարություն, 2. մարգարէ, մարգարէական բարձրութիւն:

Մարգարէ. 1. մարգարէի աստծո նախահայր, 2. արքունի պաշտոնի նկարագրող հայ Արշակունիների ժամանակ:

Մարգարէութիւն. գ. 1. մարգարէի պաշտոնը, 2. մարգարէի աստծուց կողմից, մարգարէական երգերը:

Մարգ, ի. գ. 1. ծաղկազարդ, հանդամանքով դաշտ, 2. մի երկրի մի որոշ կողմը՝ մասը:

Մարգել, եցի. եր. 1. մարմնից յուղով օծել՝ ընդհանուր գրքի ըստ [illegible] [illegible] [illegible] նախօրոք մտքի հետ՝ մարմնից ջնջել՝ արտաքսել յուղով (մարմնից), 2. վարժեցնել, մարզել, կրթել, 3. ջանալ, պատրաստել, 4. զրգանել:

Մարզիկ. գ. կռվող զինվոր, մարտիկ:

Մարզպան, ի, աց. գ. մարզի կառավարիչ, կուսակալ:

Մարթել, բացի. չր. կարողանալ մի բան անել:

— Մարթ է. մի. կարելի է, հնարավոր է:

Մարթել, եցի. եր. 1. հաշտել, հարթել, հարթահարել, հավասարեցնել, սարքել, 2. զորձապեղել:

Մարի, ւոյ, ւեաց. գ. էգ թռչուն, հավ: Այլև՝ մայրի:

Մարմաջել, եցի. չր. 1. մարմնի զգայուն դառնալ, քոր գալ, քոր զալ (խոյլերից, կեծերից), 2. զանկության զգայուն ունենալ: Այլև՝ մարմանջել:

Մացառուտ. ա. մացառներով մեջ խիտ կերպով:

Մաքառիլ, եցայ. չր. մարտնչել, պայքարել, կռվել:

Մեծախոհեան. ա. մեծ վայելչությամբ, փառքով, շքով ու կեզալ:

Մեծաձայն. ա. 1. բարձր ձայն ունեցող, բարձր ձայնի հանող, 2. մ. բարձր ձայնի հանելով, բարձր կանչելով:

Մեծամեծ. մ. մեծ-մեծ, խիստ, առավել մեծ չափով:

— Մեծամեծս խաբել. մեծ-մեծ խաբել:

— Մեծամեծս բարբառիլ, կոտորել, նույն էջը:

— Մեծամեծս վաղել, արշավել, վազել, շատ կամ արագ վազել, արշավել, հափշտակել, ուղարկել:

Մեծամոլ. ա. շատ ամբար, լավ ամբարված:

Մեծամեծ, մեծի. մեծաց, մեծաց. ա. 1. մարմնով մեծ, հաղթահասակ, 2. մեծահոգի:

Մեծատարած. ա. լայնատարած, ընդարձակված, մեծ տարածության բանող:

Մեծատեսիլ. ա. ընդարձակ կամ գեղեցիկ տեսքով:

Մեծարանք. -րանաց. գ. պատիվ, հարգանք, մեծարելը:

Մեծարել, եցի. եր. հարգել, պատվել, մեծարանք մատուցել:

Մեհեան (կա և մեհյան). ա. մ. 1. մեհյան, մեհյանի, [illegible], 2. պաշտպանված, պարզ, բացահայտ, արդյունք, 3. պարզ, հստակ, անզուգ:

Մեհենակալ, գինի, նաց. ա. գ. 1. [illegible] զինված (զինվոր, արշավախումբ). (հոգն. թիվը մեհենակալքէ). առաջատարով հրաման: Այլև մեհենակալ:

Մեկնոց, ի. աց. գ. վրայից հագնելու կամ վրայից ծածկելու զգեստ, վերարկու:

Մեկուսի. ւոյ. սեաց. ա. մ. 1. մի կողմ քաշված, առանձնացված, մեկուսացված, 2. առանձին, առանձնապես, 3. երկ. զատ, հեռու, մի կողմ:

Մենեան, նեի, նից. գ. 1. սեփականապես Միհրի պաշտամունքի նվիրված տաճար, տաճարան, կրակատուն, 2. ընդհանրապես կռատուն, 3. գոհ մատուցելու տեղում մեհյանում, 4. կուռք, հեթանոսական աստված, արձան:

Մեհենակ. ի. աց և իզ. գ. կռատան զարդ, մեհյան, պաշտամունքում:

Մեղանչել, մեղայ, զանցեալ. չր. 1. մեղք գործել, սխալվել, 2. վնասել, զրկել:

Մեղկ. ի. իգ. ա. 1. փափուկ, մեղմ, թուլացած, 2. թուլամորթ, կամակորութ, կեղտ, խղճալի:

Մեղկել, եցի կամ մեղկեցայ. կի. եր. թուլացնել, մեղմացնել, փափկացնել:

Մեղկիլ, եցայ կամ մեղկանալ, ացայ. չր. թուլանալ, մեղմանալ, փափկանալ:

Մեղմիկ. -ի. աց կամ իգ. ա. 1. եղեգնավոր, 2. կեղծավոր, շողոքորթ, երեսպաշտ, չարիք գործող: Գործածվում է նաև մեխանիկ, մեղմիկ:

Մեղմեխել, եցի. չր. կեղծավորության անել, շողոքորթել:

Մեծամարտիկ, ակի, կաց. գ. մեծա-

մարմնութեամբ կռփող, բռնցք, զօտե-
մարտող։
Մենաստան. ի. աց. գ. վանք։
Մեռեալ. ոյ, ելոյ կամ ոց. գ. 1. մեռած կենդանի, 2. հեթանոսական աստված, կուռք, ա. 3. մեռած, մեռելային, 4. մահացու, մահաբեր, մեռնելու։
Մետաքս. ի. ից. բ. մետաքսեղ։
Մետաքսազործ. ի. աց. բ. մետաքսեղենագործ։
Մերժել, եցի. եր. 1. հեռացնել, վանել, զրկել, վռնդել, 2. հերքել, մերժել։
— Մերժել ի կենաց. կյանքից զրկել, մեռցնել։
— Մերժել զՏէր. քանդ փախցնել։
Մերժիմ, եցայ. չր. հեռանալ, խորշել։
Մերկանամ, ացի. եր. չր. հր. 1. վրայից հանել, մերկացնել, 2. բաց անել, հայտնել, 3. հանվել, մերկ զանալ, 4. զրկվել մի բանից, կողոպտվել, 5. բացվել, հայտնի դառնալ։
— Մերկանալ զսուր. սուրը պատյանից հանել։
— Մերկանալ օձից. օձերի խորխը թողնելը։
— Մերկանալ ստուերաց. լույսը բացվելը։
Մերկատիտ. ա. մ. ստինքները մերկացրած, ստինքները բաց։
Մերկել, կացի. եր. 1. հանել, մերկացնել, 2. չր. մերկանալ։
— Մերկել զսուր. սուրը հանել։
Մերձ. ձոյ. մ. ա. մոտ, մոտիկ, մոտ։
Մերձ լինել. մոտենալ, մոտ լինել։
Մերձաւոր. ի. աց. ա. գ. 1. մոտ՝ տեղով կամ ժամանակով, 2. ազգական, բարեկամ, մտերիմ։
Մերձենամ, եցայ. եցեալ. չր. 1. մոտենալ, մոտ լինել, 2. ձեռք տալ, դիպչել՝ փարվել, 3. կնոջ հետ մերձավորություն ունենալ։
Մերձիմ, եցայ. նույն էր։
Մեց կամ Մէգ. գ. 1. փոսոտ, նեխուտ, մառախլություն, 2. գեղ, որդ, նե-
նաս։
Մեքենայ կամ մեքենոյ. ի. եց. գ. 1.
մեքենա, 2. պատերազմական գործիք՝ մեծ քարեր նետելու, պարիսպները քանդելու համար, 3. տանջարան, օրոգայթ, 4. խորամանկություն, նենգություն, չարամիտ հնարագիտություն։
Մեքենաւորութիւն. գ. 1. հնարք, կորպանություն, 2. խարդախություն։
Մէջ, միջոյ. ած. ի միջի. մէջ, միջոց. ամէ կամ այլ. ս. գ. 1. մեջտեղը, 2. մեջք՝ մարմնի, կենդանու, 3. ա. միջին, կես, 4. միջակ։
— Մէջ գիշերոյ կամ գիշերի. կեսգիշեր։
— Մէջ քաղաքի. հրապարակ, քաղաքամեջ։
— Ի մէջ. մեջ, միջև։
— Ի մէջ առնուլ. մեջտեղ բերել։
— Ի մէջ անցանել կամ գալ. միջամտել, միջնորդ հանդիսանալ։
— Ընդ մէջ. 1. միջով, միջանցիկ, 2. միջով, 3. միջև, 4. միջոցով, միջնորդությամբ, 5. խորություն (երկու բանի միջև)։
— Ի միջի. ներսում, մեջը։
— Ի միջոյ. միջից, մեջտեղից։
— Բառնալ ի միջոյ. միջանցից վերացնել։
Մէտ, միտի. ած. գ. 1. կշեռքի միջին ձողը, 2. կշեռքի թաթ, 3. հավասար նժարների վրա ավելացված մի փոքր ծանրություն, 4. փոքր հակումի՝ երկու կողմից մեկի ծանրություն, ա. 5. միտված, հակված, 6. պատրաստված, հոժարամիտ։
Մրուր, ի. աց. 1. ա. մութ, խավար, 2. գ. կեղտ, աղտոտություն, բիծ, ճարպ, աչքի կեղտ։
Մթեր, մթերք. գ. 1. շտեմարան, պահեստ, կայան, հավաքված բան, 2. ընդհանրապես պահված բան՝ շտեմարանում։
— Մթերք ամբարոյ՝ ամբարոյ. պահեստ, գանձարան։
— Մթերք արօտայինի. փարատել։
— Մթեր առ մթեր. կույտ-կույտ։
Մթերել, եցի. եր. դիզել, հավաքել, պահել։
Միաբան. ի. ից կամ աց. ա. 1. համա-
ձայն, համախոհ, 2. գ. վանական, կրոնավոր, 3. մ. միասին, միաբան։
Միաբանել, եցի. միաբանիմ, եցայ. չր. 1. համաձայնել, համամիտ լինել, հարմարվել, 2. միաբան դառնալ։
Այլև՝ միաբանեմ ներգործ. եր. 1. համաձայնեցնել, համամիտ դարձնել, հարմարեցնել, 2. միաբան դարձնել, միացնել։
Միագոյն. գունի. ից. ա. միևնույն գույնի, միատեսակ, միակերպ, միօրինակ։
Միախուռն. ա. մ. 1. խմբված, խռնված, իրար մոտ հավաքված, 2. միասին խմբված ձևով։
Միակամ. ա. մ. կամակից, մեկ սրտով մեկ հոգի դարձած։
Միահաղոյն. մ. 1. միանգամից, բոլորը մեկտեղ, 2. միաժամանակ, 3. անընդհատ, շարունակ։
Միաձայն. ա. 1. բաղաձայնող միասին, ինքնակամ, 2. մ. միասին, միաժամանակ։
Միամի. ա. 1. մի մի անհատ, 2. մ. մի մի հետ, միայն իրար՝ մոտ։
Միամիտ, մտի. տաց. ա. 1. պարզամիտ, անմեղ, անխարդախ, 2. համամտորեն, 3. հաստատ հույսով, 4. միահոգվանի մասնավոր, ամենայն։
Միամտանամ, ացայ կամ միամտեմ, եցի. միամտիմ, եցայ. չր. 1. միամիտ լինել, միամիտ դառնալ, 2. համապատասխան լինել, համոզվել, ապահով դառնալ, հանգիստ լինել, համոզմունքով դառնալ, 3. համաձայնություն տալ։
Միամտութիւն. գ. 1. պարզամտություն, անմեղություն, անխարդախություն, 2. համապատասխանություն, 3. շարունակումը, 4. մեկ սրտով մեկ հոգի լինելը, 5. ապահովություն, 6. համաձայնություն։
Միանգամայն. մ. 1. միանգամից, 2. միասին, 3. միաժամանակ, 4. մի անգամ, 5. ամբողջովին, բոլորովին, անհապաղ։
Միանշան. ա. միևնույն նշանն ունեցող, միատեսակ։
Միայնեմ, եցի. եր. չր. 1. միայն լինել, միայն թողնել, միայն ինքն իրեն, 2. իրեն միայնակ թողնել, բաժանել։
Միայնակ. մ. միմիայն ձևով, միայնակ, համառոտակի։
Մինչ, մինչև, մինչդեռ. շ. 1. մինչ, մինչդեռ, երբ, քանի դեռ, երբ դեռ, մինչև որ, մինչ, մինչև. ներս. մինչև։
Մինչ զի. շ. այնպես որ, այնքան որ։
Մինչչև. մ. դեռ չ... քանի դեռ չ... մինչև որ։
Միջամուխ. ա. 1. մեջ մտած կամ մտնող, ներխառնվող, 2. համարձակ, 3. խորը թափանցող, լավ ատակ, խելամիտ։
Միջնաբերդ. ի. գ. հին քաղաքներում ամենաբարձր տեղը, որ ամրացված էր պարիսպներով և ծառայում էր որպես բերդ։
Միջոց. ի. աց. գ. 1. մեջը, մեջտեղը, 2. միջով, 3. մեջը գտնվածը, միջանցիկ կողմը, 4. ներսի կողմը, 5. հացի միջուկ, 6. խաղ, տարբերություն, զանազանություն, 7. ժամանակամիջոց, ժամանակի տևողություն երկու կետերի միջև, 8. տարածություն երկու կետերի միջև, 9. ա. դատարկ, ազատ։
Միջօրեայ. եի. եց. միջօրէ. ա. գ. 1. կեսօրի, կեսօրյա, 2. հարավային, 3. կեսօր, 4. հարավ, 5. մեջտեղի միջակայք կողմ։
— Միջօրեայ լուսոյ. օրվա կեսօրին։
Միտ, մտի. մտաւ. միով, մտօք. գ. 1. միտք, խելք, բանականություն, 2. խելք, 3. հասկացողություն, 4. հանճար, 5. նպատակ։
— Միտ առնել. ուշադիր լինել։
— Միտ դնել. ուշադրությամբ զարթնել, լսել, հետևել, ուշադիր նայել։
— Ի միտ առնուլ. հասկանալ, իմանալ, խելքը կտրել։
— Ի միտ արկանել. մտաբերել, հիշել, խորհել։
— Ընդ միտ անցանել. մտածել։

— Ընդ միտ ածանել. մեկին հանդիմանել, աչքը մտնել։
— Ընդ միտ առնել. 1. մտքով մի բան անցկացնել, խորը բանի անդ գնել, 2. միտքը պահել։
— Ի մտի դնել. մտքում գնել, մտադիր լինել, դիտավորել։
— Ըստ մտի այլոց լինել. ուրիշներին հաճոյանալ, աչքը մտնել։
— Զմտաւ ածել. մտածել, մտաբերել։
— Միտս առել. 1. մինչ՝ խելառ՝ նշանակություն տալ (մի անիմաստ բանի), 2. խելոք տալ, խելացնել, հիշեցնել։
— Ընդ մտաւ ածել. մտածել, մտաբերել։
— Ի միտս գալ, միտս առանել. խելքը գլուխը գալ, սթափվել։
— Ընդ միտս նարկանել. մտածել անցնել, մտքում անդրադառնել։
— Ըստ մտի (իւր) կամ ըստ միտս. ցանկացածի պես, ուզած ձևով։
— Ի մտաց անկանել կամ նկանել. խելքը կորցնել։
— Ի մտաց խոտ առնել. անել սառնը հասունց գիտակցություն։
— Ի մտաց ասել. իր խելքովն ասել։
— Մտօք ժամէ. սրտանց, համապատասխանությամբ, ամենայն միությամբ։
Միանել, եցի. եր. չր. 1. մի կողմ թեքել, խոնարհել, 2. ծանրանալ, 3. խորը մեկին ապցնել, 4. մի կողմ թեքվել, հակվել, 5. հակվանել։ Զեղջ նշանակությամբ համեմ է գրքի նաև կրավորական՝ միանել, եցայ։
Միասնացամ կամ միա անցամ. մ. ա. 1. զարմանալ, նորից. կրկին, վերստին, երկրորդ անգամ, 2. երկրորդ։
Մյանել, եցի. եր. 1. կոխել, խոթել, ներս մտցնել, 2. ձեռք զարկել, ձեռնարկել, 3. չոքեցնել՝ չոքացած երկաթը կամ պղնձյա ամաց ջրի մեջ մտցնել՝ ավելի ամուր ու առաձգական դարձնելու համար, մխել տալ։
— Մխել զձեռն յոք. մեկին ձեռք տալ, դիպչել, բռնել կամ վնասել։
— Մխել զձեռն ի գործ. ձեռնարկել, ձեռնամուխ լինել։
Մլրատ կամ մէրատ. ացի. չր. ծխամորճը մեկի վրա, կատակել, արհամարհել։
Մղձկել, եցի. եր. խեղդել, սաստիկ նեղել։
Մղձկիմ, եցայ. չր. 1. խեղդվել, շունչը կարվել, 2. նեղվել, տագնապել, 3. մի տեղում արգելված մնալ։
Մնամ, ացի. չր. 1. մնալ, կենալ, 2. սպասել, 3. համբերել, 4. ապրել, 5. բաժանվել մեկից (քաղաքական խնդրով)։
Մնջիկ. գ. մանուկ, մեղմ ձայն, մեղմ հեկեկանք։
Մշտնջենաւոր, ի, աց. ա. 1. հավիտենական, մշտական, անվախճան, 2. դադար չունեցող, անդադար։
Մող. ու, ուց կամ ի, աց. գ. 1. զրադաշտական կրոնի հոգևոր պաշտոնյա, կրակապաշտների քուրմ, 2. կախարդ, 3. աստղագետ, գուշակ, 4. կրակապաշտ։
Մոգպետ, ի, աց. գ. մոգերի պետ, զրադաշտական կրոնի բարձրաստիճան կրոնավոր։
Մոլախինդ, խնդի. ի. գ. հովանոցավորների կարգին պատկանող շրաչին թունավոր բույս։ Գրվում է նաև մոլախինդ, մոլեխինդ կամ մոլեխինդ։
Մոլար, ի, աց կամ իցս. ա. 1. խաբեբա, մոլորեցնող, 2. մոլորված, շփոթված, գնորական, խորված, 3. սխալ, սուտ։
Մոլեգնիմ, եցայ. չր. 1. կատաղել, սաստիկ զայրանալ, 2. գժվել, իրեն իրեն կորցնել։
Մոլեգնութիւն. գ. մոլեգնելը, կատաղություն, գժվածություն, զայրույթ։
Մոլեկան, ի, աց. ա. 1. խելագար, կատաղի, 2. խելագարական, 3. գիժ, մոլագար, 4. անառակ, 5. գ. բանաստեղծ աստված, դև։
Մոլիմ, եցայ. չր. 1. կատաղել, զայրանալ, 2. գժվել, խելագարվել, 3. սուտ տալ, հիմարաբանել, 4. վխտանալ լինել, 5. սաստիկ ցանկ-



կությամբ մի բանի հետամուտ լինել, 6. սավալ, ցանկությամբ վառվել։
Մոլորիւն. գ. 1. մոլի լինելը, կատաղություն, խենթություն, 2. չափից դուրս ակր, ցանկություն։
Մոյգ կամ մայի. մուկի. աց. գ. 1. համարակ ռանամուն, հնդաթափի։
Մայր, մայրի. ից. գ. նեղուկ, հեռաւոր՝ ասորեստի կողքից կամ տանից. ծեր։
Մանագոն, ի. աց. գ. մենակյաց, կրոնավոր, արեգա։ Գա նաև մենացև ձևը։
Մոռացական, մոռացօղէր. ա. մոռացկոտ, երախտամոռաց։
Մոռացօնք. գ. մոռացում։
— Մոռացօնք են՝ լինին. մոռացվում են, մոռացվել են։
— Մոռացօնս առնել, ի մոռացօնս զարնացանել. մոռանալ, մոռացնել։
Մովկես. ա. Մովսես։
Մովսիսեան մովսեսն. գ. ավագ մոգ-պետ, տարբեր մոգպետը Սասանյան Պարսկաստանում։
Մորոս, ի. աց. ա. հիմար, անմիտ, խելապաշտ, խենթ։
Մորոսխոսություն կամ մորոսախոսուցանուն. գեղարանություն, խենթ ու խելառ խոսքեր, խեղկատակություն։
Մուծանել, մուծի. մո՛յծ. ար. մտցնել։
Մուն. մնոյ կամ մունի. գ. 1. մաշկ և խայթող մեղու, 2. մարմնի երկ, քոս։
Մուրացած, ի, իգ. մուրացածի, ծոյ, մուրացածոյ. ի, իգ. մուրացածու, ա. ուրիշից մուրալով վերցված, երկրած, կարկատած։

Մուրհ. ռհի, աց. գ. արքից կամ եռբանից խանգված՝ բուրավետ՝ մրրկ-ված բան, հավելավոր հատ կամ հատիկ, ապակե։
Մուրտ, մրտոյ կամ մրտի. գ. մրտենի ծառը և նրա պտուղը։
Մուրտամատան. գ. մրտենիներից անտառ՝ պարտեզ։
Մտադիր. ա. մ. 1. համաձայն, համամիտ, 2. արժանց, սիրով, 3. ազնիվ։
Մտաշշակ. ա. միտքը շփոթված, վարանած, հուզված։
— Մտաշշակ լինել. վարանել, մտքով շփոթվել, տանն ու վրա լինել, հուզվել։
Մտաւոր, ի. աց. ա. 1. միտք ունեցող, 2. մտացիր, 3. խոհական, խոհեմ, 4. իմացական, 5. բանական։
Մրուր, մրրոյ, ոյ. գ. ամանի տակի նստվածք, տականք, գիրտ։
— Մրուր առել. նստվածք, տականքել։
Մրցիմ, եցայ. չր. ծեծվել, կռվել, բռունցքով հարվածել։
Մօր, ի. ագ կամ իգ. գ. ցեխ, տիղմ, ճահիճ, աղտոտ ու ճահճոտ տեղ։
Մօրանամ, ացայ. չր. ցեխ դառնալ, ցեխոտվել, ճահճանալ, ճահճ դառնալ։
Մօրանէր. ա. աղտոտ։
Մօրու, ի, իգ կամ ագ. գ. խորթ մայր։
Մօրու կամ մօրու, ի, աց. գ. մորուք (ավելորդաբար հավանաբար ձևով մօրուք)։
Մօրուաքի, եաց, եաց. ա. մորուք ունեցող, գեղաբաշխ մորուքով կամ անմորուք (երկսեռազդ)։
Մօրուք կամ մօրուք. ուաց. գ. մորուք։

## Յ

Յաղ. ոյ. գ. 1. հաղթանակ, քաջանակ, կշռանակ, 2. ա. հաղթած, կշռած, կողմ։
— Յաղ. գլուխ. մինչև հաղթանակը՝ հաղթանակի աստիճանը։
Յաղթեմ, եցայ. յաղթեմ, եցայ. չր.

հաղթել, կշռանալ, հաղթող տանել, բարձրանալ։
Յաղթողացուցանեմ, ցուցի. ցո՛. ար. հաղթել, կշռացնել, հաղթող տալ, բարձրանություն պարտավոր։

2. չր. ձգվել՝ ձիգ պարկածքից հա- նելու համար։ Այլն՝ չխնձ։

**Յեսկար**, ի, իւ կամ ու, աց. գ. 1. երդման թուղթ, երդմնագիր, պայմանագրություն, 2. նամակ, 3. վճռագիր, 4. [illegible]։

**Յետս**. մ. ետ, դեպի ետ, ետևից, հակ- ված։

— **Յետս դառնալ**. ետ դառնալ։

— **Յետս ընկենուլ**. գեն գցել, մերժել, արհամարհել։

— **Յետս կալ**. 1. ետ կանգնել, 2. աղջամուղջ[illegible]։

— **Յետս հարկանել**. վանել, մերժել։

— **Ձեռս յետս կապել**. ձեռքերը ետև կապել։

— **Յետս ածել**. ետ պահել, արգելել մի բան անելուց։

— **Յետս յետս**. ետ-ետ, չարաճճի ետ։

— **Յետս կոչել**. ետ կանչել, վերցնել։

**Յերիւրել**, եցի. եր. 1. իրար հետ համ- ձայնեցնել, կարգավորել, չափել, ուղ- ղել, հարմարել, 2. տապալել, կցել։

**Յերկարել**, եցի. եր. երկարել, ձգձգել, երկարաձգել։

**Յերկուանալ**, ացայ. չր. 1. կասկածել, տարակուսել, 2. երկու մասի բա- ժանվել։

**Յեղ**. ա. մ. 1. կաթնած, հեղված, 2. հոսող մեկի վրա ցրված, տարածված։

**Յիմարել**, եցայ. չր. 1. խենթանալ, խելագարվել, հիմարանալ, 2. գար- շանքից ազդվել։

**Յիշեցուցանել**, ցուցի. ներ. հիշեցնել, հիշել տալ։

**Յղել**, եցի. եր. ուղարկել։

**Յղանալ**, եցայ կամ յղացայ, ացայ. չր. 1. հղիանալ, 2. հղանալ։

**Յղփանալ**, ացայ. չր. 1. լիանալ ու- տելով և խմելով, 2. հարստանա- լով, ինքնավստահանալով, 3. մեծա- նալ, բարձրանալ, առատորեն հագենալ։

**Յո՛, յո՞վ**. մ. դեպի ո՞ւր։

**Յոգն**, ի. յոգնի կամ վիճ., իգ կամ եաց. 1. գ. շատերը, բազմաթիվ մարդիկ, 2. ա. շատ, բազում, բազմաթիվ, 3. մ. հաճախ, առավել։

— **Յոլով անգամ**. շատ անգամ։

— **Յոլով մասն**. շատ մասը, մեծ մասը։

— **Յոլով ժամուք**. շատ անգամներ։

— **Յոլով ուրեք**. շատ տեղերում։

— **Ընդ յոլով ժամանակս**. շատ ժամանակ, բազմաթիվ։

**Յոյժ**. մ. 1. շատ, առավել, անչափո- րեն, առատորեն, 2. ա. վերին աստիճանի, ծայրահեղ։

— **Յոյժ, յոյժ**. առավել ևս, շատ-շատ։

**Յոյլ**, յոյլի. իգ. ա. խումբ, բազմություն, ամբոխ, հոտ։

**Յոյր**, յուրի կամ յոյրի. իգ. ա. գիրուկ, ճարպ։

**Յոռի**, ռւոյ կամ ռոյ, ռեաց կամ իգ. ա. 1. վատթար, չար, անպիտան, անարգ, ստոր, նվաստ, չեղծ, խո- տան, փույշ, 2. խորթ, 3. թերի, թույլ, 4. անտեղի, անարժան, զար- շելի։

**Յորդորախօսք**. ա. խոսքով, քաղաքավարությամբ ծնված՝ խրախուսիչ, սրտանց ասվող։

**Յորդորել**, եցի. եր. 1. դրդել, թելադ- րել, խրախուսել, համոզել, արթնաց- նել, 2. խրախուսել, քաջալերել, 3. հրապուրել, գրգռել, 4. ստիպել։

**Յորժամ**. մ. երբ, որ ժամանակ որ։

**Յորձան**, ի, ից կամ աց, օք. գ. 1. ջրի արագ հոսանք, հորձանք, 2. մեծ ալիք, 3. ջրի պտույտ ապարանք, 4. ջրմեղ, առհասարակ, ջրի ամեն թափով հոսող թափվելը, 5. գետի վարարում, 6. հոսանք ջրի բարձրանալը։

— **Յորձանս առնել**. հոսել, հեղ գալ։

**Յորջորջել**, եցի. եր. անվանել, կոչել։

**Յուզել**, եցի. եր. 1. փնտրել, որոնել, պրպտել, խուզարկել, հետախուզել, 2. խառնել, տակն ու վրա անել, 3. գրգռել, առաջ բերել, ջարդել։

**Յուշանալ**, ացայ. չր. 1. ծուլանալ, թուլանալ, դանդաղել, 2. անհոգ ու անփույթ լինել, 3. հետաձգել, 4. հապաղել։

**Յուղարկել**, եցի. եր. 1. ուղարկել, ճանապարհ դնել, 2. հուղարկավորել։

**Յուղկապարիկ**. գ. 1. առասպելական ժառանգածի կենդանի, որ ըստ առա- սպելաբանության ապրում էր ամայի վայրերում կամ ջրում, 2. համբարայ (անտ՝ ա)։

**Յուռութք**, ութի. յուռութ, ութից կամ աց. գ. 1. կախարդություն, հմայություն, 2. կախարդված առարկա, որ մար- դիկ կրում էին իրենց վրա։

**Յուսալ**, ացայ. չր. 1. հույս ունենալ, ապավինել, ապավինել, հուսալ, 2. եր. հանձնել վստահ սրտով։

**Յուրան**. գ. շանձրյան, ժառանք, ամ- բար։

**Յօդ**, ի, ից. գ. 1. կապ, գոդ, կցում, 2. մարմնի՝ իրար հետ կցված մասերից յուրաքանչյուրը, 3. ոսկորների ծայրե- րի միացման տեղը, 4. քերականա- կան հոդ՝ ս, դ, ն։

— **Յօդ յօդ**. կտոր-կտոր։

**Յօդել**, եցի. եր. 1. կապակցել, կցել, համադրել, բաղադրել, ձևավո- րել, 2. կցկցել խոսքերը, պատմա- կան ճշմարտությունները հնարել, 3. բա- րի վրա հող գցել։

**Յօն**, ի. յոնի, յոնից. գ. հույն, հույներ։ Գրված է նաև յաւն, յաւնք։

**Յօշել**, եցի. եր. 1. կտոր-կտոր անել, կտրատել, 2. պատառել, 3. մոր- թել։

**Յօրանալ**, ացայ. չր. 1. ուռելով հաստա- նալ, գիրանալ, 2. վերխոյանալ, ամբարտավանել, 3. լինել, ազդել, ներխուժել, 4. փքվել, պարծենալ։

**Յօրինել**, եցի. եր. 1. որևէ հնարել մի բան հնարելով, կարգավո- րել, բարեկարգել, 2. ստեղծել, շի- նել, կառուցել, սարքավորել, սանել, 3. դասավորել, շարադրել, 4. զարդա- րել։

**Յօրինիչ**. գ. 1. կարգավորող, ստեղ- ծող, 2. համ ավելցող։

**Յօրինուած**, ոյ, ոց կամ ի, աց. գ. 1. հորինվածք, 2. շենք, շինվածք, 3. զարդ, 4. կարգ ու կանոն, 5. հրա- ման, օրենք։

## Ն

**Նա, նորա, նմա... նոքա, նոցա...** դ. նա, այն։

**Նա**. շ. մանավանդ, մանավանդ թե, մանավանդ որ, մինչդեռ, այնինչ, իսկ, այլ։

— **Նա առավել**. 1. այնինչ, մինչդեռ, 2. բայց այժմ, իսկ։

— **Նա՛ եւ**. նաև։

— **Նա զի**. մանավանդ որ, առավել ևս։

— **Նա ուրեմն**. 1. անշուշտ, 2. թերևս, թվում է թե։

**Նախանձ**, ու, ուց. գ. 1. նախանձ, 2. նախանձախնդրություն, վրեժ, վրեժ- խնդրություն, 3. եռանդ, փույթ։

— **Նախանձ արկանել**. նախանձը շար- ժել՝ գրգռել։

— **Նախանձ առնուլ՝ ընդ ում՝** կամ **ի նախանձ մտանել՝ ընդ ում**. նախան- ձել, նախանձ զգալ։

— **Նախանձ ունել**. չար նախանձով նայել, չար աչքով նայել։

**Նախանձաբեկ**. ա. նախանձով վառված, նախանձից տառապող՝ իրեն իրեն ուտող։

— **Նախանձաբեկ առնել**. նախանձը շարժելով տանջել, մաշել։

— **Նախանձաբեկ լինել**. 1. նախանձից տառապել, նախանձից մաշվել՝ տա- ռապել, 2. վրեժխնդիր լինել։

**Նախանձորդ**. ա. գ. 1. նախանձոտ, 2. վրեժխնդիր, 3. նա, որին նախանձ- ում են։

**Նախանձուկս արկանել**. նախանձը գրգռել, նախանձը շարժել։

**Նախարար**, ի, աց. գ. 1. քաղաքի, նահանգի կամ երկրի կառավարիչ, առաջնորդ, 2. իշխան, ազնվական, 3. նահապետ, տանուտեր՝ մեծ ընտա- նիքում։

**Նախարարազուն**. 1. դ. նախարարնե- րի բազմություն, նախարարների ժողով, 2. ա. նախարարների ցե- ղից բաղկացած։

**Նախարարանք**. գ. նախարարներ։

Նախիրայն. ա. մ. [illegible] տարաչ եղած, [illegible]:

Նախճիր. գ. կոտորած՝ ջարդ, կոտորած, [illegible]:

Նամորագի. ա. [illegible] ([illegible]):

Նանրանալ. եզի. եր. 1. նա պաշել, նա [illegible], նա [illegible], 2. [illegible]:

Նաշխարհ. ի. աղ. գ. 1. [illegible] կամ գէշի պետ՝ բառ [illegible] կամ [illegible], [illegible], [illegible], [illegible], 2. [illegible], մնրացած մարդ:

Նաստաւակ. ի. աղ. ա. գ. 1. [illegible], կախի մէջ տառչ նստավոր, 2. [illegible] մէջ տառերն [illegible], բար, 3. [illegible] [illegible], [illegible]:

Նաւաստակել. եզի. եր. 1. [illegible] [illegible], [illegible], 2. [illegible], [illegible] [illegible] մէջ [illegible]:

Նաւաստակեցուցանել. ցուցի. զա՛. ար. [illegible] [illegible], [illegible] [illegible]:

Նաւաստակիլ. եցայ. չր. 1. [illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] տառչ [illegible], 2. [illegible] մի գործի [illegible]:

Նաւաստակութիւն. գ. 1. [illegible], [illegible], 2. [illegible], 3. [illegible]. 4. [illegible] [illegible]:

Նաւ. ի. եղ. ա. 1. թաղ, [illegible], 2. [illegible], 3. [illegible] [illegible] [illegible], [illegible], 4. գ. [illegible]:

Նաւիր. նւի կամ նւոյ. րաց. ա. փող, [illegible]:

— Ի նաւիր. մ. փող տալը, [illegible] տալը, [illegible]:

Նաւրութիւն. գ. 1. [illegible], [illegible], 2. փող [illegible], 3. [illegible]:

Նարոտ. ա. ալ կամ ի. աղ. գ. 1. [illegible] [illegible] [illegible] և [illegible] հյուսված հատա թել, 2. [illegible] թելերից հյուսված կապ, հյուսվածք, 3. ներկ:

Նաւասարդ. ի. աղ. գ. հայկական առաջին ամսվա տառերն ամիսը, [illegible], նոր տարի:

Նափորտ. տան, տանէ, տանց. գ. [illegible], մեկնոց, փիլոն, [illegible]: Այլ՝ նափորտ, նամփորտ, նամփորտակ:

Նահատակին. կոչ. գ. հին [illegible] [illegible] հավասար երկու [illegible]:

Նեղել. եցի. եր. 1. չարչարել, տանջել, նեղել, 2. [illegible], նեղ դարձնել, 3. [illegible], հարցրել:

Նեղիլ. եցայ. չր. 1. նեղության կրել, նեղվել 2. խռովել, 3. նեղ զգալ, [illegible]:

Նենգաւոր. ի. աղ. ա. խաբեբա, [illegible]:

Նենգութիւն. գ. դավ, դավաճանություն:

Ներբեկեղ. գ. երկրորդության [illegible] մի նկար անցած հնադարությունը:

Նեղոյ. ի. աղ. ա. գ. 1. նեղ արձան, 2. թանձր:

Ներբողական. ա. [illegible]:

Ներհուսն. աղ. աղ. գ. 1. ներկ, 2. բիծ:

Ներկոռ. ա. 1. չով կապած, խիտ, խիտ առ խիտ, 2. խորամանկ եղած (մի գիտության մեջ), [illegible], [illegible]:

Ներքինի. քինւոյ. եաց. ա. գ. 1. [illegible] մարդ, 2. պալատական պաշտոնյա՝ կանանոցում (ամբողջական):

Ներքոյ. ի ներքոյ. նխդ. ներքև, տակ:

Ներքուստ. մ. 1. ներսից, 2. ներքևից, տակից, ա. 3. ներքին, 4. ներքին (անձնական):

— Ներքուստ ի ներքս. բան ներսից:

Ներքս. ա. գ. ներսը, ներսի բանը, [illegible]:

— Ի ներքս մ. 1. ներս, դեպի ներս, ներսը, 2. դեպի խորքը:

Նզով. ա. նզով, պախարա, կարճառ:

Նիզակակից. կցի. աղ. ա. գ. մեկի [illegible] կռվող, ռազմական, [illegible]:

Նիզակաւոր. ի. աղ. ա. 1. նիզակ ու-



նեցող, 2. նիզակաձև (գծագրար տառով):

Նիշ. գ. 1. նշան, կէտ, 2. անբաւական[illegible] կէտ, 3. կենտրոն, 4. [illegible] նշանառում, 5. նշավակ:

— Այս նիշ, այն նիշ. այս (այն) նշանով կողմ, այս (այն) տեղով, այսինչ, այնինչ:

Նիստ, նստի կամ ստոյ. գ. 1. նստավայր, գիրք, տեղ, 2. աթոռ, իշխանություն, 3. աթոռանիստ քաղաք, 4. կայսերանիստ, 5. ա. ցած (երկիր):

— Նիստ ճաշակի՝ գեղջ, քաղաքի, գյուղի գիրքը:

Նիրհել. եցի. եր. 1. ննջել, ողորել, հյուսել, թաթաթել, 2. չարից հեռանալ, չար բան նախապատրաստել, 3. անել, հարմարեցնել, կազմել:

Նկան. ի. աղ կամ նկանակ. ի. աղ. գ. հացի բլիթ, մի անստեղ հաց:

Նկար. ու, ոյ կամ աղ. գ. 1. նկար, պատկեր, 2. նախշած գործվածք:

Նկարագիր. գրի. աղ. գ. 1. պատկեր, 2. նմանություն, կերպ, կերպարանք, բան որինակ՝ բնորինակված, 3. բան պատմության՝ բնագիր, 4. ա. նկարված, նույն բառերով գրված, 5. նկարիչ:

Նկարել. եցի. եր. 1. նկարել, նախշել, նկարագրել, 2. ցույց տալ, պատկերել, պատկերել, 3. գրել, 4. [illegible], 5. որինակ ցույց տալ, նմանեցնել, 6. երևակայել:

Նկրտիլ. եցայ. չր. ձգտել, ամեն կերպ ջանալ, հոգալ:

Նմանակ. ի. աղ. գ. տառապելական չորսրդի հետ, [illegible], [illegible], [illegible]:

Նշան. ի. աղ. գ. 1. նշան, 2. հրաշք, 3. դրոշ, 4. զինվորի նշան, 5. նշանատուր, նշան, 6. անբաւականի կէտ, 7. [illegible] կենտրոնը, 8. նշան առնելու նպատակ, 9. արտաքին երևույթ, նմանություն, 10. [illegible] [illegible] [illegible] ու գավազանը, 11. նշանախեց:

Նշանագիր. գրոյ. ող կամ ի. աղ. գ. 1. գիր, տառ, այբուբեն, 2. նամակ,

3. հրշտակարան, 4. գրագիր, նոտար և նրա գրվածքը, 5. [illegible] և իր գիրքը, 6. կենդանակերպ, 7. ձեռագիր կամ կնիք՝ որևէ վճռում:

Նշանակ. ի. աղ. գ. 1. հիշելու բան, 2. նշան տալը, ազդարարելը, հայտարարելը, 3. խորհրդավոր նշան, գաղտնիքների ցուցակ, հանգանակ, բան, 4. հրաշք, 5. դրոշ, պատիվ, իշխանության կամ հաղթության նշան, 6. թագավորի կամ զորավորի գավազան, գայիսոն, 7. առակ, օրինակ, 8. նշան տալը կամ տված նշանը, 9. նշանակետ, նշանախեց, 10. հետք:

Նշանակագ. ա. նշաններով՝ գույներով հյուսված, զարդարված:

Նշանակել. եցի. եր. 1. նշան անել, մի նշանով ցույց տալ, խոսք տալ, 2. նշանել, նշանակել, 3. մի բան հայտնել, մի միտք հայտնել, 4. խաչակնքել:

Նշանաւոր. ի. աղ. ա. 1. նշաններ կամ բաներ անհայտ (առարկա), 2. երկփեղկի. անվանի, 3. դրոշ բռնող, 4. խորհրդավոր:

Նշդեհ. ի. աղ. գ. 1. նետի նպատակ, նպատակակետ, 2. թագավորական զավազան կամ նշան, 3. խոստովանություն, նախադասեղ՝ [illegible] տալը, 4. անասուն, 5. խոստովանություն կամ նախադասների նշույթ, ա. 6. խոստովան, 7. նշանավոր, անվանի (նշանավոր):

Նշդեհութիւն. գ. 1. խոստովանություն, [illegible] կամ անառակ գործ, 2. հաշվեկշիռ անուն, մականուն:

Նշկահել. եցի. եր. 1. արհամարհել, անարգել, 2. մեկի իշխանությունը մերժել, ընդվզել, ապստամբել:

Նշոյլ. ուլի. եղ կամ նշոյղ. գ. շող, չարքի հառաչանք, ճաճանչ, փայլ, փայլատակ, ցոլք:

Նոխազ. ի. աղ. գ. արու այծ, քոշ:

Նոյնժամայն. ի նոյն ժամայն. մ. նույն ժամին, իսկույն, անմիջապես:

Նորագաւանդ. ա. նոր՝ առաջին անգամ անեցող:

Նու. ուոյ. ով կամ ու, նուէ, նուոց կամ նուանէ. անց. գ. 1. Հարս, հարսը իր ամուսնու ազգականների վերաբերմամբ, եղբորկին կամ հորեղբորկին կին։
Նուագ, ի. աց. գ. 1. գովասանք, բառակ, բառ, 2. գինի խմելը, խում, գինի։
Նուազ, ի. գ. մ. 1. ժամանակ, 2. անգամ։
— Ուր մի նուագ. 1. մի անգամ, 2. այժմ։
Նուաղ, ի. աց. գ. եղանակ, երգ, երգեց։
Նուաճեմ, եցի. եր. 1. իրեն ենթարկել, տիրել, նվաճել, 2. հնազանդ պահել, 3. մեղմել, հաղթահարել։

Նուաստ. ի. եց. ա. ցած, ստոր, հասիկ, չնչին։
Նախրակ, ի. աց. գ. 1. հասարակ գինվոր՝ հրամանատար, 2. պաշտոնական ապառազիր, հասարակ պաշտոնյա, 3. եկեղեցական գնացան, 4. արծաթին կամ ոսկի բառակ, եկեղեցի համար։
Նուռն, ի. աց. գ. ատամը, ատր, թուղ։
Նփռեմ, եցի կամ նէրիմ, եցայ. չր. խիստ շաղգամանալ, բազմաձևություն, բացանալ, հյուսվել։
Նփփիմ, եցայ. չր. բաղցից նվաղել, ցամաքել, չորանալ, անչքանալ։
Նօթի. բոյ. բեաց. ա. քաղցած, սոված։

# Շ

Շաբաթամուտ. մուտ. եց. գ. 1. արդյոք երեկոն, երբ սկսվում էր հրեական շաբաթը, 2. շաբաթական պաշտոնի մեջ մտնելը։
Շահապ, ի. աց. գ. 1. տեր, իշխան, նախարար, պետ, գլխավոր, ցեղապետ, զավառապետ, քաղաքապետ, 2. որդերի խնամակալ։
Շահատակ. ի. աց. գ. ցեղապետ, նահապետ, վերակացու, պահապան։
Շահատակիմ, եցայ. չր. համարձակ արշավել, գրոհել, ասպարել։
Շահաստ, ի. աց. ա. խիստ արդյունք և օգտակար, շահավետ։
Շահատաւորութիւն, գ. շահավետություն, օգտակարություն։
Շաղամար, ի. եց կամ աց. գ. թել, լար, պարան։
Շաղաղայտ կամ շաղաղուտ, ա. ստոր, ցած, անմիտ, խենթ, անմտանիշ։
Շաղիղ, գգի. գգոյ, գգով, գգաց. գ. 1. մեծ մետաղ, 2. հուծ մեջ, 3. մարթած կամ սատկած կենդանու մարմինը, 4. դիակ, դեղ։
Շաղփաղփ, ի. եց. ա. 1. շատախոս, բերանամեղ, շաղակրատ, 2. աղճատված, այլանդակ, 3. անհիմն, գռեհկական, 4. մ. շաղփաղփություն, շաղփաղփ խոսքով։
Շամանդաղ. գ. 1. մեգ, մառախուղ, 2. մթագնություն, 3. աչքի փառ, 4. հյուսն, մառանին, 5. ա. մթագնած, 6. հոգ. մառախուղություն։
Շամփ, ի. եց. գ. շիշ, շշինգում։
Շամփրարութիւն կամ շամփրութիւն. գ. 1. խենթություն, ցնդաբանություն, 2. մակի ցանկություն, խիստ ցանկասիրություն։
Շամբուշ, բչի կամ բշոյ. ա. 1. խելք ծեքված, ցնդած, խենթացած, կատաղի, մոլեգնած, 2. մոլի, ցանկասեր, վավաշոտ, 3. բութ։
Շանթահար. ա. կայծակից խփված։
Շանթեմ, եցի. չր. 1. երակ զարնել, 2. կայծակի պես կայծեր արձակել, 3. ամի պես զարկվել ու փշրել։
Շարժ, ոյ, ով. գ. 1. փոփոխ արյուն, բարակ, վերջի հյուսք, 2. արդյունավետություն, արդարություն։
Շափիղայ, ի. եց. շափիղայ, ի. եց. ա. երկնագույն կամ դեղին թանկագին քար։
Շեղջ, ի. եց. գ. 1. ձայնի ունեցումն, սառակություն, շեղում, 2. մ. շեղումն, ունկին և հեշտ կերպով։

Շեշտափակ. ա. շեշտերով՝ գծերով փակված։
Շէն, շինի կամ շնոյ. եց կամ աց. 1. շինված, շինություն, շենքը, 2. ավան, ա. 3. լավ շինված, զարդարված, ուրախ, զվարճալի, ամեն ինչ անցք։
Շինափակ. ա. շեն փակից շինած։
Շինեմ, եցի կամ շինէիմ. եցայ. չր. 1. կառուցել, կրակ կարել, 2. ամռանել, ամբարել կարգավորել։
Շինուած. ի. աց. գ. 1. գյուղացի, 2. ա. գյուղական, ամենական։
Շինանիստ. ա. գ. շեն՝ բնակեցված տեղ, գյուղ, քաղաք, ավան, որտեղ մարդկանց բնակություն են հաստատել։
Շինուած, ոյ, ոց. գ. շենք, շինություն, կառուցում։
Շինութիւն. գ. 1. շինելը, շինվելը, կառուցելը, կառուցվելը, 2. բարեկարգություն, խաղաղություն, շեն լինելը, 3. բարի որինակ, 4. շեն տեղ։
Շիջանիմ, շիջայ. չր. հանգչել, մարել։
Շիրմիմն. գ. շառավղային, նեաի կամ այլ տարրերալի արագ շարժվելուց առաջացած ձայները։
Շիրոփ աանեմ. ուրախանալ, արդարել։
Շնորհ. ի. ի. կամ աւ, աց, օք. գ. 1. պարգև, բարիք, ողորմություն, 2. շնորհ ու շնորհք, 3. հաճություն, 4. շնորհակալություն։
— Շնորհս առնեմ. շնորհել, ներել։
— Շնորհ ունիմ, շնորհ մատուցանեմ. շնորհակալություն հայտնել, շնորհակալ լինել։
— Շնորհս գտանեմ առաջի ուրուք. մեկին հաճելի լինել։
— Ըստ շնորհս ինչ տամ. շնորհ անելով տալ։
— Շնորհաց տամ. ձրի տալ։
Շնորհատու. ա. 1. ձրի տրված, պարգևած, 2. ձրի ավագ։
Շնորհեմ, եցի. եր. 1. շնորհք անել, տալ, 2. ներել, 3. մարդասիրություն անել։
Շոգի. գւոյ. գեաց. գ. 1. գոլորշի, 2. շունչ, 3. ճառագայթ, 4. պղծություն, 5. գիտություն երդում։

Շողմոքութիւն. գ. 1. բանսարկություն, խաբեություն, գրգռություն, 2. շողոքորթություն։
Շողոմ, աղայ կամ աղի. չր. 1. շողալ, փայլփլել, պսպղալ, 2. անցավ, լուսավորել, երկրաչափ (ծողի՝ ... մեջ երի մաս)։
Շոյտ, շուտի. ուով. ալից. 1. ա. արագ, գնացորդ, հոգեղեն և ցանկալի, հասարակ, կարգավոր, փութկոտ, 2. մ. շուտով, շտապ։
Շորթեմ, եցի. եր. 1. խլել, հափշտակել, կորզել, 2. խնչամուռ լինել։
Շուայտաբարոյ. ա. ցոփ, զեխ, անառակ։
Շուայտեմ. եցի. չր. շռայլել, անառակել, իրեն իրեն անխնա տալ։
Շունչ կլանել. շունչ առնել, ոգի՝ թերթ առնել։
Շուրջանակի. մ. շուրջ կողմը, շուրջ բոլորը։
Շուշտ, ի. աւ կամ իւ և ոյ, ով. գ. 1. հանկարծ շտապելը, հարկադրելը, արագություն, 2. փառավորված խուճապ, տագնապ, 3. ա. շտապեցեալ, 4. մ. շտապելով, շուտ-շուտ։
Շտապիմ, եցայ. չր. 1. շտապել, 2. ներքին բերկրել, 3. շփոթվել, վրդովվել։
Շրջափակութիւն, շրջափակումն. գ. 1. շուրջ կողմը փակելը, 2. շրջապատում։
Շրջեմ, եցի. եր. 1. շուրջ ման գալ, շրջել, կործանել, դարձնել, փոփոխել, 2. խառը գործել, 3. շարժել, քշել (նշմարներ), եր. 1. ցրվել, փոփոխվել, 2. պատվել, շուրջ կողմն առնել։
Շրջիմ, եցայ. չր. ման գալ, շրջել, այս ու այն կողմ քայլել։
Շռայլեմ, անայ, ասցեմ. չր. 1. խրատել ու վեր-վեր թռչել, շփոթվել, իրեն իրեն կորցնել, վարանել, 2. ապուշ կտրել։
Շօշ. ի. եց. գ. ապեհետ հաց, հացի կտոր, հաց, լավաշ, հացի բլիթ, յուղով հաց։

Ո. տ. ով։
Ոգևել, եցի. եր. ուժել, ոգել, եռացնել։
Ոգորել, եցայ. չբ. 1. կռվել, զանազան միջոցներով՝ զենքով, ձեռքով և այլն. 2. ճակատամարտել, դեմ կանգնել։
Ոխանալ կամ ոխանամ, ացայ. չբ. 1. ոխ պահել մեկի դեմ, քեն պահել. 2. չար նախանձով լցվել մեկի դեմ։
Ոխություն. գ. 1. ոխակալություն, 2. թշնամական վերաբերմունք, ատելություն։
Ողբալ, ացի կամ ացայ, բա՛. չբ. եբ. լաց ու կոծ անել, լալ, ճչալ, ողբալ։
Ող, ղի, ղամբ, ղանք, ղանց. գ. 1. թիկունք, մեջք, կռնակ, 2. ողնաշար, 3. ողնուղեղ, 4. ատաղձաքարի (լեռան, նավի և այլն) վերին կողմը։
— Ող առնել. յողն անկանիմ՝ կռանալ՝ կամ. 1. մեջքի վրա ընկնել, հանգստանալ, 2. պառկել, անշարժ լինել, 3. խոնարհվել։
— Ողն ընկնել (ից)։ մեջքը կոտրվել, ուժից ընկնել, լքվել։
Ողորկ, ի. ա. 1. կոկ մակերեսույթ ունեցող, հարթ, 2. կոկված, մշակված, ճարտասանությամբ պատրաստված, 3. քաղցրախոս, մեղմ խոսող։
Ողորմել, եցայ, եա՛յ կամ եա՛. չբ. 1. խղճալ, գթալ, կարեկցել, 2. ողորմություն տալ։
Ողջ, ոյ, ով. գ. 1. ողջույնք, բարեմաղթանք, 2. շնորհավորություն, 3. ա. մ. մեծ, ամբողջական (ներքով)։
— Յողջ առնել. ողջույնով համբուրել, բարևով հարցնել։
— Ողջ կամ յողջն անկանիմ. գնալով ողջույն տալ։
Ողջունել, եցի. եր. 1. ողջույն տալ, բարևել, ողջույն տալով համբուրել, բարեկամություն ցույց տալ, 2. երջանկություն տալ, շնորհավորել։
Ողջախոհ, կիլի. ած. ա. գ. ամբողջամիտ կյանքով գոհ։

Ողջանալ, ացայ. չբ. առողջանալ, բժշկվել։
Ողջացուցանել, ցուցի, ցո՛. եր. 1. առողջացնել, 2. ամբողջացնել, լրիվ դարձնել, շտկել, ուղղել։
Ոճիր, գ. 1. ապաշնորհություն, արյունահեղություն, մեծ չարագործություն, մեծ վնաս, 2. ա. չար, դաժան, եղեռնական։ Այլև՝ ոճիր, ոճիւ, ոճիւ։
Ոռոգումն, գման. գ. ջրելը, ջրվելը, ջուր տալը, ջուր առնելը։
Ոսին. ա. մեջը դատարկ, փուչ (հասկի մասին), վատթար, չորացած։
Ոսկեծոտ, ոսկեծոտն. ա. ոսկեխառն, ոսկով կազմված, ոսկեձույլ, ոսկե թելերով հյուսված, ոսկե թելերով զարդարված։
Ոսկեկերպաս, ոսկեկերպ. ա. որի մեջի գործը ոսկուց է (կտորի)։
Ոսխ, ի. ած. ա. գ. 1. հակառակորդ, վրեժխնդիր, թշնամի, 2. ոխակալություն, ոխ, քեն, վրեժ։
Ոստ, ոյ, ով. գ. 1. ճյուղ, ոստ, 2. բույր, մի փոքր բույրի անգ։
Ոստայն, ի. իգ. գ. 1. ջուլհակի գործվածք, հյուսված թել, 2. ոստայնանկության գործիք կամ գործարան, 3. նմանությամբ՝ սարդի ոստայն։
Ոստայնանկել, եցի. եր. հյուսել և գործել։
Ոստան, ի. գ. 1. թագավորանիստ կամ իշխանանիստ քաղաք, մայրաքաղաք, 2. արքունիքին պատկանող գավառ, արքունական կալվածք, 3. ա. աշխարհական, թագավորական, ոստանիկ։
Ոստանիկ, նկի. ած. ա. 1. արքայական տոհմից սերված, ոստանի բնակիչ, 2. ոստանին վերաբերող։
Ոստիկան, ի. ած. գ. վերահսկող, զորախմբի ղեկավար։
Ոստնում, ոստնուլ, ոստիստ, ոստիւ. ոստնուլ, ոստիստ. չբ. ոստնել, ցատկել, թռչել։


Ոտն, գ. 1. ոտք, 2. լեռան ստորոտ, 3. վանկերի չափ։
— Ոտնամ ընդ ոտս. ոտնատակ անել, արհամարհել։
— Ընդ ոտս անկանել. ոտքերն ընկնել, աղերսել լինել։
— Յոտն կալ. ոտքի ելնել, կանգնել։
— Յոտից. ոտքի վրա։
— Յոտին. ոտքով։
— Ոտ առ ոտն, առ ոտս. ոտքը, ոտքերը։
— Ոտն ոտն, ոտն առ ոտն. քայլ առ քայլ, կամաց-կամաց։
Որիզ կամ որիզն. գ. բրինձ։
Որկոր, ոյ, ով կամ իվ. գ. 1. կերակրափող, որկոր, 2. որկրամոլություն։
Որձամար, ի. ած. գ. ամուր քար։
Որձաքարեայ. ա. որձաքարից կազմված, որձաքարե։
Որմ, ոյ, ով կամ որմն, ման. գ. պատ։
Որմնադիր. գ. պատ, քանդակված, պատնեշ։
Որոգայթ. ի, իգ. գ. 1. թակարդ, 2. վտանգ։
Որոնայթն, յնոյ, ոց. ա. որոնողաց։
Որոմն, ման, մամբ, մանց. գ. մի անպետք մոլախոտ, որ աճում է հացահատիկի հետ։
Որոշել, եցի. եր. 1. սահմանել, բաժանել, 2. զանազանել, 3. բաժանել, ջոկել, առանձնացնել, 4. վճռել։
Որոշումն, որոշման, շման. գ. 1. սահմանում, բաժանություն, բաժանելը, զանազանություն, 2. կանոն, 3. զատում, բաժանում, առանձնացում։
Որս, ի. ոց կամ իվ. գ. գազան, էգ գազանուհի։
Որսանամ, ացայ. չբ. ընդ մեջ մանել՝ պաշտվել։
Որսալից. ա. որսի կենդանիներով լեցուն։
Որսական, ի. ած. ա. գ. 1. որս անող, որսորդ, 2. կենդանի։
Որսասէր, ա. որս սիրող։
Որսող, ի. ած. գ. ա. 1. որսորդ, 2. խաբեբա։
Որքան, ուան կամ որքան. գ. բաղդ, կեց (հրեղենություն)։

Որդոտանան կամ որդոտեան. թ. տուժմունք։
Ուլաւոր, ի. ած. ա. ուլեր, հղի։
Ուլագնացիկ. մ. ուլերին։
Ուխտ, ուխտի, ուխտով, ուխտից. գ. դաշնակից։
— Ուխտով երդու. 1. գիտելիքներ դրսևորել (ձեռս), 2. զենքերություն մեջ թափանցել։
Ուխտ, ուխտ. գ. 1. ուխտեր, վարդապետ, 2. վեց, եղան։
Ուղղ, ի. իգ. գ. 1. խաւար տարր, խառնում, 2. զույգ, կարգ, պայմանավորություն, 3. նախատեսություն, 4. միաբանություն, 5. կառք, կառավարում, 6. տասնյակ բաղնանք, աղոթք, 7. վանք, մենաստան, 8. ալիք գնայր, 9. պետականություն։
Ուխտել, եցի. եր. 1. համաձայնել խոսք տալ, 2. խոստով հաստատել։
Ուծանել, ացայ. չբ. առաջել, ատարանել (մեկի նկատմամբ), ատոր վերաբերել։
Ուղեշ կամ ուղեշ, ի. ած. գ. ճյուղ, բողբոջ, ծիլ։
Ուղխ կամ ուխ. մանավանդ՝ ուղխով, ուխով, խից. գ. առատ հոսող ջուր, հեղեղ, հեղեղատ։
Ումզէտ. ա. անդրավոր, անդրիական, դատարկ, սին, փուչ։
Ունայն, -ոյ կամ ի. իվ. ա. դատարկ, փուչ, սին։
Ունդ, ընդոյ, ոց. գ. 1. սերմ, հատիկ, հունդ, ընդեղեն, 2. սերունդ, զավակ։
Ունիլ, կալայ, կա՛լ կամ կա՛. եբ. 1. ունենալ, 2. բռնել, պահել, 3. պահել, արգել, տեր դառնալ, 4. վերցնել, առնել, 5. համարել, 6. վերաբերություն՝ առնչություն ունենալ, 7. կարգավորել, անդամ լինել, 8. պարունակել, բովանդակել, ամփոփել։
— Ունել ունի. Թեպետև ունի։
— Ունել առ իւր զխորհուրդս. ուրիշի գաղտնիքը ծածուկ պահել։

— Ունենք զաւակն. տան պատիվը պահել։

Ունկն, կան, հոգն. ունկանէ, չաց. գ. ականջ։

— Ունկնաւոր. ամենի կանչեր, կոչեր, կարծեր։

Ունկնդիր, դրի, դրաց. գ. 1. ականջ դնող, ուշադրության դարձնող, 2. հնազանդ, 3. լսող, 4. աշակերտ, 5. ատենակալ, 6. ապաշխարող։

— Ունկնդիր լինել. 1. մտքի առաջ լսել, 2. հնազանդվել, անսալ։

Ունչ, ունչք, ընչաց. գ. 1. քիթ, քթի ծակեր, քթի և բերանի միջև ընկած մասը, 2. քեղ։

— Ունչ, կամ ունչս առնել՝ ունիմ՝ բնկենալ, ցրնչաց հանել. քթի տակ մռմռալ, արհամարհել։

— Զընչովք առնել. քթերը հարդարել։

Ունջ, քնոյ, ոց կամ ոց. գ. 1. անկյուն, խորշ, ծակը, տակ, 2. գետնի, հատակ, խորք, գետնի տակը, 3. խաղողի որթի՝ հողի տակ մնացած մասը, 4. հագար թույլի թափք։

— Ընդ ունջ առնել. ցեխի հատակը՝ գետինը՝ խորքը տանել։

Ուշ, ոյ, ով, ովք և ի, իւ. գ. 1. հիշողություն, խելք, միտք, 2. ուշադրություն, զգուշություն։

— Ուշ առնել՝ առնուլ՝ ունիմ՝ դնել՝ կալ. խելքը գալ, ուշադիր լինել, հետամուտ լինել, ջանալ, զգուշանալ, լավ նայել։

— Ուշ ունիմ. սպասել, մնալ։

— Զուշ կամ յուշ ածել. հիշել, հիշեցնել։

— Ուշ կամ յուշ առնել. յուշ առկանել. հիշեցնել։

— Յուշ բերել. մտաբերել։

— Ուշ լինիմ ումեք. մեկի կողմից հիշվել, մեկի ուշադրության արժանանալ, մեկի միտքը գալ։

— Ուշ ի կուրծս. մ. ուշադրությամբ։

Ուշիմ, շիմ, ոց. ա. խելացի, բանիմաց, ընդունակ։

Ուռն, ուռան, ուռանէ, ուռանց. գ. 1. մուրճ, կռան, 2. գուրզ։

Ուռնում, ուռչիմ, ռեայ. չր. 1. ուռչել, 2. հպարտությամբ լցվել։

Ուսումն, ման, մանէ, մանց. գ. 1. ուսում, գիտություն, 2. անգիտություն, սովորություն, 3. կարգ ու կանոն, 4. կրոն, աղանդ։

Ուսումնակից կամ ուսումնակից, կցի. ույց. ա. գ. 1. միասին սովորած, դասընկեր, 2. մեկտեղ սովորեցնող, 3. կրոնակից, դավանակից, նույնադավան։

Ուսուցանեմ, ուցի, ուց. ներ. սովորեցնել։

Ուստեմն, մ. մի տեղից, ինչ-որ տեղից։

Ուստէ. մ. նույն է։

— Ուստէ ուստէ. զանազան կողմերից, այս ու այն կողմից։

Ուտեր, տեր, տերաց. գ. որդու զավակ։

Ուտեստ, ի,ից. գ. ուտելիք, կերակուր, ապրուստ, պարեն։

Ուրախ առնել. ուրախացնել։

Ուրար, ի. աց կամ ուրարն, րին, րանց. գ. 1. երկար ժապավենաձև կտոր, որ եկեղեցականները կրում էին ձախ ուսի վրա՝ արքայության նշանաձև, 2. ընդհանրապես լաթ, որ գործածում էին աշխարհիկ մարդիկ իբրև զարդ կամ կանաչ՝ իբրև գլխի ծածկոց. 3. կայսերական զարդ Ասյն՝ ուրար։

Ուրեք. մ. մի տեղ, որևէ տեղ։

— Ուրեք ուրեք. մ. տեղ-տեղ, երբեմն-երբեմն։

— Է ուրեք. լինում է տեղ որ…, պատահում է որ…։

Ուրոյն. 1. մ. հատ, մի կողմ, 2. ներ. զատ, առանձ, 3. բայց, 4. ա. հատուկ, մասնավոր, սեփական, առանձին։

Ուրուկ, ռկի. կաց կամ կուէ, կանց. ա. բորոտ, բոսոտ։

Ուր ուրեք. մ. 1. ուր որ լինի, 2. երբ որ լինի։

Ուրջու, ջուի. ուց. գ. խորթ զավակ։





Չարաբաստ կամ չարաբաստու. ա. չար բնավորությամբ, չարամիտ, դավաճանարար։

Չարախոստակա, չարախոստակաւ. ա. 1. վատ, չար, գաժան, դժնդակ, 2. մ. չարաչար, չարաչար կերպով։

Չարակն, կան, կունէ, կանց. ա. չար աչք ունեցող, նախանձոտ։

Չարամահ առնել. չարաչար կերպով սպանել։

Չարամահ լինել. չարաչար կերպով սպանվել։

Չարաչար. ա. մ. 1. խիստ չար, խիստ վատ, դաժան, 2. անտանելի, անհնարին, 3. սաստիկ, չափազանց։

Չարանէր, արի. աց. ա. չարության սիրող, չարին սիրող, չարիք գործող, չարարարող։

Չարչարեր կամ չարաչարեր. ա. անհամեմատելի, որին դժվար է համեմատել։

Չափ, ոյ, ով կամ ու և ու, ոց. գ. 1. չափ, 2. ամառ՝ չափի համար, որոշ տարողությամբ, 3. տառաչափային չափ, 4. կարգ ու կանոն, 5. վարք, վարմունք, վարվելակերպություն, 6. պայման, վավերականություն, 7. ա. չափավոր, փայլուն, 8. ներ. չափ, պես։

— Ի չափ հասանել. չափահաս դառնալ։

— Ի չափ ասուրց հասանել. տարիքն առնել, ծերանալ։

— Ի չափու ունիմ զանձն կամ զիւրեան գլուխ ամենին. իր չափն իմանալ՝ պահել։

— Չչափ առնուլ. փորձել, քննել։

— Չափ հասակաւ. միջահասակ։

Չափաւոր, ի, աց. ա. 1. միջակ չափով, մասնավոր, 2. չափը պահող, պարկեշտ, 3. նվազ, խոնարհ, 4. չափ ունեցող, չափածո։

— Չափաւոր մի. մի քիչ։

Չգոյ, ի, ից. ա. գ. չեղած, գոյություն չունեցող։

— Ի չգոյէ, առ ի չգոյէ, առ չգոյէ. չլինելուց, չգոյությունից։

Չերեց, րիցու. գ. ուրացող քահանա, անարժան քահանա։

Չէ, չև եւ. դեռ չէ, դեռ չեղած։

Չէին. նա որ չկար, չեղածը։

Չնաշխարհի. ա. անհամեմատելի։

Չմտածական. ա. անմտածված, անխելք։

Չորեքտասան. ի, ից. թ. տասնչորս։

Չորեքտասաներորդ. ի, աց. թ. տասնչորսերորդ։

Չու, չուոյ, ոց. գ. 1. գնալը, ճանապարհվելը, անցնելը, 2. ճանապարհ, ճանապարհի երթը, 3. գալոց՝ անդարձելի, բարձրություն, կարգավորություն, բանակը։

— Չու առնել, ի չու անկանել. ճանապարհվել, գնալ, տեղափոխվել, գաղթել։

Չուան, ի, աց. գ. պարան, թել։

Չտոտ կամ բչտոտ. ա. խեղճ, աղքատ, թշվառ։

Չքեմ, եցի. չր. 1. անհետ լինել, գնալ քաղցրությամբ և անհետանալով, 2. մեռնել։

Չքնաղ. ա. անկրկնելի, անմեկ, անմեկ նմանը։

— Ի չքմեղս կամ ի չքմեղութիւն առնել, լինել. 1. անմեղ ձևանալ, 2. ծածկել։

Չքաւոր, ւոյ, ւոց. ա. չունևոր, աղքատ, չար։

Չքանամ, եցայ. չր. չքանալ, անհետանալ։

Պաղատանեմ, պաղտի, պաղ'ց, եր. Համբուրել:

Պաղպաղակայ, պաղպաղակայամ. ա. պարզորոշ (մի), պարզորոշաց [illegible]:

Պահանել, եցի, պահանջիմ, եցայ. չր. 1. պահանջել, 2. խափանել, 3. Թաքնվել, [illegible], մաքել, 4. մեռնել:

— Պահանջել ի մասս, խնեմանալ, խոնարհվել:

Պահեցող, պահեղիլ, պահեղայ, կոչեալ. չր. 1. սաստիկ վախենալ, վախից ու [illegible] սառչել, 2. դողալ:

Պահեստութիւն. գ. անտանելիություն:

Պահպանանել, եցի, եր. սաստիկ վախեցնել, ահաբեկել:

Պահ. ա. ող կամ ի. ից. գ. 1. պահելը, պահպանելը, 2. պահպանության հերթ, 3. ժամանակ, 4. վախ, 5. պահապան, 6. ասպան, 7. բանտ, բանտարկություն, 8. զգուշություն:

— Ի պահու առնուլ զմ. մեկին ներբանկել և բանտ գցել:

Պահանջ կամ պահանջք, ի. աց. գ. 1. պարտի չարչարանքի մեջ գրված փաստ՝ [illegible] ամբողջության համար, 2. ապահովություն:

Պահեստ կամ պահեստոց. ա. պատ պահող, բիչ ստացող:

Պահպանեակ, ի. աց. գ. 1. գինվորի մարմինը զենքի հարվածից պաշտպանելու համար, 2. հմայիլ:

Պահել, եաց. գ. 1. պատ, ժամ, 2. պահելը:

Պահիլ, եցայ. չր. 1. թաքչել, կոչել, [illegible] ծածկվել, 2. [illegible], [illegible]:

Պահոց, ի. աց. գ. 1. ամբարանոց, [illegible] ամբարաներ, 2. հացը, [illegible], [illegible], պահպանություն (վերջին իմաստները՝ անհարկի գործածություններ):

Պահանջել, եցի, եր. 1. գործածել, գեղեցկացնել, 2. [illegible] ներկել, [illegible], զմռսել, 3. [illegible] շուրջ կեցնել, ներգծել, [illegible]:

Պայ, ի. ից. գ. ատաղձագործական գերգանի՝ իբր մարդոց [illegible]:

Պայազատութիւն. գ. 1. Հայրդրություն՝ իշխանություն կամ ժառանգի, 2. ազնվական ծագում, ազնվատոհմություն:

Պայարել, եցի. եր. չորս կողմը պատել, շրջապատել, բանել:

Պայման, աման, մանէ, մանց. գ. 1. պայմանը, [illegible], համաձայնություն, [illegible] [illegible], 2. ծառայություն, [illegible] գործ, [illegible], 3. [illegible] [illegible], 4. [illegible], [illegible] բան:

— Պայման ադնել. պայմանել:

— Պայման հաստատել. պայմանել:

— Պայման առնել. ծառայել:

Պայմանեայ, էի. գ. [illegible], ծառա, պաշտոն:

Պառակ, ի. աց. գ. 1. կող, 2. [illegible] բան, [illegible], [illegible], 3. [illegible] [illegible] [illegible] համար, [illegible] [illegible], [illegible]:

Պատրել, եցայ. չր. 1. [illegible] [illegible], [illegible], 2. [illegible] [illegible]:

Պատանել, եցի, պատանիլ, եցայ. չր. 1. հանդիպել, դեմ ելնել, դիպչել, զարնվել, 2. պատահել, լինել:

Պատանութիւն, նեան, մանէ, մանց. գ. 1. պատանեկը, հանդիպելը, պատահած բան, 2. դիպված, պատահմունք:

Պատանեկ, ի. աց. գ. [illegible] գրով [illegible] անձ, գրանք:

Պատ առնուլ. 1. շրջան անել, մանգալ, 2. պաշարել (միտ):

Պատասխանի առնել. պատասխանել:

Պատասխանի տալ. 1. պատասխանել, 2. արդարացնել, ջատագովել:

Պատարագ, ի. աց. գ. 1. զոհ, զոհաբերություն՝ որպես ընծա, 2. նվեր, ընծա, 3. կաշառք:

Պատգամ, ի. աց. գ. 1. հրաման, վճիռ, 2. խրատ, 3. լուր, տեղեկություն, 4. լրաբեր, 5. բան, իր:

— Պատգամ յղել. լուր՝ հրաման ուղարկել:

— Ի պատգամս անկանիլ. լուր հասցնել:

Պատեհ, ի. ից. ա. պատշաճ, հարմար, արժանի:

Պատեհագէտ. ա. [illegible]:

Պատիր, իրէ. ա. 1. խաբեական, սուտ, 2. գ. խաբեություն:

Պատկանդարան, ի. գ. [illegible] [illegible] հարմարանք, [illegible]:

Պատկեր, ի. աց. գ. 1. նկար, 2. արձան, 3. օրինակ, 4. կերպարանք, դեմք, տեսք, 5. [illegible], [illegible], 6. անձ:

Պատմուճան, ի. աց. գ. 1. երկար վերարկու, վերարկու, 2. ընդհանրապես զգեստ:

Պատշաճ, ի. ից. ա. 1. հարմար, վայելուչ, 2. գ. հարմարություն, 3. մ. յալ ձևով:

— Պատշաճ է, պարտ և պատշաճ է. մր. հարմար է, պետք է, պատշաճ է:

Պատուիրան, ի. աց. գ. հրաման, հանձնարարություն:

Պատուիրել, եցի. եր. պատվեր տալ, հրամայել, [illegible], հանձնարարել:

Պատուհաս, ի. ից. գ. 1. պատիժ, 2. չարիք, փորձանք, 3. [illegible], հարված, 4. խիստ հանդիմանություն, [illegible], [illegible], 5. պատժի արժանի գործ, հանցանք:

Պատուհասել, եցի. եր. 1. պատժել, 2. տանջել, չարչարել, 3. խիստ [illegible], խիստ հանդիմանել, [illegible], [illegible]:

Պատսպարան, ի. աց. գ. 1. ապաստանելու տեղ, ապահով տեղ, 2. ապավեն, հովանավոր, օգնական, [illegible], 3. ապաստան:

Պատրանք, եաց. գ. խաբեություն:

— Ի պատրանս արկանել՝ մոլորեցնել, խաբել:

Պատրաստութիւն. գ. 1. պատրաստ լինելը, 2. կազմ-պատրաստ, 3. զգուշություն:

Պատրել, եցի. եր. խաբել, խելքից հանել:

Պատրուճակ, [illegible] կամ [illegible]. աց. գ. 1. [illegible]՝ [illegible]՝ [illegible] [illegible], 2. [illegible], [illegible]:

Պարապել, եցի. պարապիլ, եցայ. չր. 1. պարապ լինել, ազատ լինել, 2. մի բանով զբաղվել:

Պարապեցուցանել, ցուցի. ցո'. եր. 1. զբաղեցնել, վարժեցնել, 2. [illegible], 3. հեռացնել:

Պարարել, եցի. եր. բուծել, գիրացնել:

Պարարտ, ի. պարարտք կամ տից, տաց և տից. ա. 1. գեր, յուղոտ, մսոտ, 2. բարեբեր, 3. գ. գեր բան, պարարտություն, ճարպային նյութ:

Պարարտաբոյս. ա. պարարտ բուսականություն ունեցող:

Պարարտահամ. ա. համեղ:

Պարարտամարմին. ա. մսոտ, գիրուկ:

Պարանոցել, եցի. եր. 1. [illegible], [illegible], 2. [illegible], [illegible] [illegible], կաշկանդել:

Պարեգօտ, ի. ից. գ. վերնազգեստ, վերարկու, պատմուճան, կապա:

Պարզախոս. ա. հստակ խոսող:

Պարզել, եցի. եր. 1. մաքրել, զտել, բացել, 2. [illegible] [illegible] [illegible], խառնել, 3. բացել, տարածել, փռել, 4. երկարել, ձգել, 5. բացատրել, [illegible]:

Պարզութիւն. գ. 1. պարզ [illegible], 2. անխառն լինելը, 3. համեստություն, անկեղծություն:

Պարկեշտութիւն. գ. 1. համեստություն, չափավորություն, ամոթխածություն, 2. վայելչություն, պատշաճություն:

Պարս, ի. ից. գ. [illegible] [illegible] [illegible], [illegible]:

Պարս. գ. մեղուների խումբ:

Պարսատիկ, տկի. կաց. գ. 1. քար նետելու գործիք, [illegible], 2. [illegible] [illegible], 3. [illegible] մեջ քար [illegible] [illegible]. [illegible]՝ [illegible] [illegible]:

Պարսաքար, ի. ից կամ աց. [illegible]. գ. պարսատիկի քար:

Պարտ է. մր. պետք է:

Պարտիմ, եցի. եր. հաղթել, պարտութեան մատնել։
Պարտիմ (պակասավոր բայ է). պետք լինել, պարտավոր լինել։
Պարտութիւն. գ. 1. հաղթվելը, 2. պարտական լինելը։
— Ի պարտութիւն մատնել. հաղթել։
— Ի պարտութիւն մատնիլ. հաղթվել։
Պետ, ի. աց. գ. գլխավոր իշխան, ղեկավար, պետ։
Պերճանամ, ացայ. չր. 1. շքեղանալ, փառավոր տեսք ստանալ, ճոխանալ, 2. պարծենալ։
Պերճանք, նաց. գ. 1. պերճանալը, պարծենալը, 2. փառավորություն, շքեղություն, զարդարանք։
Պէյտարի. ա. գ. 1. լավ ձիավոր, որ ընթանում է իշխանավորի առջևից, 2. արքայազնի սուրհանդակ։
Պէտք. 1. գ. պիտանիություն, հարկավորություն, պահանջ, կարիք, 2. գործածություն, գործածելը։
— Պէտս յանձին ունել. փույթ ունենալ, հոգալ։
— Պէտս ունիմ զիմեէք. հետամուտ լինել, պահանջել, խնդրել։
— Պէտս առնել, պէտս վարել. գործածել, գործադրել։
— Պէտք են. մր. պետք է։
— Ի պէտս (ասել). մեկի կարիքը բավարարելու համար։
Պինդ կալ. հաստատ մնալ։
Պիտոյք, ից. գ. 1. պետք, կարիք, 2. անհրաժեշտ պարագաներ։
Պղերգ, ի. ից կամ աց. ա. ծույլ, թուլամորթ։
Պղծութիւն. գ. 1. կեղտոտելը, ապականելը, պղծելը, 2. անմաքրություն, ապականություն, 3. պիղծ բաներ։
Պղնձակերտ. ա. պղնձից կերտված, պղնձից շինված, պղնձե։

Պնդադեսպան. գ. արագընթաց սուրհանդակ։
Պնդեմ, եցի. եր. 1. ամրացնել, 2. կապկպել, 3. ստվարացնել, 4. սեղմել, 5. կապոց կապել, ծրարել, ամփոփել, 6. քաջալերել, սիրտ տալ, 7. նեղը գցել, 8. կարգավորել, հաստատել։
Պնդիմ, եցայ. չր. 1. համառել, 2. ձգտել, 3. փակվել։
Պշնում, նայ, ացեալ. չր. աչքը մի կետի հառած նայել, ապուշ կտրած նայել։
Պողպատեայ. ա. պողպատե։
Պուրակ, ի. աց. գ. անտառակ, փոքր անտառ։ Այլն՝ պրակ (տե՛ս)։
Պոռոդ. ա. թշնամի, հակառակորդ։
Պոյզ, ուզի, ուզ. գ. սեխ։
Պտղաբեր. ա. պտուղներ բերող։
Պսակեմ, եցի. եր. 1. պսակ տալ՝ դնել, 2. վարձատրել, 3. ամուսնացնել, 4. զարդարել, փառավոր զարդեր, 5. շուրջ կազմել, շրջապատել, 6. լրացնել։
Պտուտեմ, եցի. եր., պտուտիմ, եցայ. չր. պտտել, պտտվել։
Պրակ, ի. աց. գ. անտառակ, փոքր անտառ։
Պրակք. գ. 1. գրքույկ, պրակ, 2. առանձնակի մի գլուխը՝ «Ծննդոց» առաջինը, 2. գրքի գլուխ, հատված, ճառ։
Պրծանիմ, պրծայ կամ եայ. չր. 1. ազատվել, փրկվել, 2. թոթափվել։
Պրտու, ոյ կամ ի. ող. գ. երկար ու բարակ եղեգ, եղեգի տեսակ՝ հյուսելու կամ գրելու համար, ճիլոտ, եղեգ։
Պրոն. ի. ից. գ. այծի մազ՝ հյուսելու համար, այծի աղամազ։

# Ջ

Ջաղատ կամ ջաղոտ. ի. ից. գ. ծննդյան գործիք, ճիզապ, զամզաղան։ Գրված նաև ջայլոտ, ջայլատ։
Ջամբեմ, եցի. եր. 1. կութ կամ այլ փափուկ կերակուր տալ, մանր-մանր պատառներով կերակրել, 2. սնել, կերակրել, 3. դաստիարակել։
Ջոյլ, ի. ից կամ ջոյլի. յոյլ. նոյ. գ. 1. բազմություն, 2. բազմությամբ յալ ու խոտ ունենալը, յալ, ոգի, 3. յոլովանակ, 4. կենդանիների բազմություն, կենդանիներ, հոտ։
Ջայլեմ, եցի. ջայլիմ, եցայ. չր. բազմությամբ ողողել, խմբվել մեկի շուրջ և յալ ու խոտ ունենալ։
Ջանամ, ացայ կամ ացի. չր. ձգտել, աշխատել, հոգ տանել, ջանալ։
Ջատագով, ի. ից կամ աց. գ. 1. պաշտպանող, փաստաբան, պաշտպան կանգնող, 2. միջնորդ, դատախազ։
Ջեռնում. ջեռայ, ռնայ կամ ջեռուցիմ, ռայ. չր. 1. տաքանալ, 2. կրակի կարմիր (երամ), բորբոքվել, 3. բարձրանալ (ջերմաստիճանը), 4. հալվել՝ թափով հոսել։ Այլն՝ ջեռանիմ։
Ջեռուցանեմ. ուցի. ու՛. եր. տաքացնել, ջերմացնել։
Ջեր, ոյ. գ. 1. ջերմություն, տաքություն, 2. տաք՝ պայծառ եղանակ, 3. ա. տաք, բարեխառն (եղանակ, օդ)։
Ջերոտ. ա. տաքուկ, բարեխառնություն։
Ջիլ, ջլի. յաց. ջլից. գ. 1. ջիլ, 2. ամր. զորություն։
Ջղեայ կամ ջղեայ. ա. ջղերից շինված։
Ջոկեր, ջկի. ակ. գ. խումբ, ջոկ, բանակ, բազմություն։
Ջոկ, ոյ. ոց և ի. ից. գ. խումբ։
Ջրահոսանք. ա. ստատապատ ջրով, հորդացած ջրով։
Ջրասուզակ. ա. ջրի տակ սուզվող։
Ջրեմ, եցի. եր. 1. ջրել, ոռոգել, հագեցնել, 2. ջուր տալ, ըմպել։
Ջրաքսիմ, եցի. չր. ջախջախվել, աղբյուրի հանել։

# Ռ

Ռազրի. գ. վարդագույն, անուշ։
Ռազմ, ի. ից կամ ռազմաց, մանց. գ. 1. կռվի պատրաստվող զորքի հավաքատեղի, 2. ճակատամարտ, պատերազմ, 3. կռվող զինվոր, ռազմիկ։
Ռախալ, ա. մեղկ, ծույլ, թույլ, տկար, հիվանդ, տկարա։
Ռահ, ի. ից. գ. ճանապարհ, ուղի, ավազան, շավիղ։
Ռամկաբար. գ. ռամկական լեզվով։
Ռայ, ի. ից. գ. գյուղ, հասարակ մարդ, ռամիկ։
Ռմբիկ, ենի. կոչ. գ. պոլիս, գրքեր, ռամկորեն, թուղթ։
Ռուզնիկան. ա. յուսավոր, պայծառ, անտուրդաշեր։
Ռունգն, ռնգան, ռնգունք, ռանց, ռնգամբ, ռանց. գ. քիթ, քթածակ։

# Ս

Սաղրեմ, եցի. եր. 1. հորդորել, թեյադրել, 2. նախանձել, ծամածռել, 3. վատ խոսել տալ, 4. մեղադրել, 5. դրդել, դրդում (մի վատ բանի)։
Սալարդ, ի. աց կամ սալարդ, սալարդանք, մանց. գ. անտառատեղի բույսերի ցողունը պատրաստված՝ շատ համեղ մեր ունեցող թույն, ղոհում։
Սալաւր կամ սալուար. ի. աց. գ. գարադաշտ, վերարկուներ, զինվորներ։
Սայթաքեմ, եցայ. չր. թաթավել, պահել, թիք տալ մառել, սայթաքել։

Սահ, ի. առ կամ ակ. ից. գ. 1. յայտ, 2. հոգեհ, համար, թիվ, 3. կարգ, շարք, սերնդ, 4. առանձնացված ջոկ, կազմ, 5. առանձնացված գիծ, տողեր։
— Սահ առնուլ. գիծ քաշել։
Սահ, ի. գ. աստղ, հարդի։
Սահման, ու. ուց. ա. 1. յարաբար, սևագ, 2. մառ, մերձավոր։
— Սահման լինել, սահման մի, սահմանի մի, սահմանի մեռնել, մի մահ, մի թաղել։
— Սահման սահման, սա սահման սահման

բառ սակաւ սակաւ. ծիծ-ծիծ։

**Սակուր**, կրի. ռու. կամ սակր, կեր. կերպ, կոտ. գ. պատերազմական գործիք տապարի՝ կացնի ձեւով։

**Սակս**, ի սակս. նխդ. պատճառով, համար։

— Սակս Էր, յո՞ր սակս. ի՞նչ պատճառով, ի՞նչ բանի համար։

— Յայն սակս. այն պատճառով, նրա համար։

**Սակր**, տ. Սակուր։

**Սակրաւոր**, ի, աց. ու. գ. սակր ունեցող, սակրով զինված։

**Սահմանել**, եցի. եր. 1. որոշել, մըննել, կարգավորել, չափի մեջ պահել, 2. վերջը հասցնել, վերջացնել, 3. վճռաբար բացատրել, փիլիսոփայօրեն բացատրել, 4. զատորոշել (պատիժը)։

— Սահմանեալ անկր էին. պարտէր։

**Սաղարթ**, ի, աց, ու, գ. 1. ճյուղ՝ տերևով, կանաչ ոստ, 2. երկարած ծառը։

**Սաղաւարտ**, ի, ից. գ. 1. զինվորական մետաղե գլխանոց, 2. քահանայի կամ այլ պաշտոնյայի գլխարկ՝ սաղավարտաձև, 3. արքունի պաշտոնյաների խույր։

**Սայր**, ի, ից. գ. 1. թրի բերան, ծայր, 2. լեռան գագաթ։

**Սան**, ի, ից. գ. կաթսա։

**Սան**, ու, ուց. գ. 1. մեկի ձեռքով մկրտված երեխա, աշակերտ, սան, 2. կերահոր կերած, սանիկ։

**Սանդարամետ**, ի, մետ. աց կամ ից. գ. 1. հողի խորքերը, ստորերկրյա վիհ, անդունդ, 2. դժոխք, 3. դժոխային ոգի, սատանա։

**Սանձահար**. տ. սանձերը հարած (գետ)։

**Սանձարձակ**, ճաց, սանձարձակիլ, ճեաց. գ. սանձարձակեր, սառույց, սանձար-թյուն։

**Սաստ**, ի, ից. գ. 1. սաստում, սաստելը և ահավոր հանդիմանություն, 2. արգելման հրաման, 3. պատիժ, պատուհաս, խստություն։

— Սաստիւ. խստությամբ, սաստկապես։

**Սաստկաբարբառումն**, ման. գ. սաստիկ բարբառը, սաստիկ բարձունքը։

**Սաստկել**, եցի. եր. 1. ավելցել, ծխել, կորցնել, մինչև համարը հասցնել, 2. տքանել, չարաչար նեղվով տառապել, կատարել, կրակառումն՝ սաստկել, մեռնել, տղամարդել, կատարվել։

**Սաստկիչ**, կչի. կչաց. ա. ավելորդ, ծեծող, ավելացնող, չարաչար տառապող, մեռցնող, կատարող։

**Սաստկումն**, կման. գ. կատարած, չարաչար մահը։

**Սատանայական**. ա. 1. իր մեջ սատանա կրող, սատանայից ծնված, 2. դիվահար, այսահար։

**Սատար**, ի, աց. գ. 1. բանվոր, աշխատող, մշակ, 2. օգնական, 3. օգնական, գործակից, 4. օգնություն, 5. պաշտպան, առիթ։

**Սատարութիւն**. գ. 1. օգնականություն, օգնություն, գործակցություն, 2. աշխատանքը, աշխատանքը, 3. օժանդակություն։

**Սարակ**, գ. 1. փոքր լեռ, 2. լեռան սարավանդի գագաթ։

**Սարաւանդ**. ա. լեռան վերին կողմ՝ սարային, հովտաձև։

**Սարիք**, բեաց. գ. կոտ, կարգանքը, շղթա։

**Սարսել**, եցի կամ սարսիլ, եցայ. չբ. դողացնել, դողալ, ահաբեկվել, վախենալ, թալվել։

**Սարսռումն**. ռման, սարսռիլ. ռեաց. չբ. խրտնել, փախչել։

**Սգալ**, ացայ կամ ացի. եր. չբ. սուգ մտնել, սգալ, լալ, ողբալ։

**Սեամք**, սեմոց. գ. դռան շեմք։

**Սեաւ**, սեւոյ, ոց կամ ի, ից. 1. ա. սև, 2. փոխաբերությամբ՝ սև մի, 3. գ. թանաք։

**Սեգին** կամ սիգին, ի, աց. գ. սիրական, սարքավոր, շնացող։

**Սեղանական** կամ սեփական, սեփհական, ի, աց. ա. 1. սեպականի՝ իշխանների համար, վերաբերյալ, 2. սեպուհին պատկանող, 3. սեփական։

**Սեղան**, ղնի, ղնաց կամ սղանոց. գ. 1. սեղան, աղանդավորություն մի



տաճարում, աղանդական՝ նախարարական ստեղծ, խորան, խորանափոր, աղանդական զոհեր, 2. մի լեռան տեսակ եղելոյց զավառում (Սյունիք)։

**Սերել**, եցի. եր., սերիլ, եցայ. չբ. սերունդ տալ, բերել, բազմացնել, բազմանալ, շատանալ։

**Սէգ**, սիգի, գաց. ա. հպարտ, գոռոզ, ամբարտավան։

**Սէզ**, սիզոյ, ոց. գ. 1. կանաչ խոտ, 2. մնացական խոտ։

**Սիրաբեր**, եցի. եր. թշնությամբ՝ գեղեցկությամբ՝ սիրությամբ փայփայել, թովսել, սիրել, գրավել սրտերը։

**Սիրաբերիլ**, եցայ. չբ. թշնությամբ փոխադարձ սիրելիքը, գրավվել, սքանչանալ, զմայլվել, սիրահարվել, բնակվել։

**Սիրախնդիր**. գ. սիրով լցված, խելքը գլխից՝ ուշքը տանող երգեր։

**Սիրահրումն**, ման. գ. զվարճանալը, սիրախոսելը, զվարճանալը։

**Սիրել**, եցայ կամ եցի. եր. 1. հարգանալ, պաշտել, փրկել, իրեն հարազատ ու մոտ դարձնել, 2. խնամել։

**Սիրեցեալ**, ի, ից. գ. մարդ, հոգի, հրեշտակ, տեր Կրիստոս է շատ անգամ՝ սուրբ հոգի, սիրելի, սիրուհի, սիրելագույն, սիրական, ազգային, ազգի սիրուհի, սիրելի է այլն։

**Սիրելուն**, ի, աց. ա. գ. 1. սրտանց փոխ ու անկյուն բան թողած, լքված, անպիտան մնացորդ, 2. թափթփուկ, տականք, 3. զառանցիչ։

**Սիւն**, սեան, ոց կամ սեան, այլն՝ սիւն, սեան. գ. 1. հենքի, 2. բարձր։

**Սիւս**, ի, ից. ա. գ. հոլմ, բարդ։

**Սիւնազարդ**, ի, աց. գ. քարակերտ սյունազարդ կամ այլ բան ֆոնեցող անձին, սյուն, գագաթ, տաճար, մատուռ, սյունազարդ։

— Սիւնազարդ զինեալ. գահերի վերին մասը։

**Սկիզբն** սկսեալ սկսումն սկսիլ, սկսել։

**Սլաք** կամ սլաք, գ. 1. բարակ, ցածած, 2.

**Ս. պարապան**, ի, աց. ա. 1. կրոնի ուխտը
... (text of right-hand column)

2. սրբազան սեղանի պատարագատեղի ճգնավորական սպասարկությունների համար։

**Սմբակ**, սմբաց, սմբի. չբ. սմբել, ու-ժել, մեծանալ։

**Սնար**, ի, սնարք, րից. գ. 1. գլխավերև, 2. գլխի տակը, գլխատակ, ծածկ, 3. գլխի տակի բարձ կամ պահարան համար փոքր բան, սնդուկ, 4. լեռան գագաթը։

**Սնդոյր**, գուրի կամ ոյ, ույց. գ. երկաթի նման, չփառ։ Ալյն՝ սնկայք։

**Սնոտի**, տւոյ. տեաց. ա. դատարկ, փուչ, սին։

**Սնուցանել**, ուցի. նո՛. ար. սնել, կերակրել, աճեցնել, մեծացնել, կրթել։

**Սնհանել**, ացայ. չբ. 1. գիրանալ, հաստանալ, առատանալ, աճել, 2. բորբոքվել, գրգռվել, զանգացվելով լցվել։

**Սոսորդ**, ոյ, ի կամ սոսոր, սոսի. գ. 1. կակաչ, կակաչի տեսքը, խոյակ, 2. բոցկոտ։

**Սողոմոն**. գ. հնում պարսկական թագավորի ձիավորի պաշտոնյա, սպասավոր։

**Սուրհանդակ**, ման, մաց. ա. ճամփորդ՝ խոռոչները մտնող։

**Սուրբել**, եցի. չբ. 1. մաքրել, թափել, 2. սրբել, կամաց-կամաց ու ծածուկ հեռանալ։

**Սուղ**, ողի, ից. ա. 1. քիչ, փոքր, նախը, բարակ, կարճ, նեղ, 2. թանկ։

— Սուղ ինչ. փոքր ինչ, մի փոքր։

**Սուսեր** կամ սուսերաւոր. ա. սրով կրող, սրով զինված։

**Սուտ**, ի, աց. գ. սուր, թուր։

**Սպարապետ**, ի, աց. ա. թուր գործածող։

**Սպաղանդակ**, ի, աց կամ ից. ա. հեծելազոր, խոսրով, սպասավոր, բռնող։

**Սպառազինութիւն** կամ սպառազինութիւն. գ. 1. սուր կրելը, 2. կռվելու կամ կեղծելու շնորհքը։

**Սպանանող**, ի, աց. գ. սպանանող

յուր տանող, թուղթ տանող, սուրհանդակ:
Սպառազէն. զինի. աց կամ ած. ա. 1. լրիվ կատարելապես զինված, 2. գ. սպառազինություն:
Սպառեմ, եցի. եր. վերջ տալ, ավարտել:
Սպառսպառ կամ սպառ ի սպառ, ի սպառսպառ, ի սպառ ի սպառ. 1. մ. բոլորովին, ամենևին, ամբողջովին, լրիվ չափով, 2. վին. ամբողջապես, լրիվ չափով, 3. ա. տևատ, ամբողջ, լրիվ:
Սպաս, ու, աց. գ. 1. կահ-կարասի, 2. սեղան, աման, զարդեր, զարդ, 3. կերակուր, ապուր, 4. պաշտոն, ծառայություն:
— Սպաս ունիմ կամ առնեմ, ի սպասու կամ. ծառայել, սպասավորություն անել, պաշտել, հոգ տանել, սպասել:
— Սպաս առնեմ. 1. Հարմար դեպքի սպասել, 2. իր պաշտոնին հետևել, պատրաստ լինել, 3. մեկի կարիքը ... լինել, 4. շողոքորթել, հոգալ, սպասարկել:
Սպասաւորեմ, եցի. եր. չր. 1. ծառայել, հոգալ, 2. կարգադրել:
— Սպասաւորեմ հրամանի. Հրամանը կատարել:
Սպասաւորիմ, եցայ. չր. ծառա լինել:
Սպասաւորութիւն. գ. ծառայություն, ծառայելը, սպասարկելը:
— Սպասաւորութիւն մատուցանեմ՝ կատարեմ՝ լինիմ. ծառայել, ծառայություն մատուցել, սպասարկել:
Սպառնալիք. ա. գ. 1. վտանգավոր, վտանգ հրող, 2. չարը կողմից վտանգով փախչված:
Սպարապետ, ի. աց. գ. զորապետ, զորքերի գլխավոր հրամանատար, զորավար:
Սպեղանի, ի. աց. գ. վերքերը պաշտպանող հարմարանք՝ կտավից կամ այլ նյութից:
Սպանանող, ի. աց. ա. անգութ, ան- գութ:
Սպատապատ. ա. տես պատմող, պատմած, ...

Ստացուած, ոյ, ոց կամ ի. գ. 1. ունեցվածք, սեփականություն, 2. ընծայված, ... 3. ստացվածք:
Ստեղն. ղան կամ ղին, ղունք, ղանց. գ. 1. ծառի բուն, 2. բույսի ցողուն, 3. ծառի ճյուղ, ոստ, 4. հասկի բան, որի առաջին ճանկը չի ... 5. ձանր երգելոց չարանկան:
Ստեն, ոյ. գ. անտառի մաս, ... վառեց ... մաս, բույսը:
Ստէպ. 1. գ. շատակի, շատադեպ, 2. ... Հարկադրաբար, 3. ա. ... Հաճախ կրկնվող, 4. մ. Հաճախակի, անդադար, 5. ... շատ կրկնվող, փութով:
— Ստիպաւ, առիթով, շատակիով, փութով, ... Հարկադրաբար:
— Ստէպ ստէպ. 1. շատ Հաճախ, շա- րունակաբար, Հաճախակի, 2. շատ ... անդադար:
Ստեռնեմ, եցի. չր. կարգադրության վճռել, չարիք գործել, աղճել:
Ստեռն, ի. աց. գ. կուրծ՝ ... ձագ, մայր կամ գոմեշ:
Ստուարաանիղն. ա. հաստ և խոշոր ճյուղերով:
Ստուգաբանութիւն, ա. բառաբանություն, բառի ծագման ... (բառերի ծագման մասին):
Ստուգանեմ կամ ստուգեմ, եցի. եր. չր. 1. ակներևի նման դնել, 2. արձանագրել, 3. անսխալ, ... 4. անփույթ լինել, ... անել:
Ստրատեղատ, ի. իցս. գ. զորավարագլուխ, զորավարություն:
Ստրջանամ, ացայ. չր. 1. աղոթի հա- մար ... ցանկել, 2. զզվել, 3. ... բարկանալ մի բա- նից, 4. ... մերժել:
Սուրբ, ա. 1. սրբացել, անաղարտ թռչող, 2. բարակ թեթև ոտնեղ, մաշկութի (ձեռքի մասին):
Սրահ, ի. իցս. գ. 1. բակ, նախասենյակ, 2. ներսի անկ, անկյուն, 3. ... վարագույր, որոնք պատա- ... 
Սրահակ, ի. աց. գ. 1. փոքր սրահ, 2. սրահի առաջամաս, 3. ասդապատ, վարագույր, որով անջրպետվում էր սենյակի մի մասը, 4. Հարսի առանձ- նասենյակ, 5. զգան վարագա- ման, ներքրադ, 6. սենյակի հատակը ծածկելու գորգ:
Սրահապան, ի. աց. գ. 1. ներքին Հարսի առագաստի սենյակ, ներքին սենյակ՝ առագաստով բաժանված սենյակ մյուս բաժանմունքներից, 2. ննջարան վրանում պահնապանի վարագույր:
Սրտաբեկ. ա. մ. 1. սիրտը կոտրած, անսիրտ, 2. երկչոտ, վախկոտ, 3. վհատված, 4. զարհուրած, սարսա- փահար, 5. սիրտնվաղ, անձկացած, կարոտ:
Սրտապնդումն. գ. 1. սրտապնդություն, 2. ... ուժ:
Սրտմտութիւն. գ. բարկություն:
Սրտնութիւն. գ. նույն է:
Սփածանելի, լոյ, եաց. գ. մեծ փռելու կամ ... ծածկոց:
Սփածանեմ. եր. մեկի մեջը ... ծածկել:
Սփածանիմ, ծայ. չր. 1. իր վրայից գոգնոց կամ այլ բան կապել, 2. մի բան վրան առնել իրեն վերարկու:
Սօսափիւն, սօսափիւն. գ. 1. տերևների Հանած ձայնը Հովերից քամուց, 2. ընդհանրապես որևէ բանի շարժու- մից առաջացած մեղմ ձայն, 3. ... շշուկ:

## Վ

Վախճան, ի. աց. գ. վերջ, ծայր, նպա- տակ, գերագույնություն, ավարտ, մահ:
— Վախճան. վերջապես:
Վախճանեմ, եցի. եր. 1. ավարտել, 2. վերջացնել, 3. մեռցնել:
Վախճանիմ, եցայ. չր. մեռնել:
Վաղահասակ, ի. աց. ա. Հասուն (պտուղ):
Վահան, ի. գ. 1. թշնամու զենքի դեմ կամ պաշտպանվելու ձեռքի վահան, 2. թշնամու ... կրծանոց:
Վաճառափախ, ի. աց. ա. գ. վտանգով չարը կողմից փախչված և փախչելը:
Վաղ. 1. մ. առավոտ, վաղուց, 2. շուտով, 3. ա. Հին, վաղեմի:
Վաղ, ու. գ. 1. վաղվա օրը, 2. մ. վաղը առավոտյան:
Վաղահասոր, ի. աց. գ. 1. կարճ կյանք, 2. թրթռուն:
Վաղիւ, ղուի, ղուէ. 1. գ. վաղվա օրը, 2. ա. վաղվա, 3. մ. առավոտյան, վաղը:
— Վաղիւն, ի վաղիւն, ի վաղիւ անդր. Հաջորդ օրը, վաղը, առավոտյան:
Վաղու ևս, վաղ ուրեմն, վաղուց, ի վաղուց նետէ, վաղուց ենետ, ի վաղուց ենետ, ընդ վաղուց. մ. 1. վաղուց, վա- ղուց ի վեր, 2. ա. վաղուցվա, Հին,

Վաղվաղակի. մ. շուտով, իսկույն, ան- միջապես, նույն ժամանակ, շտապո- փույթ կերպով:
Վայր, ղեր, ղերք. գ. կարճ ատյան:
Վաղրաւոր, ի. աց. ա. վաղրով կապած որով զինված:
Վայրավատին. ա. խարխլված, անշեն քանդված, ցրված, ցիր ու ցան արված:
Վայրավատանիմ, եցայ. չր. ցրիվ գալ, ցիր ու ցան լինել:
Վայրեմ, եցի. եր. թափել, շաղ տալ, ցրել:
Վայր մի, վայրիկ մի. մ. մի պահ, մի փոքր ժամանակ:
Վանեմ, եցի. եր. 1. քշել, վռնդել, հե- ռացնել, 2. չր. հաղթել, պարտութել:
Վանս, ու. ոց կամ ի. իցս. գ. զինված մարդկանց խումբ, զորք, խումբ:
Վաշ կամ վաշէ, ի. իցս. գ. ծածկված առջև, որով ճանապարհորդում էին:
Վառեմ, եցի. եր. վառել:
Վառեմ, եցի, վառիմ, եցայ. եր. չր. 1. պատրաստվել, սպառազինվել, պա- տերազմի համար նախապատրաստվել կամ նախապատրաստել, 2. զարդա- րել, զարդարվել, 3. զգեստ, հագցնե- լ, զգեստավորել:
Վաշն. նոց. 1. մասին, վերաբերյալ,

2. համբոյր, նուաստանալ, 3. մեծարել, մեծարանք, մեծարանաւոր, 4. պատառուել, 5. փոխանակ։
— Վաստ գի. 1. արդիւնաւոր, 2. արդիւնք։
Վաստակ, ալ, ոչ հին՝ ի, ու. գ. 1. ծառայութիւն, աշխատանք, գործ, 2. հոգնութիւն, 3. շահ, պտուղ, 4. չարչարանք, տառապանք, վիշտ, 5. ու. հողաճ։
— Վաստակ առնել, չարչարուիլ։
— Վաստակ ընել, չարչարուիլ։
— Վաստակ ուրուք, պետական՝ զինուորական ծառայութիւն։
Վաստակել, եցի. եր. աշխատիլ։
Վաստակիլ, եցի. վաստակիլ, եցայ. չէ. 1. տառապիլ, տանջուիլ, չարչարուիլ, 2. հոգնիլ։
Վատախորհուրդ. ա. 1. վատ խորհուրդ տուող, չարամիտ, 2. անխելք, անխոհեմ։
Վատասիրտ, սրտի, սրտց. ա. վախկոտ։
Վատթարել, եցի. եր. 1. ընկճել, թուլացնել, ակարացնել, 2. անարգել, նախատել, խայտառակել։
Վատթարութիւն. գ. 1. վատթար լինելը, վատութիւն, 2. ակարութիւն, տկարութիւն, ընկճուածութիւն, 3. վախկոտութիւն, թուլութիւն, 4. անարգանք, նախատինք, 5. պակասութիւն, թերութիւն, 6. մոլութիւն, հոգեկան ախտ, 7. վատ վարք։
Վատնել, եցի. եր. 1. փճացնել, ցրել, 2. սպառել։
Վաղորդեան, ածի. աց. ա. 1. շատ առաւօտ, ծագող, արեւելեան, 2. թշնամական, փոյթ։
Վարազ, ի, աց, ու. գ. 1. վայրի խոզ, կինճ (համարւում սրբան), 2. Պարթեւ Սասանեաններին պատկանող դրօշակ, 3. ու. համբոյր, հպարտ։
Վարագուրել, ացայ. չէ. վարագոյր նման փակուել, ծածկուել։
Վարանել, եցի. եր. 1. չորս կողմից պաշարել, նեղը գցել, 2. հոգ տանելով՝ հաց փնտրել։
Վարանիլ, եցայ. չէ. 1. շփոթել, նեղն ընկնել, մոլորուել, 2. ապշել, պապանձուել, 3. կասկածել, 4. պարտական լինել, 5. բանալ, պաշարուել։


ընկնել, մամռել, 2. այս ու այն կողմ թափառել՝ մոլորուած, շփոթած, 3. հալածուել, 4. պարտական լինել, 5. բանալ, պաշարուել։
Վարատել, եցի. եր. ցրել, ցրիւ տալ, քանդել։
Վարգիլ, եցայ. չէ. վազել, արշաւել։
Վարդապետութիւն. գ. 1. ուսուցանելը, 2. ուսում, 3. խրատ, քարոզ, 4. վարդապետի պաշտօն, 5. վարդապետներ։
Վարել, եցի. եր. 1. վար ու ցանք անել, վարել, 2. գործածել, 3. տանել բերել, առաջ տանել, քշել, 4. կառավարել, կարգ դնել, 5. խօթել, ներս հրել, 6. չէ. կյանք վարել, վարուել, շարժուել։
— Վարել զայն, հայհոյական գայ համաձայնել։
Վարկանիլ, կայ. կի՛ր. կացեալ. չէ. 1. կարծել, համարել, խելքը կտրել, խելքով յանգել, 2. հաշուել, թուել։
Վարժ, ի, ու կամ ու, ից կամ աց. գ. 1. ցանկ, թակարդ, որոգայթ, որով կենդանի բռնելու համար պատրաստած, 2. մի տեսակ ցանցաձև գոտի։
Վարսակալ, ի, աց. գ. գլխի մազերը զարդարող կապ, ծամկալ։
Վարսաւոր, ի, աց. ա. 1. տաշտ, խորը եւ երկար մազեր ունեցող, 2. գեղագեղ (տատս), 3. շատ տերեւներ ու ճիւղեր ունեցող (ծառ), 4. յարատեւ (օդ)։
Վարք, ռուց. գ. 1. կենցաղավարութիւն, ընթացաւորութիւն, վարք, վարմունք, վարվեցողութիւն, քաղաքավարութիւն, 2. գործածութիւն, գործածելը։
Վաւաշ կամ վաւաշոտ, ի, ից կամ աց. վաւաշոտ ա. ցանկասէր, ցանկասէր, զեխ, անառակ։
Վեղար, ի, ու կամ ով. գ. կնգուղ, գլխի ծածկոց, կրօնաւորի գլխանոց։
Վերադրել, եցի. եր. 1. վերեւը դնել, 2. դրել, ձգել, 3. գծագրել, 4. ստորագրել, 5. վրան դնել, 6. վերջը՝ մի քիչ աւել դրել, 7. վերագրել, համարել, 8. անել, հանել, տանել։

Վերանալ, ացայ. չէ. 1. վեր ելնել, 2. վերանալ։
Վերծանել, եցի կամ վերծանեցայ. եր. կարդալ։
Վերջաւոր. ի, աց. ա. 1. վերջ ունեցող, 2. ապրի վերջում գտնուող, հանգ կազմող (բառ), 3. գ. ծաղ. գարդարանք ծաղր (գլխատի եւ այլնի)։
Վերջանալ. չէ. հա զարդել, հա կանգնել, հա մնալ։
Վերտայն, ի վերտայնն. մ. կրկին, նորէն, շարունակ։
Վերանալ, եցի. վերացիլ, եցայ. չէ. 1. չքնալի պես չարժուել, պարել, հպարտանալ, պանծալ, 2. հրաժարած դրօշ հագնել։
Վզուրկ, վզրուկ, վզերի. ա. մեծ. մեծամեծ։
Վէգ, վիգի, աց. գ. վէճ, հակառակութիւն, կռիւ։
— Ի վէգ գալ. վէճ կանգնել, հակառակել։
Վէմ, վիմի, աց. գ. կարծր քար, վէմ։
Վէտ. գ. 1. մանր ալիք, 2. բարձրանալ, փոս, անցք, 3. մարմնի վրայ ծակծկուած նշան։
Վիհ, վհի, աց կամ ից. գ. 1. խորունկ տեղ, մեծ փոս, անդունդ, 2. խորք, 3. գերեզման, 4. դժոխք, 5. մեծ տարբերութիւն, 6. ու. խորքն։
Վիճակ, ի, աց. գ. 1. վիճակի խնդրի լուծում՝ քվէով կամ այլ միջոցով, 2. բախտ, 3. մեկին ընկած բաժինը, 4. իշխանութեան տեղը, թեմ, 5. կալուածք, հող, արտ, 6. եկեղեցական պաշտօն։
Վիմահատ. ա. վիմած քարերով։
Վիմաձոյլ. ա. քարերի մեջ մնացած։
Վշտանալ, ացայ. չէ. հալածուել, զգուշանալ, վիրվել։
Վիրապ, ի, աց. գ. առանց ջրի հոր, փոս։
Վիրգ. գ. 1. հնաւոր քար, անրարար, քարեղմնելու մեծ քար, 2. փայտէ կառք, փայտ, համար բերք, զամբիւղակ։
Վհատեցնել, եցի. եր. խորտակել, հալածարել, հալածել, նեղացնել։
Վնասուծիւն, գ. կախարդութիւն։

Վճարել, եցի. եր., վճարուիլ, եցայ. չէ. 1. աւարտել, 2. վերջ տալ, վճռել, սահմանել, 3. պարտք բերել, ծախսել, կատարել, 4. բաւարարել, հատուցել, 5. վախճանուել, 6. հատուցել, հատուցած ընդունել, 7. անցնել, 8. հեռանալ, բաժանուել։
Վճիռ հատանել. վճռել։
Վշտամբեր. ա. 1. նեղութեան համբերող, 2. վշտալի։
Վտանգել կամ կիլ. եցի. եր., վտանգուիլ կամ կիլ. եցայ. չէ. վտանգի մեջ գցել, չարչարել, նեղի բերել։
Վտառ, ի, աց. գ. 1. կենդանիների կամ ձկների բազմութիւն, 2. կենդանիների փարախ։
Վրան, ի. գ. անշարժ մարմնի վրայ (թմբուկը, սեղան, այլ, բերան եւ այլն)։
Վրացի, ի, աց. գ. 1. ներքին զգեստ, շապիկ, 2. զգեստ, վերարկու, բանկոն, կապա, 3. վերնոս։
Վրացուն, ի, աց. գ. տարածութիւն չափ է (մի ապաւորեց, մի նաւորեցից)։
Վրաստան, ա. Վրաստան։
Վրէժ, վրիժու, ուց. գ. 1. վրեժ, քէն, ոխ, 2. վրեժխնդրութիւն, պատիժ, պատուհաս, հրավարանք։
— Վրէժ խնդրել՝ պահանջել՝ հանել, վրեժ առնել, վրեժխնդիր լինել։
— Վրէժս առնել՝ չստանալ, պահանջել, պատիժը կրել։
Վրիպել, եցի. եր. 1. խուսել, սխալմունքի մեջ գցել, 2. գրկել։
Վրիպեցուցանել. ցուցի. ցո. ար. վրիպել տալ, մոլորեցնել։
Վրդովել, եցի. չէ. վրդովիլ, եցայ. չէ. 1. սխալվել, խոտորվել, մոլորվել, 2. մեղանչել, 3. կորչել, ոչնչանալ, ցնցւ գալ, ազատվել։
— Վրիպել (իլ) ի միտս. 1. մոռանալ, 2. խելքից զրկվել։
Վրկիչ կամ բանն, ընան. գ. 1. նրանից վրեպումը, խորխորատը, 2. գաճառութիւնը, վախճանութիւն։

**Տագնապ.** ի. ու կամ ով. գ. 1. Հոգեկան դժվար կացութիւն. անհանգիստ վիճակ, 2. վիշտ. [illegible]. 3. շտապելու [illegible]:
— **Եռալ տագնապի.** իրարանցում, շփոթութիւն, խուճապ:
— **Տագնապաւ կամ տագնապով.** շտապ կերպով, փութով, խուճապահար:
**Տագնապել.** եցի. եր. նեղը գցել, խուճապի մատնել:
**Տագնապեցուցանել.** ցուցի. ցո՛. պր. տագնապեցնել, տագնապի մատնել:
**Տագնապիլ.** եցայ. չբ. նեղուիլ, խուճապի մատնուիլ, շտապել:
**Տախտ.** ի. ից. գ. աթոռ, նստարան. գահոյք, բազմոց:
**Տածել.** տածի կամ տածեցի. եր. խնամել, հոգ տանել:
**Տակաւին.** տակաւին եւ. մ. 1. դեռ, մինչեւ հիմա. 2. բայց էլ. 3. կամաց-կամաց:
**Տաճար.** ի. աց. գ. 1. [illegible]. 2. կառատուն, 3. [illegible], 4. [illegible], 5. [illegible], 6. [illegible] [illegible], 7. [illegible]. 8. [illegible]:
**Տաճիկ.** ճկի. աց. գ. ա. 1. [illegible]. 2. [illegible]:
**Տայգր** կամ **տագր.** գեր. գ. [illegible] [illegible]:
**Տանել.** տարայ. տա՛ր. եր. 1. տանել. 2. կարողանալ մէջն ընդունել' պարունակել. 3. դիմանալ, համբերել. 4. կատարել:
— **Ցինէն տանել.** ազդել, համոզել:
— **Ընդ միտ տանել.** 1. մտքում անցկացնել, կռահել. 2. մտքում պահել:
— **Տանել և ածել ինչ.** հաշուել, [illegible], [illegible]:
— **Տանուտէր.** տեառն, տեարց կամ տանուտեաց. գ. 1. տանտէր. 2. գիւղապետ, [illegible]:
**Տապ.** ի. ից. գ. 1. գոլորշի, քրտինք, [illegible] [illegible] համար. 2. [illegible]. 3. [illegible],
4. կաղով' պտուղների համար. 5. ձիու գավակը պաշտպանող գրաւ. 6. մի անսակ երաժշտական խաղ:
**Տապա.** գ. խաղողի որթի անկած ճյուղ:
— **Տապաստիկ լինել.** արմատախիլ լինել, արմատից հանուել, արմատախիլ անել:
**Տապ.** ոյ, ով. գ. 1. տաքութիւն, ջերմութիւն, 2. ծովի [illegible]:
**Տապալ.** ա. մ. թավալված, տապալված, թավալվելով:
**Տապալել.** եցի. եր. թավալել, գցել, տապալել:
**Տապաստ.** ի. գ. 1. [illegible] [illegible], 2. [illegible] [illegible], 3. [illegible]:
**Տապաստ.** ի. գ. [illegible], [illegible], [illegible]:
— **Տապաստ անկանել.** փռվել, ընկնել:
— **Տապաստ արկանել.** գետին փռել, տապալել:
**Տապար.** ի. աց. գ. կացին, կացնի ձեւով պղնձեդրական հին զարդիր:
**Տապակ.** ի. աց. գ. 1. փուռ, 2. տանձի [illegible] զարդիր:
**Տառապել.** եցայ. չբ. 1. տառապել, [illegible], 2. [illegible], 3. [illegible], [illegible]:
**Տարազ.** ու, ուց կամ ոյ, ով. ի. ից. գ. 1. յոյժ զարդարանք, [illegible] [illegible] զարդարանք. 2. կերպ, ձեւ, նշանակ:
**Տարաժամիկ** ատոր. [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible]:
**Տարակոյս.** ա. մ. 1. հեռու կանգնած, հեռաւոր, հեռուից. 2. հեռացած, [illegible]:
**Տարակուսիլ.** եցայ. չբ. 1. շփոթել, հոգ անել, 2. կասկածել, 3. [illegible] [illegible] կամ [illegible], [illegible]:
**Տարապարտ.** ի տարապարտ. ա. մ. պատճառ չեղած, անպետք, անօգուտ, փուչ, իզուր:



**Տարապարտուց.** ի տարապարտաւ. մ. [illegible] [illegible], [illegible]:
**Տարմ.** ի. գ. [illegible] [illegible], [illegible]:
**Տարմ տարմ.** տարմատարմ, մ. խումբ-խումբ, խմբով, երամով:
**Տարփածու.** գ. սիրեկան, սիրով կապուած, սիրահարված, որին մի կին սիրում է' առանց նրա կինը լինելու:
**Տեղ.** ոյ. գ. առատ անձրեւ:
**Տեղամ.** ացի. ա՛. տեղեկալ, տեղալ, տեղել. եր. անձրեւի պես թափել:
**Տեղայ.** մբ. 1. անձրեւ է գալիս, անձրեւում է. 2. անձրեւի պես գալիս է' թափում է:
**Տեղի.** ղւոյ, ղեաւ. գ. 1. տեղ, 2. միջոց, առիթ, 3. վիճակ:
— **Ի տեղի** կամ **ի տեղւոջ.** փոխանակ:
— **Ետ տեղեաց.** մի քիչ ժամանակ, նույն ժամանակ:
— **Ի տեղիս տեղիս** կամ **տեղեաց տեղեաց.** զանազան տեղերը:
— **Տեղի տալ յումեք** կամ **յիմեք.** 1. խուսել, խուսափել մէկից կամ մի բանից, հեռանալ, 2. զիջել, ետ կանգնել:
— **Տեղի առնել առնել.** տեղ տալ, թույլ տալ:
— **Չունել տեղի** կամ **ունել.** մի տեղ կանգ առնել, զադարել, մնալ:
**Տես.** ոյ. ով, ովք. գ. 1. տեսնելը, տեսողութիւն. 2. հետազօտութիւն, տեսութիւն. 3. Հանդէս, տեսարան. 4. Հոգեւորականութիւն:
**Տեսաւորութիւն.** գ. 1. տեսնելու կարողութիւն, 2. աչք. 3. նախատեսութիւն, Հայտնութիւն, 4. խորհուրդ, խորհրդի:
**Տեսիլ.** սեան. եանց. գ. 1. տեսք, երեւոյթ, կերպարանք, պատկեր, նմանութիւն, 2. տեսիլք, 3. երազ, 4. տեսարան, Հանդէս, 5. տեսողութիւն, տեսած բան, 6. զաղափար, 7. տեսութիւն:
— **Տեսիլ լինել.** տեսնվել:
**Տեսութիւն.** գ. 1. այցով տեսնելը, տեսք, տեսակցութիւն, 2. տեսիլք, Հայտնութիւն, 3. այցելութիւն, 4. [illegible], 5. [illegible] [illegible], [illegible], 6. [illegible] Հոգեւորականութիւն, 7. [illegible], 8. [illegible], [illegible], 9. [illegible], [illegible], 10. [illegible] [illegible]:
**Տեգ.** տիգի. աց. գ. 1. նիզակ, նիզակի ծայրի սուր երկաթը, 2. [illegible]:
— **Տեգ մահուան.** նոր բուսած մորուք:
— **Տեգ աչաց.** յար նայվածք:
**Տերունեան.** ա. տառանական, տառանն վերաբերող, տիրոջ:
**Տիրամայր.** ա. տիրոջն մայր:
**Տիզ.** գ. նոր բուսած բան կամ միջ, մի տեսակ բույս:
**Տիւ.** տուընջեան. գ. ցերեկ:
**Տիկ.** տկաց. գ. տիկին, Հանդէ, ձամանակ:
**Տիկին.** ի. ից. ա. 1. տանտիկին, տուն' մարմնով կամ Հոգով, տիրող ու [illegible]. 2. [illegible], [illegible]:
**Տխուր.** ա. ոչ վայելուչ, անպարկեշտ, տգեղ, գռեհիկ, [illegible], փչացած, վատ:
**Տկարանալ.** ացի. չբ. տկարանալ, [illegible]:
**Տհաճութիւն.** ի. աց. ա. 1. [illegible], [illegible], 2. [illegible]:
— **Տհաճութիւն.** անէ. գ. 1. [illegible] [illegible]. 2. մեծ [illegible], [illegible], [illegible]:
**Տհեզութիւն.** յեայ. աց. ա. 1. [illegible], [illegible], 2. գ. [illegible] [illegible]:
**Տող.** ի. ից. գ. շարք, կարգ' [illegible], [illegible]. [illegible], [illegible] [illegible], [illegible], [illegible]:
**Տոհմ.** ոհմ. տոհմ. տոհմից. գ. [illegible], [illegible], կաղապար:
**Տոմս.** գ. ամենի կիր. [illegible]:
**Տոպրակ.** ա. [illegible], [illegible] [illegible]:
**Տոր.** տրոյ. ով. տոր է. [illegible], ով կամ տորից. իլ. գ. 1. [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], 2. [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible]:

Տափական, ա. 1. ցանկապատ, 2. սիրա-գաղան, 3. ցանկապատ:
Տափել կամ տափանել, եցայ. տափիլ. եցայ. չր. 1. տափական ցանկությամբ բորբոքվել, մեկի սիրով վառվել, 2. տառապել փափագել մի բանի, անձկալ:
Տափանէ, նոյ. գ. ատամի ցանկու-թյուն, սեր՝ մարմնական կամ հոգե-կան:
Տեփրուն, ի կամ ոյ, իզ կամ աց. գ. 1. տռճանկել, ցեղական, 2. հայրա-պետական՝ գրքի կամ մագաղաթի:
Տրփանս. գ. փոխաբերաբար հատուցում՝ վարձ կամ պատիժ:
Տունող, մղի. ա. անփորձ, անվարժ, յունախաղոր (անասուն. ձի, եզ):
Տրտում, ռմի. աց. ա. չնչին, տխուր, նվաստ, աղոտ, անարգ, փոքրիկ, խեղճ:
Տրփում. ա. Տափում:
Տրփանէ. ա. Տափանէ:
Տոք, ոյ. գ. 1. շոգ, ջերմություն, խորշակ, 2. ա. տաքացին:
Տոնուռ. ա. տոնական, հանգստավոր:

## Ր

Րաբունի, նոյ կամ ռաբուն. գ. վար-դապետ, ուսուցիչ, տեր:
Րոպէ, ի. իցս. գ. 1. ժամի մասն, 2. ակնթարթ, վայրկյան, 3. ահեղերը, աչքաթարթ:
Րամիկ, ա. խեղճ, չնչին, տառ, անարգ:

## Ց

Ցածնում, ծնայ. ծի՛ր. ծուցեալ. չր. 1. ցածանալ, իջնել, 2. սիրտն իջնել, փափկել, 3. խոնարհանալ:
Ցածուցանեմ, ծուցի. ծո՛. պր. 1. ցածացնել, իջեցնել, ցած դնել, 2. փափկեցնել, հանդարտեցնել, 3. հաշտեցնել:
Ցայգ. ոյ. գ. գիշեր, երեկոյից մինչև առավոտ եղած ժամանակը:
Ցայգ. մ. 1. գիշերը, գիշերով, 2. մինչև առավոտ:
Ցանկ կամ ցանգ, ոյ. ոց. գ. ցանկա-պատ:
Ցանկ, ցանկէ. գ. գրքի ցանկ:
Ցանկ. գ. արգանդի ագաթ, ընկերք:
Ցանկ կամ ցանգ. մ. մինչև, շարունակ, մինչև վերջ, հավետ:
Ցանկ. գ. փափագ, իղձ, ցանկություն:
Ցանկալի, լոյ. լեաց. ա. փափագելի, ախորժելի, սիրելի:
Ցանկութիւն. գ. 1. բաղձանք, փափագ, սեր, հաճույք, 2. հեշտասիրություն:
— Ի ցանկութեան արկանել. ցանկու-թյունից զրկել, ցանկությունը խա-փանել:

Ցասնում, սնայ. սի՛ր. սուցեալ. ցաս-ուցեալ. սնայ. սի՛ր. սուցեալ. չր. 1. խիստ բարկանալ, զայրանալ, սրտմտ-ել, 2. վրեժով լցվել, 3. մեկից խռովել:
Ցասումն, սման. գ. 1. զայրույթ, սաստիկ բարկություն, 2. աղետ, պա-տուհաս:
Ցասուցանեմ, սուցի. պր. զայրացնել, սաստիկ բարկացնել:
Ցելում, ցելի. ցե՛լ. ցելեալ. եցի. եա՛. եր. պատռել, ճեղքել:
Ցիռ, ցռոյ կամ ու, ուց. գ. վայրի էշ:
Ցիր, ցրի. ցրիւ. իւք. ա. 1. ցրված, տարածված, ցիր ու ցան եղած, 2. թափառական, 3. գ. ընդարձակ տա-րածություն, 4. ցիր ու ցան եղած բաներ:
— Ցիր ընդ ցիր լինել. ցրիվ գալ:
Ցիւ, ցռոյ. ոց. գ. տան ծածկ, կտուր:
Ցուցանեմ, ցուցի. ցո՛յց. եր. 1. ցույց տալ, 2. անել, ընել, հայտնել:
Ցոփ, ի. ից. ա. 1. մեղկ, թույլ, թու-լամորթ, 2. ափեղցփեղ, 3. զեղխ, անառակ, շփացած, 4. թեթևամիտ:



Ցռուկ, ցռկի կամ ցռկոյ. գ. քիթ, դունչ, դուրս ընկած մաս:
Ցրօնք, նից. գ. 1. ցրվելը, 2. անդա-դար՝ նույն բանից ծագած:
Ցցունք, նեց. գ. գլխի մազերի ցցված փունջ, հյուսված մազեր:
Ցքի, ցոյ. գ. ... (սրմակից պատ-րաստված):
Ցօղեմ, եցի. եր. 1. կաթ-կաթ թափել, թրջել, ցող ցող տալ:

## Ւ

Այս հնչյունով գրաբարում բառեր չեն սկսվում: Նրա ուշ ժամանակ-ներում սուտ բառերի սկզբում հանդիպում է Ւ-ի փոխարեն, ինչ-պես՝ փառող՝ հիսուն, փառող՝ հի-սուն, փոխ՝ հիւր, սուփի՝ հովիւ և այլն:

## Փ

Փաղաղ, փաղաղան կամ փանդամ. գ. լայն, շերի կտոր, որով կապում էին լաթ, շերի կտոր, որով կապում էին գոտին ու բերանը՝ բաց զրահապատա-կան կրծքի՝ որպեսզի հույզ ցույցա-կան կրծքի՝ որպեսզի հույզ ցույցա-յու համար, նույնպես և խմորը հանելիս՝ շպրտելու համար, թաշ-կինակ, ծածկոց:
Փախստական առնել՝ արկանել՝ նա-խել՝ վարել՝ առնլ. փախուստի մատ-նել, փախցնել:
Փախստական լինել՝ գնալ՝ երթալ՝ դառնալ՝ գիմել՝ անկանիլ. փախչել, պարտվելով:
Փախստեայ, էի, ից. գ. փախստական:
Փաղաղեմ, եցի. եր. 1. անկանոն կեր-պով ասել, լափել, 2. վառվել, փը-լացնել, այրել:
Փաղփաղիմ, եցայ. չր. փայլփլել, պըլ-պըլալ:
Փաղփիմ, եցայ, նույն եզ.:
Փայտակերտ. ա. փայտե, փայտից շին-ված:
Փայտամար, ի. աց. ա. 1. փայտ՝ ծառ կտրող (մարդ), 2. գ. կացին:
Փանաքի, ւոյ, ւեաց կամ փանաք. ա. չնչին, փուչ, նվաստ, աղոր, ան-արգ, խեղճ, ողորմելի:
Փանդամ, ա. Փաղամ:
Փանդիռն, դռան, փանդիռ, դռի, ռաց. փանդիռոն, դռան, անց. գ. քնար, եր-վարան:
Փառաւոր. գ. գեղում, ինքնամեծա-րություն, պատմապարանում, մեծա-գրություն, պատասխանագործություն:

Փառ կամ փառար, ի. աց. գ. 1. ծալ, ճեղք, պատառվածք, խորշ (լեռների մեջ), քարանձավ, 2. ա. ճեղքված, ավերակ:
Փարատեմ, եցի. 1. եր. ցրել, ազա-տել, հեռացնել, վերցնել, վերացնել: 2. չր. հեռանալ, վերանալ:
Փարեմ, եցի. եր. 1. պատել, պատել, պարփակել, ամփոփել, պարունակել: 2. շուրջ կապել պատել, մեջ առնել, 3. իր մեջ առնելով, կրել:
Փարիմ, եցայ. չր. 1. փարվել, փա-թաթվել, գրկախառնվել, 2. սերտ-ման գալ:
Փարշամն. ա. Փաշամն:
Փափկասուն. ա. փափկությամբ մեծ սնված, փափուկ կյանքի սովոր:
Փեղկ, ի. ից կամ աց. գ. 1. դռան կամ մաշկի փարագույր, վրանի պատ-կամ վարագույրի շոր կամ կաշի, կա-պեր, 2. լեռան սարքին կողմը:
Փեսայ, փրի. սիրի. ւեի. աց. գ. փեսայի մաներից ընկերը, հարսանիքի ժամանակ զինավոր անձը՝ փեսա-յի և հարսի մասո:
Փիլիսոփայ կամ փիլիսոփ. գ. մեծ գըր-ասոփի, ջուրան, պատմագրողական հին գործերը:
Փքնում կամ փքնիմ. չր. վերջը [illegible]

Փշտիկուն կամ փաշտիպան, ի. ած. գ. թիկնապահ զինվոր, անձնապահ (զինվորական պաշտոնեայի). Համհարզ։

Փոկ, ի. ած. գ. ծովային կաթնասուն կենդանի, փոկ։

Փոկ, ոյ, ած. գ. 1. կաշուց կտրած երկար ու նեղ շերտ, փոկ. 2. փոկից պատրաստած խարազան. 3. փոկից գոտի. 4. ա. կաշին։

Փողածոր, ի. ած. գ. փող [illegible], [illegible] տեղ (փողով)։

Փողոտել, եցի. եր. վիզը կտրել, մորթել։

Փողոցամէջ. մէջբ. գ. փողոցի մէջտեղը. հրապարակը։

Փողոց առնել՝ կառնել՝ կազմել՝ քաղում. Համապատասխան բացել, անցք՝ անցնելու տեղ բացել։

Փողփողել, եցի. եր. 1. փայլեցնել, 2. ծածանել։

Փողփողել, եցի. եր. Հյուսել։

Փոյթ, փութոյ կամ թի. բով. գ. 1. Հոգ, խնամք, ուշադրութիւն մի բանի նկատմամբ. 2. ջանք, աշխատասիրութիւն. 3. փութալը, արտորանք, վազելը, շտապելը, ա. 4. Հոգատար, աշխատիր, 5. ջանասէր, աշխատասէր. 6. մէջ, փութացած. 7. շտապող, փութկոտ. 8. մ. շատ կարգով, շուտով։

— Փոյթ առնել կամ ունիլ. Հոգ տանել, ջանալ, հոգալ։

— Փոյթ յանձին ունիլ. Հոգ տանել, աշխատել [illegible]։

Փոխել, եցի. եր. փոխ առնել, փոխ տալ։

Փոր, ոյ կամ ի. գ. 1. ստամոքսութիւն, մէջը փոր տեղ. 2. փոր, որովայն, արգանդ, ընդերք. 3. նմանակութեամբ՝ նավի փոր, անոթի փոր, ամանի փոր. 4. ամանի տարողութիւն. 5. ա. պատարգ, ախորժակ։

Փոր. գ. կարգաց թաշուկը։

Փոր. գ. կեր. Համեր։

Փոր. գ. մի տեսակ վնասակար ձուկ։

Փորուած, ոյ կամ ի. գ. 1. փորվածք, փոս. 2. ծակ, ծերպ. 3. փորված ու զարդ [illegible]. 4. [illegible] մէջի պատերազմութիւն։

Փութալ, ացայ. չր. փոյթ անենալ, շտապել։

Փութանակի. մ. 1. շուտով, շատ կարճ. 2. ա. վաղանցուկ, վաղաճառ։

Փութապէս. մ. 1. անհապաղ, շատ կարգով. 2. խնամքով, Հոգատարութեամբ։

Փութոյն կամ փութանիչ. գ. [illegible] Հոգը ու փորձ, ընթացութիւն, [illegible]։

Փշաւէտ, փշեան. գ. փշերը։

Փշրուն, ի. ից կամ փշրոյ, փշրանք, ի. ից. գ. ջարդված խոտ, ճյուղ։

Փռճակել, ծայ. ծեալ կամ ծացեալ. չր. փրփրել, [illegible] [illegible]։

Փռնգալ կամ փռնչալ, ացայ կամ ացի. ա՛, ացի՛ր. չր. քթով [illegible]։

Փրփ[illegible], փրփ[illegible]. ա. ած. գ. [illegible]

# Ք

Քակել, եցի. եր. 1. քանդել, ավերել, փշրել, 2. անջատել, բաժանել. 3. տեղից խախտել, 4. ցրել, 5. վերացնել։

Քաղաք[illegible] կամ Քաղաք[illegible], ի. ից. գ. [illegible]։

Քաղաքական, ի. ած. ա. 1. քաղաքին և քաղաքացուն Հատուկ, 2. քաղաքի ներսը ու կայքին անհրաժեշտ, 3. քաղաքավարական, 4. պետական և գործերի քաղաքական գործերի վերաբերող։

Քաղաքամէջ. մէջի. ած. գ. քաղաքի կենտրոնական մասը, Հրապարակը։

Քաղաքորդ, ոյ կամ ի. գ. 1. քաղաքի պարիսպ, 2. պարիսպի մեջ եղած տեղը։

Քաղդէացի, ցւոյ. ցւոց. ա. գ. քաղդէացի, Քաղդէայի բնակիչ։



Քաղել. եցի. եր. քաղել, Հավաքել, պոկել, վրայից հանել, մերկացնել, կողոպտել։

Քաղոց. ի. գ. Հայկական տոմարի Հինգերորդ ամիսը։

Քաղցենալ. ցեայ. ցի՛ր. ցեալ. չր. 1. քաղցածանալ, 2. կարոտել։

Քամահել, եցի. եր. արհամարհել, բանի տեղ չդնել, [illegible] Համարել։

Քան. նախ. 1. մէկից կամ մի բանից ավելի կամ պակաս. 2. քան, 3. քան, քան թէ, 4. առաւել։

Քանզի. շ. որովհետեւ, այն պատճառով որ։

Քաջքեն. գ. Հոգ. քաջքերից։

Քաջ, ի. ած. ա. 1. ուժեղ, կորիճ, 2. լավ, 3. առաքինի, քաջութեամբ և առաքինութեամբ երևցող, 4. ճիշտ։

— Քաջ, Քաջք. ոգի, դև, քաջքեր։

— Քաջ ի քաջ. 1. շատ հեռու, 2. շատ, առատ։

— Աղ Քաջ. շատ վաղ։

Քաջազանցուր. ա. շատ [illegible], [illegible] [illegible]։

Քաջազարմ, ի. ից. Քաջազնի. գոյ. եաց. ա. ազնվական ծագումով։

Քաջամարտիկ. ակի. ակաց. ա. կորիճ կռվող։

Քաջընտրեցիկ կամ Քաջընտրաց. ա. 1. լավ ընտրված, լավ վարող, արագավազ, 2. զորքի մէջ առաջադրյալ, 3. գ. [illegible]։

Քարակերտ. ա. քարաշեն։

Քարակուռ. ա. 1. քարի ամրոցային կտորից բաղկացած, քարածածկ, 2. քարից կամ քարի մեջ կոփած, 3. կարծր՝ տաշած քարերից շինված, քարաշեն։

Քարանձաւ. ի. ած. գ. 1. քարայր, 2. քարանձավ։

Քարր. ի. ից. գ. թանձրաւոր ծեծ ան, վերջաց ան։

Քարընկեց. ա. կ. 1. քար նետող, 2. Հին պատերազմական մեքենա, որով քարեր էին նետում թշնամու վրա, 3. քար նետելով որսորդութիւն [illegible] նող, 4. նախապատիան (իսոպ), 5. քար նետելու չափ՝ տարածութիւն, 6. քար նետելը։

Քաւչեայ, ղէի կամ Քաւղեայ, էի. ա. գ. առաջապաշտական, առաջավորող, պաշտոնեայ, կախարդ։

Քեռորդի, դւոյ. ած. գ. քրոջ որդի։

Քեղել, եցի. եր. 1. գամել, Հարցնել, կորել, 2. գետ մեջել, վերացնել, 3. կամքից կարել։

Քէն, Քինու, գ. ոխ, Հակակրութիւն, վրեժխնդրութիւն պահված, գինախնդրութիւն, նախանձ, վրեժ։

Քէշ, ի. ից. գ. զրադաշտական կրոն. Հին պարսկական կրոնք, աղանդ, կրոն։

Քըշտիկաւէտ. ա. քիչ աղանդ Հայերի Համար, կրոնական ամփոփ Հեղինակ։

Քիլ, Քլի, Քլաւ. գ. բույթ մատի և ցուցամատի բացվածքը՝ որպես չափ։

Քինախնդիր. ա. վրեժխնդիր։

— Քինախնդիր լինել կամ կալնել, վրեժ լուծել։

Քինախնդրութիւն. գ. վրեժխնդրութիւն։

Քիրտն, տան. տամբ կամ տիմբ, տանց գ. 1. քրտինք, 2. ծանր աշխատանք։

Քղամիդ. միդի կամ միդ. գ. զինվորական կիսաշափ վերարկու։

Քղանցք, ցից. գ. զգեստի ներքևի մասը՝ փեշը։

Քնանալ, ի. ած. ա. 1. քուն բերող, քնաբեր, 2. քնկոտ։

Քննանալ, ի. ած. ա. քննող դատավոր, անքննութեամբ տառապող։

Քնարահար, ի. ած. ա. գ. քնար նվագող և միաժամանակ երգող։

Քննել, եցի. եր. 1. փնտրել, որոնել, Հետազոտել, 2. (այսինք, ինչքան) Հատուկ պարզութիւն քննարկել։

Քոյրասպանիչ, Քոյրասպանի, Քոյրեցի. գ. քույր Հանդիպած, քույր սպանող, ազգ. քույր փոխել, Հայրենակից կամ Հարազատ որդի։

Քուրմապետութիւն. ի. ած. գ. քրմական անուն կամ այլ Հոգևոր պաշտոնյա։

տեսուչ, իբրև թեմական եպիսկոպոսի փոխանորդ, գործակալ։

Քուղ, Քղոյ. գ. ոլորած գերձան՝ թել, բարակ պարան։

Քուրմ, Քրմի. աց (նաև Քրմանք, մանց). գ. հեթանոսական կռատների քահանա։

Քուռ, Քռոյ, ոց. գ. փչող գործիք՝ [illegible] համար։

Քուլ, Քլոյ, ոց. գ. [illegible]։

Քսել, եցի. եր. 1. քսել, 2. քսութիւն անել, խառնակչութիւն անել։

Քսուփին կամ Քսսուփին. գ. 1. քսութիւն անելը՝ ուրիշի չարախոսութեամբ առելութիւն սերմանելը, 2. ուրիշի չարախոսութիւն, բամբասանք։

Քստմնել, եցի. չէ. Քստմնիմ, եցայ. չէ. 1. զարհուրելուց ու զզվանքից փշաքաղվել, փուշ-փուշ լինել, սոսկալ, 2. ջրի երեսին մանր ալիքներ խաղալ (նմանութեամբ)։

Քրքում, Քրքմոյ կամ Քրքմի. գ. անուշահոտ ծաղիկ՝ որի կոճղը մանուշակագույն, մեջը երեք բարակ դեղնագույն թել, զաֆրան։

Քրտմունք(?), նաց. Քրտմանք(?), մանց. գ. 1. վիշտ, հեծութիւն, հոգս, 2. ինքնահաւանութիւն, պարծենկոտութիւն։

Քօղ, ի. ից. գ. [illegible], ծածկոց։

## Օ

Օգնականութիւն. գ. օգնութիւն։

Օգտասէր, սիրի, աց. ա. օգուտ սիրող։

Օդենի, նւոյ, նեաց. ա. 1. ոչխարից առաջացող, ոչխարենի, 2. գ. ոչխարի մորթի։

Օդի. գ. ոչխար։

Օդիկ, օդկի կամ օդկան. գ. ոչխարի մորթուց մուշտակ։

Օդիք, օդեաց. գ. ոչխարներ ու գառներ, ոչխարների հոտ։

Օթ, ի. ից. գ. 1. գիշերելը, օթևանելը, 2. օթևան, իջևան, 3. երեկո, գիշեր։

— Առ օթ դադարել(?), մի տեղ մնալ՝ գիշերելու համար։

— Օթ առնել, օթևան տալ։

Օթոց, ի. աց. գ. 1. օթևանելու տեղ, օթևան, իջևան, 2. ծածկոց՝ անկողնու համար, 3. վերարկու, զգեստ։

Օժիտ, օժտի, ից կամ աց. գ. 1. օժիտ, 2. ընծա, պարգև։

Օծանել, ածի, ա՛ծ, անել. եցի. եա՛. եր. 1. օծել, յուղ քսել, 2. [illegible] ցաված տեղին, 3. զօծել, մետաղի բարակ շերտով պատել։

Օձանալ կամ օձանել. եցի. եր. 1. միմյանցից բաժանել, հեռացնել, 2. ճանապարհից շեղել, դուրս քաշել, քաշքշել, 3. չէ. անկանոն կերպով այս ու այն կողմ վազել, անասուն գնալ (ձիերի մասին)։

Օժան(?), ի. ու. ից. գ. 1. օգնութիւն, օժանդակութիւն, [illegible], 2. հնարք, [illegible], 3. ներում, թույլտվութիւն, 4. բարիք, երախտիք, 5. հաջողութիւն, 6. իշխանութիւն։ Այլն՝ օժան։

— Առնում օժան. 1. [illegible] ([illegible]), 2. ներում առնել, 3. թույլտվութիւն առնել։

Օշարակ, ի. աց. գ. զանազան պտուղների հյութից պատրաստված քաղցր և զովացուցիչ ըմպելիք։

Օշնան. գ. [illegible] փոքրիկ [illegible] խոտ, որը գործածվում էր որպես օճառ։

Օտար, ի. աց. ա. 1. օտար, 2. անծանոթ, գարիբ, հեռու։

Օրան, ի. աց. գ. հացաբույսերի ցեղ՝ պատրաստված կալսելու համար։

Օրէն, օրինի, օրէնք, օրինաց. գ. 1. կարգ, կանոն, կրոն, հավատք, ավանդութիւն, իրավունք, հաղորդութիւն, 2. օրինագիրք, 3. օրենք, [illegible], 4. [illegible], 5. պաշտոն, 6. կանանց ամսական [illegible]։

— Օրինօք, ըստ օրինաց, ըստ օրինի. օրենքով, կարգով, կանոնով։

— Օրէն է. մի. վայել է, սովորութիւն է, արժան է, կարելի է, օրենք է։



Օրինակ, ի. աց. գ. 1. օրինակ, 2. գաղափար, 3. առակ, այլաբանական նմանութիւն, 4. նշանակ, [illegible], ցուցում, 5. գրքի կամ թղթի օրինակ, 6. բնագիր։

— Զայս օրինակ. այս օրինակով, այսպես, այս ձևով։ Զօրինակ զայն, նույն ձևով։

— Զայն օրինակ, զնոյն օրինակ. նույն օրինակով, նույնպես, միանման։

— Օրինակ իմն. 1. որպես թե, որոշ չափով, 2. որպես օրինակ, օրինակի համար։

Օրհաս, ի. աց. գ. մահվան ժամ, մահվան օր։

Օրհասական, ա. 1. մահամերձ, 2. մահացու, մահաբեր։

Օր[illegible]. գ. [illegible]։

Այս տառով գրաբարում բառեր չկան։

## Ֆ

Դրանք հանդես են գալիս միջին հայերենի շրջանից։

## ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

| | |
|---|---|
| Ա. | ածական |
| Ագաթ. | Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909 թ.: |
| Բուզ. | Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 թ.: |
| Գ. | գոյական |
| Դ. | դերանուն |
| Եզնիկ | Եզնկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914 թ.: |
| Եզր. | եղանակաւորող բառ |
| Եղիշէ | Եղիշէի Պատմութիւն Վարդանանց ըստ Անձնագրաց օրինակի, ի լոյս ընծայեց Ե. Յովհաննէսեանց, Մոսկվա, 1892 թ.: Այլև՝ Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957 թ.: |
| Թ. | թվական |
| Խոր. | Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 թ.: |
| Կոր. | Կորիւն, Վարք Մաշտոցի, բնագիրը, ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դոկ. Մանուկ Աբեղյանի, Երևան, 1941 թ.: |
| Հր. | հրամայական բայ |
| Ձ. | ձայնարկություն |
| Մ. | մակբայ |
| Մր. | միադիմի բայ |
| Յովհ. Մամ. | Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ, 1832 թ.: |
| Նր. | ներգործական սեռի բայ |
| Նխ. | նախդիր |
| Նխդ. | նախադասություն |
| Շ. | շաղկապ |
| Չր. | չեզոք սեռի բայ |
| Պր. | պատճառական բայ |
| Փարպ. | Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեանց, Տփղիս, 1904 թ.[1]: |

[1] Այստեղ տրված չեն մեր քննադատական գրականության մեջ ընդունված ավանդական համառոտագրությունները:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրաբարի հնչյունական համակարգը և գրությունը
Գրաբարի ընդհանուր-պատմական հնչյունափոխությունները
Շեշտ և շեշտից կախված հնչյունափոխություն

### ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ձևաբանություն**
Հոլովում
Հոլով
Մասնիկավորումը գրաբարի հոլովման մեջ
Պարզ և խառն հոլովում
Հոլովների կազմությունը
Պարզ հոլովումներ
Ա պարզ հոլովում
Ե պարզ հոլովում
Ի պարզ հոլովում
Ո պարզ հոլովում
Ու պարզ հոլովում
Խառն հոլովումներ
Ի—Ա խառն հոլովում
Ո—Ա խառն հոլովում
Անկանոն կամ զարտուղի հոլովման ձևեր
Նույնանուն բառերի հոլովումը
**Ածական անուններ և նրանց հոլովումը**
Չհոլովվող գոյական և ածական անուններ
Մի քանի այլ դիտողություններ գոյական և ածական անունների հոլովման մասին
**Թվական անուններ և նրանց հոլովումը**
Քանակական թվականները և նրանց հոլովումը
Դասական թվականները և նրանց հոլովումը
Ա[illegible] թվականները և նրանց հոլովումը
Թվական անունների հոլովումը գոյական անունների հետ
**Դերանուններ և նրանց հոլովումը**
Անձնական դերանունները և նրանց հոլովումը
Փոխադարձ դերանունները և նրանց հոլովումը
Ցուցական դերանունները և նրանց հոլովումը
Ցուցական դերանունների հոլովումը գոյական անունների հետ
Ստացական դերանունները և նրանց հոլովումը
Ստացական դերանունների հոլովումը գոյական անունների հետ
Հարաբերական դերանուն
Հարցական դերանունները և նրանց հոլովումը
Անորոշ դերանունները և նրանց հոլովումը
Անորոշ դերանունների հոլովումը գոյական անունների հետ
Որոշյալ դերանունները և նրանց հոլովումը
**Խոնարհում**
Խոնարհիչ և խոնարհում (ընդհանրություն)

101
Պարզ և ածանցավոր բայեր . . . . . . . . . 105
Փոփոխություններ խոնարհումների մեջ . . . . . . 106
Ներգործական և կրավորական խոնարհում . . . . . . 105
Եղանակ . . . . . . . . . . . . 108
Ժամանակ . . . . . . . . . . . 109
Բայաձևեր . . . . . . . . . . . 110
Ներկայի հիմքը և դրանից կազմվող ձևերը . . . . . . 111
Ներկա . . . . . . . . . . . 118
Անցյալ անկատար . . . . . . . . 122
Առաջին ապառնի . . . . . . . . 125
Արգելական հրամայական . . . . . . . 129
Անորոշ դերբայ . . . . . . . . . 131
Ապառնի դերբայ . . . . . . . . . 132
Անցյալ կատարյալի հիմքը և դրանից կազմվող ձևերը . . . . 133
Բայերի անցյալ կատարյալի հիմքն ըստ առանձին խոնարհումների . .
Ներգործական և կրավորական խոնարհումները անցյալ կատարյալի հիմքից 137
կազմվող դիմավոր ձևերում . . . . . . . . 139
Անցյալ կատարյալ . . . . . . . . . . 144
Երկրորդ ապառնի . . . . . . . . . . 145
Օրինակներ ըստ առանձին խոնարհումների . . . . . . 153
Բուն հրամայական (հրամայական եղանակի ներկա) . . . . 158
Հորդորական հրամայական (հրամայական եղանակի ապառնի) . . 160
Անցյալ դերբայ . . . . . . . . . . . 161
Ենթակայական (ներկա) դերբայ . . . . . . . . 163
Պարզ ժամանակների բնորոշ պատկերը ըստ առանձին խոնարհումների
Անցյալ կատարյալի հիմքում ի ձայնավոր ունեցող բայերի խոնարհ- 176
ման օրինակներ . . . . . . . . . . 180
Պատճառական բայերը և դրանց խոնարհումը . . . . . 187
Անկանոն կամ դժվար խոնարհում ունեցող բայեր . . . . 209
Պակասավոր բայեր . . . . . . . . . . 212
Բաղադրյալ ժամանակներ . . . . . . . . . 224
Միադիմի բայեր . . . . . . . . . . 228
Նախդիր և նախադասություն . . . . . . . 225
Նախդիրներ . . . . . . . . . . . 230
Առ . . . . . . . . . . . . 237
Զ . . . . . . . . . . . . 242
Ընդ . . . . . . . . . . . . 251
Ըստ . . . . . . . . . . . . 256
Ի . . . . . . . . . . . . 262
Ց . . . . . . . . . . . . 263
Նախադասություններ . . . . . . . . . 263
Սեռական խնդրով նախադասություններ . . . . . . 266
Հայցական խնդրով նախադասություններ . . . . . . 265
Բացառական խնդրով նախադասություններ . . . . . . 268
Գործիական խնդրով նախադասություններ . . . . . . 270
Մակբայ . . . . . . . . . . . . 270
Մակբայների դասակարգումն ըստ իմաստի . . . . . . 273
Դիտողություններ մակբայների դասակարգման մասին . . . .

Մակբայների կազմությունը . . . . . . . . 274
Արմատական մակբայներ . . . . . . . . 274
Մակբայակերտ ածանցներով կազմված մակբայներ . . . . 274
Զանազան հոլովաձևերից կազմված մակբայներ . . . . . 275
Կրկնավոր մակբայներ . . . . . . . . . 275
Նախդրավոր մակբայներ . . . . . . . . . 277
Նախադասություններով կազմված մակբայներ . . . . . 278
Նկարագրական եղանակով կազմված այլ մակբայներ . . . . 278
Եղանակավորող բառեր . . . . . . . . . 280
Շաղկապ . . . . . . . . . . . 282
Ձայնարկություն . . . . . . . . . . 283


## ԳՐԱԲԱՐԻ ԾԱՂԿԱՔԱՂ


Ա. Հատվածներ հայ ժողովրդական հին բանահյուսությունից . . . 287
Բ. Կորյուն (5-րդ դար)
Վարք Մաշտոցի (հատվածներ) . . . . . . . 291
Գ. Փավստոս Բուզանդ (5-րդ դար)
Պատմություն Հայոց (հատվածներ) . . . . . . . 295
Դ. Եզնիկ Կողբացի (5-րդ դար)
Եղծ աղանդոց (հատվածներ) . . . . . . . . 319
Ե. Ագաթանգեղոս (5-րդ դար)
Պատմություն Հայոց (հատվածներ) . . . . . . . 329
Զ. Մովսես Խորենացի (5-րդ դար)
Պատմություն Հայոց (հատվածներ) . . . . . . . 336
Է. Եղիշե (5-րդ դար)
Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին (հատվածներ) . . . 349
Ը. Ղազար Փարպեցի (5-րդ դար)
Պատմություն Հայոց (հատված) . . . . . . . 360
Թ. Սեբեոս (7-րդ դար)
Պատմություն (հատվածներ) . . . . . . . . 362
Ժ. Հովհ. Մամիկոնեան (7-րդ դար)
Պատմություն Տարոնոյ (հատված) . . . . . . . 374
ԺԱ. Ղևոնդ (8-րդ դար)
Պատմություն (հատված) . . . . . . . . . 383
ԺԲ. Թովմա Արծրունի (9—10-րդ դար)
Պատմություն տանն Արծրունեաց (հատված) . . . . . 391
ԺԳ. Գրիգոր Նարեկացի (10-րդ դար)
Մատեան ողբերգութեան (հատված) . . . . . . . 394
ԺԴ. Արիստակես Լաստիվերցի (11-րդ դար)
Պատմություն (հատված) . . . . . . . . . 396


## ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Ընդհանուր մի քանի առանձնահատկությունների մասին . . . . 403
I. Նույնանիշ և հոմանիշ բառերի ավելադրություն . . . . 403
II. Դերափոխություն . . . . . . . . . 405
III. Վերացականը թանձրացականի փոխարեն . . . . . 406
Ծանոթագրություններ . . . . . . . . . . 408

Ա. Համաչափներ Հայ ժողովրդական հին բանահյուսությունից . . 405
Բ. Կորյուն . . . . . . . . . . . 411
Գ. Փավստոս Բյուզանդ . . . . . . . . . . 413
Դ. Եզնիկ Կողբացի . . . . . . . . . . 428
Ե. Ագաթանգեղոս . . . . . . . . . . 433
Զ. Մովսես Խորենացի . . . . . . . . . . 435
Է. Եղիշե . . . . . . . . . . 444
Ը. Ղազար Փարպեցի . . . . . . . . . . 449
Թ. Սեբեոս . . . . . . . . . . 450
Ժ. Յովհ. Մամիկոնյան . . . . . . . . . . 455
ԺԱ. Ղևոնդ . . . . . . . . . . 458
ԺԲ. Թովմա Արծրունի . . . . . . . . . . 459
ԺԳ. Գրիգոր Նարեկացի . . . . . . . . . . 460
ԺԴ. Արիստակես Լաստիվերտցի . . . . . . . . . . 460
ԲԱՌԱՐԱՆ . . . . . . . . . . 463
Համառոտագրությունների բանալի . . . . . . . . . . 576
Բովանդակություն . . . . . . . . . . 577

ԱՇՈՏ ԱՐՍԵՆԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Գրաբարի ձեռնարկ

Խմբագիր՝ Լ. Ա. Հովհաննիսյան
Գեղ. խմբագիր՝ Ռ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Ռ. Ն. Ախիկյան
Վերստ. սրբագրիչ՝ Ս. Հ. Չախմախյան

Պատվեր 28 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 28/XI 1964 թ.: Ստորագրված է տպագրության 17/VI 1965 թ.: Թուղթ՝ 60×92 1/16: Տպագ. 36,25 մամ.: Հրատարակչական 33,3 մամ.:
Գինը 86 կոպ.:

ՀՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆ արդյունաբերության գլխավոր վարչության № 7 տպարան,
Երևան, Տերյան 127: